

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՅԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏՈՐ 5 (5)

ԱՐՅԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ 5 (5)



ԱՏԵՓՈՂԱԿԵՐՏ - 2021

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*Նվիրվում է Արցախի պետական համալսարանի
հիմնադրման 50-ամյակին*

ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ 5(5)

*Աշխատասիրությամբ և ընդհանուր իսրագրությամբ Բ.Գ.Թ., դոցենտ,
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Ա. Յու. Մարգարյանի*

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

2021

***Տպագրվում է Արցախի պետական համալսարանի
գիտական խորհրդի որոշմամբ***

Խմբագրական խորհուրդ - Սարգսյան Ա. Յու. (նախագահ),
Առուստամյան Ն. Է., Հովհաննիսյան Լ. Լ., Ղազարյան Հ. Ս.,
Սարգսյան Լ. Գ., Մինասյան Շ. Ս., Շահնագարյան Ն. Ռ.,
Սաֆարյան Վ. Ա.

Հաստորի պատասխանատուներ - Սարգսյան Լ.Գ.
Հովհաննիսյան Լ.Լ.

Արցախի ժողովրդագիտությունը. Ազգագրություն. Հաստոր 5(5), Ստեփանակերտ:
Արցախի պետական համալսարան, 2021, 750 էջ:

Մատենաշարը ներառում է Արցախի ժողովրդագիտության երեք բնագավառներին՝ ազգագրությանը, բանահյուսությանն ու բարբառին վերաբերող և առնչվող այն հիմնական նյութերը, որոնք գրավել ու հրատարակվել են 19-րդ դարի կեսերից առ այսօր:

Մատենաշարի հինգերորդ՝ սույն հատորում ընդգրկված են նշված ժամանակաշրջանում կատարված՝ Արցախի ազգագրությանն առնչվող ճանապարհորդական նոթեր, հուշագրություններ, այլ նյութեր:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարը, որը հիմնադրվել է Արցախի պետական համալսարանի գիտխորհրդի որոշմամբ և նվիրվում է մայր բուհի հիմնադրման 50-ամյակին, ընդգրկում է Արցախի ժողովրդագիտության երեք բնագավառներին՝ ազգագրությանը, բանահյուսությանն ու բարբառին վերաբերող և առնչվող այն հիմնական ուսումնասիրությունները, աշխատությունները, ժողովածուները, հոդվածները, գիտական զեկուցումները, ճանապարհորդական նոթերը, հուշագրությունները և այլ նյութերը, որոնք գրառվել ու հրատարակվել են հայ և օտարազգի տարբեր ազգագրագետների, բանագետների ու բանահավաքների, բարբառագետների, այլ բնագավառների գիտնականների, հասարակական ու եկեղեցական գործիչների, ճանապարհորդների, գրողների, Շուշի քաղաքի և որոշ գյուղերի ուսումնական հաստատությունների ուսուցիչների ու տեսուչների կողմից 19-րդ դարի կեսերից առ այսօր:

Յուրաքանչյուր բնագավառին վերաբերող առաջին հատորի առաջաբանում տրվում է տվյալ բնագավառի ուսումնասիրության պատմությունը, իսկ եզրափակող հատորի վերջում՝ ամբողջական մատենագիտական ցանկը՝ ամփոփ նկարագրություններով:

Նյութերը ներկայացվում են որոշակի խմբագրությամբ և սրբագրությամբ (բացառությամբ բարբառով գրառված նյութերի)՝ ընդհանուր առմամբ համապատասխանեցնելով ուղղագրության ու տառադարձության արդի սկզբունքներին: Բնօրինակներում ընդգրկված լուսանկարները, զծագրերը, քարտեզները և այլ բնույթի պատկերները, վերջում տրված ծանոթագրությունները, անձնանունների ու տեղանունների ցանկերը հատորաշարում հիմնականում չեն ներառվում:

Մատենաշարի հինգերորդ՝ սույն հատորում ընդգրկված են նշված ժամանակաշրջանում կատարված՝ Արցախի ազգագրությանն առնչվող հետևյալ ճանապարհորդական նոթերը, հուշագրությունները, այլ նյութերը.

1. Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց, *Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան (գրաբարից աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ս. Գրիգորյանի), Երևան, 2016, 696 էջ:* Գիրքը առաջին անգամ հրատարակվել է երկու հատորով՝ գրաբար /Ջալալեանց Ս., *Ճանապար-*

հորդորթին ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփլիսի, 1842, մասն Բ, Տփլիսի, 1858/։ Սույն հատորում ընդգրկված է միայն Արցախին վերաբերող մասը։

2. Թադիադյան Ս., **Ճանապարհորդորթին ի Հայս**, Շալկաթայ, 1847, հ. Ա, 382 էջ։ Տպագրվել է նաև հետագայում /Ս. Թադիադյան, «**Ուղեգրորթուններ, հողվածներ, նամակներ, վավերագրեր**», Երևան, 1975, էջ 23-264/։ Սույն հատորում ընդգրկված է միայն Արցախին վերաբերող մասը։

3. Гакстгаузен А., **Закавказский край. Заметки о семейной и общественной жизни и отношениях народов, обитающих между Черным и Каспийским морями**, Санкт Петербург, 1857, Часть I, 248с., Часть II, 215с. Սույն հատորում ընդգրկված է միայն Արցախին վերաբերող մասը։

4. Սրուանձտեանց Գ., **Տեսարանք հայրենի աշխարհաց**. Միւնեաց աշխարհ եւ Շուշի քաղաք. «Արծուի Վասպուրական», Վան, 1862-1863, թիւ 4, էջ 87-108։

5. Բարախանյան Ա., **Ուխտավորի հիշատակարանք**, Շուշի, 1885։ Տպագրվել է նաև հետագայում Աեռ, «**Երկերի ժողովածու**», ութերորդ հատոր, Երևան, 1985, էջ 7-31/։

6. Բարախանյան Ա., **Իմ հիշատակարանք**, Շուշի, 1890։ Տպագրվել է նաև հետագայում Աեռ, «**Երկերի ժողովածու**», ութերորդ հատոր, Երևան, 1985, էջ 32-178/։

7. Հայկունի (Եղիշե (Հովակիմ) ավագ քահանա Գեղամյանց), **Ուղեգնացական ակնարկներ**, Երևան, 2010, 104 էջ։ Ակնարկաշարն առաջին անգամ տպագրվել է Թիֆլիսում հրատարակվող «Մեղու Հայաստանի» պարբերականի 1885թ. հունիսի 16-ից դեկտեմբերի 5-ը լույս տեսած 46-95-րդ համարներում։

8. Madame B. Chantre, **A travers L'armenie Russe**, Paris, 1893, 116 p. Սույն հատորում ընդգրկված է միայն Արցախին վերաբերող մասը (*Ֆրանսերենից թարգմանությունը Ա. Բարայանի*)։

9. Դաֆֆի, **Երկու ամիս Ադուանից և Միւնեաց աշխարհներում**, «Լուսնայ», Թիֆլիս, 1896, Գիրք Ա., էջ 60-109, Գիրք Բ., էջ 193-228։ Անավարտ ուղեգրություն է։ Տպագրվել է նաև հետագայում /Դաֆֆի, «**Երկերի ժողովածու**», հ. 8, Երևան, 1957, էջ 548-605, «**Երկերի ժողովածու**», հ. 9, Երևան, 1987, էջ 230-285/։

10. Сегаль И., *Елисаветпольская губерния, впечатления и воспоминания*, Тифлис, 1902, 104с. Սույն հատորում ընդգրկված է միայն Արցախին վերաբերող մասը:

11. Шагинян М. С. *Нагорный Карабах. Очерк*, Москва - Ленинград, 1927, 41с. Ակնարկն առաջին անգամ տպագրվել է Սանկտ-Պետերբուրգում հրատարակվող «Звезда» ամսագրի 1926թ. 6-րդ համարում (էջ 136-156):

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ Ի ՄԵԾՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՌԱՋԱԲԱՆ

Մենք շատ ճշմարտապատում մատենագիրներ ունենք, ովքեր վսեմ ոճով և մանրամասն ուսումնասիրությամբ գրի են առել մեր ազգին և աշխարհում պատահած իրադարձությունները: Մատենագիրներ, որոնց մի մասի մատյանները հասել են մեզ, իսկ մի մասը [ոչնչացրել է] ամենակուլ ժամանակը, մի մասն արդեն իսկ փտած, գտնվում է վանքերի կամ տների լուռ ու խոնավ անկյուններում: Այնուամենայնիվ, պետք է անաչառ դատել և ասել, թե մեզ հասած մատյանները, Արևելքի հաստատուն պետականություն ունեցած շատ ազգերի [համեմատ], մեր ազգի ավելի ուսումնասեր լինելու բացահայտ ապացույց են: Դրանք վկայում են մեր արքաների, արքայագունների և իշխանագունների բազմաթիվ վայրերում [կատարած] մեծահանճար գործերի [մասին], ովքեր հոգացել են թե՛ հոգևորի, թե՛ աշխարհայինի մասին, և ի նշան իրենց աստվածսիրության՝ արքունի ապարանքներից ավելի, երկնակամար, շքեղ եկեղեցիներ են կառուցել: Բայց, ավաղ, [այս ամենը ենթակա է եղել] անկայուն ճակատագրի դյուրափոփոխ անիվի [պտույտին, քանի որ] մեր դյուցագունների պանծալի գործերի և հոյակապ կառույցների մասունքների մի մասը *հիմնիվեր* տապալվել է ու անհետացել, մի մասը՝ կիսավեր, մոտ է կործանման, մի մասն էլ անտեր ու անխնամ՝ ծածկված է մացառախիտ թփերով և դարձել է գազանների որջ կամ ոչխարների փարախ: Եվ տեղին է Երեմիայի հետ ողբալ և ասել. «Միոնի ճանապարհները սուգ բռնեցին, որովհետև նրա տարեկան տոներին եկողներ չկան, նրա դռները ապականվեցին, և քահանաները նրա հեծում, հառաչում ու հոգոց են հանում, և կույսերը նրա գերեվարվեցին, իսկ ինքն էլ դառնացած է հոգով» (Երեմ. Ողբ, Ա 4):

Մեր ազգի այս դժնի վիճակը տեսնելով՝ օտարները (իսկ ինչո՞ւ միայն օտարներին մեղադրել, նաև՝ որոշ հայեր) մեր ազգը համարում են ոչնչություն, ծնված ու սնված [ուրիշներին] ծառա լինելու համար: Եվ այս վիշտը, հոգու այս անտանելի վերքը, [որ ունեմ] ազգակիցներիս [այսպիսի վիճակի համար], ստիպեց ինձ շրջագայելու Մեծ Հայաստանով և ամենայն ճշգրտությամբ ընդօրինակելու եկեղեցիների, վանքերի, բերդերի և պալատների պա-

տերի ու պարիսպների արձանագրությունները և ներկայացնել մեր ազգին: [Եվ սա] երկու հիմնական պատճառով.

Առաջին. որ մեր ազգակիցները և օտարներն իմանան, ինչպես Խորենացին է ասում. «Թեպետ այժմ փոքր ենք և թվով խիստ սահմանափակ, սակայն մեր երկրում էլ քաջության բազում գործեր են արվել» (Խոր. Ա 2)* : Երկրորդ. քանի որ քարերին դրոշմված այդ արձանագրություններն արդեն շատ վայրերում վնասված և անվերծանելի են, ինչից դժվար չէ գուշակել, որ [դրանց] երկարատև անխնամ վիճակը կարող է շուտով կամ հիմնիվեր տապալել այդ [հուշարձանները], կամ իսպառ ջնջել դրանց վրայի արձանագրությունները, որ մեր նախնիների աստվածապաշտության և հայրենասիրության բացահայտ քարոզներ են: Մանավանդ, եթե դրանք անխաթար վիճակում և դյուրընթեռնելի էլ լինեին, ո՞վ էր արդյոք շտապելու (հեռու թե մոտ վայրերից) գնալու և տեսնելու մեր դյուցագունների սքանչելի գործերը:

Ահա [աշխատանքիս] աղքատիկ արդյունքը, հոգեզվարճ հրճվանքով մատուցում եմ ազգիս՝ աներկմիտ հույս ունենալով, թե որոշ ազգասերների համար հաճելի կլինի գոնե մեկ անգամ ընթերցել, և դա արժանի վարձ կլինի իմ տաժանակիր ուղևորության [դիմաց]:

*Սարգիս վարդապետ Ջալալյանց՝
միաբան Սանահնի Սուրբ վանքի*

* 2եղինակն այս մեջբերումն անում է, հավանաբար, հիշողությամբ

ՄԱՍ Ա

ԳԵՏԱՇԵՆ

Մեծ գյուղ է՝ կառուցված գետի ափին, որի մի մասը ելնում է Սլուկ ծովակից, իսկ մյուս մասը հոսում է Օմար դաղից: Այստեղից էլ Գետաշեն անունը: Գյուղի դիրքը այնքան էլ հարմար չէ, բայց բոլոր առումներով արգասավոր է: Այստեղ կար մի մեծ եկեղեցի, բայց, հետզհետե քանդվելով, ամբողջությամբ ավերվեց: Գյուղից վեր կա մեկ այլ սագաշեն եկեղեցի, որում Եղիշե առաքյալի Աջն է և Հաթերքի Սուրբ Նշանը: Աջի վրա գրված է. «Ոսկան եպիսկոպոսը պատրաստել տվեց Սուրբ Եղիշե առաքյալի աջը, Հայոց ՌԿԸ (1068) թվին»: Այստեղ կա Հայոց ՉԽԴ (744) թվականին գրչության մի հին Ավետարան՝ գրված Դրագարկի վանքում Հեթումի թագավորության և Տեր Գրիգորի հայրապետության ժամանակ՝ ձեռամբ Թորոս վարդապետի:

ԱՐՑԱՆ

Մեծ Հայքի նահանգ¹ է. սահմանն սկսվում է Սլուկ լճից դուրս հոսող գետից, որը սկիզբ է առնում Ալիարակ լեռից: Այն [այժմ] անվանում են Քիաբաղ, փոխանակ Փափաղ [ասելու]: Ըստ այժմյան բաժանման՝ Արցախ նահանգը բաժանված է յոթ մասի կամ, ըստ այլազգիների՝ մահալի: Դրանք են՝ Իկիրմիդորտ, Չրբերդ, Խաչեն, Վարանդա, Մևիզակ, Բաչգրասան և Մղավուզ, որոնց հիշատակության արժանի [վայրերի մասին] կգրենք, ըստ հերթականության:

ԻԿԻՐՄԻԴՈՐՏ

Քսանչորս գյուղերից բաղկացած գավառ է, որից էլ ստացել է իր Իկիրմիդորտ անունը: Այս գյուղերի մի մասն ավերակ է, մյուսը՝ շեն: Սրանց կառավարումը հանձնված է երևելի հայկական տոհմից սերող **Փրիդոնի** որդի Մելիք Հովսեփին:

¹ Նահանգ եզրով ենք փոխարինել հեղինակի կիրառած ավան բառը., այսպես, այս հատվածի բնագիրն է. «Է աւան ի մեծն Հայս...աւան Արցախայ բաժանի յեօթն մասունս...է: Կիրառել ենք նույն մոտեցումը նաև տեքստի հաջորդ հատվածների նկատմամբ՝ հեղինակային նահանգ բառը փոխարինելով գավառ բառով. ինչպես, օրինակ, հեղինակային «Իկիրմիդորտ է նահանգ բաղկացեալ ի քսան և չորից գիւղօրէիցէ հատվածը թարգմանել ենք այսպես. «քսանչորս գյուղերից բաղկացած գավառ է, և այլն»:

ԶԵՎԱ

Արգավանդ և բարեբեր վայրում տեղավորված գյուղ է, որի դաշտերը, երկու կողմից սնվելով ականակիտ առուններով, գեղեցիկ տեսարան են ստեղծում: Այս գյուղին մոտ է Մռավ հռչակավոր լեռը, որի վրա Գյուլիստան ամրակուռ բերդն է: Տեղացիները դանդաղկոտ են [ու ծույլ], որի պատճառով, հողն անմշակ թողած, ապրում են դառն աղքատության մեջ: Այս գյուղի մերձակա ձորամեջում Դադիբեկի անապատն է, այս ձորով անցնում է կարմրախայտ ձկով լի Գյուլիստանի գետը:

ՀՈՌԻԿ

Ձևա գյուղից ոչ հեռու փոքր սագաշեն Հոռիկ կամ Հորիկ եկեղեցին է: Առջևում ունի գավիթ, որը Հայոց ՉԼԳ (733) թվականին, Աղվանից Տեր Ստեփանոսի կաթողիկոսության և Ապաղախանի, Նորադենի և այլոց պարոնության [օրոք] կառուցել է Հո[վ]հաննես քահանան: Արժանահավատ պատմիչներն ասում են, որ եկեղեցու անունը ոչ թե Հոռիկ է, այլ Հյուրեկ, քանի որ, ասում են, երբ Վաչագան արքան Գուգարքից Ջրվշտիկ էր տեղափոխում Եղիշե առաքյալի մարմինը, մինչև գյուղ հասնելը հյուրընկալվեց այստեղ՝ մի ավագ քահանայի մոտ, և նրան տվեց Սուրբ առաքյալի պատվական մարմնի մի մասունք, որի վրա էլ այս քահանան կառուցեց Սուրբ Եղիշե առաքյալ եկեղեցին և կոչեց Հյուրեկ, որն էլ տառերի փոփոխությամբ [հետագայում] դարձավ Հոռիկ: Եկեղեցու շրջակայքում բազմաթիվ հայ ազնվականների գերեզմաններ են, որոնց թվում նաև Մելիք **Բեկլարի** շիրիմը: Եկեղեցու մերձակայքում է նաև Մելիք Ադամի՝ ժամանակակից ճարտարապետությամբ՝ ամբողջությամբ կոփածո քարից կառուցված ապարանքը:

ՀՈՌԻԿԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եկեղեցու դռան վրա, ՉԼԳ (733) թվին

Ապախանի աշխարհակալ տերության և Տեր Ստեփանոսի հայրապետության և Նորադենի, Սրադենի ու Գարպաջինի պարոնության [օրոք], էս՝ Տեր Հո[վ]հաննես, կառուցեցի այս գավիթը, ի հիշատակ ինձ, իմ եղբայրների և ծնողների:

ՋՐՎՇՏԻԿ կամ ջուր միշտ էլ

Հոռիկից ոչ հեռու գտնվող գյուղ է. մոտակայքում՝ դժվարանցանելի ձորի մեջ, Եղիշե առաքյալի վանքն է, որը կառուցել է Վաչագան Աղվանից արքան:

Սրա եկեղեցին սագաշեն է, կառուցված անհարթ ու մեծ քարաբեկորներով. երկարությունն ու լայնությունը ութական կանգուն են: Եկեղեցուն կից անշուք գավիթն է, որի ներսում, բացի այլ շիրիմներից, նաև ուխտի առաջնորդ Մելիքսեթի դամբարանն է, ում սպանեցին արաբները Հայոց ՌՃԴ (1104) թվականին: Եկեղեցուն կից փոքրիկ մատուռ է, որում **Պարտայի Վաջազան** արքայի գերեզմանն է¹: Սրան մոտ կան այլ մատուռներ ևս, որոնցում Մերոբ սարկավազի, Առաքել վարդապետի և Ջահանի որդի Թեոդորոսի գերեզմաններ են, ովքեր տարբեր ժամանակներում նորոգել են այս եկեղեցին: Այս ուխտատեղիում կան նաև քահանաների, մելիքների և այլ ազնվական իշխանների դամբարանների վրա կառուցված անշուք ու փոքրիկ այլ մատուռներ ևս: Այս վանքն ունի քարուկիր պարիսպ և ընդարձակ արվարձան: Այստեղ է բնակվում Ավագ վարդապետը, ով քաջարի զորությամբ² բազմաթիվ լեզգիներ: Այստեղ կան և այլ սենյակներ ու ընդարձակ սեղանատուն: Սրանից ոչ հեռու՝ Մռավ լեռան վրա, կա մի սագաշեն եկեղեցի և [մի] անառիկ ամրոց:

ԵՂԻՇԵ ԱՌԱՔՅԱԼ ԱՆԱՊԱՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գավթի դռան վրա, ՉԺԳ (713) թվին

Աստծո կամքով, ես՝ Խաչատուր, կառուցեցի այս ժամատունը, Տեր Սիմեոնի առաջնորդության [օրոք]. աղաչում եմ ձեզ, հիշեցեք [ինձ] ի Քրիստոս:

Սրան կից՝ հյուսիսային կողմում

Աստծո կամքով, ես՝ Գրիգոր, կառուցեցի **Զուտապատի** եկեղեցին, գնեցի Ավետարան, **Քերթ** հողը ընծայեցի Սուրբ ուխտիս. առաջնորդ Տեր Սիմեոնը և միաբանները տվեցին, Համբարձման [տոնին] պատարագ:

Սրան կից

Աստծով, ես՝ Մերովբ քահանա, երեք գիրք տվեցի Սուրբ ուխտիս. Առաջնորդ Տեր Սիմեոնը և միաբանները տվեցին. պատարագ Բարսեղի տոնին:

¹ Աղբյուրի այս հատվածն է: «Կից եկեղեցոյս է փոքրիկ մատուռ, յորում գերեզման է Վաջազանայ արքայի որ բնակէր ի Պարտայ...»

² Աղբյուրն այստեղ ունի մեկ բառ, որ անընթեռնելի է: Այն քառատառ բառ է. առաջին տառն է ս, չորրորդը՝ ն: Երկրորդ և երրորդ տառերն անընթեռնելի են. հավանաբար պետք կարդալ՝ սպան, այսինքն՝ սպանեց: Ամենահավանականն այս է, քանի որ բնագիրն է: «...որ քաջարի զօրութեամբ ս...ն զբազումս ի Ղեկաց»

Մեղանի աջ կողմում

Ես՝ Դավիթ և իմ ամուսինը, միաբանեցինք Սուրբ ուխտիս և տվեցինք խաչ. երեք պատարագ պիտի մատուցեն մեզ [համար] Առաքյալների տոնին: (Գրված էր Հասան, Սմբատ, Վահրամ, բայց շարունակությունը քայքայված էր):

Վաջական թագավորի մատուռի վրա, ՉԵ (705) թվին

Աստված ողորմի այս եկեղեցին կառուցողի հայրապետերին և այր ծնողներին, Տեր Սիմեոնի առաջնորդության [օրոք]¹:

Խորանի ճակատին, որ կից է սրան, ՉԳ² (703) թվին

Ես՝ Մերոբ սարկավագ, այս Սուրբ ուխտում, կառուցեցի Սուրբ Առաքյալը՝ նախկին հիմքի վրա. ձեր աղոթքներում հիշեցեք [ինձ]:

Խորանի շեմքի վրա, որ կից է սրան

Աստծով, ես՝ Առաքյալ վարդապետս և Թեոդորոս իշխանի որդի Ջահան, ի հիշատակ մեզ և մեր ծնողների, կառուցեցինք այս եկեղեցին և ժամատունը:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

Ավերակ քաղաքատեղի է, դժվարանցանելի ձորում, որտեղ բազմաթիվ տների մեծամեծ ապարանքների ավերակներ կան: Այստեղ է Մելիք Ադամ քաջ ու հզոր իշխանի պալատն՝ իր սքանչելի ճարտարապետությամբ: Սրա կողքին ընդարձակ արվարձան է, որ ծառայել է պալատի պահպանությանը: Այս պալատից վեր Հայոց ՉԹ (709) թվականին՝ **Ռուսուքանի** իշխանության, Փախրադանի ամիրայության և Տեր Սուքիասի առաջնորդության [օրոք], Խուռումի և իր եղբայր Վահրամ շահի կառուցած սագաշեն մատուռն է:

ԽՈՏՈՐԱՇԵՆ

Ավերակ գյուղատեղի է, տեղավորված անմատչելի ձորերի խոխումներում³: Սրանց մերձակայքում է Երից մանկանց ուխտը, որը Հայոց ՌՃԽ (1140) թվականին, Շահ թագավորության [օրոք], կառուցել է Սիմեոն Աղվա-

¹ Աղբյուրի այս հատվածն է: «Աստուած ողորմի հայրապետաց և այր ծնողաց, որ շինեաց զեկեղեցիս առաջնորդութեամբ տէր Սիմեոնին»

² Աղբյուրում. «... ի թուին ՌՉԴ», որ, հավանաբար, տպագրական վրիպակ է

³ Խոխում - Խոր ձոր, որտեղով ջուր է հոսում, նեղ ձորձոր

նից կաթողիկոսն իր եղբոր՝ Իգնատիոս վարդապետի հետ: Այս [վանական համալիրի] եկեղեցին կառուցված է չորս սյուների վրա, սպիտակ և անշուք քարով. երկարությունն ու լայնությունը տասնութական կանգուն են: Եկեղեցու շուրջ քարուկիր սենյակներ են: Սրանից վեր հռչակավոր Մոսով լեռն է, որը բազմաթիվ դժվարանցանելի վիհեր ունի: Այս վանքի արևելյան կողմում անառիկ Ջերմուկ ամրոցն է, որը ումանք կոչում են Ջրմուղ, Ջրբերդ կամ Չարբերդ:

Այս ամրոցը կառուցված է մի անմատչելի միագույն ապառաժի վրա և միայն մի դուռ ունի՝ կատաղի **Թաղթառ** գետի կողմից: Այս ամրոցը թշնամիների ասպատակություններից բազմիցս փրկել է այստեղ ապաստանած հայազգի [մարդկանց կյանքը]:

ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դռան սեմերի վրա ՌՃԽ (1140) թվին

Պարսից մեծ արքայի՝ Շահ Մուլեյմանի ժամանակներում, ես՝ Սիմեոն, Աստծո շնորհով կաթողիկոս Ադվանից, կառուցեցի այս եկեղեցին, իմ հարազատ եղբոր՝ Իգնատիոս վարդապետի հետ, որ որդիներն ենք Սարգիս Մեծաշենցի քահանայի: Նոր Սիոնի՝ որդիներ, տերունական դոնով մտնելիս և ելնելիս, հիշեցե՛ք [ի Քրիստոս ձեր] աղոթքներում:

Մեղանի ճակատի վրա

Կերտվեց Աստծո տան նվիրանների¹ այս հարկը և ուխտի պատարագների՝ Նրա փառքի տաճարը, որ մեզ ավանդեց Տեր Հիսուս. կառուցեցին երկու հարազատներ՝ Սիմեոն կաթողիկոսը և Իգնատիոս բարունին և այլ շատ վաստակ ունեցողներ, որոնց [անունները] գրված են կենաց գրքում: Հայոց ՌՃԺԳ (1113) թվականին ավարտվեց այս եկեղեցու [կառուցումը], ի փառս Տեր Հիսուսի: Ովքեր աղոթեք և երկրպագեք ուղիղ մտքով՝ առ Տեր [ձեր] աղաչանքներում նկատի առեք այս. հիշեցեք և մեր հոգիները. ևս առավել թողություն խնդրեք մեր մարմնավոր ծնողների [համար]՝ Սարգիս քահանայի և մեր մոր և այստեղ վաստակ ունեցող այլ [անձանց համար նույնպես]:

Աջակողմյան որմի վրա

¹ Նվիրան - Նվերի, նվիրագործության՝ պատարագի, գոհաբերության տեղ, վայր՝ եկեղեցի, տաճար

Եկեղեցու կառուցող և վարպետ ուստա Սարգսին հիշեցեք ի Քրիստոս:

Սրան մոտ

Աստվածասերների և ողորմածների ծախսով և նյութով, աշխատեցինք և ավարտեցինք. Սուրբ Դանիել մարգարեի և երեք մանուկների պատվական նշխարների վրա, որ դրված են այստեղ և մեծամեծ հրաշագործություններ են կատարում, այժմ սա կառուցվեց, ի փրկություն մեզ և ի թողություն մեր բազում մեղքերի, մեր հոգևոր և մարմնավոր ծնողների, այլև բոլոր վաստակ ունեցողների: Ձեր մաքրափայլ աղոթքներում հիշեցեք մեզ և այս ուխտի միաբաններին:

ՉԱՐԴԱԽԼՈՒ

Անհարմար տեղադրությամբ փոքր գյուղ է, ունի սառնորակ աղբյուր և մի մատուռ, որ Վահրամաշեն է կոչվում: Այս գյուղի մերձակայքում Աղվանից կաթողիկոսների ամառային նստավայրն է, որոնց աթոռը **Պարտա** քաղաքում էր: Այս գյուղի բնակիչների մոտ տեսա մի ձեռագիր Ավետարան, որում շնության մեջ բռնված պոռնիկ կնոջ [ավետարանական] դրվագը դրված էր Հո[վ]հաննու ավետարանի վերջում և ավելացված էր նաև ծանոթություն, թե այս Ավետարանը ասորական ծագում ունի:

ՆՈՐԱՇԵՆ

Փոքր գյուղ է, որի բնակիչների մեծ մասը Հայոց ՌՄԼԴ (1234) թվականի սովի պատճառով ցրվել են այս ու այն կողմեր: Գյուղն ունի երկու սագաշեն եկեղեցի, որ ավերակ են: Գյուղի բնակիչների ձեռքին տեսա մի ձեռագիր մագաղաթյա Ավետարան, գրված Կոստնադնուպոլսում Հայոց ՅՃԾԸ (458) թվականին¹՝ Աշոտի հրամանով:

ԿՄԱՊԱՍ

Մեծ բնակչություն ունեցող գյուղ է. ունի շատ այգիներ, սակայն [գյուղը] շրջապատող լեռները ամռան տոթին տանջահար են անում բնակիչներին: Ունի չորս քառամույթ սագաշեն եկեղեցի՝ կառուցված Հայոց ՌՃԼԵ (1135) թվականին:

¹ Աղբյուրում. «... ի թուին Հայոց յՃԾՐ»

ՄՈՒՐԱԹԱՂ

Փոքր գյուղ է. ունի երկու սագաշեն եկեղեցի՝ մեկի անունը Ինն մասանց, իսկ երկրորդինը՝ Աստվածածին: Այս գյուղում է գտնվում Մելիք Ադամի ևս մի գեղեցկաշեն ապարանք:

ՇՈՒՇԻ

Մեծ բերդաքաղաք է՝ կառուցված Գարգար գետից այն կողմ: Ամրոցի հարավային կողմը պաշտպանված է միակտոր վեր խոյացող ապառաժով, իսկ մյուս կողմերը՝ քարուկիր պարսպով, [ուր նաև քաղաքի] ընդարձակ արվարձաններ են: Ամրոցի տեղը նախկինում եղել է համանուն՝ Շուշի գյուղի ագարակը, որ գնեց պարսից Փանահի խանը և իր իսկ միջոցներով կառուցեց այս ամրոցը և Շուշի գյուղի բնակիչներին տեղափոխեց այստեղ: Օդն այստեղ մաքուր է, բայց աղբյուրների բացակայության պատճառով բնակիչները ջրի պակասություն են կրում: Ուստի օգտագործում են ջրհորներ, որոնց ջուրն առհասարակ ծանր ու վնասակար է: Շուշիի հայ բնակչությունը յոթ հարյուր գերդաստան է. ունեն երկու գեղեցկաշեն եկեղեցիներ՝ Ագուլխսեցոց և Ղազանչեցոց: Այս ամրոցում է Արցախի¹ արքեպիսկոպոսանիստ Աթոռը, որի առաջնորդն այժմ Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանցն է: Ունեն նաև տպարան, որ գնել է նույն արքեպիսկոպոսը. [այստեղ] տպագրվել և տպագրվում են զանազան գրքեր:

ԳԱՆՁԱՍԱՐ

Փոքր գյուղ է համանուն Գանձասար լեռան մոտ. այստեղ է Գանձասար վանքը: Արժանահիշատակ Հայր Ղուկաս Ինճիճյանն ասում է, թե այս լեռը Գանձասար է կոչվում, որ նշանակում է՝ Գանձակաց լեռ, իսկ ես հավանական եմ համարում բնակիչների բացատրությունը, ովքեր ասում են, թե այս լեռն արծաթի հանքեր ունի, և այս պատճառով է Գանձասար կոչվել, այսինքն՝ գանձուց լեռ: Իրենց խոսքերի ստուգության համար նրանք ինձ ցույց տվեցին այն տեղերը, որտեղից նախկինում շատ արծաթ էին հանել: Այստեղ է Գանձասարի Հռ[վ]հաննես Մկրտիչ հռչակավոր վանքը, որ կառուցել է Ջալալ իշխանը Հայոց ՌՇԵ (675) թվին, ըստ իր հայր՝ **Վախտանգի** կտակի, ում ժառանգները՝ հորից որդի, նշանակվել են վանքի և ամբողջ վիճակի առաջնորդներ: Վերջին ժամանակներում նրանց Աթոռը տեղափոխվել է

¹ Աղբյուրում. «Արձախ»

Շուշի: Վանքի եկեղեցին պատված է զանազան քանդակագարդերով. Երկարությունն ու լայնությունը քսանական կանգուն են: Մայր եկեղեցու դիմաց ընդարձակ և բարձրարվեստ զարդաքանդակներով շքեղ զարդարված գավիթն է, որը կառուցել են Ջալալ-Դոլա իշխանն ու իր կին Մամքանը՝ Բաղուց թագավորի դուստրը, Հայոց ՉԾԵ (755) թվականին: Եկեղեցու պարսպին կից միաբանների անշուք սենյակներ են: Ջրհեղեղից **Բարտա** քաղաքի կործանումից հետո այս վանքը Աղվանքի կաթողիկոսարանն էր: Վանքի մեծ գավթում Աղվանից կաթողիկոսներ **Եսայու**, Երեմիայի, Հովհանի և Սարգսի գերեզմաններն են: Այստեղ՝ Մայր եկեղեցու դռան առաջ է նաև Ջալալ իշխանի գերեզմանը, որն ունի այսպիսի տապանագիր. «Ջալալ մեծ իշխանը, կատարելով իր ծնողի կտակը, իր կամքով [և] հոժարությամբ, [սկսեց] կառուցել այս հոյակապ, քարաշեն եկեղեցին Հայոց ՈԿԵ (665) թվին և ավարտեց ՈՁԷ (687)-ին՝ գոտևորելով զանազան զարդաքանդակներով: Ջալալ Դոլա և իր ամուսին Մամքան»: Վանքի առջևով՝ [ձորում], հոսում է Խաչեն գետը, որ սկիզբ է առնում Շահթալա և Գանձասար լեռներից: Այս վանքը տարբեր ժամանակներում նորոգել են հայազգի բարեպաշտ ազնվականներ, և [վանքին] են ընծայել բազմաթիվ կավվածքներ, ինչպես տեսնում ենք արձանագրություններից, [և] որոնք մինչև այսօր պատկանում են վանքին:

ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եկեղեցու ներսում՝ հյուսիսային որմի վրա

Սուրբ Երրորդության անունով՝ Հոր և Որդու և Սուրբ Հոգու. այս արձանագրությունը, որ ես՝ Աստծո նվաստ ծառա Ջալալ Դոլա Հասան՝ որդի **Վախտանգի**՝ թողը Հասան Մեծի՝ բնիկ և ինքնակալ թագավորի՝ բարձր և մեծ Արցախական¹ աշխարհի և մեծ նահանգի: Իմ հայրն այս աշխարհից հեռանալուց [առաջ], այս կտակը թողեց ինձ և իմ մայր Խորիշահին, որ Սարգիս իշխանաց իշխանի դուստրն էր, որպեսզի կառուցենք այս եկեղեցին մեր հայրերի գերեզմանատան վրա՝ Գանձասարում, որը, բարերար Աստծո օգնությամբ, մենք սկսեցինք Հայոց ՈԿԵ (665) թվականին: [Եվ եկեղեցու] արևելյան լուսամուտը ավարտելու [Ժամանակ] իմ մայրը կրոնավորություն [ստանձնեց] և երկրորդ անգամ ուղևորվեց Երուսաղեմ և այնտեղ մնաց խարանագզեստ ճգնությամբ Սուրբ Հարության տաճարում և լույսի

¹ Աղբյուրում. «Արձախական»

երևումով վախճանվեց ի Քրիստոս և թաղվեց այնտեղ: Իսկ ես, այս բազմա-
 ծուփ կյանքը ունենալով մտքիս, չէի դանդաղեցնում [շինարարական]
 աշխատանքները և ամենագույթ Աստծո ռոբորմությանը ու շնորհներով վեց
 հարյուր ութսունութ թվականին ավարտեցի [եկեղեցին]՝ գոտևորելով այն
 ամենատարբեր պատկերաքանդակներով, [նաև] գմբեթը զարդարելով
 [տարբեր] հորինվածքներով: [Եվ] իմ կամավոր հոծարությամբ, ինչպես
 Աստված տեսնում է, հոգացի միաբանների [մասին]՝ տվեցի [այս] գյուղերը՝
 Մակեդ, Հարկանդուսի ամբողջ քոշը, մեկ լուծ Խաչենից, Նորշինական գյու-
 ղը, Այգեստան, Սեղնկնի, որն իմ հայրն էր տվել Սահակին, Փուրկաթու,
 Ոտոց, Արծաթենի, [այս են, որ] ես տվեցի՝ խաչերով, գրքերով, մասունքնե-
 րով, նշխարներով, պատվական և ձուլածո ամեն տեսակի սպասքով ու
 երևելի զարդերով հանդերձ¹, ի փառս մեր Քրիստոս Աստծո և մեր իշխա-
 նության, այս եկեղեցիները ազատ են [հարկերից]: Տեր Վարդան՝ առաջնորդ
 Սուրբ ուխտիս, և միաբանները [մեզ համար] սահմանեցին. [որ] Ավագ
 Սեղանին և բոլոր եկեղեցիներում ամբողջ տարի մեզ [համար պատարագ
 մատուցվի]. Ջատիկին՝ իր ճրագալույցով՝ իմ հայր **Վախտանգի** [համար],
 Աստվածածնի [տոների] չորս օրերին՝ իմ մայր Խորիշահի, Հայտնությանը՝
 իր ճրագալույցով՝ իմ եղբայր Ջաքարեի, Ավագ Սեղանին, որ իմն է՝ Աստ-
 վածածնի [տոնից] մինչև [Սուրբ] Խաչի [տոնը]՝ իմ պապ Հասանի [համար],
 Հիսնակամտից մինչև Հայտնություն՝ իմ կենակից Մամքանի, Ութօրեից
 մինչև Առաջավորաց [պահքի] հասարակ և հիշատակաց [օրերին]՝ եղբայր
 Դոլի, մեկ շաբաթը՝ **Քուրն Մարինի**, Աղուհացի շաբաթն ու կիրակին՝ իմ
 եղբայր Իվանեի, Ջատիկից մինչև Աստվածածնի [տոնը] և [Սուրբ] Խաչի
 տոնից մինչև Հիսնակամուտը՝ ինձ՝ Հասանիս [համար]: Եկեղեցիս օրհնվեց
 ՈՁԹ (689) թվականին՝ ի հայրապետության Տեր Ներսես Աղվանից կաթողի-
 կոսի. այս գիրը հաստատ[ված] է Աստծո կամքով. ով հակառակվի, Աստված
 և Իր սրբերն են նրա թշնամին: Հասան Մեծի կամքով, Անտոնի տոնին մեկ
 պատարագ թող մատուցվի Հովասափ մենակյացի [համար]:

Եկեղեցու արտաքին հարավային որմի վրա, ՋԽԸ (948) թվին

Աստծո կամքով, ես՝ Մելիքս՝ որդի Սադունի՝ թոռը **Հախպատ Մեծի**, տվե-
 ցի ոսկեկար² շուրջառ և այլ ընծաներ. **Վակաչենց Փգուռենց** Ծաղկավանի

¹ Արձանագրության այս հատվածի այլ ընթերցում ունի Մակար եպո. Բարխուդարյանցն, իր՝ Արցախի ուսումնասիրությունում. տե՛ս Մակար եպո. Բարխուդարեանց, Արցախ, Երևան, 1999, էջ 250

² Աղբյուրում. «Ըսկի»

[հողը, որ] գնեցի երկու արծաթ դրամով¹ [և] տվեցի Գանձասարին. ով այս ընծաները և եկեղեցապատկան կալվածները այս Սուրբ եկեղեցու [պատկանելությունից] հանի՝ նգովված է 318 հայրապետներից և բաժնեկից է Հուդայի:

Մեծ եկեղեցու վրա՝ հարավային կողմում՝ անկյան մոտ, ՋԺԶ (916) թվին

Ես՝ Այդինս, **Խեմշես**, որդի[ներ] **Աթաբեգի**, տվեցինք **Ալմաճադարի** հողը Գանձասարի Սուրբ ուխտին, Տեր Ներսեսի առաջնորդության [օրոք]։ Ով փորձի հողը հանել [եկեղեցու պատկանելությունից]՝ նգովված է 318 հայրապետներից և Հուդայի բաժնին թող արժանանա:

Սրան կից, ՋԻ (920) թվին

Ես՝ Սմբատ՝ որդի **Փիրհամուզի**, իմ պապերի հոգիների համար, Գանձասարի Սուրբ ուխտին տվեցի Բեմի հողը, Տեր Ներսեսի առաջնորդության [օրոք]: Ով այս Սուրբ ուխտի [պատկանելությունից] հողը հանի՝ նգովված է 318 հայրապետներից և Սուրբ [Հ]ովհաննեսից² [նգովքով] կապված:

Սրան կից, ՋԻ (920) թվին

Ես՝ **Պաստամս**՝ որդի Մեծն Ջալալի, Գանձասարի Սուրբ ուխտին տվեցի **Վունճի հողշինկալի** վերևի [մասը], Տեր Ներսեսի առաջնորդության [օրոք]: Ով հողը հանի այս ուխտի [պատկանելությունից], նգովված է 318 հայրապետներից:

Սրան կից, ՋՃԶ (1006) թվին

Աստծո կամքով, ես՝ **Սայդունս**՝ որդի պարոն [Հ]աղպատի, Գանձասարի Սուրբ ուխտին տվեցի Ծաղոբի իմ ժառանգական հողը³՝ Տեր Եղիայի առաջնորդության [օրոք], ովքեր [ինձ] տվեցին. տարեկան երեք պատարագ. ով այս հողը հանի [եկեղեցու պատկանելությունից]՝ [թող նգովքով] կապված [լինի] Սուրբ **Օհաննեսից**:

Սրան կից, ՉԾԵ (955) թվին

Ամենակալ Աստծո կամքով, ես՝ Ջալալ Դուլաս՝ որդի **Վախտանգ** [իշխանի]՝ կողմանցն Արցախո⁴, և իմ ամուսին Մամբանը՝ թողը Բաղուց թագա-

¹ Աղբյուրում. «Ստակ»

² Սուրբ Հովհաննես, այսինքն՝ Գանձասարի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցի

³ Աղբյուրում. «... տուի իմ հայրենեաց գտան ծաղոբ, ի սուրբ ուխտն Գանձասարայ...»

⁴ Աղբյուրում. «... կողմանցս Արձախոյ...»

վորի, և իմ հարազատ որդի **Աթաբեգը**, եկեղեցու [կառուցումն] ավարտելուց հետո հիմնարկեցինք ժամատունը և մեծ դժվարություններ [կրելով]՝ ավարտեցինք, ինչը, ինդրում եմ անմոռաց հիշել ձեր աղոթքներում: Փոքր ընծա տվեցի. Ջմուռ գյուղն իր չարդորով¹, Ճռանցն՝ իր սահմաններով: Դարձյալ, ես՝ Աթաբեկս, հոժարությամբ ընծայեցի ոսկեկազմ Ավետարան և Քրիստափորի պատվական Սուրբ Նշանը. նաև մեր կավածքների հարավային կողմում՝ **Բլին**՝ իր սահմաններով: [Միաբանները] սահմանեցին [Սուրբ] Խաչի ութօրեքին պատարագել Քրիստոսին [մեզ համար]: Եթե որևէ քրիստոնյա փորձի հանել [մեր տվածը եկեղեցու պատկանելությունից], մահով և կյանքով [թող] նզովված լինի Աստծո փառքից, և նրա հիշատակը թող չհիշվի Աստծո առաջ, իսկ եթե որևէ մահմեդական հանի հողը այս եկեղեցու [պատկանելությունից], թող առհասարակ նզովված լինի Աստծուց և իր մարգարեններից:

Սրան կից, ՉԼԵ (735) թվին

Սուրբ Երրորդության և Մի Աստվածության անունով՝ Հոր Որդու և Սուրբ Հոգու. ես՝ Քրիստոսի նվաստ աղախին Մամխաթուն՝ դուստր ինքնակալ իշխանաց իշխան Ջալալ Դուլա Հասանի՝ Խաչենի Տիրոջ, և [դուստր] իմ մոր՝ Մամքանի, և կին՝ Մեծ պարոն Ումեկի, հույսով եկանք Գանձասարի Սուրբ ուխտ՝ ես և իմ որդի **Վախտանքը**: Եվ սրանք խոստացան Վարդավառի տոնին բոլոր եկեղեցիների պատարագը. քանի ես կենդանի եմ՝ իմ հոր և մոր [համար] կատարեն, իսկ իմ մահվանից հետո՝ ինձ համար: Կատարողները թող օրհնվեն Աստծուց:

Սրան կից

Աստծո կամքով, ես՝ Սարգիս կաթողիկոս՝ որդի **Հադի մելիքի**, թողը **Մեծ Այդունի** վեց արծաթ դրամով գնեցի հող՝ **Կասրից**². միայնակ [կանգնած] տունը [գնեցի] չորս ստակ ու կեսով, **Առուտանցը**՝ երկու արծաթ դրամով, Կուռալանը՝ չորս արծաթ դրամով, [և] տվեցի Գանձասարի Սուրբ ուխտին. ով այս հողերը հանի այս Սուրբ եկեղեցու [պատկանելությունից], նզովված է 318 հայրապետներից և [նզովքով] կապված է Սուրբ [Հ]ն[վ]հաննեսիցս:

Սրան կից, ՋԽ (940) թվին

¹ Աղբյուրում. «... Ջմուռ գիւղն իւր չարդորան...» («Չարդոր» բառի իմաստն՝ անհայտ)

² Աղբյուրում. «Ի Կասրայ»

Աստծո կամքով, [ես]՝ **Վեղիճան**, և իմ եղբայրները՝ որդիներս **Սայտունի**՝ թոռ[ներ]ը Խաչենի Տեր Մեծ **Աղբատի**, Տեր Ներսեսի առաջնորդության [օրոք], Գանձասարի Սուրբ ուխտին տվեցինք **Աջման**՝ իր բոլոր սահմաններով

Սրան կից, ՋԺԶ (916) թվին

Ամենակալ Աստծո կամքով ես՝ Տեր Եղիա՝ առաջնորդ Գանձասարի Սուրբ ուխտի, տվեցի իմ հոգու բաժինը. մեկ Հայսմավուրք, մեկ Տարեգիր, շուրջառ, **Աղախը**, [որ գնել եմ] երեք արծաթ դրամով: Ով այս գրքերը [և] հողը հանի [եկեղեցու պատկանելությունից], Սուրբ [Հ]ովհաննեսից և 318 հայրապետներից նզովված [թող] լինի:

Սրան կից, ՋԻ (920) թվին

Ես՝ **Պուտաղս և Վախտանգս** և այլ միաբան եղբայրներս միաբանեցինք և Տեր Ներսեսի առաջնորդության [օրոք], Գանձասարի Սուրբ ուխտին տվեցինք Փոռուռենց Կակաչենց Ծաղկավանի [հողը, որ գնել էինք] երեք արծաթ դրամով: Ով այս կալվածները հանի այս Սուրբ ուխտի [պատկանելությունից], 318 հայրապետներից նզովված է և [Հ]ովհաննես Մկրտչի կողմից [նզովքով] կապված:

Սրան կից, ՋԽԴ (944) թվին

Աստծո կամքով, ես՝ Մելիքս՝ որդի Սադունի, թոռը **Աղբատի**, Գանձասարի Սուրբ ուխտին տվեցի ոսկեկար շուրջառ և ուրիշ ընծա. Կակաչանի Փոռուռենց Ծաղկավանի [հողը, որ] գնեցի երկու ստակով: Ես՝ **Ուսուպ**, Գանձասարի Սուրբ ուխտին տվեցի **Բազմատան** վերևի հողը, Տեր Ներսեսի առաջնորդության [օրոք]. եթե մեկը այս հողը հանի [եկեղեցու պատկանելությունից, նզովված է Աստծուց:]

Սրան կից, ՉԻ (720) թվին

Աստծո կամքով, ես՝ Հովհաննես՝ որդի Իվանեի, Գանձասարի Սուրբ ուխտի առաջնորդ, Խաչենի Տեր Աթաբեկի հրամանով, իմ արդար ունեցվածքով գնեցի **Չարթնաթաղը** [և] մինչև [բոլոր] եզները [տվեցի]. նաև այլ ընծաներ տվեցի Սուրբ Կաթողիկեիս¹: Միաբաններն [ինձ] տվեցին. Յովհաննի և

¹ Այսպես ենք թարգմանել աղբյուրի «... և իմ հալալ արդեմաց գնեցի գՉարթնաթաղն, մինչորից եզն այլ ընծէք տվի ի սուրբ կաթողիկէս...»-ը հաստատելով

Հակոբի տոնին բոլոր եկեղեցիներում պատարագ. ով խափանի, թող դատվի Աստծուց:

Սրան կից, ՊՂԲ (892) թվին

Աստծո կամքով, ես՝ Տեր Վարդան՝ որդի Ջալալյան, Գանձասարի Սուրբ ուխտին տվեցի Ծակ խաչի հողը՝ Աղբատի իշխանության և Տեր Եղիայի առաջնորդության [օրոք]։ Սրանք [ինձ] տվեցին երկու օր պատարագ. ով խափանի՝ թող դատվի:

Սրան կից, ՉԻԵ (725) թվին

Ամենակալ Աստծո կամքով, Խաչենի Տեր՝ Աթաբեկի հրամանով, ես՝ Բարսեղ՝ որդի **Աբաջ** երեցի, [և] իմ ամուսին **Մամաքը**, միաբանեցինք Սուրբ ուխտիս և իմ արդար ունեցվածքով գնեցի[նք] **Տնգի** հողը [և] տվեցի[նք] այս եկեղեցուն: Միաբանները [մեզ] տվեցին Աստվածածնի ավետյաց տոնին չորս օր պատարագ, կատարողները թող օրհնվեն Աստծուց, իսկ խափանողները՝ դատվեն:

Սրան կից, ՈԲ (602) թվին

Աստծո կամքով, ես՝ **Աթաբեգ**՝ որդի Սմբատի, ի փրկություն իմ հոգու, Գանձասարի Սուրբ ուխտին տվեցի իմ հայրենական կալվածքի վերին արտը: Ով [այս] հողը հանի [եկեղեցու պատկանելությունից], թող դատվի Աստծուց:

Սրան կից

Ես՝ Շահնշահս՝ որդի **Աղբուի**, Գանձասարի Սուրբ ուխտին տվեցի Նովերի հողը. ով [այս] հողը հանի [եկեղեցու պատկանելությունից], [թող նզովքով] կապված լինի Սուրբ Հովհաննեսից:

Սրան կից, ՉՕԸ (758) թվին

Ես՝ **Ուկնա**՝ դուստր Հասան Մեծ ամիրի, նրա մահից հետո միաբանեցի այս Սուրբ ուխտին և տվեցի ընծա. Տեր Հովհան[ն]ը և միաբանները տվեցին. Քառասնից տոնին երկու պատարագ, կատարողները թող օրհնվեն Աստծուց, իսկ խափանողները՝ դատվեն¹:

¹ Այս հատվածում աղբյուրն է. «Ես ուկնաս դուստր մեծին ամիր Հասանայ յետ մահուան իմոյ միաբանեցի գնա սուրբ ուխտիս և տվի ընծայ տեր Հովհան և միաբանքս տուին բ պատարագ ի տանի քառասնիցն, կատարիչքն արհինին յԱստուծոյ և խափանիչքն դատին»

Սրան կից, ՉԻ (720) թվին

Աստծո անունով, ես՝ Սասնա Հանդաբերդցի, **Աթաբեզի** իշխանության [օրոք], մեծ հույսով եկա Գանձասարի Սուրբ ուխտ, [և] իմ հոգու արդյունքը տվեցի այս եկեղեցուն: Միաբաններն ինձ տվեցին. Ծառագարդի [տոնին]¹ բոլոր եկեղեցիներում պատարագ՝ [և] երկու պատարագ իմ կենակցի՝ **Մահանի** [համար]: Ով խափանի, մեր մեղքերին պարտական լինի:

Սրան կից

Աստծո հույսով, ես՝ **Ապուքանս** և իմ ամուսին Մինախաթունը, Ջալալի իշխանության Տեր Հոհանի առաջնորդության [օրոք] միաբանեցինք այս Սուրբ ուխտին և տվեցինք Չարեքտարը և այլ ընծաներ: Առաջնորդը և մյուս միաբանները [մեզ] տվեցին. Աստվածահայտնության տոնի ճրագալույցին չորս պատարագ, երկուսն՝ ինձ և երկուսը Խաթունին. կատարողները թող օրհնվեն Աստծուց:

Սրան կից

Աստծո կամքով, ես՝ **Ավագեր** և իմ ամուսին՝ **Ավտարդե**, միաբանեցինք այս Սուրբ ուխտին և տվեցի[նք] իմ ունեցվածքից: Սրանք [մեզ] տվեցին Վարդավառին չորս պատարագ. կատարողները թող օրհնվեն Աստծուց:

Սրան կից

Աստծո հույսով, ես՝ Սարգիս քահանա՝ որդի Պետրոսի, Ջալալի իշխանության [օրոք], եկա այս Սուրբ ուխտ և միաբանեցի և տվեցի հինգ գիրք և այլ ընծաներ: Նրանք [ինձ] տվեցին Սուրբ Սարգսի [տոնին] երկու պատարագ. կատարողները թող օրհնվեն Աստծուց:

Սրան կից, ՉՂԱ (791) թվին

Աստծո կամքով, ես՝ Ամարասի եպիսկոպոս Տեր Ներսես, **Աթաբեզի** իշխանության [օրոք], մեծ հույսով եկա այս Սուրբ ուխտ և միաբանեցի, տվեցի իմ հոգու արդյունքը: Սրանք [ինձ] տվեցին Նիկիայի Սուրբ ժողովի տոնին հինգ օր պատարագ: Կատարողները թող օրհնվեն Աստծուց:

Սրան կից, ՉԺԷ (717) թվին

¹ Ծառագարդ - Ծառգարդար

Աստծո անունով, ես՝ Մամախաթուն և իմ պատրոն **Ճարը**, միաբանեցինք Գանձասարի Սուրբ ուխտին և սրանք [մեզ] տվեցին բոլոր եկեղեցիներում Ավագ հինգշաբթի օրը պատարագ՝ պատրոն **Ումիկին**: Կատարողները թող օրհնվեն Աստծուց, իսկ խափանողները թող դատվեն Տիրոջից:

Սրան կից

Աստծո կամքով, ես՝ Հակոբ Միջնաշենցի, միաբանեցի այս Սուրբ ուխտին [և] տվեցինք ընծա Սուրբ եկեղեցու: Սրանք [մեզ] տվեցին Սուրբ Հակոբի տոնին տարեկան երկու պատարագ. քանի ես կենդանի եմ, [թող] իմ հոր [համար] մատուցվի:

Սրան կից

Անմահ Աստծո հույսով, ես՝ Գրիգոր **Չարաբերթեցի** անարժան քահանա՝ որդի **Տերամանուի**, Գանձասարի Սուրբ ուխտին տվեցի իմ հոգու արդյունքը: Սրանք [ինձ] տվեցին Տեառնընդառաջի [տոնին] երկու պատարագ. կատարողները թող օրհնվեն Աստծուց:

Փոքր-ինչ հեռու

Ես՝ **Բուստ**, որդի **Տամամի**, միաբանեցի Սուրբ ուխտիս [և] տվեցի իմ ունեցվածքից: Սրանք [ինձ] տվեցին Շողակաթի [տոնին] երկու պատարագ:

Գավթի սեմերի վրա, ՉԻ (720) թվին

Աստծո կամքով, ես՝ Հովհաննես՝ որդի Իվանեի՝ Գանձասարի Սուրբ ուխտի առաջնորդ, Խաչենի Աթաբեկի սուրբ հրամանով, իմ արդար ունեցվածքով գնեցի Վարդանաթաղը և մինչև [վերջին] պայտը տվեցի Սուրբ կաթողիկեիս¹:

Գավթի դռան վրա, ՌՃԶ (1106) թվին

Աստծո կամքով, Տեր Հովհաննես կաթողիկոսի իշխանության [օրոք], ես՝ Աբով յուզբաշի՝ որդի Թալիշի մելիք Հովսեփի, և իմ կենակիցը՝ **Հերիքնազ**, և մեր որդիները՝ մելիք Բեզլար և մելիք **Ապով**, մեր արդար ունեցվածքով մեծ դժվարությամբ նորոգեցինք Աղվանից Սուրբ Աթոռ Գանձասարի երկու

¹ Աղբյուրի այս հատվածի վերջին մասն է. «.../իմ հալալ արդեանց գնեցի զՎարդանաթաղս մինչորից և նալն տուի սուրբ կաթողիկես»

եկեղեցիների տանիքները և թուլացած պատերը՝ ի հիշատակ մեզ և մեր ննջեցյալների:

ԽՈՒՆԱՆԱԲԵՐԴ

Անառիկ ամրոց է Գանձասարի դիմաց՝ միակտոր սեպաձև դեպի երկինք խոյացող քարածայրի վրա՝ շրջապատված անմատչելի ժայռերով ու անտառներով: Այս ամրոցը միայն մի՝ դժվարանցանելի ճանապարհ ունի: Ամրոցը հիշատակում է Կիրակոս [Գանձակեցի] պատմագիրը (Կիրակոս. գլուխ 31, համար 5): Սրա ներքևում Ջալալ մեծ իշխանի ապարանքն է, որտեղ դեռևս երևում են շինությունների հետքեր: Ամրոցի տարածքում կա եկեղեցի, որ բնակիչները մինչև այսօր անվանում են Դարպասներ: Սրա շրջակայքում երևում են հազարավոր տների հետքեր, որոնք շարքերով դասավորված են Խաչեն գետից դեպի վեր: Սրա մերձակայքում կա ևս մի անառիկ ամրոց՝ Թարխանաբերդ անունով:

ՀԱԿՈՒԲԻ ԿԱՄ ՄԵԾԱՐԱՆԻՑ ՎԱՆՔ

Բարձադիր բլրի վրա կառուցված վանք է: Այստեղից երևում է Խաչենի ընդարձակ դաշտավայրը: Ունի երեք սագաշեն եկեղեցի, [երեքն էլ]՝ անարվեստ կառույցներ: Եկեղեցիների առջևում սրահանման գավիթ է, որի շուրջ միաբանների մութ սենյակներն են: Գավթի ներսում կա խաչքար և նրա մոտ՝ որմի վրա գրված է. «Ես՝ Հո[վ]հաննես կաթողիկոս, կանգնեցրի այս խաչը, ի փրկություն իմ հոգու»: Այս վանքում մինչև այսօր պահպանվում է Սուրբ Հակոբ Մծբնա հայրապետի Աջը, որի վրա գրված է. «Նորոզվեց Հայոց ՌՃԽ (1140) թվին, ձեռամբ Գրիգոր եպիսկոպոսի»: Վանքի հիմնադիրն անհայտ է, սակայն արձանագրությունների տարեթվերը ցույց են տալիս, որ այս վանքը կառուցվել է ՁԳ (903) թվականին: Հայոց ՌԿՍ (661) թվականին այն վերստին նորոգել է Սարգիս Մեծ իշխանի դուստր Խորիշահը՝ Խաչենի Տեր **Վախտանգի** կինը: Այս վանքը Խաչենի վիճակի եպիսկոպոսանիստն էր, որը թեև երկար մնաց անխնամ և հասավ ավերվելու աստիճանի, սակայն այժմ Հովսեփ գիտնական վարդապետը, ով ճոխացրեց Արցախ աշխարհը հոետորական, փիլիսոփայական և աստվածաբանական կրթությամբ, վերստին նորոգեց և պայծառացրեց այն՝ վանքը դարձնելով իր բնակության վայր:

ԽԱՉԵՆ ՆԱՀԱՆԳԻ

ՀԱԿՈՒԲԻ կամ ՄԵԾԱՐԱՆԻՑ ՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դռան ձախ կողմում, ՈԿԱ (661) թվին

Աստծո կամքով, ես՝ Խորիշահ՝ ամուսին **Վախտանգի**, դուստրը Սարգիս Մեծի, քույրը Ջաքարեի և Իվանեի, վերստին կառուցեցի Մեծարանից եկեղեցին՝ ի փրկություն իմ հոգու և ի բարեխոսություն իմ զավակների՝ մեկ քառասունք պատարագ՝ ինձ, իմ ծնողներին, **Վախտանգի** [համար]. և ինձ հիշեցեք [ձեր] աղոթքներում:

Սրա ներքևում, ՉԽԲ (742) թվին

Ես՝ **Մավի**՝ եղբորորդի **Հեջուբի**, միաբանեցի Սուրբ ուխտիս, գնեցի **Կաչեղաց** Նշանը և տվեցի այս վանքին. առաջնորդը և միաբանները պատարագ խոստացան:

Սրա ներքևում

Ջալալի հրամանով ես՝ Վահրամ, Հասան՝ որդիները Սմբատի, տվեցինք Ծաղատեղի հողը մեր հոր հոգու համար [Սուրբ Հակոբ] Մծբնացու եկեղեցուն: Տեր Վարդան և միաբաններս տվեցինք պատարագ՝ Հասանի, Սմբատի և Թամարի [համար]: Ով այս հողը հանի այս եկեղեցու [պատկանելություն-նից] և պատարագը խափանի, նզովված է 318 հայրապետներից:

Ձախ կողմում, ՈՂ (690) թվին

Ես՝ Գրիգոր՝ որդի Սմբատի, Ջալալի իշխանության և Տեր Սարգսի և Տեր Վարդանի՝ Մեծարանից վանքի առաջնորդության [օրոք], Սուրբ Նշան[ին] տվեցի [մի] Ավետարան և **Ակեսավիրն**՝ իր հողերով. [տվեցի] միաբաններին:

Սրա ներքևում

Աստծո կամքով, ես՝ Տեր Հո[վ]հաննես կաթողիկոս՝ որդի Ջալալ մեծ իշխանի, կանգնեցրի այս խաչը՝ ի փրկություն իմ հոգու. ովքեր երկրպագություն անեք, հիշեցեք [ձեր] աղոթքներում:

Հետին դասի որմի վրա

Աստծո կամքով, ես **Ուքան և Պապքան**՝ որդիները Սարգսի հոգեզավակի, Հասան Դոլայի իշխանության [օրոք], ընծաներով միաբանեցի[նք] Սուրբ

Նշանիս: Տեր Վարդան և միաբանները տվեցին տասը պատարագ: Ով խափանի, թող դատվի Աստծուց:

Սրա դիմաց, դեպի հարավ, ՉԱ. (701) թվին

Թագավոր Հասան Ջալալ Դուլայի հրամանով ես՝ Ամբատ որդի **Հեջուբի**, տվեցի Գրիգորի այգետեղին. սրանք պետք է պատարագ մատուցեն:

Սրան կից

Ես՝ Ջաքարե՝ որդի Խաչենի Տեր **Վախտանգի**, Մեծարանից Սուրբ Նշանին տվեցի Կոռի հողը, և սրանք տվեցին Վարդավառի տունին պատարագ՝ ինձ և իմ ամուսին Արզուխաթունի [համար]: Ով պատարագը խափանի, թող դատվի Աստծուց:

ՀԱՎՔԱՆԱՂԱՑ

Անառիկ ամբոց է, որ գտնվում է Սուրբ Հակոբ վանքի դիմաց՝ մի բարձադիր լեռան կատարին վեր խոյացող քարաժայռի վրա: Թերևս կառույցի դիրքից էլ ստացել է իր Հավքախաղաց անունը, որպես թե մի վայր, ուր [միայն] թռչունները կարող են հասնել: Այն այժմ թուրքերեն բառով անվանում են Սադսաղան դալասի, որ նշանակում է Կաչաղակաբերո: Ամբոցի ներսում կան տնատեղիներ և մշտապես ջրով լի մի լիճ: Այս ամբոցում մեր տիրազուրկ մնացած ազգին պատահած սգո արժանի դեպքերի մասին գրում է Կիրակոս պատմագիրը (գլուխ 31, համար 142):

ՊՏԿԵՍԻ ԲԵՐՔ

Ուխտատեղի է՝ բարձրադիր վայրում կառուցված գմբեթավոր եկեղեցով, որտեղից երևում է գեղեցիկ դաշտավայրը: Այս ուխտատեղին ունի մի եկեղեցի, որ վերանորոգել է ոմն Հովհաննես վարդապետ, ում գերեզմանը [եկեղեցու] աջակողմյան խորանում է, և նրա անունը, մեծ տառերով [փորա]գրված է այդ խորանի առաստաղին: Այս խորանի առջև Սուրբ Գեորգի անունով փոքրիկ գերեզման է. իսկ թե ո՛վ էր այս Գեորգը՝ հայտնի չէ: Աջակողմյան սյան վրա գրված է. «Ղուկաս վարդապետ, Հայոց ՌՄԼ (1230) թվին, կառուցեց մի ջրաղաց և տվեց այս [եկեղեցուն] հիշատակ»:

ԱՄԱՐԱՍ կամ ՄԱՐԱՍ

Վերը նկարագրված վայրից ոչ հեռու Մարաս կոչվող ավերակ գյուղաքաղաքն է, որտեղ հնում Աղվանից աշխարհի կաթողիկոսական աթոռն էր, որը հետագայում տեղափոխվեց **Պարտա**, իսկ այնտեղից էլ՝ Գանձասար: Այստեղ այն եկեղեցին է, որ հիմնարկել է մեր Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, և [շինարարությունն] ավարտել է նրա թոռ Գրիգորիսը, ինչպես գրված է Հայսմավուրքներում (մարտի վեց): Ինքը՝ Գրիգորիսը, թաղված է այս եկեղեցում, ինչպես գրում են Խորենացին (գլուխ 5), Հովհաննես կաթողիկոսը և Բուզանդը (գլուխ 6): Եկեղեցու կառուցվածքը բացահայտորեն ցույց է տալիս նրա հնությունը, ըստ որում [այն] սագաշեն չէ, այլ ոչ սրածայր գմբեթ ունեցող եկեղեցիների նման է. տեղը խորության մեջ է, ուր պետք է աստիճաններով իջնել: Վերջին ժամանակներում այս եկեղեցին սենյակավոր պարիսպով շրջափակեց Մելիք Շահնագարը: Թաթարների **Սաբասուն խանը** կողոպտեց [Ամարասը] և այլ սրբազան անոթների հետ այստեղից տարավ նաև Սուրբ Գրիգորիսի գավազանը և մի խաչ՝ ամբողջությամբ ոսկուց և ընդելուզված թանկագին քարերով, որը խնդրանքներով ստացավ հունաց արքայի դուստրը՝ **Դեսպենան**, որ Ապաղու խանի կինն էր և ուղարկեց Կոստանդնուպոլիս, ինչպես գրում է Ստեփանոս Օրբելյանը:

ԲԱՅԱԴ

Ավերակ քաղաքատեղի է Գարգարացվոց աշխարհում՝ արգավանդ և ընդարձակ դաշտավայրում, որով հոսում է **Գառգառ** գետը: Սրա անունից էլ աշխարհն է առնում իր անունը: Այստեղ ինչ-որ ժամանակ բնակվեց Փանահ խանը, բայց այլազգիների ճնշմանը չդիմանալով կառուցեց Շուշի բերդաքաղաքը և բնակվեց այնտեղ:

ԱՍԿԵԱՐԱՆ

Շուշի բերդաքաղաքին մոտ, կիրճերը պաշտպանելու համար Արցախի Փանահ խանի կառուցած ամրոց է, **Գարգառ** գետի ափին:

ԲԱՐԴԱ

Աղվանքի հայրապետանիստ և արքայանիստ մայրաքաղաքի ավերակն է. ունի հողաշաղախով կառուցված պարիսպ: Քաղաքի տարածքը շատ ընդարձակ է. այստեղ կան աղբյուրներ, մի մզկիթ, շուկայի, խանութների, պան-

դոկների հետքեր: Այս տեղավայրի հողն արգավանդ է և բերրի, այդ պատճառով այստեղ շատ են մրգատու պարտեզները: Թեպետ Կուր գետը մոտ է, բայց քաղաքը ռոռզվում է **Թարթառ** գետի ջրով, որն անցնում է քաղաքի մոտով: Ի հավաստումն խիտ բնակեցման՝ մերձակայքի բնակիչներից լսեցի մի հնավանդ պատմություն, ովքեր պատմեցին, թե այնքան բազմամարդ է եղել այս գավառը, որ Խութավանքի (որը քսանչորս ժամվա ճանապարհով հեռու է այս քաղաքից) արքեպիսկոպոսի վախճանվելու ժամանակ այգեպանները մեկ ժամվա ընթացքում, իրար ձայն տալով, լուրը հասցրին քաղաք: Այս քաղաքն, ինչպես գրում է Զենոբ Գլակը (էջ 39), Արտաշիր արքան շնորհեց Անակի ազգին՝ Խոսրով Հայոց արքային սպանելու համար: Այստեղ ժողով գումարեց Վաչական արքան Եղիա կաթողիկոսի, **Շուրհաղիշ** արքեպիսկոպոսի և այլոց հետ, և խիստ կանոներ սահմանեցին Աղվանից կաթողիկոսին դարձի բերելու նպատակով, ով խոտորվել էր աղանդի [ճանապարհով], ինչպես գրում է Կիրակոս պատմագիրը (գլուխ ԺԱ, համար 106): Այս քաղաքը նորոզվեց Փրկչական 659 թվականին, ինչպես գրում է տաճկաց **Ճիսանուման**:

ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔ

Հայոց ՈԿԳ (663) թվականին, Արցախ աշխարհի այս վանքը կառուցել է Արզուխաթուն տիկինը **Թարթառ** գետի ափին, գեղեցիկ մի վայրում, ուր բազմաթիվ մրգատու ծառեր կան: Վանքի կառույցն այնքան էլ գեղեցիկ չէ. եկեղեցին ունի սրածայր գմբեթ. կից միաբանների գեղեցիկ և հարմարավետ սենյակներ են: Ի դժբախտություն մեր ազգի՝ այս վանքը մնացել է ամայի և այժմ հարգանքի է արժանանում մերձակա այլազգիների կողմից: Եկեղեցու պարսպի շուրջ նշանավոր մարդկանց գերեզմաններ են, ինչպես ցույց են տալիս տապանագրերն ու արձանագրությունները: Եկեղեցու խորաններից մեկը քանդվեց մեր ժամանակներում, և գտնվեցին հին մատյաններ, որոնք մերձակայքի հազարացի բնակչությունը ցիրուցան արեց այս ու այն կողմ. դրանցից մի քանիսն այժմ պահվում են Գանձասարի վանքում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹԱԴԵ ԱՌԱՔՅԱԼ ՎԱՆՔԻ, ՈՐ ԽՈՒԹԱՎԱՆՔՆ Է

Ամենակալ Աստծո և Նրա Միածին Որդի Հիսուս Քրիստոսի շնորհով և Ամենասուրբ Հոգու պարգևներով ես՝ Քրիստոսի աղախին Արզուխաթունս՝

դուստրը Մեծ իշխանաց իշխան **Քրդի**, և ամուսինը **Վախտանգ** թագավորացնի՝ Հաթերքի և ամբողջ Վերին Խաչենի Տիրոջ, մեծ հույսով [կառուցեցի] այս Սուրբ կաթողիկեն իմ ամուսնու գերեզմանի տեղում. նաև իմ զավակների, անդրանիկի՝ Հասանի և Գրիգորի, ով կյանքի կեսին¹ վախճանվեց ի Տեր: Աստված ինձ խրատեց մեղքերի[ս] պատճառով և իմ գլխից առավ երկու վայելուչ պսակները, քանի որ իմ անդրանիկը՝ Հասանը, սպանվեց թուրքերի դեմ պատերազմում՝ քրիստոնեական հավատի համար և, երեք ամիս անց իմ կրտսեր որդին՝ Գրիգորը, հիվանդության պատճառով գնաց ի Տեր և տեղափոխվեց առ Քրիստոս՝ անմիաթար սուգ թողնելով իրենց թշվառացած մորը: Եվ նրանք, կենդանության օրոք, իրենց մտքում հույս էին դրել այս տեղում եկեղեցի կառուցել, բայց չհասցրեցին մահվան արագ վրա հասնելու պատճառով: Եվ [նրանք] կտակով ինձ ավանդեցին կատարել իրենց սրտի փափագը, և ես հանձն առա և մեծ հույսով ու բազում դժվարություններով կառուցեցի այս քավարանը՝ նրանց և իմ դուստրերի և [իմ] բոլոր սերունդների հոգու փրկության համար: Արդ աղերսալի աչքերով հայցում եմ՝ ովքեր երկրպագեք այս Սուրբ խորանին, ձեր աղոթքներում հիշեցեք վերևում հիշատակվածներին: [Եկեղեցու շինարարությունն] ավարտվեց Հայոց ՈԿԳ (663) թվականին՝ ի փառս Աստծո և ի նորոգություն այս Սուրբ ուխտի: Սուրբ եկեղեցու ժառանգության սահմանները, գյուղերը և ագարակները՝ իրենց սահմաններով, [այս են]՝ Ապահենը, Եզնարածանցը, Զաչանցը, Կանակավորը Վայոց ձորում և երկու տուն Արփայում: Եղբայրների համաձայնությամբ [մեզ համար] հաստատվեց. Ավագ խորանի պատարագը թող անխափան մատուցվի վերևում հիշատակվածների համար: Եթե մեկնումեկը այս հաստատված վճիռը խափանի՝ իշխան, թե առաջնորդ կամ ով էլ որ լինի, թող խափանվի նրա հույսն առ Քրիստոս և թող դատապարտվի Աստծուց:

Վանքի մերձակայքում կանգնեցված, Երկու երիս կոչվող խաչքարի վրա

Աստծո անունով, ես՝ Տեր Գրիգոր, Շահ Թամազի իշխանության [օրոք], երիտասարդ տարիքում եկա այս եկեղեցու դուռը: Շատ աշխատեցի, [բայց] վանքը առին տհուլ², ես չհամաձայնեցի պայմանին [և] գնեցի Նորաշենը,

¹ Աղբյուրում. «... Գրիգորոյ, որ ի տէր Կէսարեայ վախճանելոյ...»

² Աղբյուրն է. «... զվանքն առին տհուլ»: Այս բառը չենք թարգմանել՝ իմաստի անհայտ լինելու պատճառով: Ըստ համատեքստի, հասկանալի է, որ «տհուլն անել կամ դարձնելը ենթադրում է ինչ-որ իրավիճակ, որին կարելի է համաձայնել կամ ոչ: Դատելով տեքստի շարունակությունից, հավանական է, որ վանքն ունեցել է դրամային պարտավորություններ, որոնք չի կարողացել կատարել և արձանագրության

գնեցի չորս ջրաղաց, երեք այգի և եկա այս Սուրբ Առաքյալի [վանքը], Խուրը դարձրեցի այս եկեղեցու սեփականություն, այգիները, ջրաղացները և մնացյալ ողջ աշխատանքս եկեղեցուն տվեցի, որպես սեփականություն: Արդ, ով այս գյուղերը և իմ տված կալվածները փորձի հանել Սուրբ առաքյալիս [պատկանելությունից]՝ նզովված թող լինի 318 հայրապետներից, մաս ու բաժին թող ստանա Հուդայի, Կայենի և խաչահանողների հետ և մեր մեղքերին տեր լինի: Իսկ ով որ շեն պահի և հիշի մեզ՝ թող վարձ ստանա Քրիստոսից:

Այս վանքի արձանագրություններ, որ հանեցի գրատանը գտնվող Բաղդասար արքեպիսկոպոսի և վիճակի մետրոպոլիտին [պատկանող] հին ձեռագրից

Դոփի որդիներն ու թոռները և եկեղեցուն նրանց նվիրած կալվածքները

Բարեպաշտուհի Դոփը¹ Սարգիս իշխանաց իշխանի դուստրն էր: Սրա ամուսինը Բարեպաշտ Խաթրա Գրիգորն էր, նրանց որդին՝ քաջ և հաղթական գորավար և մեծ իշխան Հասանը՝ Տեր Ականի, Հանդաբերդի, Սոթի, **Շաղղաքի** և բազմաթիվ այլ գավառների, բայց ավելի սիրում էր [իր] Ծար գյուղը, որ [իր] քաջության [համար] պարգևած հող էր, որ [իր] արյան գին, [նրան էին] տվել Հայոց աշխարհակալները: Սրա կինը **Քուրդ** [իշխանի] դուստր Մամբանն էր, նրանց որդին՝ բարի Գրիգորը, [Գրիգորի] կինը՝ Ասփան՝ դուստրն էր Կոմս Տարսայիճի, ով իշխում էր Սյունյաց կողմերի վրա: Եվ սա բամաթիվ ինչքերով ու ծախսով ճոխացրեց Սուրբ **Ստաթեի** վանքը, քանի որ կառուցեց տաճարը, որ Դարպասներն է, և այլ բազմաթիվ գործեր արեց: Սյուս որդին Տեր Հովհաննեսն է, որ կառուցեց Գետամեջի Սուրբ ուխտը: Գրիգորի որդին Վահրամն է, և սրա որդին՝ Սարգիսը, ով բազմաթիվ գործեր կատարեց. մի քանիսը այդ գործերից, [այս են]. Տաթևի վանքի գեղեցիկ գանգը, [նաև գործեր] Խթրի վանքում, Գետամեջում, Ծար գյուղաքաղաքում: Եվ կա մինչև այսօր սրա որդի Հասանը: Եվ այս Հասանից բաժանվում են Դոփի ցեղերը, որ սրանք են. Շահնշահ Ուլուբեգանց Պապաբուղին Հայսնեցուց Պապ, Ջահանշահ հեն Շահենդեցուց Պապ, Հասանի որդի Ապուղեն և սրա որդի Դորսուն, և սրա որդի Այտինը: Սրա ժամանակ

հեղինակը վանքին կալվածներ նվիրելով, ստեղծել է այդ պարտավորությունները կատարելու կամ պարտքերը թողափելու հնարավորություն

¹ Ծանոթություն հեղինակի. «Դոփը և Նրջիհը Սարգսի դուստրերն են և Ջաքաթեի ու Իվանեի քույրերը: Պատմագիրները Սարգսի դուստրերի շարքում [նրանց] չեն հիշատակում, բայց այս արձանագրությունը ցույց է տալիս, թե նրանք իսկապես Սարգիս Մեծի դուստրերն են»

էր, որ իսմայելացիները հզորացան, իսկ Հայոց տունը տկարացավ, և Հայոց իշխանները ցանուցիր եղան, այլազգիները էլան նան Հասան մեծ իշխանի կալվածքների վրա, և Պարոն Այտինը գնաց Բեթալ մալաթարի մոտ դատի և երեք տարի չարչարվեց և բազմաթիվ բաներ տալով այլազգիների ձեռքից ազատեց վանքերը, ուս ամեն ինչի Տերը թող տա իր վաստակի վարձը:

Սրան կից

Ամենակալ Աստծո և մեր Տեր Հիսուս Քրիստոսի կամքով, սա մեր իշխանական հրամանի գիրն է. ես՝ **Դուրուսումնս, Մեզիս, Պռոշս, Գրիգորս, Հասանս**, մեր եղբայրներն ու որդիներն այս կնքված հրամանագիրը տվեցինք Տեր Ավագ եպիսկոպոսին և իր եղբայր Մանվել աբեղային, մեր հայրենի Աթոռների՝ Տաթևի վանքի, **Խթրի վանքի**, Գետամեջի [վերաբերյալ], որ մեր գերեզմանատներն են և մեզ են հասել մեր պապերից: [Այս հրամանագիրը տվեցինք, դրանց վերաբերյալ] մեկ՝ բարի և [վերջնական] միտք ունենալու համար, քանի որ վանքերում [այնքան] մարդ չկար, որ [քան] նախկինում, որպեսզի վանքերը շեն պահեին և եկեղեցիները պայծառացնեին: Այս պատճառով ջանք գործադրեցինք և այս Սուրբ Աթոռներին տվեցինք երկու իշխանություն, որ են՝ եպիսկոպոսությունը և պարոնությունը, [որը] նույնպես հենց նրանց հանձնեցինք, ինչպես առաջին մեծ եկեղեցին [է]: Տեր Վարդանին, Տեր Աթանասին, Տեր Սարգսին տվեցինք Տաթևի վանքը, **Խթրի վանքը**, Հաղպատն իրենց [ամբողջ] վիճակով: Նմանապես, հոգևոր Տեր Գրիգոր կաթողիկոսը այս երեք Աթոռները հաստատեց [իրենց] վիճակներով և շրջաբերական թղթով:

Սրան կից

Ամենակալ Աստծո կամքով, ես՝ **Մեթիս**՝ որդի պարոն **Շանշի**՝ թոռը պարոն Հասանի. ես՝ Գրիգոր **Հասանբեգս**, Ալթունս՝ որդիները պարոն Վահրամի և թոռները պարոն Հասանի. ես՝ **Այտինս**՝ որդի պարոն **Դուրսունին**՝ թոռը պարոն **Աղբուխի**. ես՝ **Շանշես**՝ որդին պարոն Հասանի և թոռը պարոն **Ջհանի**, մենք՝ չորս եղբայրներս, մեր վանքերին տվեցինք Ապքեն, Խուրթ, Խոշինակն իր չորս սահմաններով՝ Չափարի հանդից [մինչև] Չուրունանց Ագարակ գյուղով, Պոնչի աղբյուրով, Թողանանց գետով, Պետրոս Աբակովը, որ մեր պապերն են տվել Սուխանանց, Ճուռանց ծովատեղը, Չաբեկանց Յոզնուրը: **Ստաթեի** վանքին [տվեցինք] Շերմանց Գրիգորաթաղը՝ իր Քալա-

տակերով, Հերանցը Հակառակաբերդով, Նավի աղբյուրով, Բերդաքարով, Կռապաշտի ձորով, Ոգնով, Խոզինակը մինչև Մանանա ձորի այգիով: Ծաղկանցը, Եզնարածանցը տվեցինք Ավագ եպիսկոպոսին, որ մեր եղբայրն է, որ ինչքան որ իր ցանկությունն է, կառավարի Աստծով, և [նա] ազատ է: Իսկ եթե այլ մարդ կառավարի, [նա՝ Ավագ եպիսկոպոսը], տասանորդ վերցնի և անպատճառ տա վանքին: Սա է մեր ուխտը Աստծո և Սուրբ Թաղե առաքյալի առաջ: Արդ, եթե որևէ մեկը մեզանից հետո մեր այս ընծաները փոփոխի կամ խլի՝ մեր որդիներից կամ թոռներից կամ ազգականներից [ով էլ լինի], թող սևերես ու պարտական լինի Աստծո առաջ, նզովված [թող լինի] 318 հայրապետներից. Կայենի և Հուդայի դասակիցը թող լինի: Իսկ եթե [այդ մարդը] այլ ազգից կամ թուրքերից լինի, իր մաքուրը թող պիղծ դառնա, իր Բեղամբարին¹ պարտական թող լինի, ամեն

Սրան մոտ, 2ԺԶ (716) թվին

Աստծո օգնությամբ, ես՝ Մամբան՝ ամուսին արիական Հասանի, և մեր որդի Գրիգորը, լինելով տերերը այս հողի, որ մեր պարոններն են հաստատել, մենք տվեցինք այս Սուրբ ուխտին. Ճաճուռանց Չոլբեկանց Ձվատեղը: Ես՝ Գրիգորս, տվեցի Ծագունանց հողերի մեր բաժինն՝ իր չորանոցով², իմ որդուն՝ Տեր Սարգսին: Ով որ հանի [մեր ընծաները] Սուրբ ուխտի [պատկանելությունից], թող դատվի Աստծուց: Եվ միաբանները սահմանեցին, որ Սուրբ Ստեփանոսի տոնի պատարագը լինի իմ մոր և իմ ամուսին Ասփայի [համար]: Եթե մեկնումեկը պատարագը խափանի և կամ էլ ընծաները, թող դատվի Աստծուց: Այլև Մոխրաբակի մեր բաժինը տվեցինք Սուրբ ուխտիս:

ԴԱԴԻ ՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2ԺԴ (714) թվին

Աստծո կամքով, ես՝ Սմբատ իշխան՝ որդի մեծ Լիպարիտի, Տեր Հովհաննեսի առաջնորդության [օրոք], միաբանեցի Դադի վանքի Սուրբ ուխտիս և գնեցի Խրնտաշանց այգին: Եվ Եղեգիսում իմ գնած ձիթահանքը, նաև այլ ունեցվածք, ըստ իմ կարողության, նաև **Կանանչավոր** գյուղը և մյուսները,

¹ Աղբյուրի «Բեղամբար»-ը պարսկերեն փեղամբար բառն է, որ նշանակում է մարգարե և գործ է անվում միայն Մուհամեդի վերաբերյալ

² Աղբյուրում. «Չորեցով»

որոնք հաստատեցի, բոլորն արդար վաստակով [ձեռք բերեցի] և տվեցի այս Սուրբ եկեղեցուն: Տեր Անաստաս և մյուս միաբանները մեզ [համար] սահմանեցին. Ձատիկի կիրակին՝ Հարության օրը բոլոր եկեղեցիներում՝ մեկ պատարագ: Արդ, ով մեր տվածը իլի կամ պատարագը խափանի՝ 318 հայրապետներից նոգովված է:

Աստծո կամքով, ես՝ Հիսուս Քրիստոսի ծառա **Վախտանգ**՝ որդի Սմբատի, և իմ ամուսին **Նանա**՝ աղախին Քրիստոսի, միաբանեցինք Դադի վանքին և տվեցինք մեր հողերից՝ Չիչխա ձորի Բերդից մինչև Խոզենակի Մանանան: Մեծ հույսով տվեցինք նաև մի թանկագին մասունքակիր խաչ: Արդ, Տեր Գրիգորիս և միաբանները մեզ [համար] սահմանեցին. բոլոր եկեղեցիներում երկու օր պատարագ՝ Հովհաննի տոնին՝ Նանայի [և] Վարդանանց տոնին՝ **Վախտանգի** [համար]: Արդ, ով այս ընծաները կամ հողերը հանի Սուրբ վանքի [պատկանելությունից] և կամ պատարագները խափանի, 318 հայրապետներից նոգովված է և տեր է մեր մեղքերին:

ՈԼԱ (631) թվին

Աստծո կամքով, ես՝ Հասան՝ որդի **Վախտանգի**՝ Տեր Հաթերքի, Հանդաբերթի, Խաչենաբերթի և Հավքախաղացի, քառասուն տարի եղա ավագ [իշխանության]՝ շատ պատերազմներ [մղեցի] և Աստծո օգնությամբ հաղթեցի իմ թշնամիներին: Եվ ունեցա վեց որդի, բերդերը և գավառները տվեցի նրանց և ես եկա այս վանք՝ իմ եղբայր պարոնտեր Գրիգորիսի մոտ և դարձա կրոնավոր: Եվ **Հագուից** մեծ դժվարությամբ բերեցի այս խաչքարը և, ի հիշատակ իմ հոգու, կանգնեցրի այս Սուրբ Նշանը: Արդ, ովքեր ընթերցում եք [այս գիրը]՝ ձեր հոգիների համար, հիշեցեք [նաև] ինձ ձեր աղոթքներում:

ՈԼԱ (631) թվին

Ես՝ **Մամա** թագուհի՝ ամուսին Հասանի, դուստրը Կյուրիկե թագավորի, երեսուն տարի եղա ավագ [իշխանության]: Ես և իմ ամուսինը մեր հողերը թողեցինք մեր որդիներին և եկանք վանք՝ Տեր Գրիգորիսի մոտ, և այժմ մենք [էլ] նրա պես կրոնավոր [եղանք] և կրոնավորի հագուստ հագանք: Եվ կանգնեցրի այս խաչքարն, ի հիշատակ իմ հոգու: Ովքեր երկրպագություն անեք, հիշեցեք [ինձ ձեր] աղոթքներում:

ԽԹՐԱՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քրիստոսի շնորհով, և ես՝ Ասփե՝ դուստրն արքայաշուք Տարսայիճ իշխանի [իմ հոր] [և] իմ մոր՝ թագազարմ Մինախաթունի, իմ Քրիստոսապասկ զլխին՝ մեծափառ Գրիգոր իշխանին, լուսանվեր այս եկեղեցու շինության [գործում] նպաստ բերելով, մեծ քահանայապետ Տեր Հովհաննեսի համաձայնությամբ, իմ արդար ունեցվածքով, կառուցեցի Քրիստոսին պատարագելու Բեմի Սեղանը, որպեսզի Ծննդյան, Տեառնընդառաջի, Չատկի, Վարդավառի և Սուրբ Խաչի տոների բոլոր շաբաթ և կիրակի [օրերին], բոլոր եկեղեցիներում [պատարագն] ինձ [համար] մատուցվի: Նաև տվեցի մեր Խաս հողը, վերին հանդի կապը, [և] մեկ բահի ջուր [առու]¹: Եթե մեկնումեկը՝ մեր հարազատ կամ օտար, այս եկեղեցուց հանի [մեր ընծաները] կամ խափանի պատարագները, թող հեռացվի Որդի [Աստծո] փառքից:

Խորանի ձախ կողմում

Սուրբ Պողոպոս², մեծ Տեր Հովհաննես[իս]՝ այս եկեղեցու կառուցողին՝ որդի **Դովի**, եղբայր Հասան մեծ իշխանի, հիշեցեք [ձեր] աղոթքներում:

Սուրբ Մինասի աջ կողմում

Մինախաթունին՝ դուստրը Ջալալ մեծ իշխանի և ամուսին Տարսայիճի, հիշեցեք ի Քրիստոս:

Վանքի ներքևում գտնվող խաչքարի արձանագրությունն է

Աստծո կամքով, ես՝ Ասպա՝ դուստր Տարսայիճ մեծ իշխանի և Մամախաթունի, և ամուսին՝ Գրիգոր Հակայագոր իշխանի, որ որդին է Հասան մեծ և քաջ իշխանի՝ Աղվանքի Տիրոջ, կանգնեցրի այս խաչը, կառուցեցի այս կամուրջը՝ մեր [տոհմի]՝ նախնի, ներկա և ապագա հոգիներին ի հիշատակ:

Խումի ներքևի խաչքարի արձանագրությունն է.

Երբ ՈԾ (650) թվականին բարեպաշտ Պատրոնիկ Վասակը՝ թոռը Կյուրիկե թագավորի, որդին Հասանի որդի Սահառի՝ Հաթերքի, Հանդաբերդի, Հավքախաղացի տիրոջ, [և] եղբայրը՝ **Վախտանգի**՝ իր աթոռակցի, բերեց այս խաչը, [բայց] չկարողացավ հաղթանակի համար կանգնեցնել այն: Քանի որ

¹ Աղբյուրում այս հատվածն է. «... որ և տվի զմեր Խաս հողն վերի հանդի կապն Ա բահի ջուր...»

² Աղբյուրի «Սուրբ Պողոպոս» արտահայտությունը քերականորեն չի կապվում տեքստի շարադրանքին. հավանաբար Տեր Հովհաննեսի կառուցած եկեղեցին է կոչվել Սուրբ Պողոպոս

[այստեղ] գալու ժամանակ [ստիպված եղավ] հեռանալ: Եվ նրա որդին կազմեց և այստեղ բերեց այն, իսկ ինքը նահատակվեց քրիստոնեության համար և, ի տեսություն շատերի, լույս իջավ [նրա աճյունի վրա]: Հետո, ՈԾ (650) թվականին, [խաչքարը] կանգնեցրին նրա որդիներ **Խոյդան և Խոզախը**՝ ի հիշատակ նրա հոգու և իրենց երկար կյանքի համար: Ովքեր երկրպագություն անեք, հիշեցեք [ձեր] աղոթքներում:

ՈՀԴ (674) թվին

Ես՝ **Դովս**՝ դուստր Սարգսի, քույր Զաքարեի և Իվանեի, կառուցեցի այս գավիթը և մատուռը և տվեցի Ավետարան: [Տվեցի] **Հանկարկի** հողը և **Հակուսինան**, [իբրև] իմ ընծաներ: Իմ հոգու համար Աստվածածնի [տոնին] երեք օր պատարագ մատուցեք: Ով խափանի, չունի թողություն Աստծուց:

Այս է հանգիստ և շիրիմ վեհիմաստ և արդյունական վարդապետներ Գրիգորի [և] Տեր Եղիայի՝ այս Սուրբ ուխտի առաջնորդի: Ովքեր խորան եք մտնում՝ հիշեցեք ի Քրիստոս:

ՉԻԱ (721) թվին

Ամենակալ Աստծո հույսով, ես՝ Տարսայիճ իշխանաց իշխան՝ որդի մեծ **Լեպարիտի**, և իմ ամուսին Մինախաթունը՝ դուստրը Մեծ Զալալ Դոլայի՝ այս նահանգի կուսակալի: [Մենք], ում Աստված տվեց **Բարգուշատից** մինչև Լփնաց դաշտը, մեր արդար ունեցվածքով, կառուցեցինք [այս] Աստվածածին [եկեղեցին]: Ի փրկություն հոգու և ի երկարություն մեր կյանքի՝ սպասավորների կարիքների համար տվեցինք Սուսկատափի հողը, Նահատակի հողը և **Շկնիրի Ներքի ծաղկոցը**՝ Տաթևի [վանքին, իբրև] լուսագին: Եվ տարեկան մատուցվելու է տասը պատարագ ինձ՝ Տարսայիճիս, և Մինախաթունի [համար]. Հինգը՝ Հայտնության տոնին և հինգը՝ Զատիկին: Եթե մեկնումեկը՝ մերոնցից կամ օտարներից, մեր սահմանածը խափանի, [թող] նգովված լինի 318 հայրապետներից:

ԾԱՐԱՎԱՆՔ

Արցախ գավառի ընդարձակ, բայց մեծ գյուղ է. գտնվում է ընդարձակ դաշտավայրում, որտեղ նաև Ծարա վանքն է: Այս վանքի եկեղեցին սագաշեն է և մեծ, որը ամայության պատճառով մոտ է վերջնական քայքայման: Եկեղեցու շուրջ խաչքարազարդ գերեզմաններ են. այստեղից էր Հովհաննես Ծարեցի վարդապետը, ով գրեց իր ժամանակների պատմությունը:

ԾԱՐԱՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արտագրված վերևում հիշատակված ձեռագրից

Այն ժամանակներում, երբ մոնղոլները տիրել էին շատ երկրների մինչև **Ովկիանոս** ծով և Ստամբուլ, Պոնտոսից մինչև Եփրատ գետը, և գոռոզաբար ու ծանր հարկապահանջությամբ ճնշում էին բոլորին՝ մեծամեծներից մինչև փոքրեր, և մահվան ու գերության էին մատնում, այս դառը ժամանակներն էին, որ եղանք մենք՝ Տեր Հովհաննես Դոփյանց՝ տրուպ և նվաստ և տկար հոգի: [Եվ] հրաման հասավ մեզ, [որ] գնանք մեր առաջին հայրապետների Աթոռը՝ Հաղպատ: Այնուհետև վերադարձանք մեր հայրական և բուն տունը՝ մեր հարազատ, քաջ զորավար, հռչակավոր և արիասիրտ ավագ եղբայր Հասանի [մոտ]: Եվ նրա որդին [է] Գրիգորը՝ եկեղեցասեր և քահանայասեր, իսկ իր ամուսինը՝ բարի Ասփան՝ Տարսայիճ Մեծ Կոմսի և Սյունյաց կողմերի իշխանի դուստրը: Եվ մենք նայելով այս ձորակներին, որտեղով գետակներ էին հոսում, նրանց մեջ մի գեղեցիկ բլրակ [տեսանք], [և] ես ցանկացա այդտեղ... ... և սկսեցի կառուցել մի մատուռ: Եվ այս մտքին եկավ մեր եղբորորդի Գրիգորը, որ այս գավառի իշխանն էր և շատ այլ կողմերի վրա [էլ] իշխանություն ուներ: Եվ կամեցավ կառուցել Սուրբ Աստվածածինը՝ ի բարեխոսություն մեզ և բոլոր քրիստոնյաների: [Եվ] ես՝ Տեր Հովհաննես, սկսեցի այս եկեղեցու կառուցումը:

ԹԻՆՆԱՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Որն արտագրեցի նույն ձեռագրից

Հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու, ես՝ Սարգիս և Վարդան եպիսկոպոսներս, հիմարկեցինք այս եկեղեցիները ՈՂ (690) թվականին և աշխատանքի ընթացքում, երբ ավագ խորանի կառուցում էինք ավարտում, իմ եղբայր Տեր Սարգիսը փոխվեց ի Քրիստոս, [և] ես՝ Տեր Վարդան, մեծ դժվարությամբ և իմ արդար վաստակով, ավարտեցի [շինարարությունը] ՈՂԷ (697) թվականին՝ դառն ու դժվարին ժամանակներում, երբ մոնղոլները բազմաթիվ գավառներ ավերեցին և Սուրբ Գրիգորիսի Աթոռն ու վիճակն անցավ այլազգիների ձեռքը:

[Եկեղեցապատկան հողերը], որ հաստատված են Աջով և Սուրբ Նշանով և Սուրբ Գավազանով, [այս են] Հաղունա գետից մինչև Երասխ, մինչև Կտուհատի աջ կողմը, Վաղազնագետի Վակունին, [որ] Քարվանխում է, և Խոչագետը, Զարիսարն իր գետով, Հագուրին՝ Հագարագետով, Քարդա-

գետն՝ իր գետով և ամբողջ տարածքով, Դեղակը, Բելուկան իր գետով: Այս եկեղեցուն տվեցինք նաև [մեր] հայրենի հողերը՝ Փարախան, Գետանոցը և Եկեղեցաձորն՝ իր սահմաններով՝ մեկ լուծ Հողիպահեսում, մեկ լուծ՝ Տոդում, Գադում, մեկ՝ Մազրենիքում, Խաչենամարզը, Խորդեղը: Ով որ այս սահման[ներ]ը հետ վերցնի՝ կաթողիկոս կամ իշխան կամ հայրապետ, նգովված թող լինի երեք Սուրբ ժողովներից, Աստծուց և բոլոր սրբերից՝ անիծված, [և իր] բաժինը թող Հուդայի հետ ստանա:

ԹՈՂԱՆ

Արցախի գավառի ավերակ գյուղատեղի է մի գառիթափ ու դժվարամատչելի ձորում: Ունի մի կիսակործան սագաշեն եկեղեցի, որի ճակատին գրված է. «Աստծո կամքով, **Շահարազի** ժամանակներում, **Թաղուղի Սուրբուհուրի խանի** իշխանության և Տեր Գրիգորի՝ Գանձասարի կաթողիկոսության [օրոք], ես՝ **Տեր Եղիա**, կառուցեցի այս Սուրբ եկեղեցին՝ ի հիշատակ իմ կողակցի՝ **Բեզասի**, [և] որդու՝ **Ատտիբեզի** հոգիների, ՌՂԶ (1096) թվին»:

ՀԱԹԵՐՔ

Արցախի գավառի մեծ գյուղերից է՝ **Թառթառ** գետի ափին: Ունի փոքր սագաշեն եկեղեցի, որտեղ [պահվում էր] պատմագիրների հիշատակած՝ Հաթերքի Սուրբ Նշանը: Այն գետեղված էր արծաթյա պահարանի մեջ: Այս գյուղը Ջալալյանց իշխանների ոստանն է:

ԱՍՏՂԱԲԼՈՒՐ

Փոքր լեռ է Արցախի գավառում: Ծաղկաշատ է և գեղեցիկ: Համաձայն շրջակա վայրերի բնակիչների բանավոր ավանդությունների՝ այս լեռան վրա բազմաթիվ քրիստոնյաներ նահատակվեցին առ Քրիստոս հավատի համար, ում ոսկորները [նահատակությունից հետո] բազմաթիվ օրեր բացձածանչ լույս էին արձակում, որից էլ [լեռը] ստացավ իր Աստղաբլուր անունը:

ԴԻԶԱՓՈՅՑ

Արցախի աշխարհի բարձաբերձ լեռ է, ծածկված բազմաբուրյան ծաղիկներով: Բնակիչներն ինձ պատմեցին, թե այս լեռն իր անունն ստացել է այն բանից, որ հեթանոսները լեռան գլխին բազմաթիվ քրիստոնյաներ հավաքվելով և շատ փայտ կուտակելով, բոլորին հրո ճարակ են տվել՝ ի Քրիստոս նրանց հավատի համար. այստեղից էլ կոչվել է Դիզափայտ:

ՄԱՍ Բ

ԹԱՆԱՏԻ կամ ԹԱՆԱՀԱՏԻ ՎԱՆՔ

Հղկված քարով կառուցված շքեղ վանք է՝ Սուրբ Ստեփանոս Նախավկա: [Կառուցվել է] Տիրոջ հարյուր հիսունմեկ թվականին՝ Մխիթար վարդապետի վերակառուցյալ, ում մասին, Մաշտոց վարդապետի Պատմությունից քաղելով, Ստեփանոս Օրբելյանը գրում է¹. «Այն ժամանակ սուրբ և անպատմելի կարգով ծաղկում էր Թանահատի վանքը, որը գտնվում է վերին Սյունիքի մի լեռան ստորոտի բարձրադիր տեղում, անտառի մեջ: Այնտեղ կային մշտապես աղոթող նվիրյալ կրոնավորներ՝ հեռացած ամեն տեսակի փափուկ կերակուրներից, միայն ցամաք հացով ու լոկ ջրով էին հագեցնում իրենց քաղցն ու ծարավը, այն էլ օրը մեկ անգամ, երեկոյան դեմ: Լուռ ու մունջ, անվրդով, որպես վառ կանթեղներ կախված էին աղոթքի համար գիշեր ու զօր. և նրանց պաշտամունքային արարողությունները գիշեր-ցերեկ երբեք չէին դադարում: Սպասավորներից բացի, վանքի դռներից ոչ ոք դուրս չէր գալիս: Թեև շատ անգամ Սյունյաց իշխանների ու եպիսկոպոսների կողմից ստիպվեցին, բայց չհամաձայնվեցին կիրակիները թան, պանիր կամ յուղ ճաշակել. միայն բավարարվում էին բանջարեղենով ու ընդեղենով: Այդ պատճառով էլ թանահատներ կոչվեցին: Միայն գլխավոր տոներին ձեթ էին ճաշակում, այն էլ քիչ՝ բաժակներով: Այս մասին մենք տեղեկացանք երանելի Մաշտոց Սևանցու Պատմությունից: Բայց տեղի արձանագրություններում գտանք, որ եկեղեցին հայոց թվականից չորս հարյուր տարով առաջ է կառուցվել Սյունյաց իշխանների ու եպիսկոպոսների կողմից, Ստեփանոս Սուրբ Նախավկայի անունով:

Այդ սուրբ վանքում Մխիթար անունով վանահայր է եղել, որը ճգնությամբ անցել էր առաքինությունների բոլոր աստիճաններով և վայրենի գազանները՝ արջերն ու գայլերը, հնազանդեցնում էր սուրբ եկեղեցուն, ծառայեցնում էր վանքին, որը և ցույց է տալիս արձանագրությունը: Սուրբ հայրը վանքը կարգի գցեց և շատ տարիներ անց վախճանվելով՝ փոխադրվեց հրեշտակների շարքը: Նրա մարմինը փայտե արկղով դրվեց եկեղեցու մոտ գտնվող մի փոքր բլրակի վրա, որտեղ գետնափոր և սրբաշեն գերեզման պատրաստեցին ու նրան անփոփեցին այնտեղ, որը մինչև այսօր էլ մնում է և մեծամեծ

¹ Աղբյուրի այս հատվածի աշխարհաբարը դնում ենք ըստ Ա. Ա. Աբրահամյանի թարգմանության, տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 166-167

հրաշքներ է կատարում հիվանդների ու ցավագարների համար: Նրա բարեխոսությամբ Քրիստոսը թող գթա այս աշխարհին և մեզ՝ հետագայի թշվառացողներին»:

Եկեղեցու կառույցն ամեն ինչով վեհաշուք է, կառուցված է չորս որմնակից սյուների ու կամարների վրա, լայնությունն ու երկարությունը իննական քայլ են: Սյուների խարիսխներից վեր չընդհատվող շրջանակ է, որը, շերտավոր քանդակագործությամբ, պտտվում է [եկեղեցու] անկյունների և կամարների բոլոր կտրվածքներում¹: Սրբազան Խորհուրդի Սեղանները յոթն են. մեկը՝ Բեմում, իսկ վեցը՝ առաջին և վերջին դասերում: Արևմտյան կողմում՝ արտաքուստ, նույն որմի լուսամուտի շուրջ շերտավոր և գեղեցիկ զարդաքանդակներով կամարածն շրջանակ է: Նույն արևմտյան կողմում՝ դռնից վեր, բարձրարվեստ ու հրաշալի գեղաքանդակ հորինվածքներ են, իսկ հյուսիսային և հարավային կողմերում միանման խաչապատկեր զարդաքանդակներ, [որոնցից] հարավայինին առընթեր կիսաշրջան արևային ժամացույց է:

Չորս նույնաչափ լուսամուտներ ունեցող սրածայր գմբեթը վայելուչ կերպով վեր է բարձրանում [շինության] տանիքի կենտրոնում: Արևմտյան և հյուսիսային լուսամուտների միջև արծվի և առյուծի բարձրաքանդակներ են, [որոնցից] մեկը մագիլներով ցուլ է բարձրացրել, իսկ մյուսը մենամարտում է ցլի դեմ:

Հյուսիսային կողմում եկեղեցուն կից, կոփածո քարով կառուցված, կամարակապ փոքրիկ մատուռ է, որի երկարությունը վեց քայլ է, իսկ լայնությունը՝ չորս: Արևմտյան դռան ճակատային մասում ունի շքեղ շրջանակ, որի ներսում երիվարի վրա նստած [և] իր նիզակի տեզը առյուծի երախը մխրճած, կայտառ երիտասարդի [քանդակապատկեր] է: Ինչպես երևում է, այս մատուռը Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսի դամբարանն է, ով նահատակվեց Հերատուկ կնոջ ձեռքով **Մաղ** գյուղում: [Նրա մարմինը] նախապես թաղվեց Առգեազի վանքում, [հետո] այնտեղից տեղափոխվեց ու ամփոփվեց այստեղ: Դեռևս երևում է նրա տապանաքարը, և բնակիչների [պատմած] ավանդությունն էլ [նույնն է] հաստատում՝ պատմությանը համաձայն:

¹ Աղբյուրում այս հատվածն է «... բարձր քան զհարիսխ սեանցն շարունակ շրջանակ ծալ ի ծալ քանդակագործութեամբ՝ բոլորեալ ընդ ամենայն ելնէջս անկեանց և կամարաց»

Արձանագրություն Թանահատի վանքի

Արտաքին արևելյան որմի վրա՝ դեպի հարավ [գրված է]. «Կենարարի և անմահ Կուսածին Թագավորի կամքով, Արզունի աշխարհակալության, Խոշաքի իշխանության [օրոք], Պապաքի [և] Հասանի ողորմությամբ, [եւ]՝ **Էաչի բեկ՝ թոռը Խատի շահի՝** որդին Մխիթարի, մեր ձեռատունկ այգին [և] **Գայլայից հողը** տվեցի Սուրբ Ստեփանոս [եկեղեցուն]: Միաբանները սահմանեցին. Սուրբ Սարգսի տոնին վեց պատարագ՝ իմ եղբայրներ Հասանի և Սարգսի հոգիների համար. յոթ հարյուր թվին: Կատարողները թող օրհնվեն Աստծուց:

Սրա ներքևում

Աստծո կամքով, եւ՝ **Մանջար, Առթաճ** [և] Մելիքս, միաբանեցինք Սուրբ Ստեփանոս [եկեղեցուն և] տվեցինք Կկվաքարի հողը և Հովվենց հողը: Միաբանները տվեցին հինգ պատարագ Վարագա խաչի [տոնին]»:

Սրա ներքևում

Աստծո կամքով, եւ՝ **Մահնանա**, Էաչի և Մարիամ խաթուն պարոնների ողորմությամբ, Մխիթարի հոգու համար՝ մեր հայրենի կալվածքը տվեցի Սուրբ Ստեփանոսին և Սուրբ Նշանին: Միաբանները սահմանեցին երեք պատարագ Տյառնընդառաջին. երկուսը՝ Մխիթարի, մեկը՝ ինձ [համար]. ԶԺԸ (718) թվին:

Դռան հյուսիսային կողմում՝ արևմտյան որմի վրա

Քրիստոս թագավորի և խաչյալի [կամքով], մեծ և բարեպաշտ Աբաղա Ղանի հայկազնյան տոհմի և Թորգոմյան սեռի թագավորության, Տեր Հակոբի կաթողիկոսության և մեծատոհմ ու քաջ Պռոշի և [նրա] որդիներ Պապաքի, երիտասարդ Հասանի և Էաչիի [Ժամանակներում] պարոնների երկար կենդանության [համար] կառուցվեց Աստծո փառքի բնակարան Սուրբ Ստեփանոս եկեղեցին: Եվ սահմանեցինք [Աստվածածնի] [վերա]փոխման երեք օրերին, բոլոր եկեղեցիներում պատարագել Քրիստոսին՝ մեր մեծ Պարոն Պռոշի [համար]: Կատարողները թող օրհնվեն Աստծուց: Արձանագրեցինք մենք՝ պարոններս:

Սրա ներքևում

Աստծո կամքով, ես՝ **Անի** և իմ ամուսին **Մախախ** և Մուրադ փաշա, միաբանեցինք Սուրբ Ստեփանոսի Սուրբ Նշանին և տվեցի[նք] մեր գնած այգին:

Դռան հարավային կողմում՝ դրսից

Աստծո անունով, ես՝ **Բուբայի** թոռը, **Սամազալի** որդին, Աստծո անունով, ես՝ Մարգիսս, Թանադի վանքի Սուրբ Ստեփանոսին տվեցի **Ջաբնավարի** ցանքսի կալվածքը: [Միաբանները] ինձ տվեցին Հայտնության [տոնի] ինը պատարագ՝ անխափան: Ով խափանի, ԳՃԺԸ (318) հայրապետներից, նզովյալ թող լինի:

Սրա ներքևում

Ամենակալ Աստծո կամքով, ես՝ **Բոնարիտի Մամա**՝ թոռը Լիպարիտի, տերը՝ Տանձաթաղի, և իմ ամուսին **Մուսա**, միաբանեցինք Սուրբ Ստեփանոսին և մեր հոգու բաժին, արդար[որեն] [մեզ պատկանող] Տանձաթաղի կալվածքներից [եկեղեցուն] տվեցինք Մազմանեց և Ջառնաշինեց այգի[ներ]: Եփրեմ վարդապետ և միաբանները մեզ [համար] սահմանեցին պատարագ՝ Աստվածածնի տոնին: Եվ ով որ մեր տված վախմին հակառակ է, թող նզովյալ լինի ԳՃԺԸ (318) հայրապետներից. ԶՂԴ (794) թվին:

Դռանը կից՝ հարավային կողմում՝ դրսից

Աստծո կամքով, ես՝ **Վհարջահուռնեցի** որդի Ուքանս, տեր և միաբան Սուրբ Ստեփանոսի, արդար[որեն] ինձ բաժին հասած կալվածքներից [եկեղեցուն] տվեցի **Խալը, Ըղանը, Հողերը** [իրենց] չորս սահմաններով ու թմբերով: Վարդապետը և միաբանները [ինձ համար] սահմանեցին երկու պատարագ, [որ պետք է] կատարվեն Սուրբ Նշանի տոնին: Զ (700) թվին:

Դռան ճակատին

ՃԾԶ (756) թվին. Աստծո կամքով, ես՝ Ուքանի դուստրը՝ **Թաջերի**, ամուսինը Պոռշի որդի Հայոց Հասան սպարապետի, մեր հայրենի տան արդար ունեցվածքից Թանադի վանքի Սուրբ Նշան [եկեղեցուն] ընծա տվեցի: Սուրբ հայրապետը և միաբանները ինձ [համար] սահմանեցին չորս պատարագ՝ [մեկը]՝ Ավագ հինգշաբթի օրը, [մեկը]՝ Հոգեգալուստին [և] երկու պատարագ՝ Աստվածածնի [վերա]փոխման [տոնին]: Կատարողները թող օրհնվեն:

Հյուսիսային արտաքին որմի վրա

Աստծո կամքով, ես՝ **Խուրթուրեկս**, պարոններ Էաչիի [և] Մամախաթունի ողորմությամբ, Ջաղալտեղի հողը տվեցի Սուրբ Ստեփանոսին: Միաբանները մեզ [համար] սահմանեցին երկու պատարագ Սուրբ Ստեփանոսի տոնին:

Հարավային որմի վրա՝ հյուսիսային անկյան մոտ

Աստծո կամքով, ես՝ Միմեոնս, Մխիթարի հոգու [համար], պարոններ Էաչիի [և] Մամախաթունի ողորմությամբ, Սուրբ Ստեփանոսին:և Սուրբ Նշանին տվեցի մեր կալվածքը: Միաբանները սահմանեցին երեք պատարագ՝ Տյառնընդառաջին, երկուսը՝ Մխիթարին, մեկը՝ ինձ. ՉՁԸ (788) թվին:

Նույն որմի արևմտյան եզրին

Աստծո կամքով, ես՝ Թեկղի, միաբանեցի այս Սուրբ ուխտին և ընծա տվեցի: Միաբանները [ինձ] տվեցին երկու պատարագ՝ [Սուրբ] Թեկղիի տոնին. կատարողները թող օրհնվեն:

Հարավային որմի վրա՝ ժամացույցի ներքևում

Աստծո կամքով, ես՝ Մխիթար, միաբանեցի այս սուրբ եկեղեցուն և տվեցի քառասուն դեկան: Եվ միաբանները սահմանեցին երկու պատարագ՝ Խաչի երևման [տոնին]: Կատարողները թող օրհնվեն Աստծուց:

Նույն որմի վրա՝ լուսամուտից արևմուտք

Աստծո կամքով, ես՝ **Արևհար**, միաբանեցի Սուրբ Ստեփանոսին և եկեղեցուն տվեցի քառասուն դեկան: Եվ միաբանները սահմանեցին մեկ պատարագ՝ Գյուտ Խաչին [տոնին]: Կատարողները թող օրհնվեն Աստծուց:

Դռան հյուսիս արևմուտքում

Աստծո կամքով, ես՝ Բորինա, միաբանեցի այս Սուրբ ուխտին և իմ արդար ունեցվածքից ընծա տվեցի Սուրբ Ստեփանոսին: Միաբանները սահմանեցին մեկ օր պատարագ Սուրբ Խաչի [տոնին]: Կատարողները թող օրհնվեն Աստծուց:

Արևմտյան լուսամուտի ներքևում

Աստծո կամքով, ես՝ Ավագ խաթունս, ամուսինը **Խալաշահի** որդի **Վախթանկի**, Սուրբ Ստեփանոսի Վարագա Սուրբ Նշանին տվեցի հարյուր դեկան: Վարդապետները և միաբանները սահմանեցին չորս պատարագ. երկուսը՝ Ծառգարդարին, երկուսը՝ Ջատկին: Կատարողները թող օրհնվեն Աստծուց, խափանողները թող դատվեն Տիրոջից:

Արևմտյան կողմում՝ լուսամուտի շուրջ

Աստծո կամքով, ես՝ **Ասլանափայս** և իմ որդիները, միաբանեցինք Սուրբ Ստեփանոսի և Սուրբ Նշանի և տվեցինք հարյուր դեկան ընծա: Վարդապետները և միաբանները [մեզ համար պատարագ] սահմանեցին Ջատկի շաբաթը: Կատարողները թող օրհնվեն Աստծուց. ՉՇԵ (775) թվին:

Արևմտյան դռան ներքևում՝ հյուսիսային կողմում

Ամենակալ Աստծո կամքով, ես՝ **Ջումա**՝ թոռը Ամիր Հասանի, որդին՝ Էաչիի, և իմ կենակից **Խոնդչին**, Սուրբ Ստեփան[ոսի] գերեզման[ատանը] տվեցինք Ավագական ջրաղացը: Վարդապետները և միաբանները սահմանեցին [պատարագ]՝ Սուրբ Խաչի տոնին. երկուսը՝ իմ եղբորը
... ..:

Արևմտյան դռան մոտ՝ խորանի ներսում

Ովքեր այս քավարանում աղոթեք, [ձեր] աղոթքներում հիշեցեք Սահակին:

Հարավային դռան ներքին կողմում

Ես՝ **Ավագ Սուլիմ**, քառասուն դեկան տվեցի այս եկեղեցուն: [Միաբաններն ինձ համար սահմանեցին] երկու պատարագ՝ Սուրբ Մարգսի [տոնին]: Կատարողները թող օրհնվեն:

Հյուսիսային որմի վրա՝ ներսից

Աստծո կամքով, ես՝ **Թաճ Մրլաք**, դուստրը **Մխիթարի**, թոռը **Խալա** շահի, իմ գերեզմատանը տվեցի մեկ վեցկի¹: Միաբանները սահմանեցին չորս պատարագ՝ [Սուրբ] Սանդուխտի տոնին. երկուսը՝ ինձ, երկուսը՝ իմ մորը: Կատարիչները թող օրհնվեն Աստծուց:

¹ Վեցկի - Վեց լուծ եզներով վարող գուրթան

Հյուսիսային խորանի դռան ճակատին

Այս խաչը կանգնեցվեց ի բարեխոսություն Պետրոսի և իր ծնողների:

Մրա ներքևում

Ես՝ Ամիրշահս, իմ արդար ունեցվածքից տվեցի այս մատուռի ծախսը: Եվ Սուրբ ուխտի սպասավորները խոստացան երկու պատարագ՝ Դավթի և Հակոբի տոնին: Կատարողները թող օրհնվեն Աստծուց:

Վերին խորանի ճակատին՝ դեպի հարավ

Աստծո անունով, ես՝ Դեդս, ի հիշատակ ինձ և իմ ծնողների, քառասուն դեկան տվեցի եկեղեցուն:

Դռան առջև՝ ներսից՝ մի ընկած քարի վրա

Աստծո կամքով, ես՝ Ռոստամ և իմ ամուսին **Գուռճիկ**, միաբանեցինք Սուրբ Ստեփանոսին և մեր արդար ունեցվածքից մեզ հոգու բաժին տվեցինք: Վարդապետներն ու միաբանները սահմանեցին վեց պատարագ Ծառզարդարի [տոնին], երեքը՝ ինձ, երեքը՝ Գուռճիկին: Կատարողները թող օրհնվեն:

ԱՐՓԱ

Արփայի ափին տեղավորված հայկական գյուղ է. բնակիչները հայեր են՝ քսաներկու տուն: Գյուղում կա մի հրաշակերտ ավերակ եկեղեցի, որը դուռն ու բարավորները¹ դեռևս կանգուն են: Դռան վրա գրված է. «Ես՝ Տեր **Հոհաննես** Օրբելեանց՝ Սյունյաց արհիեպիսկոպոս՝ կառուցող այս եկեղեցու, աղաչում եմ հիշել բարեպաշտ իշխանաց իշխան Օրբելին և իմ արյունակից քաջ զինվորական Բուրթելին և իր իշխանափառ և Քրիստոսասեր կնոջը՝ **Վախախին**, [նրանց] նորաբողբոջ զավակներ **Բեշքենին** և Իվանեին: ՉՀԱ (771) թվականին»: Ինչպես որ այս գյուղը, այնպես էլ գետը, կոչվում են Արփա, բայց չեմ կարող հավաստի ասել՝ գյո՞ղն է իր անունը ստացել գետից, թե՞ հակառակը:

¹ Բարավոր - Դռան շրջանակի վերի սեմը, որը դրված է երկու կողային սեմերի վրա (Սեմ - շեմ դռան բացվածքի ներքևի այն հատվածը՝ փայտից կամ քարից, որին, փակվելիս, դեմ է առնում դուռը)

ՌՄԲՈՍՏԵԱՆ ԳԱՎԱՌ

Բարեհաջող ամառային եղանակ էր, երբ Գեղարքունիքից եկա և հասա Ռումբասար լեռանը, որ Ռումբոստյան գավառն է, [որ այսպես է կոչվում] Ներշապուռի Ռմբոստյան իշխանի անունով: Այս լեռը գտնվում է Սոթ մայրաքաղաքից արևելք, որն այժմ Արցախ նահանգի սահմանագլուխն է: Այս նահանգի լեռները հարուստ են զանազան մետաղների և հանքային ածուխի [հանքերով]: Այս լեռան կարկաչահու և սառնորակ առվակները հավաքվելով ձևավորում են Տրտում կամ Գրգվյալ գետը, այժմ՝ Թարթառ: Այս լեռը [պատված է] ծործորներով ու գահավեժ դարավանդներով, ձորերով ու մայրիների խիտ անտառներով: Շատ նշանավոր են երկու քաղցրահամ աղբյուրները, որոնք կարկաչուն վտակներով իջնում են լեռան երկու ծործորներից, ապա խառնվում են Տրտում գետին՝ զորացնելով այն: Գարնան բացվելուն պես, Ռումբասարի լեռները զարդարվում են գունազեղ ծաղիկներով ու կանաչ դալարիքով, որ ակնապարար ու սքանչելի տեսարան են ստեղծում: Այս օգտակար բարիքներից օգտվում են վրանաբնակ մահմեդականները՝ իրենց հոտերով:

ԼՈՂԱԲԵՐԴ

Ինձ երբեք չվախեցրին դժվարանցանելի ճանապարհները, ուր հազիվ հնարավոր էր ոտք դնելու տեղ գտնել, երբ ինձ ուղեկցող տեղաբնակներից լսեցի, թե այստեղից ոչ հեռու Լոհաբերդ ամրոցն է: Հաղթահարեցի բոլոր դժվարությունները և երեկոյան հասա այնտեղ և տեսա մի ահռելի ամրոց, որը կառուցված է միակտոր վեր խոյացող մի ժայռի գագաթին: Այն ավելի հարմար է համարել աստվածաշեն, քան թե՝ մարդու կողմից կառուցված: [Այս ժայռի] կատարը գրեթե հասնում է ամպերին և այդ բարձրության լայնանիստ գագաթի վրա կառուցված է անառիկ պատնեշով շրջապատված հաստահիմն պարիսպ: Ամրոցի միջնամասում դրա կառուցող Արցախի Ատրնեբսեհ իշխանի ապարանքն է, որտեղ կա նաև մահապարտների բանտ կամ գնդան և մեծ ու խորը ջրհոր, որի հատակը, ասում են, իջնում է մինչև Տրտում գետի մակարդակը: Այս ամրոցն ունի [մոտենալու] ընդամենը մեկ ճանապարհ, որով, ափսիթերս¹ գնալով, հազիվհազ կարողացանք ներս մտնել: [Մերձակայքի] բնակիչ ծերունիներն, ըստ ավանդության, պատմե-

¹ Աղբյուրում. «ափսիթերս». Յափսիթերս - Ձեռքերի ու ոտքերի վրա թավալվելով, գլուխկոնծի տալով

ցին, թե սա Ատրնէրսեհ իշխանի կառուցած Հանդաբերդն է, որի մասին գրում է Կիրակոս [Գանձակեցին], թե. «Բազում քահանաների և Վարդան վարդապետի հետ, նաև Դադիվանքի եպիսկոպոս Գրիգորը եկավ այն գյուղը, [որ գտնվում է] Գեղարքունյաց ծովի սահմանին՝ [դեպի] Խաչենի կողմը՝ Հանդաբերդի մոտ, որտեղ Ծարի ջերմուկն է: Բայց հետագայում՝ Լևոն Կիլիկեցի թագավորի ծախսով [ամրոցը] նորոգվեց, որտեղից էլ առավ Լևոնաբերդ անունը, որ կրճատելով, այժմ կոչում են Լոհաբերդ:

ԶԱՆԿԻ

Այս ամրոցում ոչ մի հնություն կամ արձանագրություն չերևաց, ուստի հետ դարձանք և մեծ զգուշությամբ իջանք այդ բարձունքից և մտանք Զանկի գյուղ, որը գտնվում է Լոհաբերդի դիմաց՝ Տրտում գետի ափին՝ անառիկ ձորի մի տափարակ վայրում: Այս գյուղը լի է պտղատու ծառերով, գյուղի միջով անցնում են անուշահամ ջրի առուներ, որ խառնվում են Տրտումին: Այժմ այս գյուղը Դարաբաղի տաճիկների ձմեռանոցն է:

Այս գյուղի ողբալի ավերակները ցույց են տալիս [իր] նախկին հզոր վիճակը և միայն վկայում են իրենց նախկին նախանձելի փառքի [մասին]: Վերին կողմում Սուրբ Կարապետի անունով եկեղեցին է, գերեզմանոցը և այստեղ բնակվող իշխանների մեծաշեն տների ավերակները: Եկեղեցու շինությունը միջին է՝ կառուցված է անհարթ քարերով. [եկեղեցուն] կից երեք փոքրիկ և անշուք մատուռներ են, որոնցում իշխանների առանց տապանագրի շիրմաքարեր են:

Այս մատուռներին կից մի քառակողմ, ձեռակերտ քարասալ է, որը երկու կողմից դռներ ունի: Սրա վրա կառուցված է վայելուչ գմբեթով մի մատուռ, որի ներսում կա խաչքար՝ վրան գրված. «Հայոց ՉԽԴ (744) թվին. ես՝ **Ուքմանս և Սուքմանս**, կանգնեցրինք այս խաչը, հանուն մեր հոր՝ Աշոտի և մոր: Հիշեցե՛ք [ձեր] աղոթքներում»:

Այս մատուռի վեմի տակ Աշոտի գերեզմանն է, [որի տապանաքարն] այնպես է տեղադրված, որ Սուրբ պատարագի ժամանակ, պատարագիչ քահանայի ոտքերը գտնվում են հանգուցյալի դամբարանի վրա: Այդ մահարձանի որմի վրա գրված է. «Աստծո հույսով, ես՝ Հասան և **Ջողբեզ և Ինանկ խաթուն**, ինչ որ Արթուրի որդիներն ունեին՝ Հասանի հողով ու մարգով, տվեցինք Սուրբ Կարապետ [եկեղեցուն]: [Եվ միաբանները] բոլոր եկե-

ղեցիները՝ [պատարագները] տվեցին Հասանին: Կատարողները թող օրհնվեն Աստծուց»:

Եկեղեցուց ներքև կա անհարթ քարով կառուցված մեկ այլ մատուռ ևս, բայց այժմ ավերակ է:

Այս գյուղը շրջապատում են անմատչելի ձորեր և անդնդախոր վիհեր, որտեղ, արաբների Բուղա ուստիկանի ժամանակներում, ամրացան Հայոց տոնելի իշխանագունները, բայց նա, մեր անխոհեմ իշխանների մատնության պատճառով, ինչպես որ Ատրնեբսեհին ընտանիքով հանդերձ՝ Լոհաբերդից, նույնպես և մյուսներին՝ այս անմատչելի ձորերից, հանեց ու գերության քշեց, քանի որ Աստված նրանց մատնել էր նույն սոսկալի չարչարանքներին: Այդ վայրերի անառիկության և այնտեղ իշխանների ամրանալու մասին գրված է մի երկաթագիր Ավետարանում, որ մինչև հիմա մեծ հարգանքով պահպանվում է Վարդաշեն գյուղի եկեղեցուց: Այստեղ երևում է, որ սուրբ և մեծ Վարդանի պատերազմից հետո, մեր շատ իշխաններ, պարսիկների, [ապա] արաբների պատճառով, ապավինեցին այս խորաձորերին և, ընտանիքներով ամրացան հենց այստեղ. կառուցեցին տներ ու ամրոցներ և ապրեցին մշտական ապահովության մեջ: Սրանցից մեկն էր Բակ իշխանը, ինչպես երևում է հետևյալ հիշատակագրությունից. «Բակ իշխանի թոռ, **Խախապատի** որդի՝ բարեպաշտ **Ջաջուռ** իշխանի քրիստոսասեր և բարեպաշտ Վանենի անունով դուստրը, այն ժամանակ, երբ մեր ծովացած մեղքերի պատճառով Սուրբ Վարդանն իր գորքով պարտության մատնվեց, այս Բակ իշխանը փախավ գնաց մի ամրոց: Եվ պարսից զորքն ու ուրացող Վասակը հետապնդեցին [նրան] և շրջապատեցին ամրոցը: Բակ իշխանը բարձրացավ պարսպի վրա և նախատեց ուրացող Վասակին և պարսից զորավարի առաջ հիշատակեց այն բոլոր չարիքները, որ [Վասակը] գործել էր Հայոց աշխարհում: [Այնուհետև], գիշերով, յոթ հարյուր մարդկանցով, Հագկերտ արքայից փախավ Արցախի բերդ և քրիստոնեական բարեպաշտ հավատով մնաց [այնտեղ], մինչև բարեպաշտ **Ջաջուռ** իշխանի և սրան որդեգրված քրիստոսասեր Վանենիի օրերը: Եվ երեք հարազատ, բարեպաշտ իշխանների՝ Չալալի, Չաքարիայի և Իվանի իշխանության [օրոք, հենց] նա էլ ստացավ այս աստվածախոս Ավետարանը՝ ի հիշատակ և փրկություն մեր բարեպաշտ **Ջաջուռ** իշխանի հոգու, որը դրեց Հավապտուկ կոչվող սուրբ եկեղեցում, որը կառուցված է Աստվածածնի անունով և որտեղ **Ջաջուռ** իշխանի և մեր նախնիների [վերջին] բնակությունն ու շիրիմ[ներ]ն են: Այն

[գտնվում] է Արցախի աշխարհում, Խոխանաբերդ կոչվող ամրոցի դիմաց: Եկեղեցու սպասավորները, [Ավետարանը] վերցնելով, սահմանեցին. Սուրբ Հոգու գալստյան տոնին՝ տարեկան մեկ օր պատարագ մատուցել Ջաջուռ իշխանի [համար]: Ով այս հիշատակը հաստատ պահի, թող օրհնվի Աստծուց, իսկ այս գիրքը այս Սուրբ ուխտից, ինչ պատճառով էլ որ լինի, հեռացնողը թող դատվի Տիրոջից և Կայենի վարձքին թող արժանանա:

Արդ, այս [հիշատակարանը] գրվեց Հայոց ՈԶԱ (681) թվականին, Կայեն գավառում, Հավապտուկի գերահոջակ Սուրբ ուխտում, Սուրբ Աստվածածնի և Սուրբ Գիգորի հովանու ներքո, ձեռամբ մեղապարտ Ստեփանոսի, **աթաբեգ** Իվանեի և նրա որդի Ավագի իշխանության, և քանի որ Վրաստանում թագավոր չկար՝ [թագավորի] դուստր Թամարի աթոռակալության և Հայոց Տեր Կոստանդինի ու Աղվանից Տեր Հովհաննեսի հայրապետության [օրոք]: Արդ, աղաչում եմ, ովքեր ընթերցեք կամ ընդօրինակեք, ի Տեր Աստված հիշեցե՛ք այս Մատյանի ստացող՝ քրիստոսասեր Վանենի պատրոնին, և հիշեցե՛ք ի Քրիստոս նրա հորը՝ բարեպաշտ Ջաջուռ իշխանին և նրա մյուս սուրբ նախնիներին: Այս տարի եկավ Նետողաց ազգը և հիմնիվեր ավարեց Գանձակ մայրաքաղաքը, կոտորեց մարդկանց և անասուններին և բազում քրիստոնյաների»:

Ըստ Աղվանից պատմության շարադրանքի՝ հավանական է թվում, որ սա այն հովտաձև տափարակն է, որտեղ պահված մնացին Վերին Խաչեն գավառի կրոնավորների թաքցրած սրբոց նշխարները: Բայց քանի որ այս [վարկածը] հիմնավորող ապացույց չունեմ, այդ պատճառով այստեղ դնում եմ Մովսես Կաղանկատվացու Պատմության մի հատված և [այն] հանձնում եմ նրբամիտ քննողների դատաստանին¹.

«Ճմարտապատում դրվագներ Իսրայելի միանձնանալու մասին քիչ հայտնաբերեցի: (Կյանքի) սկիզբն անհայտ է, այլ այն միայն կշարադրենք, ինչ հիշում ենք: Մի լրիվ տարի լեռան վրա, գետնին ծունկի եկած էր քնում: Մի գիշերվա չորրորդ ժամին հրաշալի սքանչելի լույսով փայլատակող մի տեսիլք է երևում. միաժամանակ անուշ մի բուրմունք տարածվելով՝ լցնում, քաղցրացնում է նրա հոտոտելիքը. իմաստություն է թափվում նրա մեջ, որը նրան խելամիտ է դարձնում, և սա մտաբերում է բոլոր ասվածները, անցյալ

¹ Աղբյուրի այս հատվածի աշխարհաբարը դնում ենք ըստ Վ. Առաքելյանի թարգմանության, տե՛ս Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1969, էջ 158 - 162

ժամանակների հայտնության մեծ խորհուրդը, մեծերի առաջին պարզև հանդիսացող ավետիչ քարոզությունը, թե որպե՞ս կամ ի՞նչ ձևով ընդունվեցին, կամ որպիսի՞ մարդկանց կողմից և ո՞վ որտեղ էր, որոնք այդուհետև մարտնչեցին և նահատակի անուն ժառանգեցին, կամ որտե՞ղ աստվածային գանձը թաքցրին, և թե դու ի՞նչ պետք է անես: Այս ամենը նրան ասվեց կրկին անգամ. այդ մարդը զարթնելով գրեթե մի լրիվ ժամ ահուդողի մեջ էր: Ապա վեր կենալով այնտեղից՝ սիրտը բացում է. Աստծո առաջ բազկատարած լինելով՝ գոհությամբ առավոտվա աղոթքն է կատարում»:

Մյուս օրը երբ մտաբերում է աստվածային խոսքը, թե՛ «Վա՛յ նրան, որ Տիրոջ գործը հապաղելով է կատարում, շտապ իջնում է լեռնից, հետը վերցնելով իր սպասավորին՝ աճապարանքով անցնում է եպիսկոպոսանոցի եկեղեցապատկան ավանը. մեծ զգուշությամբ ներս մտնելով՝ մանրամասն, ճշգրիտ կերպով եպիսկոպոսին պատմում է խորհրդավոր հայտնությունը ամբողջությամբ, ասում է. «Իմ տեր, չծուլանանք Աստծո պատվերը ուշացնելով, այլապես գուցե իբրև զլացողներ դատապարտվենք. Հետամուտ եղիր այս գործին և շուտափույթ կատարի՛ր, որպեսզի Աստծո գանձը հայտնաբերվի»: Դավիթ եպիսկոպոսը, որ Մեծկողմանքի առաջնորդն էր, այս ամենը լսելով, մոտ մի ժամ մտախոհ դարձավ, նա իր մտքում խորհեց և վերցնելով իր հետ պարկեշտ քորեպիսկոպոսներից ոմանց և նրանց հետ միասին պատմեց Ադվանքի Ուխտանես եպիսկոպոսին: Այս վերջինը լսելով այդ, ցնծությամբ գոհություն է հայտնում Տիրոջից և խիստ զարմանում է եպիսկոպոսի պատմության վրա, որը պատմում էր հոր տեսիլքը, թե ինչպե՞ս արժանի եղավ այդ հայտնությանը: Այդ առիթով կաթողիկոսը հրամայում է մեծ ժողով անել: Նաև կանչեցին Արցախի կողմերի, որին Մեծիրանք են կոչում, եպիսկոպոս քաջ Հովելին, որը այնտեղ գալով խիստ խոսքերով հանդիմանեց կաթողիկոսին և Դավիթ եպիսկոպոսին, թե՛ «Ինչո՞ւ եք լսում այդպիսի դատարկաբանություն, ականջ եք դնում ցնորական տեսիլքներին, երբ Աստվածաշունչը մեզ սովորեցրեց դրանք չընդունել: Քանի որ առաքյալների ու ավետարանիչների քարոզելուց հետո այդպիսի երևույթներ տեղի չեն ունեցել, ապա յաժմ ևս չպետք է լինի: Իսկ ինքը օժտված էր մեծ գիտությամբ և հմուտ էր Աստվածաշնչին»:

«Այդ ժամանակ սուրբ հայրապետը նրան պատասխանելով ասաց, որ ըստ Աստվածաշնչի այդ ճիշտ է, բայց քանի որ ինչ-որ նոր և չքնաղ բան է այս տեսիլքի պատմությունը, կարող է Աստծուց լինել, և մենք հակադրվելով

դրան, իբրև զլացողներ դատապարտվենք. կարիք չկա հակառակվելու, թերևս աստվածամարտներ դառնանք, չպետք է այդ հայտնությունը մտա-
ցածին համարել, քանի որ առաքյալներից հետո բոլոր սրբությունները
Սուրբ Խաչի հետ միասին և երկնային ծածկված գանձերը վերջին ժամա-
նակներս մարդկանց տեսիլքով զանազան տեղերում՝ Երուսաղեմ սուրբ
քաղաքում և շատ քաղաքներում հայտնաբերվել են, որ այժմ տիեզերքը լցվել
և եկեղեցիները պայծառացել են: Հենց այստեղ՝ Աղվանքում, բազմաթիվ
վայրերում հայտնաբերվել են սրբերի մասունքներ. ուստի սա որ այժմ
երևում է, նոր զարմանալիք չէ, քանի որ Աստծո գանձերից ոչինչ չկա, որ հո-
դում թաղված մնա: Պետք չէ ճշմարտությունը ստության հետ դեն նետել ու
Աստծո գործը սասանայի չարչարանք համարել, այլ անհրաժեշտ է ստույգ
կերպով քննել և ճշտությամբ վերահասու լինել, ինչպես Սուրբ առաքյալն է
ասում, թե՝ «Ամեն ինչ փորձեցե՛ք, բայց բարի՛ն ընդունեցեք»: Դարձյալ կա-
թողիկյան թղթերի (Աստվածաշնչի) մեջ ասվում է, թե՝ «Ամեն հոգու մի՛
հավատաք, այլ ընտրեցեք այն հոգին, որ Աստծուց է»:

«Արդ, դուք՝ այն կողմերի փոխանորդ եպիսկոպոսներ, գնացե՛ք, յուրա-
քանչյուրդ իբրև վերակացու քննեցե՛ք և վերահասու եղեք, ավելի Աստծուց
խնդրեցեք, արդյոք դա աստվածայի՞ն է, թե մի տեսակ ցնդաբանություն, քա-
նի որ սասանայի փորձությունները և մարդկանց խաբեությունները հայտ-
նի են, բայց Աստծուց եկած շնորհները ավելի ևս հայտնի են: Արդ՝ ինչպես
որ Տեր Աստված այն տեղում ցույց կտա և կհայտնի ձեզ զաղտնիքը, դուք էլ
օրը օրին մեզ կտեղեկացնեք»:

Այդ ժամանակ երկու եպիսկոպոսները՝ Դավիթն ու Հովելը, կամավոր
կերպով ընդունում են հայրապետի պատվերները և հրաժեշտ տալով, Սուրբ
Հոգու առաջնորդությամբ Մեծկողմանքի Ռոստակ գավառը՝ Չղախյան հո-
վիտը՝ Ասպարիսաձև դաշտակը Տրտու գետի ափին, որը գտնվում է Մեծի-
րանքի վիճակում: Եկան տեղավորվեցին նշանավոր անտառում՝ մի քիչ
բարձր տեղում՝ սարավանդակ վայրում: Այնտեղ կար մի փայտաշեն մա-
տուռ՝ խեցիներով երեսպատված, խաչանիշ զարդաքանդակներով դրվագ-
ված, պատերը զարդափայլ գեղեցկությամբ հորինված: Արդ, երբ այդ լուրը
տարածվեց՝ աճապարանքով հավաքվեցին անվանի մարդիկ, քորեպիսկո-
պոսներ, քահանաներ, սարկավագներ, հարյուրների գավառապետեր, դե-
կավարներ ու մեծամեծներ, գործակալներ, տղամարդկանց ու կանանց ժո-
ղովրդական բազմություններ, որպեսզի բոլորը մասնակցեն Աստծո սքան-

չելիքի ցուցադրությանը: Ապա եպիսկոպոսները հրամայեցին, որ մունետիկները հանդիսավոր թափորի մեջ հայտարարեն, որպեսզի հաստատուն կերպով երեքօրյա պաս պահեն և աղոթք անեն, քանի որ նրանց մեջ քիչ չէր երկպառակությունը: Մի մասը հավատում էր, մյուս մասը չէր հավատում: նույնիսկ ինքը՝ գլխավոր եպիսկոպոս Հովելը, խաբեություն էր համարում: Երբ երեքօրյա պասի ժամկետը լրացավ, սրբատուն Բսրայելը բահը ձեռքն առավ և հրամայեց աներկյուղ փորել: Բոլորը միահամուռ ծունկի եկան և սկսեցին նայել նշված տեղը: Այդտեղ միատեղ հավաքված բազմաթիվ մարդիկ, մասնակցելով այդ գործին, իրենց փեշերով կրում էին հողը հետևե. ծանր աշխատանքից հոգնեցին, բայց չկարողացան տենչալի ու ցանկալի գանձը գտնել: Ապա այնուհետև քանդեցին արևելյան կողմի փայտաշեն հարկն, ուր կանգնած էր Տիրոջ մեղսաքավիչ պատարագի սեղանը: Այնտեղ հետախուզելով, որոնելով սեղանի տակը՝ մոտ երեք կանգուն փորեցին: Հանկարծակի այդտեղից չափազանց քաղցր ու անուշ բուրմունք տարածվեց: Եվ լցվելով հաճելի առատությամբ՝ շատերի հոտոտելիքները ընդմիջտ քաղցրացրեց. այդ բուրմունքը այնպես ճշգրիտ կերպով նմանվում էր բյուրավոր խնկերի ու բազմազան ծաղիկների ազնվական բույրերին, որ բոլորը միահավասար զարմացած էին մնացել: Երբ տասը թիզ փորեցին, գտան երկու արծաթյա արկղեր, որոնց վրա դրված էր կապարե կնիք, կնիքի վրա հաստահեղույս մեխերով մեխված մի ոսկեձույլ տախտակ, իսկ սրա վրա գրված էր ասորերեն ու հայերեն: Քանի որ մեծաքանակ ամբոխով լցված հրապարակում աստվածային այդպիսի հրաշագործություն կատարվեց, ուստի մեկից մյուսին փոխանցվելով զարմանքը չափազանց մեծանում էր: Մարդիկ, միմյանց գլխի թափվելով, ձգտում էին սրբությունների տապանակները տեսնել, որովհետև սրբերի սիրո համար հավատով տոչորված էին»:

«Այնուհետև այնտեղ եղավ սրտալի ուրախություն, և նայողները ակնավայելուչ տեսարան դիտեցին: Բազմաթիվ սուրբ մարդիկ ու քրիստոսասեր եպիսկոպոսներ Աստծո հրաշալիքների վրա նույնպես զարմացան, որի համար մեծ օրհնությամբ գոհացան Աստծո անպատմելի պարզկներով: Դրա համար Աստծո մարդ Բսրայելը եպիսկոպոսների և ժողովրդի առջև մեծ հարգ ու հեղինակություն ձեռք բերեց, ուստի նրան պատվում էին ըստ իրեն արժանի սրբության»:

«Ապա եպիսկոպոսները Իսրայելի և պատվավոր քահանաների հետ միասին առանձնանում և բաց են անում սրբության տապանակների մատանու կնիքը. այնտեղ գտնում են Քրիստոսի փրկարար Խաչի մի մասը: Նույն ինքը՝ Արքիդական քորեպիսկոպոսը, կարդում է ոսկեձույլ տապանակի գրությունը, որը հետևյալն էր, թե՛

«Առանձնացրած մասունքները Երուսաղեմի սրբերինն են»»:

ՈՒՂՏԱՊԱՆ

Այնտեղից ելանք և բարձրացանք մեծ Մոավ լեռան բազուկի վրա [մի վայր], որը հնում Գորտագարակ էր կոչվում, իսկ այժմ՝ Ուղտապան: Այս ավերակը գտնվում է Դադիվանքից վերև, Մոավի ամրապինդ լեռների միջև, որը տաճիկներն անվանում են Ղանլի գյուղ՝ այս լճի մոտ կատարված սպանության և դիակը նույն այդ լիճը նետելու դեպքի պատճառով: Այս վայրը նախկինում քրիստոնյա բազմությունների [համար], կովկասյան կատաղի [հրոսակներից ազատվելու] ապաստարան էր: Այստեղ նաև ամրացավ Աղվանից կաթողիկոսը, ինչի մասին Աղվանից պատմիչն այսպես է գրում¹. *«Եթե, օրինակի համար, մարդ փախչի առյուծից, բայց նրան արջ հանդիպի և ազատվելով նրանից ապաստանի իր տանը ու ձեռքերը պատին հենի, բայց նրան օձը խայթի»:* Այն օրերը այսպես վրա հասան մեզ: Քանի որ սրից, ինչպես ահեղ առյուծից, ջարդ ու փշուր անող արջի մագիլների մեջ, այսինքն՝ սովի բերանն էին ընկնում: Եվ այդ պատճառով լքված, թուլացած, սովահար ակամայից գերության էին դիմում, ինչպես որ թշնամու կատաղի տեսքի ահից փախչում և չարաթույն օձերից խայթվում էին: Ապա այն ծովային այլիքների մեջ ծածկվելու հետ միաժամանակ, սկսեցին հետամտել նաև մեր կաթողիկոսին. հանեցին նրան վիմահատակ լեռների ապառաժոտ մի գյուղից, որ Կողթ-ագարակ² էին կոչում: Նա թողել էր իր կահկարասիները, գանձերը, ձի էր հեծել և փախել նրանց հետապնդումներից»:

ԼԱԶԻՆ ՂԱՅԱ

Անառիկ ամրոց է Մոավ լեռան հարավ արևելքում. շրջապատված է սուկալի ձորերով ու վիհերով: [Կառուցված] է վեր խոյացող միակտոր քարածայրի վրա, որի գագաթին լայնանիստ տափարակ է: Մի կողմից դժվա-

¹ Նույն տեղում՝ էջ 120

² Մեր աղբյուրում. «Գորտագարակ»

րամատույց կածան է, որով մեծ դժվարությամբ էլանք և մենք: Ամբողջ առջևով հոխորտաձայն հոսանքով անցնում է Թարթառ գետը, հնում՝ *Դրդվյալ*: Այս խորածորում Ներսեհ Փիլիպյանը անգթորեն սպանեց իր ազգական Վարազ Տրդատին, նրա որդուն և Վարազ Տրդատի եղբորորդի Ստեփանոսին, [և] նրանց արյունը, Դրդվյալ գետին խառնված, ասես դեռ բողոքում է երկնքի [առաջ] և վրեժ է պահանջում:

ԴԱՂԻ ՎԱՆՔ

Ուղեկիցներին հետ այն սուկլալի ժայռն անտեղի բարձրանալով, այդ ամբողջում որևէ հնություն չտեսա և անարդյունք [մնալով], նույն դժվարությամբ իջանք [դեպի] Դաղի վանքի անդնդախոր վիհը՝ որպես ուղեցույց վերցնելով մի մահմեդականի: Մի անհնարին երկյուղ էր մեզ պատել, և սառը քրտիք էր հոսում [մեր] ճակատներից. սիրտս անընդհատ բաբախում էր, մանավանդ որ այդ վայրերը Արցախ նահանգի ավազակների և ասպատակների դարաններ են: Ի վերջո, Բարձրյալի Աջի առաջնորդությամբ, անվտանգ մտանք Դաղի վանքի տարածք:

Այս մենաստանը [Դաղի վանք է կոչվում] Թադեոս առաքյալի Դաղի աշակերտի անունով, գտնվում է Մռավ լեռան ստորոտին, Տրտում գետի մոտ՝ մի գառիվայր տեղում, **Մեծ Կունեի** խորածորում, որն այժմ կոչվում է Քոլանիկ: Նախկինում սա Վերին ու Ներքին Խաչենի և Հանդաբերդի թեմի եպիսկոպոսանիստ է եղել և ծառայել է իբրև մյուս **Վախտանկյանց** իշխանների գերեզմանատուն:

Տարբեր ժամանակներում այստեղ հետզհետե կառուցվեցին նոր եկեղեցիներ, ինչպես վերջում Արգուխաթունը, որ, ըստ իր ամուսնու կտակի և որդու [ցանկության], Հայոց ՈԼԳ (633) թվին, այստեղ իր ամուսին **Վախթանկի** գերեզմանի վրա կառուցեց Աստծո փառքի հրաշակերտ մի եկեղեցի:

Թադեոս առաքյալի աշակերտ Դաղի անունով [կառուցված] հին եկեղեցին այժմ բացարձակապես չի երևում, սակայն, ինչպես երևում է հնագույն [շինությունների] ավերակներից, որ կառուցված են անհարթ քարով, նույն հիմքի կառուցված է նոր [շինություն]: Մրա երկարությունը երեսուն քայլ է, լայնությունը՝ տասնհինգ, սագաշեն է, առանց սյուների: Մրբության շքեղաշեն Սեղանը դեռևս կանգուն է: Վասակ նահատակի որդի Գրիգոր արքեպիսկոպոսն այս [եկեղեցուն] կից անհարթ քարով կառուցեց մի հոյակապ գավիթ՝ չորս վայելուչ սյուներով:

Գավթին կից նույն եպիսկոպոսը կառուցեց մեկ այլ սագաշեն եկեղեցի ևս, որի դուռը բացվում է առաքելահիմն եկեղեցու մեջ. [այս եկեղեցին] նույնպես [կառուցված է] անհարթ քարով: Սրա առջև անհարթ քարով կառուցված գեղեցիկ գավիթ է, որի ներսում **Տպելի** որդի Սարգսի գերեզմանն է (Հայոց ՉԽԲ (742) թվին): [Այս] գավթի առջև մեկ այլ գավթաձև երկար ու ձիգ սրահ է, որի վերին ծայրում կա, այժմ պատվանդանից ընկած, մի ահռելի խաչքար, որի մասին Վախթանգ իշխանը գրում է. «Մեծ դժվարությամբ հասցրեցի այստեղ»:

Այս գավթանման սրահի արևմտյան ծայրում շքեղ զմբեթով զանգակատունն է: Զանգակատան մոտիկ, դեպի արևելք երկու մատուռներ են, որոնց ներսում կան երկու վեհաշուք քանդակագործությամբ խաչքարեր: Թեպետ Սանահնի վանքի գերեզմանատան Տուտեորդու շիրիմի քանդակագործությունը գերազանցում է շրջակա վանքերում և գերեզմանատներում բոլոր եղածներին, սակայն սրանց համեմատությամբ, այն [կարելի է] համարել անարվեստ և անփորձ [վարպետի գործ]¹: Այս գեղաքանդակ խաչվեմերի շուրջ գրված են երկու եպիսկոպոսների անուններ, այսպես, առաջինինը. «Էին գորությամբ, ես՝ Հասանի որդի Աթանաս, կանգնեցրի այս Սուրբ Նշանը՝ ի հիշատակ իմ հոգու»: Եվ երկրորդինը. «Աթանասի սնուցող Տեր Գրիգորին հիշեցե՛ք ի Քրիստոս»:

Այս խաչվեմերի վրա քանդակված տառերի ձևերը շատ նման են Վիեննայում և Մոսկվայում տպագրված նորաձև վայելչագրություններին, որոնց նմանը դեռևս չեմ տեսել այլ վանքերի ու եկեղեցիների արձանագրություններում: Այս ճարտար փորագրությունները ավելացնում են իմ հայրենակիցների հնարագետ ձեռքերի փառքը, ովքեր տակավին տասներեքերորդ դարում ցույց են տվել իրենց հատուկ ճաշակի ուժն ու մատների ճարտարությունը, երկաթե հատիչը ամուր քարի վրա առավելագույն նրբությամբ շարժելով [այնպես], ինչպես հիմա գրիչը՝ թղթի վրա: Վշտալի հայացքով երկար նայեցի այս տառերի ձևերին և [դրանցով] հիանալով՝ օրհնեցի այսպիսի պարզներ Տվողին և, դեռևս երազանքներիցս ու զարմանքիցս չհագեցած, շարժվեցի դեպի մեծ եկեղեցու կողմը՝ անցնելով ուղղագիծ փողոցի կամարաշեն դռնով:

¹ Աղբյուրում. «Խամաշեն և անարուեստ»

Այս պողոտայի, որի հինարկուն անհայտ է, ներքին կողմում չորս վայելուչ սյուներով, Հայոց ՈԿ (660) թվականին Հասանի որդի Գրիգոր արքեպիսկոպոսի կառուցած եկեղեցին է, այժմ՝ աղբով լի: Այս եկեղեցու մասին իմ ուղեցույցը պատմեց, թե. «Մի ձմեռ, իմ ազգական [մեկը] որոշեց իր ոչխարների հոտն ու անասունների նախիրը պահել այս եկեղեցում: Թեպետ շատ խրատեցինք չանպատվել Աստծո տունը, բայց նա մեզ չլսեց և Տիրոջից պատուհասի ենթարկվեց: Հենց նույն ձմռանը, իր ամբողջ տնով, ընկավ զանազան ձախորդությունների մեջ և իսպառ կորցրեց իր ունեցվածքը: Ուստի ահը պատեց մեզ և այն օրվանից այս [եկեղեցին] պատվում ենք ուխտ ու մատաղ [անելով]:

Այս եկեղեցու դռան [մոտից] բաժանվում են երկու ճանապարհներ: Մեկն իջնում է գինու մառան և դրա հնձանը, իսկ մյուսը բարձրանում է դեպի միաբանների սենյակները: Այդ մառանում և քարաշեն հնձանում կան երեք կարասներ՝ որոնցից յուրաքանչյուրը հազար լիտր գինի է տանում: Այս մառանի վերևում Ջալալ իշխանի գեղեցկակառույց կացարանն է, ով, երկրի կառավարումը հանձնելով իր վեց որդիներին, թողեց աշխարհը և այստեղ մեկուսանալով՝ [դարձավ այս վանքի] միաբան: Մառանի և սենյակների առջև մեծ այգիներ են՝ այժմ ավերակ, և միայն վայրենացած մրգատու ծառերն են դեռևս աճում ու բազմանում:

Բարձր լեռներից իջնում են անուշահամ աղբյուրներ և, այգիները ոռոգելուց հետո, [հոսում և] խառնվում են Թարթառ գետին:

Թեև իմ ուղեկիցներն ինձ ստիպում էին վերադառնալ, բայց Հայաստանի հայրենասեր հոգին թույլ չտվեց: [Ես] մի ամբողջ ժամ մնացի իշխանի սենյակում և արտասուքների աղի ցողով այտերս թրջելով՝ հիշեցի Վախտանկին, Ջալալին, Վասակին, Հասանին և եպիսկոպոսներ Գրիգորին ու Աթանասին, Արզուխաթունին և նրանց մյուս սրբագույն Գինակիցներին: Եվ այլևայլ [մտածմունքներից հետո] սկսեցի ավաղել [ու ափսոսալ] աշխարհի տարափոփոխ վիճակը, որ նախանձելով մեր ազգի վսեմ հաջողությունների [համար], մշտապես հակառակ[որդ]ներով տանջում էր նրանց: Այստեղ ինձ պատեցին բազմապիսի խորհրդածություններ և, այլևս չկարողանալով զսպել սրտիս փղձկոցը, բարձրաձայն գոչեցի. «Իմ քաղցրիկ Հայաստա՛ն, երկնանման այս աթոռն ինչո՞ւ դարձրիր զազանների բնակարան, հոյակապ իշխաններին ու նրանց զարդարուն պալատներն ինչո՞ւ թաղեցիր մռռացության փոշում, նրանց խնկելի հիշատակներն ինչո՞ւ ան-

հետացրիր և [ինչո՞ւ էս] անհետացնում»: Մրանից հետո, այսպիսի վշտալի հոգով, համբուրեցի [վանքի] որմերը և,- Բարով մնաս,- ասելով, հեռացա:

Այս վանքի արձանագրությունները Եկեղեցու արևմտյան ճակատին

Աստծո կամքով, ես՝ Սմբատի որդի Սևադա իշխան և իմ ամուսին **Թաճերը**, մեծ հույսով, մեր կալվածքներից Դադի վանքի գերեզմանատանը տվեցինք խաղողի մի այգի՝ Կամուրջատափում: Տեր Գրիգորիս և միաբանները մեզ տվեցին. երկու պատարագ՝ բոլոր եկեղեցիներում Տյառնընդառաջի տոնին՝ ինձ, Ավագ հինգշաբթի օրը՝ Թաճերին: Ով այն այգին հանի այս վանքի [պատկանելությունից], թող հեռացված լինի Աստծո Որդու փառքից [և] անիծված է նա 318 հայրապետներից, և թող բաժնեկից լինի Հուդային, ամեն. ՈՂ (690) թվին:

Մրա ներքևում

Ամենակալ Աստծո կամքով, ես՝ Ներսես եպիսկոպոս **Չարաբերդցի**, միաբանեցի Դադի վանքին [և] հյուրատանը [տվեցի] մեկ այգի: Տեր Գրիգորիս և միաբանները ինձ [համար] սահմանեցին երկու պատարագ՝ Տեր Բարսեղի տոնին: Ով խափանի, Աստծո առաջ տեր է իմ մեղքերին. ՉԲ (702) թվին:

Մրան կից

[Ես]՝ պարոն **Ազաբաստի** դուստր **Խոնդրյար փաշաս**, պատրաստել տվեցի սուրբ նշաններ:

Մրա ներքևում

Ես՝ Հովհաննես երեց Կոտարցի, իմ արդար ունեցվածքով միաբանեցի այս Սուրբ ուխտին: Եվ ինձ [համար] սահմանեցին մեկ պատարագ Հայտնության [տոնի] ճրագալույցին: Ով խափանի, Աստծու առաջ տեր է իմ մեղքերին. Չ (700) թվին:

Դեպի հարավային լուսամուտի կողմ

Աստծո կամքով՝ ես՝ **Փոնձա Դովիյանց** և որդիներս՝ Հասան և **Վարնաթուն**, Դադի վանքին տվեցինք մեր կալվածք Խուրթերը՝ [իր] սահմանով, արոտավայրով, սնարով¹:

¹ Աղբյուրում. «... տուար ի Դադի վանաց գմեր հայրենի խութերս սահմանովն, խտտովն, սնուրովն»
Ընդգծված բառը հավանաբար պետք է լինի՝ սնար (Սնարք - լեռան գագաթ)

Մրա ներքևում

Աստծո կամքով, ես՝ Գրիգոր տնտես, Տեր Աթանասի հրամանով և մյուս եղբայրների կամեցողությամբ, իմ ունեցվածքով գնեցի **Չախկալը** և տվեցի եկեղեցուն ու միացա եղբայրությանը: Եվ նրանք ինձ [համար] սահմանեցին երեք օր պատարագ՝ Սուրբ Խաչի երևման տոնին: Արդ, եթե որևէ մեկը, այն հողը կամ պատարագները այս եկեղեցուց հանի, թող խափանվի առ Քրիստոս նրա հույսը, [թող] բաժնեկից լինի Հուդային և մյուս խաչահանողներին:

Մրան կից

Աստծո կամքով, ես՝ **Մասանա**, Տեր Աթանասի առաջնորդության [օրոք] միաբանեցի այս Սուրբ ուխտին և սուրբ եկեղեցուն առձեռն տվեցի Չորապանի հողը՝ չորս մաս, և այլ ունեցվածք: Եվ նրանք ինձ [համար] սահմանեցին բոլոր եկեղեցիներում երկու օր [պատարագ]. տոնի [օր] որոշեցին կիրակին: Ով այն հողը իսկ կամ իմ պատարագները խափանի՝ պարտական է իմ մեղքերին. ՃՉԺ (710) թվին:

Դռնից աջ

Աստծո անունով, ես՝ Հասանի որդի Գրիգորս, Տեր Գրիգորիսի առաջնորդության [օրոք], մեծ հույսով Դադի [վանքի] գերեզմանատանը տվեցի ինձ պատկանող չորս տուն շինական¹: Արդ, եթե [որևէ] առաջնորդ կամ ինձ ազգական կամ օտար [մեկը], շինական[ներ]ը հետ վերցնելով, խափանի իմ պատարագը, պարտական է իմ մեղքերին և նրա բաժինը թող Հուդայի հետ լինի, ամեն. ՈՀԳ (673) թվին:

Գավթի հարավային կողմում

Աստծո կամքով, ես՝ Վախտանկի որդի Սմբատ, կառուցեցի այս եկեղեցու գավիթը:

Եկեղեցու ճակատին

Աստծո կամքով, ես՝ Հաթերքի տեր՝ **Վախտանկի** դուստր Մամա, տվեցի իմ հայրենի **Պաչսկամակը**: Եվ այս եկեղեցու սպասավորները

¹ Շինական - Գալվաձատի որդի հողի վրա բնակվող հողի բերքից նրան սահմանված տուրք վճարող գյուղացի (հակառակը՝ ազատ): Ըստ համատեքստի, խոսքը հարկի մասին է և շինական ասելով, նկատի է առնված շինականի վճարած հարկը

... այս սուրբ եկեղեցու ծառայողի, Տեր Գրիգորիսի առաջնորդության [օրոք]: Եվ սուրբ եղբայրները [ինձ համար] սահմանեցին Սուրբ Հակոբի տունը և կիրակին՝ բոլոր եկեղեցիներում անխափան: ՈՂ (690) թվին:

ԽՈԹ

Այնտեղից սուկալի ճանապարհով իջա ձոր՝ Տրտումի գետափ, և մտա Խոթ գյուղ, որ գտնվում է **Ըղտապան** լեռան ստորոտին: Անցյալում սա բազմամարդ գյուղ էր, իսկ այժմ վրանաբնակ տաճիկների ձնեռանոց է: Այս [գյուղի] անունով էլ վանքը կոչվում է Խոթավանք: Շրջեցի ողջ գերեզմանատնով և հիշատակության արժանի որևէ բան չգտնելով, կրկին ետ եկա դեպի գետի կողմը և հասա Մշահան վանքի լայնանիստ սարին:

Այս սարը պատված է թավ անտառով, սրա արևմուտքիդ հոսում է սառնորակ մի աղբյուր և խոխոջալով գնում խառնվում է Թարթառին:

Այս սարի գագաթին Մշահան վանքն է՝ Սուրբ Աստվածածին. կառուցված է անհարթ քարով, [կառույցը] խրթին է ու նսեմ: Կից կա մի շատ փոքր եկեղեցի ևս, որի առջևում սովորական քարով կառուցված գավիթ է, այժմ ավերակ: Գավթի որմերի մեջ կառուցված է շիրմանման մի մատուռ, իսկ դրա դիմաց մեծ խաչքար է, հավանաբար Գրիգոր իշխանի գերեզմանն է, որի վրա այս մահարձանը կանգնեցրել է Սմբատի որդի Սևադա իշխանը:

Սրան կից կան նաև այլ մատուռներ, պատարագի Սեղաններ, բայց ամբողջովին ավերված: Սրանց շուրջ կուտակված են քարերի դերբուկներ¹, թերևս, [սրանք] միաբանների սենյակների տեղերն են:

Մշահանի վանքի արձանագրություններ

Ես՝ Սևադա իշխան, եկա Մշահանի ուխտ [և] խաչ[քար] կանգնեցրի հզոր և հաղթական իշխանի որդու տապանի վրա, որ մեծ քաջությամբ հարվածեց թաթարներին: [Նա գնում էր Երուսաղեմ, բայց վանքն [՞] իմանալով [այդ մասին]՝ թույլ չտվեց: Անբերթի վանքի տերն այստեղ էր. մեծ պատերազմ [եղավ] և այնտեղ նահատակվեց:

Եկեղեցու որմի վրա Աստծով, ես՝ Մլեհ, այս Սուրբ ուխտին տվեցի իմ գնած հողը և մի չափար²: Միաբաններն [ինձ] տվեցին երկու պատարագ՝

¹ Դերբուկ - Քարերի, ժայռերի անհարթ կուտակում

² Չափար - Ցանկապատ

Սուրբ Հակոբի տոնին, մեկն՝ ինձ, մեկը՝ **Փուփային**: Ով խափանի [պատարագների ժամը] կամ հողը խլի՝ նգովված է Աստծուց:

Որմի վրա՝ դեպի արևելք

Աստծո կամքով, ես՝ **Խորշա** և իմ ամուսին **Չաբմ**, իմ Ավետարանը տվեցի [նք] Աստվածածին [եկեղեցուն]: Տեր Հովհաննես և մյուս միաբանները երկու պատարագ տվեցին ինձ՝ Աստվածածնի Ավետյաց [տոնին]:

Աստծո կամքով, սա [իմ]՝ Նորդենիս, գիրն է, որ տվեցի Կողտապանում [գտնվող] **Փաղլանց** [հողը]: Այս Սուրբ ուխտի առաջնորդ [տեր] Հովհաննես և միաբանները ինձ տվեցին երկու օր պատարագ, մեկը՝ ինձ, մեկ օրը՝ **Խորեշահին**: 318 հայրապետներից նգովված է [նա], ով խլի հողը կամ հակառակ [վարվի]:

Ես՝ Մամախաթուն, միաբանեցի այս Սուրբ ուխտին և առաջնորդ Հովհաննես և եղբայրները տվեցին երկու պատարագ:

ԽԱԹՐԱ ՎԱՆՔ

Արձանագրություններն ընթերցելուց հետո, ես իջա այստեղից և անցնելով Թարթառ գետը, գնացի Խաթրավանք: Ճանապարհն առապար էր ու դժվար, այդ պատճառով մեծ դժվարությամբ հազիվհազ հասա [վանքի] անատապատ խորաձորին: Այստեղ թողեցի իմ երիվարը, իսկ ես ստառապալից [ընթացքով] ելա անտառախիտ ձորերում գագաթը վեր բարձրացած սրածայր [այս] բլուրը, որի գագաթի երկու կողմերից կարկաչելով վայր են իջնում ու Թարթառին են խառնվում երկու անուշահամ վտակներ: Այս բլրի գագաթին է [գտնվում] Հայոց ՈԶԳ (683) թվականին, Հասան իշխանի եղբայր, Հովհաննես արքեպիսկոպոսի՝ Թադեոս առաքյալի **Խաթ** աշակերտի անունով կառուցած սագաշեն եկեղեցին: [Կառուցված է] անմշակ քարով, շինությունը միջին [տեսք ունի], բայց կամարների կողակներն ու սյուները [կատարված են] կոփածո քարով: Եկեղեցու երկու կողմում սրբազան Խորհուրդի Սեղաններ են, իսկ ավագ Սեղանի առջև Գրիգորի որդի Հասան իշխանի գերեզմանն է: Այս եկեղեցու երկարությունը տասնհինը կանգուն է, լայնությունը՝ տասնյոթ:

Ունի սովորական քարով կառուցված միջին վիճակի զանգակատուն, սեղանատուն, միաբանների բազմաթիվ խրճիթներ և այլ անհրաժեշտ շինություններ. այժմ ամայի է, և անուշահոտ խնկերի [բույրի փոխարեն],

անասունների աղբի հոտն է տարածվում: Սեղանի վրա, ուր Քրիստոս է պատարագվում, նեխած կաշի էր դրված, և երբ ես սա տեսա, ասացի. «Ափսոս քեզ, Սուրբ եկեղեցի, դու երբեմն սրբության հարկ էիր, փառաբանության վայր, հրեշտակների բնակարան և մարդկանց քավարան, իսկ այժմ՝ գազանների դադարք և խոզերի հանգստատեղի: Այս վանքը, մինչև Նադիր շահի օրերը, շեն էր ու բազմաթիվ միաբաններով լի, սակայն այդ ժամանակից ավերումի սկիզբը դրվեց և հետզհետե [վանքը] հասավ ողբալի այս վիճակին: Թեև մեծափառ Հասան իշխանի ազգականներ Հոհան, Բարսեղ, Աթանաս և Ղուկաս վարդապետները այն վերստին նորոգեցին, բայց այժմ [վանքի] կենդանության շունչը սպառվել է և շուտով կթաղվի մոռացության հողի [տակ]՝ իր հետ կորցնելով նաև իր բարերարների անունները:

Այս վանքի արձանագրություններ

ՈՄԳ (653) թվին. ես՝ Տեր Հովհաննես, բազում դժվարություններով կառուցեցի այս եկեղեցին, ժողովեցի այստեղ [եղած] խաչերը և գրքերը, տնկեցի պարտեզն ու այգիները և իր բոլոր սահմաններով, [և] Հաթերքի տիրոջ միջնորդությամբ, վանքը տվեցի իմ եղբայր Հասանին և իր որդուն: Ով խափանի, թող ինքը խափանվի Աստծո [հավիտենական] կյանքից:

Սրա ներքևում

Աստծո անունով, սա իմ՝ Հասանի գիրն է. որ իմ եղբայրը կառուցել տվեց այս եկեղեցին և վանքն ինձ տվեց, [ես էլ] եկեղեցուն տվեցի Խնձորաձորը՝ իր սահմաններով: Ով հանի [այն եկեղեցուց], հակառակվում է Աստծուն. ով այս գիրը խափանի, Աստծուց թողություն չունի:

Սեղանի ճակատին

Ամենագոր Աստծո շնորհով, մենք՝ Քրիստոսի նվաստ ծառաներ՝ Հոհան, Բարսեղ, Աթանաս [և] Ղուկաս վարդապետներս, կառուցեցինք Սուրբ Աստվածածնի այս տաճարը և Սուրբ Առաքյալի [տված] հաջողությամբ խորանի երեք մեծ կամարները՝ մինչև [եկեղեցու] ատյան, որ հնացած էին, դառը ժամանակներում մեծ դժվարություններով ու աշխատանքով [նոր] կամար կապեցինք:

Սյան վրա

Աստծո կամքով և Տեր Հովհաննեսի հրամանով, ես՝ Շահանս, միաբանեցի **Խաղի** Սուրբ ուխտին [և] տվեցի Ծառատակի այգետեղը և այլ ընծաներ այս [վանքի] միաբաններին: Եվ առաջնորդ Տեր Ռուբենի ողորմությամբ, բոլոր միաբաններն տվեցին երեք պատարագ՝ [Աստվածածնի] վերափոխման տոնի և Աղուհացից [ընթացքում]: Պարտական է Աստծո առաջ: ՉԺԴ (714) թվին:

Աստծով, ես՝ **Շերեբերկս**, ինձ [պատկանող] Վաչանց [հողի²] կեսն առա [և] քսանհինգ դահեկանով ծախեցի **Մաշայի** որդուն. Տեր Ռուբեն՝ վկա: Մեկ օր պատարագ:

ՎԱՂԱՀԱՍ

Սրբությունների տեղերը համբուրելոց հետո, իջա [այդ] բարձրադիր [վայրից] և մի անգամ էլ անցնելով Թարթառ գետը, Մայրաքաղաք կոչվող վանքը տեսնելու համար բարձրացա լեռան կատարը ու մտա Վաղուհաս գյուղ: Այն գտնվում է Թարթառի հարավային կողմում, սարալանջի վրա, մի գեղեցիկ վայրում և այժմ էլ նույն անունով է կոչվում, քանի որ Մեծ Կունեի եպիսկոպոսարանն է:

Հայոց ՈԼԲ (632) թվականին, Տեր Գրիգորի հայրապետության [օրոք], այս վանքը կառուցել է Վասակի որդի Հասանը: Շինության [տեսքը] միջին է, քարերն անհարթ են. երկարությունը տասը կանգուն է, լայնությունը՝ ութ: Երկու կողմերում ունի զանգակատներ, որոնց դիմաց մեծ գավիթ է՝ այժմ ավերակ: Այս գավթի հարավային կողմում երևում են արձանագրությունների փոս ընկած տեղերը, որոնց քարերը, ինչպես պատմեցին ծերունիները, փշրել են տեղաբնակ տաճիկները: Այս գավթի շուրջ Աղվանից կաթողիկոսների և ուրիշ վարդապետների շիրիմներ են: Թեև անցյալում [այս վանքը] Կունե գավառի եպիսկոպոսարանն էր և ճոխանում էր հրեշտակակրոն միաբանությամբ, բայց հիմա գիշերահավերի ու չղջիկների բնակարան է: Արժանահավատ ծերունիները պատմում են, թե երբ հոները կատաղի հարձակումով մտան այս երկիրը՝ [նրանց] արշավանքներն ու ավերածություններն այս տեղից սկսվեցին. այդ պատճառով էլ [այս վայրի] անունը՝ [պատահած] դեպքից առնելով, կոչվեց Վաղահաս:

Վաղահասի մայրավանքի արձանագրություններ

Աստծո շնորհով, Մեծ Ջալալ Դոլայի իշխանության և այս [վանքի]՝ Տեր Ներսես Աղվանից կաթողիկոսի առաջնորդության [օրոք], ես՝ Տեր Կոնստանդին կաթողիկոս Ամենայն Հայոց, միաբանեցի այս եպիսկոպոսարանին, ի ձեռն իմ հոգևոր որդի Տեր **Մարգարեի**: Եվ այս Սուրբ ուխտի սպասավորները հաստատեցին երեք պատարագ՝ Տյառնընդառաջի տոնին. Երկուսն՝ ինձ, մեկը՝ Տեր **Մարգարին**: Կատարողները թող օրհնվեն Աստծուց: Ով Ավետարանը հանի եպիսկոպոսարանից, թող ինքը հանվի և հեռացվի Աստծո փառքից. ՈՂԵ (695) թվին:

Խորանի աջ կողմում

Հայոց ՈԼԲ (632) թվին, Տեր Գրիգորի հայրապետության [օրոք], ես՝ Վասակի որդի Հասանս, կառուցեցի այս եկեղեցին՝ ի բարեխոսություն:

Վերոհիշյալ եկեղեցու պարսպի վրա

Ամենասուրբ Երրորդության անունով, ես Լեշքարի (հրամանատար) որդի Վասակս, Սուրբ Գրիգորի նշխարներին ընծա[ներ] տվեցի՝ Տեր Հովհաննեսի առաջնորդության [օրոք] և միաբանների: Եվ նրանք ինձ տվեցին. [աշխատանքների²] ավարտից [հետո] երեք օր պատարագ: Ովքեր այգին կամ տոնատեղը¹ [վանքից] խլեն, թող դատվեն Տիրոջից:

Մի խաչի վրա

Աստծո անունով, ես՝ Հոհան՝ **Վախաֆանկի** տան երեցս, այս խաչը կանգնեցրի ի Քրիստոս վախճանված իմ որդի Գրիգորի տապանի վրա: Ովքեր երկրպագեք, հիշեցե՛ք ի Քրիստոս. ՈԿԷ (667) թվին:

ԱԿԱՆԱ

Այդ գիշեր օթևանեցինք Վաղուհասում, մի բարեպաշտ մարդու տանը, որտեղ վայելեցինք համեստ խորտիկներ և արշալույսին շարժվեցինք դեպի Ականա բերդ, որը Ջալալ իշխանի սեփական ամրոցն է եղել: [Այն] պարսպատված է ամուր ու կարծր քարերով, որն, ըստ սենյակների հարմարավետության, ավելի պատշաճ է արքայական պալատ անվանել, քան թե՛ պարիսպ:

¹ Աղբյուրում. «Տոնատեղ»

Այս [պարսպի մեջ] կա բազմաթիվ սենյակներ ունեցող ախոռ՝ այժմ ավերակ: Արևելյան կողմում, այս պարսպի դիմաց Խոխանաբերդն է և Թարթառ գետը, և առջևում թավ ու խիտ անտառներով ծածկված Աստղաբլուրի ընդարձակ դաշտն է: Այստեղ տեսա բարեպաշտ Ջալալ իշխանի պալատը, տեսա նրա ընդարձակ կալվածքը, մտքով վերականգնեցի նրա անցյալ վայելչությունը, և հազար հազար անգամ խոր խոցվեց իմ սիրտը, քանի որ չկա հիմա Ջալալ իշխանն ու նրա իշխանությունը. երևում են վայրերը վայելչության, բայց վայելողն ու վայելչությունը ծածկվել են հավիտենականության մշուշով: Հառաչանքով անցա այստեղից և մտա Ականա գյուղ, որը գտնվում է Թարթառին խառնվող մի վտակի ափին: [Սա] մեծ գյուղի ավերակ է, այժմ՝ անտառապատ. ունի վեց գեղեցկակերտ սյուների վրա կանգնած հոյակապ ու պատվական եկեղեցի, այժմ՝ ամայի, ուր մակաղում են մերձակա գյուղերի խոտակեր անասունները: Այստեղից իջա Աստղաբլուրի դաշտ և համբուրեցի Քրիստոսի երանելի վկայի՝ Թագուհի անունով տիկնոջ նշխարների փոշին, շրջեցի [Աստղաբլուրի] ու Հաթերքի ամբողջ գերեզմանատնով և գրի առա մահարձանների վրա գրված մի քանի իշխանների անուններ: Երբ կանգնեցի այն փոքրիկ բլրի առջև, որտեղ ամփոփված էին երանելի տիկնոջ նշխարները, իմ աչքի առաջ ի նորո նորոզվեց [այդ] սուրբ օրհորդի բազմաչարչար նահատակությունը: Ասես այդ երանելին դեռևս հոների ձեռքին է [և] անտանելի վշտերի ու տանջանքների է ենթարկվում, իսկ բոլոր լեռները, սգավորների նման, տխուր տեսք ունեն նրա [տանջանքների] պատճառով:

Ուշքի եկա, ավաղեցի Հայոց աշխարհի խարխուլ բախտը, ապա մտա այն ավերակ մատուռը, ուր կանգնեցված է մի փոքրիկ խաչքար: Շրջակայքի բնակչությունը մեծ ջերմեռանդությամբ ուխտի է գալիս այստեղ: Անցյալի դեպքերի շուրջ երկար խոկալուց հետո, հենց այնտեղ, պատշաճ համարեցի իմ ուղեկիցների համար ընթերցել երջանիկ նահատակի պատմությունը, և խնկելի իմ ազգի դժբախտ վիճակը նորոզելու համար, այստեղ դնում եմ Մովսես Կադանկատվացու Պատմության այդ հատվածը¹.

«Այդ ժամանակներում Ռոսմոսքյան թագավորը իր գորքերն ու Թորբեյան բանակը միացրեց, հավաքեց նաև հոների բոլոր գորքերը և անցավ

¹ Աղբյուրի այս հատվածի աշխարհաբարը դնում ենք ըստ Վ. Առաքելյանի թարգմանության, տե՛ս Մովսես Կադանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Վարսագ Առաքելյանի, Երևան, 1969, էջ 73 - 75

Կուր գետի այս կողմը՝ տարածվելով Ուտիք գավառում: Իր բանակը բերեց, բանակեցրեց Խաղխաղ քաղաքի մոտ: Այդտեղ երեք զորավարներ ընտրելով՝ նշանակեց բանակի հրամանատարներ ու նրանց հրամանատարության տակ խմբավորեց տասնմեկ զորքերի բազմությունը. և հրամայեց երեք մասի բաժանել, հարձակվել Աղվանքի, Հայաստանի ու Վրաստանի վրա: Իսկ զորքի երրորդ մասը, Ջատկի սկզբին հասնելով Արցախ, հարձակվում է Մեծ Կվյանքի վրա: Այդ ավագակային հարձակման լուրը լսելով՝ Չղախում բնակություն հաստատած Երուսաղեմից եկած խումբը մեծ սարսափով բռնվեց: Աճապարանքով միատեղ հավաքեցին բոլոր մասունքները, լցրին երկու արծաթյա սափորների մեջ ու թաղեցին հողում»:

«Եվ անմիջապես վրա հասավ այն գուժակոհնչ օրհասական իրարանցումը, տեղատարափ անձրևի նման տարածվեց անխուսափելի տարակուսանքը: Հարձակվողները ծովի ալիքների նման նախևառաջ հասան Աստղաբլուր վայրը: Բնակիչները, անտեղյակ լինելով կատարվող դեպքերին, անակնկալ մի ժամի բոլորը միասին ենթարկվեցին սրածության: Ոսկյա ու արծաթյա սպասները ավարեցին, իսկ սրբությունները բլուրով մեկ ցաք ու ցրիվ արեցին: Գլխավոր քահանա երանելի Աթանասին տեղնուտեղը նահատակեցին, իսկ մնացած բնակչությանը գերեցին ու այնտեղ շրջապատման մեջ առան»:

«Բայց այստեղ էր նաև Ուտի գավառից, բուն տեղացի ազնվականներից Բագինք գյուղացի Թագուհի անունով մի կին, որը շատ հարուստ էր և հաճախ երուսաղեմացիների հետ էր լինում: Երբ հոների զորավարը գերվածների մեջ տեսնում է սրան, դիվագրգիռ, ցանկասիրական կրքով լցված՝ տոփանք է տածում դեպի նա, որովհետև նա անչափ գեղեցիկ էր: Հրամայում է, որ նրան մեծ զգուշությամբ պահեն. կամենում էր նրան կին առնել: Իրենք իրենց առօրյա արշավանքները վերջացրին, գավառի ամբողջ ավարն ու գերիների համախումբ բախտակիցներին բերին, հավաքեցին մի տեղ: Նրանցից շատերին սպանեցին, իսկ մնացածներին գերեվարելով բերեցին Աստղաբլուր: Գերվածների մեջ բռնել էին Աթանասիոս նահատակի երկու քահանա ընկերներին: Քանի որ հոների մեծ զորավարը այն գիշեր իր զորքով այնտեղ էր բանակել, ուստի օրվա երեկոյան պահին Թորեյան բանակի զորապետին հրամայում է երանելի Թագուհուն իր մոտ բերել, որպեսզի նրա հետ իր վավաշոտ կամքը կատարի: Իսկ նա, Տիրոջ զենքի զորությամբ գոտեպնդված, անարգում է նրան, չի լսում, չի համաձայնում, մինչև անգամ

ծաղր ու ծանակի է ենթարկում լկտի բարբարոսին: Նա ասում է. «Աստված չանի, որ ես իմ պարկեշտությունն ու ողջախոհությունը հանձնեմ շնագգի ու խոզաբարո հեթանոսներին, կամ մինչև մահ հասնող տանջանքներից վախենամ և այս չնչին կյանքը փոխանակեմ այն կյանքի հետ, որ անանց է: Եվ ձեռքերն առ Աստված բարձրացրած՝ խոսում էր, ասելով. «Տերանց Տեր և թագավորների թագավոր, ինձ՝ Քեզ հուսացողիս, մի՛ թողնիր. անբիժ ու անմեղ պահիր ժամանակավոր այս փորձանքից: Ինչպես որ նորոգող՝ լույս ավազանի մկրտությունը ինձ շնորհեցիր՝ Քեզ ճանաչելու համար, այնպես էլ արա այժմ, որպեսզի հավատով ու մաքրությամբ մեղքերից զերծ մնամ: Քո ճշմարտության լույսը կաթեցրո՛ւ անզգա բարբարոսների սիրտը, որպեսզի սրանք էլ Քեզ ճանաչեն, ո՛վ Դու միայն ճշմարիտ Աստված»:

«Բսկ երբ անօրենների խումբն այս լսեց, գնացին, իրենց իշխանին հայտնեցին, որովհետև թարգման կար նրանց մեջ, որ լսում էր նրանց ամբողջ խոսակցությունը: Այն ժամանակ բռնավորը առլցվեց կատաղի ցասումով. կրճոտող ու մոնչացող իր գազանության համապատասխան գայրագնեց ու հրաման արձակեց, որ եթե չգա շուքով ու պատվով, անասելի տանջանքներով չարամահ անեն նրան: Մպասավորները գնացին ու պարտադրեցին, որ իշխանի կամքը կատարի, իսկ երբ չկարողացան համաձայնեցնել չհրապուրվող Թագուհուն, ձեռքերը կապեցին ետևը, մազերից քաշ տվին, անապատային սուր-սուր փշերով ծեծեցին նրա դեմքը, առհասարակ սրբի մարմինը քարշ տվին ու բզկտեցին և հետո սրով կտրեցին երանելու գլուխը: Այս մարտը Սուրբ Հռիփսիմե կույսի մարտի նման եղավ, և աստվածահաղթ պսակներով Քրիստոսի պսակով պսակվեց այն մեծ Թագուհին»:

«Դրանից հետո, հենց նույն գիշերը, մինչդեռ այլազգի իշխանը և իր գորականները զբաղված էրն անքուն խնջույքով, ծիծաղում ու խնդում էին, հանկարծակի Տիրոջից մի զարմանալի հրաշք երևաց նրանց: Բոլորը ակնհայտորեն տեսան, որ մի պայծառ լույս է ծագել այն տեղում, ուր սուրբ Թագուհին նահատակվեց, և ուր ցրված էին նրա շորերի ծվենները, որ սփռված ու տարածված էին անտառով մեկ, փայլում էին ինչպես աստղեր: Երկար ժամանակ աստղանման լույսը ծագել էր այն տեղում և սփռված էր սուրբ նահատակների վրա: Մարդկանց բազմությունը այս բանը տեսնելով՝ տեղը կոչեց Աստղաբլուր, որ մնում է մինչև այսօր»:

ՄՈՒՎ

Այստեղից ելա և շտապեցի տեսնել նահատակների գերեզմանը, որ Մռավ լեռան վրա է: Դրա համար անտանելի դժվարություններ կրելով և ճեղքելով օդի թանձրությունը, ոտքով բարձրացա այդ լեռան ամպամերձ գագաթը: [Այս լեռը] գտնվում է Արցախի աշխարհում և չորս կողմերից բազմաթիվ վտակներ ու հորդ աղբյուրներ են բխում: Մրա [լեռնա]բազուկները տարածվում են չոր կողմեր՝ [դեպի] Շիրակ, Սյունիք, Ուտիք, Գեղարքունիք և Գարդման: Եվ այս իրար վրա բարդված լեռն[աբազուկների] միջև գտնվում են Արցախի և մասամբ էլ Գարդմանի գավառները:

Ծաղկազարդ այս լեռը նման է նաժիշտների մեջ բարձրացած թագուհու կամ մի հինավուրց [ծերունու]՝ իր շուրջը բոլորած բլուրների միջև, և իր հայացքը տարածում է մինչև Աղվանքի, Ուտիքի, Փոքր Սյունյաց, Գարդմանի և Գուգարքի դաշտերը: [Նա] մեկ ուրախանում է՝ պատմելով [մեր] աշխարհի վայելչությունը, մեկ՝ տխրում է, թվարկելով իր անհամար վշտերը, ասես, մատնացույց է անում իր երբեմնի փառքը և դրա անդարձ կորուստը: Մեկ հիշում է հոյակապ թագավորներին ու դյուցազուն իշխաններին, համախմբված ժողովրդին, աստվածագույն կրոնավորներին ու երկնանման եկեղեցիները, և այնուհետև նրանց ողբալի ավերակներին նայելով, ողբում է անմխիթար, և սուգի մեջ է գցում [իր] բոլոր այցելուներին:

[Լեռան] հենց գագաթին կա հասարակ քարով շրջապատված բականման տեղ, ուր [շրջակայքի] բնակիչները ջերմեռանդ աղոթքներով ու մատաղներով գալիս են ուխտադրության: Այնտեղ մենք չտեսանք մեր իշխանների կառուցած [որևէ] հոյակապ շինություն կամ հրաշալի գործ, այլ միայն մեծամեծ բնական անձավներ, վիմաձերպեր և ընդարձակ քարայրներ, որ [եղել են] պատսպարան՝ պարսիկներից և այլ թշնամիներից: Նույն տեղում գտանք հին ժամանակներից մնացած մի պղնձե բուրվար:

Ծերունիներն, ըստ ավանդության պատմում են, թե այս լեռը Մռավու սար է կոչվել այն պատճառով, որ այստեղ մեռան և նահատակվեցին անվանի և հիշատակության արժանի մարդիկ, ուստի դրանից առնելով, կոչվում է Մռավու սար, այսինքն մեռելոց սար: Այս ավանդությունների համաձայն, գրում է նաև Աղվանից [աշխարհի] պատմիչը, թե¹.

¹ Նույն տեղում էջ 76 - 78

«Երբ լույսի ճշմարտությունը հասավ սուրբ իշխան Թեոփիլոսի սիրտը, հրամայեց բաց թողնել գերիներին, իսկ ինքը Ջատկի առավոտյան սուրբ քահանաների ու բազմաթիվ հավատացյալների հետ միասին ազիստոսական բանակով շարժվեց, գնաց հասավ Ուտի գավառը: Բջան բանակեցին Կուր գետի ափին՝ Չոմաքատակ կամուրջի նավահանգստի մոտ: Բսկ ինքը՝ Ռոսմոսքյան մեծ թագավորը, վերադարձել ու իր ամբողջ զորքով ասպատակում էր: Բազմախումբ գերիներով, մեծ ավարով անցավ Կուր գետը և արևելյան կողմից բանակ զարկեց գետի այն կողմում՝ նրանց դեմդիմաց: Այդ ժամանակ կոապաշտական մոլորությամբ հրաման տվեց մեհենական խնջույքներով զոհանվերներ ձոնել իր աստվածներին: Քրիստոսի զարդ եղած Թեոփիլոսն ու Թորեյյան բանակն այս տեսնելով ևս քրիստոնեական կրոնի կարգ ու կանոնի համաձայն սուրբ քահանաների օրհնության միջոցով պատարագներ են մատուցում Աստծուն և իրենց խաչագարդ դրոշակներ են պատրաստում: Բսկ բարբարոսների գազանաբարո ու անօրեն թագավորը, երբ այս տեսավ, դիվագրգիռ կատաղությամբ զայրացած՝ հրամայեց իր մոտ կանչել Թեոփիլոս սուրբ զորավարին երեսուն մարդու հետ: Նախ աղաչանքով, ապա բարկությամբ խոսել սկսեց նրա հետ և ասաց՝ «սիրելի լինելով մեր թագավորությանը՝ քաջությամբ հայտնի դարձար, նաև խիստ շատ մեծարվեցիր մեր խնամակալությունից, ուստի և բոլորից նախապատիվ ես, ո՛վ դու, եռամաս զորավարությամբ փառավորվածդ: Ինչո՞ւ դու թողեցիր մեր ցեղի տոհմական աստվածներին, որոնք մեզ արշավանքներում հաղթություն են տվել, և դու ինձանից ապստամբվեցիր քո զորականներով, և պաշտում եք այն Աստծուն, որին մենք չենք ճանաչում: Այդ պատճառով, եթե դու զոհեր չմատուցես աստվածներին, մահվան ենթակա եք դու և քո զորականները միասին»:

«Քրիստոսին հավատացող քաջ զորավար Թեոփիլոսը պատասխանում է թագավորին ու ասում. «Մարդու կյանքի իմաստությունը առաքինության ծնունդ է, իսկ առաքինությունը աստվածապաշտության ամենալավ բարի մայրն է: Արդ՝ եթե Քրիստոսի փառքի ավելանալով մեր էության մեջ ծնունդը միավորվեց, այսինքն՝ շնորհիվ լույսի իմացանք, ճանաչեցինք Աստծուն՝ երկնքի և երկրի արարչին, միահասակ ու Սուրբ Երրորդությունը, որն իր բարեբարությամբ կամեցավ մեզ հեռացնել չնչին կուռքերի վնասակարությունից: Արդ՝ մի թե՛ դու կկարողանաս մեզանից արգելված պահել երկնային շնորհները, կամ ձեր վայրկենական պատիվը կամենում ես համեմատել

Աստվածային պատվի հետ, կամ թե քո սպառնալիքներով կարծում ես կվախեցնես մեզ, որ մենք թողնենք Աստծուն, առժամանակյա կյանք ընտրենք ու անմունչներին պաշտենք: Այդ ժամանակ սաստիկ բարկությամբ ցասման մեջ ընկնելով՝ մոնչում է թագավորը և հրամայում սուրբ զորավար Թեոփիլոսին իր երեսուն ընկերներով ու սուրբ քահանաներով տանջալից մահվամբ սպանել: Այս վերջինները բարի նահատակությամբ արիաբար զլուխ բերին նահատակության մարտը և ըստ նահատակության հանդեսի՝ Քրիստոսից հաղթության պսակ ընդունեցին, այսինքն՝ սուրբ հավատացյալ Թեոփիլոսը քահանայական դասով ու երեսուն զորականներով փոխադրվեց երկնային տաճարները»:

«Իսկ երանելի Մովսեսը և Աներոլոզիսը՝ սուրբ զորավար Թեոփիլոսի որդիները, ազիստրոսյան գնդով և այլ հավատացյալներով երբ այս տեսան, աճապարանքով հեծան իրենց երիվարները ու փախան անօրեն թագավորից՝ լավ համարելով Քրիստոսի համար հալածվել, քան հանցավոր կյանքով անհավատ ապրել. գերադասում էին Քրիստոսի համար նախատիքներ կրել, քան հայրենական զանձերի առատությունը: Այդ ժամանակ նրանք մեկնեցին հարավային կողմերը, գնացին հասան բարձրաբերձ կատարը մի մեծ լեռան, որ իր մեջ առած շրջապատում է այդ երկրի բազմաթիվ գավառներ»:

«Ապա անողորմ թագավորի հրամանով գնդերի են բաժանվում, և հոների զորքը հետապնդում է նրանց: Մրանք, հասնելով լեռան կատարը, ջանում են շատ աղաչանքներով նրանց դարձի բերել կուռքերի երկրպագության ու թագավորի հնազանդության: Բայց չկարողանալով նրանց համոզել՝ նույն տեղում նրանց սրի են քաշում: Նրանք՝ սուրբ Մովսեսը՝ երջանիկ եղբայրներով, ամբողջ քրիստոսագետ ազիստրոսյան բանակով այսպես վերջացրին իրենց կյանքը. նրանք, Քրիստոսից նահատակության պսակն ընդունելով, փայլում են անարատ փայլով. հյուսիս ծայրից անմահ առազաստի հափշտակողներ դարձան բոլոր սրբերի հետ միասին»:

ԹԱՐԹԱՌ ԳԵՏ

Մռավ լեռան ծաղկավետ ձորերով իջնում են կարկաչասահ, հորդաբուխ և անուշահամ աղբյուրներ և սկզբնավորում են Թարթառ գետը, որը [սլանում է]՝ իր խրոխտ հորձանքով լեռներ կտրտելով, ժայռեր ձեռքելով և

մեծամեծ վախեր¹ ու խոխումներ² բացելով, և, սկսած Ռոստակ կամ Ռոմբոստյան (այժմ՝ Ռոմբասար) լեռից, Հանդաբերդ իջնում է Մեծ Կունեն և Կոյանք (այժմ՝ Քոլանիք), ապա այնտեղից՝ Դաղի վանքի, Խաթրավանքի, Մշահանի վանքի և Ջրաբերդի առջևով, իջնում է Ուտիք աշխարհ: [Այստեղ հասնելով] ոռոգում է դաշտը և դաշտի երկարությունը կտրելով, **Բարտա** քաղաքի մոտ լցվում է Կուր գետը: Գետի հորդության վերաբերյալ ժողովրդի մեջ կա մի առակ, թե. «Ալթմիշ ալթի արխմ վար, գենե դոջա Թարթառամ», որ նշանակում է. «Վարթունվեց առանձին առանձին առուններ ունեմ՝ դարձյալ այն մեծ Թարթառն են»:

Այս գետը գարնանը շատ շատ է վարարում և հոսում է մինչև ափերը բարձրացած, ուստի մեծ վնասներ է պատճառում և ամբողջովին դառնում է անանցանելի, բացի երկու կամուրջներից, այն են՝ Սարհանկի [կամուրջը] և Պառավակամուրջը:

Ռամիկների շրջանում այս գետի մասին հորինված են զանազան երգեր, [որոնցում այս գետի] հորդ ընթացքը նմանեցնում են Երասխին և Կուրին, իսկ վնասաբեր ալիքների և սրընթաց հոսանքի [մասին] ծաղրելով երգում են, ասելով. «Թեպետ գարնանը զայրացած վնասներ ես պատճառում, սակայն ձմռանը մկներն են ամոթահար անում [քեզ]՝ անցնելով քեզնով»:

ԱՌՋԱՁՈՐ

Անցա Թարթառ գետը և գնացի դեպի լեռնակողմ՝ դեպի Գանձասարի վանքի կալվածքը և մտա Առջաձոր: Այս գյուղը գտնվում է մի ձորամեջի լանջի վրա, շրջապատված է անմատչելի ժայռերով, Գանձասարի վանքից հեռու է մի ժամվա չափով՝ դեպի արևելք: Բնակիչները հայեր են՝ ութսուն տուն, որոնց շուրջը մացառուտ ու թավ անտառներով պատված լեռներ են: Առջաձոր են կոչում, ժողովրդի կարծիքով, իբրև թե՝ առաջին ձոր, բայց ինչպես երևում է հին գրվածքներից, [գյուղն] իր Առջաձոր անունը ստացել է տեղադրության պատճառով, քանի որ, ըստ նույն [այս] գյուղի տասնմեկերորդ դարի մի գրչագիր Ավետարանի կողի արձանագրությունում, [գյուղը] Առջաձոր է անվանվում: Գյուղի մեջ կա սագաշեն մի եկեղեցի. Կառուցել է Դավիթ քահանան, Հայոց ՌՃԺԷ (1117) թվին, Պետրոս Աղվանից կաթողիկոսի, **Յաղուբ բեգի** [և] **Աղսախիսալի Պահարի** տանուտերության [օրոք]:

¹ Վախ - Գահավեժ տեղ, դարավանդ, ժայռ

² Խոխում - Խոր ձոր, որտեղով ջուր է հոսում, նեղ ծործոր

Ես՝ անարժան Դավիթ երեցս,- ասում է,- կառուցեցի այս եկեղեցին, ի հիշատակ մեր հոգիների: Ովքեր կարդաք, ողորմի ասացե՛ք մեղավորիս:

Այս եկեղեցու դրանդիի մի խաչքարի վրա, որ այստեղ դրել են եկեղեցու կառուցման [ժամանակ], գրված է. «ԶԲ (702) թվին. Ես՝ **Աբուսալի** որդի Վաչե, կանգնեցրի այս խաչը պարոն **Թուրքի** [հիշատակին]: Ովքեր կարդաք, հիշեցե՛ք ի Քրիստոս»:

Այս գյուղում մի Աստվածաշունչ գտանք, որի հիշատակարանում գրված է. «Այս գիրքն ընդօրինակեցինք ըստ գրքերի արկղերում [գտնվող] Կեսարացու օրինակների, [որ] իր ձեռքով գրել էր Սուրբ Պամփյուլիան»:

Այս Աստվածաշնչի գրքերի հերթականությունը, մինչև Մնացորդաց, դրված է ըստ այն կարգի, ինչպես նաև հիմա է [դրվում], իսկ այդտեղից սկսած տարբերվում է, այսպես՝ Երրորդ Եզրաս, Դավիթ, Առակաց, Հոբ, Եսայի, Ովսե, Ամովս, Միքիա, Հովել, Աբդիու, Հոնան, Մաղաքիա, Առաջին Եզրաս, Նեման, Եսթեր, Հուդիթ, Տոբիթ, Առաջին Մակաբայեցվոց, նաև՝ Երկրորդ [Մակաբայեցվոց], Հեսու, Միրաք: Եվ Միրաքի [գրքի] նախադրությունում գրված է. «Հեսուի [որդի] Միրաքի [գրքի առնչությամբ] ոմանք երկբայեցին, և չհամարձակվեցին ստուգապես ասել, թե Մարգարների [գրքերից է], ինչպես նաև Իմաստություն Սողոմոնի [գրքի մասին]: Ոմանք կարծում էին, թե այս [գրքերը] նրանցից՝ [Մարգարենների գրքերից] չեն: Նույն կերպ նաև Հուդիթի, Տոբիթի, Հովիվի¹ և Հեսուի. և այս գրքերը արժանի չհամարեցին Կանոնի² [մեջ դնելու]: Սակայն բազմաթիվ քննություններից հետո ստույգ դարձավ, որ Իմաստության [գիրքն] իսկապես Սողոմոնինն է, իսկ Հեսուի և Հուդիթի [գրքերը] նույնպես երկբայությամբ են դրված, իսկ Հովիվը որոշ գրքերում կա, [ուրիշներում]՝ բնավ ոչ, մանավանդ Հայոց [Աստվածաշունչ] գրքերում: Իսկ Հեսուի մասին, ոմանք ասում են, թե եղել է Սողոմոն մեծ իմաստունի աշակերտն ու դպիրը: Այս միտքն ինձ պատշաճ թվաց, ուստի այս գիրքը խորապես համեմատեցի Սողոմոնի առակների [գրքի] հետ: Եվ ինչպես խոսքի ոճը և իմաստության զորությունը ցույց են տալիս, այս գիրքը համապատիվ է նրա՝ [Սողոմոնի] գրվածքներին, թեպետ փոքր-ինչ տարբերվում է, ինչպես մեկը մյուսից՝ [հենց] նրա գրվածքները: Այս [գիրքը նա] սկսում է բազմաթիվ խոսքերով, [որոնցով] լսողներին խրատում է սիրել իմաստությունը, որը կա և մնում է հավիտյան. հայրերին քարոզում է խրատել

¹ Աղբյուրում. «... գՅուդիէ, Տոբեայ և գճովիւն...»

² Նկատի ունի Աստվածաշունչ մատյանի Կանոնը

որդիներին, հանդիմանում է կուռքերի տկարությունը, պատվիրում է կանանց իշխանություն չտալ և չվստահել նրանց, զգուշացնում է չար զրկանքների և անիրավ կաշառքների մասին, գովում է զգոնությունը և պարսավում հպարտ աղքատին ու ստախոս հարուստին, հրաժարվում է զոհերից և անիրավ պատարագներից, փնտվում է արծաթասիրությունն ու հարբեցողությունը, որոնց հետ, նաև խրատում է զգուշանալ սուտ բարեկամներից և շատ ու երկար ուրիշ ճառերից հետո, ավարտում է գիրքը:

Այս Աստվածաշնչում [կա] Մաղմուսաց [գրքի] առաջաբանի մասին՝ Աթանաս Ալեքսանդրացի եպիսկոպոսի [մեկնության մի հատված, որտեղ] գրված է. «Մտքումս հոժարությամբ հոգ տարա հասնել բոլոր Սուրբ գրքերի մեկնության, բայց, արդարև, առավել սաղմոսների խորհուրդն աշխատեցի իմանալ, քան բոլոր [մյուս] Սուրբ գրքերինը: [Եվ] սրա համար դժվարություններ կրեցի և հանդիպեցի մի ծերունի հոգևոր միայնակյացի, ով ինձ հատիկ-հատիկ տեղեկացրեց Մաղմուսաբանի խորհուրդներին: Եվ ես քննելով, կամենում եմ ճառել միայն, ձերդ աստվածասիրությանը պատմել: Քանզի այն օրհնյալ ծերունու պատմությունները մեծ հոգևոր գեղեցկություն ունեն, քանի որ այսպես է ասում, թե բոլոր աստվածային գրքերը մեզ շնորհվել են Սուրբ Հոգուց, և ասված են Նրա Միածնի կողմից՝ մեր հոգիների օգտի համար: Քանի որ յուրաքանչյուր գիրք իր միտքը մեզ պատմում է՝ առջևում ունենալով արարածոց հինգ գլուխները: Առաջինն արարածների [արարչության] սկիզբն է և նահապետների վարքն ու գործերը: Երկրորդը՝ Եգիպտոսից էլքը, տասը պատգամները, քահանաների և խորանի իրավունքն է սահմանում, երրորդը՝ դեևտագիներինը և պատարագներինը: Չորրորդը՝ Իսրայելի որդիներինը: Հինգերորդը՝ երրորդ Օրենքը: Հետևի երեք գլուխներն են՝ առաջինը՝ Քանանի երկիր մտնելը և հայրենի երկիրը ժառանգությամբ բաժանելը: Երկրորդը՝ դատավորների գործերը: Երրորդը՝ Հուլի մասին, և Թագավորությանց, Մնացորդաց և Եզրի գրքերը: [Չորրորդը]՝ թե ինչպես պարսիկ Կյուրոսը ժողովրդին հանեց Բաբելոնից, և [հինգերորդը]՝ տաճարի կառուցումը Ջորաբաբելի կողմից: Նույն կերպ են նաև մարգարեների բոլոր գրքերը, որ կանխասացություն են անում Տիրոջ [մասին] և ավետարանում են հեթանոսների փրկությունը: Իսկ Մաղմուսների գիրքը նման է զանազան ու տեսակ տեսակ ծաղիկներով լի դրախտի, [և] քաղցրահնչյուն օրհնություն է նվագելով երգում, և իրենում ամփոփում է բոլոր կտակարանների խորհուրդը. արածների ստեղծման մասին է պատմում

տասնութերորդ սաղմուսը՝ ասելով. «Երկինքը պատմում է Աստծո փառքի մասին». իսկ քսաներեքերորդ սաղմոսն ասում է. «Տիրոջն է պատկանում ամբողջ երկիրը»: Եվ ութսունհինգերորդ սաղմուսը պատմում է Իսրայելի Եգիպտոսից ելքի մասին, ասելով. «Իմ փրկության Տեր Աստված, ցերեկով աղոթեցի»: Նույն խորհուրդն ունի, մինչև վերջ, հարյուր տասնչորսերորդ սաղմուսը, [որ] ասում է. «Իսրայելի՝ Եգիպտոսից դուրս ելնելու ժամանակ», իսկ հարյուրչորսերորդում ասում է. «Առաքեց իր ծառա Մովսեսին» և նույնը՝ հարյուր յոթերորդում. «Պատրաստ է սիրտն իմ, Աստված, պատրաստ է սիրտն իմ»: Իսկ խորանի, պատարագների և քահանաների մասին այսպես է ասում. «Մատուցեք Տիրոջը, Աստծո որդիներ, մատուցեք Տիրոջը [ձեր] որդիներին», ասում է՝ կրկին Հեսուի և Դատավորների մասին: Հարյուր վեցերորդ սաղմոսում դարձյալ ասում է Դատավորների մասին. «Աղաղակեցին Տիրոջը իրենց նեղության մեջ, և իրենց վշտերից փրկեց նրանց»: Իսկ Թագավորությունների գրքերի մասին խոսում է տասնութերորդ սաղմոսում, ասելով՝ «Մրանք կառքերով և երիվարներով, իսկ մենք մեր Տեր Աստծո անունը կկարդանք»: Նաև Եզրասի գրքի մասին է ասում՝ հարյուր քսանհինգերորդ սաղմոսում. «Տերը գերությունից ետ կբերի Սիոնը», [և] հարյուր քսանմեկերորդ սաղմոսում դարձյալ նույն բանի մասին է ասում. «Ես ուրախացա [նրանցով], ովքեր ինձ ասում էին՝ գնա Տիրոջ տուն»: Իսկ Աստծո Որդու մյուս անգամ գալուստի մասին խոսում է քառասունհինգերորդ սաղմոսում. «Մեր Աստվածը հայտնապես է գալու և մեր Աստվածը չի լռելու»: Կրկին ասում է հարյուր տասնյոթերորդ սաղմոսում. «Օրհնյալ [ես դու], որ գալու ես Տիրոջ անունով, և [մենք] օրհնեցինք Քեզ Տիրոջ տանից»:

Այս Աստվածաշնչի կողի վրա գրված է սույն արձանագրությունը

Ամենակալ Աստծո կամքով և **Շայան** շահի ֆաթջահության [օրոք], ես՝ Ուլուբեգս՝ որդին **Մեջիսի** [և] թոռը Ջալալի, [և] ես՝ Շահանշահս՝ որդի **Մերաբի**, թոռը Արդուբի, [վկայում ենք]. Մրջանախավի¹ մեր սեփական կալվածքները դարձան² պարոն Ուլուբեգի թալեղը³: Մի մարդ մեռավ Արաբա հողում, [և մենք] գնացինք պարոն **Աղապաստի** [մոտ և] մտածեցինք [ինպե՞ս վարվել] Սարհատի [հետ], որ արյուն հեղեց, [և նա] **Արաբա** հողը

¹ Մրջնախավ - Գուցե՝ Թարթառ գետի ափին, Դադի վանքի մոտակայքում գտնվող Մրջման գյուղն է

² Աղբյուրում. «Մրջնախատ ելա պարոն Ուլուբեգին թալեղ»

³ Թալեղ (Թալախ, Թալեխ, Թալրդ) - Բախտ, վիճակ, ճակատագիր

տվեց Ուլուբեգին¹: [Բացի այդ] Սարհատը կառուցեց Առաջաձորի ջր[անց-
քը], [որը] հոսում է [դեպի] մեծ Շահատի հողը, [ապա]՝ ցից դրած քարերի
[կողմը], [այնուհետև] հոսում է [դեպի] կապը², [այնուհետև՝ դեպի] Ար[ա]-
պա ձորերը, [ապա]՝ [դեպի] լճակ, [որից հետո] հոսում է [դեպի] սարը,
[հետո՝ դեպի] **Արխե աղբյուրի** հողը, [ապա] հոսում է [դեպի] Աթոռ [կոչվող
հողը, ապա]՝ Հավավա խոռ [կոչվողը], Որոյաց խաչի թոռ [կոչվողը, ապա]
հոսում է Ժայռի տակով [և] հասնում Քարի ջաղացին, [ապա]՝ Խաչեն գետին.
այսքան վայր[երով] [է հոսում այդ ջրանցքը]: [Եվ այն] **Շահանջի** սեփակա-
նությունն է, և ուրիշ մեկն [այնտեղ] բաժին չունի, [և նա], ով այլևայնություն
անի, [թող] արժանանա այս Ավետարանի անեծքին [և մեղքերով] կապված
[մնա]:

Ես՝ Եղիա եպիսկոպոս՝ առաջնորդ Գանձասարի, վկա [եմ]: Ես՝ Հո[վ]-
հաննես կաթողիկոս՝ որդի Ջալալի, թոռը՝ մեծ **Աթաբեգի**, վկա [եմ]: Ես՝
Աղաբաստի՝ որդի Ջալալի, վկա [եմ]: Ես՝ **Աթաբեգս**՝ որդի Ջալալի, վկա
[եմ]: Ես՝ Ամիր Հասանս՝ որդի Ջալալի, վկա [եմ]: ՋԷ (907) թվականին: Ես՝
Միզալիս՝ որդի Դուրսունի, վկա [եմ]: Ես՝ Ուլուբեգս՝ որդի **Մեջլիսի**, թոռը
մեծ Ջալալի [վկայում եմ], որ ով այս Սարհատի [դեմ] դավ անի, [թող]
Աստծո անեծքին արժանանա:

ՇՈՒՇԻ ԳՅՈՒՂ

Այս գյուղը գտնվում է համանուն Շուշի քաղաքից արևելք, մի ձորի մեջ:
Բնակիչները հայեր են՝ մոտ հարյուր հիսուն տուն, որ քաջությամբ գերա-
զանցում են բոլոր դարաբաղցիներին: 1826 թվականին [նրանք] հզոր կեր-
պով ընդդիմացան և չարաչար հարվածներ հասցրեցին պարսից մեծաթիվ
բանակին՝ նրանց արյունով ամբողջությամբ ներկելով Գարգառ գետը, և
իրենց ազգային բնածին օժտվածության համապատասխան Ռուսաց տե-
րությանը ցույց տվեցին իրենց անկասկած հավատարմությունը, որի դիմաց
ստացան արժանի պարգևներ և կայսերական դրան մեծ գոհունակությունը:

Ունեն հոյակապ կառուցված [երկու] սագաշեն եկեղեցի, մեկը գյուղա-
մեջում, իսկ մյուսը՝ գերեզմանատանը: Այս գյուղի մահարձանների մեծ քա-

¹ Աղբյուրում այս հատվածն է. «... մեկ մարդ մեռաւ Արաբայ հողին, վեր գնացինք պարոն Աղապաստին մուտ երեք Սարհատին վեր արին կապեց Արապայ հողն երէտ Ուլուբեգինէ: Աղբյուրի այս հատվածը թարգմանել ենք որոշակի թեականությամբ, «մուտ երեք կապակցությունն ըմբռնելով, իբրև՝ Մուտ ընել - մտածել, խորհել

² Կապ (Արցախի բարբառում) - Լեռների միջով անցնող ճանապարհի նեղ մաս, կապան

նակից հնարավոր է եզրակացնել, որ անցյալում բազմամարդ է եղել: Թե սրա բնակիչներն անցյալում ինչ քաջությամբ են սրակոտոր արել Օսմանյան տերության զորապետերին և զորքը, վերցնելով տարբեր հին գրվածքներից, գրել են իմ՝ Պատմություն Աղվանից խորագրով [աշխատությունում]: [Մրանք, իրենց] բնածին քաջության համեմատ էլ ունեն հանճարավոր [բառ ու] բան, առակախոս են, իսկ բարեպաշտությամբ՝ պակաս չեն, քան [բոլոր] մյուս գյուղացիները:

Այստեղից մեկնելուց հետո, ցանկացա իջնել Գարգառի (Կարկառի) ձորը, ուստի ինձ հետ վերցրի մի քանի ուղեկիցներ և իջա այն խորածորը, որը սկսվում է հարավում և ավարտվում է հյուսիսում՝ Ուտիք նահանգի սահմանին, **Ասկեարյան** (Ասկերան) կոչվող բերդի նեղ [կիրճով]: Այս գետն իր հորդ հոսանքով երկու կողմից անհնար ու անմատչելի վիհեր և ահավոր խորխորատներ է առաջացրել՝ մեջտեղում թողնելով անհնար բարձրությամբ վեր սեպացած միակտոր սուկալի ժայռեր, որոնց սրտում կան խորախոր անձավներ, լայն ու մեծ փապարներ¹ ու երկար [գոտևորող] գոտիներ²: Խռովությունների ժամանակ սրանցում բնակություն են հաստատում շրջակայքի գյուղացիները՝ պաշտպանված լինելով թշնամիներից: Այս ժայռի ցցվածքի արևելյան կողմում՝ մի գոտու վրա, հռչակավոր մելիք Ավանի բազմասենյակ ամրոցն է: Այն [ունի] անհերթթ [ու խոշոր] քարերով կառուցված եռաշերտ, ամուր պարիսպ: Ասում են, որ այստեղ կար նաև եռահարկ պալատ՝ բոլոր հարմարություններով՝ արտաքնոց³, բանտասենյակ և հյուրասենյակ: Ես ցանկանում էի անձամբ տեսնել այդ շինությունը, որի համար մեծ դժվարությամբ հասա առաջին պարսպին, որ նախամարտկոց է կոչվում, իսկ այնտեղից՝ ավելի մեծ դժվարությամբ՝ վերևի պարսպին: Ըստ որում, այն ուղին, որ տանում է դեպի վեր, շատ նեղ է ու անձուկ, այն էլ՝ անմատչելի ժայռի վրայով, որի ներքևում անդնդախոր ձորն է: Այս ճանապարհի միջնամասում կա մի գազաչափ հատված, [որտեղ կաձանն ընդհատվում է, և դա] [նախատեսված է] գիշերամուտ թշնամիների համար: Այդ [մասը]՝ վերևից ներքև ողորկ է և բացարձակապես ոտք դնելու տեղ չունի: Միայն նույն պատի մեջ արված են բռնվելու հատուկ տեղեր, դեպի որոնք ձեռքն ու ոտքը պարզելով, [հնարա-

¹ Փապար - Խոռոչ, քարանձավ

² Աղբյուրում. «... յորոց սիրտս են խորախոր անձաւք, լայնանիստ փապարք և երկայնեալ գոտիք»

³ Աղբյուրում. «Առանձնարան»

վոր է անցնել ճանապարհի] մյուս կողմը, և եթե ինչ-որ պատահականությամբ [մարդը] սայթաքի՝ կգահավիժի ձորի անդունդն ու կմեռնի: Թեև ես վախեցա և չէի ցանկանում այդտեղով անցնել, սակայն հոյակապ բերդի [նկատմամբ ունեցած] սերը և ուղեկիցներիս հորդորը, ինձ համոզեցին գնալ: Իսկապես, շինությունը հոյակապ ու շքեղ էր և արժեր տեսնել: [Ամրոցի] բոլոր շինություններն ու սենյակները գննելուց հետո, այնտեղից իջա գետի մոտ, որը Քերս (Քիրս) և Սաղսաղան լեռներից սկիզբ առնելով, հզոր դղնջունով իջնում է Գարգառի ձորը և, Խաչենով անցնելով, մտնում է Ուտիք, այնտեղից էլ բազմապտույտ ակոսներով՝ հոսում և խառնվում է Կուր մեծ գետին:

ԱՎԵՏԱՐԱՆՈՑ

Այնտեղից եկա Ավետարանոց գյուղաքաղաք, որը գտնվում է Արցախ աշխարհի Վարանդա նահանգում, մի բլրի զառիվայր ստորոտին: [Գյուղն] ունի ամուր պարսպապատ, բնակիչները հայեր են՝ հարյուր հիսուն տուն, ունեն գեղեցկակերտ չորս սյուների վրա կառուցված հոյակապ եկեղեցի: [Գյուղի] արևմուտքում բարձր բլուր է, որի վրա մեկիք Շահնագարի ամրոցանման պալատն է: Այն ուղղված է դեպի արևելք և այնտեղից [սկսվում է] ուղղագիծ պարիսպը, որ կառուցված է լեռան զառիվայրի վրա: Այս գյուղաքաղաքից ներքև՝ դեպի հարավ, Կուսանաց անապատն է, որի պարսպի մերձակա մի տափարակ վայրում մեկիք Շահնագարի երկրորդ պալատն է, որտեղ **կնյազ Մատաթովը** կառուցեց իր շքեղ պալատը՝ ըստ արևմտյան ճաշակի: Մակայն ինչպես ինքն անհետացավ ու վերացավ ժամանակի հետ, այնպես էլ իր պալատը՝ պարսիկների ձեռքով:

Կուսանաց վանքը գտնվում է այս գյուղի հարավային կողմում, կառուցված է մի ապառաժի եզրին, սագաշեն է և փոքր: Սրա շուրջ միաբան կույսերի հարյուրավոր սենյակներ կան, այժմ՝ ամայի: Առջևով հոսում է կաչկաչուն առվակ, [և] արևմտյան կողմի հարթ վայրում զանազան ծաղիկներով զարդարուն ծառաստան է, որ Մեկիք-Շահնագարյանցների տոհմական գերեզմանատունն է:

Այստեղ տեսա Գայանե մայրապետի ձեռքով գրված [և] զանազան պատկերներով զարդարված գեղեցկագիր մի Ավետարան, որի հիշատակարանը դնում եմ այստեղ.

«Արդ, այս աստվածեղեն և երկնապարզն գանձի և լուսափայլ մարգարտի [ունենալու] ցանկացող[ները] եղան, նաև եռափափագ սիրով գծագրողներն ու ստացողները, [երկու] սրբասնունդ բարեպաշտուհիներ և կուսակրոն հարազատները՝ այս սուրբ Ավետարանի գրիչ՝ Գայանե մայրապետը և իր նախորդը՝ Հռիփսիմեն: Մա դարձավ Ղարաբաղի այս Սուրբ կուսանոցի շենության սկիզբը՝ Սուրբ Նշանի և այստեղ եղող այլ սրբությունների հովանու ներքո: Արդ, ես՝ բազմամեղ Գայանես, ջերմեռանդ սիրով գրեցի այս սուրբ Ավետարանը Հայոց ՌՃԻ (1120) թվին՝ ի հիշատակ իմ հոգևոր ծնողի և մարմնավոր հարազատի՝ Հռիփսիմեի, և իմ հոգևոր հոր՝ բազմաշխատ Տեր Առաքելի, ով, [իր] մանկությունից մինչև ծերությունն քրտնաջան աշխատել է այս Անապատի վրա, [նաև ի հիշատակ] բազմերախտ Մարտիրոս Արքեպիսկոպոսի և իմ ծնողների և իմ բոլոր մյուս ազգականների, ամեն»:

Այստեղ կա նաև Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների նշխարների մատուցումներ[ով] [պահարան], որոնց վրա գրված է. «Այս սուրբ նշխարատուփը Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների հիշատակն է. ՌՃԾ (1150) թվին»:

Մեծ այս գյուղաքաղաքը վերանորոգեց մելիք **Միրզաբեգը**, [որ] որդին է մելիք Մելիքբեգի, թոռն է Գեղամա [գավառի] տեր՝ մելիք **Ապովի**, եղբայրը՝ Գեղարքուիքի տեր Շահնագարի, [այն բանից հետո, երբ] Հայոց ՌԼԱ (1031) թվականին, կովկասյան ասպատակները հզորացան և հարձակվեցին Գեղամա գավառի վրա, ինչպես տեսնում ենք այն գավառի տապանագրում, որ է.

«Այս գավառն ավերվեց ՌԼԱ (1031, թվին, երբ պարսիկներին հաջորդեցին Դադստանի լեզգիները»¹: Այնուհետև սկսվեց Գեղամա բարեբեր աշխարհի ավերումը, որի պատճառով նրա բնակիչները շտապեցին հասնել Արցախի ու Գարդմանի ամրոցները: Այդ ժամանակ էլ Մելիքբեգն իր ընտանիքով եկավ Ավետարանոց գյուղ և սկսեց վերանորոգել այն. և շքեղացրեց այնպես, ինչպես վայել էր իր փառքին ու պատվին: Նրա սերունդներից ծնվեցին հզոր և անվանի մարդիկ և իշխեցին այս տարածքների վրա, բազմացան ու լցրին այս գյուղը [և] մինչև այսօր [ապրում են այստեղ]:

Ավետարանոց գյուղի խաչքարերի հիշատակարաններ

«Այս խաչը Տեր Առաքել վարդապետի հիշատակն է. ՌՃԽԹ (1149)»:

¹ Աղբյուրում. «Ի փոխիլ Ղուզիլբաշին Տադստանայ Լեկզին՝ որ գաւառս ավերեցաւ թվին ՌԼԱ ին»

«Սա Քրիստոսի Նշանն է և բարեխոսը՝ Տեր Բարսեղ եպիսկոպոսի, Գրիգորիսի, որ [անունն] այժմ Մարաս է. ՌՃԺ (1110) թվին»:

«Այս Սուրբ Խաչը մելիք Բաղի և իր կողակից Մարիամի հիշատակն է՝ ի դուռն Ամարասի. Հայոց ՌՃԺ (1110) թվին»:

Այս գյուղը Ավետարանոց է կոչվում, քանի որ ծերունիներն, ըստ ավանդության, ասում են, թե. «Երբ Պարսից Պերոզ թագավորի օրոք, **Վաչակյան** արքան իր ուրացությունից հետո վերադարձավ, Քրիստոսի Ավետարանը գիրկն առած եկավ հենց այստեղ և առանձնացավ ու [ապրեց] խստակրոն ճգնակեցությամբ: Սրանից էլ այս վայրը կոչվեց Ավետարանոց»: Նաև հնարավոր է, որ բարեպաշտ Վաչակյան արքան այստեղ ստացավ Սուրբ Մեսրոպի աշակերտ՝ Հայոց Գյուտ երանելի կաթողիկոսի օրհնության նամակը, որի ընդօրինակությունը, հնասերների և հայրենասերների ուրախության համար, դնում եմ ստորև¹.

«Քո առաքինի սուրբ սիրո խոսքերով և իմ կամքով երկնավոր գործության շնորհիվ հորդեցին իմ մտքերը, ուստի մտադրվեցի խոսքով պատմող լինել»:

«Մեծ ու սարսափելի ահ ընկավ իմ սիրտը, որը ավելի բարձր է, քան երկինքների երկինքը և ավելի խոր է, քան վարի կիսագունդը: Այն ինձ պաշարեց ամեն կողմից՝ վերից ու վարից, ետևից ու առաջից, աջից ու ձախից: Փախչել չեմ կարողանում, իսկ խորամուխ լինել՝ վախենում եմ: Գուցե խորասուզվեմ, ինչպես Պետրոս առաքյալը, անհատակ ծովում, բայց արդյո՞ք Տեր Հիսուսը կմեկնի ձեռքը օգնելու համար: Սրանով մի քիչ կքաջալերվեմ և խորամուխ կլինեմ անխորամուխ լինելիի մեջ: Որովհետև խոսք ունեմ, այսինքն՝ լեզու, միայն գտնեմ քաջ մարդկանց առաքինության մեջ հոգեկիր նյութ, մարդիկ, որոնք հրեշտակներին հիացրին, անգիր օրենքներով իրենք իրենց համար օրենքներ եղան, առանց օրենքների վերևում Տիրոջը ճանաչեցին, եղածները ընդունեցին իբրև օրենքների տակ ընկած և առանց որևէ առաջնորդ մարգարեի կամ հրեշտակի աստվածատեսներ դարձան»:

«Արդ ահա՝ ինչից երկյուղ ունեի, սիրով մոտենում եմ, հույսով մերձենում, հավատով ամրանում և սկսում եմ, որտեղից պետք է սկսել: Ինչպես հենց սկզբում Քրիստոսի նկատմամբ սերը տեղ գտավ քո նախնի Ուռնայրի մեջ, որ երկնավոր նախանձով լցվեց հայոց թագավոր Տրդատի հետ: Երբ

¹ Աղբյուրի այս հատվածի աշխարհաբարը դնում ենք ըստ Վ. Առաքելյանի թարգմանության, տե՛ս Մովսես Գաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Վարազ Առաքելյանի, Երևան, 1969, էջ 13-21

սրանք իմացան Աստծո մեծամեծ հրաշքների, սքանչելիքների, հրաշագործությունների մասին, որոնք Սուրբ Գրիգորի ձեռքով կատարվեցին Հայաստանում, անմիջապես մոլար ճանապարհի բազմաթիվ շավիղներից ետ դարձան դեպի ճշմարիտ Աստված: Ծանոթությամբ ու բարեկամությամբ նրանք դեն նետեցին հեթանոսական ճնշող լուծը և թեթևացան, թոթափվեցին, թևածեցին, թռան երկնքում ճախրեցին»:

«Քաջ Ուռնայրը այս լսելով՝ այլևս հանգիստ ու դադար չունեցավ և ու էլ սուրհանդակի ծառայությունից օգտվեց, այլ հենց ինքը՝ մեծ թագավորը, մեծամեծ նախարարներով, բազմաքանակ զորքով եկավ հասավ Հայաստան և հանդիպեց հսկայագոր թագավորին: Իսկ նա (Տրդատը) եղբայրորեն, սիրով ու բարեկամությամբ ընդունեց, ամեն բան հայտնեց նրան, իր ներքին ու արտաքին գաղտնիքները բացահայտեց Սուրբ Գրիգորի ու հայոց բազմաթիվ զորքերի ներկայությամբ: Խոնարհվում էր ծեր թագավորը, ընկնում էր գետին, փաթաթվում էր ոտքերին ու ձեռքերին և պատմում էր հեթանոսական ամբողջ մոլորության մասին, ինքը ևս խոստովանում էր անգիտությամբ կատարած իր անցած մեղքերի մասին»:

«Քաջալերում էր նրան Սուրբ Գրիգորը Աստծո Որդու մարմնավոր գալուստով, որը թողության համար եղավ և ոչ թե դատապարտելու, եկավ ապաքինելու և ոչ թե մեռցնելու, իսկ նախապես մեռածներին խոստացավ հողից կյանքի դարձնել: Երբ ծեր թագավորը այս ամբողջը լսում է, ինքը և իր հետ եղած ամբողջ զորքը քառասուն օր իրենց պահքի են նվիրում և հրաժարվում են նախկին դատապարտելի գործողություններից: Հիսուներորդ օրը, երբ հրաժարվեցին սատանայից և սրա բոլոր գործերից ու ընդունեցին Սուրբ Երրորդությունը, մկրտվեց թագավորը ամբողջ զորքի հետ միասին: Սուրբ երկնավոր Երրորդությամբ, քահանայապետը կրկին վերածնեց նրանց երկնային որդեգրությամբ. նրանք բոլորը ելան՝ լցված Սուրբ Հոգով: Նույն ժամանակ նրանց շնորհվեց մի երանելի մարդ, որ եպիսկոպոս էր ձեռնադրված Հռոմ քաղաքի կողմից. սա եկել էր Տրդատ թագավորի հետ այս երկնավոր բարիքներով»:

«Ուռնայր արքան եկավ, մուտք գործեց Աղվանից երկիրը, սովորեցրեց և մկրտեց նրանց առաքելական կանոններով: Բոլորը ընդունեցին երկնավոր օծումը ու գրվեցին կյանքի գրքի մեջ: Հալածվեցին այդ երկրի դևերը, վերացան զոհագործումներն ու ճենճերահոտությունը, ամոթով մնաց մոլորությունը, բարձրացավ ճշմարտությունը, թագավորեց աներևույթ լույսը, մերժ-

վեց կամայական խավարը, հաստատվեցին եկեղեցու առաջին պտղիները, տասնապատկվեցին կալերի, հնձանների ու շտեմարանների բերքերը և բոլոր տեսակի անասունները: Նաև երկրի հողը նրան ժառանգություն տվեց և հաստատվեց ու տիրեց ուղիղ կարգ ու կանոն ձևեր նախնիների՝ քո հոր և մեծամեծ երանելի պապերի ու տատերի օրոք, մինչև քո սքանչելի տերության ժամանակները: Վիշապը, որ հին էր, գոյություն ուներ առաջին մարդու օրերից, տեսավ քո էության չքնաղ ծնունդը՝ ա) հայրենի հավատից, բ) ահեղ վիճակից»:

«Չարակամ թշնամու սիրտը խիստ կասկած ընկավ, թե գուցե ինչպես որ կյանքը մուտք գործեց Ադվանք, այնպես էլ ճշմարտության ծնունդը և մուտքը տեղի կունենան արևելքում (Պարսկաստանում): Շփոթվեց (թշնամին), տազնապահար եղավ, տարակուսության մեջ ընկավ ավելի, քան արդար Հոբի օրերում: Հավաքեց, ի մի գումարեց իր խավարային գորքերը, հայտնեց նրանց իրեն տանջող չար մոլուցքը: Բոլորը սարսափեցին ու դողացին և համաձայնության գալով՝ ելք որոնեցին: «Այդպես տազնապահար մի՛ լինիր ինքդ քո մեջ, ով քաջ, մեր մոլորությունը ավելի վաղ է, քան նրա ճշմարտությունը. տկար գազանով առաջին մարդուն հաղթեցիր, այս մեծ թագավորով չէ՞ ս կարող երեխաներին դիմադրել»: Այս ասացին և համատարած ծովը շարժեցին քո վրա: Մորկաբեր քամիներ իջան նրա վրա, շարժեցին և փոթորկեցին նրա բազմաթիվ ալիքները: Սկսեց մոմռալ, ելնել, տարածվել, ոչնչացնել դաշտերը և լեռները: Ահավոր գազաններով, գազանակերպ դրոշակներով, բազմաձայն փողերով, գալարափողերի գոչունով, անտառացած նիզակներով, ճառագայթող սուսերներով, ոսկյա կումբ¹ ունեցող վահաններով, խոշոր ու հաստ մկունդներով եկան և միահամուռ քեզ վրա հարձակվեցին բազմաթիվ հեթանոս ցեղեր: Երկրայինները երկնայիններին սարսափեցնում էին, մահկանացուները կամենում էին անմահներին կորցնել, և անաստվածները ցանկանում էին քեզ՝ աստվածային շառավիղիդ, արմատից կտրել. երկակի և եռակի անգամ պարտվեցին, բայց չամաչեցին»:

«Իսկ Նա, որ նստում է երկինքների երկնքում և տեսնում է ամբողջ աշխարհը՝ դիտելով ու կշռադատելով բարի օրենքները և նրանց, որոնք ընդդեմ են, քեզ միայն օրինական համարեց, թույլ տվեց, որ բարկ հնոցը շրջապատի քեզ: Վառվեցին, բորբոքվեցին և այրվեցին այնպես, ինչպես փշերը

¹ Կումբ - Վահանի վրայի ուռուցիկ գարդ, վահանի պորտ

կրակի մեջ: Նմանվեցիր երեք մանուկներին, հնոցի մեջ կրակի բոցը մարեցիր, կայծակների բոցը վարդի փափկության փոխեցիր, ծխի հեղձունակությունը շուշանի սպիտակության դարձրիր, կրակի այրող էությունը վերածեցիր ստեղծող ուժի: Երրորդ Աստծուն երկնքից վար բերիր երկիր՝ իբրև քեզ օգնական: Նրանց իմաստունները հիմարացան, նրանց քաջերը վախկոտ դարձան, նրանց սպառնալիքները դադարեցին, նրանց հերոսները թաքնվեցին, նրանց բազմությունները քչացան»:

«Երանի քեզ և երանի նրանց, որ մոտ են քեզ: Թվով քիչ էիր, բայց բազմությամբ անթիվ դարձար, սակավ էիր հայտնիներով, բայց ոչ հայտնիներով անթիվ դարձար: Քո նիզակը Հեսուի նիզակն է, իսկ քո սպառազինությունները Աստծո սպարապետի սպառազինություններն են, քո փողի ձայնը այնպես է, ինչպես Աստծո հեշտակապետի փողի ձայնը, Աստծո, որ իջնում է նրա հետ հարության օրը: Նրա ձայնը, որ աշխարհը ցնցում է, քարերը դրդացնում, գերեզմանները ավերում, մեռելներին հարություն տալիս, հնացածներին նորոգում, դատ ու դատաստան է կտրում՝ առանձնացնելով ոմանց ձախակողմը, ոմանց՝ աջակողմը: Սա Աստծուն է միայն հատուկ և վայել է Նրան: Իսկ քեզ, իբրև հավատարիմ ծառայի և սիրելիի ու Արքայության ժառանգորդի, տվեց երկնային շնորհներ, որ նմանվում է հարության օրվան: Նա, որ չարով պարծենում էր, տազնապահար եղավ. նա, որ մոլորությամբ էր խիզախում, հիմարացավ: Քո գորքի ամեն ինչը կրկնակի է: Եթե զրահները մարմինը պահպանելու համար էին, ապա միաժամանակ դրանք հավատի զրահներ էին. եթե սաղավարտը օգտագործվում էր սուսերից պաշտպանվելու համար, դրա հետ այն նաև փրկության սաղավարտ էր. եթե վահան ունեիր է նաև համբերության ու հավատքի վահան. երբ նետը քո աղեղից ուղիղ թռչում էր, նրա հետ քո սուրբ աղաչանքի աղոթքները շուտ և ավելի վեր էին գտնվում, քան երկինքը Աստծո առաջ. երբ քո առնական բազուկների մեջ սուսերը շողում էր, քո հավատքի լույսը հրեշտակների մեջ ցուլքեր էր արձակում: Քո դրոշակները երկնավոր դրոշակներ են, և քո նիզակը ճառագայթավոր է, ինչպես արեգակի արծաթյա շողքերը»:

«Սա, որ ինձ այս պատմության հենց սկզբից վախով պաշարել է, թե ինչպես կկարողանամ խոսքով պատմել այն բանի մասին, որ ավելի բարձր է, քան խոսքը: Խոսքը ի վիճակի չէ չորս նյութից կազմված աշխարհը ներկայացնել: Եվ այս ամենքին չի վիճակվում, այլ նրանց է բաժին ընկնում, որոնք ջանասիրաբար զբաղվեցին գիտություններով, այսինքն՝ թվաբանությամբ,

երկրաչափությանը, աստղաբաշխությանը, բժշկությանը և ապա հասան ծայրագույն գիտություններին՝ մարգարեկանին, առաքելականին, ավետարանականին, որը սկիզբն է ու ծլարձակումը: Եվ թեպետ ես ունեի նյութական երևույթները պատմող այս արվեստները, իսկ դու մի ժամանակ նյութական էիր, բայց այժմ աննյութականներին ես նմանվում: Եթե քեզ արուսյակի հետ համեմատեմ, բայց չէ՞ որ դու ավելի պայծառ շողեր ես արձակում, քան արուսյակը: Արուսյակը վեց ամիս արուսյակություն է անում (լուսատուի դեր է կատարում), իսկ վեց ամիս գիշերավար է (գիշերն է լույս տալիս). դու երբեմն արուսյակ ես, բայց ավելի բարձր ես, քան արուսյակը: Արուսյակը այգաբացին է միայն երևում, իսկ դու ամբողջ քսանչորս ժամ՝ տիվ ու գիշեր: Իսկ եթե լուսինը վերցնեմ իբրև քեզ օրինակ, չափազանց ծիծաղելի կլինի իմաստուններին. տարվա մեջ տասներկու անգամ վիժած, խիստ ժանգոտ, մանգաղաձև, կիսագունդ, խոնավալի, կիսալույս, հիվանդոտ, գիշերընթաց, խավարասեր, լուսատյաց, չղջանման, ընթացքի մեջ պակասավոր, կրակով տանջված, բազմաթիվ անգամ թաքնվող. իսկ դու՝ լիալայն, բարձր, լուսանման, ավետարեր, հրեշտակակերպ, ուրախարար, քաջալերող, պայծառ, ավելի գեղեցիկ, քան քո բոլոր հասակակից ընկերները: Քեզ ոչ մի բան հավասար չէ. բավական է ասեմ, որ արեգակից բարձր ես գտնվում և սրանով ոչ նրան կնախատեմ և ոչ էլ քեզ կգովարանեմ, այլ նրա (արեգակի) էությունը կպատմեմ քեզ, որը շեղագնաց է, թյուրընթաց, միակողմանի, ստվերատու, հարավային կողմում գտնվող, ձմռանը տանջվող, ամռանը կիզվող, գարնանը անձրևոտ, իսկ աշնանը երաշտային, գիշերը մտնող, առավոտածին, ծաղիկները թարշամեցնող, կանաչները չորացնող, միջօրեին կենդանիներին դեպի ստվերները հալածող, ամբողջ օրը երկու մասի բաժանվող. հույները իրավացիորեն սրան Ապոլոն կոչեցին: Իսկ եթե մի չնչին ճառագայթ մտքովդ անցկացնես, ապա դրա հետ իմացիր և այն, որ գիշերը ծածկվում է, ամպերում թաքնվում է, փոշով մշուշապատվում է, մրրիկներով ալեկոծվում է: Դու նմանվեցիր արեգակին. Հորից գորացար, Որդուց քաջալերվեցիր, Սուրբ Հոգուց լուսավորվեցիր. գիշերը տեսնվում ես, իսկ ցերեկը քո հավատքի ճառագայթները թափանցում են»:

«Քո վերաբերյալ համեմատավոր խոսք կասեմ. ամեն կողմից այք կտրեցիր. արծվից ավելի սրատես ես և ավելի արագ լսող, քան խաղաղ անասուններից մեկը: Ոչ միայն երկիրը տեսար, այլև՝ երկինքների մեծը. Փոքրերը թողեցիր, անցավորները տվեցիր, իսկ անանցը առար, դեն նետեցիր ոսկե-

կուռ թագավորությունը, և ահա քեզ համար կա և ապահովվում է անձեռագործ պսակը, որ ընդունելու էս Քրիստոսի ամենասուրբ ձեռքերից: Նա, որ ավետարանի համար թողնի հորը, մորը, քույրերին, եղբայրներին և իր ամբողջ ունեցվածքը, այստեղ հարյուրապատիկը և հավիտենական աշխարհի կյանքը կընդունի, որ անանց է: Որևէ աղքատ մարդ այդ բանը դյուրությամբ կարող է անել, իսկ թագավոր մարդու համար, որպիսին դու էս, անհնարին է: Իսկ եթե որևէ մեկը անի այնպես, ինչպես դու արեցիր, այն է՝ մարդկանց անհավատալի, հրեշտակներին զարմանալի, Աստծուն նմանելի, ինչպես որ Նա թողեց հրեշտակների անհաշիվ գորքերը և առավ մարդկային փուչ կերպարանք. քո գործը նմանվեց Նրան. նաև ամբողջ աշխարհի համար եղավ կյանք և փրկություն, դու ևս ամբողջ աշխարհին բացեցիր կյանքի և փրկության դուռ: Քո բուն երկրի հավատքը պահպանվեց, եկեղեցիները շեն մնացին, մատուռները խաղաղության մեջ ընկան, քահանաները քահանայությամբ զբաղվեցին, պատարագները տեղի ունեցան սեղանների վրա, մարգարեները թաղվեցին ընթերցանության մեջ, առաքյալները զբաղվեցին մխիթարությամբ, սաղմուսերգունները՝ օրհնությամբ, կույսերը մնացին կուսության մեջ, եկեղեցականները՝ սրբության մեջ, և ամեն մեկը գտնվում էր իր գործի մեջ: Քո գործունեության լուրը հասավ արևելքից մինչև Գաղիրոն, հարավից մինչև հյուսիս»:

«Քո մարտիրոսական անունը առաքյալների և առաջին նահատակների, հայրապետների և եպիսկոպոսապետների (անունների) հետ գրվեց ոսկի տախտակների վրա, միաժամանակ նաև կյանքի գրքի մեջ է երկնքում: Ջգո՛ւյշ եղիր, ո՛վ դու սքանչելի, որ արժանացար այսքան բարձրությունների, հաստատուն պահիր հույսի խարիսխը, անբաժան եղիր սիրուց, համբերող եղիր ճշմարիտ հավատի մեջ, որպեսզի վիշապը պոչը չջարժի քո կյանքի վրա»:

«Որովհետև մինչդեռ մանուկ էիր, հաղթեցիր նրան, չափահաս դարձած, գիտեմ, որ ոտնակոխ կանես նրա չարության բոլոր մեքենայությունները: Բայց թե էս ինչքան եմ սիրում քեզ, եթե հնարավոր լիներ խոսքերով գրի առնել այդ, մագաղաթի համար խորշոր ծախքեր անհրաժեշտ կլինեին: Քեզ սիրելու պատճառով շատ անգամ պատրաստվել եմ քեզ մոտ գալ, իսկ այժմ մեր եկեղեցու սուրբ ուխտի բարեխոսությամբ քեզ հանձնարարում ենք Սուրբ Հոգուն, Տերը քեզ հետ, ամեն»:

«Քրիստոսի համար նահատակ, խաչին չարչարակից, հրեշտակների կողմից փառատու պատմուճանով զարդարված, դու չգարշող որդյակ իմ Վաչե՝ Աղվանքի արքա, Գյուտ եպիսկոպոսը Տիրոջ միջոցով ողջունում է»:

«Ամոթալի ծուլության պատճառով չենք կարողանում համարձակվել մխիթարության խոսքեր ասել քեզ՝ այս աներևույթ պատերազմի մեջ հաղթողիդ, որ ոչ թե մարդկանցից քաջալերվեցիր, այլ Քրիստոսի հույժ ահավոր զորությունը քեզ օգնության կանչելով՝ գերազանցեցիր ամբողջ աշխարհին և ավելի բարձր երևացիր»:

«Բայց արդ՝ քեզ քո համեստությամբ համաձայնեցնելով, աղաչում եմ, որպեսզի իմ ողջույնը հաճելի թվա քեզ. բայց գոհ լինելով քո բարձրացումից, ո՛վ Քրիստոսի զորական, ես՝ աղքատ տղեսու, չունեմ գիտություն ու պատրաստություն և ոչ էլ իմ իմացությամբ կկարողանամ նյութ հավաքել, միմյանց կցել՝ քո ազնվական գովության համար զգեստ հյուսելու: Եթե նույնիսկ Հունաստանի բոլոր հոռետոր փիլիսոփաները միատեղ գումարվեն, դրաձյալ չեն կարողանա քո ոգելից հաղթությանը արժանի գովասանք ասել: Որովհետև դու Աստծուն ճանաչեցիր ամբողջ սրտով սիրելով, անձով ու զորությամբ. ամեն մեծություն և ունեցվածք փոխանակեցիր բոլորի միակ Տիրոջ հետ. և Նրան քեզ հետ հաշտ ունենալով՝ ոչ միայն երկիրը, այլև երկնքի մեծությունը առնելով՝ վայելեցիր: Հրաժարվեցիր դիվամուլ հեթանոսների ճենճերահոտ զոհերից և ահա անուշ բուրմունք դարձար Քրիստոսով, որ հասնելով մինչև արևմուտք՝ հռչակվելով տարածվեց և ուրախացնելով ցնծություն բերեց բոլոր հոգիներին: Թողեցիր երկրային մեծությունը, որ պատճառ է դառնում մեղքերի, ժառանգեցիր արդարությունը՝ երկնային մեծությամբ հանդերձ. բոլորովին հեռացար երկրային զվարճություններից, մերձեցար Քրիստոսին, որ խաղաղության նավահանգիստն է: Արդ՝ իմ խոսքերը ամփոփելով՝ կասեմ, որ եթե մարդ էիր, այժմ եղար հրեշտակ. ազգականներ ունեիր երկրի վրա, այժմ Քրիստոսի եղբայր դարձար երկնքում. մահկանացու էիր, այժմ եղար անմահ: Ոչ միայն դու ես անմահ, այլ որովհետև համարձակ ես Քրիստոսի մոտ, բազմաթիվ մահկանացուների կարող ես օգնություն հասցնել»:

«Ցանկալի ես հրեշտակներին, փափագելի ես մարդկանց, էլ ավելի կարոտալի ես ինձ՝ հեռացածիս, ամենաչար սատանայի դեմ աներևույթ մարտում քեզ մարտակից չեղածիս»:

«Բայց սհա փոխանակ ասելու՝ չար բան չունենաս մտքումդ, չհիշես իմ ծուլությունը, աղաչում եմ քեզ՝ փարատի՛ր իմ տխրությունը քո ողջունաբեր թղթով: Դու եղար Քրիստոսին չարչարակից, ապա նմանվի՛ր Նրան ամեն բանով. որովհետև եթե Նա Իրեն խաչ հանողների վերաբերյալ աղաչում էր՝ չհիշել նրանց մեղքերը, որքան ավելի վայել է քեզ ներել իմ ծուլությունը: Նա, որ քեզ հոգով ողջ ստեղծեց ու մարմնով՝ առողջ և արժանի դարձրեց Իր որդեգրությանը, Նույնը շնորհ կանի մեզ՝ քեզ աշխարհում առողջ տեսնելու հոգով ու մարմնով և վայելք ստանալ քո շնորհալի ու առաքինի կյանքի շնորհիվ: Ողջ լինելով Քրիստոսի շնորհիվ, երկար ժամանակ մեզ համար կլինես հոգատար և լցված Քրիստոսի սիրով»:

ՂԵՈՆԴ ԱՆԱՊԱՏ

Ավետարանոց գյուղը տեսնելուց հետո, այնտեղից գնացի Սուրբ Ղեոնդ բլուրը, որը այդ գյուղի հյուսիս արևելքում է՝ Դիզափայտ լեռան բազուկներից մեկի վրա՝ մի գեղեցիկ վայրում: Այն բարձրից նայում է Սյունյաց դաշտին, շրջապատված է թավ անտառով, որում մրգաբեր ծառեր կան, դրանց մեջ՝ շատ շագանակ: Բլրի գագաթին անհարթ քարով կառուցված Սուրբ Ղեոնդ սագաշեն և անսյուն եկեղեցին է: Շուրջը սենյակներ են և քառակողմ պարսպապատը: Անցյալում [սա] միաբանների մենաստան է եղել, իսկ այժմ ամայի է: Միայն հանդիսավոր օրերին մերձակա գյուղերից գալիս են քահանաներ, ճրագ են վառում և նվերներ հավաքելուց հետո վերադառնում են իրենց տները՝ եկեղեցին դարձյալ ամայի թողնելով: Այս մենաստանի շրջակայքում կան բազմաթիվ գերեզմաններ, որոնց թվում՝ Հովսեփ Արցախեցու աշակերտ Հակոբ վարդապետինը:

Ծերունիները պատմում են, թե Ապար աշխարհում նահատակությամբ պսակված Ղեոնդ երեցի ազգականները Վարանդայի գավառում որոնեցին նրա նշխարների մասունք, և գտնելով, բերեցին և դրեցին այստեղ: Դրա վրա կառուցեցին եկեղեցի, [որն] այդ օրվանից դարձավ այս գավառի նշանավոր ուխտատեղին և կոչվում է Սուրբ Ղեոնդ:

ՏՈՂԻ ԼԵՌ

Տղմաշատ ճանապարհով իջա այս վանքից և հասա Տող լեռանը, որը մեկիք **Եկանի** սեփական կալվածքն է: Լեռան գագաթը կարծես ամպերի մեջ լինի և այդ բարձրության վրա կա [մի] սագաշեն եկեղեցի, [որը] կառուցել է

մելիք **Եկանը**: Մա՛ զանազան թշնամիների երեսից պաշտպանվելու [նպատակով], միտք ունեւ հենց այնտեղ բարձր աշտարակներով հզոր պարիսպ կառուցել, որի համար պատրաստում է [անհրաժեշտ] նյութերը և շտապում ի կատար ածել իր մտադրությունը: Բայց մի լրտես¹ շտապ գնում է Նատիրի մոտ՝ Երասխի ու Կուրի միախառնաման [վայրում], և նրան պատմում է մելիք Եկանի մտադրության մասին և բարկություն գրգռելով՝ ասում է, թե. «Մելիք Եկանը մտածում է ապստամբել քո դեմ, դրա համար մտադրվել է Տող լեռան գագաթին հզոր ամրոց կառուցել, որը գրավելու համար, անշուշտ, մեծ ջանքեր կպահանջվեն»: Այս անակնկալ խոսքից Նատիրը զայրանում է և մտածում է խզել իր բարեկամությունը և նրան չարաչար մահվան դատապարտել, սակայն շահի սենեկապետը, որ մելիք Եկանի մտերիմ բարեկամն էր, ծածուկ հայտնում է կատարված դեպքերի մասին և խնդրում է մի ինչ-որ ձևով փոխել բերդի շինարարությանը վերաբերող խոսքը: Մելիք Եկանը, [որ] ի բնե խելամիտ² [մարդ էր], շտապ եկեղեցու հիմք է գցում և սկսում է առանց դադար [առնելու] կառուցել: Իսկ երբ Նատիրը նրան իր մոտ է կանչում, նա ի դերն է հանում [իր] թշնամիների բոլոր ամբաստանությունները և արդարանալով՝ ասում է. «Հավիտյան ապրիր, արքա, ես երբեք բերդ կառուցելու և անօրինակ խնամակալիդ դեմ ապստամբելու մտադրություն չեմ ունեցել, այլ ցանկանում եմ նորոգել իմ նախնիների կառուցած, [այժմ] ավերակ եկեղեցին, քանի որ այն Աստծո տուն է և ժողովրդի աղոթավայր»: Եվ այս խոսքով իրեն փրկում է մահից, ստանում է մեծամեծ պարգևներ, իսկ քսու այն մարդը դատապարտվում և սպանվում է:

Լեռան հյուսիսային կողմում՝ մի տափարակ ու գեղեցիկ վայրում, կա մի հոյակապ եկեղեցի, [որ] Հայոց ՈՂԵ (665) թվականին կառուցել են երկու վարդապետներ՝ Սարգիսը և Վարդանը: Բայց երբ հասել են շինության կեսին, Սարգիս վարդապետը մահացել է, և Վարդան վարդապետը [միայնակ] է ավարտել շինության պակաս [մասը]:

[Այս] եկեղեցին միջին մեծություն ունի, կառուցված է հղված քարով և ավարտվում է սրածայր գմբեթով: Սեղանի հիմքը քանդակազարդ է և գեղեցիկ, առջևում ունի սագաշեն գավիթ, ուր Սարգիս և Վարդան վարդապետների գերեզմաններն են: Գավթին կիպ կա մի սագաշեն եկեղեցի ևս, որի

¹ Աղբյուրում. «Բանորակ»

² Աղբյուրում. «Հանճարեղ»

դուռը բացվում է հենց նույն գավթի մեջ, և [այն] անվանում են Թիլնավան կամ Գտիչ:

Դեռևս կանգուն են միաբանների կացարանները, բայց պարիսպը հիմքից ավերված է [արդեն]:

Տեղադրությունը զվարճությամբ է լցնում [մարդու սիրտը], զարդարված է քաղցրահամ աղբյուրներով, բարձրակատար անտառներով ու անուշահոտ ծաղիկներով: Այս տեղի բարձրությունից երևում են ընդարձակ դաշտերն ու ձորերը, իսկ թիկունքում Դիզափայտի ծաղկազարդ լեռն է: Ցավ էր ինձ համար, երբ տեսա, որ այս մենաստանը ջրի կուտակումից կիսով չափ ճահճացել ու [հայտվել է] ողբալի [վիճակում], քանի որ անուշահոտ կնդուրկների [բույրի] փոխարեն, բուրում էր դժոխային հոտով: Բայց այժմ, գոհություն Աստծուն, քանի որ Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս Տեր Ներսեսն, իմ վերակացությամբ, [մի] արեղայի [այստեղ] վանահայր առաքեց, և հույս կա, որ այդ վանքը կգտնի իր նախկին վայելչությունը. արդեն շրջակա գյուղերից այստեղ են հավաքվել բազմաթիվ աշակերտներ, և շարունակվում է մասնավոր ուսուցումը:

Վերցնելով սրբազան Բաղդասար արքեպիսկոպոսի դիվանատնից՝ այս [վանքի] արձանագրությունները ես գրեցի իմ առաջին ճանապարհորդության ժամանակ, իսկ այժմ [գրեցի] սրա նկարագրությունը: Նաև մնացած արձանագրությունները գրում եմ այստեղ, ինչպես իր տեղում՝ Դաղիվանքի մնացյալ արձանագրությունները:

Այս վանքի արձանագրություններ

ՈՂԵ (665) թվին. ես՝ Տեր Վրդանես, կառուցեցի այս եկեղեցին և ցրված վիճակը, հաստատեցի նաև կալվածքները: Եվ արձանագրեցի. բոլոր ուրբաթ օրերը, [որ այլ մարդկանց համար գրանցված չեն, իբրև] հիշատակի [օրեր], և տարեկան տասը պատարագ՝ ինձ և տասը՝ Սարգսին: Հինանց¹ [տոնին]՝ մեկ պատարագ Ուխտանես եղբորը, մեկը՝ Մովսեսին՝ իմ քրոջ որդուն: Ով խափանի, Աստծո առաջ տեր է մեր մեղքերին:

Ես՝ **Գիրքս** [և իմ] որդի[ն], միաբանեցինք այս Մուրբ ուխտին: Տեր Վարդանեսն իր կամքով ինձ տվեց Ավագ եկեղեցին: Եվ ես իմ արդար ունեցվածքն ընծայաբերեցի այս Մուրբ եկեղեցուն: Տարեկան մեկ օր [պատարագ] պետք է մատուցեն ինձ՝ **Գերքոսիս** [համար], այնուհետև՝ **Գուլաքի**: Որքան

¹ Հինունք – Հիսուն օրերը՝ Զատիկից մինչև Հոգեգալուստ

որ այս եկեղեցին կանգուն է, թող ոչ ոք այլևայլ [կերպերով] չխափանի [մեր հիշատակը]:

Գավթի ներսում՝ խաչի պատվանդանի վրա

Ես՝ Տեր **Վարդանես**, իմ հոգու փրկության համար կանգնեցրի այս խաչը:

Ձախ կողմում

[Սա] սուրբ կաթողիկե տաճարում Տողեցի Սարգսի որդի **Սայուի** և իր կողակից Հերիքնազի հիշատակն է. ՌՃԿԶ (1166) թվին:

Սա Տեր Սիմեոնի որդի Մեսրոպ վարդապետի տապանն է. ՌՃՀԲ (1172) թվին: Լուսահոգի մելիք Եզանը եպիսկոպոս ձեռնադրել տվեց, նշանակեց **Կտիչա** վանքի առաջնորդ, որ եկա հաստատեցի այս Սուրբ աթոռը: Հայոց ՌՃՂԶ (1196) թվին առ Աստված վախճանվեց. ով որ կարդա [այս գիրը, թող] մի բերան Աստված ողորմի ասի:

ՏՈՂ ԳՅՈՒՂ

Վանքերի բոլոր արձանագրություններն ընթերցելուց և Սրբության սեղանը համբուրելուց հետո, այնտեղից իջա լեռան ստորոտը՝ Տող գյուղ: Հնում [եղել է] գյուղաքաղաք, կառուցված է զառիվայր տեղում և շրջապատված է հաստահիմն պարսպով: Բնակիչները հայեր են՝ ութսուն տուն: **Տիգակ** գավառի սահմանագլուխն է և հայոց մեծանուն իշխաններ՝ մելիք Եզանյանցների սեփական կալվածքը: Ունի չորս վայելչահյուս սյունների վրա [կառուցված] քարաշեն եկեղեցի: Կառուցել է մելիք Եզանը՝ որդին Տաշիր գավառի Արտվի գյուղից գաղթած Ղուկաս վարդապետի¹, և ինչպես պատմվում է՝ Տայինյանց կամ Լոռիսմելիքյանց տոհմից: [Եկեղեցին] շրջապատված է ամուր պարսպով. այստեղ են նաև պատվելի իշխանների գերեզմանները, որոնց տապանագրերը գրված են ստորև:

Այս եկեղեցու տանիքը, նրա քարե խաչկալը և զանգակատունը նորոգել է մյուս մելիք Եզանը՝ իր և իր ծնողների հոգիների հիշատակի համար: Այս գյուղի աջ կողմում կա սագաշեն եկեղեցի և Կուսանաց անապատ[ը], որի շուրջ պատվելի մարդկանց գերեզմաններ են:

¹ Աղբյուրում այս հատվածն է: «... կառուցեալ ի մելիք Եզանայ որդոյ Ղուկաս վարդապետի գաղթելոյ ի գաւառէն Տաշրաց ի գիւղէն Արտուոյ...»

Բնակիչները պատմում են, թե իշխանների սերունդներից մի մարդ բռնությամբ մահմեդականություն ընդունեց, իսկ հետո ապաշխարեց և, ի նշան ճշմարիտ ջերմեռանդության, կառուցեց Սուրբ Ստեփանոս եկեղեցին և Կուսանաց անապատը:

Գյուղամիջում երևում է մելիք Եզանի մեծակառույց պալատը, որում այժմ բնակվում են նրա տաճկացած ազգականները, քանի որ **Իպրահիմ** խանի ժամանակներում այս իշխանական տոհմի գլխավորները դատապարտվեցին գլխատման և մոտալուտ մահվանից փրկվելու համար թողեցին իրենց հայրենի կրոնը և մահմեդականություն ընդունեցին: Այժմ զարմանալի է, թե այդ տաճկացած սերունդները, աչքի առջև ունենալով իրենց նախնիների հոյակապ մահարձանները, ինչպե՞ս չեն ամաչում ու վերստին չեն դառնում [իրենց] հայրերի կրոնին:

Տոդի արձանագրություններ և տապանագրեր

Այս Սուրբ Հովհաննես եկեղեցու տանիքը նորոգեց Ղուկաս վարդապետի որդի մելիք Եզանը, ի հիշատակ իր հոգու: Ով կարդա՝ մեկ բերան Աստված ողորմի [թող] ասի:

Մելիք Եզանի տապանի վրա

Սա մելիք Եսայու որդի՝ մեծ մելիք Եզանի տապանն է: Եվ սրան իշխան էր նշանակել **Նատիր** շահը: [Սա] երեսուներեք տարի տիրեց **Տիգակի** երկրին և բազմաթիվ քաջություններ կատարեց և հաղթեց անօրեններին: Եվ ինքը հույժ զորավոր և պարթև էր [ավելի], քան իր նախորդները. և նրա կյանքի թիվը վաթսուամեկ տարի [է]. վախճանվեց ՌՄԼ (1230) թվին: Ովքեր ընթերցեք, մեկ Հայր մեղա ասեք՝ ամեն:

Մի տապանի վրա

Սա քաջագոր մելիք Եզանի որդի՝ մելիք Արամի տապանն է, որին շատ էր սիրում Նատիր շահը: Նախ վախճանվեց սրա հայրը, որ ուներ Նատիր շահի շաբաթը¹, [ապա ինքը] եղավ այս տարածքի մելիքը²:

¹ Աղբյուրում. «... որ շաբաթ ուներ Նատիր շահինե՛կ Շաբաթ-ըստ համատեքստի, հավանաբար՝ հրովարտակ

² Աղբյուրում այս հատվածն է. «... մելիք եղա այս Մուհալին»: Մուհալ բառը, որ Մահալ-ն է (արաբ., պրսկ.) և նշանակում է թաղ, թաղամաս, թարգմանել ենք իբրև տարածք

Այս տապաններին կից, նույնպես նրանց սերունդների գերեզմաններն են, այն են՝ քաջ իշխան **Օհան բեգի, Բալա բեգի, Բաղր բեգի, Հոսեփ բեգի, Բանկի բեգի, Եսայի բեգի** և այլոց:

ՂՈՒՌՈՒ ՉԱՅ

Փոքրիկ գետ է, որ բխում է Դիզափայտ լեռան բազուկներից, իջնում է Փոքր Սյունիք և հոսելով թափվում է Երասխ գետը, սակայն ամռանը [գետի ջուրը] դաշտի մեջ սպառվում է և չի հասնում Երասխին, ուստի այս պատճառով կոչում են Ղուռու չայ, որ [նշանակում] է ցամաք գետ: Այս գետն ունի համեղ ձկներ և **Տիզակ** ու Վարանդ գավառների սահմանագիծն է:

Այստեղից շարժվեցի դեպի Դիզափայտ լեռան գագաթ և համբուրեցի հազարավոր սրբերի նշխարների փոշին, ովքեր տանջանքներով նահատակվեցին այնտեղ: Ուխտավորներն այնտեղից հաճախակի սրբության հող են վերցնում, այդ պատճառով գերեզմանների [տեղում առաջացել] է խոր փոս: Այս [լեռը] Դիզակի գավառում բարձրությամբ առաջին լեռն է՝ Մռավից հետո: Տոնելի նահատակների մասին այսպես է գրում Աղվանից աշխարհի պատմիչը¹. *«Աղվանքի վրա Տեր Աբասի² հովվելուց առաջ թշնամիների կողմից հրդեհվեցին վկայարանները. Վաչագան արքայի և Ամարասի Գառնիկ էպիսկոպոսի ժամանակ Դիզափայտ լեռան Կատարո վանքում³ մարդիկ հայտնվեցին, որոնց անուններն են՝ Մուրբ Մովսես, Մուրբ Դանիել, Մուրբ Եղիա⁴: Սրանք աշակերտել էին Մուրբ Գրիգորիսին, որոնց հետ էին նաև երեք հազար ութ հարյուր յոթանասուն տղամարդիկ: Սրանք բոլորը աճապարեցին Դիզափայտ լեռը՝ խոտաճարակ կյանքով սպրելու: Սրանց ետևից գալով՝ արյունարբու Սանեսանը բոլորին սրի քաշեց, որ տեղի ունեցավ նավասարդ ամսի իննին: Դրանց բարեխոսությամբ Աստված թող գրթա Աղվանքին ու Հայքին»:*

¹ Աղբյուրի այս հատվածի աշխարհաբարը դնում ենք ըստ Վ. Առաքելյանի թարգմանության, տե՛ս Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1969, էջ 90

² Մեր աղբյուրում. «Աթանաս»

³ Մեր աղբյուրում չիք «Կատարո վանքում» արտահայտությունը

⁴ Մեր աղբյուրն այստեղ ունի հավելյալ «սոքա գոլով որդիք Սանեսանայ արքային Մասքութաց» (ովքեր մասքութների Սանեսան արքայի որդիներն էին) արտահայտությունը

ԾԱԿ ՈՒՌԻ

Երջանիկ նահատակների նշխարների փոշին համբուրելուց հետո եկա Ծակ ուռի գյուղ, որը գտնվում է Տոդ գյուղաքաղաքից հարավ արևելք: Բնակիչները հայեր են՝ քսաներկու տուն: [Գյուղի] դիրքը վայելուչ է, շրջապատված է անտառներով: Այստեղ է գտնվում այն եկեղեցին, որ Աստվածամոր անունով կառուցել է Հակոբ վարդապետ Մելիք-Թանկեանցը Հայոց ՌՃԼԱ (1131) [թվականին]: Թեև շինությունը փոքր է, բայց բավականին շքեղ է. հիշյալ վարդապետի մահանալու պատճառով եկեղեցու գմբեթը դեռևս անավարտ է: Հարավային լուսամուտի մեջ կառուցված է [մի] օձանման զարդաքանդակ, որի մասին ծերունիները պատմում են, թե մի անգամ եկեղեցու ճարտարապետը մի աշակերտի վրա բարկանալով, ասում է. «Թող օձը կծի քեզ»: Եվ այնպես է պատահում, որ հենց նույն օրը, երբ նրա աշակերտը [մի] քար է բարձրացնում՝ օձը կծում է նրան, որից թունավորվելով՝ մեռնում է: Ի նշան այս արագահաս խոսքի, զոջացող աշակերտը նրան [ճարտարապետին] խնդրում է, իբրև մշտնջենավոր հիշատակ և բոլոր ստահակ աշակերտների խրատ, [մի] օձանման քար քանդակել տալ:

Այս կալվածքը պատկանում է հայազգի Միրզաբեկյանց ազնվական տոհմին, որտեղ [նրանք] սերնդեսերունդ ապրում ու վայելում են մինչև այսօր:

Այս եկեղեցու արձանագրություններ

Ես՝ Եսայի վարդապետ **Կրճունեցու** աշակերտ՝ Հակոբ վարդապետս՝ Թանկյանց ազգից, [որ] Աղվանից Տեր Երեմիա հայրապետից առաջնորդ եմ նշանակված Ղուզայինի (այսինքն՝ Ծմակայինի) մի քանի գյուղերի. մեզ թույլ չտվեցին բնակվել մեր սեփական նստավայրում, այլ ուր էլ շրջեցի, տեսա, որ ավելի [հարմար են], քան սա և ցանկացա այստեղ բնակվել և ճանապարհի հարթելով դեպի այս վայրը՝ բնակվեցի այստեղ: Եվ հիմնարկեցի ու կառուցեցի այս գմբեթավոր եկեղեցին՝ ի հիշատակ իմ և իմ ծնողների՝ իմ հայր Դովլաթի, իմ մայր Մարիամի և իմ դայակ ու սնուցիչ՝ իմ քույր Սառայի հոգիների համար: Հիշեցե՛ք ի Քրիստոս. ՌՃԼԱ (1131) թվին:

ԹԱՂԼԱՐ

Այս գյուղը կառուցված է զառիվայր տեղում՝ Տոդ լեռան դիմաց: Բնակիչները հայեր են՝ երկու հարյուր տուն, [այստեղ] գաղթել են Հին Թաղլար

գյուղաքաղաքից, որը գտնվել է Դիզափայտ [լեռան] մյուս կողմում, որտեղից էր [նան] վերոգրյալ **Հոհաննես** վարդապետ մելիք Թանկյանցը¹:

Հայազգի **կնյազ Մատաթովը**, Մեհտի Ղուլի խանի ձեռքով, ինչպիսի միջոցներով որ է, սեփականացրեց այս [գյուղը]՝ բնակիչներով հանդերձ, իսկ նրա մահից հետո [գյուղը] դարձյալ դասվեց արքունի հպատակների թվում: [Այս գյուղն] ունի հոյակապ քարաշեն եկեղեցի՝ բավականին լավ [վիճակում]:

ՀԱՏՐՈՒՑ

Լայն սփռվածություն ունեցող գյուղ է՝ կառուցված Խաչ կոչվող հովտում: Բնակիչները հայեր են՝ հարյուր տուն: Վայրն արգասավոր է, շատ են այգիները. նան թթենիները, որից մետաքս է ելնում և ուղարկվում է վաճառքի: Գյուղամեջում կա սագաշեն եկեղեցի՝ կառուցված Փրկչական 1702 թվականին: Այս հովիտը ձգվում է մինչև Երասխ գետն ու **Պապուն** քաղաքը, հավանաբար՝ Պիանք, որը Արցախ աշխարհի տասներկու նահանգներից մեկն էր և, ըստ տեղադրության խիստ պատշաճ է [Պիանքը լինելու]:

Բնակիչները մեզ պատմեցին, թե Պապուն քաղաքի որմերից մեկի փլվելու ժամանակ, այդ փլվածում երևաց օսմացու հագուստով, ոտքի վրա կանգնած մի մեռած [մարդու կմախք], իսկ թե ինչո՞ւ էր [այդ մարդը դատապարտվել այդպիսի մահվան]՝ չգիտեն: Այստեղից ելա, քայլերս ուղղելով դեպի Վանք գյուղը, որ այստեղից հեռու է մոտ մեկ ասպարեզ [և գտնվում է] մի լանջոտ վայրում: [Այս գյուղի] դիրքը վայելուչ է, օդն ու ջուրը՝ զովարար, սակայն խիտառիստ [աճող] թթենիներն արգելում են առողջարար օդի շարժումը: Բնակիչները հայեր են՝ տասը տուն: Գյուղի ներքևի ծայրում Մպիտակ Խաչ [կոչվող] Սուրբ ուխտն է: [Այն] կառուցված է անհարթ քարով, միջակ շինություն է, բայց, ինչպես երևում է Աղվանից կաթողիկոսների կոնդակներից, եղել է այս նահանգի եպիսկոպոսանիստը: Այստեղ կա բյուրեղյա մի խաչ, որին բազմաթիվ ուխտավորներ են [այցի] գալիս՝ խոյերի ու հորթերի մատաղներ [անելով]:

Բոլորը, ըստ ավանդության, հաստատում են, թե այս [խաչը] Աղվանից Գրիգորիս կաթողիկոսի լանջախաչն է, որ նրան Աղվանք առաքելիս շնորհել է Գրիգոր Լուսավորիչը, իսկ նրա սուկալի նահատակությունից հետո,

¹ Այս Հովհաննես վարդապետը մի պարբերություն վերև հիշատակված Հակոբ վարդապետն է: Անուններից մեկը վրիպակ է

որպես սրբազան ժառանգություն, մնացել է հավատացյալների մոտ և մինչև այսօր անկորուստ պահապանվել ու որդուց որդի փոխանցվելով [գտնվում է] այստեղ: Այնուհետև նրա անունով կառուցել են եկեղեցի՝ այն դարձրել են եպիսկոպոսանիստ և ի պատիվ այդ խաչի՝ ինքնուրույն թեմ են հատկացրել:

Այստեղ տեսա չորս կաթողիկոսների կոնդակներ՝ այս աթոռի հաստատման [վերաբերյալ], այն է՝ Հովհաննի, Եսայու, Ներսեսի և Միմեոնի, [որոնք տրվել են] Սրապիոն քահանայի սերունդներին, ովքեր որդուց որդի եղել են և այժմ էլ այս եկեղեցու և խաչի վերակացուներն են:

Ծերունիները պատմում են, թե անզգուշության [պատճառով] պատահեց [այնպես, որ] այրվեցին [այն] թաշկինակները, [որոնցով փաթաթված պահվում էր խաչը], որոնց հետ նաև խաչը, բայց [խաչը] ոչնչով չվնասվեց՝ միայն ներսում մի փոքր ճաք առաջացավ, որից հետո [խաչը] արծաթապատվեց և պահվում է զգուշությամբ:

Եկեղեցուն կիպ, Վելիջան **բեգ** Ջալալյանցի գերեզմանն է, որի վրա հոյակապ մահարձան է [դրված]:

Սրա արձանագրությունը եկեղեցու ճակատին

Կառուցվեց ՌՃՁԴ (1184) [թվին]. դա տարին էր Թահմազ խանի: Այս զանգակատունը **Սուրաբի** որդի Օվանես եպիսկոպոսի հիշատակն է:

Վելիջան **բեգի** տապանի վրա

Ես՝ Խումար՝ որդի Ջալալի, կանգնեցրի այս խաչը՝ ի փրկություն իմ որդի Վելիջանի հոգու: Ովքեր երկրպագե՛ք, հիշեցե՛ք [ձեր աղոթքներում], որ ՋԻԷ (927) թվին, երիտասարդ տարիքում, վախճանվեց ի Քրիստոս:

Մի մեծ խաչքարի վրա

Ես՝ Աբասի որդի Իշխանս, այս խաչը կանգնեցրի, ի փրկություն իմ որդի Բասուդարի հոգու: Ովքեր կարդաք, աղաչում եմ, հիշեցե՛ք ձեր սուրբ աղոթքներում, ՉՂԵ (795) թվին:

Սա բարեպաշտ Բասուդարի գերեզմանն է, որ երիտասարդ տարիքում վախճանվեց ի Քրիստոս:

ԽՈՒՏԱՓԻՐԻՆ

Առաքել գյուղ իմ մտնելուց հետո, որը գտնվում է Արցախի ծայրասահմանին և [Արցախի] վերջին գյուղն է, և Վեհափառ կաթողիկոսից ինձ հանձ-

նարարված գործն ավարտելուց հետո, ցանկացա նաև տեսնել **Խուտափիրին** (այն է՝ Աստվածաշնորհ) կամուրջը: Ուստի, ճանապարհի երկյուղի պատճառով, ինձ հետ վերցրի վստահելի զինվորներ և անցա այդ կամրջով, որը գտնվում է Երասխի վրա՝ Տիրի լեռան կիրճում, որտեղ լեռներն իրար մոտենալով ստեղծել են մի նեղ կիրճ: Բայց Երասխը ուժգին հարձակումով ճեղքել է ապառաժի թանձրությունը և քարերի մեջ ճանապարհ է բացել, որի երկու կողմերում հաստատուն քարեր են, [և] սրանց վրա գտնվում են Խուտափիրին կոչվող երկու կամուրջներ:

Ամբողջությամբ սրբատաշ քարով կառուցված առաջին իննակամար կամուրջի երկարությունը երկու հարյուր կանգուն է: Կամուրջի չորս ակները կանգուն են, իսկ մյուսներն ավերված են: [Կամուրջը] արձանագրություն չունի, որով հնարավոր չի իմանալ, թե որտեղի՞ց է ստացել անունը կամ ո՞վ է կառուցողը. [դրանք] ամբողջովին անհայտ են: Մակայն [դատելով] հոյակապ կառույցի [տեսքից] և հնությունից՝ երևում է, [որ] կառուցել են Սյունյաց իշխանները:

Իսկ մյուս կամուրջը, [որ] գտնվում է [առաջինից] մոտ մի ասպարեզ ներքև, աղյուսաշեն է, տասնհինգակնյա, երկարությունը՝ երեք հարյուր վաթսուներս կանգուն: Անշուք կառույց է. կառուցել է Շահ Աբաս պարսից [թագավորը]:

Երասխը առեղի գոյուն է արձակում այս ժայռերի կիրճում սեղմված, ուր [կիրճի] ավերը տեղ-տեղ այնքան են մոտենում [իրար], որ մինչև անգամ հնարավոր է մի կողմից մյուսը ցատկել:

Ամռանը Երասխն [նվազում և] ամփոփվում է կիրճի խորքում, որի պատճառով կամուրջի ակների մեծ մասը հայտնվում է ջրից դուրս, իսկ գարնանը հորդանում ու զայրանում է և լցնում է ամբողջ կիրճը՝ երբեմն բարձրանալով կամուրջից վեր և արգելելով ուղևորների երթևեկը: 1826 թվականին հայագգի Մատաթովն այստեղ տվեց սոսկալի ճակատամարտ, ուր էլ խորտակեց պարսից զնդերը: Թեև [նա] ցանկանում էր այտեղից անցնել և գնալ Դավրեժ, բայց [Ռուսաց] տերության հրամանով ետ դարձավ:

Գետը Ռուսաց և Պարսից տերությունների սահմանն է, ուստի առանց զգուշավոր պահապանի որևէ մեկին թույլ չեն տալիս անցնել մյուս կողմ:

Այստեղից դեպի վեր բարձրանալով՝ հասա Տիրի կոչվող լեռան գագաթին [գտնվող] մեծ քաղաքի ավերակ, որն այժմ ավազակների դարան է. այդ պատճառով [այստեղ] շրջագայելը շատ վտանգավոր է, [և ես] միմիայն ուշի

ուշով դիտեցի Մեծ Փայտակարանի դաշտը, և դա մխիթարություն եղավ սրտիս:

ԱՔԱՐ ԳԵՏ

Այս գետն իջնում է Մղովուզի և Ծարի լեռներից և իր ընթացքն ուղղում է դեպի արևելք, հոսում է **Զանկեգորի** դաշտ և ոռոգում է նրա այգիներն ու դաշտերը, այնուհետև թափվում է Երասխի մեջ:

Նատիր շահի ժամանակներում, Աբրահամ Կրետացի կաթողիկոսը նրա հրամանով իջավ Մուղանի դաշտ նրա թագադրության հանդիսությանը [մասնակցելու համար] և վերադարձի ճանապարհին գրեց [իր] ճանապահորդության համառոտ [պատմությունը], որից [մի] հատված, հնասերների հետաքրքրության և այն վայրերի անցյալ ու ներկա տեղադրության համեմատության [համար], տեղին եմ համարում դնել այստեղ, [ուր] ասում է¹.

«Իսկ երբ փետրվարի քսաներեքին ելա Մուղանից, եկա **Տուզախ**՝ Տոդ գյուղը: Այնտեղ էր նաև Աղվանից կաթողիկոսը, որի անունը Ներսես էր՝ այր խոհեմ և քաղցրաբարո, որ սպասում էր իմ գալստյանը (և թե ինչպիսի սիրով էինք միմյանց նկատմամբ, բայց դեռ չէինք հանդիպել): Այլև, մինչ Մուղանում էի, խնդրեցի² Վելինիմեթին³ նաև Աղվանից կաթողիկոսության Կենճեի⁴ և Շամախիի ու Շ[ի]րվանի [թեմերում] ինձ փոխանորդ մի առաջնորդ անվանական նշանակելու [համար]⁵, որպեսզի կառավարի վանքերն ու եկեղեցիները՝ ժողովրդով հանդերձ, քանի որ ես հեռու եմ այդ երկրից և ձեռնհաս չեմ, իսկ ոչխարն առանց հովվի չի կարող լինել: Եվ Կենճեի խաները և մյուս զապիթները⁶ համիշայ շամաթայ չիլթախ⁷ առնելով թույլ չեն տալիս հանգիստ մնալ, այլ մշտապես կեղեքում ու կողոպտում են: Որի պատճառով խնդրում եմ Մեծությունիցդ, որ այսուհետև ո՛չ խան, ո՛չ սուլթան կամ զապիթ՝ նրա հետ գործ չունենան, քանի որ իմ վեքիլն⁸ ու նայիպն⁹

¹ Հմմտ. Աբրահամ Կրետացի, Պատմություն անցից Տեան Աբրահամու Սրբազան Կաթողիկոսին Հայոց Քաթիրդաղցոյ, առ Նաղրշահ Արքային Պարսից, Կալկաթա, 1796, էջ 119 - 128

² Աղբյուրում. «... արգ արարի»

³ Վելինիմեթ - Տիտղոս Թահմազ Ղուլի խանի (Նատիր շահ): Աբրահամ Կրետացու Պատմությունում Վելինիմեթ

⁴ Կենճե (Կենճե) - Գյանջա՝ Գանձակ

⁵ Աղբյուրում. «... ինձ փոխանորդ խալիֆայ անուամբ եղեալ եմ»

⁶ Չապիթ - Ըստ համատեքստի՝ իշխանավոր

⁷ Համիշայ, շամաթա, շիլթախ - Ըստ համատեքստի՝ հարկատեսակներ են

⁸ Նայիպ (արաբ., պրսկ.) - Փոխանորդ

⁹ Վեքիլ (վաքիլ - արաբ. թրք.) - Վերակացու

է: Այլ եթէ խոսք ու զրոյց ունեն՝ թող ինձ հանդիպեն: Եվ [նա] ինձ ռախամ¹ շնորհեց և ես տվեցի Ներսես կաթողիկոսին, որի համար շատ ուրախացավ և [մենք] մեծ Բարիկենդանը Տողում և **Հաստրութում** միասին կատարեցինք: Եվ Մեծ պահքի առաջին երկուշաբթի [օրը] **Հաստրութ** գյուղից դուրս եկա, ու թէն Խաչենի, Վարանդայ] ի և Ավետարանոցի մելիքները ընծաներով ու պարգևներով եկան ինձ տեսության և թախանձեցին հանդիպել իրենց նահանգում, սակայն [ես] չկամեցա, քանի որ հացի ու գարու խիստ պակասություն ու սղություն էր, իսկ ինձ հետ շատ մարդ և անասուն կար: Եվ երկրորդ՝ քանի որ ես ցանկանում էի շուտափույթ տուն հասնել և հանգստանալ, քանի որ հոգնել էի շրջագայությունից ու ցրտից, մանավանդ որ հոտոտելիքս և մի ականջս խափանված էին և ես տարակույսի մեջ էի: Այդ պատճառով շտապեցի և եկա Ձորագյուղ, այնտեղից էլ՝ Պնաձոր գյուղը: Այնտեղից էլ [գնացի] Միսիանցի Ղուռչի բեկի օբան, իսկ այնտեղից էլ՝ **Խնձորիկ**, որը [գտնվում] է անչափելի բարձրություն ունեցող մեծամեծ քարաժայռերի ու լեռների մեջ. նեղ և անձուկ ճանապարհով իջանք ձոր: Օսմանցիների և դարչողու քրդերի ահից բարձրաբերձ տեղերում՝ [ճանապարհի] այս ու այն կողմերում, իրար դեմ հանդիման, ապառաժ վեմերի մեջ փորված են քարայրներ, [կամ] մաղարաներ², որոնցից յուրաքանչյուրն իրենց համար բնակության տուն կառուցած [լինելով], բնակվում էին [տեղացիները]: Եվ այն էր զարմանալին, որ կաշեփոկերով ելնում և իջնում էին կանայք՝ իրենց կողքերին կապած կաթնակեր երեխաներ, նաև ջրի սափոր և այլ հարկավոր իրեր: Այդպես [կաշե]փոկով ելնում էին վեր և մտնում ժայռի բարձրադիր խորշերը, ապա կաշվե պարանը քաշում էին վեր, [և այլևս] մարդ չէր կարող ելնել: Իսկ նրանց գյուղի տները քանդել էին օսմանցիների զորքերն ու դարաչողու ավագակ քրդերը: Նախ[ապես] այս Խնձորեկ գյուղում կար երեք հարյուր տուն, բայց այժմ պակասել են, քանի որ թուրքերը սպանել էին [նրանցից] շատերին: [Թուրք] փաշաները քանիցս զորքով հարձակվել էին սրանց վրա և չէին կարողացել գրավել, այլ ճակատամարտ տալով, ամոթահար հետ էին դարձել, բայց ավերել էին [գյուղի] այն մասը, որի [բնակիչները] իրենց [քարայր-տների] դիմաց քարայրներ չունեին, որ [կարողանային] իրար օգնել: Այդ պատճառով այդ կողմը ավերել էին, կանանց, երեխաներին և տղամարդկանց սրի էին քաշել ու հեռացել էին: Իսկ ովքեր կիսով կամ մեկ երրորդ

¹ Ռախամ - Ըստ համատեքստի՝ հրովարտակ (աղբյուրում. «... որ և շնորհեաց ինձ գրախամ»)

² Մաղարա (արար.) - Քարայր

մասով էին կորուստներ կրել, նրանք իրար դեմ դիմաց քարայրներ ունեին և կարողացան հրացաններով¹ օգնել միմյանց: Նախկինում այս գյուղում գործում էին շատ պատվական գորգեր, Բայց այժմ շատ են նվազել և հազիվ թե գտնվեն մի քանի [գորգա]գործ պառավներ: Ջենքով ու հրացաններով [զինված] տեղացի գյուղացիները մեզ ուղեկցեցին ձյան թանձրության միջով և հասցրին Տաթևի մեծ վանքը: Ճանապարհին տեսանք **Քարահունչ** անունով մի ավեր գյուղ, որը Բանադրված էր Տաթևի առաջնորդների [կողմից]: Աղերսեցին ինձ արձակել [բանադրանքը], և ես, տեղի տալով, արձակում և օրհնություն սովեցի [այդ] գյուղին: Այնտեղ կար սրբատաշ քարով կառուցված մի եկեղեցի: Իսկ [Տաթևի] անապատում մնացի չորս օր: Բայց մինչ անապատում էինք, մարտի տասնվեցին՝ երեքշաբթի օրվա գիշերը, գիշերվա յոթերորդ ժամին, օդը պարզ էր և լիալուսին էր: Քանի որ մինչև հասա Անապատ կրկին ձյուն տեղաց՝ քսանչորս ժամ և ապա [եղանակը] պարզվեց և ես, խցիցս ելնելով, բոլորից ծածուկ գնացի եկեղեցու դուռը և տեսա, որ լուսինը կիսով խավարել է և մինչև [մայր] մտնելը իսպառ խավարեց և այլևս չերևաց»:

«Եվ լուսնի խավարման նույն օրը, երբ լուսացավ, ինձ հետ վերցնելով վարդապետներից ու միաբաններից ոմանց՝ ուխտի գնացի Հարանց հին անապատը, որ մայրն էր մեր ազգի բոլոր վանքերի՝ թե արևելքում, թե՛ արևմուտքում: Եվ այն մատուռում, որտեղ թաղված են սուրբ վարդապետներ Պողոսի, Սարգսի, Արիստակեսի և Բարսեղ աբեղայի նշխարները, որոնց [մասին] պատմում է Առաքել [Դավրիժեցի] պատմագիրն [իր Պատմության] քսանհինգերորդ² գլխում³: Եվ Անապատում ուխտս կատարելուց հետո, [գնացի] նաև [մոտակա] բարձր լեռան կործանված տեղը, ուր երկրաշարժից լեռը հաստվել է և գերեզմանատունը տեղից պոկվել ու գնացել է մի նետրնկեց հեռավորությամբ, ապա կանգ է առել. նույնպես և մատուռը, որում թաղված են վերոհիշյալ սրբերի մարմինները, որտեղ մեր ուխտը կատարեցինք: [Ապա] ճաշու ժամի [ժամերգությունը] Անապատում կատարելուց հետո իջանք ներքև՝ դեպի [այն] մատուռը, որտեղ [վերո]գրյալ սրբերի դամբարաններն էին [և] որը [մի] փոքրիկ եկեղեցի է, և այնտեղ կատարեցինք Երեկոյան ժամ[երգությունը], ապա ձիով անցանք Որոտան գետը, որ

¹ Աղբյուրում՝ «Թուֆենկովք»

² Պետք լինի՝ քսաներկուերորդ

³ Հմմտ. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմությանց, գլուխ ԲԲ, Աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 225

[գտնվում] է [այս] մատուռի, Շնհերի և Կուսանաց անապատի միջև, և ելանք Կուսանաց անապատ: Եվ տեսա նրա ավերն ու ամայությունը [վանքի], որում [նախկինում], ավելի քան հարյուր հիսուն կույսեր էին բնակվում: Իսկ այժմ միայն տասներկու ապաշխարողներ կային, և նրանք էլ շիվարած ու հուսահատված են: Այդտեղ կատարեցինք Խաղաղական [ժամերգությունը], և քանի որ երեկոյանում էր, գիշերը մնացինք այնտեղ: Լույսը բացվելու [ժամանակ]՝ Առավոտյան ժամ[երգությունը]ը կատարելուց հետո հուսադրեցի ապաշխարողներին և եկեղեցուն հարկավոր ինչ պակասություն որ կար՝ թե՛ վարագույր երկաթ[յա] [ձող], թե՛ գրքեր, թե՛ զգեստ, սկիհ, խաչ, այլև վերին կատաղունիսը¹, որտեղ կանգնում են տղամարդիկ, երբ այստեղ են լինում²: Եվ անապատը քանդված ու ավերված էր, որտեղ էլ շուտափույթ գտնել տվեցի մի հյուսն, փայտ և տախտակ և վճարելով նյութերի արժեքը՝ հրամայեցի արագ կառուցել և [ապա] գնացի: Եվ անցնելով Հալիձորի գյուղը՝ կրկին իջա Տաթևի վանք և մարտի տասնութին վանքից ելա, այնտեղ մնալով յոթ օր, մինչև ձյունը մի քիչ հալվեց, և ճանապարհը բացվեց: Այլև եկեղեցու անոթներից՝ Կուսանաց անապատի համար ինչ որ կարողացա գտնել Տաթև գյուղում, գնեցի և ուղարկեցի: Եվ հացի խորակ չունենալու պատճառով, պատվիրեցի վանքից մի քիչ ցորեն տալ անճարներին, ապա վանքից ելնելով և անցնելով Տանձավետ ամալի գյուղով՝ հասանք Երիցվանքի գյուղը, իսկ այնտեղից Բարկուշատով եկանք **Կյուլմեղե** գյուղը, որը պատկանում է մելիք Շիրմանին: Եվ ապա [եկանք] **Ամարաթ** կոչված վայրը, որտեղ մեր դիմաց դուրս եկավ շահվեթիլի³ պարոն **Հոհանք**, [ով մեզ] [հյուր]ընկալեց իր գյուղում: Երկու օրից կրկին նույն ճանապարհով գնացինք **Մալև**, և ճաշու ժամ[երգությունը] կատարելուց հետո, փոքր-ինչ հանգստանալուց հետո եկանք Գավառ գյուղը, այնուհետև Մեղրի: Այստեղ կար մի փոքրիկ ու պատվական վանք, որտեղ մնացի[նք] երեք օր և [վանականներին] սփոփելուց հետո, անցանք Կարճևան գյուղով, հասանք **Հոտատվար** և ապրիլի վեցին եկանք Դաշտ մեծ գյուղը: Ապրիլի յոթին՝ Սուրբ Կույսի Ավետյաց տոնին, մեզ հրավիրեցին պատարագ մատուցել, և [մենք], զիջելով նրանց խնդրանքին, կատարեցինք Սուրբ Խորհուրդը: Իսկ մյուս օրը եկան

¹ Այս բառը Ստ. Մալխասյանցը բացատրում է. «Կատաղունիք (յուն.) - Եկեղեցու վերնատուն կանանց համար. (անստ. նշ)»: Ըստ համատեքստի, բառի նշանակությունն է՝ վերնատուն կանանց համար՝ տասամարդկանց վանքում, և տղամարդկանց համար՝ կանանց վանքում

² Աղբյուրում. «... այլ կատաղունիսն վեր, որոյ կանգնէին այր մարդիկ, յորժամ հանդիպին...»

³ Շահվեթիլ - Շահի վեթիլ՝ վերակացու

Գողթյանց իշխաններն [ու] իրենց առաջնորդները և մեզ հրավիրեցին Ագուլիս: Եվ [այնտեղ] մնացի մինչև Սուրբ Պասեք և Նոր կիրակի, քանի որ վանքը, [որտեղ կանգ էի առել] Սուրբ Թոմա առաքյալի վանքն էր, որ հիանալի ու զարմանալի է տեսնողների [համար]: Նաս [քանի որ] նրանց առաջնորդի, իմ որդյակ **Հոհաննես** վարդապետի, պարկեշտաբարո, հեզահոգի և հանճարեղ [մի անձի], ում նախապես ճանաչում էի՝ ի սեր նրա, նաս վանքի միաբանության և ժողովրդի աղաչանքների համար այնտեղ մնացի այսքան օրեր, մինչև Նոր կիրակի: Այլև իրենց երեք եկեղեցիներում՝ կիրակի և այլ պատշաճավոր օրերի, ինձ պատարագ մատուցել և իրենց օրհնել տվեցին, ինչպես և արեցի: Այնտեղ նաս նույն Կարմիր կիրակիի օրը Սուրբ Պատարագը մատուցելուց հետո, Սուրբ Էջմիածնի միաբան, Ագուլեցիների ավագերեց Տեր Թումային եպիսկոպոս ձեռնադրեցի և Նոր կիրակիի երկուշաբթի օրը ելա այնտեղից և եկա Ցղնայի **Սյուզյունի** վանքը, այնտեղից էլ՝ հին Ջուղա: Եվ Ջուղայից էլ՝ **Տարաշամբ**, [ապա] անցա Երասխ գետը, այնտեղով, ուր Տղմուտը խառնվում է Երասխին, և մայիսի յոթին հասա գեղեցկաշեն, հոչակավոր և հրաշալի Սուրբ Ստեփանոս վանքը: Այնտեղ մնացի ինը օր, ապա շարժվեցի և եկա Երնջակի Սուրբ Կարապետ [վանքը], ուր եղել էի Մուղան գնալուց առաջ: Երկու օր անց գնացի Ղուռուօ գյուղ և Ղուռուօի եկեղեցի ու անապատ, ուր, ինձ նախապես ծանոթ պարոն Աղեքսանդրը հրավիրեց իր հանգուցյալ հոր՝ **Ելարոն Աղամալի** տուն: Երեկոյան կրկին ելանք Սուրբ Լուսավորչի վանք, իսկ այգաբացին գնացինք **Փառակա** և իջևանեցինք [տեղի] վանքում: Այդտեղից [գնացինք] **Տոի** գյուղ: Այն ավերված էր, ամայի էր նաս եկեղեցին, և կուսանաց անապատում միայն յոթ ապաշխարող [կար]: Նրանց եկեղեցին և վանքն այցելելուց հետո, նույն օրն անցա գնացի **Եպուստ** մեծ գյուղը, որտեղ կար մի պատվական եկեղեցի: Եվ [այդ] եկեղեցում ուխտելուց հետո ելա աղավանաման [և] աղինասարաս¹ բարձրանիստ վանքը, լի ջրաբքի պարտեզներով ու բարեշունչ զեփյուռով, պարզ ու առողջարար օդով: [Այստեղ] իմ սիրտը զվարթացավ՝ մոռանալով ճանապարհի դժվարությունները, այլև նրանց առաջնորդ Պետրոս վարդապետը, [մի] խոհեմ, բարեբարո մարդ [էր], նաս միաբանները՝ սիրով ու հնազանդ: Այնտեղ մնացի երկու օր և այնտեղից շարժվեցի և անցնելով որոշ գյուղեր, եկա **Ղաղանջ** մեծ գյուղը: Այն-

¹ Աղինասարաս - Եղեմանման, դրախտակերպ

տեղ մնացի երեք օր և նրանց աղանչանքների ու խնդրանքների համար, այնտեղ ևս Սուրբ Պատարագ մատուցեցի: Ապա անցնելով **Մարզեն** գյուղով եկա Նորաշենիկ, իսկ այնտեղից կրկին [անցա] Երնջակի Սուրբ Կարապետ [վանքը], այնտեղից էլ՝ **Նախչվան**, [ուր] մնացի երկու օր: Այնուհետև իջա Աստապատ օրհնյալ գյուղաքաղաքն ու Աստապատի գեղեցկաշեն ու պատվական եկեղեցի[ները]: Իսկ եկեղեցիները մեկը մյուսից ավելի պայծառ ու գեղեցիկ էին ու տեսնողների հիացմունք շարժող: Ավաղ, նեղության այս ժամանակին և ազգիս նվազելուն, քանի որ գալարվում են իմ աղիքները այս աննման եկեղեցիներն ու սուրբ ուխտերը տեսնելիս, քանի որ թեմեր ու վիճակներ չկան: Ու թեև կան, բայց ամայի, անշեն ու անմարդաբնակ են, և եթե ոմանք էլ գտնվեն, [ապա] աղքատացած [են] կամ այնպիսիք [են], ովքեր [ոչ միայն] չեն կարող օգնել կամ բավարարել վանքերի կարիքն ու պակասությունը, այլև իրենք [իսկ] օգնության կարիք ունեն վանքերից: Նաև Աստապատում մեծահրաշ կիրակիին ես կատարեցի սուսկալի Խորհուրդը, [ապա] ձեռնադրեցի երեք եպիսկոպոս, առաջինը՝ Սպահանցի Գեորգ վարդապետին՝ իրենց առաջնորդ Աստվածատուր վարդապետի և իշխանների խնդրանքով, մյուսին՝ Սուրբ Բարդուղիմեոս առաքյալի վանքի համար, որ **Հորմում** է՝ ըստ այն երկրի և վիճակի խնդրանքի: Եվ երրորդին, որ Կաֆայեցի Մելքոն վարդապետն էր՝ միաբան Սուրբ Էջմիածնի: Ապա Աստապատից շարժվեցի և հունիսի տասներկուսին խաղաղությամբ հասա Էջմիածին, որ մեծ ուրախություն եղավ բոլոր միաբանների և Արարատյան երկրի համար: Գոհություն մատուցեցի ամենակարող Աստծուն՝ ամենայն պատահարներից պահողին և փրկողին և, ծնրադրելով մեծ և ընդհանրական կաթողիկեում՝ Իջման Սուրբ տեղում, ողբով ու սրտառույզ հառաչանքներով կրկին իմ անձը նվիրեցի Աստծուն՝ մեր Սուրբ Հայր Գրիգոր Լուսավորչի աղոթքներով»:

Տաթևում և նրա վանքերում շրջելուց հետո, այնտեղից իջա Բելուկանի տափարակ դաշտ, տեսնելու համար [այն] հոյակապ գմբեթը, որ կառուցված է Լալա անունով մի տաճիկ [կնոջ գերեզմանի] վրա: Այս մահարձանի մասին հասարակ ժողովուրդը առասպել[աբան]ում է, թե մի ոմն Երուսաղեմացի վարդապետ գալիս է այստեղ, մի բարեպաշտ տաճիկի տուն և այնտեղ մնում է երեք օր: Այս օրերին մահանում է հյուրընկալող տաճիկի կաթնակեր երեխան, և երեխայի մայրը՝ օտարական վարդապետին չվշտացնելու համար, երեխայի դին ծածուկ թաղում է, իսկ երեխայի փոխարեն օրորոցում

քար է բարություն: Վարդապետը հարցնում է կնոջը, թե.- Ո՞ւր է երեխադ, որ դու սիրում էիր: - Իսկ նա, պատահածը թաքցնելու համար, ասում է, թե ննջում է: Այնուհետև վարդապետը ստիպում է երեխային բերել իր մոտ, և կինը, ելք չունենալով, մտնում է տուն, որպեսզի հայտնի պատահածի մասին: Նույն պահին հանկարծ լացի ձայն է լսում նույն այդ օրորոցից: Այս անսպասելի հրաշքից կինը զարհուրում ու զարմանում է և անմիջապես մկրտվում՝ դառնում է քրիստոնյա: Ասում են, այս դեպքի մասին կա հորինված բանահյուսություն, ըստ այսմ. «**Լալայամ բաշտան ման, եմանամ հար աշտան ման. նա աթամ վար նա անամ. գուհուր օլտում տաշտան ման**»:

ԲԼԵԹԱՆՑ

Այնտեղից գնացի Բլեթանց գյուղը, որը գտնվում է ձորամեջում: Բնակիչները հայեր են՝ ութ տուն: Ունեն [մի] երկայուն, սագաշեն եկեղեցի, կառուցված Հայոց ՌՃԽԵ (1145) [թվականին]:

ՀԱԿՈՎԻԿ

Մնալով Բլեթանցում, մի բարեպաշտ քահանայի տանը, հաջորդ օրը գնացի Հակովիկ կոչվող բլուրի կողմ: Այս բլուրը, չորս կողմից չունենալով մերձակա լեռների բազուկները, միայնակ վեր է բարձրանում օդում և համարձակ դիտում է Մուղանի դաշտին և Փոքր Սյունիքի գետին: Հեռվում Երասխ գետն [է, որ] օձանման ակոսներ բացելով, հիասքանչ փայլատակումներով գնում միանում է Կուր գետին: Տեղանքի պատկերները զվարթություն են [պատճատում], օղը վճիտ է ու առողջարար: Այս բլրի կատարին Հակոբ վկայի անունով եկեղեցին է՝ կառուցված չորս վայելչակերտ սյուների վրա, [որը] Հայոց ՌՃՁԲ (1182) թվականին վերանորոգել է Եսայու որդի Սարգիսը: Հակովիկ վկայի գերեզմանը գտնվում է [եկեղեցու] ձախ խորանում՝ վրան սպիտակ մահարձան: Սրան ջերմեռանդ ուխտադրություն[ներ] են կատարում՝ նվիրատվություններով [հանդերձ]: Շրջակայքում [եղել են միաբանների] սենյակներ, այժմ՝ ավերակ: Տեղացիներն ավանդում են, թե Պարսից թագավորի [ձեռքով] սուրբի նահատակությունից հետո, նրա մայրն ու քույրը գտնում են սուրբ նահատակի նշխարները, բերում և ամփոփում են այստեղ, և վրան կառուցում են այս մատուռը: Եվ ինչպես պատմում են, սրբի քույրն իր ամբողջ կյանքում սպասավորել է իր եղբոր ցանկալի նշխարներին և նույն ճգնության մեջ կնքել իր կյանքը: Նրա մարմինն էլ ամփոփված է այս

մատուղի մոտ՝ շրջապատված սովորական քարերով, որտեղ տեղի բնակիչներն ուխտադրություն են կատարում և բժշկություն ստանում զանազան ցավերից:

ՋՐԱԿՈՒՅՍ

Հակովիկ բլրից իջնելով, մտա Ջրակույս գյուղը, որ գտնվում է Կարմրակոճ լեռան ստորոտին: Բնակիչները հայեր են՝ չորս տուն: Ունեն հոյակապ եկեղեցի, որը կառուցել է Դավիթ իշխանը, ում սերունդներն այժմ վայելում են նույն կալվածքը:

ՀԵՐՀԵՐ

Ջրակույսից եկա Հերհեր, որի [անունը] կրճատումն է Հավահար բառի: Գտնվում է Մարասի վանքի դիմաց՝ դեպի արևմուտք, [մի] սարահարթ տեղում: Բնակիչները հայեր են՝ քսան տուն: Օդը լավն է, ջուրն՝ անուշահամ: շրջապատը զարդարված է անուշահոտ ծաղիկներով ու բարձրաբերձ անտառներով: Այս գյուղն իր Հովահար անունը ստացել է մշտապես այստեղ փչող հով ու գով զեփյուռներից, ուստի և ընտրվել է [որպես] Ամարասի վանքի ամառանոց կամ հովարան, քանի որ ամռանը Գրիգորիսի աթոռի միաբանները, չարատանջ տապից նեղված, գալիս էին այստեղ և ապահովությամբ անց էին կացնում [ամռան] երեք ամիսները, իսկ սեպտեմբերին վերադառնում էին Ամարաս: Քոչիզի և Վարանդայի վիճակների միավորելուց և իր ձեռնասուն աշակերտին արքեպիսկոպոսական ձեռնադրություն [տալուց] հետո, Պետրոս Աղվանից կաթողիկոսը հրամայում է հիմնարկել մենաստան՝ Գրիգոր Աղվանից կաթողիկոսի անունով: Եվ նույն եպիսկոպոսին պատվիրում է եկեղեցին զարդարել բազմաթիվ [եկեղեցական] սպասք[եղեն]ով և բազմաթիվ սենյակներով՝ Ամարասի վանքի միաբանների բնակության համար: Բարսեղ եպիսկոպոսը, համաձայն իր հոգևոր ծնողի հրամանի, Հայոց ՌՃԺԶ (1116) թվականին հիմնարկում է այս հրաշագան մենաստանը, սակայն մինչև շինարարության ավարտը կնքում է իր կյանքը, և շինարարությունն ավարտում է նրա հոգևոր հայր Պետրոս կաթողիկոսն, ի հիշատակ իր և սրա հիմադիր՝ իր աշակերտ Բարսեղ եպիսկոպոսի հոգիների: Եվ Քրիստոսի պայծառակերպության տոնին կատարում է այս [եկեղեցու] օծման նավակատիքը՝ [Սուրբ] Սեդանի տակ դնելով Սուրբ Գրիգորիսի մատունքակիր խաչ: Այս մենաստանի շինությունը հոյակապ է և կառուցված է չորս վայելչակերտ սյուների վրա. երկարությունը քսանվեց

կանգուն է, լայնությունը՝ քսաներկու: Մաստիկ երկրաշարժից այժմ կործանված է գմբեթը և տեղ տեղ խախտված են որմերը: Պետրոս կաթողիկոսի կատարած բարեկարգությունները միաբանների համար նրա կառուցած բազմաթիվ սենյակները, դանդաղասահ ժամանակի ընթացքում հիմն ի վեր տապալվել են և մինչև անգամ այդ շինությունների հետքը չի երևում:

Երբ հռչակավոր Ամարասն ու նրա պատվական ամառանոցը տեսա ամբողջովին ավերված և անասունների բնակարան դարձած՝ ավելացան սզացող հոգուս հառանչանքները: Ո՞ւր են,- ասացի,- հիմա այս մեծ աթոռի սրբագումար միաբանները, ո՞ւր են նրա փառքի տաճարի պաշտոնյաները: Ո՞ւր են մեծն Գրիգորիսի հարգելի նշխարների հոգեկիր սպասավորները, և ո՞ւր են այս չքնաղ մենաստանի ժառանգավորների հոգեկիր ձայները: Անցան գնացին և իրենց հետ տարան հոգևոր վայելչությունները, հայրենիքի նախանձելի փառքը թաղելով մոռացության փոշու տակ: Տեսա այն տեղը, ուր **Վաչակյան** արքան հետիոտն գալիս էր դեսպակի առջևով. տեսա Արժան գյուղը (այժմ՝ Աշան), որտեղ իջևանեց **Վաչակյան** սուրբ արքան. տեսա նրա երկրորդ կայանատեղ Քարվեջը¹, որտեղ Հովել սարկավազը տեսիլք էր տեսնում. տեսա Ամարաս գյուղաքաղաքը, որտեղ հորդահոս անձրև էր տեղում, երբ **Վաչակյան** արքան գնացել էր Սուրբ Գրիգորիսի նշխարները գտնելու: Անցա գետով, որով անցավ Վաչակյան արքան: Տեսա նաև և այլ արժանավոր վայրեր՝ ընկնելով խոր մտածմունքի մեջ աչքերիս առջև պատկերվում էր երանելի սուրբ այրերին և իմ արժանահիշատակ **Վաչակյան** թագավորին պատահած դեպքերը: Եվ հայրենասեր եղբայրների սրտերը շարժելու համար, արժանի համարեցի այստեղ դնել կատարված դեպքերի հանգամանքների [պատմությունը], որի մասին Աղվանից պատմիչը գրում է².

«Աղվանքի կաթողիկոս երանելի Գրիգորիսի մասունքների հայտնաբերումը, որ նահատակվեց մասքութների երկրում՝ մասքութների Սանեսան թագավորի ձեռքով»

«Աղվանքի թագավոր բարեպաշտ Վաչագանը մի չափազանց մեծ տենչ ուներ, այն է՝ գտնել սուրբ մանուկ Գրիգորիսի մասունքները. նա հին մատենագիրների պատմությունից տեղեկացել էր, որ սուրբ Գրիգորիսը նա-

¹ Աղբյուրում. «Քարուեջ»

² Աղբյուրի այս հատվածի աշխարհաբարը դնում ենք ըստ Վ. Առաքելյանի թարգմանության, տե՛ս Մովսես Գաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Վարսագ Առաքելյանի, Երևան, 1969, էջ 48 - 62

հատակվեց Վասնյան դաշտում, մեծ ծովի եզերքին: Նրա աշակերտներից ոմանք նրա մարմինը վերցրին, բերին Ամարաս գյուղը ու թաղեցին եկեղեցու մոտ, որ հիմնարկել էր մեծ Գրիգորը: Այդտեղ ոչ մի նշան չէին դրել՝ վախենալով, որ գուցե երանելու մասունքները ուրիշ տեղ կփոխադրեն, կամ ավագակների հետապնդման պատճառով, կամ թե շատ տարիներ անցնելու հետևանքով մոռացման կտրվեր սրբի մասունքների տեղը: Թագավորը խորհրդակցում է իր պալատական քահանաների հետ, որպեսզի հնարներ մտածի, որոնցով կարողանա գտնել իր համար խիստ բարի՝ ցանկալին: Կանչում է այդ գյուղի վանական քահանային և հարցնում է, թե որն է նշան կա՞ եկեղեցու մոտ մեկնումեկի գերեզմանի վրա, թե ոչ: Իսկ նա պատասխանում է. «Այժմ եկեղեցու շուրջ շատ գերեզմաններ կան. Որովհետև ավագակների արշավանքների պատճառով ու եկեղեցու կառուցվածքի խիստ մեծ լինելու հետևանքով ոչ ոք չկարողացավ շինել այնպիսին, որ Մեծ Գրիգորը հիմնադրել էր»: Թագավորը ասում է. «Հրամայում եմ այդ տեղի հողը քանդել հեռացնել». և իր մտքում ասում է. «Գուցե գերեզմանների շատության հետևանքով չկարողանանք կանգ առնել երանելու ամենասուրբ գերեզմանի վրա. դրա համար պետք է ապավինենք պասի ու աղոթքների և բազմաթիվ աղաչանքներով խնդրենք ամենաողորմ Աստծուն՝ հիշելով Տիրոջ խոսքը, որ ասում է, թե բարի խնդրվածք անմիջապես կարելի է ստանալ առատատուր Աստծուց»:

«Այդ ժամանակ թագավորը հրամայում է հետևյալ օրինակով հրովարտակներ ուղարկել իր տերության ամբողջ երկրում ապրող եպիսկոպոսներին, քահանաներին, սարկավագներին, անապատականներին ու եկեղեցու բոլոր միաբաններին:

«Ողջո՛ւյն. ամենքդ անհապաղ հիշեցե՛ք, որ պետք է պաշտամունք կատարեք, պաս պահեք և աղաչեք մարդասեր Աստծուն՝ շնորհելու մեզ երանելի Գրիգորիսի մասունքները. ողջ եղեք»: Դրանից հետո բոլոր եպիսկոպոսները յուրաքանչյուրն իր իշխանության տակ գտնվող քահանաներին, սարկավագներին ու եկեղեցու ամբողջ միաբանությանը առած՝ Տիրոջ խաչի նշանով, միասին ու խիստ շտապ կարգով հավաքվեցին թագավորի սեփական Դյուտական անվանված գյուղը: Եվ ով որ անհոգ գտնվելով ուշանում էր, հրամայում էր խստորեն պատժել: Այնտեղ երեք օր փառա-վոր կերպով տոնեցին սրբերի հիշատակը, ուր ինքն իսկ թագավորն ըստ իր սովորության ոտքի վրա մնաց ու հարգեց այնտեղ հավաքված եկեղեցական ամբողջ միա-

բանությանը: Նա գտավ Գրիգորի, չափազանց հոչակված Հռիփսիմեի ու Գայանեի ամենասուրբ մասունքները, որ գտնվում էին Արցախ գավառի Դարահոջ¹ գյուղում, և որ հայոց Հոհան կաթողիկոսից ստացել բերել էր Մատթե անվանված քահանան: Մասունքները կնքված էին կաթողիկոսի կնիքով. թագավորը քահանաներ է ուղարկում Դարահոջ ու այնտեղից բերել է տալիս և վերցնում իր մոտ: Եվ Սուրբ Մեծ Գրիգորը իր մարտակից նահատակներ Հռիփսիմեի ու Գայանեի հետ գալիս էր Դյուտականի մեծ ժողովը, թագավորը թագուհու և բոլոր մեծամեծ իշխանների հետ միասին գյուղից մեծ հեռավորության վրա ընդառաջ գնացին: Ընդառաջ գնացին նաև բոլոր եպիսկոպոսները՝ յուրաքանչյուրն իր իշխանությամբ և կրոնավորներով, որոնք կազմել էին բազմաթիվ դասեր ու խմբեր. իսկ յուրաքանչյուր խումբ ուներ իր խաչվառը, որ ավետարանին հավասար մեծ հարգանքով պաշտվում էր. բազմաթիվ խաչերը ու գույնզգույն խաչվառները փողփողում էին, յուրաքանչյուր դասից խնկարկման ծուխը ուժգին բույր էր արձակում, հոգևոր երգերի սաղմոսանվագ ձայնը անուշ հնչում էր անսպառ, որ օրհնաբանում էր մեծագույն պարգևատու Աստծուն»:

«Եվ այսպես թագավորը մեծ բերկրանքով ողջունեց սրբերին ու բազմությանը. ինքը մեծ զգուշությամբ սպասավորում էր այն քահանային, որ վերցրած տանում էր սրբերի մասունքները: Բերելով սրբերի հանգստարանը՝ դնում է երանելի Զաքարիայի և Պանդալիոնի մոտ: Այնուհետև բարեսեր արքան վստահ լինելով իր հաստատուն հավատով որոնելու, առաքինի ժողովրդի բարի հայցման վրա, ասաց.

«Հաստատ գիտեմ, որ մեծ Գրիգորի միջոցով Աստված ինձ կտա սուրբ Գրիգորիսի ամենասուրբ մասունքները: Այնուհետև թագավորը վերցնում է ամենասուրբ ժողովի բազմությունը և հրաման է տալիս բոլոր եպիսկոպոսներին, որպեսզի սրանք քահանաներով, սարկավագներով, անսպատականներով, եկեղեցու ամբողջ միաբանությամբ, յուրաքանչյուրն իր կրոնավորներով, ավետարանով, խաչով, ամեն մեկն իր դասի բազմությամբ ու ծխացող խունկերի բուրվառների շատությամբ իրեն հետևեն: Իսկ ինքը պալատական քահանայով ու բազմաթիվ պաշտոնյաներով (գնաց), թեպետ (թագավորը) կամեցավ այնտեղ թողնել թագուհուն², որովհետև եղանակը գարնանային էր, և առատ անձրևներն էին տեղում, բայց նա չհամաձայնեց,

¹ Մեր աղբյուրում. «Դարահոջ»

² Մեր աղբյուրում. «Աշխարհատիկին»

այլ մեծ ցանկությամբ տենչում էր, և ինքը նույնպես գնաց սրբերին որոնելու: Քրիստոսի հինգ ամենասուրբ նահատակներին՝ Մեծ Գրիգորիսին, երանելի Ջաքարիային, ամենասուրբ Պանդակոնին և շատ հոչակված, պատերազմում հաղթած Հռիփսիմեին ու Գայանեին վերցրին բարեխոսելու ամենքի մեծ Աստծուն. որպեսզի նրանց միջոցով շնորհվի իր փափագելին: Թագավորական զանազան խունկերով ու զանազան անուշաբույր ծաղիկներով դրեց սրբերի կառքի վրա, որը շիկակարմիր մորթով էր պատած և սպիտակ կերպասով պաստառված. թանկագին քարերով քանդակված ոսկի խաչ էր խփված կառքի վրա, որին լծված էին ձիերի զլուխներն ու պոչերը պսակներով շքեղացրել էին, իսկ պալատական պաշտոնյաների բազմությունը խաչերը ձեռքներին ընթանում էր կառքի առջևից ու ետևից անվերջ քաղցրաբարբառ պատարագներով, գիշեր ու ցերեկ անդադար օրհնաբանում էին Աստծուն, իսկ ինքը՝ թագավորը, ընթանում էր կառքի մոտով և երգակցում էր սաղմոսների օրհնաբանությանը: Եպիսկոպոսների դասը յուրաքանչյուրը ընթանում էր իր մեծախումբ ժողովրդով՝ սրբերի կառքի չորս կողմից սաղմոսելով ու օրհնաբանելով միածին Աստծուն ու խնդրելով բոլորի ցանկալին, այսինքն՝ Գրիգորիսի սուրբ նշխարները: Վաչագան թագավորը հրամայում է, որ բոլորն էլ եպիսկոպոսների հետ մինչև երեկո ոչ մի բան չճաշակեն, իսկ երեկոյան միայն քիչ հացով սնվեն: Թագավորն ինքն էլ նույնպես էր անցկացնում մինչև սրբերի մասունքների հայտնաբերումը: Բսկ պալատական քահանաները խիստ ջերմեռանդ կերպով պասս էին պահում ու խնդիրք անում բարերար Աստծուց. ոմանք նույնիսկ ոչինչ չճաշակեցին մինչև սրբերի մասունքների հայտնաբերումը»:

«Ամբողջ ժողովուրդը գիշեր-ցերեկ անդադար աղոթում և ուժգին ձայնով խնդրում էր բոլորի ցանկալի Գրիգորիսին: Ապա բարեպաշտ Վաչագան թագավորը խորհրդակցեց ու երանելի Գրիգորիսի մասունքները որոնելու ժամանակը հասած համարեց»:

«Այդ օրերին թագավորը Դարահռչի Մատթե քահանային բազմաթիվ կրոնավորների հետ ուղարկեց Մուհառ՝ հանուն այնտեղ հայտնաբերված սրբերի պաշտամունք կատարելու և պատարագ մատուցելու: Եվ մինչդեռ առավոտյան հոտնկալյաց արարողությունն էին կատարում¹, Մատթե քա-

¹ Մեր աղբյուրում այս հատվածն է. «Եւ մինչդեռ գառաւօտեանն կատարէին պաշտօն յոտն կալով, նիրի անկանէր Մատթէոս երիցու ...», որի թարգմանությունն է. «Եվ մինչ հոտնկայս, Առավոտյան ժամերգությունն էին կատարում, Մատթէոս երեցի վրա նիրի է իջնում...»

հանայի վրա նիրհ է գալիս. նա մի ուժգին ձայն է լսում, որ ասում էր. «Սուրբ Գրիգորիսին եք որոնում. եկեղեցու արևելյան կողմն է»: Իսկապես այսպես էլ եղավ: Գերեզմանի տեղը բրելիս՝ սխալմամբ բրեցին հյուսիսային կողմը. երբ չգտան, մեծ տխրություն պատեց բոլորին: Ապա երբ Աստծու ողորմածությամբ բրեցին արևելյան կողմը, ըստ եկած ձայնի հնչման՝ գտան երանելու ամենասուրբ մասունքները»:

«Իսկ երբ թագավորը Դյուտականից ժողովրդի բազմությամբ, եպիսկոպոսներով, քահանաներով ու ամբողջ կրոնավորների խմբերով մեկնում էր, ինչպես որ ասել էր, առ մարդասեր Աստված պաս, աղոթք ու մաղթանք էին կատարում բոլոր հավաքվածները: Երբ հասան Արժանք կոչված գյուղը, Հովել անունով պալատական մի սարկավագ արևածագից առաջ երազում տեսավ, որպես թե ինքը բաեր դրել է ուսին ու որոնում է երանելի Գրիգորիսի մասունքները: Հենց ինքը՝ Գրիգորն էլ երևաց սպիտակ հագուստներով՝ աբեղայի կերպարանք առած. նա հարցնում է սարկավագին, թե ի՞նչ էս որոնում, իսկ նա պատասխանում է, թե՝ «թագավորը, բոլոր կրոնավորներն ու Աղվանքի ամբողջ զորքը որոնում ենք Գրիգորիսին և չենք կարողանում գտնել»: Իսկ երանելին բռնում է սարկավագի ձեռքից ու խոնարհեցնում է այն տեղի վրա, որտեղ գտնվում էին սրբի մասունքները, ասելով՝ «Եթե Գրիգորիսին եք որոնում, նա այստեղ է»: Եվ հրամայում է այդ տեղը փորել: Գերեզմանին մոտիկ մի թումբ կար, որի վրա խաչ էր տնկված: Երանելին բարձրանում է թմբի վրա ու կանգնում է խաչի մոտ: Իսկ Նաթան անունով մի քահանա՝ նույն սակավագի եղբայրը Գեղեոն անունով մի այլ քահանա փորում են այն տեղը: Հովելը ծունկ իջած առջևում մախաղ էր բռնել: Գտնելով սրբի մասունքները՝ ուրախ-ուրախ գնում էին, երբ նա ձայն տալով նորից ասաց. «Կողերս և զիստերս այստեղ են, վերցրե՛ք ձեզ հետ». և մենք գտանք այն, ինչ որ նա ասաց: Եվ զարթնելով երազը պատմեց թագավորին: Չնայած որ սարկավագը բնավ չէր գնացել Ամարաս, այնուամենայնիվ ասաց՝ «Այն տեղը, որ ցույց տվեց ճանաչում եմ»:

«Արքան չափազանց ուրախացավ. իր պալատական քահանա Մանասեին և միևնույն սարկավագին նախքան իր գնալը ուղարկեց Ամարաս: Սարկավագը գնաց ու ցույց տվեց նույն տեղը. հենց այդտեղ էլ գտան սրբի մասունքները: Արժանքից մեկնեցին թագավորը, բազմաքանակ ժողովուրդը, եպիսկոպոսները, քահանաները, կրոնավորներն ու պաշտոնյաները՝ իրենց հետ վերցնելով սուրբ Զաքարիային, երանելի Պանդալիոնին, չափա-

զանց արժանավոր Գրիգորին, առավել հռչակված մարտիկ Հռիփսիմեին, Գայանեի հետ միասին: Հասնելով Քարվեճ¹ փոքրիկ գյուղը՝ կատարեցին գիշերային ժամերգություն: Կրկին նույն Հովել սարկավազին երազում ցույց է տալիս նույն տեղում չորս տարեց արեղաների, միևնույն Գրիգորիսին, որ նրանցից ավելի երիտասարդ էր. դրանք ահագորու դեմքերով խմբով շրջապատել էին այն տեղի սահմանները, որ հրամայեց փորել: Սարկավազը սարսափից բերանքսիվայր է ընկնում և երբ նորից վեր կենալով կամենում է ինչ-որ բան հարցնել, նրանք աներևութանում են նրա մոտից»:

«Եվ երբ նույն օրը գիշերային ժամերգությունն սկսվում է, բարեպաշտ թագավորը առանց դադարելու Աստծուց խնդրում է Սուրբ Գրիգորի հայտնաբերումը և իրեն խաչակնքելով բազմաթիվ աղաչանքներով, սրտի խորքից հայցում է առատատուր Աստծուց»:

«Մինչդեռ նստած գիշերային պաշտամունքն էր կատարում, մի վայրկենական նինջ է պատում թագավորին. մի ձայն հնչելով ասում է. «Այն, ինչ դու աղաչանքներով խնդրում ես, այնտեղ հայտնվեցե: Եվ երազում իմացավ, ինչպես ինքը պատմեց, ու ասաց, թե ինքն Ամարաս է գնում, և որ այնտեղ, ասում է, ինչ-որ մի մարդու, հայտնված պետք է լինի: Անմիջապես շուտափույթ կերպով իրենից առաջ իր պալատական քահանա Մանասեին Ամարաս է ուղարկում և ասում է. «Իմ երազը ոչ ոքի մի՛ պատմիր»: Եվ հետո թագավորը հարցնում է, թե արդյոք որևէ մեկին չի՞ հայտնել: Իսկ Հովել քահանան, որ մի անապատական էր և արքայի մոտ էր լինում, պատմում է նրան՝ «Ես միևնույն տեղում, որտեղ Հովել սարկավազին հրամայվեց փորել, տեսել եմ, թե ինչպես ակունքից դուրս է գալիս մի խիստ սակավաջուր աղբյուր, բայց առաջ ընթանալով չափազանց հորդանում է: Եվ ես զարմացա, թե առաջ այստեղ աղբյուր չկար, այժմ այս հորդ ջուրը որտեղի՞ց է բխում»: Երբ Քարվեճից մեկնում են, կանայք Ամարաս գյուղաքաղաքից ընդառաջ են դուրս գալիս նրանց: Ինչպես ասվեց, եղանակը զարնանային էր, ուստի հորդառատ անձրևները անդադրուն հոսանքով հեղեղում էին գետինը, և բազմաթիվ ձիերը սրբակներով վարել էին ճանապարհը: Իսկ թագավորն ասում է. «Չպետք է դանդաղել»: Խիստ տեղանքի պատճառով էլ իջնում էր երիվարից, շրջում էր եպիսկոպոսների ու քահանաների առանձին դասերի մեջ, կարգավորում նրանց, որպեսզի հարմար ընթանան, մեղմ հորդաբուխ

¹ Մեր աղբյուրում. «Քարուէջ»

ձայնով, սաղմոսանվագ երգերով փառաբանեն կենարար Երրորդությունը: Իսկ ինքը անցնելով մեծ զգուշությամբ սպասավորում էր Քրիստոսի երանելի նահատակների կառքին: Այլևայլ լեզվով կատարվող պաշտամունքի ձայներից երկիրը արձագանք էր տալիս. տիրոջ բազմաթիվ խաչաձև դրոշակներ պարզած երանգներով առատ պատկերների փողփողումը, ոսկու, արծաթի ու թանկագին քարերի փայլատակումը, որոնցով ձուլված ու ընդլուզված էին բազմաթիվ խաչերը, իբրև լուսավոր ամպ ծածկում էին հողը:

Իսկ սպիտակագգեստ զարդարանքով, սպիտակ ձիով, ոսկի ականակապ խաչը վրան ամրացված, չափազանց թանկագին դրոշարձակ խաչապսակը իբրև ամենապայծառ գույնով աստղ փայլում էր սրբերի կառքի վրա, որ անասելի շքեղացած փառքով ընթանում էր Քրիստոսի բանակի մեջ: Երբ սուրբ աստվածասեր թափորը գյուղ էր մտնում, մի փոքրիկ գետակ էր անցնում գյուղի միջով, որի կամուրջը արքունական պողոտայի վրա էր կառուցված, իսկ արքան սրբերին տածվող մեծ սիրուց չի համաձայնում սրբերի կառքը որևէ մեկի հսկողության թողնել, այլ ինքը՝ թագավորական զգեստները հագին, մտնում և անցնում է գետով: Գնալով նշանակված տեղը՝ երկար ծնրադրությամբ եպիսկոպոսներով և ժողովրդի բազմության հետ միասին թագավորը մաղթանք է կատարում: Եվ թագավորական վրանը խփելով այդ տեղի վրա՝ հրամայում է հսկել մինչև առավոտ: Բայց այն ժամանակ Ամարասում եպիսկոպոս չկար, թագավորը հարցնում է գյուղի վաներեցին և այլ ծերերի՝ «Դուք արդյոք որևէ նշան չե՞ք նկատել այդ տեղում»: Նրանք պատմեցին ինչ որ Հոբ ճգնավորից լսել էին»:

«Արցախի Պազկանք շատ մեծ գավառը Հոբ ճգնավորի կողմից քրիստոնյա դարձնելը»

«Հոբ անունով մի քահանա, որը ճգնավոր էր և չափազանց առաքինի կյանքով ապրեց աշխարհի վրա, ուներ առաքելական շնորհներ, որովհետև Արցախի Պարսականք¹ կոչված մի մեծ գավառը մոլորությունից ետ կանգնեցրեց և դարձրեց աստվածաճանաչ, Երրորդության անճառելի խորհրդին խորհրդակից ու պաշտող: Մա գալով բազմաթիվ անգամ կատարեց սուրբ Գրիգորիսի հիշատակը և երկու-երեք անգամ բազմության առջև ասաց, թե մի հավատացյալ թագավոր է հանդես գալու Աղվանքում, նաև որոնելու է տեղը ու Գրիգորիսի սուրբ մատուներին: Դարձյալ մի այլ անապատական

¹ Մեր աղբյուրում. «Պազկանք»

մեզ հյուր եկավ, իսկ մենք ընդատաջ ելնելով ընդունեցինք նրան միաբանակիցների սովորության համապատասխան: Լվանալով ոտքերը և մի քիչ ճաշակելով՝ ելավ այդ տեղում քուն մտավ: Ապա շտապ վեր կացավ, տեղնուտեղը խաչ պատրաստեց և կանգնեցրեց տեղում. մեզ պատվեր տվեց, ասելով. «Ոչ ոք այս խաչը այդ տեղից թող չհանի, ընդհակառակն, մի ավելի մեծ խաչ խփել տվեք այդ տեղում. և պետք է առավոտյան ու երեկոյան աղոթքներ ասել, խունկ ծխել, որովհետև այս տեղում մեծ հրաշքներ եմ տեսնում»:

«Մի այլ արեղա հյուր եկավ, ու մենք կարգադրեցինք ճաշ տալ նրան. մինչդեռ նա հաց էր ուտում, իսկ մի մանուկ գինի էր մատուցում բաժակով, գյուղում աղմուկ-աղաղակ բարձրացավ: Մենք բոլորս նրան մենակ թողեցինք ու գնացինք դեպի աղմուկը: Մեր գնալուց հետո հյուրը վեր է կենում, բաժակն առնում ու գնում է: Բաժակը տանում վաճառում է, արժեքն առած դպրոց է մտնում ու վարձով սովորում: Այս բաժակագողը երազում տեսնում է, որ սպիտակ հագուստով, խիստ ահավոր կերպարանքով մի եպիսկոպոս աթոռի վրա նստած է այն խաչի մոտ, որը կանգնեցրեց վերոհիշյալ անապատականը և իրեն (բաժակագողին) մերկ կապած՝ հրամայում է տանջել սրբի գերեզմանի վրա: Եվ քնից վեր կենալով, մարմինը ցույց է տալիս բազմությունը, որ սարսափելի տանջանքի հարվածներից կապուտակել էր: Այսպես օրըստօրե հրամայում է տանջել, իսկ նա տանջանքներից ազատվելու համար ապաստանում է սուրբ քաղաք Երուսաղեմում՝ փրկություն խնդրելով այն տանջանքներից: Նա կրկին տեսնում է, որ նույն տեղում միննույն եպիսկոպոսը հրամայում է ավելի դաժան կերպով ծեծել, ասելով՝ «Դու այլ միջոց չունես այդ տանջանքներից ազատվելու, միայն մնում է գնաս խոստովանես այն տեղում, որտեղից բաժակը գողացար: Արեղան վեր է կենում վերցնում բաժակի գինը, հեռանում է Երուսաղեմից և գալիս է Ամարաս: Մտնելով եկեղեցին՝ իր մոտ է կանչում վաներեցին ու սկսում է լալով խոստովանել իրողությունը: Շատ աղաչանքներով տալիս է բաժակի արժեքը և տանում, ցույց է տալիս այն տեղը, ուր խաչն էր կանգնած, ասում է. «Այդտեղ էր նստում»: Ապա ցույց է տալիս գերեզմանի տեղը՝ ասելով, թե՛ «Հրամայում էր այդտեղ ինձ ծեծել»: Ասում են, թե գյուղերում շատերը անզավակ լինելով՝ գալիս, ուխտ են անում և այստեղից հող վերցնելով երեխաներ են ունենում: Նույնպես և բոլոր ջերմախոսավորները հող վերցնելով, անմիջապես բուժվում են: Եվ դեռ այս բոլոր հրաշագործությունները պատմում էին արքայի առջև, և նա լսում էր»:

«Այս տեսակ մի տեսիլք էլ երևում է Աղվանքի թագավոր Եսվադենի ապօրինի որդի Խոճկորիկին, որ կուսակալ էր նշանակված, և սա պատմում է թագավորին.

«Խոճկորիկ անունով այն մարդը, որին Յրիում հայտնվեցին երանելի Չաքարիասը ու սուրբ Պանդալիոնը¹, միջօրեին քնած լինելով՝ երազում տեսնում է սպիտակ, զարդարուն, մինչև կրունկները հասնող պարեգոտներով յոթ մարդ եկեղեցում. Խոճկորիկը, խոսելով արեղաների հետ, ասում է. «Օրհնված մարդիկ, քանի որ դուք այստեղ եք, ինչո՞ւ սուրբ Գրիգորիսի մասունքների տեղը ցույց չեք տալիս, երբ ոմանք ասում են, թե այստեղ է, ոմանք՝ թե այնտեղ է, իսկ մենք չարչարանքի ու մտահոգու թյան մեջ ենք»։ Բոլորը պատասխանում ու ասում են. «Որևէ հրաշք չտեսա՞ր»։ Նա պատասխանում է՝ ո՛չ։ Յոթից մեկը, առաջնորդելով Խոճկորիկին, ասում է. «Ե՛կ իմ ետևից, և ես քեզ ցույց կտամ նշանակված տեղը։ Եվ տանում է այն տեղը, որ առաջ ցույց է տվել։ «Ես տեսա, որ հողը ճեղքված է, իսկ ճեղքի մեջ մի վառված ճրագ է երևում. ճրագի բոցը երկու մասի բաժանվելով ձգվում էր դեպի վեր»։ Աբեղային, որ այդ հրաշքը ցույց տվեց, ասաց, թե՝ «գնա՞մ արքային պատմեմ այդ հրաշքը, որ ինձ ցույց տվիր»։ Նա պատասխանում է. «Գնա՛ և պատմի՛ր»։ Այդ մարդը պալատ է գալիս. նրան թվում է, թե թագավորը քնած է, և ինքը չի համարձակվում արթնացնել»։

«Վերադառնալով նույն մարդու մոտ՝ ասում է. «Թագավորը քնած էր, և չհամարձակվեցի արթնացնել»։ Երբ այն մարդը վերադառնում էր, հողը ճեղքված մնում էր, ճրագն էլ վառված էր, իսկ արեղան մոտիկ կանգնած էր նույն տեղում։ Աբեղան մարդուն ասում է. «Երբ թագավորը արթնանա, ինչ տեսար, կպատմես նրան»։ Դրանից հետո կամեցավ ոտքով ճեղքը ծածկել ու լույսը արգելել։ Իսկ Խոճկորիկը բռնելով արգելեց, թե՝ «Այդ մի՛ անիր, մինչև որ թագավորն էլ տեսնի։ Բայց նա չհամաձայնվելով՝ ոտքով խփեց այդ տեղին, անհայտացրեց ճեղքվածքը, ասելով.

«Երբ թագավորը զարթնի՝ այս տեսածդ հրաշքը պատմի՛ր նրան»։ Երբ թագավորը արթնացավ քնից, նա եկավ և այս ամենը թագավորին պատմեց։ Բոլոր միաբանների բազմությունը ժողովրդի ամբողջ բազմության հետ ողջ գիշեր անդադար խնդրում-պաղատում էր ամեն բարություններ տվող Աստծուն։ Իսկ հետևյալ օրը, երբ առավոտյան ժամերգությունն էին կատարում,

¹ Մեր աղբյուրում այս հատվածն է. «Այրն այն Խոճկորիկ անուն, որում ի Յրի յայտնեցան Չաքարիայ սուրբ և Պանտալիոն»։ Ընդգծված՝ «ի Յրիե հոլովաձևը ենթադրում է Յուր կամ Յիր ուղղական

ամբողջ միաբանությունը եկավ հրաշք խաչի տեղը. արքայական վրանը խփեցին այդ տեղի վրա, վրանի շուրջը հեռվից վարագույր քաշեցին. վարագույրից դուրս, վարագույրի շուրջը դաս-դաս խմբվեցին եպիսկոպոսները՝ ամեն մեկն իր աշակերտներով. սարկավազապետերը խաչ էին բռնել ձեռքները, քահանաները գրկած ունեին ավետարաններ, իսկ սպասավորները բուրվառներ բռնած տեսակ-տեսակ խունկեր էին ծխում: Եվ անճառելի Երրորդությունը միաձայն բարբառելիս, սաղմոսելիս, փառաբանելիս գետիներ արձագանքում էր»:

«Առաքինասեր թագավորը, կիսով մերկացած, բահը վերցրել և եռանդով փորում էր հողը: Իսկ բարեսեր և չափազանց հավատացյալ թագուհին արքայական զգեստի փեշը պարզած արագ-արագ կրում էր հողը: Այդ ժամանակ եպիսկոպոսները, քահանաները, նախարարները, նախարարների կանայք յուրաքանչյուրն իր զգեստով մեծ եռանդով սկսեցին կրել փորվածքի հողը: Միսլմամբ փորում էին կողքանց, իսկ երանելու նշխարները մնում էին արևելյան կողմում»:

«Այդ ժամանակ թագավորը և ամբողջ ժողովուրդը տրտմության մեջ ընկան, և թագավորը հուսահատված մեծ մտահոգության մեջ նստեց. իսկ հետո արքան, քաջալերված ճշմարիտ հավատով, ասում է. «Բոլորին ապրեցնող Աստծու խոսքը անսխալ է լինում, եթե նույնիսկ երկու-երեք հոգի հավաքվեն հանուն կենարարի, անմիջապես կգտնեն իրենց բարի որոնելիքը: Իսկ այսքան բազմությունը հավաքված է ամենքի Աստծու ամենասուրբ անունով, ես հաստատ գիտեմ, որ մեզ չի մերժի ամոթով ու անուշադիր թողնելով: Այնուհետև հրամայում է բերել սուրբ Զաքարիային, ամենասուրբ Պանդալիոնին, մեծ ու չափազանց հռչակավոր Գրիգորիսին և Հռիփսիմեին Գայանեի հետ միասին դնել փորվածքի առջև: Մի մարդ անմիջապես վերցնում է բահը, թողնում է նախորդ փորածը, սկսում է դրա արևելյան կողմը բրել և հանդիպում է երանելու ամենասուրբ գերեզմանին: Թագավորը և նրա հետ վրանում գտնված բոլոր մարդիկ չափազանց ուրախանում են»:

«Սրբի մասունքների հայտնաբերումը հայտարարվում է հավաքված բազմությանը, և ամբողջ բազմությունը դիմում է դեպի սրբի մասունքները՝ կամենալով ոտնատակ անել վարագույրն ու վրանը, մինչև որ թագավորը դուրս է գալիս ու հազիվ մի կերպ կանգնեցնում է վրա թափվողներին: Իսկ երբ գերեզմանը բացում են, և երևում են մասունքները, անսովոր մի անուշ հոտ է բուրում այնպես, որ բոլորը երկար ժամանակ թմրության մեջ են ընկ-

նում, և այդ բույրը չեզոքացնում է բազմաթիվ խնկարկությունների հոտը: Դրա վրա չափազանց հիանում են արքան ու նրա հետ այնտեղ գտնված բռնորդ, որոնք միաբերան փառք էին տալիս այդպիսի վսեմ բարիքներ տվողին: Թագավորը նստում է գետնին, սրբի գերեզմանի մոտ և հրամայում է արքունի թանկագին տեսակ-տեսակ սպասեղեն բերել. և կողովը դնելով իր ծնկների վրա՝ մեծ երկյուղածությամբ սպասում է: Քահանաները, մասունքները հանելով, հավաքում են այն կողովի մեջ, որ թագավորը գրկել էր: Նաև գտնում են երկու ապակյա սրվակներ նույն մասունքների մոտ. մեկի մեջ գտնվում էր Ջաքարիայի արյունից, իսկ մյուսի մեջ՝ սուրբ Պանդալիոնի մասունքներից: Բռնորդ դուրս բերելով՝ ամբողջ բազմությունը մինչև իրիկուն ողջագուրվում էր: Թագավորը կնքում է արքայական մատանիով և հրամայում է զգուշությամբ պահել մինչև առավոտ: Գերեզմանում գտնում են նաև մի ապակյա անոթ, որով նույն Գրիգորիսը խմում էր. այս վերցնելով թագավորը գոհանում է ամենակալ Աստծուց՝ իրեն բարիքներ տվողից»:

«Եվ առավոտյան հրամայում է իր իսկ վառը գետին փռել ու անուշ գինով ոսկե սափորներ բերել. հրամայում է մասունքները լվանալ, արևին տալ գետնին փռված վառի վրա»:

«Հենց այդտեղ Ամարասի վանքից մի աբեղա մասունքներից գողացավ: Գրիգորիսը մեծավայելուչ փառքով երազում հայտնվեց և մեկին երևալով հայտնեց աբեղայի անունն ու գողանալը. թագավորը հարցրեց նրան, իսկ սա խոստովանելով՝ նրան ներկայացրեց թաքցրած մասը: Քարակիր մի մարդ դժգոհելով սկսեց հայհոյել Քրիստոսի նահատակ Գրիգորիսին, ասելով. «Մեզ համար Նեո դարձավ այդ Գրիգորիսը»: Իսկույն Աստծուց պատուհասվեց. նա գետին ընկավ, դեմքը ետ շրջվեց. այսպես շատ օրեր նա տանջվեց, մինչև որ եկավ, հող վերցրեց այն տեղից, ուր սրբի գերեզմանն էր: Երկար արտասավեց, ապա առողջացավ ու հանցանքներին թողություն գտավ: Այդ ժամանակ սարսափելի ահր բռնեց աշխատողներին և հսկողներին, ուստի շուտափույթ կերպով ու երկյուղով գլուխ բերին սուրբ եկեղեցու կառուցումը»:

«Այստեղ թագավորը հրամայում է եպիսկոպոսներից յուրաքանչյուրին տալ մի մաս՝ բաշխելու իրենց թեմերի մեջ, և կարգադրում է մասունքների մեծ մասը թողնել Ամարասում, իսկ մնացածը մեծ զգուշությամբ ու տեսակ-տեսակ անոթներով ինքն է սպասավորում ու պահում թագավորական կնիքով կնքված: Հրամայում է գերեզմանի վրա մատուռ հիմնել, շտապ

ավարտել ու անվանել սուրբ Գրիգորիսի մատուռ: Այնուհետև ոտքի վրա տքնությամբ ինքն՝ արքան, անձամբ սպասավորելով բոլոր եպիսկոպոսների հետ միասին ցնծալից ուրախությամբ պատմում է ամբողջ համայնաժողովը քաղցր ձայնով սաղմոսների հորդաբուխ երգերով իբրև փառաբանություն Աստծուն: Բանակից դուրս է գալիս ու երրորդ զիշերը, երբ չորրորդ ցերեկը լուսանում էր, պաշտամունք կատարելիս, կատարում են տերունական ու կենդանարար վսեմ խորհուրդը»:

«Դրանից հետո ամբողջ Բանակը նախկին կարգով և սրբերի դասերով մեկնում է: Նույն տեղում երախտասեր Վաչագան արքան հոգևոր ու գերերկրային այն գանձը վերցրեց, որ անանցավոր ու անպատմելի բարիքների պատճառ էր և որ իրենից առաջ եղած թագավորներից, իր իսկ նախնիներից ոչ մեկին այսպիսի մեծահրաշ պարգևներ չվիճակվեցին: Եվ Քրիստոսի համար հավաքված բաժինը վերցրեց, նա Աստծու ողորմության այդ բարիքը անձառելի կերպով ստացավ քրիստոսագգեստ Վաչագան արքայի միջոցով, որի գովասանքը ավելի պակաս չեմ համարում արևմուտքի վրա իշխող Կոստանդին կայսեր գովասանքից, կամ ոչ էլ Տրդատ Արշակունուց, որը փրկեց մեծ Հայաստանը և մեզ՝ արևելցիներիս: Աստվածապաշտության լույսի դուռ դարձավ և բազմազան բարիքների օրինակ եղավ այն երջանիկը: Սա, մտնելով այս ասպարեզը, վերադառնում է այն տեղով, որով իր գալուստն էր պատրաստել: Նույն ձևով և էլ ավելի տեսանելի պայծառությամբ ճանապարհը հարթեց»:

«Տեղից շարժվում են հետիոտն մնացած թագավորը և ամբողջ բազմությունը՝ հանդարտ ու համընթաց քայլերով. նրանք ընթանում էին խաղաղված ծովի նման: Ե՛վ քաղցրաձայն հնչմունքից, և՛ ճառագայթարձակ լույսերի փողփողումից օդը ցնծում էր, և հրեշտակներն իսկ երգակից էին դարձել: Թվում էր, թե երկիրը երկնքի էր վերածվել: Եվ հենց ինքը՝ թագավորը, անխոնջ չարչարանքով ինչպես գալիս, նույնպես էլ գնալիս գետը անցկացրեց և հրամայեց սրբերի կառքը կանգնեցնել»:

«Թագավորն ամբողջ բազմությամբ նստեց, իսկ եպիսկոպոսները, օրհնելով խառնիճադանջ ամբոխը, հրամայեցին, որ յուրաքանչյուրն իր տեղը գնա: Թագավորը եպիսկոպոսների, քահանաների ու այլ նշանավոր մարդկանց խմբերը սրբերի հետ տարավ մինչև Քարվեճ օթևանը: Այստեղ արքան բոլորին իր գոհունակությունն է հայտնում, երկրպագություն է մատուցում այն բանի համար, որ իր հրամանով եկել և գործակցել են որոնմանը.

երկրպագություն մատուցելով նա ասում է. «Նրանց բարեխոսությամբ և ձեր աղոթքներով ցանկալին ինձ ու ձեզ շնորհող Քրիստոսին միշտ թող փառք ու գոհություն լինի»: Նրանք միաբերան օրհնում են թագավորին թագուհու և ամբողջ պալատի հետ ու ասում. «Ինչ բարիք որ դու Աստուծուց խնդրես, թող սուրբ Գրիգորիսի միջոցով տա քեզ, իսկ մեզ և քեզ շնորհի խաղաղասեր ապրել աշխարհում երկար օրեր ի փառավորություն եկեղեցու՝ օրըստօրե էլ ավելի պայծառացնելով այն. իսկ քո վախճանը թող Քրիստոսին խոստովանելով կնքի կենարար Քրիստոսը և նրա երկնավոր հայրը»: Եվ թագավորը իր հետ վերցրեց Շուփհաղիճի ավագ եպիսկոպոսապետին ու գնաց: Երբ սրբերի կառքը որևէ գյուղի էր հանդիպում, թագավորը իջնում ու հետիոտն գնալով սպասավորում էր սրբերին, մինչև որ տանելով անցկացնում էր բնակավայրը: Նա չէր գոռոզանում թագավորներին հատուկ մեղկությամբ, այլ, իբրև քրիստոնեական կրոնի կարգ ու կանոնին վարժ ու հմուտ, ժուժկալությամբ էր կենցաղավարում փափկակեցության մեջ ու փութաջանությամբ հմտացած հպատակվում էր Աստծու պատվիրաններին»:

«Այս դեպքերն այսպես ընթանում են, սուրբ Գրիգորիսի մեծ հռչակը տարածվում է ուտիացիների ամբողջ երկրում: Եվ ինչ գյուղ որ սրբերը մտնել էին կամենում, ընդառաջ էին դուրս գալիս ծերեր ու մանուկներ, տղամարդիկ ու կանայք. նույնիսկ հեռավոր գյուղերը գալիս էին խաչերով ու տեսակ-տեսակ ծաղիկներով, անուշաբույր խնկերով. անհամար բազմությամբ գալիս էին խնդալով ու չդադարող փառաստրությամբ օրհնաբանում էին միասնական Սուրբ Երրորդությունը»:

«Այսպես եկան-հասան թագավորական Դյուտական գյուղը ու այնտեղ հանգստարան դրին սրբերին՝ նրանց հիշատակը փառահեղորեն տոնելով. թագավորը հրամայեց սրբերի մասունքները օձել թանկագին օձանելիքներով»:

«Թագավորը Խնչիկ անունով մի փոքրիկ դուստր ուներ, որին չափազանց սիրում էր նա և որի անունով կառուցել էր մի դաստակերտ: Սրան է տալիս սրբի մասունքների մի մասը և նույն դաստակերտում շքեղ կերպով ու պես-պես պատիվներով տոնում է հիշատակը: Մի մաս էլ ինքն է վերցնում, որ միշտ իր հետ ման է տալիս բանակում: Մասունքներից մնացածը կնքում և մեծ զգուշությամբ պահել է տալիս մի մաքուր ու շքեղ սենյակում, մինչև որ մատուռի կառուցումը գլուխ գա, որ հանուն Պանդալիոնի շինվում էր Դյուտական գյուղում, և որպեսզի երանելուն այնտեղ փոխադրելով շատ մե-

ծարի: Այստեղ է թողնում քահանաներ, սարկավագներ ու կրոնավորների մի մեծ խումբ, իսկ ինքը տարվա մեջ երկու անգամ երեքական օրով տոնում է սրբերի հիշատակը. և միշտ անձանձրությո՞ կերպով պաս է պահում, աղոթում ու ողորմություն տալիս աղքատներին: Իսկ նրանց, որոնց հրամայել էր տալ մասունքներից, պատվիրեց, որ շքեղ կերպով տոնեն սրբերի հիշատակը: Ծուլացողներին հիշեցնում էր աստվածային ահավոր դատաստանը, իսկ ջերմեռանդներին՝ նույնի բարերարությունների անպատմելի պարզները: Այսպես է փառավորում Աստված իր սրբերին»:

Հերիերի Սուրբ Գրիգոր եկեղեցու արձանագրություններ

Հարավային դռան վրա

Քրիստոսի շնորհով, ես՝ Բարսեղ եպիսկոպոսս՝ աշակերտ Պետրոս կաթողիկոսի, և իմ ծնողները՝ **Աղան** և **Գուլղան**, Վարանդ գավառից՝ Գիշ գյուղից, նորոգելով պայծառացրի[նք] Ամարասի սուրբ աթոռը, այս եկեղեցին շրջապատեցինք պարսպով և բազմաթիվ սենյակներով, շքեղացրինք զարդերով և կառուցել տվեցինք Սուրբ Գրիգորի անունով այս եկեղեցին, որպես Ամարասի սուրբ աթոռի ամառանոց: Որ և նրա [նշխարներից] մի մասունք բերելով՝ ամփոփեցինք հենց այստեղ: Տաճարս հիմնարկվեց ՌՃԺԶ (1116), [և կառուցումն] ավարտվեց ՌՃԻԵ (1125) թվին:

Արևմտյան դռան վրա

Ես՝ Պետրոս կաթողիկոս՝ աշակերտ Ղուկաս վարդապետի, կառուցել տվեցի այս եկեղեցին, ի հիշատակ ինձ և իմ աշակերտ Բարսեղ եպիսկոպոսի, հիշեցե՛ք ի Քրիստոս: Թող Աստված Քոչեղի ժողովրդին օրհնի անանց օրհնությամբ. [նրանք] ձեռնտու եղան կրին և քարին:

Աստծո գործությամբ, այս Սուրբ եկեղեցին կառուցվեց դառն ու նեղ ժամանակում, [քանի որ] մեր ծովացած մեղքերի պատճառով Աղվանից այս երկիրը մարախ եկավ և բազմաթիվ վայրեր ավերեց: [Եկեղեցին կառուցվեց] Սուլեյման շահի թագավորության, **Միրզա Ղուլի բեգի** պարնության, Վարանդ[ա] գավառում Մելիք Շահնազարի որդի՝ մելիք **Բաղի** իշխանության [օրոք] և Օվանեսի, քահանաների և բոլոր մեծամեծ ու փոքր տանուտերերի օժանդակությամբ. ամեն. ՌՃԻԲ (1122) թվին:

Ես՝ Տեր Դավիթ եպիսկոպոսս, եկա այս Սուրբ ուխտ, ի սպասավորություն Սուրբ Գրիգորիսի ՌՃԽԱ (1141) թվին. ով որ կարդա՝ [թող] Աստված ողորմի ասի:

Ես՝ Աբրահամ եպիսկոպոսս եկա այս Սուրբ ուխտ, [որպես] Սուրբ Գրիգորիսի սպասավոր, ՌՃԽԱ (1141) թվին. ով որ կարդա՝ [թող] Աստված ողորմի ասի:

[Սուրբ] Մեղանի ճակատին

Աստծո կամքով, ես՝ Գանձասար Սորբ Աթոռի Պետրոս կաթողիկոս Աղվանից, նորոգեցի ամբողջ Վարանդ[այ]ի և Քոչեզի նահանգի՝ Ամարասի արքեպիսկոպոսության սուրբ աթոռը, քանի որ փեռեկտել ու բաժան-բաժան էին արել սրա վիճակը՝ յուրաքանչյուրը վարվելով ըստ իր կամքի, իսկ մենք նորոգեցինք: [Եվ] մեր սիրելի աշակերտ Բարսեղ արքեպիսկոպոսին հրամայեցինք կառուցել եկեղեցի, [որպես] Ամարասի [վանքի] ամառանոց¹, ով և կառուցեց, ըստ մեր հոգու և Քրիստոսի Պայծառակերպության տոնին օրհնեցինք այս սուրբ տաճարը, այն անվանելով Սուրբ Գրիգորիս, [և] Սուրբ Գրիգորիսի նշխարներից բերելով, ամփոփեցինք Վարանդ[այ] ի և Քոչեզի այս երկրները, որպեսզի սրանք չլինեն [առանձին] երկու աթոռներ: Ով այս վիճակը բաժանելով, [և այլ տեղում աթոռ հաստատելով, որևէ] մեկին կնստեցնի այլ տեղում՝ կաթողիկոս լինի, թե եպիսկոպոս Տեր, այնպիսինը թող նգովված լինի 318 հայրապետներից և [թող] դատվի խաչահանողների հետ, Հուդային բաժնեկից լինի: Այս կատակն ու արձանագրությունը հաստատուն է մնալու հավիտյան:

Խորանի դռան մոտ

Մենք՝ Հեհերի ջամիահաթս, տանուտեր Ղասումս, մեծ և փոքր ճանապարհ[ներ]ի տակի տափը նախապես վախմ էր Սուրբ Աստվածածին [եկեղեցու]: Մենք ևս տվեցինք Սուրբ Գրիգորիսին: Ով որ խափանի՝ թող նգովվի Աստծո եկեղեցուց:

Ձախ խորանի ներսում՝ մի շիրիմի վրա

¹ Աղբյուրում. «Հովարան»

Այս¹ է տապան Հայրապետի,
Սրբազան մեծ վեհապետի,
Տեառն Իսրայել դիտապետի,
Տանս Աղվանից հովվապետի.
Աջոյդ սրբոյն Եղիշեի,
Աթոռակալ Գրիգորիսի,
Ժառանգ մեծին Սիմեոնի,
Եվ թոռն պետին Ներսիսի,
Զի էր որդի մեծասեռի,
Իշխանազնյա այն Ապրեսի,
ՌՄԾԷ (1257) Հայոց թվի,
Հուլիսի երեքին վախճանի.
Հիշման առցե սա արժանի,
Ով որ կարդալ հանդիպեսցի:

Մի խաչքարի վրա

Սա Սահակ եպիսկոպոսն է, որ վախճանվեց ի Քրիստոս. Ռլ (1030) թվին:]

Եպիսկոպոսների անուններ

Ես՝ Պետրոս եպիսկոպոս, Դավիթ եպիսկոպոս, Սահակ եպիսկոպոս:

ԾՈՎԱՏԵՂ

Գյուղ է՝ Ամարասի վանքի արևմտյան կողմում, նրանից հեռու է մի ժամվա [ճանապարհի չափով]: Բնակիչները հայեր են՝ տասնվեց տուն: Ունեն հոյակապ սագաշեն եկեղեցիներ: Այս գյուղն իր անունը ստացել է [իրական] դեպքից, ընդ որում գյուղում կա փոքրիկ [մի] լիճ, որ զարնանը՝ հեղեղներից հորդանալով, նմանվում է ծովակի: Արևելյան կողմում, փոքրիկ բլրի վրա խիտառխիտ շիրիմներ են, ուր կա քառախորան, սագաշեն [մի] եկեղեցի, որոնցից երեքը հողի տակ են, իսկ մեկը՝ կիսով չափ բարձր է հողի մակերևույթից, [և] ինչ որ բանով նման է ակլղամայի², ըստ որում սրանցում բազմաթիվ մեղիքների գերեզմաններ են, որոնց թվում մեկիք Փաշայի և

¹ Աղբյուրի չափածո այս հատվածը ներկայացրել ենք բնագրի լեզվով, տողատելով և փոխելով ուղղագրությունը

² Ակլեղամա - Գերեզմանատեղի, հատկապես՝ ժայռափոր

Սահակ եպիսկոպոսի շիրիմները (ովքեր տաճիկների գորքերից ճնշվելով, գնացին պարսիկների մոտ և հրավիրեցին մեծ Շահ Աբասին): Այս [շիրիմների] մոտ կա մի խաչքար, որը Հայոց ՌԻԵ (1025) թվին կանգնեցրել է նույն [այդ] եպիսկոպոսը, ի փրկու թյուն իր եղբայր Ղազարի հոգու: Այս եկեղեցուն կիպ կա շատ խոր [մի] գուբ, որի մեջ սովի ու սրի պատճառով մեռածների բազմաթիվ կմախքներ են, որոնց, ինչպես պատմում են ծերունիները, չկարողանալով ըստ կարգի թաղել, շտապել են լցնել այս գուբի մեջ և հողով ծածկել: Իսկ այժմ [այս գուբը] մի կողմից փոքր-ինչ բացվել է, որից էլ երևում է նրա խորությունը:

(*) Ծանոթություն: Ազատամիտ մարդկանց ծանծաղամտությունը մշտապես խորխորատն է գահավիժեցնում իր[ենց] և իր[ենց] հետ [նաև] ամբողջ ազգը, ինչպես որ հայտնապես երևաց: Քանի որ առանց խորախորհուրդ վերլուծության, պարսիկին ազարացուց [ավելի] լավը համարելով, հրավիրեցին նրան և Հայոց փարթամ աշխարհի կորստյան պատճառ դարձան. և գայլից ազատվել կամենալով, ընկան առյուծի ձեռքը, որ ջարդեց ու փշրեց նրանց ոսկորները:

Արձանագրություն մի խաչ[քարի] վրա՝ ՌԻԵ (627) թվին

Տեր **Հոհաննեսի** հայրապետության, մելիք Փաշի խանի առաջնորդության, [օրոք], ես՝ Սահակ եպիսկոպոսս, կանգնեցրի այս խաչը, ի փրկություն իմ եղբայր Ղազարի. հիշեցե՛ք [ձեր] աղոթքներում:

Եկեղեցու դռան մոտ՝ ՋԾԵ (955) թվին

Ես՝ Պետրոս եպիսկոպոսս, [կառուցեցի այս]եկեղեցին [և] այս վանքը, [որ] հիշատակ է [և] որ սա լինի մեր նախնիների դամբարան և շիրիմ:

Մի խաչ[քար]ի վրա

Ամենակալ Աստծո կամքով, ես՝ մելիք **Աղամս**՝ որդի մելիք Պապի՝ **Նախիջանի** թոռների որդու, [որն էլ] որդին [է] **Թոմասի**՝ [սա էլ] որդին մեծ իշխան **Ավանի**, կանգնեցրինք այս խաչը, ի փրկություն մեր նախնիների: ովքեր երկրպագեք, հիշեցեք ի Տեր, [և թող] Աստված էլ ձեզ հիշի:

Մի խաչ[քար]ի վրա

Ամենակալ Աստծո կամքով, ես՝ մելիք Աղամս, կանգնեցրի այս խաչը, ի փրկություն իմ հոր՝ մելիք Պապի և իմ մոր՝ **Խոնտի Խաթունի**: Ովքեր հիշեք ի Տեր՝ հիշյալ լինեք Աստծո մոտ. ՌԺԵ (1015) թվին:

ՄԱՎԱՍ

Այստեղից բարձրացա Մավաս գյուղը, որ գտնվում է լեռան գլխին՝ Ծովատեղ գյուղի թիկունքում, որտեղից երևում է Արցախի դաշտը: Բնակիչները հայեր են՝ տասը տուն: Ունեն սագաշեն եկեղեցի:

Միմեռն կաթողիկոսի եղբորորդի պարոն Բեզը ինձ ընդունեց իր հարկի տակ և իմ բաղձանքի [համեմատ], ինձ շնորհեց մի քանի ձեռագիր մատյաններ, որի փոխարենը՝ Աստված [նրան] հատուցի:

Այս բլրի գագաթին կառուցված է [մի] եկեղեցի՝ երկու սյուների վրա, հարթ ու գեղեցիկ տեղում: Շրջապատն անտառապատ քարաժայռ է, ուր հաճախում են բազում ուխտավորներ: Այս մատուռի Սեղանի տակ չորս խորանաձև շիրիմներ կան, որոնք կառուցված են Վեհիկի ժամանակներում գտնված սրբերի նշխարների վրա, ինչպես և ավանդաբար խոսում են բնակիչները՝ պատմության համաձայն: Աղվանից պատմիչը այսպես է գրում այդ մասին¹.

«Աբասի հայրապետության առաջին տարին, ես՝ անարժան Վեհիկս, երազում մի անապատական մարդ տեսա, որը գրկել էր աստվածային խաչվառը, նա ինձ ասաց իմ անունը. «Դու ո՞վ ես, տեր»: Նա ինձ պատասխանեց. «Ես Պողոսիկն եմ. այժմ եկ երկրպագիր այս խաչին, բայց մի՛ մոտենա նրան», և ես քնից զարթնեցի, բայց այս բանի վրա ուշադրություն չդարձրի: Երկու տարուց երազում տեսա, թե ինչպես սուրբ Վարոսը արեղայի կարպարանք առած ինձ ասաց. «Մենք մասունքներ ենք՝ ծածկված Արցախ աշխարհում, Միսանց տոհմին պատկանող Կաղսետ կոչված վայրում: Առաջին նահատակ Տեր Ստեփանոսն է, նահատակ Թեոդորոսը, սուրբ Վարոսը, Մամասը, Մարը, Սարգիսը, Գրիգորիոս նահատակը, Կոզմասը, Դամիանոսը և սուրբ քառասուն նահատակների մի մասը»: Նույն ձևով մի մարդ նս երևաց, որ ասաց ինձ. «Ես Քրիստոսի ծառա Բասիրան եմ, որ չարչարվեցի խաչի վրա և Փրկչից խնդրեցի, որպեսզի չկորչեն իմ մասունք-

¹ Աղբյուրի այս հատվածի աշխարհաբարը դնում ենք ըստ Վ. Առաքելյանի թարգմանության, տե՛ս Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1969, էջ 90-92

ները: Եվ ովքեր այս սուրբ խաչից մաս են ցանկանում, թող վերցնեն. մի մասը այն խաչից է, իսկ մյուս մասը Աստծո կողմից ընդունված խաչվառից»։ Իսկ ես՝ Վեհիկս, մոտ յոթ տարի իմ մտքում զարմացած էի մնացել՝ խնդրելով ամենքին ողորմացող Աստծուց և միննույն նահատակներից, որպեսզի ինձ իսկությամբ բացահայտեն այդ տեսիլքի իմաստը»։

«Եվ անընդհատ կրկնվում էր այդ տեսիլքը ու շտապեցնում մասունքների դուրս բերումը, որովհետև ասում էր՝ դեռ մենք տանջվում ենք: Ապա ես՝ Վեհիկս, վեր կացա գնացի սուրբ հայրապետ Աբասի մոտ և նրան պատմեցի մեծապայծառ նահատակների հավաքման մասին: Նա լսեց իմ կողմից տեսածների մասին, բազմապատիկ գոհությամբ փառք տվեց Աստծուն և նույն ժամին Տրիի խստահավատ քահանա Դանիելին ուղարկեց, որպեսզի սա մեծասքանչ գաղտնիքին տեղյակ դառնա: Այդ արդարամիտ մարդը Բոհ քահանայի ու Եզեկիել դպրի հետ արագությամբ ընթացավ և անմիջապես հասավ Կաղսետ վայրը, ինձ՝ Վեհիկիս հետ: Այդ հանդիսավայրը եկան նաև ուրիշները, իբրև մեզ գործակիցներ: Դրանք էին՝ Մոմհարների քահանա Աբասը իր ծխերով, Մարկոս քահանան իր եղբայրներով, Հովհանավանքի հայր Տիրիթը Քարմեղինի անապատից և ջերմեռանդ հավատացյալների ողջ բազմություն»։

«Սրանց հետ միասին աղոթեցինք պաղատագին մաղթանքներով ու սկսեցինք գետինը փորել մի մարդու հասակաչափ: Հանկարծ այդ տեղում մի անուշ հոտ բարձրացավ, և թաղված գանձը հայտնվեց ըստ Փրկչի այն խոսքի, թե. «Լույսը չի կարող թաքցնել և գրվանի տակ դրվել»։ Աստված իր սուրբ ծառաներին այսպես ներկայացրեց ճրագը և նրանց լույս փափագող սրտերին տվեց չաղոտացող ճառագայթ: Դրանց հայտնությամբ Աստված ողորմություն արեց Ադվանքին և բախք շնորհեց Կաղսետ առողջարար վայրին: Նույն ժամին թափորը մեծապես օրհնաբանեց Աստծուն, գովաբանեց սրբերին, ու մասունքները ամփոփեցին թանկագին անոթների մեջ, և յուրաքանչյուրը վերցրեց իր մասը: Մեծագույն մասը Դանիել քահանան տեղավորեց և թանկագին ընծայով շտապ գնաց Աբաս հայրապետի մոտ: Դրանով նա շատ ուրախացավ, և երբ սուրբ նշխարները տեղ հասան, նա տոնախմբություն արեց նրանց հիշատակին ու տեղավորեց մաքուր գանձանակների մեջ»։

«Ես՝ Անդրիանես, որ գրեցի այս հիշատակարանը, ընթերցողներին աղաչում եմ հիշել անարժանիս, նաև չմոռնալ Աբաս հայրապետին, ում ժամանակներում լույս ծագեց աշխարհին: Նրա հետ, Աստված իր մեծ ողոր-

մությամբ [թող] հիշի նաև նրանց կարապետ Վեհիկին: Եվ ովքեր հիշեք [ձեր աղոթքներում, թող] Քրիստոս ձեզ երանելի վարձ հատուցի, այժմ և հավիտյան»:

ԿԱԼԵՐ

Սուրբ վկաների նշխարների փոշին համբուրելուց հետո, ես այնտեղից ուղևորվեցի Կալեր կոչվող վայրը՝ Ամարասի վանքի մոտ, որի [իր դիրքից] նայում է Սյունյաց դաշտին: [Մա] մերձակայքի բնակիչների վար[ուցանքի] ազարակ է: Իմ առաջին այցելության ժամանակ Ամարասի վանքը շեն էր, ընդ որում նրա սենյակներում տեղակայված էր արքունի մաքսատունը, [այստեղ] կար նաև մի վարդապետ, որ սպասավորում էր Սուրբ Գրիգորիսի դամբարանին: Իսկ այժմ այստեղից հեռացել են թե՛ մաքսատունը, թե՛ վարդապետը, և Ամարասի վանքը մնացել է ավերակ դրության մեջ:

Վանքին արևմտյան կողմից շատ մոտ գտնվող մի ավերակի մասին ծերունիները, ավանդությամբ լսած լինելով, պատմում են, թե մեծաշեն ու փառահեղ գավիթ է եղել, որ մարմար քարով կառուցել է **Վաչակյան** Աղվանից արքան: Բայց աշխարհավեր **Լանկթամուրը** հրամայել է այն հիմքից քանդել և քարերը լցնել Երասխ գետը:

Պարսիկները հայերից ոչ պակաս, պատվում են Սուրբ Գրիգորիսի գերեզմանը, և [կյանքի] բոլոր իրավիճակներում երդվում են նրանով. գուցե քրիստոնյա ծնողների որդիներ են, [որ] հայրերից սովորելով, պահում են [իրենց ծնողների] ավանդածը: Մինչև աժմ կա նաև մի առակ, որ պատմում են, թե.

«Մի հայ գողանում է մի տաճիկի կովը և [երբ] հայը ժխտում է [գողությունը], տաճիկը պնդում է, որ նա երդվի Մարասով, և հայը համաձայնում է, և այլ ձևով ասում [երդման բանաձևը].

«Ծառա եմ քեզ, Մարաս,

մին կով եմ գողացալ այս սարաս, երկու տոճեմ լցրալ, մին կարաս, դու էս թորքի պատիժը տաս»:

Իսկ տաճիկը լսելով Մարասի անունը, անմիջապես հավատում է և դադարեցնում իր պահանջը:

ՄՈՍ

Կալերից բարձրացա դեպի Մոս գյուղ, որը գտնվում է Ամարասի վանքին մոտ մի բլրի ստորոտին: Բնակիչները հայեր են՝ երեսուն տուն: Այս [գյուղի] մոտ կա մի բարձր բլուր, որ գազաթին՝ Հայոց ՌՃԽԴ (1144) թվականին Հովհաննես քահանայի կառուցած՝ Եղիշա կույսի անունով սագաշեն եկեղեցին է: Միջակ շինություն է, երկայուն: [Սուրբ] Սեդանի տակ հիշյալ նահատակի գերեզմանն է, որի դուռը բաց է: Այստեղ բազմաթիվ ուխտավորներ են հաճախում: Եվ այդ [գերեզմանի] խորության մեջ [սուրբի] ոսկորներն են, որոնք հանեցինք, համբուրեցինք և վերստին դրեցինք նույն տեղը:

Եղիշեի անապատի արձանագրություններ

Ամենագոր Աստծո կարողությամբ, Գանձասարի Տեր Երեմիա Աղվանից տան կաթողիկոսի [օրոք], ես՝ նվաստ Տեր **Հոհաննեսս**՝ հոգով տկար և մեղավոր, որդեգիրս փոքր Տեր **Հոհաննեսի**, կառուցեցինք սրբուհի կույս Եղիշայի անունը [կրող] այս եկեղեցին, որի համար, աղաչում ենք հիշել [մեզ]՝ մեր ծնողներով հանդերձ. ՌՃԽԴ (1144) թվին:

Սրան մոտ

Հիշատակ է **Հարուստան** Միրզախանի որդի Մանվել վարդապետի. եղբայրներ **Բալալի**, **Բապալի**, Եզան[ի], Լալալի, Գուլասարի, **Թաճի**, Մարիամի, կողակից Նազլուի, որդի Հախնազարի, Շահապետի, Ավումի, Մազրավանի, դուստր **Գյոզել տարի**. ՌՃՀԴ (1174) [թվին]:

Սրան մոտ

Ճարտարի տեր Աստվածատուրը [և] մեծ ու փոքր ժողովուրդը կառուցեցին այս սուրբ եկեղեցին՝ հիշատակ իրենց ծնողներին. ՌՄՀԴ (1274) թվին:

ՃԱՐՏԱՐ

Սրբերի նշխարները համբուրելուց հետո, այնտեղից իջա և մտա Ճարտար գյուղ, որը բաժանված է երկու [մասի]՝ իրարից հեռու քառորդ ժամով: Մեկի անունը **Արագունվո** է, մյուսինը՝ **Ծմուկի**: Բնակիչները հայեր են՝ հարյուր տուն. ունեն սագաշեն եկեղեցիներ և շահութաբեր կալվածների տերեր են:

Այս գյուղերը սեփականացրեց հայկազն **կնյազ Մատաթովը**, բայց նրա վախճանից հետո [դրանք] անցան արքունի հպատակների շարքը: Սրան

մոտ կա ամուր բերդ՝ բարձրաբերձ ու միակտոր վեր խոյացող ժայռի վրա, որի չորս կողմում սուսկալի անդունդ է, իսկ մի կողմից ունի դժվարանցանելի ճանապարհ, որով էլ ես հազիվ բարձրացա վեր: [Ընդամենը] մի քանի զինվորներ այս բերդն անկասկած կարող են ապահով պաշտպանել թշնամիներից: [Բերդի] միջնամասում կա ավազան կամ ջրջիղջ՝ դեռևս երևում են հիմքերի հետքերը: Բերդից փոքր-ինչ ներքև կա քաղցրահամ աղբյուր, որից հարկավոր դեպքերում ջուր են հավաքում և լցնում այն ավազանի մեջ՝ բերդում ամրացածների կարիքների համար:

Միակտոր վեր բարձրացող ժայռի մեջ կան քարայրներ ու ծերպեր, որոնցում վտանգի ժամանակ պահվում են շրջակա բնակիչների ունեցվածքն ու կարասին: Ծերունիները պատմում են, թե այս բերդի վրա պարսից արքաներից շատերը հարձակվեցին, այն են՝ Ադա **Մահմուտ** շահը, Ֆաթալի շահը, արքայորդի **Ապաս** Միրզան, բայց ոչինչ չկարողացան անել, [և] գլխիկոր և ամոթապարտ հետ դարձան այստեղից:

ԽՆՈՒՇԻՆԱԿ

Հայոց գյուղ է՝ քսանհինգ տուն. ճարտարից հեռու է մի ժամով: Ունեն սագաշեն եկեղեցի:

ԳԻՇԻ

Ճարտարի բերդի լեռնագոտու վրա տեղակայված հայկական գյուղ է: Բնակիչները հայեր են՝ Երեսուն տուն: Առջևում փոքր լիճ է, որի [չափերը] տարվա բոլոր եղանակներին մնում են անփոփոխ: Սրանից էլ՝ գավաթի մեծության ու զինու առատության մասին Արցախ աշխարհի առակն ասում է, թե.

«Քո զինին և գավաթը Գիշո լիճն են»:

ՄՇԿԱՊԱՏ

Հայոց գյուղ է՝ մի բլրի վրա: Բնակիչները հայեր են՝ քսանվեց տուն: Ունեն սագաշեն եկեղեցի, որի մոտ Սուրբ Վարդան նահատակ մատուռն է, ուր բազմաթիվ ուխտավորներ են հաճախում: Սրա շուրջ կան գեղեցիկ տապանաքարերով զարդարված գերեզմաններ:

ՆՆԳԻ

Հայոց գյուղ է՝ Հիսուն տուն: Ունեն սագաշեն եկեղեցի: Այս գյուղից արևմուտք, մի բլրի կատարին **Հոհաննես** ավետարանչի աշակերտ Պրոխորոնի անունով կառուցված մենաստանն է, որի շրջակայքում կան [միաբանական] սենյակներ՝ այժմ ավերակ:

ԱՇԱՆ ԳՅՈՒՂ

Հնում՝ Առժան. կառուցված է մի ձորի կիրճում: Բնակիչները հայեր են՝ երեսուն տուն: Մեծ մասամբ զբաղվում են այգեգործությամբ: Այստեղ օթագայեց Աղվանից Վաչական արքան, երբ մեծ բազմությամբ գալով, ցանկանում էր գնալ Փոքր Սյունիք՝ Սուրբ Գրիգորիսի ցանկալի նշխարները [գտնելու] համար:

ՀԱՑԻ

Հայոց գյուղ է՝ քսան տուն [բնակչությամբ]: Ունեն սագաշեն եկեղեցի: Այս գյուղի բնակիչները, մշտական ավազակային հարձակումների և ապաստարան չունենալու պատճառով, այլ [գյուղերի] հայազգի բնակիչների հետ Բիլուկան քաղաքից գաղթել են [այստեղ] և ապավինել այս խորածորերին, ուր մնացել են, ըստ ամենայնի ապահով: Այս շենից ոչ հեռու մեծ գյուղաքաղաքի ավերակ է, որտեղ կան պատվելի իշխանների գեղեցկաքանդակ մահարձաններ և կոփածո քարով կառուցված բազմախորան եկեղեցի: Թեև քաղաքի կառուցողն անհայտ է, բայց տեղադրությունը ցույց է տալիս, որ հնում իշխանական բնակավայր է եղել:

ՎԱՐԱԶԱԲՈՒՆ

Հայոց գյուղ է՝ հիսուն տուն [բնակչությամբ]: Ունեն սագաշեն եկեղեցի: Այս գյուղում տեսա մի գրչագիր մատյան, որի մեջ գրված էին **Հոհաննես Թուլկուրանցի** վարդապետի ստեղծագործությունները, մեծ մասով չափածո, որոնց վերջում գրված է. «Իսն **Հոհաննես** Թուլկուրանցի»:

ՆԱԽԶԻՎԱՆԻԿ

Հայոց գյուղ է՝ կառուցված համանուն լեռան ստորոտին: [Այս գյուղի] հյուսիս արևելքում ուտիացիների և գարգարացիների դաշտն է: Բնակիչները հայեր են՝ վաթսուն տուն: Ունեն սագաշեն եկեղեցի: Գյուղի քահանայի

տանը եղել են բազմաթիվ ձեռագիր մատյաններ, բայց անխնամ լինելով ամբողջովին քայքայվել են: Ուստի, ի նշան հարգանքի, քահանան դրանք դրել է նոր կառուցվող եկեղեցու հիմքում, ինչպես [հենց] ինքը պատմեց մեծ ուրախությամբ: Բայց ավելի լավ կլիներ, եթե այդ մատյանների փոխարեն ինքը ծածկվեր այդ հիմքի տակ: Այդ մատյաններից մեկը պատահաբար անթաղ էր մնացել. այն վերցրի ինձ մոտ. դրանում [գրված] էին նախնիների զանազան ճառեր և Մատթեոս Տաթևացի վարդապետի՝ Ղուկասու Ավետարանի մեկնությունը:

ՔՅՈԹՈՒԿ

Այստեղից վեր բարձրանալով, ելա լեռան կատարը և այնտեղից իջա Քյոթուկ գյուղը: Բնակիչները հայեր են՝ երեսունվեց տուն: Այս բարձրությունից երևում է Խաչենի և Գարգարի ընդարձակ դաշտը, խորածորերով ու սարերով հանդերձ: [Գյուղի] հարավային կողմում մթին անտառ է, ուր ժամանակ առ ժամանակ թաքնվում են ավազակների բազմություններ¹:

ՔԱՌԱՄՆԻՑ

Հայոց գյուղ է. Քյոթուկից ոչ հեռու. Շուշի բերդաքաղաքի դիմաց: Օդը զով է, ջուրն՝ անուշահամ: Բնակիչները հայեր են՝ քառասուն տուն: Ծերունիները պատմում են, թե. «Ոչ տեսել ենք, ոչ էլ մեր նախնիներից լսել, որ այս գյուղում ժանտախտ, խոլերա կամ այլ վարակիչ հիվանդություն² պատահի». [և սա] գուցե օդի ու ջրի բարեխառն ազդեցությունից է: Ունեն անհարթ քարով կառուցված սագաշեն եկեղեցի: Գյուղի շուրջ կան վայրի ծառերի վրա պատվաստած շատ տանձենիներ, խնձորենիներ ու թթենիներ, և դա՝ երթևեկող օտարականների համար: Այս [գյուղի] մերձակայքում մի նահատակի գերեզման է՝ անունն Ադի [նահատակ], ուր բազմաթիվ ուխտավորներ են հաճախում: Այս նահատակի մասին ծերունիները պատմում են, թե մի տաճիկի ծառա էր, և նա [ցանկացել է ծառային] բռնությամբ մահմեդական կրոնին դարձնել: Ծառան չի համաձայնել [և] չարաչար խոշտանգումների [ենթարկվելով] նահատակվել է այս տեղում: Այս պատճառով էլ կոչվում է Ադի նահատակ, այսինքն՝ իր աղայի կողմից նահատակված:

¹ Աղբյուրում. «... յորում որջանան երբեմն բազմութիւնք աւազակաց»

² Աղբյուրում. «Փոխադրական ախտ»

ԽՈՇԱՄԴԱՍ

Քառանկյուն պարիսպ է, անցյալում [եղել է] Խոշամդամ անունով մի կնոջ տունը: Ծերունիներն այս պարսպի մասին պատմում են, թե մի հայ կին մի գետակում լողացնում էր իր մանկանը: Սրան պատահում է Շահ Աբասը և, ծնողի գրկում մանկանը տեսնելով, խանդաղատանքով [լցվում] նրա [նկատմամբ և, ի նշան սիրո, նրան է պարզում այս կալվածքը: Իսկ իր հաստատած հրովարտական գրում է, թե. «Ոչ ոք իրավունք չունի այս ագարակում անգամ մի թռչուն որսալու»: Ուստի այստեղ [շատ] վայրի փասիաններ են գալիս, և դրանց ձայն արձակելու ժամանակ, հեռու կանգնած որսորդներն ասում են. «Ձայնե՛ա՛, փասիա՛ն, ձայնե՛ա՛, զի ունես զԽոշամդամ՝ քեզ հզոր պաշտպանե: Այժմ սա Արցախում բոլորին ծանոթ առակ է, և ասվում է հզոր պաշտպաններ ունեցող մարդկանց [մասին]:

ՍԱՐՈՒՇԵՆ

Հայոց գյուղ է, երեսուն տուն [բնակչությամբ]: Ունեն սագաշեն եկեղեցի: Այստեղ կա Սարուշինու կոչվող երկաթագիր Ավետարան, որին բազմաթիվ ուխտավորներ են հաճախում: 1826 թվականին այս Ավետարանը գերվեց պարսիկների կողմից, բայց հետո Թավրիզի հայերը գնեցին այն, և [Ավետարանն] այնտեղից վերադարձավ Սարուշեն՝ իր տիրոջ տունը:

ՂԱՅԲԱԼԻ

Հայոց գյուղ է՝ Շուշի քաղաքի դիմաց՝ արևելյան կողմից. ունի քսան տուն [բնակչություն և մի] սագաշեն եկեղեցի: Այս տներից երեք գերդաստան Իբրահիմ խանի բռնաճնշման ներքո մահմեդականություն էին ընդունել, բայց ծածուկ դավանում էին իրենց հայրենի կրոնը:

ԴԱՀՐԱՎ

Հայոց գյուղ է՝ երեսուն տուն [բնակչությամբ]: Ունի եկեղեցի, որին մոտ, Հայոց ՉԻ (720) թվականին Վասակի որդի Հասանի կառուցած գեղեցկաշեն մահարձանն է՝ Գուրգենի և Ուքանի [գերեզմանների] վրա: Եվ մյուս [մահարձանը], որն իր և իր կնոջ՝ **Թիթեղնիկի** համար [կանգնեցրել է] **Հոհանք**:

ՊՏՐԵՑԻՔ

Հայոց գյուղ է՝ երեսուն տուն [բնակչությամբ]: Ունի սագաշեն եկեղեցի: Գյուղի դիմաց **Ղրխ դզլար** լեռն է, որի մասին ավանդում են, թե Լանկթամուրի գերեվարություն[ներ]ի ժամանակներում քառասուն օրիորդներ նրանից փախել են [և] պատսպարվել են այդ [լեռան վրա] և մնացել են անվնաս: Ապա, խաղաղության [հաստատումից] հետո, երբ գտել են օրիորդներին՝ նրանց անունով [այս] վայրը անվանել են Ղրխդզլար: Գարնան այստեղից փոքրիկ վտակ է իջնում, ապա շատ մեծանալով գնում խառնվում է Գարգար (Կարկառ) գետին ու նրա հետ լցվում Կուր:

ԽԱՆՁՔ

Հայոց գյուղ է՝ երեսուն տուն [բնակչությամբ]: Ունի չորս վայելչադիր սյուների վրա [կանգնած] սագաշեն եկեղեցի, որը Հայոց ՌՃԲ (1102) թվականին կառուցել է Պետրոս կաթողիկոսը: Այս գյուղի գերեզմանատանը կա Հայոց ՈՂԹ (679) թվականի մի խաչքար, որը կանգնեցրել են Հայրապետը, Պետրոսը և Վարդանը, ինչպես ցույց է տալիս արձանագրությունը. «Հայոց ՈՂԹ (679) թվին, ես՝ Հայրապետս, Պետրոս և Վարդան, կանգնեցրինք այս խաչը [ի հիշատակ] մեր բարեպաշտ և աղքատասեր մոր. հիշեցե՛ք [ձեր] աղոթքներում:

Եկեղեցու ճակատին

ՌՃԻԲ (1122) թվին, ես՝ Պետրոս Աղվանից կաթողիկոսս, **Խանձկա** գյուղից, իմ հայր Մանկասարը, իմ մայր **Աղխանը** և իմ ավագ եղբայր Իշխանն ու իր որդիներ **Հոհաննեսը**, Բաբաջանը և իր թոռ Մանկասարը և Տատ Խաթունը կառուցեցինք այս եկեղեցին՝ հիշատակ մեզ և մեր ննջեցյալներին, ամեն:

ՔԱՐԱԳԼՈՒԽ

Հայոց գյուղ է՝ կառուցված Չալաղան բերդի կատարին¹: Օդն ու ջուրը բարեխառն են. [գյուղի] տեսարանը գեղեցիկ է. զարդարված է թավ անտառներով ու ծաղիկներով: Այստեղից դուրս գալով բարձրացա Չալաղանա բերդ, որը տասնվեցերորդ դարում կառուցել է հայազգի հզորացած Չալաղան [իշխանը]: [Բերդի] երկու կողմում անհնար բարձրության խորածորեր

¹ Աղբյուրի այս հատվածն է. «Է գյուղ Հայոց շինեալ ի կատար բերդին Չալաղանայ...»: Իրականում բերդը գտնվում է գյուղից վեր

են: Այստեղ բնակվել է ինքը՝ Չալաղան իշխանը, ով բազմաթիվ լեռնականներ սրի քաշեց՝ նրանց ձեռքից շատ գերիներ ազատելով, ումից սարսափելով լեռնականները դադարեցրին իրենց համարձակ մուտք գործելն այս վայրեր: Հիմա դեռևս կան նրա տան ու բերդի հիմքերը: Գերեզմանատանը կա մի խաչքար, որի վրա գրված է. «Ես՝ Հասանի որդի Սմբատս և իմ եղբայրները, ի բարեխոսություն առ Քրիստոս՝ ինձ և իմ ամուսին Կատայի, կանգնեցրինք այս խաչը [այստեղ], որ մեզ [իրբև] սեփականություն և գերեզմանատեղի տվեց պարոնը: [Թող] Աստված օգնի նրա որդիներին»:

ԹՆԳՐՆԱԿԵՐՏ, ըստ պարսիկների՝ ԹԱՌՆԱԳՅՈՒԻՐՏ, որ հին ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՆ է

Չալաղան բերդը տեսնելուց հետո, ցանկացա գնալ Թառնագյուրտ՝ նրա հնությունները տեսնելու համար: Սա մեծ քաղաքի ավերակ է, Ուտիք գավառի վերին հարավային սահմանին, ուր սպառվում են Արցախի բարդակուտակ լեռները: Հենց այս ստորոտ[ներ]ին էլ գտնվում են քաղաքի ավերակ[ներ]ը: Այն լեռան գլուխը լայնատարած, միակտոր և շատ ամուր քար է. դեռևս երևում են տնատեղերի, շուկաների, բաղնիքների և այլ [շինությունների] ավերակները:

Լեռան ստորոտից բխում է հորդաբուխ աղբյուր, որը կարող է ջրաղաց աշխատեցնել և անցելով քաղաքի միջով, թափվում է Գարգառ (Կարկառ) գետը: Լեռան գագաթին կա մենաստանի ավերակ, որի մասին ավանդում են, [թե այն] եղել է այս գավառի առաջնորդարանը: Ինձ թվում է, որ այս քաղաքը, Մարաց Աժդահակ արքային սպանելուց հետո, կառուցել է Տիգրան Առաջինը և այնտեղ բնակեցրել իր քույր Տիգրանուհուն: Զանազան պատմագիրների հիշատակություններից և ըստ տեղի հարմարության, խիստ հավանական է թվում, [որ] սա [կարելի է] համարել Տիգրան Առաջինի¹ կառուցած առաջին Տիգրանակերտը: Ասողիկ [պատմիչն] ասում է. «Գալիս հասնում է Փայտակարան աշխարհ [և] բանակում Կասպից Տիգրանակերտ ավանի մոտ»²: Նաև Եվսեփոս եպիսկոպոսն է գրում. «Հրաման տվեց իր գորավարին, որ առաջ անցնի, և նա շտապ հասնում է Այրարատ, անցնում է Գարդման՝ Տիգրանակերտ ավանի դեմ»: Նաև

¹ Իրականում՝ Տիգրան Երկրորդ

² Հմմտ. Ստեփանոս Տարոնեցի, Տիեզերական պատություն, բնագիրը՝ Գուրգեն Մանուկեանի, «Մատենագիրք Հայոց», ԺԵ հատոր, Ժ դար, Գիրք Բ, Անթիլիաս, 2011, էջ 713

Խորենացին է գրում, թե. «[Երբ] Շապուհը հասնում է Տիգրանակերտ, Սյունյաց Անտիոք իշխանը, որ Արշակի¹ աներն էր, [քաղաքի] դուռը փակում է նրա դեմ, և Շապուհը սպառնում է կրկին ավերել այն»²: Այս մեջբերումներից հայտնապես երևում է, թե այս քաղաքը գտնվել է վերոնշյալ երեքի՝ Փայտակարանի, Գարդմանի և Սյունիքի միջև: Նույն անունն անփոփոխ մնացել է, և այժմ բնակիչները, փոքր-ինչ աղավաղելով, Տիգրանակերտ կոչելու փոխարեն, անվանում են Թնգրնակերտ կամ, ըստ պարսիկների՝ Թառնակերտ:

¹ Մեր աղբյուրում. «... զՄիւնեաց իշխանն Անտիոք, որ աներ էր Աժդահակայ...»: Աղբյուրի Աժդահակ բառը, միանշանակորեն, վրիպում է

² Հմմտ. Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և ներածութիւնը Մ.Արեղեանի և Ս.Յարութիւնեանի, Երևանի, 1991, Գրիք Գ, Գլուխ ԻԶ, էջ 287

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՄԵԾՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Իսկ Հայրապետն այնուհետև ի ձի հեծեալ առանձին, եկանք հասանք ի Շուշի, ուր խանն և ամենայն բազմութիւն հեծելոց և հետևակացն ընդ յառաջ ելին նորա, և տարեալ հանգուցին զնա ի տունն Հայրումեանց կոչեցեալ՝ որ ունէր սեմեակս կրկին, մի՝ վասն Հայրապետին և սպասաւորաց նորա, իսկ միւս՝ վասն Անտոն եպիսկոպոսի և գրագրացն առ հասարակ, ի միւս բակին բնակէր տեղապահ, և այլք աստ և անդ:

Շուշի անառիկն համարեալ ամրոց՝ կղզի իմն էր գոգջիր ամբարձեալ ի վերայ քարալերին, որոյ յարևելից կողմանէ պարապատէր գետն ընդ որ մէք եկաք, իսկ յարևմտից գետքն բխեալ յարևմտեան լերանց, և եկեալ համբուրէին զերեարս ի հիւսիսոյ ստորոտս նորա: Բնութիւն յամենայն կողմանց ահագին քարապարսպօք պատեաց զայն, բաց ի հիւսիսակողման մասնէն, ուր ելից զթերին բնութեան արուեստն՝ հզօր պատնիշօք ընդ դուռնն՝ որ հանէր յԱւետարանոցն զիւղ: Բնակիչք նորա Հայք և Թուրք: Հայքն հաշուէին լինել 500 տունք, և ունէին եկեղեցիս երիս: զԱգուլեցոց, զՂարաբաղցոց և զՂազանչոց, այլ զքարակերտ և զմեծ եկեղեցին ի նորոյ շինէին յայնժամ երկոքին եղբարքն Թառումեանք՝ Ջոհրաբ և Մարկոս: Շուշի զամենայն կերպարանս բերէր յինքեան զմիջնաբերդի, շրջակայ լերինք յերից կողմանց նորա երևէին բերել զձև արտաքին պարսպաց բերդին. գետորայք յորդեալք զնովաւ գործ խրամոց կատարէին ջրալեաց, և ինքնին ի կեդրոնի ամբարձեալ, արդարև անառիկ լինէր, եթէ ի մերձակայ լերանց անտի չհասանէին առ նա զնդակք թնդանօթոց:

Հիւսիսակողման քառաժայռն է առաւել բարձր, և ահաւորագոյն ևս ձոր նորա: Պատմէին, թէ «Ահմէդ խան, հայր Մէհդի խանին ցասուցեալ երբեմն ի վերայ քեռ եղբարց Թառումեանց, հրամայեաց գահավեժ առնել զնա ի ժայռից աստի ի խորախորս ձորոյն, այլ առ անհնարին բարձրութեան միջոցին, ասէն, հողմոց ի ներքս մտեալ երկայն և յոյժ ծաւալ հանդերձիցն մեղմեցին զուժգնութիւն ծանրանաց նորա, և հեզիկ ի վայր բերեալ՝ կենդանւոյն իջուցին զնա ի ձորամիջին: Ջոր հրաշից ի սակի եղեալ բռնաւորին, հրամայեաց այնուհետև ազատ շնչել նմա զօդ հասարակաց»:

Օդ տեղոյս կարի խոնար և երկիր կառուտ, ուստի և յանձրևային եղանակս կարի տղմուտ: Յաւուր միում ի գնալ իմում յեկեղեցի քաղաքիս, գտի զպառաւ ոմն կրկտել ի մէջ տղմոց զպայտիկ կօշկացն իւրոց, զոր ի բաց կորգեալ էր ցեխն: Բնակիչք նորա ընդ այր և ընդ կին առոյգ են և աշխոյժք: Ձև զգեստուց նոցա կոնչեցեալ Ղարաբաղի՝ խառնուրդ իմն է Վրացի և Պարսիկ ձևոց: Կանայքն նոցա ունին և զգոգնոց յառաջոյ իւրեանց ի պահպանութիւն զգեստուցն ի կեղտոյ: Պառաւունք զգենուն և զմխաշապիկ ի վերայ ամենայն զգեստուց իւրեանց զի մի՛ մխտտեցեն զնոսա: Կուսանք նոցա, որ զծայրագոյն պատկեր ամօթխածութեան ի դէմս կրեն, գեղեցիկք են յոյժ և ախորժատեսիլք: Ո՛չ սքօղեն զգլուխս իւրեանց, այլ գուտակ ի մորթոյ գառանց Ղալմուղաց դնեն ի գլուխս՝ զօրէն պատանեաց, ձիւնեփայլ փողքն ընդ կարմրութեան այտուցն զուգակշռեալ, յօրինեն զնոսա ինձորս ճերմակ ու կարմիր. իսկ զիսկք հոպոպեացն շուրջ զուսովքն ի թիկանց ցներբանս նոցին ծաւալեալ՝ հաւասարեն զնոսա (եթէ չգերազանցեցեն) գեղեցկուհեացն Վրաց. սովին և եթ տարբերութեամբ, զի սոցա՝ իշխէ ամօթ, իսկ նոցա՝ աշխոյժ:

Գինի Շուշոյ՝ սոխի ջո՛ւր: Այլ Պարտաւայն, Աւետարանոցին, Շաքոյն, Շամախոյ, և Գանձակայն՝ ազնիւք յոյժ, որովք լի է քաղաքն: Պտուղք համեմատ օգոյն, այլ հունն, զկեռն, մորն, և մոշն, մամուխն, մասուր, կաղինն, շագանակն, տանձ և սալորք անտառաց նորա պարարտ են և համեղք յոյժ: Շերամ առատ է աստ՝ որպէս յամենայն Սիւնիս. մի ի գերագոյն բերոց նորա է ձին՝ Դիլիբօզ անուանեալ, որ երկրորդ դասի յամենայն ուրեք՝ նժուգին Արաբացոց, և հաւասար Թորգոմեան օղապարկաց, ուստի և մեծագնի վաճառի յոյժ: Կանայք երկրիս առհասարակ արուեստաւորք են, և գործեն պէսպէս ձեռակերտս մետաքսիս, իսկ արք նոցա առհասարակ վաճառականք և երկրագործք:

Երկոթին տունք էին Հայոց՝ որոց ընդարձակութիւն վաճառաց, բազմութիւնք գործավարաց, և պատիւք ի մէջ Ռուսաց՝ մեծանային յո՛յժ յոյժ: Տունն Հախումեանց՝ ամենահարուստ, որ և ի գանձարանի կայսերութեանն Ռուսաց ունէր մինչև միլիոնս ռուբլեաց, և ի քաղաքացն Պարսից մինչև ի քաղաքս Սիբերիոյ և Եւրոպայ՝ ձգէր առնտուր: Բայց ի վերայ այսորիկ ամենայնի՝ տակաւին ճիշդս կարդայր զնոսա ազոն և ռիշտս, զի առ անբաւ գանձուցն յոլովութեան զարարս մեծագործութեան յանձինս ո՛չ բերէին, տինա՛ և ի դուզնաքեայ ողորմութենէ կարօտեալ և տառապեալ համազգւոյն զինքեանս ի բաց որոշէին: Բայց ես ո՛չ համարձակիմ մակագրել ի բարաւորի

տան սոցա զանուն անողորմ, վասն զի՝ թերևս ո՛չ զհամբաւի հարկանի գնոցանէ այն ի ցոյցս մարդկան արարեալ ողորմութիւն, որով այլք ոսկով գնեն զպա՛րծանս ի մարդկանէ՝ քան թէ վարձս յԱստուծոյ. սակայն և այնպէս, գեղեցիկ իմն մոլութեամբ մոլեալ ընդարձակէին յոյժ ձեռն տալ աչալըջաց մերազանց, գործավարս կարգելով գնոսա ի վերայ վաճառաց իւրեանց ի տեղիս, և ջանալով հարստացուցանել գնոսա, և ի տունս հաստատունս կագդուրել, զորս և Չրադս իւրեանց անուանէին, այսինքն Է՝ ճրագունս փայլեցուցանել յարտաքս զանուն և զերախտիս իւրեանց: Սէր բազում ճրագս ունելոյ բնիկ իմն էր քաղաքիս, վասնորոյ և այր զարամբք ելանէր ճոխացուցանել զհամազգիս իւր՝ զի ի պարծանաց սակի էր յոյժ ի տեղուջն համբաւեալ գործն:

Երկրորդ տունն էր Զոհրապայ և Մարկոսի Թառումեանց՝ յամենայնի վերագոյն: Վասն զի՝ սոքա ընդ իւրեամբք ունելով զամենայն արտունութիւնս զծովուն Կասպից, թէ զձկնորսական իրաւունս, և թէ զնաւագնացութեան տեղեհարկս, բազմագունից պէտս ունէին գործավարաց յայն պաշտօն: Ո՞ւր մնայ, զի և վաճառականութեանցն առնտոր ո՛չ ինչ նուազ քան զՀախումեանցն՝ ձգէր ի հեռաւոր ծագս աշխարհաց: Ճրագունք տան Թառումեանց գոլ մի մի շահապք շահաստանի, այնքան զարդարեալք և պաճուճեալք՝ թէ զգեստու, թէ տամբ, թէ հարստութեամբ, մինչ յառաջին տեսութեան իմում, համարել գնոսա տեարս տերանցն իւրեանց Զոհրապայ և Մարկոսի: Առօրեական բաշխոյք ողորմութեանց տան այսմիկ առաւելոյր քան զորութիս 500, թո՛ղ զմեծամեծ հասարակաց սեղանս, զոր տային ի տան անդ իւրեանց: Եկեղեցին կառուցեալ համակ ի սպիտակ վիմաց գեղեցկագոյն քան զբազումս ի հոչակաւոր եկեղեցեաց աշխարհին՝ յայտնի արձան էր մեծագործութեան սոցուն:

Թառումեանք բնիկք էին աւանին Շահկերտոյ, այլ ի վերջին աւերս նորա եկին բնակեցան յԵրևան: Իսկ բդեաշխ նորա՝ որ զամենայն ինչս հպատակաց տէրութեան յիւր սեպհական ի ստացուած համարէր, և չարաչարս տանջէր գնոսա՝ տուժել ինքեան զգոյս իւրեանց (կենդանի էր յայնժամ և Բաբա եղբայր սոցա կրտսեր, որ յետոյ մեռաւ ի Դարբանդ): Բաբա առեալ զամենայն գուղ՝ փախչի յաշխարհ Փայտակարան, և գրաւէ, զերեսս ծովուն Կասպից ի Ռուսաց դրանէն, որով սակաւ առ սակաւ հարստացեալ անդանօր՝ կոչէ և զեղբարս իւր, և հիմն դնէ այնորիկ հարստութեան, յոր վայելէին այսօր եղբայրք իւր և ազգն:

Ընդ հարուստ ժամանակս կացի ինքնին՝ անձանօթ ի քաղաքի այսմիկ. այն ինչ աստիճանակից եղբարք իմ ներդաշնակ տաղասացութեամբք իւրեանց՝ զոր խնայեր ինձ բնութիւն, հանրաձանօթ հանդիսացան ի քաղաքին, և շահեցան ոսկիս բազումս՝ պարզնի մասամբ, այն ինչ թուղթ և թանաք յառանձին սենեկի՝ չշահէր ինչ ամեննին:

Ողորմութեամբն Աստուծոյ վերստին աստ պատահէր Պօղոս վարդապետ Ղարաբաղցի՝ նախկին վարդապետ իմ, և Յովսէփ վարդապետ՝ իմաստասէր վերաձայնեալ, ուսուցիչ ուսուցչի իմոյ, զորս հրաւիրեալ էին երևելի գերդաստանք քաղաքիս՝ ի դաստիարակութիւն ուստերաց և դատերաց իւրեանց: Յորա կարի երևելի հանդիսանային Յովհաննէս և Կարապետ Մարկոսեան Թառումեանց, Ադա Բաբա Հախումեանց, Մնացական Զալալեանց և այլք, ուստի և ես սպրդեցայ ի նոսա՝ ուսանիլ գնորոզ և զպայծառ տրամաբանութիւն հօր Յովսէփայ վարդապետի:

Ուսանէի, այո՛, բայց այն զի միշտ զուրկ և թափուր ի մխիթարութեանց, և ո՛չ որօես կրօնակից եղբարք իմ, - յուսահատութեամբ ծալեցի զգիրք և գրիչ, և նստայ ծոյլ ի սենեկին: Եկն վարդապետն աստուածային, զոր իբրև տեսի՝ զեղան արտասուք և լուռ միայն կացի: Բազմեցաւ առընթեր երանելին, և ընդ հարուստ վայրկեանս ո՛չ խոսեցաւ ամեննին, մինչև բացի նմա զառիթ տառապանաց իմոց: Սկսաւ նա զառաջին թողուլ զամենայն, և յիմ կոյս յենուլ, որպէս թէ արդար ոք համարելով զիս յանիրաւի արարս իմ: Բայց իբրև եգիտ զիս կակղացեալ առ սակաւիկ մի՝ մեղմով իմն ասաց ցիս. «Որդեա՛կ իմ, գիտե՛ս արքանոյ արժէ նժոյգն օղապարիկ»: «Հինգ հարիւր կամ հազար ոսկի», ասացի ցնա: «Եւ գիտե՛ս, - ասէ, - զի ի գնել և վաճառել նժույգին պարտի գոլ յետկար վաւերական և կնքել մատանեաւ դատաւորի քաղաքին ի հաստատութիւն իսկութեան սերի նորա»: «Դիցուք թէ»: «Ի հարկէ՛, դու ո՛չ գնեցեր զայն, և ո՛չ վաճառեցեր. բայց լուս՛ր երբէք թէ գնեաց ոք զայն վասն առօրին զբօսանաց իւրոց, կամ կրելոյ զբեռննս ազօնից ի ջրաղաց անդր»: «Ոչ բնաւ, զի ափսո՛ս է երիվար այնքան ազնիւ ի հասարակ գրաստու կարգի վարել»: «Արդա՛ր ես, որդեա՛կ, որքան արժէք իցեն օղապարիկ երիվարին, քառապատիկ այնքան և ծախքն լինին և այս ամենայն վասն մի միայն աւուր վտանգի կենաց հեճանողին»: «Ա՛խ մի այդպիսի ձի, Հա՛յր սուրբ, և յայնժամ տեսանէիր թէ մինչև ու՛ր փախուցեալ հեռանայի»: «Յայդ իսկ եկեալ է իմ», - պատասխանեաց երանելին, և ինձ թուեցաւ թէ արդարև ունէր նա զնժոյգ այդպիսի: «Յայդ իսկ եկեալ է իմ», կրկնեաց. «Օղապարիկ նժոյգ քոյ է

ուսումն, որ որքան և մեծագին և բազմահոգ իցէ քեզ այժմ, տակաւին օր մի ապրեցուցանէ զհեծեալն, և փրկէ ի վտանգէ զկեանս նորա: - Մի՛ նախանձիր ձայնի եղբարց քոց, նոցա ձայն հազիւ հասանէ ի տանէ ի տուն, ուսի՛ր, և համբաւ քո հարցէ յաշխարհէ յաշխարհ»: Ջայսպիսիս խօսեցաւ նա, բայց յանկարծ շարժին աշխուժանաց ի գտանել ինձ զնժոյզն խոստացեալ՝ գրեթէ առ ո՛չ ինչ գրեաց ինձ զխրատ և զվարդապետութիւն նորա:

Թողեալ զիս յայս մտածութիւն՝ չոքաւ ի տուն իւր, զի արտաքոյ խմբի մերոյ բնակէր: Եւ ի վաղիւ առաւօտուն եկեալ առ իս՝ ասաց. «Մի պատմութիւն գիտեմ, Մեսրո՛ վր. – Թագաւոր գորդի իւր յուսումն գրոց առաքեաց ի վանս ուրեք, և յետ կատարելապէս ուսանելոյն՝ հան զնա ի կրթութիւն աշխարհական իրողութեանց: Գիրք կարդալն մի ինչ է, իսկ աշխարհ կարդալն՝ միւս: Համբակն ի հանդէս եմուտ, և ըստ նախապէս տնօրէնութեան հօր իւրոյ՝ շուրջ պատեցին զնովաւ աղքատ հպարտ ազատորդիք: Պատահեցաւ, ասի, յաւուր միում, զի թագաւորացուն մեր զամենեսին ի բաղանիս հրաւիրեաց. և յելանել իւրում անտի՝ չունէր ինչ ի վճար վարձուն»: Բաղանէպանն անձանօթ նմա և ընկերաց միանգամայն՝ պահանջէր զվարձ վաստակոցն, և նա ասէր. «Չունիմ արծաթ կամ ոսկի, այլ գիտութիւն բազում. ա՛ն քեզ ճառ մի ի ներքող քոց մեծարանաց»: «Ճառ ինձ ոճառ ո՛չ շինէ,- ասաց ցնա բաղանէպանն, - լուացա՛ր, լոմայ ցնձա՛»:

Ջայրացեալ պատանւոյն գրաւէ առ նմա զվերարկուն իշխանական, և գայ տրտում և տարակոյս ի տուն իւր, տժգոհելով զերախտեաց ծնողին և զվարժապետին, իբր թէ ընդունայն կորուսին զժամանակ իւր: Իրազեկ եղեալ հօր նորա՝ տայ նմա զակն ինչ պատուական, և ասէ զնել զկանաչի ի պարտիգաց քաղաքին: Պարտիգպանն ո՛չ զյարգ ականն ճանաչէ, և ո՛չ կանաչիս քաղէ նմա: Ամօթալից դառնայ պատանին, և վերստին տրտունջ բառնայ զծնողէն: Ի վաղիւ անդր առաքէ զնա նովին ակամբ հանդերձ առ ակնավաճառ արքունեացն, որ ի զարմացումն համբակին՝ տայ նմա զմեծ գումար գանձուց փոխանակ ականն՝ և զնէ գայն: Ուրախ դառնայ պատանին և պարծի ընդ յաջողուած իւր, և հայր նորա մեկնէ նմա զիմաստ մտաց իւրոց, թէ «ակն պատուական ուսումնդ քո է, գոր պարտիս յարաժամ ի գործ դնել, և առաջի այնոցիկ՝ որոց գիտիցեն զյարգ նորա: Ապա թէ ո՛չ՝ որպէս բաղանէպանին ճառ, նոյնպէս և պարտիգպանին գոհար՝ միօրինակ անարգքն են»: «Դու միայն ուսանել ջանա՛,- ասաց,- և ոչ բնաւ փոշիմանիս»: Իրաւ որ այնպէս եղև, զի յաւուր միում, իբրև սեղանն զուարճանայր, և Ձոհրապ առ ամենայն

աւաջին տաղից հնչեցուցանէր զքսակ ոսկոյ՝ յառաջ կոչեալ և զիս ինքն ասաց. «Խօխա՛, մոյն տաղ ասա՛»: «Ձայն չունիմ», - պատասխանի ետու նմա լալագնեալ աչօք: Դարձուցեալ նորա զբան իւր առ Հայրապետն սուրբ՝ ասաց. «Ատա՛ լիա յեախարոյ շօռ օնեմ, հա՛յր սուրբ, ինչ՞ բերելաս էս խօխէս բա՛»: Պատասխանեաց նա, թէ անպիտան գոք չունէր ընդ իւր, այլ զգալի իմն թուացողութեամբ: Եւ ի վաղուի առաւօտուն կոչեալ զիս զառաջեալ, ասաց. «Գնա՛, գրեա՛ զքարոզ մի ի վերայ դատաւորի կիրակէին, և բե՛ր այսր»: «Աւուրք քառասնորդական պահոցն էին, և ես յօժարակամ յանձն առեալ՝ օգնականութեամբ Աստուածաշունչ Սուրբ Գրոց միայն՝ յօրինեցի զայն: Յայ՛սմ իսկ երեկոյի,- ասէ,- պարտիս ասել զայդ ի բեմին եկեղեցոյ, այլ չվախիս»: Օտար իմն էր այս հրաման ի հասարակ սովորութենէ Ազգիս մերոյ, այլ զի հրաման Հայրապետի էր, պարտ էր ինձ հնազանդել: Յերեկոյեան ժամուն տարան զիս յաւանդատուն եկեղեցոյն, զգեցուցին շապիկ պայծառ յոյժ, զուրար զուսովք իմովք արկին, և քօղ զլանջօք իմովք ձգեալ, զԱւետարանն սուրբ ի գիկս եղին: Յաւարտել աղօթիցն առեալ ածին զիս առաջեալ աթոռոյ Հայրապետին, զորոյ զաջն համբուրեցի, առ ի նշան թողութեան նորա: Այս նորաձև երևոյթ իմ, հարկիւ մղէր զնորասիրութիւն ժողովրդեանն տեսանել թէ յի՞նչ էլք իրացն վճարիցին: Ելի ի սեղան անդր, և սկսայ քարոզել: Զկնի ժամուն հրաւիրեցայ ի տուն Թառումեանց, ուր յետ յարգանաց և պատուական ընծայից նոցա՝ որ առաւելոյր յոյժ քան զտարեկան շահ ձայնից եղբարց իմոց՝ հարցցիս Զոհրապ, եթէ ուստի՞ իցեմ ես, կամ որո՞յ որդի: Պատասխանեցի՝ Երևանցի Թաղիդեանց Դաւթի որդի: «Արդարև Թաղիդեանց Դաւթի որդի՞ իցես դու», - կրկնեաց Զոհրապ զարմանօք. և յետ զայո՛ն լսելոյ, սյսաւ պատմել թէ՛ «յաւուրս հալածանաց Մահմադ խան սարդարին Երևանայ, այն ինչ աշխարհ ամենայն յերկիւղէ բռնաւորին թշնամիք ինձ երևեցուցանէին զանձինս, երես թեքեցի ի տուն Դաւթի Թաղիդեանց. և Աննա մայր նորա զաւուրս երիս բովանդակ յարկեղ իւրում գաղեալ պահեաց զիս, մինչև դադարեցան խնդրակքն անձին իմոյ, և ապա տուեալ ինձ և զծախս ճանապարհի՝ արձակեաց ի բաց՝ զանխուլ ի մարդկանէ: Բարերարութիւն ո՛չ կորնչի երբէք: Ե՛կ օն սիրելիդ իմ», - ասաց, և կալեալ համբուրեաց զիս: Այնուհետև եղէ ես իբրև մի յորդոց նոցա, և սաստկացաւ սնափառութիւն իմ անդր քան զարժան:

Ամօթ է ինձ զանցելոց խօսել, ուր հասակ՝ աստիճան և բաղտ՝ թև ի թև տուեալ, առարկայ առնէին զիս ո՛չ միայն խնամոց և զթութեան մեծաւորաց

իմոց, այլ և յատուկ իմն սիրոյ և խանդադատանաց սիրուն հայուհեաց տեղոյն: Միրապատում առասպելաց գտեղի ունէին անցք հրաշալւոյն,- եթէ սուկ անցք կոչել արժան իցէ զանանցանելին ի մտաց իմոց՝ զառաջին հանդիպումնն, զգրաւորական համապատասխանութիւն, զանմեղ կաթոնութիւն, զաղի արտասուս, ընդ ուխտ և երդմունս սիրոյ, զոր փոխադարձ հաւանութեամբ իրար տուաք և առաք: Փոքր մի ևս, և ահա՛ փոխէր բովանդակ վիճակ կենաց իմոց յայլ իմն եղանակ՝ եթէ չէր հարկին բռնացեալ ի վերայ մեր, և բաժանեալ մինչ ի սպառ:

Կալ և կապ՝ որպէս և էին, կացին հանգամանք Հայրապետիս մերոյ ընդ ձմեռն ողջոյն: Վասն զի, որպէս և գրեցաքն, արգելեալ էր տէրութիւն Ռուսաց առնել նորա ինչ յիրում սահմանի: Առ այս գրեան բազում արար նա առ Ներսէս արքեպիսկոպոս Հայոց Վրաստանի, ջանալ հորդել զճանապարհ, այլ ի դերն ելանել և ամենայն ջանից նորա, գրեաց մի անգամ և երկիցս ինքնին դիմել զալ ի Շուշի, զի խորհեացեն թէ զի՞նչ առնել արժան իցէ վասն ազատութեան Աթոռոյն Հայաստանեայց ի ծանր՝ լծոյ անտի պարտուց և հարկապահանջութեանց: Գիր ի գիր առաւելեալ երթայր և գայր հանապազօր, այլ գալուստ նորա ո՛չ ժամանէր զվախճան ամսեան Փետրվարի 1822: Անճարացեալ Հայրապետին գրեաց զհրաժարական իւր առ Աղէքսանդր Առաջին՝ կայսրն Ռուսաց, ի 15 նմիմ ամսոյ և ընտրեաց զԱնտոն եպիսկոպոս Մուղնեցի, և զՅովհաննէս վարդապետ Ղրիմեցի, գնալ ի Տփղիս, և յորդորել զարհին Ներսէս ի հնագանդութիւն հրաւիրանաց Հայրապետին: Ի պատրաստիլ նոցա յերթալ, Առաքել սարկաւազ Անտոնի եպիսկոպոսի՝ որոյ գրեթէ յատուկ էր ոգի տրտնջանաց և տժգոհութեան, սկսաւ յայտնի դժկամակ լինել ամենայն ակնարկութեանց եպիսկոպոսի իւրում: Այր անհամբեր Անտոն եպիսկոպոս՝ հրամայեաց նմա դադարել և կալ որպէս և կամեր, և զիս ինքն փոխանակ առեալ նորա՝ ել ի Շուշոյ, և եկեալ ի Խնածախ գիւղ Հայոց՝ ի ներքոյ լերանցն Գանձասարայ՝ ագաւ անդ զայն գիշեր:

Ընդ ճանապարհ լեռնային և անտառախիտ՝ թրթնջակ և ողին ուտելով՝ զի գարուն էր, հասաք ի Ծիրանաքար, զոր հասարակօրէն Մելիք Վանոյ գիւղ ասէին, ի գաւառին Խաչենոյ, և իջաք ի տան նորուն իսկ մելիք Վանոյ, առն բարեպաշտի և երկիւղածի յԱստուծէյ, բայց և հզօրին ի պատերազմի: Լոկ անուն սորա դողացուցանէր զշրջակայ ազգս, մինչև անգամ և զլեռնականս Կովկասու: Երկիր նորա առատ էր հացիւ և մեղերբ. երկվարք նորա ընտիրք, և բնակիչք ամենայն Հայք հզօրք և տիրասէրք յո՛յժ: Աստի էր մեծա-

նուն հայ աստղն Ալավերտի, կոյր երկոքումբք աչօք, այլ լուսաւոր յոյժ երևակայութեամբն, որ ի հանդիսի ուրեք Թուրքաց ի վեճ մտեալ ընդ մեծի հայ քերթողին Քելիշ օղլի կոչեցելոյ, և ըղձիւ յաղթանակ կանգնելոյ ի վերայ անպարտելի ախոյեանին՝ յետին ամբարշտութեամբ զկողմն էառ զդենի նոցա, որով ի հարկէ՝ ըստ քմաց բազմականին գեր ի վերոյ հանդիսացաւ Ռոդոյն երիցու, որ ըստ արժանի անուանակոչութեան իւրում նուագեաց զԵհովահ ի փառս աքանչելոյն: Այս գիւղ ընդ մէջ անկանի Գանձասարայ և Գետկայ վանից, ունի աւերակ ամրոցի մեծի ի գլուխ հիւսիսակողման լերին, բերէ երիվարս ազնիւս և ցորեան առատ:

Անցաք ընդ Թարթառ գետ ի Դիզա, գիւղ մեծ մէլիք Յովսէփայ մէլիք Փրիդոնեան մէլիք Բեկլարեանց, որոյ մի եղբայրն Շամիր անուն թարգման էր դեսպանութեան Ռուսաց ի Պարս, և յետոյ տեղակալ կայսրութեան և հազարապետ եղեալ՝ պսակեցաւ պէսպէս կայսերական նշանօք. և միւսն՝ Դաւիթ, որ ընդ Վրթանիսի եպիսկոպոսի նուիրակին Էջմիածնի գնացեալ ի Հնդիկս՝ քաղցրութեամբ հազագին ազգի ազգի կատարելութեամբ մսացն, որպէս և ազնուութեամբ արեան՝ մեծանուն հանդիսացաւ, և ամուսնացեալ ընդ այրոյ ուրումն հարստի՝ առանձնացեալ բնակեցաւ ի Դաքա: Իսկ Թալին և Թալիշ եղբարք նորա՝ դեռ մանկունք էին հասակաւ: Այս գիւղ իբրև չորիւք հրասախօք յարևմտից անկանի գետոյն Թարթառայ, որ բուռն ընթանալով ընդ գառ ի վայր դաշտին Խաչենոյ՝ անկանի ի Կուր: Դիզա է դրիւք դաշտային, օդ նորա ջերմ, բերէ զամենայն ազգս արմտեաց, և զորիզ և զբամբակ, ուստի և լի է մոծակօք:

Ի գեղջէ աստի Դիզափայտ անուն կոչի և մեծի հարաւակողման լերինն՝ որ երկայնեալ յԱրձախայ միագօտի ընթանայ յարևելից յարևմուտս՝ և միանայ ընդ Արմաղ լերին, ի ծոցս և ի ծորակս իւր ունելով հովասուն գիւղօրէս Հայոց: Երևելին յէ Գուլստան, իբրև ինն մղոնօք ի վերուստ Դիզայ, ուրանօր յամի տեառն 1813 փակեցաւ դաշն խաղաղութեան ի մէջ Ռուսաց և Պարսից: Գաւառն բովանդակ կալուած էր անխախտ ժառանգութեան Մէլիք Յովսէփայ Փրիդոնեան և եղբարց, որ կարէր հանել ըստ հարկին՝ ձիաւորս հինգ հազար ի պատերազմ, ողջ Հայս՝ արիս և քաջամարտիկս:

Դիզայ անկանի ի հիւսիսոյ Դիզափայրի՝ ի տափարակ դաշտավայրի, զմիջով անցանելով գետակին՝ որ խոխոջուն գայ իջանէ ի Գուլստանայ: Թարթառ յարևելից անցանէ, և Կուր գետ ի հիւսիսոյ, որոց ամենահամ և պատուական ձկունք հանապազորդեան զարդք են սեղանոյ մեծամեծաց և

փոքրկանց: Այս ընտիր և գետառատ դաշտավայր մացառացեալ մոշայիւք և այլ և այլ խառնուբնդոր բուսականօք՝ ո՛չ յայլ պէտս մշակէր՝ քան թէ յարօտ հօտից և հօրանաց նոցա: Տոնիր նորա՝ մի միայն, բայց և գորիզ՝ ցորեան և զայլ արմտիս բերէ: Աշխարհ շերամոց լինէր, և արուեստարան մեծ լեղակի և շաքարի՝ եթէ միտ եղեալ էր բնակչաց:

Տուն Մելիք Յովսէփայ անկանէր ի միջավայր քառառոջ ճանապարհին, ընդ որ երթնեկս առնէին կարաւանք ի Տփղեաց յԱրցախ, և ի Հայոց յԱղուանս: Անմարթ էր ումեք անցանել առանց սեղանոյ հիւրասէր տան այսմիկ, առօրին երկու եզինք և չորս կամ հինգ ոչխարք զենուին անդ՝ ի կերակուր անցաւորաց, բաց ի ձկանց և յորսոց անտի՝ զորս յաջողակք ի ժողովրդոցն անդադար կրէին ի ներքս:

Աստ կացաք զաւուրս երիս, և աստ ուրեմն ծանուցայ արժանապատիւ տիկնոջ Փրիդոնի Բեկլարեանց, որ թէպէտն անկարօտ յամենայնի՝ և չորեքին ծառացեալ պայծառացեալ որդիք իւր շուրջ զիւրեաւ՝ տակաւին առաջին տիրացու զիս տեսանելով ի տարագ վանականութեան՝ կոչեաց առ ինքն, և ընդ առաջին տեսն՝ «որքա՛ն նման է որդւոյ իմոյ, ա՛հ, Դաւիթ՝ Դաւիթ, որդեա՛կ», - ասաց, և արտասուեաց: Անծանօթ մայրենի խանդաղատանաց նորա՝ և որդւոյն իսկ գլխովին, ասացի. «Նանի՛, իմ անուն Դաւիթ չէ, այլ Մեսրովբ՝ Դաւթի՛ որդի»: Որք շուրջն կային՝ զծաղու հարան, ժպտաց և տիկինն ծանրամեստ և խնդրեաց յԱնտօնէ եպիսկոպոսէ թողուլ զիս անդր՝ ցվերադարձ իւր ի Տփղեաց: Բայց արհին՝ որ յիս միայնակ ունէր գտիրացու, զգրագիր զսպասաւոր, զձիապան, և զբեռնաբարձ անվարձ, հարկի՛ւ ո՛չ զիջանէր ի պաղատանս նորա:

Աստի ելաք ի Գանջայ, որ ի հնումն Գանձակ, երբեմն Հայոց՝ և երբեմն Աղուանից. կարդացեալ շահաստան. սակս ստէպ փոփոխելոյ դարձադարձ իշխանութեանն ի նմա: Պուղան յամի Տեառն 1088 էառ զայս քաղաք, որ եկաց ի ձեռս նոցա ց1200: Կործանեցաւ յերկրաշարժէ ի 1140, և յաւուրս Էլիսաւէտ կայսերուհւոյ՝ առին Ռուսք, և անուն կարդացին նմա Էլիսաւէտուպօլ: Ոչ ուրեք այնքան դժնեայ գտան Պարսիկք առ Հայս՝ ի քան ի քաղաքի այսմիկ, որ կառուցեալ է ի վերայ Բերբէ՛ր գետոյ, բուն քաղաքն Քիլիսաքեանդ կոչեցեալ՝ յարևելից անկանի գետոյս. ունի եկեղեցի մի, պարապատեալ պարտիզօք և գեղեցիկ մենարանօք, ուր նստէր յաջորդ քաղաքիս: Իսկ նոր թաղն Նորաշէն անուանեալ՝ յարևմտից անկանի գետոյն, որոյ բնակիչք են ըստ մեծի մասին գաղթեալքն ի Գեղամայ և ի Կոտայից. ունին եկեղեցի և

սոքա, վաճառանոց պատշաճեալ ինքեան, և բերդ ի հիւսիսոյ յարևմտից կողմանէ՝ բայց խարխուլ: Շրջապատք բերդիս են աւերակք հնոյ իրիք քաղաքի, լի խորախոր գրօք և խորովեօք, գորս փորեցին: Ռուսք և այլք ի խնդիր գանձուցն գաղելոց ի նոսա: Օդ քաղաքիս ջերմ է յոյժ և վնասակար արանց, այլ օգտակար կանանց նոցա, զի արք ի հասարակի խօսելով՝ վտիտք են և անգեղեայք, իսկ կանայք ընդ հակառակն՝ առոյգ են գեղեցիկք, որք և երկրորդ դասին գեղուհեացն Վրաստանի առ քերթոդս աշխարհին:

«Գուռջիստան գիւզելի,

Գանջայ մարալի»,

որ է ասել՝

Վրաստանեաց աչագեղն,

Եւ Գանձակայ գովեմ զեղն:

Առատ է Գանձակ ի բերս, այլ նուռն ընտիր, և տորոնն մի միայն: Ձկունք Կուրայ և Բերբերայ հանապագորդեան կերակուր բնակչաց նորա: Ի բազմաթիւ հաւուց վայրենեաց նորա անուանի է Դուրաջ՝ որ է թոչուն ըստ մեծութեան կաքաւու, սրաթոիչ. գոյն փետրոց նորա խայտաբղետ ի հրագոյն, դեղնագոյն և գորշ, ձայն նորա համեղ, որ նստեալ յոստս ծառոց ողորմագին կարկաչէ որ լսողաց ասել թուի.

Հա՛յ մանի՛ թութտիլար,

Շի՛շ, քաբաբ՛ էթտիլար.

որ է ասել՝

Վա՛յ վա՛յ, զի՛ս ն՛րսացին,

Խո՛րովու՛ շա՛մփրե՛ցին,

վասն զի բաց ի խորովածոյ, որ համեղագոյնն է, յոչ ինչ այլ հանդերձի միս սորա: Խաշածն անպիտան է:

Գտի աստ զՄարգարիտ հօրաքոյր իմ, կին հսկայիրան, որ ամուսնացեալ ընդ Ալաւերսուոյ ուրումն Առնջեցւոյ՝ ի Կոտայից Այրարատեան նահանգին՝ ընդ գաղթականս աշխարհին եկեալ բնակէր ի Նորաշէն Գանձակայ: Սա երեքտասաներորդ ծնունդ ի մի միայն դուստր հանույ իմոյ՝ ապրէր տակաւին ի տալ ինձ զանուանս և զարարս երկոտասանեսին եղբարց իւրոց: Ելաց յոյժ ընդ առաջին տեսն, և համբուրիք սրբովք ընկալաւ ընդ յարկաւ իւրով: Ծերունի այր նորա ճշմարիտ պատկեր հեզութեան և բարեպաշտութեան ունէր միայն դստրիկ, ամեննին գեղեցիկ՝ Մարիամ անուն, նորոգ խօսեցեալ առն, որ ընդ ծնողաց միահաղոյն, և ընդ վաղեմի ծանօթից նախ-

նեաց իմոց, մաքուր ընտանութեամբ և ճշմարիտ բարեկամութեամբ մխիթարեցին զիս անդր քան զոր ինձ գրել հնարին:

Աստ կացեալ զաւուրս ինչ, խորհրդով Խաչատրոյ վարդապետի Քարծն կոչեցելոյ (որ յետոյ արքեպիսկոպոս և նուիրակ Սրբոյ Էջմիածնի ի Հնդիկս), գրեաց Անտոն եպիսկոպոս թուղթ աղաչանաց առ Ներսէս արքեպիսկոպոս, և ինքն ելեալ անտի՝ խաղաց գնաց ի Շամքոր: Որ ի հնումն քաղաք շինեալ ի Շարիթայ որդոյ Ջաբուխայ, իսկ այժմ գետը ինչ Հայոց՝ յարևմտից կողմանէ գետոյն: Ի մեջ աւերակացն կառուցեալ, յորոց միջի ամպածայր տնկի աշտարակ իմն, իբր 189 կանգնոց բարձրութեամբ՝ զոր Վիրք Անդում երկրի անուանեն: Ընդ ոլորտապտոյտ սանդուղս նորա ի ներքուստ ի վեր ելեալ՝ յանդիման աչաց տեսի զԿուր գետ ի հիւսիսոյ, զԳանձակ յարևելից՝ 8 փարսախօք տարակաց ի նմանէ, զՇամշադին՝ ի հարաւոյ, և զամենայն Տաշրատափն մինչև ի կամուրջն Սողանալուայ:

Աստ նստէր Գեորգ ոմն յազգէս Հայոց, պաշտօնատար սուրհարանի թղթատարութեան տէրութիւն Ռուսաց, առ որում և մեք զիջերօթս արարաք:

Յարուցեալ ընդ առաւօտն՝ փոխեցաք զընթացս մեր դէպ ի հարաւ յարևմտից, փոխանակ ուղիղ ընդ արևմուտս ընթանալոյ, և եկաք ի Շամշադին, որ այն ինքն է Շամշոդէ նախնեաց՝ ի Տաշիրն գաւառի, որ ի հարաւոյ ունի զԳեղամ գաւառ Սիւնեաց, ի հիւսիսոյ զՇամքոր, յարևելից զԱրցախ և զՌուտիս, իսկ յարևմտից զղաշտն Գագայ, որ այժմ Ղազախ ասի: Շամշոդէ՝ երեքնետ կոչի ի լեզուն Վրաց. ի հնումն կոչէր Օրբէթ. անառիկ ամրոց շինեալ ի Քարթլոսէ երբորէն Հայկայ նախահօր Ազգի մերում, ի վերայ Արմազ լերին: Այժմ նստէր անդ Գրիգոր անթեմ եպիսկոպոս ի նմին գեղջէ, որ ի սակս կերակրելոյ զգօրս Ռուսաց, և վասն պէսպէս օգնականութեանցն մատուցելոց նոցա յառման Գանձակայ և այլոց՝ ասպետացեալ շքով ի կայսերէ նոցա, թոշական որ յարքունուստ՝ շատանայր: Կացաք առ սմա զաւուրս հնգետասան ակնկալեալ գալստեան անձին, կամ պատասխանոյ գրութեան Ներսիսի: Այլ ո՛չ զայս գտեալ և ո՛չ զայն՝ ելաք և ընդ ճանապարհ Սողանլուայ և եկաք ի Տիֆլիս, քաղաք կառուցեալ ի ձորամիջի, ընդ որ Կուր գետ անցանէ ի հիւսիսոյ ընդ հարաւ: Յարևմտից է լեառն Ծմինդայ, իսկ յարևելից՝ Հալուաբարու լերինք: Ունի բերդս երկու, մի ի Հալուաբար վիմաշէն և գեղեցիկ, յորում է եկեղեցին Վարդանուշայ՝ դստեր մեծին Վարդանայ մերոյ, որ վասն գողտրութեանն՝ կոչեցաւ Շուշան, և բանտն: Իսկ միւսն է ի Տափիթաղ՝ մերձ ի ջերմուկս նորա: Եկեղեցիք ազգիս մերոյ՝ 13, յորոց ի մին՝

վանք անուանեալ՝ ի վերայ գետոյն, նստեր Ներսէս առաջնորդ: Եկեղեցիք Վրաց և Ռուսաց ութն, և պապականացն՝ մի: Տափիթաղ յարևմտից կամ Կուր գետոյ, ուր են ապարանք կուսակալին, դատարանք Ռուսաց, վաճառանոցն, և բազմութիւն տանց Հայոց, զի և անունն հայերէն ցուցանէ զբնակչաց զինչութիւն: 1200 տունք Հայոց են աստ, իսկ Վրացն՝ 400: Մերձ առ վանքն մեր կառոյց Ներսէս արքեպիսկոպոս զՆերսիսեանն անուանեալ ուսումնարան՝ քառալեզու դպրութեանց, և ծաղկեցոյց ի նմա զուսումնականութիւնն յոյժ յոյժ: Յառաջ քան Ներսէս, Հայք առհասարակ խօսէին վրացերէն, և չէր՝ որ գիտէր զլեզու Ազգին, իսկ յետ գնալոյ նորա անդր, և ծաղկեցուցանելոյ զուսումն Ազգին՝ նաև Վիրք ուսան խօսել հայերէն: Հալուաբար յարևելից կայ Կուր գետոյ, ունի իւր բերդ և վաճառանոց ի բարձրաւանդակին. տունք Հայոց են անդ 175, ըստ մեծի մասին գաղթականք յԱյրարատեան նահանգէ: Արտաքոյ սորա է գերեզմանատուն Հայոց, և ի նմա եկեղեցի քարաշէն:

Ի ներքոյ Հալուաբարայ առ եզերք Կուրայ՝ է Կուկիա, որոյ բնակիչք են Վիրք և Գերմանացիք, որք և ունին զեկեղեցի գեղեցիկ:

Ռուսք յաւէտ նենգութեամբ և ուխտագանցութեամբք առին զայս քաղաք՝ ապաստանեալն ի պաշտպանութիւն իւրեանց, քան զինու զօրութեամբ իւրեանց: Ուստի և հետ զհետէ ջանացան անհետ առնել զազգատոհմ նախնի իշխանութեան նորա: Կալան զամենայն արքայագունս Վրաց, և առեալ տարան զնոսա ի խորին Ռուսաստան, ուր հոգեմաշ կորեան նոքա: Աղէքսանդրոս որդի Հերակլեայ փախուցեալ անկաւ ի Պարս, ամուսնացաւ ընդ դստեր Մելիք Սահակայ Հայկագունոյ յԵրևան, և ծնաւ ի նմանէ զորդի մի՝ զոր յետ առնոյ Ռուսաց զԵրևան, անագորոյն խժութեամբ կորզեալ ի գրկաց անտի մօրն՝ տարան յԵւրոպա Ռուսիոյ: Իսկ Աղէքսանդրոս հայր նորա երթեալ յԱտրպատականս, և յարքայէն Պարսից ընկալեալ զԽոսրովա՝ աւան մեծ ի Սաղամաս, բնակի անդանօր՝ ապրեալ եկամտօք գեղջն: Բարձին մինչ ի սպառ և զկաթուղիկոսութիւն Վրաց, և այժմ հովուէ զեկեղեցի նոցա էքսարիսն առաքեալ ի սինհոդոսէն Ռուսաց:

Պատուականագոյնք են ջերմուկք քաղաքի, երկոքին ևս ստացուածք Հայոց. յորոց մին երևելի և հոյակապ բաղանիք, խմբեալ յամենայն աւուր յամենայն բազմութենէ՝ մանաւանդ ի գեղուհեաց քաղաքաին, առ ի մեծագոյն օգուտ դիմացն գեղեցկութեան՝ անուանի Մելիքէնց համամ, զի պատ-

կանի տան Մինիշկարեանց, որ և գմէլիքութեան քաղաքիս զպատիւ ունին ի հնուստ հետէ:

Ի վերջին ժամանակս նուագութեան թագաւորութեանն Վրաստանի՝ փոխանակ զեզի ազգասիրութեան բորբոքելոյ ի միջի իւրեանց, որով և յոտին կանգնելոյ զկործանեալ տէրութիւնն, սկսան իշխանք նոցա՝ որպէս նաև ի մերոցն իսկ ոմանք, գնոց գնել ի թագաւորէ իւրեանց զգիւղորէս աշխարհին բնակչօք նոցա, և հետ զհետէ խանգարելով զօրէնս և զիրաւունս քրիստոնէաբար առի և սրոյ, վատթարեցան վարել զնոսա առ հասարակ ի գերութիւն ստրկութեան հաճոյից իւրեանց: Այս ազգ գերեաց գնելոց համարիմ զամենայն գիւղորէս Վրաց, և որ առաւել ցաւելին է, նաև ոմանք ի հայաբնակացն, որոց տեարքն՝ պարնիք անուանին, և տիրուհիք՝ աղջիկ պարոնք: Պարոնք կամ աղջիկ պարոնք իրաւունս համարին ունել զանձինս, զընտանիս, զորդիս և զըստացուածս գիւղականաց իւրեանց՝ իբրև սեպհական ժառանգութիւնս անձանց: Հանեն զհարսն ի ծոցոյ փեսային, և վաճառեն ում և կամիցինն: Նոյնպէս զորդիս ի ծնողաց հատանեն: Գերին՝ զոր ինքեանք ճուրտ անուանեն, ո՛չ կարէ քահանայ կամ վանական լինել, եթէ ո՛չ նախ ազատեսցի դրամովք: Եթէ պարոն որ սիրիցէ զկոյս որ, կամ աղջիկ պարոնն, զպատանի որ ի ճուրտից անտի, չիք ինչ որ խափան արկանէ սիրոյն: Եթէ որ գնոյն ցանկութիւն ցանկացեալ, և կամիցի գնել կամ վարձել՝ կարէ, եթէ յփացեալ իցեն կողմանքն, զի չիք ամօթ ազնուականաց աշխարհին՝ կաւատանալ դրամոց: Իսկ տէրութիւն Ռուսաց, որ առաւել անմտադիր քան զնոսա, և ստրկութեան ազգի իւրեանց ջատագով, ի հարկէ՝ փոյթ անգամ չառնու այսօրիս անկարգութեան, ուստի և երկիրն հեծէ անողորմ, փառս մատուցանելով յաւետ տէրութեան Պարսից՝ քան քրիստոնէիցս այսոցիկ գերչաց:

Օղ տեղոյն լեռնային է, ուստի մաքուր և առողջարար: Բնակիչք նորա Հայք և Վիրք առ այլազգիս միահաղոյն Գուռջիս անուանեալ, հոչակաւոր են ի գեղկութիւնս մարմնոց իւրեանց. իրանք նոցա նոճօրէն աչեալք, հերքն թուխ, աչկունքն արեգակունք, մորթք սպիտակուկարմիր, միջկունքն բարակ, և լեզուք անուշախօսք՝ յօրինեն զնոսա ցանկալիս ամենայն ազգաց, մանաւանդ Պարսից և Օսմանեան մեծամեծաց, ուստի և ի վտանգի կան միշտ կեանք նոցա, թէ յառաջ քան՝ և թէ զկնի տէրութեան Ռուսաց: Վասն զի Լեզկիք, որք առ ոչինչ գրեն զամենայն երկիր՝ յափշտակեալ ամի ամի աղջկունս և պատանիս ի նոցանէ՝ կայտառս, տանին վաճառեն մեծագնի ի Թէհրան, ի Կոստանդնուպօլիս և ի շրջակայս նոցա: Գողտրկանք են յոյժ, և

նագաբնոյթք կանայք նոցա, որք թեպէտն ճարտարք յուսմունս գրոց և ի պէսպէս արուեստս կանացի ձեռակերտաց, սակայն և այնպէս՝ անձնասէրք են յոյժ, և գեղոյ իւրեանց անխնայ խնամատարք: Գրեա՛ թէ յամենայն աւուր ի ջերմուկսն լուանին, որ ի սակս խառնուրդս ինչ ունելոյ հանքային բաղադրութեանց՝ մեծապէս օգտէ փափկութեան մարմնոյ և պայծառութեան դիմաց: Վարշամակ ի գլուխ դնեն և ճակատանոց ասղարուր, զոր աստ կօտ կամ քամբարա կապեն բասպնդաւ. քոյ ի վերուստ ծաւալ ցծունկ արկանելով՝ երեսանին բաց: Պատմուճան՝ փորանկեալ, և գօտի խնձորակապ զմիջովքն՝ ծայրակախ:

Մնապարծք են յոյժ, և զարարս դուզնաքեայս իւրեանց գովութեամբ յօդս ամբառնան, զո՛ր փոխակ պատահեցաւ ի 1795 յաւուրս արշաւանաց Քերիմ խանին՝ Գօգոյ ուրումն Շաշեանց ասել ցմի ի զօրաց նորա՝ նա՛ դուր, նա՛ դուր, այսնինքն՝ ի՞նչ է, ի՞նչ է, զոր ցայսվայր գովութեամբ հրատարակեն ի լուր ամենայն մարդկան, յասելն. «Բարաքալլա՛, Շաշունց Գօգի, քրտին ասից՝ նա՛ դուր, նա՛ դուր»:

Բայց առաւել քան զառաւելն զարդասէրք են առհասարակ կանայք և մանկտի նոցա, միանգամայն, և տուեալ զանձինս արբեցութեան և խրախճանաց: Իցէ՛ որ ի նոցանէ ի վերջին կէտ տնանկութեան կամ աղքատութեան, տակաւին ջանայ որով և հնարին ինքեան՝ ունիլ պատրաստի զսարմի ազնիւ զգեստուց, որով պճնին յաւուրս կիրակեից կամ արքունի պրագնիկաց, որ այնինքն է՝ տօնից և տարեգլխոց յաղթութեանց նոցա. յերամակս յերամակս բաժանին, և առեալ ինքեանց գինի, գաւաթ, թմբուկս, և զորս միանգամ գտանեն ազգս ազգս նուագարանաց՝ ելանեն ի զբօսանս դաշտաց, ուտեն և ըմպեն, խաղան և խնդան, անզգայ յամենայն հոգոց: Ո՛չ տեսի ես քաղաք ուրախ քան զայս: Այնքան զուարճաբանք են բնակիչք սորա մինչ ի խնժիղ հեղձուցանել զունկնդիրս բանից իւրեանց: Փոխանակ ի կիրառնելոյ զերգս շարանակացն աստուածայնոց ի մարմնաւոր խրախճանս՝ յօրինեալ են առ այն պէսպէս նուագս ծաղրալիս, յորոց մին առ տիկ գինւոյն այսպէս սկսանի.

*Ուլ էիր և տիկ դարձար,
Տկահան չարչարվիցար.
Հալվաբրի դարի դուսին.
Տուինք մշակի ուսին:
Ո՛վ ո՛վ սուրբ տկճուր,*

Հուլիէր բաց մեզ ուղորմիա:

Երդմունք նոցա հասարակօրէն անմեղագոյնք են քան զայլ ամենայն նահանգաց և զաւառացն Հայաստանի. զի են՝ «Քու դէղին ումր», «Ապրի քոյ մայր», «Իս ապրիմ» և այլ այսպիսիք:

Տփղիս քաղաք չունի բերս բաւական բնակչաց իւրոց, այգեստանք նորա բերեն խաղող ազնիւ, և միրգս ազգի ազգիս, այլ ի Կախէթայ օր ըստ օրէ մտանեն այսր մերձ հարիւրաւոր սայլք զինոյ՝ բարձեալք ի տիկս գոմշոց: Ի Սալիանայ՝ նոյնչափ թուով սայլք ձկանց, որոց ծախք մեծ են յոյժ ի քաղաքի այսմիկ: Մատակարարէ և Կուր գետ զանազան տեսակս համեղ ձկանց: Առակաւ ասի, թէ Գալիանոս բժշկի մտեալ երբեմն և ի Տփղիս, և տեսեալ զանբաւ առատութիւն ձկանցն՝ ասաց. «Այս տեղի է շայեկան արուեստի իմում»: Բայց իբրն ետես և զմեծ եկամուտ զինոյ՝ ասաց, թէ՝ «Սոքա ինքնին գտին գղեղ իւրեանց», և մեկնեցաւ: Չիք ժողովուրդ ի համօրէն Հայաստան այնքան ձկնկեր և զինախում, որքան սոքա են: Շիրակուան մատուցանէ զիւր ցորեան, Երևան՝ զաղ, բրինձ, բամբակ, և չորապտուղս ամենատեսակս, իսկ Ռուսաստան՝ շաքար մաքուր և զամենայն ձեռակերտ վաճառս իւր: Արուեստն սկսանէր ծաղկել աստ, այլ դեռ տղայ գոլով ի խանձարրի կայր, և ես հազիւ թէ կարացի տեսանել զերեսս նորա:

Սովորութիւն իմն կայր ի քաղաքի այսմիկ վնասակար յոյժ, զոր վերացոյց տեր Ներսէս. զի յաւուրս կիրակեկից Յինանց ժողովեալ պատանեաց թաղից թաղից քաղաքին՝ մարտնչէին ընդ միմեանս, փայտեայ սուսերօք, մահակօք, պարսատեօք և այլ սոցին նման գործեօք՝ ուստի թո՛ղ թէ կէս քաղաքին միականի՝ պնջատ և գոնջատ լինէր, այլ և մահունք ևս ի տեղուջն պատահէին: Այժմ փոխանակ այսր՝ արշաւարան հաստատեցաւ, և պատանիք մեր ո՛չ սակաւ հմտութիւնս ցուցանէին յայնմիկ:

Ներսէս արքեպիսկոպոս սիրէր յոյժ զԱնտօն եպիսկոպոս, ուստի և մտերմաբար վարէր ընդ նմա, այն ինչ այլք ամենայն գողղանի հարկանէին ի նմանէ: Անդ յառաջին տեսութեան նորա յառաջ մատոյց և զիս ինքն ի համբոյր աջոյն սրբոյ: «Ով է սա»,- եհարց ցնա, և Անտօն եպիսկոպոս պատասխանեաց. «Ծառայ և որդի տերութեան Ձերոյ՝ Մեսրոպ, Գրագրին հաւատացեալ»: Տէր Ներսէս ընդ անուն Գրագրին քստմնեցաւ, զի ո՛չ սիրէր զնա, բայց յաւելուլ Անտօնի հօր զինէն բանս բարին՝ կոչեաց զիս վերստին, և ասէ. «Հա՛, Մեսրո՛ վր, լուեալ է իմ զքէն, այլ տարաբաղոտ գտար մինչ ցարդ, զի ամենայն աշակերտակիցք քո արժանացան շնորհաց մերոց, իսկ դու ո՛չ»:

Պատասխանի արարի. «Կեցցէ՛ միշտ տէրութիւն Ձեր, և ես վաշխիւ հանդերձ առից զիմն»: «Դեռ նոյն ես՝ Մեսրո՛վբ, որ ինչպէս և տեսի զքեզ, և ո՛չ փոխեցար ի բնութեան քում: Սիրեմ զանմեղ համարձակախօսութիւն քո զաայդ, և յաւէտ զվաշխելդ. ջանա՛ դու»: Կրկին դիմեցի ի համբոյր աջոյ նորա՝ և մեկնեցայ ի խուց մեր:

Անագան ուրեմն պատրաստեցաւ Ներսէս արքեպիսկոպոս ծանր կարաւանաւ, յորում էին Տէր Ստեփաննոս Վիճօ՝ այր ծերունի և զուարթախօս, Տէր Յարութիւն Ալամդարեան, Տէր Եսայի, Յովակիմ Կարապետեան՝ եղբորորդի իւր, Ասպետ, և Գեորգ քեռորդի, Գաբրիէլ, երկոտասան կայսիկ ձիաւորօք և ստորին ծառայիւք: Ինքն ընդ արհուոյն Անտօնի ել ի կառս քառաձիգ երիվարաց, և մեք ի ձի աշտանակեալ՝ ելաք ընդ նմա մինչև ի Շուշի, արքայավայել իմն մեծափառութեամբ զուղին ի դարձ հատանելով:

Այլ զճանապարհայն անխոհեմ ինչ արարի ես, որով ի մի հարուած յերկիր ի վայր տապալեցի մինչ ի սպառ՝ ո՛չ եթէ զշահ, այլ և զմայր գումար շնորհաց ազգային Բարերարին: Իբրև հասաք ի Շամքոր, և վաստակարէկ կարաւանն ի քուն քաղցրութեան լինէր, եմուտ յիս զիկասն անանդորրութեան: Խորհելով նորօրինակ պաշտօն ինչ հարկանել օրինակի խնարհութեան և հեզութեան Քրիստոսի հետևողին, յիս յանկուցի նախ զմիտս Գեորգայ սուրհարանապետի՝ պատրաստել ինձ ձիս երկու, և ապա գնացեալ առ տասնապետ կայսիկ ձիաւորացն՝ ասացի ընկերել ինձ զմի յիւրոցն ի Գանձակ, զի կարի ստիպաւ հասանել պարտ էր ինձ անդր: Ժամն անագանեալ էր, և արհիք մեր ննջեալ էին, վասն որոյ ո՛չ համարձակեցաւ տասնապետն ստուգել զիսկութիւն բանին, ուստի և քան զիս յիմարաբար՝ զիջաւ յիմար խնդրանաց իմոց: Ելաք զմիով ժամով զիշերոյն ընդ ճանապարհ՝ միանգամ և եթ գնացեալ, և կէս քուն՝ կէս արթուն՝ յառաջ վարեցեալ, հազար և մի տուայտանօք հազիւ հասաք ի քաղաքն ընդ լուսանալ առաւօտուն: Գնամ կամ առաջի Խաչատուր վարդապետի, և զանագան երեսանի շինելով՝ ծանր և լուրջ բարբառիմ: «Դեռ անհո՞գ կաս, հա՛յր, այնինչ յերեկ զօրն բոլոր և սերկեան զիշերս բովանդակ ի ձի աշտանակեալ գամ»: «Բարի գաս,- ասաց նա,- բայց ընդէ՞ր»: «Ընդէ՞ր. Ներսէս առաջնորդ գայ,- ասացի,- և ես յառաջագոյն առաքեցայ աւետիս տալ քաղաքիս, և քեզ՝ զի թափօրիւ ելջիք ընդ յառաջ նորա»:

Փորձանք այն եղև, զի և սա հաւատացեալ ինձ՝ գրեաց առ Ռոուս քաղաքապետ Գանձակայ, և հրամայեաց հնչեցուցանել զգանգակսն: Եւ ահա ամենայն բազմութիւն քաղաքին, զինուորութիւն բերդին, և ուխտ եկեղեցոյն

ի թափօր բոլորեցան, և ելին բազում մղոնօք ընդ յառաջ նորա: Մեծագոյն տարաբաղտութիւն այն էր, զի և արհիին Ներսէս ի մտի եղեալ էր բոլորովին լռելեայն մտանել ի քաղաքս այս, և ընդ տեսանել բազմութեան առաջաւորաց վշտացաւ յոյժ յոյժ: Յանդիմանեաց զԽաչատուր վարդապետ, և նա զինն արկ զվնասն արքունի: Իսկ ես՝ որ խոնջեալ ի վաստակեալ յոյժ, այլ դեռ ևս իբրև բարւոյ իմն ակնկալ՝ փոխեցի զձին, և ելի անձին վայելել զվարձն յիմարաց: Բարեացապարտ արհիին Անտօն՝ որ հեծեալ յերիվար գայր, նշմարեալ զիս ի հեռուստ՝ արշաւեաց առ իս, և ասէ. «Փախի՛ր, Մեսրոպ, փախի՛ր, յախտեա՛ն կորեար: Զի հոգևոր տէր բարկացեալ է յոյժ ընդ արարս քո»: Ո՛չ կարեմ ճիշդ ստորագրել աստանօր, թէ ո՞րպէս փախուցեալ՝ թողի զձին ի կամս իւր, և թաքուցեալ դօղեցայ ընդ մացառովք թզենեաց Նորաշինին: Երկեայ գնալ ի տուն հօրաքեռ իմոյ, զի մի՛ անդր գտցեն զիս խնդրակք, և զօր մի և զիշեր բովանդակ ահահար և դողահար մնացի, մինչև անագան ուրեմն քաղցն նեղեաց զիս, և ասացի ի միտս իմ. «Եթէ իմ խառնեալ ինէ զքաղաքս, ո՛չ երբէք պատեհ տայ վեհին զինէն խորհելոյ, ընդէ՞ր ապա սովամահ կորնչիցիմ: Բայց և այնպէս՝ դեռ ևս վանդապետ է նա, և ո՛վ գիտէ՝ և ինչստ ոմն: Կա՛ց ու կաս», - ասացի, և խորհելով զանփառասէր բնութենէ նորա՝ ննջեցայ: Զերկուս տիւս անսուաղ կացի ի փախստի և ի թաքստի իմում, և յաւուրն երրորդի՝ այնինչ բարեացապարտ Անտօն եպիսկոպոս նախաճաշէր ընդ նմա՝ յանկարծ յանդիման ելի, և ասացի. «Մեղա՛յ, այլ ևս ո՛չ արարից այնպէս»: Գթութեամբ բազմով ընկալաւ զիս՝ և ասաց. «Ի մէջ Պարսից և պարսկաշունչ փառասիրաց էլով, մանո՛ւկ դու, խաբիս և զիս զոք ի նոցանէ համարել, այլ փառք վանականաց խոնարհութիւն է»: «Բարի է», - ասելով ի միտս իմ, զլուիս իջուցի նմա՝ և մեկնեցայ յուտել:

Իբրև հասաք ի մերձակայս Շուշույ, խորհելով թէ մի՛ գուցէ խելագարիցիմ վերստին զխելագարութիւն Գանձակայ՝ կամովին մղոնաւ միով հետևակս կարաւանին գնացի, և իբրև հասի անդր՝ դեռ նոր զդրունս ասպնջականացն բաղիւտին ի մուտ, և սկսայ մոմոալ ի քիմս իմ, թէ՛ «Եւ այդ քեզ բաւական է»:

Էջ ի տան Թառումեանց, յորժամ մեծանուն բարեկարգիչ նորա՝ Մարկոս, ի վերջին կէտ կենացն խոնարհեալ հեծէր ի պատճառս ընդերկար և ցաւահին հիւանդութեան ոտնուռուցի: Վերջինք իշխանիս այսորիկ՝ բարի, առ ի խրատ զկնեաց արդարև պատմեալք: Վասն զի ի ծանրանալ հիւանդութեան նորա՝ թէթևանայր ոգին սրբասուն ի վերելս երկնից: Կոչէր կացուցանէր առ և մահճօք իւրովք զարս զրագէտս, թախանձէր ի նոցանէ ընթեռնուլ ի լուր

գԱւետարան փրկութեան իւրոյ: Ստեպ գաչս ի վեր ամբարձեալ՝ աղաղակէր. «Տէ՛ր Յիսուս». ստեպ աղօթս առնէր, ստեպ և զանձն յանձն առնոյր ի կամս Արարչի նորա: Իբրև յայտնի եղեն նմա հաճոյքն Աստուծոյ ի բառնալ զնա յերկրէն կենդանեաց, հրամայեաց իւրոցն ածել զառաջեաւ զմուրհակ պարտուց Էջմիածնի՝ իբրև 4000 ոսուց, կրկնապատիկ քան զայն՝ և մուրհականի այլևայլ մարդկան, և զուտ ոսկիս կրկին պարկօք մեծամեծօք: Ամբարձ զոտն ուռուցեալ, և եղ ի վերայ նոցա, և ասէ. «Անպիտան՝ դիրդ, ապաքինեանց եթէ կարող ինչ իցես, դու չաստուած մոլորութեան աշխարհի. ո՛չ, ո՛չ. այս ամենայն արտաքոյ է մտացածին զօրութեան քոյ, և Աստուծոյ իմոյ օրհնեալ եղիցին կամք՝ և ի հարկանելն և ի բժշկելն զիս»: Ապա առեալ դնէ իւրով ձեռօք զմուրհակ Էջմիածնի ի սկտեղ, և հրամայէ տանել նուիրել Հայրապետին. այնպէս առնէ և ընդ մուհակացն միահողոյն բերելոց, և երկուս պարկս ոսկուցն հրամայէ ողորմութիւն բաժանել աղքատաց: Զարհուրի Զոհրապ ողբայր նորա՝ յարարս նորա, այլ յանդիմանի ի նմանէ քաղցրութեամբ խրատուց նորա: Եւ այսպէս Յիսուս Քրիստոսի աւանդեալ զինքն և զտուն իւր՝ շնչէ զվերջին զիւր շունչ:

Չև էր տեսեալ իմ հանդէս յուղարկաւորութեան փառաւորագոյն քան զիշխանիս այսորիկ: Ծայրագոյն Կաթողիկոսն Հայոց՝ գրեթէ ամենայն մայրաքաղաքացի արքեպիսկոպոսօք, եպիսկոպոսօք, առաջնորդօք, վարդապետօք, քահանայիւք, սարկաւազօք, դպրօք և ամենայն ուխտիւք եկեղեցւոյն՝ ի միոյ կողմանէ, իշխանք Ադուանից և բովանդակ զինուորութիւնք Ռուսաց սևազգեացք, սևաղբօշք, սևանշանք, սևաձիք, շրջուն զինու, և զարդու իւրեանց՝ ի միւսոյ կողմանէ: Ամբոխ հասարակութեան յամենայն ազգաց զիրերօք խոնեալք, այլ ո՛չ առանց կարգի. և ո՞ արդեօք ստորագրել կարէ յայսքան ամաց հետէ զարարս և զարտասուս ընտանեաց և ճրագաց նորա: Թուէր իմն թէ Արտաշէս մեռանէր՝ Մեծն Արշակունի, և միայն հաւատն անարատ զդէմ ունէր համօրինակ հետևանացն: Ես Աստուծոյ խնամոց տամ զօրհաս նորա ի ժամանակին, ուր ամենայն ազգային միխթարութիւնք ներկայ գտան անդ, ապա թէ ո՛չ՝ ո՞ զիտե թէ զի՞նչ ինչ զհետ գային կսկծանաց և կրից սիրելեաց և սիրողաց նորա:

Հոգեսէր որքան և էին բնակիչք աշխարհին, և հոգևոր Տեառն իւրեանց սրտի մտօք մեծարութ, տակաւին քառապատիկ աւելի պատիւ եղին Մեծին Ներսիսի: Մի՛ զի համբաւ ազգասիրութեան նորա և մեծամեծ գործոցն՝ մղէր զամենայն ազգ իւր յայցելութիւն և յօրհնութիւնն ի նմանէ, և երկրորդ՝ զի պսակեալ էր ի կայսերէ, և բարեկամ Երմալովի կուսակալին յայսկոյս

Կովկասու եղեալ նահանգաց: Թո՛ղ զհոգևորականս ամենայն քաղաքաց և գաւառաց աշխարհին, և մարմնաւոր իշխանք նոցա և զօրութիւնք խոնարհեցան առաջի նորա, մինչև իշխան Մատաթով՝ Հայ, և Մէհդի խան՝ փոխ կուսակալ Ադուանից ևս:

Մարտիրոս արքեպիսկոպոս Սիւնեաց եկն դարձեալ ի Շուշի՝ երևելեօք հանդերձ: Մեծ էր սէր և մտերմութիւն նորա ընդ տեառն Ներսիսի. և յաւուր միում այնինչ ի տան Թառումեանց յառաջ մատեայ ի համբոյր աջոյ նորա՝ ակն յանդիման արհուոյն Հայոց Վրաստանեայց, կարի՝ պժգանօք իմն ասաց նա ցՄարտիրոս հոգևոր տէր Սիւնեաց. «Էրու՛ մ՛ ժողովեաց կուտեաց հոգևոր տէր մեր զայսքան անպիտան որեար, յորոց և ո՛չ մին երևի զոյ օգտակար մեզ»: Զարմանօք իմն դարձոյց առ նա Մարտիրոս արքեպիսկոպոս. «Տեսանե՛ս՝ ս զմանուկդ զայդ», - մատամբացի ցուցանելով նմա զիս: Ցցուեցան իսկոյն թաւ յօնքն, և իրոխտ յիս ականել սկսաւ, որպէս թէ զմտաւ անելով զանկատարութիւն իմ ի Գանձակ, և ընդ տեսուչն ի վեր հծծեաց՝ «Ը՛հ»: «Ը՛հ ի՞նչ տէր. փորձեցե՛ր զդա երբէք. քննեա՛ և տե՛ս թէ քանի՞ պիտանի լինի դա տէրութեան քում»: Հազի իմն պարզեալ զխոժոռութիւն հայեցուածոցն կոչեաց զիս առ ինքն՝ և առանց անոյշ ինչ յառաջաբանի կամ առարկութեան յանձնեաց ինձ զկոնդակն զոր գրէր, և ասաց. «Գնա՛ գրեա՛, տեսից»:

Թէպէտ հազար անգամ աւելի հաճութեամբ ընդունէի զիրաւեր նախաճաշուն, և բիր անգամ ախորժանօք ուտէի քան զծղծամ և զկացկամ ճաշակումն իւր, սակայն և այնպէս՝ առի, նստայ յանդիման, զաչս յաւէտ ի սեղանն կրթելով՝ քան ի թղթին՝ օրինակեցի և մատուցի իսկոյն, զի մի՛ գուցէ անմասն ելից ի սեղանոյն. Ընկալաւ՝ ետե՛ս, և փառք բարերար շնորհացն Աստոծոյ, զի հաւանեցա՛ւ ևս:

Ներսիսի՛ հաւան գործն մեծ իմն համարէր Ազգ մեր, և մարգարէութիւնս բազումս մարգարէանայր ինձ, ուստի և ես քանի կարացի՝ ջանացայ, և շահեցայ միայն զնախանձ եղբարց և զմախանս Յովսէփայ վարդապետի Կատկպանեան, որ յետոյ՝ կոչեցաւ «Վեհապետեան»:

Սա որդի էր Մատթէոսի Տէր Մարութեան՝ Կարբեցոյ, որ ի Ձորագիւղ Երևանայ. հայր նորա՝ կատկպան, այսինքն այգեպան, գրեթե բովանդակ տամբ իւրով՝ կէայր ի ներքոյ շնորհաց տան հօր իմոյ: Թէպէտ զուրկ էր ի գիտութենէ գրոց՝ այլ հմուտ գոլով ամենայն հնարից և հայթայթանաց՝ վերացաւ ի ստորին սպասաւորութենէ ի գանձապետութիւն Աթոռոյն, և իրօք յինքն կորզեաց զամենայն իշխանութիւն, մինչև տեղապահին զանուն և եթ թողուլ:

Մա՛ յաւէտ ի սակս գծտութեան իրիք եղելոյ ընդ մէջ իւր և գրագիր Յովհաննու եպիսկոպոսի (թեպէտն հազար անգամ խռովեալք և հաշտեալք ընդ միմեանս)՝ տակաւին ընդ ակամբ հայեր առ իս, և որքան կարեր՝ ի կարևորացն ստեպ գրկեր զիս: Այլ թո՛ղ բարիք առն միայն յիշեսցին, չարեաց օրինակ շատ կան:

Իսկ Հայրապետն ամենայն Հայոց և Տէր Ներսէս եպիսկոպոս, յետ կալոյ անդ զամիսս ինչ, և բազմիցս խորհելոյ և խօսելոյ ընդ իշխանս աշխարհին՝ ի վերայ անկեալ վիճակի Աթոռոյն Հայաստանեայց, ելին ի Շուշոյ յամի Տեառն 1822, և գնացին ի Գանձասար, որ էր ի Ժամանակին մայրաքաղաքական աթոռ առաջնորդին Աղուանից: Մարգիս արքեպիսկոպոս, երբեմն կաթողիկոս անունեալ, իսկ այժմ մայրաքաղաքացի՝ սիրով ընկալաւ զնոսս, և պահեաց զաւուրս հնգետասան: Հայրապետն իւրովք հանդարձ էջ ի վանսն, իսկ Ներսէս արքեպիսկոպոս իւրովք հանդերձ՝ վրան եհար ի ձորաբաշին արտաքոյ վանացն:

Իբրև պատրաստէր կարաւան մեր, և կաթողիկոսն բազմութեամբ այրուձիոյ ընդ ամբոցն ի վայր իջաներ, Ներսէս արքեպիսկոպոս և ես տակաւին գրեաք: Ժամ պատեհ առեալ գանձապետին՝ առնու զերիվար իմ, և տայ այլում: Իբրև ելաք, արհին Հայոց Վրաստանեայց պատրաստ եզիտ զերիվար իւր՝ և հեծաւ, իսկ ես մնացի անձի: Միանգամ և երկիցս զմտաւ ածի չհետևել կարաւանին, բայց յետոյ ընդ տիղմն հետևակ ընթացեալ՝ հասի. իբրև ետես զիս արհին մեծ, այսր անդր հայեցեալ՝ կոչեաց զեղբորորդի իւր զՅովակիմ ասպետ, հրամայեաց իջանել յերիվարէն, հեծուցանել զիս յայն, և ինքեան հետի գնալ: Ջայն տեսեալ գանձապետին՝ զալարեցան աղիքն. Մատոյց առաջի նորա զմի յետակաց հայրապետին՝ այլ նա ո՛չ հեծաւ՝ վասնորոյ բազում աղաչանօք հաճեցոյց զիս ինքն հեծանել ի նա, և տալ Յովակիմայ զձի իւր: Երիվարս ոսկեսար՝ ընծայ էր Մարգիս արքեպիսկոպոսի Աղուանից առ ծայրագոյն Հայրապետ ամենայն Հայոց. Քուռակ երեքամեան հրաշէկ նարնջի գունով զեղապատշաճ, բարձրահասակ, և անարատ գլխովին: Աշխոյժք՝ սերին և սննդեանն համեմատ: Ես միայն համարձակեցայ հեծանել ի նա, բայց և ի հեծանելս իմում, ո՛չ պակաս քան զԴատաքէն Արծրունի յօղապարկին Տիրանայ՝ երջանիկ զանձն համարեցայ քան զամենայն հեծեալս սրբագումար կարաւանին: Ջո՛րս յառաջուստ՝ խաճաներ, զորս ի յետուստ՝ արացէր, ի սանձելս՝ ոստնոյր և յարշաւանսն՝ զկայ առնուլ ո՛չ զիտեր վասնորոյ հրամայեցայ մեկուսի վարել, և ես զայդ իսկ կամեի՛, զի և ի

ձիավարժութեան փորձ հանդիսացայց: Ուր և հասանէի՝ զգոյշ լինէի աւետաւոր չլինել զգալատենէ կարաւանին սրբոյ, բայց և այնպէս զառաջին աւետչեայ ի մէրը և մածում, կամ ի սեր և կոզի՝ սիրով ընդունէի, և յագ ապրէի՝ այնինչ դանդաղք եղբարց իմոց սովալլուկ ձգտային ի վերայ ձիոց: Համեմատութեամբ նոցա՝ ես աշխարհ տեսեալ ոք էի, և հանգամանաց բնութեան և բարուց բնակչացն ծանօթ: Առանձնաշնորհութի՛ւնք արդարև, որ եթէ խորհրդով և հանճարով ի գործ եղեալ՝ շահէին ինձ զճշմարիտ մեծութիւնս: Բայց աւա՛ղ. որ միշտ յումպէտս և ի խաղս տղայականս վարեցի:

Աստանօր հրամանաւ Ներսիսի շրջեցայ ի մերձակայ վանորայս և օրինակեցի զամենայն նախնի արձանագրութիւնս աշխարհին, գտեալս յորմունս եկեղեցեաց, ի խաչաքարս, և ի վէմս ապառաժից. սկսեալ ի Գանձասարայ մինչև ի Հաղբատ և ի Սանահին, գորս և մատուցի նմա, առ իս պահելով զօրինակս նոցա՝ որք յետոյ կորեան:

Աստի եկաք ի Ծառաքար, կամ լաւ ևս՝ Ծիրանաքար՝ կալուած Մէլիք Վանոյ, կացաք անդ զաւուրս ութն, զորոյ և զընծայս պատարագացն ընկալեալ՝ երիվարս գեղեցիկս և զոսկիս՝ ընդ Եղիշէ առաքեալն, և ընդ Գետավանքն, որ ի հնումն Գետկայ վանք (զորոյ գտեղին բազմօք շփոթէ Ստորագիր Հայաստանին), եկաք ի Գիւլստան, կալուած իշխանութեան Մէլիք Յովսէփայ տեառն Դիզայ: Աստի դարձեալ գրեան արարին հարք մեր առ դուռն կայսրութեան Ռուսաց, վասն թոյլ տալոյ ինքեանց, զի ժողովեցեն զկամաւոր նուէրս Ազգին՝ յազատութիւն պարտուց հասարակաց Աթոռոյ սրբութեան նոցա: Կացին ամսօրեայ ժամանակաւ, և զի ձմեռն ի վերայ հասանէր, յուղի անկեալ եկին ի վանս Հաղբատայ, զի ի Տփղիս մտանել ո՛չ ներեցան:

ЗАКАВКАЗСКИЙ КРАЙ. ЗАЯВКИ О СЕЛЬСКОЙ И ОБЩЕСТВЕННОЙ ЖИЗНИ И ОТНОШЕНИЯХ ГОРОДОВ, ОБИТАЮЩИХ МЕЖДУ ЧЕРНЫМ И КАСПИЙСКИМ МОРЯМИ

Русские чиновники и жители сообщили мне, по приказанию Генерала Нейдгарта, множество сведений, собранных ими в подлежащих местах. В странах восточных, ближе к Каспийскому морю, я сам не был, но получил оттуда множество заметок, отчасти от трех спутников моих, посетивших тамошние страны. Особенно подробны эти заметки о Карабахской провинции, и я сообщаю их здесь, для сравнения с подробными о гурии и Армении, приведенными мною выше.

Ныне русская провинция Карабах¹, с смешанным народонаселением, состоящим преимущественно из армян и татар, составляли прежде Армянское княжество рода Абамелек, плативших дань Персии. В половине прошедшего столетия, владычество перешло к трем братьям, которые при первенстве старшего брата правили совокупно. По смерти первого, между оставшимися возникли раздоры, народ был недоволен и бунтовал, в особенности татары. Большая татарская деревня в горах избрала сельской главою Пана-Хан-Яспаша, неизвестного происхождения, и объявила себя независимую от армянских Князей (мелик). Окрестные деревни присоединились к первой, и власть Пана-Хана так усилилась, что ему удалось низвергнуть с престола армянский княжеский род. Таким образом, власть от армян перешла к

¹ Карабах настоящий Иран древней Персидской Монархии, даже новейшие восточные писатели называют его Аран, Аравитяне Ран. Это Эриана Цендских книг зороастра и, в следствие Вендидаца Эрисковедия (частый Иран) - первое населенное место на земле. Здесь было местопребывание древнейших персидских царей. Здесь задолго до зороастра жил первый законодатель Геэмо. Карабах составлял часть Эхриэмрно-Армении или Великого Ирана. Когда, во II столетии, Арзацид Вагарна вступил на престол Персии, он из части Карабаха образовал особое княжество Сезогов. Князья сначала подчинялись Армении, потом усилились и защищали свою независимость даже протов Калифов. Княжеский род именовался Гайгацин, потомки Гайка, родоначальника армян. Еще в 1722 году, потомок Гайгацци держался против персидских Сардаров Армении, в неприступных долинах Сиуник или Сизаган. См. Дюбуа К. II стр. 200. Карабахская земля очень плодородна, прибрежные долины Аракса превосходят плодородием своим все страны в мире. Карабах был местом рождения Рустана, Мамелюка Наполеона I. Карабах значит черный виноград

татарам, от христиан к мусульманам. Пана-Хан сумел удержать свою независимость и против Персии. Он построил Шушу и сделал ее столицей. По смерти Пана-Хана в 1790 году наследовал его сын Ибрагим-Хан, очень притесняемый персиянами. В 1794 году шах Ага-Могамед-Хан напрасно осадил Шушу, оттуда пошел в Тифлис и разрушил его, опять подошел к Шуше и, наконец, в 1796 году в третий раз. Ибрагим бежал, и шах занял город, но там его убили. Ибрагим возвратился в Шушу, но чувствуя себя слишком слабым против персиян, обратился к России и даже испросил у генерала князя Цицианова русский гарнизон. Непостоянный характер скоро отвратил его от русских и сделал доступным персидских интриг. К нему приехал посланник шаха и предложил ему руку дочери хана, для его старшего сына Джаффар Кули-Хана, еще очень молодого. Но сын не принял персидских предложений, не верил персиянам и держался России. Персидские интриги начали действовать свободнее: 80-летний Ибрагим совершенно им подчинился. Иначе действовал Джаффар, наследовавший от отца своего всю ненависть к персиянам. Он скрытно отправился к русскому коменданту Лисаневичу и уведомил его о случившемся. Собрали военный совет, в котором участвовал и Джаффар, решили арестовать Ибрагима и отвезти его в Россию. Джаффар просил, чтоб позволили ему сделать последнюю попытку на любовное убеждение деда, в случае неудачи, он вызывался схватить его. Так и случилось. Джаффар, Лисаневич и 50 человек солдат выехали ночью из цитадели и отправились в загородное жилище Ибрагима. Утром Джаффар вошел один к деду и на коленях упрашивал его отказаться от союза с персиянами, которые искали гибели его и всего рода и от которых нечего более ожидать, кроме козней и постоянной опасности жизни и имущества. Старик остался непоколебимым и тогда Джаффар схватил его, вынес на лошадь и привез к Лисаневичу, который тут же отправил его в Россию. Теперь рождается вопрос: кому следовало вступить на престол? Большею правдою, без сомнения, имел Джаффар, который притом всегда выказывался верным другом России. Но смелый, предприимчивый юноша на престоле, казался военному начальству слишком опасным. Оно провозгласило владетельным князем второго сына Ибрагима Мехти-Кули-Хана. Это происходило в 1806 году. Джаффару было тогда 15 лет. В гневе своем, он собрал всю свою дворню (нукар) с обнаженною саблею выскакал из Шуши, прорезал себе путь через

русский отряд и скрылся в Персии. Но и там ему не понравилось и, в следствии приглашения России, он возвратился в Шушу, где восстановлен во владении всеми имениями. Между тем, Мехти-Кули-Хан, притеснениями и слабостью характера, возбудил общую ненависть. Против него стали интриговать, уверяли в опасности его жизни, так что он в 1822 году бежал в Персию и сделался одним из главных зачинщиков русско-персидской войны. Персияне, без предварительного объявления о нарушении мира, вступили в 1826 году в числе 40,000 человек в Карабахе окружили в горах русский батальон, изрубили его, после геройской защиты и приступили к осаде Шуши, но русский гарнизон, состоявший только из 350 человек, защищался с таким упорством, что после трехмесячной осады, персияне должны были отступить. Во все это время Джаффар оставался спокойным. Однако, в предложение войны, он на год был отправлен в Симбирск, а потом, на 4 года, в Санкт-Петербург. Государь Император принял его весьма ласково, пожаловал в генералы и назначил ему 24,000 рублей ассиг. ежегодного дохода. В последствии он опять переселился в Шушу, где жил, в бытность мою на Кавказе.

Спутник мой, г. Адеркас, представлялся ему в Шуше и был приглашен им к чаю. Он застал странную смесь восточной и европейских обычаев и образ жизни. Снаружи дом ничем не отличался от прочих домов богатых татар в Шуше, но внутри была зала, убранная со всем европейским комфортом. На стенах были зеркала, у потолка люстра, у стены стояла щегольская красного дерева мебель, диваны, кресла, столы, стулья, стены было покрыты обоями, украшены картинами, одним словом, все предметы европейского удобства и роскоши. Джаффар, в русском генеральском мундире, со многими орденами, принял гостей своих-г. Адеркаса и других европейцев по европейскому обычаю. Он красивый, статный мужчина, с благородною и привлекательною физиономией, гордою осанкою и теперь еще необыкновенной силы. Они сели за черный стол, явились и восточные домашние и гости, которые, по своему обычаю, расселись, поджавши ноги, на диване у стены, курили трубки, пили чай и, в разговоре участвовали только в случае обращенного к ним вопроса. Между ними был и Мирза-Чамиль, прежний министр Ибрагима, давший ему совет искать помощи русских. Слуги в европейских ливреях подавали чай, пирожное, варенье, пунш, шербет и мороженное. Другие слуги были в татарской и черкесской одежде. Драгоценные венские часы с музыкой

играли увертюру из Фенелы. У Джаффара богатый гарем и множество детей, чего гости, однако, не заметили.

По окончании войны, вследствие ходатайства генерала Паскевича, и дяди Джаффара, бежавшему хану Мехти-Кули-Хану, дозволено возвратиться и он ныне живет в Шуше, также в чине генерал-майора и получает пенсию. После бегства Мехти-Кули-Хана в 1822 году русские сами стали управлять Карабахом. В это время провинции составили подробную опись и, между прочим, старались определить доход с поземельного имущества, потому что платимые во время татарского владычества, помещикам и правительству подати, казались слишком высокими. Это интересный историко-статистический памятник достойный большого прилежания и знания дела. Я почертпнул из него следующие заметки.

Карабахские татары и армяне жили в совершенном смещении. Первые, большею частью, народ, кочующий летом; после небрежного возделывания полей, он скитается по горам, богатым лесом и травой, во время самых сильных жаров переходит до снежных гор Асрита, место пребывания курдских разбойничьих татар. Осенью к жатве они спускаются в равнину, которое в влажное время года дает стадам отличный корм и тогда собирают плоды свои. Они зажиточны и гостеприимны. Некоторые из них имеют тысячи овец, сотни и более буйволов и больше табуны лошадей прекраснейшей породы. Жители гор беднее. Посреди карабахских гор находится пространная плоская возвышенность, имеющая характер равнины и где, в противоположность к раскаленным берегам Кура и Аракса, дающим сараченское пшено и хлопчатую бумагу, произрастает свойственный более холодному климату озимый хлеб, между тем, как более глубокие долины Бергошет, Гакджаре и другие пользуются южным климатом и имеют прекрасный виноград.

Вся тяжесть податей лежит на арендаторах или обществе их селения. Подати кажется определены, отчасти по доходу с земли и отчасти по нуждам помещика. Большая часть податей взимается в натуре. Система их очень сложна и изменяется почти в каждой деревне. Ханы имели большие поместья и, доходами с них, покрывали часть государственных расходов. К этому присоединялись часто государственные подати, платимые не помещику, а главе страны. Страна делилась на 22 магала или округа.

Каждая деревня образовала общину, имевшую старшину, *кевыка*, десятников, *чауш*, одного из двух фельдшеров и муллу. Эти лица, также как и дворы вдов и нищих, изъяты от податей, распределенных между состоятельными очагами. Кроме этого, из сельского населения изъяты от податей: дворы лиц, которые могут предъявить тунигу (изъятие от податей), ханы, далее нукары, большая часть речпаров, обязанных барщине, джувары или смотрители каналов, потому что все эти лица работают не для себя, а для помещика.

Главнейшие роды податей суть следующие: городская государственная подать, определена в деньгах. Подобная, но менее значительная, *атешь харидши* (подать от огня). Далее, разные поставки на содержание двора хана, к.т. *Атирпази*, поставка ячменя для ханских лошадей. *Карчан хорадши*, поставка на ханскую кухню масла, овец, быков, дров, а иногда и денег на содержание товаров и хлебопеков. *Каллуха и Тагвилани*, денежная подать на содержание нукеров в виде прибавочной доли по другим податям, на пр. 59 к. ханской монеты *каллуха* и 25 коп. Ханской монеты тагвилана от каждого дуката горяча.

Сольян, поставка пшеницы шальдшахат, весьма обыкновенная подать, состоящая из пятой части хлеба и других произведений, к. т. хлопчатой бумаги и сарачинского пшена.

Калантанлгха, соединение податей в натуре и правительству, поставка всадников для почты, пахание с определенным числом плугов, определенное число дней, собрание урожая с ханских полей, -поденною работою называется вспахивание поля, на котором можно засеять 2 ½ четверика. Подати эти взимаются не одинаково в одних и тех же местах, и они смешаны без определенного отношения к ценности их. Качующие общины платят преимущественно произведениями скотоводства и незначительным количеством хлеба. Малые подати в натуре часто заменяются деньгами.

Санкт-Петербург, 1857, часть I, 248 с., часть II, 215с. (т.р 147-153)

ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ ԵՎ ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔ

Մյուսյաց ընդարձակ և բազմաբնակ աշխարհի հին ճոխություններն անցած են իրենց ճոխ տերերուն և դարերուն հետ: Ազգային պատմությանց և Հայաստանի հնախոսությանց տեղյակ եղողները գիտեն արդեն թե նախնի Հայաստանի թագավորությանց նախարարությանց կարգին, միանգամայն և հասարակության մեջ փառքն ու վայելչությունը, քաջությունն և հաղթությունը առավել և մեծ էր այս մասին. Մյուսյաց նախարարները շատ անգամ թագավորի մը պես առանձին և ինքնակամ պատերազմներ ու հաղթանակներ արած են եղեր իրենց մերձավոր և սահմանակից զանազան օտարազգաց հետ. առանձին պատիվ, ավագ իշխանություն, մեծամեծ իրավունք գահերիցության կարգ ու աստիճան ունեցեր են:

Իրենց բնակության և իշխանության սկիզբն է Միսակ հայկազուն, Գեղամ նահապետի որդին. որո անունով և այն աշխարհը կոչվեր է և կկոչվի ցայժմ Մյունիք և բնակիչներն Մյունեցիք:

Մյուսյաց աշխարհը, ինչպես որ կերևի, այնպես նշանավոր և երևելի քաղաքներ չէ ունեցեր, սակայն յուր ամեն զավառներուն մեջ, գրեթե և ամեն մեկ գյուղի մեջ մեկ մեկ բերդ կամ դղյակ ունեցեր է շինված, և նոցա գեղերն պակաս չէին քաղաքի մը մեծութենեն ու վայելչութենեն:

Լեռնոտ է ընդհանրապես Մյուսյաց աշխարհը, և այն լեռանց վերա մացառներուն մեջ կերպ կերպ գագաններ կան:

Սարերու թիկանց վերա, ձորերու մեջ, դալարախիտ վայրեր, ջրերու ավերը այսպիսի տեղեր շինված են նոցա գեղերն. զվարճալի է իրենց թե վաստակը և թե կյանքը: Այո և էս սիրեցի այնպիսի տեղվանքն: Բայց ավստ՝ շատ դեղեր տեսա, շատ տեղեր անցա, որ թափուր դարձեր էին՝ ավերակ:

Սրբության վայրեր, վանքեր, տաճարներ շատ կան այն կողմերը. գեղեցիկ բլուրներու վերա շինված են ամենը. բայց ավա՛ղ շատերուն հիմունքը միայն կերևան. քանիսը ինչպես այրի մնացած են ամայի, ա՛հ, Որոտնավանքը էս տեսա, որո կամարներն ու որմերն տակավին ողջ էր, բայց շատուց ինքը մնացած էր անտեր, ուստի և ավեր. ինչպես ծերունի մի կուլար ողորմելի, որ ինկած լիներ անխնամ յուր զավակներից մեջ վայրի անապատին. բայց յուր զավակներն ևս արդեն չկային կենդանի: Գեղեցիկ դիրք մի ուներ.

ձորի շրթանց վերա բարձրավանդակ շինված էր. տակեն Որոտան գետը որոտալով կանցներ և կարծես նորա աչաց արտասուքը յուր ջրերի մեջ խառնած ու առած կտաներ. վանքին ստորոտը նույն գետին եզերքը ահագին գեղ մի, և այն էր Որոտան գեղ, ուստի էր սուրբն Հովհաննես Որոտնեցին. բայց ի՞նչ տեսանք այլ, միայն ավերակ. մեծամեծ տներու ու շենքերու ավերակ. ա՛հ, այն սուրբ տաճարը ինչպես ժամանակին անմահ արձանը նույն գեղի միջակետ գագաթը բաց բարձր ու ահեղ դրությամբ կերևա. յուր վերա նայողը կամ կզարհուրի կամ կուլա:

Տաթևու վանքը, Ամարաս, Գանձասար, սոքա ամեն մեկն մեյ մեկ բարձր ու մեծամեծ աթոռներ են. ուր կնատեին Սյունյաց ինքնագլուխ եպիսկոպոսներն կամ Մետրոպոլիտները. ու Աղվանից կաթողիկոսներն. և սոցա շենքն ու մեծությունն տեսողաց աչքին կվկայե այն նախկին վեհությունն փառավորությունն և բազմաց բնակությունը, քննող կամ հետաքրքիր մտաց կուտա և այն լույսն, ճանաչել նախնյաց մեծահավատ և մեծագործ հոգին ու զարմանալի ճարտարապետական արվեստն:

Այս ամեն վանքերը իրենց սեպհական և ճոխ ճոխ թեմեր, հողեր և ուրիշ կալվածքներ ունեցեր են. միայն Տաթևու վանից կասվի թե երկու հարյուրեն ավելի գեղ ունեցեր է բոլորովին յուր սեպհական: Բայց այժմ շատ և շատ նվազ ու պակաս են: Խոթա վանք, որո սեպհական հողին տարածությունը երկու օր հազիվ կըրջագայվի կասեին. այս ժամանակ մի անվարդապետ և անմիաբան էր, հետևաբար և անպաշտպան մնալով գրեթե սեպհականաձ կլինին այն տեղի բնակիչ քրդերն. սակայն Շուշի քաղաքին հասարակությունը և իշխանքն քանի դարուց հետո ազգասիրաբար կտքնին կրկին այս ազգային անգին ավանդը ի կորստենե ազատել, և կարծեմ հաջողության հետ էին. շնորհիվ արդար և ողորմած տերության Ռուսաց:

Այնպիսի հարստահարություններով այսպես կորուսեր են մեր Հայաստանի շատ վանքերն:

Բնակչաց կամ ժողովրդյան վերա ձգենք մեր աչքը և կտեսնանք բնական արհիություն ու սրտի քաջություն ունին ընդհանրապես խառն թե Հայ և թե Պարսիկ, ձի հեծնելու և զենք գործածելու զարմանալի հաջողականություն ունին. միով բանիվ, մահվանն չվախցող ու մահը իրենց ոտքին հետ ման ածող մարդիկ են:

Սյունյաց Հայ ժողովուրդը ազատասիրության հոգի և նահատակության արյունը յուր անձին մեջ կկրե. պարզություն է թե ուտելու թե հագնելու և թե

խոսելու մեջ. չափազանց ջերմեռանդ և երկյուղած են առ Աստվածայինս և առ հոգևորս. բայց դյուրավ կգայթակղին և իսկույն կխլեն այն անձը կամ այն հոգևորականը, որ զիրենք կգայթակղեցուցանեն. նոցա մեջ գնացող կամ մնացողը:

Ակամա զմարդն կբարվոքեն. բայց և բարվույն՝ ինչպես Քրիստոսին ովսաննա կանեն:

Ուսումն չունին, սակայն զգայուն են և կ'հասկնան. միայն քարոզողն է պակաս. իրենց միամտության հետ ունին և վեհ սիրտ. բնականաբար բարձրապարանոց և ծանրագլուխ են. թե և գերության օրեր շատ քաշեր են, բայց իրենց գլուխը միշտ սեգ պահեր են: Պարսկին կատաղի և անբարիշտ բնության ժամանակը դարձյալ Սյունիք կ'վայելեր ու կ'վարեր իշխանություն, փառք, մեծություն, և այս Մելիքություն էր: Այս աշխարհեն էր այն երևելի հաղթող և քաջ զորապետն Ռուսաց Մատաթով: Այս աշխարհի Հայն էր, որ իբր հարյուր երեսուն տարի հառաջ փոքրիկ խումբ մը կազմած և իբրև թագավոր կկովեր Հայրենի ազատության վերա:

Հիշեցեք Դավիթ Սյունեցին:

Մելիքությունը, գոր հիշեցինք, էր մի կերպ ազնվապետական կառավարություն, կամ նախարարական դրություն:

Սյունյաց աշխարհը, որ է Ղարապաղ, հինգ Մելիքություն ուներ. բաժանյալ հինգ զավառներու վերա. որք էին, Ջրաբերդ, Գյուլստան, Վարանդ, Խաչեն և Դուռաղ. սոքա տիրապետություն կամ ինքնագլուխ կառավարություն էին. վաթսուն կամ յոթանասուն տարի հառաջ կենդանի էին և իշխան տակավին գորքեր ունեին և կռիվ կանեին. Մելիք Մեջլում, Մելիք Ապով, Մելիք Շահնազար, Մելիք Ալլահվերտի, և Մելիք Բախտամ. որոց օրովը տիրացավ բռնացավ Իպրահիմ խան չարագործ պարսիկն, և վերջապես իշխեց ողջ Ղարապաղին, տիրեց և Շուշվա բերդին. որ այն ժամանակներն նոր էր շինված եղեր Հայ Մելիքներեն: Այլ թե ի՞նչ սկզբունքով եղեր և ի՞նչ վախճանով անցեր է այս Մելիքությունն Ղարապաղից ճիշտ չեմ գիտեր, միայն գիտեմ, որ Ռուսաց տիրանալեն հետե Մելիքություն չկա Ղարապաղի մեջ. բայց նոցա ժառանգներն այժմ ունին պատիվ Ազնվականության տերության առաջ. և կարծեմ կա մնացած իրենց ձեռքը սեպհական միայն քանի մի գյուղեր:

Շուշվա բերդը, որ և այժմ Շուշի քաղաք է գլխավոր տեղի կառավարության ողջ Ղարապաղին. աստ կնստին քաղաքապետ և ազգապետ իշխանք, դատավորք, գորք և ամենայն պետք:

Բնակիչքն ընդհանրապես Պարսիկ են և Հայ. տեղվույս հայերեն գաղթական բերված են Աքուլիսեն, Մեդրիեն, և Ղազանչի ըսված քաղաքեն կամ ավանեն:

Կան նաև մեկ մասն, որ այս կողմեն այն կողմեն կամ բուն Ղարապաղու վիճակեն եկած և բնակած են:

Տեղվույս հայ ժողովուրդը կաշխատի առավելապես վաճառականությամբ, գարմանալի ճարտարություն ու հաջողականություն ունին այս մասին մեջ. և իրենց վաճառականությունը դուրսի և հեռավոր քաղաքներուն մեջն է, իրենց գավակներն փոքր հասակով կկրթեն առուտուրի և հաշվեպահության մեջ. տասն հինգ տարեկանեն վեր պատանիք կամ երիտասարդներ խիստ քիչ տեսա ես. ամենքն էլ գնացած էին դուրսերն վաճառել և գնել. ափսո՞ս որ ուսմունքից կմնային անգետ, իսկ այժմ ուրախ սրտով և ուրախ հուսով պիտի գրեմ նոցա մեջ ծնած և ոգևորված ուսումնասիրության եռանդն և գործը, ազգասիրության հոգիք և արդյունավոր փորձ:

Բայց ուզելով որ նախ տեղեկություն մի տալ Շուշի քաղաքի դրության և շինությանց վերա, կ'քաղեմք համառոտությամբ նույն տեղի բնակիչ արգո Պ. Իսրայել Մամիկոնյանցի ստորագրությունից, որո գրվածի ամբողջությունը, թե և հետաքրքրական և արժանավոր, բայց երկար լինելով թողումք մյուս մասերն:

«Մեր Շուշի քաղաքը գտնվում է բարձրադիրտակ բլրո մը վերա, որո վերայի շրջապատքն են միապաղաղ որձաքար վիմոք ի վեր սեպացյալ ժայեր: Սորա մակերևույթը անհավասար և խոր խոռոչ դիրք ունի. որ հեռավոր՝ թիկունքներից և կամ մյուս կողմից նկատելու ժամանակը չէ երևում քաղաքի դրությունը. արևելյան կողմից միայն երևում են գեղեցիկ ապարաններ, որ բնակչաց տներն են. հարավային և հյուսիսային կողմերում մեծ ձորեր կան, որոց միջով անցնում են Քիրսա և Խալի Փալուի լեռանց ջրերի գետերը:

Մեր քաղաքը այսպես բնական ամուր և անառիկ լինելուն համար Հայոց նախնի ծերերից անվանվում էր բերդ, Տաճիկներից՝ Շուշի դալա, իսկ Ռուսներից՝ Կրեբոստ:

Բնակիչներն չնայելով խորդ ու խոռոչ դրության քաղաքիս, շիներ են ամենայն տեղ թե ձորամեջ թե գառիվայր, և թե թումբերի վերա միահարկ, երկհարկ և եռահարկ տներ, կրաշաղախ ու կոփածո քարերով, որ ջրին միջից կ'հանեն, և կ'կառուցեն զայն իբր լեռնական ծանրությունով, բայց այս՝ ունի ապագա երկյուղ անակնկալ դիպվածո երկրաշարժության:

«Քաղաքիս միջում չկան գնայուն ջրեր, այլ կան շատ ջրհորներ, հորոց ոմանք լինում են քաղցր և բարեհամ, ոմանք աղի և դառն, որք շինությանց պիտոյից համար են գործածում. ուստի և ըմպելի ջուր գնում են ամենօրյա ջրավաճառներից գնով արծաթո. և այլ մեծատուններ միայն և որք ունին կարողություն: Իսկ աղքատներն ըմպում են հորերի ջրերից և շատ առողջ են ապրում: Եղանակը ցրտային է, և հաճախ ձյուն ու անձրև կտեղա. բայց ամառը շատ զվարճալի է:

«Քաղաքը բաժանվում է երկու մասն, առաջին մասին մեջ, այն է ներքին կողմում, բնակում են տաճիկներն, իբր ձորագաղտակի մեջ. իսկ երկրորդ մասում բնակում են հայերն, որք և բաժանում են չորս դաս կամ թաղ: Առաջինն է Աքուլյաց թաղ մոտ տաճկաց. որո մեջ կա խաչապսակ երեք գմբեթավոր մայր եկեղեցին սուրբ Աստվածանի անունով. կառուցված մեծաքանակ ծախքերով հայոց գերագնիվ իշխան հանգուցյալ Զոհրապ աղայից: Երկրորդն է Ղազանչեցվոց թաղ, որ մականվամբ կոչվում է Հանգիստների Խուրթ. որո մեջն է ամենափրկչի եկեղեցին միագմբեթ, ու ունի զանգակատուն նոր և գեղեցիկ, բարձրադիտակ, խաչապսակ շինված սրբատաշ քարերով: Երրորդն է Մեղրեցվոց թաղն, որո տեղն զառ ի վայր ինկած է. որ և կոչվում է Կյավուր դալա, այս մասնում կա սագաշեն եկեղեցի սուրբ Աստվածածնի, զոր կառուցված է հանգուցյալ մահտեսի աղա Բաբայն Հախումյանց, հոչակավոր և մեծահիշատակ այրն:

«Իսկ չորրորդն է այն վերնաբնակիչների թաղն, որ քանի տարի հառաջ տաճկաց հետ խառն կրնակեին և կոչվում է Ներքին թաղեցիք, այս մասին մեջ կա նորաշեն խաչաձև եկեղեցին սուրբ Հովհաննեսի անունով. այս եկեղեցին կառույց Պ. Հովհաննես Հովնանյանց ի հիշատակ յուր հարազատ եղբոր վառամեռիկ Մկրտչին:

Ի մեջ Մեղրեցվոց և Ներքին թաղեցվոց կա մի մենաստան կուսանաց՝ հանուն սուրբ Աստվածածնի. ունի սա յուր շրջապատն հող և պարտեզ. և յուրյան սեպհական երկհարկ սենյակներ. զորս կառուցած է յուր ծախքով բազմաշխատ մայրապետն Հոփսիմե կույս Բահաթուրյանց. ուր բաց հինքնե բնակում են նաև հինգ կուսանք:

«Քաղաքիս շուկան կամ հասարակաց առևտուրի տեղ ինչնում է տաճկաց մասնում. կա և մասնավոր շուկա մի Հայոց թաղերումը. որոց գլուխը կա հրապարակ մի, զոր անվանում են *Թոք խանա*:

Մեր ժողովրդյան արանց կամ կանանց մեջ տակավին տեղի չէ գտեր նորաձևությունն Փարիզի զգեստներ. և թե կան էլ հատ հատ, ամտով են ցույց տալի մանավանդ կնիկներ. վասն զի իրենք շատ ամոթխած են և համեստ թե հագուստով և թե վարմունքով:

«Կայսերական ուսումնարան կա. ուր ուսում են զանազան ուսմունք և լեզուներ Հայ և Տաճիկ խառն: Պարծանք կհիշեմ իմ հայրենակցաց գործած հառաջադիմությունն և պայծառությունն նյութական կենաց հետ նաև բարոյական կյանքի մեջ. այսօր Շուշի քաղաքը երկու մեծամեծ պարծանքներ ունի. Գրատուն և Հոգևոր ուսումնարան Ազգային, որոց օգուտը մեծ պետք է լինի իմ հայրենյաց լուսավորության մասին ապագայում բայց և արդեն իսկ...»:

Բավական թող լինի այսչափ տեղեկություն Շուշվա քաղաքին վերա. մեք ինչպես խոստացանք, քանի մի խոսք էլ անենք այն տեղի ազգայնոց Ազգասեր և ուսումնասեր մասին վերա. որով ուրախ լինին մեր ընթերցողք, իմանալով որ ժամանակին ձեռքը այն տեղն էլ հասեր է, լուսավորության փափաքը նոցա սրտի մեջն էլ ծներ է. և ահա կշարժին և հառաջ կուզան:

Մեք անձամբ պատիվ ունեցանք Շուշվա քաղաքը երեք ամիս մնալու. և էնտեղի Ազգայնոց մեծարանքը և սերը վայելելու. նոցա խորհրդական և հրապարակական արյուններն մեր աչքն և ուշը գրաված են. գրեթե ամեն օր խորհուրդ էր, ամեն օր հոգացողություն էր միայն ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ. քանիցս ճառեր կարդացվեցան. քանիցս ատենախոսություններ եղան. և ամեն խոսքի մեջ ամեն շունչի մեջ այս էր միայն. ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ. ո՞հ կ'հիշեմ և կ'սիրեմ ես այն օրը, որ ուսումնարանի հոգաբարձության հաշիվը ներկայացուցվեր հասարակության առաջ. փինաչին ոսկերչին հետ խառն էր կայնած. գեղացին իշխանին կուշտ կղիտեր և կտեղեկանայր թե՛ յուր տված արդյունքն ինչ տեղ ծախս է եղեր. և ի՞նչ շահ ունեցեր է. արդարև զարմացան և ամեն բերան կօրհներ այս ժամանակը. կօրհներ Վեհափառ սրբազան Մատթեոս կաթողիկոսին կյանքը. կօրհներ և նվիրական ջանքն. կօրհներին և ուրախ էին հուսալով որ փութով կտեսնան իրենց որդիքը լուսավոր և իմաստուն մարդիկ: ... Ազգային լուսավորության և հառաջադիմության մասին շատ առատ և զվարթ տուրքեր կ'նվիրեն. Վերոհիշյալ հոգևոր ուսումնարանին ընդարձակության և նոր բարեկարգության համար հաստատուն և մեծ դրամազուլի կկազմեին. և շատերն կային նվիրատվաց կարգին վեց հազար, ութ հազար, տասն

հազար նմինչև քսան հազար մանեթ խոստացողներ, այսպիսի ընկերական նվիրատվությամբ սահմանած և հաստատած են այն հասարակաց գրատուներ. ուր կստանան հայերեն ամեն լրագիրներ և ամսագիրներ. նմանապես և Ռուսաց քաղաքական օրագիրներ. հայերեն զանգան գրքեր, նոր հեղինակություններ, այլ կժողովին կ'կարդան և ունկնդրություն ու խորհրդածություն կանեն ժամանակին վերա, ազգաց և ազգիս վերա:

Ի՛նչ գեղեցիկ միջոց է ժողովուրդ կրթելու և լուսավորելու համար. կ'ցանկամք որ ուրիշ քաղաքներ էլ այսպիսի տեղ մի ունենան. ուր լուսավորության հետ և միություն կունենան. և միությամբ ազգօգուտ բարիք. կցանկամք, որ Շուշի քաղաքն էլ ավելի հառաջադեմ և հարատև լինի յուր սկզբմանց մեջ հօրինակ և ի նախանձ այլոց:

Այստեղ կնքել կուզեմ մեր ստորագրությունը Ղարապաղու և Ղարապաղցի ազգայնոց մասին. նվիրելով մեր սրտին ուրախության հետ նաև երախտագետ հարգանաց հավաստիքը: Այո Վասպուրական Արծուին հանդերձ յուր ճեսերով սիրելով և սիրվելով Ղարապաղու ազգայիններեն, և վայելելով նոցա քաղցր ընդունելությունը, կ'հարգե և կ'պահե անմահ ի սրտի նոցա հիշատակ արժանի. ոչ վասն զի զինքը կ'սիրեն. այլ վասն զի ճշմարիտ Հայ և անկեղծ ազգասեր են:

«Արծուի Վասպուրական», Վան, 1862-1863, թիւ 4, էջ 87-108

Ուխտագրի Հիշատակագրեր

Ա

ՄԻՆՉԵՎ ԹԱՂԼԱՐ

Այս 1884 թվի Վարդավառի տոներին իմ բարեկամներից մեկը հրավիրել էր ինձ գնալ իր հետ միասին Դիզափայտ, որ բավականին նշանավոր և հայտնի ուխտավայր է:

Ոչ այնքան կրոնական ջերմ զգացմունքները հարկադրեցին ինձ ընդունել այդ հրավերը, որքան ուրիշ հանգամանքներ, որոնց միշտ հպատակված է լինում մարդ, մանավանդ ամառը, քաղաքների մեջ: Երկարատև անշարժությունից հետո տեսնել կրկին անգամ Ղարաբաղի գեղեցիկ տեսարանները, հարուստ ու վայրենի բնությունը, մտնել գյուղական պարզ նահապետական կյանքի մեջ, այս ամենը այնքան հրապուրում էր ինձ, որ ես շտապեցի մի քանի օրով առաջ, այն է հուլիսի 12-ին, դուրս գնալ Շուշից:

Նախ հարկավոր էր գնալ Թաղլար գյուղը, որ բավականին հեռու է Շուշից և գտնվում է պատմական Տոդ բերդի մոտ: Ճանապարհը, որքան ներում է երկրի լեռնային բնավորությունը, շատ տեղերում բավականին հարմար է ինչպես սայլերի, նույնպես և ձիաների համար: Բայց շատ տեղ էլ նա իսկապես անտանելի է դառնում՝ անցնելով խոր վիհերի, մացառապատ ձորերի և կիրճերի միջով: Երթևեկությունը այդ ճանապարհով բավականին կենդանի է, որովհետև նրա չորս կողմում գտնվում են բազմամարդ հայ գյուղեր, որոնք ապրում են առատության մեջ: Ջրի կողմից նույնպես առատություն են վայելում շրջակայքը. հաճախ պատահում են գեղեցիկ աղբյուրներ, գետակներ: Միակ անհարմարությունը, որպես հայտնեցի, բնական արգելքներ են, որոնք անտանելի են կացուցանում ճանապարհը շատ տեղերում: Ինչ տեսակ ճանապարհ կարողացել է շինել մարդու ոտը դարերի ընթացքում, նույնը անփոփոխ մնում է մինչև այսօր՝ հուսահատություն պատճառելով անփորձ ուղևորին: Այդ տեսակ դրությունը ճնշում է երկրի տնտեսությունը. երթևեկության անհարմարությունը դրել է այդ կողմերի գյուղացիներին միմյանցից անջատված դրության մեջ, որ բացասում է հանգիստ և արագ հաղորդակցության կարելիությունը և նրա հետ կապված օգուտները: Բնու-

թյան հարստությունը ապշեցնում է մարդուն, բայց պակաս հակասական ապշություն չէ պատճառում և գյուղացիների համեմատական աղքատությունը: Եթե գյուղացին ապրում է կուշտ փոքրով, դա դեռ նշան չէ նրա տնտեսական բարելավության: Իր բերքերը նա արտահանում է ուրիշ տեղեր խիստ աննշան քանակությամբ, իսկ բոլոր ստացած բարիքը շոայլաբար վատնում է տեղը, իր տանը՝ սահմանափակելով իր հողագործական գործունեությունը միայն տեղային պահանջներով: Սրա պատճառը, մեր կարծիքով, հաղորդակցության ճանապարհի վատությունը պետք է համարել: Եվ այս միտքը անփոփոխ մնաց իմ մեջ մինչև նույն իսկ Թաղլարը:

Խոսելով ճանապարհի մասին, անկարելի է լռության տալ մի տեղ, ուր ճանապարհը իսկապես անտանելի է:

Իրիկնապահին մենք իջանք հանգստանալու մի անտառապատ սարի ստորոտի մոտ: Ճանապարհը գնում է ծմակի միջով, որ կոչվում է Խորհատ: Բայց ի՞նչ ճանապարհ. մի նեղ, ոլորուն շավիղ, որ պտույտ է գալիս մի ահագին խորխորատի եզերքով: Ամբողջ լեռնային լանջը և խորխորատը ծածկված են հսկայական ծառերով, որոնք անտեսանելի են կացուցանում ուղևորից երկինքը: Խորհրդավոր լռությունը, մթությունը ճնշող, ծանր տպավորություն են գործում մարդու վրա: Այդ ճանապարհն ունի ոչ ավելի քան երեք քառորդ վերստ, բայց այդ տարածությունը անցնելու համար հարկավոր է մի ժամ: Զիու զգույշ և հանդարտ ընթացքի ժամանակ դուք դողում եք, կարծում եք, թե ձեր և վտանգի մեջ միայն մի մագ կա: Եվ իրավ, բավական է մի անզգույշ քայլ, մի թեթև սայթաքում, և մարդ խորխորատի մեջ կլինի, որտեղից ծառերի սոսափյունի հետ լսվում է լեռնային առվակի խուլ հոսանքը: Անասունները շատ տանջվում են այդ ճանապարհին. մինչև անգամ լեռնային քարոտ ուղիների սիրասուն որդին՝ ջորին, նա էլ շուտ-շուտ սայթաքում էր և մինչև սարի գլուխը գնալը ծածկվում էր քրտինքով, որ, առատությամբ թափվելով հողի վրա, կազմում էր թաց շերտեր: Սարսափելի ծմակը քիչ-քիչ ոչնչանում է գյուղացիների կացիների տակ. մի քանի տարուց հետո գուցե կվերանա նրանից մշտական մթությունը. բայց մի՞թե դրանով կանհետանան ճանապարհի մյուս անհարմարությունները, որոնք առանց ծմակի էլ անտանելի են: Եվ դեռ պետք է աչքի առաջ ունենալ, որ այդ ճանապարհը ամենահարմարն ու ամենակարճն է *Տիզակի* և *Վարանդայի* մեջ:

Առաջներում Խորհատը ավազակների բույն է եղած. օրը կեսօրին այստեղ սպասելիս և կողոպտելիս են եղել մարդկանց: Իսկ այժմ ոչ միայն ցերեկով,

այլև գիշերը ապահով անցուղարձ են անում այդ ճանապարհով: Առհասարակ ես նկատեցի, որ ամեն տեղ տիրում է անդորրություն, և երկյուղ ավագակներից բոլորովին չկա: Գյուղացիք շնորհակալ էին Շուշիի գավառապետ պ.Գանգիելիից, ասում էին, որ այդպիսի վարչական անձ վաղուց տեսած չեն:

Անցնելով Խորհատի միջով, մենք բարձրացանք մի լեռնային շղթայի գլուխ: Այդտեղից բացվում է շատ ախորժեղի տեսարան: Առանձնակի սարերը և լեռնային շղթաները, պատած խիստ հարուստ բուսականությամբ, երևան են գալիս, կարծես, մի գեղեցիկ պանորամի մեջ: Ինձ դեմառդեմ բարձրացած էր Տողա սարը, որի սուր գագաթը մինչև երկինք հասած է երևում: Այդ սարը տեսնելուն պես իմ մեջ զարթնեցին նրա անվան հետ կապված պատմական անցքերի հիշողությունները:

Մինչ այդ հիշողությունները պտույտ էին գալիս իմ հիացած հոգու մեջ, իմ ետևից հասան մի քանի հետևակ գյուղացիներ. նրանք բոլորը կանգնեցին իմ ձիու մոտ և, երեսները դարձնելով դեպի հարավ-արևմուտք, սկսեցին ջերմեռանդությամբ խաչակնքել: Երբ ես զարմանքով դարձա դեպի այդ կողմը, մեկն ասաց ինձ.

-Սուրբ Դիզափայտն է. իմ երեսս նրա ոտի տակը:

Ես նայում եմ: Հեռու հորիզոնի վրա, երեկոյան կիսամթնությամբ պատած մի սար է դա, որ իր բարձրությամբ գերազանց էր մյուս բոլոր այդ կողմի սարերից. և ահա այդ սարի գլուխը պիտի գնայինք մենք՝ հոչակավոր նահատակների տանջանաց վայրը համբուրելու համար: Ես խոսակցություն սկսեցի գյուղացիների հետ Դիզափայտի մասին: Ոչ ոք որոշ հասկացողություն չունեք. միայն գիտեին այսքանը, որ նա մի շատ զորավոր սուրբ է, որ ամեն տարի Վարդավառին լույս է գալիս նրա վրա, որ շատ ցավեր է բժշկում նա:

- Աստված ուխտդ կատարի, պարոն, կգնաս, շատ լավ բաներ կտեսնես և միշտ մեր սուրբին ուխտավոր կլինես:

Այս խոսքերով գյուղացիները հեռացան, և ես շարունակեցի ճանապարհս: Արդեն մութն էր, երբ հասա Թաղլար:

Թաղլարը մի բավականին մեծ գյուղ է (500 տուն): Հետևելով Ղարաբաղի մեջ բացառություն չսիրող ընդհանրության օրինակին, Թաղլարը տեղավորված է լեռնային զառիվայրի վրա, որ աստիճանաբար իջնում է դեպի Ղուրուչայ անունով գետը, որ քերում է Տողա սարի ժայռոտ ստորոտները: Նայելով գյուղի արտաքին տեսքին, բնակիչների կեցությանը, կարելի է

ասել, որ Թաղլարը առհասարակ հարուստ գյուղ է: Այստեղ այնքան շատ չեն գետնափոր խրճիթները, որոնցից կազմված են լինում առհասարակ հայ գյուղերը, այլ պատահում են լավ շինած նոր ձևի տներ: Բնակիչների մասնագիտությունը ածխագործությունն է: Ձմեռը այդ արհեստով պարապում են համարյա ամենքը, և Շուշիում ծախվող ածուխի բավական մեծ բաժինը ընկնում է թաղլարեցուց վրա: Ածխագործության արհեստին շատ նպաստավոր է փայտի առատությունը գյուղի շրջակայքում, որ իսկապես զարմանալի է: Ամառը գյուղացիք պարապում են դաշտային աշխատություններով: Գյուղի շրջակայքում կան շատ թթենու այգիներ. օղեհանությունը տարեցտարի ավելի շատանում է: Անասնապահության ճյուղում թաղլարեցիք հայտնի ջորեպաններ են. համարյա ամեն տուն ունի մի քանի ջորի: Մյուս տնային կենդանիներ քիչ կան:

Այս գյուղում կա հայոց հոգևոր ծխական դպրոց, որի ուսուցիչ պ. Հովույանցի մոտ իջա ես: Արձակուրդների պատճառով աշակերտներ չկային, բայց ուսուցչի պատմության նայած, նույնպես և քննելով գյուղացիների վարմունքը, պետք է ասած, որ կրթական գործը այստեղ դեռ խանձարուրքի մեջ է գտնվում: Ժողովրդի հարաբերությունները դեպի ուսումնարանը կարող էին բավական առատ նյութ տալ որևէ ծաղրաբանական թերթի...

Պառկելով քնելու, ես անհամբեր սպասում էի հետևյալ օրի բացվելուն, երբ կարողություն կունենամ տեսնել Տոդ բերդի երբեմնյան հզոր իշխանության ավերակները, տեսնել Գտիչ անունով հայտնի վանքը: Մի այսպիսի բուն ցանկություն սկսել էր զարգանալ իմ մեջ այն ժամանակից, երբ հայտնի էր դարձել ինձ Ղարաբաղի նոր պատմությունը՝ շնորհիվ պ. Բաֆֆիի աշխատանաց: Ինձ շատ անգամ էր պատահել առաջներում անցնել Տոդ գյուղի միջով, շատ անգամ էի տեսել նրա բերդը, հին պալատը, նույնպես նրա գլխին բարձրացած ամեհի սարը, բայց ուշադրություն չէի դարձրած դրանց վրա այն հասկանալի պատճառով, որ չէի իմանում, թե ի՛նչ երևելի պատմական անցքերի վկա եղած է այստեղի ամեն մի քար, ամեն մի ժայռ: Բայց երբ մեր բազմաշխատ հեղինակի մեզ համար մեծ զին ունեցող «Խամսայի Մեղիքությունները» անունով աշխատությունը բացեց մեր առաջ անցյալի մթին վարագույրը՝ ցույց տալով նրա ետևում առյուծասիրտ հերոսներ, մինչև այսօր մնացած կենդանի վկաներ մեր հոյակապ պապերի գործունեության՝ այս ամենից հետո Տոդա սարը խիստ հետաքրքրելի էր դարձել ինձ համար:

Բ ԳՏԻՉ

Վերջապես բացվեցավ տաք օրը. հուլիսյան արեգակը կանգնեց պարզ երկնականարի վրա՝ տարածելով ամեն տեղ սաստիկ ջերմություն:

Սարը բարձրանալու պայմանները շատ անհրապույր էին: Մեր դժբախտությունից գյուղում չկարողացանք գտնել անասուններ, որոնց վրա կարելի լիներ ելնել գոնե մինչև Գտիչ վանքը: Դաշտային աշխատանքների ամենատաք ժամանակն էր, և գյուղացիներից ոչ մեկը չէր համաձայնում ձի տալ մեզ: Իմ բարեկամը հորդորում էր հետաձգել գնացքը մի ուրիշ ժամանակի, նկարագրելով այն բոլոր դժվարությունները, որ անբաժան են այդ սարսափելի տոթի ժամանակ սարը ոտով բարձրանալուց: Բայց ես անխախտ էի իմ վճռում և, արհամարհելով ամեն մի դժվարություն, համոզեցրի գնալ: Մենք գտանք և մի ուրիշ ընկեր, որ սիրով համաձայնեց գնալ մեզ հետ: Բոլորս էլ կարծում էինք, թե շատ շուտ կհասնենք վանքին, որ այնքան մոտ է երևում ներքևից:

Ուղիղ ժամը 11-ն էր, երբ սկսեցինք բարձրանալ դեպի Գտիչը: Արեգակը երկնականարի միջից անտանելի կերպով այրում էր. անշարժ օդը խեղդում էր իր ջերմությամբ: Հողը, կարծես, շիկացած երկաթ էր դառել և այրում էր մեր ոտները: Այսպես էր այն ժամը, երբ մենք սկսեցինք բարձրանալ Ղուրուչայ գետի խոր ձորից: Մեր առաջ ճանապարհ կամ լեռնային շավիղ բոլորովին չկար. պետք էր անցնել մի քանի դեռ չհնձած արտերի միջով, որոնցից վերև, ինչպես ասում էին գյուղացիք, պիտի գտնեինք մի շավիղ, որ տանում է ուղիղ դեպի վանքը: Ճանապարհ ընկանք: Չորս կողմում ամեն տեղ կարծես կրակ էր այրվում. սարսափելի, համարյա ուղղաձիգ գառիվերը, ծածկված չորացած խոտաբույսերով, ամեն մի քայլում հարկադրում էր սայթաքել և հետուհետ գնալ: Բայց մենք դեպի առաջ էինք մղվում՝ բռնելով ամեն մի պատահած թփից, ամեն մի խոտից: Բոլորովին անսովոր լինելով երկար ոտով գնալու, այն էլ այդպիսի մի ճանապարհով, ես ստիպված էի շուտ-շուտ կանգնեցնել ընկերներիս, պատահած շվաքում նստել ու հանգստանալ: Համարյա բոլորովին շնչասպառ, ուժաթափ ընկնում էի ես խոտերի վրա և անվրդով վայելում էի հանգստության մի քանի քաղցր րոպեներ: Օրհնյա՛լ հանգիստ. այնքան գերում էր նա մեզ ամեն անգամ, որ մեր շուրջը թփերի մեջ գալարվող սև օձերն անգամ չէին կարողանում որևէ երկյուղ ազդել մեզ վրա: Այսպիսի մի ճանապարհորդություն այդ հրացայտ ճառագայթների

տակ, այդ սոսկալի գառիվերով, հետիոտն, ես առնվազն անխելքություն կհամարեի գուցե մյուս ժամանակներում, բայց ոչ երբեք այդ տանջանքներով լի բռնություն, որովհետև գիտեի, որ յուրաքանչյուր դժվար արած քայլի հետ, յուրաքանչյուր շարվածքի հետ ավելի և ավելի մոտենում էի ցանկացած նպատակիս: Իսկ նպատակը, որ երկար մեծացել ու հասունացել էր իմ մեջ, ուժ էր տալիս իմ անգոր անդամներին, հոգուս մեջ ներշնչում էր մի անհայտ զգացմունք, որ ավելի սաստիկ վառում էր սաստիկ ցանկությանս բոցը:

Մի ժամից հետո մենք դուրս եկանք արտերի միջից և ընկանք մացառների և փշոտ թփերի մեջ: Հուլիսյան տապը հասնում էր կատաղության. ոչ մի ամենաթեթև քամի, ոչ մի փոքրիկ ամպ, որ ծածկեր մի քանի բույսեր անողոր արեգակը՝ ոչինչ չկա. իսկ այստեղ մինչև այժմ եղած դժվարությունների վրա ավելացավ և այն, որ գառիվերը ավելի ուղղաձիգ է դառնում, և թփերն ու մացառները անխնա ծակոտում են մեզ ամեն կողմից: Դառն բույսեր էին անցնում մեր գլխով... Բայց մենք էլի առաջ էինք գնում՝ շուտ-շուտ հանգստանալով թփերի տակ:

Վերջապես մենք հասանք գառիվերի գլուխը, որ կազմում է մի լեռնային բարձրավանդակ, որը մի թեք տափարակով միանում է իսկական սարի հետ: Այդ տեղից երևաց վանքի գմբեթը: Մենք ազատ շունչ քաշեցինք և անհոգությամբ ընկանք խոտերի վրա. նոր վեր կացած լեռնային մեղմ քամին քիչ մի կազդուրեց մեզ: Մենք վեր կացանք և քիչ ժամանակից հետո վանքի մոտ էինք:

Գտիչը մի փոքրիկ վանք է, ունի նույնպես փոքրիկ գմբեթ: Նա կառուցված է սրբատաշ դեղնագույն քարերից: Տեղի դիրքը բավական գեղեցիկ է. Ամառային սաստիկ տապը, որ կիզում էր մեզ ներքևում, այստեղ մեղմանում է և չի խաշում մարդուն:

Բակը մտանք: Մեզ դիմավորեց վանահայր Առաքել վարդապետ Կոստանդյանցը, մի առողջ և հաստ կազմվածքի տեր մարդ, որի վաթսուն և ավելի տարիքը կարողացել էին գոյացնել միայն մի քանի ալիքներ նրա խիտ մազերի մեջ. այնքան գեղեցիկ և բարեբեր են այս լեռնային մաքուր օդը ու հովասուն անտառապատ շրջակայքը: Վանահայրը շատ ուրախացավ, որ իր երկարամյա առանձնակյաց միանման մենակությունը այդ օրը մեր ներկայությամբ մի քիչ այլազունվեց: Նա ասում էր, որ այս վանքում նստած է 28 տարի: Որքա՛ն համբերություն:

Մի քանի համառոտ խոսակցություններից հետո մենք շտապեցինք մտնել վանքը: Նախագավիթը, մի կիսախարխուլ ու խոնավ շինվածք, վկայում է, որ վանքի հետ մի տեղ չի շինվել, այլ ավելի հետո: Այդտեղ կան մի քանի եպիսկոպոսների գերեզմաններ, որոնց արձանագրությունները մեզ չհաջողվեց կարդալ: Վանքի մեջը տանող երկու կողմին կան հիանալի կերպով քանդակագործած խաչեր. երևում էր, որ այստեղից է սկսվում հին հայկական ճարտարապետությունը: Վանքի կտուրը կանգնած է երկու սյուների վրա, որոնք շինված են սրբատաշ, խնամքով կոկած քարերից: Առհասարակ ներքին և արտաքին կողմից վանքի ճարտարապետությունը կրում է Բագրատունյաց ոճի կնիքը:

Հյուսիսային պատի վրա կա մի երկար արձանագրություն, որից երևում է, որ վանքը շինել են երկու եպիսկոպոսներ Ամարասա միաբանությունից՝ Տեր Սարգիս և Տեր Վրթանես եղբայրները: Շինությունը սկսվել է ըստ հայ տոմարի ՌՂ-690 (փրկչական 1241) թվականին, վերջացել է 695թ.: «Ուրեմն այս վանքը վեցուկես դարի ընթացքում դեմ է տվել իր ճակատը ժամանակի և բնության արհավիրքների դեմ», - մտածում է տեսնողը, և այս մեկը լցնում է նրա սիրտը մի տեսակ ընկճված խոնարհության զգացմունքով այդ պատկառելի հնության առջև: Այս զգացմունքը այնքան սաստիկ էր իմ մեջ, որ չէի համարձակվում մի քանի ազատ քայլեր անել և դրանով վրդովել դարավոր լռությունը: Հարգել և բոլոր սրտով պետք է հարգել այս հնությունը, որ վեց հարյուր հիսուն տարի շարունակ ապրում է և մինչև այժմ չի կորցրել իր անդամների ուժը, ճկունությունը:

Հետո արձանագրությունը հիշատակում է իր ժամանակի քաղաքական սոսկալի անցքերի մասին: Նա ասում է, որ վանքը շինվել է շատ դժվար և դառն ժամանակ, երբ Նետողաց¹ ազգը, ավերակ դարձնելով այս երկիրը, կործանեց աթոռը (Ամարաս): Եվ ուխտից մեր հիշած երկու եպիսկոպոսները քաշվելով այս անմատչելի տեղերը, հավաքել են մի տեղ Ամարասա միաբանության փշրանքները: Խեղճ նախնիք: Ձեզանից մնացած ամեն ինչը խոսում է միայն արտասուքի և արյան մասին: Բռնավորի ուժը, սուրն ու հուրը հարկադրել են ձեզ փախչել սարերի քարանձավները՝ թողնելով ձեր գոյության մասին այնքան շատ տխուր հիշատակարաններ: Մինչև անգամ այս խուլ ու առանձնացած անկյունում, բնության այս ահռելի ամբողջուն-

¹Ճինաց

ների մեջ էլ լսվում են ձեր լացի ձայնը, ձեր աղետալից կյանքի փոթորկալից հոսանքը, որ մարմնացել են այս պատի վրա փարված՝ կիսով չափ եղծված տողերի մեջ:

Նայելով չորս մշտալուռ պատերին, նայելով այդ արձանագրությանը, ես հոգով սլանում էի մի քանի դար դեպի ետ և որպես թե տեսնում եմ վանքի միաբանությունը սրտաբեկ, դողահար շրջում է այս նվիրական սրբավայրում և երկյուղածությամբ ծնկաչոք աղոթքներ է առաքում դեպի երկինք՝ աղաչելով դադարեցնել արյունը, երկրի ավերումը...

Գտիչ վանքը հին ժամանակներում մեծ դեր խաղացած պիտի լինի այս կողմերի պատմության մեջ: Դրա մասին վկայում է նույնիսկ վանքի երբեմնյան ահագին հարստությունը: Մեր հիշած արձանագրությունից իմանում ենք, որ վանքը իր հիմնարկության սկզբից ունեցել է իբրև սեփականություն մի ահագին գավառ, որի սահմանները եթե այժմ փորձելու լինենք որոշել, պիտի երևան գա մեր առաջ համարյա ամբողջ Տիգակը և Սյունիքի մի մեծ մասը: Իսկ միաբանությունը, երևի, բազմաթիվ է եղած, քանի որ պատահում են եպիսկոպոսների գերեզմաններ: Բայց թե ինչո՞ւմն է եղել այդ դերը, ի՞նչ է եղել վանքի ժողովրդյան հետ ունեցած հարաբերությանց պատմությունը, այդ մասին մի տառ անգամ վկա չկա, այդ ամենը մնում է ավերիչ ժամանակի գաղտնիք: Ահագին կալվածներից մնացել են այժմ մի փոքրիկ անտառ և մի քանի վարելահողեր սարի ուղղաձիգ զառիվայրերի վրա, իսկ միաբանությունը կազմված է միայն մի կուսակրոն հոգևորականից՝ Առաքել վարդապետից: Այս վարդապետը լավ համարում ունի շրջակայքում. նա հայտնի է իբրև հմուտ հայկաբան: Մենք խնդրեցինք նրանից ցույց տալ իր աշխատությունները: Նա բերեց մի հին քողով կապած փաթեթ: Կարդացինք: Դա էր Տիգակի մելիքների պատմության սևագիրը, մի մեծահատոր աշխատություն, որի մաքուր արտագրությունը գտնվում է պ.Բաֆֆիի մոտ: Գրվածքի գրաբար ոճը թեթև, դյուրըմբռնելի է: Ինչպես հավատացնում էր հայր սուրբը, այդ աշխատությունը նա գրել է տասնևութ տարվա ընթացքում՝ հավաքելով ճշգրիտ տեղեկություններ ժողովրդի ավանդություններից և այլ զանազան աղբյուրներից: Աշխատությունը իսկապես գնահատելի է գոնե հայր սուրբը իր պատմությամբ ազատել է վերջնական անհայտությունից Տողա մելիքների զանազան երևելի գործերը: Հայր սուրբը շատ ցանկություն էր հայտնում տեսնել իր աշխատությունը ամբողջապես տպագրված: Մեր կարծիքով վատ չէր լինի այդ բանը, եթե Առաքել վարդապետի պատ-

մութունը ամբողջապես չի ամփոփված «Խամսայի Մելիքությունների» մեջ: Հայր սուրբը ցույց տվեց և իր մի ուրիշ աշխատությունը, որը նա անվանում էր «Պատմություն եկեղեցական անցից»: Այդ պատմությունը, իսկապես ասած, արժանավորություն չունի: Նրա մեջ հայր սուրբը նկարագրում է տեղային զանազան սուրբերի վարքը, և նկարագրության աղբյուրները շատ տեղերում են իր՝ հայր սուրբի, ծոմապահությունների և աղոթքների շնորհիվ տեսած երազները... Բայց առհասարակ հ.Կոստանդյանցը բավական հնասեր և գրասեր մարդ է և միշտ արտահայտում է գովելի ցանկություն ուսումնասիրել հնությունները, կազմելով զանազան տեղերի պատմություններ:

Գ

ՄԵՌՅԱԼ ԱՎԱՆ

Արեգակն արդեն թեքվում էր դեպի արևմուտք, իսկ մեր առջևում դեռ կար մի երկար ճանապարհ ևս, որ տանում էր Տողա սարի գագաթը: Այնտեղ, ինչպես պատմել էին ինձ գյուղացիք, կա մի հին եկեղեցի, նույնպես և ավերակներ: Ես վճռել էի տեսնել և այդ տեղը: Թեև ընկերներս, մինչև անգամ վանահայրը, խորհուրդ չէին տալիս գնալ՝ բերելով ինչ-ինչ պատճառներ, բայց ես հոժար էի ամեն բանի, միայն թե կարողանայի տեսնել, թե այդտեղ, այդ մինչև ավերքը բարձրացած սարի գագաթին, ինչ ավերակներ կան:

Առաքել վարդապետը տվեց ինձ մի երկաթե սրածայր գավազան և մի հսկայատիպ հրացանակիր ուղեցույց: Ես և երկու ընկերներս ճանապարհ ընկանք: Մի քանի քայլից հետո մենք մտանք վանքապատկան համարյա կուսական անտառը, որ միավորվում է սարի գագաթը պատող խիտ անտառի հետ մի բավական լայն կիրճով, որ բաժանում է սարի ամենաբարձր ժայռոտ գագաթը հյուսիսային մյուս ժայռերից: Այդ կիրճով էլ գնում է ճանապարհը: Ներքևից նայելով՝ կարծում ես, թե մի որևիցե տասն րոպեում կարելի է հասնել գագաթին, այնքան մոտ է երևում նա: Բայց իսկապես հայտնվեց, որ ամենաքիչը մի ժամ պետք է գնալ մեծ դժվարություններով: Շուտով սկսվեց այն ուղղաձիգ գառիվայրը, որով ընկած էր մի լեռնային հազիվ նշմարելի շավիղ: Այդ շավիղով արած մի քանի քայլերը իսկույն ցույց տվին, որ գետի ձորից մինչև վանքը տանող ճանապարհի նեղությունները դեռ ոչինչ են... Այնտեղ կարելի էր գոնե մի կերպ ամրացնել մի ոտը՝ մյուսը առաջ տանելու համար. իսկ այստեղ այդ էլ կարելի չէր...

Տերևախիտ ծմակի մեջ տիրում էր թանձր ստվեր, որ տեղ-տեղ տեղի էր տալիս արևի ուղղահայաց սլաքանման ճառագայթներից գոյացած փայլուն շերտերին: Չնայած ստվերին, ծմակի մեջ օդը խեղդող և անշարժ էր. Մաս-տիկ տապը ճանապարհի խոչընդոտներից ավելի էր նեղացնում մեզ: Բռնե-լով ծառի ճյուղերից, խրելով գավազանը գետնի մեջ, ես քայլ առ քայլ ընթա-նում էի դեպի բարձր, միևնույն ժամանակ քրտինքը հորդ անձրևի պես ծլում էր դեմքից: Մենք քայլեր էինք համրում և, խրախուսվելով նրանից, որ հետզհետե բարձրանում ենք, թափում էինք մեր ճիգը շարժվելու համար: Հասնելով այս կերպ պատի պես ուղղաձիգ ճանապարհի համարյա կեսին, ես փշրվածի պես ընկա մի մեծ քարի վրա: Բոլոր երակներս քիչ էր մնում պատռվեին հուզված-տաքացած արյան ուժգին զարկերից. բոլոր անդամ-ներս հանգստություն էին պահանջում, և ես բոլորովին ուժ չունեի դիմադրել նրանց: Իսկույն մոտեցավ ուղեցույցը, տվեց ջրով լիքը «փարչը», որ վանքից վերցրել էր իր հետ. ես լվացի երեսս ու գլուխս, որից մի քիչ զովանալով, կարողացա նայել դեպի ներքև և ծանր զգացմունքով դիտել այն սարսափելի գառիվայրը, որ իսպառ ուժաթափ էր արել ինձ: Նայում եմ ներքև, ահա ծառերի միջից երևում է սպիտակ գլխարկ. դա իմ ընկերն էր, որ բավական ետ էր մնացել. նա դժվարությամբ մագլցում է դեպի ինձ, երբեմն կանգնում է, նայում ինձ վրա... Վերջապես նա էլ հասավ ինձ մոտ և նույն փարչի օգնու-թյամբ զովացավ: Մենք վեր կացանք: Սարսափելի գառիվերը դեռ շարու-նակվում էր. ճանապարհը լիքն էր քարերի անհամար մանր կտորներով, և այս մեկը ավելի ևս դժվարացնում էր ընթացքը: Իմ մյուս ընկերը բավական առաջ էր գնացել, և մենք զարմանում էինք նրա ոտների վրա: Ուրիշ զգաց-մունքներ խոսքերով արտահայտել միմյանց մենք չէինք կարողանում, որովհետև սաստիկ հոգնածությունը արգելում էր խոսել: Այո՛, այդ քարոտ ճանապարհը, որով կարող էին գնալ միայն վայրենի այծերն ու կատուները, հուսահատեցնելու չափ տանջում էր մեզ: Եթե միայն այս ճանապարհով է եղել առաջվա հաղորդակցությունը սարի գլխի հետ, պետք է ուրեմն միայն զարմանալ այն ժամանակվա մարդկանց համբերության և ջղերի ուժի վրա:

Ուղեցույցը պատմում էր, որ դեռ նոր ժամանակներում այս բարձրաբերձ ժայռերի ստորոտում, անտառի մեջ, գտնվել են զանազան մանր տնային իրեր, եկեղեցական անոթներ, հրացանի ճիպոտներ, մետաղյա անոթներ, նունյպես և ոսկի ու դրամ:

Բայց ահա մոտ է գառիվերի վերջը. մենք հավաքում ենք վերջին ուժերս, ավելի արագությամբ բանեցնում ենք ոտներնիս և ահա մենք էլ սարի գլխին ենք: Տեսարանը իսկապես ահարկու էր և խիստ ճնշող: Երևակայեցեք մի մեծ թանձրախիտ անտառ, ուր ծառերը հասնում են մեծ բարձրության. անտառի մեջ տիրում է խորին կախարդական լռություն. և նրա մշտական թանձր ստվերի մեջ դուք տեսնում եք ավերակների մի ամբողջ քաղաք, այսինքն՝ լուռ մամռապատ պատերի մի լաբիրինթոս: Այդպես էր և այդ ավերակների տեսքը. նրանք ճմլեցին իմ հոգին, որ դեռ չէր կարողացել ազատվել մինչև այդտեղ անցած տարածության դժվարությունների ներգործությունից:

Անցանք շրջապարիսպից: «Մի՞ թե այսքան անառիկ բնական բերդի համար դեռ հարկավոր է եղել պարիսպ,- մտածում է մարդ,- և որքան մեծ է եղել այդ ժամանակների ահն ու սարսափը»: Մտանք մեռյալ քաղաքը կամ ավանը, գնում ենք կիսավեր պատերի վրայով. քարերը համարյա բոլորովին մամուռ են դարձել, և տների տեղերը ներկայացնում են մեծ-մեծ փոսեր, որոնց մեջ բուսած են զանազան հասակի և տեսակի ծառեր: Այո՛, մարդկային կյանքի սպառվելուց հետո, այս անշունչ ավերակների կուրծքի վրա դեռ պտույտ է գալիս բուսական կյանքը իր բոլոր մանրամասնություններով. մեծ ծառերը գլորվում են, ընկնում-փտում են, իսկ նրանց տակից դուրս են գալիս թարմ ու ճկուն ճյուղեր, ծիլեր... Բնությունը միայն կյանք է սիրում, նրան է զարգացնում, իսկ ամեն մի մեռյալ բան անխղճորեն ոտնահարում է, ոչնչացնում է, սպառնում է:

Եվ ես քայլում էի այս մահվան քաղաքի, այս կործանման վիճակի մեջ՝ անդադար երգելով քթիս տակ հայտնի երգից.

*Նայեցավ տխուր աւերակաց,
Մեր հարց լքեալ անշուք շիրմաց:*

- Ահա և եկեղեցին,- ասաց ուղեցույցը, երբ մենք գոռով ճանապարհ էինք բանում մացառների և միմյանց հետ հյուսած ծառերի միջով:

Ես կանգնած էի եկեղեցու մոտ, որ կառուցված է սարի ամենաբարձր գագաթը կազմող ամենի ժայռի ծայրին: Մի հայացք այստեղից դեպի ցած, սարի ստորոտը՝ աչքեր է մթացնում:

Եկեղեցին մի հասարակ շինություն է, առանց գմբեթի: Ներս մտանք: Ներսի կողմը բոլորովին մերկ է. ոչ սյուն կա, ոչ մեծ լուսամուտներ. մերկ բեմը գետնից հազիվ կես արշին բարձրություն ունի. գերեզմանային խոնավու-

թյունը իսկույն զարկում է մարդու դեմքին: Եվ այս «անշուք ու լքյալ» ավերակը մի ժամանակ թնդում էր երգեցիկ խմբի և այս մեռյալ քաղաքի բարեպաշտ ժողովրդի սաղմուսերգություններից... Իսկ ա՞յժմ: Իսկ այժմ գերեզմանական լռությունը չի խանգարում ոչ մի սոսափյուն, ոչ մի շշունջ, և սա վախենալով ճնշում է մարդու սիրտը: Ես և երկու ընկերներս դուրս գնացինք այդ տխուր և փառագուրկ սրբավայրից: Ավերակների մեջ մենք երկար որոնում էինք մի որևիցե գերեզման, մի արձանագրություն, բայց ոչինչ չգտանք: Միայն եկեղեցու մոտ գտնվող մի գերեզմանաքարի վրա կարողացանք կարդալ չորս տառեր՝ «Պետի» և այլևս ոչինչ: Ավերակները, ինչպես ցույց տվեց ուղեցույցը, ընկած են բավական երկար՝ դեպի արևելք և հարավ. նայած ցույց տված տեղին, պետք է ասել, որ այդ ավանը (գուցե և քաղաքը) բավական մեծ է եղել: Տներից շատերը ունեն կիսաբլուրակ ձև, իսկ մի քանիսները ձվաձև են: Ջուր չտեսանք բոլորովին այդ կողմերում:

Իհարկե, երկար և մանրամասն հետազոտությունները գուցե կարողանային ուրիշ ուշադրության արժանի բաներ հանել, բայց ցավելով պիտի ասեմ, որ ժամանակի սուղ լինելու պատճառով երկար այստեղ մնալ չկարողացանք: Վերջին հրաժարական հայացքը զցելով անտառի խորքում գտնվող լուռ ավերակներին, մենք սկսեցինք իջնել սարի գլխից:

Ես մտածում էի. ի՞նչ տեղ է եղել սա, ի՞նչ անուն ունեն այս ավերակները, ո՞ր ժամանակի մնացորդն են ներկայացնում: Եվ իրավ, սրանք մի-մի հանելուկներ են, որ թողել է պատմությունը: Այդ կողմերին քաջ ծանոթ Առաքել վարդապետն էլ չկարողացավ որևէ պատասխան տալ այդ հարցերին: Նա ասում էր, թե հավանական է, որ ավերակները մնացել են ամենահին ժամանակներից: Նա համաձայն չէր այն մտքին, թե գուցե Տողա մելիքների ժամանակից են մնացած:

Ենթադրել կարելի է, թե սաստիկ տազնապի ժամանակ այս ավերակները բնակիչների և զորքերի ապաստանարան են դարձած, բայց բերդի հիմնարկությունը մելիքներին վերագրելը, Առաքել վարդապետի ասությամբ, բոլորովին սխալ է: Եվ իրավ, մի՞թե չի կարելի ենթադրել և այն, որ սարի գլխի շինությունները սկսվել են Գտիչ վանքի հետ մի ժամանակ, երբ վանքի հիմնադիրները հավաքել են իրանց քայքայված վիճակը Տողա դժվարամատչելի բարձրությունների վրա: Չի՞ կարելի ենթադրել, որ մի ժամանակ վանքի հոգևոր իշխանությունը, միացած բերդի մարմնավոր իշխանության հետ, ընդդիմադրում էր Նետողաց թշնամի ազգին: Ինչևիցե, բայց ոչինչ հաստատ

և որոշ բան չկա Տոդա սարի գլուխը պսակող ավերակների մասին, և դա շատ ցավալի է: Առաքել վարդապետը սարի հյուսիսային կողմից, վանքի հանդեպ, ցույց տվեց մեզ մի մեծ ճեղքվածք և ասաց, որ դա մի գաղտնի ճանապարհ է, որ սարի միջով գնալով, դուրս է բերում ավերակների մեջ: Որքա՛ն աշխատանք է վատնվել այդ բանի վրա: Երևակայեցե՛ք. սպիտակ կարծր քարի ահագին միապաղաղ ժայռը, որ կազմում է սարի վերին մասը, ծակված է և բավական հեռու տարած: Եթե մեր նախնիքներին թողնեին հանգիստ նստել իրենց երկրում, գուցե այժմ մենք ականատես կլինեինք ավելի փառահեղ և գեղեցիկ պատմական հիշատակարանների, քան զանազան պատերազմական ամրություններ, կիսավեր պարիսպներ լեռների քարանձավներում և անմատչելի բարձրությունների վրա: Բայց խեղճ հայի ձեռքը ե՛րբ է բաժանվել իր մարմնի վրա լայն բացված վերքերից. նա միայն աշխատել է կանգնեցնել նրանից ծորող արյունը, և այդ է եղել նրա զբաղմունքը:

Պ. Րաֆֆին ոչինչ չի խոսում ավերակների մասին, մինչև անգամ չի այցելել նրանց: Հայտնի է, որ մելիքների ժամանակակից անցքերը պտույտ են եկել սարի մյուս կողմին, համարյա ստորոտի մոտ, Տոդ բերդում, որ այժմ էլ կա, բայց այդ բարձր և անմատչելի տեղը կանգնած ավերակներն էլ խո որևէ անցքի վկա եղած են...

Նստած Գոխչի արևելյան կողմին, պատերից թափված քարերի վրա, մենք երկար խոսակցում էինք Առաքել վարդապետի հետ զանազան անցքերի մասին: Գալով վանքի ներկա դրությանը, հայր սուրբը գանգատվում էր, որ իր և վանքի վրա հոգևոր իշխանությունը ուշադրություն չի դարձնում: Վանքը քիչ-քիչ քայքայվում է դրսից. արևելյան և հարավային կողմից բավական քարեր են թափվել: Ի՞նչ կլինի, եթե մի քանի տարուց հետո այս վանքն էլ դառնա մի անխոս ավերակ, չղջիկների և բուերի տխուր բնակարան... Գոնե մեր պերճասեր շուշեցիք քիչ մի հոգային պահպանել իրենց պապերի թողած այս գեղեցիկ շինությունը...

Արեգակը վաղուց մայր էր մտել, մենք սկսեցինք իջնել ցած, դեպի Թաղլար: Այդ տեղերից ես տանում էի ինձ հետ խիստ տխուր հիշողություններ, որոնք չթողեցին ինձ մինչև անգամ անկողնում...

Ես համարյա մոռացել էի, որ մյուս օրը, շաբաթ վաղ առավոտյան, պիտի ուղևորվեմք դեպի Դիզափայտ:

ՈՒՆՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

Հուլիսի 14-ի գիշերվա ժամը երեքից շատ կանուխ բարեկամս զարթնեցրեց ինձ:

«Դեռ շատ է վաղ», - ասացի ես, բայց հայտնվեցավ, որ ամբողջ գյուղը մեզանից շատ առաջ է ոտքի կանգնել, խառն աղմուկը ցույց էր տալիս, որ բոլորը պատրաստվում են ուխտ գնալ առավոտյան հով ժամին, որպեսզի ազատվեն օրվա խեղդող տապից: Մենք ևս սկսեցինք պատրաստվել և կես ժամից հետո արդեն ճանապարհին էինք:

Արեգակը դեռ բոլորովին չկար. օդը թարմ էր և զովարար: Բավական տարիներից հետո էր, երբ ինձ վիճակվեցավ կրկին լուսացնել ամառային գիշերը բացօթյա, գյուղական հարուստ և չքնաղ բնության մեջ: Եվ բնության կարճատև քնից զարթնելու պատկերը խիստ կենդանանում էր և հրապուրիչ դառնում հեռվից լսվող խաղաղ ու մեղմ խոսակցությունների ձայներից. դրանք ուխտավորներն էին, որոնց, սակայն, մենք չէինք տեսնում: Ասպանդակելով ձիաները, մենք շուտով հասանք մի խառնիճաղանջ ամբոխի՝ բաղկացած ամեն տեսակի և հասակի մարդկանցից, որը հետևակ, որը ձիու վրա, որը ջորու վրա: Ջերմեռանդ հայուհիները համարյա բոլորը ոտով էին գնում, շատերը՝ բոբիկ: Դա էլ մի նախնական սովորություն է, որ պահվել է միայն գեղեցիկ սեռի¹ մեջ. նրա կարծիքով, սուրբը ավելի ընդունում է ոտաբոբիկ գնալը և միշտ կատարում է այսպես գնացողների ուխտը: Եվ այսպես, այդ ամբոխը, ձգված ճանապարհի երկարությամբ, կազմում էր շարժվող մարդկանց մի երկար գիծ, որի գնացքի կարգը հաճախ խանգարվում էր ուխտավորների հետ մնալով կամ առաջ ընկնելով: Դրանք բոլորը թաղլարեցիք էին. գյուղի մեծ այստեղ էր... Խոսակցությունները, մինը մյուսի անկեղծ, մինը մյուսից ավելի տոգորված նահապետական պարզ սովորություններով, անընդհատ շարունակվում էին մարդկանց այս երկար շարքի մեջ: Ահա մի ձիու վրա նստած են մի առույզ ծերուկ ու նրա կինը. դեռ բավական չէ դա, ծերուկի

¹ Չայ կինը ընտանեկան կյանքի մեջ ներկայացնում է ինչպես մի առանձին մարմին, որ պահպանում է նախնական սովորությունները ամենայն սրբությամբ. նա միշտ հարազատ է մնացել հայության լեզվին և բոլորովին պահպանել է հայ կնոջ պատմական առանձնահատկությունները՝ չենթարկվելով ոչ մի տեսակ արտաքին ազդեցության: Այդ խոստովանում են և տղամարդիկ: «Եթե մեր ժամանակ մնացել է սիրտ, հոգի, բարեպաշտություն, դա միայն կանանց մեջ է», - ասում են նրանք: Մեզ հաստատապես հայտնի է, որ ուսման ազդեցությունն անգամ չի կարողացել առաջմ իջել հայ կնոջից նրա պապական սովորությունները. ուսում առածներն էլ ջերմեռանդ պաշտպան են նախապաշարմունքների

առաջ տեղավորվել է նրա չափահաս տղան. ուժեղ ձին բավական դիմաց-
կունությամբ տանում է այս համարյա մի ամբողջ ընտանիքը:

- Պարոն, դու է՞լ ես գնում մեր սուրբը,- դառնում է դեպի ինձ ծերուկը:

- Ինչպես չէ, ես էլ եմ ուխտ գնում,- պատասխանում եմ ես:

- Աստված լսող լինի: Մեր սուրբ Դիզափայտի պես գորավոր խաչ իսկի
չկա: Կյանքումս մի Վարդավառ չեմ անցկացրել առանց նրա սուրբ գորու-
թյանը ուխտ գնալու:

Եվ ծերուկը խիստ ջերմեանդ կերպով խաչակնքեց երեսը:

- Երևի շա՞տ մարդ կլնի այնտեղ,- հարցնում եմ ես:

- Ինչպե՞ս չէ, ամեն տեղից գալիս են. և ամենի ուխտն էլ կատարում է:

Այդ ժամանակ արևի առաջին շողերը ողջունեցին մեզ: Մենք անցնում
էինք մի լեռնային բարձրության մոտով, որի ախորժատես գառիվայրը
ծածկված էր սաղարթախիտ ծառերով. տեսարանը շատ գեղեցիկ էր, և ես
անհագ նայում էի դեպի այդ կողմը: Ծերուկը դեռ ինձ հետ էր գնում:

- Դու է՞լ գիտես, որ այնտեղ է գտնվում Օխտը-դոնին,- հարցրեց նա՝
խաչակնքելով երեսը:

- Ոչ, չգիտեմ: Ի՞նչ է դա:

- Սուրբ է, պարոն, շատ գորավոր սուրբ. աչքացավի բժիշկ է: Ճշմարիտ է,
մի սրբի մոտով մյուս սուրբ գնալը լավ չէ, բայց մենք մեղավոր ենք, անում
ենք: Եվ սուրբ Դիզափայտը ախր սրանից գորավոր է:

- Վնաս չունի,- ասացի ես,- Օխտը-դոնին ուխտ կգնանք Դիզափայտից
վերադառնալիս: Կարծեմ չի բարկանա...

Մենք առաջ ենք ընկնում: Շուտով հասնում ենք մի ուրիշ խմբի. այստեղ
էլ ուրիշ տեսակ խոսակցություններ են, բայց դրանց մեջ էլ անփոփոխ է
նահապետական անկեղծ պարզությունը՝ խառն կրոնական ջերմ զգացմուն-
քի հետ: Գտնվելով այսպիսի շրջանում, մարդ մոռանում է իրական ներկան
և փոխվում է երևակայական անցյալը, ուր հայի կյանքը տեսնում ես մի
շրջանակի մեջ, որ հյուսված է ավանդություններով սրբագործված սովորու-
թյուններից...

Երևակայությունը ավելի բանաստեղծական փայլ է ստանում բնության
վայրենի և գեղեցիկ տեսարանների առջև: Ճանապարհն անդադար անցնում
է խիտ ծմակների միջով, խոր ծործորների եզերքով, և ամեն տեղ գեղեցիկ
բնությունը շլացնում է իր զարմանալի հարստությամբ: Պատահում է,
օրինակ, ամբողջ մի լեռնային շղթա ծածկված ծառերով. կարծում ես, որ եթե

այնտեղ ասեղ գցես, գետինը չի ընկնի: Բայց ահա դրան մի ներհակ տեսարան. կանգնած է բուրբուղին լերկ ու ծառագուրկ սար: Տպավորությունները փոխվում են ամեն մի քայլում, և դու միայն ափսոսում ես, որ բանաստեղծ չես, որ չես կարող երգել բնության այս ահավոր և մեծասքանչ զարդերը:

Ճանապարհին հաճախ պատահում էին թափառական թուրքեր: Նրանք իջնում էին սարերից դեպի ցած, այրված հովիտները: Նրանց շարժական տները, կայքերը թափառում են իրենց հետ միասին մի քանի հատ եզների վրա, որոնք մի քանի հատ ուրիշ տեսակ կենդանիների և մի քանի շների հետ կազմում են նրանց ամբողջ հարստությունը: Որքա՛ն խեղճ են նրանք: Կիսամերկ, ոտաբոբիկ, պատած ողորմելի ցնցոտիներով, որոնց տակից երևում է նրանց մարմնի պղնձագույն մորթը, ջերմ անապատների և հովասուն լեռների այդ հարազատ զավակները կոխ են տալիս իրենց ոտներով ահագին տարածություններ՝ հպատակվելով ամեն մի դեպքում բնության քմահաճություններին: Երջանիկ են նրանք իրանց անշուք կեցության, նեղությունների ու վշտերի մեջ: Նրանց անդամները այնպես պինդ են, որպես այդ ապառաժները, որոնց ոտնահարում են նրանք. բայց ավելի պինդ է նրանց հոգեկան ուժը, անձնապաշտպանության քաջ զգացմունքը: Հանդարտ ժամանակը նա մարդկության մի հասարակ անդամն է, իսկ վտանգի մեջ՝ մի կատաղի գազան... Եվ այս հանգամանքի շնորհիվ նա մնում է իր վայրենի կեցության մեջ, հեռու առաջադիմությունից: Գալիս է ամառը, թափառակալները հովասուն լեռների հարուստ կանաչների և սովերախիտ անտառների մի անբաժան մասն է. գալիս է ձմեռը՝ նա թողնում է իր սարը և, որջեր փորելով անապատի խորքերում, ապրում է այնտեղ: Ահա նրանց կյանքը: Իսկ ո՞րտեղից էին գալիս նրանք: Շուտով հայտնվեցին և այդ տեղերը: Դրանք սարեր էին՝ և այնքան բարձր, որ նրանց վրա բացի գեղեցիկ կանաչ խոտից ոչինչ չի բսնում: Այդպիսի սարեր մի քանիսը կային, սարերի մի խումբ, որի մեջ հպարտությամբ իր գլուխը տարել է մինչև երկինք Դիզափայտը:

Հրաշալի է բնությունը: Այստեղ նա դեռ իր թարմ կանացի երիտասարդական հասակում էր գտնվում և, ինչպես մի նազելի օրիորդ, փռում էր իր շուրջը անուշահոտություն, քնքշություն և մի տեսակ գերբնական փայփայտ մեղմություն, որ բարերար ազդեցություն էր գործում մեր անդամների վրա: Մենք անցնում ենք մի քանի այդ տեսակ փափուկ թավշյա խոտով ծածկված բարձր բլուրների և սարերի մոտով: Այնքան ախորժատես են նրանք, որ ստիպված կանգնում ես և երկար, երկար նայում: Բայց ավելի

գերում է տեսությունը Դիզափայտը: Այդ հսկան, որի բարձրության հետ չի կարողանում մրցել ոչ մի սար Տիզակում, այստեղից՝ մոտիկից, կանգնում է տեսնողի առաջ իր ճնշող վսեմության և մեծության մեջ: Նա ոտից գլուխ հագած է զարմանալի կանաչ զգեստ. մի թուփ, մի ծառ չկա նրա վրա: Միայն վերևում նա ունի սպիտակ պսակ. դա ահագին ժայռեր են, որ կազմում են նրա գագաթը, որ այնքան բարձր է գնացել: Որպես՞ ս պետք է բարձրանալ մինչև այնտեղ. այս հարցը հարկադրում է մտածել ամեն մեկին: Մինչև անգամ լեռնաբնակ գյուղացին, որ ծնվում ու մեծանում է սարսափելի դարափոսների, զառիվայրերի վրա, անանցանելի կիրճերի մեջ, մինչև անգամ նա էլ մի կերպ ծանրությամբ է նայում դեպի վեր:

Բարձրանալը իսկապես սկսվում է մի աղբյուրի մոտից, որ հոսում է մի կանաչազարդ ձորից. նրա անունն է Քոշի աղբյուր: Աղբրի մոտ հավաքվել էր մի ահագին ամբոխ, երբ մենք մոտեցանք նրան: Ջուրն այնքան ցուրտ է, որ միանգամից կես բաժակ խմել անկարելի է: Եվ այս է՞րբ: Հուլիսյան խեղդող տոթերի ժամանակ, երբ ամեն ինչ այրված, խորովված է լինում արեգակի տակ: Ջուրը, երևի, գալիս է շատ բարձրից և միշտ սառը հողի տակ ընդունում է այդքան ցրտություն: Բայց հենց որ մի քանի րոպե մնում է օդի մեջ, իսկույն կորցնում է ցրտությունը և այն ժամանակ շատ անհամ է լինում:

Այստեղ բոլորն էլ հանգստանում են, պատրաստվում են բարձրանալ դեպի գագաթը:

Ե

ԴԻԶԱՓԱՅՏԻ ՎՐԱ

Ճանապարհը Քոշի աղբյուրից մինչև գագաթը նոր է շինվել. նա ահագին պտույտներ է գործում սարի բոլորովին ուղղաձիգ լանջերով. բայց չնայած դրան, ճանապարհն էլի շատ զառիվեր է և դժվարելանելի: Մինչև սարի գագաթը օձապտույտ ճանապարհի վրա երևում էր գնացողների օձապտույտ երկայն շարքը. շարժվում էին կրիայի դանդաղկոտությամբ. Այլապես էլ անկարելի է: Ձիերը մեծ դժվարությամբ էին կարողանում դեպի վերև մի քանի քայլ անել: Գնալով քիչ տեղ, նրանք կանգնում էին. և այսպես պետք էր մնալ տասը կամ տասհինգ րոպե, մինչև կենդանին մի քիչ կհանգստանար, ուժ կառներ. և հետո նույն դանդաղկոտությամբ շարժում էր ոտները և կրկին կանգնում: Ճանապարհը այժմ էլ, իր նորոգված դրության մեջ, վտանգավոր է. միշտ երկյուղը պատած է լինում մարդուն. մի թեթև ծուռ շարժվածք, մի

սայթաքումն բավական է, որ ձիավորը ձիու հետ թռչե սուկալի խորխորատների մեջ: Պատմում էին, որ ճանապարհի անմշակ ժամանակը տարի չէր անցնում առանց փորձանքների. տարի չէր անցնում, որ մի քանի անասուններ չզլորվեին դեպի ցած, հասնելով գառիվայրերի վերջին՝ մսի և ոսկորների մի գանգվածի ձևով:

Նայելով շուրջը, դեպի ներքև, մարդ զարմանում է, թե ինչպես այն հին ժամանակները ապաստան են գտել այս բարձրության գլխին նահատակները և ինչպես են սպանել նրանց հալածողները: Եվ Դիզափայտի Հայսմավորքից հայտի պատմությունը¹ իր բոլոր մանրամասնություններով շուտ էր գալիս իմ մտքի մեջ նույն ժամանակ, երբ իմ ձին մեծ տանջանքներով առաջ էր տանում ինձ:

Որքան բարձրանում էինք դեպի վեր, այնքան օդի ցրտությունը զգալի էր դառնում: Կարծես այս տեղերում դեռ նոր է սկսվել ապրիլ ամիսը: Թարմ նորահաս խոտի մեջ որքա՛ն դեղին խոշոր ծաղիկներ կան, որոնք, պատելով գառիվայրերը, միացնելով իրենց դեղին գույնը ընդհանուր կանաչ գույնի հետ, արեգակի մեղմ, թույլ ճառագայթների տակ ներկայացնում են այնպիսի տեսարան, որին արժե նայել: Եվ օդի լռությունը վրդովվում է ուխտավորների ձայնից միայն. ուրեմն մարդությունից թափուր ժամանակը որքան ահավոր պիտի լինեն այս մշտալուռ բարձրությունները, որոնց վրա չի ապրում ոչ մի կենդանի՝ ձայն արձակելու ընդունակություն ունեցող արարած: Մարդու սիրտը ճնշված է լինում բնության վսեմության տակ. նա անդադար բաբախում է, արտահայտելով մի կատաղի հուսահատություն. ակար է՞րբ պիտի վերջանա այս ճանապարհը, է՞րբ պիտի հասնել գագաթին: Մինևույն ժամանակ ձիու քայլերը սովորեցնում են մարդուն ստոիկյան համբերու-

¹Ահա այդ պատմությունը համառոտորեն. Հոնաց թագավորի առաջապահ զորքերը հարձակվելով Արցախի վրա, ասպատակում են շատ տեղեր: Այդ զորքի գլխավորը գերի է առնում Մեսրոպ վարդապետի (Հայոց տառեր հնարողի) աշակերտներից շատերին, որոնք մնացել էին Արցախում նրա մեռնելուց հետո: Գերիների թվում լինում է և մի մեծագույն կին՝ Թագուհի անունով: Ջորապետը, հավանելով նրա գեղեցկությունը, հրամայում է պահել իրան կնացնելու համար: Թագուհին չի համաձայնում կռապաշտ գորագլխի կինը դառնալ. վերջինս բարկանում է և, կտոր-կտոր անելով նրան, հրամայում է ցրել դաշտի երեսին: Գիշերը Թագուհու մարմնի կտորների և արյան կաթիլների վրա ցոլանում են լույսեր, և այդ բանը զարմացնում է անօրեններին: Հարցնում են այդտեղ եղած գերի հայ քահանաներից, որոնք քարոզում են նրանց քրիստոնեությունը: Ջորապետը իր երկու որդոց և զորականների հետ ընդունում է քրիստոնեություն և բոլորը մկրտվում են զատկի տոներին: Թագուհու մարմնի կտորները հավաքում են մի բլրի վրա, որ կոչվում է Աստղաբլուր: Հոնաց թագավորը հրամայում է հավատափոխ զորապետին և նրան հետևողներին կտորել: Ջորապետի Մովսես և Երանոս որդիքը զորականների հետ հալածական են դառնում, մինչև որ թագավորի զորքերը հասնում են սարի գլխին և կտոր-կտոր անելով, փայտի պես դիզում են ու այրում: Մարը դրանից ընդունում է Դիզափայտ անուն: Ուրիշ աղբյուրներից իմանում ենք, որ Դիզափայտից է ընդունել իր անունը և այն գավառը, որ կոչվում է Տիզակ

թուն: Ահա վերևից լավում է դղրոյուն, նրա հետև և զգուշացնող ձայներ: Նայում ես, և հոգիդ սառչում է: Ահագին քարը ամենայն արագությամբ գլորվում է վերևից, անցնում է ճանապարհի միջով և սլանում է դեպի ցած... Քանի՞ մարդկանց կյանք այդ բուրբուխի կախված էր մի մագից. սարսափելի է մտածել այդ մասին: Այնուամենայնիվ անցնում է սարսափի առաջին բուրբուխ, և ամբոխը խելագարվածի պես դեպի առաջ է մղվում:

Բայց ահա վերջապես մոտ է գագաթը: Մեր ձիաները վերջնականապես կանգնում են: Մենք իջնում ենք և միացյալ տարածությունը քայլ առ քայլ գնում ենք ոտով: Վերջապես գնացինք-հասանք այն տեղը, ուր սովորաբար իջնում է ուխտավորների մեծ մասը: Դա գագաթի մի համեմատաբար ցած բաժինն է: Այստեղից մինչև ամենից բարձր գագաթը հասնելու համար պետք է գնալ մի ոլոր-մոլոր ճանապարհով՝ լցված քարերի անհամար մանր կտորներով:

Ես մոռացա ասել, որ Դիզափայտի սարը ներկայացնում է մի բավական երկար և առանձնակի կերպով դասավորված բարձրություն: Մինչև ժայռերը սարը չունի բաժանմունքներ, կամ կողմնակի ճյուղեր: Իսկ այնտեղ, մերկ քարե մասը բաժանվում է մի քանի գագաթների, որոնք կազմված են ահագին միապաղաղ ժայռերից, այս պատճառով էլ գագաթներն ունեն շատ քիչ լայնություն: Ամենից բարձր գագաթի վրա գտնվում է ուխտատեղին, կամ, ինչպես ասում են գյուղացիք, «տաճարը»: Մենք բարձրացանք մինչև այդտեղ: Մի աղքատիկ փոքրիկ շինվածք է դա, որ ունի եկեղեցու նմանություն: Նրա դռան մոտ և շուրջը ասեղ գցելու տեղ չկար: Մարդկանց մեծ բազմությունը խիտառատ սեղմված էր այդտեղ, և ամեն մեկը աշխատում էր շուտով ներս մտնել: Մինչև մտնելու մի հնար գտնելը ես ականատես եղա մի բանի, որի մասին լռել չի կարելի: Մի թրքուհի զգուշությամբ դուրս էր տալիս մի մեծ քարի տակից սև հող: Երբ հարցրի, թե ինչ է անում նա, ասացին, որ դա գուշակություն է, թե ինչ տեսակ զավակ պիտի ծնե նա: Եթե զարի դուրս գա սև հողի հետ, պիտի աղջիկ ծնե, իսկ եթե ցորյան՝ տղա: Այս սնապաշտությունը հիմնված է այն ավանդության վրա, որ այդտեղ նահատակված սրբերը այրված են եղել կռապաշտ թագավորի հրամանով ցորենի և գարու դեզերի մեջ, այդ ժամանակից է մնացել քարի տակ ցորենն ու գարին, որով այժմ սնապաշտ կանայք գուշակում են իրենց բախտը: Իհարկե, մի քանի

հարյուր տարվա¹ ընթացքում ոչ մի տեսակ ցորյան կամ գարի չի կարող մնալ, բայց այդտեղի միակ բնակիչը՝ մուդդուսին, ամեն Վարդավառի խառնում է գարի և ցորեն հողի հետ: Եվ խավարը այնքան թանձր է, որ այսքանը հասկանալ չի լինում, այլ ընդունվում է իբրև երկնքի պատգամ: Ես չկարողացա իմանալ, թե հետաքրքիր թրքուհին ինչ տեսակ զավակ պիտի ծնե, որովհետև քանի որ նա զուշությամբ կատարում էր իր գործը, ամբոխի մի հորձանք հրեց մեզ դեպի շինության մուտքը:

Ներս մտանք: Փոքրիկ շինությունը հազիվ կարող է քսան մարդ տեղավորել իր մեջ, բայց դրա երկու չափ կային այնտեղ: «Տաճարի» պատերը, չնայած որ նոր են շինվել, բոլորովին սևացած էին, թանձր ծուխը լցել էր նրաներս: Առաջ գնացինք: Ահա այն հոչակավոր տեղը, որին երկրպագելու համար այսքան նեղություններով գալ հանձն առած էր այդ բազմաթիվ ամբոխը: Դա բոլորովին մի մերկ բեմ էր, որ գետնից մի արշիներից ավել բարձրություն չունի. նրա վար ոչինչ զարդ չկա: Բայց նա ամբողջապես ծածկված է վառված մոմերի անթիվ քանակությամբ. այդ թանձր ծուխն էլ նրանցից էր բարձրացած: Բեմի առաջ ջերմաջերմ աղոթքներ էին կարդում հայուհիները. նրանց հետ կային և բավական թրքուհիներ: Մահմեդականը քրիստոնեից ետ չի մնալ այդ նվիրական տեղի պաշտելում:

Մենք էլ ամենայն խոնարհությամբ մոտեցանք բեմին, համբուրեցինք և մի-մի գույզ չվառած մոմ դրինք այնտեղ ու ետ կանգնեցինք:

Գանձանակի² վրա հսկում էր մեզ ծանոթ տեր Մեսրոպ քահանան, որ հատուկ դրա համար եկած էր Հաղորթ գյուղից: Նա իմիջիայլոց պատմեց, որ հայտնի չէ, թե որտեղ են գտնվում նահատակների գերեզմանները, իսկ «տաճարը» մի քանի տարի սրանից առաջ շինել է մի բարեպաշտ տիկին: Ուրեմն պետք է ենթադրել, որ նահատակների նշխարների տեղը հին ժամանակներից մինչև այսօր պահում են այդ ժայռի գլխին ժողովրդի ավանդությունները միայն: Ուրիշ մի հիշատակ կամ վկա չկա դրան վերստուգելու համար:

Ուխտավորների թիվը հետզհետե շատանում էր. մարդկային արտաշնչություններով լցված օդը խեղդում էր. մենք շտապեցինք դուրս գնալ: Բարձրացանք «տաճարի» դռանը կանգնած ժայռի գլուխը. դա ամենաբարձր կետն է ամբողջ այս սարի գլխին: Եվ այդ բոլորին, կարծես, դյուրական

¹ Հայսմավուրքի պատմության նայած՝ սուրբերը նահատակվել են 5-րդ դարում

² Գանձակը հասնում է Շուշիի հոգևոր դպրանոցին: Ցանկալի կլիներ իմանալ, թե որքան է հավաքվում

գավազանի շարժմամբ հորիզոնը ահռելի չափերով լայնացավ մեր առաջին՝ բաց անելով մի անհասկանալի լայնատարած տեսարան, որի մեջ ընկած էին Գանձակի նահանգի հարավային զանազան մասերը: Հեռու, դեպի հարավ, դեղնած ու այրված դաշտավայրերով հոսում էր «մայր Արաքսը»... Անհամար փոքրումեծ սարերը, կտրելով զանազան ուղղությամբ հովիտները, միացնելով իրանց տեսքերը միմյանց հետ, կազմում են գեղեցիկ տեսարաններ: Լեռնային քամին այնքան սուր և ներս թափանցող էր, որ հարկադրված էի հագնել ձմեռային հաստ վերարկու:

Երկար ես չէի կարողանում դարձնել աչքերս այդ գեղեցիկ տեսարաններից, թեև ընկերներս թախանձում էին իջնել մի քիչ ցած և ճաշել: Ես այդ ժամանակ մասամբ հասկանում էի այն պատճառը, թե ինչու մարդիկ այնքան սիրում են լինել լեռնային բարձրությունների գլխին՝ ենթարկվելով վտանգների: Իրավ, մի վսեմ և վերին աստիճանի բանաստեղծական բան է ներկայացնում այն շրջանը, որի մեջ ընկնում եք դուք, լինելով բարձր սարերի գլխին: Ամեն ինչը ներշնչում է ձեր մեջ մի ազդեցություն, որ ավելի խոնարհեցնում է ձեր միտքն ու հոգին երկրի ստեղծողի առջև: Հովիտների և ձորերի մեջ ձեր սահմանափակված հայացքը, միտքը այստեղ ավելի և ավելի լայնանում է. դուք բոլորովին մտավորապես հափշտակվում եք զանազան տեսակ զգացմունքների տակ, չեք իմանում ինչին ավելի երկար մտիկ տալ, ո՞ր բանը ավելի շատ զննել: Ժամանակը անցնում է սարսափելի արագությամբ, և դուք միայն ավստում եք, որ միջոց չեք ունենա ավելի երկար և հանգիստ կերպով ամեն բանը տեսնելու և դիտելու համար: Նայում եք դեպի մի կողմ՝ մի տեսակ տպավորություն են գործում լեռնային գոտիներն ու անդունդները. այդտեղ բնությունն է միայն գործում մտքի վրա: Նայում եք դեպի մյուս կողմ՝ այդտեղ բոլորովին տարբեր բան. մի տեղ երևում է Տոդա սարի այն գագաթը, ուր ցրված է մեռյալ բերդը. մյուս տեղ երևում է «ալևոր Արաքսը», և դրանք զարթնեցնում են ձեր մեջ հազար ու մի մտքեր անցյալի մասին, մտքեր, որոնց բուռն ծնունդ պետք է համարել, որովհետև մեր այժմյան խաղաղ ու հանգիստ կյանքում մենք չէինք կարող հասկացողություն կազմել տխուր անցյալի մասին, եթե չլինեինք նրա վկանների մոտ: Այդ վկանները այժմ էլ հաստատում են, որ հայ ժողովրդի վրա հասել է մի մեծ գթություն հյուսիսի վեհ արծվի թևերի տակ. դադարել են քաղաքական թշվառությունները, մարդիկ հանգիստ և անդորրություն են վայելում, բայց

ափսոս, որ մինչև այդ ժամանակ հասնելը հայերից մնացել է մի բուռը միայն. մեծամասնությունը «գթություն» գոչելով էլ անհետացել է աշխարհի երեսից:

Այնքան զբաղված էր իմ հոգին այդպիսի հիշողություններով, որ ընկերներիս դեպի ինձ ուղղված շատ հարցեր մնում էին առանց պատասխանի իմ կողմից: Այո՛, միայն հոգին է, որ գործում է այդպիսի դեպքերում. մնացած զգայարանքները ճնշված, հափշտակված էին, կարծես մեկը խլել էր դրանք ինձանից:

Այնտեղ, ուր մենք կանգնած ենք, ամեհի միապաղաղ ժայռի մի սալ է. նրա մակերևույթը ճոթոտած է, մեծ-մեծ քարեր դուրս թռած են այնտեղ. երևի մի ահագին ուժ է քանդել այս քարյա պինդ մասսան: Այդ ուժը կայծակն է եղել: Որքա՛ն սուկալի պիտի լինի կայծակը այս բարձրությունների վրա: Դա սովորականից դուրս մի երևույթ է և հենց այդ իսկ պատճառով այժմ ժողովրդի մեջ առասպելի ձև է ընդունել: Որպես մեզ հետո պատմեցին, ժողովրդի մեջ խոսում են, որ «խաչի դուլերից» մեկը երազ է տեսել, որի մեջ «աղան» հայտնել է, թե աստված ուզում էր ջրհեղեղով բնաջինջ անել աշխարհը, բայց նա (սուրբը) միջնորդել է՝ գթաց լինել դեպի մարդիկ: Այն ժամանակ աստված ասել է, որ երկրին հասնելիք պատիժը կտա իրան՝ Դիգափայտին: Երբ սա ընդունել է այդ, կայծակի սարսափելի հարվածը փշրելակոսել է ժայռի գագաթը: Այդ անցքը պատահել է այս տարի: Մի քանի տարուց հետո նրա մասին ստեղծված այս առասպելը կդառնա ավանդություն և իբրև մի սուրբ ճշմարտություն, կանցնի որդոց որդի:

Երբ մենք ճաշում էինք ներքի բարձրության վրա, ժամը մեկն էր. և այս միջոցին դեռ չէր դադարել ուխտավորների գալը. սարի գլխից երևում էր բազմություն, որ անդադար շարժվում էր դեպի վեր. նորանոր խմբեր գալիս էին և տեղավորվում ժայռերի տակ, փոքրիկ արհեստական հրապարակների վրա, որոնցից յուրաքանչյուրն ունի իր սեփական տերը, որ շինել է նրան և միշտ իջնում է այնտեղ:

Իրիկնապահին արդեն լավ ցուրտ էր: Տաք ձմեռային վերակուն էլ չէր կարողանում ընդդիմադրել ցուրտ քամուն, և ես հարկադրված էի խնդրել ընկերներիս ման գալ. կարծում էի, թե արագ շարժվածքը զառիվայր քարքարոտ նեղ ուղիով կարող է մի քիչ տաքացնել մեր անդամները, որոնք սկսել էին սառչել: Ուղևորվեցինք կրկին դեպի «տաճարը»: Մխալված չեմ լինի, եթե ասեմ, որ ուխտավորների թիվը առավոտվանից երկու անգամ շատացել էր: Անցնել դժվար էր. յուրաքանչյուր քարի վրա, յուրաքանչյուր մի շատ կամ

քիչ հարմար տեղ թափված էին մարդիկ. սպիտակ քարերը կատարելապես սևացած էին բազմությունից: Բոլորն էլ ուրախանում էին: Ամեն մեկը մոռացել էր իր վիշտը, դառնությունը և քաղցր-քաղցր խոսելով կամ պարելով գունդայի ականջներ խլացնող ձայնի տակ, օդը լցնում էր ուրախ աղաղակներով:

Ժողովրդի մեջ տիրում է մի համոզմունք՝ սրբի տակ ուրախ լինել, քեֆ անել, և ամեն մեկը աշխատում է իրագործել այդ համոզմունքը լայն չափերով: Ունևորի համար այդ բանը մեծ դժվարություն չի պահանջում. պետք է միայն ցանկալ: Խոսենք աղքատների մասին:

Բազմաթիվ դեպքերի ականատես եղած եմ, երբ աղքատը տոն օրերին սրբից չընկնելու համար գրավ է դնում իր վերջին անհրաժեշտ բաները, փող է առնում և իր սրտի բաղձանքը կատարում: Սուրբ գնալու համար առնվազը պիտի մսխե նա յոթ ռուբլի, եթե ունի պինդ ոտեր՝ ձիու կամ այլ անասունի օգնությանը չապավինելու համար: Նա էլ պիտի մի լավ քեֆ անի սրբի տակ, հասկանալով քեֆը աղքատի լեզվով. ընտանիքը այդ օրերը մի քիչ լավ է անցկացնում: Բայց որքան թանկ է նստում այդ ուրախությունը, որքան վատ է լինում հետևանքը: Աղքատը վերադառնում է տուն, սկսվում է առժամանակ ընդհատված դառն աշխատանքը մի կտոր հացի համար, ոչինչ ետ գցել չի կարողանում: Գրավ դրած կաթսան մտնում է վաշխառուի խոհանոցը իբրև անժխտելի սեփականություն, իսկ ժամանակով հսկայական հասակ առած տոկոսը ճմլում է խեղճի շլինքը: Այսպես աննկատելի անցնում է տարին, և ահա նորից պետք է մտածել սուրբ գնալու մասին: Կրկնվում է նույն պատմությունը՝ ավելացնելով աղքատի պարտքի վրա մի քանի ռուբլի պարտք ևս՝ իր հրեշավոր տոկոսներով. խեղճը տալիս է, տալիս և շատ անգամ էլ պարտական մեռնում: Իսկ նրանից հետո պարտական են մնում նրա ժառանգները, որոնք կարեցածի չափ շարունակում են հատուցել «հոգու սուրբ պարտքը»: Այսպիսի դեպքեր մի քանիսը տեսած եմ: Եթե միշտ այսպիսի հետևանք չի ունենում պարտքով ուխտագնացությունը, գոնե նա միշտ ծանր լծի պես ընկնում է աղքատի վրա՝ ավելի դառնացնելով նրա դրությունը, ավելի դժվարացնելով հացի խնդիրը: Փորձիր հասկացնել, որ նրա ջերմ կրոնական զգացմունքը այս սրբի վերաբերմամբ ընդունված կլինի նահատակների և աստծո առջև և այն ժամանակ, երբ նա իր բնակության տեղը մի տաք աղոթք կանե և երկու մում կվառե, նա չի հասկանա, նա

կասե ու կասե, որ անպատճառ պիտի լինի այստեղ, մասնակցե անձամբ այս ուրախություններին, համբուրե իր սեփական բերանով սրբի գերեզմանը:

«Տաճարի» դռների մոտ այս անգամ էլ հավաքված էր ահագին ամբոխ. մարդիկ հրում էին, սեղմում էին միմյանց... Մենք կարողացանք մտնել ամբոխի մեջ ոչ առանց դժվարության. գյուղացիք առհասարակ հարգանքով են վերաբերվում դեպի քաղաքացիք և ճանապարհ էին տալիս մեզ: Այստեղ եղանք մի տեսարանի, որ ավելի քան զայրացրեց մեզ: Երկու կանայք ուշաթափ ընկած էին դռների մոտ. դրանք էին «սուրբի դուլերը»՝ նվաղած կանայք, որոնց հետ, տգետ ամբոխի համոզմամբ, այդ թուպեին խոսում էր սուրբը: Նրանք փետում էին իրենց մազերը, ձեռները խփում էին քարերին և կցկտուր ձայնով պատգամներ էին խոսում նրանց մոտ հավաքված մարդկանց: Ընկերներիցս մեկը մի կոշտ խոսք ասաց նրանցից մեկի վերաբերմամբ. նա սթափվեցավ և կոպիտ բանակոծիվ սկսեց նրա հետ: Իսկ մյուսը դեռ խոսում էր: Նա ասում էր. «Աղան հրամայում է ինձ դռնեղուռը ողորմություն հավաքել, ասում է՝ աչքդ պիտի հանեմ. պիտի յոթը շեն ման գաս, ողորմություն հավաքես»: Հետո իր դեմքի վրա գործում էր ծամաձողություններ, կարծես ծանր էր նրա համար այդ պատիժը և աղաչում է ազատել իրան պատժից: Եվ հետո, կարծես լաց լինելով, ասում էր. «Ասում է՝ չէ՛, հավաքիր... ողորմություն հավաքիր»: Եվ նա կկատարի այդ... Նրան լսում է մի մեծ ամբոխ, որ էգուց պիտի պատմի բոլոր գյուղերում այդ պատգամախոսությունը: Եվ էգուց, երբ գյուղերի մեջ կհայտնվի մուրացկանի պարկը շալակած կինը, յուրաքանչյուր ոք կշտապի առատորեն տուրք տալ՝ կատարելով սրբի կամքը...

Վտանգավոր է այդպիսի դեպքերում մի բան խոսելը. և իմ ընկերը, որի խոսքից սթափվել էր մի նվաղած, անախորժությունների ենթակա պիտի լիներ ամբոխի կողմից, եթե մի քանիսները չաշխատեին հանգստացնել հուզված մտքերը: Այդ կնոջ դեմքին ես չկարողացա նայել, այնքան լիրբ և անամոթ էր նրա արտահայտությունը: Ինձ պատմեցին, որ այդ կինը Թաղլարի մեջ հայտնի «չոփչին» է:

Երկու խոսք «չոփչիի» մասին:

Փոքրիկ մանուկները, երբ միրգ են ուտում, ինչպես ասում են, շատ անգամ կորիզները մնում են նրանց կոկորդներում, որից և հիվանդանում են: Այդ ցավը բժշկելու համար պատրաստ է «չոփչին», որ համարյա միշտ կնիկ է լինում: Դնելով հիվանդ մանուկը ծնկների վրա, չոփչին բերանը դնում է

նրա քթածակերին և որքան ուժում կա փչում է. այդ ժամանակ բերանից որպես թե դուրս է թռչում կոկորդի մեջ մնացած կորիզը, կամ «չոփը»: Չոփչիությունը սովորելու կարելի արհեստ չէ. նրան բաժանում են սրբերը իրանց սիրելիներին. և որի արհեստը «տվովի» (սրբից տված) չէ՝ այնպիսին կլինենտներ չի ունենում: Չոփչիները նույնպես կեղեքում են հասարակ դասը. նրանք բոլորն էլ հարուստ են լինում: Ամեն տարի չոփչիները պարտավորված պիտի ուշաթափ լինեն սրբերի տակ, իհարկե, իրանց վարկը ամուր պահելու համար: Կախարդության ձև ստացած բժշկության այս իր տեսակի առանձին ճյուղը խիստ անխախտ հիմունքների վրա է գտնվում, և նրա շահավետությանը առայժմ ոչինչ վտանգ չի սպառնում:

Միննույն ժամանակ, երբ ուշաթափ կինը կարդում էր իր պատգամախոսությունը, «տաճարի» մեջ դրսից երևում էր և մի ուրիշ տեսարան. մի քանի կանայք, ընդունելով մուղղուսուց փոքրիկ քարեր, դնում էին իրանց վզերին և չոքեչոք պտույտ էին գալիս տաճարի միջով, պատերի տակով: Դրանք չբեր կանայք էին. այդ քարերը պիտի լուծեին նրանց ամուլությունը:

Հեռանալով այդ տեսարաններից, ես կրկին բարձրացա ժայռի գլուխը և լուռ մտախոհության մեջ անձնատուր եղա բնության տեսարանների դիտողությանը: Իմ հետ նստածներից մեկը ցույց տվեց մեր առաջին մի սար, որ գտնվում է Տումի կոչված գյուղից վերև. այդ սարի գլխին, նրա ասությանը, գտնվում են հին ավերակներ, նույնպես և «Գակի» թագավորի գերեզմանը: Հարցուփորձից հայտնվեց, որ դա ճիշտ է, և ամենքն ասում էին, որ «Գակի» թագավորի գերեզմանը այնտեղ է: Որքան և մեծ էր իմ ցանկությունը տեսնել և այդ տեղը, այնուամենայնիվ, ստիպված էի հեռանալ այդ մտքից, որովհետև բոլորովին միջոց չկար այնտեղ հասնելու. Գիշերը վրա էր հասել, իսկ էգուց առավոտյան, լուսաբացին, այս բոլոր մարդիկ պիտի թողնեն այս տեղերը և ցած իջնեն: Այնպես էլ մնացի առանց որևէ տեղեկության այդ Գագիկի մասին: Հետևյալ օրը, տեսնելով հ.Կոստանյանցի հետ, խոսեցի այս մասին. նա ասաց, որ իրան էլ հայտնի են այդ գերեզմանն ու ավերակները, ավելացրեց և այն, որ դիտավորություն ունի գնալ այնտեղ և հավաքել բոլոր կարելի եղած տեղեկությունները:

Արեգակը մայր մտնելու վրա քամին Դիգափայտի վրա ավելի սաստկացավ: Օդն այնքան ցուրտ էր, որ հարկադրված էինք բոլորովին փաթաթվել վերարկուների և վերմակների մեջ. բայց այդ էլ չօգնեց: Քամին այնքան սուր և թափանցող էր, որ բավական էր նրա մի դիպչելը մարմնի մի բաց

տեղին, և ամբողջ մարմինը դողում էր... Քարե մեծ ժայռերն էլ չէին կարողանում պաշտպանել մեզ ցրտից, քամին ամեն տեղ հասնում էր: Մի քիչ փափուկ ապրած մարդու համար ցուրտը համարյա անտանելի էր. գուցե անտանելի էր և գյուղացի ուխտավորների համար, սակայն նրանք ցույց չէին տալիս ոչ մի նշան, որով կարելի լիներ իմանալ ցրտի ներգործության չափը: Ընդհակառակը, նրանք շարունակում էին իրանց ուրախությունները: Քամու շվոնգների, մոնչյունների տակ մարդիկ դեռ պարում էին, թեպետ և զուռնայի ձայնը քամին տանում էր շատ հեռու, այնպես որ մոտիկում կանգնածին էլ լսելի չէր լինում: Ես միայն նախանձվում էի նրանց վրա, աշխատելով ավելի պինդ ծածկվել շորերի տակ: Շուտով վրա հասավ մթությունը: Հարավային կապույտ երկինքը քողարկվեց սև վարագույրի տակ, որ ծածկեց մեր աչքերից ամեն ինչը: Խավարն էլ արգելք չկարողացավ լինել մարդկանց ուրախություններին. դեռ շարունակվում էին աղաղակները: Կծկվելով մի տեղ, մեր շրջանի բոլոր ընկերներս ծածկվեցինք մի վերմակի տակ և պառկեցինք: Բայց ի՛նչ պառկել... Հինգ հոգի թափված էինք միմյանց վրա, այնպես որ ազատ շարժությունը անհնարին էր. պետք էր ընկնել անշարժ և այնքան համբերություն ունենալ, որ եթե մի անդամն ընդարմանար անգամ, դարձյալ կարելի չէր շարժվել: Այնուամենայնիվ մենք ակամա տանում էինք այդ տանջանքը, որովհետև գեթ դրանով քիչ տաքանում էինք: Եվ այսպիսի դրության մեջ պետք էր քնեինք: Բայց չնայած սաստիկ հոգնածությանը, որ պահանջում էր հանգիստ և քուն, ես չկարողացա այս գոցել համարյա մինչև լուսաբաց: Կեսգիշերից մոտ մրրիկը ավելի կատաղեց և, ընդհարվելով մեծ ժայռերին, ահռելի ձայներ էր արձակում: Այդ ժամանակ էլ լռեցին բոլոր մարդկային ձայները: Մի թե ամենքն էլ քնել են մի այնպիսի սուսկալի ժամանակ: Առավոտից մոտ մի թեթև նինջ տիրում է մեզ: Բայց քամու մի ուժգին հարձակումը կրկին զարթնացնում է ինձ: Առավոտ է, և ես շտապում եմ կանգնել, որպեսզի փութով թողնեմ այդ անհյուրասեր բարձրությունները: Ներքևում, հովիտների վրա, դեռ տիրում էր խավարը, իսկ այստեղից արդեն կարելի է տեսնել արեգակի ծագելը: Շիկացած երկաթե գնդակի նման արդեն լողում է նա դեպի բարձր, դեռ չկարողանալով արձակել ճառագայթները մեզ վրա: Ընկերներս զարթնում են, ամեն մեկն աշխատում է անշարժությունից փայտացած անդամները շփելով ու ծոմոնելով կրկին կենդանության հրավիրել: Բայց ցուրտը դեռ շարունակվում էր: Ուխտավորների խմբերն արդեն ոտքի վրա են և շտապում են դեպի վեր, դեպի

«տաճարը»՝ վերջին անգամ ուխտ անելու համար: Մենք իջնում ենք դեպի ցած, իհարկե, ոտով, գնում ենք ուղղաթեք գառիվայրերով համարյա վազե-վազ և այդ բնական շարժումը մի քիչ տաքացնում է մեր այրունը: Քամին մեզ թողեց սարի ստորոտում. այդտեղ օդը տաք էր, հարկավորություն չկար փաթաթվել ձմեռային վերակուի մեջ: Շուտով մենք Քոշի աղբյուրի մոտ էինք, լվացվեցանք ձյունի պես սառը ջրով, հեծանք ձիաները ու ճանապարհ ընկանք:

Մոռացա հիշել, որ Դիզափայտի սարը միայն մի աղբյուր չի տալիս. Քոշի աղբյուրից քիչ դեպի արևմուտք մի ուրիշ ձորի մեջ հոսում է և մի այլ աղբյուր, որ կոչվում է Արջի աղբյուր: Դրա հետ կապված է մի ավանդություն, որի մասին խոսել ավելորդ չէր լինի:

Ասում են, որ հին ժամանակները մի արջ, դուրս գալով Տումի գյուղի ծմակներից, սկսում է բարձարանալ դեպի Դիզափայտ: Հասնելով այն տեղին, ուր այժմ գտնվում է աղբյուրը, արջը սաստիկ ծարավում է, այնպես որ ուժաթափ ընկնում է, սկսում է լիզել գետինը ու աղետալի կերպով բառաչել դեպի երկինք:

Երկինքը խուլ չի մնում արջի վերաբերմամբ: Իսկույն գետնից բխում է այդ աղբյուրը, արջը խմում է զովարար հեղուկը և շարունակում է իր գնացքը դեպի վերև: Այդտեղ ճակատագիրը խիստ անգութ է դառնում դեպի արջը: Հասնելով ժայռային մասի ստորոտին, նա կայծակնահար է լինում, տեղնու-տեղը սասկում: Մինչև այսօր էլ ցույց են տալիս նրա տեղը. դա մի փոքրիկ քարախառն հողակույտ է՝ «տաճարից» ցած:

Տեսնելով այդ հրաշքով ստեղծված աղբյուրը, ես հիշում եմ Գտիչի վանա-հայր Առաքել վարդապետի մի ուրիշ պատմությունը այնտեղ գտնվող մի քաղցրահամ աղբրի մասին: Հայր սուրբն ասում էր, որ երբ ինքը նոր վանա-հայրի պաշտոնով եկել էր Գտիչ, բոլորովին ջուր չկար նրա մոտիկ շրջակայ-քում. ջուրը բերում էին շատ ներքևից: Մի անգամ երագում երևում է վանքի հիմնադիրը՝ Վրթանես եպիսկոպոսը և հայտնում է, որ այնինչ տեղը ջուր կա: Մյուս օրը վանահայրը իր մարդկանց հետ գնում է ցույց տված տեղը և հենց որ դիպչում է մատով գետնին, օ՛ սքանչելացս, իսկույն բխում է աղբյու-րը, որ մինչ այժմ էլ գոյություն ունի: Ուրեմն իզուր են ասում, թե մեր ժամա-նակները հրաշքներ չեն լինում... Եվ վանահայր վարդապետը պատմում էր այդ անկեղծորեն՝ համոզված լինելով, որ մենք մազի չափ կասկած չունենք նրա երագի մասին:

Զ

ԶԿՌԱՏԱՓ: ՕԽՏԸ-ԴՌՆԻ:

Քոչի աղբրի մոտից ուխտավորները բաժանվում են. յուրաքանչյուր գյուղի ժողովուրդ ուղևորվում է դեպի իր կողմը, տանելով իր հետ բազմաթիվ ոչխարներ, որ գնել էին վերևում, սրբի մոտ: Դեռ երեկ ես տեսել էի այնտեղ մեծ-մեծ հոտեր, որոնք իմ աչքի առջև հավեցին, վերջացան: Ես արդեն գիտեի, թե ուր են տանում ոչխարները, ինչու չմորթեցին սրբի մոտ, սարի գլխին: Պատճառը շատ հասկանալի էր: Ամբողջ սարի վրա ոչ մի կաթիլ ջուր կա, ոչ՝ մի կտոր փայտ: Բացի դրանից, ինչպե՞ս շարժվել այնտեղ:

Ուխտավորների մեջ սովորություն է դարձել մատաղները տանել Դիզափայտից քիչ կամ շատ հեռու և նշանակված տեղերը մորթոտել: Թաղլարեցոց ընտրած տեղն է Ջկռատափ անունով մի անտառապատ տեղ, ուր կա և ջուր: Երբ մենք մոտեցանք այդ տեղին, ծառերից կախված էին մաշկած ոչխարներ, իսկ նրանց մոտ այրվում էին խարույկները: Ստիպված էինք շնորհակալությամբ մերժել շատերի հյուրասիրությունը և մնալ մեր այն խմբի մեջ, որի հետ գնացել էինք Դիզափայտ: Այդ խումբը բավական սովոր էր: Շուտով ամեն տեղ «սուփրա բացին»: Մարդիկ նստած էին դալար խոտերի մեջ, կազմելով մեծ շրջաններ: Ահագին շամփուրներով խորոված միսը կուտում էին մեջտեղ, և ամեն մեկը վայելում էր առատությամբ... Բերվում էին և շամփուրներ, որոնց վրա բացառապես խորոված էին ոչխարի դմակներ: Որքա՞ն մեծ զմայլմամբ ուտում էին գյուղացիք ճարպի մեծ կտորները, միջոցներում չմոռանալով ողորմաթասեր ու կենացներ դարդակել մեծ սկերից, որոնց կառավարելը հանձնված է լինում սովորաբար երիտասարդներին: Ամեն տեղ ուրախություն էր տիրում, կարծես, այստեղ կատարվում էր մի մեծ խնջույք: Իսկ երբ բոլոր պաշարները կերած ու խմած էին, ամենքը շտապեցին համետել իրենց գրաստները ու ճանապարհ ընկնել:

Իմ բարեկամը հիշեցրեց երեկվա խոստումս՝ ուխտ գնալ Օխտը-դռնին, որ այդտեղից շատ հեռու չէր:

Մենք դուրս եկանք մեծ ճանապարհից և նախ արտերի միջով, ապա հսկայական ծառերի տակով գնալով հասանք մի բլրի, ուր և տեսանք Օխտը-դռնին: Դա մի շատ հին շինություն է՝ վերնիցը բաց: Սողալով ներս մտանք մի փոքրիկ ծակով, որ դռան տեղ է ծառայում: Շինության ներսը ներկայացնում է յոթն կանոնավոր կիսաբոլորակ խորանաձև բաժանմունքներ, որոնք բաժանվում են միմյանցից պատերի սյունաձև հավելվածներով: Յոթ բա-

Ժանմունքներից էլ ստացել է իր անունը այդ ուխտատեղին (Յոթն դրնանի): Յոթ բաժանմունքներում այրվում էին բազմաթիվ մումեր: (Այդտեղ ուխտ գնացողը անպատճառ պիտի ունենա յոթ մում): Պատերը բոլորովին սևացած էին ծխից. մի տառ անգամ չկարողացա գտնել նրանց վրա: Այդ կողմերի ավերակների և կանգուն եկեղեցիների այժմյան կենդանի բնակիչը և հարևանը՝ Առաքել վարդապետը, ասում էր, որ այնտեղ թաղված են յոթ խոտաճարակները, որոնց տոնում է մեր եկեղեցին: Թե որքան ստույգ է այդ, չգիտեմ:

Այս ուխտատեղին գտնվում է մի անսովոր գեղեցիկ տեղ: Նա շրջապատված է անտառով, որ այնքան գեղեցիկ է, որ չես հավատում, թե դա մի արհեստական ծառաստան չէ, այլ քմահաճ բնության մի սիրուն զարդ: Այդտեղ միշտ շվաք է, միշտ զով քամին երջանկություն է պատճառում ուղևորին, երբ նա նստում է այդտեղ քիչ մի հանգստանալու համար: Հեռու շրջակայքը ներկայացնում են խիստ հրապուրիչ տեսարաններ, ամեն տեղ բուսականությունը շլացնելու չափ հարուստ ու փարթամ է: Բնության ոչ մի զարդ, ոչ մի երևույթ չի զլանում հաղորդել այդ չքնաղ անկյունին այնքան վսեմ և հափշտակող պոեզիա, որի ազդեցությունից չի կարող ազատ մնալ սիրտը, ինչ տեսակ կազմվածք և ունենա նա:

Մեծ ափսոսանքով էի հեռանում ես Օխտը-դրնից և հեռանում էի որպես թե մի պատկերից, որին որքան շատ ես նայում, այնքան էլ շատ գերում է նա քո սիրտն ու հոգին: Որքան փափագելի էր ինձ մնալ այդտեղ գոնե մի շաբաթ, ապրել այդ բնության մեջ, ծծել այդ մաքուր ու գեղեցիկ օդը: Բայց ժամ էր հրաժեշտ տալ և այդ տեղին: Դրանով վերջանում էր մեր ուխտագնացությունը...

Բազմազան տպավորությունների մի ամբողջ բեռն ընկած էր իմ հոգու վրա. ես ամբողջապես հափշտակված էի մտածողությունների մեջ, այնպես որ թոզոտ ու տաք ճանապարհը ինձ համար աննկատելի կերպով անցավ: Իրիկնապահին մենք Թաղլարի մոտ էինք. մի քիչ շրջեցինք այգիների մեջ և հետո մտանք գյուղը:

Բոլորովին ջարդվածի պես ես ընկա անկողնու մեջ: Այդ բոլոր անցկացրածից հետո ինձ հարկավոր էր հանգստություն և հանգստություն...

Երկու օրից հետո, հուլիսի 17-ին, ես արդեն Շուշիումն էի:

ՀԱՎԵԼՎԱԾ¹

Շուշիի գավառում, Տիգրանի և Վարանդայի սահմանների վրա, դեպի Թաղլար և Տոդ տանող ճանապարհից վերև գտնվում է Վերին Թաղավարդ հայաբնակ գյուղը: Նա տեղավորված է մի բավական մեծ և բարձր լեռնային բարձրության վրա, որ պատած է ծմակներով:

Այդ գյուղից դեպի հարավ-արևմուտ, 1½ վերստ հեռավորությամբ գտնվում է մի առանձնակի դասավորված անտառապատ մեծ բլուր: Ճանապարհը դեպի այդ բլուրը բավական հարմար է. ուղևորը աստիճանաբար բարձրանում է ձիով անընդհատ ծմակի միջով:

Վեց թե յոթ ամիս սրանից առաջ այդ բլրի գլխին, հսկայական ծառերի մեջ, երևում էր մի խաչքար, որ Թաղավարդ գյուղի հայերի ուխտատեղին էր. նա կոչվում է Բարևածառ: Այդտեղ ուխտ գնացողն ունի և այժմ կատարում է մի սրբազան պարտականություն, որ ավանդաբար մնացել է ժողովրդի մեջ ամենահին ժամանակներից. տարած գոհերից ինչ և մնա ավելորդ՝ պետք է թողնել այնտեղ, իսկ ետ տանել մի բան անկարելի է, և այդպես չանողները խստիվ պատժվում են: Պատմում են, որ մոտիկ անցյալներում թաղավարդեցի մի քանի գյուղականներ, մոռանալով նախնական սովորությունը, գոհ տարած ոչխարների ավելորդ մնացած դմակները ետ են տարել տուն. չի անցել և մի քանի օր՝ կարկուտը ոչնչացրել է նրանց արտերի մեծ մասը. այնինչ մյուս գյուղացիների արտերը անվնաս են մնացել: Սա է Բարևածառի մի առանձնահատկությունը:

Սոտավորապես յոթ ամիս սրանից առաջ մի թաղավարդեցի հայ կամե- նում է այդ խաչքարի վրա մատուռ կանգնացնել իր սեփական միջոցներով: Գյուղացիք քանդում են մատուռի համար հիմք, բայց փորած տեղից երևում են գետի տակ ծածկված շինության պատերը: Փորողները զգուշությամբ շարունակում են գործը. հետզհետե երևան է գալիս մի եկեղեցի. այստեղ աշխատանքները ընդհատվում են, թեև արտաքին նշաններից երևում է, որ

¹ Մեր այս գրքույկը բոլորովին պատրաստ էր մամուլի տակ մտնելու, երբ ստացանք մի քանի տեղեկություններ ևս, որոնք ունեն մոտիկ կապ մեր հիշատակարանի հետ. ուստիև հարմար դատեցինք ավելացնել այդ տեղեկությունները առանձին հոդվածով: Փույթ չէ, եթե մեր աշխատությունը դրանով զրկվում է կանոնավոր դասավորությունից. մենք առաջարկում ենք հում նյութ, որից հետաքրքիր բանասերը կարող կլինի մշակել շատ թե քիչ ուղիղ եզրակացություններ Արցախի և Ադվանից երկրի հին պատմական ժամանակներից: Միևնույն ժամանակ շատ գոհ կլինեինք, եթե մեր այս գրքույկը կարողանար ցույց տալ մեր գիտնականներին, թե մեր երկրում էլ կան շատ ուսումնասիրելու բաներ: Կանգնեն տարիներ, և ավերիչ ժամանակի ամեն ինչ ոչնչացնող ժանիքներից ազատված և մինչև մեր օրերը պահված հնությունների մնացորդները բոլորովին կանհետանա ն, տանելով իրանց հետ հավիտենականության անդունդների մեջ շատ հետաքրքիր բաներ

դեռ էլ շինություններ պիտի լինեն գետնի տակ: Հայտնվում է, որ ուխտատեղի դառած խաչաքարը գետնի տակ ծածկված եկեղեցու վերին քարերից մեկն է եղել:

Եկեղեցին ներկայացնում է բազմադարյան մի շինություն՝ կառուցած ամենանուրբ ճաշակով և գեղեցիկ ճարտարապետության կանոններով. նա գլուխ չունի, բայց սեղանի և խորանների տեղերը բավական լավ են պահվել: Ահագին ծառերի արմատները խրված են պատերի մեջ. բուսականության կյանք տվող ուժը դարերի ընթացքում ճմլել է անշունչ եկեղեցու ավերակները, ուստիև շատ քարեր ճաքճքած ու կոտրատված են:

Եկեղեցու շինության տարին դեռ չի հայտնվել. բայց նրա հնության մասին խոսում են երկու արձանագրություններ, որոնք գտնվում են երկու խաչաքարի վրա: Դնում ենք այստեղ նրանց ճիշտ օրինակները.

«Սուրբ Պետրոս. կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց: Արդ, որք երկրպագանէք սուրբ Նշանիս զիս աղօթս... ջիք և Աստուած զձեզ յիշեսցէ. թուին Ն.Խ.Ձ.Էր»:

«Սուրբ Պօղոս: Յամս Աստուածապատիւ և հոգևոր Տեառն Յովհաննիսի Ամարասայ եպիսկոպոսի և պետութեան Տեառն Գագիկայ Աղուանից իծխանաց իշխանի ես հայր Կիրակոս առաջնորդ սուրբ ուխտիս եղբօր որդի Կոկոնայ...»:

Թվականը միևնույնն է:

Ուրեմն մոտ ինն հարյուր տարվա հնություններ են դրանք: Այժմ, կարծում ենք, հասկանալի է, թե ինչ «Գագիկ» թագավորի գերեզման է գտնվում մեր հիշատակարանում հիշած Տումի գյուղի սարի գագաթի վրա և այս արձանագրությունը ավելի մեծ նշանակություն է տալիս այն գերեզմանին, որովհետև, եթե ընդունել, թե նույն Գագիկն է այս արձանագրության մեջ հիշվածը, նա ինն հարյուր տարվա մի հնություն պիտի լինի:

Այստեղ մեր առաջ երևան է գալիս մեր հին պատմությունը ուսումնասիրելու մի միջոց. դա ժողովրդի մեջ կենդանի մնացած ավանդություններն են: Ինն հարյուր տարի անցնում է մի երկրի վրայով, ինն հարյուր տեսակ փոփոխվում է ազգերի վիճակը, բայց երկրի բնիկների մեջ չի մեռնում մի անուն, բերանացի զրուցաբանությունների մեջ կենդանի է պահվում ժողովրդական հերոսը, նրա գերեզմանի տեղը: Դա է եղել հայկական ժողովրդի մի ամենահին հատկությունը, որ կա մինչև այսօր: Մտեք գյուղական հասարակ դասի մեջ, խոսացրեք, և դուք կտեսնեք, որ հայը շատ անգամ

ներկայի համար այնքան հասկացողություն չունի, որքան հին պատմական կյանքի մասին. հայրենիքի մեջ կատարված անցքերը մտել են նրա ավանդությունների մեջ, ուր իսկականությունը թեև աղճատված է, բայց գլխավոր դեպքերը, փաստերը անհամեմատ պարզ և ճիշտ են մնացել: Մի՞թե զանազան առասպելներից և բերանացի ավանդություններից ու երգերից չէր հավաքում պատմության փշրանքները հինգերորդ դարու մեր ուսումնական մեծն Խորենացին: Ցավալի ներհակություն: Տասնևչորս դար մեզանից առաջ հասկանում էին ժողովրդական բանաստեղծությանց նշանակությունը, իսկ մեր օրերում թեթևամտությամբ են վերաբերում դեպի ավանդությունները, ժողովրդի կենդանի ձայնը:

Մեր հիշած Բարևաձառի հետ նույնպես շատ ավանդություններ կան կապված, որոնցից կհիշենք մի քանիսները: Թաղավարդի ծերունիքը (իսկ այդ գյուղում հարյուրից ավել տարիներ տեսածներ շատ կան), ի թիվս որոց կհիշեմ Գրիգոր քահանա Դադյանցին, ասում են, որ Բարևաձառը մի ժամանակ եղել է Աղվանից կաթողիկոսության ամառանոցը: Այդ բանը շատ հավանական է երևում, երբ աչքի առաջ ենք առնում այն, որ Ամարասը (Աղվանից կաթողիկոսանիստ հոշակավոր վանքը) գտնվում է այդտեղից ոչ այնքան հեռու մի դաշտավայրի վրա, ուր ամառը սարսափելի տաք է լինում. գյուղացիք շոգի սաստկությունը ցույց տալու համար ասում են. «Ամարասա դաշտից էլ անցավ»: Եվ ահա ուղիղ այդ դաշտավայրի առաջ բարձրացած է այն լեռնային գոտին, որի մասն է կազմում բլուրը, ուր գտնվում է Բարևաձառը: Բացի դրանից, մի՞թե վերև հիշած արձանագրությունը կողմնակի կերպով չի ակնարկում այդ ենթադրության վրա: Հետո ավանդությունը ասում է, որ Բարևաձառի եկեղեցին կործանվել է Լանկ-Թամուրի սոսկալի արշավանքի ժամանակ: Անգույթ է եղել այդ արշավանքը և Ամարասա հոյակապ վանքի համար. նա էլ կործանվել է բարբարոսների ձեռքով: Ժողովուրդը այսօր էլ պատմում է, թե Լանկ-Թամուրը իր գորքերը շարել է Ամարասից մինչև Արաքսը. վանքի մոտ կանգնած զինվորները մի-մի վերցրել են նրա քարերը և, ձեռքից ձեռք տալով՝ թափել են Արաքսի մեջ: Կիսավեր դրության մեջ հոշակավոր հնությունը մնացել էր մինչև վերջին ժամանակները. վաթսունական թվականներին նորոգվել է նաև Ս.Լուսավորչի թոռան՝ Գրիգորիսի գերեզմանը. գտնվել է ավերակների տակից:

Բայց ինչպե՞ս է եղել, ու Բարևաձառի եկեղեցին անհետացել է գետնի մեջ: Ուրիշ մի բանով չենք կարող հասկանալ այդ, եթե չենթադրենք, որ խիտ

ծմակի բուսականությունը ծածկել է եկեղեցին և դարերի ընթացքում հայտնի բնական և երկրաբանական օրենքներով փտելով դարձել է հող, որով և ծածկվել է եկեղեցին՝ թողնելով ապագայի համար իբրև նշան և ուղեցույց խաչաքարը, որ ժողովրդի ուխտավայրն է դարձել:

Ինչ վերաբերում է Բարևածառ անվան, այժմյան ծերերը պատմում են հետևյալը. մի ժամանակ այդտեղ բնակվում էր մի սուրբ և խստակյաց եպիսկոպոս. ամեն ժամանակ, երբ նա երկար ծոմապահություններից և ճգնություններից հետո պատարագ էր մատուցանում սուրբ սեղանի վրա, ողջույնի ժամանակ ծմակի բոլոր ծառերը ողջունվում էին միմյանց հետ՝ երեք անգամ կայցնելով միմյանց իրանց գլուխները: Մի անգամ հեռու տեղից գալիս է մի ջերմեռանդ հայ՝ այդ հրաշքը տեսնելու համար: Նա խոստանում է եպիսկոպոսին նվիրել վանքին իր հետ բերած մի ջորեբեռն ոսկին, եթե միայն արժանանա տեսնել հրաշքը: Եպիսկոպոսը խոստանում է, բայց պատարագի ժամանակ նրա մեջ ծագում է երկմտություն, թե արդյոք ոսկու հետ ջորին է՞լ պետք է նվիրվի, թե ոչ. այդ երկմտությունը այն հետևանքն է ունենում, որ ողջույնի ժամանակ ծառերը չեն համբուրվում միմյանց հետ: Երբ ուխտավորը իմանում է եպիսկոպոսից պատճառը, շտապում է հայտնել, թե ջորին էլ է տալիս և բացի դրանից խոստանում է ետ դառնալուց շատ ուրիշ թանկագին պարգևներ էլ դրկել: Հետևյալ օրը եպիսկոպոսը կրկին սեղան է ելնում. հրաշքը այս անգամ կատարվում է. հարուստ հայը գոհությամբ գնում է իր երկիրը և դրկում է խոստացած նվերները: Այս ավանդությունը թեև մի առանձին հետաքրքրություն չի ներկայացնում իբրև մի գուտ պատմական փաստ, բայց վկայում է, որ Բարևածառը հայտնի է եղել և հեռու տեղերում և ունեցել է մեծ հարստություններ, որոնցից հրապուրված բարբարոսները կործանել են նրան:

Ահա այն ամենը, ինչ այժմ հայտնի է Բարևածառի մասին: Գուցե հետագայում հայտնվեն էլ ուրիշ արձանագրություններ և շինություններ, երբ սկսեն փորել եկեղեցու շրջակայքը. գյուղացիք մտադիր են շուտով սկսել փորել, եթե արգելք չլինի մեր հոգևոր կառավարության կողմից:

Բարևածառի և Թաղավարդի մեջ գտնվում է մի ուրիշ բլրակ՝ ծածկված աղքատիկ բուսականությամբ. այդտեղ կան պղնձե հանքեր: Այդ բլուրից բխում է մի փոքրիկ գետակ, որ անվանվում է Կարմիր ջուր. յուրաքանչյուր գյուղացի գիտե, որ այդ ջուրը վատառողջ է, որովհետև ունի իր մեջ հանքային բաղադրություններ, ուստի նրանից ոչ խմում են և ոչ անասուններին են տալիս: Նա

հոսելով անցնում է դեպի Տոդ տանող ճանապարհի միջով, մի մեծ խոր ձորով, որ կոչվում է Չուրաթանին-կապ: Երկրի այդ բնական առատ հարստությունը մինչև այժմ մնում է անմշակ. թեև անցյալներում մի շուշեցի հայ մեծ գումար է վատնել պղնձե հանքերը մշակելու համար, բայց գործը չի կարողացել վախճանին հասցնել. մնացել են մինչև այժմ խոր ականները և մի քանի գործիքներ... Հայը միշտ այդպես է եղել. ջերմեռանդությամբ սկսել է մի գործ, իսկ կեսում թողել անկատար: Եվ առհասարակ հայը իբրև տնտեսագետ, իբրև երկիր մշակող, նրա հարստությունները արտահանող, շատ անկարող է. նա, ինչպես համոզված է բոլոր աշխարհը, առևտրի մարդ է, անքրտինք և անարյուն աշխատանքի երկրպագու է: Ընդունենք թե այդպես է, բայց մի թե պիտի բավականանանք միայն այդպիսի միտք ունենալով. մի թե չպիտի ուզենանք իմանալ պատճառները, թե ինչու այսօր հայը ապրելու միջոց է ընտրել առևտրականությունը, այն էլ այն տեսակ առևտրականությունը, որի սիստեման, որի նպատակները, հետևանքները ոչ մեկի համար հավանելի չեն թվում: Այդ պատճառները հեշտությամբ կարող ենք հասկանալ, եթե ուշի մտոք հետևենք հայ ազգի կրած կյանքին, նրան երկար դարերի ընթացքում շրջապատած քաղաքական հանգամանքներին: Մակայն պատճառներն իմանալով դեռ ոչինչ բան արած չենք լինի ընդհանուր ատելության առարկա դառած մի պարապմունքի դեմ: Այժմ, երբ ամեն հանգամանքներ նպաստավոր են ժամանակակից պահանջների համեմատ առևտրականություն հաստատելու, այժմ, երբ բոլոր աշխարհը կյանքի ապահովության աղբյուրը անխոնջ որոնում է ծմակների, ձորերի, սարերի մեջ, այո, այժմ մենք պետք է միայն հարցնենք. մի թե չկա մեկը, որ կարողանա առաջնորդել բազմությունը դեպի իր երկրի կողմերը, ցույց տա նրան մշակելու, հերկելու, պահելու, եղանակը: Թող այդ հարցին պատասխանե մեր ուսյալ դասը. դա նրան է միայն վերաբերում: Մինչև այժմ հայ ուսումնականները չեն կարողացել որևէ բարոյական կապ հիմնել իրանց և ժողովրդի մեջ, չեն ունեցել հեղինակելու, ինիցիատոր լինելու միջոց, այլ միշտ աշխատել են պահել իրանց ժողովրդից բարձր, մեր ինտելիգենցիային հատուկ պճնամոլությամբ և հպարտ արհեստկրատիկական վեհանձնությամբ: Վերջացնելով հոդվածս, պարտք եմ համարում հայտնել շնորհակալությունս շուշիաբնակ պ. Հովսեփ Մելիք-Շահնազարյանցին, որից ստացել եմ հիշյալ երկու արձանագրությունները և մասամբ՝ տեղեկություններ Բարևածառի մասին:

*Շուշի, 1885, Լեռ, Երկերի ժողովածու,
8-րդ հատոր, Երևան, 1985, էջ 7-31*

ԻՄ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

- Պատրաստություն, դեռ ու դեն հարկավոր չէ: Ձեռաց գնում ենք, տեսնում, ետ դառնում: Այս երեկո քեզ ժամանակ. մտածիր, էգուց առավոտ ճանապարհին ենք:

- Այդպես չի կարելի: Պաշար, չայ, շաքար չեք առել, ի՞նչ պիտի ուտենք, խմենք:

- Էլի հայությունդ ես ցույց տալիս: Եղբայր, փտեցինք այս քաղաքում, փտեցինք կորանք: Այս ինչ է: Դե գնանք, տեսնենք, շարժվենք: Օտարազգիները գալիս են մեր երկիրը, հետաքրքրությամբ տեսնում են մեր նշանավոր հնությունները, իսկ մենք նստում ենք այսքան մոտիկ ու չտեսնե՞նք... Ամոթ է, չափազանց կորածության նշան...

- Գիտե՞ս, նշանավոր հնություն է, գեղեցիկ, դիրքը հիանալի. գեղեցիկ բնություն, տեսարաններ, հրաշալի ջրեր: Այստեղ փտեցինք, ի՞նչ ենք լսել...

Այսպիսի խոսակցություններով էին պատրաստվում մեր ընկերների մեջ մեր մի փոքրիկ ուղևորությունները դեպի մեր երկրի շատ թե քիչ հեռավոր տեղերը:

Ոգևորված նշանավոր հնություններով, որ այլազգիները գալիս տեսնում են, հալածվելով փտելու տխուր ու մաշեցնող մտքից՝ մենք մի քանի հատ օրեր էինք խլում ժամանակից, մի ճանապարհ էինք որոշում. ամեն տեսակ պատրաստությունների փոխարեն հետներս վերցնում էինք նոր տեղեր, կյանք տեսնելու, տպավորություններ ստանալու մեծ փափագը, արագ գնում ու արագ ետ էինք դառնում:

Այդ իսկ ուղևորությունների նկարագիրն էմ այժմ ներկայացնում ընթերցողին: Տեսածս ու լսածս, թե մեկից և թե մյուսից ստացած մտքերս ու տպավորություններս՝ այդ ամենը աշխատել եմ ամփոփել հիշատակարանիս մեջ: Ես ուշադրություն եմ դարձրել հնությունների վրա, որովհետև դրանք էին մեր ուղեցույցները, մեր նպատակը: Ես նկարագրել եմ բնությունը, որովհետև այդ բնությունից է կախված մեր ժողովրդի կենցաղը: Այդ է իմ կարողության չափը: Ավելի լավը թող անեն եվրոպացի հեղինակների անուններով ապրող ասիացիները, թող անեն, սառած չմսան այդ անունների վրա:

Իմ հիշատակարանի առաջին հատորն է այս գիրքը: Երկրորդը կկազմվի այն ժամանակ, երբ վերջապես կարողություն կունենամ բաղձանքս կատարելու, երբ կտեսնեմ մեր երկրի ուրիշ կողմերը: Արցախն ու Սյունիքը դեռ շատ ու շատ անձանոթ տեղեր ունին, որոնք վաղուց են սպասում հետաքրքիր ուղևորին:

Հեն

Շուշի, մայիս, 1889թ.

ՄՅՈՒՆԻՔԻՑ ՄԻ ԱՆԿՅՈՒՆ

Ա

Հոկտեմբերի երկուսն էր: Օրը՝ ուրախ, աշնանային. երկինքը՝ պարզ, հրաշալի. արեգակը հետզհետե հասնում էր կեսօրվա տեղին, թափում էր մի այնպիսի ախորժելի ջերմություն, որ միայն աշնան վերջերում է լինում. մարդն ուզում է ամբողջ մարմնով այդ արեգակի տակ լինել, ջերմությամբ շրջապատված մնալ: Ծուլություն է տիրում բոլոր անդամների վրա. մարդու մեջ չի մնում մի այնպիսի եռանդ, որ կարողանար դիմադրել այդ քնքույշ, փայփայող ճառագայթների տակ մնալու և նրանցից որքան կարելի է շատ ընդունելու ցանկությանը: Շվաքը նեղ տեղը անտանելի են դառնում և հենց այդ պատճառով այդ օրը Շուշին շտապում էր կիրակնօրյա կերպարանքը ստանալ. շտապում էին կեսօրվա ճաշը վերջացնել, քաղաքից դուրս գալ, բլուրների և ձորերի տեսքով զվարճանալ, օդ ծծել և արեգակի տակ մնալ: Ես և իմ երկու ընկերները, փոստային սայլակի մեջ հարմար նստած, ուրախ ու զվարթ ամենքի առաջն ընկանք և դուրս գնացինք քաղաքի արևմտյան դռներից: Գնուն էինք Գորիս, գնում ենք Սյունյաց երկիրը տեսնելու:

Տասնհինգ տարուց ավել է, որ Շուշուց մինչև Գորիս փոստի ճանապարհ է շինված: Երկրաչափը տարել է այդ ճանապարհը մի լեռնաշղթայի արևահայաց կողով մինչև Թթու-Ջուր անվանված առաջին իջևանը, տարել է՝ հարմարվելով վայրենի լեռների բնավորությանը: Շատ թե քիչ ուղիղ լինելու համար այդ ճանապարհը օձի պտույտներ է գործում անթիվ և անհամար անգամ, և որովհետև տեղի կազմվածքը քարային է, շատ կարծր, ուստի բահն ու բրիչը կարողացել են ճանապարհին այնքան լայնություն տալ, որ մի սայլ կամ ֆուրգոն ազատ առաջ է գնում. իսկ եթե մի ուրիշն էլ առջևից է գալիս, հանդիպում, իստակ ցավ է ու կրակ: Բայց գեղեցիկ է այդ ոլորուն ճանապարհը, երբ թռչում է սայլակը. նրանից ցած փռված են ձորեր, լանջիվայրեր, աչքի առջև մի-մի անցնում են լեռներ ու բարձրություններ, վազում են դեպի հակառակ կողմը և վազելիս տեսակ-տեսակ տեսարաններ, պատկերներ են ցույց տալիս: Մտնում ենք Թթու-Ջրի կիրճը, գնում ենք ծմակի միջով:

Աշնան այս ժամանակը բնությունը իր վերջին դերն է կատարում, ցույց է տալիս, որ մեռնելուց առաջ էլ գիտե, կարող է ժպտալ, սիրտ հափշտակել: Տեղ-տեղ երևում են հիանալի քնքույշ կանաչներ և այնքան գեղեցիկ գույն են տալիս աշնանային արեգակի քաղցր լուսի տակ: Բայց կանաչը այս ժամանակ տարօրինակ է երևում. մեռած դեմքի վրա մնացած կարմրություն է դա,

որ մի կարճ կյանք ունի: Կարծում ես, թե այդ կանաչները շտապում են, գնում են մի տեղ, շտապում են ցույց տալ իրանց, կարծես ասում են, որ իրանց վերջին բարեն է. շուտով, շատ շուտով, ով գիտե, գուցե այսօր կամ վաղը կգնան, կանհետանան, այսպիսի մի արեգակ նրանց երկար չի կարող պահել: Եվ գնում են: Ահա ծածկվեցին ծմակի ետևում, մեծ ու փոքր ծառերի մյուս կողմում մեկ էլ երևացին, մեկ էլ փայլ տվին և էլի չկան... Այդ ծառերի դեղին ու կարմրախայտ տերևները թափվում են ամեն օր, ամեն ժամ. շատ շատերն արդեն թափվել, կուտակվել են ծառերի տակ և սողում են, թափառում են ծմակի մեջ, օտար դուռն են գտնում, օթևան առնում. շատ շատերը դեռ պահվում են ճյուղերի վրա, սպասում են մի փոքր քամու, որ իրանց վիճակը պիտի որոշե, սպասում են՝ դողալով օդի մեջ. բայց դեռ շատ են կանաչ տերևները. նրանք դեռ մնում են և դեռ իրանց շուքն ու զարդը չեն վերացրել որբացած ծմակից, դեռ մի կերպ ծածկում են նրա տխրալի մերկությունը: Այսպես է աշունքը, տերևաթափի ժամանակը. տարվա այն ամենաքաղցր ժամանակը, երբ ամեն բան՝ ջուր, պտուղ, միս ու ախորժակ իրանց համն ու հոտն են գտնում: Այսպիսի ամենաքաղցր ժամանակ մենք՝ իբրև հարազատ շուշեցիներ, չենք դադարում Թթու-Ջրի կիրճը գովելուց և փառաբանելուց: Սայլակը առաջ է տանում, անցնում ենք ծառերի միջով, տեսնում ենք արեգակի շողերը, որ մեծ խուրձերով մտնում են ծառերի արանքով, և՛ հիանում ենք, և՛ գովում մեր երկիրն ու բնությունը: Եվ գիտենք, որ անմահական տեղեր են, գիտենք, որ այսպիսի մի տեղ մարդը երկար կապրի և առողջ, գիտենք, որ եթե մեզանից մեկը ունենար կարողություն, լավ կարողություն, կհեռանար քաղաքի անմաքրությունից, կբնակվեր հենց այստեղ, մի գեղեցիկ կյանք կվարեր: Ինչպե՛ս չիմանանք. ամեն մի բան մեզ այդ է ասում: Նայեցեք այս ձորակին. Ջուրը՝ բարակ և պարզ, զարմանալի պարզ ջուրը հազիվհազ մի բարակ ձայն հանելով, լիզում է նրա հատակը: Բնության դասերը լավ սերտած մարդը հասկանում է, թե ինչումն է գեղեցկությունը: Ձորն արդեն լռել է, դատարկացել, թռչուն ու միջատ հեռացել, գնացել են, ձայն չեն հանում. բույսը չորացել է՝ թողնելով իր գոյության վկա մի ավերակ միայն. թուփը աղքատիկ ցնցոտիների մեջ է և դողում է, ահով սպասում է, թե երբ կլիւեն իրանից իր վերջին ծածկոցը: Մնացել է փոքրիկ ուրախ ջուրը միայն, որ ուրախացնում է այս տեսակ լուռ տխրության մեջ. նա այժմ ավելի քան երբևիցե զգայուն է դառել. յուրաքանչյուր մանր քար, մի աննշան բան, կարողանում է նրա շողշողուն մեջքը կռացնել, ծոմնել, և որովհետև շատ-

շատ են այդպիսի քարերը, մեր առվակը հազարավոր մանր-մանր ալիքներ, խորդ ու փոսեր է կազմում, որոնց մեջ զարմանալի կերպով խաղում է արեգակի լույսը, որ, ցուլանալով ջրի վրա, մի փայլուն, փոքրիկ շերտ է գցում ջրի կողքին: Առվակն այդպես է, իսկ մենք որքա՛ն ուրախ ենք նրանով:

Ահա և փոստի իջևանը:

Թթու-Ջրի նեղ կիրճն ընկած է երկու սարերի մեջ, որոնցից մեկը՝ արևմտյանը, բացի գեղեցիկ խոտից և երկու-երեք հատ ծառերից, ոչինչ չունի իր վրա, իսկ մյուսը՝ արևելյանը, բարձր է, կարծր քարային կողերով և ծածկված է ծառերով: Կիրճը թեև բարձր չէ, բայց առհասարակ ցուրտ կլիմա ունի. օդի բարեխառնությունը այստեղ շատ ցած է, քան Շուշիում, որ այստեղից շատ բարձր է: Ամառը կարճատև է լինում, զով, ձմեռը երկար և սաստիկ ցուրտ: Որովհետև կիրճը հյուսիսից և հարավից բաց է:

Յուրաքանչյուր շուշեցի պարծենում է երկու բանով: Մեկ նրանով, որ եթե ուզե, ամեն մի գեղեցիկ օր կարող է հայոց վերին հանգստարանի մոտից բռնել լավ ծանոթ ճանապարհը, անցնել մեծ կոլոր թումբի քամակը և, մտնելով մի անտառապատ ձոր, գնալ առաջ: Տեղն այնպիսի մի թովչական հասկություն ունի, որ նա անպատճառ բանաստեղծ կդառնա, կերգի մի բան՝ ձայն ունենա, չունենա, երգ իմանա, չիմանա, միևնույն է, մի ձայն կհանե և մի երգ կասե, կերգե, մինչև որ երեք կամ չորս վերստ երկարությամբ ճանապարհը կվերջանա Պեխի-աղբյուրի մոտ: Նրա պարծանքն է այն հիանալի ջուրը, որ ամառ ու ձմեռ առատ թափվում է. բաժակը ջրով կլցնե, կբարձրացնե, կնայե պարզ, բյուրեղանման ջրին, որի մեջ արեգակի ճառագայթը ծիածանի գույներ է գոյացնում, ձեռքը հպարտորեն կդնե կողքին և կբացականչե. «Ուխա՛յ, ուխա՛յ, ումի՛ն է տրված այսպիսի ջուր»: Եվ կնստե այդ աղբյուրի անհարթ շրջակայքի մի որևէ ծառի տակ ու լավ քեֆ կսարքե: Կարող եմ ասել, Պեխի-աղբյուրը շուշեցու առաջին պարծանքն է. առաջինը այն պատճառով, որ նա իրանից շատ մոտիկ է. մեծ ու փոքր առանց դժվարության կարողանում են հասնել նրան, ջուր խմել: Կիրակի և տոն օրերը աղբյուրի մոտ խմբվում են բազմաթիվ մարդիկ, և ձորը լցվում է նրանց աղաղակներով ու երգերով. իսկ հասարակ օրերը, անհնարին է, մի կամ երկու քեֆ անող խմբեր պիտի լինեն այնտեղ: Աղբյուրը դուրս է գալիս անտառներով պատած բարձր սարից. նրա մոտ նստելու համար տեղ չեք գտնիլ, որովհետև ուր որ նայում եք, զառիվայր եք տեսնում, որոնք չորանում են, մերկանում են հունիսից հետո: Մնում են անտառները և այս հրաշալի

ջուրը, որոնց տեսքին ու անվան սիրահար են շուշեցիները. դա մի տեսակ նվիրական տեղ է, ուր բնությունը անփող ու անվարձ բաշխում է իր հարստությունը թե՛ հարուստին և թե՛ աղքատին: Ծանր ու վտանգավոր դրության մեջ գտնվող հիվանդը իբրև սրտի ուզելիք Պեխի-աղբյուրի ջրից մի բաժակ է խնդրում: Աղբյուրի մոտ շատ անգամ կարելի է տեսնել նոր առողջացած հիվանդներին, որոնք մաշված ու դեղնած, դեռ հաստատ քայլեր փոխելու չսովորած, ձի են հեծել, եկել և մեծ երջանկությամբ խմում են պաղ և մաքուր ջուրը: Օտարականը՝ հեռու երկրում ոսկոր մաշեցնող օտարականը, երբ մի-մի մտքով իր հայրենիքն է փոխադրվում, հորից ու մորից հետո հիշում է Պեխի-աղբյուրը, հիշում է՝ ա՛խ քաշում:

Շուշեցին մեկ էլ պարծենում է նրանով, որ ամառը կարող է մեր այսօր եկած ճանապարհն ընկնել, հասնել Թթու-Ջուրը: Այս մեկ բավականությունը առաջինի պես հեշտ չէ ձեռք բերվում. 17 վերստ ճանապարհ է, պատրաստություն, փող է հարկավոր: Թեև այսպես, բայց երիտասարդությունը գտնում է հնար, տեսնում է այդ նեղ և գեղեցիկ կիրճը, ուր ապրում է գոնե մի, երկու օր: Իսկ ունևորները տնով, ընտանիքով ես գալիս, շաբաթներով մնում են առողջ մնալու կամ նոր առողջանալու համար: Իսկ առողջարար հանգամանքներ շատ ունի այստեղի բնությունը: Հունիսից մինչև օգոստոսի վերջերը Թթու-Ջրում թագավորում է մի հարուստ և մեղմաշունչ ամառ. օդը, հիանալի, զվարթարար, կանաչ զգեստի մեջ պճնված սարենու անտառները բյուրավոր ծաղիկներով զարդարված, թռչուններն ու նրանց երգերն անպակաս: Անպակաս և ցուրտ ջրերը: Դրանց վրա են հավաքվում մարդիկ, վրաններ են բացվում այն ձորի ճակատին, որի միջով օր ու գիշեր քչքչում է փոքրիկ առվակը: Բայց վրանների մեջ ապրողների «սիրածը, սրտի ուզածը» այդ առվակը չէ, այլ մեծ-մեծ ծառերով շրջապատված աղբյուրը, որը դուրս է թափում իր տակից ձորի վրա բարձրացած հաստ ու կոպիտ կարմրախայտ ժայռը: Ինքը՝ Թթու-Ջուրը, հենց այդ աղբյուրն է, բնական գելտերյանը: Բնությունն այնքան էլ շատ չէ հարստացրել այդ ցուրտ թթու ջուրը. գազն այնքան շատ չէ, ջուրը դուրս է գալիս երկու տեղից և ճկույթի հաստությամբ ծորում է մի փոքրիկ ավազանի մեջ: Աղքատ աղբյուր է, բայց ի՞նչ կանես, աչքի լույս է, այնքան մարդ է քաշում, իր մոտ բերում: Ասենք, մենակ սա չէ այդպես անում. կա և երկաթաջրի մի նույնպես աղքատ աղբյուր, որի մեջ լողանում են ցավագարները: Այդ երկուսի համար են շինված երկու թե երեք մասնավոր տներ, կիրճը երկու-երեք ամսվա ընթացքում ասիական բազարի կեն-

դանությունն է ստանում: Պեխի-աղբյուրն ու Թթու-Ջուրը միատեսակ գործ են կատարում. քեֆ ու ուրախություն անել են տալիս և միևնույն գաղափարն են տարածում: Մաքուր ու գեղեցիկ ջրերը բաց են անում սիրտը, և մարդս անկեղծորեն արտահայտում է իր գոյության նպատակը, այն իդեան, որին ծառայում է: «Ունայն է, ունայն ամեն ինչ», - ասում են միմյանց թե՛ Պեխի-աղբյուրի ճանապարհը բռնած ուրախ երիտասարդները և թե՛ Թթու-Ջրի ձորում շշերի և խորովածի շուրջը բոլորած խմբերը. «Փուչ աշխարհ է, մի օր էլ պիտի գնանք. ունայն է, ուտենք, խմենք, քեֆ անենք, այս կմնա միայն»: Այս ստերեոտիպ նախադասությունն է միշտ կրկնվում: Ուտել, խմել, քեֆ անել, ուրախանալ աշխարհի, մարդկության նշանակությունը, մոռանալ մեր կոչումը՝ այս է ահա իդեալը, որ որքան հին է, այնքան էլ՝ անմաշ, այնքան էլ՝ խոր արմատ դրած մեր մեջ:

Եթե Թթու-Ջրի մասին այսքան խոսեցի, պատճառն այն չէ, որ այստեղ մի արտաքո կարգի բնական հարստություն է պահվում: Ո՛չ, այդ տեսակ հանքային ջրեր (և ավելի լավ) շատ կան մեր երկրի զանազան կողմերում և դրանցից մի քանիսի մասին խոսելու առիթ կունենամ: Թթու-Ջրի միակ առավելությունը նրանում է, որ քաղաքից մոտիկ է և արդեն մի լայն շրջանի մեջ լավ անուն է վաստակել: Ասածներիս վրա պիտի ավելացնեմ և այն, որ Թթու-Ջուրը արքունական կալված է, որ վարձով է տրվում խոտհարքի և անասնապահության համար. ջրերը ոչ ոքին օգուտ չեն տալիս: Ամառն այստեղ մի հատ հյուրանոց կամ հասարակ ճաշարան էլ չի լինում. իսկ հաղորդակցությունը քաղաքի հետ շատ անկանոն է և անհարմար: Ոչ միայն կառքեր, այլև հասարակ սայլեր երթևեկություն չունին: Եթե մարդ չճարվի քաղաք ուղարկելու, օրերով կարելի է քաղցած մնալ: Այս պատճառներով, ինչպես ասացի, միայն ուղևորներն են կարողանում ծախս անել, կարգով, սարքով բնակվել այստեղ երկար ժամանակ: Մնացյալները լոկ սիրահարներ են, որ գալիս են, մի քանի ժամ մնում, մինչև երկինք բարձրացնում այս տեղերը, միմյանց հավատացնում, որ աշխարհս փուչ է, կյանքը՝ աննպատակ:

Այսքանը բավական է Թթու-Ջրի մասին: Աշնանային օրը կարճ է, արեգակն արդեն թեքվել է սարերի վրա: Թթու-Ջրի աղբյուրի մոտ վերջացնում ենք ճաշը, մի քանի բաժակ էլ դատարկում. սայլակը պատրաստ է, նստում ենք: Գնում, անցնում ենք Թթու-Ջրի սարը, մտնում ենք մի ուրիշ շատ երկար կիրճ: Ճանապարհը դեպի ցած է գնում, նեղ է և իր սովորական քմահաճ պտույտներն է գործում հազար ու մի տեղ: Անիվները արագ-արագ գլորվում

են, սայլակը ուստոստալով օրորում է մեզ, մի կողմից մյուս կողմն է գցում, տանում է մեծ ձորի ծայրերով: Հոկտեմբերի օրը վերջանալու վրա գով է, գեղեցիկ: Բարեհաջող եղանակը հարկադրում է ուղևորին շարժուն, ուշադիր լինել. ուղևորը աշխատում է բոլոր տեղերը տեսնել, բոլոր պատկերները մտքի մեջ նկարել:

Թթու-Ջրի սարի վրա վերջանում է Շուշու գավառը, սկսվում է Զանգագորի գավառը կամ Սյունիքը: Էգուց մենք կտեսնենք Սյունյաց աշխարհը, կտեսնենք այունեցի մարդուն, կլսենք նրա առանձին բարբառը, եթե դեպք լինի, կտեսնենք նրա առանձնահատուկ կենցաղավարությունը: Եվ որքա՛ն անհամբեր սպասում ենք այդ բոլորին:

Անհամբերության պատճառը ինձ պարզ հասկանալի է: Սյունիք ասելով՝ հասկանում եմ այն լայնատարած երկիրը, որ ունի մի մեծ փառավոր պատմություն. մի պատմություն, որ սկսվում է մեր ազգի պատմության հետև և վերջանում է մեզանից ոչ այնքան հեռու ժամանակ: Քանի՛-քանի նշանավոր մարդիկ են դուրս եկել այդ երկրից, նշանավոր իրանց տխուր և պատկառելի անուններով. Վասակ Սյունի և Դավիթ-բեկ Սյունի. մի երկիր, որ դառն ու քաղցր պտուղ է տվել: Պատմական ահեղ փոթորիկներ շատ են անցել այդ երկրի գլխովը, ժողովուրդը փարթամությունից մի քանի անգամ վերջին սպառման է հասել և էլի գլուխ բարձրացրել, մեծացել: Խորհրդապահ երկիր, որ իր ծոցի մեջ դեռևս պահում է հին-հին դարերի հիշատակներ, անթիվ ավերակներ և այդ ավերակների մեջ՝ մի մեծ պատմություն: Դարեր են գնացել, իշխանություններ են հաջորդել միմյանց, թագավորություն է հաստատվել, որ ծաղիկ հասակում մարել է, անհետացել: 1400 հայաբնակ գյուղերից բաղկացած այդ նահանգը այժմ քանի՞ գյուղ ունի. մատներով կարելի է համրել: Մուրն ու գերությունը մաշել, կարճել են մի ահագին ժողովրդի մարմինը. և այդ ավերմունքների, թշվառությունների ժամանակից Սյունիքը ծածկած պահում է մի պերճախոս լեզու, որ դեռ չէ խոսում: Հանգուցյալ Բաֆֆին մի ժամանակ գրում էր, թե մեր լրագիրներում հարց է զարթնել Սյունիքը մանրամասն ուսումնասիրելու համար. ուզում էին կազմել մի գիտական արշավանք, հրավիրել հմուտ մարդիկ: Լավ միտք էր, խոսք չկա. Սյունիքը ուսումնասիրելու գործը մի կամ երկու անհատի ուժից բարձր է, այդ շատ ճշմարիտ է: Բայց ցավն այն է, որ հարցը շուտով մոռացվեց, դուրս եկավ ասպարեզից: Բանը էլի անհատներին մնաց: Հետաքրքրությունը վառ մնաց, և այսօր այդ հետաքրքրությունը իմ մեջ անհամբերություն է ծնեցրել:

Հետաքրքրությունը միշտ ինձ նախատել էր. այդ ի՞նչպես բան է, ասել էր միշտ, դու շատ բան գիտես էսկիմոսների և տունգուսների երկրի մասին, բայց այս պատմական գավառի մասին խոսելիս և կարդալիս երևակայել ես քեզ մի Սյունիք, որ գուցե իրական Սյունիքին նմանություն անգամ չունի, որովհետև երևակայությունդ կարող էր քիչ սխալվել, եթե աչքիդ առաջ ունենայիր ուրիշների նկարագրությունը: Բայց ո՞վ է նկարագրել, ո՞վ է մի ամփոփ պատկեր տվել: Բախտը վերջապես հաջողել էր ինձ երևակայածս տեսնել, ահա գնում եմ իբրև մի պարզ ուղևոր, որ ոչինչ մասնագիտական պատրաստություն չունի:

Այս մտքերի մեջ էի. և մեր սայլակը, որ այս լեռների մեջ լեռնային համարձակություն է ստացել, անողորմ կերպով քարշ է տալիս ինձ իմ մտքերի հետ լեռնային բարձրության մեծ լանջիվայրի վրայով տարած ճանապարհի կեռմաններով. սեն ու սպիտակը չորոշելով, կամք ու համաձայնություն չհարցնելով՝ վազվզում է, բազմաթիվ պտույտներ է անում, մի ծայրից գնում է մյուս ծայրը, մեկ էլ ետ գալիս, որպեսզի մեզ անվնաս տանե ցած ու գտնե ուղիղ ճանապարհը: Մեր դիմացն է Ղարաղշլաղ անունով հայաբնակ գյուղը. նա թառ է եղել բա՛րձր սարի գլխին, Ղարաբաղի մի հայ գյուղի պարզ պատկերն է ներկայացնում. այդ սարի երկարաձիգ կողերը ծածկված են ծմակներով, որոնք շատ տեղ այնքան թանձրանում են, որ հիշեցնում են անտառային Խաչենը: Ծմակների մեջ կան լայնատարած վարելահողեր, իսկ ձորի այս կողմում, փոստի ճանապարհի վրա, տեղ-տեղ պատահում են տնակներ, ուր ապրում են այդ գյուղի մարդկանցից շատերը իրանց տավարի ու ապրանքի հետ: Այդ տեսակ տնտեսական տնակներ «բինա» անունն ունեն: Բինաները ցրված են ամեն տեղ, հեռու միմյանցից, ծառերի ու ձորերի մեջ, երբեմն և մի տեղ են խմբվում, փոքրիկ գյուղ կազմում: Ըստ երևույթին վախ՛ն այստեղ մեծ նշանակություն չունի. գյուղացին իր հարստությունը այսպիսի խուլ անկյուններն է քաշում, և նրա պահապանն է հավատարիմ շունը կամ մի ժանգոտած հրացան ու մի ծխից դեղնած սուր: Եվ, իրավ, Ղարաղշլաղեցիք հայտնի են իբրև շատ քաջ և արիասիրտ մարդիկ. տեղը եկավ, կռիվ էլ կսկսեն, կծեծեն, անուն ունեն շրջակա թուրք ազգաբնակչության մեջ և հենց այդ անունին հենած՝ այդպես ցիրուցան տնակներ են շինել և ապրում են: Հանգամանքները, ինչպես հայտնի է, մարդ են պատրաստում, կազմում այս կամ այն կերպ ապրելու: Ղարաղշլաղը մի միակ հայ գյուղն է, որ ամեն կողմից շրջապատված է թուրք ազգաբնակչությամբ, իսկ այս

ազգաբնակչությունը, հայտնի է, ունի իր սեփական հասկացողությունը, սեփականության մասին. նա հարկադրել է և սովորեցրել դարադժվարացիներին զգույշ և անվախ լինել, պարտքը հատուցանել այնպես, ինչպես ստանում են: Գյուղի մոտ կա Պանդալեոն բժշկի մատուռը, մի հայտնի ուխտատեղի, որին ժողովուրդը «Պարոն Պիժ» է անվանում: Այդ սուրբը տալիս է զանազան տեսակի շնորհք. գյուղացիների մեջ քիչ չեն աշուղներ, լարախաղացներ:

Երեկո է, բայց լուսինը ամպերի ետևից աղոտ կերպով լուսավորում է շրջակայքը. սայլը թռչում է ուղիղ ճանապարհով, որ աննկատելի կերպով հետզհետե դեպի ցած է տանում: Մենք հասնում ենք Աբդալար անունով իջևանը, ուր պիտի գիշերենք: Լուսինը դուրս է գալիս երկնքի պարզ տեղ և, և մենք տեսնում ենք, թե ինչպիսի տեղ ենք կանգ առել: Իջևանից ցած, մեծ թումբի ստորոտում, երևում է մեծ խարույկը. այդտեղ իջևանել էին թափառական թուրքերը, որոնք այժմ էլ սարերից գնում են ցած, իրանց տափարակները:

Դեռ նոր էինք նստել, դեռ մեզ համար դրած հեշտաեռը չէր տաքացել, երբ մեր եկած կողմից մի սարսափելի աղաղակ լսեցինք: Իջևանի վերակացուն (сараоча), սայլավարները և իջևանի հանդեպ բնակվող տեղային ոստիկանության ձիավոր պահապանները դուրս թափվեցին՝ կարծելով, թե մարդ են կողոպտում. աղաղակը մի երկու անգամ էլ կրկնվեց, մեր կողմից պատասխանեցին թուրքերեն հայհոյանքներով: Հանդիմանում էին աղաղակողին, թե ինչ էս բղավում, արի տեսնենք ինչ կա: Բայց մենք լսեցինք, որ այդ ձայնը մեր անունն է կանչում և իսկույն իմացանք, որ դա մեր երրորդ ընկերն է, որ Թթու-Ջրից ուրիշ սայլով մեզանից շատ առաջ էր ճանապարհ ընկել: Մենք էլ դուրս վազեցինք:

Մեր դժբախտ ընկերն այդ բուրբին շնչասպառ, քրտինքի մեջ կորած, սաստիկ շտապ քայլեր նետելով եկավ, իջևանի տնակն ընկավ:

- Ի՞նչ է, ի՞նչ կա:

- Տնաշեններ, ինձ կերել էին...

- Ովքե՞ր, ի՞նչ էս ասում:

Նա, սաստիկ թանջոց տալով, պատասխանեց.

- Գայլերը...

Մենք չհավատացինք: Երևի, ասացինք, մենակ է մնացել և վախեցել է: Բայց նա մեզ հավատացնում է, պատմում է: Մենք իմացանք, որ նա ճա-

նապարհին իջել է սայլից և մնացել է դարադշլադեցոց բինաներում՝ իջևանից երեքուկես վերստ հեռու՝ ճանապարհի վրա: Երբ տեսել է մեր սայլը, ետևներիցս վազել է, որ իմաց տա, թե ինքն այդտեղ է, Բայց անիվների ձայնը չի թողել, որ լսենք. նա հարկադրված է եղել սայլի ետևից վազել, Բայց, իհարկե, ետ է մնացել: «Գալիս էի, մեկ էլ ճանապարհի կողքին, ինձանից քիչ ցած, երկու ճրագի պես վառ աչքեր տեսա. իսկույն իմացա, որ գայլ է: Քայլերս արագացրի, շատ չվախեցա, ասացի մեկն է, մեկն այնքան վտանգավոր չէ: Բայց ի՞նչ... Մի քանի քայլ առաջ եկա և այժմ տեսա, որ երկուսը նստած են թփի տակ, իսկ երկուսը վազվզում են, մեծ պոչերը քարշ տալով՝ ինձ են նայում, քթները վեր քաշում, բերանները ծռում, ատամները բաց անում, որպես թե ծաղրում են ինձ: Էլ չիմացա, ինչ անեմ, գլխարկս վերցրի, գրպանս կախեցի»: Մարսափը առհասարակ կտրատում է մարդու ծնկները, կաշկանդում է. կորչում է որոշ միտքը, և մարդը ծուռումուռ անող մի թույլ բան է դառնում, անզգայաբար վտանգի առաջն է գնում, իր անձը նրան տալիս: Բայց շատ անգամ մարդուն թռչելու թևեր էլ է տալիս. կատաղի հուսահատությամբ նա ոտնակոխ է անում ամեն արգելք, ազատության ճանապարհ է որոնում գետի ու կրակի միջով: Մեր ընկերն էլ, բարեբախտաբար, այդպես է անում, սլանում է առաջ: «Չգիտեմ ինչպես եկա. երբ տեսա իջևանի լուսավորված պատուհանները, կարծեցի, թե դրանք էլ գայլի աչքեր են. ասացի՝ տունս քանդվեց, գայլերն արդեն առաջ են անցել և կտրել են ճանապարհս»: Ահա այդ ընկերն է նա այնպիսի հուսակտուր աղաղակ արձակել:

Մենք սիրտ տվինք նրան, ինչպես կարողացանք. նա փոխեց քրտինքից ջուր կտրած շորերը, թեյ խմեցինք: Շուտով ընթրիքի էլ նստեցինք, և դեռ մեր պաշարը մեր առջևն էր դրած, երբ իջևանի վերակացուն, որ սենյակի շեմքում կանգնած էր, ասաց.

- Ա՛յ, նա է եղել քեզ վախեցնողը:
- Ո՞ւր է, ո՞րն է,- հարցրինք մենք՝ վեր թռչելով մեր տեղերից: Կարծում էինք, թե եկել են իջևանի բակը:
- Ոռնում է,- պատասխանեց վերակացուն:

Ականջ դրինք, ձայն չէր լսվում: Կարճատև լռությունից հետո մոտիկ ձորում մի երկար, առաձգական, տխուր և միևնույն ժամանակ սպառնալից ձայն բարձրացավ. շան ոռնոցի նմանություն ուներ, սկզբում բարձր, կոկորդային, իսկ հետո աստիճանաբար բարձր և բարակ: Այդ ձայնին պատասխանեց մի ուրիշը. թափառականների շները սկսեցին հաչել, ոռնոցները

լռեցին: Մենք մնացինք շենքին կպած, սպասում էինք: Նախերգանքը լսեցինք, շուտով սկսվեց գայլի նվագահանդեսը: Մեկը եկել էր, իջևանի հանդեպ, էտապի տան պարսպից քիչ հեռու նստել էր աչքի առաջ և ոռնում էր. իջևանի շունը վազեց գնաց, նրանից քիչ հեռու նստեց և սկսեց ձայնակցել նրան: Մի մեծ կարմիր գայլ էր մեր տեսածը՝ սև դնչով: Երկու-երեք անգամ զլեց իր վայրենի թանձր ձայնը, բարձրացրեց ելևէջներով և էլի ցածրացրեց. ձորից պատասխանեց մեկը, որի ձայնը իսկույն կորավ բազմաթիվ ձայների մեջ. ոռնում էր ամբողջ խումբը, որոշվում էին ջահելների բարակ ձայները: Մարսափելին այդ խմբական ոռնոցն է. մարդու մազերը փշաքաղում են, ուզում ես փախչել, պուճախը մտնել: Ես առաջին անգամն էի գայլի ձայն լսում, այդ վայրենի, ոչ մի բան չխնայող գիշակերների խուլ, սարսափելի տխուր ոռնոցը եթե մի կողմից՝ ճնշում էր իմ սիրտը, մյուս կողմից՝ մի տեսակ բավականություն էր բերում: Այո՛, լավ է զգալ, որ պաշտպանված ես պատերի մեջ, ապահով ես կրակի պես այրվող աչքերից և միևնույն ժամանակ լսում ես նրանց՝ սպառնալից ասեմ, թե աղաչավոր, բողոքարկու ձայնարկությունը:

Իջևանի վերակացուն՝ մի գյուղացի մարդ, որ իր օրում շատ չար ու բարի է տեսել ու լսել, պատմում է մեզ, թե ինչպես ինքը շատ անգամ պատահել է գայլերին մենակ, կես գիշերին: Նրանց առաջին ժանիքներն են սարսափելին, ասում է. միմյանց որ զարկում են, կայծեր են թափվում, և այնպիսի ձայն է դուրս գալիս, կարծես մի ծառ կոտրվեց: Ժանիքների այդ սարսափելի հատկությունն է, որ հաղթում է կենդանիներին, ինչ տարիքի և հասակի տեր լինեն: Կենդանիները սկզբից դեռ պաշտպանում են իրանց՝ բնության տված զենքերով: Բայց գայլի բոլոր զորությունները ի վերջո հաղթում են. որսի սիրտը փորն է ընկնում, լեղին պատառում է, և այն ժամանակ նա վերջին օրհասական աղաղակներ հանելով կերակուր է դառնում այդ չար, միշտ ուտող և միշտ քաղցած գազանին: Միայն ոչխարն ու ուրիշ նրա պես անպաշտպան կենդանիներն են առանց բողոքի, առանց դիմադրության տալիս իրանց մարմինը:

Հարկավոր չէ ասել, որ մենք երկարացրինք այդ երեկոն. Նվագահանդեսը մեզ համար խոսակցության ահագին նյութ դարձավ: Վերակացուն պատմում էր հարյուր ու մի բան, իսկ մենք զարմացած լսում էինք: Գայլը մեր ժողովրդի լավ ծանոթն է. ժողովուրդը շատ լավ գիտե նրա «տակն ու գլուխը», լավ հասկացել է նրա բնավորությունը: Դա արջի պես չէ. անտառային

ծանրաշարժ հանաքչին ծիծաղով է հիշվում, իսկ գայլը՝ ցավ ու կրակ է: Ժողովուրդը գիտե, որ երբ գայլը ոռնում է, նշանակում է, որ նա երկնքից իր անկուշտ բերանի համար բաժին ու պատառ է հայցում: Երկինքն էլ հասցնում է: Եվ երբ գյուղացին տեսնում է իր պատառ-պատառ արած եզր, այծը, էշը, վիզը ճկում է հուսահատորեն, ինչպես ամեն ճակատագրական անօրինության առաջ:

Գայլի մասին խոսք ասած ժամանակը անխուսափելի է մարդագայլի առասպելը: Իջևանի վերակացուն պատմեց մեզ հետևյալը:

Մի մարդ իր կալում նստած տեսնում է, թե ինչպես մի քանի գայլեր, բերանները դեպի երկինք բարձրացրած ոռնում են. տեսնում է, որ երկնքից ինչ-որ բաներ են թափվում, որ իսկույն ուտում են գայլերը: Մարդը գայթակղվում է, ասում է՝ մեկն էլ ես ուտեմ, տեսնեմ ինչ բան է: Վերցնում է իր մոտ ընկածը, տեսնում է պտղի պես մի բան է, ուտում է ու ... ինքն էլ գայլ է դառնում, վեր կենում խառնվում մյուս գայլերի հետ: Տարիների ընթացքում գայլություն է անում, պատառոտում է, ուտում, խեղդվելու չափ շատ ուտում: Մարդագայլը հետո է պատմել իր գլխի անցքը. գայլի արհեստը նա այս օրինակով է բացատրել: Մի գիշեր, ասել է, Թթու-Ջրի սարերումն էինք, ուտելու բան չկար, ոռնում էինք, երկնքից նշան եղավ, որ մեր բաժինը Մեղրիի սարումն է, մի մեծ գեր եզն, որի եղջյուրներն ու պոչի ծայրը սպիտակ են: Դա է ձեր բաժինը, ուրիշ բան չկա, հայտնվել է մեզ. վեր կացանք, ասել է, ոտ վերցրինք դեպի Մեղրի: Երկու-երեք օրվա ճանապարհ է, բայց մենք մի գիշերում գնացինք, առավոտ լույսին հասանք. մեզ ցույց տված տեղը ցույց տված նշաններով եզր տեսանք, կերանք: Իսկ մարդագայլը դարձյալ հասարակ մարդ է դառել այսպես: Մի օր ծմակում մենակ է մնում, հանում է մորթին, դնում ծառի ճյուղի վրա, ինքը նստում հանգստանալու: Այդ ժամանակ մի որսորդ է դուրս գալիս, տեսնում է մորթին, իսկույն հասկանում. ծածուկ մոտենում է, մորթին վերցնում, ծառը վեր էլնում: Մորթու տերը ջգրվում է, կատաղում, ուզում է ինքն իրան սպանե ու մորթին ետ ստանա: Բայց որսորդը ծառի գլխից ասում է, որ եթե շատ դես-դեն ընկնի, նա կսպանե նրան: Մարդագայլը աղաչում է, պաղատում, վերջը վախում է, հնազանդվում. որսորդը տանում է նրան գյուղը, այնքան պահում է, որ նա իր գայլությունը մոռանում է, մարդ դառնում:

Մեզանից մեծերը մեզանից խելոք են, այսպես են պատմում, ես ի՞նչ իմանամ. այս խոսքերով է վերջացնում վերակացուն իր պատմությունը,

խորապես համոզված, որ իր այդ պատմությունը կարող է միանգամայն ճիշտ էլ լինել:

Մարդագայլի առասպելը շատ տարածված է հայերի մեջ և բազմատեսակ բովանդակություն ունի: Բայց ժողովրդի հասկացողությամբ գայլ են դառնում գլխավորապես կանայք: Չգիտեմ, թե ինչ հիմք ունի այդ առասպելը, բայց Աբդալլար իջևանի այդ բոլոր ձայներն ու գրույցները իմ մտածության նյութ էին տալիս: Հանկարծ իմ հիշողության մեջ, տարիների հոսանքը ոտնակոխ արած, կենդանացավ մարդագայլի այն հեքիաթը, որ պատմել էին երեխա ժամանակս. ինչպես մի հարս գայլ էր դառել և միշտ իր արհեստի ետևիցն ընկած՝ չէր մոռանում իր երեխաներին. գիշերային պահին գալիս էր, մորթին հանում, ծիծը դնում երեխաների բերանում: Բայց նրանից գայլի հոտ էր գալիս: «Մայրիկ, ինչո՞ւ քեզանից մրթմրթոց է գալիս», հարցնում էին երեխաները: Ժողովրդի երևակայությունը տվել է այդ հեքիաթին այնքան հրաշալի գույներ, որ ես այժմ անկողնում պառկած հիշում էի նրա բոլոր մանրամասնությունները, աշխատում էի կրկնել իմ մտքում՝ ինձ պատմողի ձայնը, խոսքերը անփոփոխ պահելով:

Իմ մտքերը խանգարեցին շահահաչոցն ու մարդկային աղաղակները, որոնք հետզհետե մոտենում էին իջևանին: Թափառական թուրքերն էին, շներով գալիս էին գայլերին հալածելու: Երբեմն շները կատաղի աղաղակներ էին բարձրացնում, և այդ ժամանակ շեմքում կանգնած վերակացուն մեզ իմաց էր տալիս, թե գայլերի ու շների մեջ կոհիլ է ընկել: Երկար տևեց այդ հալածանքը. ոռնոցները վերջապես կտրվեցան, շները ետ քաշվեցան, տիրեց գիշերային անվրդով խաղաղությունը: Ո՞ւր գնացին անկուշտ գիշատիչները: Նրանք հո սոված չեն մնալ, նրանցից բարձր երկինք կա, ո՞ր խեղճ գյուղացու պահած-պաշտած փարախը պիտի ապականեն, ո՞վ գիտե...

Բ

Աբդալլար իջևանը շինված է Թթու-Ջրի լեռնաշղթայի մի ուսի վրա. լեռնաշղթան այստեղ դժվարին լանջեր է կազմում, որոնք ցածրանալով հակառակ կողմից եկող մի ուրիշ շղթայի առաջ, Հաքարու գետի լայն ձորի վրա են վերջանում: Փոստի ճանապարհը գծվածի պես դեսուդեն է վազում այդ լանջերով, դեպի ցած տանում:

Այսպես, ուրեմն, մենք Մեծ-Սյունիքն ենք մտել: Ես ուշադրությամբ դիտում եմ ինձ շրջապատող բնությունը, տեսնում եմ, որ նա, այո, ինչպես

փոխվել է: Մի՞թե այս է, հարցնում եմ ինձ, այն հարուստ և գեղեցիկ երկիրը, որի մասին գովասանք ենք միայն լսել: Ո՞ր է բնության հարստությունը: Այստեղ իմ տեսածը լոկ մեռած, անկենդան լանջիվայրեր են, մոխրագույն սարեր. բուսականությունն աղքատ, այրված, տխուր: Հողը սպիտակ է, կատարյալ մոխիր. նրա երեսին կպած է կոշտ ու դեղին խոտը: Կան ծառեր, բայց ոչ թե մեր երկրի ծառեր, մեր ամեն օր տեսած, մեզ ծանոթ ծառեր. դրանք գիհու (можжевелик) մշտադալար կարճահասակ թփերն են, որոնք, սակայն, չեն կարողանում իրանց մշտական դալարով ուրախացնել այդ չոր ու տկո՛ր, քարքարոտ գառիվայրերի տխուր դեմքը: Ինձ այնպես էր թվում, որ այդ խեղճ թփերը մեր երկրին չեն սագում. նման են անօգնական որբերի, որոնց զրկել են հայրենի տնից և հարկադրում են ապրել, կյանք անցկացնել այնպիսի տեղ, այնպիսի շրջանում, ուր նրանց պահում են միայն այն պատճառով, որ ուրիշ ճար չկա: Մի երկու տեղ, ուր փոքրիկ ջրեր կան, տեղական բնակիչները տնկել են ընկուզենի և կեռասենի:

Եթե ուղևորը «այս աշխարհի» ցավերի ու հոգսերի կամ բազմաթիվ զբաղմունքների մեջ խեղդվող մեկը չէ, այլ ինձ պես մի ուրիշ միջոց չունի ճանապարհի երկարությունը, փոստային սայլակի անողորմ երերանքը մոռանալու համար, բայց միայն իր աչքի առջև դուրս եկող ամեն մի տեսարան տեսնելով ու դիտելով, այդպիսի ուղևորը կարող է երկար չտատանվելով մի որոշ հասկացողություն կազմել Սյունյաց երկրի բնության մասին. նա կասե, որ այդ երկիրը, այդ հողն ու բնությունը, կարծես, մի երկարատև բռնության տակ են եղել, զրկվել են ուժից, կարողությունից, կորցրել են թարմություն, կորցրել են եռանդով գործելու ընդունակությունը: Ուղևորի սիրտը տխրում է, կույ է գալիս. նա մի աննշան հեռավորություն է թողել այս տեղի և լեռնային Ղարաբաղի մեջ. մի քանի ժամ առաջ տեսել է աշնանային մի գեղեցիկ բնություն, անտառներ իրանց հարյուր ու մի տեսակ ծառերով և սրանց վերջին պտուղներով. իսկ այստեղ ամեն ինչ չորացել է, մոխիր դառել: Աշունը տխու՛ր է, մեռած:

Հաքարու կամ Հաքարի գետը շատ լայն տաշտ ունի: Այժմ գետը փոքր է և վշշալով սաստիկ արագությամբ դեպի ցած է գնում, բայց նրա անունը գարնանն է ստանում փառք ու պատիվ, երբ այժմյան գետը լայնանում է, իր ամբողջ տաշտը ծածկում, մեծանում է, ուռչում: Գետի վրա փայտի կամուրջ են շինել, որ յոթն թե ութ աչք ունի, բայց Հաքարուն ի՞նչ կամուրջի նայող է. մի քանի տարի խոնարհվել է, մեջքի վրա գոտի է ընդունել, բայց հետո չի

դիմացել, և այժմ կամուրջը մի տխուր և լքյալ ավերակ է ներկայացնում: Մյուսները թեև դեռ կանգնած են, բայց տախտակապատ գլուխը մի քանի տեղ պատռված է, քանդված: Մայլակն անցնում է կամուրջի տակով, և ուղևորը տեսնում է, թե ինչպես զուր է անցել մարդու աշխատությունն ու հեռատեսությունը: Փայտի մի քանի հատ մեծ սյուներ տնկած են մի շարքում ու կամուրջի մի ոտն են կազմում. անթիվ, անհամար ձողեր զանազան կողմերից և զանազան ուղղությամբ կպած են այդ սյուներին, երկաթի ահագին զամերով են կպած, որ պինդ պահեն: Սակայն այդ բոլոր հնարագիտությունը այժմ տկարության մասին է վկայում. հազարներ է կերել այդ շինությունը, մի կարճ ծառայություն է արել և այժմ իր փայտե մարմինը, հազարավոր կարկատաններով բեռնած, մնացել է ցցված, անճոռնի ոտները բարձրացրած հին ու անկարող ծերուկ:

Այս տարի գետի տաշտը ծայրեփծայր լցված է եղել ջրով: Մենք տեսանք ջրի կատաղության շատ հետքերը: Նա քանդել է բոլոր ջրաղացները, քանդել է շատ տներ, խեղդել է շատ մարդ ու անասուն, հեռվից ահագին քարեր, ծառեր է բերել ու տարել իր հետ, մի մասը թողել այստեղ. ավերել է այս կողմի թուրք գյուղացիների կեռասի այգիները, որոնք գետի վրա են շինված և այդ ավերմունքի փոխարեն կուտել է իր ափերի մոտ այնքան փայտ, ծառ և ավերած շինությունների գերան, որ տեղացիները ամբողջ ամառը հավաքել են, իրենց պաշարը պատրաստել, ավելորդը ծախել: Լեռնային գետը դեռ այնքան վնասակար չէ, երբ իր երկու ափերից բան չի պոկում: Իսկ երբ այնքան փքվում է, մեծանում, որ կարողանում է ահագին քարը, ծառը կամ գերանը տաշեղի կտորի պես խաղացնել, այն ժամանակ արյունը բերանն է առնում, և վայ այն մարդուն, որի ճանապարհի վրա է այդ իսկ գետը: Որքան լավ և ուժեղ լինի ձին, որքան նա և հեծյալը լավ իմանան լողանալը, սարսափելի վտանգը քթի ծայրին է նստած. բավական է, որ մի մեծ քար կամ փայտ հոսանքի արագությամբ գա, զարնվի ձիուն կամ մարդուն և փրկություն չկա: Երևակայում եք արդյոք, թե ինչ է մեր երկրի մարդը, որ տարին մի քանի ամիս շարունակ այսպիսի գետերով է անցուդարձ անում: Նա մոտենում է արնախում գետին, շորերը հանում է, վզին կապում, աստված է կանչում և իր ձիու բաշը շոյելով՝ հույսը նրա վրա դրած մտնում է կատաղած կռիակների մեջ: Նրա աչքերը շփոթվում են, շուտ են գալիս, գնում են ջրի հետ, գլուխը շարժում է, գնում է ջրի տակն ու գլուխն ընկնելով, թրջված, ջուր դառած, երբեմն խրվում է մինչև աչքերի գլուխը, բերանից պղպջակներ է

հանում, բայց ձիու բաշից ձեռք չի վերցնում, կպչում է այդ թանկագին կենդանուն, որի ուժն ու փորձությունը միայն կարող են ազատել կատաղած տարերքի բռնությունից: Հոսում է պղտոր ջրի լայն տարածությունը, հոսում է, վազում, խուլ մռնչում է՝ մանր ալիքներ տալով. ոչինչ չի դիմանում նրա առաջ, միայն մարդն է, որ շուռումուռ գալով, մահվան դուռը գնալով ու էլի ետ դառնալով՝ անցնում է նրա միջով, լեղապատառ ազատվում:

Գարնան սովորական պատկերն է այս, որ պատմում է մեր սայլավարը, երբ մենք անցնում ենք գետի լայն և անհամար քարերով ծածկված տաշտը: «Այժմ աստծո ողորմությունն է, սայլակով ենք անցնում», ասում է նա և ցույց է տալիս, թե իրան որտեղ և քանի անգամ է տարել վարարած գետը և ինչպես է ազատվել: «Է՛, սայլավարի կյանք...», ավելացնում է նա և փափախը աչքերին գցելով՝ բարձրացնում է մտրակը իր ձիաների մեջքի վրա. նրանք մեզ դուրս են բերում գետից, սկսում են բարձրանալ սարն ի վեր: Հետզհետե երևում են սկյոր ու տրտում բարձրություններ. հողը ավելի և ավելի սպիտականում է, և այժմ գիհու թփերի տեղ նրա խեղճությունը փորձում են ծածկել փշի թփերը. փորձում են, բայց ավելի ևս տխրացնում են իրանց վտիտ ու խեղճ տեսքով: Ասել ավելորդ է, որ այսպիսի տեղերը չեն մշակվում. եթե գարնան սկզբից այս անկենդան հողերի վրա կյանք է սկսում մի ինչ-որ ողորմելի բուսականություն, բայց ամառվա կեսին հազիվ է հասնում, շտապում է դեղնել, մեռնել:

Ինչպես երևում է, ջուրը մի ժամանակ այստեղ մեծ գործեր է կատարել: Ընդունված ենթադրություն է, որ Հաքարուի շրջակա լեռնադաշտերը անհիշելի ժամանակներում Սևանի լճի պես մի լճի տակ են եղել¹: Այժմյան ճանապարհը շինելիս ձեղքել են բարձրությունների կողերը, որոնք կազմված են հողի զանազան շերտերից. մի տեղ ավազ է, մյուս տեղ հողի մեջ երևում են բազմաթիվ սև ու կլոր գետաքարեր, որոնք գիտության գաղտնիքներին անձանոթ մարդուն էլ կարծել են տալիս, որ այս բարձրությունները կազմել է ջուրը՝ քարեր կուտելով և սպիտակ հող ածելով նրանց վրա: Իսկ մի քանի տեղ անպտուղ և ամայի լանջիվայրերի վրա ցցված են մեծ-մեծ քարերի խմբեր, որոնք ունեն բազմազան անկանոն ձևեր ու կերպարանքներ. քարերի մարմինները կրծված են, ծակծակոտ, չեչոտ, թեև, ըստ երևույթին, պինդ ու կարծր: Ինչնիցե, ջրի հետքը նկատելի է ամեն տեղ. ջուրն է կերել, ծակոտել

¹Տե՛ս «Земля и люди», Э.Реклю, հատոր 6

այդ բազմաթիվ քարերը, տվել է նրանց այնպիսի տարօրինակ, զարմանալի ձևեր, որ անցորդը չէ կարողանում ուշքն ու միտքը հեռացնել նրանցից. կարծում ես, թե առասպելական հսկաներն են բերել այդ անճոռնի ու անկերպարան բեկորները, տնկել են այստեղ սատանան գիտե թե ինչի համար:

Քարերի այդ խմբերի մոտով անցնում ենք, մի սեռի¹ գլուխն ենք հասնում, որտեղից բացվում է մի ուրիշ մեծ ձորի տեսարանը, որ բոլորովին նման է Հաքարու գետի ձորին: Այս էլ Ջաբուղ գետի ձորն է: Փոստային իջևանը շինված է գետի վրա, Ջաբուղ անունով թրքաբնակ գյուղի կողքին: Մի ժամ մնացինք իջևանում և շատ լավ հասկացանք, թե ինչ տեղ է այդ Ջաբուղը: Դա մի խեղդված ձոր է, ուր ամառը սարսափելի տաքությունն է տիրում. թեև հոկտեմբեր ամիսն է, բայց այժմ էլ արեգակը այրում է, իսկ անթիվ ու անհամար ճանձերը, ամեն մի փոստային իջևանի այս անխուսափելի զարդն ու զարդարանքը, իրանց աներեսությամբ մեզ վրա են հարձակվում, անխնայ սկսում են չարչարել: Տաքից ու ճանձերից ազատվելու համար մենք մտնում ենք մի այգի, նստում ենք ծառերի շվաքում: Այգին, ինչպես և ուրիշ շատ այդպիսի այգիներ, ընկած է գետի կողքին: Տաք ձորը, բացի կեռասից, խաղող էլ է հասցնում, բայց ավելի հայտնի է այն կարմիր կեռասով, որ ամառը մեծ քանակությամբ Շուշի է տարվում և ծախվում է շատ էժան, որովհետև հասնելուն պես որդերի բույն է դառնում:

Ջաբուղ գետի երախտիքը, պետք է ասել, շատ մեծ է: Եթե նա չլիներ, ոչ մի մարդկային էակ չէր ապրիլ այստեղ, ուր ամեն ինչ բնության կատարյալ սնանկության մասին է վկայում: Նա է մարդկանց խմելու ջուր տալիս, թեև անառողջ, վնասակար ջուր: Նա է ջրում ծառերն ու տունկերը, պտտում է ջրաղացների քարերը, Հաքարուի պես առատ, բայց անհամ ձուկ է տալիս. այսպես մի կերպ կերակրում է մարդուն: Իսկ մարդ քիչ չկա. Ջաբուղ գյուղը թրքական փոքրիկ, շատ սովորական և շատ փոքրիկ գյուղերից մեկը չէ, թեև գուցե ամենից ողորմելին է: Աղքատությունն ու կեղտոտությունը հանդիսավոր տեսք ունին այստեղ: Քիչ չէ և ներքին, բարոյականության վրա նստած կեղտը: Ամենքը վկայում են, որ այստեղի կանանց մեջ սաստիկ տարածված է պոռնկությունը. ինձ հավատացնում էին, որ այդ զգվելի արհեստը բացարձակ է, որ թրքուհիները հասել են այն աստիճանին, որ օր-կեսօրին

¹«Սեռ» ժողովրդական լեզվի մեջ նշանակում է ողնաշար, առհասարակ երկարձայր. շատ գործ է անվում լեռնային բարձրությունների վերաբերմամբ: Մեր գրաբար գրականության մեջ էլ պատահում ենք «սեռ» բառի այս մտքով գործածության (տես Ստեփանոս Օրբելյանի Պատմությունը)

օտար մարդ իրանց մոտ կանչելու համարձակությունն էլ ունին: Այդ վկայությունը ինձ մեծ զարմանք պատճառեց: Ես միշտ երևակայել եմ մահմեդական կնոջը խիստ կապանքների մեջ կապված, խիստ հսկողության տակ. ամենահասարակ թեթև ազատությունն էլ, ինչպես է օտար տղամարդի մոտ երես քաց անելը, պատժվում է սրի ու դաշույնի օգնությամբ, և այդ բոլոր դառն բռնությունները սրբագործված են օրենքով և ավանդույթներով միայն նրա համար, որ կինը հավատարիմ լինի ընտանիքի պատվավոր օջախին, աշխարհի բոլոր կանանցից էլ հավատարիմ: Եվ ահա մահմեդական կինը, որի ճակատին դարերի ընթացքում միշտ կրկնվել է, որ նա իրավունք ու ազատություն չունի, անբան ստրկուհի է, մի անլեզու էգ, որ իր տիրոջ վայելչության և վավաշոտ կրքերի համար է միայն ստեղծված, այդ իսկ կինը պատռել է, ոչնչացրել իր սանձերը, ոտով գլխով խրվել է սարսափելի ցեխի և ապականության մեջ: Նա միշտ զգվանք, սեր է վայելել միայն իր եզրության պատճառով. նրա կնությունը, նրա կանացի պատկերը իր արտաքին հրապույրներով երգեր է հորինել տվել, արտասուք, ցավ ու վիշտ է գրգռել տղամարդու մեջ, քայց այդ տղամարդը բռնակալ է եղել, նա ինքն է հիմնել հարեմը, նա ինքն է սիրել, փակել գեղեցիկ թռչնակին ամուր վարդակում և կանգնել նրա մոտ, արտասվել, երգել, մինչև երկինք, մինչև աստղեր բարձրացրել իր ոտի տակ դրած այդ հլու և անգոր թռչնակին: Ահա այդ տեսակ հասարակական և ընտանեկան դրությունն է, որ այս տեսակ ազատության ճանապարհ է քաց արել, մի ճանապարհ, որ միակ մատչելին է մշտական բանտից և անվերջ աքսորից փախչողի համար: Ես այդպես էի մտածում և վճռում, երբ բոլոր լսածներիցս հետո տեսնում էի զաբուղցի թրքուհիներին, որոնք այգու մոտով խումբ-խումբ դեպի գետն էին գնում ջուր տանելու: Նրանք իմ աչքի առաջ կին չէին, այն փափուկ սեռի անդամները, որ մարդկային գեղեցիկ իդեալներն է պահում, պահպանում: Ամբոխը հրամայում է նրանց ծածկել գլուխ ու դեմք, ոչինչ չբաց անել հրապարակի առաջ, և արքան սխալվում է ամբոխը, որքան միամիտ է՝ հույսը մի ինչ-որ շորի կտորի, մի ինչ-որ դիմակի վրա դնելով. ծածկված գլուխը ինչ մտքեր է տալիս սրտին, սիրտը ինչ տեսակ նշաններ է թելադրում գլխաշորի տակից գաղտագողի նայող աչքերին...

Ժամը մեկին մենք կարողանում ենք նստել մեր սայլակում, որ մեզ պիտի տանե, հեռացնե այս տաք և կեղտոտ, ամեն կողմով կեղտոտ ձորից: Ինչ որ էս ասել եմ Հաքարուի մասին, նույնը կարելի է և պետք է կրկնել Ջաբուղի

մասին խոսելիս. բնությանը, մեծությանը, գարնան և այժմյան ջրերի քանակությանը ու չափով Հաքարուն ու Ջաբուղը երկվորյակներ են, որոնք այստեղից քիչ ցած, մի սրածայր, երկար և մոխրագույն բարձրության արևելյան ծայրում միմյանց գիրկն են ընկնում, խառնվում:

Սկսվում է Ջաբուղի լանջիվերը. երկրաչափները շատ են աշխատել, որ ճանապարհը շատ աննկատելի կերպով բարձրանա, բայց չի հաջողվել. Լանջիվերը շատ երկար է, մի քանի տեղ կողմնակի ձորակներ է կազմում, և ճանապարհը հարկադրված է, ինչպես տեղացիք են ասում՝ «կեռ տալ»: Բնությունը շարունակ ցույց է տալիս այդ բարձրության վրա ցրած իր կեղտոտ ու տխրալի ցնցոտիները. պատահում են վերևում հիշած քարերի բեկորների խմբի պես խմբեր, նույնպես կրծոտած, նույնպես գորշ մոխրագույն, ծակծակված, ցցված զանազան ձևերի և կերպարանքների տակ: Ձանձրանում է մարդը, հոգնում է, աչք է վերցնում բնությունից, նայում է ձիաներին, ուզում է իմանալ, թե շո՞ւտ արդյոք այդ չարքաշ կենդանիները դուրս կբերեն այդ ձորից: Նրանք, այո՛, վերջիվերջո դուրս են բերում լանջիվերի գլուխը, կանգնում են, շունչ քաշում: Ահա բնության փոփոխությունը, մենք գտնվում ենք մի լայնատարած լեռնադաշտի ծայրին. ահա փոված է այդ դաշտը, ահա դես ու դեն են գնում ձորեր ու թումբեր, որոնք լեռնադաշտի վրա բազմաթիվ լանջիվայրեր ու լանջիվերներ են կազմում, և մեր լեռնային ճանապարհը էլի պտույտներ է անում, երկարանում: Շուշուց մինչ Գորիս տարած փոստային ճանապարհը 88 վերստ երկարություն ունի, բայց եթե մի որևէ հրաշքով այդքան երկար ու կարճ շրջաններ, պտույտներ չաներ, այդ երկարության կեսն էլ չէր ունենա: Մի որևէ թումբի վրա ճանապարհորդը չորս-հինգ անգամ պտտվում է, մի ծայրից մյուսն է գնում և էլի ետ դառնում քիչ բարձրանալու կամ ցածրանալու համար: Մենք միշտ դեպի բարձր ենք գնում, դեպի Տեղ անունով գյուղը, գնում ենք դանդաղ, կարծես այն պատճառով, որ վերջնականապես հուսահատվինք: Ամեն կողմից մեզ շրջապատել է մի դաշտավայր, մի լուռ ու տխուր բնություն. միանման անկենդան դաշտ, մաշված, պլոկված թմբեր ու ձորակներ, ջուր ամենևին չկա, մի հատ թուփ, մի փայտի կտոր չի երևում, միանման մոխրագույն հող է, որ մի կերպ ծածկվում է աղքատ ու նոսր բուսականության տակ: Լեռնային բարձրություն է, զգալի ցուրտ է տիրում, բարակ քամի է փչում. ամեն տեղ տիրած է խորին, անապատական լռություն, խեղդող անդորրություն, և մի արեգակ, աշնանային արեգակ, չնայած որ լողում է պարզ և կապույտ կամարի վրա,

տխուր է, անգոր, անկարող: Նրա թույլ ու ծուռ ճառագայթները ավելի ևս տխրություն են տալիս զարմանալի աղքատ հողի մերկ մակերևույթին, և ուղևորը, որ առաջին անգամն է տեսնում այս տեղերը, անձկանոք, դես ու դեն է նայում, որոնում է մի բան, որ կարող լիներ նրա հոգուն զվարթություն տալ, որոնում է այդ տխրության սահմանը: Այս տեղերում են զաբուղցի թուրքերը վարուցանք անում. նրանց հողերը Տեղ գյուղի հողերին սահմանակից են: Ես կարծում էի, թե գոնե Տեղի մոտ բնության փոփոխություն կտեսնեմ: Բայց զուր էր կարծիքս. որևիցե փոփոխություն չտեսա և այն ժամանակ, երբ մեր սայլակը սկսեց մեզ տանել Տեղ գյուղի հողերով: Այս բոլոր լայն տարածությունները միայն երկրագործության են պետք: Ճանապարհի երկու կողմին ձգվում են մեծ-մեծ արտերի տեղեր, որոնց վրա այժմ ծույլ ու դանդաղ կերպով ակոսներ էին հանվում գյուղացու գութանի ետևից: Գարնանն ու ամռանը այս տեղերում կանգնում են արտերը, իսկ անմշակ թողած գետինը մնում է նույնպես անկենդան, աղքատ, ինչպես այժմ:

Սպիտակ ճանապարհը վերջապես տանում է մեզ Տեղ գյուղի դիմացը, իջնում է սպիտակ քարաշեն կամրջի վրա, որ կառավարությունը շինել է գյուղից ցած մի բարակ ջրի ձորի վրա: Այդ ջրի կողքերին մի-մի ծառեր են երևում, որ գյուղացիներն են տնկել. նրանք փորձել են բանջարանոցներ, պարտեզներ էլ տնկել, բայց աշխատանքը կորել է, այնքան անհյուրասեր է այս կողմերի հողը: Բայց և այնպես Տեղ գյուղի հողերը հայտնի են ամբողջ Զանգեզուրի գավառում իբրև լավ և պտղատու հողեր. կարող էք, ուրեմն, երևակայել, թե հողագործությունը որպիսի հարստություն է Սյունիքի համար, երբ ամենից լավ հողերը սրանք են՝ այս մեր տեսածները: Շատ կարելի է, որ այդ լայնատարած լեռնադաշտը կարող է և լավ ցորեն տալ, բայց այժմ Տեղի ցորենը Ղարաբաղի ցորենից շատ ստոր է գնահատվում: Առատ պտղաբերության մասին էլ շատ չի կարելի գովել այս տեղերը. լեռնադաշտ է, միշտ ցրտի և քամու ազդեցության տակ է գտնվում, և բացի դրանից, նայելով չորս կողմին և լսելով հասկացող մարդկանց խոսքերը, հեշտ կարելի է հասնել այն եզրակացության, որ մարդիկ անխղճորեն հարստահարում են հողը, ամեն տարի վարում են, ցանում, ամենահին ժամանակներից քաշում, դուրս են հանում երկրի բոլոր ուժերը և այդպիսով առանց այդ էլ նիհար, անջրդի հողը, որ կուչ է եկած բարձր լեռնադաշտի խիստ երկնքի տակ տարեցտարի ուժասպառ է լինում, աղքատանում: Հողը պարարտացնելու գաղափարը այստեղ միանգամայն անհայտ է, այնպես են համոզ-

ված ամենքը, որ աստված ինքը տվել է Տեղ գյուղին այդ դաշտավայրը, աստված էլ նրա հոգսը կտանի: Բայց եթե այսպես չմտածեին, խնամքով և խելքով հերկեին երկիրը, Տեղը կարող էր Չանգեզուրի շտեմարանը դառնալ:

Ահա և ինքը՝ Տեղ գյուղը: Նա տարածված է մի ձորի լանջիվայրով և շատ մեծն է. տներ, տներ, որքան շատ են, հավաքվել են մի տեղ, բռնել են մեծ լանջիվայրը, իջել են մինչև ձորը: Գյուղի տեսքը խիստ տխրալի է: Ողորմելի, ցածրիկ տնակներ կպած են գետնի երեսին. ամենքը մոխրի կույտերի են նման. գորշ մոխրահողն այնպես անախորժ, սիրտ ճմլող գույն է տալիս արեգակի տխուր ճառագայթների տակ, այնպիսի օտարոտի, ծանր տպավորություն է գործում, ուր նայողը հենց առաջին անգամից խղճում է՝ կարծելով, թե մի ինչ-որ թշվառություն ճմլել է նրան, գետնից կպցրել, և մի ինչ-որ թշվառության համար նա մոխիր է ածել իր գլխին, բոլորվել է արեգակի առաջ և իր բազմաթիվ մոայլ աչքերը, իր փոքրիկ, ցածրիկ սև-սև սրահները երկնքի լուսատուին ուղղած՝ ուզում է տաքացնել իր սառած մարմինը և միևնույն ժամանակ ուզում է սգալ... և սգում է: Գոնե մի հատ ծառ, մի փոքրիկ թուփ, մի հատ լայն բակ կամ մի կանաչ բույս երևար գյուղի մեջ. այդպիսի բաներ չորոնեք, մոխիր և մոխիր է ամեն տեղ, տներն անկարգ ու անկանոն թափված են միմյանց վրա, մեկի կտուրը մյուսի բակն է. մարդ զարմանում է, թե ինչպես են մարդիկ անցուդարձ անում գյուղի մեջ, ո՞ր են նրանց ճանապարհները, փողոցները:

Տեղը շատ հին գյուղ է: Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ (գլ.ԾԳ) գտնում ենք, որ այս գյուղը փրկչական 998 թվականին նվիրել է Տաթևի վանքին Սյունյաց առաջին թագավոր Սմբատի կինը, Շահանդուխտ թագուհին¹: Այստեղ էլ հիշատակվում է, որ ինքը, Շահանդուխտ թագուհին է այս տեղը շենարել: Գյուղի հնության մասին վկայում է նաև հին գեղեցիկ եկեղեցին, որ մինչև օրս էլ կա: Հայտնի չէ, թե ինչպես է եղել առաջ, բայց այժմ Տեղը Սյունյաց երկրի ամենամեծ հայ գյուղերից մեկն է. նա ունի մինչև 600 տուն ժողովուրդ: Այսպիսի մի գյուղը, ցավ է ասել, լավ անուն չունի Ղարաբաղի և Չանգեզուրի կողմերում: Բհարկե, մարդկանց նայած է կազմվել այն առածը՝ թե՛ջուրը որքան մի տեղ մնա, կհոտի»: Հնությունն էլ չի կարողանում գյուղին որևէ պատիվ տալ: Ինչպես պատմում են, գյուղի մեջ միշտ անպակաս են ամեն տեսակ լրբությունները. միմյանց կողոպտում են, միմյանց դեմ

¹ Այժմ պատկանում է թուրք բեկերին. Թե ինչպես է գյուղն անցել սրանց ձեռքը, ընթերցողը թող կարդա Լաֆֆի, «Նսանս. Մելիք.» XLI գլուխը (եր.324-325)

թշնամություններ, թակարդներ են լարում: «Է՛, ինչե՛ր ասես չեն լինում այստեղ, ինչե՛ր չեն լինում», ասում էր զանգեզուրցի մի ծանոթս, որ Տեղում շատ է եղած. «Հային անարժան բաներ են անում»: Ղարաբաղում ասում են, թե տեղցին հյուր կընդունի իր տանը և գիշերը վեր կկենա, կկողոպտե նրան. եթե այս մեկը բոլորովին ճիշտ էլ չլինի, բայց երբ այդպիսի մի վկայություն կա, նշանակում է, թե ամենքին են հայտնի այս գյուղացիների երեսասպնդությունն ու խաբեբայությունը: Չեմ հիշում՝ որ թվին, բայց լավ գիտեմ, որ տեղացի մի պարոն Թիֆլիսի մի ռուս լրագրում նկարագրել է Տեղ գյուղի կյանքը ամենամոայլ գույներով: Այս տեսակ մի այլանդակ գյուղ էլ Ղարաբաղի կողմերում կա, Տիզակ գավառակի մեջ. նա կոչվում է Հաղբուր: Ինչի՞ցն է այս, ո՞րտեղից է այս հրեշավոր տգեղությունը գալիս, մտնում մեր գյուղերը. ահա մի հարց, որի ուսումնասիրությունը տարիների աշխատանք է պահանջում: Ես այսքանը միայն գիտեմ, որ շատ տեղերում գյուղացին մերկանում է իր հին կեղևից, հետզհետե թուլացնում է կրոնական-բարոյական կրթության կապերը, հեռանում է հին ավանդություններից. այսպես լինելուց հետո նա կորցնում է սանձը և այսպիսի հրեշավոր այլանդակ կերպարանք է ստանում, այլասերվում:

Իմ խոսքը Տեղ գյուղի մասին էր: Իմ տված աղոտ պատկերը լրացնելու համար հարկավոր է ասել, որ գյուղը դպրոց չունի. կանոնավոր դպրոց, որքան իմանում եմ, ոչ մի ժամանակ չի եղել, և ունենալու միտք այժմ չկա: Մի այսպիսի մեծ գյուղում, այսքան և այսպիսի մեծ գյուղում, այսքան և այսպիսի մարդկանց մեջ չկա բարոյականացնող, ազնվացնող հիմնարկությունը. ասենք թե հին սերունդը այնպես է կրթվել, մեծացել, պե՞տք չէ գոնե նոր սերնդի համար հոգս անել, պե՞տք չէ նորի և հնի մեջ մի անջրպետ դնել, ո՞ր կհասնի վերջը, եթե միշտ ժողովուրդը մնա տգիտության մեջ, կատարելագործվի այժմյան վատությունների և կեղտերի մեջ: Տաթևի փոխանորդները, որոնց վիճակումն է այս գյուղը, հաճախ երթնեկում են գյուղի մոտով, տեսնում են ամեն անգամ և ըստ երևույթին երբեք նեղություն չեն կրել մտածելու, թե ինչի է կարոտ մի այսպիսի ժողովուրդը: Անբուժելի՛ անտարբերություն:

Փոստի իջևանը գյուղից բարձր է գտնվում, ուստի մենք գյուղը մտնել չենք կարողանում. մանավանդ որ մեր ձիաները արդեն պատրաստ են: Պետք է շուտ գնալ, որ օրով տեղ հասնենք: Ու ճանապարհվում ենք: Տեղ գյուղի դաշտերը չափում ենք, գնում ենք սաստիկ արագ: Երկու թե երեք վերստից

հետո հասնում ենք մի մեծ թումբի, որի վերևը ժայռոտ է, այդտեղ հողը հանկարծ փոխվում է, սևանում: Չանձրալի միանմանությունից հետո, որ մարդ է խեղդում, զարմանալի չէ ուղևորի ուրախությունը մի այդ տեսակ չնչին փոփոխությունը տեսնելիս: Սևահողի դաշտերը վարած են, կանաչած. արտերը երկար և նեղ ձորերով ընկած են, բաժանվում են նեղ-նեղ սահմաններով, կամ «գահմաններով», ինչպես ասում է ժողովուրդը: Բավական երկար է ընկած սևահողը, հասնում է Քարաշեն անունով հայաբնակ գյուղի սահմաններին: Այս գյուղը շատ բարձր է ճանապարհից, և մենք տեսնում ենք նրա տափակ կտուրները, որոնք թիկն են տվել ժայռոտ բարձրությանը: Գյուղից դեպի ցած է գալիս և մեր ճանապարհը կտրում է անցնում մի չոր հեղեղատ, անհամար քարերով լցված. հեղեղատի կողքին՝ ճանապարհից քիչ ցած, տեսնում ենք մի ջուր, որ գետնից դուրս գալով՝ կարծես եփվում է, պղպջակներ է կազմում և մի փոքրիկ լճակի մեջ հավաքվում. դա հանքային ջուր է, չգիտեմ՝ ինչ բաղադրություն ունի, գյուղացիք գործ են ածում քոսի դեմ: Այդ ջրից քիչ հեռու՝ ճանապարհի վրա, կա մի ուրիշ աղբյուր. սայլակը կանգնում է, մենք իջնում ենք, մոտենում աղբյուրին և, որովհետև հետներս աման չունինք, մի երկու-երեք բուռ վերցնում ենք ջրից ու խմում: Ցուրտ ջուր է, իստակ զելտերյան, որ համարյա ոչնչով չի զանազանվում Թթու-Ջրի զելտերյանից. զանազանությունը գլխավորապես նրանում է, որ Թթու-Ջուրը պատվում-պաշտվում է Շուշու պես մի քաղաքը, իսկ Քարաշենի ջրերը լուռ ու մունջ, համեստ և ապարդյուն դուրս են գալիս, քիչ կանգ են առնում ու հետո գնում են թափվում հեղեղատի ձորը: Սրանք, երևի, բնության խորթ որդիներն են:

Անցնում ենք Քարաշենի գետակը, որի վրա մի քանի բանջարանոցներ կան՝ երկու թե երեք փոքրիկ ծառերով, որոնք այսքան երկար տկլոր տարածությունների վրա ամենաողորմելի տեսք ունին: Մենք հասնում ենք Տեղի լեռնադաշտի ամենաբարձր տեղը: Դեռ Տեղի իջևանից դուրս եկած բոպեին երկինքը ծածկվում էր մոխրագույն ամպերով: Նրանք գալիս էին հարավ-արևմուտքից, խումբ-խումբ արշավում էին, կուտակվում. իսկ այժմ երևում է, որ այդ կողմի սարերի վրա անձրև է գալիս: Ցուրտը գնալով սաստկանում է, մենք փաթաթվում ենք մեր վերարկուների մեջ, բայց ձեռքներս ոչ մի կերպ չենք կարողանում տաքացնել:

Հանկարծ մեր սայլավարը կանգնեց և իր չուխայի վրայով մի ուրիշ չուխս էլ հագավ: Ապա իր տեղը նստելով՝ նայեց մեզ, մտրակը դեպի առաջ ուղղեց,

մեզ մի բան էր ցույց տալիս: Յույց տվածը դեղնագույն մառախուղի պես մի բան էր, որ կանգնած էր մեզանից հեռու՝ առջևում՝ ճանապարհի վրա: Եվ տեսնելով, որ մենք անփույթ նստած ենք, նա մեկ էլ ետ դարձավ, մեզ նայեց, տեղը պնդացրեց և ձիաների սանձերը շարժելով ասաց.

-Քամի է, աղա՛ :

Անձրևը կաթկթեց. վրա հասավ մի տարածամ մթնոլորտն, մառախուղը գլորվելով, պտտվելով դեպի մեզ էր գալիս: Քամին հասավ, իր դեռ թույլ թևերը մեր երեսներին քսեց: Առաջին շարժողությունը այն եղավ, որ մենք մեր ձեռքերը գլխարկների վրա դրինք:

-Շարժի՛ր, շարժի՛ր ձիաներդ,- հրամայեցինք սայլվորին ու կուչ եկանք:

Ու ձիաները վազեցին. մենք հարձակվեցանք մառախուղի վրա, խրվեցանք նրա մեջ: Քամին սկսեց իր շառաչունը, սկսեց սուլել: Մի բուպեում մեր առաջ եկավ հունվար ամիսը. ցուրտը կտրում է անցնում, իսկ անձրևի կաթիլները ծուռ-ծուռ խփում են մեր դեմքին ամեն մի կողմից, ծանր են խփում, մի սառն դողոց են տարածում մեր մարմնի մեջ: Քամին սաստկացավ. վազում է նա աջ ու ձախ, հարձակվում է՝ ոչինչ չհարցնելով: Եվ փչում է, և խուլ մոռնում, աչք բաց անել չի թողնում: Ճանապարհի թոզը բարձրացել է, նա ինքն է այդ մառախուղը. նա ավելի և ավելի թանձրանում է, ավելի և ավելի մեծանում, կատաղի խաղեր է խաղում, կամ բարձրանում է, սյուն դառնում, մի սյուն, որի բոլոր մասնիկները ոլորվում են, պտտվում, հեռանում, մոտենում, և հանկարծ գահավիժվում, վայր ընկնում ճանապարհի կողքին ու գետնին քսվելով՝ թռչում են դեպի հեռուն, ոռնալով, ողբալով կորչում. կամ թե ճանապարհի ծայրով քուլա-քուլա գալիս է, տակն ու վրա դառնալով ծովում է, քիչ բարձրանում և փրթալով սայլակի տակն է մտնում: Կարգին անձրև է գալիս. մեզ հետ կա յուրաքանչյուր կովկասցու համար այնքան թանկագին յափնջին: Վեր ենք առնում, երկու հոգի փաթաթվում ենք նրա մեջ, միմյանց ենք կպչում: Իսկ սայլակը թռչում է ու թռչում. ձիաները իրենք են հասկանում, թե ինչ կա և մտրակի ու ձայնի չսպասելով՝ վազում են ականջները ցցած, գլուխները դեպի մի կողմ թեքած: Մեր սայլավարը, տեղացի հայր, անհանգիստ է երևում, շարունակ դեսուդեն է նայում, չգիտեմ ինչ կար: Բայց քամին գործ չունի նրա մեծ փափախի հետ. մեր Ղազարը այսպիսի բաներից վախեցողը չէ, այս քամին նրա հայրենի բնությունն է, նա չի կարող մրսեցնել տեղացու ձեռքն ու դեմքը:

Ի՞նչ կլինի այս փոթորիկը ձմեռ ժամանակ, երբ այս կողմերը ծածկված կլինեն խոր ձյունով: Ես այժմ եմ հասկանում, թե ինչ բան է Սյունյաց երկրի հռչակված բուքը. հասկանում եմ, թե ինչ կլինի մի ճանապարհորդի դրույթունը, երբ ձյունը փոշի դառած օդի մեջ պտտվում է ամպերի նման, սևացնում լույս օրը, ծածկում, անհետացնում է մարդու շինած ճանապարհը, ճաքացնում է մարդու կաշին, ասեղի պես ծակոտում է մարմինը, անտանելի ցավ պատճառում:

Մեր բախտից քամին երկար չէ բռնություն անում: Բաշլըղի և յափունջու տակից նայեցինք, տեսանք այդ անհյուրընկալ տեղերը, տեսանք, որ օրը մթնում է. մառախուղը հեռացել է կորել, անձրևը կաթ-կաթ է գալիս: Բայց սայլակը հանկարծ կանգնեց: Ահա ուրիշ ցավ. մեր ճանապարհը երկար տեղ բռնել են թափառականների անթիվ ոչխարները: Սկսվեց աղաղակներն ու հայհոյանքները: Եթե սպասենք մինչև որ ամբողջ հոտը գա անցնի, շատ կուշանանք. իսկ եթե առաջ գնանք, անիվներն ու ձիաները կոտորած կտարածեն հոտի մեջ, վնասներ կտան խեղճ հովիվներին, որոնք դեռ նոր են գնում իրանց ձմեռոցները: Հովիվները միշտ վախենում են «թագավորական փոշտից». մեր ետևից գալիս էր Գորիսի փոստը՝ երկու ձիավորների պահպանությամբ: Ձիավորներն առաջ ընկան, հայհոյանքներով, բարձր աղաղակներով և մտրակների շարժումներով ճանապարհ պահանջեցին: Մի բարեխառն խառնակություն էր. հովիվները միմյանց ձայն են տալիս, շտապ-շտապ կարգադրություններ են անում, միևնույն ժամանակ աղաչում են ձիավորներին, ասում են, թե չեն իմացել: Աղմուկն ու աղաղակը հանդարտվեց այն ժամանակ, երբ ահագին հոտի մի մասը դուրս բերին ճանապարհից. գնում են ոչխարները՝ վախեցած, միմյանց կպած, միմյանց հրելով: Ոչխարային խելքը խառնվել է, մի մասը գալիս է ուղղակի սայլակի տակն է մտնում, մի մասը հիմարաբար կանգնել է, սառել: Բայց մեր սայլավարը չի սպասում, սայլակը շարժվում է. չգիտեմ անիվների մոտ խմբված ոչխարներին վնաս եղավ թե ոչ, միայն ես տեսա թուրք հովվին, որ այդ վայրկյանին վերին աստիճանի հուսահատական դիրք էր ընդունել սայլակի մոտ. ձեռքերը տարածած, ամբողջ մարմնով տատանվելով նա կուչ եկավ, կարծես ուզում էր հոգով ու մարմնով մտնել սայլակի տակը, փրկել իր անխելք ոչխարներին:

Այնուհետև մենք դեպի ցած ենք գնում. մեր առջև բացվել է այն մեծ ու լայն ձորը, որի մեջ տեղավորված է Գորիս գյուղը: Մութն արդեն պատել է ձորը,

սարերի անորոշ գծագրությունները խառնվել են միմյանց հետ. հեռվից, ցածրից երևում են ճրագների բազմաթիվ լույսերը: Գյուղը շատ մոտ է, մեր ոտների տակ է փռված, բայց մոտ է ձիավորի և հետևակի համար, դրանք կարող են այստեղից ուղիղ իջնել լանջիվայր ճանապարհով, փույթ չէ, եթե գլորվեն, վազ-վազ անեն, ընկնեն ու վեր կենան, բայց շուտ տեղ կհասնեն: Իսկ փոստային սայլակի համար երկա՛ր, երկա՛ր ճանապարհ կա: Ձիաները գլուխ վերցրած վազում են, սայլակը թռչում է. լեռնցի սայլավարի համար դա մի սովորական արշավանք էր. նա չի հասկանում իր ետևը նստածների վախն ու սարսափը. հանկարծ տաքացած ձիաները վերցնեն մեզ ու փախչեն, չուզենան պտույտներ անել տեղ-տեղ շատ նեղ ճանապարհի վրա, ու ցած ընկնեն, ձորի մեջ խփեն մեզ էլ, իրանց էլ: Մենք հայտնում ենք մեր Ղազարին այս միտքը, բայց զարմացած մեզ է նայում, ուզում է հասկացնել, թե որքան վախկոտներ ենք: Այդպես շտապելով աղմուկով վազում ենք ճանապարհի երկու կողքին կանգնած մեծ-մեծ քարերի միջով: Ջարմանալի են այդ քարերը. առանձին-առանձին կանգնած են չոր հողի վրա, շաքարի վիթխարի գլուխների են նման և մարդու զարմանքն են հարուցանում. նրանց հիմքը լայն է, կոլորակ, կոնաձև մարմինը որքան բարձրանում է, այնքան նեղանում է, մինչև որ վերջանում է սուր ծայր կազմելով: Մի կերպ դժվարությամբ է մարդ հավատում, թե դրանք հողի մեջ են հաստատված. սպասում ես, թե ահա մի ժամից հետո կընկնեն, եթե քամին քիչ էլ ուժ փորձե: Ահա մեկը, կարծես բոլորից մեծը, հսկայականը. կանգնել է մենակ ձորի բաշին, ունի գլխի վրա դրած մի մեծ բեկոր: Արդյոք այս հսկայական գլխարկը կպա՞ծ է գլխին, թե մի ինչ-որ հրաշքով նստել է և մնում: Բոլոր քարերը կարմրագույն են կամ մոխրագույն. իբրև մի գեղեցիկ բացառություն մի տեղ կա սպիտակ քարերի մի խումբ, որոնք, ունենալով մի ընդհանուր հիմք, բաժանված են միմյանցից նեղ-նեղ ճեղքերով:

Բնության այդ հաղթական սյուները ետ են մնում, մենք անդադար իջնում ենք: «Հասել ենք, հասել ենք», կրկնում է սայլավարը: Բայց ո՞ւր է: Մենք առաջ ենք գնում և էլի ետ գալիս, երկար ու մեծ պտույտներ ենք անում գյուղի գլխին, կարծես նրան մոտենալու համար անշուշտ հարկավոր է մի այսպիսի ավանդական ծես կատարել, մի լանջի վրա երկու-երեք անգամ գնալ ու գալ, պտտվել: Համբերությամբ այդ ծեսը կատարելուց հետո մենք անցնում ենք մի փոքրիկ գետից, որ անթիվ քարերի մեջ ընկած բարձրաձայն աղաղակում է: Քիչ էլ գնում ենք ու հանկարծ, բոլորովին անսպասելի կերպով մտնում ենք

մի լայն փողոց, որի երկու կողմին կանգնած են մեծ-մեծ, քարաշեն, գեղեցիկ տներ: Իսկ մի տան պատշգամբի վրա ծփծփում են դրոշակները, վառված են ճրագներ, և երգեհոնը անխնա ձկլթում է, երբեմն ձայնը կուլ է տալիս և երբեմն արձակ-համարձակ դուրս է հանում բազմատեսակ դայլայլիկներ: Բա՛, մարդավարի քաղաք է եղել այս Գորիսը:

Գ

Հետևյալ օրը վաղ առավոտյան տեսնում եմ Գորիսը. Զանգեզուրի գավառի այդ կենտրոնը:

Բայց ի՞նչ է դա՝ գյո՛ղ, թե՞ քաղաք:

Ես դժվարանում եմ պատասխանել: Եթե գյուղ անվանեմ, գյուղերում (գոնե մեր գյուղերում) չեն լինում այսպիսի սիրուն, մեծ-մեծ շինություններ, միհարկանի, երկհարկանի տներ տախտակի կտուրների տակ, ինամքով պահվող տներ, որոնք ունեն մաքուր պսպղուն պատուհաններ, սպիտակացրած պատեր և լայն ու մաքուր բակեր: Գյուղ անվանես, այո՛, «բեղամաղ» կլինեին բոլոր հարազատ գորիսեցիները: Ամեն ինչ կարգին է. կա մեծ առևտրական հրապարակ, ուր կարելի է ամեն ուզածդ գտնել, կան արհեստավորներ, կան վարչական ու դատաստանական հիմնարկություններ: Լայն և ուղիղ փողոցներում ճեմում են մարդիկ, երբեմն երևում են պճնագարդ և տուրնյուրագարդ տիկիներ: Կա, վերջապես, ծառայողների այն ջահել դասակարգը, որ ամեն կերպ աշխատում է կռկված, զարդարում երևալ, այն իսկ դասակարգը, որ ռուսներն անվանում են «գավառական առյուծներ»: Միննույն ժամանակ դա է և գավառական ինտելիգենցիան: Այս դեպքում ինտելիգենցիա ասելով չեմ ուզում վկայել, որ այդ դասակարգը բարձրագույն ուսման տեր է (կան և երեք թե չորս այդպիսի անձինք). ինտելիգենտ են անվանվում այն պատճառով, որ տեղյակ են գրին, գիտեն շատ բան՝ օրինակ, իմանում են Իշակ-խանի ով լինելը, նրան տված պատերազմների տեղն ու վախճանը, շատ լավ գիտեն, թե ով է Բուլանժեին վիրավորել և ինչու, իսկ Բիսմարկը, ի՞նչ ասել կուզի, նրանց հին ծանոթն է: Բացի այս ամենից՝ իմ հիշած դասակարգը կրում է ամեն մի ինտելիգենցիային պատիվ բերող հատկությունը՝ տխրությունը, և այդ տխրությունն այստեղ էլ փարատվում է կանաչ սեղանների շուրջը, կավճի թոզի և թվանշանների կույտերի մեջ. այստեղ էլ շշերը շրխկում են, զարեջուրը, տեղն ընկած ժամանակ և շամպաննիան թափվում են, երգվում է գեղեցկությունը, սիրավառ դեմքն ու

առհասարակ ամեն մի մարդու սիրտ պղտորող վայելչությունը: Եվ այս ամենը սակավ չէ տեղի ունենում, ոչ թե «գատկից գատիկ», այլ շատ հաճախ, շուտ-շուտ, համարյա միշտ: Շատ տներ կմտնեք և շատ գաարդարուն դահլիճներ կտեսնեք, գեղեցիկ պաստառներ, Վիեննայի աթոռներ, փափուկ բազմոցներ, թանկագին գորգեր, պատուհանների և դռների գեղեցիկ վարագույրներ: Կտեսնեք ավանդական հաստափոր վաճառականներին, «խոջաներին», որոնք ոչնչով չեն զանազանվում քաղաքի հենց այդ տեսակ մարդկանցից, կտեսնեք նաև ոսկով և արծաթով զարդարված ջահիլ վաճառականներին: Վերջապես քանի՞ քաղաքներ ենք ճանաչում Կովկասում, որոնք ունենային այսպիսի լայն և ուղիղ փողոցներ. պակաս են կառքերը միայն, դրանք էլ երևի լույս կընկնեն: Այս բոլորը, ինչպես տեսնում եք, շատ բավական է, որ ամեն մեկը «բեղամաղ» լինի, երբ Գորիսը միանգամից գյուղանվանեք:

Բայց քաղաք էլ չէ: Շատ փոքր է, շատ պակասություն էլ ունի: Ես նկարագրեցի «նոր Գորիսը», այն մասը, ուր ընտրյալներն ու հարուստներն են ապրում: Աչք ածեցեք դեպի հյուսիս, դեպի սարի այն լանջը, որից երեկ իջնում էինք, ձեր առաջն է մի գյուղ, Զանգեզուրի սովորական գյուղերից մեկը: Նա շատ, շատ մոտիկ է այս հարուստ և նոր մասին. եթե չլինեք գետակը, որ երեկ մեր առաջն էր եկել Գորիսից վերև, նորը և հինը խառնված կլինեին միմյանց հետ, բայց գետակը մի մեծ ձոր է շինել, այս կողմին, մի հարթ և հավասար տեղ նոր Գորիսն է վերցրել, իսկ այն մյուս, ձախ ափը, որ ոչինչ հարթոց չունի և թեք լանջիվերի պես ընկած է գետի ձորից մինչև լեռան գլուխը, բուն գյուղն է մնացել: Նայեցեք. այդ լանջիվերի վրա էլի կույտ-կույտ են դառել մեծ ու փոքր տները, որ Տեղ գյուղի տների պես մոխրակույտերի նմանություն ունեն: Նույն նեղ, ձեռքի չափ լայնություն ունեցող փողոցները, նույն հողե տափակ կտուրները, աղբ ու անմաքրություն ամեն տեղ, աքաղաղների ու հավերի կանչկոտյուն, կանանց ու մարդկանց նահապետական տարազի զգեստներ. մի խոսքով՝ գյուղ: Դա ինքն է Գորիսը, այդ անունը դրա սեփականությունն է: Արիստոկրատների մասը կամ, ուղիղն ասած, թաղը այդ գյուղից կախումն ունի. Առաջին՝ կրում է նրա անունը, թեև իր համար, կարծեմ, վաղուց պատրաստ ունի մի անուն, որ պիտի գործ ածե քաղաք դառնալուց հետո, իսկ այժմ, կարծես, ամաչում է հրապարակ հանել. երկրորդ՝ չէ՞ ք զարմանում, հարուստ մասը սեփական եկեղեցի չունի և հարկավոր դեպքում իջնում է գետի ձորը, բարձրանում է գյուղամեջը, ուր կա մի

հասարակ գյուղական եկեղեցի: Այսպես՝ բուն գյուղը ապրում է հարուստ ու փարթամ հատվածից երկու քայլ հեռու, ապրում է՝ այդ հատվածին ամեն օր աչք դրած: Նա հետզհետե ընդունում է նոր քաղաքացուի քաղաքային վարքն ու բարքը, նստում, վեր է կենում նոր ձևի, նոր պահանջի համաձայն: Եվ հավատարիմ մնալով ամեն տեղ հաստատված կանոնին՝ այդ գյուղը, լինելով նորածին քաղաքի «սև մասը», ընդունում, պահում է իր մեջ այն բոլոր կեղտերը, որ դուրս է վիժում «քաղաքակրթության» ճանապարհին հաստատու ընթացքը հասարակությունը: Այդտեղ՝ այդ «սև մասում» են բույն դրել անառակ կանայք, այդտեղ են անցնում ամուրի ինտելիգենտների բանաստեղծական ժամերը, կատարվում են ամենքին մի հոգով և մի աչքով նայող կանանց ընտրած տեղերից անպակաս բոլոր աղմկաշատ ուրախությունները, կոփվածները: Անմաքուր մուկը, որ մի փոքրիկ բան է, մի ահագին կարաս է ապականում, ասում է հասարակաց առածը. անբարոյականության թույնը, որ սկզբում պատվաստվել է գյուղի ծայրերում, հետզհետե տարածվում է, ապականում նահապետական պարգույնները, ողջախոհությունը: Նոր, արիստոկրատական Գորիսը, այո՛, լուսավորվում է, լավ քաղաքակրթվում, բայց դրա համար լավ պատիժ է կրում այդ մեծ, բուն գյուղը. նա պիտի ապականվի, այլակերպվի, որ մեծ-մեծ տները բազմանան, տուրնյուրները ուռչին:

Գյուղի գլխին կախ է ընկած մի չոր, սպիտակ և տխուր լանջիվայր, իսկ լանջիվայրի վրա կանգնած են էլի մի քանի մեծ-մեծ սրածայր քարեր. արևելյան կողմից գյուղին կպած է մի մեծ բարձրություն, որ ունի պատի պես ուղղաձիգ, անմատչելի կողեր: Այդ բարձրությունն էլ գյուղի կողմից սպիտակ մարմին ունի, որ վերջանում է մեծ-մեծ քարերով: Ի՞նչ կմնա գյուղից, եթե մի օր այդ ապառաժները թափվեն... Նայելով այդ տեղերին, նայելով հսկայական շաքարի գլուխներին, հողին՝ մարդն ուզում է ենթադրել, որ ջուրն այստեղ էլ զարմանալի գործեր է կատարել. քերել, տարել է հողը, բաց է արել քարերը, որոնց գլուխը հետզհետե լափելով, սրել է և այդպիսի տարօրինակ նան ձև տվել: Գյուղի մի քանի տները տեղավորված են այդ ժայռերի տակ, խոր ծակերում: Չանգեզուրի հայ գյուղերին հատուկ են այս տեսակ բնակարաններ, և դրանց հայրենիքն է Խնձորեսկ անունով գյուղը, որ Գորիսից մի քանի ժամ հեռավորություն ունի. այդ գյուղն ամենամեծն է Չանգեզուրի հայ գյուղերից, ունի 800 տուն բնակիչ: Ութ հարյուր տները թափված են մի նեղ և սարսափելի վայրենի ժայռոտ և խոր ձորի մեջ, մտել

են ժայռերի տակ, ծակերը: Ես չեմ տեսել այդ գյուղը, բայց ինձ այդպես պատմեցին: Վկայում է այդ մասին և Աբրահամ Կրետացի կաթողիկոսը, Նադիր-Շահի ժամանակակիցը, որ ներկա է եղել շահի թագադրությանը Մուղանի դաշտում: Նա թողել է մի պատմություն, որի մեջ նկարագրել է իր ճանապարհորդությունը Ղարաբաղի և Սյունիքի մեջ. այցելել է և Խնձորեսկ գյուղը, որի մասին պատմում է, թե ջուր կամ փայտ բերելու համար բնակիչները թոկերից կախ էին ընկնում, իջնում իրենց բույներից և հետո էլի թոկերով բարձրանում: Պետք է տեսնել սյունեցու կյանքը այդ տեսակ տեղերում, տեսնել երկար ժամանակ և հետո նկարագրել. թողնենք, ուրեմն, Խնձորեսկը, գանք մեր Գորիսը:

Գորիսը, ինչպես ասացի, ձորի մեջ է ընկած, հյուսիսային կողմից Տեղ գյուղի լեռնադաշտն է, հարավային կողմից՝ Ուշ-Թափալարի լեռնադաշտը. այդ երկու բարձրությունները արևմտյան կողմից՝ այժմյան Գորիսից բավական հեռու, միանում են լեռնային մի պայտաձև բարձրությամբ, ուստի Գորիսը երեք կողմից փակված է, միայն արևելյան կողմից է բաց մնում մի նեղ կիրճ, որով հոսում է Գորիսի անանուն գետակը: Այսպիսի մի դիրքն է պատճառը, որ գյուղն այնքան հաջող կլիմայական պայմաններ չունի. ամառն ընդհանրապես շատ տաք է լինում, քամիներն անպակաս են այստեղից, տաքն ու ցուրտը միմյանց հաջորդում են անակնկալ կերպով, ջուրն էլ առողջարար չէ, ունի կրային խառնուրդ, ջերմուտենդ սակավ չէ լինում: Գորիսի ձորը շրջապատող լեռներն ու նրանց լայն-լայն լանջերը զուրկ են ծառերից և գարուն ու ամառ ծածկվում են շքեղ կանաչ խոտով: Վառելափայտի հեռավորությունն ու թանկությունը աթարն է գործածության մեջ դրել: Բայց աթարի հայրենիքը Միսիանի գավառակն է, որ Գորիսից դեպի հարավ-արևմուտք է գտնվում և այնքան հեռու չէ: Այդ երկրում ծմակներ ամեննին չկան, ազգաբնակչությունը աթարի օգնությամբ է ապրում:

Ասացի, որ Գորիսը Զանգեզուրի գավառական կենտրոնն է: Այստեղ են խմբված գավառական ուստիկանական վարչության դիվան, հաշտարար դատավորներ, անտառապետ, քննիչ, հաշտարար միջնորդ, պետական գանձարան: Նույնպես այստեղ է առևտրի կենտրոնը, վաճառականությունը, մի խոսքով՝ հասարակական բոլոր շարժիչները, որոնք կյանք ու կենդանություն են տալիս գավառին, որը, եթե չեմ սխալվում, Գանձակի նահանգի բոլոր գավառներից մեծն է: Թողնենք վարչությունը, պետական հաստատությունները, որոնք գործում են, ինչպես և ամեն տեղ, օրենքի որոշած

սահմաններում: Մեզ պիտի հետաքրքրի այն հարցը, թե գավառը իր կենտրոնից ի՞նչ է ստանում, ո՞ր աստիճան լավ կամ վատ է վերջինիս ազդեցությունը: Այդ հարցին պատասխանած կլինենք, եթե մի փոքր ակնարկ ձգենք Գորիսի դրության վրա:

Ամբողջ գավառը կրթության և լուսավորության կողմից ամենատխուր դրության մեջ է, որովհետև իր կենտրոնն էլ այդպես է: Գորիսը, որ աշխատում է զարմացնել հեռվից նայողին իր գեղեցիկ տներով, եվրոպական կարգու կանոնով, որ հույս ունի գուցե շուտով իբրև քաղաք հռչակվելու և բոլորովին բաժանվելու գետի մյուս կողմին՝ չոր լանջիվայրին, կպած գյուղից, այդ Գորիսն ունի մի հատ գյուղական տարրական դպրոց (արքունական), որ բաղկացած է երկու դասարանից և ունի, կարծեմ, 60-70 աշակերտ: Կրթությունը տարրականից բարձր չի գնում. տեղացի հայր կարդալու գրել սովորելուց հետո կամ վագում է, որևէ պաշտոնատան մեջ գրագիր դառնում, կամ թե մտնում է խանութ, «բազարի քերականություն» սովորում: Ուր որ նայում ես, երկու տեսակ մարդիկ ես տեսնում՝ պսպղուն կոճակներով և կոկարդներով զարդարված չինովնիկ և վաճառական: Երկուսից որը վերցնեք, լուսավորության, հանրային կրթության մասին մեծ պահանջ չունի: Չինովնիկը իր նեղ հայացքով ամեն տեսակ բարօրություն տեսնում է իր թղթերի անսպառ կույտերի մեջ, իսկ վաճառականին հարկավոր է «հաշիվ ու դավթար»: «Եսը» խիստ բռնացած է այստեղ. մանր բամբասանքներ, դատարկ անձնասիրական հաշիվներ, «կասե-կոսեներ»՝ ահա ինչի մեջ է թավալվում այստեղի կյանքը: Համերաշխություն չկա. «ի՞նչ բան ունեմ», - ասում է ամեն մեկը, հեռանում, ինքն իր մեջ մտնում: Ամեն մի խնդիր, որ կարող էր ընդհանուրին վերաբերել, անտարբերության մեջ է խեղդվում. միմյանց օգնել չգիտեն, բայց միմյանց ընդդեմ գնալուն շատ վարժ են: Այս այսպես լինելուց հետո կարող էք երևակայել, թե ինչ կլինի գավառի խուլ և ոչ խուլ անկյունների դրությունը: Սյունյաց երկրի ուսումնարանների թիվը ծիծաղելի է. կարծեմ չորս թե հինգ ուսումնարանից ավելի չկա: Բայց այնքան շատ են բազմամարդ գյուղերը, որոնք ուսումնարանի և ուսման մասին հասկացողություն չունեն: Մենք վիճակագրական թվանշաններ չունինք, եթե ունենայինք՝ «հասկացողություն չունին» բառերը այնքան փոքր, հասարակ չէին երևա: Մի մեծ, մի ահագին աշխարհ, որ վայրենի, անընկճելի բնություն ունի, որի ազգաբնակչությունը տեղավորված է խիստ անբարեհաճ պայմանների մեջ, մի այդ տեսակ աշխարհ խավա՞ր է, տգետ, սարսափելի

տգետ: Այդ ժողովուրդը թեև առանձնացած է լեռների ու ձորերի մեջ, բայց ամեն օր շփվում է մեր ժամանակի ստեղծած դրություններին, պայմաններին. իհարկե, յուրացնել լավը, օգտակարը նա ինքնաբերաբար չի կարող, ուրեմն ի՞նչ տեսակ նեցուկ պիտի ունենա լավ կանգնելու, պինդ պահվելու համար, ի՞նչը պիտի բանա նրա բնության գաղտնիքը, սովորեցնե նրան ապրել գլուխը բարձր պահած, սիրտը հանգիստ:

Ժողովրդական կյանքը այս տեսակ դրության նշույլներն անգամ չի ցույց տալիս: Երևում են միմիայն տխուր նշաններ: Եվ այդ նշաններից ամենամեծն այն հարաբերությունն է, որ կապում է Գորիսը գավառի հետ: Այդ հարաբերությունը ստեղծել է և պահում է վաճառականական դասակարգը: Այստեղի վաճառականը վաշխառու է, ունի լավ բռնող ճանկեր, որոնցով դեպի իրան է ձգում գյուղացիներին: Հանդարտ ու անձայն է կատարվում գործողությունը: Հեռավոր տեղից գալիս է գյուղացին. ապրանք է գնում մի խանութից, թանկ թե էժան, այդ աստծուն է հայտնի: Փողը մնում է, պարտքը տոկոս է շալակում՝ առանց հաշվի: Գյուղացին հաշվի մեջ քաջ չէ, շատերը հաշվում են այսպես. «երկու քսան, երեք քսան և մի հինգ»: Հաշիվ չիմանալը, ինչպես ասում են մեզ մոտ, նրա վիզը կոտրում է. մարդը աշխատում է, մանեթները բազմաթիվ ծալքերի մեջ է պահում, նա արբեցություն անել չգիտե, շոայլություններից հեռու է, կիրակի և չորեքշաբթի միևնույն գույնն ունին նրա համար: Բայց արի ու տես, մարդ չգիտե, թե ինչպես եկան մանեթներն ու ո՞րտեղ գնացին. ձի պիտի առներ, շատ հարկավոր է, պատրաստվել էր առնելու, մեջ ընկավ կովի հարցը. կովը սատկել է, երեխաները անթաց են մնացել. հարկը պահանջում են, արտը քիչ է տվել, պետք է հաց առնել. երկու թե երեք այսպիսի պահանջներ եկան, խառնվեցան՝ մարդը գլուխը կորցրեց, մնում է ձեռքը ծոցում դրած: Միակ ապավենը վաճառականն է: Օ՛, դա քաղցր մարդ է. կխոսի, կծիծաղի, խորհուրդ կտա, կափսոսա, հույս կտա, միանգամայն կքրքրե, կհիացնե նրա սիրտը և այդ «սրտից ջուր կխմե». և ապա կտա նրան այն, ինչին այնքան կարոտ է նա: Թուղթ էլ չլինի, ոչինչ. հոգու պարտք է, և այն մարդ չպիտի լինի, որ իր հոգու պարտքն ուրանա: Գյուղացին գնաց, որ էլի գլուխ ճաքեցնի իր հաշիվների վրա: «Աստված, աստված», ասաց ու հանգստացավ, իսկ ի՞նչ արեց վաճառականը, ի՞նչպես կարող է իմանալ. մի չվալ գարի պետք է թափի, ինքն էլ փափախը վերցնի, կողքին դնի, որ կարողանա մի օր գարով հաշվել այն, ինչ վաճառականը մի երկու րոպեում հաշվել է մատները հաշվիչի վրա վազեցնելով: Պարտքի

վրայով ժամանակ անցավ, որքան շատ, այնքան ավելի վա՛յ պարտականի գլխին... Վաճառականը մի գիրք ունի, մի հրաշալի գիրք, որի մեջ ամեն ինչ ուռչում է, մեծանում: Նրա մեջ գրված է մի թվանշան. նրան հանգիստ են տալիս, որ շատ չաղանա: Եվ երբ վերջապես նրան հրամայում են երևալ այն մարդիկ աչքին, որի «ոտին է գրած», տեսնում են, որ հրեշային կերպարանք է ստացել, կարող է ուտել, կլանել ամեն ինչ: Նրան միանգամից սպանել չես կարող, պետք է անդամահատել: Սկսում ենք կտրատել այն սուր ու կաշոդ ճանկերը, որ շարվել են տոգած մարմնի վրա: Բացվում է ծոցի մեջ, սրտի կողքին դրած քսակը, հազիվ մի կամ երկու ճանկն է կտրվում. այդ քիչ է, պարտականը վախենում է, գալիս է նրա ձին, խրխնջալով կանգնում է թվանշան պահողի դռանը, մի երկու ճանկ էլ ընկավ, դուրս է գալիս կովը բառաչելով, ոչխարը մայելով, այծը մկկալով, գալիս է նաև պանրի պարկը, յուղի տիկը, ընկնում է վաճառականի շենքի մոտ: Այդ ամենը վրա են թափվում, ուժ ուժի են տալիս, հազիվ են կարողանում ուռած թվանշանի բոլոր ճանկերը կոտորել. մնում է մարմինը, որին նորից քնացնում են: Սա մի շատ երկար պրոցես է. կվերջանա ով գիտե երբ: Դեպքը մեկը չէ, երկուսը չէ: Մարդիկ գերի են դառնում տոկոսին խմբերով, գյուղերով: Ժողովուրդը հասկանում է, թե ինչ է վաշխատուի տոկոսը այն գործողությամբ, որ նա է կատարում. ժողովուրդը նրան չի քննում, չգիտե, թե ի՞նչ է նա, ի՞նչ դեմք ունի, ինչո՞վ է ապրում: Ժողովուրդը միայն զգում է նրան, ճանաչում է այդ տոկոսը այն ժամանակ, երբ նա այրում է իր մեջքն ու ուսերը. հենց այդ պատճառով ժողովրդական լեզվի մեջ «տոկոս» բառին կպած է «կրակ» բառը: «Չեմ ուզում կրակ-տոկոսի տակ մտնել», ասում է նա, «թե չէ փող տվող շատ կա»: Շատ էլ չի ուզում, բայց չուզելով հեռու գնալ չի կարելի: Այսպես անա տոկոսը գերել է գյուղացուն, և այսպես է Գորիսը դեպի իրան ձգում գյուղերը: Դրա պես մեծ վաշխատության կենտրոն հազիվ թե միայն ինքը չէ:

Համեմատելով Շուշու և Զանգեզուրի գավառները՝ ես մեծ տարբերություն են տեսնում այդ միմյանց սահմանակից երկու երկրների ազգաբնակչության դրության մեջ: Շուշու գավառի գյուղացին դեռ անելու և աշխատելու միջոց ունի. սպառման կենտրոնը կա, որ Շուշի քաղաքը և նրա արդյունաբերությունը իր գինը չի կորցնում. նրա արտը, այգին, բանջարանոցը տալիս են այնպիսի մթերքներ, որոնց մեծ կարոտություն կա: Նա ծախում է, ինչ որ ավելացնում է իր պաշարից, իսկ եթե քաղաքից մոտ է, բավական է, որ մի քիչ խելք ունենա և իր ապրուստի ապահով միջոցը հեշտ կճարի:

Մանավանդ հայ գյուղացին. նրա ապրանքը միշտ ծախված է, լավ գին ունի: Եթե հայ գյուղացին այժմ առևտրական հրապարակում դեռ շատ փոքր դեր է կատարում, եթե թուրք գյուղացին է այսօր «աշխարհ լիացնողը», պատճառն այն է, որ հայը շատ թեթև է նայում իր տնտեսության, շատ քիչ քանակությամբ է մթերք վաճառահանում: Բայց դարաբաղցի հայը, վստահ իր հարուստ բնության, երկրի վրա, այդպիսի մանր հարցերով չի զբաղվում. նա արդեն սովորում է փող աշխատել այնպես, ինչպես քաղաքացին է աշխատում: Առհասարակ դարաբաղցի գյուղացին գլուխը բարձր է պահում, ունի մի հայտնի աստիճանի հպարտություն և միայն վերջին անճարության հասած ժամանակն է ուրիշի համար մշակությունն անելը հանձն առնում (իմ խոսքերը գլխավորապես Վարանդա գավառակի բնակիչներին են վերաբերում):

Բայց այդպես չէ Սյունիքը: Սյունեցին չունի սպառման կենտրոն, չի ճանաչում շահավետ հրապարակ. նա իր տանն, իր դռանն է ծախում, ինչ որ ծախելի է, իսկ նրա դուռը եկողը մանր վաճառականն է, չարչին: Որքան գյուղացին ուզում է, թող խելքը բանեցնե. չարչին վերջիվերջո, ինչպես ասում են, նրա ատամները կհանե, միշտ կխաբե: Երկիրը, պետք է ասել, ավելի աղքատ է, քան հարուստ: Բարձր լեռնադաշտերը, որոնց վրա տարվա մեծ մասը սարսափելի ցրտերն են տիրում, գյուղացու արտերի տեղերն են. իսկ սարսափելի ձորերը, որոնց մեջ ամառը խեղդող տոթն է բռնանում, գյուղերի տեղերն են: Հողը, կարծես, հիվանդոտ է, մաշված. տալիս է վտիտ, սև ցորեն, որ շատ ցած գին ունի: Լեռները չեն ընդունում այգիներ պտղատու ծառերով: Ավելացրեք այդ ամենի վրա և այն, որ այդ երկիրը ունի հաղորդակցության զարհուրելի ճանապարհներ, և դուք մասամբ կհասկանաք, թե ինչու սյունեցին մեծ մասամբ մշակ է, աղքատ մշակ, որ ուրիշի համար բան անելով պիտի ապրի: Տնտեսական ծանր հանգամանքները, «կրակ-տոկոսը» հարկադրում են նրան հեռանալ հայրենիքից, ապավինել ուրիշ երկրների օգնության: Ամեն տարի, երբ գարնան տաքը բաց է անում ձյունների և բուքերի մեջ խեղդված երկրի դոները, Սյունիքից մեծ-մեծ խմբերով հեռանում են հարյուրավոր, հազարավոր գյուղացիներ, գնում են գլխավորապես Բաքու մշակություն անելու: Քանի որ երկաթուղի չկար, Շուշու և Բաքվի մեջ ընկած ահագին տարածությունը 10-15 օրվա ճանապարհ էր. մշակները հանձնում էին իրենց պարկն ու շորը մի ֆուրգոնի, իսկ իրենք համարյա թե ոտով էին այդքան ճանապարհը գնում:

1878 թվականին ես Բաքու էի և տեսա, թե ինչ բան է զանգեգուրցի մշակը: Գալիս էին, գալիս, խմբերով, մեծ-մեծ բազմություններով մտնում էին քաղաքը. կարավանասարաններում տեղ չկար նրանց համար, որովհետև փող էին պահանջում. ուստի նրանք թափվում էին փողոցներում, մանավանդ «Ցիցիանովսկի սկվեր» ասված փոքր այգում և նրա շուրջը: Գիշեր ու ցերեկ փողոցներում առանց անկողնի, առանց շորի ընկած ողորմելիները ամեն մի պատահածի խնդրում, աղաչում էին, որ իրանց մի գործ տան: Մանրամասնությունները մոռացել եմ, բայց այժմ էլ՝ 10 տարուց հետո, իմ աչքիս առջև պարզ պատկերվում է այն ընդհանուր տեսարանը, որին ականատես էի ամեն օր. հիշում եմ այն մոխրագույն մասսան, նվաղած, թառամած դեմքերը, այն աղաչավոր և հուսահատ շարժվածքները, որոնցով դիմում էին անցորդին: Կային ամեն հասակի տեր մարդիկ՝ 12-14 տարեկան երեխաներ, ժիր և առույգ երիտասարդներ, պլտրներ, թողած իրենց տունն ու տեղը, եկել էին այդ մեծ քաղաքը, որ իրենց ողնաշարի պնդությունը փորձեն, հաց աշխատեն¹: Իհարկե, շատ աղետալի մահեր, շատ անժամանակ կորուստներ և շատ սրտատոչոր դժբախտություններ էին պատահում այդ ամբողջի մեջ. բայց ես չգիտեմ, մոռացել եմ: Չեմ մոռանում (և երբեք չեմ մոռանա) մի թշվառ սյունեցու, որ սիֆլիսով և մի քանի ուրիշ կեղտոտ հիվանդություններով վարակված էր: Նա այնպես հուսահատ էր, այնպես շլացած, գժված, որ նույնիսկ փողոցում էլ բաց էր անում իր գարշելի վերքերը մարմնի ծածուկ տեղերի վրա, ցույց էր տալիս ամենքին և աղաչում էր մի ճար անել: Նրան խաբել, հրապուրել էին կնիկ ասված մի քանի հրեշ արարածներ, որոնք ապրում էին քաղաքի խուլ ծայրերում և համարյա թե թմբուկներով էին հրավիրում մարդկանց իրանց սարսափելի գիրկը մտնելու. նրանք կամեցել էին ծաղրել թե պատժել պարզասեր և քիչ վայրենաբարո լեռնցուն և պարզեղ էին նրան անճոռնի պալարներ: Խեղճը օրեցօր հուսահատության ծայրին էր հասնում. նա ուներ կնիկ, երեխա և դատապարտված էր պարապ ման գալ, դեն դնել հայի ավանդական ամոթխածությունը: Բաքվից ես Շուշի ետ դարձա ֆուրգոնով, 10 թե 11 օր ճանապարհորդեցի Կուր գետի անսահման տափարակներում: Մեր թուրք ֆուրգոնչին, որ իր հինգ մատների պես էր ճանաչում այդ սարսափելի միանման, մեռած, անապատ հարթավայրը,

¹ Այդ իսկ տարին «Մշակ» լրագրում, հիշում եմ, տպվեցավ նրա թղթակից Կասպիացու մի երկար նամակը, որ մանրամասն նկարագրում էր մշակների տխուր դրությունը. ո՞ր են կասպիացիները, ինչո՞ւ այժմ էլ չեն երևում այդ տեսակ գեղեցիկ նամակներ

մի տեղ ճանապարհի կողքին մի փոքրիկ թումբի մոտ, ցույց տվեց մեզ այդ իսկ սյունեցու գերեզմանը: Այդ թուրքի ֆուրգոնումն էր հիվանդը տունն ետ դառնում, բայց հուսահատությունը կամ գուցե անխնամ թողած վերքերը սպանել էին նրան ճանապարհին: Թուրք ֆուրգոնչին իր մարդասիրությունն էր ցույց տվել. մի փոս էր փորել և նրա մեջն էր խրել անբախտ մարդուն: Այդ գերեզմանը այն տխուր, անբնակ անապատում... Ես հիշում եմ տեղի դիրքը, այն հողի հազիվ նկատելի կույտը, որով ծածկված էր պանդխտի կուրծքը. նա, այդ գերեզմանն է կրում իր վրա հայի պանդխտամոլության պատկերը: Դարերի ընթացքում այդ ազգը չխրատվեց. նա իր ոտների տակ գծեց անթիվ անհամար ճանապարհներ դեպի աշխարհի բոլոր կողմերը, անհիշատակ տխուր գերեզմաններ թողեց այդ ճանապարհների կողքերին և այժմ էլ պանդխտության կորստյան նորանոր ճանապարհներ է բանում, այժմ գնացել է, դուրս եկել մի կողմից Ամերիկա, մյուս կողմից՝ այնպիսի տեղեր, որ հասկանալ, ճանաչել անգամ անկարելի է:

Միանգամայն ցավալի է ասել, որ մշակների այդ ահագին բազմությունը բացառապես Սյունիքի հայ գյուղերից է դուրս գալիս: Թեև այդ գավառի թուրք ազգաբնակչությունը հայերից շատ որ չլինի, քիչ էլ չէ, բայց թուրքը կորստաբեր պանդխտության սովոր չէ, լավ թե վատ, ապրում է իր տանը: Սյունեցի մշակը տարվա ամենալավ ժամանակը օտարության մեջ է անց կացնում. գարնան սկզբին գնում է, աշնան վերջին վերադառնում: Աշնան վերջին Շուշու հրապարակում կանգնած կարելի է տեսնել այդ տարափոխիկ թռչուններին: Տեսնում ես՝ նավթից սևացած, ժանգոտած, մշակի շորեր հագած սյունեցին մի նոր սնդուկ մի ձիու վրա բեռնած տունն է գնում. այդ սնդուկն է նրա աշխատանքը և գուցե մի քանի ռուբլի փող:

Բայց սյունեցին և մասնավորապես Սյունիքի Ղափան գավառակի բնակիչը իր տանը մնալով էլ կարող է մշակություն անել: Ես վերևում Սյունիքի բնությունը ավելի աղքատ անվանեցի, քան հարուստ: Այդպես ասելիս ես նկատի ունեի բնության այն հարստությունները, որոնք մատչելի են ամեն մեկին, որոնք հաց ու ապրուստ են տալիս թե՛ անհատի և թե՛ մի ամբողջ համայնքին: Թե չէ, ո՞վ չգիտե, որ Սյունիքը հանքային անսպառ հարստություն ունի իր մեջ պահած: Ղափանի գեղեցիկ պղնձահանքերը մեծ անուն ու հռչակ ունեին. այնտեղ այժմ բան են անում հազարավոր մարդիկ: Սակայն այդ հարստությունը կապիտալին է մատչելի, տեղական հասարակությունների համար քիչ արժեք ունի: Հանքերը հույների ձեռքին են: Հեռու տեղից

գալիս է հույնը, բերում է իր հետ շատ թե քիչ փող, նստում է որևէ տեղ, գործ է սկսում: Այդ գործը համարել են և համարում են միայն հույնի գործ. նա է միակ տերը, և եթե նա չլինի, ոչ ոք չի մոտենա հանքերին: Եվ հույնը բույն է դրել այդտեղ, բնակություն է հաստատել, իր ձեռքի տակն է հավաքել տեղացիներին: Ղափանի պղնձահանքերը տեսնելը ես մի ուրիշ ժամանակի թողեցի, որովհետև Գորիսից շատ հեռու են. բայց այժմ ավելորդ չէ մի երկու խոսք հաղորդել ընթերցողիս, որ ես կարողացա իմանալ: Պղնձահանքերից մի քանիսը պատկանում են հայ և թուրք կալվածատերերին, որոնք համեմատաբար թեթև վարձ են ստանում: Արդյունագործության համար ունենալով նահապետական կարգ ու կանոններ և գործիքներ՝ հույները չէին կարող այնքան լավ աշխատանք անել, եթե չիմանային, թե ինչպես է հարկավոր մշակ պահել: Հույնը վաղուց արդեն գիտե տեղացու պակասությունները. նա ռոճիկ է նշանակում, բանեցնում է մշակին, և ունի բոլոր միջոցները այդ ռոճիկը դարձյալ մաս-մաս դեպի իրեն ետ դարձնելու համար: Օրինակ՝ մշակը փողի հարկավորություն ունի. նա փողը տալիս է, մեկին հինգ գրում, տոկոսներ բարդում, երկար բանեցնում է, մի քանի ամսվա ռոճիկը կտրում է, մշակի արած պարտքը առաջ է քաշում, այնպես կապկապում է նրա ոտն ու ձեռքը, որ նա միշտ պիտի բան անե և ոչինչ կամ շատ քիչ ստանա: Խուլ, հեռու ընկած անկյուն է, ո՞վ է հարցնողը: Պարզ է, որ իր երկրում մշակություն անելով էլ գյուղացու գրպանում շատ բան չի մնում, և նա գնում է Բաքու, ուր գոնե կարող է իր արածի վարձն ստանալ: Անցյալներում Մութաֆյանց և ընկ. մի գործարանն է բացվել. ինչպես ասում են, այս ընկերությունը գործը կանոնավոր կերպով է սկսել և գուցե մի ժամանակ կարող կլինի ուրիշ կարգ ու կանոն հաստատել:

Այս ամենից հետո մի քանի խոսք էլ խոսենք ներկա 1888 թվականի մասին Սյունիքի վերաբերյալ: Ինչպես հայտնի է, այս տարի ծանր տարի է բոլոր կողմերի համար, բայց Սյունիքի համար կատարյալ թշվառություն կլինի այս տարին, այնքան աղքատ երկիր է սա: Գորիսում եղած ժամանակ լավ հաց չէր ճարվում, հարուստները Նուխու կողմերից բերել տված ցորենն էին գործածում. ամեն ինչի թանկություն էր, հացը, տեղական այլուրից թխած հացը, մի սև, հում, կոշտ զանգված է, որ մեծ դժվարությամբ է ուտվում: Այդ դեռ ցավը չէ, եթե այլուրը գոնե առատ լինի. մի քիչ համ տալու համար եփած կարտոֆիլի ջուրն են խառնում խմորի հետ, իսկ մի քանի տեղ գանգատվում էին, որ տեղական այլուրից թխած հացը ուտողի ուշը տանում է, թմրեցնում:

Ամբողջ գյուղեր գաղթում են Ղարաբաղի կողմերը, ուր հույս ունեն ձմեռը հաց ճարել, թեև Ղարաբաղն էլ այս տարի պակասության մեջ է: Գյուղերը տեղափոխվում են... երևակայեցեք այս երկրի անօգնական դրությունը. երևակայեցեք, թե որքան թույլ է նրա ներքին ուժը, որ անկարող է գոնե մի տարվա պաշար հայթայթել բնակիչներին: Ես տեսա տեղափոխվող գյուղերից մեկը ճանապարհին: Թուրք գյուղ էր, վաղ առավոտյան անցնում էր Աբդալլար իջևանի առաջով. գնում էին լուռ ու մունջ, ինչպես մարդիկ, որ չգիտեն, թե ուր են գնում և ինչ հույսով: Ամենքից հետո քիչ հպարտ քայլվածքով գնում էր մի թուրք՝ փափախը ծուռ դրած, խնամքով ածիլված վզակոթն ու գլխի մի մասը բաց արած. աջ ձեռքը կաշե ձեռնամանի մեջ հագցրած, և նրա վրա կանգնած էր բազեն, որ մերթ-մերթ թռթռում էր՝ իր ոտներին կապած բոժոժները գնզգնզացնելով: Թուրքը այդ ձեռք բարձրացնում էր, որ բազեն էլի կանգնի, և հպարտ-հպարտ իր չորս կողմին էր նայում հաստ, մրոտած հոնքերի տակից: Դուք արդեն հասկացած կլինեք, որ սա ազնվական բեկերից մեկն է: Ի՛նչ զարմանալի բան. նա ոտով գնում է, փախչում է սովից, հեռավոր տեղեր պիտի կոխ տա և ո՛վ գիտե ինչպես պիտի ապրի, բայց ինչո՞վ է հրճվում, ուրախանում: Տեղական մանր աննշան բեկերն այնպես են. միշտ սոված են, միշտ ողորմելի, ապրում են ձրի, ուրիշի հաշվով: Երկրագործությունը ստոր պարապմունք են համարում, իսկ գողությունը՝ ազնիվ: Կան և մանր հայ բեկեր, որոնք այս իսկ տեսակ կյանք են վարում. պապենական գողոգությունը նրանց մանր պարագիտներ է շինել, ուրիշ ոչինչ: Ես ասացի, որ թուրք գյուղերն են գաղթում. պիտի ավելացնեմ, որ մի քանի հայ գյուղեր էլ դրանց օրինակին են հետևում:

Բայց սյունեցին ժիր, աշխատասեր մարդ է, շատ աշխատասեր: Եվ Սյունյաց երկիրն էլ ունի գեղեցիկ անկյուններ: Եթե հողագործությունը լավ վարձատրող աշխատություն չէ, անասնապահությունը նրա փոխարեն լավ զարգացած է. այդ կողմից սյունեցի հայի տնտեսությունը բավական լավ է: Այդ տնտեսության հետ ծանոթացնելու համար ես կպատմեմ իմ մի փոքրիկ ուղևորությունը:

Գորիս գնալուց երեք օր հետո մենք ձի նստեցինք ու գնացինք Հին Գորիս անունով տեղը, որ գտնվում է այժմյան Գորիսից դեպի արևմուտք՝ այն լեռնային բարձրության մոտ, որ, ինչպես վերևում ասացի, արևմուտքից փակում է Գորիսի ձորը:

Կեսօր էր, մենք դուրս եկանք փոստի ճանապարհից, Գորիսի կարկաչահոս գետակի աջ կողմում դեպի վեր, դեպի սարը գնացինք: Համեմատաբար քիչ տարածություն էինք անցել, վեց կամ յոթ վերստից ոչ ավելի, բայց բնությունը հանկարծ փոխվեց: Մենք շրջապատված էինք լեռնային գեղեցիկ բարձրություններով, մեծ ու փոքր թմբերով, որոնց վրա, բացի կանաչ պարարտ խոտից, ոչինչ չի բուսնում: Չորը քանի գնում, հուփ էր գալիս, նեղանում, մեծ ու փոքր թմբերի արանքով վազվզում էին վճիտ, աղմկաշատ ջրեր, իսկ սարերի լանջերում երևում էին տավարների մեծ հոտերը: Մենք մոտենում ենք այն տներին, որոնք խմբված են մի թմբի շուրջը և շատ հեռվից են երևում: Այս մի օրինավոր գյուղ է, մի հայկական գյուղ իր սև-սև տներով, աղբակույտերով. թմբի գլխին կանգնած է հին եկեղեցին, որ այժմ աչքից հեռացրած է: Բայց գյուղ չէ, այլ Գորիս գյուղի գյուղատնտեսական ագարակը (Ֆերմա): Հին ժամանակներն այստեղ է եղել բուն գյուղը, որ չգիտեմ, թե ինչու է թողել այս տեղը, գնացել է տեղավորվել ներքևում՝ բիզ-բիզ քարերի տակ: Մեր առաջն են դուրս գալիս հին ավերակ տներ, որոնց մեջ մեկը՝ երկհարկանի մի տուն՝ սև քարերից շինած, ուշադրություն է գրավում իր կամարապատ կտուրով և պատուհանների ու դռների քանդված, անճոռնի կերպարանք ստացած ճեղքերով: Երևի ավերակների քարերից են կազմվել բազմաթիվ քարակույտերը և քարի ցածրիկ քառակուսի պատերը, որոնք ցրված են ամեն տեղ, և որոնց մեջ տավարն է գիշերը հավաքվում:

Մենք այդտեղ կանգ չենք առնում, առաջ ենք գնում ջրի կողքով, անցնում ենք մի փոքրիկ ջրաղացի մոտով, դուրս ենք գալիս մի ուրիշ բլրակի առաջ. այդտեղ էլ շար ընկած են դարձյալ տնակներ, տնտեսական զանազան շինություններ: Մտնում ենք մի բակ, երկու երեխա վազում են երկու շար շների վիզը գրկում, որ մեզ պատահա-պատահ չանեն, իսկ մի աղջիկ նստած տեղից վեր է թռչում, վազում, անհետանում փոքրիկ սև տնակի մեջ՝ թողնելով դրսում՝ իր նստած տեղը, մի ինչ-որ շարի կտոր, որ նրա ձեռքին էր: Մի տղամարդ բերում է մեզ համար մի աման մածուն: Աթարի ահագին կույտի մոտ մենք նստում ենք մի քարի վրա և գդալով ուտում ենք թանձր, սալ-սալ մածունը. որքա՛ն պաղ է, համեղ: Տեսա մյուս տնակների բակերը. ամեն տեղ հարս ու աղջիկ, երբեմն և պառավներ, բան ու գործի են. մածուն են քամում՝ ածելով քսակների մեջ, խնոցի են հարում, բակերի աղբն են ավլում, մի տեղ կուտակում, որ այթար պատրաստեն: Այստեղ մարդկանց հոգսը կաթնատու

կենդանիներն են, այստեղ ոչ հնձում են և ոչ կալսում, միայն կաթն է, որ օրնիբուն բան ու գործ է տալիս:

Այստեղից գնացինք դեպի բարձր, դեպի արևմուտք: Որքան հեռու ենք գնում, այնքան ավելի գեղեցկանում է տեղն ու բնությունը. աշնանային կանաչ և գեղեցիկ խոտը ժպտում է մեր առաջ, շուտ-շուտ պատահում են փոքրիկ և հիանալի աղբյուրներ: Ամեն մի աղբյուրի մոտ ծարավում ես, թեև ծարավ չեիք. իջնում ես ձիուց, չոքում, ջրի վրա ընկնում, խմիր, անվնաս ջուր է: Բայց որքան և սիրահար լինես աղբյուրի ջրին, չես կարող ամեն մեկին հարկ տալ քո ծունկ չոքելովդ ու բերանդ վրան դնելովդ: Այնքան շատ են փոքրիկները... Եվ այդ գեղեցիկ տեղերում՝ միմյանցից շատ հեռու, երևում են մենավոր տնակներ, որոնց առջևը հետզհետե հավաքվում են կովեր, եզներ, գոմեշներ. այստեղ էլ միմյանցից հեռու են ապրում, այստեղ էլ այսպես են գրադված: Մենակ հովիվներ չեն ապրում: Ահա մի աղբյուրի մոտ կանգնած է սյունեցի կինը՝ կապույտ գոգնոցը կապած, թևերը ետ ծալած, երեսը խնամքով ծածկված. մեր խնդրանքով նա լցնում է մեզ համար իր ձեռքին բռնած սև պղնձի ամանը, որի միայն ձևն է ցույց տալիս, որ պղինձ է, եթե ոչ, մի նշան չկա, որ չասի թե սևացած, ածուխ կտրած երկաթ չէ: Ապրում են հովիվ ու հովվուհի միասին, ապրում են մի բոլորովին ուրիշ կերպով: Ահա այն բանաստեղծական անկյունը, այն հովվական աշխարհը, որ ոգևորություն է տալիս բանաստեղծին. Այստեղ՝ բնության այս ծոցում, բնության այս հարազատ զավակների շրջանում է գտնվում նահապետական պարզ կեցությունը, մարդկային ազգի հին կյանքի կերպարանքը, որ մեր ժամանակի ապականող շնչի առաջ հեռանում է և հեռանում մեծ գյուղերից:

Մենք, վերջապես, հասնում ենք լեռան ստորոտին: Ես մոռացա ասել, որ մեր այստեղ գալու գլխավոր նպատակն էր տեսնել մատակ ձիերի երամակը, որ պատկանում է Գորիսի հայտնի հարուստներից մեկին՝ պ.Միրումյանցին: Ինքը՝ տերն էլ մեզ հետ էր. նրա հրամանով ձիերը պահող առույգ և կարմրաթշիկ երիտասարդը հավաքեց, դեպի մեզ ուղղեց մատակներն իրենց քուռակներով: Ես երկար նայում էի ձիաների այս բազմությանը, որ մի շատ գեղեցիկ տեսարան էր ներկայացնում: Գույնզգույն ձիաները գույնզգույն քուռակների հետ ուստոստում էին, դեսուդեն վազում, խրխնջում. որքան թեթևաշարժ, գեղեցիկ են այդ փոքրիկ ու մեծ քուռակները, որքան շատ է նրանց մեջ կյանքի եռանդը, ջերմությունը, որ վայրենության է հասնում: Տեսնում ես մեկը, որ քեզ մոտ կանգնած էր, հանկարծ ազին

բարձրացնում է, ականջները խլշում, դեպի առաջ ցցում, քթածակերը լայնացնում է, շրթունքները միմյանց վրա հավաքում ճիշտ այնպես, ինչպես մի երեխա է անում մոր ձայնը հեռվից լսելիս, և թռչում է խրխնջալով, խայտալով. նրա մայրը հեռու էր, ձայն հանեց, կանչեց, և ահա նա թռավ մոր մոտ: Գեղեցիկ, քաջառողջ և զարմանալի դյուրաշարժ կենդանիները իրանց իրարանցումով, ձայներով և տեսքով հիացնում են մարդուն: Իրարանցումը շատացավ մանավանդ այն ժամանակ, երբ հարկ եղավ մի մատակ բռնել: Տեղը քարքարոտ էր և մի սուր եռանկյունու ձևով խրվում էր երկու բարձրությունների մեջտեղը: Մեզանից յուրաքանչյուրը մի տեղ բռնեց, որ չթողնենք փախչի: Երամակը մի քանի անգամ պտույտներ տվեց, մի քանի անգամ ցրիվ եկավ, մաս-մաս դառավ, բայց մեր նշանակած մատակը չէր ուզում բռնվել և մի քանի անգամ փախավ, մեր շրջանից դուրս եկավ: Վերջապես նրան շրջապատեցին գետակի վրա մի մեծ ժայռի տակ. նա դեռ ուզում էր պաշտպանվել, հոժար չէր իր վայրենի ազատությունը մի բույս անգամ ձեռքից թողնել: Բայց մարդը... օ՛, ինչ չի կարող անել... վախվխելով, միշտ իր թուլությունը հասկանալով, բայց հնարագիտությամբ զինված՝ նա մեծամեծ երամակներ է զսպում, իր կամքին ծառայեցնում: Ձին չիմացավ, թե ինչպես իմ հիշած առույգ երիտասարդը հանկարծ կախ ընկավ իր վզից. գլուխը թափահարեց, դետուղեն շուռ տվեց, պտտվեց քարերի մեջ, բայց իզուր գերության կապանքը, որ այս անգամ ուներ երիտասարդի մեջքին կապած կաշվե գոտու ձևը, բռնեց նրա վիզը: Նա հաղթված էր, իսկ նրա ոսկեգույն քուռակը, տեսնելով մոր բախտը, փախավ, սաստիկ փախավ, խրխնջալով անհետացավ, ետ էլ չնայեց: Անձնապաշտպանություն, որ այնքան թանկ և քաղցր զգացմունք է ամենքի մեջ... բայց հետո ինչպե՞ս ուրախ-ուրախ վազեց դեպի իր մայրը, երբ սա, ազատվելով մեզանից, կրկին սկսեց իր ազատ և համարձակ թռիչքներն անել քարերի վրայով: Մենք ետ դառանք: Բայց այստեղ չմոռանամ ասել, որ հենց այս սարիցն է բխում այն գետակը, որ իջնում, հոսում է Գորիսի մոտով: Գետակի ակնը մի քարակաշկառի մեջ է. վարար ջուրը դուրս է թափվում, փրփրած, բարկացած ցած է վազում:

Դեռ շատ չէինք հեռացել, մի գյուղացի հրավիրեց մեզ իր տնակը (բինա) թեյ խմելու: Շատ էր թախանձում, չկարողացանք մերժել, գնացինք նստեցինք մի փոքրիկ թմբի վրա, որ գլուխը մի մեծ ժայռից էր բաղկացած: Այդ ժայռի տակ շինված էր մի շատ փոքր տնակ, մի այնպիսի անձուկ բնակարան, որ երկու մարդուց ավել չէր կարող տեղավորել իր մեջ: Հովվական

երեկոն չքնաղ էր. երեկոյան կիսամթորթւոյան մեջ աշնանային բնութիւնը ցույց էր տալիս իր գեղեցիկ տեսարանները: Օդը զով էր, մրսացնում էր, գետակը աղաղակում էր, կանաչ լանջերը լուռ ու անշարժ նայում էին ձորակին: Այդ բնութիւնը մի ժպիտ ուներ, որ շատ բան էր քաղցրացնում, մի ժպիտ, որ այնուամենայնիվ զոռով էր պահվում: Դուք տեսե՞լ էք երեխային, որ քնել է ուզում հակառակ իր ծնողների ցանկութեան: Նրան չեն թողնում, որ քնի, խոսեցնելով, ծիծաղեցնելով, խոստումներ անելով աշխատում են արթուն պահել: Բայց քունն իրանն արել է պրծել. երեխան իսկ, որ թոթափում է իրանից թմրութիւնը, գեղեցիկ աչքերը լայն բաց է անում, նրանց մեջ կրկին արծարծվում է կենդանութեան կրակը, նա նայում է սրան ու նրան, ծիծաղում է, բայց, բոպէ չանցած, տեսնում են, որ էլի քնեց: Հենց այսպէս էր երևում ինձ շրջապատած աշխարհը, երբ, բաժակիս մեջ ածելով թարմ, նոր կթած կաթը, աչք էի ածում չորս կողմիս: Մեզ հյուրասիրող գյուղացին անդադար բաժակներ էր բերում փոքրիկ տնակից, չգիտեմ թէ ինչ աներևույթ ձեռքով պատրաստած բաժակներ, և մենք պարպում էինք հաշիվը մոռացած: Մի քիչ վերև ես ասացի, որ նահապետական պարզակեցութիւնը հովվի ծոցի մեջ այս տեսակ անկյուններ է քաշվել. բայց տեսնո՞ւմ էք, քաղաքակրթութիւնն այստեղ էլ է հասնում՝ առայժմ իր չայով ու շաքարով, բաժակներով, սամովարով և այլ կարգ ու սարքով... Շուտով, կարծեմ, նահապետականը, իստակ հովվականը այլևս փախչելու տեղ չի ճարի:

Այսպիսի օրհնյալ անկյուններ էլ ունի Սյունյաց աշխարհը: Գարնանը այս բոլոր տեղերի վրա թագավորում է մարդահասակ խոտը՝ բյուրավոր տեսակ-տեսակ ծաղիկների հետ. գարնանը այս ձորը մի հրաշալի բուրաստան է դառնում, և նրա մեջ հայ գյուղացին քամում, մրզում է իր կաթնատու կենդանիների ծծերը, պատրաստում է յուղ, պանիր, որոնք շատ լավ գին ունեն ամեն տեղ: Իսկ ամառը այս բոլոր տները բարձրանում են սարի գլուխը, այնտեղ են մնում մինչև աշնան սկիզբը: Այո՛, սյունեցի հայը շատ աշխատասեր է, ժիր. եթէ բնութիւնը նրան հովանավորում է, նա գիտի հոգով ու մարմնով նվիրվել գործին: Իսկ եթէ այս տեսակ տնտեսութիւնները երկրի ընդհանուր բարօրութեան գործում շատ չնչին դեր են կատարում, այդ էլ պարզ է:

Դ

Հոկտեմբերի 4-ն էր, օրը՝ կեսօր: Առավոտյանից մի քամի մեզ շատ վախեցնում էր: Մենք մեր սիրած մտքի վրա էինք, իսկ նա, այդ քամին, մեկ էլ տեսնում էինք, փրթացնում էր փողոցի անկյունից, բարձրանում էր, մեր սենյակի պատուհաններին հասցնում մոխրանման փոշին և, քսվելով տան պատուհանների վանդակներին ու պատերին՝ չարագուշակ, խուլ \$22ոց էր հանում: Իսկ երբ նա անցնում էր, և մենք տեսնում էինք պարզ երկինքը, արեգակի հուսադրական դեմքը, օդի և աշխարհի անդորրությունը, շարունակում էինք խոսել, դատել մեր ուղևորության մասին: Իսկ մեր մի ընկերը, որ արդեն ծամոթ էր մեր ընտրած ճանապարհին ու տեղերին, ոգևորված նկարագրում էր տեղի դիրքը, Տաթևը, ձորերը, «Սատանի-Կամուրջը», թղթի վրա գծում էր այդ տեղերի ուղղությունը: Մեզ խորհուրդ էին տալիս հետաձգել ուղևորությունը մինչև մյուս օրը. քամին, որ Սյունյաց լեռներում իր մեծ պաշտոնն ունի, միայն մեզ չէր վախեցնում: Բայց մեր վճռականությունը գլուխ կանգնեց: Գնում ենք... Ձի նստելիս քամին մեկ անգամ էլ փրթացրեց, մեկ անգամ էլ մենք լսեցինք այսօր մնալու խորհուրդը ու, մի կիսատ վախ մեզ հետ վերցնելով, շուտ տվինք ձիաների գլուխները: Տաթևը տեսնելու ցանկությունն այնքան աննշան բան չէր, որ մի քամի մեզ ընկճեր:

Ետ թողեցինք գործեսցոց մի քանի աղքատ և մանր այգիները, սկսեցինք բարձրանալ դեպի այն բարձրության գլուխը, որ հարավից պատում էր Գորիսի ձորը: Քարքարոտ է այդ ճանապարհը, հեղեղները բոլորովին փչացրել են: Իսկույն երևում է, որ մենք դեպի մի հին վանքն ենք գնում: Սովորած մարդը շատ շուտ է ճանաչում այդ ճանապարհը, թեև վանքը դեռ շատ հեռու է: Հասնում ենք բարձրության գլուխը, քիչ գնում ենք և իջնում մի ձորի վրա: Սյունիքը վերջապես մի քիչ փոխեց իր դեմքը. ձորը ծմակով է պատած, որ միանգամից գերում է մերկ տափարակների և մոխրագույն ու աղքատի կեղտոտ ցնցոտիներ հագած լանջիվայրերի տեսքով ձանձրացած մարդուն: Մի ծմակ, որ աշնանային զգեստի մեջ է, դեղնած: Ջուր էլ ունի այդ ձորը և ոչ հասարակ ջուր. նա անվանվում է Շաքարի-Ջուր: Անունը հարկադրում է իջնել, համն առնել:

Այդտեղից քիչ բարձրանում ենք ծմակի միջով, հետո շուտ ենք գալիս դեպի հարավ և, գնալով մի մեծ բլրի ստորոտի մոտով, անցնում ենք մի փոքրիկ ջրով էլ, որ «Յոթն-աղբյուր» է կոչվում, և դուրս ենք գալիս մի լայնածավալ տափարակի սկիզբը, որ տարածված է այս լեռնային բարձրության

վրա և Տեղ գյուղի լեռնադաշտի հարազատ քույրն է: Էլի նույն մերկությունը, ծառի ու փայտի նույն բացակայությունը: Մի ծայրից մինչև մյուսը արտատեղերով է ծածկված մեծ լեռնադաշտը, արտատեղերով, որոնք այժմ անկենդան և հուսահատ պատկեր են ներկայացնում: Արեգակը շա՛տ տկար է այսքան բարձր տեղը. նա կարծես ամաչելով է մի կերպ լուսավորում դժգույն հողը, փոքրիկ թմբերը և մեր մեջքը: Դաշտավայրը ահագին երկարություն ունի արևմուտքից դեպի արևելք, այնպիսի մի երկարություն, որ ես գնալիս կարծում էի, թե Սյունյաց լեռների գլխին չեմ, այլ Կուր գետի անեզր ու անսահման հարթավայրերում: Լայնությունը հյուսիսից դեպի հարավ դարձյալ փոքր չէ, կարծեմ տասն վերաստից ավելի:

Լեռնադաշտը արևմուտքից սկսվում է լեռնային երեք գագաթներից, որոնք գատ-գատ դասավորված են միմյանց կողքին և մի նեղ անցք են թողնում իրանց մեջ: Դրանք են հոչակավոր Ուչ-Թափալարը (երեք գագաթ): Հոչակավոր ոչ այլ ինչով, եթե ոչ իրանց սարսափելի անգթությամբ: Իմ հիշած նեղ անցքով է գնում դեպի Սիսիան և Հին-Նախիջևան տանող միակ ճանապարհը: Մարդիկ ստիպված են միշտ անցուդարձ անելու այդ տեղով և իրանց կրած թշվառություններով ավելի և ավելի հոչակելու երեք գագաթները: Չմեռվա սկզբից մինչև գարնան կեսը այս բոլոր կողմերը թաղվում են խոր ձյունի տակ, և սուսկալի քամին, որ անպակաս է բոլոր սարերից, սկսում է տակնուվրա անել, քրքրել ձյունի կույտեր: Բարձրանում են ահռելի բքեր, որոտ ու մոնչյուն կատաղի մոլեգնությամբ շրջագայում են ամեն տեղ՝ ճիգ ու ջանք թափելով, որ ոչ ոք չհամարձակվի բաց դեմքով ոտ դնել այդ սարսափելի թագավորության սահմաններում: Գնում է ձիավորը՝ հեռվից սրտապատառ նայելով մինչև երկինք բարձրացած խիտ ծխին, որ Ուչ-Թափալարն է հանում, ոտքով ու ձեռքով կորչում է ձյունի ոլորապտույտ ամպերի մեջ. սառած, փոշիացած ձյունը սառցնում է, փայտացնում է նրան ու նրա ձիուն, աչք ու բերան, քիթ ու պտունգ լցնում է սուր ասեղներով: Քամին գլորվում է, գալարվում և շատ անգամ վերցնում է, դեն գցում ձիավորին, ձյունի մի պատկառելի բլրակ դիզում նրա վրա: Ընկածին էլ չի խնայում քամին. ընկածին էլ վերցնում է, հեռու շպրտում: Ամենայն տարի այդ կատաղի գագաթների պատմության վրա ավելանում են մարդկային արյունով ներկած մի քանի էջեր, և այդ է պատճառը, որ նրանց անունը սարսափով են հիշում ամենքը: Սյունյաց աշխարհի ամենամեծ դառնությունը Ուչ-Թափալարի ձմեռն է, և այդ ամենամեծ դառնությունը հավաքված է մի մեծ

ճանապարհի վրա: Հին, խելոք մարդիկ այդ ճանապարհի կողքերով քարի սյուներ են տնկել, որ նրանց նայելով, նրանցով պաշտպանվելով՝ առաջ գնա անբախտ ուղևորը:

Լեռնադաշտը, որի վրա ընկած է մեր ճանապարհը, կոչվում է Ուչ-Թափալարի դաշտ և նույնպես անողորմ, դաժան է ձմեռվա ժամանակ: Այստեղ՝ այս ազատ տարածության վրա էլ, վազվզում են բքերը, ձյունը այստեղ էլ ամպերի պես թափառում է, տեղափոխվում: Հենց այդ քամիների երկյուղն էր, որ հարկադրում էր մեր ծանոթներին մտածել մեր վիճակի մասին և խորհուրդ տալ, որ մնանք: Բայց մեր բախտից այսօր այդ դաշտը միանգամայն հանդարտ էր. մեր ձիաները, արագ-արագ շարժվելով, կարճում էին ճանապարհը, որ ուղիղ գնում է վարելահողերի միջով: Այս անհյուրասեր բարձրության գլխին, ուր տարվա մեծ մասը ձմեռն է տիրում, այն էլ Ուչ-Թափալարի ձմեռը, ի՞նչ արտ կարող է լինել: Ժլատ ու ողորմելի են նրանք, տալիս են քիչ ու անբավարար հունձ, ցորենը խեղդված է, մանր ու սև: Դաշտերը լիքն են մանր քարերի անհամար բազմությամբ. ո՞րտեղից է այդ քարակաշկառը... Կարծում ես, թե մարդիկ իրենք են ցանել քարերը, որոնք որպես թե շատ հարկավոր են աղքատ հողը ավելի ևս ճնշելու, աղքատացնելու համար: Այսպես է Ուչ-Թափալարի դաշտը, և ի նկատի ունեցեք, որ այդ և միայն այդ դաշտից են հաց ստանում Գորիս, Խոտ, Շնհեր և Հալիձոր գյուղերը...

Դաշտավայրի մեջտեղը՝ ճանապարհից քիչ հեռու, երևում է մի մեծ ծառ: Չարմանում ես նրան տեսնելով. ի՞նչպես է այդ խեղճն ընկել այստեղ, կանգնել է միայնակ որբի նման և նայում է իր չորս կողմը, ուր տիրում է լուռ անապատի ամայությունը: Ոչ մի տեղ ջուր չկար, ինչո՞վ է ապրում խեղճ ծառը, ո՞րտեղից է հյութ ստանում և որպիսի՞ հնարքով է դիմանում ձմեռվա արհավիրքներին: Բայն նրան չեն դիպչում, նրան պահպանում են, որովհետև նա հարկավոր է ճանապարհ ցույց տալու համար: Եթե ուղևորը շեղվի ճանապարհից և դաշտավայրի ամեն տեղը իր բռնած ճանապարհի շարունակությունը համարի, երկար չի թափառի, կորոնե մենավոր ծառը, կգտնե իր ուղղությունը:

Բայց բավական է այս դաշտավայրի տխուր կողմերի մասին խոսելը: Ահա նրա լայնությունը հետզհետե վերջանում է մեր առաջ, ահա հետզհետե մոտենում է մեր առջևն ընկած լեռնային շղթան, որ արևմուտքից գնում է դեպի դեպի արևելք, Ուչ-Թափալարի լեռնադաշտին գուզընթաց. այդ շղթան

իր մեջքի վրա բարձրացրել է մի խրոխտ և լայն բարձրություն, որ Գազբել է անվանվում¹: Իսկ մեր լեռնադաշտը, գնալով, գնալով, սպառվում է, կտրվում, բաշեր է կազմում: Մենք շուտով հասանք այդ բաշի մի ծայրին, կանգնեցինք հիացած, ապշած: Մեր առջև բացված էր մի ահռելի, խոր և ահագին ձոր... Երևակայության մեջ բոլորովին անտեղավորելի բաներ են բնության այն վիթխարի տեսարանները, որոնք հանկարծ, անսպասելի կերպով փոխվում են մարդու ոտների տակ: Այսքան սուսկալի վայրենություն, այսքան անհասանելի վսեմություն բնությունը երբեք ինձ ցույց չէր տվել Ղարաբաղի ոչ մի կողմում: Նկարագրություն, գրչի ամեն տեսակ շարժվածք ոչինչ, արհամարհելի բաներ են այդ տեսարանների մոտ. մարդ պիտի տեսնե, անպատրաստ պիտի գնա, կանգնե բաշի ծայրին և՛ զգա, և՛ իմանա իսկությունը: Ինչպես և լինի, ես կփորձեմ ընթերցողիս մի թույլ հասկացողություն տալ այս տեղերի մասին:

Երևակայեցեք բարձր, ամպերի չափ բարձր սարերի մի երկայն շղթա, մենք անվանենք Գազբելի շղթա, որ, ամենամեծ ձորեր ու մթին անդունդներ վերցրած իր մարմնի վրա, գալիս է արևմուտքից, գնում է դեպի արևելք, գնում է, կորչում հեռու տեղ, Ղափանի սահմաններում: Այդ լեռնաշղթան իր մեծամեծ ձորերով, խոռոչներով և անդնդախոր վիհերով կտրվում է շատ բարձրից, կազմում է ուղիղ դեպի վեր ցցված կողեր և իջնում է մի նեղ, սարսափելի խոր ընկած ձորի վրա հաստատվում. այս կողմից էլ Ուչ-Թափալարի լեռնադաշտն է կտրվում ցած գնում, անթիվ լանջեր, զառիվայր ուսեր կազմելով իջնում է, բոլորովին մոտենում առջևից եկող լեռնաշղթային, կախ է գցում իր մեծ-մեծ ժայռերը, գոյանում է մի խիստ նեղ, խիստ հուփ տված ձոր, որի միջով հազիվհազ կարողանում է իր ջրերը տանել Որոտնա գետը: Այդ անունը նա գուր տեղից չէ կրում. երկնաբերձ սարերը շատ են սեղմում նրա կողերը, և նա բարձր ձայն է հանում, որ հասնում է այս բարձրության զուլխը:

Որոտնա ձորը... Որքա՛ն մեծություն, արհավիրք, աներևակայելի, անհասանելի սքանչելիք ունի իր մեջ: Բնությունը հրաշակերտել է մի այնպիսի անդունդ, որի տեսքը, ահուդող գցելով մարդու վրա, կապում, կապում, կաշկանդում է նրա հոգին ու միտքը, շլացնում, շփոթում է տեսողությունը.

¹ Մեր հին գրությունների մեջ Գազբելը Գազբոյլ է ասվում (տե՛ս Ջալալյանի Ճանապարհորդ. և Օրբելյանի Պատմությունը)

շատ քան ես տեսնում, մինը մյուսից վիթխարի, հսկայական, վայրենի քաներ, բայց շատ են, բազմատեսակ, ոչինչ չես տեսնում:

Որոտնա ձորը... Բնությունը վերցրել է մի ինչ-որ ամեհի սուր գործիք, զարկել է սարերի կողքին, կտրել է, հղկել նրանց քարե մարմինը, որ այնպիսի հանդուգն կերպով ուզեցել է առաջ գալ, խորացրել է տեղը, որ գետը վազե մոնչալով, որոտա, լիզե, քերե այդ քարային պատվանդանները: Եվ ո՞վ կարող է բարձրանալ այդ սեպացած հատվածների վրայով, որի՞ ոտին մատչելի են դրանք...

Միայն մեր կողմից, այս բաշի ծայրից է հնարավոր մի անհնարին, թեք ճանապարհ, որ վերնից գահավիժում է դեպի ցած, գնում Հալիձոր անունով գյուղը, որ մեզանից ցած է գտնվում՝ մեր այս բարձրության մի ուսի վրա: Մենք իջնում ենք այդ ճանապարհով: Բավական չէ, որ նա այնքան լանջիվեր է, դեռ ծածկված է մի տեսակ կարծր հողով, որ խոշոր ավազի է նման. գնալիս ոտը խրվում է և դեպի ցած սահում, հետքերը մնում են հողի վրա: Այդ է հալիձորցոց միակ ճանապարհը: Գյուղը այսպես է իջել Որոտնա գետի վրա, վար է անում Ուշ-Թափալարի դաշտում. ամառը չոքեչոք, գլորվելով այսպիսի ճանապարհով են խրձեր կրում վերնից դեպի ցած, կալսում գյուղի մոտ: Այսպես է սյունեցու վիճակը...

Այս ճանապարհով մենք շատ չենք ցած գնում. շեղվում ենք դեպի արևմուտք՝ մի կողմ թողնելով Հալիձորը: Մեզանից ցած բարձրացած էր մեր այս լեռնային լանջիվայրի մի ուրիշ մեծ ուսը, որ Հալիձորից բաժանվում է մի ձորով և ունի ժայռոտ ու վայրենի տեսք: Այդ ուսը կամ մեծ թումբը ներքևից կախ է ընկնում Որոտնա գետի վրա, իսկ իր աջ լանջիվայր կողով նայում է դեպի արևմուտք՝ դեպի Տաթև: Ես, իհարկե, առանձին ուշադրություն չէի դարձնի այդ բարձրության վրա, եթե ինձ ցույց չտային և չասեին, որ դա ինքն է այն բարձրությունը, որի գլխից թռել է հայ չքնաղ օրիորդը: Մի սրտառուչ անցք է մեր հին ժամանակներից, որ այսպես է պատմում Ստեփանոս Օրբելյանը (Գլ.ԼԵ): Գահերից իշխան Վարազ-Տրդատի աղջիկ Շահանդուխտը հարսնանում է մի հայկազուն իշխանի (՞): Օրիորդը հրաշալի գեղեցկության տեր է լինում և, շրջապատված բազմաթիվ սպասավորներով, գնում է իր ամուսնու երկիրը, որ այնտեղ պսակվի: Մտնելով Բաղաց սահմանը (հին Սյունիքի մի գավառը, ուր և Տաթևն է), ասում է պատմիչը, օրիորդը գնում էր քարքարոտ ճանապարհի մի դժվար տեղով, ուր մի քարի փրթված կար ահագին խորությամբ, որ անդունդին է նայում «հանդեպ մեծի հայրապետա-

նոցին Տաթևոյ»: Այդտեղ դարանամուտ էին եղել իսմայելցիները, որոնք, լսած լինելով օրհորդի չքնաղ գեղեցկության մասին, կամենում էին նրան հափշտակել: Նրանց հանկարծակի երևալը շփոթ է գցում օրհորդի թիկնապահների մեջ, շատերը կոտորվում են, իսկ փափկասուն օրհորդը, իմանալով, թե ինչու են եկել իսմայելցիները, երեսը խաչակնքում է, մտրակում է իր ձին և թռչում է քարի գլխից: Այդ պատմությունը Օրբեյյանը գրել է հիմնվելով Շահանդուխտի ձեռքով գրած նամակի վրա, որ նա գտել է Տաթևի վանքում: Բայց թողնենք, օրհորդը ինքը խոսե իր հրաշալի ազատության մասին: «Ես մեղուցեալ աղախինս Քրիստոսի Շահանդուխտ՝ դուստր Վարազ Տրդատայ, երթայի հարսն ի տունն Թորգոմեան. և եկեալ ի սահմանս Բաղաց՝ ի գլուխ քարիս, ընդ որ անցանէ ճանապարհն՝ յանկարծակի պատահեցան ինձ Իսմայելացիք, որք վասն համբավոյ գեղոյ իմոյ կամէին յափշտակել զիս, և սուր ի վերայ եղեալ կոտորէին զհեծելագունդն, որ ընդ իս. ապա լա՛վ համարեցայ քան ի ձեռն այլազգեացն գայլապատառ կորնչիլ, վասն Քրիստոսին իմոյ գահավէժ մեռանել: Եվ յիշելով գուրբ Աստուածածին և գուրբ Հռիփսիմէ՝ յանձնեցի զիս սուրբ Երրորդութեանն և կնքեցի զողորմելի անձն իմ սուրբ խաչին և դարձուցեալ զերասանակ երիվարին՝ թռեայ ընդ քարս: Եւ յահագին շնչմանէ հողմոյ և աներոյթ գորոյթամբ իջի իրբ կառօք ի խորութիւն ձորոյս ես և երիվարն իմ անվնաս... Եվ իջեալ ի հեշտավայրն՝ նուիրեցի զանձն իմ Քրիստոսի և ուխտեցի այլ ոչ ելանել աստի մինչ ցվախճանն իմ: ...Թէպէտ թախանձեցայ ի ծնողացն իմ և ի հարսնածու իշխանացն՝ ոչ շարժեցայ ի տեղվոյս»: Օրհորդը այդտեղ եկեղեցի է շինում, որ այժմ էլ կա, ինչպէս պատմում են, և մինչև իր կյանքի վերջը ճգնում է այդտեղ: Իր կալվածների կեսը բաշխում է կարոտյալներին, իսկ կեսը՝ Շնհեր գյուղի ձորից մինչև Գինական գետը, նվիրում է Տաթևի վանքին:

Դարեր են անցել այդ ժամանակից: Եկեղեցին մոռացել է իր արժանի գավակի այդ մեծագործությունը. եկեղեցին, որ հարյուրավոր անհայտ անուններն է մոցրել իր տոնացույցի մեջ, անուշադիր է թողել մի այսպիսի մեծ քրիստոնեական առաքինությունը. մոռացվել է Շահանդուխտի անունը, մեր պատմության էջերին չի արժանացել: Նրան հիշում են միայն Որոտնա ձորում բնակվող գյուղացիները, որոնք այդ բարձրությունը անվանել են Շահանդուխտի սար: Թուրքերն էլ զիտեն, ճանաչում են իշխանագուն օրհորդին, և նրա հրաշք այդ տեղը անվանում են Գյալին-Ղայա, այսինքն հարսի ժայռ: Այդ ժայռը, այո՛, մի անխորտակելի արձան է, որ անհանգիստ Որո-

տանի վրա ցցված վկա է հայ օրիորդի դյուցազնական առաքինության մասին, մի օրիորդ, որ այսպիսի մի գործով հռչակվել է, թե ինչ է եղել հայ կինը այն բռնության դարերում, երբ սրբություն, օրենք ու սեփականություն բռնորովին անհայտ բաներ էին: Բայց ինչո՞ւ հարսի ժայռը փակվել է այս ձորի խորության մեջ, ինչո՞ւ նա չի բարձրանում, երկնքին հասնում, այնքան բարձր կանգնում, որ ամեն տեղից տեսնեին նրան մեր այժմյան թեթևամիտ և օտարամոլ օրիորդները, տեսնեին և կարմրեին նրանք, որ, փառքի և անմիտ պաճուճանքի գերի դառած, ոչ միայն չեն հիշում իրանց նախնիքներին, այլևս ամոթ, ցածրություն են համարում իրանց մայրենի լեզվով խոսել, կարծես մի Շահանդուխտ բավական բարձր, բավական պանծալի չէ, որ նրա գործածած լեզուն այժմ էլ հպարտությամբ գործածեինք: Շահանդուխտ... գեղեցիկ, սիրելի անուն: Սյունաց երկրի պատմությունը երկու այսպիսի սիրելի անուններ ունի իր մեջ պահած. մեկն այս Շահանդուխտն է, մյուսը՝ Բաղաց թագուհի Շահանդուխտը, որ Տաթևի վանքին մեծագին ընծաներ է նվիրել:

Շահանդուխտի թումբի գլուխը պատած է անտառով. նրա միջովն է գնում մեր ճանապարհը, որ այստեղ բավական ուղիղ է և հարմար: Ծմակը մեծ ծմակ չէ, ծառերը թեև խիտ են, բայց փոքրահասակ, և ժողովուրդը այս տեսակ ծմակն անվանում է «քոլ» (թուփ): Հարմար ճանապարհը շուտով վերջանում է, անտառը դեպի ցած լանջիվայր է գնում՝ տանելով իր հետ մեր ճանապարհը, որ այստեղից քարքարոտ է դառնում, անձրևներից բռնորովին փչացած: Մենք կանգնած էինք անտառի այս իսկ լանջիվայրի գլխին, որ Սախկալ-Թուրան (մորուք բռնող) է կոչվում: Այդտեղից մեր առջևը մի ուրիշ հրաշալի տեսարան բացվեց:

Առաջին բանը, որ տեսավ մեր աչքը, մի վանք էր Որոտնա ձորի մյուս կողմին՝ սարի լայն, բայց բարձր գագաթի մի ծայրին նստած: Դա ինքը Տաթևն է: Մեր մի ընկերը, որ առաջներում շատ է եղել այս կողմերում, գոակը վերցրեց, սկսեց ջերմեռանդությամբ երեսը խաչակնքել, այդ հին սրբարանի օրհնությունը հայցել: Իսկ ես մնացել էի կանգնած, սառած, ես չգիտեի, ինչ անեմ, այնպես անսպասելի էր այն հռչակավոր տան երևալը, որի տեսնելը իմ մշտական մտածմունքների առարկան էր: Ահա՛ նա այդքան բարձր տեղից նայում է իր բարձրադիր գեղեցիկ գմբեթով: Ահա՛ նա՝ Սյունաց «երկնահանգետ և աստվածաբնակ տան» (Օրբ.) աթոռը, որ, հրաշքով ասեմ, թե ճարտարությամբ, հաստատվել-նստել է այդ գագաթին և տասն ամբողջ դար

անվրդով նայում է սարսուռ ազդող ձորերին և անդունդներին: Ողջո՛ւյն քեզ, պատկառելի ծերունի:

Պետք է ասեմ, որ Տաթևի սարը Որոտնա գետի մյուս կողմին ընկած լեռնաշղթայի շարունակությունը չէ, այդ շղթան, գալով մինչև Տաթևի սարը, մի նեղ ձոր է թողնում նրա ու իր մեջ, իսկ ինքը շրջան է տալիս, հեռու գնում: Գազբել գագաթը Տաթևից հեռու տեղ է բարձրանում: Բայց Որոտնա գետի համար ոչինչ թեթևություն չէ շղթայի այդպես հեռանալը, նա գալիս է այս կողմից, այն ձորով, որ մնում է Տաթևի սարի և Ուչ-Թափալարի դաշտավայրի մեջտեղը: Այս ձորն էլ խիստ նեղ է, խիստ սաստիկ է սեղմում գետը: Ուչ-Թափալարի այդ սարադաշտը Տաթևի դիմաց էլ այնպես անմատչելի ուղղաձիգ լանջեր չի կազմում. վերևում սարադաշտի բաշերից սկսած ժայռերը, ճիշտ է, պատերի պես են կախ ընկած, սեպացած, բայց լանջը էլի շատ է մոտենում Տաթևի սարին, ձորը խորացնում: Մենք պիտի իջնենք մինչև այդ ձորի հատակը և ապա սկսենք բարձրանալ դեպի Տաթև՝ սարի ուղղաձիգ կողքով: Տե՛ր աստված, այս ի՞նչ ճանապարհներ են և ի՞նչպես են մարդիկ երթևեկում այս տեղերով:

Մենք Սախկալ-Թութանից ցած ենք իջնում, իհարկե, ոտով. ձին այսպիսի տեղեր շատ տկար է: Սյունիքի լեռների համար ստեղծված է ջորին. այդ կոշտ ու կոպիտ, անհնազանդ կենդանին է միայն, որ մեծ վարպետությամբ գնում է գլխիվայր և գլխիվեր, գնում է նեղիկ քարքարոտ կածաններով և ոչինչ նեղություն չի կրում, ընդհակառակն, այդպիսի վտանգավոր տեղերում էլ ցույց է տալիս իր վայրենի բնավորությունը: Մեր ընկերներից մեկը, հենց նա, որ Աբդալլարի իջևանի մոտ հազիվ էր գայլերից ազատվել, ջորի էր հեծած, որովհետև նրա ձին հոգնել էր, կանգնել դեռ Ուչ-Թափալարի դաշտում, և մենք ստիպված էինք վարձելու մի գյուղացու փոքրիկ ջորին: Նրա վրա դրել էինք հոգնած ձիու անգլիական թամբը, իսկ մեր ընկերը նազով-սազով նստել էր նրա վրա, մեր ամենիս ծիծաղն էր գրգռում շարունակ: Սախկալ-Թութանի ծմակի մեջ այդ ջորին մի ինչ-որ հարված ստանալով իր գավակի վրա, ծուլ-ծուլ եղավ, սկսեց ետի ոտները դեպի բարձր խփել: Մոտենալ նրան, պահել անհնարին էր, և մեր դժբախտ ընկերն անշուշտ կտորկտոր կդառնար, էթե մի լավ միտք չաներ: Տեսնելով, որ եսամոլ ջորին, պար է գալիս՝ սանձի-բանի չնայած, նա բռնեց իրանից բարձր գտնվող ծառի ճյուղերից և կախ ընկավ, իսկ փոքրիկ ջորին, բեռնից թեթևացած, խփեց ծառերի մեջ, անգլիական թամբը տաշեղի պես վայր գցեց և շարունակեց իր վայրենի

աքացիները, մինչև որ տերը վրա հասավ ու բռնեց նրան: Եվ գիտե՞ք՝ ինչ-պիսի տեղ էր նա իր քեֆն անում: Ձին պոչը սեղմում է ազդրներին, ոտները ծանր քարշ է տալիս, ականջները խշած դիտում է ճանապարհը, որովհետև նա մարդուց շատ է վախենում վայր ընկնելուց և փշրվելուց: Ջորին իսկապես մի թանկագին պարզև է Սյունյաց լեռներում և այնքան կարևոր է, ինչպես ուղտը Արաբիայի անապատներում:

Մենք իջնում ենք, իսկ Տաթևը հետզհետե բարձր և բարձր, դեպի երկինք է գնում: Նա միշտ մեր աչքի առջևն է, միշտ մեզ է նայում: Մի մեծ լանջ կա մեր առաջ, որ գետի երկարությամբ դեպի բարձր, դեպի հյուսիս է ընկած. հողը կոշտ է, քարախառն և միայն փշի թփեր է բսցնում, այդ պատճառով էլ տեղը Ցաքուտ անունն ունի (ցաք նշանակում է փուշ): Նայելով այդ տեղին՝ ո՞վ կարող է կարծել, որ մի ժամանակ նա ծածկված է եղել վարդենիներով և գեղեցիկ ու հարուստ այգիներով: Բայց այդպիսի մի ժամանակ եղել է: Օրբելյանը (Գլ.ԽԸ) հետևյալն է պատմում: Սյունյաց առաջնորդ Հակոբ եպիսկոպոսը, որ շատ է հարստացրել Տաթևի վանքը կալվածներով և շինություններով, Քրիստոսի 932 թվականին առնում է Սյունաց իշխան Փիլիպպեից Ձագեձորի¹ Վարարակն անունով ջուրը՝ տալով 12000 դրամ և մի «լուսավոր ջավհար», որի գինը շատերը չգիտեին: Ջուրը շատ աշխատություններով և մեծամեծ ծախքերով բերում է սարից և այս Ցաքուտում շինում է գեղեցիկ այգիներ, որոնց մեջ տնկում է խաղողի որթեր, ձիթենի, թզենի, նոնենի և ամեն տեսակ մրգաբեր ծառեր «ի վայելումն եղբայրութեանն (Տաթևի) և ի պետս ամենայն կարօտելոց և աղքատաց»: Ապա այդտեղ գտնելով մի գեղեցիկ բլուր՝ հարթում է նրա գլուխը, պարսպով պատում և շինում մի գեղեցիկ դիտանոց, որ նայում էր բոլոր այգիների վրա: Բլրի գլխին շինում է «գմբեթայարկ խորան մի յոյժ հրաշակերտ յօրինուածովք, և գորմ և զձեղուն նորա ետ զարդարել նկարչաց զանազան երանգօք, նկարել զամենայն տնօրինական և տերունական պատկերս և զառաքելոց և զհայրապետաց, և բոլոր շուրջ զեկեղեցեաւն սրահակս զաւթաց»:

Այս գործը այնպիսի մի գործ է, որ ես հարկավոր եմ համարում մի քիչ կանգ առնել: Ձագեձորի ջուրը Ուչ-Թափալարի դաշտի դեպի Գորիսի կողմը

¹ Կարծում են, որ Ձագեձոր (հին Սյունիքի գավառ և գյուղ) բառը թուրքերի արտասանությամբ այժմյան Չանգեզուր բառն է գոյացրել: Միանգամայն հավանական է, որ այսպես լինի, որովհետև ամենքիս հայտնի է, որ թուրքը մեր ձ տառը զ է արտասանում. ուրեմն նա պիտի ասեր **Ձագեզոր**: Ձագեձորը այժմ Գորիսի շրջակայքն է. և պետք է ասել, որ Չանգեզուրը թեև ամբողջ գավառի պաշտոնական անունն է, բայց Գորիսի շրջակա գավառակի միայն անունն է

դարձրած ծայրի ջուրը պիտի լինի. ուրիշ տեղ շատ թե քիչ մեծ ջուր չեք գտնիլ: Եվ ահա այդ ջուրը ահագին տարածության վրա բերվել է այստեղ, ահագին լանջիվայրի երեսով է բերվել: Հեշտ գործ չէ, ծանր, դաժանակիր աշխատություն է: Այստեղից շատ մոտիկ է Որոտնա գետը, բայց նա այնպիսի վայրենին է, որ խրվել է իր փորած խոր ձորի մեջ, որտեղից հնար չկա խմելու ջուր անգամ վերցնել, ուստի և նրանից քիչ բարձր գտնվող տեղի համար հարկավոր է եղել այնքան հեռու տեղից ջուր բերել: Այս մի գործով ես կարողանում եմ ճանաչել Հակոբ եպիսկոպոսին, թե որքան տաղանդավոր, աշխատասեր մարդ է եղել, շինող, մարդասեր մեկը, որ կարողացել է այդպիսի ահագին գործ գլուխ բերել: Մեր ժամանակները մենք անգոր կանգնում ենք բնության դժվարությունների առաջ, ասում ենք և վճռում, որ ոչինչ անել չի կարելի, երկիրը, բնությունն է անհաղթելի փականքներ դրել, մեզ չի հնազանդվում, բայց պետք է ունենալ մի Հակոբ եպիսկոպոսի տոկունությունը, խելքը, և այն ժամանակ ինչէ՞ր չի կարելի անել: Գեղեցիկ բլուրը, որ հիշում է Օրբելյանը, Ցաքուտից քիչ ցած է, գետի վրա, գտնվում է մի փոքրիկ տափարակի մեջտեղը և ավելի մի արհեստական հողակույտի է նման: Նրա գլխին այժմ էլ մնում է հիշյալ փոքրիկ եկեղեցին, բայց զարդ ու զարդարանքից զրկված, մի ավերակ շինություն է, որ ունի ամբողջ մնացած սրբատաշ և գեղեցիկ պատեր: Բլրակի չորս կողմում նկատելի են շինությունների հետքեր, երևի դրանք են եղել սրահազարդ գավիթները:

Այդ եկեղեցու մոտով քիչ էլ ցածրանում ենք, և ահա վերջապես գետը՝ Որոտանը. նա վազում է գոռալով, իր մարմինը դեսուղեն պտտելով, մեջքի վրա փրփուր հանած: Զարմանալի, հրաշալի բան. մեր ճանապարհը չի ընդհատվում, չոր ու ցամաք անցնում է գետի մյուս ափը: Գետը չկա, կորել է, վերևից էլ, ներքևից էլ երևում է նա, ջրերը վազում են, աղաղակում, իսկ այստեղ՝ մեր ոտների տակ ձայն չկա, ջուր չկա: Այս է ահա հոչակավոր Սատանի-Կամուրջը, Սյունիքի բնության հրաշակերտը: Նա բավական լայն է, նրա վրայով գնում է հանքային ջրի մի առվակ, որ բխում է կամուրջի կողքին ցցված ահագին ժայռի տակից: Պետք է լավ տեսնել այս զարմանալի ձորը, մանրամասն ծանոթանալ նրա հրաշքների հետ: Իսկ մենք, դժբախտաբար, ժամանակ չունենք. օրը վերջացել է, մութը կոխում է, մեր առջև կա մի անտանելի երկար ճանապարհ, որ գնում է մինչև ահագին սարի գլուխը: Թողնում ենք Սատանի-Կամուրջը անծանոթ մինչև մեր հետադարձը, դեպի վեր ենք գնում:

Այս ի՞նչ փորձանք է, ի՞նչ տանջանք, այս ճանապարհը, որ արձակ-համարձակ դիք ու թեք կպել է այս լեռնալանջին, որ կախ է ընկած կատաղի գետի վրա: Ձիու բաշից բռնիր, որ հետքով թամբիդ հետ վայր չընկնես, տես թե ինչպես է ձին գնում, նայիր, թե ինչ խորխորատ է բացված աջ կողմիդ... Լանջը ծածկված է ծմակով կամ, ուղիղն ասած, թփերով. և մեր կածանը, հազիվ նկատելի պտույտներ անելով, ուղիղ գնում է դեպի բարձր: Ի՞նչպես են ձմեռն այստեղով գնում, գալիս՝ սարսափելի է մտածել անգամ: Ո՛չ, այսպիսի տեղով հանգիստ սրտով գնալ կարող է միայն տեղացին՝ այս լեռների հարազատ զավակը, որ ծնվել, մեծացել է այս տեղերի վրա և գնում, գալիս է, մտածել անգամ չի կարողանում, թե աշխարհումս ուրիշ տեսակ ճանապարհ էլ կա: Իմ ձին քրտինքի մեջ կորել է, սաստիկ փշշացնում է քթածակերով, բայց արիաբար բարձրանում է, չի կանգնում. առջևից փոքրիկ ջորին այնպես է արագ քայլում, որ մեր ընկերը փառավորվում է: Պակաս չի փառավորվում և ջորու տերը, շնհերեցի հայր, որ գնում է ձիուց առաջ. նա հանել է չուխան, փափախը կոնատակին դրել, արագ քայլում է և չի էլ քրտնում, թանչին չի տալիս, խոսում է հանդարտ, անընդհատ, այնպես, ինչպես մենք կխոսեինք, ընթերցող, մի բուլվարում ճեմելիս: Ահա նա՝ այդ իսկ լեռնականը, որին այս ահարկու սարերն ու ձորերը բուն, հարազատ զավակ են համարում, որին նրանք տվել են շարժողության այնպիսի զարմանալի ընդունակություն: Հին ժամանակները պատերազմական գործերի համար հետևակ սուրհանդակներ էին գործածում. և սա շատ հասկանալի է և բնական, ո՞ր ձին կամ նույնիսկ ո՞ր ջորին կարող է մեր գյուղացուց արագ գնալ այսպիսի տեղերով:

Մենք շուռ եկանք լանջիվայրի այն կողմը, որտեղից Որոտնա գետի ձորը այլևս չի երևում. այժմ էլ մեզ վրա կախված են Տաթևի սարի ծայրերը կազմող մեծամեծ ժայռերը: Նայում ենք նրանց, տեսնում ենք լուսնի լույսով արծաթաջրած այդ վիթխարի քարերը, որոնք խրոխտաբար առաջ են քաշվել և նայում են դեպի ձորը. կարծես դրանք անխոնջ դիտում են գետը, թե արդյոք նա միշտ չարչարվում, տանջվո՞ւմ է ժայռերի նեղ գրկում: Այո՛, հենց այդ մտքով են նրանք այսպես միմյանց գլուխ վեր ելել, սեպացել. տե՛ս, որքան հեռանում է գետը, ժայռերը փոքրանում են, իջնում, հավասարվում գետնի հետ:

Ո՛ւհ, Տաթևի լանջն էլ վերջ ունի: Մպիտակ փրփուրով պատած ձիս վերջապես դուրս է գալիս սարի գլուխը, կանգնում է, որ շունչ քաշե, և ես ետ եմ նայում, դեպի ցած: Չքնաղ, աննման տեսարան, որի համար ճարտար

նկարչի վրձինն էլ թույլ է իմ կարծիքով, շա՛տ թույլ: Բոլորակ լուսինը կանգնած է ջինջ, անամպ երկնքում, առատ լույս է թափում Տաթևի առաջ ընկած անսահման ձորի ու լեռների վրա: Այդ սարերը կույտ-կույտ են դառել, դետուդեն են ձգել իրենց մեջքերն ու հսկայական ուսերը, գիշերվա խորհրդավոր քողով ծածկել են իրանց ահարկու մարմինները. ո՛ր էր են գնացել, որտեղի՞ն են հասնում: Իսկ դրանց՝ այդ լեռների մեջտեղ ձգված է Սյունյաց երկրի հպարտ թագուհին՝ հրաշալի Որոտանը: Ոչ մի ժամանակ նա այնքան փառավոր չէ, ինչպես այս պահուն: Նրան լուսավորում է պայծառ արեգակը, նրա վրա իջնում են մշուշի կույտերը, թափվում է անձրևը, որոտում է ամպը, փայլատակում է կայծակը, ոչինչ. միայն լուսնի հեզ, ամոթխած լուսի տակ է նա դյուրական պատկեր ընդունում և միայն այդ ժամանակն է հասկացնում, թե ինչ է ինքը: Ահա արծաթյա օձը օղակ-օղակ պտտվում է, կեռմաններ է անում: Փրփո՛ւր, փրփուր է հանում գծված գետը, մոնչում է, աղաղակում է վիթխարի ժայռերի դեմ, որոնք մի քարացնող համառությամբ անշարժացել են նրա երկու կողմին և սառը, քարային ծիծաղով ես ականջ դնում այդ դարավոր գոռոցներին: Գիշերը հանգիստ է, խաղաղ, անվրդով. նա հաստատվել է, մարդ, անասուն, գազան լռել են, ձայն չկա ոչ մի տեղ, ամենքին հանգստություն է հարկավոր, ամենքը ձանձրանում են շարժվելուց, ձայն հանելուց: Միայն այդ գետը չգիտե հանգիստ, դադար. գլուխը վերցրած՝ փախչում է նա, դե՛հ, տեղ, տեղ տվեք, սարե՛ր, ժայռե՛ր, ձո՛ւր տվեք նրան, լայնացրե՛ք, հարթեցե՛ք նրա ճանապարհը, չեք անում, ահա նա այդպես կգոռա, այդպես մոլեգնաբար իր խոնավ ու ուժեղ համբույրները կտա ձեր ոտներին: Եվ երկինք ու երկիր, անտառ ու լուսին ականջ են կախել այդ խրոխտ ու վայրենի ձայնին, ուշադրությամբ ականջ են դնում, կարծես հասկանում են, թե ինչ է նա ասում, ինչի մասին է աղաղակում, բորբոքվում: Ականջ է դնում խրոխտապանձ Գազբելը հեռվից, բարձրացնում է իր գլուխը, որ երկնքի տակից տեսնե նրան. ականջ է դնում հայ օրհորդի առաքինության հավիտենական արձանը՝ Շահանդուխտի սապատող ժայռը, ականջ է դնում մոտիկից, բոլորովին կախ ընկած գետ Որոտանի վրա...

Ձիու գլուխը շուտ տվի դեպի գյուղը, որ տարածված է Տաթևի սարի հյուսիսային բարձր տեղի վրա: Այս սարը շատ լայն գագաթ ունի, որ գնալով միանում է մի տափարակ լեռնադաշտի հետ ու հասնում է Գազբելի ստորոտներին՝ մի քանի բարձրություններ ու ձորեր կազմելով: Լուսնի պայծառ

լույսով ողողված մի լուռ և խաղաղ գյուղ ենք մտնում, անցնում ենք գետնափոր տների առաջով. հազարից մի անգամ մի որևէ շուն բարձրացնում է իր գլուխը, մռռում: Մոտենում ենք մի երկհարկանի տան, որ պատկանում է Տաթևի հայ ազնվականների՝ Օրբելյանների տոհմի ներկայացուցիչներից մեկին: Տանտերը՝ երիտասարդ Սամսոն-բեկը, սիրով ընդունում է մեզ, մեր ձիաների հոգսը հանձնում է իր ծառային: Մենք հանգիստ ենք գտնում վերին հարկի մի երկայն սենյակում՝ երկայն թախտի վրա: Կարելի՞ է միթե գնահատել մի ժամվա հանգիստը Տաթևի ձորի տանջանքներից հետո: Սատանի կամուրջից ես այնպես սաստիկ ծարավել էի, որ բերանս բոլորովին չորացել էր, դժվարությամբ էի կարողանում խոսել: Տեսնելով մեր տանտիրոջ սեղանի վրա ջրով լիքն ամանը՝ իսկույն հափշտակեցի և գլխիս քաշեցի: Այդ երեկո մինչև քնելը ես չափից դուրս շատ ջուր խմեցի. կարծես իմ այդ սաստիկ ծարավը պատրաստված էր նրա համար, որ ես ավելի լավ հասկանամ, թե ինչ բան է Տաթևի ջուրը: Այնքան խմում էի բաժակ բաժակի ետևից, և տանտերը ամեն անգամ ասում էր ինձ. «Վնաս չունի, անվնաս ջուր է»: Ինչ վնաս. մի թե այսպիսի բարձրության վրա, այսպիսի օդի մեջ ջուրը կարող է վնասել, այդ պարզ, պաղ և համեղ հեղուկը:

Տեղը, օդը, ջուրը հրաշալի: Ի՞նչպես կլինեն մարդիկ: Ես նկատել էի, սյունեցին առհասարակ հաղթանդամ, բարձրահասակ, խոշոր մարդ չէ. Ընդհակառակն, կարճահասակ է, վտիտ, բայց դիմացկուն, տոկուն, ջլուտ: Տղամարդի հագուստը բավական կոշտ է. վերնից հագնում է մոխրագույն կոպիտ շալից գործած չուխա, կրում է այդ տեսակ վարտիք, իսկ չուխայի տակ՝ սև կտավից արխալուղ: Նրա դեմքը մելամաղձոտ է, խոշոր գծեր ունի և առհասարակ վկայում է նրա ծանր, սակավախոս, առանձնասեր և տխուր բնավորության մասին:

Մանր են թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք: Ինձ զարմանք պատճառեցին մանավանդ վերջիններս. կարճահասակ, փոքր արարածներ են, կարծես ամենքը դեռ 15-16 տարեկան լինեն: Նրանց դեմքը կարմիր է, գլուխը՝ բեռնավորված անթիվ լաչակներով: Գլուխը կապկապելու կողմից սյունեցի կինը շատ է առաջ գնացել ղարաբաղցի կնոջից: Ղարաբաղում, ճշմարիտ է, կինը առանձին խնամքով է իր գլուխը պինդ կապում, փաթաթում, բայց ուրիշ բան է սյունեցի կինը. նա կրում է իր գլխի վրա շորերի և լաչակների մի ահագին բեռ, այնպես որ, գլուխը միշտ զարմացնում է իր մեծությամբ՝ համեմատելով իրանի հետ: Սյունեցի կնոջ հասարակ հագուստը ավելի կոշտ է և կոպիտ,

քան թե դարաբաղդի կնոջ հագուստը, թեև ձևով և տարագով միևնույնն է, հասարակ, կոպիտ կտավը մեծ մասն ունի սյունեցու հագուսատների մեջ. շատ անգամ պատահում ես կնոջ, որ հագած ունի սև կտավե շապիկ, որ Ղարաբաղում չես տեսնիլ: Այդ բոլորը՝ հագուստը, գլխի անձոռնի փաթաթանները, պետք է ասել, սյունեցու կնոջ արտաքին տեսքը քիչ չեն տգեղացնում: Բայց եթե նրա արտաքին տեսքով դատենք նրան, շատ կսխալվինք. մի նայեք, որ նա այնքան կարճահասակ է, կարծես զարգացման կես ճանապարհին կանգնած, նայեցեք նրա ֆիզիկական և մտավոր կարողության վրա, տեսեք, թե ինչ դեր է նա կատարում:

Սրանից երեք տարի առաջ «Մշակ» լրագրում ես խոսել էի դարաբաղդի կնոջ մասին՝ գլխավորապես աչքի առաջ ունենալով շուշեցի կնոջը: Ես փորձել էի ցույց տալ, թե որպիսի տխուր դրության մեջ է այդ կինը, որքան թույլ է և անկարող անկախ գործելու և վաստակելու համար. ես մատնացույց էի արել, որ հայ կինը պարսկական կանանցի թունալից շունչի ազդեցությամբ փոխել է իր նախնական դրությունը, դարձել է մի սիրուն առարկա, որ, տղամարդի «հալալ ապրանքը» լինելով, փակված է մի անգործ շրջանի մեջ և այդ տղամարդի կամքին միայն ծառայելու պարտականությունն ունի: Բայց հայ կնոջ իսկական տիպը այնքան մեծ փոփոխություններ չի կրել այնպիսի տեղերում, ուր չի հասել կամ քիչ է հասել պարսկական քաղաքակրթությունը, ուր կինը մնացել է հեռու օտարի և նորության կաշկանդանքից: Այդպիսի տեղերն են Ղարաբաղի և Սյունիքի լեռները: Այդ տեղերի կյանքը, պայմանները հարկադրել են պահվել անփոփոխ: Հովվական կենցաղը, ումի՞ն չի հայտնի, պարզասիրությամբ է միայն կենդանի. այդ կենցաղը չունի հասարակ կյանքի բոլոր հարմարությունները, հետևաբար չի էլ կարող կատարել զանազան ծեսեր ու կանոններ, որոնցից շատերը բոլորովին ավելորդաբար հորինել է իր համար հանգստություն վայելող պարապ կյանքը: Սյուս կողմից՝ երկիրը վայրենի է, անհնազանդ. կարելի է ապրել միայն այն պայմանով, որ առանց դժգոհության, սիրով և պատրաստակամությամբ մաքառեն երկրի և կլիմայի խստությունների դեմ: Գյուղացու կյանքը, խոսք չկա, շատ չարքաշ կյանք է, մշտական աշխատությունների մի լայն ասպարեզ: Բայց լեռնցի գյուղացու գործը մասնավորապես շատ դժվար է. աշխատող, քրտնող, ուժ վատնող ձեռքերի մեծ պահանջ կա. տղամարդը մենակ չի կարող անել: Եվ ահա աշխատանքի մի մասը վերցնում է կինը: Պետք է տեսնել սյունեցի կնոջը աշխատանքի ժամանակ. դա մի ցուլ է, մի

անհաղթելի բանվոր, որ վաղ առավոտյանից մինչև երեկո անդադար գործի և աշխատության մեջ է: Նրա գործունեությունը տան մեջ է, և նա ինքն է այդ տանը գորավոր նեցուկը, մի գլխավոր սյունը: Դեռ փոքր աղջիկ լինելով՝ նա սովորում է աշխատանքին, գործելուն և երբ մեծանում է, մարդու գնում, գործն ու պարտականությունը երկպատիկ շատանում են. կատարում է տղամարդի գործ, ֆիզիկական ուժ է վատնում և հենց այդ պատճառով շուտ է դեն դնում կանացի քնքշությունը, նույնիսկ գեղեցկությունը և ստանում է այրական կերպարանք: Եթե ես սկսեմ մի առ մի թվել սյունեցի կնոջ կատարելի գործերը, ընթերցողը ինձ կասե, որ այդ բոլոր գործերը կատարում են ընդհանրապես բոլոր հայ գեղջկուհիները: Ուստի ես չեմ մի առ մի թվում, այլ բավականանում եմ՝ ասելով, որ սյունեցի կնոջ ժրույթունը, աշխատասիրությունը, ուժեղ կազմվածքը միանգամայն զարմանալի են: Տեսեք այդ կնոջ բոքիկ ոտներով դեսուդեն ընկած, կասեք, որ դա ինքն է՝ մարմնացած եռանդը: Տեսեք, թե նա ինչպես է ահագին հակը մեջքին դրած սարնիվեր գնում, կասեք, որ այդքան ուժ, դիմացկանություն ամեն տղամարդ չի ունենալ:

Ես չեմ կարողանում երևակայել գյուղացի ընտանիք՝ առանց կնոջ: Երևակայեցեք մի ընտանիք, որ խոր, զարմանալի խոր տգիտության և անհասկացողության մեջ է ապրում. տղամարդը տարվա մեծ մասը տանից դուրս է անցկացնում՝ թողնելով իր ետևը՝ տան մեջ, անհաշիվ հոգսերի, ցավերի մի մեծ քանակություն: Եվ կինն է, որ այդ դեպքում կատարում է նրա բոլոր պարտականությունները. նա ունի պատասխանատու պաշտոն, ունի իրավունքների մի հայտնի շրջան: Նա է շատ դեպքերում ղեկավարում իր մարդուն, առանց նրա խորհրդի՝ շատ բան չի կատարվում: Տղամարդի նեղն ընկած տեղը նա ինքն է հրապարակ դուրս գալիս, պաշտպանում է իր իրավունքը՝ իր սեռին ներելի և աններելի միջոցներով, կոպտությամբ թե քաղցրությամբ, աղաչանքով թե կռվով: Այս բոլորը ավելի շատ նկատելի է Սյունիքում. այնտեղացի կինը ավելի է աչքի ընկնում, քան դարաբաղի կինը: Սյունիքում ճանապարհորդելիս շատ կանայք կտեսնեք, որոնք տղամարդի տրեխներ հագած, տղամարդի ցուպը ձեռին, տղամարդի քայլերով անցնում են. նրանք հեռավոր տարածություններ են թողնում իրենց ետևը, շատ անգամ միայն մի հատ իրանց բարեկամ տղամարդի հետ, այնքան համարձակ, անվախ են:

Երբ նրան կամ նրա որդուն, թոռանը պինդ դիպչում են, երբ կողմնակի ուժը գալիս է նրա ընտանեկան դրությունը խախտելու, նա, այդ կարճահա-

սակ կինը, մոռանում է իրան, զինավորվում է իր բոլոր քաջությամբ, պաշտպան է կանգնում: Մեր հյուրընկալ Օրբելյանը պատմում էր մեզ մի մեծ կովի մասին, որ նորերումս է պատահել Տաթևի մեջ մի ինչ-որ պատճառով: Կռիվը բացառապես կանայք էին անում՝ մեծ-մեծ խմբերի բաժանված, ահագին մահակներով զինավորված: Ո՞վ էր կարող նրանց մոտենալ, ինքը՝ Օրբելյանը, և նրա հորեղբոր որդին, իբրև գյուղի ավագներ, խառնվում են, որ մի կերպ խրատեն, խաղաղացնեն: «Բայց մեր հարևան կինը,- ասում էր նա,- այ, որ մեր պատի մյուս կողմին է, այնպես զարկեց մեջքիս իր ձեռքի ահագին փայտով, որ ես գետինը փովեցա և ճարս կտրած սկսեցի խրախուսել նրանց, ասել, որ լավ են անում, որ կռվում են. իմ հորեղբորորդին էլ իմ օրն ընկավ, նրան էլ ծեծեցին»: Այսպես քաջ և անվախ է սյունեցի կինը: Դուք կասեք, որ վայրենի էլ է. ես համաձայն եմ և հավատացած, որ անհասկացողությունը, թանձր տգիտությունն է շատ անգամ հարկադրում այնպիսի բան անել, որի հետևանքը շատ ծանր է: Բայց ի՞նչ անես, նախնական պարզ դրության մեջ մնացած կինը իր գեղեցիկ հատկությունների հետ ունի և վայրենության հասնող կոպիտ գործեր:

Կոպտությունները ձուլված են հասարակական բարք ու վարքի հետ, շատ դեպքերում աններելի չափ են ստանում: Միայն մարդու և կնոջ՝ իբրև ամուսինների հարաբերությունների մեջ որքան տգեղ, վնասակար կողմեր կան: Հիշենք ամենից մեծը, ամենից չարը: Կարծեմ, ոչ մի հայաբնակ տեղ այնքան հասարակ բան չէ երեխաներին պսակելը, ինչպես Սյունիքում: Այստեղ միանգամայն զարմանալի սովորություն է՝ 9, 10 տարեկան երեխաները ամուսիններ են: Ես չգիտեմ, թե ի՞նչն է սրա պատճառը. արդյոք ա՞յն է, որ տան համար հարկավոր գործող ուժ են ուզում ավելացնել և շտապում են այդպես շուտ ամուսնության լուծ դնել երեխաների վրա, թե կա մի ուրիշ հանգամանք: Ինչ որ լինի, ամենքին հայտնի է այդքան վաղաժամանակ ամուսնության վնասը, և այդ վնասը մեծ չափերով Սյունիքն է կրում:

Ի վերջո երկու խոսք ասենք սյունեցոց լեզվի մասին: Սյունեցու գավառական բարբառը շատ է տարբերվում Ղարաբաղի բարբառից. պետք է խոստովանել, որ Սյունիքի բարբառը իր ձևերով ավելի մոտիկ է մեր այժմյան գրական ձևերին, քան Ղարաբաղինը, սյունեցին խոսում է երկար ձայն տալով, մանավանդ երբ նախադասությունը հարցական է: Նա համեմատաբար քիչ է գործածում թրքական բառեր: Նրա լեզվի մեջ կան «ալ» (էլ) և «մըն» (մին) բառերը. դարաբաղցին ասում է՝ «ասում ըմ, ասում ըս», սյունեցին՝ «ասում

եմ, ասում ես»: Իհարկե, Սյունիքն էլ ունի մի քանի տեսակ գավառաբարբառ, բայց բոլոր բարբառներին հատուկ է մի ձև, որ բավական խորթ է թվում դարաբաղցուն. արտասանությունը մի տեսակ երգելու ձև ունի, բառերը, ինչպես ժողովուրդն է ասում, լղար են դուրս գալիս, կարծես կրծքիցը չէ գալիս ձայնը, այլ ուղղակի բերանից: Սյունիքում դեռ գոյություն ունի նաև Խոյի և Սալմաստի լեզուն. այդ լեզվով խոսում են սիսիանցիք, որոնց մեծ մասը բնիկ սյունեցի չէ, այլ 1828 թվին Պարսկաստանից է գաղթել, այս կողմերում բնակություն հաստատել: Այդ գաղթականներին բնիկ սյունեցիները «կլլան» են անվանում:

Այսպես ահա տեսանք, որ Սյունիքը լեզվի, սովորությունների, ապրուստի, բնության կողմից մի բոլորովին տարբեր, ինքնուրույն աշխարհ է: Հաքարու գետից դեպի հարավ անցնողը բոլորովին նոր շրջան, նոր կյանք է տեսնում: Այդ կյանքի մի քանի թեթև, թռուցիկ նշանները ես տեսա պատահաբար, բայց Սյունիքը էլի ինձ համար մի խորհրդավոր երկիր մնաց, մի երկիր, որ ամենից շատ կարոտ է մանրամասն և հիմնավոր ուսումնասիրության:

Ե

Առավոտը շատ կանուխ վեր ենք կենում, որ շուտ պատրաստվենք, վանքը գնանք: Դուրս ենք գալիս պատշգամբ: Երևակայեցեք մեր դրությունը. ամբողջ երկնքի վրա մի մատնաչափ պարզ տեղ չկար, փչում էր մի ցուրտ, ձմեռային քամի, բոլոր սարերի գագաթները կորել էին թանձր մշուշի մեջ: Բախտը, որ հովանավոր էր այս քանի օրերը Սյունիքի լեռնադաշտերում, այժմ երես էր դարձրել մեզանից: Ոչինչ այնքան ծանր, այնքան վիատեցուցիչ չէ, ինչպես այսպիսի եղանակը բարձր լեռների գլխին: Մտաբերում ես տեսած ճանապարհներդ, հիշում ես, թե որքան դժվարություն կա չոր ժամանակ անգամ. ի՞նչ կլինի, եթե անձրևը սկսվի, Սյունիքը այժմ էլ իր դեմքի դառնությունը սկսե ցույց տալ, մեր առջևը Ուշ-Թափալար կա, մենք բարձր սարի գլխին ենք, այս ցուրտ, կտրող քամին չի՞ կարող ձյուն էլ բերել... Եվ մինչդեռ մենք հուսադրում էինք միմյանց, մշուշը սկսեց արագությամբ ցած իջնել Գագբեղից, ձորեր ու դաշտեր ծածկեց, եկավ, վազեց Տաթևի վրայով, հեռու գնաց. իսկույն սկսվեց աշնանային մանր անձրևը: Յրտից կուչ եկած, ձեռքերս թևերիս մեջ խրած՝ շտապ-շտապ ետ ու առաջ էի գնում պատշգամբի վրա, որպեսզի տաքանամ, նայում էի չորս կողմիս, ոչինչ չէի տես-

նում. արարած աշխարհ կուլ էր գնացել մշուշի մեջ, և միայն մեր հարևան տան կտուրն էր երևում իր անտրոշ գծագրություններով: Անձրևը բավական վարար էր, տան բակով անցնող ծառայի տրեխները արդեն ցեխի կոլուլներ էին վերցնում...

Այդպիսի մի զզվելի դրության մեջ ես մտածում էի, կարծես մտածելով շատ բան կարելի էր անել: Իսկ մեր երիտասարդ տանտերը, մեր ուշադրությանն ակնկալած, սկսել էր մի երկար պատմություն Օրբեյանների տոհմի մասին. նա թեև աչքը շարունակ ինձ վրա էր պահում, և ես մի լսողի դիրքն էի բռնած, բայց շատ քիչ բան լսեցի նրա ասածներից: Նա պատմում էր հայ և թուրք ազնվականների ընդհարումների մասին, որոնք սովորապես արյուն և սպանություն են պատճառում: Ընդհարումները գլխավորապես հողերի մասին են սկսվում. թուրք բեկերը շատ չեն սիրում իրանց իրավունքները օրինական ճանապարհով հաստատել, և երբ դատարանը խլում է նրանցը համարված հողը ու տալիս մի ուրիշին, սկսվում է արնախում թշնամությունը: Արյունը արյունով պիտի լվացվի, և Օրբեյանները այժմ արյուն են պահանջում թուրք բեկերից, որոնք իրանց մի բարեկամին սպանել են և դատարանի ձեռից փախել: Յուր արյունաներկ պատմությունները մեր Սամսոն-բեկը վերջացնում է մի կատակերգության պատմությամբ, որ վերջին ժամանակներիս անցքն էր: Հայտնվում է, որ Տաթևի բոլոր Օրբեյանները Հնդկաստանի 70 միլիոններին աչք դրած են: Հույս ունին այժմ թե ոչ՝ ես չիմացա, բայց մի քանի ժամանակ սրանից առաջ ունեցել են. գուցե այն ժամանակն էլ չլիներ, եթե չգտնվեին մարդիկ, որոնք հեշտ հարստանալու ցավով են տանջվում: Ժան-Ժակ Օրբեյանի ֆանտաստիկական կտակը շատ երկար ժամանակից է պղտորում մեր միտքը: Ձայն հասավ, որ Հնդկաստանում 70 միլիոն ռուբլի են դիզել Օրբեյանների համար, և ինչէ՛ր չեղան, ո՛վ ասես որ չշտապեց Օրբեյան ազգանունը իր գլխին գցելու: Դեռ ճիշտն ու սխալը չիմացած, դեռ մի «ասում են» միայն լսած՝ ժառանգների մեջ մի թունդ պայքար սկսվեց, որ շուտով մեր մամուլի մեջ մտավ: Միմյանց հայհոյեցին, միմյանց ստախոս անվանեցին, ամեն մեկը շտապեց հրապարակով պարծենալ, թե ինքն է միայն այդ ահագին գումարի տերը: Հայի ազահությունն այս չափն ուներ, անպատճառ մեկը պիտի ստանար: Եվ վերջը... Թիֆլիսից Տաթևի կողմերն է գալիս մի պաշտոնաթող գնդապետ, հավաքում է բոլոր Օրբեյան կոչվածներին և կոչել ցանկացողներին, պայման է կապում նրանց հետ, որ եթե ինքը գերությունից ազատե այդ ահագին գումարը, այսքան և

այսքան բաժին ստանա: Ժառանգները, ի՞նչ կա որ, համաձայնում են՝ մի քանի միլիոն էլ արի գնդապետին տանք: Արի գնդապետն այնպիսի սիրով և պարծանքով է սկսում գործը, որ գայթակղեցնում է մի խեղճ հայ քահանայի. սա էլ ուզում է Օրբելյանի դիզած ոսկու կույտերից մի խտիտ իր կողմը քաշել՝ կեղծ դոկումենտներ շինելով և ծախելով: Գնդապետն այժմ, ինչպես երևում է, ձեռք է վերցրել Օրբելյաններից և Գանգեսի ավերում դիզած համեղ պատառներից. միլիոնների տիրանալու փափազը մոռացած՝ այժմ ուշի մտքը դիտում է և սրտատրոփ սպասում, թե երբ կգա այն օրը, երբ քրեական դատաստանը կպատժե վերոհիշյալ խեղճ քահանային¹: Ոչինչը ոչինչ է մինչև վերջը: Բայց Տաթևի Օրբելյանների տոհմական հին թղթերն ու դոկումենտները այժմ էլ մնում են Թիֆլիսում:

Բայց ինչ ուզում է, թող լինի, մեզ համար ուրախալին այն է, որ այդ օրը Սյունիքի երկինքը այնքան էլ անգութ չէր: Մեզ վրա ժողովված թանձր գուրշիների օվկիանոսը մի ինչ-որ հաջող դեպքից պատռվեց, սկսեց ցրիվ գալ. անձրևը դադարում էր: Իսկույն հանել ենք տալիս մեր ձիաները, վանք ենք գնում: Ահա Տաթև գյուղը: Մրա տները ցրված են մի բավական տափարակ գառիվայրի վրա՝ Տաթևի սարի հյուսիսային կողմում: Այնքան էլ շատ չեն տները, գյուղը բավական աղքատ է. գետնափոր խրճիթներ են պատահում ամեն մի քայլում, որոնց սրահներում երևում են բորիկ ու կիսամերկ երեխաներ, կարճահասակ կանայք, երբեմն և մոխրագույն շներ. այդ ամենքը նայում են մեզ զարմանքով, կարծես հարցնում են. «Դե՞ ո՞ւր որտեղ, այստեղ որտեղ»: Ինչո՞ւ Տաթևն այսքան փոքրիկ և հասարակ գյուղ է և աղքատ, նա մեծ պիտի լիներ, որովհետև կովկասյան շատ քաղաքներից է նա հին: Մեր պատմական թղթերի մեջ գտնում ենք, որ Տաթև գյուղը նվիրված է վանքին դեռ 844 թվականին (փրկչական). գուցե այդ ժամանակից էլ շատ առաջ գոյություն է ունեցել, հայտնի չէ: Հազարամյա կյանք վարած այդ գյուղը այժմ այնպիսի դրություն ունի, որ չես հավատում, թե նա այնքան ծեր է. մի՞թե այդքան ժամանակի ընթացքում ժողովուրդը չաճեց, չբազմացավ, և մի՞թե այս լեռնային գեղեցիկ օդն ու ջուրը կարող են նպաստել մարդկանց սպառման: Ով գիտե, ի՞նչ ճակատագիր է ունեցել Տաթևը. գյուղի այժմյան դրությունն անշուշտ մի պատմություն ունի, որ ոչ մեկին հայտնի չէ:

¹ Այս տողերը գրելուց հետո դատարանը Ազիզյանց քահանային Սիբիր արքայի վճռեց

Մենք այցելում ենք Տաթև գյուղի եկեղեցին: Դա մի բավական սիրուն և հին շինություն է, որի կտուրը վերջերումս է նորոգվել: Մտնում ենք և տեսնում մի գյուղական պարզ եկեղեցի, որ, ինչպես ամեն մի հին եկեղեցի, շատ մութն է. ցածրիկ առաստաղից այժմյան մետալլական ջահերի տեղ կախ են ընկած հնադարյան կանթեղներ, ապակյա ամաններ, որոնք ձիթով են լցվում: Բայց գյուղական պարզ եկեղեցի ասելը բավական չէ. անպատճառ պետք է ասել հովվական եկեղեցի, այնպիսի մարդկանց աղոթատուն, որոնք մի ընդհանուր չեն ապրիլ, եթե չլսեն իրանց աղմկաշատ ջրերի ձայնը, չտեսնեն իրանց աղբյուրների դեմքը: Այդ խոսքերը ես չեմ ասում, ինքը, եկեղեցին է թելադրում: Դեռ նրա շենքից չմտած՝ ձեր ականջին է հասնում մի ինչ-որ ջրի մեղմ քչքչոցը. կարո՞ք եք երևակայել, որ այդ ջուրը այս մութ կամարների տակ է քչքչում. մոտեցե՞ք հյուսիսային պատին, կտեսնե՞ք պատի մեջ մի փոքրիկ խոռոչ և նրա մեջ՝ մի փոքրիկ աղբյուր, որ թափվում է փոքրիկ ավազանի մեջ և այդտեղ էլ կորչում, գետնի տակով գնում է եկեղեցուց դուրս, չգիտեմ թե մեկ էլ ո՞րտեղ է դուրս թափվում: Եկեղեցու մեջ կայտառ, թոթովախոս աղբյուր... Ասացե՞ք, այս ժողովուրդը լավ չէ՞ հասկանում, թե ինչ է հովվական պոեզիան: Քահանաներն ու դպիրները երգում են, կարդում, ձայն ձայնի տալիս, ժողովուրդը լսում է, և աստվածային փառաբանություններին միացնում է իր ձայնը լեռնային անարատ, պարզ աղբյուրը. դրանից էլ լավ ի՞նչ երաժշտություն: Շենց այդտեղ՝ այդ նվիրական կամարների տակ, պարզասեր ժողովուրդը մոտենում է աղբյուրին, կռանում է, անուշ ջուրը խմում, ձեռքերը վանում: Իսկ երբ ձայն ու ծպուտ հեռանում են եկեղեցուց, փոքրիկ առաստաղի տակ թագավորում է եկեղեցային լռությունը, աղբրիկը սիրտ է ստանում, ավելի բարձր ձայն հանում: Այսպես է սյունեցի հայը, այսպես է կարողանում արտահայտել իր սերը դեպի իր բնությունը:

Անմոռանալի է այդ անզարդ ու անշուք եկեղեցին, անմոռանալի իր այդ ջրով, որ նրա միակ զարդարանքն է: Ականջ կախած նրա մեղմ քչքչոցին՝ մենք քիչ էլ շրջում ենք դրսում, եկեղեցու շուրջը և ապա ուղևորվում դեպի ցած: Ճանապարհին տեսնում ենք վանքի կալը, մի լայն և հարթ հրապարակ, որի մոտ կանգնած է մի կամարապատ և սյունազարդ շինություն: Ահա երևաց վանքը, որ գյուղից հազիվ թե մի վերստ հեռու լինի: Վերջապես այդ վանքը այնքան մոտիկուց երևաց, վերջապես նա կանգնեց մեր առջև՝ մեր ճանապարհի վրա: Շրջապարիսպն ու զմբեթները հեռվից են մարդու սիրտը

պատրաստում. ահով և պատկառանքով պիտի մոտենալ, տեսնել շատ, զգալ ավելի ևս շատ:

Իմ ընթերցողին մի քիչ ամփոփ տեղեկություն տալու համար կասեմ, որ գյուղից դեպի վանքը գնացողը տեսնում է դրսից մի լայն շրջափակ պարիսպ, որ սևացած է հնության պատճառով, շատ տեղ ավերված և կարկատած. ներսից այդ պարսպին կպած են շատ շինություններ, երկհարկանի սենյակներ, որոնք նույն հնության պատճառով ավերված են: Այդ շինությունները սկսվում են հյուսիսային մեծ դռների մոտից և անկանոն շրջան գործելով՝ պատում բակը, գալիս են կանգ առնում արևելյան կողմում՝ ձորի վրա. իսկ շինությունների մեջտեղը առանձին կանգնած է վանքը¹: Սա ունի մի բարձր գլանաձև գմբեթ, որի չորս կողմը շարված են մեծ ու փոքր, նեղ, ցանցապատ լուսամուտներ: Շրջապատից դուրս՝ հյուսիսային մեծ դռներից քիչ դեպի արևելք, կա մի ուրիշ երկար շինություն, որ նայում է Ռոտոնա գետի ձորին:

Մտնենք պարսպի իմ հիշած մեծ դռնով: Այդ դռան գլխին շինված է մի փոքրիկ և գեղեցիկ եկեղեցի, որ վանքի շինությունից հեռու է, բակի երկարությամբ բաժանված: Եկեղեցին ունի մեծ, նույնպես գլանաձև գմբեթ, շինված է սրբատաշ քարերից և ունի Անիի եկեղեցիների հատակագիծը: XI դարու շինություն է, որ շինել է Տաթևի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսը: Երևակայեցեք մի մեծ և լայն դուռն. մինչև ներս մտնելը ձեր աչքի առաջն է մի գմբեթ, որ կարծում եք, թե վանքի գմբեթներից մեկն է. այնքա՛ն զարմանում եք, երբ լայն դռնով անցնելիս ձեզ հայտնում են, որ ձեր գլխից վերև մի ամբողջ եկեղեցի կա կանգնած: Եկեղեցին մտնելու համար պետք է բարձրանալ քարե սանդուղքներով պարսպի գլուխը, անցնել մի նեղ անցքով. եկեղեցու դուռը պարսպի դռան ճակատի ծայրին է բացվում: Որքան սրամիտ է եղել շինողը:

Մեծ բակից անցնելով՝ մի դռնով մտնում ենք փոքրիկ բակը, որ վանքի հարավային դռների առաջն է գտնվում. մտնում ենք պատշգամբավոր շինության ներքին հարկի նեղ դռնով: Հին ու մտայլ շինություններ են, մի նեղ միջանցք են կազմում, որ տանում է մեզ մի մեծ և հին ճաշակով շինած սենյակ: Այստեղ է ապրում վանքի վանահայրը, որ միննույն ժամանակ

¹ Տաթևի շատ գեղեցիկ և բոլորովին նման պատկերը տպված է 1888 թվականի «Нива» ռուսական պատկերագաարդ շաբաթաթերթի առաջին համարում: Պատկերը նկարված է ոչ թե Տաթևի գյուղի կողմից, որտեղից մենք մտանք վանքը, այլ հակառակ կողմից, հարավային ձորի վրայից

Մյունյաց վիճակի փոխանորդն է¹ և հոգևոր կառավարության նախագահը: Ներկայացանք փոխանորդ հորը, արժանապատիվ Անանիա վարդ. Համագասայանցին, որ նոր էր վերադարձել Մեղրիից և սկսեց պատմել այդ գավառի անտանելի, միանգամայն անանցանելի ճանապարհների մասին: Հայր սուրբի այդ սենյակը մի հին դահլիճ է, որ կոչվում է *թանաքի*. արևելյան կողմից երկու հատ երկհարկանի մեծ լուսամուտները թեև բավական լույս են ներս թողնում իրանց գունավոր ապակիների միջով, բայց սենյակի կեսը, ինչպես բոլոր հին շինությունների մեջ, կիսաստվերի մեջ է ընկղմված: Փոխանորդ հոր բնակարանը անգարդ է, համարյա բոլորովին մերկ, ինչպես մի վանական հասարակ խուց: Մենք անցանք այդ դահլիճի միջով, իմ հիշած երկու պատուհանների տակ շինած մի փոքրիկ դռնով դուրս ենք գալիս, իսկույն մեզ ընդունում է մի փոքրիկ, շատ փոքրիկ պատշգամբ, որ մի հրաշալի բան է: Ես մնում եմ զարմանքից հիացած, ապշած, մեխված, մեխված ավելի այն պատճառով, որ հնացած փտած պատշգամբը ջարդվելու, վայր ընկնելու ահն ունի իր վրա դրոշմած: Իսկ եթե վայր ընկնե՞ր...

Դա հասարակ պատշգամբ չէ. դա կախ ընկած է մի այնպիսի խոր ձորի վրա, որին վերևից նայելիս մարդու գլուխը պտույտ է գալիս: Նեղ ձոր է, ահարկու և գեղեցիկ իր ուղղաձիգ կողերով. Տաթևի սարի գլխից ուղիղ խփում է դեպի ցած, Որոտնա գետի վրա: Եվ լուռ ձոր չէ. վերևից գալիս է մի մեծ առվակ, թափվում է նրա միջով: Բայց ի՞նչ թափվել... Դուք, իհարկե, տեսել եք ջրաղացի գլուխը, գիտեք ինչպես է ջուրը վերևից ցած շոշոում փայտի նավի միջով: Ահա երևակայեցեք մի հսկայական, մեծ ու շատ խոր նավ, երևակայեցեք և մի մեծ ջուր, որ գլխի վրա ցած է նետվում և իր կարկաչունը երկինքն է հասցրել: Նա ջրվեժ չէ, նա գետակ է, որի ընթացքը այդպես է սարի գլխից մինչև ստորոտը. նա հուսահատ է, կարծես վախից սարսափած է ընկնում բարձրությունից, օգնություն է աղաղակում վախից սպիտակած, փրփուր կտրած: Բնությունն այսպիսի վիճակ է հասկացրել Տաթևի ջրերին. ամենքը պիտի աղաղակեն, ամենքը պիտի սաստիկ վազեն: Այս ջուրը ներքևի ձորի որոտալից գետի փոքրիկ, բայց հարազատ գավակն է. գետն այնտեղ վշտում է հաստ, եթե կարելի է ասել, տղամարդի ձայնով, իսկ սա բարակ, կանացի ձայն է արձակում, փախչում է, վազում և տեղ-տեղ ջրվեժներ կազմելով՝ ընկնում է Որոտանի գիրկը, աղաղակում է նրա հետ:

¹ Մյունյաց վիճակը Երևանի թեմին է պատկանում

Չորի երկու կողերը կանաչագարդ են, տեղ-տեղ՝ թփերով և ծառերով ծածկված: Գարունն ու ամառը այս պատշգամբից նայողի աչքի առաջ հրաշալի տեսարաններ են փռում. բնության փառքի սիրահար մարդը թող այստեղ գա, նստե այս կախարդական պատշգամբի վրա, որ չգիտեմ՝ ինչպես են դուրս բերել, կախ գցել, հիմնել մի պատի վրա, որ ձորի շրթունքից է սկսվում: Ահա ես կանգնած եմ, նայում են դեպի ցած: Այս չարաճճի, հուսակտուր ջրի վայրենի աղաղակը գերել է իմ միտքը, գրավել է իմ ամբողջ ուշադրությունը, և ես ժամանակ չունիմ զմայլվելու վայրենի աղավնիների խմբերով, որոնք, օդի մեջ թափահարելով իրանց ձյունափայլ, մաքուր թևերը, թռչում են ինձանից ցած, շա՛տ ցած: Թռչում են ձորի և ջրի վրա, երանի՛ նրանց, դժվար, անմերձենալի ճանապարհ չեն ճանաչում, գահավիժելու, կտոր-կտոր դառնալու վախը չեն հասկանում. նստում են, որտեղ կամենում են նրանց փոքրիկ սրտերը, ջրի վրա են նստում, նրա փոշենման կաթիլներով լվացվում, զովանում, կտուցներով քիչ քորում են թևերի տակը, էլի վեր են կենում, էլի թռչում: Ահա նրանք դեպի ցած գնացին, ու սարը պատ է դառնում, կտրվում, ահա վերջին անգամ փայլեցին նրանց սպիտակ թևերը, և նրանք անհայտացան ցածրում, ձորի խորության մեջ...

Աշուն է այժմ, ցուրտ ժամանակ. այդ պատճառով ձորի բնակիչները միայն աղավնիներն են և երեսապինդ ծտերը: Բայց երբ «բացվին դռներ հուսո, և մեր երկրեն փախ տա ձմեռ», երբ ոչ միայն Տաթևը, այլև Սյունյաց երկրի բոլոր լեռնադաշտերը հագնում են աննման կանաչ զգեստ, այն ժամանակ այս ձորը իրանն է ցույց տալիս. աղմուկի և աղաղակի համար ստեղծված այս ջուրը ամեն առավոտ և ամեն երեկո իր գլխին է հավաքում ամեն ազգի և տեսակի թևավոր երգիչներին. գալիս է, իհարկե, և Սյունյաց աշխարհի սոխակը, նստում են ամենքը մի տեղ և լցնում են այդ ձորը հրաշալի եղանակներով: Ահա այդպիսի փառավոր բան է այս փոքրիկ պատշգամբը. նա աղքատ է, ճշմարիտ, պառաված է, կեսն արդեն փուլ է եկել, բայց և այդպես, տեսեք՝ ի՞նչ համարձակն է և որքան՝ սիրտը բաց: Նայեցեք, տեսեք՝ ինչեր չէ ցույց տալիս: Բարձրացրեք ձեր աչքերը ահավոր խոր ձորից, ձեր առջևը բաց է Որոտնա գետի ձորը մինչև Հալիձոր գյուղի սահմանները. տեսնում եք դեպի վեր ցցված լեռնակույտեր՝ իրանց քարային կողերով, տեսնում եք այդ լեռների վրա մթնած անտառներ, ձորեր, փապարներ: Ահա մեր երեկվա եկած ճանապարհը. նա անփույթ կերպով բաց թողած մի ժապավենի պես բարձրանում է գետի ձորից, սողում է լանջերի կրծքով, ծառերի և թփերի

միջով, ոլորվում է դեսուդեն, դուրս է գալիս Շահանդուխտի ժայռի գլուխը ու անհայտանում: Էլի այդ ժայռը, այդ հարսի ժայռը ի՞նչպիսի դժվար կողեր ունի և ինչպես ազահ Տաթևի վանքին է նայում. նա կարծես դեռ պահել է այն ուշադիր հայացքը, որ մի ժամանակ նրա ոտների մոտ ճգնող կույսն է մեխած պահել այս վանքի, գուցե և այս պատշգամբի վրա: Աջ թևի ուղղությամբ նայեցեք. այստեղ էլ՝ ձեր ոտների տակ ընկած ձորի մյուս կողմին, երևում է տափարակի վրա տեղավորված փոքրիկ գյուղը՝ Տանձատափ անունով: Որպիսի՜ գեղեցիկ տեղ է ընտրել. այդ ծառերն էլ, որոնք միմյանցից հեռու ցրված են տափարակի վրա, երևի, տանձի ծառեր են: Այստեղից՝ Տաթևի արևմտյան կողմից, ուր ձորն այնքան խոր չէ, գնում է մի նեղ ճանապարհ, անցնում է «Հանգիստներ» անվանած քարերի մոտով և մենակ ու դատարկ մտնում է Տանձատափ գյուղը: Բայց մի-մի թվել այն տեղերը, որոնք երևում են, այն տեսարանները, որոնք մի բուպեում նկարվում են պատշգամբի առաջ՝ անհնարին է:

Ես չեի կարողանում խոսել իմ ընկերների և վանահոր հետ, որոնք ինձ հետ կանգնած էին պատշգամբի վրա, ես ուզում էի շատ բան տեսնել շատ տեսարաններ թոցնել մտքիս և հիշողությանս մեջ. ես միայն լսում էի նրանց խոսքերը: Իմ ընկերը՝ նա, որ առաջներում էլ եղել է այստեղ, մոտենում է ինձ և ասում հիացած.

- Ի՞նչպես ես կարծում, ի՞նչպես կլինի ամառային մի երեկո այս պատշգամբի վրա. ես տեսել եմ այդպիսի երեկոներ: Նստես այստեղ, չայ դնես, թառ վերցնես, թռչունների կարդմունքին սազացնես թառի ձայները, և լավ երգիչ լինի, երգե. «Աստված է գիտում, քեզ շատ եմ սիրում, գեղեցիկս, մի անգամ էլ քեզ տեսնեմ...» (թուրքերեն): Ի՞նչպես կլինի, հը՞ ...

Եվ նա ծիծաղում է: Այո՛, համաձայն եմ, կախարդական կլինի ամառային երեկոն, բայց էլ ինչո՞ւ անպատճառ «Աստված է գիտում» երգել, ո՞ր գեղեցիկը կարող է լսել այդ խոր ձորից: Անօգուտ է սիրո երգը, այստեղ՝ միանգամայն անօգուտ, այստեղ բնությունն է միայն, նա է թագավորում, նա է, որ գերում է, իր մեջ կորցնում տեսնողի միտքն ու ուշքը. աշխարհային բաներից, հոգսերից, քաղցրություններից հեռո՛ւ է մարդը: Չուր է կարծում իմ ընկերը, թե նրա թառի լարերը շունչ և կենդանություն կստանան այս ջրի աղմուկի մոտ, բնությունն ինքն է աչքի և լսելիքի համար ամեն քաղցրություն պատրաստել. հարկավոր է միայն հոժարություն ունենալ, գնալ, թանաքի փոքրիկ պատշգամբի վրա կանգնել:

Բայց մեզ պես քիչ չկանգնել: Այդ տեղը տեսած-չտեսած, տեսածի համն ու հոտն առած-չառած, ներս մտանք թանաքին, և մեր եկած միջանցքով կրկին բակը գնացինք: Այդտեղ՝ այդ դռների առջև, կանգնած է Տաթևի հոչակավոր քարե գավազանը, ինչպես անվանում է ժողովուրդը, կամ ս.Երրորդության սյունը, ինչպես կոչվում է մեր մատենագրության մեջ: Ես տեսել եմ այդ սյունի պատկերը, կարծեմ, «Աղբյուրի» և «Արարատի» մեջ և այժմ կասեմ, որ ով ինձ պես ուզում է հասկացողություն կազմել սյունի մասին և այդ մտքով պատկերին է նայում, նա շատ սխալված կլինի. պատկերները շատ անշնորհք են և նսեմացնում են հնադարյան հիշատակարանը: Իմ տեսածը բոլորովին ուրիշ բան էր. մաքուր տաշած և կոկած քարերից կազմված մի բարձր կոթող, որի լայն հիմքը քանի բարձր է գնում, այնքան նեղ և նեղ է դառնում, մինչև որ վերջանում է մի գեղեցիկ քարյա խաչով, որ դրված է մի կամարածև բարակ շրջանակի մեջ: Նա կոլորակ է, ունի մի քանի կարնիզներ, որոնք օղերի պես նստած են նրա վրա: Բայց այդ սյունը հոչակավոր է նրանով, որ շարժվում է: Եթե ներքևից շարժես, չի շարժվի. պետք է երկհարկանի տան կտուրը ելնես և շարժես սյունի գլուխը, բարակ տեղը: Որովհետև այդ տան վերին հարկը միանգամայն ավերակ է դարձել, այդ պատճառով մենք ինքներս չենք բարձրանում, այլ ուղարկում ենք վանքի ծառաներից մեկին: Նա երկու ձեռքով սկսեց շարժել. առաջին անգամը սյունը շատ թեթև, աննկատելի կերպով է տատանվում, բայց հետզհետե, երբ ծառան շարունակ շարժում է, սկսում է ճոճալ, երերվիլ, նրա մարմնի վրա տեղավորված բոլոր քարերը շարժողության մեջ են ընկնում՝ հանելով թեթև ձայն. մինչև անգամ քառակուսի քարը, որ խրված է գետնի մեջ և սրի վրա էլ կանգնած է սյունը, նա էլ շարժվում է, այդ պարզ է նկատվում:

Շատ ենթադրություններ կան սյունի այդ տեսակ երերման մասին. բայց դրանցից ոչ մեկն էլ համոզիչ չէ, ուստի և ոչ մեկի մասին չարժե խոսել. գաղտնիքը կբացվի այն ժամանակ, երբ կհիմացվի, թե սյունն ինչպես է հաստատված գետնի մեջ. դրա համար պետք է սպասել մինչև որ կքանդվի. իսկ քանդվելուն շատ երկար պետք է սպասել: Ստեփանոս Օրբելյանը վկայում է, որ սյունը վանքի հետ է շինված: «Կանգնե՛, - ասում է, և մերձ եկեղեցոյն, հանդեպ դրանն հարաւու՝ սիւն մի զարմանալի յանուն սրբոյ երրորդութեանն ի մանր քարանց պատուածեալ ի չափ 30 կանգնոյ»:

¹ *Շովհաննես Եպիսկոպոսը, վանքի շինողը*

Հետևաբար հազար տարիների ծանրություն կա այդ զարմանալի, իսկ որ զարմանալի սյունի վրա, բայց ոչինչ, նայում ես, թե մի հարյուր տարվա շինություն է, այնպես ողջ ու առողջ է մնացել: Ժողովրդի մեջ շատ ավանդույթներ կան Երրորդության սյունի մասին: Ասում են, թե Լանկթամուրը կամեցել է Տաթևը հիմնահատակ կործանել, մանավանդ այս սյունը արմատախիլ անել, ոչնչացնել. նրա հրամանով լծում են տասն ջուխտ գոմեշ, գութանի փոկով կապում են սյունը նրանց լծերից: Գոմեշները ձգում են, ձգում, գութանի փոկը կտրվում է, և նրանք թափվում են ձորը, կոտորվում. այն ժամանակ ահռելի կաղ հրեշը հասկանում է, որ իր ավերիչ կամքի առաջ այս սյունն է միայն, որ անասան է մնում Աստծու հրամանով և թողնում է Տաթևը, գնում ուրիշ տեղեր, ազգի վրա մսագործ դառնում: Պետք է ասել, որ Լանկթամուրի արշավանքը այստեղի ժողովրդի մեջ ուրիշ ավանդություններ էլ է թողել: Պատմում են, որ նա փայտ է դիզել տվել, որ վանքն այրե. կրակը վառվել է և գանգակատան տակ, և այն օրից Տաթևը գանգակները լավ ձայն չեն հանում:

Այդ գանգակատունը մի փոքրիկ շինություն է, որ կպած է վանքին՝ հարավային դռան վրա. ունի մի փոքրիկ գմբեթ, որ հաստատված է բարակ սյուների վրա: Զանգակատունը իսկ որ սևացած է, կրում է մի ինչ-որ բարբարոսական հրդեհի հետքերը: Նրա մոտ վանքի սրահն է, որ երկար է և ունի մի քանի կամարավոր մուտքեր: Սրահով քիչ դեպի արևելք ենք գնում, տեսնում ենք կամարապատ առաստաղի տակ մի բավական գեղեցիկ և փոքրիկ մատուռ, սրբատաշ քարերից շինած և գանագան քանդակներով ու խաչերով զարդարված. նրա փոքրիկ կտուրի վրա կան երեք մանր և գեղեցիկ գմբեթներ: Այդ մատուռը շինված է Գրիգոր Տաթևացու գերեզմանի վրա: Մուտքը ներսից է՝ վանքի միջից: Տաթևացին թաղված է վանքի հարավային դռան առաջ, որ այժմ ծածկված է այդ մատուռով, որի դեպի դուրսը դարձած պատերի վրա երևում են շինողների արձանագրությունները: Մատուռը նոր շինություն է, գուցե մի երկու կամ երեք հարյուր տարվա գործ:

Մատուռի արևելյան կողմում մի դուռն է բացվում մեր առջև, մի հին, նշանավոր դուռն. նա բաղկացած է ընկուզենու մի հաստ չափազանց հաստ, լայն և շատ ծանր տախտակից, որ երկու կողմից զարդարված է հիանալի քանդակագործ նկարներով: Այդ նշանավոր հնությունը մարդու զարմանքն է հարուցանում, ո՞վ գիտե, երբ է շինվել և որքան ժամանակ անցկացրել, իր ամուր կազմվածքի շնորհիվ ամբողջ և անվնաս մնացել: Իսկ այդ կանոնա-

վոր և նուրբ քանդակները... Մենք ասում ենք, թե ճարտարապետությունը մի ժամանակ հայերի մեջ շատ է եղել զարգացած. և այդպես ասում ենք՝ տեսնելով հին քարե շինությունները: Իսկ այս դռան տախտակը չի՞ հաստատում, որ հյուսնությունն էլ շատ ծաղկած մի արհեստ է եղել. այժմ ո՞վ կարող է այսպիսի դուռն շինել:

Այդ դուռը մտցնում է մեզ մի փոքրիկ, բայց շատ բարձր եկեղեցի: Մա թեն վանքի կողքին է կայած, բայց առանձին շինություն է և նվիրված է ս.Գրիգոր Լուսավորչի անվան, որովհետև, ինչպես պատմում է Օրբելյանը, սրա մի պատի մեջ պահվում է Լուսավորչի գանգի մի մասը: Անզարդ եկեղեցի է. բեմը, հատակը, պատերը մերկ են բոլորովին, սևացած, աղքատացած, երևում է, որ այս եկեղեցին մոռացված, աչքից ընկած է եղել: Չեն ամաչել վանքի վանահայրերը, գոնե ամաչեին Լուսավորչի մասունքից: Արժ. Փոխանորդ հայրը մեզ պատմում է, որ ինքն է այստեղ գալուց հետո մաքրել տվել, աղբն ու կեղտոտությունը դուրս թափել տվել: Եկեղեցին ո՛չ սյուն ունի, ո՛չ գմբեթ, որից սովորաբար լույս են ստանում մեր հին վանքերը. այս պատճառով ներսը շատ մութն է, իսկ բեմի վերնից բացած մի փոքրիկ լուսամուտը շատ քիչ լույս է տալիս:

Ս.Լուսավորչի եկեղեցին վանքից էլ հին է: Օրբելյանը (Գլ.ԼԸ) հետևյալն է պատմում նրա մասին:

Հին ժամանակները այստեղ՝ այս ձորի բաշին, անտաշ քարերից շինած մի եկեղեցի կար, որ մնացած էր ս.Ներսեսի և Սահակի ժամանակից: Սյունյաց եպիսկոպոսները, այս տեղը հարմար համարելով առաջնորդական աթոռի համար, որովհետև անմատչելի և ապահով տեղ է, խնդրում են Սյունյաց իշխաններից, որ իրանց հանձնվի այդ եկեղեցին: Եվ գալիս են այս կողմը՝ բերելով իրանց հետ սրբերի և մարտիրոսների բազմաթիվ մասունքները: Օրբելյանը չի կարողանում ասել, թե ով էր այստեղ եկած առաջին եպիսկոպոսը, որովհետև նրա ժամանակները այդ մասին տեղեկություններ չկային, բայց հաստատ գիտե, որ շատ ժամանակներից ի վեր բնակված են այստեղ: Քրիստոսի 839 թվականին Սյունյաց Դավիթ եպիսկոպոսը 10000 դրամով առնում է Սյունյաց Փիլիպպե իշխանից և եկեղեցուն սեփականացնում Արծիվ և Բերդկաններիչ գյուղերը: Իսկ 844 թվականին, ինչպես վերև հիշեցի, նույն Փիլիպպե իշխանը նվիրում է վանքին իր սեփական Տաթև գյուղը, որ ժառանգություն էր ստացել իր հորից՝ Վասակ իշխանից: Չորս տարուց հետո, այսինքն՝ 848 թվին, այդ Փիլիպպե իշխանը շինում է մի գեղեցիկ եկեղեցի

հին եկեղեցու մոտ՝ հարավային կողմից, Ս.Լուսավորչի անունով: Ինքը՝ իշխանը, մեռնելուց հետո թաղվում է այդ եկեղեցու դռների մոտ: Օրբեյանի այս խոսքերից շատ պարզ երևում է, որ ս.Ներսեսի և ս.Սահակի օրերից մնացած եկեղեցին շինված է եղել այն իսկ տեղը, ուր այժմ Տաթևի վանքն է կանգնած: Ուրեմն Տաթևը սրբազան է չորրորդ դարուց սկսած մինչև մեր օրերը: Իսկ ս.Լուսավորչի եկեղեցին, որի մեջ մենք կանգնած ենք, ինչպես տեսնում եք, շինված է մեզանից ճիշտ 1040 տարի առաջ: Շինությունը ամբողջապես նույնը չէ, ինչպես շինել է Փիլիպպե իշխանը, երկու անգամ կործանվել է, վերանորոգվել և վերջին նորոգողը եղել է ինքը՝ պատմիչ Ստեփանոս մետրապոլիտ Օրբեյանը՝ Տարսայիճ իշխանի որդին: Ինչպես և լինի, ս.Լուսավորչի եկեղեցու գոնե տեղը, հատկազիծը, հիմքը 1040 տարվա մի պատկառելի հնությունն է: Տեսնողը, նայողը դժվարությամբ է հավատում այդ ահագին թվանշանին: Հնության անունն այնպես նախապաշարում է մարդուն, որ տարիների այդ երկար շրջանը աչքիդ առաջ բռնած՝ կամենում ես տեսնել մի հող, որ բուրրովին նման չափտի լինի այժմյան հողին, մի քար, որ մեր ժամանակի քարերից բուրրովին տարբեր կազմվածք պիտի ունենա:

Թողնում ենք ս.Լուսավորչի եկեղեցին, նույն սրահով ետ ենք գնում, անցնում զանգակատան տակով, մտնում ենք վանքի գավիթը, ուր դրած կա մի փոքրիկ բեմ՝ Նախավկայի անունով: Մեզ ներս է թողնում նույնպիսի հաստ, ծանր և քանդակներով զարդարած դուռը:

Երկու քայլ ևս:

Ահա նա... ինքը՝ հռչակավոր Տաթևը: Գդակս ձեռքիս մնում եմ կանգնած շեմքի մոտ, սառած նայում եմ բարձր, նայում եմ չորս պատերին: Ինձ իր գիրկն է առել մի հիանալի, լայնարձակ և մեծ, մե՛ծ անվան տեր սրբավայր, այն իսկ տաճարը, որի մեջ մի ժամանակ Սյունյաց աշխարհի մեծանուն և քաջ իշխաններն էին հավաքվում, որի մեջ մի ժամանակ գումարված էին մեր հոգևորականության ծաղիկները, աղոթում էին, մտածում, կառավարում: Կենդանի մարդը ոչնչություն է այսպիսի անմահ հիշատակարանների մոտ. ինչպե՛ս մոռանում է իրան, ուրանում իր մեծակշիռ «եսը» և խոնարհվո՛ւմ է, ցածանում: Նա՛ այդ մարդը, ամեն բույե մահվան վտանգի առաջ իր գեղեցիկ կյանքի կարճության մասին մտածել սովորած, հանկարծ փշրվում է, փոխվում, ուրիշ բան դառնում, երբ նայում է, իր սեպհական աչքով տեսնում է անշունչ ու անհոգի քարը, որ նշանակություն է ստացել, որ բարձրացել է մարդուց, կանգնել է նրա ցույց տված տեղը, միացել, եղբայրացել է ցիսի ու

կրի հետ, որ հագար տարիներ մնալով՝ վկայե, թե մարդն այն չէ միայն, ինչպես նա ինքն է կարծում, այլ մի արարած, որ իր կարճ կյանքի ընթացքում կարողացել է մի բան կատարել, մի միտք, մի սուրբ ավանդություն ստեղծել և կտակել իր հեռավոր սերունդին, թողել է իր շունչը, իր կյանքի հիշատակը որպես մի կարող և անընկճելի ուղեցույց, որին պիտի ապավինե դժվարությունների և ցավերի մեջ պաշարված սերունդը: Ի՞նչ կլինեք, եթե կենդանի մարդու առաջ հանկարծ բացվեք գերեզմանական կյանքը, և ստվերների աշխարհը երևակայական բաների կարգից դուրս գար, խոսեր մի քանի հարյուր սերունդների բերանով. ի՞նչ կլինեք, կենդանի մարդը վերջապես չէ՞ր հասկանալ իրան միշտ տանջող, բայց միշտ անհասանելի, անլուծանելի խորհուրդները, չէ՞ր իմանալ, վերջապես, թե ի՞նչ է ինքը, ի՞նչ է իր հոգին, իր միտքը, իր էության բոլոր անհասկանալի կողմերը: Ես կարծում էի, թե այս սրբազան հարկը, որ ինն հարյուր իննսուններեք տարի է լուսացրել և մթնացրել, կարող է մի այդպիսի պաշտոն կատարել, կարող է հասկացնել շատ անհասկանալի բան, որովհետև նա էլ մի մեծ գերեզմանի դերն է կատարել, որի տակով անցել են բազմաթիվ սերունդներ՝ բերելով իրանց հետ բազմատեսակ պատկերներ, երևույթներ, պատմություններ, որոնց ոչ մի գրքի մեջ բովանդակել չի կարելի: Տեսեք՝ Օրբեյանը ինչ անուններ է տալիս այս վանքին՝ «մեծ հայրապետանոց», «աստվածաբնակ, լուսաճեմ եկեղեցի», «սուրբ մայրաքաղաք», «վեհափառ տերանցն Սյունի և ցեղին Սիսակա», «աղբյուր շնորհաբաշխության տանն Սիսական՝ Տաթև». այդքան մեծության, փառքի տաճարն է, որ այնպես ճնշում է ինձ, որ այնքան բազմաթիվ մտքեր և հիշատակներ է կենդանացնում մեր ազգի և մեր պատմության մասին: Ամեն մի հնություն է պատկառելի, այդ ճիշտ է. բայց կան հնություններ, որոնք մի ամբողջ ազգի թանկագին սրբություններն են, որոնք այդ ազգի մարմնի և արյան մեջ են ձուլվել իրանց անունը ու փառքը: Ի՞նչպես կարող է միտքը անշարժ, անգործ մնալ այդ տեսակ հնության կամարների տակ: «Երանի՛ քեզ, գնում ես Տաթևը տեսնելու», ասում էին ինձ Շուշիում բարեկամներս ու ծանոթներս: Այդպիսի մի ցանկալի տեղ է Տաթևը մեր կողմերի հայերի համար, այդպիսի մեծանուն հնություն է Տաթևը...

Նա մի լայնարձակ շինություն է. ես առաջին անգամ էի տեսնում այդքան մեծ վանք: Երկու հատ հաստ և գեղեցիկ սյուն կանգնած են հյուսիսային և հարավային պատերի մոտ և, ինչպես ասում է Օրբեյանը, «հաստահեղոյս խարսխօք, և բարձրաբերձ գեղեցկադիր թաղակապօք պարաբարձեալ ունին

գահագին թանձրութիւն երկնաձեղուն քարակառկա յարկին»: Հարկի վրա բարձրացած է մեծ գմբեթը, որի լուսամուտներից առատորեն թափվում է լույսը և խորհրդավոր, գեղեցիկ տեսք է տալիս վանքի ներսին: Թագավորած է խորին լռություն, որ կաշկանդում է մարդուն. մտնողը խոսում է ցած ձայնով. չգիտեմ՝ ինչն էր ինձ հարկադրում ոտներիս մատերի ծայրի վրա ման գալը: Ամեն ինչ՝ պատկեր, սյուն, կամար, լուռ է, կարծես սպասողական դիրքի մեջ: Ինչի՞ են սպասում այդպես: Ես հասկանում եմ. ավերման, վերջնական քայքայման են սպասում: Կարծես վերջը մոտ է, կարծես այդ լռությունը պատրաստվում է ցավալի, տխուր թնայունի փոխվել, որ պիտի հանե կամարից ընկած առաջին քարը: Այդ կամարները, թաղերը, պատերը սևացած են, անշուք, անգարդ, միանգամայն և մոայլ կերպարանք ունին: Բայց թափված ձեփերի տեղ մնացած կտորների վրա նկատելի են նկարած պատկերների մասերը: Մի ժամանակ վանքի կողմը զարդարված է եղել բազմաթիվ գեղանկար պատկերներով. և որքան գեղեցիկ է եղած այն ժամանակ, ես երևակայում եմ: Օրբելյանը պատմում է, որ այդպես զարդարողը եղել է նույն Հակոբ եպիսկոպոսը, որ Չագեձորի ջուրը բերել է, Ցաքուտ անունով տեղը այգիներ շինել: Նա ասում է. «Այս Ցակոբ ետ ածել նկարիչս և զավոախս, որ է պատկերագործ, ի հեռաւոր աշխարհէ ֆռանգ ազգաւ, և զլուսաճեմ յարկս աստուածաբնակ տաճարիս բազում և անհուն ծախիւք ետ նկարել զբավանդակն ի վերուստ մինչև ի վայր, և զփրկչական պատկերն յոյժ ահաւոր տեսեամբ ետ նկարել հանդիպակշիռ աստուածագործ սեղանոյն ի վերոյ՝ զբոլոր երկինն աւագ կամարին. և ի ներքոյ նորա շուրջ զսեղանովն՝ զմարգարեական և զառաքելական և զհայրապետական կենդանագրութիւնս յոյժ խորհրդաբար, նմանապէս և զբոլորն համակ զարդարեաց այնքան, զի տեսողաց տեսարանքն շլանային ի նայելն. և երբէք ոչ թուեր ի դեղոց և յերանգոց յորինեալ, այլ համայն կենդանիք, յորոց զարհուրեալք խուսափեին տեսողքն: Եւ արար զայս ի թուականին Հայոց 379» (Գլ.ԽԸ): Այսպիսի զարդարանքի ողորմելի կտորներն ու փշրանքներն են այժմ մնացել:

Դասերը ժողովրդի տեղից բաժանվում են քարե ահագին սրբատաշ սալերով, որոնք կանգնած են մի շարքում՝ թողնելով մեջտեղ մի փոքրիկ անցք: Այդ անցքի աջ և ձախ կողմին՝ հատակի սև սալ քարերի մեջ, երևում են երկու մարմարյա քառանկյունի սալեր. ասում են, որ դրանք հայտնի եպիսկոպոսների գերեզմաններ են, գուցեև գաղտնաբաններ: Գաղտնաբան-

ներ երևում են և պատերի մեջ, վերևում, կամարի տակ: Վանքն ունի մի մեծ և գեղեցիկ բեմ, որի երևելի զարդն է հինավուրց վարագույրը: Դա կարած է սպիտակ դիպակի ոսկեթել կտորից և մինչև այսօր շատ լավ է մնացել: Ավանդությունն ասում է, որ վարագույրը վանքին է նվիրել Պարսից Շահաբաս թագավորի (ն[՞]ր Շահաբաս) քույրը: Եթե ճշմարիտ է, պետք է ասեմ, որ նվերը միանգամայն արժանի է և պատվաբեր արքայական գերդաստանին: Ամենից գնահատելին դիպակի բարակությունն է, նկարների նրբությունը և կտորի լայնությունը. ահագին վարագույրը երեք կտորից է բաղկացած: Ափսոս, որ այդ թանկագին բանը որևէ թանգարանում չի պահվում, այլ այստեղ. անփոփոխ կախված լինելով բեմի վրա՝ հետզհետե փչանում է. ես մի քանի փոքր կարկատաններ նկատեցի, որոնք սարդի պես կպած էին գեղեցիկ մարմնին և կարծես սարդի պես էլ ծծում էին բոլոր գեղեցկությունը: Այդպիսի ափսոսանք ես լսել եմ նաև օտարազգիներից, որոնք այցելել են Տաթև: Փոխանորդ վարդապետն էլ այն կարծիքն ուներ, որ վարագույրը պետք է վերցնել, բայց նախ պետք է նվերներ հավաքել՝ մի ուրիշ վարագույր առնելու համար, որովհետև Սյունյաց «հայրապետանոցը» այժմ մի հատ վարագույր միայն ունի: Այո՛, մեր բոլոր թանկագին հնությունները փչանում են, կորչում մեր սարսափելի անտարբերության պատճառով. հոգևոր կառավարությունը ամենևին հոգ չէ տանում, իսկ ժողովուրդը վաղուց արդեն չգիտե, թե ինչ են մեր հռչակավոր հին ուխտերը. անցյալի հետ գործ չունի և միայն իր «եսի» քարացած կուռքին է երկրպագում: Մնում է, ուրեմն, որ ժամանակն ու անտերությունը լափեն, վերջացնեն ամեն ինչ:

Վանքի ձախակողմյան դասից հարավային պատի փոքրիկ դուռը տանում է Գրիգոր Տաթևացու գերեզմանի վրա շինած փոքրիկ մատուռը, որի ամբողջ մարմինը, ինչպես վերև հիշեցի, սրահումն է գտնվում: Նեղ տեղ է, երկու մարդ հազիվ կարող են միմյանց մոտ կանգնել, և մութ է, ոչ մի տեղից լույս չի գալիս: Գերեզմանը շատ ուխտավորներ ունի, ամեն ժամանակ ճրագներ են վառվում նրա վրա: Պատից կպցրած է մի պատկեր, որ ներկայացնում է մի քանի հայ վարդապետներ, որոնցից մեկը ինքը՝ Տաթևացին պիտի լինի: Այդտեղ դրած է մի փոքրիկ սնդուկ, որի մեջ պահվում են այս հայտնի հոգևորականի եպիսկոպոսական զգեստն ու հողաթափերը, նույնպես և մի ձեռագիր փոքրիկ ավետարան, որ նրա ձեռքովն է գրված: Զգեստը

մեզ ցույց չտվեցին, թեև խնդրեցինք¹, բայց ավետարանը տեսանք: Մաքուր և ընտիր մազադաթի վրա գրած մի շատ գեղեցիկ ավետարան է՝ մանրատառ, յուրաքանչյուր երես երկու սյունյակի բաժանած, ունի շքեղ մետալլական կազմ, որ այս կողմերի գործ չէ: Գրքի մեջ կան շատ նկարներ և պատկերներ, իսկ վերջում մի երկար հիշատակարան ոտանավորի ձևով, որը կարդալիս մարդ իսկույն հիշում է Տաթևացու ուժեղ ոճը: Գրքույկը պահվում է մի ձեռագործ պահարանի մեջ, որ տեղական բարբառով «ղավլուխ» է ասվում: Դա ունի մեր այժմյան ծրարների նմանությունը, պատրաստած է մետաքսյա ծիրանագույն կտորից և զարդարած ասեղնագործ նկարներով: Ավանդությունն այժմ էլ ասում է, թե այդ ծրարը շինել է Տաթևացու քույրը, ինչպես հիշում է և Սարգիս եպիսկոպոս Ջալալյանը իր ճանապարհորդության մեջ: Բայց կարելի է չհավատալ այդ ավանդությանը: Տաթևացին ապրել է մեզանից 500 տարի առաջ, իսկ այդքան ժամանակ այդ շորի կտորը չէր կարող այդպես լավ մնալ. տեսնողն ասում է, թե այդ ձեռագործը երեկ չէ, մյուս օրն է դուրս եկել մի օրիորդի ձեռքից: Բայց եթե ընդունենք էլ, որ «ղավլուխ» մի կամ երկու դար մեզանից առաջ է գործած Սյունյաց աշխարհում, լավ հասկացողություն կկազմենք սյունեցի կնոջ «ձեռքաջրի» մասին, որ այնքան գեղեցիկ է և նուրբ: Ո՞ւր է կորել այդ կատարելագործված արհեստը, և ինչո՞ւ սյունեցի կինը կոպիտ և հաստ գործվածքներ է միայն կարողանում պատրաստել՝ այդ մի հանելուկ է, մեկն այն հանելուկներից, որոնք մեր պատմական կյանքի ամենամթին կողմերից են ծնունդ առել:

Ս.Գրիգոր Տաթևացու գերեզմանը համբուրելով՝ մենք էլ մի մեծ մոմ վառեցինք: Փույթ չէ, որ Տաթևացին այժմ ունի թշնամիներ. փույթ չէ, որ Մխիթարյան կաթոլիկ պատվելի վարդապետները ատելությամբ են հիշում նրա անունը. Տաթևացին մեր եկեղեցու հարգելի պաշտոնյաներից մեկն է, նախանձախնդիր նրա ժողովրդական ոգու ազատության և անկախության: Եվ մեր եկեղեցին չի մոռացել նրան, հիշում է նրա անունը հայրապետների շարքում: Բավական չէ, որ նա, լինելով Հովհան Ռոտունեցու ընդունակ աշակերտը, բազմաթիվ աշակերտներ է պահել և լուսավորել, բավական չէ, որ կրոնական մատենագրությունը հարստացրել է իր մեկնությունների ահա-

¹ Այս մասին ես իմ զանգատը հայտնել եմ «Մշակ» լրագրում: Առհասարակ, Տաթևի հին անոթներից, զգեստներից և զարդերից ոչինչ չտեսանք: Բայց մի ռուս պաշտոնյայի ցույց են տվել, և նա ինձ ասում էր, թե բավական լավ բաներ են. մանավանդ գտվում էր մի եպիսկոպոսական թագ, որի թանկագին ակները հանված են, հափշտակված: Օտարագզի այցելուին ցույց էին տվել, բայց մեզ պատասխանում էին «ոչինչ ոչինչ...» Գուցե մեր շատ հասարակ մահկանացու լինելն էր պատճառը...

գին հատորներով. այս ամենը բավական չէ: Տաթևացու մեծ ծառայությունը այն է, որ եռանդով մրցել է կաթոլիկ ունիթոռների հետ և միանգամայն չի թողացել, որ պապականությունը մատ խառնե մեր եկեղեցու գործերի մեջ: Նրա նպատակն է եղել եկեղեցին պահել իր հնավանդ դրության մեջ և երբ մի անգամ իր աշակերտների հետ Վասպուրական էր գնացել, տեսնելով Աղթամարա հակաթոռ կաթողիկոսի արարմունքը, որ ժողովրդի մեջ խռովություն էր ձգում (այժմ այդպե՞ս չէ), չի դիմանում և գահընկեց է անում խռովարարին, քարոզում է ժողովրդին, որ այդպիսի մասնավոր աթոռներ չճանաչեն, Էջմիածնին հպատակվեն: Այդպիսի գործերի պատճառով են Մխիթարյան հայրերը թշնամությամբ հիշում Տաթևացու անունը: Կարդացեք Չամչյանի պատմության երկրորդ հատորը, տեսեք, թե ինչպես 18 դարու մարդը, մատը զցած մեր պատմության մեջ, խառնշտորում է, ուզում է հավատացնել, որ Գրիգոր Լուսավորիչ, Նարեկացի, Հովհան Օձնեցի՝ մի խոսքով մեր բոլոր հայտնի հայրապետները, պապական են եղել, իսկ Գրիգոր Տաթևացու նման «թանձրամիտ» մարդիկ են ստեղծել մեր այժմյան եկեղեցական կարգերը: Համարյա միննույն մտքերն է հայտնում և 19 դարու երկրորդ կեսի հեղինակը՝ Ն.Զարբանալյանը: Այսպես է եղել հայի ճակատագիրը. հայը դատապարտել է, պատժել է մի հային, որ քաջություն է ունեցել իր եկեղեցու անկախությունը պաշտպանել: Բայց, կրկնում եմ, մեզ ի՞նչ փուլթ: Տաթևացու հարգն ու պատիվը ճանաչողներ շատ կան. տեղական ժողովուրդը ամեն տարի խմբերով ուխտ է գալիս, իսկ երբ երաժշտություն է լինում, գալիս են, Տաթևացու զգեստը դուրս հանում, և այն ժամանակ, ամենքն են հավատացնում, որտեղից որ է, անձրև, առատ անձրև է գալիս:

Տաթևի վանքի վրա չտեսանք նշանավոր արձանագրություններ: Այս հանգամանքը զարմանք չպիտի պատճառե: Ռուսաց մի առած ասում է, թե «ամեն վանք իր ծեսն ունի»: Եթե ուրիշ վանքեր պատած են արձանագրություններով, որոնց մեջ հիշվում է, թե ով է ինչ շինել, ով է ինչ ընծայել, Տաթևը այդ տեղեկությունները իր վրա չի վերցրել, մի փաստ, որ հաստատում է, թե որպիսի փարթամ դրության մեջ է նա պահվել, և ինչպես են պահպանել այդ պատերը, թույլ չտալով ամեն մեկին արձանագրել, փորել՝ ինչ որ ուզում է: Բայց Տաթևն իրան ընծա տվողներին չի մոռացել, ամեն մի նվեր թղթի վրա է արձանագրվել: Այս միտքը մեզ տալիս է Օրբելյանը, որ իր պատմության առաջաբանի մեջ ասում է, թե տեղեկությունների մեծ մասը քաղել է հին նամակներից, կալվածագրերից և արձանագրություններից, որոնք պահ-

վում էին «յամուրս քարանձաին, որ ի սուրբ ուխտս հայրապետանոցիս Տաթև»: Նամակների, դաշնաթղթերի և կալվածագրերի մի բազմություն առաջ է բերում Օրբեյանը, իսկ մնացած շատերը, ինչպես ինքն է խոստովանում, զանց է անում ընթերցողին չձանձրացնելու համար: Բացի Օրբեյանի պատմությունից՝ Տաթևն ունի մի մեծ հիշատակարան, որի մեջ արձանագրվել են ոչ միայն պաշտոնական թղթերը, այլև անցքեր: Այդ հիշատակարանն է Տաթևի հայտնի «Քյոթուկը» (կոճղ), որի սկիզբն է, ինչպես լսել եմ, Օրբեյանի պատմությունը¹, իսկ հետո գրված է պատմության կիսատ-պռատ շարունակությունը: Իրավ, մի բարեկարգ վանքից, մի պարտաճանաչ միաբանությունից միայն կարելի էր սպասել այսպիսի օգտակար և համակրելի գործ: Եվ եթե ամեն ժամանակ հասկացող մարդիկ լինեին միաբանության գլուխ կանգնած, «Քյոթուկը» այժմ մեզ համար մի անգին հիշատակարան կլիներ: Սակայն ինձ չէր վիճակված տեսնել այդ հիշատակարանը, որովհետև նա վանքումը չէր, այլ գտնվում էր տեղային վարժապետի տանը՝ Տաթև գյուղում, ուր մնում է երկու տարուց ավել՝ չգիտեմ ինչ նպատակով: Ցավում որ, որ չկարողացա այդ գիրքը թերթել. թեև տեսնելու ցանկություն հայտնվեցավ, բայց ո՞վ էր մեզ լսողը: Այդ տեսակ գրքի տեղը վանքն է և միայն վանքը. ամեն մարդ, լինի նա թեկուզ վարժապետ, կարող է վանքում տեսնել և օգտվել: Ինչնիցե...

Ես վերևում ասացի, որ Սյունյաց եպիսկոպոսները, Տաթևում աթոռ հաստատելով, հավաքել բերել էին բազմաթիվ սրբություններ և մատունքներ: Դրանց մեջ ամենից հռչակավորն է եղել ոսկի խաչը, որի մեջ դրած է եղել Քրիստոսի արյունով ներկած խաչափայտի մի մասը: Սյունյաց իշխանները այդ հրաշագործ խաչին նվիրել են գյուղեր, կալվածքներ: Բայց հին եկեղեցին, ասում է Օրբեյանը, որ ս.Ներսեսի և Սահակի օրերիցն էր մնացել, շատ փոքր էր և անհարմար իբրև Սյունյաց մեծ վիճակի հայրապետանոց: Ուստի Հովհաննես եպիսկոպոսը իշխանների և գլխավորապես Փիլիպպե

¹ Օրբեյանի պատմությունը, որքան ինձ հայտնի է, երկու հրատարակություն է ունեցել: Առաջին անգամ հրատարակել է հայտնի Կարապետ վարդապետ Շահնագարյանը Փարիզում, 1859 թվին, հետո պ.Էմինը 1861 թվին, Մոսկվայում: Կարապետ վարդապետը կցել է իր հրատարակության մի բավական հետաքրքիր առաջաբան «Սյունիք» վերնագրով և բազմաթիվ ծանոթություններով բացատրել է Օրբեյանի պատմությունը: Բայց «Քյոթուկի» մասին նա ոչինչ չի հիշում, թեև գրքի վերջում գրած «հավելվածը», որ Տաթևը մի քանի առաջնորդների համառոտ կենսագրությունն է, իմ կարծիքով, այդ «Քյոթուկից» պիտի հանած լինի: Սարգիս եպիսկոպոս Ջալալյանը իր ճանապարհորդության մեջ գրել է բավական մեծ կտորներ մի ինչ-որ հին հիշատակարանից, որ դարձյալ նույն «Քյոթուկը» պիտի լինի: Ջարմանայի է, որ Կարապետ վարդապետը, չորս տարի Տաթևի վանքը կառավարելով, իր կողմից մանրամասն տեղեկություններ չի տալիս թե այդ գրքի և թե առհասարակ վանքի մասին

որդի Աշոտ իշխանի և նրա ամուսին Շուշան տիկնոջ օգնությամբ Քրիստոսի 895 թվին սկսում է շինել Տաթևի այժմյան վանքը, որ և վերջացնում է 11 տարուց հետո: Մա ինքն է շինել և ս.Երրորդության սյունը, որի մասին արդեն խոսել եմ: Վանքի օժման հանդեսին ներկա են եղել Սմբատ Բագրատունի թագավորը (Սմբատ Ա)¹ իր իշխանների հետ, Հովհաննես կաթողիկոսը (պատմագիր, Դրասխանակերտցի), Վասպուրականի առաջին թագավոր Գագիկ Արծրունին (Գագիկ Բռնավոր), Աղվանից Միմեոն կաթողիկոսը բազմաթիվ եպիսկոպոսների հետ: Այդ բարձաստիճան հյուրերի մոտ Աշոտ իշխանը Սյունյաց մյուս իշխանների հետ վանքին մի լայնատարած վիճակ է նվիրում: Եվ այնուհետև Տաթևը սկսում է հարստանալ, փարթամանալ, մեծանուն և հոչակ է հանում, թագավորներ և իշխաններ թանկագին նվերներով ուխտ են գալիս: Հենց սկզբում, ինչպես վկայում է Օրբելյանը, Տաթևի միաբանությունը 500 կրոնավորներից էր բաղկացած:

Պետք է այն էլ ասել, որ Տաթևի այդքան մեծ հոչակը, հարստությունը կապ ունի Սյունյաց աթոռի նշանակության հետ: Սյունյաց երկրի թե մարմնավոր և թե հոգևոր իշխանությունները ամենահին ժամանակներից Հայաստանի առաջնակարգ և հոչակավոր աթոռներից էին: Օրբելյանը մի ում Ղևոնդի գրած գահնամակի մեջ գտել է, որ Տրդատ թագավորի ժամանակ ճաշ էին նստում չորս հարյուր իշխաններ, և ամեն մեկի համար նշանակված էր առանձին տեղ և բարձ: Այդքան իշխանների մեջ գահագլուխ էին ութ իշխաններ, որոնց թվում էր և Սյունյաց իշխանը, որ եղել է երկրորդ հրամանատար արևելյան բոլոր կողմերի վրա և ձեռքի տակ ունեցել է քսանմեկ իշխան: Իսկ մեր գիտնական պ.Էմինի հրատարակած գահնամակի (կամ գահնեմակ) մեջ (История Армении Моисея Хоренского, եր.359), որ կազմել է Սահակ Պարթևը, առաջին տեղը բռնում է «առաջին իշխանն և մաղիսագն Սյունյաց տեր»: Այսպես և հոգևոր իշխանները²: Գրիգոր Լուսավորչի 36 եպիսկոպոսների մեջ յոթներորդ գահը աջ կողմից պատկանում էր Սյունյաց եպիս-

¹ Այդ հանդեսից 8 տարի հետո դժբախտ Սմբատ թագավորը գոհ գնաց Գագիկ Արծրունու և մյուս նախարարների զգվելի դավաճանության շնորհիվ և Յուսուփ ոստիկանի բարբարոսական հրամանով սոսկայի տանջանքներ կրելով՝ սպանվեց Երնջակ ամրոցի դիմաց: Մեր ազգի պատմությունը ընդհանրապես արյունով է գրված, բայց այս սիրելի և ողբալի թագավորի պատմությունը չափազանց սրտամաշ է, աղեկտուր

² Կարապետ վարդ.Շահնագարյանը իր ծանոթությունների մեջ աշխատում է ցույց տալ, որ Օրբելյանի այդ պատմությունը ճիշտ չէ: Անշուշտ այդպես չէր գրիլ, եթե տեսներ պ.Էմինի հրատարակած գահնամակը: Առհասարակ վարդապետը շատ անտեղի խստություններ է պահում իր ծանոթությունների մեջ Օրբելյանի վերաբերությամբ

կոպուսին: Այդ վկայում է Սարգիս կաթողիկոսը 1006 թվին հրատարակած շրջաբերական նամակի մեջ (Օրբել., Գլ. ԾԶ)՝ ասելով, թե այդ ժամանակվա Հովհաննես միտրոպոլիտը ներկայացրել է իրան 55 նամակ՝ զանազան կաթողիկոսների ստորագրությամբ՝ սկսած Գրիգոր Լուսավորչից մինչև ս.Սահակը՝ հունարեն գրով, և Սահակից մինչև իր ժամանակը՝ հայերեն գրով, որոնք հաստատում են Սյունյաց աթոռի գահերեցությունը: Եվ Սյունյաց եպիսկոպոսները մեծ աստիճան և փառք ունեին, միտրոպոլիտ էին անվանվում, գործ էին անում կաթողիկոսներին հատկացրած տիտղոսներ: Այդ առաջնորդներից մի քանիսի անունները հիշեցինք, տեսանք նրանց ջանքն ու եռանդը՝ Տաթևը շեն, հրաշալի դրության մեջ պահելու համար: Օրբելյանը չափազանց գովում է մանավանդ մյուս Հովհաննես եպիսկոպոսին (XI դար): Սրա ժամանակ, ասում է նա (Գլ. ԾԷ), Տաթևը զարդարվեցավ զանազան զարդերով, մեծամեծ սպասներով և գեղեցիկ կարգերով, լցվեցավ ճգնավորներով, աննման երաժիշտներով և բազմաթիվ արհեստավորներով: Տաթևը մի մեծ մայրաքաղաքի պես էր. վանքերի բազմություն կար շինված և ապրում էր հազար մարդկանց մի ամբոխ, որի աղոթքը Աստծու առաջն էր բարձրանում: Այդպիսի հարստության հոշակը գրգռում է պարսիկներին, որոնք, Արաքսն անցնելով, հանկարծ թափվում են վանքի վրա: Միաբանության մի մասը կոտորվում է, մյուս մասը՝ ազատվում ձորերի մեջ. պարսիկները կողոպտում են վանքի անհուն կարասիները, այրում են, կործանում Լուսավորչի եկեղեցին, բայց վանքի շինության վնաս հասցնել չեն համարձակվում: Անցնում է այդ ավերիչ լավան, միաբանությունը էլի հավաքվում է, Հովհաննես եպիսկոպոսը շինում է Լուսավորչի եկեղեցին, էլի զարդարում, հարստացնում է վանքը: XIII դարու վերջում միտրոպոլիտ է նշանակվում ինքը՝ պատմիչ Ստեփանոս Օրբելյանը. նրա հայր Տարսայիճ իշխանը նվիրում է վանքին գյուղեր և մի մեծ այգի, որ մինչև օրս կա և վանքինն է, գտնվում է Խոտ գյուղի մոտ: Մի կարճ ժամանակ միտրոպոլիտությունը Օրբելյանների իշխանական տան սեփականությունն է դառնում: Այսպես՝ Ստեփանոսից հետո միտրոպոլիտ ենք տեսնում Հովհաննես Օրբելյանին, որ միևնույն ժամանակ Սյունյաց մարմնավոր իշխանն է, կառավարում է երկիրը և, ինչպես վկայում են պատմությունները, մեծ նշանակություն և դիրք է ստանում բոլոր կողմերում:

Այս ամենն է պատճառը, որ Տաթևը, բացի անհուն շարժական կայքերից, ուներ և շատ անշարժ կալվածներ: Օրբելյանի հիշած դոկումենտներից

երևում է, որ Տաթևը զանազան ժամանակ նվեր է ստացել մինչև 47 գյուղեր և կալվածներ¹: Եվ ոչ միայն գյուղեր: Բաղաց վաղամեռիկ թագավորության ներկայացուցիչներից մեկը՝ Վասակ թագավորը, հաստատել է Տաթևի վրա Վայոց ձոր, Գեղարքունի, Փորակն, Հաբանդ, Ջուղա և Երնջակ գավառների իրավունքը: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ բոլոր կալվածագրերի մեջ ամենամեծ հաստատող ուժը նգովքն է: Թագավորը մի գյուղ է նվիրում և սարսափելի նգովքներ է կարդում այն մարդու գլխին, որ կհանդգնի այդ նվերը ետ խլելու: Անցյալ դարերի ոգին երևում է այդ թղթերի մեջ:

Այսչափ մեծ փառք ու հռչակ ուներ Տաթևը: Բայց որքան ժամանակը մեզ է մոտենում, այնքան էլ ընկնում է վանքը, կորցնում իր շուքն ու զարդը, մինչև որ հասնում է ներկա դրությանը: Ներկա դրությունը, ուղիղն ասած, բավական անմխիթար դրությունն է: Վանքը աղքատ է. նրա հարստությունները կողոպտել են զանազան անկուշտ ցեղեր, մի մասը ուղղակի հափշտակել են, մյուս մասը, անխնամ դրության մեջ թողնելով, փչացրել են, ոչնչացրել: Շինությունը երկար ժամանակ աստուծու ապաստան մնացած քանդվելու վիճակին է հասել: Գավիթի մի պատի վերևից մինչև ներքև մի մեծ ճեղք է գոյացել, այնպես որ առաստաղի ծանրությունը շուտով իրանը կանե, կթափե: Այդ գավիթի մի քանի քարերը թափվել են, ծակեր բաց արել, որոնց միջով երևում է դրսի լույսը: Մեծ-մեծ սալ քարերից կազմած կտուրը ամբողջ միաբանության և հոգևոր կառավարության աչքի աստաջ ծածկվել է խիտ խոտով, այդ պատճառով էլ ջուրը անցնում է, առաստաղից կաթում. խոտերը բույն են դրել նաև պատերի մեջ: Մեր գործիչները անձրևի մանրիկ կաթիլների հետ մրցել չեն կարողանում, նրանցից էլ ինչ լավ բան սպասես: Զարմանալի կերպով փոխվել է մեր վանքերի դերը: Մի ժամանակ նրանք

¹ Ավելորդ չեմ համարում դնել այստեղ գյուղերի և կալվածների անուններ, փակագծերի մեջ նշանակելով և նվիրողների անունները: Ծնեղ (Շահանդուխտ օրիորդ), Արծիվ և Բերդկաներիչ (Դավիթ եպիսկ.), Տաթև (Փիլիպպե իշխան), Նորաշինիկ (Հրահատ իշխան), Վարդավեր (Տիգրան նահապետ), Բեխ (անհայտ), որ հետո Ջևանշեր փոխում է իր Արուքս գյուղի հետ, Դարաստափ (Սողոմոն եպիսկոպոս), Մաճ (Քուպրիդուխտ իշխանուհի), Կարճավան, Հարժիք, Խորասանչիբակ, Գոտող վանք (Մմբատ Առաջին, Բագրատունի թագավոր), Յողունի, Բնունիք, Յուր, գետն Յուրա, Տանձատափ, Դեղնաձոր (Աշոտ իշխան Սյունի), Տաշու, Եղեղ (Բաղաջիք), Ծածարտ, Քարատնի (Շուշան տիկին), Հայիս (Համասպրունի իշխանուհի), Կտկույս (Մմբատ իշխան), Աղվերձ, Յուբականխոռ (մյուս Փիլիպպե իշխան), Տամվեք (Սուփիա տիկին), Տեղ (Շահանդուխտ թագուհի), Բոլորաքար (Փարաջ իշխան), Գորդեվանք, Խոշտատա տափ (Վասակ թագավոր), Գրվակ (նույն), Շոռոթն (Խարթ, Արտավազ և Սուփան իշխաններ), Խոտ, Ծաղկիկ (Դեն իշխան), Արիտ ավան (Սենեքերիմ թագավոր), Ձեռատի վանք (Հասան իշխան), մի գյուղ Բարկուշատում (անհայտ), Խողվանք գյուղ (անհայտ), Ամբրավաքար (Աշոտ իշխան), Բորոնի և Փերթիվանք (Տարսայիճ իշխան): Բացի այս գյուղերից՝ վանքը ստացել է և մի քանի մեծ այգի, առանձին հողեր: Վերջերում նվիրված են նաև Հալիձոր, Լձեն, Շնաթաղ և Լոր գյուղերը

էին պահպանում ժողովուրդը զանազան թշվառությունների ժամանակ, ապաստան և կերակուր էին տալիս խեղճերին ու պանդուխտ տառապյալներին. ազգն ուներ շեն ու հաստատ տներ, որոնց շեմքից դուրս էին գալիս օրհնություն, ողորմություն, օգնություն և լուսավորություն: Իսկ այժմ իրանք՝ վանքերն են անճար ու անտեր մնացել, ապրում են հանգամանքերի ողորմությամբ և կարոտ են, այնքան կարոտ... Շենը ավերվում է, ավերակը փոշիանում է: Ինչի՞ցն է...

Այս տարի Էջմիածինը, ինչպես հայտնի է, կարգադրել է մի քանի վերանորոգություններ անել Տաթևի վանքում՝ նշանակելով 6000 ռուբլու մի գումար, որի մի չնչին մասը, կարծեմ 1400 ռուբլի, վանքի արդյունքից պիտի վերցվի, իսկ մնացածը ժողովարարությամբ պիտի ձեռք բերվի: Արժ. Համազասպյան վարդապետը մի քանի թեթև բաներ շինել է տվել և, ինչպես երևում էր, շատ էր մտածում, թե ինչպե՞ս և որի՞ օգնությամբ շինել տա ամենահարկավոր բաները, որ դժբախտաբար մեծ գումար են պահանջում: Երկու օրից հետո հայր սուրբը մեզ հետ Գորիսից ճանապարհ ընկավ Շուշի և այդտեղից՝ Գանձակ, Բաքու, Թիֆլիս՝ տանելով իր հետ նվիրատվությունների թղթեր: Տեսնենք՝ ինչ կտան հայերը այդ թանկագին հնությունը վերջնական կորստից ազատելու համար:

Բայց ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ Տաթևը ժողովարարությամբ պիտի վերանորոգվի. նա այժմ էլ բավական կալվածներ ունի, որոնք, ինչպես լսել եմ, տարեկան մինչև 8000 ռուբլի արդյունք են տալիս: Արդյունքը Էջմիածին է գնում. և եթե այդտեղ վերանորոգության, շեն և բարեկարգ դրության մեջ պահելու գաղափար լիներ, մինչև այժմ այնքան անխնամ չէր մնա այս շինությունը. կարելի էր տարեկան մի թեթև գումար հատկացնել վերանորոգության համար, փոքր առ փոքր կշիներին, կպահպանեին, և այսօր այս տեսակ դրություն չէինք տեսնիլ: Վանքի կալվածները վեճի տակ են, թեև միշտ վանքին են պատկանել և նրան են տուրք տվել: Ի՞նչ հաստատություն է հարկավոր, բավական չէ այն, որ վանքի այժմյան գյուղերից մի քանիսը 1000 տարի սրանից առաջ են վանքին նվիրված...

Տխուր և գառամյալ կամարներին մեր խոնարհ ողջույնը տալով՝ դուրս գնացինք, տեսանք մի քանի սենյակներ, որոնց մեջ հայտնին է հինավուրց սեղանատունը. դա մի երկար և լայն սենյակ է, որի երկու պատերի տակով դրված են երկար քարե սեղաններ, իսկ նրանց ետևը՝ քիչ բարձր շինած՝ ծալապատիկ նստելու համար: Վերևի ծայրում հաստատված է մի քառա-

կուսի քարե սեղան, ըստ երևույթին, մեծավորի համար: Մենյակի հարավային լուսամուտը, որ հատակից շատ բարձր է, նայում է Տաթևի ջրի ձորին, որը ես արդեն նկարագրել եմ: Ձորն այստեղ այնքան խոր չէ, բայց ջուրը էլի բարձր աղմուկն է բարձրացնում, այդ լուսամուտով սեղանատունն ածում: Ավելորդ է ասել, որ այդ սեղանատունը այժմ անհարկավոր բան է. վանքը, բացի փոխանորդ հայր սուրբից, ունի երկու վարդապետ միայն: Սեղանատան կից սենյակումն է տեղավորված հոգևոր կառավարությունն իր անդամներով և ծառայողներով:

Ասածներին վրա պիտի ավելացնեն և այն, որ հարավային գավիթը, նրա բակի մի մասը և վանքի շուրջը մեծ-մեծ տափակ գերեզմանաքարերով մի քանիսն ունին արձանագրություն: Հրաշակագործ է մի գերեզման, որ վանքի արևելյան կողմում է. երբ նրա վրա ջուր են ածում, պատմում են տեղացիները, իսկույն անձրև է գալիս:

Տաթև անունը մեր մատենագրության մեջ բացատրում են նրանով, որ այստեղի սկզբնական եկեղեցին շինված է եղել Ստաթե առաքյալի անունով. Ստաթեն աղավաղելով՝ Տաթև է դառել: Բայց ժողովուրդն իր բացատրությունն ունի: Ասում են, թե երբ ճարտարապետը շինում, վերջացնում է վանքը, հասնում գմբեթի ծայրին, տեսնելով ձորի սարսափելի խորությունը, վախում է, ինդրում Աստծուց թևեր, որ թռչե, իջնե ձորի մյուս կողմը: Եվ աստված թև է տալիս (տա թև). ճարտարապետը թռչում է, գնում հեռու աշխարհ: Բայց վանքի մեջը փայտով լցված է մնում, ոչ ոք չի իմանում, թե ինչպես թափե գերաններն ու ասկալան, որոնց վրա շինված է եղել կամարակապ կտուրը: Ու գնում են ճարտարապետին որոնելու, հեռու տեղեր են գնում, որ հասցնեն, թե ի՛նչ անեն: Բայց չեն ճարում, և հեռու երկրների մարդիկ ասում են, որ դռների մոտ մի սեպ կա, այդ սեպին զարկեցեք, բոլոր փայտերը կթափվեն: Գալիս են, այդպես էլ անում. և այն օրվանից վանքը կանգնած է:

Երեք ժամ տևեց մեր այցելությունը և երեք ժամվա ընթացքում իմ ճանաչած ու տեսած Տաթևն այս է:

Տաթև, Տաթև... Սյունյաց աշխարհի նվիրական սրբությունը, փառքն ու պարծանքը: Նրա անունը, մեծությունը անցյալումն է: Նրան սիրել, փայփայել է հայր՝ Բագրատունյաց, Բաղաց և Ռուբինյանց թագավորներից սկսած

մինչև Լծենեցի¹ վերջին գյուղացի մուղղուսին: Մյունյաց տիկիներն ու օրիորդները զարդարել են նրան իրանց մատների գործվածքներով, հեռավոր Հնդկաստանը պատվական գոհարներ է ուղարկել նրա համար, ոսկի ու արծաթ միացել են նրա փարթամության համար: Նա կյանք է եղել, հավատացյալների հույսն է եղել, մի կենտրոն, առանց որի՝ չի կարողացել ապրել մի փառավոր պատմական աշխարհ: Այդքան փափկություն ու զարդարանք ծերացրել են նրան: Այժմ ի՞նչ է: Ուսերը ներս քաշած, ճիտը ծռած, ոսկորը թողած մի ծերունի, որ այլևս չի կարողանում դիմանալ այս աշխարհի ցավերին: Նրան մոռացել են, նրան թաղել են, որ այդպես միայնակ ու անօգնական վերջացնե իր տխուր անկարողության, ուժաթափության օրերը: Մի բան միայն դեռ անընդհատ եռանդով սիրում է նրան. դա բնությունն է, որ հազար տարի պահել է նրան, զգվել, փայփայել: Միրել է և սիրում է այդ ծերուկին. պահել է և պահում է այնպիսի տեղ, ուր ինքը ազատ, ինքնակախ պիտի լիներ, ուր մարդու համար տեղ չկա, այնպիսի մի տեղ է պահում, ուր վախ, հիացմունք ու զարհուրանք խառնված են գեղեցկություն կազմելու համար:

Յոթն տարուց հետո՝ 1895 թվականի օրերից մեկը, կբերե մի ժամ, երբ կլրանա Տաթևի շինության 1000 տարիների շրջանը: Փոքր շրջան չէ, Հայաստանի մեջ այսչափ երկարակյաց հնություններ շատ և շատ քիչ կան: Աչքի առջև ունենալով մի այսպիսի Տաթև՝ չարժե՞ այն ժամանակ կատարել հազարամյակի տոնախմբությունը, հորբլյանը: Թեև դեռ շատ վաղ է, բայց շատ լավ կլիներ, եթե մեր մեջ մի այսպիսի միտք ծնվեր: Կարելի է այդ հորբլյանը համեստ կերպով կատարել. որոշել մի օր, գնալ, տեսնել հոչակավոր ծերունուն, լսել նրա կամարների տակ սաղմոսերգություն, տեսնել Մյունիքը և մտածել, լավ մտածել Տաթևի պահպանության մասին: Այս էլ բավական է, այս էլ մի նշան կլինի, որ հայ ազգը գիտե պատվել իր անցած գնացած հայրերին ու նախահայրերին, ուշադիր է նրանց գործերին և սրտով հարգում է նրանց շինած սրբարաններից մեկը, որ այժմ հեռու է քաղաքից ու կենտրոնից, առանձնացած, հնության փոշիների մեջ կորած, մոռացված: Եթե հեռավոր հայերն էլ զանց անեն, գոնե տեղացիները, շուշեցի, բաքուցի, գանձակեցի հայերը չպիտի մոռանան... Տեսնենք:

¹ Տաթևի արևմտյան կողմում՝ Գազբելի շրջակայքում, կան հետևյալ հայաբնակ գյուղերը. Լծեն, Շնաթաղ, Լոր, Մևարանց

Վանքից հեռանալուց առաջ այցելում ենք դպրոցը: Վանքը մտնելիս ես ասացի, որ շրջապարսպից դուրս՝ մեծ դռների մոտ, կա մի երկհարկանի երկար շինություն, որի երեսը դարձրած է դեպի արևելք՝ դեպի Որոտնա ձորը. այժմ պիտի ասեմ, որ այդ շինության ներքին հարկը հին է, վերինը՝ նոր, և դպրոցը վերին հարկի մի սենյակումն է գտնվում. այդտեղ նստած էին քսանաչափ երեխաներ, որոնք կարդում էին: Մյունիքի՝ իմ այդքան տեսած և լսած գյուղերի մեջ այս էր մի հատիկ հայոց ծխական ուսումնարանը. բավական չէ այսքան ժողովրդի համար, շատ քիչ է¹: Տաթևի հոգևոր կառավարությունը, բոլորովին պարզ է, ժողովրդի կրթության մասին չի մտածում: Վերևից իջանք ներքև՝ ներքին հարկը տեսնելու համար: Բայց լավ կլիներ, եթե չտեսնեինք: Սենյակները արտաքին են շինել, լցված են աղբով և անմաքրություններով, որոնք զարշելի հոտ են տարածում: Այժմյան այդ արտաքինները առաջներում միաբանների խուցերն են եղել: Ինչքան տգեղ բան, ինքներդ դատեցեք: Եթե այս սենյակները ավելորդ լինելու պատճառով են ապականվել, ես կասեմ, թե ինչի կարող էին հարկավորվել նրանք: Այս դպրոցը կարող է մեծանալ, ինչպես ասում են, «մի բանի նման դառնալ» միայն այն ժամանակ, երբ հարմարություն կտա շրջակա ուրիշ գյուղացի մանուկներին անդադար հաճախել, ուսում ստանալ: Տաթևը շրջապատված է ութ թե ինն հայաբնակ բազմամարդ գյուղերով, որոնք միմյանց հետ կանոնավոր հարաբերություն չեն կարողանում պահել տարվա բոլոր ժամանակներում, այնքան երկիրը դժվարություններ ունի ստեղծած: Դպրոցը, ուրեմն, կմեծանա այն դեպքում, երբ մյուս գյուղացիները կարողություն կունենան վանքում մնալ: Վանքը կարող է շատ աշակերտներ պահել իր մեջ, դրա համար դատարկ և կիսավեր շինություններ շատ ունի. եթե լավ մտածեն, մանավանդ աշխատեն, դպրոցը կարող է մի լավ կենտրոնական դպրոց դառնալ և տարածել ուսումը, որ այնքան հարկավոր է այս կողմերում: Եվ իմ հիշած կեղտոտ խուցերը, եթե մաքուր և լավ պահվեին, գյուղական երեխաների համար հիանալի բնակարան կարող էին դառնալ: Այսքան էլ պետք է ասեմ, որ ուսումը այդ դպրոցում ձրի պիտի լինի. վանքը իր հաշվով ուսուցիչ և դպրոց պահելու կարողություն ունի: Եվ այն ժամանակ գործը կկանոնավորվի, ամեն մի գյուղացի իր հացը վեր կառնի, կգա կնստե, գիր կսովորե: Մտածո՛ղ չկա, մտածող. եթե լիներ, ինչո՞ւ մի դպրոցի ներքին

¹ Մյունիքում կա և երկրորդ ծխական դպրոց Միսիանի գավառակում, Բռնակոթ գյուղի մեջ, որ ես չեմ տեսել

հարկը այսպիսի խայտառակ դրության մեջ կլինե՞ր... Այստեղ է երևում այն հրեշը, որ անտարբերություն է կոչվում և որ այսպես մաշում, բարակացնում է վանքը:

Այսպիսի տխուր մտքերով պաշարված՝ մենք գնացինք վանքի բակը, ձի նստեցինք և վերջին տխուր բարև տվինք Սյունյաց աշխարհի հռչակավոր անմոռանալի հնության...

Գետը խոր է ընկել... Ամեհի ժայռերը երկու կողմից եկել են մոտեցել, ճակատ առ ճակատ կանգնել, քարի ահագին բեկորները առաջ են քաշել, նեղացրել փոքրիկ անցքը: Ներքևում՝ այդ ժայռերի նեղ արանքում, օր ու գիշեր մի կատաղի տեսարան է կատարվում: Ուռած, փքված ջուրը, որ վերևում, շատ հեռվից է սաստիկ առաջ մղվելու ահագին զարկ ստացել, աղաղակելով գալիս է թափվում այստեղ, կարծես մի բանից փախչում է, ազատություն է որոնում: Բայց ո՞վ է ազատություն տվողը. այստեղ ավելի ու ավելի կուչ է գալիս, դառնում քարային գլխապինդ հսկաների խաղալիք. պար է գալիս նրանց ոտների տակ, հորձանք տալով, ալիք ալիքի զարնելով՝ կատաղի հուսահատությամբ ջրային լեզվակներ է հանում, քարերը լիզում, հղկում, սպիտակացնում: Նա ինքն էլ ամբողջապես սպիտակել է, փրփրել. հարձակվում է, վազում, ամեն մի անկյուն, ամեն մի խոռոչ մտնում, որ նրան ավելի ևս կատաղեցնելու համար ժայռերը բաց են արել իրանց մեջ: Հարձակվում է, բայց իզուր, մեկ էլ ճակատի վրա ետ է դառնում, պտտվում է, ջրային շարժուն շրջանակներ է կազմում: Եվ մենակ մնացած թուփերը, որոնք այնպիսի համարձակությամբ կպել են ճեղքվածքի կրծքին, միշտ մնում են այն մանր կաթիլների տարափի տակ, որ գետն է ցրվում իր ավելորդ բարկությունից: Իսկ մանր, աննշան մարդը կպչում է ժայռի որևէ ուսին, սիրտը դող բռնած թեքվում է, խտտում է մի ծայր, որ դուրս է ցցվում ժայռի գլխից և նայում է, տեսնում այդ վայրենի, ահեղ տեսարանը: Եթե նա հանկարծ պոկ գա այդ ծայրից, ընկնե՞ ցած... օ՛, մտածել անգամ չի կարելի, թե քանի-քանի պտույտներ պիտի անե ջրի հետ, տրորվի... Ջուրն այդպես կրակ կտրած, այդ խոր ու անձուկ անցքից ազատվելու համար ուժն ու կարողությունը մի տեղ է հավաքում և գլխի վրա ցցվում է, ընկնում մի նեղ ծակի մեջ: Դա ինքն է Սատանի կամուրջը:

Սատանի կամուրջ: Ո՞վ է շինել այդ քարյա հրաշքը, որ այնքան երկար տեղ վերևից փակում է գետի երեսը: Այս կողմից՝ վերևի կողմից, ուր գետն է ներս խրվում, կամուրջի քարային կողքն է երևում, սեպացած, միապաղաղ

քար, որ լայն ընկած է և ձորի հատակում մի ծակ է թողնում գետի համար. մթին ծակ է, այնպիսի մի դժոխային անձկություն և մռայլ տեսք ունի, որ նայողի մազերը փշաքաղում են: Եվ մթության, աղոտ կիսալույսի մեջ երևում են ահագին, հրաշալի ստալակտիտները, որոնք սպիտակ մեծամեծ մոմերի պես կախ են ընկել ջրի վրա: Ի՞նչ կա նրանց ետևը, ի՞նչ է ծակը, այդ միայն սատանան գիտե: Նրա կամուրջը վերնից դեպի ցած, այսինքն՝ գետի ուղղությամբ, շատ է լայն, հասարակ կամուրջի, և ոչ միայն հասարակ, չափ չէ, և այդքան տարածության վրա ոչ մի բան չի ցույց տալիս մարդկային ձեռքի որևէ հետքը: Քարախառն հող է. բոլորովին նման այն ճանապարհին, որով եկել ենք և պիտի գնանք: Այդ տարածության կես մասը չոր ու ցամաք է, կեսը՝ ծածկված հիանալի կանաչ խոտով: Գնացեք դեպի ցած կամուրջի մեջքով, կգնաք, հանկարծ կտեսնեք, որ նա կտրվեց, ձեր առաջ բացվեցավ նրա ներքին կողը, որ նույնպես քարային է. այդտեղ գետի ծակը չէք տեսնիլ, կտեսնեք միայն գետը, որ դուրս է թափվում և առաջ վազում: Հատակը, վերջապես, քիչ լայնանում է, և խեղճ գետը իր աղմկաշատ ընթացքն է շարունակում: Իսկ մարդը մնում է շվարած իբրև ամեն ինչն իմանալ, հասկանալ ցանկացող արարած, որ այստեղ մնում է միանգամայն անգետ: Մտքին ու խելքին շատ է գոռ տալիս, բայց իզո՛ւր... Սատանայի կամուրջը գաղտնիք հայտնող չէ. ոչ ոքին, բացի միայն այն ջրից, որի վրա է ընկած:

Այս է Սատանայի կամուրջը:

Նրա աջ կողմին Տաթևի սարը մի ահագին ժայռ է դուրս ցցել, մի լայնանիստ, կարմրախայտ ժայռ, որի տակից ջրեր են բխում և ոչ թե հասարակ, այլ հանքային ջրեր: Մի լճակ կա այդտեղ, որ լիքն է «երկաթաջրով». այդ լճակից ջուրը գետնի տակով տարված է և թափվում է չորս ցածրիկ պատերով շրջափակված մի տեղ, ուր չորս փոքրիկ քառակուսի ավազաններ կան շինած լողանալու համար¹: Ջուրն առատ է, լճակն ու ավազանները միշտ լիքն են: Մեր մի ընկերը իսկույն հանում է շորերը և մտնում լճակի մեջ: «Ուխտ՝ յ, գոչում է նա, մախմար է, կակուղ». և այնպես ուրախական աղաղակներ է արձակում, այնպես լավ է երևում ջրի մեջ, որ մենք երկուսս էլ վարակվում ենք և նույնպես հանվում, ջուրը մտնում: Հոկտեմբերի 5-ն էր, ինչպես հիշում է ընթերցողը. առավոտն անձրև էր եկել, սարն էլ ձյունել, երկինքն այժմ էլ պղտոր էր, բայց արեգակն այնպիսի տեղ էր հասել, որ ցույց

¹ Ավազանները շինել է Տաթևի այժմյան փոխանորդը

էր տալիս մեզ իր դեմքը: Ահա այդպիսի ժամանակ մենք լողանում էինք բաց երկնքի տակ՝ մոռացած զգուշությունն ու խելքը: Բայց մեզ պահպանեց կամրջի ձորի խորությունը: Ջուրը ցուրտ չէր, շատ էլ տաք չէր, ուներ մի աստիճան, որ ոչ մրսացնում էր, ոչ տաքացնում: Երկարացած, ընկած էինք ջրի մեջ, ականջ էինք դնում, թե ինչպես էր նա դուրս թափվում մի քարի տակի խոռոչից և խուլ աղմուկ էր հանում, կարծես եփ էր գալիս: Պատկած ժամանակ զգում ես հանկարծ, որ մի բարակ բան նշտրակի պես ցածրից խփում է կողքիդ. նայում ես ջրի պարզ հատակին, տեսնում ես, որ քեզ ծակողը ջրի մի փոքրիկ, շատ փոքրիկ ծորակն է, որ գետի՞նը ծակել է և դեպի բարձր է խփում, հասնում ջրի մակերևույթին և փոքրիկ պղպջակներ կազմում, տարածում մի փոքրիկ շրջանակի մեջ: Բայց ամեն տեսակ զվարճություն, քեֆ վերջ ունի. մեր փոքրիկ քեֆն էլ վերջ ունեցավ, մենք դուրս եկանք:

Այժմ թող ընթերցողս գա իմ ետևից: Այդ լճակի մոտից ես քիչ դեպի ցած գնում եմ բարձրահասակ բույսերի միջով. մի նեղ և դժվար տեղով իջնում եմ կամրջի վրա և երեսս դեպի վեր, դեպի հյուսիս եմ դարձնում, որտեղից գետն է գալիս: Ես իսկապես կամրջի վրա չեմ, այլ կանգնած եմ այն ժայռի ծայրին, որ կամրջի վերին կողմից սեպացած է գետի վրա. ուրիշ մեծ ժայռեր գալիս են վերևից, իջնում են իմ կանգնած տեղի վրա, սանդուղքի աստիճանի պես մի աստիճան են կազմում, որ մարդու հասակի չափ բարձրություն ունի: Ժայռի ծայրը, ուր ես եմ կանգնած, երկար ընկած է այդ աստիճանի տակով. այդ ծայրով էլ գնում է մի նեղ, ձեր երևակայածից շատ նեղ կածան: Մարդու հասակի բարձրությամբ կանգնած աստիճանը, ասենք ժայռի վերին ուսը, ամբողջապես ծածկված է կանաչ երկարահասակ խոտերի տակ: Այդ խոտերը կախ-կախ են ընկած, իսկ նրանց միջով ծլծլում է ջուրը: Որտե՞ղից է նա գալիս, ես չեմ տեսնում: Մոտենում եմ այդ կանաչազարդ բաշին, տեսնում եմ, որ ջուրը, վերևից գալով, խփում է խոտերի մեջ, մանր կաթիլներ է դառնում, փշրվում և ցրվում ամեն մի հատ խոտի վրա: Դա մի մշտական, բայց փոքր և սովորականից շատ գեղեցիկ անձրև է, որ անասելի ախորժակ է պատճառում ինձ, երբ ցողում է իմ դեմքն ու մազերը: Բայց ամբողջ ջուրը չէ այդպես փշրվում, փռշիւնում. կան և ամբողջ ծորակներ, որոնք, խոտերի արմատների մեջ ցիրուցան դառած, գալիս են հավաքվում և ծլծլում քարի բաշն ի վեր: Այդ ջրերն էլ կրային ջրեր են, սովորական ջրից քիչ տաք, որ ինչպես կիր այրում է կաշին: Բայց միայն ծլծլալն ու անձրևելը չեն այդ ջրերի գործը. նրանք կազմում են հազարավոր գեղեցիկ, բազմատեսակ, մանր

ստալակտիտներ. ձեռքդ տար կախ ընկած պարարտ խոտերի տակը, փույթ չէ, որ նրա վրա ծլում են ջրերը, որքան կամենաս, կրային ճիպոտներ կպուկես. մեծ ու փոքր, երկճյուղ, օձաձև, կանաչ և սպիտակ ճիպոտներ, որոնց սուր ծայրերից անդադար ջուր է ծլում:

Չպետք է կարծել, թե այս քարային բաշը կարճ է. ո՛չ, կաճանը երկար է գնում դեպի բարձր, գետն ի վեր: Ահա մի սարսափելի վատ տեղ. կաճանը ցած է ընկնում, ավելի դժվարանում, այնքան նեղ է, ժայռի շուրթ է, ի՞նչ կաճան, որի տակ գետն իր մոլեգին պտույտներն է անում: Այդտեղով գնալու համար մեծ հմտություն է հարկավոր. կաճանն ամբողջապես ջրոդոդ է դառած, կրային զանգվածը, որ գոյանում է ջրերից և շերտ է կապել քարի վրա, լայրծուն է. չպետք է կողքիդ նայես, եթե ոչ, ուշքդ կխանգարվի, գլուխդ պտույտ կտա, և դու գետի մեջն ես: Ահա մեր հեքիաթների մեջ հիշած մազե կամուրջներից մեկը, այս սարսափելի կաճանը. քայլելով առաջ ես գնում, մի քիչ բարձրանում, տեղը մի քիչ լայնանում է. մի քանի փոքր ծառեր կան, և այդ ծառերի մեջ շինված է մի շատ փոքրիկ տնակ, որ ճգնավորի բաղնիս է կոչվում: Բայց ի՞նչ տուն. մի պատ է, որ մի մեծ ժայռի է հենվել, գոյացել ամեն կողմից ծածկված մի տեղ, ուր լողանում են: Երեք տեղից ջուր է թափվում. Լճանում՝ վերևից, ետքից և հատակից. երեք ջրերն էլ հանքային են, որոնցից չգիտեմ թե որն է մեծ և հաստ ստալակտիտներ կազմում: Այդտեղ ցույց են տալիս քարը, որի վրա ճգնավորն է նստել և պատի մեջ շինած խորշը, որտեղ շորերն են դնում: Ո՞ր ճգնավորն է շինել այս զարմանալի բաղնիսը, այսպիսի մի տեղ, որ թեև շատ գեղեցիկ է, բայց և շատ դժվար մատչելի: Եվ արդյոք ճգնավորն է շինել. չեմ կարծում. ավելի հավանական է ենթադրել, որ դա էլ Տաթևի առաջնորդների գործն է: Իսկ ժողովուրդը ճգնավորի բաղնիս է ասում այն պատճառով, որ ամեն մի դժվար տեղում շինած տունը կամ եկեղեցին անպատճառ ճգնավորի է վերագրում:

Բայց ինչպես ուզում է, թող լինի, այդ լոգարանը մի հրաշալի բան է. շինված սարսափելի ապառաժի կրծքի վրա. կատաղի գետի վրա կախ ընկած՝ հավաքում է իր մեջ երեք առատ հանքային աղբյուրներ: Իսկ հեռվից նա շատ գեղեցիկ է երևում թե՛ իր դիրքով, թե՛ ճանապարհով և թե՛ իր փոքրիկ ծառերով: Ուզում եք տեսնել այդ գեղեցկությունը, գնանք, ետ դառնանք, անցնենք կամուրջի մյուս կողմը: Այդտեղ ահագին ժայռն ունի մի երկար խոռոչ, որ բավական հարմար է գնալու համար. գնանք, նստենք ժայռի ծայրին, մեկ էլ տեսնենք գետի կերպարանքը, ինչպես ես նկարագրեցի վերևում,

այս գլխի սկզբում: Յույց են տալիս այս իսկ ժայռի մի հատվածը, որ առաջներում կապած է եղել այստեղ և հարմար ճանապարհի բացած դեպի ճգնավորի բաղնիսը, բայց այժմ կամուրջը փլվել է, և ձեր ու բաղնիսի մեջ մի մեծ խորություն է գոյացել: Ահա նա՝ այդ բաղնիսը, աչքի առաջ է: Ահա այն կանաչագարդ բաշը, որ նրա մոտից սկսվում է ու մինչև կամուրջի ծայրը գնում. որքան հրաշալի են խոտերը, որոնք կախ-կախ են եղել, բազմերանգ շարաններ կազմել: Հանքային ջուրը տեղ-տեղ դեղնացրել է նրանց, տեղ-տեղ կարմրացրել, և նրանք ծանրացել են, հրաշալի ծուպերի պես կախվել: Ես այդտեղից երկար նայում էի այդ զարդարուն բաշին: Եվ մտածում էի. ահա հարուստ բնության զգված-փայփայած անկյունը, այս ձորը, որ այդպիսի հրաշքներով է լցված. ո՞վ գիտե, թե ինչե՞ր է արտադրում բնությունը, ի՞նչ հարստություններ է պահում իր ծոցում: Ո՞վ գիտե, քանի-քանի տեսակ հանքային ջրեր են ապառաժի տակից դուրս գալիս և ոչնչի, ոչ մի բանի չհարկավորվելով, գնում են, ծլում, թափվում գետի մեջ: Այդ խնամքով և ճաշակով զարդարված բաշերը, այդ հարստությունը ե՞րբ պիտի օգուտ բերեն հային. կլինի՞, որ երբևիցե Որոտնա ձորի գյուղացիները այստեղից, ինչպես ասում են, մատ լիզեն: «Արդյոք գալո՞ւ է մի օր ժամանակ», հիշում եմ ես բանաստեղծի խոսքերը և ավելացնում. «Տեսնել գյուղացուն այս հարստություններից մասն և բաժին վերցնելիս»: Հոսում են այդ ջրերը: Ո՛չ որ չի հետազոտել նրանց, ո՛չ որ չի հայտնել, թե որը ինչ ցավի համար լավ է: Իսկ իրանք՝ ջրերը, լեզու չունեն, թեև այնքան առատ են...

Շատերը կարծում են, որ Սատանի կամուրջը շինել է կրային ջուրը: Ասում են, թե այդ ջուրը դարերի ընթացքում ստալակտիտների պես զանգվածներ է կազմել գետի վրա, որոնք, հետզհետե պնդանալով, կամուրջ են կապել: Իսկ թեև այդ տեսակ մի հարցի մասին անկարող եմ մի վճռական խոսք ասել, բայց իբրև մի հասարակ մարդ կասեմ, որ այդ կարծիքը կարող է այնքան ճշմարիտ լինել, որքան և ծուռ: Նախ, որ ձորի այն մասը, որ կամուրջով միավորված է, բավական լայն է, գետը խրված է ցածրում, շատ խոր: Կրային ջրի աղբյուրը, որ պիտի կազմեր կամուրջը, գտնվում է ձորի միայն մի կողմում: Տաթևի կողմում, հետևաբար գործողությունը պիտի կատարեր միայն մի կողմի վրա, այնինչ կամուրջը մի ամբողջություն է կազմում, բոլորովին միատեսակ կազմվածք ունի: Երկրորդ՝ կամուրջի բաց կողքերին նայելով՝ տեսնում ենք, որ նրանք միապաղաղ քարից են, այն իսկ քարից, որից կազմված են ձորի ժայռերը: Երրորդ՝ կամուրջի մեծ մասը այնպիսի

տեղ է գտնվում, ուր ամեննին չկա որևէ հանքային ջուր: Կամուրջը շատ երկար է և լայն, և որ մի տեղ չի նկատվում, որ ջուրն այժմ էլ քարանալու նշաններ ունենա: Իմ հիշած լճակը, որի մեջ լողացանք, «երկաթաջուր» է ասվում, նման է Շուշու մոտ գտնվող Թթու-ջրի հանքային մի տեսակ ջրին, կիր չէ պարունակում իր մեջ: Այդ «երկաթաջուրը» այժմ թափվում է Մատանի կամուրջի վրա և առվակ դառած կամուրջի վրայով գնում է, ներքին ծայրով գետն է թափվում, սակայն այդ ջրի մոտ քարացման ոչինչ հետք չկա: Իսկ կրային ջուրը, որ անթիվ ստալակտիտներ է կազմում, ինչպես ասացի, ծլլում է կանաչազարդ բաշի գանազան տեղերով. և այդ ջրի մի փոքրիկ մասն է միայն թափվում կամուրջի վրա, նրա վերին ծայրից ծորալով կազմում է գետի համար բացված ծակում երևացող ստալակտիտները: Ինչպես որ լինի, եթե այդ ենթադրությունը անսխալ լինի, պիտի այժմ էլ ջրի շինությունը տեսնենք, բայց չենք տեսնում:

Կան և այնպիսիները, որոնք ասում են, թե կամուրջը կազմվել է ժայռի մի ահագին պատովածքից, որ, պոկ գալով վերևի ժայռերից, ընկել է և փակել ձորը: Այս էլ համարձակ ենթադրություն է, որ ոչ մի փաստ չունի. եթե ընդունենք, պիտի հավատանք, որ մի աներևակայելի մեծ ժայռ է ընկել, այնքան լայն և այնքան երկար: Կարելի է մի երրորդ ենթադրություն էլ ավելացնել, այն է, որ ձորի այս մասը միապաղաղ քար է եղել և գետը, ճանապարհ չգտնելով իր համար, ծակել է անցել՝ գտնելով ջրի մեջ լուծվող մասեր: Այդպիսի հանգամանքը մեր երկրի համար խորթ չէ. Ղարաբաղում Թարթառ գետի մի վտակը նույնպես անցնում է մի այդպիսի տեղով, իսկ ժողովուրդը պատմում է, թե մի առասպելական վիշապ է ծակել այնտեղի ականը, որ արժանանա մի ինչ-որ գեղեցկուհու: Ես արդեն ասացի, որ մի քանի տարի առաջ ճգնավորի բաղնիսը գնալիս են եղել գետի հակառակ կողմից մի ուրիշ բնական կամուրջի վրայով, որ այժմ փլվել է. այդտեղից քիչ վերև այժմ էլ կա մի բարակ, շատ բարակ քարային կամուրջ, որ գետի մի կողմից մյուսն է անցնում, և ոչ ոք էլ չի ասիլ, թե այդ կամուրջն էլ հանքային ջուրն է շինել, որովհետև նրա մոտ այդպիսի ջրի հետք էլ չկա, և ամեն կողմից երևում է, որ նա քարից է կազմված: Բայց, կրկնում են, ոչինչ դրական բան ասել չեմ կարող. ես ինքս ասացի արդեն, որ Մատանի կամուրջը բնության հրաշք կոչվելու բոլոր իրավունքները ունի և գաղտնիք չի հայտնում ոչ ոքին:

Մի զարմանալի հանգամանք էլ պատմեմ. Սատանի կամուրջի վրա կարելի է ծարավից մեռնել: Որտեղ նայում ես, ջուր է. ոտներիդ տակով գետն է որոտալով գնում, կողքերիդ ես նայում, ջուր է, որ այստեղից-այնտեղից ծլծլում է, կաթկաթում, բայց խմելու մի կաթ ջուր չկա. գետը անմատչելի է, աղբյուրները հանքային են, իսկ ջուր խմելու համար պետք է գնաս Ցաքուտի ավերակ եկեղեցու մոտ, բավական հեռանաս, հասնես այն տեղին, ուր գետի եզերքը ցածրանում են, կամ պետք է դեպի վերև գնաս, գետն ի վեր, ով գիտե ինչ սատանայական տեղերով անցնես, որ գտնես զելտերյան ջրի աղբյուրը: Ես սաստիկ ծարավել էի, ծարավ էլ ձի նստեցի. խմելու ջուր մեկ էլ Գորիսի սահմաններում պիտի գտնեի:

Ժամի մեկն էր, երբ թողեցինք Սատանի կամուրջի զարմանալի ձորը, սկսեցինք բարձրանալ այն իսկ լանջիվերով, որ երեկ մեզ համար խիստ լանջիվայր էր: Էլի ձին սկսում է չարչարվել, քրտնել: Լանջիվերի կեսից երևում է ս.Աստվածածնի վանքը, որ մի հիանալի տեղ է շինված: Տաթևի սարը նույնիսկ վանքի տակից պարսպի պես է իջնում դեպի Որոտնա գետը, բայց գետից դեռ բավական բարձր մի լայն և երկար տափարակ է կազմում և հետո էլի պատի պես ձգվում, հասնում գետնին: Այդ տափարակը հարավային կողմից վերջանում է մի մեծ ձորով, որի միջով վազում է Տաթևի մեզ հայտնի գետակը և թափվում Որոտանի մեջ: Տափարակը այդտեղ կազմում է մի եռանկյունի, որի վրա շինված է վանքը, իսկ նրա մոտ տարածված է մի մեծ այգի: Վանքը բավական գեղեցիկ է, պարսպապատ, ունի բազմաթիվ սենյակներ և Աստվածածնի տոնին մեծ թվով ուխտավորներ է ընդունում իր մեջ: Ավելի գեղեցիկ տեղ չէր էլ կարելի ընտրել. միայն ցավն ու կրակը ճանապարհին է, որ այնտեղ է տանում: Տեղի դիրքը, բնությունը միանգամայն հափշտակում են հեռվից նայողին: Նա կորած է կանաչների մեջ. երկու գետեր ահագին աղմուկներով գալիս, պատում են նրան երկու կողմից, խառնվում են նրա մոտ. երևակայել կարելի է, թե ինչ ձայների մեջ է վանքը օր ու գիշեր անց կացնում: Տեսնելով նրան այնպես՝ ես խիստ ափսոսացի, որ չկարողացանք գնալ, նրան էլ տեսնել: Ի՞նչ անեի. ցանկություն շատ կար, բայց ժամանակն էր պակասում. աշնան օրերն այնքան կարճ են...

Այո՛, ժամանակի կարճությունը քանի տեղերից ինձ զրկեց, քանի բաների կարոտ թողեց: Ժամանակի քչությունը ինձ ծանր, շատ ծանր թվաց այն ժամանակ մանավանդ, երբ հասանք Շահանդուխտի սարի գլուխը, մտամբ Սախկալ-Թուրանի անտառը: Մինչև այդտեղ Տաթևը մեզ հետ էր, իր բարձր

խաչապսակ գմբեթով մեզ էր նայում: Բայց ահա նա հեռացավ, անցավ մի կողմ, անհայտացավ: Մի ինչ-որ ծանրություն ընկավ իմ սրտի վրա, ես զգացի, որ շատ բան եմ տեսել, շատ չեմ կշտացել այն տեղերից: Ես բարկանում էի իմ ընկերի վրա, որ իր թեթևաշարժ ջորու վրա առաջ էր վազում. ի՞նչ կա, ինչո՞ւ շտապել: Մի տեղ ջորին իր մեծ թամբի հետ գլխի վրայով վայր զցեց այդ ընկերիս և շատ էլ լավ արավ. պետք էր ծանր գնալ, գոնե այս կողմերին շատ նայել:

Ահա մեզանից ցած Հալիձորն է փոված, ցույց է տալիս իր փոքրիկ ու ցածրիկ տները: Այս բոլոր տեղերը, Տաթևից սկսած, նորից մեծություն և փառք են ստացել հանգուցյալ Բաֆֆիի «Դավիթ-բեկ» անունով պատմական քաղցրիկ վեպի շնորհիվ: Թեև վեպի այն մասը, որ գրել է հանգուցյալը մինչև այս տեղերն այցելելը, ունի անճշտություններ տեղերի նկարագրության վերաբերյալ, բայց նրա հերոսները, պատմած անցքերն ու մտքերը մի բույս են հեռանում ուղևորի հիշողությունից:

Հալիձորի տանջող ու չարչարող լանջիվերով բարձրանում ենք, գնում ենք գլուխը: Մի քանի քայլ ևս, և Որոտնա գետի մեծ, ահարկու ձորը իր բոլոր գեղեցկություններով ծածկվում է մեզանից, մենք գնում ենք Ուշ-Թափալարի տխուր դաշտով: Եվ ինքներս էլ տխուր ու տրտում ենք: Զգվելի եղանակ է սկսվել: Դաշտի վրա կույտ-կույտ թափառում է ստորաքարշ մշուշը, մանր անձրև է գալիս, մեզ թրջում: Զիու վրա կուչ եկած, քիթ ու պռունգ վեր թողած ծանր գնում ենք, միմյանց հետ չենք էլ խոսում: Աշխարհը կորցրել էր իր հրապույրը, գեղեցկությունը...

Բարեբախտաբար եղանակը երկար չէ մեզ զզվեցնում: Մշուշը քաշվում է, անձրևը դադարում, մինչև անգամ մի ողորմելի արեգակնային լույս էլ սփռվում է դաշտի վրա: Անցնում ենք մի տեղով, ուր կան մի քանի փոքրիկ շինություններ, չոր քարից դարսած պատեր: Շնհեր գյուղի գլուխն է: Այդ պատերն ու կիսավեր շինություններն են կարծել տվել Զալալյան եպիսկոպոսին, թե առաջներում Շնհերն այստեղ, դաշտումն է եղել (տե՛ս նրա ճանապարհորդությունը, մասն Բ.): Իզուր է նա այդպես կարծում. մի գյուղ կարող է գոյություն ունենալ միայն այնպիսի տեղ, ուր ջուր կա, իսկ այստեղ ջրի հետք էլ չկա, հետևաբար պետք է ասել, որ այս շինությունները տնտեսական շինություններ են, գուցե զոմեր:

- Գնանք Շնհերին նայենք,- առաջարկում եմ ես ընկերներին:

Դուրս ենք գալիս ճանապարհից, գնում ենք լեռնադաշտի ծայրը: Կրկին երևում է Ռրոտնա գետի ձորը և ցույց է տալիս իր հրաշալի տեսարաններից մեկը: Ուշ-Թափալարի դաշտը դեպի Ռրոտանը ցածրանալով՝ կազմում է մի շատ լայն լեռնային գոգ, որի արևելյան և արևմտյան կողմերում ընկած են ցածրից դեպի բարձր երկար լեռնային սեռեր: Այդ գոգն է Շնհերի ձորը. մենք կանգնած ենք ձորի գլխին, որքան հեռու ենք Ռրոտնա գետից, բայց էլի լսում ենք նրա ձայնը, որքան մեծ, ահագին ձոր է Շնհերի ձորը: Մենք կանգնած ենք մեծամեծ ժայռերի գլխին, որոնք սեպացել են, ցցվել այդ լայնարձակ ձորի գլխին: Այդ ժայռի տակ փոված է Շնհերը, որի երեսը դեպի Ռրոտնա գետն է դարձրած: Մեր աչքին երևում է միայն տափակ ու սպիտակ, միմյանցից կպած կտուրների մի մեծ բազմություն: Գեղեցիկ գյուղ է. գեղեցիկ է ոչ այլ ինչով, բայց միայն իր անհամար այգիներով: Ահագին լայն ձորը այգեստան է, որին երկար նայում ես ախորժակով, զմայլվում ես: Գյուղի արևմտյան կողմին մի մեծ աղբյուր է բխում ժայռի տակից, այդ ջուրն է այս հիանալի ծառաստանի պատճառը: Սյունիքում ես մի այսպիսի ուրախ և գեղեցիկ անկյուն չտեսա: Պարզ երևում է մարդու համար մրցությունը բնության խստությունների հետ, և այդ մրցության հաղթանակը: Մարդը իրան օգնական է բռնել մեծ աղբյուրի ջուրը և դուրս է եկել, թևերը ծալել, երեսը պնդացրել, վերցրել է ջուրը, հազար ու մի տեղերով պտույտներ է անել տվել, ցույց է տվել իր բոլոր հնարագիտությունը, իր կամքին հպատակ է արել այդ լեռնային ահագին գոգը իր ուղղաձիգ սեռերի կողմերով և տեսնե՞ք որքան ծառ է տնկել. ծառ և ծառ ամեն տեղ, աչքդ ուրիշ բան չի տեսնում, այնպիսի բարձր տեղեր է ծառ տնկել. որ զարմանում ես, թե ինչպես է այնտեղ ջուր գնում: Իսկ ներքևում Ռրոտանն է քիչ ողորմած դառել. նրա դեպի գյուղը դարձրած ափը լայն է, տափարակ, այգիների մեջ կորած, իսկ մյուս ափը որքան սարսափելի սեպացած է դեպի բարձր և բարձր: Ահա սյունեցու աշխատասիրության մի ուրիշ տեսարանն էլ. աշխատասիրությունը, տոկուն, համառ աշխատասիրությունը միայն կարող էր այսպես անել: Իսկ ծույլ ժողովուրդը, օրինակ, այնպիսի ժողովուրդը, որ Խաչենում է ապրում, ոչինչ չի անիլ և այնպիսի տեղ, ուր բնությունը ավելի քաղցրաբարո է, քան այստեղ: Շնհերցին, այսպիսի հսկայական գործ կատարած շնհերցին այդ բուստից իմ աչքում մեծ տղամարդ դառավ և իր կոպիտ, մոխրագույն հաստ չուխայի մեջ ավելի լավ երևաց ինձ, քան ճոճոան կոշիկների համն առած գյորիսեցին, որի միտքն ու գաղափարն է՝ հեշտ հարստանալ՝ ծծելով այդ իսկ մոխրագույն

չուխաները: Բայց Շնհերը մի անտանելի բան ունի: Դա նրա ճանապարհն է, որ Ուշ-Թափալարի դաշտից գալիս է, իմ կանգնած տեղից քիչ հեռու սարսափելի կոպտությամբ լանջիվայրով դեպի գյուղն է գահավիժում: Տաթևը, Հալիձորը այսքան վատ ճանապարհ չունին: Տե՛ր աստված, ամեն բանի ճար կլինի, տեսնես Սյունիքի այս ճանապարհների ճարն ինչ է լինելու:

Շնհերից շատ մոտ, դեպի արևելք, գտնվում է Խոտ գյուղը: Դա էլ այգիներ ունի, բայց թե գյուղը և թե այգիները Շնհերից շատ փոքր են և վերջինիս պես գեղեցիկ տպավորություն չեն թողնում:

Հիշենք, որ Շնհերն ու Խոտն էլ շատ և շատ հին գյուղեր են, շատ հին ժամանակներում Տաթևին են նվիրված և այժմ էլ Տաթևին են պատկանում, ինչպես և Հալիձորը: Հիշենք, որ Շնհերն էլ Սյունիքի պատմության մեջ տեղ ունի, և մինչև այժմ էլ նրա այգիների մեջ մնացել է հինավուրց բերդն իր ահագին երկաթապատ դռներով: Հիշենք... մի անգամ էլ նայենք գեղեցիկ Որոտանին և շուտ տանք մեր ձիաների գլուխները դեպի Ուշ-Թափալարի դաշտը ու փակենք մեր հիշատակարանը:

Երկու օրից հետո փոստի սայլակը ինձ դեպի Շուշի էր տանում: Վերջին անգամ նայում էի ինձ արդեն ծանոթ տեղերին: Ահա Տեղ գյուղի տխուր լեռնադաշտը: Առավոտ էր, այդտեղից դեպի արևելք բացվել էր մի լայն տեսարան. ինձ ցույց տվին բարակ մշուշի նմանություն ունեցող մի շերտ, որ երկար ընկած էր հեռու հորիզոնի ծայրում, և ասացին, որ այդ Արաքսն է: Այդտեղից ցույց տվին ինձ նաև Ջիջիմլու անունով թրքական գյուղի տեղը, որ հեռու էր, գտնվում է Բարկուշատի կողքով ընկած մի լեռնաշղթայի ստորոտի մոտ: Ջիջիմլուն հիշատակության արժանի է իր հռչակավոր օջախով, որ բժշկում է կատաղած շների կծածներին: Ղարաբաղը և Չանգեզուրը շատ լավ են ճանաչում Ջիջիմ-Օջախը. և երբ մեկին կծում է կատաղած շունը, իսկույն վերցնում են, այդտեղ բերում: Գնացողը պիտի շտապե, որովհետև, ասում են, կատաղած շունն էլ շտապում է օջախը հասնել, իսկ թե իր կծած մարդուց շուտ հասավ, փրկություն չկա: Օջախը պատկանում է մի մոլլայի, իսկ բժշկությունը կատարվում է մի հրաշալի հացի գորությամբ, որ մոլլան է պատրաստում, խառնելով նրա հետ և հիվանդի արյունը, որ հանում է նրա ոտի մատներից մեկը ծակելով: Մեծ փառքի տեր է օջախը և չգիտեմ՝ Պաստյորի գյուտը կվնասե՞ նրան, թե չէ:

Սյուս օրը բարձրանում էի Թթու-ջրի շրջակա բարձրություններով: Ինձ վրա շքեղ լույս է տարածում արեգակը, հրաշագեղ բնությունը էլի եկել էր իմ

շուրջը բոլորակ և քաղցր ծիծաղում էր աշնանային ծիծաղով: Բայց ես տխուր էի. տխրությամբ հիշում էի այն երեկոն, երբ ես այնքան ուրախ ու զվարթ դեպի ցած էի գնում: Տեսնում էի ճանապարհի կողքին ման եկող գյուղացի երեխաներին, նրանց երջանիկ, ծիծաղկոտ դեմքերը, նրանց թեթև և կայտառ շարժվածքները և ավստսում էի, որ հեռանում եմ նրանցից ու նրանց աշխարհից: Նրանց մոտ՝ այս անցած տեղերում, կային նորություններ, հետաքրքիր երևույթներ, կյանքի թարմություն: Եվ ահա Սյունիքը՝ իբրև մի վաղանցուկ երագ, հեռացավ գնաց. հրե՛ն երևում են նրա սարերի անորոշ, մթնագունած դեմքերը: Սայլակը վագում է, շտապում է՝ առանց իմ կամքին: Եվ Շուշին՝ իմ ծննդավայրը՝ իր ծույլ ու դատարկ կյանքով, իր անսահման և անվերջ նախանձով և զզվելի բամբասանքներով, մոտենում է իմ տխուր սրտին: Եվ ինձ ատելի է երևում, բոլորովին ատելի...

ԹԱՐԹԱՌ ԵՎ ՄՌԱՎ

Ա

Ես վերադառնում էի Թիֆլիսից:

Մութ գիշեր էր, մեքենան, երրորդ զանգը լսելով, սուլեց, փախավ: Օդը վագոնի մեջ հեղձուկ էր, բազմաթիվ ճանապարհորդները առաստաղից կախ արած աղոտ կանթեղի տակ ընդունեցին զանազան դիրքեր: Աղմուկը դեռ չէր վերջացել. կապոցները տեղավորել, քնելու տեղ պատրաստել, երեխաների ձայնը կտրել տալ. ահա թե ինչով էին զբաղված մարդիկ, մինչդեռ շոգեմեքենան, ծանր շնչելով, հետզհետե արագացնում էր իր գնացքը թանձր խավարի մեջ:

Պատուհանի առաջ մի բոպե երևաց գիշերային Թիֆլիսը: Մեզանից ցած՝ մի մեծ հսկայական փոսի մեջ, վառված էին բյուրավոր ճրագներ, որոնք խիտ առ խիտ խմբված էին և ուրախ այրվում էին: Կովկասի ամենամեծ քաղաքը, ամբողջապես ճրագ կտրած, բյուրավոր մանրիկ բոցեր դարձած, վերջին անգամ արագ սահում էր մեր աչքերի առջևից: Պատուհանների մոտ խմբվել էին մարդիկ, որոնք սքանչանում էին այդ կախարդիչ տեսարանով, հայտնում էին իրանց զարմանքը, զովում էին այդ մեծ քաղաքը: Բայց տեսարանը մի բոպեում փախավ, հեռացավ, տեսնելու բան չկար, իսկ լսելու միակ բանը անիվների միանման թխկթխկոցն էր. ամենքը նստեցին, գլխները կախ արին:

- Ալլահը քեզ օգնական, աղա՛ս, ալլահը պինդ պահե, բարով գնաս՝ բարով գաս. օջախի շնորհքը քեզանից անպակաս, աղա՛ս:

Այս խոսքերը բարձր արտասանվում էին թուրքերեն լեզվով և մի թանձր ձայնով:

- Աստված տա, աստված տա, - կրկնեցին ուրիշ թուրքերը:

Ես ետ նայեցի:

Նստած են մեր պատվելի քալբալայիքը, ծխում են և ողջերթ են մաղթում մեկին, որ ուղիղ գնում էր Խորասան՝ Մաշադիի օջախին ուխտ: Նրանք նստած են այնպես, ինչպես կնստեին իրանց տափակ կտուրներից, պարսկական գորգի վրա, թմրեցուցիչ դայլանի կողքին: Նրանց հոգսը չէ, որ ուրիշ ճանապարհորդներ էլ կան. նրանք անփույթ խոսում են, ձայն ձայնի խառնում, բղավում, քրքջում:

Քնում են շատերը: Քունն արդեն կռացրել է, մի կողքի վրա գցել մեր պեպոնների և կակուլիների երկու ընկերակիցներին, որոնք իմ հանդեպն են նստած: Այդ «քաղաքի վուրթիքը» ունին բարի դեմքեր և միշտ անհոգ, ուրախ տրամադրություն, մի հատկանիշ, որ այնպիսի հռչակ է տվել բնիկ թիֆլիսեցիներին աշխարհի առաջ: Քալբալայիների ոգևորված բացականչությունները սրանց սրախոսություններին էին նյութ տալիս: Եվ ես սիրում էի այդ բարի, ուրախ արտահայտությունը, շարունակ այդ դեմքերին էի նայում՝ մտքիս առաջ բերելով, իբրև հակապատկեր, մեր կողմի մարդիկներին, նրանց միշտ անհասկանալի, մռայլ, սակավախոս դեմքերը: Ահա մարդիկ, մտածում էի ես, որոնք կյանքի համար գոնե մի բան ասում են բացարձակ: Ի՞նչ է տալիս մեր աշխարհի կյանքը դրանց, այդ պեպոններին ու կակուլիներին: Ինչ էլ որ տա, բայց նրանց զվարթ, ուրախ բնավորությունը ամեն բանից բարձր է կանգնած: Այդ ինձ հասկացնում է «քաղքցիներից» մեկի ձեռքը, որ բռնած ունի մի փոքրիկ սագ: Մարդը քնած է, բայց ինչպես լավ պահում է սագը, ինչպիսի խնամքով է տանում նրան, որ միշտ ձայներ պիտի հանե, բարակ, դողդոջուն ձայներ, նրա սրտի ու հոգու անբաժան ընկեր ձայներ...

Մյուս կողմում՝ երկու նստարանի վրա, բազմած են մեր քաղքցի կեկելներն ու փեփեկները: Նրանք խոսում են, խոսում... անվերջ խոսում են: Դատաստան ու քննություն են անում, իրանց ծանոթների ու բարեկամուհիների շորերն են քննում, գնահատում, նրանց ու իրանց բամբասանքներն են շարունակում այդքան մարդկանց մեջ: Լսում են մի ինչ-որ պառավ, կոտ-

րատվող զինվորականի կոմպլիմենտները, մի երջանիկ ամուսնու ծիծաղը, իրանք էլ պատասխանում են: Մի խոսքով՝ կաչաղակների պես չրթջրթում են. ննջում են, էլի վեր կենում, էլի խոսում: Երբ հայերենը մի քանի նախադասություններով այնքան շուտ ձանձրացնում էր, անսպառ վրացերենն էր առաջ գալիս: Ինձ անծանոթ էր լեզուն, բայց գիտեմ, որ խոսակցության նյութը միևնույնն է. հայուհիները այնպես են «ջուր արել» վրացերենը, որ այդ վերջին լեզվով էլ կարողանում են չրթջրթալ կաչաղակների պես: Եվ ես հիշեցի, որ Թիֆլիսում վրացերենը կատարյալ թագավոր է. հիշեցի իմ զարմանքը, երբ իմանալով, որ Թիֆլիսի բնակչության մեծ մասը հայ է, ամեն տեղ, ամեն քունջում լսում էի վրացերենը և վրացերենը միայն: Ես կարծում էի, թե ճակատագիրը ինձ թույլ չի տալիս, որ մի հատ հասարակ հայ տեսնեմ Թիֆլիսում, ուստի եկեղեցի էի գնում, հայի եկեղեցի, որ գոնե այնտեղ տեսնեմ:

Կանթեղի թույլ բոցը դողում է առաստաղի տակ, շոգեկառքը թռչում է և թռչում, մեղմ օրորում է այս տեսակ-տեսակ մարդկանց: Անցնում են իջևանները միմյանց ետևից, խոր գիշեր է, խավարը կլանել է ամեն ինչը, մեքենան բյուրավոր կայծեր է թոցնում իր ահագին բերանից: Ահա ծանր խոսվում է Խորասանի ուխտավորը, որ անկարգ ու անկանոն տարածվել է նստարանի վրա. բայց նրա ընկերները մի-մի զարթնում են և իսկույն, վայրկյան չկորցնելով, խոսք ու զրույց են բարձրացնում: Ահա փեփեղներից երկուսը ծածկվեցան բարակ վերմակների տակ, Պեպոյի ընկերակիցը դեռ միևնույն խնամքով պահում է փոքրիկ սազը, թեն երկու քունն է անցկացրել: Դիրքերը չեն փոխվում, այնքան հարմարություններ ունի երկաթուղին, և ես նայում եմ, մտածում, որ մենք գնում ենք այսքան արագ և այսպես հարմար:

Այո՛, լուսավորությունը այսպիսի բաներ է ստեղծում, այսպիսի բազմություն, այսքան այլասեռ, գույզգույն անհատներ բերել է, մի հարկի տակ ժողովել, քնացրել է ու տանում է, թոցնում: Հիշում եմ մեր տանջող ճանապարհները, մեր ջրհեղեղյան արկղները, որոնք չորս անիվի վրա հաստատվելով՝ սայլակ անունն են ստանում և անխնա ծեծում, ցավեցնում են մեր կողերը, շշմեցնում են մեր գլուխները: Իսկ այստեղ այսպես... Լավ բան է քաղաքակրթությունը, հառաջադիմությունը, շատ լավ բան է, բայց ի՞նչ անես, որ այսքան հեռու է մնում մեզանից, այնքան անմատչելի է մեզ: Ինչո՞ւ մեր երկիրն այսպես է, ինչո՞ւ չի ընդունում լուսավորությունը, հարմարությունը: Մի՞թե նա իր գեղեցիկ կլիմայով, իր խիտ ազգաբնակչությամբ, իր

լեռնային հսկայական տեսարաններով ստոր է այն ողորմելի, անջրդի անապատներից, որոնց կրծքի վրա իր վիթխարի շունչի ամեն եռանդով գործում է շոգեմեքենան, մարդկային հանճարի ամենագեղեցիկ հնարներից մեկը:

Շվացնում է այդ մեքենան. բայց ո՞վ է նրան լսողը: Անապատներ, որոնք Գաբրիելյան փողից հազիվ թե կարողանան քիչ կենդանություն ստանալ: Այդ շվոցից փախչում են միայն անապատի որդիները, աղվեսներն ու չախալները. այդ շվոցը իսկի լսել էլ չի ուզում գորտերի թագավորությունը, որ խլացուցիչ ճղվղոցով մի քանի վերստ տարածություն բռնած, համախմբված է մի ինչ-որ թշվառ ջրի մեջ, որ արհեստական առուներից ավելորդ մնացած՝ իզուր թացություն է տալիս անապատի բույսերին. իզուր, որովհետև այդ բույսերը երբեք չեն փոխվիլ, երբեք չեն պայծառանա: Ահա թե ում համար է շոգեմեքենան արձակում իր հպարտ ուրախական շվոցները:

Ամայի, տկլոր անապատ չորս կողմում: Մարսափելի՝ իր անողորմ արեգակով, իր մանր թունավոր բնակիչներով: Եվ այդպիսի տեղերում բույն են դրել մարդիկ, որոնք պիտի սպասավորեն լուսավորության, հանճարի գործին: Տանջվում են այդ մարդիկ, տանջվում են ոչ միայն ահագին, կրակացած արեգակի երեսից, այլև մի կետի չափ մեծություն ունեցող, միայն մի բարակ ձայն հանելու ընդունակ մոծակի ձեռքից: Նրանց՝ այդ խեղճ սպասավորների կերածը կերած չէ, ոչ էլ խմածը՝ խմած. նրանք իրանց արյունքրտինքով, իրանց դեղնած և սևացած կաշիով, իրանց սարսափելի, մահառիթ ջերմուտենդով պիտի դիմանան այդ սպանիչ կլիմային, պիտի ապրեն այդ հավիտենական մեռելության մեջ, որպեսզի քալբալայիները անուշ քնեն, ազատ նամազ անեն հանգիստ շոգեկառքերում, փեփեկները անուշ անուշ բամբասեն, կակուլիները իրանց սագերը անվնաս տանեն: Իսկ քիչ հեռու այս տեղերից կան քաղցրահամ աղբյուրներ, կան ծաղկազարդ դաշտեր, զով անտառներ, քչքչան գետակներ, կա մի թեթև օդ, որ աղմկված է լինում գյուղացի ժողովրդի աշխատասեր որդիների ձայներով ու աղաղակներով: Այնտեղ կա կյանք, այնտեղ բնությունը առանց այդ կյանքի ողբում է: Բայց այնտեղի հետ գործ չունի լուսավորությունը. այն տեղերին մոտենալ չի կարողանում այն գեղեցիկ շարժիչը, որ մարդը պարծանքով հնարել է աշխարհի բարելավության համար...

Մեր երկիրը խռով կմնա այդ հանգիստ շոգեկառքերից, երբեք չի տեսնի նրանց երեսը...

Դարձյալ մեր սայլակը, անիվների վրա հաստատած արկղը, որը մեզ տանում է Եվլախ կայարանից: Նա հեռացնում է երկաթուղուց, հեռացնում է ամեն մի հարմարությունից, ծեծում է մեր կողերը: Մեծ ու գեղեցիկ շոգեկառքը երազ է թվում: Կարծես երազի մեջ է երևում փոքրիկ պատուհանը, որի առաջ ամբողջ աշխարհ՝ ահագին լեռներ, դաշտեր, ձորեր, ծառեր, տներ, երկնքի ամպեր գլուխ վերցրած փախչում էին սոսկալի արագությամբ, իսկ մենք կարծես թե կանգնած էինք, չէինք շարժվում... Այդ երազն անցավ:

Առավոտ է, բայց ապրիլի արեգակը այս տափարակ տեղերում գիտե իրան ցույց տալ: Հողը փոշի է դառել, և այդ փոշին ամպերի պես բարձրանում է, նստում մեր երեսին, մեր վզին, այրում է, մորմոք պատճառում: Ձիաները վագում են, տափարակը հետզհետե անցնում է: Մենք դուրս ենք գալիս նեղ ու բոլորակ հորիզոններից, ահա հեռու երևում են սարերի մուփկապույտ գծագրությունները:

Երբեմն-երբեմն մեր առաջ են գալիս տափարակների գյուղերը իրանց մեծ-մեծ այգիներով: Այդ գյուղերը, այդ այգիները մեռած տափարակների վրա ստեղծել է Թարթառ գետը, որ համարյա ամբողջապես տարածվում է այդ հարթությունների վրա արհեստական առուների միջոցով: Փոստային ճանապարհը հարյուր ու մի տեղ անցնում է այդ առուների վրայով. դուք տեսնում եք մի դեղին ու պղտոր, միշտ պղտոր ջուր, որ հոսում է բաց արեգակի տակ, լուծում է իր մեջ փափուկ, փոշիացող հողը: Այդ ջրի մեջ ապրում են բյուրավոր գորտերը, այդ ջրից խմում են անասունները, անապատի ամեն մի տեսակ միջատները ու նրանց դրացի մարդիկը: Ամառը գյուղերը դատարկանում են, որովհետև Թարթառը չի կարող փոխել մահաբեր կլիման, և անապատի սևացած, այրված որդիները վերցնում են իրանց ունեցած-չունեցածը, փախչում են սարերը:

Թարթառ գետը սարերից իջնելու տեղից սկսած մինչև Կուր գետը թափվելու տեղը այդպիսի ահագին գործեր է կատարում: Առանց նրան մի օր չի կարող ապրել մի մեծ գավառ: Հասկանալի է, ուրեմն, նրա նշանակությունը այս տեղերում: Հասկանալի կլինի և այն, եթե ասեն, որ թեև շատ մեծ գետ չէ Թարթառը, բայց հայտնի է Ղարաբաղի ամեն կողմերում, ունի հարզելի անուն, որ ժողովրդի, գլխավորապես թուրք ժողովրդի, երգերի մեջ է մտել: Նրա ափին շինած է Թարթառ անունով փոստային իջևանը, և որովհետև այդտեղ գետի վրա կամուրջ չկա շինած, ամեն մարդ, որ ճանապարհորդում է գարնանը, շատ լավ է հիշում այն երկյուղը, որ ավելի և ավելի մեծանում է

իջևանին հասնելուն պես: Գարնանը՝ մանավանդ ապրիլ և մայիս ամիսներում, Թարթառը սաստիկ մեծանում է, կատաղում, մարդկանց խեղդում: Լինում են տարիներ, երբ Թարթառը մի քանի օր շարունակ կտրում է հաղորդակցությունը: Ղարաբաղի ոչ մի գետ նրա չափ ահուդող չի պատճառում այդ ժամանակները:

Բայց այս տարի՝ ապրիլին, գետը չէր վարարել, որովհետև երկար ժամանակ անձրև չէր գալիս: Օգուտ քաղելով այդ լավ եղանակից՝ ես փոստային իջևանում թողեցի իրերս, մի ճանապարհորդություն կատարեցի դեպի սարերը:

Բ

Թարթառ իջևանի տեղն էլ շարունակություն է այն հարթ տափարակի, որ միանման տարածվում է Կուր գետից մինչև Շահբուլաղ իջևանը: Տափարակի արևմտյան կողմում, երբեմն մոտենալով փոստային ճանապարհին և երբեմն նրանից 10-20 վերստ հեռու, վերջանում են Ղարաբաղի ամենամեծ լեռների շղթաների վերջին ուտները: Այդ շղթաները ընկած են արևմուտքից դեպի արևելք, ահագին տարածություն ունին: Դրանց արանքով հոսում են երկու գետեր. մեկը՝ Թարթառը, որ Ջրաբերդ անունով գավառակի գետն է և ամենամեծը՝ Ղարաբաղի գետերից, մյուսը Խաչենագետն է, որ գալիս է Խաչեն գավառակից: Գանձասարի բարձրաբերձ լեռների միջով, Թարթառ իջևանից 25 վերստ դեպի ցած: Խաչենն ու Ջրաբերդը սահմանակից են և, ինչպես հայտնի է, մի ժամանակ առանձին-առանձին պատկանում էին Խամսայի երկու մելիքական տոհմերին: Իսկ այժմ այդ անունները պաշտոնապես գոյություն չունին. Խաչենը մտած է Շուշու գավառի մեջ, իսկ Ջրաբերդը, Խաչենագետից սկսած, կոչվում է Ջվանշիրի գավառ:

Ջվանշիրի գավառական իշխանությունները բնակություն ունին Թարթառ իջևանում. այդտեղ կան շինություններ նրանց բնակության համար, կա առևտրական հրապարակ, կա նույնիսկ «արքունական այգի» անուն ստացած մի զբոսավայր: Ամառը, սակայն, Թարթառ իջևանը դժոխք է դառնում. հռչակավոր է մանավանդ այստեղ մոծակը, որից ազատություն չկա: Այդ պատճառով ամառը բոլոր իշխանությունները, բոլոր բնակիչները քոչում են, գնում լեռնային հայ գյուղերը. մնում են միայն փոստային իջևանի վերատեսուչը և մի հատ ոստիկանական պաշտոնյա: Դրանք չգիտեմ թե ինչ հրաշքով են ողջ-առողջ մնում դժոխային տապի մեջ:

Թեև դեռ ապրիլի 14-ն էր, և ես մի օր առաջ կարդացել էի լրագրում, որ Շուշում ձյուն է եկել, բայց արեգակն այնպես էր այրում, որ շվաքը շատ քաղցրացել էր: Կեսօրից բավական անց էր, երբ ես իմ ընկերների հետ թողեցի Թարթառ իջևանը և գնացի դեպի արևմուտք: Մեզ ընկերացան երկու հայ գյուղացիք և մի գյուղական քահանա: Վերջինս հեռու տեղ էր գնում՝ Գանձասարի մոտ եղած Վանք անունով գյուղը, իսկ երկու գյուղացիները մոտիկ գյուղերից էին: Սրանք ասում էին, թե առաջին հայ գյուղը, ուր մենք պիտի մնայինք, այստեղից մոտիկ է, մի կամ երկու ժամից կհասնենք: Մենք քշեցինք ձիաները:

Մենք դեռ անցնում էինք միանման տափարակով, բայց հետզհետե հեռվից բացվում էին լեռնային տեսարաններ: Կուրոր ու նեղ հորիզոնից հետզհետե մեր առաջն էին դուրս գալիս փոքրիկ ու կանաչ բարձրություններ, որոնք առաջապահ պահակների պես շարված էին հսկա Մռավ սարի առաջ: Հրե՛ն նա, հսկան, որի գլուխը դեռ ծածկված է ձյունով: Հրե՛ն. երևում են մեծամեծ ձորերի բերանները, որոնք այդ լեռնաշղթաների մեջ լավ սեղմվելուց հետո դուրս են գալիս այս անհուն, անծայր տափարակների վրա: Ճանապարհ չկա, անդադար կրկնում էին գյուղացիք, շատ տեղ ոտով պետք է գնալ. քարքարոտ, նեղ կածաններ են, գլխիվայր և գլխիվեր են տանում, և եթե մի անձրև էլ գա, որին այդպես սպասում են գյուղացիք, այն ժամանակ բանը պրծած է, իսկի մի զվարճություն չեք տեսնիլ:

Անծանոթ երկրի այդ մռայլ նկարագիրը հարկադրում է մեզ շուտ-շուտ նայել դեպի լեռները. նրանց վրա հավաքվել են գարնանային կապտագույն և սև ամպերը և մռայլ մտնող արեգակը լուսավորում է նրանց անձռոնի, ծանր կույտերը: Եվ գնում ենք լուռ, շատ էլ չենք շտապում. ամենքիս վրա նախապաշարմունքի ծանրությունն է նստել...

Անցնում ենք մի քանի հատ արվեստական առուններով. Թարթառն է տալիս այդ ջրերը ահագին դաշտի բազմաթիվ արտերը ջրելու: Այդ արտերը ընկած են թոզոտ ճանապարհի երկու կողմով, կանաչ են, գեղեցիկ, ժողովրդի գեղածիծաղ հույսն են պատկերացնում, մի լույս, որ ավելի հասկանալի է 1888 տարվա պակասությունից և թանկագինությունից հետո: Հայ գյուղացիների արտերն են: Տեղ-տեղ գարնան վարն են անում գութաններով: Եզներն ու գոմեշները ճոճոպլով ձգում են երկրագործական ծանր գործիքը՝ թողնելով կանաչ արտերի մեջ լայն ու փափուկ շերտեր, որոնք արդեն սկսել են սևին տալ երեկոյան նվազ լույսի տակ: Այդ հարթ ու հավասար դաշտերը

միայն երկրագործության համար են ստեղծված: Եվ հայ ու թուրք երկրագործները, տեղի հարմարությունից օգտվելով, մի քայլ առաջ են գնացել մինչև այժմ եղած դրությունից: Ամենքը չեն հին, նահապետական ծանր ու դանդաղաշարժ գութանով վարում, պատահում են և նոր տեսակի գութաններ, երկաթե, թեթև, անվավոր, որ գյուղականների լեզվով «մաշին» են կոչվում: Հետզհետե այդ «մաշինները» տարածվում են, բայց թեթևություն դեռ շատ չեն տալիս երկրագործներին: Էլի նույն բազմաթիվ եզներն ու գոմեշներն են քաշում այդ գութանները, քաշում են իրանց հոչակված դանդաղկոտությամբ: Ես հարցրի, թե ինչո՞ւ ձիով չեն վարում: Պատասխանեցին, թի ձի պահելը դժվար է, թանկ է նստում. գարի, դարման, չոր խոտ շատ է հարկավոր երկու կամ երեք ձի պահելու համար: Այդ առարկությունը, իմ կարծիքով, անհիմն է. գյուղացու համար այնքան էլ դժվար չէ մշակ ձիաներ պահել: Իսկույն երևում է, որ «մաշինը» նոր երևույթ է, որին չեն սովոր, որը դեռ չի հարմարվել տեղացիների տնային տնտեսությանը: Առհասարակ, ամբողջ Ղարաբաղի մասին խոսելով, պիտի ասեմ, որ գյուղական հայ ժողովուրդը այնքան սեր չունի դեպի ձին և այս կենդանին ամենից քիչ է պատահում հայ գյուղերում, պատահածներին էլ... Աստված ողորմություն անե: Բայց պետք է սպասել, որ ինչպես «մաշինի» թեթևությունն ու հարմարությունն է գնահատվել, այնպես էլ մի ժամանակ գնահատված կլինի ժամանակը, արագ գործելու հարկավորությունը և այդ ժամանակ ծույլ գոմեշները կհեռանան «մաշիններից»:

Արեգակը մայր մտավ Մռավ սարի գագաթին, կույտ-կույտ ամպերի ետևը: Բայց մենք դեռ գնում ենք, մեր հարթ ճանապարհը չի վերջանում, թեև գյուղացիք ասում են. ահա՛, ահա՛ այստեղ է, մոտիկ է: Իզուր չեն ուրիշ երկրացի հայերն ասում՝ «ղարաբաղցու մի մորուք շարժելը մի օրվա ճանապարհ է», այսինքն՝ թե ղարաբաղցին հեշտությամբ մի օրվա ճանապարհը շատ կարճ կասե: Եվ, իրավ, մեր երկրի հայերն այսպես են: Գնում ես, հարցնում պատահած մարդուն. «Ո՞րտեղ է այսինչ գյուղը, շո՞ւտ կհասնեմ»: «Հրեղ, առջև, թումբն անցիր, առջև կգա»: Այդ կարճ պատասխանը լսելով գնում ես, գնում, սպասում ես ամեն մի բույս, թե ահա գյուղը կտեսնես. բայց որտե՞ղ է: Տեղ հասնելուց հետո ես հասկանում, թե ինչ է նշանակում այդ «հրե՛ղ, առջև է»... Այսպես և այժմ: Գյուղը, ուր պիտի գիշերենք, չկա, բայց մեր ուղեկիցների խոսքին նայած՝ հինգ անգամ մեր առջևը պիտի դուրս եկած լիներ: Իսկ մենք անհամաբեր ենք սպասում այդ գյուղին: Հարթ ու

հավասար տափարակով ձիով գնալը շատ ձանձրացուցիչ է. ուզում ես դուրս գնալ այդ տափարակ տեղերից, ազատվել այդ միանման հորիզոնից, ուզում ես շուտ մոտենալ այդ լեռնային բարձրություններին, տեսնել մեծ-մեծ տեսարաններ: Եվ շտապում ես, բայց ուղին քեզ անվերջ է թվում:

Իմ ուղեկիցներն էլ, ես նկատում էի, այս տեսակ ճնշված դրության մեջ էին: Եվ զարմանալի չէ, նրանք էլ լեռնականներ էին: Մեկը՝ մի չորացած, միջակ կազմվածքի տեր գյուղացի, Մեծ-Շենիցն էր: Նա հիվանդ էր, ուստի գլուխը փաթաթել էր շորի մի մեծ կտորով և նրա վրայով էլ գլխին էր հագցրել մեծ բրդոտ փափախը. հագել էր շալե կոպիտ վերարկուն, խոսում էր թանձր, խոպոտ ձայնով, որի ելևէջները հաստատում էին մարդու իսկապես հիվանդ լինելը. նա հենց Թարթառ էր գնացել դեղորայք գնելու և այժմ տուն էր գնում փոքրիկ քուռակը հեծած: Երկրորդ գյուղացին գյուլյաթաղցի էր՝ մի միջահասակ, շատ բան տեսած և շատ բան արած մարդ, որի մազերը սկսում էին սպիտակել: Նա մեջքից կռացած՝ նստած էր ձիու վրա, շուտ-շուտ վառում էր իր չիբուխը և, աչքերը մինչև հոնքերը իջած փափախի տակից դեսուդեն շարժելով, բերանից բաց էր թողնում ծխի քուլաները և լեզվին ազատություն էր տալիս միայն այն ժամանակ, երբ հարկավոր էր ուղեկիցների սանձարձակ խոսակցությունն ընդհատել:

Իսկ այդպիսի խոսակցություն կար մեր խմբի մեջ: Մեր տերտերը երբեմն ուզում էր զարմացնել մեզ իր գիտնականությամբ և փիլիսոփայություններ էր անում զանազան թեմաների վրա. մինչև անգամ պատմեց և վերլուծեց փարիսեցու և մաքսավորի հայտնի առակը, որպեսզի լավ հաստատե, որ մենք բոլորս մեղավոր ենք: Երկու գյուղացիները լսում էին այդ փիլիսոփայությունները լռությամբ և հարգանքով: Հիվանդը շուտ-շուտ մատաղ էր գնում տերտերի կարգին. իսկ գյուլ-յաթաղցին դարձնում էր դեպի ինձ իր խորհրդավոր դեմքը, ծույլ հայացքով չափում էր ինձ և, մի թեթև ժպիտ առած իր պլեխառն բեղերի վրա, չիբուխը կծած՝ բերանի մի անկյունով ասում էր.

- Շա՛տ ետ եկած տերտեր է, հա՛ ...

Իսկ որ «ետ եկած» տերտեր էր: Փիլիսոփայությունից հանկարծ անցնում էր ծաղրաբանության. մի որևէ հանաք էր անում, գյուլ-յաթաղցու ծանր ծիծաղը շարժում. և ապա էլի կաշում էր խեղճ հիվանդ մեծ-շենացու օձիքից, ծաղրում էր նրան, որ նա վերարկուի տակ կապել էր երկայն ու կեռ թուրը: Այդ ծաղրը մի անգամ, երկու անգամ չէր, որ կրկնվեց. տերտերը լավ էր ճարել հանաքի տուտը: Բայց թրատերը հետզհետե նեղանում էր այդ հա-

նաքներից: Նրա քեֆին դիպչում էր այդ ծաղրը, նա սկսում էր պատասխանել, և ահա այդ իսկ բռպեին մեջ էր ընկնում սակավախոս գյուլ-յաթաղցին, կռացած ետ էր դարձնում իր ծանր ու սառն հայացքը և հանդիմանում էր հիվանդին, որ նա այդպիսի պատասխաններ է տալիս երեցին:

Բայց մի տեղ հիվանդի համբերությունը իսպառ կտրվեց. ծաղրը խիստ կծեց նրան, և նա իր քուռակի կողերին երկու անգամ ոտ խփելով, քիչ առաջ եկավ ու ասաց.

- Տղամարդկությունն այդ չէ, տերտեր, տղա ես, արի ձիանքը բաց թողնենք:

Տերտերը միայն ծիծաղեց, նրա ձին լավն էր:

- Դու Ջալալյանների գյուղիցն ես, իսկ ես Դալի-Մահրասայի գյուղիցն եմ. փորձի՛ր, տեսնենք ումի՞ մայրն է տղա բերել:

Տերտերը մի անախորժ, կոշտ խոսք ասաց և իր ձին բաց թողեց, հիվանդը՝ նրա ետևից: Մի ակնթարթում նա թռավ հեռացավ, կարծես կերպարանափոխվեց. բարձրացավ ասպանդակների վրա, մեջքը դուրս ցցեց, իսկ փոքրիկ ու վտիտ քուռակը, կարծես տիրոջ սիրտը հասկանալով, չորս ոտներին ուժ տվավ և գնաց տերտերի ձիու առաջը կտրեց, հաղթությունը տարավ: Երբ մենք հասանք, հիվանդը ման էր ածում իր քրտնած քուռակը:

- Ասում էի...- դարձավ նա դեպի մեզ:

Ես և ընկերս գովեցինք նրան. խեղճ մարդը վերջապես պիտի լսեր մի համակրական խոսք: Եվ նա ուրախացավ: Իսկ գյուլ-յաթաղցին էլի փշերը հանեց և սկսեց սառցնող ձայնով հանդիմանել նրան:

- Է՛, տնաշեն,- պատասխանեց նրան հիվանդը,- սարոտ տեղ ընկանք, սիրոտս բացվեց, թե չէ իմ քուռակն ինչ ուժ ունի, որ այսպես քշեմ:

Հասկացա: Ճիշտ որ մենք գնում էինք մեծ-մեծ թումբերի մոտով. ճանապարհը բարձրանում էր, կանաչներն ավելի թարմ և պայծառ գույն ունեին: Լեռները բոլորովին մոտեցել էին, և այդ պատճառով լեռնաբնակ Ասրին այնքան ուրախացավ, որ տերտերի հետ այդպիսի ձիարշավ սարքեց:

- Հազար անգամ ջրեն, այսպիսի կանաչ չեն տեսնիլ,- շարունակեց նա՝ ցույց տալով մի թումբ, որ իսկապես շատ գեղեցիկ կանաչած էր: Նա համեմատում էր այդ կանաչը դաշտավայրի «ջրովի» կանաչի հետ:

Նրա լեզուն այդպես բացվեց: Հայրենի բնություն, փա՛ռք քո դյուրական գործությանը. մարդը կես ժամ որբի էր նման, այժմ խոսում, ծիծաղում է...

Վերջապես գյուղ հասանք: Մենք մտանք մի ոչ այնքան լայն և մեծ կիրճ, որ երեք կողմից փակված է լեռնային բարձրություններով: Այդ կիրճում տեղավորված է գյուղը, որի անունն է Մրդակիրդ կամ, եթե կամենում եք, Մարդակերտ: Ես էլ այս վերջին անունն էի գործ ածում, բայց գյուղացիք ծիծաղում էին ինձ վրա՝ կարծելով, թե չեմ կարողանում արտասանել գյուղի իսկական անունը՝ Մրդակիրդ: Ես, իմ ընկերը և գյուղ-յաթաղցին հյուրընկալություն գտանք տեղական քահանայի տանը, իսկ տերտերն ու հիվանդը ուրիշ տներ գնացին:

Մեզ հյուրասիրող քահանան մի ուրախ մարդ էր և սկսեց մեզ զվարճացնել զանազան պատմություններով: Ես իմացա նրանից, որ Մարդակերտը ունի 140 տուն բնակիչ և նոր է կազմվել, մի ութ կամ ինն տարի սրանից առաջ: Բնակիչները այստեղ են եկել Կուսապատ գյուղից, որ այստեղից շատ մոտիկ է. ունին մի նոր եկեղեցի և երկու քահանա: Բայց, ինչպես երևում է, այստեղ հին ժամանակները շեն է եղել, անունն էլ Մարդակերտ, հնություն է քարոզում: Տեր հայրը պատմեց, որ գյուղը աղքատ գյուղ չէ, ամենքն ունին բավականաչափ վարելահող, առատ հունձ են հավաքում. մեր տեսած դաշտավայրը իր մեծ-մեծ արտերով հենց այս գյուղին է պատկանում: Բավական է այնքան ասել, որ ներկա 1889 թվի առաջին կիսամյակում, երբ ամեն տեղ հացի պակասություն է և թանկություն, մարդակերտցիք ունին բավականաչափ պաշար և դեռ ծախում են: Գյուղը, առհասարակ, լավ տպավորություն թողեց ինձ վրա:

Գ

Առավոտ է, շատ կանուխ մենք կանգնած ենք մեզ հյուրասիրած տան բակում:

Օրը կիրակի է և ոչ հասարակ կիրակի, այլ կրկնագատիկ, կարմիր կիրակի: Անունը կարմիր, ինքը՝ այնքան սիրելի ժողովրդին... Այդ օրը փոքրիկ գատիկ է կատարվում, այդ օրվա համար նորից ձու են կարմրացնում:

Չեմ կարող ասել, թե կյանքումս այդպիսի գեղեցիկ կարմիր կիրակի եմ տեսել: Մեր լեռները զարնան մեծ մասը մթնացնում են մեր գլխին, այնքան առատ ամպեր են ծնում, այնքան հորդ անձրևներով են լվացվում: Բայց այս օրը... Մի հրաշալի կապույտ երկինք կախված էր մեզանից շա՛տ բարձր. մի կետի չափ ամպ էլ չէր տեսնվում նրա սիրուն մեղմ դեմքի վրա: Արեգակը

առավոտյան չքնաղ ու ցուրտ ճառագայթներով լուսավորել էր հիանալի կանաչ, փափուկ, թարմ բնությունը: Հսկայական շվաքները հետզհետե հավաքվում էին, կարճանում. տավարը բառաչելով արոտ էր դիմում, գիշերը բացօթյա արարած ձիաները տուն էին գալիս: Գյուղը տոնական կերպարանքի մեջ էր: Բոլոր երդիկներից չէր մլլում կապույտ ծուխը, որովհետև բոլոր օջախները չէին վառած: Զարդարված, պճնված հարսներ ու աղջիկներ արդեն ճանապարհ են ընկել դեպի ուխտատեղին, դեպի Ինն-մասանց անապատը:

Եվ ես ուրախ եմ, երջանիկ: Դարձյալ գյուղումն եմ, ուրեմն: Դարձյալ ինձ շրջապատում է գյուղի մթնոլորտը: Քաշվել, հեռացել է քաղաքի ճնշող, փայտացնող կյանքի հիշողությունը: Այստեղ ամեն մի ողորմելի, գետնափոր խրճիթից դուրս աստծու ազատ ու պայծառ աշխարհն է հրավիրում իր անսահման լայն ծոցը մտնել: Ահա նա այդքան մեծ, այդքան զորեղ, տանում է, հեռո՛ւ է տանում միտքն ու հոգին: Հրաշքներ չկան այս աշխարհում, բայց այս սրտաբաց պարգևությունը, այս կուսական մաքրությունը հրաշքի չափ կախարդիչ են: Ահա գյուղական աշխարհը, ահա նա իր անվերջ ցավերով ու վշտերով, իր այսպիսի գեղեցիկ օրերով, որոնց համար, ճշմարիտ, արժե ցավ ու վիշտ կրել: Եվ մարդը, այդ աշխարհի տերը, որի երեսի ժպիտն ու արցունքը միայն ու միայն այդ լայնատարած երկնքի կամքին է, այդ մարդը սովորական մարդուց շատ հետաքրքրական է. այդ աշխարհի կյանքը, չնայած իր ցնցոտիներին, իր սրտաճմլիկ անօգնականության, դարձյալ զորավոր է բնության ծոցում հանգիստ որոնող սրտին քաղցրություն տալու: Քաղցրություն ամեն մի հասարակ մանր առարկայից. քաղցրություն, որ պատճառում է նորածին հորթի սիրուն դունչը, ժայռի տակ տեղավորված ջրաղացի փրփրած ջուրը, աղբակույտի վրա կանգնած մերկ երեխայի զարմացած, հասկացող և տարակուսող դեմքը, մի որևէ ծառ, որ աստված գիտե, թե ինչպես ծովել, կախ է ընկել խորխորատի բերանից ու, իր կարող ճյուղերը տարածած, կարծես, լարված ուշադրությամբ ուզում է անդունդի գաղտնիքը քննել: Որքան շատ գիտես այդ քաղցրություններից, կտեսնես, որ բոլորն էլ սրանց չափ պարզ են, հասարակ, չափազանց համեստ, բայց այդ բոլոր մանրությունները հավաքվում են, միանում, ձուլվում են մի ահագին շրջանի մեջ, որ ինքը, գյուղական աշխարհն է: Այդտեղ, այդ խաղաղ աշխարհումն եմ ես:

Մենք խմում ենք թեյը թարմ կաթի հետ: Եվ մինչդեռ մեր ձիաները ջուրն էին տանում, պատրաստում էին, ես սկսեցի աչքի անցկացնել մեր հյուրընկալ տեր հոր փոքրիկ գրադարանը, որ դարսած էր մի փոքրիկ, հին, թոզով ծածկված սեղանի վրա: Այնպիսի մի հետաքրքիր բան չգտա. Պարապությունից թերթում էի «Աղբյուր» ամսագրի մի քանի հրատարակությունները, նայում էի պատկերներին: Տեր հայրը այդ տեսնելով, ասաց, թե ինքն ունի մի շատ լավ գիրք և հարցնելով, թե արդյոք ես փոքրիշատե հասկանո՞ւմ եմ գրոց լեզուն, պատուհանից վերցրեց և ինձ տվեց մի փոքրիկ կաշեկազմ գիրք, հին տպագրություն: Բարոյական և իմաստասիրական անվանած գրքերից մեկն էր դա, ուղիղն ասած՝ առակաների մի հավաքածու, հեղինակություն մի ինչ-որ վարդապետի: Ես կարդացի երեք թե չորս կտոր, հասկացա, թե ինչու այդ գիրքը այնքան գովասանքի է արժանացել, ինչու այնքան շատ է կարդացվել, որ քրքրվել է: Իմ կարդացած կտորները սատանայի և դևերի մասին էին, որոնք միշտ հայտնվում են կանանց կերպարանքով: Կինն անհավատարիմ է, կինը տուն քանդող է, կնկանից պատրաստ կաց, կանչում է այդ գրքի ամեն մի թերթը, ամեն մի տառը: Ահա հայ մարդու իդեալը, ահա այն մտքերը, որոնց վրա նա հիմնում է իր փիլիսոփայությունները կյանքի գանազան երևույթների վերաբերմամբ: Ահա թե ինչ տեսակ գաղափարների է երկրպագում հայ մարդը. նրա համար ամենապարզ ճշմարտությունը հենց այդ է, այդ գիրքն է, որ մեծավորները, գրի սեն ու սպիտակը իմացողները, գովում են, հարգում: Սատանաների ու դևերի հետ այդքան մոտիկ հարաբերություն և նմանություն ունեցող էակները՝ այդ կանայք, մի օր պիտի աշխարհը կործանեն. նրանք հարյուր լեզվի տեր են, նրանք ամենամեծ ճգնափորներին, մարգարեներին են խաբել. օ՛, պատրաստ կացեք նրանցից:

Բայց ովքե՞ր են դրանք, այդ սարսափելի արարածները՝ այդ կանայքը: Մենք շուտով նրանց կտեսնենք, շտապենք միայն ձի նստել և շուտ գնալ: Եվ ահա ձիաների վրա ենք, գնում ենք դեպի փոքրիկ սարերը:

Մի ամենաշքեղ լույսի մեջ ենք ողողված, մի այնպիսի դուրեկան, թարմացնող լույսի, որ կարող է տալ միայն ապրիլի պարզ առավոտը մի այս տեսակ հարուստ լեռնոտ երկրում, այն էլ կարմիր կիրակի առավոտը: Մարդու աչքը շլանում է մի այսպիսի լույսի տակ նոր, մանկական քնքուշ շունչ քաշող կանաչներից: Ետում է, եռանդով գործում է նորահաս կյանքը, ամեն քայլը ցույց է տալիս, թե ինչպես է նա մեծանում, զարգանում. մարդը երեսուներես կանգնած է բնության հզոր, կենդանարար հանճարի առաջ: Երևում

են բազմագույն տեսարաններ, թումբեր ու սարեր, կիրճեր, նեղ հովիտներ ու լեռնադաշտեր: Ահա ձորի մեջ, ճանապարհի մի կողմում ձգված են մեծ-մեծ ու խիտ այգիները: Նրանց մեջ տեղ-տեղ սպիտակին է տալիս, մաքուր հայելու պես պսպղում է լեռնային վճիտ առվակը, և մարդը, այդ գեղեցիկ տեղերի ու այգիների տերը, շարժվում է՝ բահն ու բրիչը ուսին դրած: Նա իր աշխատասիրությունը միացնում է բնության անխոնջ գործունեությանը հետ և սառն երկաթը, ծանր ու դանդաղ գործելով, տարեցտարի նորանոր գեղեցկություններ է ավելացնում, նոր և նոր շենք ու շնորհք է շատացնում: Այժմ երկաթը այդպիսի շինող ձեռքերումն է, այժմ այն երկաթը չէ, որ մի ժամանակ քանդել, ավերել է այս աշխարհը:

Ձորից բարձրանում ենք, մեր առջևը նոր-նոր բարձրություններ են բսնում: Այդ բարձրությունների վրայով մեզ տանում է գյուղական ճանապարհը: Ահա շատացան մանր ու երկար սարերը, խումբ-խումբ, առանձին-առանձին ցրված են աշխարհի ամեն կողմերը, մի հիանալի անկարգություն են կազմում. այդ տեսակ սարերի միջից վեր է ցցվել հսկայական Մռավը: Մենք մտնում ենք մի խիտ և կարճահասակ անտառ: Այդ անտառից մենք տեսնում ենք միայն մեր առջևը բարձրացած սարը և նրա հյուսիսային ստորոտի մոտ տեղավորված Մոխրաթաղ հայաբնակ գյուղը: Գյուղի մեջ բարձրացած է քարաշեն մեծ տունը, ուր բնակվում է կալվածատեր Նիկոլայ-բեկ Փիրումյանցը, Ջրաբերդի մելիքների միակ ժառանգը:

Մեր նեղ ու զով ճանապարհը մի երկու պտույտ էլ արավ, անցկացրեց մեզ այդ սարի քամակը. այստեղից, անտառի միջից ուրիշ տեսարաններ, ուրիշ ձորեր երևացին: Այդտեղ մենք հասանք ուխտավորների ետևից: Դրանք մեծ մասամբ կանայք էին, մանավանդ նորահարսներ և դեռահաս աղջիկներ:

Ամենքը հագած էին տոնական նոր շորեր, որոնք ամբողջովին կարմիր գույն ունեին: Այդ կարմիր հագուստները երևում էին ծառերի ետևից, և ընդհանուր գեղեցիկ տեսարանը, այդ գարնանային բնությունը, ավելի հրապույր, ավելի գեղեցկություն էին ստանում այդ կայտառ ու աշխույժ, այդ նոր բացված տերևների պես թարմ արարածների շնորհիվ: Նրանք գնում էին ոտաբոբիկ, լուռ էին, տանում էին իրանց նվերները. ո՛րը մի աքաղաղ, ո՛րը մի ջուխտ մոմ: Ո՛չ, այդ օրը մի ուրիշ տեսակ օր էր. գյուղական աշխարհը հազիվ թե կարողանա ավելի շքեղություն ցույց տալ: Աղքատություն չէր երևում, տոնը կատարյալ էր, բնությունը՝ զարդարուն, մարդիկ՝ այդքան զվարթ, գեղեցիկ: Ահա գնում է նորահարսը: Նրա կարճիկ արխալուղը կար-

միր է, կարմիր է և երկայն շապիկը. իսկ ավելի կարմիր է գլխին գցած քողը, որ ծածկում է նրա ամբողջ դեմքը, և նա երկու ձեռքով բարձրացրել է քողի ծայրերը, որպեսզի ճանապարհը տեսնե: Այստեղ՝ այս կուսական խուտեղերում՝ ծմակների անթափանցելի ծոցում էլ նորահարսը չպիտի բաց անե իր դեմքը. մինչդեռ չափահաս աղջիկը կարողանում է ամոթխածությամբ դեպի մեզ նայել, կարճ հայացք գցել և էլի ճանապարհին նայել:

Այդպես շարունակ ոտաբոբիկ կանանց խմբերի առաջն ընկնելով, շարունակ գնալով ծառերի միջով՝ մենք դուրս ենք գալիս մի բլրի գլուխ, ուր կանգնած են մի փոքրիկ շինություն մատուռի ձևով և մի հասարակ, գյուղական տուն: Հասել ենք, այդ մատուռն է Ինն-մասանց ուխտատեղին:

Ձիուց իջնելուն պես իմ ուշադրությունը գրավեց մատուռը, բայց ոչ թե շինությունը, ո՛չ. նա մի շատ հասարակ բան է, որ նոր է սկսվել և հազիվհազ վերջացել: Իմ ուշադրությունը գրավողը այդ մատուռից լավող ձայներն էին: Ես լսում եմ քահանաների տխուր և ծանր երգեցողությունը և միևնույն ժամանակ լացի ձայն, այն էլ խմբական լացի ձայն: Զարմացած գնում եմ դեպի մատուռի դռները և ի՞նչ եմ տեսնում: Փոքրիկ մատուռը ծայրեփծայր լիքն է կանանց բազմությամբ. փոքրիկ բեմի առաջ չոքած են քահանաները, տխուր ձայնով «Տեր ողորմյա» են երգում, ցամառն ժամն են կատարում: Նրանց ետևից չոքած են մի քանի տղամարդիկ: Ծնկների վրա թափված է և կանանց բազմությունը, որ տեղ-տեղ այնպես խտանում է, որ կարծես թե իրար վրա են չոքած: Եվ ահա այդ բազմությունը ողբում է, սուգ է կանչում:

Ես մնացի սառած. այդ տխուր, բեկբեկուն ձայները, որոնք խեղդվում էին ջերմ արտասուքների մեջ, մի բռպեում բռնեցին իմ սիրտը. այդ ընդհանուր կոծը, որ տխուր ձայնակցում էր եկեղեցական տխուր երգեցողության, այնքան թույլ չէր, այնքան անմիտ չէր, որ դեռ բան չհասկացած մի օտարին չհարկադրեր՝ եթե ոչ նույնպես ողբալ, գոնե ամենատխուր տրամադրության տակ մտնել, մի այնպիսի տրամադրության, որ ստանում ես մի սգատուն մտնելիս: Բայց այստեղ սգատուն չէր: Այստեղ այս բազմությունը, ես հանկարծ հասկացա, արտասուքով աղերսում էր երկնքի գթությունը: Տարին բարի լինի, բերքերը՝ առատ, աշխարհը՝ խաղաղ, մեռնողը՝ քիչ, ապրողը՝ շատ – այս էին խնդրում այսքան մարդիկ: Նրանք, այդ սգավորները, մեղավոր են, այդ հասկանում են և ահա տեսնում են, որ անձրև չի գալիս. մեղավոր, ապականված աշխարհ, որ կարող է սրբվել, մաքրվել միայն այսպիսի ջերմ արտասուքներով: Ահա հավատ...

Լացը երկար էր շարունակվում: Եվ ես մատուռի շենքում կանգնած, սաստիկ զգացված նայում էի այդ բազմաթիվ օրորվող գլուխներին, մեղմ կերպով այրվող գյուղական բազմաթիվ դեղին ճրագներին: Ահա, մտածում էի, սրանք, այս կանայքն են, որոնք մեր հին վարդապետների և մեր ժողովրդական փիլիսոփաների հասկացողությամբ սատանայական արարածներ են, որոնք պիտի աշխարհը կործանեն, որոնց չպետք է հավատալ: Հի՛ն մոլորություն, որի վրա հիմնված են մեր կանանց համար ստեղծած հասարակական և ընտանեկան օրենքները, որոնք այնքան ստորացրել են նրանց, այնքան ճնշել են, իլել նրանց լեզուն ու կամքը: Նրանք՝ իմ առջև թափված այդ քնքուշ արարածները, տղամարդի չափ գործ են կատարում և, երբ տեղն է գալիս, ամբողջ աշխարհի համար սգավոր են դառնում, երկնքի ողորմությունն են պաղատում ոչ միայն սառած, չոր խոսքերով, այլ այսպիսի հոգեբույս աղաղակներով, աղիողորմ հեծեծանքներով: Եվ դեռ նրանք վատ են... Իսկ տղամարդի՞կ, որոնք մի կաթիլ արտասուքի համար էլ այնքան ժլատ են: Օ՛, դրանք են ուրիշներին վատ ասողը...

«Տեր ողորմյան» վերջացավ, լացն էլ հետզհետե կտրվեց, և ժողովուրդը սկսեց դուրս գալ մատուռից: Ամենքի դեմքերի վրա դրոշմված էր մի տխրություն, ամենքը երկյուղով էին աչք բարձրացնում դեպի պարզ երկնքի հրաշալի կապուտակությունը. կարծես այդ գեղեցիկ օրը սև ուրվականի պես էր նրանց նայում, կարծես այդ գեղանկար խմբերը և կանաչած, կանաչ թավիշի պես պսպողող արտերը լաց էին լինում նրանց երեսին: Անձրև էր հարկավոր...

Ես գնացի տեսնելու Մելիք-Հաթամի ավերակ ապարանքը, որ այս մատուռից շատ մոտիկ է և գտնվում է մի կանաչազարդ տափարակ տեղ, այն իսկ ձորի գլխին, որ գալիս է, խորանում, անցնում է մատուռի առջևից դեպի ցած, դեպի Կուսապատի կողմը: Գնալիս ծանոթացա մատուռում երգող գյուղական քահանաներից մեկի հետ: Դա մի հաղթանդամ, արի տղամարդ էր՝ երկարահասակ, թուխ մազերով, քիչ արևառ և անվախություն արտահայտող դեմքով: Առաջին բարևից հետո նա իսկույն պարծանքով հայտնեց, որ ինքը Ղարաբաղի պատմական նշանավոր հերոս Դալի-Մահրասայի ժառանգներից է և պատրաստականություն հայտնեց առաջնորդելու մեզ ոչ միայն այսօր, այլև վաղը, մյուս օրը: Ես, իհարկե, ուրախ էի Տեր-Հայրապետի ընկերակցությամբ. այսպիսի տեղերում քաղաքի թոգերից փչացած մարդը միշտ կարոտ է մի հաղթաբազուկ օգնականի: Նա շտապեց մի երկու բան

պատմել այդ պատմական վարդապետի փոթորկալից կյանքից, խոստացավ ցույց տալ ինձ նրա քաջագործությունների մի երկու տեղերը:

Մենք հասանք Մելիք-Հաթամի ապարանքին: Ղարաբաղի զանազան կողմերում իմ արած ճանապարհորդությունների ժամանակ ես չկարողացա տեսնել իշխանական մի ապարանք: Տեղերը կան, այո՛, մնում են կիսատպռատ պատեր, ինչպես, օրինակ, Ջալալ իշխանի դարպասները, բայց մի այսպիսի ամբողջություն ոչ մի տեղ չկար, ես առաջին անգամն էի տեսնում:

Ես կանգնած էի մեծ տան մեծ դռների (դարբագա) առաջ: Այդ դռներով մտանք մի քառակուսի լայն բակ, որի շուրջը քառակուսի ձևով ձգված էր զանազան տեսակ շինությունների անընդհատ շարք: Տան վրա արդեն բռնացել է ավերումը, ամբողջ բակը լիքն է շինություններից թափված քարերով: Բայց և այդպես, մելիքի դահլիճը և նրա կից սենյակները բոլորովին ամբողջ են մնացել: Ես մտա ներս, թեև ուղեկիցս ասում էր, թե չարժե մտնել, որովհետև շատ լու է լինում. երկար նայեցի, տնտղեցի, հասկացա իշխանական տան բոլոր մանրամասնությունները: Բոլոր սենյակները, ինչ ասել կուզի, քարուկրի են, չունին պատուհաններ, և լույսը ներս է թափանցում կտուրի վրա թողած կոլոր ծակից, որ երդիկն է: Բավական լայն և մեծ դահլիճը: Պատերում շինված են շոր և անկողին դարսելու տեղեր, այլև փոքրիկ խորշեր մանր իրերի համար: Երդիկի տակ՝ հատակի վրա, երևում է օջախի տեղը. այդ տեսակ օջախներ այժմ էլ գոյություն ունին գյուղական հին ձևի տներում և Ղարաբաղի բարբառով կոչվում են «վրթօջախ»: Կարելի է ասել, որ այդ օջախը մելիքի դահլիճում վառարանի պաշտոն չէ կատարել, որովհետև սենյակը ներսի կողմից մշտական ծխից սևացած չէ, բայց թե օջախ հարկավոր է ամեն տան մեջ, այդ ես գիտեմ նրա նշանակությունից. օջախը տան սրբությունն է համարվում, նրանով երդվում են: Ինչո՞ւ ուրեմն մելիքի մի ժամանակ հարուստ դահլիճը չպիտի ունենար այդ սրբությունը: Ամբողջ տան պատերում մի կտոր փայտ չէք գտնիլ. առաստաղներն էլ քարուկրի են, զմբեթաձև, կոլորակ բարձրացած, ինչպես ասում են, թաղ տված:

Այդ դահլիճը եղել է մելիքի հյուրանոցը: Նրան կից կան չորս զանազան մեծության սենյակներ, ինչպես երևում է, ընտանիքի անդամների համար: Այդ բոլոր հինգ սենյակները շինված են բակի հյուսիսային կողմում, երեսը դեպի հարավ: Դահլիճի առջև կա մի փոքրիկ, սյունազարդ և գեղեցիկ սրահ: Իսկ բակի հարավային կողմից դեպի հյուսիս են նայում զանազան

տնտեսական շինություններ, ծառաների համար շինած սենյակներ, թոնրատուն. արևմտյան կողմից ստորերկրյա գեղեցիկ նկուղներ՝ գինի և այլ պաշար պահելու համար: Ամբողջ շինությունը միհարկանի է, չունի առանձին շրջապարիսպ: Դահլիճի և նրանցից կպած սենյակի դռների ճակատին կան արձանագրություններ, որոնք լավ չեն կարդացվում. ես նկատեցի մի բարբարոս ձեռքի հետք, որ կոտրել, եղծել է շատ տեղեր: Կարողացա կարդալ միայն Մելիք-Հաթամ, Մելիք-Իսրայել անունները և այն, որ այդ գեղեցիկ շինությունը (արձանագրության խոսքերն են) շինվել, վերջացել է աստուծու օգնությամբ: Արձանագրությունները կարելի էր կարդալ երկար ժամանակ զոհելով. ես ավելորդ համարեցի այդ, կարծելով, թե ուզածս կգտնեմ Ջալալյանի ճանապարհորդության մեջ: Սակայն որքան մեծ եղավ զարմանքս, երբ հետո, թերթելով այդ ճանապարհորդությունը, չգտա նրա մեջ որևէ իշխանի տան արձանագրություն: Բանից երևում է, որ Ջալալյանը միայն եկեղեցիների ու վանքերի արձանագրություններն է հավաքել...

Մինչդեռ ես գլուխ էի պատռում դժվար փակագրությունների վրա, եկան երկու ուրիշ քահանաներ և մի քանի գյուղականներ: Խոսք բացվեց շինության և շինողի մասին, և ես զարմանքով լսեցի ծերունի քահանայից, որ նա մի հիսուն տարի սրանից առաջ այս իսկ դահլիճում ժամահաց (քելեխ) է կերել: Մնացածներն էլ հաստատեցին այդ և պատմեցին, որ մելիքների ժառանգները մինչև վերջին ժամանակներս այստեղ են բնակվել: Քառասուն տարուց ավելի չէ, որ այսպես անխնամ և ավերակ է թողված Ջրաբերդի տերերի այս գեղեցկաշեն, պինդ ապարանքը. այժմ գյուղացիներն այստեղ իրանց տավարն են պահում, այդ պատճառով էլ բակը լիքն է աղտեղություններով: Ես չգիտեի, թե ումին մեղադրեմ:

Ապարանքի շուրջը, երկար տարածության վրա երևում են տնատեղեր, որոնք ցրված են դեպի սարը բարձրացող լանջերի երեսին: Այստեղ է եղել Մոխրաթաղ գյուղը, որ, չգիտեմ թե ինչ պատճառով փոխվել է, գնացել դեպի հյուսիս, սարի մյուս կողմը: Մի մեծ գյուղը անհետացել է, թողնելով իր գոյության մասին վկայող փոսեր միայն և ուրիշ ոչինչ, ոչ մի քար անգամ: Իսկ մելիքի ապարանքը մնացել է ամբողջ, գեղեցիկ և միայնակ կանգնել է կանաչազարդ դաշտում, լուռ, սարսափելի կերպով լուռ ապրում է դեռ մի գերեզմանական կյանքով, ապրում է մեռած, կանգուն է շնչասպառ, չորացած...

Գյուղացիները խոսում էին անցյալի և միայն անցյալի մասին: Պատմում էին ավանդություններ Մելիք-Հաթամի, Մելիք-Մեծլումի ժամանակներից.

պատմեցին նաև, թե ինչպես կուսապատեցի Մելիք-Վանին ազատել է Շահ-բուլաղի բերդում շրջապատված ռուս զորաբաժինը իսպառ ջնջվելուց, թե ինչպես է նա գիշերը ռուս զինվորներին փախցրել, դուրս բերել պաշարող պարսիկների շրջանից և բերել է այս իսկ ապարանքում ծածկել նրանց: Չմոռացան նաև հիշել, որ սարերում կան եկեղեցիներ, որոնք ավերվել են Լանկթամուրի ձեռքերով: Լանկթամուր և Լանկթամուր ամեն տեղ. ուր որ գնում եք, ուր երկու խոսք էք հարցնում մի հին ավերակի մասին, Լանկթամուրի անունն էք լսում: Ո՞վ գիտե, գուցե կադ հրեշը այս բոլոր տեղերը չի էլ տեսել, ավերել: Բայց նրա արշավանքը այնպիսի սուսկալի հիշատակ է թողել, որ ամեն տեղ մի ավերմունք նրան են վերագրում:

Դ

Կեսօր էր: Ինձ հետ եղած գյուղացիներից մեկը հրավիրեց ճաշի՝ մատաղ ուտելու: Ինն-մասը այդ բոպեին շրջապատված էր ուխտավորների ահագին բազմությամբ: Կանայք, աղջկերք, մեծ ու փոքր երեխաներ այնպես էին միմյանց խառնված, որ համարյա շարժվելու տեղ չկար: Գեղեցիկ դիրք ունի այդ ուխտատեղին: Ամեն մի ծառի տակ՝ կանաչ խոտերի վրա, նստած էին մարդկանց խմբեր՝ սուփրա-սեղան բացած: Չկար բոլոր ուխտագնացություններին հատուկ ուրախությունը. չկային աղաղակներ, քեֆի ձայներ, չէին լավում գուննայի, փողի կամ նույնիսկ գյուղական սրինգի հնչյունները: Լուրջ էր ամբոխը, միայն խուլ աղմուկ էր տիրում:

Մեր սուփրա-սեղանը բավական երկար էր, և նրա շուրջը բոլորվեցան բավականաչափ տղամարդիկ և բոլոր չորս քահանաները: Ես իմացա, որ մեզ հյուրասիրող գյուղացին շատ հարուստ մարդ է, իհարկե գյուղի հարուստ. ունի մի քանի հազար ռուբլի, անշարժ կալվածներ, մեծ թվով տավար: Օգնում է ամենքին, թեև այդ օգնությունը շատ թանկ է նստում. նա մեծ տոկոսներ է պոկում, ուրեմն վաշխառուի մեկն էր: Բայց իրան նայեինք, կասեիք, թե մի հասարակ գյուղացի մշակ է, որը եթե այնպես առողջ է, զվարթ խոսում է և խոսքը տեղ հասցնում, պատճառն այն է, որ լավ աշխատասեր մարդ է: Հացի վրա ես միանգամայն ձանձրացա մեր գյուղական քահանաների խոսք ու զրույցից: Երիտասարդներն են, նոր սերնդից, չգիտեն ծեր քահանաների պես իրանց լավ պահել, համեստություն չունին, ասում են՝ աջ ու ձախ չնայելով, խոսքի խորություն չիմանալով և ուշադրություն չդարձնելով սեղանակից գյուղացիների դժգոհությունը: Ժամանակի որդիք են և

կարծում են, թե իրանց խելոքությունն են ցույց տալիս այդպիսի աններելի հանաքներով:

Շուտով ես թողեցի այդ գեղեցիկ ուխտատեղին, այդ ահագին բազմությունը, որ ոչ ոքից, ոչ մի հատ բերանից չի լսել քաղաքավարության, ազնիվ խրատական մի խոսք և այսուհետև էլ չպիտի լսե, քանի որ այդ են նրա հոգևոր հովիվները: Մենք ճանապարհ ընկանք դեպի Մեծ-Շեն անունով գյուղը, որտեղից պիտի գնայինք Երիցմանկանց վանքը:

Կես ժամից հետո անտառի ծայրից երևաց Մեծ-Շենը: Անունը մեծ, ինքը մի ողորմելի բան, քառասուն տանից ոչ ավել: Այդ փոքրիկ մեծությունը տարածվել է մի լեռնային շղթայի հարթ ստորոտում և շրջապատվել է հիանալի տեսարաններով: Կանաչը ավելի ևս թարմ, անտառները՝ ավելի ևս գեղեցիկ: Գյուղը նահապետական կերպարանք ունի. ցածրիկ, գետնատարած տնակներ, մի փոքրիկ, աղքատ եկեղեցի, խոզեր և խոզի ճտեր աղբոս փողոցներում թավալվելիս՝ ահա այդ մեծությունը: Մենք մտնում ենք մի ոչ այնքան խոր ձոր, որի մի կողմից դուրս է գալիս գյուղի աղբյուրը, ու Պլպլան անուն ունի: Դեպի ցած, ձորն ի վայր, գյուղի այգիներն ու բանջարանոցներն ենք տեսնում, իսկ վերի կողմից, ընկուզենիների ետևից, լսվում է մի հաստ ձայն, որ բարձր երգում է մի խիստ տխուր եղանակ: Ի՛նչ անշնորհք երգիչ է, մի թե ինքը չի լսում իր ձայնը...

Մենք իջանք Տեր-Հայրապետի տանը: Արեգակն այնքան գորեղացել էր այս հովասուն տեղում, որ մենք ախորժակով նստեցինք դրսում, խոտածառի¹ շվաքում: Այդտեղից ես նայում էի գյուղի շրջակա բնությանը, անհամար սարերին: Մանավանդ շատ էր իրան նայել տալիս հյուսիս-արևմտյան կողմում դեպի վեր ցցված մի սարը, որ Հարթապտուկ է կոչվում: Նա այս կողմից համարյա տկլոր է և որքա՛ն ուղղաձիգ կողեր ունի: Այդ սարի գլխին է գտնվում գյուղի սուրբը. Տեր-Հայրապետի հայրը, որ նույնպես քահանա է, այնտեղից եկավ ահագին փափախը գլուխը քաշած, տրեխները հագած: Ինքը, մեր առաջնորդը, Ինն-մասանց անապատումն է մնացել, խոսք տալով մեզ, որ շուտով կգա մեր ետևից և իսկույն կճանապարհորդվենք դեպի Երիցմանկանց վանքը:

Բայց անցնում է ժամանակը, տերտերը չի գալիս, և մենք իզուր ենք նա-
յում մեր եկած ճանապարհին: Շվաքը, անգործ ընկնելը և միշտ միևնույն

¹ Խոտածառ դարաբաղջի գյուղականների մեջ նշանակում է խոտի դեզ

տեղին նայելը ձանձրացնում է: Իսկ ընկուզենիների ետևում բարձր երգողը չի լռում, անդադար լսվում է նույն տխուր, հաստ ձայնը: Ես իմ անբավակա- նությունը հայտնեցի. այդքան էլ գլուխ կցավացնե՞ն մի անախորժ երգ լսել տալու համար... Ինձ հասկացրին, որ ընկուզենիների ետևում է գտնվում գյուղի գերեզմանատունը և այդ երգ չէ, այլ մի կնոջ ողբը, որ կատարվում է այս քանի օրերը մեռած երիտասարդի վրա: Ես զարմացա. մի՞ թե այսքան ժամանակ ողբալուց չհոգնեց, այդքան աղաղակելուց, այդքան արտասուք թափելուց չճաքվեց: Ի՞նչ անե խեղճը, բացատրեց ինձ մոտ կանգնած գյու- ղացին, տեսնում է աշխարհս այսպես պայծառ, իսկ իր որդին չկա. օրն էլ մեծ օր է: Եվ ես հասկացա և ես ցավակից դառա այդ խեղճ մորը:

Լալկանն էլ լռեց, բայց Տեր-Հայրապետը չկա: Ուրեմն այս գիշեր Մեծ- Շենունն ենք: Բայց օրվա մնացորդը բոլորովին իզուր չկորցնելու համար գնացինք Հարթապտուկ: Ճանապարհը գնում է ոչ թե դեպի գյուղը դարձած կողմով, որ, ինչպես ասացի, պատի պես ուղղաձիգ է, անմատչելի, այլ մյուս, հակառակ կողմով: Այս կողմը ծածկված է անտառով, որի գեղեցկահասակ ծառերը կարգով կանոնով խտանում են մեր հարթ ու լայն ճանապարհի երկու կողմին, և այդ ճանապարհը մի հիանալի ծառուղի են շինում, որ մշտական ստվերի տակ է: Մի տեղ այդ գեղեցիկ ծառուղուց բաժանվում է մի փոքրիկ կաճան, որ լանջն ի վեր է սողում ծառերի արանքով: Սուրբի կաճանն է, որ, սակայն, մատչելի է ձիու համար, և մենք շուտով դուրս ենք գալիս Հարթապտուկի գլուխը:

Բավական բարձր սար է, և նրա գլուխը, իսկ որ, հարթ է ու բաց: Այդտեղ երևում են ինչ-որ շինությունների պատեր, որոնք մասամբ թաղված են գետնի մեջ, թափված է քարերի մի մեծ կույտ: Կույտի մոտ երևում է մի ցածրիկ ողորմելի շինություն, մի կերպ ծածկված հողով և ծառերի ճյու- դերով: Ես մեջքիցս կռացած նայում եմ խրճիթի բաց դռնով և չեմ կարո- դանում հասկանալ, թե ի՞նչ է դա՝ գազանների ո՞րջ է, թե մարդու համար շինած տուն: Ուխտատեղին այդ խրճիթի ձախ կողմին է գտնվում: Դա մի փոքրիկ փոս է, որ կիսով չափ ծածկված է մանր քարերով և մի արհես- տական այրի նմանությունն է տալիս: Եթե ուզում եք տեսնել մի երկու հատ մեծ, ծխոտած քարերը, դեղին մոմերի մնացորդը և մի քարի վրա դրած մի հատ կոպեկանոցը, որ, երևի, թողված է տեսնողի գրպանից կոպեկներ հրավիրելու, պիտի մեջքից ծալվեք, որ մտնեք և պիտի այնպես մտնեք, որ

կտուրի տեղ դարսած քարակույտից քարեր չթափվին գլխներիդ: Ուրիշ տեսնելու բան չկա:

Բայց ուխտատեղու կտուրից քիչ բարձր տեղից, որ գագաթի ամենաբարձր տեղն է, բացվում է մի հսկայական տեսարան. այդ որ արժե տեսնել: Այդ բարձր կետը համարյա թե հավասար է իմ հիշած ողորմելի խրճիթի հողե կտուրին և միացած է վերջինիս հետ: Ես կանգնած էի այդտեղ: Իմ ոտների տակ գտնվող ծակից, որ խրճիթի երդիկն էր, դուրս էր թափվում մի բարակ և նոսր ծուխ: Այս ի՞նչ է: Բացի մեզանից մի ուրիշ «մարդու հոտն անգամ չի գալիս». ամբողջ գագաթը միանգամայն ամայի է, լուռ: Բայց ծուխը քուլաններով դուրս է թափվում: Որտեղի՞ց որտեղ ես հանկարծ հիշում եմ մեր հեքիաթների կախարդական ծխերը, որոնք մլլում են ջադուկ պառավների կամ դևերի այսպես առանձնացած, հեռու կորած տներից: «Մի տեղ, մի տեղ, մի բարակ ծուխ էր մլլում սարի գլխին», ասում են հեքիաթ պատմողները: Իսկ և իսկ այս խրճիթն էլ այդպես է. ծուխը բարակ, երդիկից դուրս գալուն պես ցրվում է լեռնային բարակ քամու առաջ: Ուրեմն այստեղ մարդ է ապրում:

Բայց ո՞վ է: Ի՞նչ իմանաս. մի՞թե բնությունը քեզ հանել է իր գործերի գլուխը, որ դու այդպիսի մանր բաներով զբաղվես: Եվ միտքը, որ մի բույս կանգ էր առել ոտների տակ փոված հողի վրա, խլվում է, ընկնում հեռու՝ անհուն օդային տարածությունների մեջ: Նայի՛ր, տե՛ս, մի ամբողջ աշխարհ է փովել առջևդ: Այստեղ՝ դեպի հյուսիս՝ մեզանից մոտիկ, Մռավն է կանգնած. այդ ինչ հասակ է, որ տվել է նրան բնությունը, այս բարձր սարերի գլխից էլ նա այնքան բարձր է երևում, կարծես թե խրված է երկնքի հրաշալի կապուտակության մեջ: Հսկայի կատաղի կատարները շողշողում են ձյունի կապտախառն սպիտակությունից: Ձյուններից ցած տիրում է կատարյալ մերկություն. գարունը, որ այս բոլոր տեղերում արդեն տեր ու իշխան է, դեռ այստեղից չի հասել: Այդ մերկությունից էլ ցած մթնած են անտառները. մթնած են լայնաբերան ձորերը, որոնք կտրատում են նրա վիթխարի մարմինը: Դրանց թիվը շատացնում են հսկայի մոտ կույզ եկած, թզուկ սարերը, որոնք դեսից դենից գալիս են, նրան կպչում: Եվ այդ մթնած անտառների ծոցում, այդ թզուկ սարերից մեկի կազմած գոգում հազիվհազ կարողանում է սպիտակին տալ մի շինություն. դա Երիցմանկանց վանքն է: Որտե՞ղ է գնացել... Այդ խորությունների, այդ ծառազարդ լանջերի պաշտպանության մի ժամանակ թիկն տված, այժմ հանգիստ ու հանդարտ կարողանում է սպիտակին

տալ, անփորձ ուղևորին միայն մտատանջություն պատճառելով: Ինչպե՞ս պետք է գնալ, հասնել այդ տեղին: Վանքը Հարթապտուկից բավական ցած տեղ է կանգնած: Բայց այստեղ ու այնտեղի մեջ ընկած ահագին ձորը տեսեք և վանքի տեղը շատ և շատ է բարձրանում: Այդ ձորը Թարթառ գետին է պատկանում, բայց ինքը, գետը, այստեղից չի երևում, ծածկված է մի ցածրիկ լեռնաշղթայի ետևը, որ ընկած է նրա և Հարթապտուկի մեջտեղ: Դեպի արևմուտք, սարերի մեջ երևում է մի լայն հովիտ, որի միջով Թարթառն է գալիս՝ կեռմաններ տալով: Այդ հովտից դենը, հեռու, ցույց են տալիս Հաթերք գյուղի սարերը և նրանցից էլ հեռու Խոթա վանքի ուղղությունը: Հարավից գալիս են Գանձասարի լեռները, որոնք երկար ձգված են դեպի արևելք: Իսկ արևելյան կողմում Հարթապտուկը ցույց է տալիս հարթ ու հավասար դաշտավայրեր, Թարթառ իջևանի միանման, տխուր տափարակը, որ տեղ-տեղ դեղնած է, այրված՝ ջրի պակասությունից:

Այս է այն տեսարանի ընդհանուր պատկերը, որ միշտ սփռված է Հարթապտուկի շուրջը: Բայց մի՞թե այս և այսքանը պետք է ասել այդ չքնաղ և ահավոր բնության մասին: Ո՛չ, ուղևորը իր սրտի մեջ տանում է մի հիացում, որի ինչ և ինչպես լինելը բախտավոր գրիչները միայն կարող են նկարագրել: Թողնենք այն, ինչ որ կարելի չէ ասել, գանք էլի մեր Հարթապտուկը:

Այստեղ այս ամենաբարձր տեղը, կան հին և նոր գերեզմաններ: Տապանաքարերը հների մասին բոլորովին լուռ են, անխոս, անլեզու, իսկ նորերի մասին մեծ-մեծ տառերով վկայում են, որ հանգուցյալները մեծ-շենացի են: Բայց այստեղ, ինչպես երևում է, բնությունը եղել է մի ժամանակ: Հողի տակ, կարծում եմ, շինություններ կան ծածկված. երևում են դուրս ցցված պարիսպների ծայրերը: Ասում են, որ այստեղ ամրոց է եղել: Շատ հավանական է: Նորերումս մի գյուղացի տղա երագներ է տեսնում, որոնց մեջ հայտնում է նրան, որ հողի տակ ծածկված են սրբերի մասունքներ. նա մի քանի անգամ էլ ուշաթափվում է, ժողովուրդ է հավաքում իր գլխին և պահանջում է, որ քանդեն իր ցույց տված տեղը: Քանդում են և մասունքների տեղ բացվում է մի ահագին ջրամբար, որ այժմ էլ կա: Սա բավական խնամքով է շինված՝ սալքարերից, ունի փոքրիկ սանդուղք: Ինձ համար անհասկանալի մնաց այն, թե որտեղի՞ց են ջուր բերել, այս ահագին ավազանը լցրել. արդյոք անձրևի ջո՞րն է եղել հավաքվելիս, թե՞ ստորերկրյա ջուրը: Այսքանը գիտեմ, որ մոտերքում ջուր բոլորովին չկա, և ջրամբարն այժմ չոր է ու դատարկ:

Մինչդեռ մենք մտածում էինք այդ շինության և ջրի մասին, անակնկալ կերպով երևաց իմ նկարագրած խրճիթի բնակիչը: Դա մի միջահասակ ծերունի էր, մեջքից կռացած, թանի պես սպիտակ մազերով: Մի պատկառելի հնություն էր, մի կենդանի ավերակ, ինչպես ասում են, «եփած ճաշ դարձած» մի մարդ: Նա հագած էր մի հին կապույտ արխայուղ միայն, գլխին ուներ մի սպիտակ, զգգզված փափախ, մի ոտը տրեխ էր հագած, մյուսը՝ մի հին հաստ գուլպա միայն: Դա ինքն էր այդ բարակ ու նոսր ծխի տերը:

Նա պատահաբար էր դուրս եկել այդ որջից: Դես ու դեն նայեց, առաջ, իհարկե, արեգակին, որից իր աչքերը պահպանելու համար ձեռքը դրեց ճակատին և ապա, ամենից հետո, դեպի մեր կողմը նայելով, կարծես մի բան որոշեց ու դեպի մեզ մոտ եկավ: Հայտնվեցավ, որ մարդու մի աչքն է միայն քիչ տեսնում, իսկ ջուխտ ականջները վաղուց է, որ լավ չեն լսում: Այդ բոլոր գրկանքների փոխարեն կյանքը նրա մոտ դեռ մի բան էր թողել՝ պինդ և արագ քայլվածք, ոտով գյուղը գնալու և գալու կարողություն:

Մենք համարյա բղավելով մի քանի հարցեր տվինք. նա էլի դժվար էր լսում, առաջ մտածում էր, մինչև իսկ մի քանի անգամ լուռ բերանը բացուխով էր անում, կարծես թե խոսելն էր սովորում և ապա պատասխանում էր դողդոջուն, բայց ոչ բոլորովին նվազած ձայնով: Բանից երևաց, որ այդ քայքայված մարդը այստեղի մուղղուսին է, սրբի ծառան, որին ուխտավորները բաժին են տալիս: Ուխտավորի մեկը տվել էր նրան մի հատ արաղաղ, որ այժմ ընկերություն էր անում նրա հետ այս մշտալուռ և ամայի բարձրության գլխին: Կար և մի շուն, որ այդքան ժամանակ գոնե մի անգամ չհաչեց, նա էլ, երևի, իր ցեղի կենդանի ավերակն էր. ծուլությամբ քարշ էր տալիս իր պոչը կուչ եկած, կիսաբաց աչքերով քնաթաթախ նայում էր ամեն մի նոր մարդու և նայում էր, կարծես, միայն հայտնելու համար, որ ինքը անտարբեր է բոլորովին, ով ուզում է, թող գա:

Ոտից-ձեռից ընկած ծերունին նստեց մեզանից հեռու: Ես բարձր ձայնով հարցրի նրանից, թե չգիտե՞ արդյոք մի բան հին ժամանակների մասին: Նա երկար մտածեց, ձորերին նայեց իր անզգա, կարծես քարից շինած աչքերով և ասաց, որ իր մտքում ոչինչ չի մնացել: Շուտով ես հանգիստ թողեցի նրան, տեսնելով որ մարդը խոսելու ախորժակ չունի, այլ շուտ-շուտ նայում է մեր ուղեցույց գյուղացու դեմքին և ուզում է նրան մի բան հայտնե: Այդ բանը նա, վերջապես, հայտնեց ոչ թե ծածուկ, այլ բացարձակ կերպով. ուզում էր իր արաղաղը ծախել մեզ վրա:

- Մենք ուխտավորներ ենք,- հանաքի ձևով ասաց իմ ընկերը: -Եկել ենք սուրբի տակ, դու էլ մուղդուսի ես, աքաղաղը հո դու չե՞ս առել. բե՛ր, մորթենք, խորովենք, ա՛յ, մեզ հետ գինի էլ կա:

Ոչինչ չասաց ոսկի ձկնիկը

... Ու անցա՛վ գնա՛ց, գնաց դեպի խորին ծով...

Ծերունին էլ ոչինչ չասաց, գնաց, իր կախարդական խրճիթը մտավ: Խրճիթից, քիչ անցած, լսվում էր աքաղաղի ճղճղոցը: Ինչպես երևում էր, ծերունու ձեռքիցն էր այդպես աղաղակում: Երևի մարդկային ավերակը նրանով էր անցկացնում իր օրը, այդպիսի ձայներ հանել տալով էր զվարճանում: Եվ ի՞նչ խելք էր, նա դեռ ուզում էր ծախել իր այդ ձայնավոր ընկերին: Երբ մենք հեռանում էինք Հարթապտուկի գլխից, աքաղաղը դեռ հուսահատական աղաղակներ էր արձակում: Ի՞նչ էր ուզում ծեր միայնակյացը այդ խեղճից. արդյոք այնքան հիացել էր ուխտավորի պարզի վրա, որ չգիտեր, թե ինչպես պահե, թե՞ չէր հավանում նրա խելքը և ուզում էր խելք սովորեցնել:

Երեկոն մենք անց կացրինք Տեր-Հայրապետի տանը և ամբողջապես նվիրվեցինք պատմական ավանդություններին: Տեր-Հայրապետի հայրը՝ ծերունի Տեր-Մկրտիչը՝ մի պատկառելի քահանա, երկար մեզ պատմում էր իր իմացածը Ջրաբերդի մելիքների՝ գլխավորապես Մելիք-Հաթամի մասին. խոսեց Երիցմանկանց վանքի հակաթոռ կաթողիկոսության վրա, պատմեց իր պապի հայր Դալի-Մահրասայի ով և ինչ լինելը, այլև Մելիք-Հաթամի մյուս զինակից Թյուլի-Արզումանի պատմությունը: Դալի-Մահրասան, Թյուլի-Արզումանը, Երիցմանկանց վանքի առաջին կաթողիկոս Սիմյոնը մեծ-շենացի են եղել¹, այն իսկ գյուղից, ուր մենք էինք նստած: Մի գյուղից, մի համայնքից դուրս են եկել թե՛ լավ, թե՛ վատ գործիչներ. Դալի-Մահրասան և Թյուլի-Արզումանը եղել են մելիքական իշխանության անվախ պաշտպաններ, ավագակային խմբեր կազմակերպած պատիժ են տվել թշնամիներին, իսկ օծյալ Սիմյոնը Գանձասարի հակառակ կաթողիկոսներին պատժելու համար մելիքության ջնջելու գլխավոր պատճառներից մեկն է եղել: Մեծ-Շենը² գտնվելով Մոխրաթաղի և Ջրաբերդի (Ջրաբերդ գավառի բերդի)

¹ Հանգուցյալ Բաֆֆին ասում է («Խոսմ. Մելիք», էրես 114), թե Սիմյոն կաթողիկոսը խոտորաշենցի է եղել: Բայց վանքի արձանագրության մեջ պարզ ասված է. «Որ եմք որդիք Սարգիս քահանային Մեծ Շենացվո»
² Այս գյուղը հին ժամանակները իսկ որ մեծ է եղել, բայց բնակիչները մաս-մաս ուրիշ տեղեր են գնացել, ուստի գյուղը այժմյան փոքրության է հասել: Այդ երևույթը այժմ էլ կրկնվում է Ջրաբերդում, և դրա համար հետո կխոսեմ

մեջտեղը, ավելի մոտիկ է եղել պատմական անցքերին: Եվ ավանդապահ ժողովուրդը այժմ էլ չի մոռացել իր նախնիքներին, բերանացի պատմում է այն, ինչ որ խավար ժամանակը կարողություն չի ունեցել թղթի վրա արձանագրելու:

Ավանդապահության մասին խոսելով, ես պիտի վկայեմ, որ Ջրաբերդի ժողովուրդը այդ կողմից շատ բարձր է Ղարաբաղի մյուս գավառների ժողովրդից: Այստեղ գիտեն, ճանաչում են այն տեղերը, ուր կատարվել է պատմական հայտնի անցքեր, զանազանում են պարսկական և առհասարակ օտար հնությունները բուն հայկականից: Այստեղ ձեր առաջնորդը այլև չի ասում մի որևէ հին ավերակի մասին այն, ինչ որ Ղարաբաղի մյուս կողմերի հայ գյուղականների համար ստեղծարար ֆրագ է դարձել. «Հո՞ւ ա գիտում, խաների վախտան ա մնացալ»: Այստեղ այդ չեն ասում, որովհետև դեռ չեն մոռացել, թե որտեղ ինչ բան է եղել:

Այսպես՝ դեռ այստեղ մլլում է ավերակնացած, տխուր անցյալի փոշին. դեռ կենդանի են մարդիկ, որոնք սեր և ախորժանք են զգում՝ իրանց լսածերը պատմելով: Այդ ավանդություններից գեղեցիկ կերպով օգուտ է քաղել հանգուցյալ Բաֆֆին: Նա հավաքել է, արձանագրել է նյութեր Ղարաբաղի մելիքների պատմության համար և դրանով մի անգնահատելի ծառայություն է արել մեր գրականությանը, նյութեր, որոնք թեև դեռևս մշակության, ընտրության կարոտ են, բայց բավական պերճախոս են: Տեր-Մկրտիչն ասում էր, թե հանգուցյալը երկու օր իր տանն է մնացել, նստել է այնտեղ, ուր մենք էինք նստած և գրել է հարգելի քահանայի արած պատմությունները¹: Այս խուլ, մոռացված աշխարհում շատերն էին ճանաչում Բաֆֆիին և ողորմի էին տալիս նրա հոգուն:

Ջրաբերդի մելիքներից ինձ շատ հետաքրքրում էր Մելիք-Մեծունը: Դեռ «Խամսայի Մելիքությունները» առաջին անգամ կարդալիս իմ մտքի մեջ մի տեղ էր բռնել այդ քաջ և անվախ հերոսը, որ ժամանակի հանգամանքների տակ ճնշված թափառում էր զանազան տեղեր: Իր հայրենի ժառանգությունը պահելու համար նա դիմում էր ամեն միջոցների, որոնք, սակայն, վերջիվերջո խորտակեցին նրա մտքերը: Ես հարցրի նրա մասին և բոլորովին չզարմացա, երբ լսեցի, որ ժողովուրդը նրան անիծված է անվանում, տհա-

¹ Թող ներե ինձ ընթերցողը, եթե ես իմ հիշատակարանում չեմ արձանագրում իմ լսած ավանդությունները: Դրանք գրականության մեջ հայտնի ավանդությունների մանրամասնություններն էին կազմում, որոնք ավելի հարմար տեղ ունին մի վիպական գրվածքում

ճությամբ է հիշում նրա անունը: Ժողովուրդը պատմում է, թե Ադա-Մամադ-
շահը Թիֆլիսը քարուքանդ անելուց հետո Մելիք-Մեծլումին է թողնում
հայոց եկեղեցիների վիճակը, որ ինչպես ուզե, այնպես էլ անե, իսկ սա
կողոպտում, ավերում է այդ եկեղեցիները, իբրև թե վրեժ է հանում այն դա-
վադրության համար, որ մի քանի տարի առաջ պատրաստված էր Թիֆլի-
սում նրա անձի դեմ: Այդ դեռ քիչ է: Մինչև վերջին շունչը Մելիքը, ինչպես
հայտնի է, Շուշու խանի արյունաբբու թշնամին էր և իր ամբողջ ուժն ու կա-
րողությունը գործ էր դնում այդ խանին ոչնչացնելու համար: Ամեն կողմից
անհաջողությունների պատահելով, այդ մարդը այն աստիճանին հասավ,
որ մեծամեծ վնասներ էր հասցնում Շուշու շրջակայքում ապրող հայ գյու-
ղացիներին, ավերում էր նրանց արտերը, սարսափելի պատիժներ էր տա-
լիս: Բայց միևնույն ժամանակ Մելիք-Մեծլումը դավաճան չէր, ուրացող չէր,
այլ իր երկրի պաշտպանության համար օր ու գիշեր մտածող մի քաջ: Եվ եթե
ժողովուրդը նրան անիծում է, պատճառը այն է, որ այդ եռանդոտ մարդը
բոլոր միջոցները սուրբ էր համարում իր նպատակի առաջ:

Ե

Լուսացավ առավոտը, նույնպես թարմ, անուշ, հիանալի պարզ առավո-
տը, ինչպես էր նախընթացը: Ժամի հինգին մենք ոտի ենք կանգնել, իսկ մի
ժամուկեսից հետո, ձի նստած, գնում ենք դեպի Երիցմանկանց վանքը:

Մեր ճանապարհը սկզբում վատ չէր: Նա լայնացած գնում էր անտառների
միջով՝ պտույտ տալով Հարթապտուկի հյուսիս-արևմտյան ստորոտի մո-
տով: Մենք գմայլված լսում ենք բազմաթիվ թռչունների առավոտյան քնքույշ
լույսը ջերմաջերմ ողջունող գեղգեղանքը: Դեռ գիշերվա թմրությունն էր
բռնացած բնության վրա, նա էլ հետզհետե տեղի էր տալիս մի գվարթության,
որ ապրիլի հիանալի առավոտի ամբողջ էությունն է: Ուղիղ ճանապարհը
հետո թեքվեց դեպի ցած՝ դեպի Թարթառի ձորը, որը դեռ ամբողջովին չէր
երևում: Անցնելով մի քանի արտերի մոտով և մի քանիսի միջով՝ մենք հա-
սանք այն լեռնային բարձրության, որ, ինչպես վերև ասացի, ընկած է Թար-
թառի ափին: Այդ բարձրության մյուս երեսը գետին է նայում: Ստորոտը այս
կողմից կոչվում է Խանագյահ: Մեզանից քիչ հեռու՝ մի արտի ծայրին, երևում
էր մի ավերակի պատը: Տեր-Հայրապետը պատմեց, որ դա իջևան է եղել

Երևանից եկող մեծ ճանապարհի վրա: Ճանապարհը, իջևանները Երևանի խաներին են պատկանել, և Թարթառի ձախ ափին հաճախ պատահող այդ ավերակ իջևանները այժմ էլ ցույց են տալիս մեծ ճանապարհի ուղղությունը, որ այսպես գնում է, անցնում դեպի արևմուտք, Նոր-Բայազետի գավառը: Բայց ճանապարհն այժմ աննկատելի է:

Այդտեղից մենք մտնում ենք մի թանձրախիտ անտառ, որ բոլորովին ծածկում է մեզանից շրջակայքը. երկինքն էլ եթե երևում է մի կերպ, պատճառն այն է, որ ծառերը շատ չեն բարձր: Անտառը ահագին տարածություն ունի. նա այդպես խիտ պատած է ոչ միայն այս լեռնային լանջը, այլև շրջակա բոլոր ձորերն ու բարձրությունները: Գնում ենք, գնում, անտառը ավելի թանձրանում է, անտառային ամայությունը, ճնշող լռությունը խառնում է մեր սրտի մեջ հաստատված հիացման հետ մի տեսակ երկյուղ, մենակության, անմարդ, անձայն դատարկության երկյուղը: Բայց ահա անտառի խորքից, հեռվից, մի խուլ ձայն է գալիս, որ կրկնվում է կանոնավոր կերպով: Փայտահատի կացինն է գործում այդտեղ, և այդ ձայնը, այդ խուլ թնայունը, որ պատճառում է աներևույթ ձեռքը, պակասեցնում է սրտի երկյուղը: Որքան մենք առաջանում ենք, այնքան պարզ լսելի է դառնում ձայնը, ավելի և ավելի հեռացնում է իր խուլ արձագանքը անհամար բունների ծոցում: Շուտով աներևույթ փայտահատը մեր ետևումն է մնում. հետզհետե ձայնը նվազում է, խեղդվում, փոխվում է կարճատև խուլ թխկոցների և վերջապես մարում է, կորչում մի ինչ-որ անկյունում: Իսկ ծմակը քիչ գուրթ է ցույց տալիս, մի նեղ պատուհան է բաց անում մեր առջևը անհամար ճյուղերի միջով: Այդտեղից երևում է հեռու տարածված ծմակների թագավորությունը, իսկ նրա մեջ՝ մի բարձրության վրա, ավերակների մի խումբ, որ կոչվում է «Քաղաքատեղ», երևում են մի ավերակ ապարանքի պատերը, դռները, այլև ուրիշ ցրված պատեր: Այդ ապարանքը Մելիք-Հաթամի մյուս ապարանքն է, որ որքան նկատելի է այսպիսի մի հեռու և նեղ տեղից, ավելի գեղեցիկ է, քան Ինն-մասանց անապատի մոտ տեսածը: Որքան մեծ էր իմ դժգոհությունը, երբ տեր հայրը հայտնեց, որ այդ ավերակները մենք մոտիկուց տեսնել չենք կարող, որովհետև գնում ենք բոլորովին ուրիշ ուղղությամբ: Մեր ու այդ «Քաղաքատեղի» մեջ կար մի մեծ, անդնդախոր ձոր, որի եզերքով հազիվ կարողանում էր գնալ մեր նեղ կաձանը: Եվ ես ճարահաստյալ պիտի խեղդեի այդ գեղեցիկ ավերակները տեսնելու փափագս: Տեղից շարժվեցանք,

անտառն էլի կլանեց մեզ, Բայց Տեր-Հայրապետը այդ օրը իմ ձեռքից չպրծավ, այնքան տրտնջացի:

Մենք, վերջապես, դուրս եկանք լեռնային բարձրության այն երեսը, որ նայում է Թարթառի ձորին: Այդ տեղը կոչվում է «Սերգեվիլին սեռ»: Ճանապարհը դեպի ցած է գլորվում անտառի միջով, որ այստեղ, մանավանդ, հրաշալի, աննկարագրելի գեղեցկություն ունի: Արդեն լսվում է մի խուլ վշտոց, այդ Թարթառն է: Բայց նրան չենք տեսնում. ծմակը, որի վրա դեռ չը տարածվել առավոտյան արեգակի լույսը, ավելի խիտ է և ավելի խնամքով է ծածկում իր մեջ ուղևորին:

Վշտոցը¹ արագ-արագ մոտենում է մեզ, բարձր և բարձր է լսվում: Երբեմն ձյուղերի միջով երևում է մի ժայռ և նրա վրա մի պարիսպ: Դա Ջրաբերդն է... Եվ ես վազում եմ, որ մի վայրկյան առաջ տեսնեմ Թարթառը և նրա ահարկու բերդը:

Ահա նա... Ես գետի ափին եմ, իսկ իմ առջև՝ մյուս ափին, ցցված է, բարձր, բարձր է գնացել ժայռը իր բերդի հետ: Սուսկալի, վայրենի տեսարան... Մարսափը պատում է մարդուն, երբ նա չորս կողմին է նայում: Ինքը մի խոր ձորի մեջ է. տեսնում է այն ճանապարհը, որով պիտի գնա, տեսնում է այդ զարմանալի բերդը: Չորս կողմը ժայռեր, ձորեր, սարեր, ծառեր. տեսնում է և դեպի ցած, դեպի գետինն է քաշվում, ահուդողով նայում է երկնքին, որ այնքան բարձր է գնացել, որ դարձյալ գեղաժպիտ է, դարձյալ սքանչելի կապույտ, և մարդը՝ խեղճը, հիանում է, սքանչանում, վախում և ժպտում:

Պղտոր է Թարթառը: Ահագին քարերը թափվել են նրա ճանապարհին, և նա, վշտալով, մոնչալով, ուստոստանում է նրանց մեջ, պղտոր ալիքներով հարվածում է նրանց գորշ, անզգա, բութ մարմինները և ցրվում է, կտրատվում, դեսուդեն գնում: Մարդու աչքերն է տանում. նրա այդ հավիտենական վայրենի խաղն ասեմ, թե չարչարանքը, որին վկա են այս նեղ սարսափելի ձորը, այս ժայռերն ու կուսական ծմակը:

Չո՛ր... Լեռնային բարձրությունը, Սերգեվիլին սեռը միայն մի տեղ է քիչ հարմար ոտ ձգում դեպի գետը. այդ այն իսկ տեղն է, որով մենք եկել ենք: Մնացած տեղերում նա գետի վրա կախ-կախ է արել ահագին ժայռեր, որոնք

¹ Ըաֆիին Ջրաբերդը նկարագրելիս («Աղբյուր», 1883 թ.) ասում է, թե Թարթառի ձայնը երկու-երեք սարերի ետևն է լսվում ստորերկրյա առեղի թնդունների պես: Այդ չափազանցություն է, Ջրաբերդի մոտ այդպիսի բան չկա

դարձյալ ծածկված են մեծ-մեծ ծառերով: Բնության այդ ահարկու պատերը, այդ սեպացած ժայռերը մատչելի են միայն քարայծերին. ուրիշ կենդանի ոտ դնելու տեղ չունի: Այդ ժայռերի դիմաց՝ գետի մյուս կողմից, գալիս է ուրիշ լեռնային բարձրություն, գալիս է ցցվում գետի վրա և սպառնալից հայացք տնկում այս կողմի բարձրության ճակատին: Եվ այդպիսի հայացք տնկած բարձրությունը մենակ չէ գալիս առջևից, իր հետ բերում է մի վշվշան գետ, որ կոչվում է Թրդի. սա այստեղ, իմ աչքերի առաջ, վազվազ ընկնում է Թարթառի գիրկը: Թրդու համար լայն ու մեծ ձոր է բացված. այդ ձորով է գնում վանքի ճանապարհը: Իսկ այնտեղ, ուր նա խառնվում է Թարթառի հետ, հիմք է բռնում և վայրենաբար դեպի վեր է ձգվում Ջրաբերդի ժայռը: Այսպես ամեն կողմից ժայռեր են միմյանց դեմ-հանդիման արձանացել, իրար են նայում: Նրանց տեսնելով՝ իմ միտն են գալիս ռուս բանաստեղծի (Լերմոնտով) այս գեղեցիկ տողերը.

*Ես տեսա մթին ժայռերի դեզեր,
Երբ նրանց ճեղքում էին վտակներ,
Եվ ես ըմբռնում էի նրանց մտքեր.
Ի վերուստ էր ինձ այդ շնորհքը տրված:
Օդի մեջ վաղուց հետե տարածված
Կան քարե գրկերն, և ամեն վայրկյան
Ծարավ են քաշում իրար հանդիման.
Բայց օրեր փախչում, փախչում են տարիք –
Նրանք չեն երբեք իրար գալ մոտիկ:*

Ջրաբերդ... նա պինդ է կանգնած այս ահարկու ձորի վրա: Ետևից ընկած է Մռավի ամպածրար շղթան, որ մի քանի համեմատաբար ցած բարձրություններով միացած է բերդի հետ: Եվ կարծես Մռավը այդ բարձրությունների միջոցով միշտ դեպի առաջ է հրում այս ժայռը, բայց սա ոտները դեմ է տվել Թարթառի լիզող լեզուներին, առաջ գնալ չի ուզում և անհնարին ուժին դիմանալու համար ետ է գցել իր գլուխը, կուրծքը ուռցրել է, դեպի առաջ ցցել: Եվ Թարթառը մտերմությամբ պտույտ է տալիս նրա առաջ, շրջան է գործում, երկու կողմից պատ տալիս ահարկու, բերդի ոտների մոտ: Երբորդ՝ արևելյան կողմից Թրդին է Ջրաբերդի ժայռը քերում: Եվ ժայռը այդպիսով Ջրաբերդ դառնալով, մարդկանց պատսպարել է իր կրծքի ու գլխի վրա:

Ջրաբերդը ցած է իրան շրջապատող շատ սարերից. Սերգևիլին սեռն անգամ բավական բարձր է նրանից: Այդ շրջապատող սարերից նայողը նրան

աննշան բան կհամարե: Բայց նա ահարկու, դողացող Ջրաբերդ է այս ձորերից: Նրա երեք կողերը, որոնք նայում են ջրերին, բոլորովին անմատչելի են, ցցված են այնպես ուղղաձիգ, որ մարդ նայելիս միայն հառաչում է: Ձորից մոտիկ այդ ժայռը շրջապատած է ամուր պարիսպով: Մարդը, ուրեմն, բերել է իր հնարագիտությունն էլ միացրել է բնության ամրությունների հետ, որ կարողանա ապահով մնալ իր նման ձեռքից: Շրջապարիսպը հարկավոր է եղել այդ ձորից դեպի բարձր գնալու հնարը միանգամայն ոչնչացնելու համար:

Թարթառի միմյանց հարվածող, ոսոռոսացող կոհակների վրայով անցնելու համար պատրաստ է փոքրիկ, փայտե կամուրջը, որ քիչ բարձր է ջրերից: Գնալիս քո և ձիուդ ոտների տակ ճոճում է փայտե կամուրջը, որ տարին մի քանի անգամ զոհվում է հորձանքի խաղին, անհետանում և դարձյալ շինվում է Երիցմանկանց վանքի միաբանության ջանքերով: Կամուրջից մի քանի քայլ բարձրանալով Թրդի գետի ժայռոտ ձորի կողքով՝ ճանապարհի գլխին՝ ժայռի մի ահագին բեկորի վրա, երևում է բերդի դուռը, որ պարսպի հետ դեռ ամբողջ է մնացել, բայց, իհարկե, առանց փայտյա մասերի: Ես վճռել եմ բարձրանալ բերդի գլուխը, բայց չեմ վստահում ընկերներիս հայտնել, վախում եմ, թե միգուցե նրանք հրաժարվին ինձ հետ գալուց: Տեսե՞ք՝ ինչ դժվարություն է, որ Դալի-Մահրասայի ժառանգը, մեր առաջնորդող տեր հայրը, որ «Հայր մերի» պես գիտե Թարթառի ձորի բոլոր ծակուծուկերը, դեռ երբեք չի գնացել դեպի բարձր: Վերջապես ես ծիծաղելով իմ առաջարկությունն արի, և երբ նա համաձայնեց, ավելի իր արժանավորությունը չկորցնելու համար, իմ մյուս ընկերն էլ սիրտ առավ, և մենք ձիաները թողեցինք ճանապարհին, մեր ձիապանի մոտ, գնացինք դեպի բերդի դուռը:

Առջևից, իհարկե, Տեր-Հայրապետն էր գնում: Նա դռնով մտավ, բայց իսկույն կանգնեց և, երբ ես հասա, ցույց տվեց մեր առջևը ցցված սև ու մոխրագույն ժայռերը, ասաց անհույս կերպով. «Այսպիսի տեղեր են, ի՞նչ գնանք...»: Նա չէր ուզում բացարձակ ասել, թե գնալ չի կարելի:

-Այստեղ ահա կաձան է երևում,- ասացի ես.- տե՛ս, այսպես բարձրանում է, ուրեմն մարդիկ գնացել են, մե՞նք ինչու չգնանք: Գիտես, որ Րաֆֆին էլ բարձրացել է:

Տերտերը առաջ գնաց, մենք՝ նրա ետևից: Առաջին իսկ քայլերից հարկավոր եղավ բռնել մանր թուփերի ճյուղերից դեպի վեր գնալու համար. եթե

թուփ չէր լինում, օգնում էին բույսերն ու խոտերը, վերջապես մտրակի կարճիկ կոթը, որի վրա ես հենվում էի՝ օգտվելով այն հանգամանքից, որ այդ ուղղաձիգ լանջերը անցնելու համար պետք էր մեջքից շատ կռանալ: Նեղ և անտանելի, քարքարոտ կածանը, որ սկզբից մեզ սիրտ տվեց, դեռ կախ ընկած ժայռերին չհասած՝ կորավ, անհայտացավ: Երևի մարդիկ մինչև այդ տեղն են գալիս, նստում բերդի պարսպի վրա, որ տեսնեն Թրդու ու Թարթառի խաղերը: Բայց այդքան ճանապարհը ամբողջի կեսն էլ չէր, կեսի կեսն էլ: Թուլացած, շնչասպառ՝ ես և իմ ընկերը ընկանք խոտերի մեջ, սկսեցինք դժվարությամբ շունչ քաշել և սրբել մեր քրտինքը:

Չար կածանի այդ հանկարծակի կորչիլը ավելի ևս մեզ նեղացնում էր: Այդ դեպքում հայտնվեցավ, թե ինչպիսի թանկագին բան է լեռնցի առաջնորդը լեռներում ճանապարհորդողի համար: Մեր տեր հայրն էլ լեռնցի էր. նա չէր հոգնել, թողեց, որ մենք հանգստանանք, ինքը գնաց, որ եթե չգտնե մի նոր կածան, գոնե իմանա, թե որ տեղերով կարելի է գնալ: Երկու բույս չանցած՝ նա կանգնած էր այն ժայռի գլխին, որի տակ մենք հանգստանում էինք և ցույց տվեց մի ուղղություն, որ տանում էր այդ ժայռի տակով դեպի արևելք և ապա ոլորվելով՝ դեպի բարձր է գնում: Մենք գնացինք կույ չեկած՝ համարյա միշտ մի ձեռքով գետինը շոշափելով: Բերդի ժայռոտ և քարոտ մարմինը շատ տեղ ծածկված է հիանալի խոտով, որ մի քանի տեղ մինչև մարդու ծունկն է հասնում. շատ են նաև զանազան տեսակ վայրի բույսերը, այնպես որ տարվա այս ժամանակ չես իմանում, թե ոտդ ինչպիսի տեղ ես դնում: Իսկ ժայռերի ճեղքերը, որոնք մեր գնալու տեղերն են, հակառակի պես բռնած են մեծ ու փոքր թփերը: Որոշել, թե որտեղով և ինչպես պիտի գնաս, որ մարմնիցդ ոչինչ չկոտրես, չվնասես, կարող է միայն լեռնաբնակը, որ ճանաչում է այս տեսակ տեղերի բնությունն ու կերպարանքը: Եվ տեր հայրը, ժայռի ծայրին կանգնած, մեզ է նայում, իսկույն զգուշացնում է, երբ մենք մի ծուռ քայլ ենք փոխում: Ինչպիսի՜ «անիծված» տեղերով գնացինք... Տեսնում ես, մի ժայռի հիմքն է առջևդ կանգնել. մի ինչ-որ խոռոչ կա ոտներիդ մոտ, որը դու իսկի չես էլ նկատում, շտապում ես ոտ դնել, անցնել. բոլոր երակներդ կարծես տաք սնդիկով են լցված, ուզում ես կրակի պես առաջ գնալ, ոչնչացնել այդ դժվարությունները, թեև շնչելու օդ չես գտնում: Բայց ժայռի ծայրից տեր հայրը փոխել է տալիս ճանապարհը: Ոտդ դեպի խոռոչը մի՛ տանիր, պիտի անցնես ժայռի հիմքին քավելով: Ավելի կույ չեկ, մտիր ժայռի տակը, դա դեռ քիչ է. հենց այդ ժայռի տակից էլ բսել է մեծ թուփը: Ի՞նչպես

գնաս: Կամ պիտի ընկնես թփի վրա, ճմլես, ճլխես քո տակ, որ անցնես, կամ թե մի-մի պիտի վերցնես ճյուղերը, քիչ հեռացնես, որ մի նեղ, սատանայական անցք բացվի առջևդ:

Բայց այդքան աշխատանքը էլի մեզ թուլացնում է, էլի մենք շնչասպառ ընկնում ենք քարերի վրա, որ հանգստանանք: Տեր հայրը ծիծաղելով առաջ է գնում: Կարճ հանգստությունից հետո մենք էլի սկսում ենք դեպի վեր մագլցել: Ահա, վերջապես, երևում են պատերը. նրանցից ցած, թեք լանջիվայրի վրա բսել է այնպիսի հիանալի բարձր ու խիտ խոտ, որ ափսոսում ես կոխ տալ. դա մի կատարյալ արտ է, և տեր հոր քայլերը երևում են այս ու այն կողմ թեքված խոտերի մեջ: Այդ հետքերը նման են նոր եկած խոր ձյունի մեջ մնացած հետքերին:

Ահա մենք ավերակների մեջ ենք: Մի քանի հատ մեծ ու փոքր տներ են, զանազան ուղղություններով շինած: Կտուրներն են միայն փլվել, բայց մնացած մասերը զարմանալի ամբողջ են մնացել. մենք մինչև անգամ դռների գլխին, պատի մեջ դրած փայտի ձողերը այնպես անվնաս են, որ կարծում ես, թե երկու, երեք տարի օրիցս առաջ են դրված: Մենք դանդաղ կերպով, հետաքրքրությամբ ման եկանք ամեն մի տուն, նայեցինք ամեն մի ծակուծուկ տեղ: Մի հատ տառ չգտանք ոչ մի քարի վրա, բայց գոնե գաղափար կազմեցինք անցյալ դարերի մեր հայերի ռազմական գիտության և գործերի մասին:

Կարճ բան կարելի է ասել Ջրաբերդի մասին, այնքան, որքան ես ասացի: Բայց մի թե այս հանգամանքը կարող է պատճառ համարվիլ, թե ուրեմն չարժե այդքան նեղություն կրելով բարձրանալ, տեսնել նրան: Չէ՞ որ Ղարաբաղի ոչ մի կողմում չկա այսպես ամբողջ մնացած հին ամրություն և միայն այս Ջրաբերդն է, որ, լինելով այս կողմերում իշխողների բերդը, դեռ պինդ է մնում այս ժայռի գլխին՝ չնայելով, որ վաղուց, շա՛տ վաղուց են հեռացել գնացել նրա տերերը. փշրվել, հող են դառել այն ձեռքերը, որոնք կազմել են բերդը, կազմել են պաշտպանության գործը, իսկ այդպիսի ձեռքեր հսկայական են: Վայրենի բնությունը ընկճել, զենք շողացնել նրա կատարի վրա, հեշտ բան չէ:

Եվ շինությունները, որ այժմ սաստիկ զարմանք են պատճառում, զարմանք, թե ինչպես են այստեղ քար ու կիր հասցրել, այսպիսի կանոնով կարգել, կազմել, կանգնած են տխուր ու լուռ: Նրանց վրա հովանավոր են ծառերը, որոնք, արմատ դնելով ավերանքի, հավիտենական մեռելության կրծքում, այդ տների մեջ, աճում, բազմանում են, ընձյուղներ արձակում,

գեղեցիկ կյանք վարում, մեղմ օրոքվում են լեռնային քամու հոսանքի տակ և սիրուն, զովարար սուսափյուն արձակում: Փշրված, ջախջախված բախտի բեկորների վրա շունչ ու թարմություն ստացած ծառերը հյուրասիրում են իրանց զով շվաքի տակ մեզ, տանջված, քրտինքում կորած ուղևորներիս, ուժ ու կենդանություն են հաղորդում մեզ՝ լիուլի վարձատրում են մեզ այնքան չարչարանքների փոխարեն: Եվ մենք գեթ մի կես ժամ երջանիկ մարդիկ ենք այստեղ նստած: Երբ ուռած, տաքացած երակները հանգստանում են, քրտինքը ցամաքում է, թոքերը կանոնավոր կերպով օդ են ընդունում, մարդու առաջն է կանգնում բնության հավիտենական խաղը. մեռելություն, մահ՝ մի կողմից, և գեղածիծաղ, երիտասարդական քնքուշ կյանք՝ մյուս կողմից, նայում են նրան: Երկուսն էլ համր են, երկուսն էլ միտք են տալիս: Մեկը՝ արդեն մեռածը՝ լքյալը, իր կմախքի տեսքով, իր ծեր, անպետք մարմնի տկարությամբ մարմնացած վիատությունն է, որ, կարծես, ծանր, քարային սառնությամբ ասում է. «Է՛հ, ինչո՞ւ եք մնում. լավ է ավերակը, ոչնչությունը, հավիտենական անդորր անհայտությունը»: Իսկ մյուսը՝ կենդանությունը, որ աճել, բարձրացել է այդ մահահոտ, ավերակային անշարժության ուտերին և բարձր է գնացել՝ ասում է ժպտալով այնքան քաղցր, որքան քաղցր է մեզ շրջապատող անդունդի խորքից լսվող մոռահավի ցավ ու կրակ կտրած երգը. «Ա՛խ, որքան լավ է ապրելը, ինչքա՛ն սիրուն բան է միշտ թարմ, երիտասարդ մնալը»: Եվ երկուսն էլ, վիատեցուցիչ մեռելությունն ու լուսատու երիտասարդությունը, մրցում են միմյանց հետ, միմյանց առաջն են ընկնում և հարցնում հանգստացած ուղևորին. «Ո՞րն է լավը, ասա՛, ո՞րը»: Իհարկե, երիտասարդությունը, որ մեռելությունից բարձր է կանգնած: Հանգիստ է, այո՛, խաղաղ է մեռելությունը, բայց նրա վրա կանգնած երիտասարդությունը, որ սառչում, ճաքվում է ձմեռային սառնամանիքներից, կռանում է ահեղի փոթորիկների տակ, որ դողում է երկնքի սարսափելի կայծակներից ու որոտից, այդ երիտասարդությունն է սիրելի. նա գոնե կարողանում է այսպես սքանչելի գարնան տոն կատարել, ծլել ու ծաղկել, այսպիսի եռանդով մեր սիրտը քաղցրացնել:

Եվ որպեսզի չտեսնենք մեռելության սառցնող հեգնությունը այդ մտքի վրա, վեր ենք կենում ու առաջ գնում: Ավերակներից քիչ դենը՝ գագաթի վրա կա կալի չափ հարթ և հավասար տեղ: Փարթամ և գեղեցիկ խոտերի բնական արտը ծածկել է այդ տեղը. մի քանի հատ ծառեր կանգնած են այդ կալի ծայրին, շվաք են արձակում դեռ առատ ցողից թրջված երկարահասակ

խոտի վրա: Երևի այս հարթոցն է եղել բերդի դիտանոցը. այստեղ են, երևի, խորհրդի հավաքվել բերդի պաշտպանները: Եվ այժմ մենք՝ երեք հոգի, ուս դրած այդ գեղեցիկ տեղը, թագավորում ենք Թարթառի և Թրդու ահռելի ձորերի վրա: Մանավանդ սուկալի է այս վերջին ձորը: Այո, արևմտյան կողմից Ջրաբերդի ժայռը վայրենության վերին աստիճանին է հասնում: Միապաղաղ ժայռը կտրված է, պատի պես ցած, ցած և ցած է գնում: Հրե՛ն, Թրդին, կորած այն խոր ձորում, վշշում է անգոր: Այստեղից բաց թողած մի փոքրիկ քարն էլ կարող է այնտեղ կանգնած մարդն սպանել: Մարդու գլուխը շուտ է գալիս, աչքերը մթնում են, և նա դողալով ետ է քաշվում: Այդ կողմից՝ Թրդու ափից բարձր, մեր այս միապաղաղ ժայռի ստորոտը քերելով, առաջ է գնում մի նեղ կածան, որ տանում է դեպի Երիցմանկանց վանքը: Այդտեղ կանգնած են մեր ձիաները. որքա՛ն փոքր են երևում նրանք, մյուս, արևելյան կողմից՝ Թարթառի լայն ու քարքարոտ դաշտն է երևում և պղտոր կոհակների աղմուկով միմյանց զարնվիլը: Հարավային կողմից ընկած է Մերգևիլին սեռը: Բայց ի՞նչ է դա. սա՞ր է, թե՞ բնությունը ծառերը միմյանց է կպցրել, բարձրացրել, սարի նման մի ծառային բարձրություն շինել: Կարող է այդ էլ լիներ. աչքը խաբվում է, այնքան խիտ է անտառը: Միայն հյուսիսային կողմն է, որ Ջրաբերդի առաջ չի բաց անում այնպիսի լայն ու մեծ ձորեր. այդ կողմից բերդը միավորվում է Մռավի ցած ճյուղերից մեկի հետ, բայց այդ կողմից էլ նա անմատչելի է, որովհետև բերդի ժայռը այդ կողմից էլ սարսափելի վիհեր և անդունդներ է բաց անում: Մի խոսքով՝ ամեն կողմից մեզ շրջապատած է սաստիկ ուժեղ, սաստիկ մեծ բնությունը. ամեն ինչ գլուխ պտտեցնելու չափ հսկայական է, վայրենի և գեղեցիկ:

- Ժամանակ է, գնա՛նք, գնա՛նք, օրը տաքանում է,- ասում է տեր հայրը՝ ցույց տալով վանքը, որ այստեղից լավ երևում է:

Վերջին ազահ հայացքն ենք ուղղում, մեկ էլ տեսնում ենք չորս զարմանալի կողմը և, անցնելով ավերակների միջից, ցած ենք գնում վազվզելով, հազիվ մեզ պահելով. այժմ էլ պետք է կողքի վրա կռանալ, մտրակի կոթը հողին դեմ տալ, հավասարակշռություն պահել, թե չէ, եթե ոտդ դուրս պրծավ, ինչպես ասում են, մեծ կտորդ ականջդ է մնալու:

Չմոռանամ հիշել, որ բերդի միջից ժայռերը փորած ծածուկ անցքեր կան, որոնք տանում են դեպի Թարթառը: Դրանք խիստ մթին և նեղ են, ցած են գնում աստիճաններով և անվանվում են ջրագողի ճանապարհ: Բերդի պաշարման ժամանակ այդ տեղերով են գնացել, Թարթառից ջուր վերցրել: Գե-

տի մյուս կողմից երևում են ժայռից դուրս բերած ծակերը, որոնք ուղղակի ջրի վրա են: Որքան աշխատանք, արյուն քրտինք է կերել այս բերդը. Որտե՞ղ է այն երևակայությունը, որ կարողանա մի այդպիսի սոսկալի հաշիվ անել:

Ցած գլորվելով, անհամար քարերի մեջ ձեռքեր վիրավորելով՝ մենք էլի հասանք բերդի դռներին, դուրս եկանք, նստեցինք շվաքում: Դեպի բարձր, դեպի ժայռի գագաթը նայեցինք, զարմացած լուռ միմյանց մտիկ արինք, գլուխներս շարժեցինք ու էլի ճանապարհ ընկանք:

Այս է Ջրաբերդը, որին ժողովուրդը անվանում է Ջրմուկի կամ Ջերմուկի-Ղալա: Նա պատմություն չունի, նրա անցյալը շատ մութն է: Ո՞ր ժամանակներից է նա պատերազմական բերդ դարձել, հայտնի չէ: Մեր պատմագրությունների մեջ միայն մի տեղ է ինձ հայտնի նրա անունը: Կիրակոս պատմագիրը (գլ. ԾԳ) հիշում է Չարաբերդ, որ 1250 թվականներին թաթար Բաթու իշխանի որդի Սարդախը կրկին տալիս է Խաչենի տեր Ջալալ իշխանին իբրև նրա սեփականություն, որ դրանից առաջ ուրիշները խլած են եղել: Չարաբերդ անունը այժմ էլ տեղ-տեղ գործ է ածվում. ուրեմն Ջրաբերդը երեք թե չորս անուն ունի: Բայց նրա կատարած դերը շարունակվել է մինչև անցյալ դարու վերջերը: Մեր Տեր-Հայրապետը պատմում էր, թե իր տատը այստեղ պաշարված է եղել մի ժամանակ մյուս գյուղացիների հետ: Բհարկե, այսպիսի մի ամրություն անհնարին էր պատերազմական գործողություններով գրավել, ուստի պաշարողները համբերությամբ նստել են նրա շուրջը, հեռվից նայել, մինչև որ կամ մի դավաճան կմատնե բերդը, կամ թե սովը կսկսե պաշարվածներին զոռել: Ավանդությունը պատմում է, թե մի անգամ այդպիսի սով է ընկնում բերդի մեջ, բայց գտնվում են քաջեր, որոնք չեն թողնում, որ սովը մարդկանց գերության դուռը տանե: Նրանք դուրս են թափում բերդի շինությունների համար ամբարած կիրը, փռում են, սկսում քամել մաղերով: Պաշարող թշնամին տեսնում է այդ, կարծում է, թե կիրը այլուր է, որ դեռ երկար ժամանակ պիտի պահե պաշարվածներին և հուսահատված քաշվում է, հեռանում: Բայց ամեն անգամ չեն կարողացել կրով խաբել թշնամուն: Եվ ժողովուրդը պատմում է, թե եղել են մարդիկ, որոնք գիշերները դուրս են եկել բերդից, խուլ ու դժվար ճանապարհներով գնացել են գյուղերից այլուր բերելու և կշիռը կախ արած հավասար բաժանել են պաշարվածներին: Ժողովուրդը զիտե այդ հերոսներից երկուսի անունը.

մեկը Թյուրլունց Կարմրափթավան¹ է, մյուսը՝ Ավրաքոլին: Մի այսպիսի բերդից, պաշարման ժամանակ, գիշերով դուրս գալ, գնալ, այլուր բերել... մեծ հերոսություն է:

Զ

Թրդին բավական տեղ ուղեկցում է մեզ: Մենք ոտով ենք գնում, որովհետև ժայռերի վրա ընկած ճանապարհը բավական վտանգավոր է. ի՞նչ տեսակ ճանապարհ են կարող շինել մարդկանց ու անասունների ոտները այնպիսի գորշ, միապաղաղ ժայռերի վրա, որոնք, կարծես, իրանց գոյության սկզբից չեն փոխել իրանց դեմքերը:

Արեգակը բարձրացել է, կեսօրվա տեղին է հասնում և բավական զգալի ջերմություն է թափում նեղ, անտառապատ ձորի մեջ, նեղացնում է մեզ՝ հետևակներին: Հոգնած, քրտնած՝ մենք վերջապես մտնում ենք մի ուրիշ ձոր: Թրդին մի կողմում մնաց, նրա ձայնն էլ չենք լսում: Թանձր անտառ է, նրա շվաքը այժմ համարյա մրսացնում է մեզ: Այստեղ կարելի է ձի նստել:

Ես կարծում էի, թե ճանապարհը, ուրեմն, հարմար է, երբ ձիով ենք գնում: Բայց որտեղի՞ց: Անթիվ և անհամար ելևէջներ ենք անում, կամ լանջիվերն ենք բարձրանում ձիու գավակն ընկած, կամ գլխիվայր իջնում ենք դեպի խոր ձորերը: Ես հետո իմացա, որ այս հսկայական անտառը շատ երկար է ընկած, մի ամբողջ օր ճանապարհ պիտի կտրենք նրա միջով, երբ կուղևորվինք Երիցմանկանց վանքից: Հարկավոր է արդյոք ասել, որ այս անտառապատ ձորերում միայն և միայն կուսական բնությունն է իրավունք հաստատած: Կյանք, մարդկային կյանք, ինչ տեսակ և լինի, չկա բոլորովին: Գնում ես, գնում, և շարունակ քեզ վրա կախ ընկած է անբնակ տեղի ծանր ամայությունը, քո կոկորդը հուպ է տալիս կուսական անտառի սառցնող լռությունը: Չորս կողմերում գյուղ, բնակություն չկա ամենևին. Մռավը իր հսկայական կազմվածքին հարմար ազատությամբ ու համարձակությամբ այս թանձր վերարկուն, այս ծմակը, իր ոտներին է գցել, պինդ ծածկվել և դեռ շատ երկար ժամանակ չի թույլ տալ, որ մարդը բնակվի այս կողմերում, հացի կտոր աշխատեն: Միայն վանքն է, որին նա մի փոքրիկ անկյուն է շնորհել իր թավ ծոցում: Ահա՛ մի վայր, որ իսկապես հեռու է աշխարհային աղմուկից: Այստեղ կարճ միջոցում կարելի է մոռանալ, թե ինչ է հասա-

¹ Կարմրափթավան նշանակում է կարմիր փթավա ունեցող. փթավան այն շորն է, որի մեջ փաթաթվում է ոտը գուլպայի տեղ: Գործ են անում մանավանդ տրեխ հագնող հովիվները

րակությունը, ընկերությունը: Թող մարդկային աշխարհը, որ կյանքը եռացման աստիճանին է հասցնում, որ ամբոխի մեջ անհատների, այն էլ բազմաթիվ անհատների գոյությունն է կորցնում, աննկատելի դարձնում, թող այդպիսի աշխարհը թնդա, որոտա, գլուխ ու սիրտ պատռե ամեն օր, ամեն րոպե իր տանջանքի համար հնարած խնդիրների վրա, թող ինչեր ուզում է՝ հնարե իրան փառավորելու, իրան գորեղացնելու, հարստացնելու համար, այս տեղերը ոչինչ չեն հասկանալ, չեն լսիլ, չեն զգալ: Այստեղի ամբողջ կյանքը, շարժողությունն այն կլինի, որ երբեմն կերգե ճյուղերի տակ թաքնված թռչունը, երբեմն գազանը մի անձոռնի ձայնով կարճ արձագանք կթողնե այդ ձորերի մեջ, իսկ փոքրիկ առվակները կխոխոջան խիտ բուսականության մեջ կորած և այդպես աննկատելի կգնան, կթափվին Թրդու մեջ, որ անդու ու անդադար վշշում է:

Ահավո՛ր բնություն, որի դեմքը տեսնելը, սակայն, հիացումն է պատճառում: Եվ ես, տեսնելով այդ բոլորը, շնորհակալ եմ վանքը շինողից: Եվ ուրախ եմ, որ ճակատագիրը մեր վանքերից մի քանիսը շեն ու հաստատ է պահել: Հսկայական ծառերի տակ թգուկ, ծաղրելի են երևում ինձ մեր կոսմոպոլիտները, որոնք մեր վանքերի նկարագրությունը կարդալիս բացականչում են. «Օ՛հ, նեղացանք, ձանձրացանք այդ ճանապարհորդություններից»: Ծիծաղելի են, այո՛, Մռավի այս ստորոտներում, որովհետև այսպիսի տեղն է լավ իմացվում մեր վանքերի մի մեծ նշանակությունը: Ահա թե ինչպես:

Բնությունը, ումի՞ն չի հայտնի, զարմանալի փառահեղ է այսպիսի հեռու ընկած, խուլ և անմատչելի անկյուններում: Այժմյան ժամանակները, երբ հաղորդակցության ճանապարհների կատարելության հասցրած հարմարությունը կյանքի գլխավոր մի պահանջն է, երբ մեր թուլամորթ սերունդը հանգստություն ու հարմարություն է պահանջում նույնիսկ բնության բարիքները վայելելու համար, այսպիսի ժամանակ ո՞վ կճանաչեր մեր երկրի այսքան հեռավոր, անմարդաբնակ կողմերը, եթե չլինեին մեր հին վանքերը: Մեր աղոթասեր նախնիքները, անկասկած, մեզանից շատ լավ ճաշակ են ունեցել և շատ լավ են հասկացել բնության գեղեցկությունը: Դժվարությունը, վտանգը կարծես գոյություն չեն ունեցել նրանց համար, և նրանք այս տեղերում շինել են Հայոց աշխարհի սրբարանները, որոնց անունների հետ կապված են այնքան գեղեցիկ հիշողություններ, սիրուն մտքեր և միևնույն ժամանակ տխուր ու հուզիչ պատմություններ, շինել են և մինչև այսօր ձգում

են դեպի այդ սրբարանները շատ և շատ մարդկանց: Եվ գնում են այդ ստվարաթիվ մարդիկ, որոնց սրտի համար վանքերը ահագին նշանակություն ունին, որոնք միշտ բաց են պահում ճանապարհը դեպի այդ մոռացված վայրերը: Այդ մարդիկ մեզ պես աննշան այցելուները չեն, ո՛չ, ի՞նչ ենք մենք, հազարից մի անգամ կհիշենք, կգնանք, այն էլ զանազան պահանջներով. երկնքից կպահանջենք պայծառ արև, թռչունից կպահանջենք սիրուն եեզ, ձիուց՝ խելոք ու զգույշ քայլվածք, մի խոսքով՝ այն ամենը, ինչ հարկավոր է մեր սիրած մարմինը ողջ ու անվնաս տանելու համար: Գյուղացի մարդիկ են դրանք, որ գնում են պարտք կատարելու, որոնք համար ձյունն ու անձրևը, արևն ու ցեխը միևնույն են:

Ինչպե՞ս ես կարող կլինեի հասկացողություն կազմել Մռավի անտառային ահարկու թագավորության մասին, եթե չլինեին Երիցմանկանց և Եղիշե առաքյալի վանքերը: Որտեղի՞ց կտեսնեի Թարթառի քարային ձորերը: Ո՞վ կհամաձայներ բերել ինձ, և ես ինչո՞ւ պիտի ցանկանայի տեսնել այս ծմակները, այս ահեղ լռությունը, այսքան շքեղ պատկերներ մեր երկրի բնությունից, եթե այս նեղ ու երկյուղալի ճանապարհը չլիներ: Ճանապարհը բանուկ է, խափանված չէ և բաց է, գործում է միայն վանքի համար: Անտառի վրայի բույսերը չեն թափվում նրա վրա, չեն կորցնում, անհետ անում, որովհետև այն ժողովուրդը, որ իր սրտի ուխտի համար իր բոբիկ ոտների կրունկներով այսպիսի ճանապարհներ շինել գիտե, այդ իսկ ժողովուրդը այսօր էլ կոխ է տալիս իր շինածը և կոխ տալով՝ կենդանի պահում: Այդ ժողովուրդը ճանապարհ շինելու և դրստելու մի առանձին սեր չունի: Նրա գյուղերը տանող ուղիները սրանից լավ ու մեծ չեն, թեև բոբիկ ոտներով չեն շինված, ինչպես սա: Գյուղի ճանապարհը, նկատեցե՛ք, հացի, ապրուստի, շունչ ունենալու համար է, և այնպես է, ինչպես որ է այն ճանապարհը, որ ոչ թե մարմնավոր, զգալի, նյութական կյանքի համար է, այլ լոկ՝ հոգևորի: Համեմատեցե՛ք այդ երկու ճանապարհները՝ բոբիկ ոտներով շինածը և մյուսը, և կհասկանաք, թե ինչ նշանակություն ունի հին, ամայի վանքը, որ մտել է այսպիսի մի վայրենի բնության խուլ ծոցը:

Անտառի կեսը չանցած՝ երևան եկան այդ իսկ ճանապարհի շինողները: Դրանք ուխտավորների մեծ-մեծ խմբերն էին, բաղկացած գլխավորապես քնքույշ սեռից: Երկար ու անկարգ շարքերը միմյանց ետևից ընկած գնում էին: Ամեն հասակի մարդ կարելի էր տեսնել՝ ծծկեր երեխայից սկսած մինչև սպիտակահեր ալևորը: Համարյա բոլորը հետևակ էին, իսկ կանանց մեծ

մասը՝ ոտաբոբիկ: Նրանց խոսակցությունների ձայները, բացականչությունները խեղդված, օտարոտի, զարմանալի անտեղի էին թվում վայրենի անտառի մեջ: Մենք ավելի դանդաղ էինք գնում, հարկադրված էինք շուտ-շուտ կանգ առնել, մինչև որ մարդիկ մի կերպ կանցնեին նեղլիկ կածանի կողքով: Ի՞նչ իրավունք ունեինք արագ գնալու և նրանց վրա ուշադրություն չդարձնելու, մեզանից որի՞ ոտն էր ճանապարհի շինության գործին մազի չափ օգնել: Ճանապարհը նրանցն է: Դա է նրանց քաղցր հույսերի, մխիթարության միակ ճանապարհը: Եկել էին հուսով, վերադառնում էին հուսադրված: Այսքան բազմությանը նայելով, մենք հույս չունեինք վանքում ուխտավորներ տեսնելու: Եվ, իրավ, երբ մարդկանց քաղցր հույսերի կածանը, վերջապես, ձանձրացավ ձգվելուց, դետուդեն պտտվելուց և մեզ տարավ, դուրս բերեց վանքի բակը, համարյա ոչ ոք չէր մնացել. վերջին մի քանի հատ ուխտավորներն էլ ճանապարհ էին ընկնում:

Երիցմանկանց վանքը շինված է մի շատ խոր, անտառապատ ձորի գլխին, չորս կողմից շրջապատված էին թանձր, կուսական անտառներով: Խոր ձորի անտեսանելի հատակով, վանքի առաջ, օր ու գիշեր վշշում է Թրդին: Այդ ձորի վանքի առաջ բարձրացած է մի բավական մեծ և երկար սար, որ այս կողմից նույնպես ծածկված է խոր և մթին անտառներով: Այդ սարը, չէ՞ք զարմանում, կոչվում է Մասիսա սար: Վանքից մի քանի քայլ հեռու, դեպի հյուսիս, ձորի գլուխը սկսում է աստիճանաբար բարձրանալ, բարձրանալ, մինչև որ հասնում է այստեղից երևացող սարսափելի բարձրության: Դա ձյունապատ Մոավի շարունակությունն է: Ահա՛ թե որ տեղերին է հասել հսկան. նա ներքևից մինչև կեսը ծածկված է այսպիսի թանձր անտառներով, իսկ մնացած մասը միանգամայն տկլոր է, և երևում են կախ ընկած ահագին սև ժայռերը: Ըստ երևոյթին անհնարին է այդ սաստիկ բարձր ձգված լանջերով գնալ-գալը: Բայց ամենաշատը մի ամսից հետո, երբ հրաշալի կանաչը դուրս կգա այդ բարձրության վրա, այդ իսկ լանջերին բույն կդնե ամառային մի գեղեցիկ կյանք: Այդտեղ են գալիս Թարթառի տափարակների բնակիչները՝ հայ թե թուրք, բերում են իրենց տնտեսությունը, հոտերը և ապրում են շարժական վրաններում, մինչև որ պակասում է խոտը, և ցուրտը համբուրում է այդ բարձրությունները: Մոավի ամառային արոտատեղերը՝ յայլաղները հայտնի գեղեցիկ տեղեր են:

Արևելյան և արևմտյան կողմերից վանքը նայում է Թրդու ձորին: Ինքը, այդ վանքը հասարակ շինություն է, չունի ճարտարապետական շատ թե քիչ

նշանավոր բան, շինված է, ինչպես այժմ են շինում, մանր քարերից ու ցիւից: Շինողը, ինչպես վկայում է մի հատիկ դռան ճակատի արձանագրությունը, եղել է «Միմեոն, շնորհիւն Աստուծոյ կաթողիկոս Ադուանից», իր հարազատ եղբայր Իզնատիոս վարդապետի հետ, «որ եմք որդիք Մարգիս քահանային Մեծ շինեցոյ»: Շինության թվականն է ՌՃԽ (1691) թվականը: Դա այն իսկ Միմեոնն է, որ Գանձասարի կաթողիկոսության հակառակ աթոռն է ստեղծել և իր մի երեք թե չորս հատ հաջորդների հետ այնքան չարիք է հասցրել Ղարաբաղի հայ տիրողներին, որովհետև այս հակաթոռ կաթողիկոսության կետ-նպատակն է եղել գոյության իրավունք ստանալ՝ դավաճանություններով, թուրք խաների ձեռքին հլու գործիք դառնալով և հայերի համերաշխության կապերը թուլացնելով: Այդպիսի սարսափելի թույն է ծնվել այստեղ և հետո անցնել Ամարասի վանքը, իսկ թշնամի և փառամոլ կաթողիկոսության վերջին և ամենաձանր հատորը եղել է Իսրայել կաթողիկոսը: Այստեղ չկա մի շատ թե քիչ հարգելի հիշատակ, որ պատկառանք ազդեր հասկացող այցելուի սրտում: Այստեղ, ընդհակառակն, մարդ մի տխուր ժպիտով է հիշում անցյալը և երբ շատ է սկսում քրքրել «եղած-պրծածը», գլուխը ետ է դարձնում, նայում խրոխտ և վայրենի ձորերին:

Բայց ժողովուրդը սիրում է այդ վանքը. մեծ ուխտատեղի է, մեծ փառք ու հարգանք ունի ոչ միայն հայերի, այլև թուրքերի մեջ, որոնք վանքը կոչում են Դալի-վանք, այսինքն՝ զիժ վանք: Այդ անունը, որպես թե, վանքը ստացել է չափազանց գորավոր լինելու պատճառով, և հենց այդ պատճառով թափառական թուրքերը ոչինչ վնաս չեն հասցնում: Գուցե շատ հնուց մի այսչափ հայտնի ուխտատեղի լինելու հոչակն է պատճառ, որ Երիցմանկանց վանքի հակաթոռ և վնասակար կաթողիկոսությունը միանգամից այնպես հաստատ հիմք գտավ Ջրաբերդում: Ինչպես որ լինի, սեփական հոգևոր իշխանության մասին այժմ ժողովուրդը բամբասանք չի անում:

Բացի այս հասարակ ու աղքատ վանքից փառամոլ կաթողիկոսությունը մի հիշատակ չի թողել: Կաթողիկոսների գերեզմաններն անգամ անհայտ են. եթե հավատանք այժմյան մարդկանց խոսքերին, երկուսի գերեզմանները պիտի լինին այն սալ քարերը, որոնք ընկած են հյուսիսային պատի տակ, և որոնց վրա մի հատ տառ անգամ չկա:

Վանքի ներսի կողմը շատ աղքատ է, տկլոր: Փոքրիկ բան է, ունի չորս սյուն, մի փոքրիկ բեմ, որի վրա դրված է մի սուրբի աջ, իսկ նրա մոտ ջերմեռանդ ուխտավորների նվերներն են թափված: Կույտ-կույտ դարսած

են մեծ քանակությամբ դեղին, գյուղական մոմեր, խնկի փոքրիկ փաթեթներ, բամբակ: Սուրբ աջին հայուհիները նվիրել են իրանց մատների զարդարանքը, արծաթյա հասարակ մատանիներ, որոնք հազգրած են մատների վրա և թափված են նրանց տակ. մենք համբեցինք մինչև երեսուն հատ մատանիներ: Բացի այս ամենից՝ բերել են և զատկական նվերներ, գույնզգույն թելերով նախշած ձվաներ, որոնք կախ արած են սյուններից: Այդ ձվաների թվում կային մի քանիսը, որոնց վրա, ինչպես երևում էր, երկար էին աշխատել հայ կանանց մատները. դրանք զարդարված էին մետաքսյա փոքրիկ ծուպերով և փնջիկներով, մեծ ու փոքր ուլունքներով: Զարդարանքը, ճաշակը պատիվ էին բերում անձանթ արվեստագետին: Ուր որ նայում ես այս անշուք, մերկ տաճարի մեջ, ամեն տեղ երևում է հայուհու՝ իր պաշտած սրբավայրը որքան կարելի է զարդարելու, լուռ եռանդը: Բայց այս վանքի գլխավոր սրբությունը ձախ կողմի խորանում գտնվող մի սուրբի գերեզմանն է:

Վանքը տեսնելուց հետո մենք գնացինք սենյակը, ուր պիտի մնայինք: Այդ սենյակը շինված է վանքի առաջ, լանջի վրա այնպես, որ նրա կտուրը հավասարվում է վանքի բակի հետ: Մուտք և խոնավ մի սենյակ է, որի կտուրը քարի է, կամարապատ: Մի հատ պատուհանը մի կերպ լույս է տալիս մի պատի կեսին, իսկ մնացած տեղերը դուռը փակած ժամանակ կորած են խավարի մեջ: Պատուհանը նայում է դիմացի ծառագարդ սարին, որ, ինչպես ասացի, Մասիս է կոչվում: Մի ուրիշ՝ փոքրիկ սենյակ էլ շինված է այս մեծ սենյակի ետևը՝ գետնի տակ՝ բոլորովին կարոտ աստուծու լույսին: Պատերի և առաստաղի ծեփը չափազանց կեղտոտ է, սևացած: Այստեղ են ապրել Երիցմանկանց կաթողիկոսները: Ես հիշում են Գանձասարի կաթողիկոսարանը. ի՛նչ համեմատություն նրա ու սրա մեջ...

Այս սենյակներում է ապրում վանքի, այսպես ասված, միաբանությունը, որ բաղկացած է չորս հոգուց: Չորս հոգու մեջ մի հատ հոգևորական չկա, բոլորն էլ աշխարհականներ են, որոնք այսպիսի հոգևոր տեղը մնալու համար «մուղղուսի» անունն են ընդունել: Դրանց գլխավորն է, որքան կարողացա իմանալ, մի կույս՝ Մարթա անունով. դա հազած է կապույտ կտավի շորեր, ինչպես ասում են, «գիր ու կիրակոս» չգիտե, բայց ջերմեռանդությամբ ծառայում է վանքին ու ուխտավորներին: Այդտեղ նա նստած է 1854 թվականից: Մյուս երեք տղամարդ «մուղղուսիները» հասարակ ձրիակերներ են, այստեղ ոչինչ չեն շինում, բայց ուտում են անփող: Երեք տղամարդ ամեն օր դուրս են գալիս, կանգնում այդ բարձրության գլխին, անգործու-

թունից աչքները ծուլությամբ ծանր-ծանր կկոցելով՝ դեպի արեգակն են ուղղում, որ, երևի, իմանան օրվա ժամանակը, և երբ ուխտավոր է գալիս, աչք են տնկում բաժնին:

Բայց այդ երեք մուղղուսիներից մեկը բավական զարմանալի, նույնիսկ խորհրդավոր անձնավորություն է: Թույլ տվեք դրա մասին քիչ մանրամասն խոսել:

Քառասուն թե ավելի տարի սրանից առաջ Շուշում բնակվող հարուստ և պատվավոր վաճառական Բ.-ի մի որդին, ծնողների համաձայնությամբ, օտարություն է գնում և անհետանում է: Ոչ մի տեղ չեն գտնում նրան, այնպես, որ, մեռած են համարում: Անցնում է մի երեսուն տարի, կորածի հայրն ու մայրը մեռնում են, երկու եղբայրները Շուշուց ուրիշ քաղաք են տեղափոխվում: Եվ մի օր այդ կորածի հորեղբայրը նամակ է ստանում Անգլիայի Մանչեստր քաղաքից, այդ անհայտացած պանդուխտից, իսկ մի տարուց հետո կորածը մի ամբողջ ընտանիքով շրջապատված՝ գալիս է իր հայրենիքը՝ Շուշի: Հայտնում է իր բարեկամներին, որ ինքը այդքան ժամանակ Մանչեստր է եղել, ուր առևտուր, լավ գործ ունի, ամուսնացել է, և այդ տղան ու աղջիկը, որ իր հետ են, իր որդիներն են: Մի քանի ժամանակ լավ ապրում է Շուշում, հետո էլի ընտանիքով գնում է Անգլիա՝ ասելով, որ գործերը այնտեղ սպասում են իրան: Եվ այնուհետև էլի լուր ու համբավ չի գալիս նրա մասին: Երեք տարի սրանից առաջ Ջրաբերդ գավառում լույս է ընկնում մի հետևակ, ծեր մենավոր, որ, հայտնելով իր ուլ լինելը, խնդրում է տեղային գործակալ քահանայից, որ իրան թույլ տրվի ապրել Երիցմանկանց վանքում: Այդ մարդը հենց այդ կորած, ապա փառքով հայտնված վաճառականն է եղել: Այդ օրվանից նա նստած է այս վանքում:

Մենք հրավիրեցինք նրան մեզ հետ թեյ խմելու: Եկավ, հարգանք հայտնելու համար, մեզանից քիչ հեռու նստեց:

- Ձեր գազեթներում ամեն բան գրվում է,- հանկարծ հարցրեց նա ինձանից:

Մեր Դալի-Մահրասան, ինչպես հետո իմացա, նրան ասած է եղել, որ ես «գազեթաչի» եմ:

- Ո՛չ,- պատասխանեցի ես,- գրվում է, ինչ որ կարելի է:

- Մեր երկրում գրում են ամեն բան:

«Մեր երկրում», այսինքն՝ Անգլիայում: Ուրիշ խոսքերի մեջ էլ հաճախ կրկնվում էին «մեր երկրում» բառերը: Ուրեմն նա իրան դեռ անգլիացի է

համարում: Բայց թե ինչո՞ւ է թողել «իր երկիրը», տունը, տեղը, կարողությունը, ընտանիքը և եկել, առանձնացել է այս վայրենի աշխարհում, ուր նրա հարևաններն են արջերը միայն, այդ նա կհայտնե, իհարկե, միայն իր սրտին շատ մոտիկ մարդուն: Իսկ այդքան մոտենալ նրա սրտին հեշտ չէ, բավական ծածակամիտ ծերունի է: Ամեն մարդու, ինձ էլ նրանց շարքում, ասում է, թե թողել է աշխարհի չարն ու բարին, եկել է այստեղ այն պատճառով, որ հայրենի հողն է քաշել, բերել: Ուրիշ ոչինչ: Բայց մարդ չի կարողանում հաշտվել այդ մտքի հետ: Ես հասկանում եմ հողի, հայրենի հողի ձգողական մեծ ուժը, մի թե այդ հողը հենց այս ծմակների մեջ կորած վանքի հողն է: Թողնել Անգլիայի պես երկիրը, թողնել անգլիական ընտանիքը, որ, ինչպես վկայում են տեսնողները, գեղեցիկ ընտանիք է եղել, կտրել աշխարհի, իր բոլոր բարեկամների հետ ունեցած կապերը և ապրել մի այսպիսի աղքատ վանքի հաշվով՝ այդ բավական անհասկանալի է: Պետք է ասել, որ Երիցմանկանց վանքը համարյա ոչինչ կալված չունի: Ուխտավորների տված նվերները, գանձանակը պատկանում են կապալառուին¹, այնպես որ միաբանությանը մնում է միայն ողորմություն հավաքելով ապրել: Կույս Մարթան վանքի քոստ էլի հետ ընկնում է գյուղերը, գնում Մռավի արոտատեղիները հայ գյուղացիների մոտ, հավաքում է ցորեն, գարի, բանջարեղեն, պանիր, յուղ: Եվ Անգլիայում մեծացած ու մի քանի անգամ Ամերիկա գնացած պատվավոր մարդը նստում է, հանգիստ սրտով ուտում այդ աղքատիկ ողորմությունները...

Ճաշից հետո մեր Տեր-Հայրապետը տանում է մեզ Չալադան-Յուզբաշու բերդը տեսնելու:

Վանքից քիչ ցած իջնելով՝ մտնում ենք մի մեծ անտառ: Երևում են բնակության տեղեր, երևում է և մի հաստ ու կոպիտ պարիսպ, որ երկար ընկած է ծմակի մեջ: Տեղը հարթ է և ներկայացնում է մի սուր եռանկյունի, որ ցցված է երեք շատ խոր ձորերի մեջ: Բերդի պարիսպն էլ ընկած է այդ ձորերի ծայրով. նա տեղ-տեղ քանդված է, տեղ-տեղ կանգուն, կազմում է մի երկար ու շատ նեղ ամրություն: Մեջտեղում կան տների պատեր, որոնք խնամքով, պինդ են շինված: Այդ է կարելի ասել Չալադան-Յուզբաշու բերդի մասին. ոչինչ հիշատակարան չունի, հայտնի չէ, թե ով է եղել այդ ժիր հարյուրապետը, որ այսպիսի անմատչելի ձորերի եզերքին է կացրել իր պատե-

¹ Ջրաբերդի ուխտատեղիների արդյունքները կապալով են տրված գանազան մարդկանց: Այդ մի շատ սղեղ սովորություն է

րագմական բույնը: Չալաղան-Յուշբաշի... Հանգուցյալ Բաֆֆին, որ նույնպես շատ բան չի իմացել նրա մասին, այդ մականունը թարգմանում է «հափշտակող հարյուրապետ»: Իհարկե, սա ավագակ չի եղել, ո՞ր ավագակն է այսպիսի մեծ բերդ շինում բնակություններով շրջապատված, վանքից այսքան մոտիկ: Նա, երևի, մեկն է եղել այն ավագակապետներից, որոնց խմբերը այնքան մեծ գործեր են կատարել մելիքների պատերազմների ժամանակ:

Այդտեղից մենք մի կարճ զբոսանք կատարեցինք օրը մթնացնելու համար:

Ոչինչ բան չտեսանք, բայց միայն բավական ժամանակ ճնշված մնացինք անտառի ծանր մթնոլորտի տակ: Տե՛ր Աստված, ինչպե՛ս է հոգին տանջվում այս խորին լռությունից, երբ, ընկերիցդ մի քանի քայլ ետ մնալով, մի բույս ուշադրություն ես դարձնում շրջապատող կյանքի վրա: Ծառերի թագավորությունն է. ամեն մի ծառ հսկա է ոչ թե լայնությամբ, այլ՝ բարձրությամբ: Կարծես ամեն մեկը ձգտում է իր գլուխը ընկերի գլխից բարձրացնել, տեսնել աստուծու լույս աշխարհը, կարծես այս ձորը նրանց բոլորին է շատ վախեցնում: Երևում է այդ ծանր լռության մեջ բույն դրած ծառային հսկայական կյանքը իր բոլոր մանրամասնություններով: Ահա երիտասարդ, բարակ ծառը, որ կարծես քո աչքի առաջ էլ, ահա՛, ահա՛, ձգվում է դեպի բարձր, որ շուտ հասնեն մեծերի ետևից: Ահա մի ուրիշ հսկա, որ անխնա ձգվելուց ուժասպառ դառած՝ կոտրվել է, վայր ընկել և փտում է այնպես ապարդյուն, ինչպես ապարդյուն մեծացել է: Կյանքն ու մահը այստեղ էլ անխուսափելի մրցակից են: Որքա՛ն շատ թափված ծառեր կան. դիակը վայրենի անտառբերությամբ փտում է, հող դառնում, որ կյանք, ուժ տա ուրիշներին...

Եվ մի թե այս հսկայական անտառի մեջ չկա ձայն հանելու ընդունակ արարած. մի թե գիշատիչներն էլ վախենում են այս տեղերից: Ո՞վ գիտե, նրանցից ո՞ր մեկն է մի որևէ խոր խոռոչից կամ այդքան բարձր գնացած ճյուղերից անթարթ աչքե տնկել քեզ վրա: Չկա աշխարհ, չկա լայնություն, որ մարդու հոգին խոսացներ. խոնավ ու մռայլ է օդը, ծանր քրտինք է դուրս տալիս վրադ, թեև չկա արևի լույս: Չկա ամբողջ բնություն, վերջապես, ազատություն չկա այս ծմակում: Այո՛, լավ տեղ է եղել բույն դրած հակառակությունը, լա՛վ, հիանալի խորշերում է թաքնվել թույնը, որ այս անտառների խորության մեջ ճնշված օդից, մռայլ խոնավությունից, փտող նյութերից ուժ, դառնություն ստացած՝ մտավ մի առողջ, ապրող մարմնի մեջ ու քայքայեց, հավիտյան ոչնչացրեց նրան:

Այդ բոլոր տպավորությունների ու մտքերի ծանրությունը վերցրած՝ գնում էի ես ձորի միջով, մի փոքրիկ, պարզ ջրի մոտով: Հասանք մի փոքրիկ աղբյուրի և այդտեղ վերջապես մի քիչ լույս-աշխարհ բացվեցավ: Վերևում՝ ձորի գլխին, երևաց վանքի գմբեթը:

Մենք դարձյալ նստած ենք մեր սենյակի կտրին՝ վանքի առաջ. թեյ ենք խմում և անհագ նայում ենք մեծ բնության: Մռավի երկնաբերձ կատարները հետզհետե մեծացնում են իրանց հսկայական շվաքները, պատրաստվում են մի թանձր խավարային գիշեր գցել այս ձորի վրա: Արեգակը ձեռք է վերցնում աշխարհից, նրա մեռնող ճառագայթների նվազ լույսի տակ մի անանուն մեղմ գույնով փայլում են անսահման անտառները: Հոգին այսպիսի դիրքում է կարողանում բացվել, հրճվել: Տո՛ւր նրան բարձրություն, տո՛ւր նրան շրջապատի վրա իշխող դիրք, և նա հոգի՛ է: Բայց նա ճնշվում է, խռովում, անհանգիստ բաբախում է, կրծքի վանդակին խփվում, երբ մի բան, լինի դա նույնիսկ հասարակ ծառ, իրանից բարձր է, տիրում է իր վրան:

Արևն անցավ, Մռավի ձյունապատ գագաթները ցրտացրին երեկոյան խաղաղ օդը: Այլևս նստելու սեր չկա. վերարկուի մեջ փաթաթված՝ տուն ենք մտնում: Եվ այդտեղ մի կարճ, շատ կարճ երեկո անելուց հետո պառկում ենք: Մեկը ծածկում է պատուհանը մի ինչ-որ շորով: Թրդին մեղմացնում է իր ձայնը, և մենք իսկույն քնով ենք անցնում մորթածի պես:

Է

Առավոտ է, ժամի հինգի կեսը:

Ես կանգնած եմ գիշերային խոնավ ու նեղ օթևանիս առաջ, բաց երկնքի տակ և խոր ձորի գլխին: Երկնքի երեսին միմյանցից հեռու ցրված են կույտ-կույտ ամպիկներ, որոնք, արևելքին մոտենալով, խտանում են, թանձր ու սև շերտեր կազմում: Ընդհանրապես հետո փոխվում է դժգույն լույսը, ամպերի ջանքով նվազած ճառագայթները ահա գալիս են, խփում են սարի լանջերին: Եվ սարի հավերժական զգեստը, հրաշալի թանձր անտառը, ավելի և ավելի պայծառանում է, զարդարվում քնքույշ լույսերով և կողմնակի բարակ ստվերներով: Ապրիլի կանաչը, այդ փափկությունը, թարմությունը, սիրելի՛ ինչպես ամեն մի նոր կյանք, ժպտում է աստուծու բարի ու չքնաղ առավոտի դիմաց: Ժպիտ և ժպիտ է գալիս ամեն կողմից: Անժպիտ է միայն Թրդին, որ քերում է իր խոր ձորի ապառաժները: Ո՞ւր է նա, չի երևում, նրան կախարդել տարել են ծմակները, ծածկել են իրանց մեջ: Այնտեղ՝ նրա ձորում, դեռ

առավոտովա այն պահին է, երբ օձի խայթած մարդն էլ մոռացության մեջ է ընկնում, հանգստանում:

Այստեղ՝ վերևում, երկնքի հետ իր հավիտենական վեճը շարունակելով, շողշողում է Մռավի շղթայի հսկա, ձյունապատ գագաթներից մեկը: Այդ ձյունն էլ, ցուրտ, սառցնոդ ձյունն էլ այժմ, այս վայրկյանին, ժպտում է, ուրախացնում, այնպիսի գեղեցիկ լուսով է զարդարված: Նայում եմ դեպի ցած, Թրդու ձորի ուղղությամբ: Կանաչ ու գեղեցիկ սարերի արանքում կուտակված է սպիտակ, խնկի ծխի պես մաքուր մշուշը. նա թանձր է, չի բարձրանում, ավելի և ավելի սպիտականում է, մաքրվում, երբ արեգակի լույսը ավելի բարձր սարերից սկսում է դեպի ցած հոսալ: Այդ Թարթառի ձորն է... Այդտեղ գիշերային ոգին, կարծես, ծխում է նրա վրա կախարդական խնկի ծուխը, որ բարձրանում է խոնավ ձորի կրծքից, բարակ ու թանձր քուլաներով քսվում է Ջրաբերդի անսասան մարմնին, կարծես թե շոյում է նրան:

Կանաչ ձորերը հետզհետե լուսավորվում են, հետզհետե ծալում, դեն են դնում գիշերային մութ վարագույրը: Ահա արեգակի լույսը ինձ էլ հասավ, ամպիկների կույտը ցրիվ է գալիս, և նա տաքացնում է իմ սառած մատները, ձեռքիս բռնած մատիտը: Տաքացնում է գեղեցիկ գառի փոքրիկ մարմինը, որ եկել է, ինձ մոտ կանգնել ու իմ թղթին է նայում իր սիրուն աչքերով: Օրը բացվեց, երկնքի լուսատուն շատ և շատ լուսեղեն խուրձեր է ուղարկում: Բազմանում, բազմապատկվում են անտառների ձայները, թռչունների ծվլոցները: Ահա այդ փոքրիկ ձայների վրա ավելացավ գետի մյուս կողմից, Մասիսի թանձր անտառի միջից բարձրացած հաստ ձայնը: Դա էլ եղնիկի ձայնն է. ինքը չի երևում, ինչպես չի երևում ոչ մի բան այդ ծառերի մեջ, բայց նրա ձայնն էլ միացած է բնությունը փառաբանող ձայների հետ: Ահա այդ բոլոր ձայների վրա ավելացավ վանքի զանգակների սուր և բարակ դողանջունը, և լսվեց քահանայի խոսքոտ ու բարձր ձայնը, որ երգում է դատարկ շինության մեջ: Ձայները միացել են, միևնույն միտքն են քարոզում: Իսկ ես հափշտակված եմ, և իմ մատները անշարժացել են: Իմ մեջ միայն մի ցանկություն կա, որ իմ մատիտը մի հրաշալի վրձին դառնար գեթ մի վայրկյան, իսկ տետրակը, որի մեջ ես սև ու անմիտ գծեր եմ ոլորում, կուտակում՝ նկարչի կտավի կտոր, և ինձ տրվեր գույներ տալու շնորհքը: Բայց ոչ միայն այդ. այդքանը քիչ է: Ես կխնդրեի մի երկնային ուժ, որի օգնությամբ կարողանայի այդ պատկերին տաք ու թարմ կպցնել այս ձայները, բնության այս բոլոր աստվածային մեղեդիները...

Առավոտյան այդ պահուն մենք, մեր ձիաների վրա նստած, շարունակեցինք մեր ճանապարհը: Մենք հետ էինք դառնում երեկվա եկած ճանապարհով: Բայց մի խոր ձորում մեր առաջնորդ Տեր-Հայրապետը դուրս եկավ այդ ճանապարհից, ձեռքերով հեռացրեց միմյանց հետ խառնված ճյուղերը, իր սպիտակ ձիու հետ կորավ այդ ճյուղերի մեջ: Ամեննին չէր կարելի ենթադրել, թե այդ էլ մի ճանապարհ է:

Միշտ միևնույն անփոփոխ ծմակն է: Մի բռան չափ լայնություն ունեցող կածանով բարձրանում ենք միշտ և միշտ դեպի բարձր: Հավատալ չի կարելի, թե այդ կածանը ձիու ճանապարհ է և վերջը մեզ պիտի դուրս բերե մի գյուղ: Ձիաները սաստիկ չարչարվում են, սարսափելի ջանք են թափում, որքան կարելի է շուտով վերջացնելու այդ տանջող ճանապարհը: Եվ շնչասպառ դուրս են գալիս, վերջապես, լանջիվերի գլուխը: Մենք հասել ենք Մռավի մի փոքրիկ ուսին, ուր իջնում ենք, հանգիստ տալիս ձիաներին:

Լեռնային բարձրության գլուխ է, բայց ոչինչ չի երևում. ոչ մեզ այստեղ բերող ճանապարհն ենք տեսնում և ոչ էլ այն, որ մեզ պիտի տանե: Ամեն տեղ անտառ է, անտառ և միայն անտառ... Ես մինչև անգամ իգուր էի որոնում այն ահագին ժայռը, որի մոտով դեռ նոր էինք անցել. նա էլ չի երևում: Բայց այնքան մեծ ու բարձր ժայռ էր, որ անգղները բույն էին դրել նրա ծերպերում և ծանր կոնչոցներով պտույտ էին տալիս անտառի գլխին:

Այդտեղից ցած ենք գնում ոտով: Որքան մինչև այժմ կածանը չարչարվելով դեպի սարն էր գնում, այնքան էլ այժմ հանդուգն, անդիմադրելի արագությամբ վազում է դեպի ցած՝ դեպի ծմակի խորքը: Վերջ ու սահման չունի անտառը, ձանձրացնում է մեզ: Լույս աշխարհը հեռացել, կորել է, լեռնային ահեղ բարձրությունները հավվել, չքացել են, մենք շարունակ շարժվում ենք ստվերի մեջ, որ շատ խոր տեղերում կիսամթության է փոխվում: Երբեմն, շատ սակավ, մի երեք քայլ լայնությամբ տեղ է բացվում մեր առաջ, տեսնում ենք ահեղի կիրճեր, ձորեր, որոնք բացվել են մեզանից ցած և ամեն տեղ ծածկված ծառերով և միայն ծառերով: Եվ մի րոպե մեր աչքին երևացած լույս աշխարհը ուրախացնում է մեզ, հրապուրում: Շո՛ւտ, շո՛ւտ դեպի այն ազատությունը, թե չէ այս անտառները բոլորովին ճնշել, տափակացրել են մեզ, մեր հոգին բերել, հավաքել են մի նեղ օղակի մեջ... Ի՞նչ է ցույց տալիս նա, այդ անտառը՝ մի թառամած, անգույն և մանր, շատ մանր կյանք, որ մի ինչ-որ անհասկանալի զորությամբ պահվում է անթիվ ու անհամար արմատների մոտ, մի կյանք, որ միշտ ցած ընկած է, սողում է միշտ խոնավ գետնին

քավելով: Մենակ այդ փոքրիկ ու ողորմելի կյանքը չէ մարդուն նեղում: Եթե կա աշխարհի մեջ սուսկալի ծանրություն, որ աներևույթ է, որի ինչ լինելը չգիտես, բայց որը կարող է մարդու ուսերը ցավեցնել, այդ այս անտառների ծանր լռությունն է: Մարդու ձայն, իհարկե, չկա: Մոտիկ տեղերում գյուղ չկա, գյուղական ոչ մի պարապմունք այս տեղերին չի հարմարվում: Երևում են միայն գյուղացիների կացնի հետքերը. այդ կացինը տաշել, կտրել է այն ծառերը, որոնք ընկած են կածանի վրա և դժվարացնում են անցուղարձը: Եվ այդ կածանն էլ Երիցմանկանց վանքինն է. ուրիշ մի բանի պետքական չէ, բայց միայն ուխտագնացության:

Երբեմն-երբեմն մուր ձորերի մեջ փոքրիկ ջրեր են երևում: Երկու այդպիսի տեղ տեր հայրը իմ ուշադրությունը դարձրեց մի քանի փոքրիկ փոսերի վրա և ասաց, որ այստեղ գյուղեր են եղել մի ժամանակ: Գյուղեր... Մարդու հավատը չի գալիս. այնպես կորել են բնակության բոլոր հետքերը, այնպես այդ անտառը բացասում է մարդկային բնակության հնարավորությունը:

Բայց երկար ու անտանելի ճանապարհը մեզ վերջնականապես չհուսահատեցրեց. մենք իմացանք, որ նա վերջ էլ ունի: Ավելի և ավելի իջնելով անտառապատ բարձրություններից, մեր առջևը հանկարծ մի արտ բացվեցավ, մի կանաչ արտ, որ ընկած էր ծմակների մեջ և որի մյուս կողմին թմբի գլխին, երևացին գյուղական երկու թե երեք մարագներ: Միևնույն ժամանակ երևաց Թարթառի ձորը, որ խոր ընկած է մեծ-մեծ սարերի մեջ:

Այդ բաց ու լայն տեսարանը, ազատ օդը մեզ թևեր տվին:

Ահա և գյուղը, որ կոչվում է Տոնին-Շեն: Նա շինված է բարձր տեղ, նայում է Թարթառի ձորին, փոքրիկ է, ունի 25-28 տուն, որոնք հաստատվել են այստեղ 28 տարի սրանից առաջ: Ամենքը Մաղավուզ կամ Չարդախլու անունով հայաբնակ գյուղից են, որ Մեծ-Շենից շատ չէ հեռու:

Մենք հանգիստ առանք մի գյուղացու սրահում: Ժամի մեկն էր, իսկ մենք 6-ից սկսած դեգերում էինք Մոավի կուսական անտառների մեջ: Այցելեցինք գյուղի եկեղեցին: Դա մի հին շինություն է, փոքրիկ, ցածրիկ, ողորմելի, աղքատ, որ ամեն ժամ, ամեն բույս պատրաստ է թափվելու: Նրա շուրջը կա մի մեծ ու հին գերեզմանատուն. Գերեզմանաքարերը, առանց բացառության, անտաշ են, կոպիտ և չունին ոչ մի անձանագրություն: Այդ ամենը ցույց է տալիս մի խորին հնություն, մի անտաշ անկիրթ ժողովրդի մի ժամանակվա գոյություն: Գյուղի մոտ կա մի հին շենատեղ, որ կոչվում է Ջրամեջ. այդ

տեղից բարձր, դեպի Մոսվը, էլի կան գյուղատեղեր և եկեղեցիներ: Չգիտեմ, թե առաջ ինչպես է եղել, բայց այժմյան գյուղը աղքատ է: Գյուղացիները երկու բանի մասին էին գանգատվում. մեկ, որ վարելահող չունին, մյուս, որ թուրքերը շատ են նրանց նեղացնում:

Վարելահողերի պակասությունը շատ հասկանալի է. անտառը բռնացած է ամեն տեղ, գյուղացիներին թույլ չեն տալիս ծառեր կտրել, վար ու ցանք անել: Եթե այդ կարգադրությունը խիստ է տեղացիների համար և շատ նեղություն է պատճառում, ուրիշ տեղերի համար մահվան և կյանքի խնդիր է: Պետք է այդ անտառները լավ պահպանել, որպեսզի Թարթառը միշտ Թարթառ մնա, այսինքն՝ ամառ ու ձմեռ առատ ջուր տանե, հասցնե տափարակները, ուր բնակվում է մի ահագին ժողովուրդ միայն Թարթառի օգնությամբ: Թարթառի ջուրը անվնաս և առողջարար ջուր է և պատճառն այն է, որ նա կազմվում է լեռնային անհամար աղբյուրներից, ծմակների պարզ ու իստակ ջրերից:

Ինչ վերաբերում է թուրք ազգաբնակչության, այդ ճշմարիտ որ մի կատարյալ չարիք է տեղային ազգաբնակչության համար, մի չարիք, որի հետ շատ ժամանակից ի վեր է կովում տեղական կառավարությունը: Պետք է ասել, որ Թարթառի ձորի երկարությամբ, ահագին տարածության վրա ապրում է Քոլանի կոչված թուրք ավազակային, վայրենի ցեղը: Քոլանիները գյուղական համայնքներ չեն կազմում, այլ ապրում են ցիրուցան. մի հինգ տուն մի տեղ են, մի ութ տուն տասը վերատ այդտեղից հեռու: Նրանք ոչ վարում են, ոչ հնձում, այդպիսի աշխատանքի սովոր չեն. նրանց արհեստը ավազակությունն է, ուրիշի կյանքը հափշտակելը: Հասկանալի է, թե որքան շատ վնասներ կտան հայ ազգաբնակչությանը, որ երկրագործ է և անասնապահ: Այսպիսի վայրենի տեղերում, ուր բնությունն ինքն է հարմարեցնում հանցանք գործելն ու անպատիժ մնալը, շատ դժվար է սանձահարել մի վայրենի ժողովուրդ, որ դարերից ի վեր ժառանգած է հափշտակող, արյունարբու ինստինկտներ: Բայց վերջին ժամանակներս կառավարությունը կարողացել է բավական լավ ցույց տալ իր գործությունը. Տիրուցան տների վրա խիստ հսկողություն անելով, հանցանքը սաստիկ պատժելով, կառավարչական տանուտերի (правительственный старшина) նշանակելով այնքան հաջող քայլ է արել, որ այժմ քոլանիները նոր-նոր սկսել են վար ու ցանք անել, այգիներ տնկել: Պակասել է չարագործությունների թիվը, երևում են նշաններ, որ քոլանիները վերջիվերջո պիտի հասկանան, թե կարելի է

ապրել սեփական ձեռքի հալալ աշխատանքով: Եվ այն ժամանակ հայ ազգաբնակչությունն էլ հանգիստ կապրե: Բայց առայժմ այդ ժամանակը դեռ հեռու է...

Մենք շտապեցինք հեռանալ խղճուկ Տոնին-Շենից, որպեսզի երեկոյան կարողանանք հասնել մեր նշանակած տեղը:

Էլի անտառ, էլի հսկայական անտառ, թանձր տերևների սավեր և կտոր-կտոր պղտոր երկինք նրանց վրա: Ծառերն ավելի մեծ են, ավելի խիտ, ահագին արմատները դուրս են ցցվել հողից, փչացրել փոքրիկ գյուղական ճանապարհը: Բայց մենք շուտով հասնում ենք մի ուրիշ գյուղ, որ թեև ամեն կողմից շրջապատված է այդպիսի անտառներով, այնուամենայնիվ բաց է արել իր համար մի լայն հրապարակ, որտեղից էլի բան տեսնվում է: Այդ գյուղի անունն է Դիստիկիր, որ գուցե Դաստակերտ բառի աղավաղումն է, թեև շատերը պարզ Դաստագյուլ են ասում: Այս մեկը Տոնին-Շենից էլ խեղճ է, փոքրիկ, աղքատ: Գետնափոր փոքրիկ խրճիթներ, մեռելային անկենդանություն, անհրապույր խղճություն, փոքրություն և մի մոռացված, վայրենի անկյունի պատմություն. այդ գյուղը մեզ կատարյալ վիատություն պատճառեց, ուստիս կանգ չառնելով, շտապով անցանք, որ հեռանանք մարդկային չարքաշ կյանքի տխուր պատկերից, կույ գնանք բնության վայրենի ծոցում, այն անտառների խորքում, որոնք ծնում են այդ իսկ չարքաշ կյանքը:

Եվ անտառը էլի ընդունում է մեզ իսկույն, հենց որ գյուղը աչքից անցնում է: Եվ էլի կտրված ենք աշխարհից, կյանքից: Մեզ ընկեր է միայն այդ կյանքի հետքը, խոնավ ճանապարհը, որ հանկարծ սկսում է դեպի ցած վազել. երևի առաջներս ձոր է, երևի մենք մի սարից ենք իջնում: Եվ ահա, վերջապես, դուրս եկանք այդ ձորի վրա: Մի քիչ բաց տեղ է տվել երկինքը, և այդ բաց տեղից երևում է նոր աշխարհ, որ կարծես այս իսկ վայրկյանում ստեղծվեց և մի անհայտությունից դուրս եկավ, մեր առջևը կանգնեց: Մի լայն, ահագին հովիտ է երևացածը, որի մյուս կողմին ընկած է բարձր լեռնաշղթա, և բոլոր այդ տեղերը ծածկված են էլի անտառներով: Մաղում էր բարակ անձրևը, մեծ ուրախություն պատճառելով մեր առաջնորդ տեր հորը:

Չեռու հովիտի մյուս ծայրում՝ անտառների մեջ, մի տեղ են ցույց տալիս ինձ և ասում, թե այդտեղ է Եղակեր անունով հայի գյուղը: Մինչև այժմ իմ տեսած գյուղերից ոչ մեկը այն աստիճան կորած, մոլորված մի տեղ չէր, ինչպես այդ գյուղը: Ես զարմանում եմ, չգիտեմ, թե ինչպես են այնտեղ մի հինգ-տասը տուն հավաքվել և ապրում են:

Մենք իջնում ենք մի կամուրջի վրա, որ կախ ընկած է շատ խոր ձորի վրա, և որի տակով գնում է մի փոքրիկ գետակ: Կամուրջից բարձրացանք, և ահա մեր առջևում հանկարծ երևաց մի փոքրիկ գմբեթ:

Եղիշե առաքյալ վանքն ենք հասել:

Ը

Պատկառելի և անվանի հնություն է: Ութ հատ փոքրիկ մատուռներ կան մի շարքում, միմյանցից շատ մոտիկ, ամենքն էլ հասարակ ու աղքատ շինություններ են. դրանց մեջ կանգնած է իններորդ շինությունը, որ ինքը, վանքն է: Մի հատ գմբեթն էլ հենց այդ մեծ շինությանն է պատկանում: Այդ մատուռների հավաքածուն կոչվում է Եղիշե առաքյալի վանք: Բուն վանքը, այն գմբեթավոր շինությունը, մեծ է մյուս ութ մատուռների հետ համեմատած: Բայց առանձին վերցրած՝ մի հասարակ, փոքրիկ բան է, շինված է, ինչպես և մյուսները, մանր քարերից, չունի ճարտարապետական որևէ գեղեցկություն: Բեմի կողմը և կտրի մեծ մասը քանդված են, թափված: Բեմի վրա երևում է կարմիր ու մեծ-մեծ տառերով մի արձանագրության կտորները, որոնք ամբողջ միտք չեն կազմում:

Այս է Եղիշե առաքյալի վանքի նկարագրությունը:

Բայց անվանի և պատկառելի հնություն է: Համարյա ամբողջ բակը սալահատակ է արած անթիվ գերեզմանաքարերով, որոնց գրերը վկայում են, որ այստեղ ապրել են բազմաթիվ վանականներ, եպիսկոպոսներ: Քանդված վանքի գավթում՝ զանգակատան տակ, խավարի մեջ երևում են կոկած, հղկած գերեզմանաքարեր, որոնց տակ թաղված են կաթողիկոսներ: Հյուսիսային պատի տակ էլ կան կաթողիկոսների գերեզմաններ: Հին ժամանակներում այստեղ է եղել Աղվանից կաթողիկոսության աթոռը և այստեղից է հետո փոխվել Գանձասարի վանքը: Հյուսիսային պատի տակ կա նույնպես և մի մեծ ու գեղեցիկ գերեզմանաքար: Գիր չկա վրան, որովհետև մարմարիոնի տախտակը, որ հագցրած է եղել քարի վրա և կրելիս է եղել արձանագրություն, անհայտ չարագործների ձեռքով գողացված է: Բայց ժողովուրդը շատ լավ գիտե, որ դա Մելիք-Հաթամի գերեզմանն է: Մելիք-Հաթամը Ջրաբերդի մեջ թողել է գեղեցիկ շինություններ, և նրա գերեզմանաքարն էլ Ջրաբերդի բոլոր գերեզմանաքարերից գեղեցիկն է:

Այդ գերեզմանի կողքին՝ մատուռների շարքում երևում է մեկը, կարծեմ ամենից աղքատը, ամենից անշուքը. մի ողորմելի շինություն, որ նստած է,

կույզ եկած, հազիվ է պահում իր տգեղ ու հաստ պատերը: Ներսի կողմը բոլորովին խավար է, մերկ, խոնավ: Բայց այդ մատուռը Ղարաբաղի մեջ մնացած պատմական ամենահարգելի հիշատակարաններից մեկն է, եթե ամենից մեծը չէ: Դռան ճակատին կարդացվում է հետևյալ արձանագրությունը. «Այս է հանգիստ Վաչագան թագաւորին. Աստուած ողորմի հայրապետա և ոյր ծնողացն որ շինեց զեկեղեցիս յառաջնորդութեան Տեր Սիմեոնի թվին ՉԼԵ էր»: Թագավորի գերեզմանը գտնվում է մուտքի մոտ, աջ կողմի պատի տակ, փոքրիկ, փլված բեմի առաջ: Քարի վրա չկա մի հատ նկար և ոչ մի հատ տառ: 2¹/₄ արշին երկարությամբ մի քար է, խնամքով տաշած և հղկած, որ ունի եռանկյունի պրիզմայի ձև: Այսպիսի ապահով տեղ է ծածկվել Աղվանից թագավորի տապանը, կարծեմ միակը, որ անվնաս է մնացել Աղվանից ամբողջ հարստությունից: Բայց հարց է, միշտ այդպես կմնա՞, թե ողորմելի մատուռը մի օր կփլվի և իր ահագին քարակարկառի տակ կփշրե արքայական գերեզմանը:

Այստեղ՝ այս վանքում էր ապրում Ավագ վարդապետը, որ հայտնի է Դալի-Մահրասա անունով: Անցյալ դարու պատմությունը տալիս է մեզ այդ վարդապետի պես քաջ հոգևորականների անուններ. Ջրաբերդում հայտնի է այս Դալի-Մահրասան, Սյունիքում հալիձորի Տեր-Ավետիքը, Ավշար երեցը, որ կոչվում էր և Տեր-Գասպար: Այս հոգևորականները, աշխարհական իշխանների հետ միացած՝ բազմաթիվ հաղթություններ են կատարել այն ժամանակվա պատերազմներում և լավ հիշատակ են թողել ժողովրդի մեջ:

Եղիշե առաքյալի վանքը, ինչպես տեսնում եք, եղել է մի մեծ կենտրոն, մի հռչակավոր սրբավայր, որի շուրջն են հավաքվել թագավորներ, իշխաններ, բարձրաստիճան հոգևորականներ: Այդ մասին վկայում են նաև ուրիշ շինություններ: Վանքի հնություններից ուշադրության արժանի է հին գանգակը, որ նոր է գտնվել հողի մեջ ծածկված:

Ես ասում էի, որ մեր կրոնասեր նախնիները լավ են եղել ճանաչելիս երկրի ամեն տեղերը: Հիանալի՜ են նրա շրջակայքը: Ամեն կողմից անտառապատ լեռներ են երևում, իսկ նրա առաջ, հարավային կողմից, ընկած երկար լեռնային ոչ այնքան բարձր շղթան մի շատ խոր ձոր է կազմում, որի այնքան խոր գնացած հատակում փրփրում է գետակը, այն գետակը, որի վրա գցած կամուջով էինք անցնում: Այդ ահռելի անդունդը մի անգամ կլանածին էլ ետ չի տա. նրա կողերի վրա չի կարող պահվել ոչ մի մարմին, որ վերևից դեպի ցած կընկնե: Այդ ձորի վրա շինված է մի երկհարկանի հին

տուն. նա ունի մի շատ նեղ ու երկար պատուհան, որ նայում է խոր ձորին և միանգամայն սարսափ ու հիացում է պատճառում իր մոտ կանգնածին: Ես մտաբերում էի Տաթևի առջև փոված ձորը, այդ ձորի վրա կախ ընկած փոքրիկ պատշգամբը և ասում էի, որ այս ձորը ավելի վայրենի է, այս պատուհանը ավելի ահռելի պատկեր է ցույց տալիս:

Այդտեղ՝ այդ պատուհանի մոտ նստած, մենք հաց էինք ուտում: Ներս մտավ մի գյուղացի, որ եկավ լուռ ու մունջ նստեց վառած կրակի մոտ, տաքանում էր: Վանքի մուղղուսին հայտնեց, որ դա հիվանդ է, եկել է մի երկու օր վանքում մնալու, սրբից առողջություն խնդրելու: Նա Եղակեր գյուղից էր, որի մասին վերևում մի երկու խոսք ասացի:

Ես խոսացրի գյուղացուն և զարմանքով լսեցի նրա բերանից Սյունյաց աշխարհի մաքուր բարբառը: Հայտնվեցավ, որ նա Տեղ գյուղից է:

- Որտեղի՞ց որտեղ ես ընկել,- հարցրի ես:

- Մեր բոլոր գյուղը Տեղից է գաղթել,- պատասխանեց նա:

Եվ հետո պատմեց, որ մի քանի տարի առաջ են գաղթել, այդ գյուղը շեն արել: Այժմ Եղակերն ունի 18 տուն բնակիչներ, բոլորն էլ Տեղից եկած:

Ես զարմանում էի, թե ինչպե՞ս են սյունեցիք գտել այս խուլ անկյունները, այս ծմակների ծոցը և ինչպե՞ս են ապրում այստեղ: Գաղթականության պատճառը հողի պակասությունն է եղել: Տեղ գյուղը, ճշմարիտ է, ունի շատ վարելահողեր, բայց ունի և մեծ ժողովուրդ: Հողը պակասություն է անում, նեղում է երկրագործին, և ահա գյուղից սրանք վեր են կացել, եկել այս կողմերը, թեև շատ ուրախ չեն, որ եկել են: Այստեղ էլ նույն պակասությունն է, այստեղ էլ անտառն է ամեն տեղ բռնել, ազատություն չի տալիս: Եվ հիվանդ գյուղացին շատ դժգոհ էր իր վիճակից: Հե՞ջտ բան է՝ թողնել տուն ու տեղ, ազգ ու բարեկամ, թողնել հայրենի բնությունը, մի լեռնադաշտ, որի վրա փայտը, մի հատ ողորմելի թուփն էլ հազվագյուտ բան է, որի վրա ահագին տեղեր է հերկում ութ ջուխտ եզն լծած գութանը, թողնել այդպիսի երկիրը, գալ բնակվիլ այստեղ:

- Այս ծմակը աչքներիս լույսը կտրում է,- ավելացրեց գյուղացին:

Զանգեզուրցին այսքան ծմակների մեջ. իհարկե, աչքի լույսը կկտրվի:

Իմ պատմածներից դուք կարողացա՞ք նկատել Ջրաբերդի գյուղերի մի հետաքրքիր պատմությունը: Մարդակերտը բաժանված, գաղթած է մոտակա Կուսապատ գյուղից, Մեծ-Շենը փոքրացել է ուրիշ կողմեր գաղթածների պատճառով, Տոնին-Շենը գաղթած է Մաղավուզ գյուղից, Դաստակերտը

նույնպես մի նոր գաղթականություն է, Եղակերը Մյունխիքից եկածների գյուղն է: Այսպես ժողովուրդը տեղափոխվում է, այսպես Ջրաբերդի գավառում գյուղերը փոքրանում են, ցրիվ գալիս: Այս երևույթը մենակ այս կողմերին է հատուկ: Ի՞նչ է պատճառը:

Ամենից մեծ պատճառը, իհարկե, հողի, վարելահողի պակասությունն է՝ միացած մի ուրիշ որևիցե հանգամանքի հետ, որ չի թույլ տալիս, որ գյուղը մեծանա: Այդ հանգամանքը կարող է լինել տեղի դիրքը, ջուրը: Եվ ահա գյուղից դուրս են գալիս փոքր քանակությամբ տներ, շատ թե քիչ հեռանում են, նոր բնակության տեղ որոնում: Իսկ հին գյուղատեղերից ավելի ի՞նչ լավ տեղեր են կարող գտնել: Այժմյան մարդիկ գիտեն, որ հիները իրանցից խելոք են եղել, իրանցից լավ են իմացել բնակության տեղ ընտրելը: Ահա նորերը գտնում են մի տեղ մի հին, ավերակ եկեղեցի, ջուր, մի քանի կտոր վարելահող ու բնակվում են այդտեղ: Ջրաբերդի գավառում ճշմարիտ որ բավական կան հին գյուղերի տեղեր. ես կարծում եմ, որ այդ գյուղերի ժողովուրդն է մելիքների ժամանակ գաղթել Վրաստան (Բոլնիս) և Գանձակի շրջակայքը: Բայց ինչպես որ լինի, այդ գյուղերի տեղերը այժմ կատարում են հիշած դերը, ձգում են դեպի իրանց: Իհարկե, երկար տարիներ անբնակ ու անխնամ մնացած գյուղատեղերը ու նրանց մի ժամանակ մշակած հողերը համարյա էլի վայրենացել են, ստեղծել բազմաթիվ անհարմարություններ, որոնց հաղթելը մեր ժամանակի պայմաններում բավական դժվար է, եթե չասենք անկարելի մեծ մասամբ: Հենց այս պատճառով այդ նորաբողբոջ գյուղերը, որ կրում են հին անուններ, այնքան աղքատ են, այնքան ճնշված անկանոն տնտեսության պայմաններից: Մյուս կողմից երևում է. թե ինչպես մարդը անգոր ընկճվում է բնության խստությունների առաջ: Իրանք, այդ գյուղերը, ինչպես տեսանք, փոքրիկ բաներ են, հազիվ արժանի գյուղի անվան, իսկ լեռնային բնությունը այնքան զորեղ է, այնքան բռնանում է իր վայրենի ուժով. ուրեմն ի՞նչ են կարող անել այդ գյուղերը իրանց երեք ջուլիս ձեռքերով: Լեռնային երկրի ապրուստը, առհասարակ, բոլոր ապրուստներից դժվարն է, բայց էլի ցավն այնքան մեծ չէ, եթե լեռները, օրինակ, Մյունխիքի լեռների պես են: Այդ երկրում լեռների մեծ մասը մերկ է, այսինքն՝ միայն խոտով ծածկված և այդ պատճառով այնտեղ երկրագործությունը, անասնապահությունը մի հայտնի չափով կարելի են: Բայց այնպիսի լեռնային երկիրներ, ինչպես են Խաչենը և նրա սահմանակից Ջրաբերդը, բոլորովին ուրիշ բաներ են: Անտառը այստեղ խեղդել է ամեն ինչ, ազգաբնակչությունը սակավ

է, նոսր և միշտ աղքատ, նա միայն լույս խոսքերով է կարող բողոքել իր բնության անընկճելի ուժի դեմ:

Վանքի մուղղուսու մի օրինակելի գործը տեսանք այն ժամանակ, երբ հեռացանք վանքից: Ծմակի մեջ գնալիս մենք իսկույն նկատեցինք, որ ճանապարհը շինված, հարմարեցրած է նորերումս: Ես դեռ չէի տեսած, որ դեպի վանքերը տանող ճանապարհների վրա մարդու ձեռքը աշխատած լինի. Գանձասարի, Տաթևի ճանապարհները վատերից վատ են: Իսկ այստեղ դժվար անցքերը փորած են. դրստած, ձիու հարմարության համար ճանապարհը տեղ-տեղ լայնացրած է, թեք զառիվայրերի վրա պտույտներ կան տարած:

Ժիր մուղղուսու օգտակար և գորեղ բազուկները գովելով՝ մենք շարունակում ենք մեր ճանապարհը և շուտով հասնում ենք մի գյուղ, որի մոտ հետզհետե նոսրանում է և բոլորովին վերջանում Մռավ լեռների և առհասարակ Ջրաբերդի անտառային թագավորությունը: Ինքը՝ գյուղը, գտնվում է մի ժայռոտ և մերկ բարձրության տակ և կոչվում է Մադաղիս: Նա փոքրիկ է, նոր է և ունի մեր անցած գյուղերի պատմությունը: Ահա կրկին տեսանք Թարթառը, որ վշշալով հոսում է գյուղի տակով: Գյուղում մեզ հյուրասիրում է մի վաճառական հայ, որի մեծ, գեղեցիկ տան շինությունը դեռ չէր վերջացել, ուստի իջնանում ենք նրա հին տանը, որի մեջ տիրում է մի հուսահատ խավար. գյուղական խրճիթներից մեկն է, խոնավ, հողե պատերով, գետնի մեջ խրված, կտրի վրա թողած մի փոքրիկ ծակը համարյա բոլորովին ավելորդ է, որովհետև մեզ լույս չի տալիս: Այսպես են մեր գյուղական հին ձևի բոլոր տները:

Մադաղիսը այլևս լեռնային գյուղ չէ. նա ընկած է Թարթառի նեղ կիրճում, ուր ամառը լավ տաք է լինում: Գյուղը չունի եկեղեցի, չունի նաև աղբյուր և ջուր է ստանում մի առվակից, որ անցնում է գյուղի միջով, ջրում է Թարթառի ափին տնկած այգիները: Այդ առվակն այն իսկ գետակն է, որը տեսանք Եղիշե առաքյալի վանքի խոր ձորերում փրփրած: Այդ ջրի բնական ընթացքն այնպես է, որ երբեք չպիտի տեսներ Մադաղիսը, որովհետև գյուղի և նրա ձորի մեջ մի մեծ սար կա: Ջուրը այստեղ բերված է մի ստորերկրյա ջրանցքով, որ մի ահագին գործ է և, իհարկե, հին ժամանակների գործ: Այժմյան ժամանակ գուցե անխելքություն համարվի այդպիսի մի ջրանցք փորելու միտքն անգամ: Բայց հին աշխարհը, որքան և կոպիտ ու անկիրթ լիներ, այսպիսի մեծ գործեր ունի թողած. մի ահագին ժայռոտ սար են ծակել, ջուրը

դուրս բերել այս կողմը, գյուղ շինել: Այդ անհավատալի գործը մի առասպելի նյութ է դարձել: Ահա թե ինչ են պատմում:

Լինում է մի չքնաղ օրիորդ Մադադիս անունով: Նրա վրա սիրահարված են եղել երկու դև եղբայրներ, որոնցից փոքրի անունն է միայն հայտնի՝ Շիր-դև: Օրիորդը երկու դևերին գործ է հանձնում, ասում, թե ով շուտ կվերջացնե գործը, ես նրանն եմ: Շիրին հանձնում է մի մեծ սարի միջով ական փորել, ձորի ջուրը բերել այս կողմը, իսկ նրա մեծ եղբորը հանձնում է Թարթառ գետից դուրս բերել մի մեծ առու, որ ջրե մարդկանց արտերը: Սիրահար եղբայրները իսկույն գործի են կենում, բայց չասեք, թե մենակ փոքրի գործն է դժվար եղել, ո՛չ, Թարթառը խոր ընկած է ժայռոտ ու նեղ ափերի մեջ, սրընթաց է. այդտեղից առու հանելն էլ հսկայական գործ է, թեև ճշմարիտ ոչ այնքան ծանր, ինչպես է մեծ սարը ծակելը: Գործը արագ առաջ է գնում. մինչև օրս մնում է Թարթառի ձախ ափի վրա այն ահագին քարակույտը, որ փոքր դևն է կազմել ականից հանած և դեն շարտած քարերից: Բայց նա դեռ կեսին էլ չհասած՝ սարսափահար տեսնում է, որ իր մեծ եղբայրն արդեն գործը վերջացնելու վրա է. շինել է ջրանցքը և բավական հեռու է տարել: Նա սարսափած գալիս է Մադադիսի մոտ, հայտնում իր ցավը: Օրիորդը նրան է եղել սեր տված, ուստի խորհուրդ է տալիս խաբեբայությամբ հաղթել մեծ եղբորը: Նրա խորհրդով Շիր-դևը առնում է շատ կտավ, փռում է գյուղի մոտ, այն իսկ տեղը, ուսկից պիտի դուրս գար ջուրը. կտավի վրա ցանում է աղ: Առավոտյան գյուղի տավարը գնում է աղի վրա, իսկ մեծ դևը հեռվից տեսնում է այդ, կարծում է, թե կտավը ջուրն է, որ արդեն դուրս է թափվում սարից, և տավարը ջուր է խմում: Սերից կուրացած մեծ դևը չի կարողանում տանել այդ կարծեցյալ հաղթությունը, դեպի վեր է շարտում իր ահագին մուրճը և գլուխը պահում է այնպես, որ մուրճը ընկնում է, ջախջախում գլուխը: Մադադիսը գնում է Շիր-դևին, որ, իհարկե, վերջացնում է իր սկսած գործը:

Մադադիսի հանդեպ, Թարթառի մյուս ափին, ընկած է թրքաբնակ մի ինչ-որ գյուղ: Սարսափելի ծուլության պատճառով մշտական աղքատության մեջ լինելով, այդ թուրքերը պարսավում են գողություններով: Բայց գողը էլի միշտ քաղցած է մնում, որքան և մեծ պատահներ գողանա, ասում էր մեր հյուրընկալը, որ, իբրև թուրքերի մեջ առևտուր անող վաճառական, գիտեր նրանց «օրն ու կյանքը» և մեզ մի քանի բաներ էր պատմում նրանց մասին:

Հենց այդ ժամանակ գետի մյուս ափին հաչում էին թուրքերի շները:

- Փառք աստուծու, շները հաչում են,- ասաց հյուրընկալը:
- Ի՞նչ կա որ,- հարցրի ես:

- Մինչև այժմ այդ շները քաղցածությունից ձայն ու շպտուն հանել չէին կարողանում, մինչև անգամ եթե նրանց կոխ տալով անցնեիր: Հիմա երևում է, որ նրանց տերերն էլ այնքան չեն քաղցած. գարուն է, կովերը կաթ են տալիս, թան է ճարվում, իսկ երբ որ թուրքերի մեջ թան ճարվեց, իմացեք, որ մենակ մարդկանց բանը չէ բան, շներն էլ օգտվում են:

- Եվ մի թե ամեն տարի այդպես է:

- Փորձած բան է: Այս տարի հո բուրրովին քաղցած կոտորվում էին թե իրանք, թե շները: Կոտորվեն դրանք, ոչ վար են իմանում, ոչ հունձ. սրա ու նրա դռնից մի չաթու, կամ մի հավ, կամ թե եզն գողանալով են ապրում: Բայց երբ թանը առատանում է, քիչ հանդարտվում են թե իրանք, թե ապրանքատերերը:

Մեր հյուրընկալը պատմում էր թուրք ազգաբնակչության բնորոշ մի հատկությունը:

Թ

Մադաղիս գյուղում վերջանում էր մեր ճանապարհորդությունը: Այնուհետև հարկավոր էր առանց դեսուդեն նայելու շտապել փոստի իջևանը և այնտեղից սայլակ նստել դեպի Շուշի:

Առավոտյան ժամի տասին ճանապարհ ընկանք:

Թեև երկինքը բուրրովին պարզ չէր, բայց տաք օր էր. կիրճի մեջ տիրող տաքությունը հիշեցնում էր տափարակները: Բնությունը, Մադաղիսին հասնելով, կատարելապես սնանկանում է: Նա, որ շինել է, երկնքին մոտեցրել Մոավի բարձրությունները, որ խրել, խորացրել է սարսափելի անդունդները, որ գլխիվեր ցցել է վիթխարի ժայռերը և այդ բոլորը ծածկել է կուսական անտառներով, նա, այդ բնությունը, այստեղ հոգնածի պես ցածրիկ, նիհար ու գունատ թումբեր է դրել, որոնք, իբրև շարունակություն գոռոզ տիտանների, միառժամանակ ձգվում են Թարթարի երկու ափերով դեպի արևելք: Իսկ գե՞տը: Նրա համար այստեղ շինված են փորձության դռներ, որոնց վրա հաստատված է մի հինավուրց կամուրջ: Այդ կամուրջը կոչվում է Ղառի-Քյորփի (պառավի կամուրջ), և նրա վրայով պիտի մենք անցնենք գետի աջ ափը: Ի՞նչ են այդ փորձության դռները:

Երկու ահագին ժայռեր կան բուսած գետնի մեջ միմյանց հանդեպ, երկուսն էլ գալիս են, միմյանց մոտենում: Շատ են մոտենում, մի նեղ անցք են թողնում իրանց մեջտեղը, և այդտեղերով պիտի անցնե գետը: Բայց ինչպե՞ս է անցնում: Կատաղի մոլեգնության պատկեր է երևում կամուրջի վրայից, որ մի հատ կամարով միացնում է երկու ժայռերի գլուխները: Գետը վերևից գալիս է, խփում աջ ափի ժայռին և ... մեկ էլ ետ ու ետ է գնում պտույտներով: Ետ մղված ալիքները հանդարտ տարածվում են լայն շրջաններ կազմելով, բայց պատահելով առջևից եկող ջրերին, գոռոզ և հանդարտ պտույտներ են անում: Հանդարտ են երևում կամուրջից, ջրի մակերևույթի վրա, բայց ինչ կլինին կոհակների այդ ընդհարումները ջրի տակ. այդ թեթև կերպով իմացվում է նրանից, թե ինչպես ջուրը մակերևույթի վրա կարծես թե եփվում է, իսկ սպիտակ, թանձր փրփուրը հետզհետե քաշվում է ափերի մոտ: Ահագին ժայռը ոչինչ է համարում ջրի այդ կատաղությունը, նա խրվել է ջրերի խորության մեջ, կտրել է կես ճանապարհը և ետ է մղում ջրերը, որոնք, ավելի և ավելի հեռանալով այդ արգելքից, լայն տարածվելով, կամուրջի այդ վերին կողմում մի լճակ են կազմել:

Այժմ նայենք կամուրջի ներքին կողմին: Այդտեղ ժայռերի արանքից դուրս են թափվում հորձանքները՝ խուլ աղմուկ հանելով, ժայռերի խոռոչների մեջ վազելով, պտտվելով և էլի ետ ու ետ դուրս թափվելով: Ջուրը, կարծես, մաղվում է այդ նեղ դռների մեջ, կարծես հավաքվում է, դիզվում և հետո հանկարծ դուրս թափվում: Այդքան չարչարանքից հետո, ժայռերից ազատվելուց հետո, գետը վախեցածի պես դեսուդեն է ցրվում, տարածվում, լայնանում: Այո՛, բնությունը փորձության դռներ է կանգնեցրել Թարթարի վրա: Նա պիտի անցնե այդ նեղ դռներով, որպես թե պիտի մաքրվի, քավե իր բոլոր մեղքերը, դեն դնե իր լեռնային խրոխտ ու ամբարիշտ բնավորությունը: Մինչև այստեղ նա ուրիշ էր, այսուհետև պիտի ուրիշ լինի: Այսուհետև նրա դաշտը հարթ է, նա պիտի գնա և մարդկանց հրամանը կատարե:

Հեռանալով այդ զարմանալի կամուրջից՝ մենք գնում ենք աջ ափի երկարությամբ ընկած բլուրների շղթայի մոտով: Պրծա՛վ, էլ ոչ միայն ծառ, այլև հասարակ, ողորմելի թուփ էլ չի երևում. տխուր, այրված տեղեր են: Թումբերի շղթան երկար գոտու պես կտրում է մի հին ջրանցքի տեղը, որ կոչվում է Դև-Արիս. այդ ինքն է օրիորդ Մաղաղիս անբախտ սիրահարի գործը: Առուն, ինչ ասել կուզի, այժմ բոլորովին չորացած է. նա հանված է Թարթարից, պառավի կամուրջից շատ բարձր մի տեղ: Մեծ, գեղեցիկ գործ է. մարդ

հիանում է, տեսնելով, թե ինչպես նա երկար ձգվում է, արձակ ու համարձակ գոտևորում է թումբերի երկար շղթան՝ ահագին պտույտներ անելով նրանց ծոցերում: Ճշմարիտ, եթե հեռանանք ժողովրդի մտքից, որ այդ աշխարհաշեն գործը մի ինչ-որ սիրահար դևի է վերագրում, մենք կտեսնենք մի հին, աշխատասեր ժողովրդի հիշատակը, որ նրա կուլտուրական զարգացման մասին գեղեցիկ վկայություն է տալիս: Ահա գնում ենք անջրդի, մերկ տեղերով, հողը բոլորովին անօգուտ է, բայց որքան առատ պտուղներ էր կարող տալ, եթե այդ ջրանցքը այժմ էլ ջուր բերեր: Ժողովրդի մեծ հարստություններն են այստեղ կորչում: Շուտով մենք անցնում ենք թումբերի քամակը, հեռանում ենք գետից, և մեր առջև բացվում է լայնարձակ, ահագին դաշտավայրը: Նրա վրա չի երևում մի կտոր հերկած տեղ, չի երևում բնակության տեղ. ջրի պակասությունը ամայի անապատ է դարձրել այդ կողմերը:

Մի քանի տարի սրանից առաջ Շուշու հայերի մեջ ծնվեց այն միտքը, որ, վաճառականություն անելով, միմյանց բերանի թիքան խլելով, կոպեկների համար հոգի ու խիղճ ծախելով բան չի դառնա. հարկավոր է բնության հարստությունները մշակել, հարկավոր է երկրագործությամբ, գյուղտնտեսությամբ պարապել: Քառասուն թե ավելի հոգի, չեմ հիշում, գլխավորապես վաճառականներից, խնդիրք տվին կառավարության, որ թույլ տրվի իրանց հաստատել այս իսկ տեղերում գաղթականություն: Խնդրատուները նախապես կազմել էին այդ միտքը իրագործելու ծրագիրը: Գաղթականության առաջին հոգսը պիտի լիներ ոռոգել այդ անջրդի դաշտերը. դրա համար պատրաստ էր հին Դև-Արխը, պետք էր միայն քիչ խորացնել և մի քանի տասնյակ հազարներ ծախսելով շինել գետից դուրս բերելու տեղը, որ այժմ փչացած է: Ամենամեծ դժվարությունը այս վերջին բանն էր. Թարթառը այժմ բավական խոր է ընկել, այնպես որ բավական հմուտ մասնագետ է կարող մի ճար անել: Բայց խնդրատուները հույս ունեին, որ կարող են գլուխ բերել այդ գործը և այնուհետև նրանց նոր բնակության տեղը իսկ որ շատ գեղեցիկ կլինեն և շահավետ: Բայց մինչև այդ խնդիրքը որևէ լուծում չի ստացել:

Թարթառը պառավի կամուրջից ցած անխնա հափշտակվում է, նրա մարմինը մաս-մաս կտրատվում է, դուրս բերվում, դեսուդեն ցրվում: Ասում են, թե յոթանասուն առու է դուրս բերած այդ գետից, դրանցից շատերը ահագին տարածության վրա են գնում, ջուր մատակարարում բազմաթիվ գյուղերին: Նա՛ այդ գոռոզ, աղմկաշատ գետը, որ սարերի մեջ կարծես գոռում է, թե ինձ մի մոտենար, դառնում է անձայր տափարանների վրա ցրված

բազմաթիվ պղտոր ու խեղճ առուներ: Խեղճ Թարթառ. ես խղճում էի նրան, տեսնելով «արխերի ցանցը», թեև գիտեի, որ այդպես խղճացած նա ավելի լավ է, օգտավետ...

Շուտով մեր առաջն է դուրս գալիս Թարթառի բազմաթիվ պարզներից մեկը: Անջրդի դաշտավայրից ձանձրացած, տանջված՝ մենք հասնում ենք Մարաղա անունով հայաբնակ գյուղը: Նա շրջապատված է մեծ-մեծ ու գեղեցիկ այգիներով, որոնց թարմ ու խիտ կանաչները մարդու աչքն են քաղցրացնում: Ամալի տափարակի այդ օազիսը իր բոլոր բնակություններով, այգիներով, մեծ-մեծ արտերով այն առվի շենքն է, որ Թարթառն է տալիս:

Մարաղան մեծ գյուղ է, որ հիմնել են դարուս քսանական թվականներին Պարսկաստանից գաղթած հայերը: Դաշտային գյուղ է, հարթ տեղ շինած: Բայց սարսափելի կեղտոտ գյուղ է. փողոցները լիքն են աղբով, որ անձրևի ժամանակ զգվելի հոտ է տարածում: Տները շինած են հասարակ սև ցիփց և եղեգնից, շրջապատված են պարտեզներով: Ամառը այստեղ շատ տաք է լինում, բայց բնակիչները սար չեն գնում: Այդ անտանելի կեղտոտությունը մի այսպիսի տաք տեղ հասկանալի է, թե ինչ կլինի ժողովրդի համար, որ ապրում է ցածրիկ տներում, բարակ, ցիփ պատերի ետևը, և հենց այդ է պատճառը, որ գյուղը չի մեծանում: Արդյոք ինչպե՞ս կարելի կլինի սովորացնել գյուղացուն, որ աղբը փոխանակ փողոցում թափելու և իր կյանքը թունավորելու, տանն իր դաշտը, իր այգին անձե, վնասի փոխարեն ևս օգուտ ստանա: Չի՞ հասկանում...

Մարաղայից մինչև Թարթառ իջևանը երկու վերստ է: Իջևանից մոտ պատահում էին մեզ խումբ-խումբ գյուղացիներ, հայ թե թուրք, որոնք տանում էին իրանց հետ բեռներ գրաստների և սայլերի վրա: Մի արտասովոր կենդանություն էր տիրում այդ մշտալուռ դաշտերում. դեպի ամեն կողմ գնում էին հետևակ և ձիավոր մարդիկ, սայլերը ճոնչում էին, խոսք ու աղաղակները մի խուլ աղմուկ էին կազմում: Ամեն չորեքշաբթի օր իջևանում լինում է բազար, այսինքն՝ գյուղական տոնավաճառ, շրջակա և հեռավոր գյուղերը բերում են այստեղ իրանց բերքերը, և լինում է բավական լավ առևտուր: Երբ մենք տեղ հասանք, իջևանի ահագին հրապարակը դեռ ծայրեծայր լիքն էր գյուղացիների բազմությամբ: Գյուղացիները տենդային արագությամբ դեսուդեն էին ընկնում, առնում, ծախում էին, շտապում էին վերջացնել, գնալ: Այդ տոնավաճառները, ինչ խոսք, շատ գեղեցիկ և անհրաժեշտ բաներ են այսպիսի տեղերի համար, ուր չկա առևտրական կենտրոն:

Նրանք մեծ զարկ են տալիս գյուղական տնտեսության. ամեն մեկն ունի հարմարություն իր ունեցածը հրապարակ հանել և ծախել մի ընդհանուր գնով: Չարչությունը այստեղ այնքան էլ չի կարող գյուղացու մազերը ածիլել անողորմ կերպով: Առնողի ու ծախողի պակասություն չկա. հետևաբար խաբելու մի մեծ պայմանը այսպիսի տեղ գոյություն չունի: Շուշու և Ջվան-շիրի գավառներում շատ մեծ գյուղեր կան, որոնք շաբաթը մի անգամ տոնավաճառ ունին, ինչպես օրինակ՝ Բարդա, Աղդամ, Աղջաբաղի:

Մի ժամից հետո սայլակը մեզ դեպի Շուշի էր տանում: Արեգակը այրում էր, ճանապարհի թողը անողորմ կերպով նստում էր մեզ վրա, խեղդում էր մեզ: Տխո՛ւր, տխո՛ւր տեղեր: Ես շուտ-շուտ նայում էի դեպի արևմուտք, տեսնում էի այն սարերը, որոնցից նոր էին իջել, հիշում էի գով անտառները, պաղ ջրերը: Եվ հոգով ձգվում էի դեպի այդ հսկա անտառային աշխարհը, որը, սակայն, դեռ երեկ այնպես ինձ նեղացնում էր: Ես անհագ նայում էի դեպի այդ կողմերը...

«Մարդու աչքը հողից կկշտանա, երբ կպառկի գերեզմանում», - ասում է ժողովուրդը:

Այո՛, միայն այդ հողից...

1888

ՇԱՀԲՈՒԼԱՂ

Ա

Շահբուլաղ... Աղբյուրների թագավո՞ր, թե՞ թագավորի աղբյուր:

Թե՛ մեկը և թե՛ մյուսը:

Մի ցածր սար է, մի սապատող, ժայռոտ բարձրություն, որ ծածկված է կարճիկ թփերով և նուր խոտերով: Չորս կողմն անջրդի է, չորս կողմը հեռու տարածության վրա ամեն ինչ մեռնում է, տապակվում առանց ջրի: Տեղը միանման դաշտավայր, որը այս փոքրիկ լեռնաշղթայի պատվանդանից սկսվելով, ձգվում է դեպի արևելք, հորիզոնի վրա մի կող է կազմում և թեքվում, անցնում է դեպի Կուր գետը: Եվ այստեղ՝ այս մեջքը ցցած սարի տակից դուրս է վազում մի մեծ ջուր՝ բաժանված երեք գետակների, որոնք ամառ-ձմեռ քչքչում են քարեքար ընկած, միանում են, գնում են ներքև, ուր մեծ գործեր պիտի կատարեն, ծառեր, այգիներ ջրեն, բնակիչների խաշված բերանը զովացնեն: Որտեղի՞ց է գալիս նա՝ այդ պարզ, բյուրեղանման հեղուկը, այնպիսի առատությամբ, այնպիսի շուքով:

Աղբյուրների թագավոր... Ոչ ոք նրան այստեղ չէր սպասում, ոչ ոք նրանից խմելու հույս չուներ: Կուրի տափարակներում պտտող մարդը ջուր պիտի վերցնե հեռավոր տեղերից բերած արհեստական առուներից, որոնց մեջ լուծվում է կիզող արեգակի տակ փոշիացած հողը, կազմելով մի պղտոր զանգված: Իսկ այստե՞ղ... Նայիր, տե՛ս. այսօր մայիսն է, այսօր, մի քանի ժամ առաջ, սարերում թողել ենք թարմ կանաչ, որ նոր է բացվում, նոր է զարդարվում, բայց այս կողմերում ահա խոտը դեղնել է, մեռնում է, այրվում: Այրվում է արագությամբ, ինչպես արագությամբ դուրս է եկել, բարձրացել: Նրա կյանքի մեջ կար մի տենդային գործունեություն, մի սաստիկ շտապողական անհամբերություն, և ահա, կարծես, ամբողջ ուժը սպառած այդ գործունեության վրա, չորանում է՝ ոչինչ հետք չթողնելով, ոչինչ օգուտ չտալով. նրա ամբողջ ուժը կլանվել է, և մեռնելուց հետո էլ նրան չեն դնում անասունի առաջ, գիտեն, որ նրանով փոր չի կշտանա:

Արևը, ինչպես ասում են, կծում է, ոչ թե տաքացնում. հողը փոշիանում է, ամեն տեսակ թունավոր միջատներ վազուվազ են անում: Իսկ աղբյուրների թագավորը մի չափով, միատեսակ ձայնով դուրս է թափում իր բարակ ալիքները... Ուզում ես ասել, որ ցածրիկ սարը բարձրացրել է իր ողնաշարի սապատը, որպեսզի իր փորում մի մեծ լիճ կազմե այդ ջրի համար, մի լիճ, որ հավիտենական խավարի մեջ է ընկղմված և կյանք է տալիս այն փոքրիկ ու մեծ ձկներին, որոնք երբեմն դուրս են գալիս լույս աշխարհ: Ասում են, թե շատ հեռվից է գալիս այդ ջուրը, ասում են, թե Գոկչա լճի մոտ, չգիտեմ որտեղ, ջրի վրա հարդ են ածել, հարդը Շահբուլաղ է դուրս եկել: Ասում են, ի՞նչ իմանաս...

Աղբյուրի վրա բուսականությունը կենդանություն է ստացել. կանաչ թփերը, պատուտակները գեղեցիկ անկարգությամբ գրկախառնվել են, միմյանց գրկել: Շետևաբար ինչքա՛ն գեղեցիկ տեղ է երկար ճանապարհից, խեղդող ջերմությունից հանգստանալու: Անհոգ ընկնես նրա մոտ, ոտ ու ձեռքը լվանաս, կրծքի վրա ընկնես, բերանդ ջրի վրա դնես, գեթ առժամ մոռանաս քեզ տանջող ճանապարհի թոզը, ականջ դնես սիրուն քչքչոցին, հետո մեջքի վրա պառկես, աչքիդ հանգստություն տաս կապույտ երկնակամարը դիտելով: Ի՞նչ լավ կլինի:

Բայց զգուշություն... Հանգիստ սրտով գնալ, մոտենալ, նստել, ձեռքդ դեպի ջուրը տանել չես կարող: Վախ է, մեծ ահ կա:

Բ

Սարը, որ ծնում է այս աղբյուրը, օձերին է պատկանում: Կոչվում է Իլան-Դաղ և մայիսի սկզբներից մինչև աշնան ցրտերը դյուրոված է, անմերձենայի:

Ինձ պատմում են հրաշալի բաներ այդ չար սողունների մասին: Այստեղ է, ասում են, ապրում օձերի թագավորը, որ երկու եղջյուր ունի. ամեն օր, երբ արեգակը թափում է իր կրակը, թագավորը հավաքում է իր հպատակներին, խմբեր է կազմում ու իջնում դեպի ցած, աղբյուրի մոտ. ջուր են խմում ու էլի ետ դառնում: Այստեղ կան «յոթն եղբայր» օձերը, որոնց եղբայրական սերն այնքան վառ է, որ եթե վեցին սպանես, յոթերորդը ետևիցդ պիտի ընկնե և որտեղ ու ինչպես որ լինի, պիտի անպատճառ վրեժը հանե իր մահացուցիչ թույնով:

Ամեն տեղ գրավել են նրանք: Նայում ես աղբյուրի մեջ, բյուրեղանման հեղուկը քեզ թույլ է տալիս հատակի վրա ընկած ամենափոքրիկ քարն էլ տեսնել. քարի հետ, տեսնում ես, ընկած է կանաչ օձը: Ջրի մոտ կա փոստի իջևան, հիշում եմ, մի անգամ ծառան ինձ թեյ չտվեց, ասելով, թե վախենում են ածուխ բերել, օձեր կան ածուխի մեջ: «Անցյալ օր այս սենյակում երեք օձեր կային», պատմում է ծառան ժպտալով. «ուզեցի սպանել, տախտակամածի տակ մտան»: Եվ այդ սենյակում պիտի նստե ճանապարհորդը, պիտի քնե...

Օձերի սարսափն է, որ տիրում է այստեղ: Պատմում են միայն նրանց մասին: Լսում ես, և կաշվիդ վրայով, կարծես, միջատներ են վազում: Դու շրջապատված ես դրանցով, ամեն ժամ սպասում ես, ահա որտեղից որ է դուրս կգան: Մոխրագույն փոք գորշ բծերով, տափակ գլուխ, չար աչքեր, երկար իրան. երեկ մեկը սպանված ընկած էր ճանապարհի փոշիների մեջ: Օձային շունչ է ամեն տեղ: Հեռվից մի թռչնի ձայն է գալիս. որքան և խելքդ գլխիդ պահես, չես կարող չհավատալ, որ երգողը ոչ թե մի տխուր թռչուն է, այլ նույն ինքն օձերի թագավորը, որ գուցե հավաքում է իր հպատակներին՝ հեռավոր տեղեր արշավելու: Նրանք պատերազմում են, պատմում է ժողովուրդը, նրանք ունին ամեն մի դեպքի համար առանձին ձայներ. գնում են խմբերով, պատերազմում մի խուլ անկյունում. ետ են գալիս շատերը վիրավորված, կտրատած մարմիններով: Ամեն մի թուրք սայլապան այսպես է հավատացնում ձեզ, իր սևացած դեմքի վրա ամեն համոզիչ շարժում գործելով:

Այսպես է օձերի թագավորությունը, և աղբյուրների թագավորը նրանցն է: Մարսափահար մարդը ահուդողով է մոտենում ջրին:

Եվ ջուրն էլ խմելու ջուր չէ: Կրային խառնուրդներ շատ ունի, փոք է ուռցնում: Շատ խմես այսպիսի մի արեգակի տակ՝ ջերմը պատրաստ է քեզ համար:

Գ

Մարսափահար չէ այս կողմերի բնակիչը միայն, թուրք գյուղացին, որ մի քանի ամիս հարևանություն է անում օձերի, կարիճների և այլ այս տեսակ պատիժների հետ:

Երեկ ես տեսա նրանց գյուղը: Այդ ցած ընկած, տափակ, մոխրագույն երկնքի տակ, գետնից կպած ողորմելի խրճիթներում այրվում, տապակվում են մարդիկ՝ իրանք էլ չիմանալով, որ տապակվում են: Գյուղը բավական մեծ տարածություն ունի. տները տեղավորված են մեծ-մեծ այգիներում և պարտեզներում: Քար չկա. եղեգնյա պատերը և խոտի կտուրը պիտի պաշտպանեն արևից և արևի ամեն մանր, չար և եսասեր արքանյակներից: Ո՛չ ձայն կա, ո՛չ աղմուկ. տափարակը արձագանք տալու, ձայն մեծացնելու ընդունակություն չունի: Գյուղի խանութի առաջ՝ փոստի ճանապարհի վրա, ընկած են մի քանի սևացած, այրված մարդիկ, որոնք ահագին փափախների տակից ծուլությամբ նայում են մեզ:

Ո՛չ, ի՞նչ համեմատություն լեռնային գյուղի հետ: Լեռնականը կպցնում է քարափի ծայրին երկու կամ երեք պատ, ծակում է դուռը, այդտեղից բաց է անում, տանում դեպի խոր ձորի հատակը մի համարձակ գալարուն կաճան: Նրա կյանքը հեռվից է հասնում քեզ. դեռ գյուղը հեռու է, դեռ շատ պետք է պտույտներ անես ձորերի վրա, բայց փոքրիկ մանուկը, շունը, աքաղաղը հեռվից իրանց ձայնը քեզ են հասցնում: Իսկ այնտեղ՝ այս դաշտավայրում, ցածրիկ ծառերը կարծես իրանց ոստերով պահում են երկինքը, որ չընկնի, ամեն ինչ ճնշված է, հողին կպած: Վաղ առավոտը արեգակը ծագում է ցածրիկ, և ոչ մի ծառ, ոչ մի տեղ այնքան չէ բարձրանում հարթավայրը, որ ծագողի կարմիր-ոսկեգույն շառավիղը քիչ կանգնե, հանգստանա. նա սահում է, շտապով անցնում դեպի հեռուն, բազմում սարերի գլխին: Մեկ էլ տեսար, ցերեկվա լուսատուն վազեց, բարձրացավ, կանգնեց, մեխվեց, կրակ պիտի թափե իր օձերի, կարիճների վրա... Մարդը պիտի փախչե, գլուխը

շում է, ականջներում արյունը սաստիկ զարկում է: Կա և մի անշունչ պատիժ. մանր, կծու փոշին այրում է կաշին, քրտինքը ցեխացնում:

Էլ ո՞ր փախչե մարդը. այն կողմում երկար ճանապարհ, այս կողմում մեծ և գեղեցիկ աղբյուր, որ սակայն օձերին է պատկանում:

Դ

Բայց ինչո՞ւ է Շահբուլաղ՝ թագավորի աղբյուր:

Այս թարգմանությունն ինձ թելադրում է հնությունը: Աղբյուրի կողքին տեսնում եմ պարսկական ոճի մի կիսավեր շինություն: Կա մի փոքրիկ գավիթ, որ քարյա սյուներով է զարդարված: Մտնում եմ գավիթը, մի փոքր դուռ ներս է հրավիրում: Մոռանալով, որ օձերի թագավորությունը ամենից շատ ավերակներն է հարգում, մտնում եմ ներս, կոխ եմ տալիս դատարկ շինության կոկած հատակը. քայլերս խուլ թնդյուն են հանում բարձր, կամարակապ կտուրի տակ: Խորհրդավոր կիսամթություն է տիրում. կողքի պատի մեջ կա մի նեղ լուսամուտ, իսկ մի ուրիշը, ավելի լայնը, շինված է վերևից, առաստաղից:

Ի՞նչ է սա. բաղնի՞ք, թե հին ձմեռոց որևէ գոռոզ պետի: Չես հասկանում: Բայց երևակայությունը, կապված շրջակա ավերակների հետ, թույլ է տալիս իսկույն դնել այդ գավթում, կամ նրա մոտ մի ուրիշ շինության մեջ, արևելյան բռնավորին: Եվ ի՞նչն է արգելում ինձ երևակայել մի տաք և խաղաղ երեկո. գավթում նստած է մի խան կամ շահ, որ զլզլացնելով Շահբուլաղի պարզ ջուրը իր դայանի մեջ, մտիկ է անում իր մերկ հյուրիներին, որոնք լողանում են աղբյուրի մեջ: Դրսից հասարակ մահկանացուի աչքը չէ կարող տեսնել մարգարեի խոստացած այս դրախտը, որովհետև աղբյուրը, բակը շրջապատված են մեծ պատերով, որոնց հետքերն այժմ մնում են: Եվ հզոր բռնակալը բաց է թողնում բերանից Շիրազի անուշահոտ ծխախոտի կապույտ ծուխը, նայում է աղբյուրի հյուրիներին, արձարծում է իր մեջ արևելյան ցանկության բոցը, որ այնքան սաստիկ է, այնքան խանձող է, ինչպես և այստեղի արեգակը... Իսկ եթե այստեղ ապրել են այդպիսի հեշտասեր պետեր, վկայում է այդ մասին և հին բերդը, որ կանգնած է աղբյուրի մոտ, թումբի գլխին. վկայում են և այդ բերդի մոտ կանգնած հին պատերի կտորները և նրանց տակ՝ ստորերկրյա բնակարաններն ու անցքերը: Ասում են, թե այստեղ է եղել Տիգրանակերտը:

Այս դեռ աչքիդ առաջ կանգնած հնություններն են: Իսկ ա՞յն, որ պսակում է օձերի սարի գլուխը:

Եթե ճանապարհի ընկերդ քիչ ծանոթ է այս տեղերին, չես կարող չնայել սարի գագաթին. երբ կմոտենաս փոստի իջևանին, նա կբռնե ձեռքդ և ցույց կտա հին շինությունը և կասե. «Տե՛ս, հայի եկեղեցի է»: Իսկ ես այդ չորս բանից քիչ ավելի տեղեկության տեր եմ դառնում իջևանի ծառայի շնորհիվ: Նրան խոսեցնում եմ, տեսնում, որ նա ինձանից թունդ հնասեր է. Բարձրացել է սարի գլուխը, դանակով քերել է խաչարձանը, որ շինության առջումն է, կարդացել է նրա վրա. «Ես Շահանշահ որդի Աջոտայ կանգնեցի զխաչս հոգւո իմոյ»...

Գնալ, տեսնել է հարկավոր, մեկ էլ բերել... Բայց ինձ խորհուրդ են տալիս ետ կանգնել այդ մտքից և էլի սկսում են օձերի, նրանց թագավորի, յոթն օձեղբայրների պատմությունը:

- Իսկ դու ինչպե՞ս ես գնացել, և ի՞նչ է այն կաձանը, որ ոլորվում է գագաթն ի վեր:

- Այն ժամանակ ձյունը նոր էր հալվում, այն ժամանակ էլ այդ կաձանով մարդ է գնում:

Հետո հնասեր ծառան պատմում է ինձ, թե սարի գլխից, այդ ավերակներից սկսած մինչև աղբյուրները շինված են աստիճաններ, այնպես որ բարձրանալիս չես հոգնում: Ահա ավելի մեծ հանելուկ, քան այն, որ աղբյուրի մոտ եղած ավերակն է տալիս:

Բայց մութը կոխում է: Հանկարծ մի այնպիսի թանձր խավար է ընկնում երկրի վրա, որ մի ժամ առաջ աչքիդ դիմաց կանգնած սարը կլանվում է, անհայտանում: Եվ հարավային գիշերվա այդ խավար օվկիանոսի մեջ միայն աստղերն են, որ հանդարտ ու հեզ պլպլում են, աստղերը, որոնց համար ո՛չ օձ կա, ո՛չ ավերակ:

Գնա՛ քնիր և անպատճառ խոսք տուր քեզ, որ քնած ժամանակ այնքան արթուն լինես, որ օձի կամ ուրիշ թունավոր միջատի դեպի քեզ գալն իսկույն իմանաս, անձդ ազատես... Ի՛նչ քուն:

Ե

Արշալույսը զարթեցրեց ծիծեռնակին, որ ննջած էր սենյակի առաստաղից կպցրած բույնի մեջ. անդադար կանչկոտում է, հանգիստ չունի:

Վեր եմ կենում, նայում օձերի սարին: Ո՛չ, երևում է, որ այս ամառ ինձ չէ վիճակված տեսնել Շահանշահի խաչը մոտիկից:

Մեր կառքը թռչում է դեպի ետ, մենք տուն ենք գնում: Ձիաները վազում են, արեգակը վազում է. ճանապարհը հետզհետե տաքանում է, մոխրի նման փոշին մլլում է անիվների տակից:

Իսկ մեր առաջ հետզհետե բացվում են սարերի տեսարանները: Քանիսն են, որքա՛ն կապույտ են և մութ: Ահա հեռու երևում է մի գագաթ, չորս կողմից շրջապատվել է սպիտակ գոլորշիների քուլաներով: Կարծում ես, թե այդ ահագին բարձրության վրա, մութ քարանձավներում և կապույտ ծմակներում հավերժական կախարդների գոհեր են բերում լեռների վիթխարի ոգուն: Զոհարաններից մուխը բարձրանում է, բարձրանում. մի մասը հասել է երկնքին, որ այնպես բարձր կախ է ընկած, մյուս մասը սողում է սարի կողերի շուրջը: Ո՞ր սարն է դա:

Ես չեմ մոռանում Շահբուլաղը: Ուրեմն ինչպե՞ս... Աղբյուրների՞ թագավոր, թե՞ թագավորի աղբյուր:

Մեծ է, աղբյուրների թագավոր է, խոսք չկա: Բայց և ճշմարիտ շահի աղբյուր է և ոչ թե շահի, այլ Շահանշահի... Աշոտի որդու: Որտեղի՞ց որտեղ է եկել՝ Շիրակից Խաչեն... Հեռո՛ւ է: Եվ ինչո՞ւ է եկել: Արդյոք այդ ավերակը շեն ժամանակ սահմանաքա՞ր էր, թշնամու վախի համար դրած ամրություն՞ն էր, թե ջերմեռանդ հոգու ուխտի տեղ... Ինչ որ է, կա, այժմ կանգնած է և նրա վրա սողում են անթիվ օձեր... Օձեր, որոնք բռնել են այն բռնակալերի տեղը, որոնց սուրը ջնջել է այդ կողմերի կյանքը: Կենդանի օրինակ անմիտ բռնակալության՝ մարդկանց ոչնչացնել, օձեր բնակեցնել, ինչո՞ւ են այդ չարերը այնտեղ հավաքվել և ամեն օր թույն են թափում մեծ աղբյուրի մեջ... Թագավոր բառը կնքած է այդ տեղին. աղբյուրը՝ թագավոր, օձը՝ թագավոր, ավերակը թագավորի:

Հրեն, էլի մի սար երևաց, որ ծխում է առավոտյան հանդարտ օդի մեջ: Գոլորշու քուլաները բարձրանում են, բարձրանում, ամեն կողմից բռնում են սարի գագաթը: Այնտեղ այրող արև չկա, այնտեղ օձ չեն տեսել: Բայց այնտեղ բռնացած է մշուշն ու խոնավությունը, որոնց մեջ փտում, լուծվում է կյանքը:

Այստեղ կյանքը տենդային եռանդով է գործում և եռանդով վերջանում, փչանում չոր կլիմայի տակ. մեծանում է զուր արագությամբ, մեռնում է զուր եռանդով: Իսկ այնտեղ կյանքը մեծանում է շա՛տ ծանր, շա՛տ դանդաղ կերպով, բայց դեռ իր նպատակը չհայտնած, փտում է, ընկնում: Ոչ ոքի համար

ծածուկ բան չէ, որ Շահբուլաղի օձերը իրանց եսամոլության մեծ մասը տվել են այն սարի բնակիչներին, եսամոլություն, որ այստեղ արևի տակ է ավերմունք գործում, իսկ այնտեղ՝ ջրի և թացության մեջ: Այդ սարի մթնոլորտը զարմանլի է: Տարին տասներկու ամիս նրան ճեղքում, պատռտում են սոսկալի կայծակները ահռելի գոռոց-աղաղակների հետ, բայց մշուշը իր բթացնող ու ծանր մեռելությամբ միշտ կա ու կա: Տե՛ս, ահա գոլորշիները բարձրացան, գագաթը ծածկում են, իրանց սառցնող, խոնավ մարմինները քաշքշում են այդ խեղճ ժայռերի վրա: Նայի՛ր, տես...

Դա ինքը մեր Շուշին է:

1988

ՀԻՆԳ ՕՐ
ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄՏՔԵՐ ՈՒ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՌԱՋԻՆ ՕՐ

Մոխրագույն ամպերը բարձրանում են շատ բարձր, շերտ-շերտ կանգնում են անշարժ, մնում մի օր, երկու, երեք օր, շատ անգամ և ամբողջ շաբաթներով: Մնում են անփոփոխ, և անփոփոխ մոխրագույն օրը իր աղքատ ու տկար լուսով կախվում է երկրի վրա. արեգակը մի հատ շող չի կարողանում անցկացնել այդ շերտերի միջով, բայց և ամպերն էլ մի կաթիլ անձրև չեն կաթեցնում: Հողը չոր, երկինքը ամպամած, իսկ մարդը տարակուսանքի մեջ է: Շատ անորոշ եղանակ է. անձրևի ես սպասում թե արևի՝ դու ինքդ էլ չգիտես:

Ամառն այդպիսի օրեր շատ են լինում Ղարաբաղում:

Օրացույցի հաշվով գիշերը լուսնկա պիտի լինի: Լուսինը լույս է տալիս կուտակ-կուտակ ամպերին, լուսավորում է նրանց մանր ծալքերը, որոնք մի շատ նվազ, անկենդան, կիսատ լույս են ուղարկում իրերի վրա: Այդ լույսը մի խոսքով անվանելու բառ չկա. ժողովրդի մարդը անվանում է «լույս-լույս»: Առարկան իր անորոշ գծագրությունն է ցույց տալիս: Խավար է, որովհետև նրան ամբողջովին չեն տեսնում, և լույս է, որովհետև նա ամբողջովին չի կորած: Երկնքի ո՞ր կողմիցն է գալիս այդ «լույս-լույսը»՝ պիտի որոնես, ենթադրես: Նայում ես երկնքին, ամեն մի կողմ լուսնի տեղն է ցույց տալիս: Ահա մի շատ լուսավոր շերտ հեռու հյուսիսում, մի թե այդտեղ լուսին է լինում. կամ մի ուրիշը արևմուտքի վերին ծայրում. ի՞նչ իմանաս, որտե՞ղ է նա: Ավելացրեք և այն, որ մի այդ տեսակ օր օգոստոսի 31-ին էր, երեկոյի սկիզբը, օդը մթնացնելու չափ զով, իսկ բարակ ու հանդարտ քամին՝ իշխան ու տեր, և դուք մի ճիշտ հասկացողություն կկազմեք այն բույսի մասին, երբ մենք շուտ տվինք մեր ձիերի գլուխները և, պոստային խճուղուց, Ասկարանի ավերակների մոտից, մտանք Կարկառ գետի քարքարոտ լայն տաշտը:

Ասկարանի հինավուրց բերդը Շուշուց 25 վերստաչափ հեռու է և շինված է Կարկար գետի աջ և ձախ ավերին: Կիսավեր պատերը, զրկված և իրանց երբեմնի ռազմական գոռոզությունից խեղճացած, անգոր նայում են մեզ, երբ մեր ձիերը քարերի և ջրի միջով քայլում են զգուշությամբ: Գետը, մի քանի ճյուղերի բաժանված, ձայնը փորն է զցել, զարնան կատաղի, անհաշտ Կարկարը չէ, որ սար ու ձոր գլուխն առած, ձայնը երկինք հանած, ոչ ոքի չի խնայում. այժմ նա խաղաղ հոսում է, չի էլ վախեցնում: Անցնում ենք մյուս

ափը, շարժվում ենք սրընթաց: Միմյանց ետևից վազեվազ գալիս, անցնում են անորոշ տեսարաններ: Ահա՛ ջրաղացը. նրա քարերը չեն որոտում, և ջուրը, ազատ թափվելով նրա կողքից, փրփուր կտրած, գոռգոռալով պտույտ է գալիս մի նեղ խոռոչում: Նա ետ մնաց. Ասկարանի պատն է մի բոպե կանգ առնում մեր աչքի առջև և շտապով դեպի մի կողմ փախչում, կուլ գնում: Գալիս են այգիներ. խիտ ծառերի մեջ հանդարտ քամին մի կախարդական աղմուկ է գցել, մի անընդհատ վշշոց, ջուր ու քամի միացրել են իրանց ձայները. չգիտես որտե՞ղ է ջուրը և որտե՞ղ՝ քամին: Անցնում ենք, սպիտակ, թոզոտ ճանապարհները դեսուդեն են վազում. թող գնան՝ ուր ուզում են, մեր ճանապարհն այն է, որ լանջիվայր ու լանջիվեր դաշտերն է չափում: Անթիվ և անհամար ծղրիղները ճոփում են ամեն կողմից, ամեն անկյունից. մի ափ հող չկա, որի վրա չաղաղակեն նրանք: Ուղևորի լսելիքը, որ այնքան ուշադիր, այնքան լարված է լինում գիշերային ճանապարհորդության ժամանակ, միայն այդ բարակ, փոքրիկ ձայներն է լսում. նա ըմբռնում է վայրկյաններ, երբ այդ ձայները միանում են, կարգ ու կանոնի տակ մտնում, կարծես դուրս են գալիս հրամանով, բայց դարձյալ խառնվում են, կարծես միմյանց ջգրու ետ ու առաջ ընկնում, մի շփոթ, մի անկարգ աղմուկ հանում:

Մենք չորս հոգի ենք: Գնում ենք Վարազաբույն գյուղը, ուր մեզ պիտի ընկերանա հինգերորդ հոգին: Վարազաբույնից պիտի գնանք Գանձասար: Մեզ ցույց են տվել ճանապարհը, ասել են, թե այդ գյուղը գտնվում է այն անանուն լեռնաշղթայի արևելյան լանջի վրա, որ, սկսվելով Ասկարանի առաջ, ձգվում է դեպի հարավ, անցնում Շուշու հանդեպ, Դիզակի սահմանները: Ասել են, թե ցույց տված ճանապարհի վրա մենք կտեսնենք երկու գյուղ, որոնցից հետո երրորդը ինքը Վարազաբույնն է, որ կա: Բայց մենք, դեռ Ասկարանին չհասած, իմացանք, որ ճանապարհը չպիտի ճանաչենք: Մենք անփորձ քաղաքացիներ ենք, իսկ մի գյուղի ճանապարհ ճանաչելը այնքան հեշտ չէ, մանավանդ գիշերը տեսնում ես մի քանիսը դեսուդեն գալարվում. միայն այդ ճանապարհների վրա կյանք մաշած մարդն է, որ կանգնում, նայում է ճանապարհի կերպարանքին և ճանաչում է, թե ինչպիսի ճանապարհ է, ո՞ւր է գնում՝ գյո՞ղ, թե՞ հեռու՝ վատ տեղ: Այս պատճառով մեզ հետ վերցրինք մի անձանոթ թուրք ձիավոր, որ պատահաբար մեզ հետ էր ընկել պոստի ճանապարհին և իր գյուղն էր գնում: Սա էլ չէր տեսել Վարազաբույնը և ճանապարհը չէր ճանաչում, բայց մենք խնդրելով՝ մեզ ուղեկից արինք նրան: Ճանապարհը թող մի կողմը կորչի, կար և մի մեծ պատճառ,

որ ինքնըստինքյան հայտնվում է այսպիսի տեղեր: Շատ կան ավագակներ այս կողմերում. մեր թուրքը պատմում է, թե ինչպես են հարձակվում, կողոպտում, սպանում: Ինքն էլ հրացանը հանեց, լցրեց, պատրաստեց, արդյոք ո՞ւմի համար: Չլինի՞ թե սա էլ նրանցից մեկն է, մտածում էր մեզանից ամեն մեկը: Դեռ ճանապարհի սկզբին էինք մեր հայությունն անուն: Ինչպես որ լինի, «շան առաջը պատահ ձգիր, որ մոտովն անցնես». մենք քաղցր ու մտերմաբար ենք վարվում մեր կիսավայրենի ձիավորի հետ, խոսում ենք, լսում ենք նրան:

Խոսակցության նյութը՝ մի կողմից, ոչ լույս - ոչ մութ գիշերը և ճանապարհի երկարությունը՝ մյուս կողմից սկսում են մեզ ձանձրացնել: Ո՞ւր է, ինչո՞ւ չենք հասնում. գնում ենք և չգիտենք, թե ո՞ւր. անծանոթ տեղեր, անծանոթ ուղեցույց: Լուռ ենք, շտապում ենք. ծեծում ենք ձիերի կողերը և մտածում: Ձորեր ենք անցնում, թմբերի գլուխ ենք բարձրանում, սպասում ենք, բայց ոչ մի տեղից ձայն ու ծպտուն չի գալիս. մի գազան, մի մարդ, մի շուն ձայն չի հանում, հանգիստ ու խաղաղ շրջակայքը մեզ ուղեկցում են, ամեն ինչ լռել է և լռել, կարծես այն պատճառով, որ փոքրիկ ծղրիղները ճովուսն, տրաքվին, որքան ուզում են: Մեր թուրքն է խոսում անհոգ, անտրտում. նա հանաքներ է անում, գիտե, թե մենք այդ բոլորին ովքեր ենք: «Ա՛յ անխելք հայեր,- ասում է,- գիշերվա այս ժամին ո՞ւր եք ընկել սար ու ձոր, այս ինչ խելք է»: Իսկ թե անխելքություն ենք արել, այդ ինքներս էլ խոստովանում ենք: Ի՞նչ կար, ո՞ւր էինք վազում, առավոտ չէ՞ր լուսանալու, որ մարդավարի գնայինք: Հարցնում ենք թուրքից, թե ո՞ւր ենք գնում. նա պատասխանում է ծիծաղելով և ասում՝ ո՞վ գիտե, ճանապարհ է, երևի մի տեղ դուրս կբերե մեզ: Մի տեղ... Դա անորոշ, շատ հեռու, երևակայական, երկյուղալի խոսք է: Հանկարծ... էլ ի՞նչ հանկարծ, հազար ու մի հանկարծական դեպքեր են գալիս մեր միտքը, բայց այն, որի մասին չէինք մտածում, իսկույն մեր առջև կանգնեց:

-Կանգնեցե՛ք,- ձայն է տալիս առջևից գնացողը:

-Ի՞նչ կա:

-Ճանապարհը կորցրել ենք:

Եվ այդպես ասողը բարկացած հայիտյում է իր ձիուն: Այդ էր պակաս: Կանգնում ենք: Շրջակայքի համառությունը, պղտոր երկինքն իր պղտոր լույսի հետ և ծղրիղների աղմուկը մեզ զայրացնում են. գոնե այս փոքրիկ անիծվածները մի վայրկյան չեն լռում: Վերին աստիճանի լարված լսելիքը գրգռվում է այդ ձայներից, ավելի հեռվի ձայնը դժվար է լսվում: Մենք բարձ-

րանում ենք մի թումբի գլուխ, այդտեղ հնձած արտ է. նայում ենք, բայց նայելով մի բան չի դառնա. պետք է մի ձայն բռնել ու նրա վրա գնալ: Քամին հեզիկ շփվում է մեր մազերին, փայփայում, զգվում է մեր դեմքը. ախորժելի է, բայց ձայն չի բերում: Բայց սուս... Հեռվից, վերի կողմից, ահա մի խուլ, անորոշ ձայն է գալիս. կասես թե շան ձայն է: Լսում ենք մեծ ախորժանքով. ահա ձայնը բարձրացավ, մեզ հասավ, սխալված չենք, շուն է հաչում: Իսկույն առաջ ենք քշում ձիերը: Որքան մեծ քաղցրություն ունի շան ձայնը այսպիսի դեպքերում. օգնության ձայն է, որ գալիս է սրտիդ տխրած կատարյալ հուսահատության առաջ, ուրախացնում է, բերանդ բաց անել տալիս: Գնում ես այդ վայրենի, սպառնական ձայնին քաղցրությամբ ականջ կախած, մտքումդ բռնած, իբրև անխաբ առաջնորդի ձեռք: Ձիդ էլ սիրտ է առնում, քայլեր է փոխում, և դու շտապում ես, որ չկորցնես այդ հեռավոր ձայնը, որ թանկ է քեզ համար, ինչպես մի նշան, որ քեզ պիտի ազատե անձանոթ ու անհայտ տեղերի հուսահատ շրջանից և տանե մի այնպիսի տեղ, ուր մարդիկ են ապրում: Իջնում ենք մի ձոր, բարձրանում ենք, շնհաչոցը մոտիկանում է մեզ, երևում են ինչ-որ ցածրիկ հողե շինություններ: Խոզարածների տեղն է այդ: Ձայն ենք տալիս. վերևից պատասխանում են մի տղայի և մի երիտասարդի ձայները, ցույց են տալիս ճանապարհը:

Էլի գնում ենք. ճանապարհը անվերջ է երևում. ի՞նչ զարմանք, եթե մեր դրությունն և տրամադրությունը յուրաքանչյուր քայլին մեծ երկարություն են տալիս: Այդքան երկար գնացինք, բայց գյուղ չէր երևում. երևի էլի ճանապարհից դուրս ենք եկել: Մեր թուրքն էլ այդպես է կարծում. մի բուպեում մոռանում ենք այն քաղցրությունը, որ տվել էին մեզ խոզանոցի շունը, տղան ու երիտասարդը: Անձանոթ կյանքը, անձանոթ տեղերում գիշերային խորհրդավոր վարագույրի տակ ծածկված՝ մեզ կարծես ծաղրում է, մեզ զայրացնում:

Բայց ահա վերջապես երևում են ճրագներ, գյուղականի խաղաղ ու կարճ երեկոյի ճրագներ, որ կպած են սարի լանջին և պահպանվում են շների միաբան հաչոցով: Գեղեցիկ են նրանք, չքնաղ են երևում տանջված ճանապարհորդին, որ, աստված գիտե, թե որտեղից է դուրս եկել նրանց հանդեպը և վերջապես իմանում է, որ իրանից մոտիկ մարդիկ են ապրում: Փույթ չէ, որ այդ փոքրիկ լույսերը հեռու են և գուցե չեն կարող օգնություն հասնել, եթե սրտիդ անորոշ, բայց տխուր զգացմունքներից մեկն իրականանա: Բայց ո՞վ

է այդ մասին մտածողը, բավական է, որ նրանք կան և գործություն են տալիս է՛լ առաջ գնալու:

Եվ մենք գնում ենք, որովհետև այդտեղ չպիտի մնանք: Շուտով ճրագները մի ինչ-որ բարձրության ետև են մնում, շնահաչոցը կտրվում է. դարձյալ նույն խորհրդավոր լռությունը, դարձյալ մեզ անհասկանալի է դառնում, թե ո՞ր ենք գնում: Իսկ մեր թուրքը շարունակ կրկնում է, թե ախր ի՞նչ եք կորցրել այս տեղերում: Բայց այս անգամ կարճ է մեր անհանգստությունը: Մենք մի բարձրության գլուխ ենք հասնում և տեսնում ենք, որ մեր առջև փոփած է գյուղը: Շները հաչում են, իսկ գյուղի վերևից մի ճրագի լույս, պայծառ՝ ինչպես առավոտյան աստղը, խփում է ծառերի միջով և գրավում է մեզ՝ դեպի իրան ձգում: Փառք աստուծու, հասել ենք: Միասին մնանք, չհեռանանք, որ շները մեզ չմոտենան, հարցնենք մեր ընկերի տունը, իսկույն քնենք. պատվիրում ենք միմյանց:

Մտտենում ենք գյուղի ներքին ծայրի տանը. բարձր «չափարի» ետև, շունը, ինչպես ասում են, իրան ուտում է: Նրան ձայնակցում են շատ ուրիշ ընկերներ, որոնք մթության մեջ զանազան տեղերից դեպի մեզ են գալիս: Տան սրահում վառված է ճրագը, մարդու ձայն է լսվում:

-Այս ո՞ր գյուղն է,- հարցնում է մեր մի ընկերը:

Շունը այդ խոսքի վրա ավելի կատաղում է. մենք բարձրանում ենք թամբերի վրա, ուզում ենք շուտ լսել պատասխանը: Պատասխանում է մի կին.

-Սա... Փրջամալն է:

Մենք էլի նստեցինք հուսահատ:

- Իսկ որտե՞ղ է Վարազաբույնը:

- Թումբի մյուս երեսին է,- պատասխանում են:

Խնդրում ենք ճանապարհ ցույց տալ: Մի տղամարդ խոստանում է և բավական սպասել տալուց հետո, մեր առաջն է դուրս գալիս:

- Ձեզանից ո՞րն է քիչ խելքը գլխին մարդը,- հարցնում է նա, թող առաջ գա, որ ցույց տամ:

Չգիտեմ ո՞վ էր մեր մեջ քիչ խելքը. գյուղացին ճանապարհը ցույց տվեց ու ինքը զարմացած, որ այսպիսի ժամանակ մարդիկ են ման գալիս՝ ետ դարձավ: Իսկ մենք մի ձոր իջանք: Մեզ շրջապատում են ծառեր, լսվում է ջրի ձայնը: Անտանելի տեղ էր. մեր ձիերը սայթաքում են, քիչ է մնում, որ ընկնենք և կոտրատվինք: Գյուղացին գուր չէր մեր մեջ խելքով մարդ որոնում...

Տանջված, նեղացած, փշրված վերջապես ընկնում ենք մի սոսկալի շնահաչոցի մեջ: Հասել ենք Վարազաբույն, որ խոր քնով է անցած. մի հատ ճրագ, մի լույսի նշույլ չկա: Շները շրջապատել են մեզ, ուզում են կտոր-կտոր անել. իսկ մենք կանգնել ենք, կուչ եկել, խոսել ու լսել չենք կարողանում: Մի ժամ սրանից առաջ այդ հաչոցը ինչպե՛ս էր մեզ համար, իսկ այժմ անտանելի է. եթե կարելի լիներ այս բոլորին կոտորել... Մեր թուրքը զարթեցնում է մի քնածի. մեր ընկերի տունն ենք հարցնում: Հարյուրավոր տեսակ-տեսակ ձայների մեջ նա մի բան է պատասխանում. մենք շարժվում ենք:

Մեր ընկերն էլ քնած էր: Նա վեր կացավ, զարմացած դես-դեն ընկավ, դեռ չէր խոսում. մթնում կանգնեցինք, մինչև որ փոքրիկ սենյակում մեզ համար տեղ պատրաստեցին: Իհարկե խոսքն ու ծիծաղը իսկույն մեր բերանները ընկան: Հաց կերանք:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐ

Առավոտը ժամի հինգին բաց եմ անում աչքերս: Փոքրիկ լուսամուտի միջով ողջունում է ինձ լեռնային գյուղի հրաշալի առավոտը: Երկինքը պարզ է, կապուտակ, զով օդը անդադար ներս է հոսում, խփում է վերմակի տակ տաքացած դեմքիս: Սոռացվում է գիշերային ճանապարհորդությունը, և սիրտն ու հոգին զվարթանում են աստուծու բարի օրվա ազդեցության տակ: Դուրս եմ գալիս փոքրիկ բակը, աչք եմ ածում գյուղի վրա: Կապույտ բարակ ծուխը բարձրացել է, քող կապել տների վրա. արեգակը տարածել է իր շողերը, լուսավորել է խրճիթների բակերը, փողոցում կանգնած եզան ուսը, մահակի ծայրին կոթնած ալևորի մորուքը: Շները պատերի տակ են քաշվել և լռել. գիշերը վերջացել է, նրանք այլևս ծառայություն չունեն:

Փոքր գյուղ չէ Վարազաբույնը: Նա ընկած է լեռնային լանջի վրայով, տները սեղմված են միմյանց, ներքևից նայելով՝ կարծում ես, թե միմյանց գլխի են բարձրացել: Այդպես են Ղարաբաղի բոլոր հայ գյուղերը. այդպես թիկն են տալիս վիրթիսարի սարերին, որոնց հպարտ մարմինը կտրատված է ոլոր-մոլոր կածաններով: Այդ տեղերում են մարդիկ գնում ու գալիս, և ինչպե՛ս լավ են գնում, դժվարություն չեն զգում. իրանք լեռներն են տվել նրանց ոտներին ու թոքերին այդպիսի ամուր կազմվածք: Ձյուն, անձրև կգա, կքանդե այդ նեղիկ, երկչոտ կածանը, քարեր կթափվին վերևից, կծածկեն նրան, բայց լեռնաբնակ գյուղականի համար ի՞նչ փույթ, նա թի չի վերցրել, չի դրստել, այլ կգնա և կգա: Բայց Վարազաբույնն ունի նահապետական

հարմար ճանապարհներ. սարի ստորոտից սկսած դեպի արևելք ընկած է լայնատարած հարթավայրը, որ ողողված է արեգակի ճառագայթներով, այդտեղ են գյուղացիների այգիները: Հետո սկսվում են թուրք գյուղերի անվերջ դաշտերը, որոնք խառնվում են հորիզոնի հետ:

Կանգնած դեսուդեն են նայում: Հանկարծ ականջիս են հասնում փոքրիկ զանգակի սուր հնչյունները, որոնք գալիս են գյուղի վերևից, մի երկհարկանի տան պատշգամբից: Դպրոցական զանգակն է այդ: Այս պարզ և վճիտ օղի մեջ, առավոտյան այս պահուն, ինչպես սիրելի, գեղեցիկ է այդ ձայնը, որ ուրախ-ուրախ անցնում է աղբակույտերի վրայով, գյուղական աղքատությունից, ցնցոտիներից և կեղտից բարձր, հայ քրիստոնյաներին սեպտեմբերի մուտքն է հայտնում, երեխաներին դպրոց հրավիրում, զիր ու գրիչ բռնել է խնդրում: Թող, փոքրիկ զանգը մի քիչ էլ լեզուն շարժե, ձայն տա, և ահա այդ գիրքն ու տետրակը դուրս կգան կեղտոտ, խոնավ պուճախներից, ուր առատ կերել են կծու ծուխը, փոշեթաթախ կմտնեն փոքրիկների կոնստակը: Գրագետը հպարտանում է լսելով զանգակի ձայնը...

Դպրոցը վաղուց գոյություն և լավ համբավ ունի. գյուղացիները նրա համար շինել են երկհարկանի մի տուն, որտեղից ուրախությամբ ընդունում են կրթության առաջին խակ պտուղները: Դպրոցը տեսնել չենք կարող. մեր ձիերը պատրաստ են, հեռու ճանապարհ կա առաջներս:

Եկած ճանապարհով ետ ենք գնում Ասկարան:

Գիշերն իր խորհրդավոր վարագույրով բանաստեղծական գեղեցկություն էր ընծայում մեր երևակայությանը այդ տեղերի մասին, իսկ ցերեկվա լույսը, ընդհակառակն, ցույց է տալիս մերկ շրջակայք. ամեն տեղ հնձած դեղնած արտեր են, անօգուտ լանջիվայրեր, ապառաժ լեռներ, որոնք տեղտեղ ծածկված են աղքատիկ թուփերով և մացառներով: Փրջամալ և Նախիջևանիկ գյուղերը, որոնց ճրագները գիշերով այդքան հրապուրիչ ուժ և գեղեցկություն ունեին ծառերի մեջ, այժմ նայում են իրանց առօրյա մոխրագույն կերպարանքով. հողի վրա բարձրացած կոլոր կտուրները, քարե շինությունները, աղբը, անմաքուր փողոցները սովորական գյուղի պատկերն են ամբողջացնում:

Անցնում ենք նրանց մոտով, կտրում ենք Կարկառ գետը, կտրում ենք պոստի ճանապարհը, դեպի բարձր ենք գնում: Սկսվել է Խոջալլուի լայնատարած դաշտը: Խոջալլուն պոստային առաջին իջևանն է: Շուշուց 19 վերստ հեռու: Դաշտը հյուսիսի կողմից կոթնում է այն լեռնաշղթան, որ արև-

մուտքից, Խաչեն գավառից գալով՝ հասնում է Ասկարանին և այդտեղ շուր գալով՝ գնում է դեպի հյուսիս, պոստային ճանապարհին գուգընթաց, մինչև Շահրուվաղ իջևանը: Խոջալուի դաշտը գարնան սկզբին ծածկվում է գեղեցիկ բարձրահասակ խոտով, որ պատկանում է Խանքենդ ավանի ռուս գործին և այդ գործից մնացած հին զինվորներին, որոնք տուն, բնակություն են հաստատել Խանքենդում: Խոտն այնքան առատ է, որ ռուսները տնտեսության ավելորդը ծախում են ու հարստանում:

Հարուստ դաշտի սահմանից դուրս ենք գալիս. ճանապարհը հետզհետե բարձրանում է՝ աջ կողմում թողնելով երկու հայ գյուղեր՝ Մարդարաշեն և Նորագեղ: Բնությունը շա՛տ աղքատ է: Սպիտակ հողը մոխրի նմանություն ունի, բացի թփերից ոչինչ չի բուսցնում. վարելահողերը քիչ են, և հենց այդ է պատճառը, որ հիշյալ գյուղերը ողորմելի կերպարանք ունին, չոր ու ցամաք լանջերին են կպել և միայն կարճահասակ թթենիներն են, որ տեղ-տեղ, իբրև ծառ, քիչ կենդանություն են տալիս ընդհանուր մեռած տեսարանին:

Բնությունը փոխվում է Սեյդի-Շեն անունով գյուղի մոտ. միանման աղքատ տեսարաններից ձանձրացած աչքի առաջ հանկարծ երևում են փոքրիկ ծմակներ, գեղեցիկ արոսատեղեր և վարելահողեր: Ինքը գյուղը, որ նստած է այդ բնական հարստության մեջ, փոքր է, բաղկացած 30 կամ 35 տնից, նրանք կպել են մի թումբի կողերին և միշտ նայելով գեղեցիկ ձորին ու կանաչ սարերին, մնում են ծուլ և աղքատության մեջ: Գյուղացիք պանդխտություն սիրող են, Բաքուի ճանապարհը դրանց համար, ինչպես ասում են ջրաղացի ճանապարհ է:

Սեյդի-Շենից սկսվում է Խաչենի անտառների թագավորությունը, որ զարմանալի է, հրաշալի՝ Առաջին ծանոթությունը սկսվում է Յեխ-Ձորից:

Յեխ-Ձոր... գրիչ է պետք, որ նրան նկարագրե, լավ գրիչ:

Ճանապարհը գլխիվայր է գնում. իջնում ենք ձիերից, որ ավելի ապահով գնանք. շատ հեշտ է ձիու գլխի վրայով թռչել, գետնին ընկնել: Ճանապարհն իսկույն խրվում է հսկայական թանձր անտառի մեջ, որ խիտ առ խիտ ծածկել է երկու լեռների կողերը ու նրանց մեջ ընկած Յեխ-Ձորը: Մշտական խոնավություն է տիրում այդտեղ, մշտական սովեր. ծառերը պինդ են պահում այդ տեղը արեգակի երեսից: Չորս կողմը տիրած է խորին լռություն, և հրացանի ձայնը առաջին վայրկենում մարում է մերձակա ծառերի տակ, բայց մի երկու, երեք վայրկյան անցած, հեռու անտառի խորքում, կարծես ճյուղերը կտրատելով, դեսուդեն է վազվզում սուր արձագանքը, մերթ բարձր

և մերթ նվազ որոտումներով: Բնությունը այնքան ահավոր է իր վայրենի բնավորությամբ, այնքան մեծ, որ խեղճ մարդու հոգին միանգամայն ճնշվում է. հասկանալ, ըմբռնել անհնարին է, ավելի անհնարին է մտքի մեջ նկարել այդ թավ, կուսական անտառը: Մարդ միայն զարմանում է, հիանում, տեսնելով ճանապարհի երկու կողմից այն բարակ և ուղիղ ծառերը, որոնք անխնա ձգվել են, հասել ահագին բարձրության, որոնք կանաչ են և դեռ շատ ուժեղ և, ինչպես երևում է, աշխատում են է՛լ ավելի բարձր գնալ: Տեղ-տեղ ճանապարհի երեսն են դուրս գալիս փոքրիկ ջրերը, որոնք անտեսանելի են անտառի ծոցում, մշտական լռության մեջ միայն դրանք են բարակ ձայնով քչքչում և, կարծես, այդ ձայնովն են միմյանց սիրտ տալիս, որ չկորչին, չանհետանան, այլ գան միանան, չար մանուկների պես, ճանապարհը թաց անեն և էլի փախչեն, ծառերի տակ մտնին: Տեղ-տեղ ճանապարհը անցնում է ձորակներով. ծառերը ավելի ևս խտանում են, գրկում միմյանց, երկինքը հեռու, շատ բարձր է մնում, հաղթանդամ ճյուղերի արանքով պատառ-պատառ եղած է երևում: Անտառի սիրտն է. խորանում ես կուլ գնում, դեմքդ քրտնում է, քայլդ՝ արագանում: Այդ տեղերում բույն են դնում ավազակները: Մարսափելի են սրանք, բնության բոլոր արհավիրքներից էլ ահավոր. նրանց ձեռքն ընկած գոհը միանգամայն անգոր է, անլեզու:

Եթե ուշադրությամբ նայես, ձորի մի քանի տեղերը խճած կտեսնես. Բաղդասար միտրոպոլիտն է շինել տվել այդ խճուղին, որը, սակայն, երկար տանել չի կարողացել: Տեղ-տեղ ճանապարհը դուրս է գալիս փոքրիկ հրապարակների մեջ. ծառերը ետ են կանգնում, և ուղևորը կարողանում է ետ առաջ նայել: Տեսնում է ուղևորը, որ երկու լեռները, որոնց մեջն է Ցեխ-Չորը, ոտից մինչև գլուխ խիտ ծածկված և մի քանի ուսեր կազմելով, իջնում է մի հովիտի վրա, ուր հոսում է Խաչենագետը: Գետի մյուս կողմից բարձրանում են սարեր, որոնք միմյանց ճիտն են ընկնում, միմյանց ուսերն են իջնում, միմյանց կտրում ու այդպես խառնիխուռն գնում են դեպի արևմուտք, բարձրանում են բարձր՝ դեպի երկինք, և կորչում: Այդ բարձրություններից մեկի վրա է Գանձասարը: Բայց անտառը չի սիրում բարձր ու լայն տեսարաններ շատ ցույց տալ, շուտով էլի իր մեջն է առնում ճանապարհը, ծառերը ամեն կողմից վազում են նրա վրա, խմբվում, հուպ տալիս:

Վերջապես հասնում ենք Խաչենագետի ափը: Պնդացնում ենք ձիերի թամբերը, հեծնում ենք, այլևս չպիտի իջնենք, միշտ դեպի բարձր պիտի գնանք: Գետն այժմ փոքր է, բաժան-բաժան եղած վշշում է քարքարոտ լայն

տաշտով: Բայց զարնանը, երբ հորդառատ անձրևների տակ այդ ահռելի սարերը օր ու գիշեր լվանում են իրանց կողերը և ավելորդ ջրերը դեպի ցած են ուղարկում, գետը արյուն է կտրում, կատաղում, փրփրած մոնչում: Անթիվ թշվառություններ է պատճառում նա ձորում ապրող ազգաբնակչության:

Գետի ձախ ափովն ենք գնում: Մեզ երկար տեղ ուղեկից է Սաղսաղանդալասին (Կաչաղակաբերդը): Հարավային կողմի սարերը շղթա են կազմում, որ գետի ուղղությամբ գնում է դեպի արևմուտք. շղթայի վրա կա մի բարձր սուր գագաթ, որի ծայրը ժայռից կազմված մի բերդ է: Հրեն ցցված է նա, բա՛րձր, երկնքի մեջ է երևում: Հանգուցյալ Րաֆֆին («Խամս.մելիք.») շատ լավ է ասում՝ թե միայն արագաթռիչ կաչաղակներն են կարող բարձրանալ, հասնել բերդին: Եվ ումի՞ն էր հարկավոր այս անառիկ բարձրությունը, որի վրա միայն ամպերն են հավաքվում և, լայնանալով, տարածվում երկնքի երեսին: Ումի՞ն... Բհարկե՛ հային: Կիրակոս պատմագիրը մի տեղ հիշում է, որ թաթարները գրավում են և այս իսկ բերդը (որ այն ժամանակ Հավախաղաց էր կոչվում), բոլոր պաշարվածներին կոտորում են, դիակներով ծածկում նրա զառիվայր կողերը, և ոսկորների կույտերը, ասում է, երկար ժամանակ մնում էին այդ տեղերում թափված: Եթե Խաչենն էլ ունենար մի Արիստակես Լաստիվերցի, այժմ Կաչաղակաբերդի սարն էլ մեր պատմության մեջ Սև-քարի պես հռչակված կլիներ այդ կոտորածի սրտաշարժողը:

Ճանապարհին մեզ պատահում են թափառական թուրքեր, որոնք իրանց մեծ-մեծ հոտերի հետ իջնում են սարերից, գնում են Կուրի հովիտը՝ ձմեռելու: Պետք է ասել, որ Խաչենագետի ճանապարհով է երթնելում թափառականների ահագին մասը, ճանապարհը միշտ գետնիվեր տանում է դեպի սարերը, ուր նրանք գտնում են գեղեցիկ արոտատեղեր, որ Նոր-Բայազիդի սահմաններն են հասնում: Վայրենի թափառականների այդ շարժական գյուղերը քիչ վնաս չեն հասցնում հաստատաբնակ հայ գյուղացիներին, որոնց բաժինն է Ղարաբաղի բոլոր լեռնային մասը: Բավական չէ, որ գարնան առաջին քայլի հետ նրանք փախչում են իրանց դաշտերի մահաբեր կլիմայից, օձերի և կարիճների թույնից, ապաստան են գտնում լեռնային օդի մեջ, այդ խառնիճաղանջ խմբերը շատակեր մորելիս պես թափվում են մշակված և անմշակ տեղեր, փչացնում են արտ ու անդաստան: Կռիվը, ծեծը, վեճը միշտ անպակաս են լինում. վայրենիների համար բնական պահանջ է բռնություն գործելը, և եթե հաստատաբնակը նրանցից թուլասիրտ է, չի

կարողանում իր իրավունքը պաշտպանել, պիտի իր ձեռքի վաստակը փչացած ոտնակոխ եղած տեսնելու սիրտն ունենա: Ամեն տեղ, ուր կոխում է այդ անկոչ հյուրերի ոտը, հայ գյուղացին պարտավորված է գոնե զինված պահապաններով վախեցնելու նրանց: «Ինձ մի դիպչիր, ես էլ քեզ չեմ դիպչիլ»։ ահա միակ իրավաբանական ֆորմուլը, որ հասկանում է անապատի որդին:

Բայց Ղարաբաղի թափառական թուրքի կյանքը մեծ ուսումնասիրության է կարոտ. մենք թողնենք այդ խեղճերին, որոնք գարուն ու ամառ ահագին տարածություններ են կոխ տալիս իրանց բոքիկ ոտներով, շարունակենք մեր ճանապարհը: Ահա Առաջաձոր գյուղը, որ տեղավորվել է մեծամեծ ժայռոտ բարձրությունների տակ: Իսկ որ արջերի ձոր... Այդքան վայրենի ձորեր ու լանջեր, այդքան մութ տեղեր արջերին պիտի պատկանեն: Գյուղի հանդեպ տեսնում ենք այն լեռնային բարձրությունը, որ ուղտաքար է ասվում: Միանգամայն ճիշտ է այդ անունը: Մարի գագաթը նման է նստած ուղտի:

Անցնում ենք Վանք գյուղի տակով. ահա վերջապես այն բարձրությունը, որի գլխին կանգնած է Գանձասարը: Այդ իսկ ստորոտի մոտ՝ Խաչենագետի ափին, մի փոքրիկ շուկայի նմանություն կա. փոքրիկ, հողաշեն խանութների մեջ հայերը առևտուր են անում: Թափառականների համար է այս առևտրական հրապարակը. երբ նրանք գնում անցնում են, խանութները փակվում են, առևտրականները՝ չքանում: Գյուղացիք, հավաքված մի խանութի առջև, երեկոյան թեյ են վայելում: Իսկույն երևում է առևտրական ոգին, կարգ ու կանոնը: Ճշմարիտ, այս վայրենի անկյունում, որ ընկած է Խաչենի հեռավոր ծայրում, հեշտաեռ, ապրանք, թեյի բաժակները նագով-սագով բռնած գյուղացիք այնպիսի տարօրինակ, խորթ բաներ են, որ առաջին անգամ տեսնողը ակամա ծիծաղում է: Առևտրական հրապարակի կեղծ քաղաքավարությունը կամ, ինչպես ասում են, քերականությունը լավ սերտած գյուղացիք մեզ հրավիրում են մի-մի բաժակ խմել, բայց շնորհակալություն ենք հայտնում, որովհետև առաջներիս դժվար ճանապարհ կա:

Բարձրանում ենք: Ի՛նչ ճանապարհ. պատի՛ժ է, պատի՛ժ: Բարձրավանդակի կողը, որի վրայով գնում ենք, հողից չէ բաղկացած, փափուկ չէ, այլ՝ կարծր սև և կարմիր քարերի շերտերից: Անձրևները փորփորել են այդ քարերը, հազարավոր տեսակ-տեսակ խորդուփոս են գոյացրել: Ձին ճանկոտելով է բարձրանում: Խեղճ կենդանին կանգ է առնում, նայում է այդ որձաքարերին, այդ անկարգ, անկանոն կապերին, նայում է ու, գլուխը հու-

սահատարքար ցած ու բարձր շարժելով՝ վեր է ելնում զգուշությամբ, էլի կանգնում է, ծանր շունչ քաշում: Խեղճ անասուն. գնում է, քրտնում, իսկ անխիղճ հեծյալի մտրակը շրրըպում է նրա կողերին: Այդ տեսակ ճանապարհը, ինչ ասել կուզի, շատ երկար է երևում. ձին քարշ-քարշ է լինում, իսկ նրա վրա նստածը ամեն բոլոր սպասելով, թե ահա կընկնե քարքարոտ գառիվայրի վրա, ձիու տակ կփշրե իր մարմինը, գայրանում է այսպիսի ճանապարհով տանող մարդկանց վրա, անհծում է սարերը, որ այսպես վատ են: Այո՛, մեր երկիրն այսպես է. ոչ ոք նրան չի չափել, օրերով գնաս՝ չես կարող իմանալ, թե որքա՛ն ես գնացել. մեր երկիրը թշվառ է նրանով, որ ճանապարհներ չունի: Եթե մի այսպիսի հոչակավոր հարուստ վանք այս անտանելի ճանապարհին ունի, հապա ինչպես են այն բազմաթիվ խուլ անկյունները, ուր ապրում է հայ գյուղացին անտես, անծանոթ, մոռացված ամենքից:

Մթնել էր, երբ հասանք վանքի պարիսպներին: Փառավոր շինությունը մթության մեջ կանգնած է, տղամարդի պես կուրծքը դեմ է արել և իր անորոշ գծագրություններով վառում է ուխտավորի սիրտը, որ մի ամբողջ օր ճանապարհ է կտրել և այժմ չի կարող սրտի ուզածն իսկույն տեսնել, որովհետև մի կամ կես ժամ վաղ չի եկել, հասել: Մտնում ենք հարթ, ծառազարդ բակը: Մարդու հոգին մի վայելչություն է զգում. իսկույն երևում է մի եռանդոտ խնամատարի ստվերը, նրա շինող կենդանի ձեռքի հետքերը: Ափսո՛ս միայն, որ այդ խնամատարը շատ վաղուց է մտել հողը, և նրա հոգին այժմյան մարդկանց մեջ չի մնացել. իսկ գեղեցիկ դաստակերտը դարձյալ դեպի ետ, դեպի ավերումն է դիմում...

Մենք մտնում ենք մի քարաշեն սենյակ, որ բոլորովին անվնաս է մնացել. դա է Աղվանից կաթողիկոսների անշուք վեհարանը, որի մեջ այժմ բնակվում է վանահայր վարդապետը:

Վառ տպավորության տակ դուրս եմ գնում, մի քանի պտույտներ եմ գործում վանքի պատերի տակ: Հետո անցնելով դրսի պարսպի արևելյան դռնով՝ կանգնում եմ նրա առջև: Այդ տեղից բացվում է մի հիանալի տեսարան: Բարձրության տակ փռված է մի լայն ձոր, որի երկու կողմում անշարժ կանգնած են բնության տիտանները, բարձրագագաթ լեռները. մինչև Ցեխ-Ձորի սարերը բաց է նայողի առջև, իսկ այս սարերի գլխից երևում է երկնքի անսահման տարածությունը. արևելքը հեռու է, շա՛տ հեռու: Մեր ոտների տակ՝ այս կողմից՝ լանջի վրա, ցրված են Վանք գյուղի ճրագները և հեզ ու հանդարտ ճպճպում են: Խորին, անվրդով լռությունը կլանել է ամեն տեղ,

իսկ խոր ձորի հատակում վշշում է Խաչենագետը. նա, քարեքար ընկած, կատարում է իր հավիտյան անվերջ ճանապարհորդությունը: Եվ անդունդների ու սարերի այդ խորհրդավոր, աննկարագրելի և անհասկանալի լռության վրա տիրած է Քրիստոսի հաղթական խաչը, որ անսասան կանգնած է գեղեցիկ հին վանքի գլխին և ուղղակի դեպի աղոթարանն է նայում:

Եվ արագ ծծում ենք լեռնային օդը և նայում չորս կողմը: Հրե՛ն, գետի մյուս կողմին՝ անտառի ծայրում, մենավոր կրակ է երևում. նա երբեմն նվազում է, ցած ընկնում, մի փոքրիկ դեղին բիծ դառնում և երբեմն մեծանում է, ծառանում: Որքա՛ն արագաթռիչ են մարդու մտքերը. Որտեղի՞ց որտե՛ղ են անցնում, ինչպե՛ս հանկարծակի թողնում են մի բան և մյուսի վրա կանգնում: Այդ կրակի մոտ են գյուղի տավարածները. և ես երևակայում եմ՝ գյուղի տղաները բոլորվել են կրակի շուրջը, իրանց հավատարիմ շների քաջության վրա հույս դրած՝ մութ գիշերվա ծանրությունը անց են կացնում խոսակցությունների մեջ: Հիշում են Տուրգենևի չքնաղ պատկերը «Бежин луг» անունով: Այդ խարույկի մոտ էլ, երևի, գեղջուկ փիլիսոփաները խոսում, վիճում են դևերի, հրաշքների, քաջքերի մասին. անկասկած նրանք հարուստ նյութ ունեն: Խարույկի մոտ տարածված է աշխարհի երեսից վաղուց սրբած, տարած մի մեծ գյուղ. ծմակներում, սարերի գլխներին, երևում են անթիվ հնություններ, տներ ու եկեղեցիներ, ամեն տեղ ցրված են քարեր ու խաչեր: Ումի՞նչ է հայտնի, որ գերբնական զորությունները ապրում են հին-հին ավերակների, մթին ձորերի և խոր անտառների մեջ. իսկ այդ բաներից ավելի ի՞նչ են տեսնում խաչենցիք իրանց օրում...

Մութ գիշերը անցնում է, իսկ տեսարաններից կշտանալ չի լինում:

ԵՐՐՈՐԴ ՕՐ

Ով մեզ պես անհոգ ճանապարհորդ է, առանց պատրաստության, մեկ ինքն է, մեկ էլ իր ձին, և ով միամիտ է կարծելով, թե այսպիսի մի հայտնի վանք շատ ու քիչ հարմարություն ունի ուխտավորի կամ մի ուրիշ հյուրի համար պատրաստած, նա մեզ պես կքնե հին, չոր կարպետի վրա և հարկադրված կլինի, չմրսելու համար, շորերը չհանել, իսկ երբ քնից զարթնե, դեռ աչքերը չբացած, առաջին հարցը կլինի՝ «հիվա՞նդ եմ, թե՞ առողջ»: Երկար ճանապարհ կտրես, ձիու վրա փշրվես, տանջվես, հետո քնես գետնի վրա, առավոտը տեսնես մեջքդ փայտացած, կողերդ ցավելիս, գլուխդ ծանրացած. այս է վիճակդ, եթե սրտիդ մեջ նստած է Հասան-Ջալալյանների փա-

ռավոր բեկորները տեսնելու ցանկությունը: Գանձասարի վանքի քայքայված տնտեսությունը ավելի լավ ընդունելություն անել չի կարող:

Առավոտյան ժամի չորսուկեսն էր, երբ զարթնելով՝ տեսա վեհարանի նեղիկ լուսամուտից ընկած լույսը և վեր թռա իմ չոր անկողնից: Ես ուզում էի այս բարձրության գլխից տեսնել արեգակի ծագելը, առավոտյան այն պահը, երբ բնությունը այնքան շքեղ, այնքան գեղեցիկ կերպարանք է ընդունում: Այդ խորհրդավոր ժամին ինչ կերպարանք կունենա մեր ոտի տակ ընկած լեռնոտ, վայրենի և անտառային Խաչենը՝ ես ուզում էի տեսնել: Բայց երկինքը պատած էր թանձր մոխրագույն ամպերով. արեգակը այդ օրը ծածուկ դուրս եկավ:

Մեր քնարանի դուռը բացի, տխուր օրը ճնշեց իմ հոգին: Այդպիսի օրերի մասին հասկացողություն կունենա միայն լեռնաբնակ դարաբաղցին: Օդը խոնավ, օրը մթնած, շրջակա սարերի գլխին կույտ-կույտ հավաքվել էին ամպերը, սողում էին նրանց՝ պատի պես ցցված կողերի շուրջը: Իմ սպասած զվարթ բնավորության և նոր դուրս եկող արեգակի տեղ զննեցի վանքի շինությունը դրսից: Եվ դեռ չէի կարողացել նրա գեղեցկության ճաշակն առնել ինձ վրա ամենաձանր տպավորություն գործեց այն սարսափելի անհոգությունը, որին մատնված է այդ հռչակավոր, գեղեցիկ շինությունը: Ոչ ոք նրա համար չի մտածում, ոչ ոքի գործը չէ, որ դանդաղ կերպով ավերվում, փչանում է հնությունը: Նա իր կամքին է թողված. ապրի՛ր, ինչպես ուզում ես, հաշտվիր, ինչպես կամենում ես այս բնության, այս երկնքի հետ: Խաչենի երկնքի տակ տեղ չկա, ուր բույսը չմեծանա, չզարգանա զարմանալի ուժով: Օրենքը ամեն տեղ օրենք է. կարմրախայտ և սրբատաշ քարերից շինած պատերի մեջ արմատ են դրել անհամար բույսեր, որոնք, աճելով, մեծանալով, ճեղքում են քարերի արանքը, նրանց հեռացնում են միմյանցից: Անձրևի և ձյունի ջուրը պահվում է այդ բույսերի վրա, մտնում է քարերի վրայով, այդպիսով սաստիկ խոնավությունը, որ հանրաձանոթ անհաշտ թշնամի է յուրաքանչյուր շինության, ամենայն սիրով և խանդով պահպանվում է ամեն օր, ամեն ժամ և շինությունը դրել է մի շատ տխուր, անհրապույր և մռայլ կերպարանքի տակ: Վանքի կտուրը, որ շինած է սալ քարերից և միանգամայն անխախտ է մնացել և գեղեցիկ, բարձր գմբեթը, որ հեռու տեղերից այնքան փառավոր է երևում, կանաչով են ծածկված, կարծես մի գյուղական խեղճ խրճիթի կտուր լինի, այն էլ անբնակ, ավերակ խրճիթի կտուր, որովհետև հետի աղքատը չի թողնիլ, որ իր գլխից վերև բազմանան խոտերը

և իր վրա ջուր թափվի: Հրաշալի՛ է, ուրեմն, վանքի ամրությունը. շինությունը այսպիսի հանգամանքների մեջ էլ ամբողջ է մնացել, բայց մի քանի քարեր արդեն դուրս են եկել իրանց տեղերից և թափվելու վրա են. իսկ արևելյան պատի ճակատին նկատելի է մի ճեղք:

Վանքը երկու շինությունից է բաղկացած՝ տաճարը և զանգակատունը կամ գավիթը: Երկու շինությունները պինդ կպած են միմյանց և մի ամբողջություն են կազմում: Որոշվում են նրանով միայն, որ տաճարի շինության վրա ճարատարապետը թափել է իր բոլոր հմտությունը, զարդարել է նրան, նախշել, սարքել, իսկ գավիթը դրանից պարզ շինություն է, թեև տեղ-տեղ զարդարված է: Արևմտյան մեծ դռները շրջապատված են հիանալի քանդակներով. երկու անգլուխ արծիվներ կանգնած են մուտքի երկու կողմից, դռան ճակատին նկարված է լուսինը իր բոլոր փոփոխություններով, տեսակ-տեսակ գեղեցիկ հյուսվածքները տարածված են չորս կողմը: Աչք չես կարողանում հեռացնել այդ գեղեցիկ քանդակներից: Բայց մոտենում ես շեմքին, ձեռքդ ուր դնում ես, նկատում ես խոնավություն և ջուր. կարծես անձրևն այս բոպեին է դադարել, կաթիլները ծլծլում են, թափվում գեղեցիկ պատի ճակատն ի վեր: Հյուսիսային կողմից կա մի փոքրիկ դուռ, որի ճակատին կան երկու արծիվներ: Քանդակագործ պատկերներով զարդարված է և գմբեթը: Դրսի կողմից վանքի պատերը ծածկված են բազմաթիվ երկար ու կարճ արձանագրություններով, որոնց կարդալը հեշտ չէ, և երկար ժամանակ է պահանջվում. պատերի երեսով հոսող ջուրը եղծել, փչացրել է շատ և շատ բան:

Դրսի հետ վրդովված սրտով ծանոթանալուց հետո վարդապետի հետ մտնում ենք վանքի գավիթը, որ և զանգակատուն է: Այս շինության առաստաղը կամարապատ է՝ սրբատաշ քարերից կազմած, և պահվում է չորս հաստ կոլոր և գեղեցիկ սյուների վրա: Մի ջուխտ նեղ և փոքրիկ լուսամուտներ հազիվհազ կարողանում են լուսավորել գավթի ներսը, և նայողը զոռով է նկատում այն սքանչելի քանդակագործությունները, որոնք ցրված են առաստաղի վրա: Հատակը բոլորովին մերկ է՝ սալ քարերից շինած. մի դուռ տանում է տաճարի մեջ, և այդ դռան առջև ընկած է մի հսկայատիպ գերեզմանաքար, որ սպիտակ է և մի քանի տեղ ճաքճքված: Սրտառո՛ւջ տապան: Նրա վրա կարդում եմ. «Այս է հանգիստ մեծին Ջալալի յաղալթս յիշեցեք»: Դա ինքն է Հասան-Ջալալ-Դոլա իշխանը, Խաչենի, Հաթերքի և Հանդաբերդի տերը, որ շինել է այս վանքը և հայտնի է մեր պատմության մեջ

ոչ այնքան իր քաջություններով, որքան բարեպաշտությամբ և կրոնասիրությամբ: Իշխանը, ինչպես երևում է, պարթև հասակի տեր է եղել. նրա գերեզմանաքարը մի սաժեն և մի քառորդ արշին երկարություն ունի: Թաթարների արշավանքը դեպի Խաչենի այս կողմերը, բազմաթիվ արյունահեղությունները, մի խոսքով, ժողովրդի կրած բազմատեսակ տառապանքները զանազան պատմությունների անկյուններից հավաքվում են այս գերեզմանի շուրջը, այս իշխանի կրծքի վրա: Երևակայում ես, թե որքան դժվար պիտի լիներ մի իշխանին կառավարել այդպիսի ժամանակ մի ժողովուրդ, որքան միտք և հոգացողություն կլինին տանջած այդ մեծ սիրտը. ժողովուրդը, հուսահատ, պատրաստ է ամեն դեպքում լաց ու աղաղակ հանել: Մի վայրենի ազգ, անձանոթ, և սատանան գիտե որտեղից եկած, տիրել է երկրի ամեն կողմին, հոգի է հանում. ինչպե՞ս կառավարես: Ջալալը կառավարել է, լավ անուն և հիշատակ է թողել, ուրեմն հարգելի է նրա գերեզմանը. նա ինքն էլ նահատակվել է երկրի բարօրության համար, խաղաղասեր է եղել: Կիրակոս պատմագիրը պատմում է, որ նրան գերի են տարել հեռավոր երկիր, սպանել են, կտոր-կտոր արել, բայց նրա Ռուզաքան դուստրը, որ թաթարների մի խանի կինն էր, գնում, հավաքում է հոր կտորները, որոնք հավիտենական հանգիստ են գտնում այս գեղեցիկ կամարների տակ: Հարյուրավոր այս տեսակ մտքեր և հիշողություններ են գալիս մարդու գլուխը՝ այս լուռ տապանի առջև: Եվ մարդու գլուխը խորին հարգանքով խոնարհվում է դեպի նրա քարը:

Իշխանի աջ ու ձախ կողմում կան մինչև տասն կաթողիկոսների և եպիսկոպոսների շիրիմներ, որոնց մեջ ուշադրություն է գրավում Բաղդասար միտրոպոլիտի գերեզմանը. թեև այդ մի անշուք տափակ քար է, որի զարդն է մի հատ հովվական ցուպ, բայց երբ հիշում ես, թե ո՞վ է նրա տակ հանգչողը, լիաբերան «ողորմի» ես ասում: Այդ եռանդոտ հոգևորականի հիշատակը չի մոռացվի, քանի կանգուն է այս վանքը. հիշատակը անջնջելի է մնացել տեղական ժողովրդի սրտում, իսկ ապագա սերունդը կգնահատե, կպատվե միտրոպոլիտին նրա գործերով, որ նկարագրել է հանգուցյալ Ռաֆֆին «Խամս. մելիք.» մեջ:

Ազատվելով այս տեսակ հիշողություններից՝ մտնում եմ տաճարը, կանգնում եմ բեմի առջև: Ես չգիտեմ, թե ի՞նչ տեսակ զգացմունք կար իմ մեջ այդ րոպեին: Գեղեցիկ շինություն, գեղեցիկ ճարտարապետություն, այո՛, շա՛տ գեղեցիկ, բայց խոնավությունից մարդ է խեղդվում: Ջրի կաթիլները այստեղ

էլ թափվում են անդադար և ապականել են գեղեցիկ առաստաղը, մոայլ կերպարանք են տվել անշուք, զարդ ու զարդարանքից զրկված պատերին և բոլորովին մերկ հատակին: Ամբողջ տարին կաթկաթելով՝ հատակի վրա լճակներ են կազմել. արդեն լափել, վերջացրել են սյուների քանդակների մի քանի նրբությունները: Որքա՛ն անզոր ենք, տե՛ր աստված: Կաթիլները՝ ջրի այդ փոքրիկ մասնիկները, որոնք այնքան անմեղ, անվնաս բաներ են, լուռ ու մունջ կրծում, լափում են հոյակապ շինության մարմինը, լափում են, շուտով կուտեն, կվերջացնեն: Եվ այն ժամանակ... Ո՞ւր կգնա այն հաղթական խաչը, որ տիրում է ահռելի ձորերի և սարերի վրա. ո՞ւր կերթա այն ջղոտ և հզոր պատվարը, որից կպած է մարմնացած դարերի չորացած, բարակ փոշի դարձած և միայն հոգով շոշափելի կմախքը... Այս տխուր, թաց և մոայլ կամարների տակ հավաքված է այնքան շատ բան անցյալից, որ այցելուի հոգին լուռ խոսակցություն է սկսում այս տեղերի, այս պատերի ու նրանց անկյուններում բարձրացած խավարի հետ:

Տաճարի մեջ առանձնակի կանգնած սյուներ չկան. սյուները կպած են պատերին և կոլորակ չեն, այլ կազմված են յոթ միմյանց հաջորդող աստիճաններից, որոնք թվով երկու են. առաջին աստիճանները՝ ավելի հաստերը, բաղկացած են յոթ համահավասար քարերից. յոթ թիվը ցույց է տալիս եկեղեցու յոթ խորհուրդները: Սյուների ետևում շինված են երկհարկանի խորաններ՝ հյուսիսային և հարավային պատերին կպած. դեպի վերին հարկի խորանները տանում են գեղեցիկ քարյա սանդուղքներ, որոնք շինված են պատից դուրս բերած քարերից, կախ ընկած օղի մեջ, ոչ մի բան չկաներքնից, որի վրա հենվեին:

Հյուսիսային պատի վրա կա մի երկար արձանագրություն՝ խոշոր տառերով. դա վկայում է, որ այս վանքը շինել է Ջալալ-Դոլա-Հասան իշխանը. «Որդի Վախթանգայ և թոռն մեծին Հասանայ, բնակաւոր ինքնակալ և մեծ Արցախական աշխարհին թագաւոր¹»: Վախթանգն է կտակով հանձնել, որ շինեն վանքն այստեղ, իրանց հայրերի գերեզմանատանը: Շինությանը մասնակցել է և Ջալալի մայր Խորիշահը, որ մեծ իշխանաց իշխան Սարգսի դուստրն էր (Ջաքարե և Իվանե քաջաձանոթ սպասալարների քույրը, ասում է Կիրակոսը): Շինությունն սկսվել է Քրիստոսի 1216 թվականին և երբ հասել է արևելյան լուսամուտին, Խորիշահ տիկինը թողել է, գնացել Երուսաղեմ,

¹ Արձանագրությունն ամբողջովին չենք դնում. ցանկացողները կարող են տեսնել Ջալալյանի «Ճանապարհորդության» առաջին մասում

որ, կրոնավոր դառնալով, հազել է կոշտ շորեր և ճգնել է Հարության տաճարի դռանը: Քսաներեք տարի է տևել շինությունը և վերջացել է 1239 թվին: Կիրակոս պատմագիրը նկարագրում է վանքի օժման մեծ հանդեսը, որին ներկա են եղել, ինչպես լսել է պատմիչը, զանազան տեղերից ժողովված մինչև 700 քահանաներ: Ջալալ իշխանը մեծ ճաշ է տվել, ինքը սպասավորել է սեղանին և հետո դրամ է բաժանել հավաքված ժողովրդին: Գավիթը շինել է նույն Ջալալ իշխանը իր Մամբան կնոջ հետ: Այնուհետև բազմաթիվ արձանագրություններ վկայում են, որ զանազան իշխաններ, գլխավորապես Ջալալյանների տոհմից, նվիրել են վանքին գյուղեր և հողեր: Ահազին հարստության մի մասը այժմ էլ վանքի սեփականությունն է:

Տաճարի բեմը, ինչպես և առհասարակ վանքի շինությունը, այնքան մեծ չէ. փայտե հին խաչկալը մնում է մինչև այժմ: Վանքում պահվում են մատուցներ, հին սրբություններ, բայց նրանց երկրպագելու քիչ ուխտավորներ են գալիս:

Վանքի մեջ երկար մնալ չէր կարելի. խոնավությունը ամեն կողմից բռնում է և ոսկորների ցավ պատճառում: Մենք հարկադրված էինք շուտ դուրս գալ:

Մի քանի խոսք էլ ասենք վանքի բակի մասին: Նա շրջապատված է հաստ և ամուր պարիսպներով, որոնց մեջ երևում են ահազին մեծության քարեր, ճիշտն ասած, ժայռի բեկորներ. զանազան ժամանակ կարկատված են այդ պատերը և այժմ առաջվա պես պինդ չեն: Հյուսիսային կողմից՝ վեհարանին կից, շինված են ութ հատ նեղ և մթին խուցեր, որոնց մեջ այժմ ոչ ոք չի բնակվում: Եթե մեր մեջ կամքի հաստատություն լիներ, կարելի էր հարմարեցնել այդ խուցերը մի դպրոցի շինության համար: Ամբողջ բակը, ինչպես ասել եմ, հարթ է և բավական գեղեցիկ, բայց շատ կեղտոտ է պահպանվում: Վանքի հյուսիսային պատի տակ կան եպիսկոպոսների և վարդապետների գերեզմաններ, որոնցից մի քանիսը բավական հին են և ունին գեղեցիկ քանդակներով զարդարած տապանաքարեր:

Ես համարյա վերջացրի վանքի նկարագրությունը:

Նստած ենք թթի ծառի տակ, թեյ ենք խմում և խոսում: Խոսում ենք, իհարկե, միայն վանքի մասին: Այո՛, այս մոռացված շինությունը, որի մեջ այժմ հազարից մի անգամ է ժամերգություն կատարվում, մի ժամանակ մեծ համբավ և մեծ հռչակ ուներ: Թողնում եմ այն հեռավոր ժամանակները, երբ այստեղ կաթողիկոսներ և մեծ միաբանություններ էին ապրում, երբ երկրի

իշխողները զանազան ծայրերից հավաքվում էին այստեղ, խորհուրդներ կազմում: Այդ թողնում եմ: Մեզանից մի քառասուն կամ հիսուն տարի առաջ ինչպե՞ս էր այս վանքը, հարյուրավոր կենդանի վկաներ կան՝ հարցնենք: Այն ժամանակ կային մարդիկ, կային գործիչներ: Բաղադասար միտրոպոլիտը ջանք չէր խնայում շեն ու պայծառ պահելու իր պապենական ժառանգությունը. երկար տարիներ նա այստեղ անձամբ էր գործել և հետո, Շուշու առաջնորդ դառնալով, այնտեղից էլ չէր հեռացնում իր աչքը Գանձասարից: Մեզ հետ նստած է վանքի գյուղացի ծերունի Վանի-ապերը: Հարցնում ենք միտրոպոլիտի մասին, թե նա ի՞նչպիսի մարդ էր:

- Պա՛, պա՛, պա՛, - պատասխանում է ծերունին հիացած,- հայր ու մայր մարդ էր:

Լինում են հայր մարդիկ, բայց թե լինում է հայր ու մայր մարդ էլ՝ մենք առաջին անգամն ենք լսում: Բաղդասարի ժամանակ այստեղ ապրում էր մեծ անուն ստացած գիտնական Հովսեփ վարդապետը, որ այստեղ դպրոց ուներ, ուր ուսում էին ստանում նաև Շուշու հայտնի հարուստների որդիքը, որոնցից մի քանիսը այժմ հայտնի պաշտոններ են վարում: Այդ ժամանակ կար և մյուս Հովսեփ վարդապետը՝ Աֆլաթյուն մականուն ստացած: Դա էլ Արգոսի պես հսկում էր վանքական կալվածների վրա: Իսկ ա՞յժմ... Ես արդեն նկարագրել եմ և նկարագրածիս վրա պիտի ավելացնեմ, որ Գանձասարը Խաչենի ժողովուրդին կոպեկի օգնություն չի անում կրթության կողմից: Ամբողջ Խաչենում մի հատ ուսումնարան կա՝ Սեյդի-Շենինը: Երկիրը խավար է, ժողովուրդը՝ տգետ, կոպիտ, տիրած է «համատարած մութ ու խավար»: Երկրի տնտեսական դրության մասին ես քիչ հետո կխոսեմ, ցույց կտամ թե այստեղերի աղքատությունը որքան մեծ է: Այս տեսակ հանգամանքների մեջ ո՞վ է կարող ժողովրդի կրթության գործը սկսել և տանել, մի գործ, որ ներկա հանգամանքների մեջ հացի և ջրի պես անհրաժեշտ բան է. հարցնում եմ՝ ո՞վ է կարող, եթե ոչ Գանձասարի վանքը: Ջալալյան իշխանները ժողովուրդի ուժերը գործ են դրել այս վանքի վրա, ինամքով պահել, պահպանել են, և մի՞ թե այժմ այդ վանքը ոչինչ չունի, որով կարողանար հին իշխանների հիշատակը հավերժացնել և ժողովրդի մեջ վառել երախտապարտության ջերմ զգացմունքը: Նա կարող է և պիտի անե. բարոյական պարտք է մի կանոնավոր և ապահով դպրոց պահելը:

Բայց գուցե ընթերցողը զարմանա, որ ես այս տեսակ պահանջներ եմ հայտնում. բավական չէ, որ մի հին վանք լավ պահեն, դեռ դպրոց էլ պետք է

պահեն, ապահով դպրոց: Ո՞ր են միջոցները: Ես չեմ ասի՝ թե ո՞ր են, բայց կպատմեմ, թե ինչ հարստության տեր է վանքը: Տեղեկությունները ինձ հարողդել է վանահայրը, որ «Հայր մերի» պես անգիր գիտե վանքի ունեցածն ու չունեցածը: Հայր-սուրբը տարավ ինձ արևմտյան դռան առջև գտնված բլրակի գլուխը, որի մոտ մեծ ավազանի մեջ է թափվում քաղցրահամ քչքչան աղբյուրը, որ երկու տարի սրանից առաջ հեռու տեղից բերված է մի ոմն պ.Մայիլյանցի ծախքով: Բլրակի գլխից երևում են հեռու սարեր և լեռնային տեսարաններ: Վարդապետը ձեռքը բարձրացրեց և սկսեց ցույց տալ ինձ և պատմել:

Գանձասարի վանքն ունի 12000 դեսյատին անվեճ կավվածք. սահմանների մի մասը երևում է մեր բլրակի գլխից: Դեսյատին ասված չափը բոլորովին պարզ հասկացողություն չի տալիս: Ո՞վ է չափել մեր երկիրը. հարթավայրերը չեն չափում, ուր մնաց այսպիսի լեռնային երկիրը, որ փորփորված է սոսկալի անդունդներով, պատած է կուսական անանցնելի ծմակներով: Վերցրել են, մոտավորապես 12 հազար դեսյատին են ասել: Այդ տարածության կեսն էլ չի երևում Գանձասարից, բայց երևացածը ահագին տարածություն է, շա՛տ մեծ: Երևում են հեռու սարեր. դրանք ու դրանց ետևն ընկած մեծ տարածությունները վանքի անվեճ սեփականությունն են: Հեշտ բան է, իհարկե, կանգնել մի սարի գլխին և ցույց տալ սահմանները. այս սարի գլխից մինչև այն սարի գլուխը, նրա գլխով այսպես եկած, հասած այս սարի գագաթը: Այսպես է ցույց տալիս վարդապետը, բայց պետք է երևակայել, թե ինչպիսի՛ լայնատարած լանջեր ունին սարերը, որքա՛ն մեծամեծ ձորեր են կազմում: Վարելահողեր շատ քիչ կան այդ ցույց տված տեղերում. ամեն կողմ, ուր որ տեսնում է աչքը, տիրում է անտառը: Վանքին են պատկանում և երեք գյուղ. Կճողոտ, Վանքի գյուղ և Կեչան, որոնք միասին ունին 167 ծուխ: Գյուղացիք վանքի համար որևէ ձրի աշխատություն չեն անում, ինչպես անում են բեկերին պատկանած գյուղացիք հողատերերի համար. նրանք տալիս են Շուշու Կոնստանտինի հողային բերքերի տասանորդը, որ շատ աննշան բան է, և մոտավորապես 200 ռուբլի տարեկան ծխահարկ: Պետք է ասել, որ անտառները հարուստ են ընկուզենիներով, իսկ Վանք գյուղի մոտ կա վանքապատկան ջրաղացքարերի հոչակավոր հանքը. սա տալիս է այնպիսի գեղեցիկ քարեր, որոնց նմանը, ինչպես հավատացնում են, չկա ամբողջ Անդրկովկասում: Եվ այսքան հարստություններից ի՞նչ օգուտ է ստացվում. արդյունքը շա՛տ չնչին է, միանգամայն ծիծաղելի:

Այս է Գանձասարի դրությունը:

Թթենիների տակ ճաշելուց հետո վերջին անգամ մտնում ենք վանքը: Վարդապետը «Հոգոց» է ասում, մենք գլուխ ենք տալիս փառավոր շիրիմներին, Աղվանից կաթողիկոսներին, եկեղեցուն, երեսներս խաչակնքում ենք ու դուրս գալիս:

Ժամի մեկն է: Երկինքը պղտոր է, ամպամած. արեգակը երբեմն նայում է, մի թույլ աշնանային լույս է տարածում, որ ավելի վատացնում է մեր հոգեկան տրամադրությունը: Մեր հրաժեշտն ենք տալիս վանահայր վարդապետին, բռնում ենք ձեռքի սանձերից և ոտով իջնում ենք վանքի քարե ճանապարհով: Հասնելով մեզ ծանոթ առևտրական հրապարակին՝ դուրս ենք գալիս ճանապարհից, անցնում ենք Խաչենագետը: Գնում ենք այցելելու գետի մյուս կողմին գտնվող ավերակները: Բավական բարձրանալով՝ հասնում ենք այն տեղին, ուր երևում էր գիշերային կրակը. ես սխալված չեի, այստեղի տավարածները փոքր տղաներ էին, իսկ նրանց շները՝ շատ կատաղի: Նրանք ցույց են տալիս այն թումբը, որի վրա կա մի հին եկեղեցի: Բարձրանում ենք մինչև թումբի կեսը. այդտեղ մի գյուղացի է պատահում: Նա շատ լավ մարդ էր, այնպես քաղցր և համեստ, որ առաջնորդեց մեզ դեպի ավերակները: Այդ ավերակները հայտնի են «Դարպասներ» անունով: Թումբը, որի վրա կանգնած ենք, ունի լայնանիստ լանջեր, որոնք երեք կողմից աստիճանաբար իջնում են Խաչենագետի վրա. լանջերի երեսին երևում են բազմաթիվ տների տեղեր, իսկույն երևում է, որ մենք գտնվում ենք մի վաղուց անհայտացած և միայն իր գոյության ողորմելի հետքերը թողած գյուղի կամ գյուղաքաղաքի մեջ: Եկեղեցին մի հասարակ շինություն է. նրա կտրին բուսած է մի ահագին ծառ, որ, երևի շուտով կքանդե մնացածը: Գիր ու հիշատակ չկա:

Այդտեղից բարձրանում ենք մի ցածրիկ ու երկար պատի մոտով, որ շինած է քարերի մեծ-մեծ սալերից և կիսով չափ ծածկված է ծառերի տակ: Պատի վերին կողմում տեսնում ենք մի քարաշեն տուն, որի կեսը փլված է: Ծառերն ու մացառները ամեն կողմից հավաքվել են շինության գլխին և խեղդում են: Մտնում եմ մի դռնով, բայց շեմքից դեն անցնել չեմ կարողանում. կտուրը փլվել է, ինչպես ասաց գյուղացին, երկու թե երեք տարի սրանից առաջ. սենյակը լցված է քարով, հողով և ծառերով: Պատերը տաշած քարերից են և վերևում կամար են կազմում: Երեք այդպիսի սենյակներ տեսանք: Արձանագրություն էլի չկա, բայց ժողովուրդը շատ լավ գիտե, թե

ումինն է այդ տունը: Ջալալ իշխանի պալատն է այդ, ասում է քեզ ամեն մի գյուղացի: Երևի հենց այդ պալատիցն են այս կողմի ավերակները «Դարպասներ» անունը ստացել: Մի քիչ հեռու մի ուրիշ քառակուսի փոքրիկ շինություն էլ կա, որ բանտ և դիվանատուն է ասվում, այս՝ Ջալալի դիվանատունն է, իհարկե: Ժողովուրդն է ասում, այն ժողովուրդը, որ իր սիրած մարդուն չի մոռանում. վեց հարյուր տարիներ են անցել այստեղի գլխով, և դեռ նա գիտե իր բարեպաշտ իշխանի թողած հիշատակների տեղերը: Այստեղից ետ ենք դառնում:

Այստեղից սկսվում է և բարձ ու բարձր գնալով ցցվում է մի անտառապատ սար, որի գագաթն այստեղից չի երևում, բայց հեռվից զարմացնում է պատի պես ուղղաձիգ լանջերով: Այդտեղ՝ այդ անմատչելի բարձրության գլխին է Ջալալի բերդը, որ կոչվում է Թարխանաբերդ: Մի նեղ, ոլորուն, սրտաճաք ճանապարհ է տանում ներքևից մինչև այդ բերդը: Ինչպես պատմում են, դժվար, չափազանց դժվար է այդտեղ գնալը. պետք է շատ տեղ փոքսող տալ, ճանկոտել գետինը, որ կարելի լինի տեսնել մի քանի հին շինություններ և ամրություններ՝ ծածկված անտառի խորքում: Թարխանաբերդը, բնության ահեղ ամրությունների սրտում դրած պատերազմական թակարդը, հայտնի է մեր պատմության մեջ Խոխանաբերդ անունով: Ես կարծում եմ, որ Դարպասների ավերակ գյուղաքաղաքը գագաթի ամրության հետ մոտիկ կապ է ունեցել և վերջինս նրա միջնաբերդն է եղած: Կիրակոս պատմագիրը պատմում է թաթարների արշավանքի ժամանակ այստեղ տեղի ունեցած ահագին կոտորածի մասին: Ջալալ իշխանը հավաքում է իր ժողովուրդը և ամրացնում Խոխանաբերդի մեջ. թշնամին տեսնում է, որ չի կարող գրավել այդ ամրությունը, հաշտության դաշինք է կապում: Հետո գալիս է թաթար Բուղա զորավարը՝ հարկ հավաքելու: Մի քանի մարդիկ նրա ձեռքն են մատնում Ջալալին, որ կալանավորվում է: Բուղան, ասում է պատմիչը, քանդեց իշխանի բերդը՝ Խոխանաբերդը, Դետը և Ծիրանաքարը և «այնպես հստակեց, որ հետք անգամ չէին երևում՝ թե բնավ շեն եղած են»: Մեր տեսած տեղն էլ լավ հստակված է. մնացել են միայն տնատեղերը, եկեղեցին և մի հրաշալի աղբյուր, որ թափվում է ձորակի մեջ: Խմում ենք այդ անշուք աղբյուրից. ջուրը զարմանալի պարզ է, միանգամայն կարծես բյուրեղ է և այնքան սառն, որ միանգամից չես կարող վրան ընկնել, խմել մինչև կշտանալ:

Մեզ առաջնորդող բարի գյուղացին, տեսնելով, որ մենք ամեն տեղ արձանագրություն ենք որոնում, տանում է մեզ մի տեղ. խոտերի վայրենի

բույսերի մեջ նա ցույց է տալիս մի խաչքարի կտոր, որի վրա մի երկու տող գրություն կա: Կարդում եմ դժվարությամբ:

- Քանի՞ տարվա է,- հարցնում է գյուղացին:

- Վեց հարյուր:

- Վե՛ց հարյուր...- կոչում է նա ապշած,- վե՛ց հարյուր... Փա՛ռքդ շատ, աստված, նրանք այսպես բաներ են թողել, մե՞նք ինչ պիտի թողնենք:

Ասում է ու վերցնում քարը, դնում մի բաց և լավ տեղ:

Բարի առաջնորդին մեր հրաժական բարևն ենք տալիս, շնորհակալություն հայտնում և դիմում ենք բարձր: Մեր առջևը մի մեծ բարձրություն կա, որ Հավապտուկ է կոչվում: Գնում ենք նրա գագաթի հին եկեղեցին տեսնելու, ճանապարհը բարձրանում է անտառի միջով, և մենք գոհ ենք, որ առիթ կունենանք վանքի անտառը մոտիկից տեսնելու: Մտնում ենք անտառը և տեսնում: Որքան երևակայեք, չեք կարող իրական գեղեցկության մասին քիչ մոտիկ հասկացողություն կազմել: Մենք ապշած նայում էինք դեսուդեն: Գերեզմանական լռության մեջ, որ տիրած է անտառում, մեր ձիերը գոռով դեպի բարձր են գնում նեղ և վտանգավոր կաճաններով: Իսկ մենք մոռացել ենք վտանգը, նայում ենք և չենք կշտանում: Հսկա ծառերը կանգնած են միմյանց մոտ, ուղիղ ձգված են դեպի վեր, կողմնակի ճյուղեր չունին, նավի կայմերի պես են և միայն գլուխներն են զարդարել գեղեցիկ տերևախիտ գլխարկներով: Հասակի բարձրությունը զարմանալի է. Յեխ-Չորի ծառերը սրանց չեն հասնի: Երբեմն բարձրանում ենք խորխորատների գլուխը. ձին, կարծես, ձգված լարի վրայով է գնում, եթե մի անգգույշ քայլ անես, մտածում ես, մինչև խորխորատի վերջը հասնելը կոլով միս կդառնաս, և այդ խորխորատի հատակից սկսած բարձրանում է հսկա ծառը, գալիս է քեզ հավասարվում և քեզանից էլ մի սովորական ծառի չափ բարձրանում: Մանավանդ գեղեցիկ է հաճարկի ծառը, սպիտակ մինչև տերևները, շատ բարձրահասակ և ուղիղ ու կռկ, ինչպես մոմ:

Այս ի՛նչ տեսակ բնություն է... Երբ հավապտուկի գլուխն ենք գնում, մեր առջևը բացվում են նոր-նոր լեռնային տեսարաններ, և ամեն տեղ նույն թանձր ու մեծ անտառը: Հավապտուկն էլ անտառապատ է: Ահա՛ և եկեղեցին՝ ծառերի մեջ մտած, մացառներով շրջապատված. մոշի թփերը միմյանց են փաթաթվել, չեն թողնում անցնել: Ահ ու դողով մտնում եմ եկեղեցին, տեսնում եմ մի լուռ, մռայլ ավերակ: Այս թանձր անտառում, ուր արջերն ու գայլերն են թափառում, սարի գլխին՝ հեռու մարդկային բնակությունից,

ավերակ ու տխուր եկեղեցին սարսափելի տպավորություն է գործում. ընկերներիցս մեկը գալիս է ետևիցս, խոսում ենք ցած ձայնով: Շինությունը հասարակ քարերից է, ունի բարձր, կամարակապ, ճարճքած կտուր, որի ծեփը ներսից թափված է, ամեն բոպե փլչելու ես սպասում: Դրսի պատերի վրա երեք արձանագրություն ես կարդում: Մեկից իմանում ենք, որ եկեղեցին շինված է 1203 թվին, ուրեմն Գանձասարից էլ վաղ, «յիշխանութեան Հասանայ որդոյ Վախտանգայ և ամուսնոյ նորա Մամբանայ»: Շինողն է մի ոմն «Հովհան առաջնորդ»: Ինչպես պարզ երևում է, այս վանքին կից շինություններ են եղած, տեղերն այժմ էլ երևում են: Հարավային կողմից գլխավոր շինությանը կցված է մի կիսաքանդ սենյակ, որի պատերը ծածկված են գեղեցիկ կապույտ ծեփով. նրա վրա կան այս տեղերը այցելողների անունները:

Մենք շտապով էինք տեսնում այս բոլորը: Օրը թեքվել էր, պետք էր շուտ դուրս գալ այս վայրենի և անհյուրասեր տեղերից: Մենք սկսում ենք իջնել Հավապտկի հարավային լանջով, որ տանում է դեպի մեծ ձորը: Ճանապարհը... բայց ի՞նչ ճանապարհ, ավելի ճիշտն ասած, հետևակ մարդկանց ու գազանների հետքերի տեղը հարյուրավոր պտույտներ է գործում, կորչում է ծմակի խորքում, վազում է մեծ-մեծ ծառերի ճյուղերի տակ, գլխիվայր գլորվում է թեք-թեք տեղերով: Մենք գնում ենք, քաշքաշվում ենք, իսկ մեր ետևից քաշ են տալիս մեր ձիերը: Ուտնամանի, շորի, դեմքի մասին մտածելը ծիծաղելի կլինի: Կոխ ենք տալիս քար ու ժայռ, թուփ ու մացառ: Վերջապես մտնում ենք ձորը, որի հատակով մի փոքր ջուր է գնում: Այդտեղ, չգիտեմ որ կողմից, անսպասելի կերպով գալիս է մեր առջև մի համեմատաբար լայն ուղի: Հեծնում ենք ձիերը, գնում ենք, դուրս գալիս մի լայն և ուղիղ ճանապարհ և քիչ ժամանակից հետո հասնում ենք Գառնաքար անունով գյուղը: Փոքրիկ գյուղ է այդ, քսան տանից ոչ ավելի և գետեղված է ծմակի ծայրում, ձորի գլխին: Տավարածը իր տավարը հանդից տուն է բերում, ուրեմն շուտով կմթնի: Գյուղացիներից հարցնում ենք Հակոբա վանքի ճանապարհը, մի կերպ հասկանում ենք, էլի քշում ձիերը: Մութը հետզհետե կոխում է, մենք գնում ենք մի շատ նեղ կաճանով: Մեզանից քիչ հեռու մի գյուղացի կար. հարցրինք ճանապարհի մասին, նա հայտնեց, որ մենք շեղվել ենք և եթե այդ ուղղությամբ գնանք՝ կկորչենք ծմակի մեջ և, ո՛վ գիտե, ո՛ր ժայռից ցած կգլորվենք: Եվ նա ավելացնում է.

-Օրս գիշեր է դառել, ինչպե՞ս պիտի գնաք, ճանապարհը ծմակի միջով է և շատ երկյուղալի է. այդ տեղերից մարդն անպակաս է:

Մարդ՝ այսինքն՝ ավագակ...

Մտանք անտառը: Բոլորովին մթնել էր, երկինքը վարագուրված էր մութ գորշ ամպերով, լուսինն այլևս չէր կարողանում հասցնել մեզ իր աղոտ, անորոշ լույսը՝ ինչպես Վարագաբույնի ճանապարհին: Գնում ենք անտառի միջով, մի անտառային փոքրիկ կածանով, որ միայն մեր ձիերն են տեսնում: Այդ անտառը Գանձասարի անտառի ընկերը չէ. այնտեղ ամեն ինչ աշխատում է բարձրանալ, մեծ հասակ քշել, իսկ այստեղ մենք մի սովորական անտառում ենք, ուր ծառերն այնքան բարձր չեն և դեռ գետնից չբարձրացած՝ ճյուղեր են տարածում դետուղեն. ծառը փաթաթվում է թուփերին, թուփը կույ չ է գալիս, ընկնում ճանապարհի վրա կամ տափականում է, սողում, ինչպես իր վայրենի կամքին է ցանկալի: Վայրենի կամք ունի և մեր կածանը: Նա տանում է մեզ, ուր որ ուզում է, ցածրանում, բարձրանում է, այստեղ ու այնտեղ է գլորվում, դուրս է գալիս, նեղ ժապավենի պես ձգվում մի խորխորատի եզերքով, բոլորովին անփույթ է, որ մենք մեր ձիերով հանկարծ խցկվում ենք այնպիսի խիտ ճյուղերի տակ, ուր կարող ենք աչք ու հոնք պատռել, ոտ ու ձեռք կոտրել: Այդ նրա բանը չէ, նա չի խոստացել, որ ձիեր էլ տանե, լեռնային ուղի է, կացին չի դիպել կողքերին, մարդու ոտը մի հինգ, տասն անգամ կոխել է գետինը, և նա գոյություն է ստացել: Մենք գնում ենք միմյանց ետևից շար ընկած. առաջնորդ չունինք, մեզ հանձնել ենք ձիերի և կածանի կամքին, մեկ էլ՝ բախտի բերմունքին:

- Բարձր մի՛ խոսեք, - ասում են մեզանից երկուսը:

Լռում ենք. ամենքիս սրտումն է «մարդի» երկյուղը: Անցնենք անձայն, գուցե չհմանան, որ որսեր են գնում: Եվ որքան առաջ ենք գնում, այնքան թանձրանում է անտառը:

Անտառը գիշերով... բնության ամենախորհրդավոր և ծանր տեսարաններից մեկն է: Մարսափելի խավար է տիրում ծառերի տակ, խավար, որ կարծես կաշկանդել է, անշարժացրել ամբողջ անտառը. ոչ մի տերև չի շարժվում, մի ամբողջ աշխարհ իր բոլոր բնակիչներով կլանվել է, անհետացել: Ոչ առաջն է երևում, ոչ՝ ետքը և ոչ՝ կողքը. չգիտես՝ ո՞ւր նայես, ի՞նչ տեսնես: Մարդու սիրտը կույ չ է գալիս, կծկվում է, մի անկյուն քաշվում. զգացումն չկա, ամեն ինչ կատարվում է մեքենայաբար, գիտակցական շարժողություն, կամք, ամեն ինչ կույ է գնացած խավարի, ահ ու երկյուղի մեջ: Միայն ինչու ձիերն է իմանում, թե ո՞ւր է գնում. նա գնում է իրան հատուկ զգուշությամբ, ճանապարհից չի շեղվում: Երբեմն պատահում են ձորեր. մենք դրանց չենք

տեսնում, այլ հասկանում ենք: Լարված լսողությունը դեռ հեռվից է ըմբռնում բարակ ջրի հանդարտ, տխրալի ձայնը. ո՞րտեղից է գալիս, և ո՞ւր է գնում՝ այդ իմանալ անկարելի է: Մեկ էլ լսում ես՝ ինչպես ձիերը չրմփչրմփում են ջրի և ցեխի մեջ. անցնում է այդ ձայնը, և ձին դարձյալ նույն սոսկալի լռության, նույն խավարի մեջ փոխում է քայլերը: Աջ ու ձախ կողմիդ միմյանց հաջորդում են մեծ-մեծ սև բծեր, քսվում ես դրանց և իմանում, որ ծառեր են, որոնք ամեն տեղ տարածել են իրանց ճյուղերը: Պաշտպանվի՛ր նրանցից, ինչպես իմանում ես, թեև դժվար է պաշտպանվել այնպիսի բանից, որը որոշ չես տեսնում:

Չգիտեմ, անտա՞ռն էր շատ մեծ, թե՞ այդ խավարը, լռությունն ու վա՞խն էր պատճառը, բայց մեր քմահաճ կածանը անվերջ էր երևում: Տեղի դիրքը չէր փոխվում, իմանում էինք միայն, որ երբեմն իջնում ենք և բարձրանում: Անորոշ դրությունը մեզ հասցրեց այն ժամին, երբ ամենքս համարյա համոզվեցինք, որ այս չէ ճանապարհը, որ սաստանան գիտե, թե որ կողմն ենք գնում. մեր ձիերի ոտների տա՞կն է կածանը, թե փախել է կորել, և մենք անտառի մեջն ենք ընկել՝ այդ էլ չգիտենք: Բայց մենք չենք կանգնում, գնում ենք անդադար, բնագդամար շարժվում ենք: Միտքը երկար լարված մնալուց հետո հոգնում է, բթանում, մնում է մի ինչ-որ հասկացողություն, որ մի բան է թելադրում. այդ բանը վերջին միջոցն է, որ ամեն մեկը պահում է իր սրտում, չի համարձակվում հայտնել: Հետո իմացա, որ մենք՝ հինգ հոգիներս, միևնույն վճիռն ենք կայացրել զատ-զատ, այն է՝ գնալ, մինչև որ բախտը դուրս կբերե մի շատ թե քիչ հարմար, տափարակ տեղ, իջնել ձիերից, կրակ վառել, և նրա շուրջը բոլորած, աչք դնել առավոտին: Ուրիշ ի՞նչ անել, մտածել է ամեն մեկը. վանքը կորել է, անտառը միշտ միևնույնն է, ճանապարհը մեզանից ավելի է մոլորված: Լինում են տեղեր, ուր ծառերը նոսրանում են, խավարն այնքան թանձր չէ. և այդպիսի տեղերում տեսնում էինք, որ մի ինչ-որ սև բան է դուրս եկած ձիու ոտների տակից, ընկած է դեպի ուրիշ կողմ՝ դա էլ կածան է. ձին կանգնում է, չգիտե որտեղով գնա:

Այսպես խարխափելով՝ մեքենայաբար առաջ ենք մղվում: Բայց մեր ձիերը ուժաթափ են եղել: Իմ ձին, նկատում եմ, սաստիկ նեղացել է, քրտնել, նա ետ է մնում և միանգամայն անուշադիր է իմ մտրակի հարվածներին: Ես ձիուց իջնում եմ, ետ չմնալու համար ոտով եմ գնում. ընկերներիցս մեկն էլ իջնում է, որ ինձ հետ գնա: Այս ծմակը իր գիշերային արհավիրքներով, բավական չէ, որ հարկադրում է մեզ հալածականի պես փախչել, խույս տալ

իրանից, դեռ ուժ և կարողություն էլ է տալիս այդպես անելու. քրտինք ու հոգնածություն մոռացվում են, եթե վայր էլ ընկնես, դարձյալ կկանգնես ու անտրտունջ կգնաս:

Հանկարծ առջևից գնացողը ձայն է տալիս.

-Այլևս ճանապարհ չկա:

Մենք մոտեցել ենք մի փոքրիկ ջրի, որ վշշում է ծառերի մեջ: Ճրագ են վառում: Մեզանից մեկը ճրագը ձեռին առաջ է գնում ճանապարհ գտնելու. մենք կանգնած՝ անհամբեր նայում ենք, սպասում նրա վճռին: Տեսնում ենք, ինչպես թույլ լույսը երբեմն դուրս է գալիս ծառերի ետևից, լուսավորում է մեր ձիերի վիատությամբ կախ արած գլուխն ու ականջները և նրանց վրա իջած ճյուղերը: Անտառի մի փոքր անկյունն է լուսավորված, և այդ անկյունում ստվերներ են, որ արագ-արագ ուստոստում են, միմյանց վրա վազում, միմյանց հետ խառնվում, հսկայական պտույտներ են գործում ու փախչում, ընկղմվում են խավարի մեջ: Ճրագի փոքրիկ բոցը լույսի խուրձեր է ուղարկում ճյուղերի և բունների միջով, լուսավորում է ճահճոտ տեղի վայրի բույսերն ու բանջարները: Մեր ընկերը գլուխը կախ արած դետուղեն է տանում ճրագը և տնտղում է:

- Գտե՛լ եմ,- խոսում է նա վերջապես:

Ազատ շունջ ենք քաշում, թեթևանում ենք, ուրախանում, որ այդ տեսակ թանկագին գյուտ ենք արել: Տեսնո՞ւմ եք, թե մարդու սիրտն ինչով է ուրախանում. կարծես մենք լավ էինք ճանաչում այդ ճանապարհը, կարծես մենք շատ գիտեինք, թե ո՛ր ենք գնում: Այդպես չէ՞, արդո՞ք, և մեր չարքաշ կյանքը. խարխափում ենք, դետուղեն ընկնում և մի պատահական ոլորմոլոր կածանի հույս դրած՝ գնում ենք: Գնում ենք՝ հուսալով, որ կածանը վերջ ունի, մի տեղ կտանե, և ուրախանում ենք, կազդուրվում այդ խաբուսիկ հուսով, առանց որի մեր շրջապատը կարող էր մեր սիրտը ճաքացնել:

Ճրագի լույսով շարունակում ենք ճանապարհը ցեխի և ջրի միջով. այժմ տեսնում ենք, որ մի քիչ դեպի բարձր ենք գնում: Բայց ճրագն այնքան փոքր է և անգոր այս խավարի մեջ, որ միայն անորոշ ստվերներ է գոյացնում: Ձիերը շփոթվում են, չեն կարողանում գնալ: Ճրագը հանգեցնում ենք:

Բայց մեզ համար ուրիշ ճրագ է վառվում. ահա՛ լսում ենք շնահաչոց, և բոլորովին անսպասելի կերպով մեր առաջն է դուրս գալիս մի պարսպապատ շինություն:

- Վա՛նքն է, հասել ենք:

- Փա՛ռք աստուծո՛ւ:

Ծեծում ենք պինդ փակած դռները, ներսից ձայներ ենք լսում. չեն ուզում բանալ, ասում են՝ այս ժամանակ դուռ բաց անել չի կարելի: Էլի «մարդի» երկյուղն է, որ այստեղ տիրում է. առաջներում ավազակները սպանել են վանահայր վարդապետին, և այնուհետև դռները մթնելուն պես պնդացնում են: Երկար ու բարակ բանակցություններից հետո դուռը բացվում է, երբ պարզվում է, որ մենք հասարակ ուխտավորներ ենք: Երկու ժիր շուն սարսափելի աղաղակներով մեզ վրա են հարձակվում, բայց մենք ուրախ ու հանգիստ անցնում ենք, մտնում վանահոր սենյակը: Ժամացույցը որոշում է, որ ժամուկես ճանապարհորդել ենք ծմակի միջով:

Մեզ ընդունում են քաղցրությամբ: Վանահայրը, մի բարձրահասակ և հաղթանդամ վարդապետ, դեսուդեն է վազում. մեզ գերել է հանգիստը, իսկ վարդապետը ծառա չունի և հարկադրված է անձամբ հոգալ մեր բոլոր պետքերը. նրան օգնում է ոտքից ու ձեռքից ընկած մի ծեր քահանա, որ այստեղ աքսոր է ուղարկված մի չհաս պսակի համար: Մեջքից ծալված տեր հայրը կատարում է հայր սուրբի պատվերները, միննույն ժամանակ քթի տակ իր աղոթքներն է կարդում: Մեզ համար թեյ են պատրաստում, և տաք, կազդուրիչ հեղուկին աչք դրած, մենք բոլորվում ենք, մի մտերմական շրջան կազմում, կամաց-կամաց հաղորդում ենք միմյանց մեր տպավորությունները: Ամենքը մի տեսակ խոսքեր են ասում. անտառը բոլորի վրա միննույն ազդեցությունն էր արել:

Թեյից հետո դուրս ենք գալիս պատշգամբը և տեսնում ենք երկնքի մի գործը. թխպերը պատռվել են, և լուսինը տարածել է իր լույսը: Այսպես էր մեր բախտը...

Անցավ մի ժամ: Մենք մոռացել էինք մեր կրած տանջանքները, այժմ էլի խոսում էինք, ծիծաղում: Մեր շրջանի մեջն առած վարդապետին ու քահանային՝ ընթրիքի նստեցինք: Պարզ և համեստ էր մեր ընթրիքը. ուտում էինք մեծ ախորժակով, մի-մի էլ խմում էինք վարդապետի «յոթն կողպեքի տակ պահած, պաշտած» թթու և դեղին պղտոր գինին: Այսպիսի մտերմական շրջանում շուտ է սկսվում և տաքանում ախորժեղի խոսակցությունը: Խոսում էինք գլխավորապես վանքի և այդ երկու մենավոր կրոնավորների ապրուստի մասին: Վանահայրը պատմում է, որ վանքը շատ աղքատ է, համարյա ոչինչ արդյունք չի ստանում և ոչ էլ մի տեղից օժանդակություն: Որտեղի՞ց ստանան: Վանքն ունի կալվածներ, բայց շրջակա գյուղացիները այն աստի-

ճան աղքատ են, որ չեն կարողանում հողը մշակել, անտառներից օգուտ քաղել, էլ վանքն ի՞նչ ստանա: Գյուղացիների դրության վրա է կանգ առնում մեր խոսքը: Վարդապետն ու քահանան, որ ամեն օր շրջում են գյուղերում, մեզ պատմում են շատ բաներ: Եզներ չունին, որ վարեն, ասում են մեզ. երկու-երեք տունը հազիվ մի եզն ունի, այդ պատճառով էլ հողերի մեծ մասն անմշակ է մնում: Ի՛նչ եզն, կան գյուղեր, որոնց բնակիչների մեծ մասն անկողին չունի. քնում են շորերը հագած՝ ծածկվելով որևէ գազանի մորթու տակ: Աղքատությունը դառն է, մշտական:

Ծանր խոսքեր էին:

Մենք գնում ենք մեծ ճանապարհով, տեսնում ենք գյուղեր, կարծում ենք, թե այդտեղ ապրում են մարդիկ այնպես, ինչպես գյուղացին պիտի ապրե: Նայում ենք, բայց ոչինչ չենք տեսնում: «Արտաքինս ուրիշին է այրում, ներքինս՝ ինձ», ասում է հասարակաց առածը: Դա գյուղացու պատասխանն է՝ ուղղած դեպի այն մարդիկ, որ գյուղացի անունը լսելուն պես հասկանում են մի մարդ, որի հորը դեղին ցորենով է լիքը, կարասը՝ յուղով, տաշտը՝ հացով, կթան կովերը կարագ ու սեր են տալիս ամեն օր, և այդ մարդը առատորեն ապրում է, նահապետական պարզ և լի կյանք է վարում: Այսպես են հասկանում, բայց այսպես չէ: Գյուղացի ժողովուրդը, թո՛ղ մի անգամ էլ կրկնվի այս հնացած ու մաշված միտքը, մեզ բոլորովին մի անհայտ ժողովուրդ է, ապրում է իր համար, ապրում է և իր վիշտ ու ցավը իր շեմքից դուրս չի թողնում: Կզնաս, կմտնես՝ կտեսնես, չես գնալ՝ երևակայի՛ր կաթնի ու յուղի առատության մեջ ապրող մի մարդ: Խոստովանում եմ, ես էլ շատերի պես էի. իմ ճանապարհորդության ժամանակ այնքան գյուղեր տեսա և ոչ մեկի մեջ մի քիչ չմնացի, աչքով չտեսա, չհասկացա նրանց կյանքը: Բայց կարելի՞ է մեղադրել ինձ. հինգ օր ճանապարհին դեսուդեն ձի քշել, աշխատել գոնե հարևանցիորեն տեսնել շատ տեղեր, ես այդ էի միայն կարող անել. ուրիշ միջոց չկար, հանգամանքների ձեռքին էի, բայց գոնե հասկանում էի, որ այն չեմ անում, ինչ որ իսկապես հարկավոր էր: Այնուամենայնիվ, որքան և արագընթաց էր իմ ուղևորությունը, Խաչենի իմ տեսած մասը միանգամայն ինձ անձանոթ չմնաց: Պատահական մանր դեպքերը, ճանապարհի վրա մարդկանց հետ հանդիպումները, կարճ խոսակցությունները հասկացողություն տվին ինձ ժողովրդի կացության մասին: Եվ ես մի քանի խոսք կասեմ՝ չվախենալով, որ միգուցե ասածներս իրողությունից հեռու լինեն:

Խաչենի փոքրիկ գավառում ես ինն թե տասն գյուղ տեսա: Առաջին հաստատությունը, որ այդ գյուղերը շատ աղքատ են, ինքը բնությունն է: Մի երկիր, որի փառքն ու պարծանքը լայնատարած թանձր անտառներն են, մի այդ տեսակ երկիր ի՞նչ է կարող տալ բնակիչներին: Սարերի լանջերին են կպած այդ գյուղերը, ո՛չ լավ ճանապարհներ ունին, ո՛չ այնպիսի հողեր, որոնց վրա երկար կարողանային աշխատել: Անտառը դեռ նրանց համար աշխատանքի դուռ չի բացել և շուտով էլ չի կարող բանալ: Ծմակից, մենք բոլորս այսպես ենք հասկանում, կարելի է չոր վառելիափայտ հանել, իսկ երբ մոտիկում քաղաք չկա, ավելորդ է այդ մասին մտածել անգամ: Մնում է տախտակ շինել: Այս արհեստն էլ այնպիսի դրության մեջ է, որ ոչինչ է համարվում, ամենքը տախտակ շինել չգիտեն: Մարդը վերցնում է ուրազն ու սղոցը, վերցնում է շատ օրերի համար հաց, մնաս բարյավ է ասում իր ընտանիքին, գնում է ծմակի խորքը. այնտեղ շինում է մի որջ, որի մեջ ապրում է, հարևանություն է անում արջերի հետ: Ցերեկը բանեցնում է իր ջրհեղեղյան խեղճ ուրազը. վայրենի լռության մեջ նրան սիրտ են տալիս միայն ուրազի թխկթխկոցը: Շինում է մանր տախտակ, ծմակից դուրս է տանում մի քանի շաբաթից հետո, ծախում է այնպիսի գնով, որ մի օրվա աշխատանքը 40-50 կոպեկ է նստում: Այդ է այն օգուտը, որ տալիս են նրան ահագին անտառները: Նրանց խորքում երբեմն պատահում ես այդպիսի տեղերի, ուր գյուղացին տաշել է փայտը, և զարմանում ես, թե ինչպե՛ս է խեղճն այստեղ ապրել, ի՞նչ գրկանքներ է կրել:

Ուրեմն ծմակը գյուղացուն շատ հարկավոր չէ, մինչև անգամ նեղում է նրան, որովհետև բռնել է այն տեղերը, ուր կարելի էր վարուցանք անել: Առանց վարուցանքի՝ նա ոչինչ է, երբեք չի կարող այնքան փող աշխատել, որ մի տարվա հացը ուրիշից առնե, իր տունը դնե: Հողը, վարելահողն է նրան կերակրողը. հողը չկա, նա ապրուստ չունի, եզն չունի, քնում է առանց անկողնի, չոր գետնի վրա, աղքատ է, այնպես սաստիկ աղքատ, որ նրա կինն ու երեխան տեսած ժամանակ լացո է գալիս: Մի գյուղի ճանապարհին իմ առաջը դուրս եկավ մի գյուղական աղջիկ: Մեծացած էր նա, նշանվելու աղջիկ էր: Ինձ լավ հայտնի է հայի մի հատկությունը: Երբ աղջիկը մեծացավ, «տանից դուրս ձգելու» դառավ, ընտանիքը նրա վրա է հավաքում իր բոլոր հոգսերն ու մտածումները. աշխատում են, որ մեծացած աղջիկը լավ հանգնվի, լավ երևա մարդկանց մեջ, աշխատում են մոռանալ տնային շատ պետքեր, բերաններից կտրում, նրա վրա են դնում: Բայց իմ տեսած աղջիկն

ինչ ուներ հազած: Ես երկար մտիկ էի անում նրա ետևից, երբ նա քշում էր էշը, մտիկ էի անում, բայց չէի կարողանում որոշել, թե ինչից է շորը կարած: Այսքանը միայն լավ իմացա, որ արխալուղի միայն մի թևքն էր հազած ուսի վրա. մնացած արխալուղը զգգոված, կախ ընկած կտորների մի հավաքածու էր, որ երևում էր նրա մեջքի վրա և նրա ոտների շարժողությունից ծանր կերպով օրորվում էր մի կողմից դեպի մյուսը: Նա քարշ էր տալիս այդ կտորտանքները միայն նրա համար, որ տեսնողը չասե, թե նա հալավ հազած է ման գալիս: Մեր մոտովն անցնելիս՝ նա մեզ վրա մի հայացք ձգեց, որ անտարբերություն և մի տեսակ արհամարհանք էր արտահայտում: Բնության հարազատ գավակը հպարտ էր իր ցնցոտիների մեջ. նա, կարծես, չգիտեր էլ, որ ինքը շորեր չէ հազած և նրա համար բոլորովին միևնույն է, թե ինչ կմտածենք նրա համար մենք՝ ավելի լավ հագնված քաղաքացիներս: Ուրիշ տեղեր էլ տեսա նմանօրինակ պատկեր: Գյուղերի մոտ տեսա մեծ ու փոքր երեխաներ, որոնց վրա միայն մի կտոր հալավ կա, որ ամառ-ձմեռ նրանց հագուստն է. մնացած տեղերը բաց են, երևում են չոր, բարակ ոտներ, տափակ ու ոսկրացած կուրծք, վտիվ, հողի գույն ունեցող դեմքեր, և կե՛ղտ, կեղտ՝ որքան կարող է լինել: Ես, իհարկե, չեմ կարող ասել, թե բոլորն էլ այդպես են, բայց թե տեսածներս հաստատում են մեծամասնության դառն աղքատությունը, դա իմ համոզմունքն է: Աղքատությունն է պատճառը, որ մեծ-մեծ գյուղեր չկան. յուրաքանչյուր գյուղ բաղկացած է 7, 15, 35 տնից:

Ես մատնացույց արի հողի պակասությունը: Բայց պետք է մատնացույց անեմ և այն, որ այդ պակասությունը կապ ունի չգիտեմ ծուլության թե աղքատության հետ: Կան հողեր, որ կարող էին արտ դառնալ, բայց արտ չեն, կան տեղեր, որ պտղատու վարելահող դառնալու համար աշխատության են կարոտ. հարկավոր է մաքրել թփերն ու մացառները, հարկավոր է աղբով պարարտացնել կամ ջրել: Բայց մեր գյուղացին շատ վախկոտ է, նա չի կամենում, չի հասկանում, որ կարող է անել. նախ պետք է ապահով լինի, որ մի բան կստանա, որ ապա աշխատե: Նրան շրջապատող վայրենի բնությունը իր անհամար դժվարություններով չի դրել նրա մեջ փորձասեր հոգի, տոկուն, համառ մրցության պահանջ: Նա գուցե չի էլ հավատա, որ աշխարհում ապրում են մարդիկ, որոնք ահագին ճահիճներ են վարուցանքի տեղ շինում և հնձում: Անփորձությունը, դարերի ավանդական խրատը որևէ բանի մասին՝ այս ամենը հարկադրում է նրան ընդունել խոժոռադեմ և անհյուրասեր բնության մոտ մի դրություն՝ աղքատ լինել: Ուրիշ ճար չկա, աղքատ

մնացի՛ր. աղքատ ես, և քեզ լավ են հասկանում Յեխ-Չորի, Հավապտկի, Արջաձորի, Կրատափի և այլ տեղերի անտառները. այսպես պետք է հասկանալ դրությունը: Իսկ երբ միանգամից աղքատությունը կոխում է, մնա՛ս բարյավ ամեն տեսակ բարօրություն. հող էլ լինի, չի մշակվիլ, նա անտրտունջ կքնե առանց վերմակի և ման կգա այնպիսի արխալուղ հագած, մի թևքը միայն կարելի է կուռը գցել: Նախապաշարված է գյուղացին, կաշկանդված հոգեպես. իր այդ դրությունը ճակատագրական է համարում և երբ տեսնում է, որ հողագործությունը մի հատ եզնով գլուխ չի գալիս, ինքն իրան համոզում է, որ վարելը նրան չէ տված, գնում է հեռու տեղեր, ուր արտերը շատ կան, մշակ է դառնում, հնձում ուրիշի արտերը, որ գոնե իր ստացած հնձավարձով ապրե կես կուշտ և կես քաղցած: Ինձ պատմում են Քոլատակ գյուղի մասին, որ գտնվում է Հակոբա վանքի մոտ: Գյուղացիները համարյա թուրք թափառականների օգնությամբ և տուրքով են ապրում, երբ նրանք Խաչենագետի ափերով սարն են գնում կամ սարից գալիս են: Ճանապարհի վրա սոստուր են սկսում, թուրքերին ընկույզ, շինած մահակներ են ծախում: Թուրք թափառականների շնորհիվ ապրե՛լ... երբ այդ թուրքերն իրանք ողորմելի թշվառներ են՝ սար ու ձոր ընկած...

Այս ամենից հետո ես մտաբերում եմ ներկա տարին, որ այնքան վատ է, այնքան դառն: Չափից դուրս անձրևներն այս տարի գյուղացու շատ հույսերն են փչացրել, դաշտը մի չնչին բան է տվել, այս պատճառով հենց այժմ, դեռ աշունը չսկսված, հացի պակասություն է. ես չտեսա մի տեղ, ուր գանգատ չլիներ, խորշահար արտեր տեսա, որ թողել են՝ իմանալով, որ արդյունք չկա: Եղած ցորենը սև է, անհյութ, հաց չի դառնում, մինչև որ կորեկ չեն խառնում: Ունևորների համար էլ զգալի է պակասությունը, ինչպե՛ս պետք է մյուսներն ապրեն: Պետք է երևակայել, թե ինչ օրի մեջ կլինին գյուղացիները, երբ երկիրը ծածկված կլինի խոր ձյունի տակ: Սարսափելի՜ բաներ: Մի քանի ամսից հետո ձյունը կգա, այս լեռները, անմատչելի անտառները բոլորովին կկտրվին ամեն հաղորդակցությունից: Որտեղի՞ց օգնություն ստանան, և ո՛վ կտա: Մովը, ինչպես և տարափոխիկ հիվանդությունը, ամեն անգամ անարգել կարող են գյուղը մտնել, գյուղացու բկիցը կախվել: Գյուղացին ամեն դեպքում է անպատրաստ և անփորձ: Պաշար պահել չգիտե, հասարակական ամբարի գաղափարը երկնքի աստղի պես հեռու է նրա հասկացողությունից: Առատ տարիների թողած ավելորդը վաղուց ծախել, կերել է, այժմ, ինչպես ասում են, մատը բերանումն է մնացել: Կար մի ժամանակ, այդ

գյուղացին ցորենի առևտուր էր անում: Փողը չափազանց քաղցր բան է, ունևորն ու չունևորը ծախել են այն, ինչ կարողացել են բերանից կտրել: Եվ այժմ ահա պակասություն է, թանկություն է. ո՞ւր գնա: Նա ծախել է, որովհետև չգիտե, որ իրան միջոտ պաշար է հարկավոր, չգիտե, որովհետև գյուղացի է, որը բացի դրանից շատ ուրիշ բաներ էլ չգիտե: Իսկ նրանք, որոնց ձեռքում կային թվանշաններ, և որոնց առաջ գիտության թեորիան շատ և շատ հետաքրքիր հետևողություններ, հաշիվներ էր բացել, ծափ էին զարկում ուրախացած, որ մեր երկիրն էլ արտահանում է հում ապրանք: Միայն այս փաստը՝ ցորենով լիքը վագոնների երկար շարքը, ուրախացնում էր, և չգիտեին, որ այդ արդյունահանությունը քամում, սպառում է երկրի ներքին ուժերը: Մոռանում էին այդ պարոնները, որ մեր երկիրը չունի հաղորդակցության հարմար ճանապարհներ, որ մեր գյուղացիները ապրում են սարերի և ժայռերի գագաթներին, այնպիսի տեղերում, ուր միայն ամառն է հնարավոր երկար գնալ ու գալը, պակասության, սովի ժամանակ աղետալի դրության մեջ կլինի՝ առանձնացած լինելով մյուս տեղերից: Հիմա հրամայեցեք, տեսեք: Այն տարին մենք էժան հաց տվինք ֆրասիացուն և գերմանացուն, նրանք լավ ապրեցին: Հիմա մենք ենք դժվարության մեջ, հիմա էլ թող իրանք ցորեն բերեն, մեր խաչենցուն կամ վարանդեցուն տան, ետ ստանան իրանց տված ֆրանկները: Թո՛ղ ստանան, գյուղացին ուրախությամբ կտա, միայն թե հարկադրված չլինի իր սոված երեխայի բուռը, հացի փոխարեն, երկու-երեք եփած բակլա կամ սիսեռ դնել:

Մենք սխալվում էինք, ուրեմն մեր ուրախությունը անհիմն էր: Եվ դեռ շատ կսխալվենք, շատ բաների վրա կուրախանանք՝ փոխանակ տխրելու, որովհետև մեր երկիրը, մեր տունն ու տեղը չենք ուսումնասիրել: Վանահայր վարդապետի պատմածները իմ մեջ զանազան մտքեր են հարուցանում: Ես հանկարծ հիշում եմ ռուսաց գրականությունը, մտաբերում եմ, թե վերջին տարիներս ռուս ինտելիգենցիան ինչ տեսակ դիրք է բռնել դեպի գյուղացին: Ուսպենսկի, կոմս Տոլստոյ, Զլատովրատսկի իրանց գրվածքներով, լրագրության մի հայտնի մասն իր քարոզներով անցնում են իմ հիշողության միջով: Գեղարվեստը, հրապարակախոսությունը, մասնագիտությունը միացած, ձեռք ձեռքի տված՝ մտել են գյուղական աշխարհը, փորում, ուսումնասիրում են, զարմանալի փաստեր են դուրս հանում: Գյուղացու կյանքը, պատկերը պարզվում է, բարձրանում մտածողների աչքի առջև: Ես հավատացած եմ, որ մեզանից ամեն մեկը, որ գոնե մի տարի շարունակ ռուսական

նոր գրականությանն է հետևել, շատ լավ հասկացողություն կլինի կազմած ռուս գյուղացիների նիստուկացի, հոգեկան ընդունակությունների, բարի ու չար գործերի մասին: Գրում են և չեն բավականանում միայն մտքեր առաջարկելով, գրելով: «Գյուղ համեցեք, պարոններ, գյուղ համեցեք», կոչում են նրանք՝ առանց հանաքի, լրջությամբ, զինվորական բազմաթիվ առողջ մտքերով և փաստերով: Հրավիրում են ինտելիգենտներին, որոնք մայրաքաղաքներում հալվում են, մաշվում՝ չիմանալով, թե ինչ անեն: Ռուսաց հարգելի թերթերից մեկը՝ «Неделя»-ն, ահա՛ քանի տարի է, արծարծում է այն միտքը, որ ինտելիգենցիան իր կոչումը կարող է պարզել այն ժամանակ միայն, երբ պատրաստ ու փափուկ պաշտոնների ետևից վազելը կթողնե և ետ կդառնա գավառները. այդ հարցը այժմ էլ ռուս պարբերական գրականության օրվա հարցերից մեկն է: Հազվագյուտ բան չեն այս տեսակ նկարագիրները. «Թե ինչպե՛ս ես սովորեցա վարն ու հունձը»: Տպագրվում էին Գլեբ Ուսպենսկու հոդվածները «Живые цифры» վերնագրի տակ, որոնք հիացնում են ընթերցողին. հասարակ ժողովրդի կյանքը, նրա կրած աշխատանքը, ապրուստը այդպես գեղեցիկ ուսումնասիրված և մի տաղանդավոր գրչի տակ նուրբ գծագրություններով պատկերացած էր, որ ընթերցողը չէր կարող բաժանվել գրքից, չէր կարող չհափշտակվել, չհիանալ: Եվ ո՞ր մեկը հիշես:

Այս ամենը հիշելուց հետո, երբ ետ եմ դառնում մեզ մոտ, տեսնում եմ խաչենցու դրությունը իր լեռների և ծմակների մեջ, ես հարցնում եմ. «Մի՞ թե մեր մեջ չէին կարող գտնվել մարդիկ, որոնք եթե ոչ վարուցանք անեին, գոնե ուսումնասիրեին, նկարագրեին այդ կյանքը»: Այդ հարցը տալիս եմ ինձ և ծիծաղում: Ինչպե՞ս կարելի է մինչև անգամ այդ տեսակ հարց դնել. բա՞ն չունես, խելքդ գլխիդ չե՞: Այդ տեսակ սառն, արհամարհական հարցեր կարելի է լսել մեր մեջ: Ո՞վ է գնացողը, անողը: Երիտասարդը համալսարանում ուսում է ստանում և վերջացնելուց հետո, քանի որ թարմն է, ջահել է, հարցնում է՝ ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ: Իսկ երբ մի քիչ ման է գալիս, աշխարհի համն ու հոտն է առնում, տեսնում ես՝ լռեց, այդ հարցն էլ չի կրկնում. նա շտապում է պսակվել և մի լավ յուղալի պաշտոն ձեռք բերել, այնուհետև համալսարանական ուսումը նրա ձեռքում մի զենք է, որով հասարակ մահկանացուների կարելի է կռացնել նրա առջև, հեղինակության փառքը վայելել: Բայց ինչո՞ւ խոսենք միայն համալսարանների մասին, ահա ուրիշ դասակարգի երիտասարդներ, որոնք ըստ երևութին իրավունք չպիտի ունենային պատրաստ պաշտոն ու փափուկ ռոճիկ որոնելու – դրանք նույն այդ գյուղացիներ-

րի որդիներն են, որոնք մի կերպ միջին ուսման տեր են դարձել: Հենց որ Մպենսերի, Բոկլի, Կանտի անունները լսում են և հասկանում նրանց ինչ լինելը, իսկույն մեծ կենտրոններ են վազում. Քանի՜ քանիսը այս բուստին քաղցած նստած են նույնիսկ Թիֆլիսում, երևակայում են իրանց մի կերպ նահատակներ, մի կերպ չգնահատված մեծություններ և թշվառ, աննպատակ կյանք են փչացնում: Ոչ միայն գյուղը, այլև՝ գավառական քաղաքը, երևակայում են նրանք, չի կարող տեղավորել իր մեջ նրանց պես մեծությունը: Ուստիս փախչում են: Փորձի՛ր հենց այսպես խոսել դրանցից մեկի հետ:

- Մպասի՛ր, պարո՛ն, ինչո՞ւ այդքան շուտ փախչում ես այստեղից:

Պարոնս քիթը վեր է քաշում, արհամարհանքով ասում է.

- Կյանք չկա:

Կյանք չկա... Բայց տեսնել մեծ քաղաքի առօրյա իրարանցումը, իլանալ նրա աղմուկի մեջ, ամեն անգամ երեսառերես շփվել անատակության, մարդակերության, կեղտի և ապականության հետ, տեսնել քաղաքակրթության արտաքին շուքը, լպստած, զարդարած պատկերը և միննույն ժամանակ հոգեկան դատարկություն, ամեն զրկանք կրել՝ սա կյանք է... Չկան մշակներ, իսկական մշակներ, որոնց համար գործը հոգեկան պահանջ լիներ, որոնց համար աշխատությունը պարծանք և երախտապարտություն չլիներ: Մենք անում ենք մի բան և, դեռ կեսին չհասած, պահանջում ենք, որ մեզ ճանաչեն, պատվեն. և երբ այդպես չի լինում, վհատվում ենք, ընկնում:

- Այս կողմերի գյուղացիների մեծ մասը վերմակ չունի, որ մտնե նրա տակը ու քնե,- ասում է մի պատահական վարդապետ:

Մենք պլշում ենք, զարմանում... Մի՞թե այդպես է:

ՉՈՐՐՈՐԴ ՕՐ

Ֆիզիկական և հոգեկան տանջանքներից հետո հանգիստ քնել, արեգակը ծագելուն պես վեր կենալ, նայել փոքրիկ և անշուք պատուհանով, տեսնել մի պարզ և չքնաղ առավոտ, որի մի մասը ամառային է, մյուսը՝ աշնանային, կլինի՞ արդյոք մի ուրիշ բավականություն՝ ես մինչև օրս չգիտեմ:

Հակոբա վանքը այսպիսի մի առավոտ պարզեց: Գլուխս բարձրացնում եմ, Խաչենի խրոխտ լեռների առավոտը իր հսկայական շվաքներով հալածում է ինձ մեր քնարանից: Հագնվում եմ շտապով, շորերիս կեսը թողնում եմ թափված և դուրս գնում: Մենյակը, որ մեզ այնպես լավ հյուրասիրել է

գիշերային մռայլ և տանջանքներով լիքը անտառի ծայրում, մի շատ ողորմելի, ավերակ շինություն է:

Իմ առջևն ընկած է մի երկայն, նեղ հովիտ, որի մյուս կողմից ընկած է մի ուրիշ լեռնաշղթա: Այդ շղթայի ստորոտով հոսում է Քոլատակի գետակը, որ հայտնի է իր քաղցրահամ ձկներով: Իսկ ամենաբարձր գագաթներից մեկի վրա՝ առավոտյան երկնքի կապուտակության մեջ, բազմած է Կաչաղակաբերդը: Նա իմ հանդեպն է, և իմ ու նրա մեջ ուրիշ սար չկա, այլ միայն՝ օդի օվկիանոս, որ թույլ է տալիս ինձ բավական հեռավորության վրա տեսնել բերդի մարմինը, որ լուսավորված է արեգակի լույսով և բարձրացած խոր ձորերի վրա, որոնք դեռևս ընկղմված են գիշերվանից մնացած կիսաթափանց կապուտակության մեջ: Կաչաղակների բերդը երկար դեպի իրան է ձգում նայողին, բայց անորոշ և անհասկանալի է մնում նրա առջև: Նկատելի են մոխրագույն սեպացած ժայռեր, որոնք երեք կողմից վիթխարի պարիսպներ են կազմում: Նայում ես և կարծում, թե այդ բերդը շինված պատրաստված է մի ուրիշ տեղ և բոլորովին պատահաբար դրված է այս սարի գլխին իբրև մի գլխարկ: Դեպի արևելք երևում են լեռներ և լեռներ, որոնք մի տեղ մոտենում են միմյանց և նեղում Խաչենագետը: Այդտեղ երևում է Ցեխ-Չորի անտառը, իսկ նրա ետևում բարձր է տարել իր գլուխը Պտկի ս. Գեորգի սարը. նրա գագաթին կանգնած է մի վանք, որ սպիտակին է տալիս: Իսկ արևմտյան կողմից ընկած է այս գիշեր մեր անցած անտառը, որի շարունակությունը գալիս է վանքի շուրջը պատում և իջնում դեպի հովիտը:

Ս.Հակոբա վանքը հասարակ և անզարդ շինություն է: Փոքրիկ տաճարը շրջապատած է բազմաթիվ նեղ ու մթին խուցերով, ծակ ու ծուկերով: Թեև վանքը հին է, Գանձասարից էլ հին, բայց, ինչպես երևում է, շատ անգամ վերանորոգված: Նախկին շինության քարերը վերանորոգիչները առանց որևէ հարմարության և ճաշակի դրել են պատերում, այնպես որ գերեզմանաքարը սյունի վրա է երևում, խաչքարը՝ առաստաղի և պատի մի մութ անկյունում: Ամբողջ շինությունը մի անշնորհք կարկատանի տպավորությունն է թողնում: Ինչ ասել կուզի, այս վանքը Գանձասարից էլ վատ է պահվում. փայտի մասերը փտել են, կախ ընկել, ավերակը կատարյալ ավերակ է: Բայց սա էլ հին ժամանակները հռչակավոր վանք է եղել և, կարծեմ, աթոռանիստ: Նրա վիճակը կոչվելիս է եղել Մեծարանց վիճակ: Պատերի մեջ դրած հին քարերն ունին արձանագրություններ: Ժամատանը կա Հակոբոս արքեպիսկոպոսի և «Մեծարանց հայրապետի» գերեզմանը, որի արձա-

նագրությունը կրում է 1223 թվականը: Գավթում թաղված է Աղվանից Հովհաննես կաթողիկոսը, մի տեղ դրած է մեծ իշխան Ջալալի որդի Հովհաննես կաթողիկոսի խաչքարը, իսկ մի ուրիշ արձանագրություն, որի գլխին դրած է «Ջալալին հրաման», վկայում է, որ ծովատեղ անունով հողը վանքին է նվիրված 1251 թվականին. այժմ էլ այդ հողը վանքի սեփականությունն է: Ջալալ և Ջալալ իշխան ամեն տեղ... Ամեն քարի վրա, ամեն մի մամռապատ արձանագրության մեջ, ծմակների խորքերում, սարերի ճակատին և ձորերի հատակում միշտ այս անունն է հիշվում...

Վանքի նշանավոր սրբությունն է Մծբնա Հակոբ հայրապետի աջը, որ մեծ հարգանք ունի Ղարաբաղում: Աջը դրած է մի փոքրիկ խուցի մեջ, փայտի փոքրիկ գմբեթի տակ: Հիվանդությունների, երաշտի և վնասակար անձրևների ժամանակ աջը տանում են գյուղերը, Շուշի, թափոր են անում: Այս վանքն էլ ունի կալվածներ՝ մոտ երեք հազար դեպատին տարածությամբ, բայց, ինչպես ասացի, արդյունք շատ քիչ է ստացվում:

Ս.Հակոբի աջը համբուրելով՝ ձի ենք նստում և շարունակում մեր ճանապարհը: Իջնում ենք հովիտը, անցնում ենք մի քանի թումբերով և հասնում ենք Խաչենագետ՝ Առաջաձոր գյուղի դիմացը, գնում ենք գետի մերկ ափով: Մերկ եմ ասում, որովհետև այդ հարթ ու ջրառատ տեղերում այգիներ չկան. զարմանալի՝ ծուլություն և գյուղական անհասկացողություն: Խաչենագետի ձորի իմ տեսած մասում մինչև Գանձասար այգիներ չկան, եթե չհաշվենք մեկը կամ երկուսը: Բնակիչները ուտում են, ինչ տալիս է անտառը՝ զկեռ, ընկույզ և այլ վայրենի պտուղներ:

Անցնում ենք Ցեխ-Ձորի մոտով և շուտով սկսում ենք բարձրանալ մի ճանապարհով, որ թանձր անտառի միջով տանում է դեպի Պտկի սուրբ Գեորգ: Ծմակը Ցեխ-Ձորի ծմակին նման չէ, թեև նրա հարևանն է, ծառերն այնքան բարձր չեն:

Կեսօրից անց հասնում ենք Ուլուբաբ անունով փոքրիկ գյուղը, որ մի շատ գեղեցիկ տեղ է ընկած: Տները (մենք համբեցինք՝ տասմեկ հատ էին) միմյանց կողքի են շինված և նայում են մի լայն փողոցի վրա: Տեղը բլրի գագաթ է՝ ծածկված կանաչ խոտով. կանաչ լանջիվերը վերջանում է մի անտառապատ ձորի մոտ, իսկ նրանից դենը երևում են նույն տեսակ կանաչ տեղեր ծմակների մեջ: Մի քանի տասնյակ տարիներ սրանից առաջ է գյուղն այստեղ շինվել. առաջներում Ուլուբաբը եղել է Խաչենագետի ափին, բայց, պատմում են, մի ինչ-որ հիվանդություն մի քանի տարի շարունակ բույն է

դրել գյուղի մեջ, և շատ մարդ է կոտորվել, գյուղը ցրվել է, մի մասը ուրիշ գյուղեր է գնացել, մնացորդը բարձրացել է այս բարձրության գլուխը: Բայց, երևի, հեշտ չէ Խաչենի գեղեցիկ տեղերը գրավելը. ուլուբաբցիք շատ դժվարություններ պիտի կրեն ջրի պակասության պատճառով. մի բեռն ցորեն աղալու համար նրանք պիտի իջնեն այդ բարձրության գլխից, Խաչենագետի վրա շինած ջրաղացների օգնության դիմեն:

Ուլուբաբի մոտից երևում է բարձրության գլխին նստած վանքը, դեպի ուր տանում է մի քարքարոտ և դժվար կածան: Գնում ենք այդտեղով և, քրտինքի մեջ կորած, միանգամայն փշրված հասնում ենք վանքը: Մենք այստեղ պիտի գիշերենք և մեր ձիերին հանգիստ տանք: Մենակ մենք չէինք. օրը շաբաթ էր, և կային ուրիշ ուխտավորներ էլ:

Սուրբ Գեորգի սարը շատ բարձր է. վանքի տեղը այդ սարի ամենաբարձր կետն է, և շրջակա ուրիշ սարերը՝ Կաչաղակաբերդ, Գանձասար, բավական ցած են երևում: Մարդու առջև լայն ու մեծ տեսարան է բացվում, հորիզոնը շատ հեռու է գտնվում, և այս բարձրության գլխին կանգնած՝ կարելի է տեսնել բյուրավոր զանազան տեսարաններ և տեղեր: Նայում ես դեպի արևելք. անսահման տափարակ տարածություններ այժմ դեղնած, անկենդան փոխված են այս հսկայի ոտների տակ: Հսկան այնպես տիրաբար բարձրացրել է իր գլուխը, որ ամեն տեղից ցույց է տալիս իր տիտանական հասակը: Ասում են, որ այստեղից երևում է Կուրը, երկաթուղու Եվլախ կայարանը, իսկ այս կողմերի մի բնակիչ հավատացնում էր, որ Բաքվից շատ հեռու չգտնվող Հաջի-Կաբուլ կայարանից էլ տեսնվում է Սուրբ-Գեորգը: Հյուսիսային, արևմտյան և հարավային կողմերում երևում են անթիվ սարեր, հովիտներ, երևում է Շուշին, կարծես ձեռքի ավիի վրա դրած, երևում են և Շուշուց դենը գտնվող սարերը:

Վանքի տեղը, ինչ ասել կուզի, գեղեցիկ է, բանաստեղծական: Մեպտեմբերի սկիզբն է արդեն, բայց խոտը դեռ կանաչ է և թարմ: Թանձր անտառը, սարի բոլոր կողմերից բարձրանալով, գալիս է, վանքի շուրջը մի բոլորակ կազմում: Վանքը մոտավորապես երկու հարյուր տարվա շինություն է՝ հասարակ, զուրկ հին վանքերի գեղեցիկ քանդակներից. մինչև անգամ վանքի հիմնադիր Հովսեփ վարդապետի արձանագրությունը քարի վրա չէ, այլ աջակողմյան խորանի կամարակապ առաստաղի ծեփի վրա: Այդ խորանում գտնվում է հիմնադրի գերեզմանը, որի վրա մոմ են վառում, իսկ բեմի առաջ մի ուրիշ գերեզման ծածկված է բազմաթիվ մոմերով՝ ա՛յդ է ս.Գեորգի

մասունքների պահարանը, որ մեծ քանակությամբ ուխտավորներ է բերում Ղարաբաղի ամեն կողմերից: Ներսից էլ շինությունը անպաճույճ է, բայց լավ ոճ ունի. կտուրը դարձյալ խախտված է, և ջրի կաթիլները այստեղ էլ ավերմունք են գործում:

Թեև ամառվա տոներին այստեղ թափվում է ուխտավորների ահագին բազմությունը, բայց ոչինչ հարմարություն չկա նրանց համար. երկու հատ սենյակներ կան, որ կարող են ապաստանարան դառնալ: Իսկ մենք քնելու շոր, մինչև անգամ հաստ վերարկու էլ չունինք, ուրեմն ի՛նչ կլինի մեր դրությունը: Շատ տխուր հարց է, մանավանդ մի այսպիսի տեղ, ուր բնությունը հաստատակամություն չունի և ուզած ժամանակը ցույց է տալիս իր այլանդակ քմահաճություններից մեկը. ահա Գանձասարի գլխին հավաքվել են ամպերը, որոտոցի թույլ ձայնը մեր ականջին է հասնում: Մենք տեսնում ենք, թե ինչպես թափվում է անձրևը Գանձասարի գլխին. երկնքի մի ծայրում հավաքվել են ամպերը, կախ ընկել երկրի վրա, իսկ մայր մտնող արեգակը մի կողմից իր ծուռ ճառագայթներով լուսավորում է այդ ամպերն ու անձրևը, որոնք հետզհետե դեպի մեզ են գալիս: Դրանց ենք սպասում ճնշված, վիստված սրտերով: Բայց անձրևաբեր ամպը անցնում է մեզանից բավական հեռու և անշարժանում է երկնքի մի ուրիշ կողմում:

Հետզհետե գալիս են ուխտավորներ, բերում են ոչխարներ. նրանք իջնում են բաց երկնքի տակ, կրակ են վառում, փռում են կապերտներ և իսկույն իրանց բանին ու գործին են գնում, որը գնում է ջուր բերելու Ուլուբաբ գյուղի մոտից, որը փայտի պատրաստություն է տեսնում, մարդ ու կնիկ, հարս, աղջիկ, երեխա միմյանց են խառնվում. մեռած, սառած գազաթը կենդանություն է ստանում: Բոլոր ուխտավորները գյուղացիներ են:

Այդ իրարանցումը, հանաքն ու ծիծաղը, բարձր ու հանդարտ խոսակցություններն ինձ վրա շատ ախորժելի տպավորություն են գործում, և ես կանգնած տերտերի սենյակի կտրին՝ խորին ուշադրությամբ դիտում եմ դրանց, տեսնում եմ հայ գյուղացու կյանքի նշանավոր երևույթներից մեկը. տեսնում եմ և հիշում իմ մանկությունը, այն երջանիկ և միշտ քաղցր ժամանակները, երբ այնքան ոգևորված, ուրախ և զվարթ մենք էլ ուխտ էինք գնում, տեսնում էինք շատ տեղեր, շատ մարդիկ. կարելի՞ է մոռանալ այն հոգեկան երջանիկ տրամադրությունը, այնքան մեծ ուրախությունը...

Ուխտագնացությունը, այո՛, հայ կյանքի մի հաստ երակն է կազմել և այժմ էլ կազմում է: Անհիշելի ժամանակների սրբագործած այդ սովորությունը իր

մեջ ծածկած ունի շատ խորհրդավոր, շատ հետաքրքրական գծեր: Մեր ժամանակը իր վայրուվեր անող, դեմք ու կերպարանք փոփոխող ձեռքերով դեռ չի մոտեցել այս սովորության, չի խախտել նրա հիմքերը. էականը, հնության կտակած կարգն ու կանոնը, ծեսն ու արարողությունը մնացել են և դեռ շատ կմնան: Էականն ասացի, որովհետև մի քանի երկրորդական կողմերը փոխում են իրանց կերպարանքը, կապ ունին ժողովրդի արտաքին կենցաղավարության հետ, որ, ինչպես հայտնի է, ժամանակի փոփոխություններին է ենթարկված: Քաղաքն ու նրա քաղաքակրթությունը գյուղերի վրա մեծ ազդեցություն են գործում, հին, նահապետական օջախը երկաթի վառարաններին է իր տեղը տալիս, մեծ փափախը՝ մահուդի թեթև գլխարկին, և գյուղացին, որ օտարության մեջ քիչ «լուսավորություն» և փող է ձեռք բերում, փոխում է իր կնոջ հագուստն անգամ. այս է պատճառը, որ ուխտատեղերում տեսնում ես գյուղական կարմիր հագուստների մեջ եվրոպական ճաշակով կարած հագուստներ, որոնց պակասում է միայն տուրնյուրը, այն էլ երևի հեռու չէ: Պանդխտությունը, որ դժվարություն չունի նաև մեր անչափահասների համար, հաստատել է մեր մեջ մի զբոսասեր հոգի: Առաջվա ժամանակները, կամ խոսելով պառավների լեզվով, մեր ժամանակները ո՞վ է տեսել, որ փոքր տղան այնպիսի երեսպնդությամբ փողոցում երգեթրքական զանազան կեղտոտ երգեր, ինչպես այժմ երգում է կոշկակարի աշակերտը, երբ, իր վարպետի ծանր շնչից ազատվելով, երեկոյան դուրս է վազում խանութից: Նա դեռ չմեծացած՝ մեծ է, գրպանում պահում է ատրճանակ և, քաջ ձևանալով, գոռ է տալիս կոկորդին, բղավում է իրան անծանոթ լեզվով, որպես թե երգում է. լսողը գայրանում է, ուզում է բռնել նրան, ականջիցը ձգել, բայց մի թե դրանով կարող կլինի կտրել այն բարակ ձայնը, որ երգում է ծծերի գեղեցկությունը, երգում է սիրեկանի հետ անցկացրած գիշերները: Երգիչները շատացել են, պետք է որ երաժիշտներն էլ շատանան. և ահա պատրաստ է գարմոնյան, ինչպես մի երաժշտական գործիք, որի վրա հեշտ կարելի է սովորել: Պատանիների ձեռքին գարմոնիան, պետք է ասել, շատ է տանջվում, որովհետև նրան հարկադրում են հյուսիսային եղանակների տեղ հնչեցնել մեր տեղական ծանր, առաձգական եղանակները, որոնց կախարդիչ ուժը երկար ու ձիգ, բարակ ու ոլորուն ելևէջների մեջն է, իսկ գարմոնիան երբեք չպիտի կարողանա այդ տեսակ ձայներ հանել, դրանց համար լեզու չունի. այս պատճառով էլ նա իր կես եվրոպական և կես ասիական սրտով ու մտքով միայն ծիծաղ է պատճառում, մինչև որ չի ձանձ-

րացնում: Բայց ուխտագնացության համար սրանք մանր հանգամանքներ են. նայե՛նք, ուրիշ բաներ տեսնենք:

Ուխտագնացությունը պարզում է, հրապարակ հանում ժողովրդի հոգին, նրա մտավոր կյանքի այնպիսի կողմերը, որ ուրիշ անգամ դիտողության տակ չի մտնում: Հեթանոսականը խառնվում է քրիստոնեականի հետ՝ հաստատելով, որ այդ ամեն կարգ ու կանոնը ստեղծել է ինքը՝ ժողովուրդը, իր խելքի և մտքի ուժով, որ այդքան պինդ և տաք է պահում մի անգամ հաստատվածը, մի ժամանակ հասկացածը: Տեսնում ես մի ժողովուրդ, որ սիրով և անսրտունջ կրում է իր խաչը, որովհետև հասկանում է իր ցավը և այդ ցավի դարմանն էլ գիտե: Ահա բերել են մի ծանր հիվանդ, վերմակների մեջ փաթաթված: Նկատեցե՛ք, վերջին հույսը սուրբն է. դեղ ու բժիշկ հեռացած են հիվանդից: Փորձեցե՛ք մտածել այս դեպքի վրա. չե՞ք տեսնում արդյոք, թե որքան առանձնացած, կղզիացած է ժողովրդի միտքը: Աշխարհում կա և գոյություն ունի բժշկությունը, որ վատ թե լավ՝ գործ ունի մարդու հիվանդությունների հետ, բայց նրա հետ գործ չունի գյուղացին, նրա ձայնին ականջ չի դնում թե այն պատճառով, որ այդ ձայնը նրան շատ տկար կերպով է հասնում և հեղինակություն չունի, և թե իմանալով, որ յոթն բժիշկ մի տեղ էլ հավաքվեն, ս. Գեորգի գորության չեն հասնի: «Կրոնենք սուրբի փեշիցը», ասում են: Եվ բռնում են, պինդ են բռնում, աղաչում են, պաղատում: Աղաչանք, պաղատանք. ահա՛ այն միակ գորավոր զենքը, որ ունի գյուղացին իր կյանքի դժվար ընկերներում: Նրան կանչում են դատարան, նա չի գնում, և երբ նրան մեղադրում են, դատապարտում, երբ բոլոր դռները փակվում են նրա առջև, նա սկսում է աղաչել, պաղատել: «Տնաշե՛ն,- ասում են,- եթե այսքան մի սուրբի աղաչեի, հիմա սրտիս ուզածը կատարվել էր»: Բայց աղաչանքը կեղծ զենք չէ, արհեստ չէ, որ գործ են ածում անզգայաբար: Պետք է իմանանք, որ աղաչանքը, «փեշ բռնելը» հավատով և հուսով ապրող սրտի խորքիցն է գալիս: Անհասկացող է այդ մարդը, տգետ է. նայում է իր երկնքին, տեսնում է իրան ծանոթ աստղերը և հավատացած է, որ ուրիշ տեղ, ուրիշ երկրում չկան այսպիսի երկինք և աստղեր: Նրան փող է հարկավոր, և նա գնում է վաշխառուի մոտ «հոգին գրավ դնում», փող վերցնում, իր տունը քանդում. այդպես է անում, որովհետև ուրիշ ճանապարհ չի ճանաչում: Միտքն ու հասկացողությունը սահմանափակված են, մի նեղ շրջանի մեջ մտած. և երբ նրա հասկացողությունից դուրս բան է պատահում, նա իրանն անել գիտե: Երբ ծմակում ծառ է կտրում, որ իր տոմսակի ժամանակն անցել

է, և բռնվում է՝ սկսում է աղաչել, և երբ նրա որդին սաստիկ մրսում է և թոքերի բորբոքումն ստանում՝ նա էլի սկսում է աղաչել, պաղատել: Նրա բոլոր հասկացողությունները հավատի վրա են հիմնված, ջերմ հավատի վրա, և ինչպես հավատում է, որ օտար երկինքը աստղեր չունի, այնպես էլ հավատում է, որ անտառապահը իր աղաչանքին կլսե: Ի՞նչ դժվարություն կարող է լինել, երբ անկեղծ աղաչանքը, պաղատանքը կա: Ամենքն էլ սիրտ ունին, ամենքն էլ հարգում են սրտի սրբությունը: Եվ տեսեք: Ամբողջ ընտանիքը մի երկար շարք կազմած, մատաղացու ոչխարը առաջ զգած, ոտնաբոբիկ պտույտ է գալիս վանքի շուրջը, յոթն անգամ պտույտ է գալիս վանքի շուրջը, յոթն անգամ պտույտ է գալիս, հայտնում է, որ ինքը, այդ ընտանիքը, սուրբի ոտի տակ մատաղ է գնում: Ամենքն այդպես են համոզված, մինչև անգամ վեց տարեկան երեխան էլ ունի դեմքի վրա մի տխուր, աղաչավոր արտահայտություն: Վերջանում է այդ արարողությունը, արի՛, նայի՛ր, վանքի մեջ նույն ընտանիքը սյունների մոտ ծունկ է չոքում և այդտեղից չոքեչոք գնում է դեպի գերեզմանը, մոմ է վառում, ուխտ է անում: Բերանը լուռ է, և միայն երբեմն ձեռքը բարձրանում է կրծքի վրա և զարնվում այդ տեղին, երեսը քսվում է քարերին, մինչև անգամ աչքերը թացանում են: Այնուհետև ընտանիքը մեծ ահով և դողով վերցնում է գերեզմանի ծոցից քիչ հող, փաթաթում է և դնում հիվանդի մոտ: Նրան նստացնում են, հողը ջրի մեջ խառնում, տալիս են նրան: Ամենքը երեսները խաչակնքում են, մաշված հիվանդը խորին հարգանքով և հավատով խմում է: Ծնողական մորմոքված սիրտը գեթ առժամ հանգստանում է, և ամենքը խոսում են, սովորական անհոգությունը մտնում է նրանց մեջ. իհարկե, չեն էլ կարծում, թե գուցե հիվանդի այստեղ բերելը ավելի մոտեցնում է օրհասական բուպեն: Ահա՛ սրտեր, որ ապրում են այսպիսի հավատով: Մենակ հիվանդները չեն ուխտ գնում. ամեն մարդ ունի իր սրտի խորհուրդը, իր մուրազը: Վանքի դռանը դրած է մի փոքրիկ քառակուսի քար, որ ունի քառակուսի լայն ծակ. այդ ծակով անցնում են չբեր կանայք՝ անլուծյան կապանքներից ազատվելու համար¹: Մնտիհապաշտություն է, իհարկե, կասեն ամենքը: Ինչ անուն ուզում եք՝ տվեք, բայց կարևոր է ոչ թե այն, որ մարդիկ սնտիհապաշտ են, այլ այն, թե ինչո՞վ են ղեկավարվում և կառավարվում այդ մարդիկ:

¹ Նույն այդ տեսակ մի քար ևս տեսա և Հավապտկի ավերակ եկեղեցու առաջ. ուրեմն այնտեղ էլ մի ժամանակ փորսող են տվել չբեր կանայք: Հավապտուկն էլ, ուրեմն, մի ժամանակ ս.Գեորգի պես հռչակավոր ուխտատեղի է եղել

Ունենալով կյանքի բոլոր հանգամանքների համար մի այնպիսի կարողություն, ինչպես է աղաչանքը, իր բոլոր գործողությունների ժամանակ ունենալով այդպիսի վառ հավատ, որ երեխայական պարզամտություն է առաջացնում, հեշտ կարելի է ապրել:

Ասածներիցս հետո թույլ տվեք ծանոթացնել ձեզ հետ մի անձնավորություն, որ բավական հետաքրքրելի է, որովհետև ավանդական է մեր մեջ, ունի մի տիպի բոլոր հատկությունները: Դա սուրբի «մուղղուսին է», այսինքն՝ լուսարարը և միննույն ժամանակ՝ հլու ծառան: Դա մի կարճահասակ, սև մորուքավոր մարդ է, ունի տափակ շրթունքներ, մեծ, սրածայր քիթ և խորհրդավոր աչքեր. գլուխը ծածկած է չթի թասակով, որ այս տեսակ մարդկանց պաշտոնական գլխարկն է: Արագաշարժ, ամեն ծակուծուկ մտնող, դուրս եկող և շատախոս: Նա գիտե պատմել, գիտե իր պատմությունները աղով անել, քաղցրացնել և այդպես հազար ու մի բան է պատմում, գլխավորապես սուրբի հրաշքները, որոնց ինքն էլ ականատես է եղել: Երեսուն տարի է, որ նա ծառայում է սուրբին. անգրագետ է, բայց այնքան սուր են ականջներն ու հիշողությունը, որ իր մտքի մեջ շատ բան է ամբարել և, ինչպես ասում են, մի տերտերից էլ շատ բան գիտե: Նա մեզ պատմում է, թե ինչպես մի օր նրան երևացել է այս վանքի վանահայրերից մեկը, Ղուկաս վարդապետը, որ հարյուր հիսուն և ավելի տարիներից առաջ է մեռել: Գարնան մի արև օր էր, ասում է, ես նստած էի այստեղ, մանիշակներ շատ կային փոված, բացված, ես նրանց մտիկ էի տալիս, մեկ էլ տեսա մի սպիտակամորուք ծեր վարդապետ, որ ողջույն տվեց և հայտնեց ինձ, որ իր գերեզմանը հողի տակ թաղված է: Վանահայրը բացակա էր վանքից, ես գնացի ցույց տված տեղը, քանդեցի, գերեզմանաքարը գտա, վարդապետը եկավ, տեսավ և զարմացավ: «Մուղղուսին» ցույց է տալիս այդ քարը, որ ցից է դրված մի քանի ուրիշ գերեզմանների մոտ: Հրաշքով բացված գերեզմանը ուխտատեղի է դառել. քարը սևացած է գյուղական պատրույզների ծխից, տապանագրի միայն մի քանի բառերն են գոռով կարդացվում: Ձեռքը ծոցում դրած, «մուղղուսին» կանգնում է նրա մոտ և պատմում է ամեն մեկին այդ հրաշքը, ավելացնում է և այն, որ Ղուկաս վարդապետը մի անգամ էլ երևացել է նրան վանքի մեջ, հրամայել է հիշոցներ չտալ, բերանը մաքուր պահել: Այդ ամենից հետո ինչ կարծիք, որ «մուղղուսին» սուրբի ընտրյալն է, ուստիս պատիվ շատ պիտի ստանա ուխտավոր ժողովրդից: Եվ ստանում է, ինքն է ասում, ապրում է լավ, նրա դեմքը բավականություն է հայտնում: «Բոլորը

մերոնք են», ասում է՝ ցույց տալով ուխտավորներին: Ճշմարիտ է, նա ինքն է, որ այդ գյուղացիներին հրաշքներ է պատմում և ավելի ևս պինդ կապում նրանց ս.Գեորգի հետ:

Ես, իհարկե, «մուղղուսու» պատմության կմախքն եմ դնում. պետք է տեսնել, թե ի՛նչ տեսակ շարժվածքներով, ի՛նչ խոսքերով է պատմում նա: Այս տեսակ առասպելների տոպրակ է կարճահասակ «մուղղուսին». նրան ասում են և հավատում: Ձրիակերության համար հարկավոր էր գյուղացու հավատացող սրտի մի անկյունում մի փոքրիկ տեղ բռնել. «մուղղուսին» կարողացել է այդ անել, վայելում է իր գիտության և իր ընտրյալ հոգու փառքն ու պատիվը: «Բոլորը մերոնք են», ասում է:

Օրն անցավ, երեկո է: Լուսինը լողում է բարձր և պարզ երկնքի երեսին, իսկ նրա տակ անսահման դաշտավայրերն ու մեծամեծ սարերը ընկղմված են մի կախարդական լույսի մեջ: Անընդհատ փչում է լեռնային ցուրտ քամին, մենք մրսում ենք, կուչ ենք գալիս ահագին խարույկի ծառացած բոցի շուրջը, տաքացնում ենք մեզ: Բոլոր ուխտավորները քաշվել են իրանց տեղերը, ընթրինք են պատրաստում: Խոսք, աղաղակ ու երգ խառնված են միմյանց: Մանավանդ շատ աղմուկ է հանում մի խումբ, որ մեզանից քիչ հեռու է: Այդտեղ կան գյուղական ինքնուս երաժիշտներ. մեկը փչում է իր փողը, մյուսը երգում է: Ուրախություն է տիրում այդ շրջանում. մերթ ծանր և մերթ արագ ձայնում է փողը, միանման խոպոտ ձայներ է հանում նվագողի հաստ ու կոշտ մատների տակից: Տխո՛ւր են մեր եղանակները, մելամաղձոտ, ճնշված, նրանք պիտի ազդեն իրանց ծանր, տխրագին հնչուններով, պիտի ունենան այնպիսի ձայներ, որոնք միանգամայն պիտի սրտից բռնեն: Մենք ուրախանում ենք, զվարճանում տաղտուկ և վհատեցուցիչ եղանակները լսելով, մեր սիրտն այնպես է, որ գեղեցկությունը ըմբռնում ենք նրա տխուր կողմերով միայն. սիրում ենք լսել սիրո մասին և լսում ենք ոչ թե նրա ձայնը, այլ մեր բերանով տխրամած դեմք ենք տալիս նրան, մռայլ, վհատեցուցիչ գույներով ենք նկարում, թե ի՛նչ է նա, և լալով, ողբալով կանգ ենք առնում նրա առաջ:

Մենք մի փոքրիկ պտույտ ենք գործում ուխտավորների շուրջը: Տեսնում ենք ուրախացող խումբը, փողհարին ու երգչին. մնացածները ծափ են տալիս, խրախուսական ձայներ են հանում և գովում են երաժիշտներին, իսկ մեկը, որ երևի ուզում է բոլորի ուշադրությունը գրավել, գուցե մի նոր փեսա, տափակ-տափակ հանաքներ է անում և ամենքի փոխարեն ինքը կուշտ-

կուշտ ծիծաղում: Բացված է պարզ և անպաճույճ սուփրան, որի շուրջը նստած են նաև կանայք ու աղջկերք, նստած են և լուռ: Անցնում ենք. ահա մի ընտանիք, որ, ինչպես երևում է, շատ աղքատ է, նստած է լուռ ու մունջ, ցամաք հաց է ուտում, շոր էլ չեն բերել իրանց հետ, երևի կքնեն գետնի վրա: Վանահայր քահանայի սենյակի առջևով անցնելիս՝ նայում եմ դեպի ներս: Խորին լռություն է տիրում: Անկողնի մեջ պառկած է հիվանդը, իսկ նրա գլխի կողմի պատին կայքրած է մի գույգ մուս, տխուր լույս է տարածում մի անկյունում դրած գյուղական կավե նավթաճրագը: Մի կին արձանացած է հիվանդի մոտ, գլուխը դեպի նրան է կռացրել: Այստեղ ու այնտեղ թափված են մարդիկ, որն արդեն քնել է, որը քորում է իր գրաստը, և որը կոտորում է մորթած ոչխարը:

Մենք էլ վերջացնում ենք մեր ընթրիքը լուսնի տակ: Քահանան մեզ մի վերնակ է տալիս, և մենք պառկում ենք չոր կապերտի վրա, մի կերպ ծածկվում ենք քամու հարձակումներից: Բայց մեր տեղը բոլորովին բաց է, և գիտենք, որ անպատճառ պիտի մրսենք. կրակի բոցը երբեմն ցած է ընկնում, բաժան-բաժան է դառնում և սկսում է սողալ փայտերի վրա, երբեմն էլի սաստկանում է, բարձր խփում, երբ գյուղացի երիտասարդը խանձողները միմյանց վրա է հավաքում: Ես պառկած եմ մեջքի վրա, ուշադրությամբ նայում եմ երկնքին: Այդտեղ՝ այդ բարձրության վրա, մի բան պետք է լինի. այդ գիտե և կրակի մոտ նստած գյուղացին, որ կես ժամ առաջ գուշակում էր, թե քամին շուտով կանցնի մյուս կողմը, և մենք նրանից պաշտպանված կլինենք վանքի պատով: Երկինքը մի բան է պատրաստում. Գանձասարը հանաք չի անում, այն կողմից շարունակ ամպեր են գալիս, դիզվում մեր կողմում: Ահա ամպերի միջից լսվում է մի թույլ թնդյուն, անցնում է մի քանի րոպե, կայծակը սկսում է կայծեր հանել: Տեսարանը գեղեցիկ է: Այստեղ՝ մեզանից բարձր, երկինքը պարզ է, և լուսինը իր քաղցր լույսն է թափում: Տիրում է մի խաղաղություն: Բարակ քամին թեթև քսվում է մեր դեմքերին, բայց այնքան երկյուղալի չէ, որ մենք հեռանանք լուսնի լուսից և պատերի մեջ ապաստան որոնենք: Բոլոր ուխտավորներն էլ վճռել են քնել այդ արձաթափայլ շողերի տակ: Եվ հանկարծ հյուսիսից վրա է հասնում այդ բանաստեղծական անդորրության դեմ մի խոժոռադեմ, երկյուղալի և կոպիտ փոթորիկ. ամպերը եռանդով դեպի հարավ, դեպի լուսինն են արշավում և կարծես ուզում են մինչև տեղ հասնելը վախեցնել, հալածել լուսնին շանթ ու որոտով, որոնք դուրս են թափվում նրանց գորշակապտագույն ծալքերից և

աջուձախ վագում: Կայծակի դեղին բոցը փայլում է լուսնի սպիտակ լույսի մեջ, բայց դեռ անգոր է նրան ոչնչացնելու, կարծես հալվում է, սևանում, կարճանում: Ամպերը գալիս են ու գալիս: Ո՛չ, պետք է փախչել այդ հրեղեն օձերի երեսից, որոնք գալարվում են սարսափելի արագությամբ, ճեղքում են, պատռում իրանց գոյություն տվող ամպերի կուրծքը: Բայց ո՞ւր գնանք, ո՞ւր գտնենք մի ազատ անկյուն: Երկու սենյակները լցված են, մարդ ու անասուն մի հարկի տակ պաշտպանվում են երկնքի պատուհասից: Մնում է միայն վանքը, նա կլինի մեր պաշտպանն ու հովանավորը: Քահանան թույլատրում է, և մենք վերցնում ենք մեր վերմակը, մտնում ենք լուռ ու մոայլ կամարների տակ, պառկում ենք մի անկյունում: Այդտեղից էլ լսում ենք, թե ինչպե՛ս մեզ ծանոթ խումբը շարունակում է իր ուրախությունը: Փողը հանդարտ բռռացնում է, ոտով ու ձեռքով ոգևորության կրակի մեջ ընկած երգիչը իր թուրքերենն է անընդհատ երգում, հանաքչու ձայնը անհոգ որոտում է դրսում:

Մենք քնում ենք: Այդ խոնավության մեջ. այդ չոր գետնի վրա քնելը գուցե մի ուրիշ ժամանակ անխելքություն կհամարեինք, բայց այժմ կատարյալ երջանկություն է, և այնպես քաղցր քնում ենք, որ սաստիկ փոթորիկն ու անձրևը երազ ենք կարծում: Դրսում ինչ ուզում է, թո՛ղ լինի, մերը քունն է:

ՀԻՆՔԵՐՈՐԴ ՕՐ

Գիշերվա անձրևը սաստիկ է եղել. փափուկ ցեխ ենք կոխ տալիս, երբ առավոտը վաղ դուրս ենք գալիս մեզ հովանավոր կամարների տակից: Մոայլ և վիատեցուցիչ է բնությունը, երկնքի երեսին դեռ կուտակված են մոխրագույն ծանր ամպերը, հողը, բույսը, օդը խոնավ են, ցուրտը մարդու ոսկորներին է հասնում: Մեզ ասում են, որ անձրևի հետ հատ-հատ ձյուն է եկել:

Սարից իջնում ենք ուրիշ ճանապարհով, որ համեմատաբար հարմար է այնքան, որ սայլեր են գնում մինչև վանքը: Բայց սայլի ճանապարհ ասելով՝ մեծ բան չկարծեք. նույն լեռնային ճանապարհն է, այն զանազանությամբ, որ քիչ լայն է և այնքան մեծ լանջիվայրեր չունի: Միայն Ղարաբաղի գոմեշներն են, որ այս տեսակ ճանապարհներով սայլ են քաշում:

Օրը հետզհետե բացվում է, արեգակի նվազ լույսը անցնում է ամպերի միջով, տխուր և թույլ լույս է սփռում թրջած երկրի վրա: Պատահում են ուխտավորներ, որոնք մոտիկ գյուղերից վանքն են գնում: Ահա ճանապարհի կողքով մենակ գնում է գեղջկուհին, երեսը ծածկած է, թևի տակ տանում է մի

աքաղաղ: Ահա գնում են և երեք երեխաներ, մի էշ և մի ոչխար: Մեր ձիերը տեսնելուն պես՝ փոքրիկները քաշվում են մի կողմ, կանգնում են, նայում են մեզ զարմացած, բերանները բաց: Նրանց մոտ կանգնած է մատաղացու ոչխարը նույնչափ զարմացած, դունչը վեր ցցած: Եվ երբ մենք անցնում ենք, լսում ենք նրանց կարծիքը, որ շտապում են հաղորդել միմյանց մեր մասին:

- Ռուսներ են, է՛...

Ինձ հետ է Ղշլաղեցի գյուղացին: Հարցնում եմ նրանց ապրուստի մասին: Ապրուստը դժվարացել է, պատմում է նա: Իմիջիպալոց նա պատմում է, թե ինչպիսի՛ «օյիններ» են դնում նրանց գլուխը խեղճ, վիզը ճկած «միրզաները», որ քաղաքում այնպես խոնարհ և աննշան բան են երևում, բայց հենց գյուղերն են գնում, ամոռն են դառնում: Տգրուկներ են դառնում, աներես, անկուշտ սզրուկներ, որոնք գոյություն են ստանում հենց այս գյուղերից: Մի որևէ տեղ գրագրություն սովորելով, գյուղացին վազում է մտնում որևէ դիվանատուն, քիթը կապած հարսի պես ծառայում է, շատ անգամ ռոճիկ չի ստանում, տանում է ամեն տեսակ ստորություն, մոռանում է իր գյուղը, քաղաքացի է դառնում և, մինչև մազերը սպիտակելը մնալով միևնույն պաշտոնում, ապրում է գյուղացու հաշվով, միշտ ի չարն է գործ դնում նրա հավատը, աղաչանքը: Ամեն կեղտոտություն դուրս է գալիս նրանից, այն գյուղացուց, որ ուսումի հետ ստացել է սաստիկ ընչասիրության քաղց:

Հասնում ենք սարի ստորոտը, անցնում Ռև գյուղի միջով: Դա մի փոքրիկ գյուղ է, ունի մի քանդված եկեղեցի, գյուղացիներն այնքան աղքատ են, որ չեն կարողանում եկեղեցու քանդված կտուրը շինել, թեև քահանա ունին: Տները գետնափոր են, ցածրիկ և ողորմելի, մի ողորմելի լանջիվայրից կպած, որի կողքով հոսում է մի ողորմելի բարակ ջուր: Այդ աղքատ անվակն է, որ ջրում է երկու-երեք հատ բանջարանոցներ:

Ռեվից շատ մոտիկ է Ղշլաղ գյուղը, որ թեև նրանից մեծ է, բայց էլի աղքատ: Ղշլաղում մենք իջնում ենք մի տան բակում, նստում ենք հաստ ու կոպիտ տախտակներով պատած մի ինչ-որ ծածկի տակ: Տանտիկինը մեզ համար մի շքեղ ձվածեղ է պատրաստում, հյուրասիրում է գոմեշի համեղ մածոնով: Թողնելով Ղշլաղ գյուղում մեր Վարազաբույնի ընկերին՝ ձի ենք նստում և բռնում ենք դեպի Շուշի տանող ճանապարհը: Կեսօրից մոտ անցնում ենք Դաշբուլաղ գյուղի մոտով, որ, երևի, այդ անունն ստացել է մեծ աղբյուրից, որ բխում է քարի միջից: Այդ գյուղում կան քաղաքի տների ձևով շինած տներ, ինչպես նկատելի է՝ ունևորները շատ են: Անցնում ենք Խո-

ջալլուի գետը թթի այգիների միջով, գնում ենք բավական ուղիղ ճանապարհներով: Բայց ամպերը, երևում է, որ չպիտի թույլ տան մեզ հանգիստ կերպով գնալ մեր ճանապարհը. անձրևը մեզ բռնում է Դահրավ գյուղի մոտ, և, նրանից ազատվելու համար, մենք մտնում ենք տեղացի քահանայի երկհարկանի նորաշեն տունը: Անձրևը մեկ էլ վրա է հասնում Բալլուջա գյուղից վերև, թրջված մտնում ենք գյուղը, որ բավական մեծ է և ունի մի նոր ու գեղեցիկ եկեղեցի: Չի կարելի ասել, որ այս գյուղն էլ աղքատ է. արդեն երբ բազմամարդ է, նշանակում է, որ ապրուստի միջոց կա, իսկ ապրուստը վատ չէ, քաղաքային ձևի տներ կան: Առհասարակ պետք է ասել, որ մեր գյուղերը հետզհետե կերպարանափոխվում են. հնադարյան գետնափոր խրճիթները («դարադամ» սև տուն) իրանց կոլոր կտուրներով և ահագին երդիկներով հետզհետե անհետանում են, և նրանց տեղը երևան են գալիս փոքրիկ տներ՝ փոքրիկ լուսամուտներով և տափակ կտուրներով: Նորաձևությունը, անկասկած, մենակ շինություններին չի դիպչում, այլ նորաձև դռներով ներս է մտնում ընտանիքի ծոցը. թե ի՞նչ տեսակ հեղափոխություն է գործում նահապետական կարգերի, նիստուկացի և վարքուբարքի մեջ, մեզ բոլորովին հայտնի չէ, այդ տեսակ բաներով հետաքրքրվողներից չենք: Բալլուջայի մոտ՝ գետի ափին, կա մետաքսի գործարան, սա էլ, իհարկե, իր ազդեցությունն է մտցնում գյուղացիների մեջ, որ էլի անհայտ է. ընդհանրապես գիտենք, որ այսպիսի տեղերում են տարածվում վեներական ախտերը:

Բալլուջայից մոտ է Խնածախ գյուղը: Խնածախը Բալլուջայից փոքր է, բայց ավելի լավ արտաքին տեսք ունի, որովհետև գյուղի մեջ ծառեր շատ կան: Ղարաբաղի հայ գյուղերը ընդհանրապես տխուր կերպարանք ունին, չորուցամաք տեղերի վրա են. ծառեր չեն տնկվում գյուղի մեջ, փողոցներ համարյա չունին, կտուր կտրի վրա է բարձրանում:

Խնածախը վերջին գյուղն էր, որ տեսնում էինք: Մույթը հասած՝ անցնում ենք նրա միջով և, անդադար ձիերը քշելով, հասնում ենք Խանքենդի ավանը, ուր և գորքերի բնակատեղին է:

Հրաշալի երեկո էր. երկինքը՝ պարզ, բոլորակ լուսինը առատ լույս էր թափում ծառերի մեջ կորած Խանքենդի վրա: Նրա լայն և ուղիղ փողոցներում, ինչպես և միշտ, տիրած էր մեռելային լռություն: Չքնաղ անկյուն է այս Խանքենդին, փոքրիկ սպիտակ տները ծույլ ու անհոգ կանգնած են ծառերի մեջ, և նրանց փոքրիկ պատուհանների մաքուր ապակիների վրա խաղում է լուսնի արծաթյա ճառագայթը: Գարուն ու ամառ այդտեղ բուրում են ծա-

ղիկները, անպակաս է մաքուր, առողջարար օդը: Մի տեղ շինած է շատրվան, որի պարզ ջուրը լուսնի լույսի տակ պսպղալով հանդարտ մրմնջում է և թափվում գլխիվայր: Երբեմն լսվում է փողոցով գնացողի ոտի ձայնը, կանաչագարդ բակի մի անկյունից բառաչում է եզր կամ փողոցի դռան պահապան շունը մի երկու-երեք անգամ հաչում է: Անցնում են այդ ձայները, և կրկին մեռելային անվրդով լռությունը մտնում է ծառերի տակ, շրջապատում է ու իր գորեղ գրկի մեջն առնում այդ բանաստեղծական անկյունը: Մնում է բարձր կամարի պայծառ լուսատուն, որ ծանր գնում է՝ հավատարիմ իր գիշերային ճանապարհին:

Մենք նստած խոսում էինք, պատմում էինք մեր ծանոթներին մեր այս հինգ օրվա տպավորությունները: Հեռու տեղեր չէինք գնացել, բնության աշխարհահռչակ հրաշալիքները չէինք տեսել, մարդկային հանճարի դյուրող կերտվածներով չէինք զմայլվել: Տեսել էինք մեր երկիրը, խմել էինք բազմաթիվ քաղցրահամ աղբյուրների ցուրտ-ցուրտ ջրերը, լեռների և ծմակների խոնավ, բայց մաքուր օդը ծծել էինք, կշտացել, կազդուրվել: Հայրենի հովը մրսացրել էր մեզ, արեգակը տաքացրել էր, լուսինը զգվել մեզ:

Եվ բախտավոր էինք...

Շուշի, 1890, Լեռ, Երկերի ժողովածու, 8-րդ հատոր, Երևան, 1985, էջ 32-178

ՈՒՂԵԳՆԱՑԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

Դեպքը կամ բախտը ինձ առիթ տուեց ամառս Թիֆլիսի անմաքուր օդից ազատուիլ: Յանկարձ ճանապարհորդ եղայ: Այն էլ մի այնպիսի աշխարհ, որոյ տեսութեանը շատ էի փափագում: Դա Շուշուայ գաւառն է՝ պատմական Սիւնեաց պատուական աշխարհը.

«Ուր սև-սև ամպերն են դարձել ի փախ,
Եւ ձերմակ-ձերմակ ամպերն են անվախ»¹:

Յունիսի 7-ին երկաթուղու գիշերուայ գնացքով մեկնեցայ Թիֆլիսից: Հետս ազգակցիս ընտանիքն է, որոց Շուշի եմ տանելու: Շոգեկառքերը ուղևորներով լիքն են, առաւելապէս պարսիկներ: Ես գնում եմ երրորդ կարգի տոմսակով: Իմ նստած կառքում պարսիկ չը կայ, այլ բոլորն էլ հայեր են, մասամբ և ռուսներ: Հայերը վաճառականներ են: Կան և մի քանի գանձակեցի և նուխեցի կանայք, որոնք իրանց գաւակներին (գիմնագիստ և կադէտ) հայրենիք են տանում:

Շոգեկառքի մի անկիռում կուչ եկած նստած է Ներսիսեան դպրանոցի մի աշակերտ: Ես նրան ճանաչում եմ և հրաւիրում եմ մօտս: Մենք սկսում ենք խօսել մինչև ժամը մեկը: Մեր խօսակցութեան նիւթը շատ թարմ է, հետաքրքիր: Բայց ես զանց եմ առնում առաջ բերել այստեղ: Այսքանս միայն կասեմ, որ, ինչպէս երևեցաւ, նախընթաց օրը յիշեալ դպրանոցում ցաւալի դէպքեր են պատահել: Դրանք, ասենք, դպրանոցի համար նոր բաներ չեն, բայց... էլ բայցը ո՞րն է. չէ՞ որ մեր բոլոր գործերը դէպքերով են սկսվում և վերջանում:

Դուրսը մութն է, ոչինչ չէ երևում: Շոգեկառքի լուսաւորութիւնը շատ նուազ է: Լուսադէմին Գանձակից շոգեկառքը մտաւ, ի թիւս այլոց, և մի հայ պարոն՝ Աղղաշի բժիշկը՝ պ. Աղասերեանը: Ծանոթացանք և մինչև Եվլախ իջևանը խօսում ենք, ի միջի այլոց, վերջին օրերումս Կ. Պօլսում պատահած դէպքերի վրայ: Եվլախում ես վեր եկայ: Ժամը առաւօտեան 7-ն է: Գնում են ֆուրգօն վարձելու, բայց ստրջանօք յետ դառնում: Ֆուրգօնչիկները դրակա-

¹ *Ալիշան*

նաբար յայտնում են, որ երրորդ օրը մեզ Շուշի կը հասցնեն: Ուրիշներն էլ ասում են, թե ընտանիքով լաւ չէ ֆուրգօնով գնալ: Բոլոր ճանապարհին ասազակաց խմբեր են թափառում, որոնք ամենից շատ ֆուրգօնների վրայ են յարձակվում, թէն ճանապարհի վրայ պահնակ ձիաւորներ կան կանգնած, բայց դա լոկ ձև է, լաւ է փոստայով գնալ և մի չափառ¹ էլ վերցնել մեզ հետ: Գնում ենք փոստատուն. տառանդագ չը կայ, այլ լոկ տրօյկաներ: Ուղեթուղթ (պատանոժնայեա) ինձ տալիս են ժամը 10-ին: Իսկ չափառ՝ ամեննին, որովհետև ուղեթուղթս մասնաւոր է: Ինքս ինձ բախտին յանձնեցի և ճանապարհ ընկայ: Ճանապարհ ասելով չը կարծեք, թէ խճուղի է, ո՛չ, այլ գիւղական, սովորական և միանգամայն անխնամ թողած ճանապարհ՝ բլրկացած և նեղլիկ առունների վրայ ձգած կամուրջներով, հազարաւոր պտոյտներով և առատ փոշիով: Պակաս չեն աղմկոտ ու ճահճոտ տեղեր ևս, ուր գորտերը իրանց համերգն են սարքել: Հազիւ 10 վերստ առաջ ենք գնացել, և ահա կառապանս քթի տակով ինչ-որ աւազակներին յիշոց է տալիս: Բանից դուրս է գալիս, որ նոյն տեղումն անցեալ տարի աւազակները մի ռուս մայօրի վրայ են յարձակուել, 3000ռ. և շորերը տարել և կօզակին էլ սպանել: Ինքը՝ մայօրը, շապկանց հագիւհագ ազատուել է: Կառապանի պատմութիւնը երկիւղ ազդեց մեզ: Մեր բախտից երկու-երեք վերստից յետոյ հնձուրներ սկսան երևիլ: Դաշտի հեռաւոր կետերում՝ թփերի մէջ, թափառում են և պահնակ ձիաւորներ: Փոքր-ինչ միամտվում եմ և սկսում չորս կողմն դիտել:

Մեր անցկացած դաշտը խիստ ընդարձակ է: Նա Ջիւանշիր գաւառի մի մասն է կազմում: Բացի ցորենից և գարուց՝ ուրիշ բան չեն սերմանում այդտեղ: Իսկ հացահատիկներն էլ հնձում են մանգաղով, որովհետև գերանդիով հնձելիս հատիկները թափվում, ցրվում են: Գերանդին գործածում են միմիայն խոտ հնձելու համար: Դաշտի մակերևոյթը լիքն է թփերով, որոնց մէջ շատ կան վայրի նռենիք:

Եվլախից մինչև Շուշի (ընդամենը 104 վերստ) դաշտի հողը երեք անգամ փոխվում է: Սկզբում նա կաւոտ է, յետոյ՝ սև և յետոյ՝ կրոտ: Միւնեաց լեռներից բխող Թարթառ, Խաչէն, Կարկառ գետերը (Կուրի աջակողմեան վտակներ) գրեթէ ողջ դաշտը ոռոգում են՝ շնորհիւ այն բազմաթիւ առունների, որոնք գիւղացիք են շինել: Առուակների եզերքներում բուսականութիւնը համեմատաբար հարուստ է: Վայրի վարդենիք, նռենիք, ուռենիք, բարդի և

¹ Թիկնապահ զինվոր (ծանոթ.՝ խմբ.)

եղեգներ շուտ-շուտ են հանդիպում ձեր աչքին: Շրջակայ գիւղերը ho ամբողջապէս թաղուած են ծառերի մէջ: Այդ ծառերիցը արդիւնաւոր և շատ է մանաւանդ թթենին, որոյ պտուղը տակառներով տանում են մի քանի գիւղերում եղած ցքիի (օղի) գործարանները:

Հասանք առաջին իջևանը՝ Ղարամանլու: Սա մի ծառաշատ, ճանճաշատ և, ասում էին, աւազակաշատ գիւղ է: Կէսօր է, և արևը սաստիկ նեղում է մեզ, մանաւանդ երեխաներին: Հովանոցների օգնութիւնը շատ չնչին է: Իջևանում ձի չը կայ, չափառ՝ նոյնպէս: Ձիանք խոստացան միմիայն 6 ½ ժամին տալ, բայց տուին 5 ժամ առաջ: Ստառոստան մի գործնական ռուս էր: Բայց մեզ մի երկիւղ էլ ինքը տուեց՝ յայտնելով, որ Թարթառը վարարուել է, և մեզ պէտք է գոմշի բարձր սայլով անցնել: Ա՛ն քեզ տրաքոց: Բայց ինչ կարող ենք անել: Ճամփայ ընկանք: Հետզհետէ անցուղարձ անողներ են պատահում, բայց բոլորն էլ զինաւորուած հրացանով և դաշոյնով: Տէ՛ր աստուած, ի՛նչ բարբարոս աշխարհ ենք մտել: Ո՞վ գիտէ, աւազակները թերևս 10-12 հոգի լինեն, բայց ողջ գաւառի վրայ սարսափ են ձգել: Սարսափն այնքան մեծ է, որ փոստայի օրերն էլ դիտմամբ փոխել են: Ինչևիցէ:

Արտուտիկը, ծիտը, ծիծեռնիկը, գեղունիկը օդում ճախրում և խայտում են: Թփերի և կանաչների վրայ թռչկոտում են սպիտակ և գորշ թիթեռնիկներ: Տեղ-տեղ առուների եզերքներում կրիաներն էլ են երևում: Եւ ահա ինքը՝ Թարթառը՝ իւր մօտ 70-80 սաժէն տաշտով: Սակայն, օ՛հ ուրախութիւն, գետի ջուրն այնքան իջել է, որ կարելի է և տրօյկով անցնել: Եւ մենք անցանք: Գետի ձախ ափին՝ փոքր-ինչ հեռու, Տէրտէր (Թարթառ) իջևանն է, ուր նոյնպէս ձի չը կայ: Չորս կառքի սպասող ճանապարհորդներ կան: Մեզ խոստացան ճամփու դնել յետ դարձող կառքով միայն 2 ժամ յետոյ: Ասած է անձարը կերել է բանջարը: Համաձայնուեցայ, մանաւանդ, որ իջևանում գիշերելու տեղ կայ: Ընդամենը մի սենեակ՝ այն ևս բեռնուած ուրիշներից: Շատ խնդրեցի, ինչ գնով էլ որ լինի, մեզ մի չափառ տալ, բայց կարելի չեղաւ, նախ ուղեթուղթս մասնաւոր է, և երկրորդ՝ չափառները 6 վերստի վրա են կենում՝ վտանգալից տեղում՝ ճիշտ մեր գնալիք ճանապարհի վրայ: Արդէն մթնանում է. ժամը 7-ն անց է: Բոլոր յոյսս բախտի և մասամբ սմիթ և վիսսօնի ատրճանակս վրայ դրած՝ կառք նստանք: Ուղին աստիճանաբար բարձրանում է և շարունակ իջնում, ելնում գառիվայր և գառիվեր: Անցուղարձող՝ աստուած տայ: Միայն մի ֆուրգօն տեսանք, միջին ութը մարդ՝ բոլորի էլ ձեռքները՝ հրացան: Բարեբախտաբար, դաշտը չոր ու ցամաք է, ո՛չ ծառ կայ,

ո՛չ թուփ և մացառ: Ուրեմն եթէ աւագակները գան, կարելի է տեսնել և պաշտպանուել: Այսպէս ասում եմ ուղեկից կինարմատին, բայց ինքս էլ ասածիս չեմ հաւատում:

Հասանք վտանգալից վայրը: Չափառները նստած են, ձիերն արածում են: Ո՛չ բարև, ո՛չ աստծու բարին, կողքերովն անցկացանք: Ես վճռած եմ այլևս յոյս չը դնել այլոց վրայ:

Մուօր շատանում է: Զփանքը դադրած գոլով չեն կարող շուտ գնալ:

- Մի ե՛րգ ասա, ա՛յ տղա,- ասում եմ ես կառապանին,- և իմ Զաւատը սկսում է.

«Գարաբաղդա թալան վար,

Եարի եօղա գալան վար»:

- Ֆո՛ւ, սատանան քեզ տանի, անիծա՛ծ, կրակի վրայ ձեթ է ածում: Լո՛ի՛ր, շուտ վե՛րջ տուր այդ մելամաղձիկ և չարագուշակ երգին: Արշա՛կ, Փառան-ձե՛մ, դուք մի ե՛րգ ասացէք:

Եւ մանուկները սկսեցին.

«Հերիք, որդեա՛կք, այսքան տարուայ տառապանք,

Հերի՛ք որչափ դաժան քրդին ձեռքն ընկանք...»:

Այս պրծանք, մանուկները սկսեցին երկրորդ, երրորդ, չորրորդ երգը, Գա-մառ-Քաթիպային և Թաղիադեանցին տակնուվրայ արինք: Եւ այսպէս՝ մա-նուկների պոռպոռալի ազդեցութեա՞ն, թե՞ քախտի շնորհիվ ժամը մօտ 10-ին հասանք կէս իջևանը, ուր և գիշերեցինք՝ հազար անգամ անիծելով անցած իջևաններիս ծառայողներին, որոնց ամէն մէկը մի-մի տեսակ երկիւղ էր տալիս մեզ: Դուրս էր գալիս ուրեմն, որ աւագակներից ամէնից շատ երկիւղ կրողները իջևանների ծառայողներն իրանք են: Դրանք մի լուից տասը ուղտ են շինում. սատանան գիտէ, թէ ի՞նչ նպատակաւ: Մախլաս¹:

Վաղ առաւօտուն իջևանից դուրս եկայ արդէն չափառով: Այս նշանակում է «ընթրիքից յետոյ խարգալ», բայց, ինչ արած, երբ ինձ թախանձում են ուղեկիցներս: Երկու ժամից յետոյ Շահբուլաղ իջևանումն ենք արդէն՝ մեր ետքը թողնելով բազմաթիւ սայլեր, որոնց անիւները փոխարինած է երկա-նաքարերով (ջրաղացի քարեր): Երկանաքարերը բերում են Շուշուց մօտա-կայ ջրաղացների համար: Բայց երկանաքարեայ անի՛ւ, ես այս առաջին անգամն եմ տեսնում: Մեր ետքն մնաց նմանապէս և Խաչէնի գետը, որոյ

¹ Ինչնիցէ (ծանոթ.՝ խմբ.)

հունը բաւական մեծ է, և ինչպէս երևում է, շատ վարարուել գիտէ: Շահրու-
լաղը թիրքաբնակ գիւղ է նոյնպէս, ծառաշատ: Իջևանի կողքին մի քարաշէն,
ընդարձակ շէնք կայ, ուր այժմ չափառներն են կենում: Շէնքը բերդ է, և,
ասում են, Շահ-Աբասի ժամանակից մնացած: Բերդից ներքև՝ ձորաբերա-
նում, մի մզկիթ¹ կայ նոյն ժամանակների: Մզկիթը լերան (անունը Հովուի
լեռ) ստորոտումն է շինած, իսկ գագաթում մի վանք է երևում: Վանքն աւե-
րակ է, և նրա մօտ մի քարացած կնոջ արձան կայ իբր, հաւաստիացնում են
ինձ: Կարող է պատահել: Հնախօսները թող բարձրանան և ստուգեն: Իսկ ես
կը շարունակեմ իմ ճանապարհը դէպի Խօջալի՝ վերջին իջևանը: Ճանա-
պարհը միշտ բարձրանում է և փոքր-ինչ կոկիկ ձև ստանում: Մինչև անգամ
նոր և լայն ճանապարհ բաց անելու էլ են ձեռնարկել: Կարկառի հովտի
բերանում՝ երկու իսկ կողմից, քարաշէն բերդի պարիսպ ու աշտարակների
մնացուածներ կան²: Դրանք էլ Փէննէի խանի շինած են իբր: Չը գիտեմ,
ստուգելու էլ առայժմ առիթ չունիմ:

Կարկառի ջուրը միւս գետերի ջրոց համեմատութեամբ շատ մաքուր է և
սառնորակ: Պատճառը, անշուշտ, այն է, որ մենք նրա ակունքին մօտ ենք:
Արդէն Արցախի լեռների ստորոտովն է անցնում մեր ճանապարհը:

Խօջալիի իջևանից մեզ իսկոյն ճանապարհ ձգեցին, թէև, ըստ սովորու-
թեան, այդտեղ էլ պատմեցին, թէ ինչպէս մի քանի ժամանակ առաջ վեց
վերստի վրայ (դէպի Շուշի) աւազակները յարձակուել են ճանապարհորդ-
ների վերայ, ինչպէս ճանապարհորդներից մինը՝ մի հայ տղամարդ, թփերի
մէջ թաք կենալով, խփում, սպանում է աւազակապետին, որ իւր արհեստին
մէջ շատ մեծ անուն և համբաւ է ունեցել այս կողմերում: Վերջապէս նահան-
գապետը յիշեալ հային լաւ վարձատրել է և այլն, և այլն:

Խօջալիից սկսեալ՝ մեր ճանապարհը շարունակ բարձրանում է, թէև
փոսերն էլ պակաս չեն: Շուշին արդէն բազմել է լերան գագաթին և լանջերին:
Ուղին շատ վատ է, քարքարոտ: Քոչող թարաքամաների երկոտանի և չոր-
քոտանի ընտանիքների յաճախ ենք հանդիպում: Մի մասն արդէն տե-
ղաւորուել է Կարկառի հովտում: Երեք ժամից յետոյ հազիւ Շուշուայ պա-
տուանդանը կազմող լերան ստորոտն հասանք: Մի ժամումն էլ լեռը և իւր
քարքարուտ կապաններն անցանք, և ահա ես արդէն Շուշիումն եմ՝ մօտ

¹ Իր տասնվեցերորդ նամակում հեղինակը նշում է, թէ սույն կառույցը ոչ թէ մզկիթ էր, այլ բաղնիք (տե՛ս
սույն աշխատությունը, էջ 38, ծանոթ. խմբ.)

² Խոսքը, անշուշտ, Ասկերանի ամրոցի մասին է (ծանոթ. խմբ.)

6000 ոսնաչափ բարձրութեան վերայ, որտեղից գրում եմ այս առաջին նամակս¹:

Երևակայեցէք մի նեղկակ, գոգաւոր հովիտ, չորս կողմը լեռներ, մէջտեղում մի այլ լեռ, որոյ գլխին 5-6 հազար տներ՝ լո՛խն (բոլորն) էլ քարաշէն և միայարկ, կրկնայարկ և եռայարկ, մի քանիսն էլ քառայարկ: Մի հատիկ էլ հինգ յարկանի շինութիւն կայ, և այն էլ իջնանատուն: Տների ամենամեծ մասը՝ դստիկոններով, պատշգամբներով և ցանցաձև վանդակապատ լուսամուտներով է: Կտուրները՝ թեք, մեծագոյն մասը՝ անների և դիմացկուն փայտից, փոքրագոյնը՝ երկաթեայ թիթեղից: Կան, որ ծածկուած են խառն՝ երկու իսկ նիւթից: Տները՝ քար, փողոցները՝ քար, շրջապատ պարիսպը՝ քար, չորս կողմը՝ քար, մի նոր տեսակ Ձէյթուն կամ Մասուն է:

Գրեթէ ամէն տուն իւր պարտեզն ունի, ուր ամէնից շատ երևում են շուրենի, տանձենի և խնձորենի: Անպտուղ ծառերը՝ ուռենի և բարդի, որին տեղացիք սխալմամբ անուանում են սօսի: Ծաղիկներ չեմ տեսնում՝ բացի սովորական անհոտ և անհամ վարդից և զրավարդից: Զրավա՞րդ, ճշմարիտ որ գուր, կեղծ, վայրի վարդ: Պարտեզները՝ երբեմն պարսպապատ-քարապատ, երբեմն՝ տախտակապատ և երբեմն էլ ցանկապատ-փշապատ՝ յաճախակի պատած, փաթաթած եղինջով-կճանով և մեծ ու սուր ասեղներով, փշերով: Զարմա՛ցք, երկիրն այսքան քարքարուտ, բայց, միևնոյն ժամանակ, այսքան բուստ ու ծառուտ:

Երկու յասարակաց պարտեզ կայ՝ մինը հայոց, միւսը թիւրքաց համար: Առաջինը նոր են շինել, դեռ ծառ չը կայ: Իսկ երկրորդումը՝ միմիայն մի ճեմելիք: Սրա մէջ արձակ-համարձակ շրջում և զբօսնում են և՛ մարդիկ, և՛ կենդանիք՝ ձի, գառ և ոչխար: Եւ զբօսնելիք՝ այդ անքաղաքավար կենդանիք, թէ՛ խոտն են արածում, թէ՛ մատաղ տունկերը կրծոտում և թէ՛ կարիքի ժամանակ թրքում, կտտորում, ապականում:

Երկու աղբիւր՝ բազմաթիւ ծորակներով, մինը՝ լաւագոյնը՝ թիւրքաց (պարսկաց), միւսը՝ հայոց բաժնում: Աղբիւրներից ջուր են կրում և՛ էշերը, և՛ պատանիք, և՛ կնանիք: Առաջինքը՝ թմբկաձև տակառներով, իսկ երկրորդը՝ պղնձեայ գիւգում ու կժերով: Երեք մզկիթ, վեց եկեղեցի, որոնցից մինը ռուսի, իսկ հինգը՝ հայոց:

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի առաջին նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 46-ում (16 յունիսի, էջ 1-3)

Ահաւասիկ այս է Շուշին, որ քաղաքի բարձրադիր կետերիցը, քարափներիցը ես նկատեցի:

Այժմ մտնենք քաղաք այս անանուն, ծուռ ու մուռ, նեղլիկ, ցից-ցից, դարիվեր և դարիվայր փողոցներով: Վա՛յ ինձ նման կոծիծ-մազոլ ունեցողներին: Վա՛յ կառքերին, որ, սակայն, չը կան ամեննին: Բնակիչները կա՛մ հայ են, կա՛մ պարսիկ, մի քանի տնտր էլ՝ ծառայող ոսներ: Իրանք, ընդհանրապէս, քարակազմ են, կայտոռնք թէ՛ մեծերը և թէ՛ մանկունք, մանաւանդ՝ հայկազունք: Քալուածքները՝ սեգ, շարժուածքները՝ բռի, խօտուածքները՝ տոօզ: Կերած հացերի տեսակներն են լաւաշ և պոօշ: Տղամարդիկ հագնում են չուխայ, արխալուղ և շալվար, մէջքները՝ կա՛մ բաց, կա՛մ քամար: Գլխներին երբեմն կոնաձև, երբեմն գլանաձև փափախ կայ: Նորերն են միայն, որ գործ են ածում ռուսական շաբկայ: Իսկ շապօ, շլեափ ամեննին չը կայ, աստուած տայ: Ոտնամաններից կօշիկը հագուագիտ է և նորերի յատուկ: Ժողովրդի երկու իսկ սեռի սովորական կօշիկն է չմօշկ-քօշ՝ շինած փայտից, կաշիից և երկաթից, որով շուշեցիք օրնի բուն քաղաքի քարքարուտներն են դոփում և տրոփում:

Գեղեցիկ սեռի զգեստները յար և նման են Գողթնացուց և Ջուղայեցուց զգեստներին: Գլխներին՝ սպիտակ (թրքուհեացը՝ սև կամ կապուտակ) չադրա, որ անձրևի ժամանակ հովանոցի նման պարզում են: Չադրայի ներքև՝ չարդատ արծաթեայ՝ չանգալով խառանաձև փաթաթած վզին: Ճակատներին՝ ճլատանոց՝ շար ի շար ոսկի կամ արծաթ, քունքերիցն այտերն ի վար՝ չնապատ-ճնօտապատ և գիւզգիւ կամ գնտակ: Թնքերի լայն թեզանիքը՝ զարմայ և կոճակ, լոխը կա՛մ ոսկի, կա՛մ արծաթ: Այս է ահա հինաւուրց շուշեցի և գաւառացի հայ կնոջ բոլոր զարդ ու զարդարանք: Քինթ ու բերանները ծածկած քնթկալով՝ գոյնը միշտ և հանապազ սպիտակ: Իրանի (մարմնի) վրա՝ թիկնոցամէջքում՝ նեղլիկ գօտի արծաթեայ կամ բեհեզեայ, մէջքիցը ցած՝ ճնկակալ-վարտիք, իսկ ոտներին՝ բրդեայ գուլպէք: Եւ այդ ամէնը՝ խատուտիկ ու նախշունիկ, թէև գերիշխող գոյնն է կարմրիկ:

Կան և կնանիք, որ, ինչպէս թիֆլիսցիք, կապա ու դահրա և կովտա ու չիքիլա են գործածում: Կան, որ եւրօպացի կնոջ հանգի պճնվում և սեթներփվում են: Սրանք են ահա, որ իրանց նոր սերնդի տեղ են դնում:

Կանանց կերպարանքը առհասարակ սիրուն է: Թշներիցը մանաւանդ կաթ և արին է կաթում: Գրավիչ է նոյնպէս իրանց աչքերը, որ եզան խոշոր

աչքերի նմանությին է բերում: Սակայն կանանց ընդհանուր կազմուածքում եւ ներդաշնակ գեղեցկութին չեմ տեսնում:

Արձակ-համարձակ ման են գալիս փողոցներում և միմեանց հետ փնթփնթում ու քնթքնթում: Իսկ երբ տուն են դառնում, աշխատասէր են և տոկուն: Տանը սանդիկքով բուրդ են գգում, ճախարակով և իլիկով թել մանում, վիլիանով (կաժ) մետաքս փաթաթում, կապացու, վարտիկցու և վերարկուացու (ղըլջի) պատրաստում, բարձի երես, սփռոց և փռոց ասեղնագործում, քեարգահ բանում, կապերտ, խուրջին և թամբի պարկ ու պայուսակ շինում: Ումանք էլ ընտիր գործ ու թաղիք են գործում և վաճառահանում: Եւ այդ բոլոր առարկաների շինողն էլ իրանք, ներկրողն էլ: Ապրի՛ք, զօրանա՛ք, ո՛վ շուշեցի կանայք: Ներկուածքները՝ պայծառ, մաքուր ու դիմացկուն, որ այլ և այլ հողերից և արմատ ու տերևներից էլի իրանք են պատրաստում:

Գորգ և թաղիք գործելում առաւել շատ ու յաջողակ են թրքուհիք: Իսկ հայկուհիներից դրանցում պարապում են գլխաւորապէս քաղաք գաղթող գիւղացիք:

Այր մարդկանց՝ թէ՛ հայկազանց և թէ՛ պարսկաց մեծագոյն մասը պարապում է արհեստներով, մնացեալը առևտուրով, որ այժմ ընկած է: Ուստի, այլոց նման, շուշեցին էլ, անգործ նստած, բախտի բերման և կամ դէպքի կսպասէ: Իգո՛ւր: Եթէ չի լինի գիւղացւոց յաճախ երթնելութինը, մեր շուշեցին ոտքով-գլխով կորած է: Եւ պարապութիւնիցը հարկադրված՝ հաւաքուելու է միշտ հրապարակներում բամբասելու, գրաբանելու: Հայերի գլխաւոր հրապարակը ժողովարանն է՝ թոփխանայ: Մի այլ հրապարակ էլ պարսկաց թաղում կայ: Երկու իսկ հրապարակներումը միշտ լիքն են և՛ մարդիկ, և՛ կենդանիք՝ եգ, էշ, գոմէշ, ձի ու ջորի:

Տեսայ պ. Սարգիս Ներսիսեանի մետաքսեայ գործարանը Շուշուայ մէջ, ըստ թւոյն, այժմ եզականը: Պպ. Աւշարեանցի և Մնացականեանցի գործարաններն արդէն փակուած են:

Պարոն Ներսիսեանի գործարանը հիմնուած է 1870 թուականից ի վեր և մինչ օրս գործում է, թէև վերջին տարիներումս վաստակից գուրկ է և կը տուժէ: Պատճառն այն է, որ Արցախի մետաքսը այլևս արտասահման չէ գնում, որովհետև սրանը՝ տեղականը, թէ՛ լաւն է և թէ՛ էժան է նստում, թող որ Չինաստանը իւր մետաքսով այժմ ողջ Եւրօպան է ողողում: Այսպիսով՝ մեր երկրի մետաքսին վաճառահանման միակ հրապարակ այժմ Մօսկուան է մնում, այն եւս 40% վճարով: Ապրանքը, կա՛մ Մօսկուայում, կա՛մ Շուշիում

երկար ժամանակ մնալով, փչանում է և իւր յարգը կորցնում: Անցեալ և այս տարուայ կոկոններն ու թելերն են տեսայ: Մէջերքում զգալի տարբերութիւն կայ: Չարիքի առաջն առնելու համար պարոն Ներսիսեանը մտադիր է մետաքսից տեղնուտեղը ճոթ պատրաստել, առաւելապէս ֆայա և պուրսայ: Թո՛ղ պարոնին յաջողութիւն տայ աստուած: Բայց յաջողութեան համար հաստատուն և գիտակցական գրաւական արդեօք կա՞յ: Չեմ կարծում: Այսպէս թէ այնպէս, պ. Ներսիսեանի գործարանը այժմ կարգին բանում է: Բանուորները գրեթէ բոլորն էլ կնանիք են և մանկտիք՝ թուով 24 հոգիք, ռոճիկ՝ օրէնը 30 և 20 կօպէկ:

Գաւառումն մինչ օրս բանում են պպ. Ահարոնեանցի, Ճգնաւորեանի, Զոհրաբեանի, Թամիբեանի և Օհանեանի գործարանները թէն դարձեալ առանց էական վաստակի, մանաւանդ թէ՛ վնասով, թէ՛ աւելի պակաս, քան պ. Ներսիսեան: Պատճառն այն է, որ վերջինս ջրի և փայտի համար օրական 8 ռ. ծախս է անում, մինչդեռ գիւղերում միևնոյն ծախսը համեմատաբար պակաս է լինում: Արցախի մետաքսեայ բոլոր գործարաններում բանուորների թիւը 2,300 հոգու է հասնում:

Քաղաքի և գաւառի այժմեան գլխաւոր արտադրութիւնքն են, բացի մետաքսիցը, օղի, որ թթից են քաշում, գինի, որ շատ էժան է ծախվում, բուրդ, ցորեն և մասամբ ծխախոտ ու բամբակ:

Հռովմէական առածն ասում էր. «Մարդկանց ճանաչելու համար հարկաւոր է հետերը փթերով աղ ուտել»: Ես շուշեցուց հետ կէս մսխալ էլ չեմ կերել: Ուրեմն և նրանց նիստուկացին, բնոյթ ու սովորութիւնների մասին իմ կողմից մի բան չեմ կարող գրել: Բայց, ինչ որ շատերից և այն մի քանի աղբիւրներից լսեցի, այն էլ այս է ահա:

Հների նիստուկացը, կենցաղավարութիւնը չափաւոր է, համեստ, նահապետական-պատուական: Նոր սերունդն է միայն անչափաւոր և անպիտան, որ ողջ գիշերը, երբեմն և ցերեկները չէ դուրս գալիս հիւրանոցներից և կլուբից, չէ հեռանում նրանց թագ ու պսակ համարուած խաղասեղաններից, մի ախտ, որ անբաժան է ամէն մի գաւառական քաղաքից:

Ընդհանրապէս շուտ են պսակվում, 16 տարին անցկացրած աղջիկը դժբախտ է համարվում: Սրանք էլ պսակուելուց յետոյ զոկերի նման տարիներով դրսերումն են լինում, այսինքն՝ լոկ տղամարդիկ: Հների մասին մեր լրագրութիւնում գրուեցաւ, թէ քաղաքականապէս ամուսնանում են: Դա հասարակեալ սովորութիւն չէ, այլ ցաւալի բացառութիւն, այն էլ յատկապէս

գիւղերում: Իսկ քաղաքում այդպիսի անձը դատապարտելի է հասարակաց աչքում և անէծքի բուն: Այդ բացառութեանը գիւղերում մասնակից են քահանայք ոմանք՝ քրիստոնեական կրօնի այդ նոր տեսակ մուլլայք: Սակայն մերձաւոր և հեռաւոր հոգևոր իշխանութիւններն աշխատում են խափանել և առաջն առնել այդ պարսկական սովորութեան: Այդ դէպքում հոգ. Իշխանութեանը մարմնաւոր իշխանութիւնն էս երբեմն աջակից է և օգնական:

Շատ լավ կաներ մարմնաւոր իշխանութիւնը, եթէ որ ուշք դարձներ և թուվ 4 հիւրանոցների վերայ, ուր տգեղ տեսարանները և թղթախաղը, ասում են, անպակաս են:

Մարմնաւոր իշխանութեան պարտքն է նմանապէս շուտափոյթ հոգ տանել և արմատախիլ առնել վիճակից սիֆիլիսը, որով վարակուած են Շուշաքէնդ, Ղզղալա, Աշան, Հադրութ, Թաղասէր, Առաքէլ, Որդնաշատ, Թաղոտ, Նորշէն և Հացիկ գիւղերը: Դիցուք թէ Արցախը իւր դիրքով Ջէյթունի նմանութիւն ունի, բայց ցանկալի չէ, որ արցախցին էլ զէյթունցւոց նման ախտաջինջ լինի¹:

Շուշեցի հայք գաղթական են շրջականերից և Գողթն գաւառի Ագուլիս, Մեղրի և Ղազանչի գիւղերից: Միմեանց հետ անհաշտ են, կռուասէր, հայիռյասէր և անժամասէր: Նոր-նոր սկսել են հարկադրել միմեանց գէթ կիւրակէ և տօն օրերին յաճախել եկեղեցին: Դրա համար շուշեցիք մի միջոցի են դիմել, որ իմ աչքում արուեստական, ուրեմն և անտևական է թվում: Քահանայ շատ ունին, բայց իրանց կոչման համապատասխանող շատ քչերն են: Թէ՛ առաջինքը և թէ՛ վերջինքն աղքատ են և տնանկ: Տարեկան եկամուտներն առ առաւելն՝ 250-300 մանէթ: Ունին մի նշանաւոր քահանայ, որ լսածներից նայելով՝ պէտք է որ մեր սովորական ազատամտութեան վիժմունք լինի:

Չը նայելով Շուշուայ հայ հոգևորականութեան այս անկեալ վիճակին, այնուամենայնիւ, կան ժողովրդական խմբեր, որոնք ուզում են նոր-նոր քահանաներ: Եւ դրա համար խնդրամատոյց են եղել: Մերժել, բոլորովին մերժել:

Եկեղեցիքը քարաշէն են, փառաւոր միայն դրսից, իսկ ներսից՝ անշուք և անզարդ: Մեղաններն առանց խաչկալի են, պատկերներից մի քանիսն էլ՝ օտարոտի: Եկեղեցական անօթ և զարդ բաւականին ունին պահարաններում: Հապա ինչի՞ եկեղեցիքը չեն զարդարում:

¹ Այստեղ պարտւում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 2-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 49-ում (27 յունիսի, էջ 2-3)

Ագուլեցոց կամ Մայր եկեղեցու դրան շեմքին հետևեալ տողերը կարդացի.

Ձայս պատուիրեմ ձեզ, զի սիրեսջիք զմիմեանս:

Յայտնի է, որ քրիստոնէական կրօնի հոգին հենց այդ պատուիրանումն է կայանում: Բայց շուշեցիք և իրանք քահանայք միշտ տեսնում և կարդում են այդ տողերը, այնուամենայնիւ, միմեանց չեն սիրում: Հապա էլ ի՞նչ քրիստոնէութիւն:

Ունին ռեալական դպրոց՝ 300 աշակերտներով, մեծ մասը՝ հայք, իսկ թիրք՝ մի քանի տասնեակ:

Երկու հատ քաղաքական դպրոց, մինը՝ արական՝ մօտ 300 աշակերտներով, միւսը՝ իգական՝ 30 թէ 40 աշակերտուհիներով:

Մի քանի հատ էլ մասնաւոր դպրոցներ:

Հայոց վիճակային դպրոցն ունի 4 դասարան (3 հատ էլ պատրաստական), 287 աշակերտ, 11 վարժապետ, 9000 եկամուտ (մօտ 4000-ը՝ թոշակադրամ) և ծախք՝ նոյնքան: Աշակերտաց մի մասը՝ գիւղացիք, իսկ ուսուցիչք, բացի տեսչից, շուշեցիք: Խումբը կազմուած է առաւելապէս ընթացաւարտ ճեմարանականներից և Ներսիսեան դպրանոցի սաներից: Միմեանց հետ համերաշխ են. աշխատասէր. յատկութիւններ, որ մեր դպրոցների համար միշտ և հանապազ պէտք է նախապատիւ համարել:

Դպրանոցն աւելի և աւելի կենտրոնացնելու ու վերակազմելու համար ջերմ ձգտում և փափագ կայ: Այդ մասին սրբազան Սագինեանց և հոգաբարձուք աշխատում են, բայց գուցէ շուտ չը յաջողին: Հոգ չէ, ուշ լինի, նուշ լինի: Ամէն կատարելութիւն և յաջողութիւն մէկ գլուխ ձեռք չի բերուիլ: Միայն աշխատելու է դպրանոցի այժմեան խաղաղ վիճակը չը խանգարել, համերաշխ գործակցութիւնը ձեռքից չը փախցնել, մնացեալը իւր կարգին կը լինի հետզհետէ: «Ոյժը ուժի մէջ չէ, այլ ոյժը սիրո մէջ է», -ասում է իմաստուն առածը:

Քաղաքի տարեկան արդիւնքը հասնում է 50,000 ռուբլի: Նոյնքան էլ ծախք կը լինի: Ծախուց մէջ ամենախոշորը դպրոցներին տրուած նպաստն է. ընկալականին՝ 10,000, իսկ քաղաքական-օրիորդականին՝ 1,000 ռուբլի: Ընդամենը ուրեմն տարեկան 11,000 ռ., որոյ 2/3 մասը վճարում են հայք, իսկ 1/3 մասը՝ պարսիկք: Արդեանց ամենամեծ աղբիւրքը տնտեսարկն է, 14 առ 100 %: Քաղաքի դրամազուլիւր՝ 12,000 ռուբլի: Պարտքը՝ 20,000 ռուբլի: Պարտքը գոյացել է և շատանում է գաւառական ոստիկանարանի պահպանութեամբ

(6000 ու.), որ ամբողջապես քաղաքն է հոգում, իհարկէ, գրկանք կրում: Մինչդեռ ոստիկանարանի գլխաւոր ոյժերը գաւառն է իւլում:

Այս գրկողութիւնը և անյարմարութիւնը յատուկ է կովկասեան և անդր-կովկասեան բոլոր քաղաքներին: Թէպէտև միևնոյն ժամանակ մեր բոլոր ոստիկանարանաց նիւթական դրութիւնը միշտ խեղճ է, աննախանձելի: Այդպէս է իսկապէս և Շուշին: Զարմանալի բան. պետական ոչ մի հիմնարկութեան վերայ այնքան բազմաթիւ և բազմատեսակ դժուարին, կնճռոտ պարտականութիւնք դրած չեն, որքան ոստիկանարանաց վերայ, բայց միևնոյն ժամանակ ոչ մի հիմնարկութեան նիւթական միջոցները նոյնքան սուղ և մուրացիկ չեն, ինչպէս դարձեալ ոստիկանարանաց միջոցները:

Շուշուայ ոստիկանարանը մի քանի առանձին արտօնութիւններ է վայելում պարտագանցներին, յանցաւորներին բանտարգելում և տուգանելում: Քաղաքը ինդրում է ինքնավարութիւն: Խնդրոյ կատարումը և յաջողութիւնը ինձ կասկածելի է թվում¹:

Թոփխանայում և թիւրքաց հրապարակում մինչև կէսօր գիւղերից եկած բարին, կենսական մթերքը լիքն է, առատ և էժան: Հացը, միսը, իւղը, պանիրը՝ համեղ ու պատուական: Ձկունք և թռչունք էլ շատ կան: Վերջիններիցս լորը, կաքաւը և մոշահաւը զեղում և վխտում են մօտակայ արտ ու քարափներում: Մոշահաւ (մոշ-մոր, մրահաւ) ասածը սարեկի ցեղիցն է և նրա տեսակ: Կտուցն է միայն կարմրորակ: Երգում է շատ, բայց տխուր եղանակ: Ես շատ անգամ լսեցի Արցախի այդ թռչունի երգը: «Մեռնող ուսանողի երգն է» դա.

«Ազնի՛ւ ընկեր, մեռանում եմ,

Բայց հանգիստ եմ ես հոգւով»:

Հետևեալ ցուցակը, վասն 1884 ամի, կոնսիստօրիայի գործերիցը քաղեցի.

<i>Թիւ</i>	<i>վանուց</i>	<i>եկեղեց.</i>	<i>քահանայից</i>
Շուշի	1	4	24
<i>Ծխականաց</i>		<i>արակ.</i>	<i>իգական</i>
		5985	4964 ²

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 3-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 50-ում (30 յունիսի, էջ 3-4)

² Շուշուայ հայ ժողովրդի այս թիւը անհամապատասխան է ոստիկանարանի ցոյց տուած թւոյն: Որպէսզի սրբադրամ (տուն գլուխ 20 կ. ի տարին) չը ժողովեն և քահանայից թիւը չը շատացնեն, քահանայք դիտմամբ իրանց ծխերի թիւը քիչ են ցոյց տալիս կոնսիստօրիային: Այսպէս ասացին ոմանք, ոմանք էլ, թէ Շուշուայ մէջ շատ կան մօտակայ գիւղերից վերաբնակվողներ: Դրանք իսկապէս ծուխ չեն: Չը գիտեմ՝ ճշմարիտը ո՞րն է:

բնակչութիւն 58,255 45833

Վիճակ

2 քաղաք, 8 վանք, 208 եկեղեցի, 220 քին., 216 գիւղօրայք
 ընդամենը՝ 9 վանք, 211 եկեղեցի, 244 քին.
 Բնակչութիւն 64,240 ար., 50,769 իգ.

<i>Թիւ</i>	<i>ծնելոց,</i>	<i>պսակելոց,</i>	<i>մեռելոց</i>
Շուշի	333 ար., 300 իգ.	165	324
Վիճակ	2338 ար., 1821 իգ.	829	1209
<i>Ընդամենը</i>		4792	994
			1533

Ղրամագլուխ եկեղեցաց

Շուշի՝ 14,107 ռուբլի 59 կօպէկ.
Վիճակ՝ 17,539 ռուբլի 14 կօպէկ.

Տարեկան արդիւնք եկեղեցաց

Շուշի՝ 3094 ռուբլի 96 կօպէկ.
Վիճակ՝ 3444 ռուբլի 7 կօպէկ.

Տարեկան ծախք եկեղեցաց

Շուշի՝ 2559 ռուբլի 33 կօպէկ.
Վիճակ՝ 2813 ռուբլի 3 կօպէկ.

Ընդամենը

31,646 ռուբլի 73 կօպէկ ղրամագլուխ.
 6539 ռուբլի 3 կօպէկ արդիւնք.
 5372 ռուբլի 36 կօպէկ ծախք.

Այցեւեցի մի քանի տներ: Ուրեմն և մի քանի խօսք էլ նրանց արդուզարդի մասին: Տների յատակ և պատերի վերին մասերը երբեմն պարսկաձև ներ-

կած, երբեմն մերկ, բաց են: Պատերը՝ յաճախ գաճած, երբեմն պաստառած: Յատակը՝ յաճախակի աններկ, բայց երբեմն ներկած և երբեմն շքեղապէս պարկետած: Կահ-կարասիքը՝ և՛ երօպականը և՛ պարսկականը, ի միասին, թէն բաւականին ներդաշնակ կերպով: Տների մաքրութիւնը օրինակելի է, թէն բնակչացը՝ ոչ այնքան գովելի: Կանայք բաղանիք շատ ուշ-ուշ են գնում: Սրանք սովորաբար տներումն են լուացվում: Թիւրքաց փողոցները և հրապարակը համեմատաբար անմաքուր են, քան հայերինը:

Փողոցները նեղ են, տները՝ խիտ, ներքնայարկերը և միջնայարկերի լոյսն է սակաւ, գուցէն խոնաւ: Մի տան մէջ խօսելիս հանդիպակացում կարող են լսել: Հանդիպակաց տներից կարող են և միմեանց տեսնել: Ջահիլ և սիրահար մարդկանց համար այսպիսով մի քանի կենդանութիւններ ունին Շուշուայ տները:

Գրեթէ իւրաքանչիւր տան պատից մի-մի թառ է կախած: Ածում և երգում են պարսկերէն: Նորերը երգում են և՛ հայերէն: Իրանց սիրելի բանաստեղծն Գամառ-Քաթիպան է: Արժէ՛ և պէտք է՛:

Տների սանդուղները՝ փայտից, թէն շուշեցին երկիւղ չունի հրդեհից:

Փողոցների լապտերները քիչ են, լուսով աղօտ և կարծեօք չեն վառվում մինչև առաւօտ: Բայց ես, օգուտ քաղելով բլդուրդ գիշերից, ման եմ գալիս և դիտում: Գիշերուայ ժամը 9-ին կամ 10-ին տներումը լոյս չէ երևում: Մարդիկ քնած են կա՛մ սենեակներում, կա՛մ երբեմն պատշգամբ ու պարտէզներում, մանաւանդ թիւրքերը: Երջանիկ են, որովհետև երկիւղ չունին ո՛չ մոծակից և ո՛չ ճանճ ու կարիճից: Բայց մի՞ թէ տներումը շոգ է, որ մարդիկ դուրսն են քնանում: Ես մրսում եմ: Այսպէս թէ այնպէս շուշեցի հին սերունդը ժամը 9-ին, 10-ին հանգիստ ու խաղաղ ննջած է, որպէսզի առաւօտեան ժամը 4-ին նորից զարթնի ու գործէ:

- Խաղաղութիւն՝ և՛ ձեզ և՛ անո՛յշ քուն, ո՛վ շուշեցիք: Օրհնեալ լինիք դուք և ձեր ընտանիք: Իսկ դուք, փուչ և դատարկ ու իմաստակ նոր սերունդ, որ մինչև ի լոյս հիւրանոցներում և կլուբում կը թառիք ու կը թափառիք, լա՛ւ իմացէք, որ ձեր այդ կեանքով դուք կորած էք և յաւիտեան կը կորչիք: Թշուա՛նք, այս կլուբներից, այդ կեանք մաշող, դրամ և պատիւ վատնող հիմնարկութիւններից հեռացէ՛ք, շո՛ւտ յետ փախէ՛ք:

Այսօր՝ յունիս 16-ին, կուսանոցում երկու սարկաւազուհի պէտք է ձեռնադրուին: Գնացի հանդիսին ներկայ լինելու: Ձեռնադրողը սրբազան Սահինեանցն է, որ, ինչպէս ինձ յայտնի է, շատ նախանձախնդիր է եկեղեցա-

կան հանդիսից և արարողութեանց ճիշտ, անթերի և հանդիսաւոր կատարմանը: Այս անգամ ևս նոյնն եղաւ: Ձեռնադրութեան ժամանակ սրբազանը մի քարոզ էլ խօսեցաւ, ուր ս. Ստեփանոս նախավկայի կեանքն ու գործունէութիւնը ընծայացուների անցեալ և մանաւանդ ապագայ գործունէութեան օրինակ բերելով՝ հասկացրեց կուսանքներին իրանց և իրանց հին ընկերուհիների կեանքի նշանաբանը և գործունէութեան եղանակը: Սագիներեանց սրբազանը քարոզում է ժողովրդական մատչելի ձևով և օրինակով: Այդ է պատճառը, որ մի այլ քաղաքում, ուր սրբ. Սագիներեանցը յաջորդ էր մի ժամանակ, տեղական ժողովուրդը մեծաւ սիրով յաճախում էր նրա քարոզներին: Շուշեցիք, ինչպէս ես տեսայ, և ուրիշները ևս վկայեցին, նոյնպէս յաճախում և լսում են սրբազանի քարոզները:

Կենդանի խօսքը, քարոզը ամէնուրեք սիրելի է և յարգելի: Բայց սա սիրելի և յարգելի է մանաւանդ հայ ժողովրդեան: Պէտք է ուրեմն օգուտ քաղել այդ հանգամանքից:

Ձեռնադրութիւնը վերջացաւ: Պատարագը շարունակվում է: Ժամաւորների թիւը շատ-շատ է: Եղանակը տաք է, օդը՝ ճնշիչ: Եկեղեցուց դուրս եկայ կուսանոցի շինութիւնը և պարտէզները դիտելու: Եւ ահա տեսա՞ծ: Եկեղեցին թէև փոքրիկ, բայց բաւական գեղեցիկ է: Փառաւոր էր մանաւանդ զանգակատունը: Եկեղեցույ արևմտեան կողմում կուսանաց անպաճոյճ բնարաններն են, իսկ միւս կողմերում՝ կից ընդ կից երեք մեծ պարտէզներ՝ պտղատու ծառերով, բանջարանոցներով, ծաղկանոցով և խոտնոցով: Իսկոյն երևում է խնամք և գեղեցիկ սեռի գեղեցիկ ճաշակ գոնեա քաղաքի միւս պարտէզների նկատմամբ: Ափսոս, որ կուսանոցի պարտէզներում ևս այս տարի թրթուրը մեծ քանակութեամբ բոյն է դրել և աճել ու բազմացել:

Կոյսերի թիւը 4 է: Երկուս էլ մշտաբնակ աղօթող կանայք, թող ասենք, անպաշտօն կուսանք: Կուսանոցի ապրուստի, հագուստ և կապուստի գլխաւոր եկամուտը տալիս են վերոյիշեալ պարտէզների բերքերը և կուսանաց իրանց ձեռագործները: Կուսանոցը հիմնել և կարգաւորել է առաջին մայրապետ Հռիփսիմէ Բահաթուրեանց 1814 թուականին: Վախճանել է 1865-ին ի հասակի 75 ամաց: Հանգուցելոյ մարմինն ամփոփուած է եկեղեցույ գաւթում: Շիրմի կրկին արձանագրութիւններից մէկում տապանագիրը հանգուցելոյն անուանում է կոյսերի «կրօնապետ» հարկաւ պարգամտութեամբ:

Կուսանոցի վարչությունը պարտեզներից մեկում ճաշ է սարքել: Հրաւիրուած են սրբ. առաջնորդը, մի քանի քահանայք, դպրոցաց հոգաբարձուք և ոմանք ժողովրդականներից: Տողերիս գրողին, իբրև օտարականի, պատիւ էին արել հրաւիրել նոյնպէս: Ճաշում ենք, զուարճանում և խօսում: Ես շատ ուրախանում եմ, որ դպրանոցի հոգաբարձուք այնքան մօտիկ և մտերիմ են իրանց սրբազան նախագահին և փոխադարձաբար: Թե՛ գործերում և թե՛ զուրաճանալում նրանք անբաժան են միմեանցից և համերաշխ: Այդ ես նկատեցի և երեկ երեկոյ՝ մի այլ տան մէջ եղած հրաւիրում:

Խօսքը հայոց հանգստարանի մասին է: Հաստատում են, որ Արցախի մելիքների զուակաց և թոռաց գերեզմանները մշտապէս ապականվում են կրօնամոլ հարևաններիցն և ճանապարհորդներից: Գերեզմանների քարերը կոտորվում և կողոպտվում են նոյնպէս: Հոգաբարձու պ. Խաչատուր Բահաթուրեանցը, որ քաղաքական բժիշկն է միննոյն ժամանակ, առաջարկում է Շուշիում արդէն վերացրած քէլէխի և մեռեալների աղթիւ եղած մի քանի այլ աննպատակ ծախսերի փոխարէն կամաւոր նուէր հաւաքել ժողովրդից և հայոց հանգստարանը (քաղաքի հիւսիսարևելեան կողմում՝ պարսպից դուրս) պարսպով պատել: Հոգևորական դասը սիրով ընդունում է բժշկի առաջարկը և գործը սկսելուն և իւրովսանն յաջողեցնելուն խոստումներ անում:

Կատարեալ յաջողութիւն եմ ցանկանում:

Մեզ հետ ճաշում է մի վարդապետ՝ Մակար Բարխուդարեանց: Հայ սուրբն սրբ. Անդրեաս առաջնորդի օրիցն ի վեր ռեալական դպրոցում հայ լեզուի և կրօնի ուսուցիչ է շաբաթական 24 դասով և 600 ռ. ռոճկով, որով և ապրում է առանց որևէ այլ պաշտօն ունենալու:

Առաջին անգամ հետը ծանօթանալիս հայր սուրբն ինձանից շնորհակալ է լինում իւր գրքերի մասին «Մեղուում» մի տարի առաջ գրածս մատենախօսական յօդուածների համար:

Ո՛չ գրածս եմ յիշում, ո՛չ քննած ու գոված գրքերս, ոչ էլ նմանապէս նրանց հեղինակին ճանաչում: Այսքանս միայն գիտեմ, որ վարդապետ հեղինակներից ինձ յայտնի և սիրելի է Գարեգին վարդ. Սրուանձտեանցը: Բայց դուրս է գալիս, որ Մակար վարդապետն է նոյն ինքն «Ուստայ Գեորգ Բարխուդարեանց», «Աննա և Միրզա», «Արազը տարին կտարի» և «Պըլը Պուղի» գրքերի հեղինակը: Ապրե՛ն, շատ երկար ապրե՛ն այս տեսակ վարդապետները: Մակայն շուշեցի Մակար վարդ. Բարխուդարեանցը ռուսահայ գրականու-

թեան համար է և մի կատարեալ նոր Սրուանձտեանց ոչ թէ մինակ վերո-
յիշեալ գրքերի պատճառաւ, այլ և (և գլխաւորապէս) մի այլ գրաւոր, անտիպ,
պատմական գիւտի պատճառաւ, որ մօտ 35 տպագրական թերթ կը լինի, որ
ես անյագաբար, ծայրէ ի ծայր կարդացի:

Այդ աշխատութեան անունն է «Գաղտնիք Ղարաբաղի»: Ահա ձեզ մի
քանի խօսք այդ գործոյ մասին, որը մի նշանաւոր, անգին պատմական գիւտ
է: Սկսենք նախ հեղինակից, տեղեկութիւնքը քաղելով նոյն իսկ գրքիցը, նրա
զանազան հատուածներից¹:

Գրքի հեղինակն է Ապրէս Բէկնազարեանց՝ խնածախցի (Շուշուայ կշտին
մի գիւղ է) Աբրահամ Բէկնազարեանցի որդին: Այդ մարդը Արցախի
մելիքների մէջ թէ՛ իւր զիւորական քաջութիւններով և թէ՛ մանաւանդ քա-
ղաքագիտական հանճարով առաջնակարգ դեր է խաղացել Արցախի մելիք-
ների գործոց, ևս և երկրին տիրապետող ազգաց դիւանագիտական և դիւա-
նական շրջաններում: Աբրահամ Բէկնազարեանցն իւր ուսումը ստացել է
Գանձասարի Ներսէս կաթողիկոսից: Աղա Մահմատ խանի զօրքերը (1795-
ին) երբ գալիս են և Արցախը շրջապատում, Աբրահամն ինքն է եղել ղեկա-
վար և մղիչ Ծակքար կոչուած տեղում պարսից դէմ մղուած պատերազմին,
ուր հայ քաջերը յաղթող են հանդիսանում: Այդ ժամանակ պարսից զօրա-
վարն եղել է հայազգի Մելիք-Հայկազեանց գնդապետը: Երկուստեք

¹ «Գարաբաղի գաղտնիքը» թէն պ. Բաֆֆիի «Խամսայի մելիքութիւնները» գրքից մէկ տարով առաջ է լոյս
ընկել, բայց պ. Բաֆֆին նրան չ'է տեսել: Այս երևում է պարոնի օգուտ քաղած ձեռագիր պատմութիւնների
ցանկից (տե՛ս վերջաբանը «Խամսայի մելիքութեանց») և «Գաղտնիքի» բովանդակութիւնից: Պ. Բաֆֆին
իւր աշխատութիւնում տեղ-տեղ յիշում է, որ աղա Մահմատ խանի կամ Աբաս Միրզի բանակում եղել են
մի երկու խորհրդաւոր հայ մարդիկ: Դոքա «Ղարաբաղի գաղտնիքի» պատմիչների լրտեսներն են, որոնք
երբեմն ասագին ծառայութիւն են մատուցել ռուս բանակին
«Խամսայի մելիքութեանց» մթին և անորոշ տեղերը «Ղարաբաղի գաղտնիքը» այժմ պարզում է: Շատ
անգամ նրան հերքում, ստում է: Պ. Բաֆֆիի կամ աւելի ճիշտն ասելով նրա օգուտ քաղած պատմիչների
առաջ բերած հիմունքներն ու պատճառաբանութիւնքը՝ կերպարանափոխում է և իսկական հիմքերն
առաջ բերում: «Գաղտնիքում» ամբողջապէս դուրս են բերած այն ամէն նամակները, որոնք պ. Բաֆֆին,
ռուսաց ակտերից և ուրիշ աղբիւրներից առնելով, թարգմանաբար միայն մասամբ գրել է իւր գրքի մէջ:
Դարձեալ «Խամսայի մելիքութեանց» 346-356 երեսների ծանօթութեան մէջ յիշուած նշանաւոր
պարսկահայերի մեծագոյն մասն Աբրահամ Բէկնազարեանցի պրօտէժէներն են: Այդ ցուցակում Աբրա-
համի անունը չը կայ: Նոյն ծանօթութիւնում որպէս Մահմէդ շահի կնքապահ ղարաբաղցի Ալլավերդի
բէկը է նոյն ինքն մեր Ապրէս Բէկնազարեանցը: Նրան այս անունը տուել է (ինչպէս երևում է
«Գաղտնիքից») Ճաթախի շահն այն օրը, երբ նրա հօրը (Աբրահամ Բէկնազարեանցին) ներքինապետ
կարգելով անուանում է Իբրահիմ աղա, իսկ որդւոյն (Ապրէսին)՝ Ալլավերդի բէկ, և այլն, և այլն:
Մենք այդ ծանօթութեամբ ոչ թէ պ. Բաֆֆիի գովելի աշխատութեան արժէքը վայր ձգել ենք կամենում,
քաւ լիցի, այլ հասկացնել ընթերցողին «Ղարաբաղի գաղտնիքի» ասագին արժէքը հայ հարազատ
պատմութեան համար
(Ծանոթ. խմբ.) Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 4-րդ նամակը, որն առաջին ան-
գամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 51-ում (4 յուլիսի, էջ 2-3)

կայացած պայմանի զօրութեամբ Աբրահամ Բէկնազարեանը Մելիք-Մէջլիւմ Մելիք-Ադամեանի (Ջրաբերդի հայ մելիքն է) և Ադա Մահմատ խանի հետ գնում է նախ Թիֆլիս և ապա Պարսկաստան առանց Մելիք-Մէջլիւմին: Բէկնազարեանցը իւր հետ տանում է նաև իւր Ապրէս որդւոյն, որ երկոտասան ամեայ գոլով, Ծակքարի պատերազմին ներկայ էր, և որ իւր սկզբնական ուսումը ստացել է խնածախցի Աբրահամ քահանայի մօտ: Իսկ այդ քահանայի ուսումնարանի առաջին դասագիրքը եղել է «Եղիշէն», որ Ապրէսը գրեթէ անգիր իմանալիս է եղել:

Պարսկաստանում Բէկնազարեանց Աբրահամը կարգվում է զօրավար և առաջին խորհրդական Ադա Մահմատ խանին: Եւ իսկոյն ձեռք է զարնում որդւոյն (Ապրէսին) կրթութեանը: Մի քանի տարիների ընթացքում Ապրէսը շատ լաւ սովորում է պարսկերէնը, ևս և ֆրանսերէնը Թէհրանում բանտարկուած մի ճիզուիտից: Եւ ապա կարգվում է քարտուղար պետական խորհրդարանի:

Ադա Մահմատ խանի, Ֆաթալի շահի և սրա գահաժառանգ որդի Աբաս Միրզայի ժամանակներում թէ՛ Պարսկաստանի մէջ և թէ՛ արտաքոյ նրա կատարուած տերութենական ամենատեսակ գործոց, պատերազմաց և ներքին ու միջազգային յարաբերութեանց, մանաւանդ գաղտնի գործոց մէջ, այսպիսով, առաջնակարգ դեր են խաղացել հայր ու որդի Բէկնազարեանք: Նրանց գլխից ու գրչի տակից են ելել ամենատեսակ գաղտնի թղթերն ու հրահանգներ: Ստացուած պատասխանները նոյնպէս իրանք են պահել և իրանք գործադրել տուած:

Եւ որովհետև այդ ժամանակներում և այդ գրագրութեանց մէջ զլիաւոր և անընդհատ տեղ են բռնել Արցախի մելիքներն ու Ադուանից և Գանձասարի կաթողիկոսները, որոց հետ Բէկնազարեանցը գաղտնի և անընդհատ գրագրութիւն է ունեցել, վասն որոյ Աբրահամը որոշում է շահերի արքունիքում և իւր մօտ եղած հայ մելիքութեանց վերաբերեալ այդ ամենատեսակ փաստաթղթերից կազմել հայ ազգի հարիւր (1730-1830) տարուայ պատմութիւնը, ուր մտնում են Անդրկովկասի և Դաղստանի բոլոր խաների և բէկերի, ևս և պարսից արքունիքի՝ Պետերբուրգում ունեցած լրտեսների գրագրութեանց ընդօրինակութիւնը: Եւ ահա ծագումն «Գաղտնիք Ղարաբաղի» ձեռագիր մատենին, որ եւ Մակար հայր սուրբի մօտ գտնելու և կարդալու ամենամեծ բախտաւորութիւնն ունեցայ:

«Ղարաբաղի գաղտնիքը» գրել է Ապրէս Բէկնազարեանց, բայց միշտ հօր անմիջական թելադրութեան և հսկողութեան ներքոյ և հանապազ ծածուկ շահերի արքունիքից և առհասարակ պարսիկներից և որևիցէ մարդուց: Բոլոր պատերազմներին և ամէն տեղ հայր և որդի Բէկնազարեանք ի պաշտօնէ ներկայ և ականատես են եղել և արածները, տեսածները նոյնութեամբ արձանագրել՝ կցելով յետոյ գրաւոր փաստաթղթերը:

Եթէ պատահել է, որ մի տեղում կամ մի գործքի ժամանակ հայր և որդի միմեանցից բաժան են եղել, թէն շատ քիչ անգամ, այդպիսի դէպքերումն էլ Աբրահամ Բէկնազարեանցը «Ղարաբաղի գաղտնիքին» վերաբերեալ նիւթերը նամակներով հաղորդել է որդւոյն՝ պատուիրելով նոյնութեամբ արտագրել: Եւ Ապրէսը նոյնութեամբ հօր պատուերը կատարել է: Յետոյ միմեանց մօտ գալիս՝ միասին կարդացել և վաւերացրել են:

Գրքի առաջին մասը գլխաւորապէս հօր պատմածը և որդւոյն գրածն է, այսինքն այն մասը, որից Ապրէսը, մանուկ գոլով, տեղեկութիւն չէր կարող ունենալ: Իսկ միւս և ամենամեծ մասը բաղկացած է նամակներից, պայմանաթղթերից, խնդրագրերից, բողոքագրերից, գաղտնի հրահանգներից և այլն: Այդ ամէն թղթերը երբեմն ամբողջովին արտագրած է «Գաղտնիքի» մէջ և երբեմն նրանց բովանդակութիւնը համառօտեցրած, բայց հանապազ տարեթուերով, ամսաթուերով, ժամանակագրութիւնը օրինակելի: Գլխների բաժանմունքը (ընդամենը ԿԱ) կանոնաւոր: Գրուածքը՝ յիշատակարանի ձևով՝ ամ ըստ ամէ:

Աբրահամ Բէկնազարեանցը, ի խոր ծերութեան հասած, 1828 թուին մեռնում է և արքայավայել հանդիսով, որին ներկայ էր և ինքը՝ Աբաս Միրզան, թաղվում է (հոկտեմբերի 10-ին) Թաւրիզի Հայոց եկեղեցումը՝ «կից Մելիք-Աբովեան մելիք Առըստամ (Ռոստոմ) բէկի գերեզմանին»:

Մեռնելուց առաջ ծերունու արած քանի նշանաւոր կարգադրութեան մասին եւ ընթերցողին տեղեկութիւն կուտամ յետոյ, երբ «Գաղտնիքի» բովանդակութիւնը կը դնեմ նրա առաջ: Այստեղ կասեմ միայն այս, որ Աբրահամ Բէկնազարեանցը մեծամեծ արտօնութիւններ է ձեռք բերել պարսկահայերի համար և նրանց շատերին բախտաւորեցրել: Կեանքի վերջին օրերում մի նամակ է գրել Բաղդասար մետրօպօլիտին (ի պատասխան նրա նամակին), որոյ մէջ ցոյց է տալիս, թէ որ ձորում և որ վանքում ինչ տեսակ ձեռագիր-մատեաններ են թաղուած, որոց մի մասը մետրօպօլիտը գտել է:

Կտակել է Ապրէս որդւոյն վերադառնալ հայրենիքը՝ Խնածախ, օրհնել տալ իւր մօր, եղբարց հանգստարանները, տեսնել, համբուրել հայրենի տունը և «Բէկնազարեանց ծառը», յետոյ Խնածախում ամուսնանալ կենդանի ու կանգուն պահելու համար իրանց տոհմի անունն ու յիշատակը: Եւ յետոյ... մահուան մօտեցած օրերումը տպագրել տալ «Ղարաբաղի գաղտնիքը»:

Այս կտակի հետ հայր Աբրահամը յանձնում է իւր որդւոյն նրա համար տնտեսած տասնհինգ հազար թումանը: Իւր քրիստոնէական կրօնական պարտականութիւնքը կատարում և հոգին աւանդում է՝ վերջին անգամ մրմնջալով. «Զգուշացի՛ր, որ քո ձեռագիր պատմութեան գլխին փորձանք չը գայ. ա՛ռ և պիտո՛ւ ու զգոյշ պահի՛ր այս ամենաձաձուկ ու վտանգաւոր նամակները»:

Աբաս Միրզան ոչնչով չէ համաձայնում Ապրէս Բէկնազարեանցին թոյլատրել իւր հայրենիքը վերադառնալու, ուր նրա կեանքին մահ է սպառնալիս եղել ի ձեռն Արցախի ճշմարտ (կեղծ) խաների և ճշմարտ բէկերի: Վերջիվերջոյ որոշվում է, որ Աբրահամի որդին Երուսաղէմ գնայ: Եւ Ապրէսը գնում է Թաւրիզից՝ մեկնելով 1838 ամի աշնանը: Նա, Երուսաղէմում իրան վարդապետ կեղծելով, մնում է ինն տարի: Յետոյ Երուսաղէմի այն ժամանակուայ պատրիարք «Մշո գաւառի Կոփ գիւղացի Զաքարիա Տէր-Գրիգորեանցի» հրամանն ու օրհնութիւնը առնելով, դուրս է գալիս Երուսաղէմից: Շրջագայելով Յոպպէ, Պէրուք, Թարսիս, Կիլիկիա, Զէյթուն, Մարաշ, Հոռմկլա, Սիս, Երզնկա, Մանեայ այրը, Մեծն Ներսիսի վանքը, Կեսարիա, Նիկոմիդիա, Արմաշու վանքը, Կ. Պօլիս, Տրապիզոն, Կարին, ս. Կարապետ, Մուշ, Վան, Նարեկ, Վարագ, Աղթամար, Կտուց, Լիմ, ս. Ստեփանոս վանքերը, Էջմիածին և նրա շրջակայ վանքերը, Սևան, Գեղարդ, Խորվիրայ, Հին Նախիջևան, Ապրակունիս, Տաթև և Շուշի և ամբողջ Արցախը: Եւ այդ ամէն տեղերը քննում, զննում և միշտ յուսաբեկ սրտով ու լալագին աչքերով հետնում է իւրաքանչիւրիցը՝ իրանից անբաժան ունենալով «Ղարաբաղի գաղտնիքը»:

Ապրէս Բէկնազարեանցի շրջագայութեան ժամանակը տևում է երեսունինն ամբողջ տարի: Շրջագայելիս նա միշտ ծպտելիս և կեղծելիս է եղել: Վերջիվերջոյ բոլոր աշխարհից և մարդկանցից յոյսը և հաւատը կտրած՝ առանձնանում է (դարձեալ ծպտած) հայրենի Խնածախ գիւղը և մէն-մինակ ապրում մինչև 1881 թուականը: Այդ տարուայ յունիս ամսին զգալով մահուան օրերը՝ Ապրէս Բէկնազարեանցը գալիս է Շուշի և թաքուն Մակար

վարդապետ Բարխուդարեանցին սենեակը մտնելով՝ «Ղարաբաղի գաղտնիքը» նրան է յանձնում ու նրա տպագրությունը խնդրելով՝ թողնում իսկոյն ու անյայտանում:

Թէ ինչի՞ Բէկնազարեանցը իւր գիրքը վարդապետին է յանձնում, այլ ոչ եպիսկոպոսին կամ մին ուրիշին, պատճառն այն է, որ վերջինս նոյնպէս խնածախցի է: Ապրէս Բէկնազարեանցն այդ բանն իմացել է Բարխուդարեանցի «Աննա և Միրզա» (տպած Ձմիւռնիայում) վիպասանութիւնը Կ. Պոլսում կարդալով: Ուստի և կամեցել է իւր գաղտնիքը իւր համազիւղացուն յանձնել, որ և յանձնել է:

Իմ հարցմանս, թէ ո՞ւր է և կենդանի՞ է արդեօք Ապրէս Բէկնազարեանը, Մակար հայր սուրբը պատասխանեց, որ ստոյգ տեղեկութիւն չունի: Միայն իւր հետազօտութիւններից այսքանս միայն ի յայտ է եկել, որ խնածախցի քահանա, ինչպէս քահանան ինքն է ասել, թաղել է երեք տարի առաջ մի օտար և անծանօթ հայ մարդու, որոյ անունն ու կերպարանքը լաւ չէ յիշում:

Ուրիշ և հաւաստի տեղեկութիւն, սիրելի հա՛յ ընթերցող, չը կայ «Ղարաբաղի գաղտնիքի» հեղինակին և այդ ամենահետաքրքիր ձեռագրի ժիր և արթուն հրեշտակ-պահապանի մասին:

Եթէ դրամական միջոցներս ներեցին, ես ինքս մտադիր եմ Խնածախ և նրա շրջակայքը պտոյտ անել և խորհրդաւոր հայ մարդու կեանքի վերջին տարիների մասին տեղեկութիւնք հաւաքել: Երանի՛ թէ յաջողեմ:

Հետևեալ նամակաւս կուղարկեմ խմբագրութեան «Ղարաբաղի գաղտնիքի» բովանդակութիւնը¹:

Յունիս 19: Այսօր ճաշում եմ պ. Բաբա Բեգլարեանցի տանը: Ասում են, որ այդ ընտանիքը հարստութեան կողմից Շուշուայ մէջ առաջինն է: Ես այդ տեսնում եմ պարոնի պալատանման տնից և սրա շքեղ արդուզարդից և կահ-կարասիքից: Բայց ինձ գրաւողը և ուրախացնողը ո՛չ Բեգլարեանցի հարստութիւնն է, ո՛չ նրա տունը կամ ճոխ ճաշը, այլ այն նահապետական-պատուական յարաբերութիւնը, որ ես տեսնում եմ այդ ընտանեաց մէջ: Պ. Բաբան Բեգլարեանց գերդաստանի նահապետ-պատրիարքն է: Նա մի եղբայր ևս ունի ամուսանացած՝ մի քանի զավակաց հայր: Ունի և ամուսանցեալ որդի: Դրանք ամէնքը՝ թէ՛ մեծ և թէ՛ փոքր, շրջապատել են ծերունուն և ամէն կերպ աշխատում են պատուել, մխիթարել, ուրախացնել նրան,

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 5-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 52-ում (7 յուլիսի, էջ 2-3)

կատարել նրա հրամանները: Քեֆա գալիս է, երբ տեսնում եմ, որ մեզ հետ սեղանակից են, տան նահապետի շուրջ նստած, գերդաստանի բոլոր անդամները: Իսկ երկու պատանիքը ծառայում են սեղանին: Բայց թե՛ ճաշողների և թե՛ ծառայողների քաղաքավարությունը, փոխադարձ յարգանքը, հլուքինը, ամենայն լուրջամբ ու պատշաճականությամբ հիւրերին և տան նահապետին խօսակցությանց հետևելը, լսելը և այդ ամենը ոչ թե կեղծեօք, այլ պարզ սովորությամբ, ունակությամբ, ի սրտե, այո՛, այս ամենը ինձ շատ ուրախացնում է: Եւ ես ինքս ինձ ասում եմ. «Ահա մի հայ մարդ, ահա մի ընտանիք, որ նոր ժամանակին հետևելով, նրա բարիքը ունենալով և վայելելով հանդերձ, միևնոյն ժամանակ գիտե և պահպանում է հնի, հին ժամանակի լաւ և ընտիր յատկութիւնքն ու սովորութիւնքն ևս»:

Պ. Բաբա Բեգլարեանը, իւր եղբայրը, ամուսնացեալ որդին, ինչպէս ասում են, աշխարհք տեսած մարդիկ են: Նրանք իրանց առևտրական գործերի պատճառաւ մինչ օրս էլ ճանապարհորդում են Եւրօպա և Ռուսաստան: Եւ ուրեմն այդ մարդիկը և դրանց նմանները, որոնց թիւը բարեբախտաբար, Շուշիում, ասում են, շատ է, անհամեմատ աւելի լուսաւորված են, քան մեր այժմեան բազմաթիւ quasi-լուսաւորեալները, բայց ահա տեսէք, թե յիշեալ ընտանիքը և իւր նմանները, ինչպէս պինդ կերպով պահպանում են իրանց պապենական ընտիր սովորութիւնքը, չափաւորութիւնը և փոխադարձ սէրն ու յարգանքը ևս: Ես հաւատացած եմ, որ մեր հայ վաճառականներից միմիայն այսպիսիքը կարող կը լինին իրանց օջախը տոկուն ու կանգուն պահել, որով թե՛ իրանց և թե՛ հետևաբար իրանց հասարակութեան և ազգին պիտանացու լինել: Իսկ լպստած, յանդուգն, դատարկ գլխով և գրպանով անհասուններից և ընտանիքներից (ով և որտեղ ուզում են լինին) ո՛չ հարստութիւնը շահ ունի, ո՛չ ազգը: Մտքներդ բերէք թէկուզ Թիֆլիս, թէկուզ նոյն ինքն Շուշուայ մի քանի հարուստ հայ օջախները:

Դրանք և դրանց որդիքը մի ժամանակ՝ դեռ երեկ, մէկէլ օր, հարիւր հազարներ և միլիօններ էին շաղ տալիս: Բացի գլուխներիցը և սրտերիցը՝ ոչնչով չէին զանազանվում եւրօպացիներից, բայց այսօր չը կան, չբացել են դրանք, մնացածներն էլ՝ օրական հացի կարօտ, անտէր ու անտուն, թշուառ և երերուն:

Պատճառն ի՞նչն է: Ոչ այլ ինչ, եթէ ոչ իրանց կեղծ-լուսաւորութիւնը, իրանց կապկային բնաւորութիւնը, անչափաւորութիւնը, շռայլութիւնը և պապենական ընտիր-ընտիր վարք ու բարքի և սովորութեանց ոտնահա-

րումը: Նրանք չը կարողացան, անընդունակ գտնուեցան նորութեան հարազատ բարիքները ձեռք բերել և միևնոյն ժամանակ չը կարողացան գէթ հնութեան բարիքները պահպանել: Կամ թէ՛ հնութեան և թէ՛ նորութեան բարիքները միախառնել, ներդաշնակաւորել: Եզովպոսի շան նման իրանց բերնի թիքան բաց թողին և ստուերի ետքնիցը ընկան, ուստի և իրանք էլ կորան, իրանց բերնի թիքան էլ: Տխուր, յուսահատեցուցիչ մտածողութիւնք:

Բացի սրբազան առաջնորդից և վիճակային դպրանոցի տեսչից՝ սեղանակից են նաև մի քանի պատուաւոր հայ վաճառականք: Դրանց հետ ես խօսում եմ իրանց մասնագիտութեանը վերաբերեալ հարցերի վերայ: Ուզում եմ լսել, սովորել դրանցից: Եւ շնորհակալութիւն, բաւականին բաներ լսեցի և սովորեցի: Լսածներիցս մինը ուզում եմ ընթերցողին էլ հաղորդել:

Վաճառականներից մինը, որ մինչ օրս էլ Թէհրանում վաճառապետ է (թաջիրբաշի), ինձ հաղորդում է, թէ ինչ դիրին, գործնական, յարմար և ձեռնտու եղանակով Թէհրանում նստող եւրօպացի հիւպատոսները ստանում են իրանց ռաճիկները և դիւանական ծախքերը իրանք տէրութիւններից՝ ամսէ ամիս փոխանակագրութեամբ: Նոյն բանի համար մեր տէրութիւնը որքան է թերևս կուրսերի մէջ տուժում: Մինչդէռ Թէհրանում կան շատ և վստահելի, թէկուզ լոկ ռուսահպատակ վաճառականներ, որոնք միշտ պատրաստ են ամսէ ամիս փախանակագրութեամբ նախ Թէհրանում վճարել հիւպատոսին հարկաւորեալ գումարը և ապա ստանալ Պետերբուրգում կամ ուր էլ որ լինի: Թէհրանի վաճառականաց այս առաջարկութիւնը, չը նայած իւր երկու իսկ կողմանց համար եղած օգտակարութեանը, միշտ մերժուել է և մերժուում է¹:

Ճաշից յետոյ տանուտիրոջ որդւոյն՝ պ. Գաբրիէլ Բէզլարեանցի սիրալիր ուղեկցութեամբ գնացի, այսպէս անուանեալ, Բեօխի աղբիւրը տեսնելու: Աղբիւրը քաղաքի հարաւարևմտեան կողմն է՝ մօտ երեք վերստ նրանից հեռու:

Պարսպի մեծ, կամարակապ դռնից դուրս գալով՝ մեր աչաց հանդէպ բացուեցաւ մի շքեղ և վայրենի տեսարան:

Լեռները կոյտ առ կոյտ կցուած են միմեանց և գրեթէ գագաթներիցը մինչև ստորոտ ծածկուած կաղնիի, զկեռի, շլորենիի, հոծ վարդենիի խիտ, բայց կարճահասակ անտառներով: Ծառերի վրայ վիստում են կարմրալանջը և

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 6-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 53-ում (11 յուլիսի, էջ 1-2)

մոշահար: Սոխակի երգը չը լսողին համար կարմրալանջը կարող է նրան փոխարինել: Եւ թերևս այդ է պատճառը, որ շուշեցիք կարմրալանջին բիւ-բիւ են անուանում: Ճշմարիտ է, այդ թռչունն էլ շատ լաւ է երգում, բայց նա սոխակ չէ դարձեալ: Իսկ մոշահա՞ւր... , օ՛հ, այդ թռչնակի երգ ու եղանակիցն չեն ախորժում:

Մենք պետք է բարձրից ցած իջնենք շարունակ: Բեօխի աղբիւրը (բեօխը պուկ ծառն է, որից առնուած է աղբիւրի անունը) լերանց խոխումներումն է: Պարսպից մի քանի քայլ անցած՝ տեսայ հայոց մի նոր հանգստարան, նրանից ցած՝ մի աղբիւր, որից ժողովուրդը խմելու ջուր է կրում աւանակներով: Շատ լաւ է, բայց չէ՞ որ այդ աղբիւրի ջուրը հոսում է գերեզմանների տակից: Չէ՞ որ դիակների նեխած և փտած մասերը լուծվում են դրա մէջ: Արդեօ՞ք ես սխալվում եմ: Արդեօ՞ք Շուշուայ այդ ջրառատ քեահրէզի ստորերկրեայ ջուրը հետագօտուած է:

Լուրջ ուշադրութիւն պետք է դարձրած այսպիսի հանգամանքներում: Ապա թէ ոչ ողջ թաղը անզգայաբար կարող է եթէ ոչ թունաւորվիլ, գէթ այլ և այլ հիւանդութեանց ենթարկուիլ¹: Չը մոռանաք, որ այդ թաղի օղը եւս համեմատաբար կեղտոտ է, անմաքուր: Պարսպից ներս՝ դէպի ձախ տարածուած ողջ այդ թաղը եւ ուրիշ անգամ ման եմ եկել և զարմացմամբ տեսել, որ այդ թաղի տների առաջը և կողքերին եղած փոսերը, քարափի անձաները մարդկանց կղկղանքով լիքն են: Դրանից բերթար են և՛ թրքական ընդարձակ թաղի մի քանի փողոցները ևս, ուր առանց քիթը թաշկինակով ծածկելու կարող չէք անցնիլ:

Բաւականին ներքն գնալով՝ հանդիպում ենք Շոշոան աղբիւրին, որոյ ջուրը, ճշմարիտ որ շոշուալով դուրս է գալիս ծորակներից: Ես այդ ջրից չը խմեցի, բայց լսեցի, որ լաւ ջուր է: Շոշոանի հանդէպ կան քեարփիջխանէքը, ու հայք աղիւս են պատրաստում կաւախառն հողից և 1000-ից 8-10 մանէթով ծախում: Աղիւսը շուշեցիք գործ են դնում միմիայն վառարաններ և միջնորմներ շինելու համար: Փոքր-ինչ վերն տեսած էինք և Գեանջուցենց աղբիւրը: Դրա ջուրն այժմ ուզում են քաղաք փոխադրել: Վերջապէս ահա ձեզ և Բեօխենց աղբիւրը:

Չորս կողմդ լեռներ ու ծառեր, իրանց թևաւոր երգիչներով: Ջուրը՝ սառն, պատուական: Միտս եկաւ հ. Սրուանձտեանցի նկարագրած մի աղբիւրը՝

¹ Քաղաքի հարաւային կողմը՝ գիւղացիներից բնակուած թաղում, կան, սայպէս անուանեալ, Բեխենց հորեր՝ թուով կարծեմ 12: Այդ հորերի ջուրը ևս լաւ ջուր չէ

«Եւ ջուր մի ևս խմենք, դարձեալ ունայ մը ընենք, բայց միշտ ծարաւ ենք»։ Աղբիւրի վրայ մի ընդարձակ քարեայ ծածկոյթ է շինած։ Միջին՝ վառարան՝ խորոված պատրաստելու համար։ Արժէ՛ : Թէ՛ աղբիւրի ջուրը, թէ՛ տեղոյ դիրքը և գեղեցկութիւնը ու հրապոյրներն արժեն, որ մարդ այդտեղ նստի երբեմն և քէ՛ ֆ անէ։ Բայց, ի սէր աստուծոյ, այդ ժամանակ հեռացրէ՛ ք անտառից ձեր այդ չարագուշակ մոշահաւին։

Աղբիւրը՝ իւր քարաշէն ծածկոյթով.

յիշատակ է Աստուածատրոյ Դաւթեան Ճգնաւորեանց. 1871:

Այսպէս փորագրած է մի քարի վրայ։ Տէ՛ր, լուսաւորէ հոգին։ Բայց երևում է, որ հանգուցեալ Ճգնաւորեանցը ճգնաւորի կեանք վարելիս չի եղել, այլ շատ սիրելիս է եղել յիշեալ ծմակում և աղբիւրի կշտին քէֆէ՛ր անել։ Քէֆն էլ պէտք է, բայց ամէն բանի մէջ ծայրայեղութիւնը լաւ չէ առհասարակ։

Աղբիւրից ցածր բանջարանոցներ են երևում, որոց մէջ լաւ լոբի ու պատուական վարունգ են ցանում։ Ես որովհետև շատ կուշտ եմ, ախորժակ չունիմ, ուստի Բեօխենց աղբիւրը և իւր բանջարանոցի վարունգները թողնում եմ այլոց, իսկ ինքս ուղեկցիս հետ ձի աշտանակում և քշում, գնում տուն¹։

Շարունակ երկու օր Շուշուայ թիւրքաց թաղում շրջելով ես պարզ կերպով նկատում եմ, որ տեղոյս թիւրքերի տնտեսական վիճակն աւելի լաւ է, քան հայերինը։ Դրա պատճառը նախ և առաջ այն է, որ Շուշուայ թիւրք ազգաբնակչութիւնն ընդհանուր առմամբ, իհարկէ, միանգամայն ազատ է այլ և այլ նորամոյժ և տնտեսական կանոնները քայքայող սովորութիւններից, սովորութիւններ, որոնց այնքան սիրահար են հայերը։ Երկրորդ՝ գրեթէ ամէն թիւրք գերդաստանի գեղեցիկ սեռը, օրն ի բուն, պարապած է գորգագործութեամբ։ Համեմատելով այդ և հայ կանանց ձեռագործների տեսակը, ժամանակամիջոցը, քանակութիւնը, որակութիւնը և արժէքը՝ ես տեսնում եմ, որ թիւրք կնոջ գործունէութիւնն աւելի շահաւետ է։ Երրորդ՝ հայերի ձեռքում եղած դրամական ոյժն անզգալի կերպովն թիւրքաց ձեռքն է անցնում։ Այ տեսէ՛ք, թիւրքերի նախկին տներն աւելի անշուք են եղել, քան այժմեանները։ Նրանց տներն առաջ ամբողջապէս լերան արևելեան լանջերումն են սփռուած եղել, իսկ այժմ դրանք կամաց-կամաց բարձրանում և բռնում են նաև լերան արևմտեան լանջերն էս։ Ինձ թվում է, որ շատ ժամա-

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 7-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 54-ում (14 յուլիսի, էջ 2)

նակ չանցած՝ շուշեցի հայք ստիպուած պետք է լինին կա՛մ քաղաքի յետ ընկած անկիւններումը սեղմուիլ, կուչ գալ, կա՛մ թողնել իրանց բնակավայրը և գաղթել: Եւ արդէն 100 հայ ընտանիք իշխանութիւնից գրաւորապէս խնդրել է, որ իրանց թոյլտուութիւն լինի քաշուիլ դէպի Թարթառի դաշտը և այնտեղ նոր կօլօնիա սարքել: Այդ հարցի առթիւ ես կը խօսեմ յետոյ, առայժմ այսքանս միայն կասեմ, որ այդ ամէնը «սկիզբն է երկանց»:

Մտայ մզկիթների մէջ. տեսայ աղօթաւորներին, լսեցի մօլլայի աղօթասացութիւնը և քարոզը, երկունք էլ օրինակելի են, ինչպէս այդ կողմից միշտ կարող է պարծել մահմեդական ազգը թէ՛ աստուծոյ և թէ՛ մարդկանց առաջ: Մզկիթներից մէկի շինութիւնը դեռ ամբողջացած չէ: Բայց երկու իսկ մզկիթներն եւս թէ՛ դրսից և թէ՛ ներսից փառաշէն են, սրբատաշ քարերով եւ քարեայ միաձոյլ սիւներով կերտած: Մզկիթները յիշատակ են Գեօհար (Գօհար) աղայի: Մա ողջ Արցախին յայտնի Իբրահիմ խանի դուստրն է եղել: Աղա տիտղոսը պատուի համար տրուած է իրան, թէպէտն ինքը իգական սեռին է պատկանում: Մզկիթների անշարժ կալուածներն են մէկ քարվանսարայ, մէկ պարտեզ և երկու գիւղօրայք, որոց տարեկան արդիւնքը հասնում է ընդամենն 4000 ռուբլի: Նոր շինուող մզկիթի արձանագրութիւններից կամ յիշատակարաններից մէկումն ասած է (ինչպէս թարգմանեցին ինձ), որ յիշեալ կալուածոց տարեկան արդեանց և ծախսուց հաշիւը ստուգելու և վաւերացնելու համար պետք է միշտ յանձնաժողով նշանակուի: Անդամոց 20-ը Շուշուայ թիրքերիցը լինին, իսկ 20-ը՝ հայերից: Ահա ձեզ մի խելօք և հեռատես բարեգործ կին. «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

Տեսայ այսպէս անուանեալ «Խանի», ևս և նորոգ հանգուցեալ Շահգաղայ Բէհմէն Միրզայի տանու պարտեզները: Գեղեցիկ են և ճաշակով: Ծառներիցն առաւել ինձ դուր եկան վարդենիները, որոց բուները, ի շնորհս իրանց չորս կողմից դէմ տուած ձողերի կամ նեցուկների, ուղղահայեաց դիրքով բարձրացել և մինչև միւս ծառների գագաթներին են հասել, դեռ մի փոքր էլ այն կողմն է անցել...: Չը նայելով, որ հիւանդ էր և անկողնում պառկած, Գազի Միրզա Հասանը բարեհաճեց ընդունել ինձ: Այս մարդը, ինչպէս յայտնի է, անդրկովկասեան բոլոր շիիններին շէյխ-իւ-իսլամ է նշանակուած և Թիֆլիս տեղափոխուելու համար սպասում է թագաւոր կայսեր հաստատութեանը: Գազի Միրզա Հասանը տակաւին ջահել տղամարդ է: Բաւականին լաւ է խօսում ռսերէն: Եւ խօսելիս ընտիր և առողջ մտքեր շատ է յայտնում: Նրա նիստուկացն իմ աչքին թուաց շատ պարզ ու հասարակ, որ,

ի հարկէ, շատ և շատ գովելի է և Միրզա Հասանի համար պատուաբեր: Ապագա շէյխ-իւլ-իսլամը միմիայն մի կին ունի: Մինչ ցարդ նա պարսկերէնի և մահմէդական կրօնի ուսուցիչ է եղել տեղւոյս ռէալական դպրոցում՝ ստանալով 600 ռուբլի ռոճիկ ի տարին:

Թիւրքաց թաղում մի անյայտ նահատակի գերեզման կայ, որ տափարակեայ ցանկով պատած է և կողպած: Բանալին մի հարևան թիւրք տան մէջ է պահվում: Գերեզմանը հաւասարապէս յարգի է թէ՛ մահմէդականներին և թէ՛ քրիստոնէաներին: Ասացին, որ Մեծի պահոց աւագ շաբթու չորեքշաբթի օրերումը երկու իսկ ազգաբնակութիւնից, մանաւանդ իգական սեռից, մեծ բազմութիւն է հաւաքվում գերեզմանի շուրջ և ուխտ ու երկրպագութիւն անում: Նահատակի գերեզմանը կոչվում է «Քամու խաչ»:

Թիւրք և հայ կանանց բազմութիւնով գրեթէ միշտ լիքը տեսայ Շուշուայ մօլլա բիւերի (գիտուն մօլլայի) տունն ու գաւիթը: Մօլլա բիւերը, ինչպէս և, հայ դերձիկ Գաբրիէլը, թուղթ ու գիր անողներ են և, ինչպէս ինձ հաւատացրին, շուշեցի երկիւղած կին-արմատներից մեծ փող կը ջնդեն, կը հաւաքեն: Ասած է. «աշխարհը դմակ, մարդը դանակ, ինչքան կուզիս կտրի՛ր ու վայելի՛ր»:

Վերոյիշեալ անմահկանացու մահկանացուներից բոլորովին այլ ուղղութիւն և նպատակ ունի Հաջի-Ղուլին, որին պատմութեան վերաբերութեամբ տուած հարցմանցս պատասխաններիցը ես ենթադրում եմ, որ հարիւրից անց պէտք լինի, թէպէտև դեռ ժիր է և ամենայն խստութեամբ իւր օրոջն¹ է պահում: Եւ ինչպէ՛ս էլ լաւ հայերէն է խօսում այդ հինատուրց ծերունին: Հաջի-Ղուլից հարուստ մարդ է, ունի շատ որդիք, պալատանման տուն և ճոխ արդուզարդ: Այդ մարդը հոգու վարձքի և խաթրի համար ձրիաբար բժշկում է գորտնուկը և շան կծածը: Գիտե՞ք ոնց: Գորտնուկ ունեցող մարդուն և երեխային նա բռնում է իւր դողդոջուն ձեռքերում և իւր աղօթքը մըմնջում: Յետոյ գորտնուկի ճիւղի վրայ քեռաթեր անում և տալիս հիւանդին, որ մի տեղ պահէ: Ճիւղի չորանալուն պէս չորանում և անհետանում է գորտնուկը:

Շան կծած հիւանդի վրայ նույնպէս նախ աղօթում է Հաջի-Ղուլին և յետոյ մի փառաւոր ապտակ տալով հիւանդի երեսին՝ տուն ճամփում: Եւ, օ՛հ հրաշք, հիւանդս կատարեալ բժշկութիւն է ստանում:

¹ Օրոջ, օրուջ-ծոմապահութոյն Ռամազանի ժամանակ (ծանոթ. խմբ.)

Գուցե Հաջի-Ղուլիի այս հրաշագործութեանց ընթերցողը չէ հաւատում: Իրաւունք ունի: Խոստովանանք մնայ, ես էլ չեմ հաւատում, թէն փորձը աչքերովս տեսայ: Քանի որ տասնեակաւոր մարդիկ, Հաջի-Ղուլիի բժշկածներից և սրանց ազգականներից պնդելով պնդում էին, որ այդ մարդու բժշկականութիւնը ոչինչ կասկած չէ վերցնում, ուստի այդ հարցը ես թողնում եմ գիտնականներին և բժիշկներին հետազօտելու և լուծելու: Ինչ որ ինձ է վերաբերում, ես հաւատում եմ, որ ամէն տեղ և ժամանակ ժողովրդական մօլլա բիւրները, դերձիկ Գաբրիէլները և Հաջի-Ղուլիները, չը նայած իրանց մոլորութեանցը և մոլորեցուցմանցը, այնուամենայնիւ, իրանց մէջ և իրանց հետ ունին մի ո՛րժ, գիտութիւն թէ՛ հաւատ և զօրութիւն, որոցմով այս և այն բանը յաջողեցնում են: Եթէ գիտութիւնը բացատրած չը լինէր, ո՛վ կը կարծէր, որ բիշօպիդը մի բնական երևոյթ է: Մի՞թէ քիչ են այն երևոյթները, որոց առաջ գիտութիւնը այսօր կատարեալ համր է տակաւին:

Չը մոռանամ յիշել թիւրքաց մէդրէսէն: Սա մի մեծկակ սենեակ է, ուր 100-ից աւելի մանուկներ ծալապատիկ, միմեանց կողքին նստած են և գլուխները տարութերելով կարդում են, խօսում, ծիծաղում, լաց լինում, մէկզմէկ բոթում: Մանկավարժ մօլլան էլ, ծալապատիկ նստած պատուհանի միջին, սպասում է, որ իւր աշակերտները դասերը պատրաստեն և գան իրան հաշիւ տան: Կեցցե՛ մանկավարժութիւն:

Թիւրքաց թաղում շրջելիս ես առաջին տեսայ, որ թիւրք կանայք աւելի ազատ են, քան հայ կանայք, մինչև անգամ Թիֆլիսի պարսկուհիք: Թիւրք կնանիք իրանց երեսը ոչ մի շորեղեններով չեն կապտում: Եւ ամենայն ազատութեամբ խօսում են ձեզ հետ ինչքան կամենաք և ինչ նիւթի վրայ որ կամենաք: Այդ անում են թէ՛ պառաւները և թէ՛ նորատի կանայք: Օրիորդներն են միմիայն, որ կա՛մ խրտնում, երեսները շուռ են տալիս և կա՛մ ձեզ հետ խօսելիս երեսները ծածկում են:

Ինձ ասացին, որ թիւրք կնանիք այդպէս վարվում են քրիստոնէից հետ նրանց մարդատեղ չը դնելով: Շատ հնարաւոր է: Կարելի է դրա համար կայ մի այլ պատճառ, որ ես ինքս եմ ենթադրում և տեսածներիցս գուշակում. բայց ահա և այր մարդիկ, որոց հետ ես ուսում եմ, որոց ձեռքով ջուր եմ խմում, որոց ձեռքերն եմ բռնում: Ոչ մի դէպքում և ոչ մի առիթում ես չը տեսայ այն խիստ խտրականութիւնը, որ յատուկ է բնիկ պարսկին և Պարսկաստանի խորքերի բնակիչներին ընդդէմ քրիստոնէից: Ես մի կողմ մնամ: Խիստ շատերը Շուշուայ հայերից հաւատացնելով հաւատացնում էին ինձ,

որ իրանց հարսանիքներին հրաւեր և կերուխումներին շատ անգամ մասնակից են լինում տեղւոյն պարսիկները: Եւ փոխադարձաբար:

Շատ սիրուն, շատ գեղեցիկ, որովհետև «զի բարի և զի վայելուչ, զի բնակին եղբարք և ի միասին»¹:

Հռոմում լինել և Պապին չը տեսնել, սա կարելի չէ: Կարելի չէ նոյնպէս Շուշիում գտնուիլ և Հադամ ապօրը² չը տեսնել: Ողջ Արցախը գիտէ, ճանաչում և յարգում է այդ պատկառելի ծերունուն, որ չնայելով իւր 80-ի մօտ տարիքին, այնուամենայնիւ, ժիր է, առողջ, ծիծաղերես, զուարճախօս, կատակախօս և առակախօս: Հադամ ապօր տունը գտնվում է հայ և թիրք թաղերի մի անջրպետում և է կրկնայարկ՝ զետեղուած մի ընդարձակ ծառալից և ծաղկալից պարտիզի միջին: Առաջին անգամ գաւիթը մտնելիս ինձ դիմաւորեց կայտառ ծերունին՝ հագին ունենալով հոգևորականի վերարկու: Այստեղ ես լսեցի, որ Հադամ ապեր ասած մարդը չորս աստիճան ունեցող դպիր է եղել տակաւին Բաղդասար մետրօպօլիտի օրով: Նա շատ ժամանակ չէ, որ ծերութեան պատճառաւ դադարել է եկեղեցւոյն սպասաւորելուց:

Մենք պարտիզի մէջ նստանք: Տէ՛ր աստուած, որքան գեղեցիկ է այս պարտէզը, որքան ջանք ու խնամք է թափած ծերունին նրա վրայ: Հապա այս ծաղկանոցը. մի կատարեալ եւրօպական արանժերէա է: Ահա ձեզ մեխակ, ահա զամբազ, ահա ամսական, սպիտակ ու կարմիր վարդեր, ահա շուշան, ընտանի մանիշակ, մեկուն (խաշխաշ), ալեանդր, յասմիկ, սրինգ, նունուֆար, կակաչ և այլն: Մի խօսքով ասացի ես ծերունուն. «... և եղ տէր աստուած զԱդամ ի դրախտին փափկութեան՝ գործել զնա և պահել»:

«Երբեմն էի լոյս և այժմ եմ խաւար», - նոյնպէս կոմպլիմենտով պատասխանեց ինձ ծերունին: Երկու ժամի չափ ես Հադամ ապօր պարտիզումը և տանը մնացի: Եւ այդ երկու ժամումը լսածներիցս այն եզրակացութեանը եկայ, որ Հադամ ապերը մի կենդանի առակագիրք է: Բայց յայդմանէ՝ նա բաւականին տեղեակ է Արցախի պատմութեան, մանաւանդ ինչ որ Գանձասարի, Ամարասի, Երից Մանկանց և Արցախի միւս վանքերի աթոռակալների կեանքին ու գործերին է վերաբերում: Այդ ամենը Հադամ ապերը լսել է Բաղդասար մետրօպօլիտից, որոյ մօտ նա տնտես և սպասաւոր է եղել: Ծերունու Մկրտիչ որդւոյն և Լևոն թոռանը վրայ պարտք դրի, որ նրա ասած

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 8-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 56-ում (21 յուլիսի, էջ 1-2)

² Ղարաբաղում ա տառով սկսուած բառերը, կարծես, միշտ հ հնչյուն են ստանում, օրինակ, Ադամ-Հադամ, անդաստան-հանդաստան և այլն

առակները գրի առնեն: Խոստացան կատարել: Ես հաւատացած եմ, որ երբ մի այդպիսի հաւաքածու լոյս ընկաւ, նրա տպագրելը շատ հեշտ է: Հաղամ ապօր առակները ըստ մեծի մասին Պըլը Պուդու, հայ մելիքների, Ադուանից կաթողիկոսների և մի քանի թիւրք խաների առակներիցն են, որոց և ոչ մինը հրատարակուած են ցարդ: Առակները իրանց գուարձալիութեան, սրամտութեան և խելացիութեան կողմից միշտ և հանապազ արժանի են տպագրութեան: Արցախի ժողովրդեան, նրա վրայ հոգեպէս և մարմնաւորապէս իշխողների պատմութեանը վրայ յիշեալ առակները մեծ լոյս են ձգում:

Հաղամ-ապօր սուրճը վայելելուց և նրա ձեռը կրկին ու կրկին սեղմելուց յետոյ՝ ես դուրս եկայ Շուշուայ երկրային դրախտից՝ Հաղամ-ապօր պարտէզ ու ծաղկանոցից:

Այցելեցի պ. Մամուէլ Գիւլգադեանին: Սա «Մեղուի» թղթակիցն էր Թաւրիզում: Այժմ հայոց լեզուի ուսուցիչ է Շուշուայ հոգևոր դպրոցում: Պարոնի մօտ երեք ձեռագիր ինքնուրոյն աշխատութիւն տեսայ և թերթեցի: Թերթեցի, հաւանեցի և նորից, ծայրէ ի ծայր, կարդացի ձեռագրաց երկուքը: Երրորդը դեռ կարդացած չեմ, թէն բովանդակութեան մասին, թերթածիցս մի թեթև գաղափար ունիմ: Պ. Գիւլգադեանի հեղինակութիւնքը սոքա են: Առաջինք՝ «Հայելի», որ մի հաւաքածու է 200 հատ ժողովրդական, թարգմանկան (պարսկերէնից) և ինքնուրոյն առակների և առածների: Բովանդակութիւնքը՝ իմաստալից, բարոյական, լեզուն՝ ճոխ, ոտանաւոր-բանաստեղծական: Երկրորդ՝ «Հաւ և Որձակ» (աքաղաղ): Սա ժողովրդական ասանդութեան վրայ հիմնուած մի գեղեցիկ պօեմ է, դարձեալ ոտանաւոր: Լեզուն՝ պարզ, գոտորիկ, զարմանալի ճկուն ու սահուն, իսկ բովանդակութիւնը հաւերի և աքաղաղի ընտանեկան կեանքն է ներկայացնում. այդ ընտանիքի թառիլը երեկոյին, որձակի կանչը կէսգիշերին և լուսադէմին, ժողովրդական ասանդութիւնք և կարծիք այդ ժամերի մասին, աշխարհիս չորքոտանի կենդանեաց և սողնոց ու զեռնոց գործողութիւնքը յիշեալ ժամերուն, գիշերուայ երևոյթները, բոյսերի ազդեցութիւնը մարդկանց վրայ ըստ ժողովրդական ասանդութեանց, գեղեցիկ նկարագիր ընտանի կենդանեաց, մանաւանդ գոմէշի, էշի և գամփոռի շինականին մատուցած ծառայութեանցը, նկարագիր շինականի դաշտային պարապմանց, ուր իսպառ գետինը նմանեցրած է մի հիւանդի, իսկ գիւղացին մի բարեխիղճ բժշկի, որ կեանք ու կենդանութիւն է տալիս հողին: Հաւերի ձու հանելը, թուխս նստելը, ճտեր հանելը, խնամել և մեծացնելը: Նրանց պահպանութեան համար կատուի և գիշատիչ թռչնոց

դէմ մղած պատերազմը և այլն, և այլն: Կարճ ասած՝ պ. Գիւլզադեանի պօէմը մի այնպիսի գողտրիկ բանաստեղծութիւն է, որոյ նմանը մեր գրականութիւնում դեռևս չը կայ¹: Պարոնի «Հաւ և որձակը» մի մօտաւոր նմանութիւն ունի Շիլլերի «Զանգակի» հետ, թէև սա նրա կրկնապատիկ մեծութիւնն ունի: Պ. Գիւլզադեանը նոյնպէս իւր (ժողովրդային) բանաստեղծութեան ամէն հատուածի հետ կցում է մարդկանց, ազգի, մանաւանդ շինականի կեանքը, նրա զանազան դասական գործողութիւնները և արարքը:

Աստուած իմ, որքա՛ն հարուստ է ժողովրդի բանաստեղծական աւինը, նրա զննողական ոյժը, նրա գիտութիւնը: Ընդ նմին որքա՛ն շնորհք է այդ ամէնը, այսքա՛ն գեղեցիկ և ճշգրիտ կերպով դուրս բերող բանաստեղծ հայ ուսուցիչը՝ Գիւլզադեանը, որ, ինչպէս ինձ ասաց, Շիլլերի «Զանգակը» տեսած չէ, այլ իւր պօէմը դուրս է բերել ժողովրդի բերնիցը առնելով և իւր կողմից լոկ կոկելով և կարգ ու կանոնի տակ ձգելով: Սա է, ահաւասիկ, ճշմարիտ բանաստեղծութիւնը:

Ես խորհուրդ տուի պ. Գիւլզադեանին, որ իւր պօէմը մաքուր գրէ և անյապաղ ուղարկէ Թիֆլիս՝ «Հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութեանը»: Ես ինձ թոյլ եմ տալիս յուսալ, որ յիշեալ ընկերութիւնը յիշեալ պօէմը կը հաւանի և իւր հաշուով տպագրելով զայն՝ կը խրախուսէ հեղինակին:

Պ. Գիւլզադեանի երրորդ հեղինակութիւնն է «Ոսկի աղունակ կամ Շամիրամ և Արայ Գեղեցիկ», որ մի գուսանական բանաստեղծութիւն է և «Հաւ ու որձակ» պօէմի կրկնապատիկ մեծութիւնն ունի և նրանից անհամեմատ բարձր գրուածք է: Բայց նրա մասին ես իմ կարծիքը կը յայտնեմ, երբ գրուածքը ամբողջապէս կարդամ, վերջացնեմ:

Խօսքս Շուշիում կարդացած ձեռագիր աշխատութեանց վերայ գալով՝ հարկաւոր եմ համարում յայտնել նաև, որ Մակար վ. Բարխուդարեանցն ևս ունի մի հետաքրքիր աշխատութիւն Արցախի հայ ժողովրդեան նախապաշարմանց վրայ, որոյ մէջ մանրամասնաբար դուրս է բերած, թէ ինչ բաներ են և ժողովրդի ձեռքով ինչպէս են կատարվում հետևեալ նախապա-

¹ Պ. Գիւլզադեանը հայոց նախնի գրականութեանը և լեզուին լաւ ծանօթ է: Եւ, անշուշտ, դա է պատճառը, որ աշխարհաբար լեզուն այնքան ճոխ է, փարթամ և ճկուն: Պ. Գիւլզադեանը հմուտ է նաև պարսկերէնին և ֆրանսերէնին: Սօտ 25 տարի է, որ նա Պարսկաստանում և Անդրկովկասի գաւառական քաղաքներում ուսուցչութիւն է անում հայ դպրոցաց մէջ: Եւ ուրեմն իւր ժամանակի մեծ մասը պատատ (նա մեծ գերդաստանի տէր է) հաց ձարելու գործին է նուրիած, սակայն անկեան քարը գետնի վրայ չի մնալ: Եւ մնալու չէ

շարմունքները. 1) գրբաց, 2) կապար հալող, 3) մոմ թափող, 4) ջինդար դիւահալած, 5) թըլըսիմ, 6) ձեռնաչափութիւն, 7) գարի ձգել, 8) քաջք և քաջքի հարսանիք, 9) լուսնի և արեգական խաւարումն, 10) պոչաւոր աստղ, 11) փալջի, 12) դիւահարի պատմութիւն, 13) մարդագայլ, 14) դուլեապանի, 15) քեաթառ քօսի, 16) փոխուած երեխայ, 17) հալ տանիլ, 18) աչքով տալ և աղօթքով բժշկել, 19) կանչող հաւ, 20) ականջով խօսել, 21) ջոջք անել, 22) քաջքերի ծանրութիւն, 23) փոնգալ, 24) հիւր գալու նշաններ, 25) ծնունդ լուսնի, 26) մահագոյժ բու, 27) հիմնադրամ, 28) առունները ցանել, 29) կարմիր եգն (երկրաշարժ), 30) հալածել. ուտիք և պահք, 31) կովինջ: Գիրքը մի ընտիր յառաջաբան ևս ունի: Արժէ և պէտք է, որ այս աշխատութիւնը ևս տպագրութեամբ ի լոյս ընծայուի: Եւ ես խորհուրդ տուի նոյնպէս և՛ Մակար հայր սուրբին այդ մասին դիմել «Հայերէն գրքերի հրատարակութեանը»՝ ներկայացնելով սրան իւր աշխատութիւնը:

Մակար հայր սուրբի գրադարանում եւ գտայ մի հին և հետաքրքիր գիրք ևս, որոյ անունն է «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ. շարադրեցեալ սակս սթափելոյ երիտասարդաց և մանկանցն Հայկազանց ի վեհերոտեալ և ի հեղքացեալ թմրութենէ քնոյ ծուլութեան»: Տպուած է Մադրասայում (ի Հնդկկա) յամին 1772: Գիրքը մի բանաստեղծական գրուածք է, հեղինակը՝ անյայտ, բայց գրուածքի ոգուց երևում է, որ նա «Որոգայթ փառաց» գրքի հեղինակի աշխատութեամբն է յօրինուել և նրա տպարանումը տպուել:

Մակար վարդապետը ինձ տուեց նաև մի ձեռագիր աշխատութիւն, որ է իւր ճանապարհորդութիւնը Նիկոմիդիոյ վիճակումը: Հայր սուրբը իւր ճանապարհորդութիւնը արել է գեր. Մելիքսեդէկ եպիսկոպոսի՝ Զմիւռնիոյ առաջնորդի յանձնարարութեամբ այն թուականներում, երբ հանգուցեալ Ներսէս պատրիարքի յանձնարարութեամբ Սրուանձտեանց Գարեգին և Վահան Պարտիզակցի հարք ուղևորվում էին Տաճկահայաստանի միւս մասերը տեղեկագրելու: Յիշեալ թուականներում Մակար վարդապետը Զմիւռնիայումն է և գեր. Մուրադեանցի փոխանորդ կամ օգնական է համարուել: Հայր սուրբը մի քանի տարի ս. Երուսաղէմի ս. Յակոբեանց վանքի միաբան է եղել ս. Մուրադեանցի հետ միասին: Այս ձեռագիր աշխատութիւնը այստեղ կարդալու ժամանակ չունիմ ես, ուստիս հետս Թիֆլիս կը բերեմ,

որպեսզի, եթե հարկաւոր դատուեցաւ, մաս առ մաս հրատարակուի «Մեղուի» միջոցաւ¹:

Յունիս 29-ին Շուշուց մեկնեցայ 19-րդ դարու հայ պատմիչ Ապրէս Աբրահամեան Բէկնագարեանցին կա՛մ գերեզմանը, կա՛մ թերևս կենդանի անձը որոնելու և գտնելու: Ինձ հետ ուղեկից են Մակար վարդապետ Բարխուդարեանց և վիճակային դպրանոցի ուսուցիչ պ. Գրիգոր Թառումեանցը: Որոշել ենք մեր ճանապարհորդութիւնը ոտքով անել: Ուղեկիցներս, մանաւանդ հայր Բարխուդարեանցն իւր բոլոր պերճախօսութիւնքը ի գործ է դնում մեզ համոզելու, որ ոտքով գնալը ոչ միայն յոգնեցուցիչ է ամենիս համար, այլ և վտանգաւոր, թէ այդ բանը մասնաւորապէս իւր կոչման և պաշտօնին անյարմար է: Իւր ոտքերից մինը, որ մի քանի տարի առաջ Զմիւռնիայից վերադարձած ժամանակ կոտրել է Աղսթափում և երկու ամիս այդտեղ անկողնի գերի է արել իրան, թէ հէնց այդ ոտքը իրան չէ ներում հետիոտն ճանապարհորդել, այն էլ Արցախի նման լեռնուտ ու քարքարուտ երկրում, մանաւանդ որ մեր երթուղինը ճիշտ յայտնի չէ, և չը գիտենք, թէ ուր և որ գիւղը պետք է գնանք: Վերջապէս ինքը՝ հայր սուրբը, պատրաստ է ամենայն սիրով մեզ համար ձիանք վարձել, մեր ճանապարհորդական բոլոր ծախքը իւր սեպհականութիւնից հոգալ, միայն թէ մենք յե՛տ կանգնե՛նք մեր անտեղի որոշումից: Բայց ես և պ. Թառումեանցը չը զիջանք և դրականապէս պահանջեցինք մեր որոշման անփոփոխ կատարումը: Ինչո՞ւ՞ համար եւրօպացիք, մանաւանդ անգլիացիք, երբեմն անում են այդպիսի բաներ, իսկ մենք կարող չը պիտի լինենք: Վերջապէս, ասացինք մենք հայր սուրբին, 19-րդ դարու ծերունի հայ պատմիչն իւր կամաւոր աղքատութեամբ քանի տարի է ահա և թերևս մինչև իսկ այսօր թափառում է Արցախի գիւղերում, մենք՝ երիտասարդ մարդիկ և ակամայ աղքատներս, ինչի՞ չը պետք է մի քանի օր անհանգիստ լինենք նրան հետքերը գտնելու համար: Վերջին մտքի հետ հայր սուրբս համաձայնեց և իւր տանից վերցրած թէլ-շաքարը անթի (զօլթուխ) տակը դնելով՝ տանից դուրս եկաւ:

Ժամը երեկոյան հինգն է: Պլէտներս ուսերս առանք և հայդա, դէպի Դաշուշէն (Քարաշէն) գիւղը, որոյ մօտ գտնուած ուխտատեղին գնացող ուխտաւորք խումբ-խումբ արդէն ճանապարհ են ընկել Շուշուց և մօտակայ գիւ-

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 9-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 57-ում (24 յուլիսի, էջ 2-3)

ղերից: Այդ մենք գիտեինք և դիտմամբ հենց այդ օրերը ընտրեցինք, որովհետև նախ՝ ուխտաւորների երթնելութիւնը մեզ ապահովեցնում էր ճանապարհի վտանգներից, և երկրորդ՝ այդ և հետևեալ տօն օրերում մենք առիթ կունենայինք այլ և այլ գիւղերի բնակչաց հետ տեսնուիլ ու նրանցից տեղեկութիւնք քաղել մեր որոնած մարդու մասին: Բայց թէ այդ ուխտագնացները ի՞նչ կարծիք կը տանեն մեր մասին, դա բնաւ մեր հոգսը չէ: Շուշուայ պատուանդանը կազմող լերան արևելեան կողքովն վար իջանք ոչ փոստայի ճանապարհովը, այլ ուղիղ գծով՝ գիւղական նեղիկ արահետ ճանապարհով: Թփերի և մացառների մէջ ծլվող թռչնոց երեկոյեան դայլայիկը մեզ գրաւում է: Իսկ քարափների մէջ թաք կացած կաքավների կղկղալը միանգամայն հրապուրում է մեզ: Միտս եկավ քսան տարի առաջ երգածս Ղափանցի Պետրոս վարդապետի երգը կաքաւոց մասին.

«Փութա՛ առ մեզ նախշո՛ւմ կաքաւ,
Սարերն ամէն կանանչացան
Զարդ զգեցեալ պայծառացան.
Յարդ լեռներէդ ի վայր կուգաս,
Յաւուրս գարնան պարեալ ցնծաս,
Նախշուն ձագերովդ շուրջ կուգաս.
Շաղկղա, կղկղա, միշտ կը կանչես,
Կը հառաչես, ո՞ւմ կը կանչես» և այլն:

Մենք ձայն ձայնի տուած երգեցինք: Հենց այն է, երգը վերջացրած էինք, ես կամեցայ ծիւել, ֆո՛ւ, սատանա տանի, ծխախոտի տուփերիցս չորսը ուսիս ձգած վերարկուիս գրպանիցը ճանապարհիին վեր է ընկել: Մնացել է միմիայն երկու տուփ՝ 50 գլանակ, որ ինձ համար շատ քիչ է: Յուսալով, որ Դաշուշէնում կը գտնեմ և կը գնեմ, միամիտ սրտով շարունակեցի ճանապարհս՝ միանգամայն խոստովանելով, որ եւրօպացի ճանապարհորդը ինձ նման անզգոյշ և անհոգ կերպով չէ վարվում իւր կենսական մթերքի հետ, իսկ թէ ծխախոտը այժմեան մարդկանց կենսական մթերքներից մինն է, դա ոչ ոք չէ ուրանում:

Շօշի գետակի¹ մօտ հանգստացանք, ոտքներս լուացինք, ջինջ և սառը ջրիցը կուշտ խմեցինք և սկսանք հանդիպակաց սարն ի վեր բարձրանալ

¹ Կարկաս գետը երկու վտակներից է կազմվում: Մինը, որ գալիս է Շուշիի հարաւարևելեան կողմից, իւր անունը ստանում է այն գիւղերից, որոց կշտիցը կամ միջիցը անց է կենում: Այսպէս այդ գետակը կոչվում է Քարիտակի (գիւղ) գետ, Շօշիի (դարձեալ գիւղ) գետ և այլն: Միւս վտակը, որ Դիզափայտու շղթայից

կումաններով: Մի ձորակում պատահեցանք պարտեզների, որոց հասուն թթերիցը կամեցանք ճաշակել: Պարտիզում գործողները բոլորն էլ կանայք են և մանկունք: Շնորհակալութիւն, իսկոյն թոյլ տուին մեզ պարտեզ մտնել: Մի նորատի հարս՝ Մէհրի անունով, թռաւ, տղամարդու պէս ծառն ելաւ և առատ թութ թափեց: Այստեղ ես պէտք է նկատեմ, որ Արցախում թութը թափում են մի յատուկ ձողով, որ կոչվում է թակ կամ թօխմախ: Թութը վայելելուց յետոյ ես մի ռուբլի տուի, բայց ո՛չ հարսը և ո՛չ մայրը չը կամեցան վերցնել՝ յայտնելով, որ չարժէ մի աման թթի համար փող վճարել: Ես յայտնեցի, որ փողը տալիս եմ ոչ իբր թթի գին, այլ իբրև նուէր իմ կողմից այն երկու սիրուն և կայտառ մանկիկներին, որոց հազիւհազ կարողացանք (Արցախի, մանաւանդ գիւղերի մանկունքը առհասարակ սաստիկ ամաչկոտ են և վայրենի) մեզ հետ նստացնել և թութ ուտացնել:

Ստիպմամբ ռուբլանոցը մանուկներից մինին տուի, և մենք դուրս եկանք պարտեզից: Շատ հաւանական է, որ իմ վարմունքը տիկիկներին, անհաճոյ թուէր, իմ առատ նուէրը գուցէ նրանց կողմից սխալ մեկնուէր, բայց ես էլ ախր մտածում էի, թէ խեղճ գեղջկուհիք ի՞նչ պարտական են ամէն մի ճանապարհորդի ձրի թութ ուտացնել: Այսպէս թէ այնպէս մի քանի ժամ յետոյ բանից դուրս եկաւ, որ իմ մի ռուբլին մեզ ազատեց նոյն գիշերը դուրսը՝ բաց օդի տակ մնալուց և մրսելուց ու հիվանդանալուց¹:

Ժամը 7 1/2-ին Դաշուշէն գիւղը հասնելով՝ մենք հարցրինք քահանային: Ասացին, որ ուխտատեղին է գնացել՝ հանդերձ ընտանեօք: Գիւղի բնակչաց մեծ մասն ևս այնտեղ էր: Գիւղը աչքից անցկացրինք և յետոյ քայլերս դէպի ուխտատեղին ուղղեցինք:

Դաշուշէն գիւղը ընդամենը 30 տուն ունի, բոլորն էլ հայք են: Գիւղը գետեղուած է լերան գոգաձև գագաթում: Ունի մի անշուք և փոքրիկ եկեղեցի, որոյ արձանագրութիւնն է.

Յիշատակ է Թաղէոս Առաքելեանի ի թուին 1843:

Դաշուշէնում, ինչպէս յետոյ և միւս գիւղերում մենք պատահեցանք մի խումբ դարադաղցի հայերի: Դրանք գալիս են այս կողմերը քաղաքում

բղիւնելով՝ քաղաքի արևմտահիւսիսային կողմովն է անցնում, կոչվում է Կարկառ: Այս գետակները Շուշուայ հիւսիսարևելեան անկիւնում այսպէս անուանեալ Մազէ կամրջի մօտ միանում են և կազմում բուն Կարկառ գետը

¹ *Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 10-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 58-ում (28 յուլիսի, էջ 3-4)*

մշակութիւն անելու, իսկ գիւղերում՝ արտեր հնձելու: Տարէնը իւրաքանչիւր նոք աշխատում է 50-60 ռուբլի և անցնում գնում իւր հայրենիքը կրկին: Ղարադաղցի հնձուոր պարսիկների ևս մենք պատահեցանք վերջերում: Հայ հնձուորները շատ ուրախացած էին, որ պարսից օգոստափառ շահն ամբողջ Ղարադաղը, ի տրիտուր անցեալներում Մահմուդ խանի հասցրած վնասներին, երեք տարի ժամանակաւ ազատել է ամէն տեսակ արքունական հարկերից:

Ճշմարիտ արքայավայել շնորհ և ողորմութիւն շահի կողմից դէպի իւր հաւատարիմ և խեղճ հպատակները:

Դաշուշէնի կողքին գտնուած ուխտատեղին կոչվում է Սարիբէկ կամ, ինչպէս մի հինաւորց պառաւ ինձ ասաց, Սրաբէկ (սրով, թրով բեկեա՛լ արդեօք): Մի անձածկ չորս պատի մէջ դրած է մի խաչաքար կամ գերեզմանաքար, առանց որևէ արձանագրութեան: Ժողովուրդը որոշեալ օրերում և, ասում էին, երբեմն և սովորական կիրակիներում գալիս է և այդտեղ մոմ վառելով ու խունկ ծխելով՝ կատարում է իւր ուխտը և վերադառնում: Մենք էլ համբուրեցինք յիշեալ խաչաքարը առանց աջահամբոյր ձգելու քահանայի տուփի մէջ: Պատճառը յետոյ կասեմ: Սարիբէկում կան մի քանի գերեզմաններ՝ հանդերձ արձանագրութեամբք, մի մատրաձև գերեզմանատուն և մի կարգ հիւրասենեակներ: Ուխտատուների թիւը բաւականին շատ է, որոնք գետեղուել են թէ՛ սենեակներում և թէ՛ քարափներում: Ոմանք արդէն սկսել են թառ ածողների շուրջը բոլորել: Ածում և երգում են պարսկերէն: Սարիբէկում և նոյնիսկ նահատակի գերեզմանի շուրջ, կան մի քանի հինաւորց թեղի և բռնի ծառեր՝ սաղարթախիտ տերևներով: Ամէն մի ուխտաւոր իւր մատաղցուն ունի, այն է գառ և ոչխար, երբեմն և քաղաղ: Դրանք մորթուելու են էգուց առաւօտեան: Մատաղցունների մորթիների արդիւնքը Շուշուայ հոգևոր դպրոցին է յատկացրած և տուած է կապալով տարին 65 մանէթի: Շա՛տ է, թէ քիչ այդքան կապալադրամը, չը գիտեմ, միայն մի քանի ուխտաւորք և ոմանք Դաշուշէնի գիւղացիներից ինձ ասացին, որ Սարիբէկում մորթոտած ոչխար և գառ մատաղացունների թիւը 800-ից պակաս չէ լինում իւրաքանչիւր տարի:

Հիմի ես ձեզ ասեմ, թէ ինչի մենք աջահամբոյր չը տուինք քահանային:

Առաջին անգամ այդ մարդուն տեսնելիս մենք խնդրեցինք, որ մի գիշեր մեզ իւր տանը պատսպարէ: Մերժեց՝ յայտնելով, որ ինքը և իւր ընտանիքը ողջ գիշերը սրբի կշտիցը չեն կարող հեռանալ: Խնդրեցինք, որ վարձով կա՛մ

իւր տան մէջ, կա՛մ իւր ծխականներից մինի տան մէջ գոնեա մեզ մի կերպով տեղաւորէ մինչև ի լոյս: Դարձեալ մերժեց և այն բաւականին կոպիտ կերպով: Ես շատ վշտացա, որ հայ քահանան զլանում է իւր օգնութիւնը ոչ միայն հայ աշխարհական ճանապարհորդին, այլ նաև հայ վարդապետին և մեր փողով չէ ուզում մեզ համար մի անկիւն ճարել գիշերելու, մինչդեռ մենք նորանից ո՛չ կերակուր ենք ուզում, ո՛չ անկողին, այլ չոր սենեակի համար 2 ռուբլի վարձ ենք խոստանում: Մտքումս դնելով ճնշում գործել անքաղաքավար քահանայի վրա՝ ասացի, որ թեմակալ առաջնորդի կշտիցն եմ գալիս և նրա քարտուղարն եմ:

- Ով ուզում էս եղիր,-կոպտաբար պատասխանեց քահանան:

- Պաստա՛, - համառօտ և ազդու ասացի ես ուղեկիցներիս, և մենք ճամփայ ընկանք դէպի Դաշուշէնի գիւղացոց օգնութեանը դիմելու: Սարիբէկում գիշերելու ո՛չ յարմարութիւն կար մեզ և ո՛չ պատեհութիւն: Դժբախտաբար, գիւղացոց մեծագոյն մասը ևս, ինչպէս ասացի, Սարիբէկումն էր: Գիւղումը մնացած էին կա՛մ ծերերը, կա՛մ մանուկները: Հարցրինք քեօխվային: Ասացին, որ նա էլ զբաղուած է իւր բազմաթիւ հիւրերին տեղաւորելու և կերակրելու հոգով: Քեօխվայի հիւրերը քաղաքից եկող պրիստաւր և 20 հոգի ձիաւոր չափառներն են եղել: Դրանք եկել են Սարիբէկի ուխտաւորներին պահպանելու համար: Շատ լաւ, բայց հապա մենք ho դրսումը մնալու չէ՞նք: Լուր բերին, որ քեօխվան պատրաստ է մեզ ևս հիւրընկալել, եթէ իւր բազմաթիւ հիւրերի ներկայութիւնը մեզ ձանձրոյթ և նեղութիւն չի պատճառի:

Չը գիտեմ ինչ պատճառով և ինչ խելքով մենք չը կամեցանք առանց մեզ էլ հիւրերով ծանրաբեռնուած քեօխվային նորանոր ծանրութիւն պատճառել, ուստի շնորհակալութեամբ հրաժարուեցանք նրա առաջարկութիւնը ընդունելուց: Այսպիսով, մենք մնացինք դուրսը և մի գերանի վրայ նստած՝ աշխատում էինք մեր անձը գիւղի կատաղի գամփոների յարձակմունքներից և մոթմոթոցներից պաշտպանել:

Այսպէս, ուրեմն մեր ելրօպացու ձևով ճանապարհորդութիւնը չէ յաջողում: Յանկարծ ներքևից գիւղ է վերադառնում այն ընտանիքը, որոյ պարտիզում մենք թութ կերանք: Պառաւր մեզ ողջունեց և լսելով, որ մենք պատսպարուելու տեղ չունինք, հարսին իսկոյն հրամայեց աճապարել, որ իրանց տան սենեակը մեզ համար պատրաստի: Իսկ ինքը՝ բարի պառաւր, սկսեց մեզ դէպի տուն առաջնորդել: Կէս ճանապարհի վերայ մեզ դիմաւոր

րեց հարսի մարդը սիրալիր ընդունելութեամբ: Փոքր-ինչ յետոյ մեզ դիմաւորեց նրա միւս, դարձեալ ամուսնացած եղբայրը ևս: Եւ մենք առօք-փառօք մտանք եղբարք Ալեքսան և Կարապետ Օհանջանեանցների աղքատիկ, անձեփ և հողէ յատակով սենեակը, որ աւելել և մի քանի կապերտ ու գորգով ծածկել էին: Ջուր եփ բերին, մենք ամէնքս թէյ խմեցինք: Ստիպմամբ մեզ համար ընթրիք պատրաստեցին, որ բաղկացած էր մածնից և թթից: Մինչև ժամը 12-ը տանուտերերի հետ խօսեցանք իրանց գիւղի դրութեան և իրանց վիճակի մասին, որ, ինչպէս երևեցաւ, շատ և շատ աննախանձելի պետք է լինի: Մեր խօսակցութիւնից, ի միջի այլոց, երևեցաւ, որ մեր բարի տանուտերը մեր որոնած աղքատին տեսել է իրանց գիւղում հաց մուրալիս և մի քանի գիշեր Սարիբէկի սենեակներում մէն-մինակ գիշերելիս: Այդ խորհրդաւոր աղքատի մասին մանրամասն տեղեկութիւն մեզ կարող է հաղորդել Մազէ կամրջի գլխին եղող մկիտան Արզումանը, որոյ մօտ ծերունի աղքատն ամբողջ շաբաթներ է անցկացրել: Աղքատն իրան կոչում էր Ալեքսիանոս: Եւ երբ իրան ո՛վ լինելն էին հարցնում, դժկամակ կերպով այս լակոնական պատասխանն էր տալիս. «Բէան (բան) չունի՞ս»:

-Է՛րիկա, գտանք,-ասացինք մենք և մեր բարի տանուտեարց խնդրեցինք, որ գնան հանգստանան: Նրանք գնացին, մեզ համար անկողին բերին, թէև մենք հրաժարուում էինք: Բայց որպէսզի չնչին պատճառաւ չը վիրաւորէինք ազնիւ գեղջկականներին, վերջիվերջոյ յանձն առանք հանգստանալ մեզ առաջարկած անկողիններում: Թէ այս տեսակ աղքատ գիւղականաց անկողինը որ աստիճան մաքուր է լինում, դա ամէն ոք հասկանում է: Աւելացրէք դրա վրայ և այն, որ սենեակ ներս մտած բոպէիցը սկսեալ՝ անթիւ և սովալլուկ լուերն արդեն սկսել էին իրանց արշավասոյր ջիբիթը մեր մարմնոյ վրայ, և դուք կը հասկանաք, թէ ինչ պատճառաւ մեր արտևանունքները մինչև ի լոյս մէկգմէկու չը մօտեցան: Այդ սներես կենդանիքը մինչև ի լոյս տոտինկիբուբուզ մեզ խաղցրին: Սենեակից դուրս գնալ կամ օդափոխութեան համար սենեակի միակ պատուհանը բաց անել մենք անյարմար համարեցինք, որովհետև տանու մարդիկ և բոլոր ընտանիքը, մինչև անգամ օրորոցի մանուկը, դուրսը՝ դրան առաջին էին պառկած գետնատարած: Մեզ չէինք ներում նմանապէս բարձր խօսել կամ ծիծաղել, միգուցէ տանուտերերին անհանգստութիւն կամ վիրաւորանք պատճառէինք: Ես զօռ էի տալիս ծխախոտին, իսկ Մակար վարդապետը՝ հայ աշուղի յօրինած ներբողին առ լու.

«Մինը չի՛, երկուսը չի՛, հարիւր հազարով է գալի.
Լէկզի չի՛, պարսիկ չի՛, յայտնի գող ի գող գալի.
Այս քեաֆիր լուի ձեռից լէկզի հանգի պար եմ գալի.
Հանգստութիւն չը կայ, մինչև ի լոյս քուն չի գալի» և այլն:

Վերջապէ՛ս արշալոյսը բացուեցաւ: Պ. Թառումեանցը գանգատում է իւր գլխացաւից, իսկ ես գանգատվում եմ, որ մօտս գլանակ չը մնաց՝ բացի երկուսից: Անտանելին այն է, որը ո՛չ գիւղում և ո՛չ Սարիքէկում ծախու ծխախոտ չէ ճարվում: Ձեռաց լուացուեցանք, թէյ խմեցինք և դէպի Արգուման մկիտանը ճամփու ընկանք: Մակար վարդապետի թախանձանացը զիջանելով՝ ես պարտաւորված էի իմ ծոցից այլևս մի դէնիշկա չը մսխել, ոչ էլ նմանապէս պ. Թառումեանցը, վասն որոյ տանուտիրոջ մանուկներին ընծայի պատրուակաւ հայր սուրբը իւր գրպանիցը վճարեց տանուտիրոջ երկու ռուբլի: Կրտսեր եղբայրը եկաւ՝ Արգումանի մկիտանի կարճ ճանապարհը մեզ ցոյց տալու: Յոյց տուեց և յետ դարձաւ: Այժմ մենք մինակ ենք գնում, լեռն ի վայր իջնում:

Ճանապարհը նե՛ղ, քարքարո՛ւտ, մացառո՛ւտ, գալարո՛ւն է: Մուր-սուր քարերը ոտքներն են ծակծկում, իսկ մասրի և մորենիի (մոշ) փշերը՝ շորերս: Իջանք լեռան ստորոտը՝ մի ձորի մէջ, որտեղից ընթանում է Շօշի գետը: Ջուրը մեծ չէ, բայց առանց շորերը հանելու անցնելն ևս անկարելի միանգամայն: Բայց քնահատ մարմնով լեռնային սառը ջրի մէջ մտնելը ևս, համաձայնեցէ՛ք, որ խելք չէ: Նստանք գետափը և դէպքի կամ բախտի բերմունքի ենք սպասում: Բախտներս բանեց: Փքր-ինչ յետոյ հանդիպակաց կողմից Խաչէնի գիւղացիք՝ այր մարդիկ, կին-արմատներ և ծծկեր երեխաներ, ձիերի և ջորիների վրայ երկուսով-երեքով միասին հեծած, գալիս են գետն անցնելու: Դրանք էլ Սարիքէկ ուխտի են գնում: Հայր սուրբիս դրութիւնը բաւականին փափուկ էր: Կանանց ներկայութիւնը (դրանցից ոմանք ոտնամանները հանեցին, ծնկակալները վեր քաշեցին և գետը մտան) ստիպեց նրան հունից հեռանալ և նեմեհրամ պահել՝ երեսը շուռ տալ դէպի յետ, մինչև այդ դօջախ կնանիք գետը կանցնէին: Երբ ուխտաւորները բոլորն էլ գետն անցան-պրծան, մենք վեր առանք մի քոստ ձի և Շօշ գետն անցանք նոյնպէս գայլ, գառ ու խոտ առակի մեկնաբանութեան համեմատ: Առաջարկեցինք ձիու վարձ, բայց գիւղացին չընդունեց:

Հասանք Շօշու և Կարկառ գետերի խառնարանը՝ Մազէ կամուրջը: Նրանից մի քանի տասնեակ սաժէն բարձր գտնվում է և Արգումանի մկիտանը:

Ահա և ինքը՝ մեծապատիւ Արզումանը: Բայց ի՞նչ մկիտան է, որ, բացի օղիից, վարունգ ու աղից, ուրիշ բան չը կայ: Իսկ ինձ հարկաւոր է ծխախոտ: Իմ քամբախտութիւնից երկու օրից ի վեր մկիտանի ծխախոտը հատել է, իսկ Շուշի գնացող ծառան տակաւին չէ վերադարձել: Անիծա՛ծ: Ի՞նչ դժար բան է երկու օրումը 14 վերստ ճանապարհը անել: Երևի անպիտանը Շուշիում լօղրութիւն է անում: Ինչնիցէ: Կոյրին ի՞նչ հոգսն է, թէ մումը թանկ է:

Արզումանը մեզ յայտնեց, որ Ալեքսիանոս աղքատը մի քանի տարի առաջ իւր մկիտանում հիւանդացաւ, պ. Աթաբէկեանցի մօտակայ ջրաղացի մարագումը մեռաւ և այսինչ բլրի կողքին, թաղուեցաւ գիտութեամբ և թոյլտուութեամբ Շուշուայ ոստիկանարանին: Յետոյ երևեցաւ, որ Ալեքսիանոսը շուշեցի էր. ազգականները յայտնուեցան և ուզում էին դիակը Շուշի փոխադրել, բայց ոստիկանարանը թոյլ չը տուեց:

Գնացինք Աթաբէկեանցի ջրաղացը՝ մարագը գտնելու: Մեր բախտից հեռուից մեզ տեսաւ և իւր ծանօթ հայր սուրբին բարևեց ինքը՝ ջրաղացի տէրը՝ դօկտոր Մովսէս բէկ Աթաբէկեանցը: Ծանօթացանք: Պ. Աթաբէկեանցի կաթով թէյը վայելեցինք, մեզ առաջարկած ծխախոտը և սիգարները ընդունեցինք, ճաշին իւր մօտ մնալու և իւր սեպհական ձին մեր իրաւասութեան տակ ընդունելու սիրալիք առաջարկութիւնիցը շնորհակալ մտօք հրաժարուեցանք և ճամփայ ընկանք դէպի Խանքէնդ գիւղը: Դօկտորը մեզ միանգամայն ապահովացրեց, որ իւր մարագում մեռնողը չէր կարող մեր որոնած անձը լինել: Այս ստուգուեցաւ նաև Արզումանի նոր ցուցմունքներից, որ նա արաւ պ. Աթաբէկեանցին մեր ներկայութեամբ: Եւ այսպէս, Դաշուշէնում մեր ստացած ուրախալի լուրը անհիմն դուրս եկաւ: Չը մոռանամ յիշել, որ պ. Աթաբէկեանցի կրկին ջրաղացները կարգին բանում են՝ պատրաստելով շրջակայ գիւղօրէից համար ալիւր և Խանքէնդի գօրաց համար ձաւար: Ջրաղացի կողքին գտնվում է և մի կրահանք: Պ. Աթաբէկեանցի ջրաղացներից փոքր-ինչ բարձր գտնվում է պ. Հախումեանցի ջրաղացը¹:

Ժամը 9 1/2-ին պ. Աթաբէկեանցի կալուածքիցը հեռացանք և ժամը 10 1/2-ին հասանք Խանքէնդ: Սա մի ընդարձակ և հայաբնակ գիւղ է՝ սարահարթի վերայ շինած: Փողոցները՝ լայն, կանոնաւոր, կողքերին՝ ծառեր տնկած: Տները՝ տախտակաշէն, դրսից կրով ծեփած, բազմաթիւ պատուհաններով: Զօրաց շտաբի շինութիւնքը ընդարձակ տեղ են բռնում գիւղի ամբողջ

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 11-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 59-ում (1 օգոստոսի, էջ 2-3)

արևմտեան կողմում: Իւրաքանչիւր և մեծ գորանոցների գաւիթները զարդարած են ծառերով, որոց մէջ ամէնից շատ կայ ակացիա: Զբօսայգու պաշտօն կատարող մի լայն ճեմելիք էլ կայ՝ կողքերին խիտ առ խիտ ծառեր: Քար չը կայ փողոցներում, այլ փափուկ սևախառն հող: Բաւականին շատ կրպակներ կան: Զօրաց մեծագոյն մասը թէն ճամբար է քաշուել, բայց սպաների կանայք և ռուս աղախնայք յաճախ են պատահում: Զօրաց ներկայութիւնը առևտրական տեսակետով խանքէնդցիներին կեանք է տալիս: Թէպէտև պակաս չեն այն կրպակները, որոց մէջ արտացոլում է «*никому въ кредитъ*» ստուարաթուղթը:

Հայք մի փոքր եկեղեցի ունին, որ ես տեսնելու առիթ չունեցայ: Քահանան մօտակայ ուխտատէրիներից մէկումն է եղել: Հիւրանոց չը կայ, այլ միմիայն մկիտաններ:

Հանգստանալու և ճաշելու համար, իհարկէ, մեզ անկարելի էր մկիտան մտնել: Խնդրեցինք մեզ մի սենեակ տալ և փողոցում մեզ համար լիւլա-քաբար, որ այս կողմերում Թիֆլիսի պարսիկներիցը լաւ և մաքուր են պատրաստում, ապսպրել: Քառորդ ժամից յետոյ դուքեանի տիրոջ սեպհական և մաքուր ու պայծառ սենեակը արդէն պատրաստ էր մեզ համար: Մեր որոնած անձի համար հարց ու փորձեր արինք, մի քանի մարդիկ հրաւիրեցինք, շատ սուտ ու դորդ բաներ լսեցինք, հաւաստիացանք, որ ժողովականք վախենում են մեզ իրանց տեսածը և լսածը պատմելու և այլն, և այլն: Վերջապէս ձեռք բերինք մի 75-ամեայ դողդոջուն ծերունի՝ Յակոբ Շահումեանց անունով, որ այս կողմերումս յայտնի է փողրատչի Յակոբ անունով: Այս պատուական և ուշիմ ծերունին ժողովականաց ոմանց սուտակասպաս խօսքերը իրանց երեսովը տուեց և յայտնեց, որ ինքը 6-7 տարի առաջ Խանքէնդում յաճախ պատահելիս է եղել մի աղքատ ծերունու, որ շատ ամաչկոտ և քաղաքավար է եղել, միշտ խորշել է իրան (Շահումեանցի) հետ տեսակցելուց և խօսակցելուց: Կենդանի՞ է, թէ՞ վախճանած այժմ յիշեալ աղքատը, պ. Շահումեանցը ոչինչ չը գիտէ: Միայն լսել է, որ 5-6 տարի առաջ Կարկաժան գիւղի քարափներում մի անտէր, աղքատ ծերունի է մեռել և ոստիկանարանի թոյլտուութեամբ Կարկաժանի հանգստարանում թաղուել: Բայց թէ մեռնողը իւր իսկ տեսած աղքատն է, թէ ոչ, ծերունի Շահումեանցը չը գիտէ: Ժողովականները բացուեցան և գրեթէ միաբերան վկայեցին, որ Շահումեանցի յիշած աղքատին իրանք էլ են տեսել, երբեմն նրան կերակրել: Մինը ևս դուրս եկաւ և յայտնեց, որ ինքը յիշեալ աղքատին

երկու գիշեր իւր մօտ հիւրընկալել է, բայց անունը չէ հարցրել: Կարկաժանում մեռնողը և թաղողը միննոյն աղքատն էր, բայց թէ նրա մեռնիլը ոչ թէ 5-6 տարի է, ինչպէս Շահումեանցն էր ասում, այլ ուղիղ երեք տարի՝ խաղողի ամիսներում (այսինքն՝ աշնանը):

Մեր մէջ նորից հուսոյ նշոյլ ծագեց: Ժողոցը ցրեցինք, ծերունի Շահումեանցի առաջարկութիւնը՝ իւր տանը ճաշելու նկատմամբ բացասեցինք շնորհակալութեամբ և քաշուեցանք մեզ համար պատրաստած սենեակը: Ճաշը դեռ պատրաստ չէր: Ես ընկողմանեայ փափուկ և մաքուր բարձի վերայ, ինչպէս Հովնան մարգարէն ի խելս նաւու և՛ ... երկու ժամից յետոյ հազիւհազ վեր կացայ ընկերներիս բոթոց ու բրթոցների ազդեցութեամբ: Մաքուր սեղանը սարքած, վրան մի քանի տեսակ նախաճաշցու ուտելիքներ դրած, օղիի և գինու շշերը դարստտած, թարմ և տեսակ-տեսակ կանանչ, պատուական լաւաշ հաց. այս ամէնը ընկերներիս հետ ինձ են սպասում: Նախաճաշից յետոյ բերին տանու պատրաստած պատուական խորոված և համեղ դօլմայ:

Այսպիսով մեր ճաշը փառաւոր եղաւ: Եւ բանից դուրս եկաւ, որ մենք ճաշում ենք ոչ թէ մեր հաշուով, այլ եղբարք Առաքել և Իսրայէլ Մելքումեանցների առատաձեռն հիւրընկալութեամբ: Մե՛ծ շնորհակալութիւն:

Ճաշից յետոյ եկաւ մեզ տեսնելու վիճակի գործակալը՝ արժանապատիւ Յովհաննէս քահանայ Տէր-Գրիգորեանցը: Սա վկայեց, որ ճիշտ մեր որոնած անձին ինքը իւր ձեռքով է թաղել Կարկաժանում, բայց ոչ թէ 5-6 տարի առաջ, այլ ուղիղ երեք տարի առաջ աշնանային ամիսներից մէկում: Ափսոս միայն, որ չափաբերական մատենում հայր գործակալը հանգուցելոյ մասին ոչինչ յիշատակութիւն արած չէ: Ինքը հանգուցելոյն կենդանութեան ժամանակ մի անգամ տեսել է Կարկաժանում, բայց ով լինելը չէ հարցրել: Ուրեմն, ասինք մեզ, Կարկաժանում թաղողը պէտք է, որ մեր հայ պատմիչը լինի: Մահուան և թաղման ժամանակի նկատմամբ Շահումեանցի և քահանայի և միւսների ասածների մէջ եղած զգալի տարբերութիւնը մենք վերագրեցինք Շահումեանցի ծերութեանը: Բայց, ինչպէս յետոյ կը տեսնենք, 75-ամեայ ծերունի Յակոբ Շահումեանցն աւելի սրամիտ է եղել, քան բազմաթիւ ջահել մարդիկ:

Գործակալ հօրը մեզ հետ վերցնելով՝ հետիոտս, մենք շարունակեցինք մեր ճանապարհը դէպի Խնածախ, որ Խանքէնդից 4 վերստ հեռի է գտնվում:

Խանքէնդի կշտին եղած արևածաղկի, լոբիի, վարունգի և կաղամբի մեծամեծ բանջարանոցների կողքերովն անց կենալով՝ մենք ընկանք Արցախին միշտ յատուկ ծուռումուռ և դարիվեր ու դարիդուս ճանապարհը: Մեր չորս կողմը լիքն է թփերով և կարճիկ ծառերով: Ահա դրանց անունները՝ լնատերևի (լայնատեր, թղկի), կուզեննի, հացի, քլորդի, գկոյի, սզնի, քլխնձորի (վայրի խնձորենի), քլտանձի, կաղնի, տկողի, մորի, հունի: Դրանց մէջ կա՛մ թռչուններն են ճռուղում, կա՛մ ճպուռների բանակը ճռճռում անդադրում:

Ետնէ ետքն անցանք Դրագետ և Վարարակնաջուր գետակները և ժամը 2-ին հասանք Խնածախ՝ 19-րդ դարու հայ պատմիչի ծննդավայրը, բայց, ափսոս, ոչ հանգստավայրը, ծնարանը, այլ ոչ քնարանը:

Խնածախի նկարագիրը ես ինքս չեմ ուզում անել, այլ աւելի լաւ եմ համարում, որ այդ նկարագիրը անէ ինքը խնածախցի վիպասանը: Ահա Մակար վարդապետ Բարխուդարեանցի գողտրիկ և ճշգրիտ նկարագրութիւնը. «Միւնեաց աշխարհին Շուշի կոչուած բերդաքաղաքի հիւսիսային կողմն՝ երեք ժամ հեռաւորութեամբ փոքրիկ բլրակի վերայ, վաթսուն տունէ բաղկացեալ հայ բնակիչներով գիւղ մի կայ Խնածախ անուամբ: Մոյն գիւղի արևելեան և հարաւային կողմերն տարածուած են գեղեցիկ դաշտեր և ձորեր, աղբիւրներ և առուակներ, տեղ-տեղ փոքրիկ բլրակներ, թուփ-թուփ անտառակներ և միայնակ բուսած պտղատու և անպտուղ ծառեր, որք գիւղին տակէն սկսեալ հետզհետէ գառիվայր իջանելով՝ զուարճալի տեսարան կը ձևացնեն: Հիւսիսային կողմանէ շէնին մօտէն կը բարձրանան երկու սարեր, որոց միոյն անունն Էլեաս է, իսկ միւսինը Ծակքար¹: Այս երկու լեռանց մէջէն կանցնի Խնածախէն Պալլուճայ և բոլոր Խաչէնու գաւառն երթալու ճանապարհն: Իսկ արևմտեան կողմանէ գիւղին վերին ծայրէն սկսեալ՝ գառիվեր կը բարձրանան ուրիշ մեծ սարեր, որք զարդարուած են կաղնի, թեղի, հացի, վայրի տանձի, խնձորի, ընկուզի, զգեսարի և ուրիշ շատ տեսակ ծառերով, քաղցրահամ աղբիւրներով և ջրվեժներով, որք օձապտոյտ ձորոց մէջէն դէպի արևելք սահելով, գետակունքներ կը կազմուին, որոց մէջ կը լողան քանի մի տեսակ համբաւաւոր ձկունք², որով կը դառնան շատ ջրաղացներ, կը ջրուին այգիներ, պարտէզներ և ցանքեր:

Վերոյիշեալ լեռանց մէջ կը գտնուին եղջերու, եղնիկ, վայրենի այծ, խոզ, փասիան, կաքաւ, լորամարգի և ուրիշ որսալու շատ կենդանիք:

¹ Այս քարայրը Բէկնագարեանց պատմիչը լաւ նկարագրել է իւր պատմութեան մէջ

² Կարմրախայտ, կողակ, երկայնաքիթ

Խնածախ գիւղը, բացի հեռաւոր աղբիւրներէ, ունի նաև երկու պատուական աղբիւրներ, որոց միւն Ծակքարին ստորոտէն կը բխի և Մեծ աղբիւր կանուանի, իսկ միւսն՝ Էլեասին¹ ստորոտէն և Փոքր աղբիւր կը կոչուի: Այս աղբիւրներն ապառաժ քարէ կը բխին, պարզ և արծաթափայլ են, բայց Փոքրին ջուրն աւելի թեթև և առողջարար լինելուն համար համարեա թէ հիւանդանոցներէն շատերն Փոքրի ջուրէն կը խմեն շուտ առողջանալու յուսով²:

Խնածախի ընտանի կենդանիքն են գոմէշ, եգ, կով, այծ, ոչխար, խոզ, ձի և էշ, իսկ բերքերն են ցորեն, գարի, գարնանի (գարնանը միայն աճող մանրիկ ցորեան է), հաճար, կորեկ, կտուահատ, սորեկ, բակլայ, լուբիայ, խաշխաշ, տանձ, խնձոր, կեռաս, դամոն, սալոր և թուր:

Ինչպէս Արցախի միւս գիւղօրէից տուներն, նոյնպէս Խնածախ գիւղի տներն մեծ մասամբ գետնափոր են և ստորերկրեայ ...»³:

Ապրէս Բէկնազարեանց պատմչի մասին Խնածախում իմ հաւաքած տեղեկութիւնքը, մանաւանդ 90-ամեայ զառամեալ Գիքի Սափարեանց Չովբուռենց⁴ կոչուած անձից հաւաքածներս ինձ հաւաստիացրին, որ պատմիչը մի քանի տարի առաջ եղել է Խնածախում և հին մարդկանց անուններ է հարցրել: Բայց թէ այժմ ո՞ր է, Խնածախում ոչ ոք չը գիտէր: Կարկաժանում թաղող աղքատի մասին խնածախցիք լսել են, բայց նրան տեսած չեն: Ուստի և չը գիտեն, թէ այդ մեռնողը իրանց գիւղում մանեկող և հարցասէր աղքատն է, թէ՞ գուցէ այլ ոք:

Որոշեցինք հետևեալ օրը գնալ Կարկաժան: Բայց նախքան մեկնելը պէտք էր թունդ ընթրել և թունդ ննջել: Ամենայն առատութեամբ և ամենայն հանգստութեամբ մենք այդ երկու իսկ պարտականութիւնքը կատարեցինք: Աւելորդ է ասելը, որ մենք իջևանած էինք մեզ ուղեկից հայր սուրբի հայրենական տանը՝ նրա եղբարց մօտ:

Ընթրիքի ժամանակ մեզ հետ սեղանակցողը ոմանք սկսեցին մի երգ երգել «Միրզա և Աննա»-ից: Ահա այդ գեղեցիկ երգի առաջին տունը.

«Միշտ մանեկի Շաքի, Շիրուանի, Շամախի,

Գիշեր, ցերեկ քաղքից քաղաք չորս տարի.

¹ Էլեասը հեղինակի պապի անունն է: Ինչպէս ընթերցողը մեր քաղած բովանդակութիւնից տեսաւ, խնածախցի Քեանդիտոյայ Բարխուդարեանցը նշանաւոր դեր է խաղացել իւր ժամանակում: Այդ և Ապրէս Բէկնազարեանցի պատմութեան մէջ յիշուած խնածախցի միւս քաջերի գերեզմանները ես մի առ մի տեսայ

² Փոքր աղբիւրն աւելի մօտ է գիւղին և գուցէ հենց այդ պատճառաւ նրա ջուրն աւելի գործնական է

³ «Միրզա և Աննա», էր. 13-14

⁴ Բէկնազարեանցի պատմութեան մէջ յիշուած Կեծակ Վանու եղբորորդին է

Ամեն ցաւոց ի՞նչ է դեղ, հարցրի,
Ողջ բժիշկներ ինձ ասացին, պատճառ գինի:
Դէ՛հ, մատռուա՛կ, լի անապակ, ա՛ճ գինի,
Խմենք կենաց մեր բաժակներ հայ ազգիս»:

Երգը շարունակում էին: Ես անթարթ դիտում էի հանդիպակաց լերան գագաթի վրայ բարձր ի գլուխ պարծեցող Ծակքարը, ուր մի բուռ խնածախցի և պալլուճցի հայ քաջեր 1795-ին պարսկական մի գունդ կոտորեցին, ուր թաք էր կացած «Ղարաբաղի գաղտնիքի» տակաւին երկոտասնամեայ հեղինակը: Նայեցայ գիւղի վերայ, որ մի քանի վեպերի հեղինակ է մեզ տուել:

Յանկարծ միտս թռաւ, գնաց դէպի Արարատեան աշխարհը, որոյ Քանաքեռը մեզ Խաչատուր Աբովեան է պարգևել, Աշտարակը Պերճ Պոռոշեանց է ընծայել: Միտս եկաւ նաև Հեր և Զարևանդի Փայաջիկ գիւղը, որ մեզ մի Բաֆֆի է շնորհել: Յիշեցի արցախցի գաղթականներով բնակեցրած Խաչէնը, որից մենք Ղազարոս Աղայեանց ենք ստացել: Մեղանից վեր կացայ և գնացի ննջելու¹:

Առաւօտեան 9 ժամին, արդէն ձիերով ճամփայ ընկանք դէպի Կարկաժան՝ լերան գագաթի վրայ տարածուած մի ծառազարդ գիւղ: Գիւղի արևելեան կողմում տեսայ այն ընդարձակ սարահարթը, ուր Աղա Մահմատ խանը, ըստ Բէկնազարեանց պատմչի, կատարում էր իւր եղեռնագործութեանց ամենաանխիղճը՝ եզօհտ-խարմանին: Այսինքն՝ յիշեալ խանգագանը յիշեալ սարահարթի վերայ պատկեցրել էր տալիս հարիւրաւոր ձեռքերը և ոտքերը պրկած մարդիկ և իւր ձիաւոր զօրաց ջոկերին հրամայում էր ջիրիթ խաղալ մարդկանց մարմնոյ վրայ: Իսկ ինքը՝ Աղա Մահմատ խանը, Շուշուայ բարձր քարափիցը թամաշայ էր անում այդ արիւնոուշտ հանդիսին:

Կարկաժանում² մենք հազար ու մի դժուարութիւններից յետոյ ձեռք բերինք գիւղի ծերերը՝ մի երկու պառաւ կնանիք, և երկարատև հարց ու փորձերից յետոյ հաւաստիաբար ենթադրեցինք, որ այդ գիւղումը յամին 1881 աշնանային ամսում մեռնողը և թաղողը պէտք է որ մեր որոնած Ապրէս Բէկնազարեանցը լինի:

Թոխի անունով պառաւը յայտնեց, որ հանգուցեալը մեռնելուց մի քանի ժամ առաջ իրանից մածուն է խնդրել և կերել, ասելով՝ որ ինքը Ապրիս

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 12-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 60-ում (4 օգոստոսի, էջ 1-3)

² Այստեղ է գտնվում պ. Դանիէլ Ահարոնեանցի մետաքսեայ ընդարձակ և յարմարագոյն գործարանը

(Ապրես) Աբրահամեան է: Դիակը լուացող Վարդի տիկինն էլ նկարագրեց հանգուցելոյ կերպարանքը, հասակը՝ յայտնելով, որ նրա ցնցոտիների միջից Իսրայել բէկը (Շուշուայ պրիստար) մի ռուբլի թուղթ փող, 4 կօպէկ սև փող և մի քանի վեգ-կօճի է հանել և իւր արձանագրութեան մէջ անցկացրել: Ոմն Առըստամ Մարտիրոսեան անունով յայտնեց, որ հանգուցեալը մի գիշեր իւր տանն է գիշերել: Սափարի Յարութիւնեանը՝ 85-ամեայ ծերունին էլ յայտնեց, որ հանգուցեալը, մի օր իւր տան դրան մի անկիւնում կուչ եկած, խաղող էր ուտում: Դրա վրայ Յովհաննէս քահանայ Տէր-Գրիգորեանցը աւելացրեց, որ այդ քանն ինքն էլ է տեսել և աղքատի առաջարկութիւնը՝ իրան հետ խաղող ուտելու, բացասել է: Մի այլ ծերունի յայտնեց, որ հանգուցեալը իրան Գեաբի (Գաբրիէլ) էր անուանում: Կարող է պատահել, որովհետև Ապրես Բէկնա-զարեանցը իւր գրքի վերջերումը գրում է, որ ինքը շուտ-շուտ փոխում է իւր անունը:

Գնացիք, տեսանք աղքատի մեռած տեղը: Ճիշտ և անպատճառ Շուշի տանող ճանապարհի վերայ՝ այսպէս անուանեալ Սէյրանենց բաղի տակը մի քարափի միջին ճանապարհից մի երկու սաժէն հեռի և բարձր: Մեզ հետ եղողները պատմեցին, որ հանգուցեալը պառկած էր երեսը դէպի արևելք ուղղած: Շուշից Կարկաժան վերադարձող վերոանուանեալ Առըստամ Մարտիրոսեանը տեսել է հանգուցելոյն քարափի մէջ պառկած, բայց կարծելով, որ քնած է, թողել է և գնացել գիւղ: Հետևեալ օրը հանգուցելոյն տեսել են ուրիշ մարդիկ, ձայն են հանել, բայց պատասխան չեն ստացել: Ճանապարհից քարափն ի վեր քարի կտորտանք են նետել, բայց ննջողը դարձեալ չէ վեր կացել: Վերջապէս մօտն են գնացել և ննջողին վախճանած են գտել: Նոյն օրը ոստիկանութեանը իմաց են տուել և հանգուցելոյն գիւղ տանելով և լուանալով՝ ամփոփել են ի ձեռն Յովհաննէս քահանայի Տէր-Գրիգորեանց, ի հող տապանի:

Այսքան ակներև ապացուցութեան վերայ այլևս չը տարակուսելով՝ մենք բարձրացանք մի լեռնաչափ բլրի վերայ, ուր է կարկաժենցոց հանգստարանը, և այնտեղ՝ հանգստարանի մէկուսացեալ կողմում, գտանք մեր որոնած մարդու գերեզմանը, որին հովանաւորում են մի քանի քլորդի կոչուած թփենիք:

Մեռելոցի երկուշաբթի օրն էր: Հոգևորականք հանդիսաւոր կերպով «Հոգւոց» ասացին: Եւ երբ Մակար վարդապետը արտասանեց «Տէ՛ր աս-

տուած, հանգո՛ղ զհոգի կամաւոր աղքատացեալ և բազմաշխատ Ապրէս Բէկնազարեանց ծառայի քո՛», եւ չը կարողացայ զսպել արտասուքներս:

Գերեզմանի մեծութիւնը և դիրքը չափեցինք, որպէսզի կարելի լինի Շուշիից մի ժամանակաւոր շիրմաքար ուղարկել: Ապա բլրից ցած իջնելով՝ հեծանք մեր ձիերը և լեռների լէնջերով¹ անցնելով՝ կէսօրին ժամանեցինք Շուշի:

Պրօֆեսօր Մորդովցովը երկար ժամանակ չարչարուելուց զկնի հիւանդութեան պատճառաւ Մասիսի կողքում մի քիւրդի վրանի մէջ մնաց և իւր ընկերներին ցջրհեղեղեան լերան գագաթը ճամփեց: Լաւ միտս է, որ ռուս գիտնականի գրքի վերջին երեսը հետևեալ վշտալից վերնագիրն է կրում. «Արարատի գագաթի վերայ, միայն է թէ ոչ ինքս»:

Հայ թերթի աշխատակից՝ երեք օր ման եկայ և կարծեցի, որ 19-րդ դարու հայ պատմչի գերեզմանը գտայ, օրհնեցի և օրհնել տուի, բայց այժմ բանից դուրս է գալիս, որ ես մոլորուած եմ եղել:

Շուշուայ ոստիկանարանի ծառայող Իսրայել բէկ Շահնազարեանի արձանագրութիւնը վկայում է, որ Կարկաժանի հայոց հանգստարանում թաղող անանուն աղքատը, արդարև, իւր գրպանում մի ռուբլի փող և 6 կօպէկ սև փող է ունեցել, բայց նա մեռել է սեպտեմբերի 7-ին յամին 1878, մի տարեթիւ, որ միանգամայն հերքում է ցարդ լսածներս և նոյնիսկ Մակար վարդապետի վկայութիւնը, որին Ապրէս Բէկնազարեանցը իւր ձեռագիրը յանձնել է Շուշիում յամին 1881 մայիսի 5-ին:

Վերջապէս ոստիկանարանի գրագրութիւնք վկայում են, որ յիշեալ հանգուցելոյ ազգականքը լոյս են ընկել և 1 ռուբլի 6 կօպէկը ոստիկանարանից ստացել: Ղարաբուլաղ գիւղի բնակիչ ոմն Գեափի Ղազարոսեանն է: Միւս կողմից Յովհաննէս քահանայ Տէր-Գրիգորեանցն ինձ ցոյց է տալիս իւր վաւերացեալ վկայագրերը, որոնցից ես տեսնում եմ, որ նա քահանայ է ձեռնադրուեալ յամին 1878 և այդ ժամանակից երեք տարի յետոյ է թաղել Կարկաժանի անանուն աղքատին:

Հիմի արի ու բան հասկացի: Թէպէտև պրիստաւի արձանագրութեան ճշմարիտ լինելը ես միանգամայն ընդունում եմ: Այսպէս թէ այնպէս Ապրէս

¹ Լենջ-լանջ: Արցախի բարբառում բառերի է և է հնչիւնները երբեմն ա են փոխվում և երբեմն ա հնչիւնը է և է հնչիւնի է փոխվում: Օրինակ, լանջ-լէնջ, խօսել-խօսալ: Արցախի բարբառը զարմանալի ոյժ և զօրութիւն ունի իւր մէջ: Գրաբար ամենաընտիր բառեր ու դարձուածներ կան այս բարբառի մէջ: Կարելի է ասել, որ Արցախի բարբառն ընդհանրապէս նոյնն է, ինչ որ Ձէյթունի և Գողթան բարբառները

Բեկնագարեանցի գերեզմանատեղով և թերևս տակաւին կենդանի անձով ես դեռ չեմ դադարել հետաքրքրուելուց և հետախուզելուց:

Նախորդ նամակներիցս մեկում գրած էի, որ Արցախի գիւղերում իբրև բացառութիւն, տեղ-տեղ մարդիկ քաղաքականապէս էլ են ամուսնանում: Օրերումս յաջողեցայ ձեռք բերել այդ տեսակ ամուսնութիւնը յաստատող փաստաթուղթ, որ ուղարկում եմ ի հրատարակութիւն և ի խորհրդածութիւն: Իմ կողմից միայն այսքանս կասեմ, որ ինչպէս կը տեսնեք, այս ամուսնութիւնը առաջացել է ամուսնացողի կնոջ անծին լինելուց, մի պատճառ, որով, ըստ զօրութեան, թէ՛ եկեղեցական և թէ՛ քաղաքական օրինաց կարելի է և պէտք է ամուսնութիւնը լուծել, այսինքն՝ չարիքը արմատից կտրել, որպէսզի նրանից նորանոր չարիք չը ծնին:

Ահա իմ գտած փաստաթղթի պատճէնը, իսկականը ինձ մօտ եմ պահում:

Ի Հաղրութ

Ի 1876 ամի 30 օգոստոսի.

Ձեռագագիր 350 ռուբլիի.

Ի ներքոյ ստորագրողս, որ եմ Առաքել գեղջ բնակիչ Ալեքսան Յակոբեանս Յախիեանց, պարտաւորուեցի այսու ձեռագագրովս քեզ՝ հաղրութեցի իմ երկրորդ ամուսին Կուլբահար Բարիեան Գասպարեանցիդ, երեք հարիւր յիսուն ռուբլի արծաթ դրամ նրա համար, որ ես՝ Յակոբեանս, սրանից առաջ պսակուած եմ Շուշուայ քաղաքումս Չաւահիր Պետրոսեանի հետ: Իմ առաջին ամուսնիցն զաւակածնութիւն չը լինելու պատճառով ընդունեցի ինձ կին երկրորդ քեզ՝ 18-ամեայ անարատ կոյս Կուլբահար Գասպարեանցիդ և պարտաւորեցի այսու ձեռագրովս, ինչպէս ընդունած եմ ինձ մօտ, միննոյն պարտաւոր եմ պահպանել ամենակերպ մինչև իմ մահս: Եւ թէ ես՝ Յակոբեանս, քեզ՝ Գասպարեանցիդ կամ քեզանից ծնուած զաւակներին սկսեմ չի պահպանել, յայնժամ պարտաւորում եմ քեզ չը պահպանելոյ աւագումն (փոխարէն) երեք հարիւր յիսուն ռուբլի հատուցանել քեզ՝ Կուլբահար Գասպարեանցիդ, վասն որոյ ստորագրեմ իսկական ձեռամբ իմով:

Ալեքսան Յակոբեան Հախիեանց

Վկայ եմ՝ տիրացու Ազարեա Բ. Աւետիսեանց.

Վկայ եմ՝ 2 գիլդի Կեանջում Ապալով.

Վկայ եմ՝ Բաղդասար Տէր-Բաղդասարեանց¹:

Օգուտ քաղելով Շուշիում վայելածս մի քանի օր ազատութիւնից՝ ես կարդացի պ. Գիւլզադեանի «Ոսկի աղունակ» գուսանական բանաստեղծութեան մի քանի հատուածները: Եւ այժմ, որքան ինքս եմ հասկանում, կարող եմ վկայել, որ եթէ այդ գրուածքը տպագրուի, մի շատ պատուաւոր տեղ պիտի բռնէ հայ նոր գրականութեան մէջ: Համարձակ կասեմ, որ պ. Գիւլզադեանը մի շնորհալի բանաստեղծ է: Պարոնը կարող է մեզ համար մի Ֆերդուսի լինել: Եւ, ինչպէս պարսիկ, նոյնպէս և հայ Ֆերդուսին զարմանալի ճոխ երևակայութեան և մայրենի լեզուի հմտութեան տէր են: Պ. Գիւլզադեանը ինձ խոստացաւ իւր «Ոսկի աղունակ»-ը ևս շուտով մաքուրի վերածել և առաջարկել ի տպագրութեան: Արժէ, և որքան շուտ, այնքան լաւ:

Պ. Յակոբ Ճազարբէկեանցը հետևեալ ժողովրդական-մանկական խաղերը հաւաքեց ինձ համար:

I

Ջղացին գլխին օխտը գիւ,
Օխտը գիւլին մին բիւբիւ,
Հասան-հասան դոռնը բե՛ց (դուռը բաց).
Փիւրի հասան դոռնը բեց:
Մի հաւ ունիմ կրկչոց,
Մին ձու կածի լոխ դեղնոց,
Պապը կօտի (կուտի), գնայ հոնձ (հունձ).
Կը բերի չալ-չալ կլոնձ.
Արշակը տական կծի, տագ կանի,
Ես գլխուն կծիմ, նագ անիմ:

II

Ա՛յ հաքեարի, հաքեարի,
Մընտըր մանի շաքեարի.
Փետի փետի մարդիկը,
Ըրկաթի կնանիքը.
Ձառ մանիշակ ըղջկերք,

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 13-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 61-ում (8 օգոստոսի, էջ 2)

Աղբի կուտուր պատանի:

III

Իմ կովը սարին ծնի,
Լոք տայ չափարին ծնի:

IV

Պապար անի իմ ըրախան,
Օրախ ապրի իմ ըրախան.
Հա՛, շատ ապրի իմ ըրախան.
Ցաւ չի քաշի իմ ըրախան.
Վարդիկուտուր իմ ըրախան.
Շըքեարի ձոր իմ ըրախան.
Մոթալի եղ իմ ըրախան:

V

Մոթալ-մոթալ.
Դին աթար,
Դամուր դաթար,
Էյրան, դուլի,
Ջէյրան դուլի,
Նա հար ասի,
Նա մար ասի,
Լակուտ քցի,
Էս դուս քցի:

VI

Լուսինը նոր թագաւոր,
Կանանչ-կարմուր գուտկաւոր,
Նստած տեղիս քարաքեաթ,
Կանգնած տեղիս դուաթ:

VII

Ճրագ, ճրագ ճշմարիտ,
Անմահական մարգարիտ,

Ա՛ն դրախտին բանալին:
Տա՛ր դրախտին դռոնը բե՛ց,
Քաղի՛ անթառամ ծաղիկ,
Բե՛ր, դի՛ր գլխատակիդ.
Քոն իլ (քնի՛ր), քոնդ անուշ,
Ե՛ր կաց արագդ բարի,
Ինչ որ խնդրես, Տէրը կատարի:

Այս խաղերը արտագրելիս միտս եկաւ յանկարծ և իմ մանկական խաղերից հետևեալը.

Հատիկ-հատիկ հաւլատիկ,
Ջաղցին ջուրը փշատիկ,
Կուտ ուտիմ, կուտման ուտիմ,
Աւագ դրան տակը պաշիկ անեմ:

Արցախում հետևեալ անձինք ժողովրդական յայտնի բանաստեղծներ են եղել. 1) Աբրահամ (Իբրահիմ)՝ Աւետարանոց գիւղից, 2) Ղուկենց Ղուկաս. 3) Վարդան ապեր՝ լաւ հեքիաթաբան. 4) Խաչէն ապեր՝ կատակախօս և երգի-ծաբան: Սօքա արդէն մեռած են: Գրուածքներ մինը միայն՝ Ղուկասը ունի. 5) Բանաստեղծ Յարութին՝ Կուսապատ գիւղից: Ունի շատ գրուածքներ, բոլորն էլ հայերէն: Նա դեռ կենդանի է և Շուշիումն է կենում: Հաւաստիացրին, որ 9 տարի ահա տանից դուրս չի եկել: Ապրում է ցամաք հացով: Սաստիկ մարդատեաց է: Բացի դուրգար Բարխուդարից՝ ոչ ոքին չէ ընդունում, ոչ ոքի հետ չէ խօսում: Աղքատ ժողորդեան մանուկներին ձրիաբար կարդացնում է: Գնացի, գտայ Շուշուայ այդ նոր Դիոգինէսին: Երկու ժամ սենեակի շուրջը ման եկի, ամէն հնար ի գործ դրի, սակայն Յարութին բանաստեղծի երեսը տեսնել չը կարողացայ: Պատուհանից տեսայ նրա աշակերտները, որոնք ծալապատիկ նստած էին և գերեզմանային լռութեամբ կարդում էին: Դրանց թիւը 16-ից աւելի էր: Երբ ես խնդրում, յորդորում էի մանուկներին կողպած դուռը բաց անել, մանուկները աչքի տակով իրանց ուսուցչին էին նայում, որ անկիւնումը թաք էր կացած իմ տեսողութիւնից և գրքերին էր նայում: Միտս եկան Յունաստանի բակեաց դպրոցականները: Բայց Շուշուայ բանաստեղծը մի կատարեալ հանելուկ է, արժանի ուսումնասիրութեան, բայց նրան տեսնելու հնար չը կայ: Մակար վարդապետը հինգ անգամ փորձել է տեսնելու, բայց չէ յաջողել: Շատ շուշե-

ցիք կարծում էին, որ իրանց մարդաստեաց բանաստեղծը վաղուրեմն մեռած-պրծած է: Բայց նա դեռ կենդանի է: Գնացի 2 անգամ դուրգար Բարխուդարի տունը, չը գտայ: Դիմեցի նրա փեսայ պ. Աստուածատրին: Խոստացաւ գէթ մինչև Գաձասարից վերադառնալիս աներոջ միջոցաւ, եթէ հնար է, կա՛մ ինձ բանաստեղծ Յրութիւնի հետ ծանոթացնել և կա՛մ նրա բանաստեղծութեանց հաւաքածուն մի քանի բոլակի ժամանակաւ ինձ համար ձեռք բերել:

Բանաստեղծ Յարութիւնի գրուածքներից մի քանիսը հատուկտոր կերպիւ շուշեցիք (ի թիւս դոցա և պ. Կոստանդ Մելիք-Շահնագարեան՝ «Նոր-Դարի» Մոնպելիէի թղթակիցը, որ այժմ այստեղ է և իմ հին բարեկամը) անգիր գիտեն: Ինձ մօտ մի քանի անգամ ասացին: Բոլորի միջիցն էլ դառը մաղձ է թափվում դէպի այս կամ այն մարդը: Մաստիկ և կծու սատիրայ են Յարութիւնի այդ լսածս բանաստեղծութիւնք: Լեզուն՝ լաւ, մաքուր, կանոնաւոր և յանգաւոր: Եթէ Գանձասարից վերադառնալիցս յետոյ Յարութիւնին կամ իւր հաւքածուն չը կարողացայ տեսնել, լսածս հատուկտորները կը հաւաքեմ: Ում որ հարցուցի (խիստ շատերին թէ՛ հարևաններից և թէ՛ ուրիշներիցը), ամէնքն էլ միաբան վկայեցին, որ բանաստեղծ Յարութիւնը մաքուր և առաքինի մարդ է: Նա մանուկներին սիրում և կարդալ-գրել է սովորեցնում՝ իբր մի սուրբ և վսեմ պարտականութիւն: Յարութիւնի հին և այժմեան աշակերտներից մի քանիսի հետ ես առանձնապէս խօսեցայ: Ոչ ոքի վկայութիւնը և խոսակցութիւնը իմ մէջ ոչինչ կասկած չը յարուցին իրանց վարժապետի մասին:

Շուշեցի պ. Համբարձում Երեմեանցն¹ ինձ յայտնեց, որ 1873-ին ինքը Խօթայ անտառի մէջ հետևեալ տեղերում հետևեալ հանքերն է գտել. 1) Դուտիսի գետակի վերայ Ղօթուրլի հաարակութեան Մէլէդէր գիւղի տակ՝ Բաշտուպէլ կոչուած տեղում՝ մի պղնձեայ հանք, 2) Շէքերամ անունով գիւղի կշտին՝ Ջէլկիլ կամ Ղարաթօփրակ տեղի վրայ՝ մի այլ պղնձեայ հանք,

¹ Այս պարոնը, 1850 թ. սկսեալ մինչ օրս իւր բոլոր գործունէութիւնը հանքերի բովանդակութեան մէջ անցկացրած գոլով, արդէն դարձել է մի գործնական հանքաբան և բովագործ: Այս կողմերը եկող ամէն մի հանքաբան, լինի նա մասնաւոր անձն կամ պաշտօնական, առանց պ. Երեմեանցի չի ճանապարհորդիլ և նրա գործնական հմտութիւնիցը մեծապէս շահվում է: Ռուսաստանի այն ամէն ինժէներներին, որոնք եկել են այս կողմերը, պ. Երեմեանցը ճանաչում է և փոխադարձաբար օգտուել է նրանց գիտութիւնից: Նա ինձ յայտնեց, որ բոլոր ինժէներների վկայութեամբ փոքրկովկասեան լեռների հանքային խառերի գլխաւոր տարրը պղինձն է, մինչդեռ մեծկովկասեան շղթայի գլխաւոր տարրն արծաթն է: Պ. Երեմեանցի ասութեամբ մի այլ հայ պարոն այս կողմերում նախի հանք է գտել, բայց իշխանութիւնից և մասնաւոր անձինքներից օգնութեան յոյս չունենալով՝ սկսել է իւր փոքրիկ միջոցներովն անել սկզբնական հետազոտութիւնը

3) Ղազղան գետակի կշտին մի այլ պղնձեայ հանք, 4) Ջարդուլի գիւղի կշտին՝ մին ուրիշը: Այս հանքերի գոյութիւնը պարոնը իմաց է արել իշխանութեանը և սրա թոյլտուութեամբ սկսել է մշակել հանքերից առաջինը: Սակայն վերջերումս մարմնատր և հոգևոր իշխանութեանց մէջ երկրի սեպհականութեան առթիւ վէճ բացուած գոյով պ. Երեմեանցին հրամայուած է առջմ դադարեցնել իւր գործունէութիւնը¹:

Միևնոյն պարոնը ինձ յայտնեց, որ Ջարդուլի կոչուած գիւղի կշտին՝ Դուտխի գետակի վրայ, հանքային լաւ և առատ ջրեր կան, տեղացիք այդ ջրերին կոչում են դօթուրսու: Թարթառ գետի ակունքների մօտ կան նոյնպէս հանքային տաք ջրեր, որոնցից մեծապէս շահում է շրջակայ ազգաբնակութիւնքը: Աղդուզդաղ կոչված սարի գլխին և Բազարդուզ կոչված տեղւոյն վրայ նոյնպէս քարածուխ և սաթի (եանթար) փոքրիկ կտորտանք կան մեծ քանակութեամբ: Քարածուխի կտորները ես ինքս տեսայ: Դեռ կատարելապէս քարացած չեն:

Կամեցայ Շուշիի սակաւաթիւ հայ բողոքականաց ժողովարանը մտնել, թոյլ չը տուին՝ ասելով, որ ոչ բողոքականներին արգելուած է ժողովարան մուտք գործելը: Կամեցայ ինձ ծանոթ պ. Աբրահամ Ամիրխանեանցից, որ Շուշիումն էր և իմ գնացած ժամանակ աղօթարանումը, թոյլտուութիւն ստանալ: Նոյնպէս թոյլ չը տուին: Թոյլ չը տուողը, ինչպէս յետոյ իմացայ, պ. մահտեսի Աւագ Միրզաջան Յակոբեանցի երիտասարդ որդին է: Ինքը՝ Միրզաջան Յակոբեանց, Շուշուայ հայ առևտրականաց գլխաւորն է, որոյ տան մէջն է ժողովարանը՝ կից սեպհական տպարանին և գրախանութին: Այս Միրզաջան Յակոբեանցի մասին մի պաշտօնական թղթի մէջ կարդացի, որ սրանից մի քանի տարի առաջ շուշեցի մի թիրքի տանից տախտակներ և ներկեր է գողացած: Դորա համար դատարանի վճռով 1 ½ տարի ժամանակաւ արեստանդների րօտան է աքսորուած: Միևնոյն անձը Հաղորութ գիւղի գործարանից մետաքսներ գողացած լինելուն համար իբր այժմ ոստի-

¹ Ես տեսայ յիշեալ հանքի կտորը (հանքը 12 առ 100% պղինձ է արտադրում): Պ. Երեմեանցի ասութեամբ պղնձեայ հանքեր կան նաև 1) Ղափանում՝ Հալիձորի տակին. սեպհականութիւն Մելիք-Փարսադանեանցի ժառանգներին. 2) Ղաթա գիւղի մօտ. սեպհականութիւն պպ. Աղէքսանդր Մելիք-Ազարեանցի և Կ. Մուրաֆեանցի, 3) Կաւարտգիւղի մօտ. սեպհականութիւն Մուրթնով ոմն պարսկի: Այս երեք հանքերն ևս բանում են, միայն պ. Մելիք-Ազարեանցի և Մուրաֆեանցի հանքը ջրով լցուած լինելու պատճառաւ առայժմ չէ գործում: Բայց Անդրկովկասի սոյն այս բոլոր պղնձեայ հանքերի գործունէութիւնն ու արդիւնքը ոչինչ են Միւսմէնսի գործարանի գործունէութեան հետ: Յայտնի է, որ Միւսմէնսի գործարանը Գետաբէկ գիւղում է՝ Գանձակի մօտ

կանարանի ձեռքով քննութեան տակ է: Այս մասին էլ ես մի գործ կարդացի: Շատ բա էլ բերանացի լսեցի: Չը գիտեմ՝ ո՛ր աստիճան ճշմարիտ են: Ինչ որ ինձ է վերաբերում, ես շատ լաւ գիտեմ, որ անդրկովկասեան հայ աւետարանականք մեծաւ մասամբ մաքուր և ազնիւ մարդիկ չեն և փողի համար միմիայն հաւատափոխ են եղել: Այդպէս են և՛ Եւրօպայի բողոքական-քարոզչական ընկերութեան որսացած մարդիկը, ինչպէս այդ հաստատվում է Մակ Կօանի և Ալֆօնս Դօդէի գրքերից, որոց առթիւ ես իւր ժամանակին մի քանի խօսք եմ ասել «Մեղուի» ընթերցողներին: Բայց ես ոչ մի տեղ չեմ տեսել և չեմ կարդացել, որ բողոքականաց կամ որևէ աղանդաւորաց կամ ազգաց աղօթատների կամ ժողովարանների մուտքն այլոց համար փակած, կողպած լինի:

Այցելեցի մեծ տիկին Մարգարիտ Ումբրիբէյեան Յովհաննէանցին՝ ընդ առն Ալեքսանդրեանց, որ այժմ վախճանեալ: Տիկինը իւր ձեռքով գրած մի աւետարան ունի՝ բաղկացած 27 մեծադիր երեսներից: Այդ ինքնաձեռագիր աւետարանի թէ՛ բազմաթիւ մեծ և փոքր պատկերները, թէ՛ զանազան ծաղրանկարները, թէ՛ գիրն այնքան գեղեցիկ են, որ եւրօպական յայտնի թանգարաններին անգամ պատիւ կը բերեն: Ես բաւականին ձեռագիր մատենաներ տեսած եմ, բայց տիկին Մարգարտի հոյակապ աշխատութեան հետ միմիայն ս. Էջմիածնի թանգարանում տեսածս մի ձեռագիր ստուածաշունչը կարող է մրցել: Վերջնոյս մագաղաթեայ պատկերներն աւելի շքեղ են: Բայց տիկին Մարգարտի գործոյն մանաւանդ գիրը սքանչելի է: Այսպիսի մաքուր գործ յառաջացնելու համար մանաւանդ այժմեան ժամանակ հարկաւոր է այդ գործոյ սիրահարը լինել: Իսկ որևէ գործոյ սիրահար լինել, նշանակում է տաղանդ լինել: Տիկին Մարգարիտ իւր աշխատութեան նկատմամբ մի կատարեալ տաղանդ է: Չարմանալին այն է, որ այդ բնածին տաղանդն այդ աստիճան կատարելութեան հասած է ինքնակրթութեամբ: Տիկին Մարգարիտը ոչ մի ուսումնարանում չի եղել: Նա իւր սկզբնական ուսումը ստացել է մի շուշեցի հինաւորց պառաւ «վարպետի»՝ վարժապետուհու մօտ: Բայց այժմ գեղեցիկ կերպով կարդում և հասկանում է գրաբար լեզուն: Տիկնոջ գրադարանը եւ աչքից անցացրի, այնտեղ գրեթէ ամբողջովին կան մեր հին գրականութեան ներկայացուցիչները:

Աւետարանը գրուած է 1867-1872 տարիների ընթացքում և ունի մի փառահեղ արծաթեայ-ոսկեգօծ կազմ՝ 400 ռ. արժողութեամբ: Կազմը շինած է Մօսկուայում յայտնի Խլէբնիկովի գործարանում:

Ձեռագրի առաջին երեսներում կան, բացի հայերենից, նաև ֆրանսերեն և ռուսերեն լեզուներով ասետարանի ծաղկանկար խորագրերը, որոնք նոյնպես ինքը՝ տիկին Մարգարիտն է գրել: Իսկ վերջին երեսումը նկարած է ս. Էջմիածինը, տակին մի ընդարձակ յիշատակարան, որից երևում է, որ այդպիսի թանկագին բաները ս. Էջմիածնում իբր թէ վտանգվում և կորչում են, գայթակղուած է: Ես և ինձ հետ եղող ծերունագարդ Սիմեօն քահանայ Տեր-Իսրայելեանցը և Համազասպ քահ. Տեր-Աւետիքեանցը միանգամայն ապահովացրինք ազնուամիտ տիկնոջը, որ այդպիսի առարկաները հենց միայն ս. Էջմիածնի թանգարանումը կարող են անվտանգ և ապահով մնալ և հեղինակի անունն ու յիշատակն անմոռաց պահել: Տիկինը խոստացաւ իւր աշխատութիւնը ուղարկել ս. Էջմիածին, հենց որ նորըտիր հայրապետը գահակալէ:

Տիկին Մարգարիտն ունի նաև նկարած Դրախտը, որ նոյնպես գեղեցիկ աշխատութիւն է: Նա ունի նոյնպես «Հայկական գեղագրութեան օրինակներ»՝ պրօպիա: Դրանցից մինը նա ուղարկել է Վենետիկ՝ փորագրելու: Պահանջել են 1800 ռ.վարձ, տիկինը չէր կարողացել վճարել: Բայց ի խրախուսութիւն տիկնոջ գեղեցիկ գործոյն՝ Վենետիկոյ հարք նուիրել են նրան 24 օրինակ «Բազմավէպ» և չորս հատոր աստվածաբանութիւն: Իւր գեղագրութեանց մի այլ օրինակը տիկին Մարգարիտն ընծայել է Ջալալեան հանգուցեալ սրբազանին: Նոյն օրինակը, ասաց տիկինը, այժմ պ. Նիկողայոս Տեր-Յակոբեանցի մօտ է: Գեղագրութեան երրորդ օրինակը տիկինը ընծայել է ս. Էջմիածնին: Եւ առ այդ ստացել է օրհնութեան և քաջալերութեան կոնդակ հանգուցեալ Մատթէոս կաթողիկոսից՝ գրեալ ի 22-ն հոկտ. 1859: Հայրապետի հենց այդ կոնդակից քաջալերուած՝ շնորհալի տիկինը ձեռնամուխ է եղել և հինգ տարուայ ընթացքում վերջացրել վերոյիշեալ ինքնաձեռագիր ասետարանը:

Տիկին Մարգարիտն այժմ թէև 47 տարեկան է, բայց բաւականին վատառողջ: Վնասուած են մանաւանդ աչքերը (կարճատեսութիւն): Նիւթականապէս նա ապահովեալ է: Իբրև անզուակ՝ իրան որդեգրել է շուշեցի մի աղքատ ընտանիքի ուստրն ու դուստրը, որոց և լաւ կերպով կրթում ու դաստիարակում է: Տեսայ և այդ մանկիկներին: Շնորհալի երեխայք են¹:

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 14-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 62-ում (11 օգոստոսի, էջ 1-3)

Շուշուայ մէջ, ում տանը որ պատահեցայ, անխտիր ամէնքի մօտ էլ մի ալեգարդ քահանայի պատկերը տեսայ: Ամէն ոք էլ այդ հանգուցեալ քահանայի անունովն ու գործերովը յափշտակուած և ոգևորուած են: Նրան կոչում են վարժապետ տէր Գրիգոր: Լսածներիս նայելով՝ հանգուցեալ քահանայն մեծ երախտիք է ունեցել շուշեցոց վերայ և իւր բարեգործութիւններով ու առաքինի անձով մեծ յիշատակ և անուն թողել: Բարեկամներիս մէկին յանձնարարեցի, որ վարժապետ տէր Գրիգորի համառօտ կենսագրութիւնը գրելով՝ կա՛մ ինքը ուղարկէ մեր թղթերից մինին և կա՛մ յանձնէ ինձ «Ուղեգնացական ակնարկներ»-իս մէջ զետեղելու համար:

Վերջացնում եմ այսօրուայ նամակս մի տխուր լուր հաղորդելով: Յուլիսի 21-ին՝ եկեղեցական հանդիսատր պատարագից (պատարագիչը և դամբանախօսը սրբազան Սագինեանցն էր) յետոյ, ի ներկայութեան ամենախառն բազմութեան, կատարուեցաւ Համբարձում աղա Հախումեանցի կնոջ յուղարկաւորութիւնը Մեղրեցոց եկեղեցոյ գալթում: Եկեղեցին շինուած է Հախումեանցների ծախքով: Հանգուցեալը Ջումշուտ բէկի դուստր էր: Նրա ծերունի մայրը՝ Ջումշուտ բէկի այրին, տակաւին կենդանի է: Գալով Համբարձում աղա Հախումեանցին՝ ո՞վ չէ իմանում, որ նա երկար տարիներ Շուշուայ մէջ առաջին և ժիր ու խիզախ գործիչն էր: Պ. Հախումեանցի այսօրուայ նիւթական վիճակը շատ աննախանձելի է (ասում են մասամբ իւր անհեռատեսութեամբ), բայց նրա բարոյական արժանիքը և ազդեցութիւնը դեռ շատ կենդանի և մեծ են Արցախի հայոց վերայ:

Նախորդ նամակաւս յիշած էի, թէ որքա՛ն դժուարութիւն կրելից յետոյ չը կարողացայ բանաստեղծ Յարութիւնին տեսնել: Այժմ յայտնում եմ, որ երեկ՝ իրիկնապահին, այդ այսպէս ասած անառիկ բերդը՝ բանաստեղծ Յարութիւնը, առնուեցաւ: Եւ առնողներն էին ինձ հետ նաև Մակար վարդապետը, Համազասպ քահանան և Արիստակէս անունով մի երիտասարդ՝ Յարութիւնի դրկիցներից: Ես և Արիստակէսը բռնի միջոցներ գործ դրինք և ներս մտնելով սենեակ՝ տեսանք վերջապէս այդ տարօրինակ մարդուն: Ահա նրա բնակարանի համառօտ նկարագիրը: Մի մեծկակ քառակուսի սենեակ՝ երեք պատուհաններով և երկու պահարաններով, մի պատի մէջ՝ մի բուխար: Սենեակը բաւականին մաքուր էր: Երբ մենք, գրոհ տալով, ներս մտանք յանկարծակի, բանաստեղծ Յարութիւնը, ինչպէս մի կատարեալ մումիա, պատն ի վեր կանգնած էր: Երեսը՝ կատարեալ պղինձ, ոտքերը և բազուկները՝ մի-մի կատարեալ և չոր ցախաւել, միրուքը՝ սև, խիտ, ճակատը՝ լայն,

կերպարանքը՝ գրավիչ, սիրուն, հասակը՝ միջակ, տարիքը՝ հազիւ քառասունից անց: Առաջին անգամ մեզ տեսնելիս Յարութիւնի աչքերը արտասուքով լեցուեցան, բայց նա իրան զսպում էր: Նրա դառնադառն, սպանիչ և հեզնալից ակնարկը ոտքերս կասուցին, խիղճս ինձ խայթեց, և ես յուզուած սրտով ձեռքս դէպի 9 տարուայ մարդատեացը ուղղեցի մի քանի փաղաքշական խօսքերով, որոց Յարութիւնը չը պատասխանեց: Վարդապետին և քահանային ներս կանչեցինք: Յարութիւնը տեղից ժած եկաւ, նրանց աջն առաւ և հրաւիրեց նստել: Մենք բոլորս ծալապատիկ նստեցինք յատակի վերայ: Ինքը՝ Յարութիւնը չոքեց իւր մի կտոր փալասի վերայ՝ աշխատելով իւր ցնցոտի զգեստի կտորներով մեր տեսութիւնից պահել մարմնոյ մերկ մասերը՝ կուրծքը, սրունքները և արմունկները: Մեր հարիւրաւոր հրացմունքներին նա հազիւ էր պատասխանում, երբեմն և աշխատում մեզ հեռացնել: Պարզ երևում էր, որ մեր ներկայութիւնը և հարցմունքները Յարութիւնին խիստ անհաճոյ էին:

Առաջարկեցինք զգեստ, կերակուր ամէն օրուայ համար, փող, Յարութիւնը միանգամայն մերժեց՝ յայտնելով դրականաբար, որ իւր ապաշխարութեան օրերը տակաւին լրացած չեն, ուստի չէ կարող կեանքի եղանակը փոխել: Ընդ նմին, պաղատագին և արտասուագին խնդրեց մեզ, որ այդ մասին այլևս իրան ոչ մի առարկայ չանենք: Ինքը գոհ է այն ցամաք հացովը, որ ամենայն օր աշակերտներից մէկի կամ միւսի ձեռքովը բերել է տալիս փողոցից: Ապրուստի և տան վարձի փող ունի: Իւր կարողաւոր աշակերտները նրան ամսական 20 կօպ. են վճարում: Նա կարիքի համար փողոց դուրս է գնում միմիայն երկու օրը մի անգամ՝ գիշերները: Աշակերտների դասագիրքը Աղայեանցի «Մայրենի լեզուն» է: Իւր բանաստեղծութիւնքը խիստ շատ են, և բոլորն էլ՝ հայերէն: Մինչև իւր ապաշխարութեան օրերի լրանալն նա ոչ երբեք կը համաձայնի ումնիցէ ցոյց տալ այդ բանաստեղծութիւնքը, որոնք գրում է «յօգուտ և ի փրկութիւն բովանդակ աշխարհի»: Բոլոր ժամանակ մեր խօսակիցը իրան շատ լուրջ պահեց: Եւ խօսում էր շատ կանոնաւոր, պարզ և մաքուր հայերէն: Եւ եթէ չը լինէին նրա վերջին խօսքերը, այն հոգեզմայլ ժպիտն սեպհական բանաստեղծութեանց անունը յիշելու և յիշեցնելու ժամանակ, ես դժուարանում էի բանաստեղծ Յարութիւնի մէջ հոգեկան հիւանդութիւն տեսնել: Այսպէս կարծեցի թերևս, որ գուցէ սխալվում եմ:

Մեր հետագայ խօսակցութիւնից երևեցաւ, որ Յարութիւնի այժմեան կեանքի եղանակն արդէն 20-րդ տարին է, որ տեւում է, 9 տարի՝ Շուշիում, մնացեալը՝ Կուսապատ գիւղում, որ նրա ծննդավայրն է: Կուսապատում Յարութիւնը ո՛չ ծնող և ո՛չ քոյր կամ եղբայր ունի: Ունի միմիայն հեռաւոր ազգականներ, որոնք նրան թերևս մեռած էին համարում: Այսպէս կարծում էին և շատ շուշեցիներ:

Մեր մէկուկէս ժամուայ խօսակցութիւնքը ոչ մի հետևանքի մեզ չը հասցրին Յարութիւնին նիւթապէս օգնելու կամ բանաստեղծութիւնքը տեսնելու նկատմամբ: Մեր առաջին ամենաանդրդուելի կերպով կուչ եկած, նստած էր Շուշուայ Դիոգիւնէսը, որ Աթենքի Դիոգիւնէսի նման կարծես միշտ այս էր ասում. «Ես ձեզանցի ոչինչ չեմ խնդրում, միայն արևից դէ՛ն գնացէք, հեռացէ՛ք իմ սենեակից»:

Հեռացանք: Տէր Համագասպն առանձնապէս կէս ժամ խոստովանեցրեց բանաստեղծ Յարութիւնին: Այդ խոստովանութեան հետևանքն ի՞նչ էր, իհարկէ, ո՛չ ինքս տէր Համագասպից հարցրի, ո՛չ նա ինձ ասաւ: Միայն յայտնեց, որ Յարութիւնի ասութեամբ նրա ապաշխարանաց օրերը կը լրանան ներկայ տարւոյս վերջը, և նա այդ ժամանակ դուրս կը գայ իւր սենեակից, իւր բանաստեղծութիւնքը կը յանձնէ կա՛մ Մակար վարդապետին և կա՛մ Թիֆլիս՝ ինձ կուղարկէ: Յարութիւնը այս ևս խնդրած է, որ ես իւր բանաստեղծութեանց հատուածները (որոնք ես լսած և իրան յայտնած էի) չը հաւաքեմ և չը հրատարակեմ:

Շատ բարի, թող այդպէս լինի:

Ինձ յայտնեցին, որ Շուշուայ ոստիկանարանը մի քանի անգամ կամեցել է Յարութիւնին դուրս հանել իւր սենեակից: Բայց չէ յաջողուել: Մի երկու անգամ բռնութեամբ նրա մօտ մտել են ոստիկանք, բայց Յարութիւնին պահարանում թաք կացած տեսնելով և նրա աղէխարշ լաց ու թացից խղճահարուելով՝ թողել և հեռացել են:

Շատ էլ լաւ են արել, որովհետև, եթէ այդ մարդը վնաս է տալիս, դա միմիայն իւր անձին է: Ուրիշներին և ոչ ոքին նա չէ վնասում: Յարութիւնն ինձ ասաւ, որ աշակերտներին իւր կշտից հեռացնելու դէմ ոչինչ չունի, թէ նա ինքը վարժապետութիւնից ձեռք կը քաշէ, երբ ապաշխարութեան օրերն լրանան:

Ինչպես նախորդ նամակումս էլ յիշած էի, բանաստեղծ Յարութին այդ ճիշտ Տուրգենևի «Живыя мощи» պատկերի նոր տեսակ հերոսից ոչինչ վնաս չը կայ մանուկների համար¹:

Նախորդ նամակներիցս մեկում յայտնելով, որ Շուշուայ հայերից 100 տնուր Ջիւանշիրի կողմերը գաղթել են ուզում, խոստացած էի խօսել այդ մասին: Այժմ ահա կատարում եմ խոստումս, որովհետև հարցի հետ մօտոյ ծանոթ եմ: Յիշեալ հայերից 10 հոգի օրերումս պատրաստվում են գնալ և իրանց ապագայ բնակատեղոյն հետ ծանոթանալ: Ինքս էլ ցանկանում էի Ջրաբերդը և իւր շրջակայ վանքերը տեսնել: Մենք միացանք, և ես նախքան Ջրաբերդ գնալս, յիշեալ պարոնների հետ գնացի իրանց նոր բնակատեղին ևս տեսնելու: Յիշեալ գաղթականութիւնը ինձ շատ էր հետաքրքրում: Շատ անգամ ինքս ինձ ասում էի՝ արդեօք ի՞նչն է պատճառը, որ բնակիչք հովասուն լերանց ուզում են լինել բնակիչք խորշակահար դաշտաց: Գաղթականութիւնն ընդհանրապէս և շուշեցիների համար մասնաւորապէս ունի այսինչ և այնինչ ընդհանրական և մասնական վնասները, վատ հետևանքները: Սակայն բանից դուրս է գալիս, որ այդ 100 տնուրները տնտեսական զօրեղ հանգամանքներից հարկադրուած են թողել Շուշին և Ջիւանշիրի մի անկիւնում որոնել իրանց և իրանց որդուց ապագայ բարօրութիւնը: Որո՞նք են այդ հանգամանքները, աւելորդ է այդ մասին խօսել: Շուշուայ դրութեան հետ ծանոթ եղողն ինքը հեշտութեամբ կարող է մեկնաբանել:

Ամտութիւն կը լինէր կարծելը և խօսելը ու գրելը, որ երբ մի քանի հարիւր մարդիկ ուզում են թողնել իրանց ծննդավայրը, դա առանց էական պատճառի է կամ լոկ «թեթևասօլիկութիւն» (ինչպէս գրուած է եղել մի հայ թերթում): Ընդհակառակը, գաղթել ցանկացողների մեջ կան շատ խելօք, փորձառու անուան և դրից տէր անձինք, որոնք երկար-բարակ չափելից և ձևելից յետոյ եկած են գաղթելու որոշմանը և ուզում են ի գլուխ բերել, եթէ որ, հարկաւ, իշխանութիւնը նրանց խնդիրը հարգելով՝ խնդրուած երկիրը կը տայ իրանց: Ինքս, նայելով հարցի և երկրի ծանօթութեանս, նմանապէս այն եզրակացութեան եկայ, որ յիշեալ գաղթականութիւնը թէ՛ մասնական և թէ՛ ընդհանրական տեսակետներով կարող է օգտաւետ լինել, եթէ միայն յաջողի: Տեսնենք, թէ ի՞նչ տեսակ երկիր են ընտրել 100 տնուր շուշեցի հայք և այդ երկրից ի՞նչ

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 15-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 63-ում (15 օգոստոսի, էջ 2-3)

օգուտներ կարող են տուն տանել իրանք և իրանց որդիքը և Ջիւանշիրի շրջակայ ազգաբնակչութիւնը:

Մեր խումբը Շուշուց դուրս եկաւ յուլիսի 6-ին ֆուրգօնով: Ինչպէս միւս, նմանապէս Շուշուայ գաւառում պարապում են մի քանի տնտր մոլոկաններ Ղարաբուլաղ գիւղից, մի քանի թիւրք տնտրներ Ղարդաբազար գիւղից և Մելիքէկլու գիւղի 150 տնտր թիւրք բնակիչները: Վերջին գիւղը մեր գնացած ճանապարհի աջ կողմում է գտնվում և, ասում են, շատ հարուստ գիւղ է, նրա բնակչուհեաց զարդերը շատ ճոխ են, միևնոյն ժամանակ յիշեալ պարսկուհիք ողջ գաւառում յայտնի են իրանց գեղեցկութեամբ: Հաւատում են, որ մի հասարակութեան, մի համայնքի տնտեսական ապահովութիւնը ոչ միայն գեղեցկութեան, այլ դրանից առաւել բարձր բարեմասնութեանց և յառաջադիմութեանց սկզբնապատճառն է, եթէ միայն այդ հասարակութիւնը կարող է իւր տնտեսական ապահովութիւնը գործադրել ինչպէս հարկն է:

Մելիքէկլու գիւղից փոքր-ինչ ցածր մենք հանդիպում ենք մի ընդարձակ և աւերակ շինութեան: Դա Ջաֆար Ղուլի խանի պալատն էր մի ժամանակ: Պալատի առաջից հոսում է Կարկառը, որ դեռ սակաւաջուր է, ուստիև գորտերը միջին կոկոռում են: Ասում են, որ Ջաֆար Ղուլի խանի հրամանաւ շրջակայ գիւղերից ամէն գիշեր 3 մարդ մինչև ի լոյս հսկում էր գորտերի վրայ, որպէսզի դրանք իրանց անախորժ կռկռոցներով խանի քունը չը խանգարեն: Խեղճ գիւղացիք: Ասիական բռնութիւնն ու կամայականութիւնը ի՞նչ խաղեր չէ խաղացել ձեր գլխին: Սակայն ահա Ջաֆար Ղուլին ի չիք է դարձել, նրա պալատը՝ հիմնայատակ եղել, իսկ գիւղացին դեռ կայ ու կը մնայ՝ ի խրատ և ի գգուշութիւն ժողովրդին գրաստ և անասուն համարող ամէն մի դեսպոտի համար:

Ջաֆար Ղուլիի աւերակ պալատից յետոյ մենք մտնում ենք այսպէս անուանեալ Խանի բաղը՝ մի ընդարձակ իջևան, որ Մեհդի Ղուլի խանի դստեր՝ Խուրշուդ խանումի բազմաթիւ կալուածներից մինն է և նրան տարեկան 1500 ռ. կալապադրամ է տալիս: Միևնոյն տիկնոջ սեպհականութիւնն է նմանապէս Խանի բաղից ներքև գտնուած այս դաշտակը, ուր սեխի և ձմերուկի տօնավաճառ է լինում յուլիսից սկսեալ մինչև հոկտեմբեր: Միրգ վաճառողները Ջիւանշիրի և ուրիշ ցածր երկրների բնակիչ թիւրքերն են, որոնք այդտեղ ևեթ սաղացնում են իրանց ապրանքը Շուշուայ մրգավաճառների և ճանապարհում անցուդարձ անողների վրայ: Թեղիի մեծամեծ ծառների տակ դիզուած են սեխի և մեղրապօսյի (ձմերուկ) սայլերը:

Գներն առայժմ թանկ են: Թե՛ ձմերուկի և թե՛ սեխի հատը 8-10 կօպ. արժե: Օգոստոսից սկսեալ՝ դրանց գինը կիջնի մինչև երկու և մեկ կօպեկի: Սեխի տեսակաց մեջ ամենալաւն է սնեյվազ կոչվածը, որ իբր թէ Երևանի յայտնի դուրմայից (սեխի տեսակ) համեղ է: Տօնավաճառի դաշտակից Խուրշուղ խանումը տարեկան 300 տուրի արդիւնք ունի: Այդ տեղը կոչվելիս է եղել Վարդանի բաղ: Վաղ ժամանակ պարսիկները մի բուռ հող անգամ չունէին Արցախում: Բայց այն վաղ էր, որ էշը կաղ էր: Մի ջիւանշիրցի աւագակ՝ Փաննահ խանը, վաղ ժամանակ աւելի խելօք և աւելի գործուն գտնուեցաւ, քան Խամսայի հինգ հայ մելիքները: Փաննահը աւագակութիւնից խանութեան բարձրացաւ և երկփեղկեց ու պառակտեց Խամսայի մելիքութիւնը: Փաննահի որդին՝ Իբրահիմ խանը, յիշեալ երկրին և նրան տիրապետողներին տակնուվրայ արաւ, որոնք, խոտ կերած ձկների նման գժուեցան ու ջրի երես ելնելով, վերջիվերջոյ բանն այնտեղ հասցրին, որ մի Մէհդի Ղուլի խան՝ Իբրահիմ խանի որդին, կեղծ վկայականներով ողջ Արցախը փայ ու բաժին արաւ իւր ջորեպանների և սայլապանների մէջ: Եւ այդ գովուած Խամսայի հայ մելիքները ստիպուած եղան միմեանց այսուևեթ մխիթարել, թէ «բաժանեցին զհանդերձս իմ ի մէջ իւրեանց և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին»: Բայց ես դառնամ իմ յիշատակարանին:

Խղրլու թիրքաբնակ գիւղում, որ 300 տուն բնակիչ ունի, մենք իջանք հանգստանալու: Այդտեղ մի հայ եկեղեցոյ աւերակներ կան, որ ես չը կամեցայ տեսնել, մանաւանդ որ աւերակներում ոչ մի արձանագրութիւն չը կայ: Ճաշից յետոյ ես յաջողեցայ մի քանի տեղեկութիւնք հաւաքել Ղտրօղլի և Քերիմ կոչուած աւագակապետների մասին, որոնց ռիմակն այսօր սարսափի մէջ է պահում Ջիւանշիրն ու Բօրչալուն: Բանից դուրս է գալիս, յիշեալ աւագակապետներին կալանաւորելու չէ յաջողում իշխանութիւնը յատկապէս այն պատճառաւ, որ Ջիւանշիրի և Բօրչալուի գրեթէ թիրք համայն ազգաբնակութիւնը ծածկաբար, պաշտպան և ապաստարան տուողների թվում կան և թիրք պաշտօնական անձինք, մանաւանդ գիւղաւագներից և դատաւորներից:

Մի քանի շաբաթ առաջ Բօրչալուի գաւառապետը 200 կօզակներով և իւզբաշիներով մի թաւ անտառում շրջապատում է Քերիմ աւագակապետին, որ ծառի տակին քնած է եղել երկու ընկերներովը: Գաւառապետը հեռուից նշան է դնում աւագակապետին հրացանահար անելու, բայց իւզբաշիներից մինը բարձրաձայն բղաւում է.

- Կնեա՛գ, դա Քերիմը չէ, մի՛ խփեք:

Այդ ձայնի վրայ Քերիմը զարթնում է և ձիանքն ու զենքերը թողած անտառի մեջ՝ անյայտանում է իսկոյն: Գաւառապետի հարց ու փորձերից ի յայտ կուգայ, որ Քերիմ աւազակապետը նախընթաց երեկոյին վերոյիջեալ գթասիրտ իւզբաշու տանն է եղել իջնանելիս: Երբ տեղական ազգաբնակութիւնը և իւր ներկայացուցիչներն իրանք են պատասպարում աւազակութիւնն ու ասպատակութիւնը, իշխանութիւնը, բնականաբար, անգօր է ձեռաց որսալու և կալանաւորելու Ղտրօղլիներին և Քերիմներին:

Չը մոռանամ յիշել, որ Քերիմ աւազակապետը 23 տարեկան մի տղամարդ է և դեռ մի քանի ամիս առաջ չափառ է եղել: Ուրեմն քաջութեան և սրտոտութեան հետ այդ աւազակապետն ունի նաև լաւ ծանօթութիւն երկու իսկ գաւառների ծակ ու ճեղերին հետ:

Մուօը նոր էր կոխում, երբ մենք հասանք Շահբուլաղ իջնանը: Փոստայի կայարանում իջնանել, իհարկէ, կարելի չէր մեզ, ֆուրգօսների համար յատկացեալ խանի մեջ՝ նոյնպէս, վասնզի տեղ չը կար, և ուրիշ պարսիկ ճանապարհորդներով լիքն էր այդ լուտոս ու կեղտոտ խանը: Ուստի մենք մեզ համար ննջարան ընտրեցինք բաց երկնքի տակ Շահբուլաղի ակունքը և նրան շրջապատող մացառուտները:

Այստեղ ես իմ ընթերցողին պետք է նկատեմ, որ մեր խմբի բոլոր անդամներն էլ ոտքից ցզլուի զինուաւորված էին: Մենք մեզ միանգամայն ապահոված էինք ամէն մի սովորական և անսովոր աւազակների յարձակումներից: Ընդ նմին մեր զենքերը թէ՛ ընտիր էին և թէ՛ բազմատեսակ: Միայն թնդանօթն էր պակաս: Եթէ հնար ունենայինք, այդ զենքից ևս կը վերցնէինք: Գալով նրան, թէ զիշերը բաց օդի տակ անցկացնելն առողջութեան համար վտանգաւոր չէ՞, պատասխանում են՝ նայած ով ինչ տեսակ կեանքի է վարժուել: Մեզանից ոչ ոք փափկասուն չէր: Ամէնից փափկասունը, դժբախտաբար, ես էի, ուստի ընկերներս ինձ պատիւ արին անձածկ ֆուրգօնը ինձ անկողնակալ յատկացնելով: Հետևեալ և միւս օրերը շարունակ՝ մինչև օր, ես ինքս էլ սովորեցայ արդէն գետնի և խոտի վրայ ննջելու: Դա գեղեցիկ բան է: Ամէն մի քաղաքացու էլ խորհուրդ կը տամ փորձել:

Ընթրիքից յետոյ մեր ընկերներից երկուքը զիշերապահ նշանակուեցան: Միւսներս ննջեցինք: Քամին շշնկում է, մոծակները և ճանձերը տոգում են ու սուսիկ-փուսիկ մեզ կծոտում: Շահբուլաղի ականց ջրերը խոխոջում են, մեր ննջարանից փոքր-ինչ ստորև կազմուած ճահիճներում գորտերը կոկոռում,

մացառների մեջ զանազան զեռունները մինչև ի լոյս ձրիաբար նուագում են մեզ համար, ուրիշ էլ ի՞նչ էք ուզում: Առաւօտեան ժամը 4-ն էր, որ կարմիր արևի ճառագայթները մեզ զարթացրին: Աչքս շուռ տուի դէպի աղօթարանը¹, և, աստուած իմ, որքան փառաւոր է լինում արևի բացուիլը Ջիւանշիրի հեռաւոր հորիզոնի տակ:

Մինչև թէ խմելը և մեր պարկերի ու անկողինների հաւաքելն ու կապտելը ես աչքից անցկացրի Շահբուլաղի հնութիւնքը: Առաջին նամակումս ես գրել էի, թէ այդ հնութիւններից մինը մզկիթ է (ասած էին ինձ): Բայց դա սխալ է: Մզկիթ անուանած հին շինութիւնը բաղնիս է: Դրան վկայ են աղբիւրները և նոյնիսկ շինութեան ձևը: Բերդի համար ասած էի դարձեալ այլով խօսքերով, որ Շահ-Աբասի շինած է: Սա նոյնպէս սխալ է: Շահբուլաղին տեղացիք մինչև այսօր անուանում են նաև Թառնագիրտ: Ջալալեան (տե՛ս Ճանապարհ. ի Մեծն Հայաստան, հատ. Բ, էջ 344) այդ բառը համարում է Տիգրանակերտ բառի աղաւաղածը և պատմիչներից մի քանի վկայութիւններ առաջ բերելով՝ կարծում է, որ դա Տիգրան Առաջինի շինած է՝ ի բնակութիւն իւր Տիգրանուհի քրոջ: Երևի Ջալալեանից առնելով՝ պ. Բաֆֆին («Խամսայի Մելիքութիւնները») նոյնպէս Թառնագերտը Տիգրանակերտ է անուանում: Իմ կողմից ես այդ կարծիքը վաղվաղիցս եմ համարում և տրամադիր եմ աւելի դէպի հետևեալ ժողովրդական ասանդութիւնը, որ Թառնագիրտին անուանում է Թառնագիրտ և հարակցում, որ Վաչագան Աղուանից թագաւորը իւր վերջին տարիներում եկաւ Շահբուլաղ: Այնտեղ լեռան զագաթին մի վանք շինեց, ուր և ճգնում էր կամ որպէս հաւ՝ թառում էր՝ Թառնագիրտ:

Այդ վանքը մինչև հիմայ կայ և մի փոքրիկ մատուռ է²: Վրան միայն Մ տառը կայ, ուրիշ ոչինչ: Այսպէս թէ այնպէս՝ Թառնագիրտ կամ Տիգրանակերտ աւերակների վրայ առաջին անգամ Փաննահ խանը մի բերդ շինեց, որ հայ մելիքները քանդեցին: Յետոյ այդ բերդը պարսից ձեռքով վերստին նորոգուեցաւ: Նրանում մի քանի անգամ պատերազմներ եղան: Այսօր

¹ Ողջ Արցախի հայերը արնելեան կողմին անուանում են աղօթարան: Դա շատ հին և իմաստալից բառ է, որ շատ տեղերում հայ ժողովուրդը գործածում է: Եւ ժողովրդից առնելով՝ հայ բանաստեղծն էլ երգում է՝ «Աղօթարանը բացուեցաւ, ժամանակ է զարթելու»

² Ես ժամանակ չունեցայ այդ մատուռը տեսնելու: Նրա մասին տուած այս տեղեկութիւնը ինձ հաղորդած էր Մակար վ. Բարխուդարեանցը: Բայց պ. Նիկողայոս Տէր-Աւետիքեանցն էլ («Քնար խօսնակի» հեղինակը) ինձ յայտնեց, որ յիշեալ մատուռը մի գեղեցիկ շինութիւն է և լի արձանագրութիւններով, որոնք մի ժամանակ պ. Գ. Խոջամիրեանցն արտագրել է իբր: Արդե՞ք տպուած են այդ արձանագրութիւնք: Ես գոնեա չեմ յիշում: Յիշեալ մատուռին ժողովուրդը անուանում է Լեռնաբերդ: Թարթառի հովտում ես մի առու տեսայ, որ նոյնպէս կոչվում է Լեռնաբիւ

չափառների բնակարան է: Շահբուլաղի երրորդ հնութիւնն է (բաղնիսին կից) մի այլ քայքայուած և կիսով չափ գետնի մէջ թաղուած շինութիւն, որոյ ճակատի ընդարձակ արձանագրութիւնը (ի լեզու պարսկաց) շատ բան կարող էր պարզել: Ափսո՛ս, ո՛չ ես և ոչ ոք մեր ընկերներից կամ շահբուլաղցիներից չը կարողացանք յիշեալ արձանագրութիւնը կարդալ: Տեղւոյն վերջին՝ Շահբուլաղ անունը նշանակում է Շահի աղբիւր, որ թուով երեք են և ժայռերից բղխում են սառնորակ և կաթնահամ: Աղբիւր մէջ փոքրիկ ձկները գեղում և խայտում էին՝:

Շահբուլաղից սկսեալ՝ մեր ճանապարհը մտնում է քօլանիների աշխարհը: Քօլանի մի թիւրք տարր է, որ Ջիւանշիրում նոյն է անում, ինչ որ աւագակ և թափառական քիւրդերը Տաճկահայաստանում: Կերպարանքները դաժան են, աչքերը՝ արեան ծարաւի, ուսերին՝ հրացան, մէջքներին՝ դաշոյն: Դրանք ընդարձակ դաշտի մէջ թափառում և կողոպտում են շրջակայ գիւղականաց, մեծաւ մասամբ հայոց ապրանքը, գողանում տաւարները, մինչև անգամ հաւու ճտերը, կրակում և այրում դաշտի հունձերը: Իրանց բնակարանները գայլերի և աղուէսների բնակարաններից շատ չեն զանազանվում, չորս կամ հինգ տունը մի գիւղ է համարվում միմեանցից մի քանի հարիւր սաժէն միմիայն հեռու: Մի գիւղը երեք կամ չորս արտ հազիւ է սերմանում: Աւելի սերմանելու ինչ հարկ կայ, երբ պակասը հայերի աշխատութեամբ լցուցանվում է: Ամառը քաշվում են լեռներն իրանց ոչխարանց հոտերի և ձիերի երամակների հետ և կողոպտում լեռնաբնակ հայերի սեպհականութիւնքը, իսկ տարուայ միւս եղանակներումը իջնում են իրանց որջերը² և կողոպտում դաշտաբնակների սեպհականութիւնքը:

Ճշմարիտ է, դարաբաղցի հայք քաջ են, զենքեր ունին և գործածել իմանում են, բայց քօլանիները ճակատ առ ճակատ կռուողներ չեն: Նրանք շատ լաւ գիտեն, որ հայի ոչխարները և տավարները դրսումն են կամ փարախում: Գիշերը գալիս են ծածուկ և քշում, տանում: Տեսնում են, որ խոտի կամ հացահատիկների դեզը դաշտումն է կամ կալում: Գալիս են և դարձեալ տանում, այրում: Վաստակաբէկ գիւղացիք հօ չեն կարող ամենայն գիշեր, հրացան ի ձեռին, հսկել իրանց պահպանութեան վրայ: Ես իմ ճանապարհորդութեանս այնպիսի և այնքան բաներ լսեցի քօլանիների վրայ, որ

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 16-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 64-ում (18 օգոստոսի, էջ 2-3)

² Քօլանիների հանգստարանը, որ Թարթարի հովտումն է՝ Մատաղիսի հանդէպ, տներիցն աւելի խնամքով է շինուած: Շիրիմները մեծ-մեծ են և արձանագրութիւններով

մագերս բիզ-բիզ էին կանգնում: Չը բաւականանալով գիւղացիների արած հափշտակութիւններով՝ քօլանիները երբեմն յարձակվում են և վանքերի վրայ, սպանում վանահայրերին (ս. Եղիշէ առաքեալի վանահօրը) և վանքը թալանում: Մտնում են ուրիշ վանք և հաւաքունից հաւերը տանում, իսկ ծառներից պտուղները քաղում: Այսպէս վարուել էին նրանք Երից Մանկանց վանքի հետ իմ այնտեղ գնալից մի օր առաջ: Պատահում է, որ գիւղացիք երբեմն իրանց պարտիզների պտուղները խակ-խակ են քաղում քօլանիների երկիւղից: Այդ տարրն է, որ անցեալներում սպանեց Վիլմանին և կողոպտեց նրա ձիաբուծարանը: Վերջին եղեռնագործութեան պատճառաւ իշխանութիւնը յանցաւորներին նոյնիսկ ձիաբուծարանի առաջ կախել տուեց: Այդ բանից սարսափած՝ քօլանիներն այժմ բաւականին զգաստացած են, բայց դա ժամանակաւոր է: Լեռնաբնակ և մանաւանդ դաշտաբնակ գիւղացւոց ուրախութեանը չափ չը կար, երբ լսում էին, որ հարիւր տնուր շուշեցիք ուզում են Ջիւանշիր տեղափոխուել: Նրանք կատարելապէս հաւատում էին, որ այդ ներքին գայթակղութիւնը իրանց կազատէ իրանց ռիւերիւմ և գող հարկանների աւարառութիւններից և արիւնայեղութիւններից: Այդ կարծիքի հետ ես ինքս էլ համամիտ եմ: Եւ հէնց այդ տեսակէտով էլ շատ օգտակար եմ համարում շուշեցիների տեղափոխութիւնը, մանաւանդ որ դրանց ընտրած տեղը ջիւանշիրցւոց բնակութեան կենտրոնին կամ սրտին մէջն է՝ մի ընդարձակ և ամայի դաշտ, որոյ չորս կողմը քօլանիների որջերն են: Ի վերջոյ այս ևս պետք է ասած, որ դեռ նախկին փոխարքայի ժամանակից հրամայուած է քօլանիներին Ռուսիոյ սահմաններիցը վտարել, բայց դա չէ յաջողվել և կարծեմ չը պիտի էլ յաջողուի, որովհետև իսկապէս դժուար գործ է մի ամբողջ համայնք բռնութեամբ հեռացնել իւր ծնավայրից ու բնակավայրից: Բայց այդ համայնքին զսպել, նրա վայրենիութեանը վերջ դնել, կարելի է և պետք է: Այդ դէպքում ահաւասիկ հարիւր տուն քաղաքացիք ինքնաբերաբար իրանց բազմադիմի գոհաբերութեամբ կամենում են աջակից լինել իշխանութեանը:

Շահրուլաղից յետոյ մեզ հանդիպող գիւղերն են (քօլանիները չը հաշուելով իհարկէ) Մախատղու, Քեանգառլու, երկուքն էլ թիւրքաբնակ և ընդարձակ, ամբողջովին թաղուած պարտէզների մէջ: Նոյնիսկ մեր ճանապարհին ընթանում է ուռենեաց և նոնենեաց մէջ: Քեանգառլու գիւղից յետոյ վերջանում է պատմական Վարանդը և սկսում Խաչէն գաւառը՝ սահման ունենալով համանուն մեծ գետը, որ այժմ սակաւաջուր է: Խաչէն գետից անցնելով՝

մենք մտնում ենք Բոյահմադլու գիւղը, որ լաւ խաղող ունի, յետոյ Ղարափիրում գիւղը, որ իւր կշտին ունեցած կրկին սրբավայրերի պատճառաւ այս կողմերում նշանաւոր ուխտատեղի է պարսկաց համար: Ասացին, որ այդտեղ ուխտի գալիս են նաև Թիֆլիսի պարսիկները: Ուխտատեղիքը քառակուսի, փառաւոր շինութիւնք են: Մինի ճակատին արձանագրութիւն կայ: Շինութիւնքը քարից են շինած, իսկ այս կողմերի քարերը քարացած կիր են՝ սաստիկ սպիտակ և թեթև: Քարերը հանում են գիւղերին կից եղած Խաչէնի լեռանց լանջերից, որոյ վրայովն անցնում ենք և մենք: Չը մոռանամ յիշել, որ այս կողմերում յաճախ պատահում ենք կապարի, որոյ մեծաքանակ առատութիւնը գտնվում է Մուղանի դաշտում և Կուրի հովտում:

Ղարափիրումից յետոյ գալիս է Մարտակերտ հայաբնակ գիւղը՝ հանդիպակաց և կրեայ գոյգ լեռների լանջերի վերայ շինած: Ունի 120 տուն, որ գաղթել են այստեղ մօտակա Կուսապատ գիւղից (400 տուն), մի եկեղեցի, որ օծել են անցեալ տարի, բայց այժմ քանդուած է: Գիւղն ունի ընդարձակ և սև վարելահողեր Ջիւանշիրի դաշտումը: Կթան և լծկան կենդանիքը բազմաթիւ են և ընտիր: Գիւղի արևմտեան կողմի նեղ ձորակում սփռուած են թթենու պարտեզները: Մարտակերտի մկներն իրանց խոշորութեամբ կարող են մրցել Թիֆլիսի և Քուբայիսի մկների հետ:

Մարտակերտում մենք իջևանեցանք մի պարտիզի մէջ, ուր անցուցինք և գիշերը: Իմ բոլոր ջանքն էր մօտակայ լեռան քարափներից կաքաներ որսալ, որ իզուր անցաւ: Գիւղին մօտ լինելով՝ այս կողմի կաքաները զգոյշ են և էլ լաւ թռչում են: Ես միայն մի մեծկակ կրիայ բռնեցի լեռան գագաթում, թէև այն էլ ուտելու չարժանացայ: Ընկերներս զգվում էին այդ կենդանուց, ուստիև չեփեցինք: Մեր կերակրի կաթսան այդ (ընկերներիս կարծիքով) զագիր կենդանիով չուզեցինք կեղտոտել¹:

Հետևեալ օրը՝ երկու ժամից յետոյ, մենք արդէն վրան ենք զարկել այն ամայի և անջրդի դաշտի վրայ, որ շուշեցի 100 տնուր հայք իրենց ապագայ բնակութեան տեղն են ընտրել: Դաշտի մի կողմում, որ բաւականին բարձրադիր է և ընկնում Թարթառի հովտի աջ գլխում, տարածուած է մի սարահարթ, որոյ վրայ Շուշուայ գաղթողներն ուզում են իրանց բնակարանները հաստատել, իսկ շրջապատ դաշտավայրերում՝ վարուցանք անել և այգիներ ու պարտեզներ տնկել: Շուշեցուց ընտրած դաշտը, որ մօտ 6000 օրավար

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 17-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 65-ում (22 օգոստոսի, էջ 3)

տարածություն է լինում, ունի պատուական և տակաւին կոյս սևահող, որոյ վրայ ամենայն առատութեամբ աճում է մետաքսաանման խոտը: Երկիրը կարող է արտադրել լաւ բամբակ (փորձն արդէն արել են Մոխրաթաղ գիւղի բնակիչները), բազմատեսակ պտղատու ծառեր, խաղող և այլն, բայց այդ և դրանց նման ուրիշ բարիքներ երկրից ստանալու համար հարկաւոր է դրամական ահագին գոհողութիւն: Ողջ դաշտի մէջ մի կաթիլ ջուր անգամ չը կայ: Ջուր պէտք է հանել Թարթառի հեռաւոր և ծակների մէջ թաղուած կէտերից: Դրա համար հարկաւոր է, ինչպէս չափուելուց երևեցաւ, 31 վերստ տեղ Թարթառի հոսանքով վեր բարձրանալ, կտրատել հինաւորց ծառեր, կոտրատել ժայռեր, առու և ճանապարհ բաց անել: Հէնց մէնակ այդ ձեռնարկութիւնը շուշեցիներից մօտ 100 հազար ռուբլի է պահանջում: Նրանք յանձն են առնում թէ՛ այդ և թէ՛ ուրիշ ամէն տեսակ գոհողութիւն, միայն թէ տէրութիւնը բարեհաճէր դաշտը իրանց տալ: Մի շաբաթ այդ մարդկանց հետ խօսակցական գոլով, տեսնելով նրանց նկարած մակարդակը, ես տեսնում եմ, որ այդ մարդիկը հաստատապէս մտքներումը դրած են Ջիւանշիրում ելրօպական ձևով մի կօլօնիա հիմնել: Իրանց մէջ պիտի լինին Ելրօպայում կրթուած այգեգործ և անասնապահ ընկերներ:

Տոկութիւն և յաջողութիւն ցանկալով իմ ընկերներին և թոյլ տալով, որ իրանք ջրի ճանապարհը չափելով զբաղուին, ես արժ. Համագասպ քահանայ Տէր-Աւետիքեանցի հետ, որ գաղթողներից մինն է, իջայ Թարթառի հովիտը՝ յայցելութիւն այնտեղ եղած հայ գիւղերին՝ Ներքին Չայլու (28 տուն), Վերին Չայլու, Մարաղա (1828-ին Պարսկաստանից գաղթածներ են) և Մատաղիս: Դրանցից Մարաղան (80 տուն) հովտի մէջ չէ, այլ նրա աջակողմեան գագաթի դաշտումը (Ջիւանշիր): Ես միայն Վերին Չայլուն ու Մատաղիսը տեսայ: Առաջինն ունի 34, իսկ երկրորդը 13 տուն՝ ամբողջապէս պարտէզների մէջ թաղուած, որոց մէջ կան խնձորենի, տանձենի, ծիրանի, թթենի, փշատի, նռնենի, սերկևիլի, ընկուզենի, շորենի և թզենի: Իսկ հացահատիկներն են ցորեն, գարի և բրինձ:

Ուշադրութեան արժանի է, որ ողջ Արցախում, առաւել ևս Խաչէնում այս տարի թուրք յումպէտս (իզուր) կորչում է աքցիզի բարձրանալու պատճառաւ: Թրից բնակիչները այժմ բէքմազ (դօշաբ) են շինում միայն, որովհետև արաղի դոյլի համար փոխանակ առաջուան 25 կօպէկի այժմ սահմանուած 77 կօպ. վճարելն ամեննին ձեռնտու չէ գիւղացուց:

Թարթառի հովտում ես տեսայ ինձ անյայտ հետևեալ խոտերը և ծաղիկները. մեռոն-ծաղիկ, դեղնապտուկ, կաճուկ (սա մի խոտ է, որ կենդանիք ուտում են) և հորդի-պլոբ, որով իւրը դեղին են ներկում: Գալով Թարթառ գետին՝ ես պէտք է ասեմ, որ այդ գետը թե՛ իւր նեղ հովտում (Մատաղիս գիւղից սկսեալ) և թե՛ Ջիւանշիրի դաշտում 94 առունների է բաժանված: Մինչև Չայլու հասնելը, որ կղզիաձև բարձրանում է հովտի մէջտեղը, մենք 14 առուններից անցանք: Թարթառի հովտի վերին մասերումը առունների բաժանուած է նաև Եղիշէ առաքեալի գետակը, որոյ դաշտը Թարթառի դաշտից բարձր է:

Թարթառի կամուրջները շատ են, բայց փայտեայ, մի քանի գերաններից բաղկացած: Համեմատաբար տանելի է և քարաշէն Պառաւի կամուրջը: Մի պառաւի շինած է, որ իբր թէ վերանորոգութեան համար կամրջի մէջ փող էլ է թողած: Այդ փողը հանելու համար գիւղացիք բաւականին քանդել և կիսով չափ փչացրել են այդ կամուրջը:

Թարթառից մեծ-մեծ սև ձկներ են դուրս գալիս: Մենք շատ անգամ որսացինք և վայելեցինք: Գետը և այն օգուտն ունի, որ իւր հոսանքով փայտերի մեծ և փոքր կտորտանք է բերում: Այդ պատրաստի նիւթով գիւղացիք տաքացնում են իրանց բնակարանները:

Իրիկնապահին վերադառնալով մեր ընկերների մօտ՝ մենք գիշերեցինք դաշտի միջին: Հետևեալ գիշերն անցուցինք Մատաղիս գիւղի կալերից մինում: Իսկ միւս առաւօտը մեր խումբը երկու մասի բաժանուեցաւ: Մի մասը գնաց առուի ճանապարհի չափելը շարունակելու, իսկ միւսը՝ ս. Եղիշէ առաքեալի վանքը տեսնելու: Վերջին խմբումն էի ես և Համագասպ քահանան:

Մատաղիսից մինչև ս. Եղիշէ առաքեալ մի ձիով մի ժամուայ ճանապարհ է: Բայց այդ ճանապարհի հազիւ կէսը կարելի է ոտքով գնալ և այն էլ մեծ զգուշութեամբ: Մենք արդէն Արցախու լեռանց ազխազխների և խոխումների միջովն ենք ընթանում, մէկ լեռնից դէպի միւսն անցնում՝ անդադար ելնելով լեռների կողերի և գագաթների վերայ և իջնելով մինչև ստորոտները: Թաւ անտառի մէջ արևի ճառագայթները հազիւ են թափանցում: Քարքարուտները ոտներիս հոգին են հանում: Մի քանի գուգահեռական շղթաներ անցնելով՝ մենք հանդիպում ենք Եղիշէ առաքեալի գետակին, որ լեռանց ստորոտովն է հոսում առանց շառաչման: Գետակի ջուրը շատ մաքուր է, ափսո՛ս, որ մօտը գնալու բնաւ թոյլ չեն տալիս հինաւորց և վիթխարի ծառները: Դրանցից ես անդադար տեսնում էի կաղնի, տկողնի, հաճարկի, բելի,

ըլունենի, ճղանի, ճապկի, գիհի, հունի, տանձենի, թխկի, թեղի, լընըտերկի, կըռըզնենի, շլորի, հաւ-կուտկուտի, կատուայոռի, սըրըթեղի, տըղանի (մանր խնձորենի), գկռի, քլատանձի (քարջինի), ընկուզենի, որթ կամ զօրա, թթենի, սերկկիլի, նոնենի, փողնի, դամբուլի, թզենի, հացի, սզնի, կէչի, դողկուդոնի, գեառմասրի, անուններ, որոց մեծագոյն մասը ժողովրդական բառեր են: Իսկ մայրի ամեննին չը կայ Արցախի անտառներում: Այդ է պատճառը, որ յիշեալ անտառներում 4 օր անցկացնելով՝ ես չէի զգում այն անուշահոտ բուրմունքը, որով այնքան անուանի են Բորժումի, առաւել ևս Քութայիսի ու Աբասթումանի և Ջօբարէթի անտառները: Արցախի անտառներում, բացի սովորական մանր գազաններից, կան նաև արջ, գայլ, աղուէս, վագր կամ փէլէնկ, քրէծ (քարայծ) և կիստար:

Գիւղացիք մեծ քանակութեամբ որսում և վաճառահանում են այդ կենդանեաց մորթերը:

Ս. Եղիշէ առաքեալը բազմած է մի բարձր լէրան եռանկլինաձև և սեպաձև ժայռի վրայ և ունի փառաւոր և ահաւոր տեսարան: Վանքը պարսպապատ է: Մէջտեղում՝ մի փոքրիկ եկեղեցի, որ, բացի սեղանի ետքնի պատից, ողջ կեցած է: Սիրուն է մանաւանդ իւր գմբէթը: Եկեղեցոյ կողքերին՝ երկու իսկ կողմից կան 7 մատուռներ: Դրանցից մինը միայն տապալուած է, մնացեալները դեռ կանգուն են: Դրանց շուրջ կան հիւրասենեակներ, տնտեսատուն, մարագ և ախոռներ: Եւս և կրկնայարկ առաջնորդարանը՝ շինած ՌԻԲ (1573) թուին, որոյ առաստաղն ամբողջովին փուլ է եկած: Գաւթի մէջ թաղուած կան զինու մեծամեծ կարասներ: Վանքն ամայի է: Տեսայ գետնից հանած երկու զանգակներ, որոց մինը.

Յիշատակ է զանգակս Ղազարի որդի Գրիգորի և թոռն...:

Զանգակները լեզուակներ չունին: Նրանք այլևս ձայն չեն հանում: Պարսպի դռները երկուսն են՝ արևելեան և արևմտեան կողմերից: Թէ՛ եկեղեցոյ, թէ՛ մատուռների և թէ՛ գաւթի մէջ բազմաթիւ գերեզմաններ կան գետնատարած՝ հանդերձ արձանագրութիւններով: Արձանագրութիւնք շատ կան նմանապէս եկեղեցոյ և մատուռների ճակատներին: Մեր ժամանակը և միջոցները չէին ներում այդ բոլոր արձանագրութիւնքը ընդօրիանկել: Ուստի մի քանիսը միայն ընդօրիանկեցինք, որ սոքա են¹:

¹ Համազասպ քահանայ Տէր-Աւետիքեանցը զարմանալի արագութեամբ և յաջողութեամբ է կարողում արձանագրութիւնքը: Այնպէս որ իմ «Ուղեգնացական ակնարկներ»-ումս դուրս եկած այս միւս արձանագրութիւնքը ես պարտական եմ յիշեալ հօրը: Խորհուրդ կը տամ հայ ճանապարհորդներին

Եկեղեցւոյ սեղանի փուլ եկած պատի վրակ դեռ կարդացվում են հետևեալ կարմրատառ բառերը.

Ես Ղափիթ և իմ ամուսին միաբանեցաք սուրբ ուխտիս և ետուք զիսչն Գ (3) պատարագ... (պատը քանդուած է) Հասան, Սմբատ, Վահան, Տային... ի հոգւոյն... և միաբանքս Գ (3) պատարագ... կանգնեցի... որդի Մխիթար մայրն յայսմ ամի սպանեցաւ... և տուաք զմեր նոր Շամլնի իւր սահմանէն և ամբար... Ատամին զքնայիրն Նանայ:

Եկեղեցւոյ ժամատան մէջ շատ գերեզմաններ կան, որոնցից մինը արձանագիրն է.

Այս է տապան Մելիքսեդեկ եպիսկոպոսին, որ էր առաջնորդ ուխտիս, որ անմեղ սպանեցին օսմանք ՌՃՂԵ (1175):

Մի այլ շիրմի վերայ.

Այս է հանգիստ տէր Վարդան քաջի:

Մատուռներից մինում կայ Վաչագան թագաւորի շիրմն առանց որևէ արձանագրութեան: Մատաղեցի մեր ուղեցոյց Սիմեօն Սահակեան որսորդը հաւաստիացնում էր, որ արձանագրութիւն կար, բայց շիրմի քարը շուռ են տուել: Եւ, ճշմարիտ որ, քարը շուռ տուած է: Միևնոյն այդ մատուռի դրան հանդէպ կայ Մելիք Հադամի գերեզմանը: Շիրմի վրայի մարմարիտնեայ արձանագրութեան քարը 13 տարի առաջ չարդախլուեցի մի ցնօրեալ մարդ՝ Ջաւատի որդի Մկրտիչը, հանել, տարել է, և հիմայ մարմարիտնեայ յիշատակարանի փոսն է միայն մնում: Սիմեօն Սահակեանի վերջին վկայութիւնը հաստատեցին յետոյ Տօնաշէն գիւղացիք ևս՝ յարակցելով, որ զիժ Մկրտիչը յիշեալ մարմարիտնը կոտրատել և գրուանքանոցներից և ոչ իսկ մինը ձեռք բերել:

Մելիք-Հադամի պատուանդանի վրայ գրուած է.

Այս է տապան մօրս Ախտանի կողակից Վարդիսաթունին թոռ Մխիթարին:

Միւնիքում ճանապարհորդելիս, եթէ միայն հետաքրքրվում են հնութեանց արձանագրութիւններով, իրանց հետ անպատճառ վեր առնել Տէր-Աւետիքեանց քահանային, որ միևնոյն ժամանակ մի պատուական ընկեր է

Իմաստից երևում է, որ այդ գերեզմանը Մելիք Հադամի մօր գերեզմանը պետք է որ լինի, քայց արձանագրությունը փորագրած է նոյնիսկ Մելիքի շիրմի պատուանդանի վրայ:

Գալթի մէջ եղած բազմաթիւ գերեզմանների արձանագրութիւններից մինն է հետևեալը.

Այս է հանգիստ Եսայի որդի Բալուբէկին, որ է եղպայր Ատիպէկին Եաղ-շիպէկին պապուն և իւր որդի անուն Գարրիէլին, թէ իմանաք վաղճանն եղև Ռ (1000) և իւր կողակից Ջիլփին:

Այս գերեզմանաքարի (որ կարծեօք մի քանի մեռելների վրայ է ձգուած) քանդակագործուած են 4 տղամարդիկ, որոնցից մինը իւր ձեռին բռնած ունի փարչ, միւսը՝ գաւաթ, երրորդը՝ չոնկուր¹, չորրորդը՝ թուր:

Գերեզմանաքարի միւս երեսին քանդակուած են 5 տղամարդիկ, որոնցից 2-ը՝ ձիերի վերայ նստած և ձեռքների հրացաններով նշան բռնած, մէջքներիցն էլ թուր կախ արած: Մէջտեղում եղած մարդը գինու ամաններ է բռնած, իսկ մնացեալ երկուքը նոյնպէս զինատրված են, թէև հետիոտն են իրանք:

Արտասուախառն համբոյրներով Համազասպ քահանան «Հոգւոց» ասաւ ս. Եղիշէ առաքելոյ մէջ գտնուած գետնատարած շիրիմներին, ես էլ տիրացութիւն արի. և ապա մեր խումբը սկսեց լեռնից ցածր իջնել հանդիպակաց շղթաների խոխոմների մէջ անցնելու համար: Քառորդ ժամից յետոյ մենք արդէն հասած ենք Մազէ կամուրջի մօտ: Կամուրջը ոչ այլ ինչ է, եթէ ոչ երեք երերուն գերան՝ փայտի կտորներով ծածկուտած: Նրա տակով՝ մօտ 200 ոտնաչափ ցածրութեամբ, հանդիպակաց, ցից-ցից ժայռերի մէջտեղովն ահագին շառաչմամբ արշաւում է Եղիշէ առաքելոյ գետակը՝ յորձան տալով իւր տակից: Ահիւ և տագնապով անցանք մենք այդ գետակից և անցուցինք մեր ձիանքը: Ի դէպ, Արցախի ձիանքը զարմանալի խելօք և ընդունակ են իրանց երկրի ծմակների մէջ ճանապարհորդելում: Եւ ես համոզուած եմ, որ հէնց Արցախի ձիանքներով նեթ կարելի է ճանապարհորդել Արցախի նման քարքարուտ և անտառուտ երկրում:

Մազէ կամրջի այն կողմը մեր ճանապարհը սոսկալի է: Վիթխարի լեռների արահետ կողերովը պիտի բարձրանանք: Թաւ անտառի փշոտ ծառների միջովը մեզ ճանապարհ պիտի հարթենք: Շորերս անդադար պատուովում է: Գլխներս ստիպուած ենք շարունակ թեքել և միևնոյն ժամանակ թէ՛

¹ Արևելյան լարավոր նվագարան (ծանոթ. խմբ.)

արահետ շաւիղը ձեռքից չը փախցնել և թէ՛ մեր ձախ կողմում՝ մի ափ հեռաւորութեամբ մեզանից հեռու գտնվող անդունդի մէջ չը գլորուիլ: Այդ բաւական չէ, մենք անդադար ստիպուած ենք հեղեղներից առաջացած խրամատների մէջ ընկնել և ելնել, ջղակոտոր և արմատախիլ եղած մեծ-մեծ ծառների վրայից երբեմն թռչել, երբեմն ցայթքել և երբեմն սողոսկել: Շունչս կտրվում է, քրտինքս աղբիւրի նման ելեր, պատել է մազերիցս սկսեալ մինչև եղունգներիս ծայրերը, ծնկներումս այլևս հարաքաթ չը կայ, նրանք անդադար ծալվում են և ամէն անգամ, երբ ես սայթքում ընկնում եմ՝ բազուկներս դէպի ծառների ճղերը տարածելով, իմ խելօք ձին, որ ետքնիցն է գալիս սանձարձակ, իսկոյն նեթ կանգ է առնում: Մեր խոնջեալ անդամոց դադար տալու հրաման չէ տալիս մեր ուղեցոյցը, վասնզի մենք շատուոր ենք, ընթանում ենք միմեանց ետքնից սաստիկ նեղ և անդնդի գլխին եղած շավիղներով: Մինիս անտեղի շարժումնքը կարող է քարաւանի կանոնաւոր ընթացքը խանգարել, կարող է մեզ փորձանքի մէջ ձգել ճիշտ այնպէս, ինչպէս գառիվեր բարձրացող անիւր կարող է չը կանգնել, կա՛մ պէտք է շարունակ առաջ գնայ, կա՛մ յետ-յետ գլորուի: Անճարացեալ և շնչասպառ մենք էլ գնում, բարձրանում ենք: Այսպիսով մեր քարաւանը չորս լերան վրան բարձրացաւ և իջաւ (հապա քանի՞ լեռան վրայ էլ մինչ ս. Եղիշէ վանքը ժամանակներս էինք բարձրացել և ցածրացել), մինչև որ վերջապէս հասանք լեռներից ամենաբարձրի դուրան գագաթը, որտեղ, սակայն, ահագին ծառները լոյսին չեն թողնում ներս թափանցել:

Մեր քրտախարշ մարմինը չսառեցնելու համար իսկոյն ձիւնքներին հեծանք և 15 բոպէից զկնի մենք արդէն Դաստակերտ գիւղումն ենք¹:

Դաստակերտի իսկական անունն է Դաստագիւղ՝ Վաչագան թագաւորի համանուն աղջկայ անունով, որոյ ամարանցն է եղել այդ գիւղը: Դեռ մինչև 1881 թիւր իւր շրջակայ սահմաններով սեպհականութին էր ս. Եղիշէ առաքելոյ վանքին: Բայց այժմ արքունական է համարվում որոշմամբ պ. Անտառապետի, որին գիւղացիք վճարում են տարեկան 40 ռ. արքունի գանձարանին հասցնելու համար: Աւերակների և գերեզմանների շատութիւնը նույնպէս և հինաւորց եկեղեցին, որի կրկնակի արձանագրութիւններից երոնւմ է, որ շինուած է ազգային ՉԻԵ (1276) թուականին իւր քանդակագործ սիրուն-սիրուն խաչերով՝ իւրաքանչիւրը «մի խաչս բարեխօս» արձանագրութեամբ,

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 18-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 66-ում (25 օգոստոսի, էջ 1-3)

վկայ են, որ Դաստակերտը ժամանակին մեծ գիւղ է եղել: Բայց այժմ միմիայն չորս տուն բնակիչ ունի: Բնակիչները, մանաւանդ գեղեցիկ սեռը, վերջին աստիճանի առոյգ են, կայտառ, մի-մի կատարեալ արջի քօթօթներ: Մեզ տեսնելիս մի տան առաջ խաղ անող մանուկները վախեցան և լալով վազ տուին դէպի իրանց տները: Մեր բոլոր փաղաքշանքը իգուր անցան: Խեղճ մանուկներ, ով գիտէ, իրանց օրումը քաղաքացի շորերով մարդիկ տեսած չէին: Իրանց տների շուրջը միշտ ման եկող գազաններիցը դրանք չեն վախենում այնքան, որքան քաղաքացի մարդիկներից:

Իրաւունք ունին, որովհետև բնակութեան այդ ազատ ու համարձակ որդուցը վնասողը ոչ այնքան անտառի գազաններն են, որքան քաղաքի ջենտլմենները:

Նախաճաշ արինք, հանգստացանք, տների արդուզարդը տեսանք, խեղճ բաներ: Մի տան մէջ մի տպեալ շարական, ժամագիրք, սաղմոս և Եղիշէ (Թեոդոսիոյ տիպ) գտանք: Մի այլ տան մէջ գոյնգոյն թելերով նշխած մի ձու տեսանք, որ, ըստ սովորութեան, տան հարսնացուն էր ուղարկել, որ ինքը սկեսրանց տանը նագար-աչք չառնէ¹: Մանուկներին սպիտակ փողեր բաշխեցինք, տէնդ ունեցողներին քինա մասնատրեցինք, ինչպէս այդ անում էինք մենք գրեթէ ամէն մի գիւղում և ապա ճամփայ ընկանք դէպի Տօնաշէն գիւղը:

Այժմ մենք լեռներից ցածր ենք իջնում, բայց ճանապարհը տանելի է (կոմաններ). ուստի ձիերից վեր չենք գալիս: Դրա փոխարէն մեր շորերը փառաւորապէս պատառոտում և ճղճում են դարձեալ ծառերի ճղները: Եւ ես, երբ գլուխս ցածրացնում եմ, որ ճղները նրան չը փաթաթուին, երեսս չը ճղոտին, կուրծքս դիպչում է ձիու թամբի գլխին (ղաշ) և ծակոտվում: Այսպէս և փոխադարձաբար: Ճարից կտրած՝ ձիուց վեր եմ գալիս և դարձեալ գօռ տալիս ոտքերիս: Խեղճ իմ ոտքեր, չորս օր շարունակ ինչէ՞ր չը քաշեցիք դուք իմ ձեռին Արցախի անտառներումը: Եթէ այդ անտառների լեռները, որոնց վերայ չորս օր մեր խումբը ելաւ և իջաւ, միմիանց վերայ դարստեղինք, չորս Մեծ Մասիս կը ձևանար: Ուրեմն մենք երկու անգամ Մեծ Մասիսի գագաթը բարձրացած կը լինէինք:

Հասանք Տօնաշէն՝ լեռան լանջի վերայ կանգնած: Բնակիչք 17 տուն են: Ունին մի հինաւորց եկեղեցի, ամենախեղճ վիճակումն է: Գիւղացիք այժմ

¹ Արցախի գիւղացիք (ինչպէս և ուրիշ երկրի հայք) իրանց պարտկների ցանկերի վերայ կենդանեաց գանգ են տնկում, որ բերքերը նագար չառնեն: Այդ գանգին Արցախում անուանում են կարկաժ

այդտեղ աղօթում են: Ունին մի ծերունի քահանայ, որ միննոյն ժամանակ հովուում է նաև Դաստակերտ և Մատաղիս գիւղերը: Կնանիք գործում են շալ, մաֆրաշ և թէ՛ իրանց պիտոյից համար գործածում և թէ՛ վաճառահանում: Ինչպէս բոլոր Արցախի գիւղերում, նոյնպէս և Տոնաշէնում կնանիք գորգ գործել էլ են իմանում:

Մութը շատոնց կոխել էր, երբ մենք հետիոտն իջանք Թարթառի եզերքը և գտանք այնտեղ մեր միւս ընկերներին, որ պատսպարուած էին ջրաղացների մինի դրան ծածկոյթի տակ: Թեպէտ Տոնաշէնից մենք վերցրել էինք բոլորիս համար էլ անկողին, կերակուր, քանի որ մեր ֆուրգօնը և շորերն ու կերակուրները Մատաղիս գիւղում էինք թողել, սակայն ես գոնեա անլի ջաղաց-բաղարջն աւելի ախորժակով էի ուտում, քան գիւղի բոռօները, և գիշերով Թարթառից ձեռաց որսուած ձկներն աւելի սիրով, քան մեզ հետ վերցրած վտիտ ճտերի մսերը:

Առաւօտուն արթնանալիս բերանս սաստիկ դառն էր: Մաջալ չունէի: Ըստ օրինակի ընկերներու՝ ես էլ իմ գուլպէքը լուացի: Ամէն կերպ աշխատեցի քրտնել, բայց հնար չը կայ: Մի կասկած ևս աւելացաւ: Տոնաշէնում մենք տիֆով պառկած գտած էինք մի երիտասարդ տղամարդու: Խեղճ, լեզուն արդէն թանձրացել էր: Տաքութեան մէջ էրվում էր: Մենք նրա մօտ գնացինք, խորհուրդ և խրատ տուինք ազգակցացը, թէ ինչպէս պահեն, որտեղ պառկացնեն: Հիւանդի ձեռք բռնեցինք, բազկերակը շօշափեցինք, յուսադրեցինք, մօրը և կնոջը մխիթարեցինք, ծերունի հօրը ստիպեցինք, որ շուտով գնայ և Ջանեաթաղ գիւղից գաւառական բժշկին բերէ: Ահաւասիկ հէնց այդ ժամանակն էլ (մտածում էի ես) տիֆը փոխարկուեցաւ ինձ վերայ, մանաւանդ որ մարմինս հիւանդանալու շատ տրամադրած էին օրուայ մէջ արած դառնագին ուղեգնացութիւնքս:

Դրութիւնս թէ՛ վատ էր և թէ՛ յիմար, թեպէտն ընկերներիցս ծածկում էի, միգուցէ նրանց գործին արգելք դառնամ:

Այդ պատուական մարդիկը 10 օր ինձ իբրև մտերիմ հիւր իրանց հացովն ու ջրովը ման ածեցին, իրանք շատ անգամ անհանգստացան, որպէսզի ես հանգիստ լինիմ, իրանց բերանի լաւ պատառը միշտ ինձ էին ուտացնում, իրանց բարձերն իմ գլխիս տակ դնում, ինձ նստացնում, իրանք հերթով թէ՛ կերակուր պատրաստում, թէ՛ սեղան սարքում, հաւաքում, աման-չաման լուանում, հրացանն ուսին՝ ողջ գիշերը ննջողներիս վրայ հսկում և այլն, և այլն, այժմ ես ի՞նչ խղճով կարող էի պահանջել, որ այդ պատուական ընկեր-

ներս, իրանց բան ու գործը թողած, ինձ համար բժիշկ գտնեն և բերեն, ինձ մի կերպով Շուշի կամ Գանձակ հասցնեն:

«Ո՛չ, սա կարելի չէ»,- ասացի ինքս ինձ և վճռեցի Ջրաբերդը և նրա շրջակայքը չը տեսած՝ դուրս չը գալ Արցախի ազխագիւներից:

Մեր իրաւասութեան տակ թէն հինգ ձի ունէինք՝ գիշերանց Տօնաշէնում բերուած, բայց ես ձի չը վեր առայ և միմիայն քրտնելու համար որոշեցի ոտքով բարձրանալ մինչև Չարդախլու գիւղը: Ինձ հետ ընկերացաւ տեր Համազասպը, որ իմ խաթրու համար նոյնպէս յանձն առաւ հետիոտն ընթանալ: Մնացեալ ընկերներս երեք խմբերի բաժանուեցան, և իւրաքանչիւր խումբ իւր գործին գնաց: Տէր Համազասպը և ես վեր առինք մեր զէնքերը, մեր միակ պլէտը և վերարկուն և ջաղացպանից իմանալով, որ մինչև Չարդախլու հազիւ ¼ ժամուայն ճանապարհ է, անցանք Թարթառը մի այլ Մազէ կամրջից և հայդա, դէպ սարերն ու ծմակներն ի վեր դարձեալ: Բայց... ի՛նչ քառորդ ժամ, ի՛նչ կէս ժամ, ի՛նչ մի ժամ: Երեք և կէս ամբողջ ժամից յետոյ հազիւ լեռներից ամենաբարձրի գագաթը հասանք՝ ճանապարհին ընդամէնը 40 րոպէ միայն հանգստանալով: Բայց Չարդախլուն դեռ չէ երևում: Մեր վրայից քրտնքի առուններ են հոսում, լեզուներս տապակում և պապակում են: Մեր կանգ առած տեղը ճանապարհը ճիւղաւորվում է: Չը գիտենք որ ճանապարհը բռնել:

Փաթաթուեցանք պլէտիս մէջ, վերարկուովս էլ գլխներս փաթաթեցինք, ճամփորդի ենք սպասում, որ մեզ ճանապարհ ցոյց տայ: Քօլանիներն էլ մեզանից հեռի չեն: Բայց այդ կողմից երկիւղ չունինք: Մեր զէնքերը կազմ և պատրաստ են: Մեզ հետ ունինք 16 անգամ արձակուող հրացան ևս: Յանկարծ մի ծառի տակ մի նստած գիւղացու ենք տեսնում՝ մեզանից մօտ 150 սաժէն հեռու: Մօտը գնացինք: Մարգեար ապերը չարդախլուցի էր և իւր կորեկը հնձելուց յօգնած՝ ծառի շւաքումը հանգստանում էր: Ջուր ուներ: Խմեցինք: Միտս եկաւ Փրկչի խօսքը. «Որն արբուսցէ բաժակ մի ջուր ցուրտ, ոչ կորուսցէ զվարձս իւր»: Մարգեար ապօր մեզ մատակարարած ջուրը մենք, պատշաճապէս վարձատրելով, իսկոյն ճամփայ ընկանք, որպէսզի բերաններովս խմած ջուրը կաշներիս ծակտոխներովն դուրս բերենք անյապաղ: Եւ բերինք, մինչև որ Չարդախլու կը հասնէինք: Այստեղ չը մօռանամ յիշել, որ Մարգեար ապօր մօտ ես առաջին անգամ տեսայ փայտեայ մատնոցներ, որ այս կողմերում գիւղացիք հունձ անելիս իրանց մատներն են հագցնում, որպէսզի մատները երկայնանան, և մանգաղը լաւ բռնէ: Առաջին անգամը

տեսանք նաև մի կադնի ծմակի միջին, որոյ ճիւղը հունի էր և արդէն պտղաբերած:

Չարդախլուն 40 տնից է բաղկացած: Ունին մի խեղճ, հողաշէն եկեղեցի, մի ամենապատուական ծեր քահանայ, որոյ 73 տարեկան մայրը զարմանալի առոյգութիւն և ժրութիւն ունի: Մայրն ամէն կերպ աշխատում է մեզ սիրաշահիլ: Նա մեզ զավացուցիչ կերակուրներ է տալիս, իմ շապիկներն է չորացնում: Եւ երբէք էլ չէ համաձայնում մեզ հետ նստել, այլ ոտքի վրայ կանգնած՝ սպասաւորում է սեղանին: Մեզ հետ սեղանակից է նաև քահանայի եղբայրը: Իսկ քահանան գիւղումը չէ: Տանուտերերը մեր ով լինելը չը գիտեն, մենք էլ չենք յայտնում մեզ: Ի վերայ այս ամենայնի՝ մարդիկ մեզ հիւրասիրում են առանց որևէ նիւթական ակնկալութեան:

Ճաշից յետոյ ձիանք պահանջեցինք, որ գնանք մօտակայ «Քղքատեղը» տեսնելու: Ձի չը կայ: Ջորի պահանջեցինք, չը կայ դարձեալ: Էջ պահանջեցինք, չը կայ նոյնպէս:

- Պէտք է ուրեմն նորից մենք մեր ոտքերին ապաւինենք,-ասացինք և քահանայի եղբոր ուղեկցութեամբ ճամփայ ընկանք:

Չարդախլուից մինչև «Քղքատեղ» ոչ անելի է, քան չորս վերստ: «Քղքատեղը» մի ընդարձակ աներակ է՝ սարերի լանջերի վերայ տարածուած: Չորսհինգ հարիւր քարուկրեայ տների աներակներ կան: Դրանց մէջ ամենից նշանաւորն է այն ընդարձակ շինութիւնը, որին տեղացիք Վահրամի սարայ են կոչում: Ճշմարիտ, որ դա մի սարայ կամ պալատ է: Բաղկացած է մի մեծ և քառակուսի գաւթից, որոյ հիւսիսային կողմում 8 սենեակներ կան, գաւթի միւս կողմերումը՝ 4-ական սենեակներ: Դրանցից մինի մէջ մի լաւ բուխար կա, որոյ ճակատի կամարը միապաղաղ, սրբատաշ քար է: Ամբողջ շինութեան մասերի միմիայն պատերն են մնացել: Գաւթի և սենեակների մէջ շրջելու համար մենք ստիպուած էինք, թփերն ու փշոտ խոտերը կտրատելով, մեզ համար ճանապարհ բաց անել: Խեղճ իմ ձեռքեր, քանի-քանիցս դուր ծակոտուեցիք և խոցոտուեցիք: Իսկ սերթուքս այնքան բզկտուել է, որ ամաչում եմ Շուշի մտնել:

Պալատանման շինութեան տակ մի ջրանցք կայ, որ հիմայ ցամաք է և որ տարածվում է շինութեան ամբողջ լայնութեամբ: Մուտքը սենեակներից մէկումն է սկսվում, իսկ ելքը, այսպէս անուանեալ, ճողոպուրի (ընկուզենի) ձորումը վերջանում: Պէտք է մտնենք, բայց օձերը վժվժում և ֆշֆշում են: Ճրագ ենք վառում, քարեր ենք ձգում, անպիտանները, թէև ծակերն են

մտնում, բայց գլխները էլի երևում են ծակերից: Երկար վարանումից յետոյ վճռեցինք մտնել: Միմեանց ետևից թռանք, վար իջանք, մի ահագին աղմուկ հանեցինք, մի-երկու աման լուցկի փչացնելով՝ արուեստահուր շինեցինք մուտքի մօտ և «ճրագրք լուցեալք և լապտերք վառեալք» մի ձեռքներիս, միս ձեռքներս մահակ բռնած, ոտքներովս էլ անդադար դռփելով և տրոփելով՝ սկսեցինք մեր հանդիսաւոր ընթացքը ձորն ի վայր: Գլխներս անդադար կամարած և առաստաղին դիպչելուն ցաւ չենք զգում: Մեր բոլոր ուշքն առայժմ օձերի վրայ է, որ ծակերի մէջ գալարուած՝ մեզ թամաշայ են անում և, անշուշտ, պատկառում՝ առանց զգալու, որ մենք իրանցից աւելի ենք վախենում:

Մեր բախտից ջրանցքն այնքան երկար չէր: Հազիւ 30 սաժէն է: Վեց բուպէում մենք միջիցը դուրս ելանք, և մագ մնաց, որ լարծուն քարերն ու աւազներն իրանց հետ մեզ էլ ձորը տանէին, եթէ մեր առաջնորդը (պ. Բեզլար Տէր-Գրիգորեանց) իւր մահակը մեր կողքերին նեցուկ չը տար հեռուից:

Բիւր շնորհակալութիւն, ինչպէս ասում են, էջի նահատակ պիտի լինէինք:

Վահրամի սարայի դիրքը և նրա ստորերկրեայ ջրանցքն ինձ յիշեցրին ստորերկրեայ Անին, որ ես մտայ 1879 թուականին, նոյնպէս և Պահլաւունեաց պալատը Ծաղկաձորի գլխին: Զարմանալի, արդարև, հնութիւն¹:

Զրանցքից դուրս գալով և ձորի միջի պարտէզներից մէկում պատուական թութ վայելելով՝ մենք գնացինք Վահրամ իշխանի ձիթհանքը տեսնելու, որոյ քարի հաստութիւնը $\frac{3}{4}$ սաժէն է, տրամագիծը՝ 1 սաժէն: Այնուհետև տեսանք չորս բուրգեր, մի քարուքանդ եղած եկեղեցի, բազմաթիւ խաչաքարեր, մահապարտից բանտը, կախարանը, հորեր, բլրակների տակ եղած կատակոմբեր: Տեղացիք կոհոլ են անուանում, որոց մէջ մտնելու այլևս սիրտ չարինք: Տեսանք մի քարաշէն լայն խողովակ, որոյ միջով անտառից կտրած գերանները լերան զագաթից ցածր գլորելիս են եղել: Տեսանք բաղնիսը: Լսեցինք, որ չարդախութեցիք «Քղքատեղոյ» աւերակներից անդադար գտնում են պղինձ, ափսէ, խնոցի, օղի քաշելու գործիքներ, գինու գաւաթներ, փարչեր, կաւեայ այլ և այլ ամաններ, մատանի, օղ, վզից կախ տալու խաչեր և պղնձեայ դրամ: Վերջիններիցս մի օրինակ ինձ ընծայեց տանուտիրոջ որդին՝ պ. Բաղիշ Տէր-Գրիգորեանցը, որ Գօրուայ ուսուցչական սեմինարիայի

¹ Այստեղ պայտրտում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 19-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 67-ում (29 օգոստոսի, էջ 1-3)

աշակերտ է¹: Իսկ միւս իրեղենները մեզ չը ցոյց տուին, անշուշտ, երկիւղ կրելով, որ մենք ձեռքներիցը կը խլենք Շուշուայ ոստիկանարանին իմաց կուտանք:

Մենք դեռ մեր հետազոտութիւնները չէինք վերջացրած, երբ գիւղից մեզ մօտ եկան վերոյիշեալ պ. Բաղիշ Տէր-Գրիգորեանցը, որ Թիֆլիսի Ալեքսանդրեան ուսուցչական սեմինարի ուսանող է: Ծանօթացանք, պ. Բեգլարին՝ գիւղ, իւր գործին ճամփելով, յիշեալ երիտասարդների հետ սկսանք բարձրանալ «Քղքատեղի», այսպէս անուանեալ «մայրաքաղաքը» (թէ՞ Վայրամ կամ Վահրամ քաղաքը արդեօք): Մա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի սարահարթի վրայ տարածուած ընդարձակ հանգստարան, ուր կայ և մի մատուռ, որոյ ճակատի արձանագրութիւնն ասում է.

Թիւ 2Թ (1260) էր, կամաւն աստուծոյ եւ Խուռուեւզին կանգնեցի գեղեղեցիս եղբօր իմոյ Վահրամ Շահի յիշատակ մեզ և ծնողաց մերոց, ի յիշխանութեան Ուսուփ խանին և յամիրութեան Փախրատինին և առաջնորդութեան տէր Սուքիասին, յաղօթս:

Մատրան մէջ, որ այժմ ուխտատեղի է, կան գեղեցիկ քանդակեալ խաչեր: Դրանց մինի վրայ փորած է ՈՂԹ (1250) թիւը:

Մթնշաղին Չարդախլու վերադառնալով և քահանային ամենաքաղցր և առատ հիւրասիրութիւնը վայելելով՝ մենք, ինչպէս ասում են, մեռելի նման վեր ընկանք ննջելու: Մեզ համար պատրաստուած անկողինները մաքուր էին, փափուկ, պատուական, ինչպէս լաւ քաղաքացու տեղաշորեր: Մեր 10 օրեայ դժնդակ ճանապարհորդութեան ժամանակ տէր Համագասպը և ես մի անգամ միայն շորերս հանած հանգիստ քուն եղանք գիշերը: Եւ այդ անգամը Չարդախլուի քահանայի տանն էր:

Առաւօտուն տանուտէր տէր Յովհաննէս քահանան, որ կէսգիշերին էր տուն հասել հեռաւոր Մարաղայ գիւղից, ինձ ցոյց տուեց մի քանի հին ու մին թղթեր և եկեղեցւոյ մի ձեռագիր աւետարան: Աւետարանի յիշատակարանից ես տեղեկացայ, որ «Թվականիս Հայոց, որ էր ՋՂԸ ամի որում եղև մահ տարածամ և շատ տուն աւերեցաւ և շատ ապրանք. անտէր մնաց գէհով (փարախ) ոչխար, շատ գութան խափանեցաւ. քանի հայր առանց որդի

¹ Այդ դրամը, որ քիւֆի գրերով է փորագրուած և շատ պարզ ու անեղծ է, չկարողացան կարդալ ողջ Շուշուայ ողջ մահմեդական ուսումնական կաճառը՝ սէյիդ ու մօլլաները: Իմ բարեկամ Գագի-Հասան Թայիրովը, ափսոս, որ Շուշուում չէ այս օրերս: Թերևս նա կարողանար կարդալ: Յետոյ նրան էլ ցոյց կտամ

մնաց. մայր առանց դստեր ու առանց եղբոր. անթիւ տղայք մեռան. հէնց որ կալոց ժամանակին տղայ չը կայր, որ զկամանն քշէր»:

Իսկ հին թղթերից եւ արտագրեցի միմիայն Մելիք Հադամի հետևեալ հրամանագիրը. «Մելիք-Հադամէս մալումլիեցի ձեզ Մաղավուզեցոց¹ մեծ և փոքր ջամիաթն, թէ որ իմանաք Մելքումն ձեզ քեովիսա շինեցի. պիտի որ յիսապի (հրաւացի) խօսկան (խօսքիցն) դուրս չի կեաք (գաք): Դարձեալ ջամիաթ, թէ ետ (յետ) նորա եկիք, թէ Մելքումը մեզ հաջաթ (հարկաւոր) չէ՝ դապուլս չի, զի դուք էք հաւանել շինել (ընտրել), թվին ՌՄԻԸ փետրուար ամսուան ԺԷ էր»: Կնիք, որոյ մէջ փորագրած է. «Քրիստոսի ծառայ Հադամ-մելիք»:

Հետևեալ օրը՝ յուլիսի 12-ին՝ հազիւ 10 ժամին մենք կարողացանք Չարդախլուից ճանապարհի ընկնել դէպի Մելիք-Իսրայէլեանների ամրոցը՝ Ջրաբերդը: Այս անգամ մեզ առաջնորդում է ինքը՝ Չարդախլուի քահանան՝ արժանապատիւ հայր Յովհաննէս Տեր-Գրիգորեանցը: Ջրաբերդն ընկնում է Թարթառի ձախ ափին, ուրեմն մենք նորից պետք է լեռներից ցածր գանք շարունակ: Ճանապարհը եռանկլինաձև է և լերանց լանջերումն է դարձեալ: Եւ դարձեալ անտառապատ: Մենք մէկ իջնում ենք, մէկ բարձրանում և դարձեալ իջնում, և ահա ինքը՝ Ջրաբերդը: Նայում եմ ժամացոյցիս, ճիշտ 11 ¼ է: Մենք շարունակ ձիերի վերայ էինք նստած: Մեր անցկացած ճանապարհը, սովորականին համեմատ, շատ նեղ է: Մեր աջ կողմից՝ խոր անդնդի միջով, արշաւաստյր և ահեղագոչ Թարթառն է ընթանում:

Անտառի ծառերը փոքր են, ս. Եղիշէ առաքեալի անտառի համեմատութեամբ գաճաճներ են: Ծառների մէջ ամենից շատ եւ տեսնում եմ թեղի, ծոխնձորի և գանազան թփեր:

Ջրաբերդի հանդէպ Թարթառի վերայ ձգուած դարձեալ Մազէ կամրջից տակաւին չանցած՝ եւ տեսնում եմ բերդից մինչև գետեզրը իջնող երեք «ջրագողերն»՝ ջրի ճանապարհները, ևս և բերդի ձիթհանքը գետի աջ ափին: Այնուհետև կամուրջն անցնելով՝ մենք հանդիպում ենք Թրդի գետին, որ Թարթառի ձախակողմեան վտակն է: Դրա վերայ շինուած են Ջրաբերդի ջրաղացները, որ այժմ քայքայուած են: Այսպիսով, Թարթառը և Թրդին երեք կողմից Ջրաբերդի լեռնակը պտտելով, նրան եռանկլինի ձև են տալիս: Բերդի մեծկակ դուռը ջրաղացների դէմ ու դէմն է, բայց բոլորովին պատած-

¹ Մաղավուզն է նոյն ինքը Չարդախլուն: Այժմեան չարդախլուեցիք գաղթական են Ջանգեզորի Մաղավուզ գիւղից

պաշարած մացառներով, թփերով, փշերով: Այս ամենի միջովն մեզ ճանապարհ բաց անելու համար հարկաւոր է աշխատիլ, քրտնիլ:

Բայց շոգն անտանելի է: Ջերմաչափ չունիմ, բայց եղանակը ճիշտ Թիֆլիսի կէսօրուայ յուլիսեան շոգերն է յիշեցնում ինձ: Դրանց վերայ աւելացրէք և այն, որ Ջրաբերդ կոչուածը սեպաձև ժայռ է՝ ցից-ցից կողերով: Նրա վերայ մենք պէտք է մագլցելով բարձրանանք՝ հրացաններն էլ կազմ ու պատրաստ ունենալով, որովհետև Չարդախալուում մեզ հաւատացրին, թէ Ջրաբերդի գագաթին երբեմն վագրեր և արջեր են պատահում, այդ պատճառաւ նրա վերայ յայտնի որսորդներն են բարձրանում միայն և այն շատ սակաւ: Մեր բախտից մեր առաջնորդ հայր Յովհաննէս Տէր-Գրիգորեանցը, չը նայած իւր սպիտակ, պատկառելի ալիքներին, նոյնպէս քաջ որսորդ է: Նորին արժանապատուութիւնը մեզ յորդորում է և քաջալերում պատահական ոչ մի բանից երկիւղ չը կրել: Նա խոստանում է մէն-մինակ մեր անձը պաշտպանել:

- Հապա այս օձերը, այս խլուրդ ու մողեսները, տէ՛ր հայր, որ ժայռերի վերայ պար են գալիս, սրանցից է՛լ երկիւղ չը կայ,-հարցնում եմ ես տէր Յովհաննէս հօրից:

Նա ինձ պատասխանում է հեզնելով.

- Ուրեմն մենք ամէն մի ճանձ ու մլուկի՞ց էլ պէտք է երկիւղ կրենք, մի՞ թէ օձերի և մողեսների համարել պիտի մտածենք:

Ես, ինչպէս ասում են, ձայնս փորս եմ քաշում, լռում:

Այսպիսով, Ջրաբերդի վրայ բարձրանալու երկրորդական արգելափոխները վերացած էին, բայց գլխաւորը՝ արևի կիզիչ զօրութիւնը՝ դեռ ոչ: Որոշեցինք նախ Երից Մանկանց վանքը գնալ, որը գտնվում է Ջրաբերդի ետևքը՝ արևմտեան կողմից, նրանից մէկ ու կէս ժամ հեռաւորութեամբ և դարձաւ մի քանի շարք լեռնային ազխազխներ և կոյտեր անցնելուց յետոյ, տեսնել և ապա ի վերադարձին բարձրանալ Ջրաբերդի գագաթը: Ասած և կատարած: Կրկին և կրկին Թրդի՛ մաքուր և սառնորակ ջրի վրայ ընկանք, խմեցինք, լուացուեցանք, հովացանք ու զովացանք և նորից ճամփայ ընկանք: Բայց ճամփայ եմ ասում, է՛հ, լոխ քար, ժայռ, լերկ ապառաժ և միշտ

¹ Թրդին բոխում է Մռաւ կամ Մռով լեռան ստորոտում եղած Գարագեօլ կոչված լճից: Ինչպէս Թրդին, նոյնպէս և Թարթարը մեծ շառաչմամբ են ընթանում: Նրանց մէջ լիքն են լեռներից գլորուած մեծ և փոքր ժայռեր: Ջրաբերդի արևելեան կողմի Մազէ կամրջի հանդէպ հէնց մի նոր գլորուած ահագին ժայռ կայ ճանապարհի վերայ: Գալով Մռաւին՝ դա մի չորս գագաթանի լեռ է, որ երկու իսկ կողմերից բազուկներ է արձակում: Մռաը այս կողմի գիւղօրէից ամառնային արօտատեղին է: Տասնչորս գիւղերի չորքոտանիքը ողջ ամառը Մռաւի գագաթ ու լանջերում են արածում

ցից-ցից, պտուտակաւոր, գառիվեր, գառիվայր: Խեղճ ձիանքը մինչև անգամ մեր ետքնում տնքտնքում ու քրտնում էին: Մենք հո բոլորովին բանից պրծանք: Իմ հոգին գոնեա քաղվում էր: Եթէ ընկերներս չը լինէին, ես լաց կը լինէի: Հետերս վերցրած ջրի շիշը երկու ումպով մէնակ ես ինքս դատարկեցի: Արեգակի շեշտակի ճառագայթները գլուխս կատարելապէս ծակում են, շունչս շարունակ կտրվում է: Եւ ես իւրաքանչիւր 5 րոպէի վերայ 2 րոպէ դադար եմ առնում: Ի՛նչ կը լինէր, եթէ բարի աստուած այսքան ծառներից գէթ մի քանիսը այս ժայռերի վերայ տնկէր: 35 րոպէից յետոյ մենք մտնում ենք թաւ անտառի մէջ: Ճանապարհն այնքան լաւ է, որ գէթ գառիվերներում կարելի է ձի նստել: Իսկ գառիվայրները կրկին պէտք է ոտքով իջնել: Իսկ թէ այդ գառիվայրների և գառիվերների թիւր որքա՛ն է, էլ մի՛ հարցնէք: Իմ միակ մխիթարութիւնս այն է, որ որքան անտառի խորերն ենք մտնում, այնքան ծառերը հաստանում, բարձրանում են և իրանց ստուերներով մեր անձը պատսպարում արեգակից: Պակաս չեն և ջինջ ու ցուրտ աղբիւրները, որոնց ամէնի ջրիցն էլ ես խմում եմ շարունակ և միշտ ձեռքիս շիշը լեցնում, պատրաստում:

Հասանք Երից Մանկունք: Վանքը շինած է լեռներից մինի դուրան լանջի վերայ: Չորս կողմի լեռներն իրանից բարձր են: Եկեղեցին փառաւոր է, կամարակապ, պայծառ, միջին՝ չորս հոյակապ սիւներ: Ափսո՛ս, որ մի պատը ճեղքուել է, և կտուրը կաթում է: Եկեղեցւոյ կողքին՝ տներ, սենեակներ, դպրոցական մի լաւ և պինդ շինութիւն կամարակապ: Անպարիսպ գաւթի մէջ բաւականին թուով կան տանձենի, որթ, ինձորենի, թզենի, ընկուզենի, դեղձի, թթենի (սպիտակ և խառ տեսակները), կեռասի, շագանակի, տկողի և սերկկլի, բոլորն էլ արուեստականաբար տնկած, աճեցրած և ուռճացրած: Ջուրն առատ, մաքուր և պատուական է: Այդ ծառների տակ կոկոռում են մի քանի թխասհաւեր՝ իրանց բազմաթիւ ճտերով:

Վանքը վանահայր չունի: Նրան պահպանում և կառավարում են երկու պառաւած աղջկերք (մինը՝ մի աչքով կոյր): Աղջկերանցից մինը կուսապատցի է և կոչվում է Մարթա Տէր-Պետրոսեան, իսկ միւսը՝ մատաղիսցի՝ Խաթուն Մարգսեան: Ունին երկու սպասաւոր Մարադա գիւղից, երկուքն էլ հիւանդոտ, ցաւագար մարդիկ, որ հազիւ կարող են (մանաւանդ մինը) ոտքի կանգնել: Աղջկերքը վանքը կապալով են վերցրել Շուշու այդ պրանցի հոգաբարձութիւնիցը և տարին 30 ռ. են վճարում:

Ուխտաւորներից հավաքուած նուէրներն էլ հազիւ այդ գումարին է հասնում: Հետևաբար Երից Մանկանց վանքի պահապան-կառավարիչներն իրանց աշխատանքով և կալոցի ու այգեկութի ժամանակ մուրալով են ապրում, միևնոյն ժամանակ կերակրում և խնամում են վերոյիշեալ երկու տառապեալ և անտէրունջ աղքատներին, որոնցից մինը կոչվում է Սահակ Սաղիեան, միւսը՝ Բեգլար Աւագեան, երկուքն էլ մարաղեցի: Թէ՛ Երից Մանկանց և թէ՛ տեսածս միւս վանօրէից շարժական և անշարժ կալուածոց պահպանութեան և կառավարութեան մասին ես իմ կարծիքս ու նկատողութիւնքը պատիւ և վստահութիւն ունեցայ առանձնապէս յայտնել Արցախու սրբազան առաջնորդին: Ուրեմն աւելորդ է այդ առթիւ այստեղ խօսելս, մանաւանդ որ ցանկալի բարեկարգութիւնք և հսկողութիւնք վանօրէից մէջ մտցնելը սրբազան առաջնորդի իրաւասութիւնից, դժբախտաբար, դուրս է: Սրբազանն ինձանից աւելի էր վշտանում, երբ լսում էր իմ պատմութիւնը: Արցախի վանօրէից և կալուածոց մասին ես մտադիր եմ առանձին և ընդարձակ յօդուած պատրաստել «Մեղուի» համար: Դեռ պէտք է այցելեմ Ամարասայ, Գանձասարի և Խօթայ վանքերին ևս: Մինչև այն ժամանակ, անշուշտ, ընդհանուր հայրապետի հաստատութիւնը տեղի կունենայ, և հայրապետը միայն կարող է այժմեան կարգ ու ձևերն բարեփոխելու տնօրէնութիւնն անել:

Ես վստահութիւն ունեցայ նոյնպէս խնդրել սրբազան առաջնորդից, որ բարեհաճի կարգադրել իւր վիճակի բոլոր եկեղեցաց և վանօրէից ու նշանաւոր շիրիմների արձանագրութիւնքը հաւաքել և տպագրել տալ, ըստ օրինակի հանգուցեալ Զալալեանին, որոյ գրքում շատ վանքերի և աւերակների արձանագրութիւնքը չը կան: Ես հաշուած եմ, որ այդ գործը 200 մանէթ ծախսով գլուխ կը բերեն տեղացի քահանայք: Բաւական է, որ թէկուզ Համագասպ քահանայ Տէր-Աւետիքեանցի նման մինը յանձնաժողովի պարագլուխ կանգնի:

Սրբազան Սագինեանցը յօժարութեամբ պատրաստակամութիւն յայտնեց այս գործը սկսելու: Տեսնենք¹:

Երից Մանկանց վանքի աջակողմեան, որ, ըստ եկեղեցական կանոնաց, ընդունուած է ձախակողմեան անուանել, խորանի մէջ մի փառաւոր, քանդակագործ շիրիմ կայ՝ այսպիսի արձանագրութեամբ.

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 20-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 68-ում (1 սեպտեմբերի, էջ 1-3)

Այս է տապան սրբոց երից մանկանց: Տեսայ և մի արծաթեայ աջ՝ Նուէր Կուսապատի հասարակութեան (1872-ին), որոյ միջի մասը նոյն այդ երից մանկանց մասն է եղել: Թէ այդ երեք մանկունքը ովքեր են, ես չը գիտեմ: Ոչ ոք էլ չը կարողացաւ ինձ մի բան հասկացնել: Ի՞նչ ասել կուզի, որ այդ մանկունքը կամ նրանց նշխարքը Բաբելոնի հնոցում այրուող Մեդրակ, Միսաք և Աբեթնակով մանկունքը չեն կարող լինել: Հապա ովքե՞ր, ո՞ր սուրբ կամ ընտրեալ ու գուցէ նահատակեալներն են դոքա:

Ինձ միայն այսքանս յայտնի է, որ Երից Մանկանց վանքը, հայ մելիքների օրով Գանձասարի հակաթոռ կաթողիկոսարանն էր: Այստեղ նստում էին Սիմէօն, Ներսէս, Եփրեմ և Իսրայէլ կաթողիկոսունք:

Ահաւասիկ վանքի արձանագրութիւններից գլխաւորները:

Եկեղեցւոյ ճակատին.

Ի ՌՃԽԹ (1700) ի ամի (ամին) ժամանակս Շահ-Սուլէյմանի մեծի արքային Պարսից ես Սիմէօն շնորհիւն աստուծոյ կաթողիկոս Աղուանից շինեցի գեկեղեցիս ընդ հարազատ եղբարք իմով Իզնատիոսի վարդապետի, որ եմք որդիք Մարգսի քահանայի Մեծ-Շէնեցւոյ, յաղօթս յիշեցէք որդիք նորա Օնի (թէ՞ նոր Սիոնի) և մտատանելն և յելանելն դրանս տէրունի, ամէն:

Բեմի ճակատի արձանագիրը.

Կերտեցաւ այս յարկ նուիրանաց՝ տուն այլ և տաճար փառաց նորոյ ուխտի պատարագաց, գոր տէր Յիսուս մեզ աւանդեաց, շինեցաւ յերկուց հարազատաց Սիմէօն կաթողիկոսի և Իզնատիոսի բարունեաց, և այլ յոգունց աշխատողաց գրեցելոց ի դպրութիւն կենաց, ի թուականիս Հայոց ազգի հազար հարիւր և չորս տասնի (1691) ավարտեցաւ սոյն եկեղեցի ի փառս անճառ տեառն Յիսուսի. Որք աղօթէքն երկրպագէա յուղիղ մտօք յոյս նակտէք, աղերսանօք զտէրն յիշեցէք և յանցանաց մերոց մարմնաւորաց Մարգսի քահանայի և մօր մերում և այլ աշխատողաց ի սմա, ամէն:

Մի հին գերեզմանաքարի վրայի (գաւթում) արձանագրութիւնը.

Այս է հանգիստ Մաքու Էմին, թ. Ռ (1551 ՚):

Այս գերեզմանաքարի մի կողմում քանդակուած են խաչեր, իսկ միւս երեսում՝ մի մարդ, որ գուրթան է վարում: Գուրթանը լծուած չորս գոմէշներն աւելի էշերի նմանութիւն ունին, եթէ ուշիուշով լաւ չը դիտէք: Գուրթանի հանդէպ քանդակուած է մի մեծ և բազմաճիւղ ու տերևաշատ ծառ:

Մի այլ և անելի փառաւոր գերեզմանաքար ևս տեսայ գաւթում: Քարի մի կողմումը քանդակուած են երեք ձիաւոր և երեք հետիոտն տղամարդիկ, որոնք ձեռքներին բռնած են զինու գաւաթներ: Քարի միւս կողմումը քանդակուած են վեց տղամարդիկ՝ հետիոտն, ձեռքներին սրուակներ ու գաւաթներ բռնած: Տապանագիրն է.

Այս է տապան Բայինդուրի՝ որդի Սարգիս Բւզբաշին, մայր տրա Ղուշի թութի:

Մի այլ գերեզմանաքարի վերայ.

Այս է տապան աշխատասէր Եսայի վարդապետին Կուսապատցի 1865:

Մի այլ գերեզմանաքարի վերայ.

Ի 1865 թ. ի սմին տապանի ամփոփեալ դնի, դասատու մանկանց կուսակրօն հոգի, Ներսէս վարդապետ ծառայ Միօնի, ձրի շնորհատու պարծանք հայ ազգի Շուշու քաղաքացի Արցախ նահանգի:

Ահա այն տեղեկութիւնքը այս վարդապետի մասին ես հաւաքեցի: Ներսէս վարդապետը շուշեցի է, ազգանունը՝ Միրզա-Աւագեան: Նա եղել է վանահայր Ամարասի և տոյն այս Երից Մանկանց վանքերին: Երկու իսկ վանքերումը դպրոցներ է ունեցել տիրացուաց և զիւղական մանկանց համար:

Ներսէս վարդապետի սաներն են այսօրուայ Արցախու գոված հոգևորականաց շատերն: Կան և վաճառականք և արհեստաւորք: Ներսէս վարդապետը վախճանել է երիտասարդ հասակում զինեմոլութիւնից:

Սա, իհարկէ, վատ բան է: Բայց ո՞վ կարող է պնդել, թէ բարեյիշատակ հանգուցեալին այդ ախտին գերի անողը նոյն ինքը կեանքը չէր: Այո, մեր կեանքը երբեմն ինքն է արտադրում զինեմոլներ և զինեղներ:

Եկեղեցւոյ հարաւային պատի վերին ծայրումը փորագրած է ծաղկազարդ փակագիծ տառերով.

Ներսէս կաթողիկոս:

Հիւսիսային պատի ծայրումը՝ նոյն ձևով.

Բարայել կաթողիկոս:

Արևելեան պատումը.

Միսէօն կաթողիկոս:

Արևմտեանում բան չը տեսայ: Եկեղեցւոյ չորս պատերի վերայ էլ քանդակագործ, մեծ և հոյակապ խաչեր կան¹:

Արձանագրութիւնքը ընդօրինակելու համար մենք ստիպուած էինք ժամը մինչև 5-ը Երից Մանկանց վանքումը մնալ, այնուհետև յետ դառնալ, Ջրաբերդը բարձրանալ և մինչև Մարտակերտ հասնիլ: Կարելի չէր: Ուստի գիշերը վանքում մնացինք² և հետևեալ օրը՝ ժամը հազիւ 9-ին, կարողացանք դուրս գալ այնտեղից:

Ուշանալներուս պատճառն այն էր, որ մեր ձիերը գիշերը փախած էին: Երեք ժամ անտառի մէջ որոնելից յետոյ վերջապէս գտանք հեծանք և հասանք Ջրաբերդ:

Ձիերը բերդի տակ կապուտելով՝ մենք սկսեցինք հետիոտն վերելակել:

Ո՛, այդ վերելակելը..., ինչնիցէ: Արկածախնդրութիւնն էլ իւր քաղցրութիւններն ունի դարձեալ:

Ամէն անգամ, երբ ես որևէ և ինչնէ աղբի կտոր եմ տեսնում, իսկոյն բղաւում եմ մեր առաջից մագլցելով բարձրացող Յովհաննէս հօրը.

- Ա՛ տէր, սա ի՞նչ կենդանու աղբ է:
- Լապստրակի:
- Սա՞:
- Չաղգալի:
- Սա՞:
- Աղուէսի:
- Սա՞:
- Գայլի:
- Սա՞:
- Արջի:
- Ո՞նց թէ արջի, ա՛ տէր:
- Արջի, արջի, վախի՛լ մի, ես էս ա քրզնա (քեզ) հետ ըմ:
- Ա՛ տէր, փէլէնկի (վագրի) հետքեր տեսնո՞ւմ ես:
- Քիշի՛, արի՛, է՛ հ, քեզ ասում եմ, վախի՛լ մի:

Կէս ժամից յետոյ մենք արդէն Ջրաբերդի գագաթումն ենք: Ստուգելու համար թէ մեզ հարևան գագաններ ունի՞նք արդէօք և որքա՞ն ու ի՞նչ տե-

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 21-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 69-ում (5 սեպտեմբերի, էջ 1)

² Երից Մանկանց վանքում մենք խմեցինք ըլուտնէնի (լորենի) ծառի ծաղիկներից պատրաստած թէյ, որ թէն ո՛չ համ ունի և ո՛չ հոտ, լաւ գոյն ունի: Սգնի ծառի ծաղիկն էլ այս կողմերում գործածում են իբրև թէյ

սակ, մենք հարկաւոր համարեցինք նախապէս հրացանների ճարճատիւններով մի անդաստան կազմել Ջրաբերդի չորս կողմը: Մօտակայ կէտները խուլ և երկարատև արձագանք տուին: Հեռաւոր անտառների մէջ յանկարծակն խշխշոց ու բառաչոց ենք լսում: Երկչոտ կիստար ու նապաստակներ են դոքա: Կոնչին ու շղշղկուն են հասնում մեր ականջին: Դրանք էլ կաքաւ և ագռաւներ են: Իսկ մեր շուրջը լուռ է, հանդարտ: Մելիք Հադամի ամրոցի վերայ, նրա շուրջը ոչ մի կենդանութեան հետք չէ երևում...: Յածրից մենք միայն Թարթառի շառաչիւնն ենք լսում, որ իւր հոսանքով երերացնում և գլորում ու քշում, տանում է Ջրաբերդի սեպաձև ժայռի կտորները և այսպիսով օրըստօրէ և ժամ առ ժամ քանդում, քայքայում է Մելիք-Իսրայէլեանների անատիկ մարտկոցը: Բայց լաւ է, մենք սկսենք ման գալ:

Ցից առ ցից կանգնած վիթխարի ժայռեր, կրկնակի պարիսպ՝ թէն ոչ ամէն տեղ, մի ընդարձակ տուն՝ տխուր մնացուած, բեկորներ, տան հանդէպ մի պարտէզ, ուր աճել են թուփ, շուր, մոշ և անթիւ թուփ ու մացառ. ահա ձեզ Ջրաբերդի գագաթը: Ուրիշ ոչինչ, միանգամայն ոչինչ: Շրջակայ լեռների մէջ Ջրաբերդի լեռնակն ամէնից ցածրն է: Ուրեմն և ամէն տեղից ու ամէն կողմից կարելի է հարուածել Մելիք-Իսրայէլեանների ամրոցը թէկուզ լոկ ատրճանակներով:

- Բարէ՛, ա՛յս է եղել ուրեմն հռչակաւոր Ջրաբերդի հռչակաւոր մելիքների վերջին ապաւենը, և նեցուկը: Եւ այդտե՛ղ ուրեմն, մինակ իրանք՝ մելիքնե՛րն էին ապաւինում ու ապաստանում իրանց, միմիայն իրանց ընտանիքով՝ թողնելով ժողովուրդը դաշտերի և լեռների երեսին անտեր, անտերունչ պարսիկների և զանազան բարբարոսների ձեռին:

Հետներս վեր առած խառ թթի դատարկ կողովիկը՝ գլխիվայր ես կախ եմ տալիս Մելիք-Իսրայէլեանների պալատի պատերից մինի վերայ բուսած ծառից...: Եւ իմ աչքերը դէպի Երից Մանկանց վանքն եմ ուղղում: Գմբէթի վերայ արևի շաղքում դեռ ցոլում է Քրիստոսական խաչը: Յանկարծ միտս եկաւ Շարականի մի տունը, որ մենք խմբովին երգեցինք. «Խաչն կենարար, որ եղև մեզ փրկութիւն, սովաւ ամենեքեան զքեզ բարեբանեմք»:

Ջրաբերդից պարզ նկատվում են Թրդի գետի աջ ափում եղած լեռան լանջի վրայի այսպէս անուանեալ Անապատ կոչուած գիւղաքաղաքի աւերակները՝ բոլորն էլ գետնատարած: Միայն եկեղեցին է, որ կանգուն է դարձեալ: Ասացին, որ այդ տաճարի վերայ ևս արձանագրութիւնք կան, բայց Թրդին անցնելու մենք ոչինչ հնար չունինք:

Ուրեմն լաւն այն է, որ Ջրաբերդից էլ իջնենք և գնանք վաղօրոք, մեր ընկերները գտնենք: Միմեանցից հեռու, բաժան մնալը լաւ չէ...

Երեք ժամ անտառների և լեռների մէջ շարունակ վերելակելով և ցածրանալով՝ վերջապէս մենք հասանք Մեծշէն գիւղը, ուր մեզ սեպհական վրանում մի լաւ ճաշով և առատ գինիով պատուեց աստիճանաւոր պ. Արսէն Տէր-Բարայէլեանը:

Մինչ պ. Արսէնի հրամանաւ մեր իրաւասութեան տակ դրուած չափառը կը պատրաստուէր, ես Մեծշէնն աչքից անցկացրի, և ահա մի քանի խօսք և այդ գիւղի մասին, որ, ինչպէս Երից Մանկանց եկեղեցւոյ արձանագրութիւնիցը տեսանք, Աղուանից Միմեօն կաթուղիկոսի հայրենիքն է:

Այս գիւղը այժմ ունի 50 տուն բնակիչ, մի եկեղեցի և երկու քահանայ: Բայց վաղ նա մի քաղաք էր և ուներ 900 տուն բնակիչ, 2 եկեղեցի և 5 հանգստարան:

Մի ժամից յետոյ ես կանգնած եմ Մելիք Հաղամի պալատի ընդարձակ գաւթումը՝ Ինն մասանց վանքից ոչ աւելի, քան մի քանի տասնեակ սաժէն հեռաւորութեամբ: Պալատը բաղկացած է 12 մեծ և փոքր սենեակներից՝ բոլորն էլ կանգուն, իւրաքանչիւր սենեակի մէջ՝ մի մի բուխար և բուխարի ձևով շինած կենդանեաց մտուրներ մի քանի սենեակներում-ախոռներում: Մելիք Հաղամի պալատի երկայնութիւնը 64, իսկ լայնութիւնը 53 արշին է: Կամարակապ, մեծ դուռը գեղեցիկ է: Սրահի սիւներից մի քանիսը քանդած է: Պալատի անկիւններում կան չորս աշտարակներ, պալատի հանդէպի հին շինութեանց գետնատարած կոյտեր: Արձանագրութիւնը միմիայն Մելիք Հաղամի բնակարանի ճակատներին կան և են թուով երեք: Ահա այդ արձանագրութիւնքը.

ա) Որ և ողորմութեամբն Ամենագորին աստուծոյ բազմաց ժամանեցոյց եղաք... շինեալ գտունս իսկ բարերարին աստուծոյ տուաւ ինձ գկարողութիւն և զգորութիւն սուրբ Հոգւոյն ծանուցեալ Մելիք-Բարայէլի որդի ես Մելիք-Հաղամս շինեցի գեղեցիկ կամարօք գեղեցիկ անարատ տուն և սարայս և բազմահանճար զարդիւնաւորութեամբ առնայիններով (՞) բարեցանկ և վայելեցեց հանդերձելութեամբ, թիւ ՌՄԻ (1771):

բ) Կարողութեամբն աստուծոյ ես Ներսէսի որդի և Պետրոս իւզբաշի վերակացու լեալ աշտարակիս:

զ) Մենք հարմատոյ (յարմատո՞յ) Հայրն Աբրահամ կեանք նորա հիանալի, նա ոչ շինեաց տուն և տեղի բնակութեան միշտ վրանօք շրջէր յերկիրն ի խառան այլ անուսումն կեանք մեր կարճացեալ թիւ ամաց համայն բոլոր երևելոյ եմք մեք միւս անգամ տեսիք ի մեր յիմարութեանց սորա ժառանգաց չենք... այլանաց... Հման աստուած Աբրահամու ես և...:

Ինն Մասանց վանքը նոյնպէս մի փառաւոր և պայծառ շինութիւն է: Գաւիթը պարիսպ չունի: Նրանում կան մի կարգ սենեակներ և բաւականին գերեզմաններ: Այս վանքումն էլ չը կան վանահայր, այլ պահապան գիւղացիք: Եկեղեցւոյ արձանագրութիւնքը սոքա են.

Շինեցաւ սուրբ ուխտս Ինն մասանց տրոք ժողովրդկոց ի ժամանակս Յովսէփ վարդապետի Փինաչեանց:

... Կառոյց ինն մասանց եկեղեցիս Քրիստոսի հաւատացելոց:

Այս նորակերտ եկեղեցւոյ հարաւային կողմն է հին եկեղեցւոյ կոյտերը: Հին ժամանակ այստեղ էր Մոխրաթաղ գիւղը, որ 700 տուն բնակիչ ուներ: Այժմեան Մոխրաթաղ գիւղը հնի արևելեան կողմն է և մի ժամաւ հեռի է նրանից: Ինն մասանց եկեղեցւոյ արևելեան կողմում 24 շիրիմներ կան Մելիք-Իսրայելեանների հին և նոր սերնդոց:

Ինն մասունքից մենք անցանք Մոխրաթաղ գիւղը, որ ունի 50 տուն բնակիչ: Հին և միակ եկեղեցին իւր հաշւով վերանորոգել է շուշեցի պ. Մեսրոբ Թառումեանը: Մոխրաթաղում մեզ հիւրասիրեց Նիկոլայ բէկ Փիրումեանց երիտասարդ պարոնը, որ Մելիք Հադամի ծոռն է, այսինքն՝ թոռան որդին և իբրև մելիքի ժառանգ՝ բաւականին կալուածներ ունի: Նրա թղթերի մեջ պատմութեան վերաբերեալ ոչ մի թուղթ ես չը գտայ: Մոխրաթաղում ես, ցաւօք սրտի, ներկայ եղայ մի քննութեան և կարգադրութեան, որ արաւ տէր Համագասպ հայրը ապօրինի կանայք պահողի նկատմամբ: Այդ մարդը օրինաւոր կերպով պսակուել է մի օրիորդի հետ: Մի քանի ժամանակից յետոյ արդէն թիրքական սովորութեամբ իրան կին է ընտրել մի այլ օրիորդի: Յետոյ դրան ճամփել է, և մի այլ օրիորդ է բերել, յետոյ մին ուրիշը, մինչև վեցը: Յետոյ, երբ այդ յաճախակի փոփոխութիւնից ձանձրացել է, որոշել է երկու կնոջմով բաւականանալ: Դրանցից մինը իւր առաջին՝ օրինաւոր կինն է, իսկ երկրորդը՝ ապօրինի և ոչ այլ ոք է, եթէ ոչ իւր հարազատ գոքանչի հարազատ քոյրը:

Գիշերուայ ժամը 12-ին մենք հասանք Մարտակերտ, գտանք մեր ընկերներին: Հետևեալ օրը՝ դարձեալ կէսգիշերին, հասանք Շուշի: Մի քանի օր հանգստանալուց յետոյ ես ճամփայ կէլնեմ դէպի Խաչէն, ապա Վարանդ ու Դիզակ:

Աւելորդ չեմ համարում «Ուղեգնացական ակնարկներ»-իս հետ կցել այս անգամ և հետևեալները.

Չայլու գիւղի բնակիչք հետևեալ ներբողն ունին լուի համար շինած.

Խարս (հարս) քո սիրուն և զընգզընգան,

Ես քո սիրուն կը զընգզընգամ.

Աման լուեր, մաղաթ լուեր,

Ցերեկ կերթան սներն (սիւներն) ի վեր,

Գիշեր կը գան ջղերս ի վեր:

Տէր Համագասպից հետևեալ ժողովրդական երկու արագախօսութիւնքը լսեցի.

Թան, թան,

Պապս ուտի, երթայ գութան:

Խաւիժ, խաւիժ, խաւաւիժ,

Պապն ուտի, ընկնի ոտից:

Սոյն այս քահանան, ժամանակաւ Արցախի վանքերից և գիւղերից հաւաքած է ունեցել այլ և այլ ձեռագիր տետրակներ և մատեաններ, որոնք ուղարկել է Էջմիածնի գրադարանին: Նոյն վեհափառութիւնը հանգուցեալ Գեորգ Դ. կոնդակաւ՝ յ3-ն Հոկտեմբերի 1880 ամի, 429, օրինել և գոհունակութիւն է յայտնել Համագասպ քահանային: Ափսոս, որ ո՛չ քահանան է յիշում իւր յԷջմիածին ուղարկած 14 կտոր ձեռագրերի անուանքը, ո՛չ հայրապետի օրհնութեան կոնդակումն է յիշուած: Տէր Համագասպի մօտ ես տեսայ մի թղթեայ Խորենացի և Եղիշէ՝ միասին կազմեալ: Ձեռագիրը թուական չունի:

Վերոյիշեալ պ. Ջալալ Տէր-Գրիգորեանցն իմ խնդրանօք կազմեց Ջրաբերդում գտնուած հետևեալ աւերակների ցուցակը: Աւերակները բոլորն էլ սփռուած են Թարթառի երկու ափերումը: 1) Ծոս, 2) Խուտրաշէն, 3) Սըռէնշէն, 4) Սրաշէն, 5) Սթնաձոր, 6) Ընկանայ, 7) Լեօվա (լնոնայ), 8) Խըլզնաշէն, 9) Ղառուքէնդ, 10) Օրան-Մեծշէն, 11) Ծարաւաջուր, 12) Ջուխտակ շինատեղ, 13) Եղցաթումբ, 14) Բակլիկ շինատեղ, 15) Բըլախանայ, 16) Թըրթոր, 17) Մէջիդ, 18) Կաթողիկոսար:

Երից Մանկանց վանքի մի բարձրադիր կետից երբ ես չորս կողմս էի դիտում, արևմտահարաւային կողմում՝ մի բարձր լեռան գագաթին, աչքիս շինութեան նման մի բան երևեցաւ: Հարցրի արժ. Յովհաննէս քահանայ Տէր-Գրիգորեանցին: Պատասխանեց.

- Մասիսի աւերակներն են: Տեղեկութիւն ունի՞ ք, ա՛ տէր:

- Տեսած եմ մանուկ ժամանակս, ուստի ոչինչ տեղեկութիւն չունիմ,-պատասխանեց ինձ քահանան:

Ջրաբերդի հայ գիւղացիներին հետևեալ գեղեցիկ սովորութիւնքը յատուկ են:

Գիւղական համայնքը՝ թե՛ արք և թե՛ կանայք, դաշտային և առտնին գործքերում աննախանձաբար և փոխադարձաբար օգնում են միմեանց: Այդ սովորութիւնը յատուկ է և Շիրակի ու Ջաւախէթի հայ գիւղերում: Այդ կողմից ամենից օրինակելին է Խոտըրջուր կոչուած հայ կաթօլիկ գիւղը: Համայնական սկզբունքի վերայ հիմնուած այդ գեղեցիկ սովորութիւնը, որ Արցախում մրջի է կոչվում, նկատելի է և քաղաքների արհեստաւորների մէջ:

Ջրաբերդի գիւղացիք շատ չափաւոր կեանք են վարում: Ծխախոտ ծխելը և գինի կամ օղի խմելը նրանց մէջ ախտ դարձած չէ (իմ խօսքը տեսածս գիւղերի նկատմամբ է): 40 տարեկանից վար մարդիկ առհասարակ ծխախոտի համը չը գիտեն: Նշնուղ աղջկայ գլխագինը Ջրաբերդում շատ չնչին է, ընդամենը 40 ռուբլի: Այդ գլխագինը կոչվում է յըղի (ուղի, ուղեգին): Աղջկերքը նշնում են շատ վաղ, երբեմն 9 տարեկանը:

Հացի սեղանի սփռոցները կապտագոռոյն են, սպիտակ բծերով: Այդ սփռոցների վերայ միշտ գրած, պասմայած է լինում կա՛մ ամբողջ Տէրունական աղօթքը, կա՛մ, որ աւելի յաճախ է պատահում, «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ» բառերը, կա՛մ «Եղիցի սեղանս այս օրինեալ անուամբ Հօր և որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»:

Ջրաբերդի եկեղեցաց և եկեղեցականաց մասին ես կը խօսեմ յետոյ, երբ Խաչէնը, Դիզակը և Վարանդը ևս տեսնեմ, պրծնեմ:

Վերջ ամենայնի. իմ ման եկած բոլոր գիւղերում և վանքերում Ապրէս Բէկնազարեանցի մասին արած ամեն տեսակ հետախուզութիւնքս ապարդիւն անցան: Ոչ ոք ո՛չ տեսած և ո՛չ լսած է այդ կամաւոր աղքատին: Շուշուայ ոստիկանարանի գործերիցը ես տեսնում եմ, որ յընթացս 3-4 տարուայ յիշեալ գաւառում 15 աղքատ և անյայտ մարդիկ են մեռել և թաղուել այլ և այլ տեղերում: Բայց յետոյ դրանց տերերը գտնուել են: Հետևաբար Ապրէս

Բեկնագարեանցը կա՛մ ուրիշ գաւառ կամ աշխարհ է անցել, կա՛մ անյայտութեամբ մեռել է և մինչ օրս անյայտութեան մէջ փոշի դարձել:

Տեսնենք ինչ հետևանքի կարող կը լինիմ ես հասնել առաջիկայ ճանապարհորդութեանս ժամանակ¹:

Մինչ օրս Արցախում արած ճանապարհորդութեանս ժամանակ բախտս միշտ հաշտ աչքով է նայում վրաս: Ուղեկիցներ միշտ անպակաս են լինում: Նրանք իմ բախտից այնպիսի անձինք են լինում, որոնցից ես միշտ շահվում եմ բարոյապէս, երբեմն նաև նիւթապէս, այսինքն՝ փողս գլխած ժամանակ նրանցից փոխ եմ առնում, շատ անգամ էլ նրանց հաշուով կերակրում:

Բախտն ինձ առաւել օգնեց դէպի Խաչէն և Վարանդ ճանապարհորդած ժամանակս մանաւանդ: Արցախի թեմական առաջնորդ Աբրահամ Մագինեանցը պատրաստվում էր յուլիսի վերջերին այցելել Գանձասար և Ամարաս վանքերին: Նորին Սրբազնութիւնը բարեհաճեց ինձ ևս իւրեան հետ վեր առնել և իւր ձեռքից եկած օրհնութիւններով միանգամայն պարտաւորեց ինձ: Հրապարակական շնորհակալութիւն նորին բարձր սրբազնութեան:

Շուշուց մենք դուրս եկանք յուլիսի 27-ին ձիերով: Մինչև Գանձասար մեր գնացած բոլոր ճանապարհի շրջակայքում գտնուած հայ գիւղական համայնքների հոգևոր և մարմնաւոր ներկայացուցիչները, ձիաւորների յատուկ խմբերով շարունակ և փոխ առ փոխ, դիմաւորում և ուղեկցում են իրանց սրբազան առաջնորդին, որ իւր հերթում պատշաճաւոր ընդունելութեամբ շահում է նրանց և օրհնութեամբ վերադարձնում իրանց տեղերը: Վեց ժամ յետոյ մենք արդէն վեր ենք եկել հանգստանալու շուշեցի Խօյլու Օսեփանց պարտիզումը: Այս պարտիզին կից տարածուած են մի քանի տասնեակ պարտեզներ, սեփականութիւն այլ և այլ քաղաքացի անձանց: Պարտեզները բեռնաւորված են ըստ մեծի մասամբ, թթենիներով: Ուրեմն այստեղ օղի են քաշում: Եւ քաշողն էլ վերոյիշեալ Խօյլու Օսեփանցն է, որոյ գործարանը ցարդ Արցախում տեսածս օղիի գործարաններից ամենից մեծն է:

Մինչև նախաճաշի պատրաստուիլը դաշտի և շրջապատ լեռնակների այլ և այլ կէտերում հեռադիտակս ինձ ցոյց է տալիս հետևեալ հայաբնակ գիւղերը. 1) Նորագիւղ, որ ունի 36 տուն: Գիւղի կողքին մի խումբ ծառերի շվաքում կանգնած է մի ուխտատեղի, անունը՝ Սարիխաչ, 2) Դաշբուլաղ՝ 60

¹ Այստեղ պայրտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 22-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 70-ում (8 սեպտեմբերի, էջ 1-3)

տուն, 3) Դահրա՝ 64 տուն, 4) Մէիթիշէն՝ 22 տուն, 5) Պտրեցիք՝ 47 տուն, 6) Խանձք՝ 23 տուն:

Նախաճաշից յետոյ մենք անմիջապէս ճամփայ ընկանք, չը նայած որ ամպերը հետզհետէ կուտակվում և ուռչում են: Մի ամսից աւելի անձրևի երես չը տեսնող շինականաց ուրախութեանը չափ չը կայ: Չը գիտեն՝ ինչպէս շնորհակալ լինին իրանց հայր սուրբից՝ առաջնորդից, որոյ ոտքը «ուղուրլու»¹ է եղել իրանց համար: Թող այդպէս լինի: Քառորդ ժամից յետոյ սկսում է յորդ անձրև տեղալ: Պատասպարուելու տեղ չը կայ: Եթէ լինի էլ, անյարմար և անտեղի է պատասպարուիլը: Գիւղացիք դրանով գայթակղվում են: Որպէսզի նրանք չը գայթակղին, չը վհատին, մենք պէտք է թրջուինք: Եւ թրջվում ենք ամենափառատոր կերպով: Հովանոցները, կարելի է ասել, լոկ ձևի համար ենք պարգած: Իրանք՝ գիւղացիք, ջիրիթ են խաղում, ատրճանակներ պարպում, իսկ ծերունի եպիսկոպոսը և տողերիս գրողը ցրտից դողում ենք:

Ղշլաղ անունով մի գիւղի (48 տուն) մօտ հասանք: Զանգակները տալիս են: Ես իմ ձիու սանձը դէպի շէն ուղրեցի՝ կարծելով, թէ գոնեա այդպիսով կը հրապուրեմ սրբ. առաջնորդին և իւր ժողովրդին: Բայց նրանք չը հրապուրուեցան: Եւ յորդ անձրևի տակ քշում են իրանց ձիանքը: Յետ դարձանք:

Մթնշաղին հազիւհազ հասանք Սէյդիշէն գիւղը, ուր որոշուած էր գիշերել: Մեզ իւր մաքուր և պատուական սենեակների մէջ հիւրասիրեց Նէնեսի Սարումեանց՝ տեղւոյն նախկին քահանայի այրին:

Թէ ինչպէս ես իմ շորերս փոխեցի, ինչպէս երկու բաժակ թէյ խմեցի, չը գիտեմ, միայն գիւղ հասած բոպէից սկսեալ մինչև կեսգիշեր՝ տէնող և նրան յարակից ջերմութիւնը հոգիս քաղեցին: Եթէ չէր լինի բարի տանտիկնոջ մայրական խնամքը, դժուար թէ հետս վեր առած դեղօրայքը կարողանային միւս առաւօտը ինձ ոտքի կանգնացնել: Զարմացայ, երբ առաւօտեան սրբ. Սազինեանցն ինձ պատմեց, որ ինքը միանգամայն առողջ է և գիշերը շատ հանգիստ կերպով է ննջել: Երանի՛ այդ տեսակ կազմուածքի տէր անձանց, երանի՛ այդ կողմից հին սերնդի մարդկանց: Իսկ մենք՝ նոր սերնդի մարդիկս, հէնց իմանաս թողթայ կազմուածք ունինք: Ափսո՛ս և ամօ՛թ մեզ:

Սէյդիշէնից հեռի չեն Խնձրիստան գիւղը՝ 45 տուն բնակչօք, Մարդարաշէն՝ 20 տուն բնակչօք, երկուքն էլ հայաբնակ դարձեալ: Սէյդիշէնը 25 տուն

¹ Ուղուր նշանակում է բարի հաջողություն բերող (ծանոթ. խմբ.)

է: Ունի մի փոքրիկ և խղճուկ եկեղեցի, ուր առաւօտեան՝ կիրակէ, տեղական քահանան պատարագ մատոյց:

Սէյդիշէնի յիշածս քահանան, որ Խնձրիստան գիւղն էլ է հովուում միևնոյն ժամանակ, Անդրէաս եպիսկոպոսի ձեռնադրածն է: Ասացին, որ Սարումեանց Անդրէաս վախճանեալ քահանայի՝ մեր իջևանած տանտիրոջ ուսում առած որդիքներից մինը, որ այժմ Բագու է, կամեցել է հօր տեղեակ քահանայ դառնալ իւր հայրենի գիւղի ժողովրդականաց վերայ, բայց հանգուցեալ առաջնորդը, այժմեան քահանային նախապատվութիւն տալով, ուսում առած երիտասարդի խնդիրը մերժել է: Ի դէպ, եկեղեցւոյն կից գտնվում է յիշեալ Անդրէաս քահանայի գերեզմանը այսպիսի արձանագրութեամբ.

Հանգիստ Անդրէաս քահանայի Սարումեանց 69 ամաց. Ամս քառասուն տանն աստուծոյ եղև հովիւ սրբակրօն: Նա ոչ երբեք դէմ Բարձրելոյ գործեաց անզգոն: Յիշեա՛ անցորդ ի քո մրմունջս Անդրէասայ զհոգին՝ զտէր Սարումեան հանգչիլ ի բարձունս մաղթեա՛ զմայր Յիսուսին:

Հանգուցելոյ մի այլ և մեծ արժանիքն ևս այն է եղել, որ իւր Մովսէս, Ներսէս, Դանիէլ, Սիքայէլ և Սարգիս որդւոցը լաւ կրթութիւն և ուսում է տուել: Հիմի դրանք բոլորն էլ Բագուայ և Դարբանդի մէջ լաւ-լաւ պաշտօններ են վարում: Այդպէս ասաց ինձ նրանց մայրը՝ յարակցելով, որ իւր որդիքը մտադիր են վերանորոգել և զարդարել իրանց գիւղի եկեղեցին:

Դա անհրաժեշտ է, և Անդրէաս քահանայի որդւոց վերայ սրբազան պարտականութիւն կայ ոչ միայն եկեղեցին վերանորոգել, այլ նաև իրանց հայրենիակիցների թշուառ մանկանց մատուրականի մասին ևս, իրանց կարողութեան չափ, հոգ տանել: Հինաւորց մարդը՝ իրանց հայրը, իւր պարտքը ճշտութեամբ և սրբութեամբ և աւելի քան որքան սպասելի էր, կատարել պրծել է:

Այժմ որդիքն էլ պարտական են իրանց հերթում իրանց պարտքը կատարել ոչ միայն դէպի իրանց զաւակները, այլ նաև դէպի հայրենակիցների զաւակները, դէպի ազգի զաւակները:

Սարումեանցների մայրը զարնանը գալիս է Սէյդիշէն իրանց տափերը և պարտէզը կառուարելու և տղամարդու պէս կառուարում է: Իսկ ձմեռը տիկինը գնում է Բագու՝ որդւոց մօտ: Տիկին Նէնեսին իւր 64 ձիգ տարիներով, իւր զարմանալի ժրութեամբ, աչքաբացութեամբ և խելօք լեզուանիութեամբ ինձ յիշեցրեց այն ազի և նանի կոչուած տանտիկին-մայրերին, որոց ես

Արցախում խիստ յաճախ են հանդիպում, որոնք իրանց օջախների հիմքը, նեցուկներն են կատարել:

Մէլդիշէնում մի առակախօս մարդ է եղել՝ Մնացական Թամամեանց: Որոնեցի և չը գտայ: Շէնումը չէր: Երկու քահանայ ինձ խոստացան Մնացականի «պընկլները» ժողովել և Շուշի ուղարկել: Համանման խոստումն ինձ արաւ նան Յովհաննէս քահանայ Տէր-Գրիգորեանցը Վարանդի ժողովրդեան առածները և առակները ժողովելու նկատմամբ¹:

Մէլդիշէնից սկսեալ՝ մենք մտնում ենք Արցախու լեռանց ազխազխների մէջ: Մեր ճանապարհը այդ լեռների լանջերովն ու նրանց մէջ եղած ձորերովն է ընթանում փոփոխակի: Ցեխձոր կոչուած ձորի գլխից հեռադիտակով ես տեսնում եմ Պոկէսի ս. Գեորգայ վանքը, որ այժմ ամայի է: Վանահօրը մի քանի ժամանակ առաջ քօլանիները սպանել են: Վանքը շինած է լեռան գագաթին: Ես նրան կայցելեմ վերադարձիս: Ցեխձորի ներքնից ընթանում է Խաչէնագետը, որ բաղկացած է երկու վտակներից, բուն՝ Խաչէնից և Քօլատակի գետից: Տեղւոյն դիրքը և դաշտի նշանները պարզ ցոյց են տալիս, որ Խաչէնագետն ահեղ կերպով վարարուելիս մեծամեծ վնասներ է հասցնում շրջակայքին:

Գետի ձախ ափում տարածուած են Գանձասարու վանքապատկան 18 հատ ջրաղացներ: Իսկ աջ ափին կայ մի երկարաձիգ, հին պարսպի փլատակը: Այդ պարիսպը պէտք է, որ շինուած լինի Կաչաղակաբերդի մուտքը պահպանելու համար: Կաչաղակաբերդը՝ իւր ամպածրար գագաթով, Քօլատակի գետի աջ ափին է: Շուշուայ բարձրութիւններից ես քանի՛-քանի՛ ցսանգամ հեռադիտակով տեսել եմ Ջալալեան մելիքների այդ գոռ ամրոցը, որ շինած է այս կողմի լեռներից ամենաբարձր վրայ (յետ Մոռաի, որ ծովի մակերևոյթից 10,000 ոտնաչափ բարձր է): Այժմ Խաչէնագետի ափից ես տեսնում եմ, որ զարմանալի քերծուտ ու ժայռուտ է Կաչաղակաբերդի մանաւանդ այն մասը, ուր ամրոցն է շինուած: Ինձ ասում են, որ նրա վերայ բարձրանալու համար թէն երեք ճանապարհ կայ, բայց նրանք երեքն էլ ամենադժուարին են և մինչև անգամ անհնարին:

«Անհնարին բան չը կայ աշխարհումս», - ասում եմ ինքս ինձ և պատրաստվում Մելիք-Ջալալեանների ամրոցի ինչ-որ բան լինելն ևս տեսնել և հասականալ: Պ. Բաֆֆին, առանց այդ բերդի վերայ բարձրացած լինելու,

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 23-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 71-ում (12 սեպտեմբերի, էջ 1-2)

նրան անուանում է հրաշալի: Տեսնենք, թե ինչն՝ մն է այդ հրաշալիությունը: Թերևս դիրքո՞ւմ, բարձրությունո՞ւմ: Վերջապես տեսնենք:

Խաչենագետն ընթանում է ներքև, իսկ մենք՝ վերև: Մեր աջ կողմում, իսկ գետի ձախ կողմում՝ մի փոքրիկ լեռնաշղթայի ստորոտում, հետզհետե երևում են Առաջաձոր (133 տուն), Ծմակահող (30 տուն) և Գանձասար կամ Վանք (123 տուն) գիւղերը: Դրանցից միմիայն Գանձասար գիւղը վանքապատկան է: Բաղկացած է երկու առանձին և բաժան թաղերից՝ Հունահող և Գոմակալ:

Խաչենագետի աջ ափի լեռնային գագաթներից ամենաբարձրը և ամենախոժոռն է Նատարի դալան, որոյ երեք հատ, ցից առ ցից եղջիրները կոչվում են Կեռաքար:

Գանձասար գիւղի արևելահարավային կողմում ձգուած ծառախիտ լեռնակը բարձրանալով՝ վերջապես մենք հասնում ենք հոչակաւոր Գանձասար վանքը, որոյ մասին եղած պատմական տեղեկությունքը ի բաց թողնելով՝ ես իմ ընթերցողին կը ներակայացնեմ նրա արտաքին նկարագիրը:

Խաչենագետի ձախ ափին՝ շրջապատ լերանց ազխազխներում բացուած մի նեղկակ հովտի արևմտեան ծայրում՝ առանձնակ և երկարաձիգ լեռնակի գագաթում բարձրացած, կանգնած է Գանձասարի վանքը՝ 650 տարուայ մի պատկառելի և գեղեցկակերտ շինություն: Վանքի շրջապատ և բարձր պարիսպը, 1854-ին վերանորոգված է, այնուամենայնիւ, այժմ կիսով չափ փուլ է եկած: Պարսպի շուրջ՝ ներքին կողմից զանազան շինություններ կան, որոց մասին յետոյ կը խօսեմ: Այդ շինութեանց առաջ՝ չորս կողմից կան բազմաթիւ թթենիք և մի քանի հատ խնձորենիք: Մէջտեղում բարձր ի գլուխ կանգնած է վանքը՝ յանուն սուրբ Յավիհաննու Մկրտչի: Վանքը, ինչպէս Հին Հայաստանի ամէն մի եկեղեցիքը, բաղկացած է ժամատնից և տաճարից: Դռքա իրանց ճարտարապետութեամբ թե՛ դրսից և թե՛ ներսից յար և նման են Անույ Մայր կամ Կաթողիկէ եկեղեցւոյն կամ առհասարակ 11-13-րդ դարու Հին Հայաստանի եկեղեցական շինութեանցը. միևնոյն հոյակապ կամարները, կրկնայարկ և ծածուկ պահարանները թե՛ սեղանի և թե՛ եկեղեցւոյ միջից, միևնոյն օղային սանդուղները, միևնոյն հրաշալի քանդակ ու քիվերը և դրսի կողմից միևնոյն խորշերը, քանդակագործ խաչեր, աստիճաններ, խոյակներ և մեկնակ կամ ջուխտակ սիւնակներն ու կամարները: Ժամատան առաստաղի քանդակները, մանաւանդ Անույ Առաքելոյ եկեղեցւոյ միևնոյն հրաշակերտ քանդակներն են: Անույ կաթողիկէի համեմատ Գան-

ձասարի տաճարի մէջ մի քանի զանազանութիւնք կան, դա այն է, որ նախ՝ վերջինս աւելի փոքր է, և երկրորդ՝ Գանձասարի տաճարը իւր եօթը հատ միմեանց վերայ հանգցրած սիւներով (սեանսիւն) Անույ Կաթողիկէից վսեմ է: Անույ Կաթողիկէի գմբէթը և պատերի մի մասը փուլ են եկած, մինչդեռ Գանձասարի վանքը, թէև տեղ-տեղ խախտուած ու ճեղքուած, իւր բոլոր մասերով ամբողջապէս դեռ մնում է: Գանձասարի մի այլ առաւելութիւնը կազմում են եկեղեցւոյ դռների գլխին և գմբէթի շուրջը քանդակուած բազմաթիւ խաչերը, խաչվառները, արծիւ ու բազէները, առիւծ և ցուլերը, եզան և օձի գլխները, քարակոփ շղթաները՝ ծայրերիցը կախ արած քարաշէն խաչերով, աղանիք, մարդիկ (մելիքներ), որոնք երբեմն իրանց գլխների, երբեմն ուսերի և բազուկների վերայ բռնում են քարակոփ փոքրիկ եկեղեցիները:

Այդ ամէն քանդակագործ պատկերներն իրանց վերին աստիճանի նրբութեամբ, պարզութեամբ և պայծառութեամբ իրանց նմանը չունին Անույ աւերակաց մէջ:

Ժամատան շէմքի առաջ թաղուած են Խաչէնի մեծ իշխան Ջալալ Դօլին՝ եկեղեցւոյ շինողը, Գանձասարի կաթողիկոսունք և Բաղդասար մետրօպօլիտը: Նրանցից ցածր կայ մի 60-ամեայ ռուս կնոջ (Սօֆի Լըվովա) շիրիմը:

Ահաւասիկ դրանց ամէնի արձանագրութիւնքը.

ա) *Այս է հանգիստ մեծին Ջալալին. յաղօթս յիշեցէք, թվ. 112 (1431):*

բ) *Այս է տապան Երեմեայ կաթողիկոսին Աղուանից, որ է յազգէն Ջալալ Դաւլին (Դօլին), ՌՃԽԹ (1700):*

գ) *Այս է տապան Եսայի կաթողիկոսին Աղուանից, որ է յազգէն Ջալալ Դօլին, ՌՃՃԷ թուին (1728):*

դ) *Յովհաննէս կաթողիկոս (թիւր եղծուած է):*

ե) *Այս է տապան Գրիգորի կաթողիկոսի, ՌԲՃ թուին (1751):*

զ) *Այս է տապան Յովհաննէս Աղուանից կաթողիկոսին, որ է յազգէն Ջալալ Դաւլին, թվ. ՌՄԼԵ-ին (1786):*

է) *Այս է տապան Սարգսի Աղուանից կաթողիկոսին, որ է յազգէն Ջալալ Դաւլին, թվ. ՌՄՃԷ-ին (1828):*

ը) *Այս է հանգիստ Դաւիթ կաթողիկոսին, որ է որդի մելիք... (եղծուած է):*

Բոլորովին եղծուած են նաև երկու այլ կաթողիկոսների շիրմաց արձանագրութիւնքը:

թ) *Այս է տապան մետրապօլտին*

Բաղդասարայ մեծ արհին

Կայսերապսակ հովուապետի

Տանս Ադուանից Հայոց ազգին

Յազգէն Ջալալ մեծ իշխանին

Տեառն Արցախայ աշխարհին, թվ. ՌՅ (1851)-1854 Գ (3 յուլիսի)¹:

Իսկ եկեղեցոյ գաւթումը թաղուած են շատ արեղաներ և նշանաւոր ծխականներ: Ահա մի արեղայի տապանագիրը.

Յովսէփ գիտնական վարժապետ վարդապետ Տէր Աւագեան Արցախոյ: Ո՛վ պերճ տապան, որպէս կարես հանդուրժես, մեծ վարժապետն ի քեզ իրես գետեղես. զհին աւուրց երախտաւորն ամփոփես. զանխոս մանկունս ի սուրբ հօրէն, որք թողես: Եկա՛յք, ընկերք ոգունք մուգայք սիրասունք, զհօր զմահ յորդ արտասուոք ողբասցուք: Եթէ Յիսուս զհւրն զՂազարոս արտասուեց..., թուին 1843)²:

Նախորդ նամակներիցս մէկում արտագրելով Երից Մանկանց վանքում թաղուած Ներսէս վարդապետ Միրզա-Աւագեանի դամբանագիրը՝ ասել էի, որ այդ վարդապետն Արցախի հայոց վերայ մեծ երախտիք ունի՝ կրթելով և ուսում տալով նրանց գաւակների Ամարաս և Երից Մանկանց վանքերում: Գանձասարում լսեցի, որ նոյն Ներսէս վարդապետը մի ժամանկ ուսումնարան է ունեցել և այստեղ: Տեսայ նաև նորա ուսումնարանը, որ այժմ վանքի ախոռատուն է դարձած: Այս վարդապետից հին, հռչակաւոր և միևնոյն դպրոցական ասպարիգում աւելի արդիւնաւոր գործիչ է եղել և սոյն այս Յովսէփ Տէր-Աւագեան գիտնական, վարժապետ վարդապետը: Երկուքին էլ յիշատակը օրհնեալ լինի: Սրա աշակերտն է եղել, ի թիւս այոց բազմաց, նաև տէր Գրիգոր վարդապետ քահանան, որոյ պատկերն այսօր գրեթէ ամէն շուշեցի, իբրև զարդ, պահում է իւր գրասեղանի վերայ:

Գանձասարի եկեղեցոյ դրսի պատերը մեծ և փոքր արձանագրութիւնք ունին, որոց մեծ մասը ցարդ վերձանելիք են: Դրանցից այս է երևում, թէ այս և այն անձը այս կամ այն նուէրն է տուել եկեղեցոյն, այս և այն շարժական կամ անշարժ կայքը կտակել նրան: Իսկ եկեղեցոյ շինութեան ընդարձակ արձանագիրը տաճարի ներքին կողմից հիւսիսային պատի վերայ է փո-

¹ Այս տապանագիրը դուրս բերած չեն ո՛չ Շահխաթունեանը և ո՛չ Ջալալեանը: Պ. Ըաֆֆին ընդօրինակել է միմիայն Բաղդասար մետրօպօլիտի արձանագիրը: Ես աւելորդ չը համարեցի բոլորն էլ ընդօրինակել

² Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 24-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 72-ում (15 սեպտեմբերի, էջ 2)

րագրած: Եկեղեցին շինած է Ջալալ Դօլին 1216-1238 թուականներում: Այդ արձանագիրը շատ տեղ եղծուած է այժմ:

Երկու ընդարձակ արձանագրութիւնք կան նաև ժամատան արևելեան պատի վերայ, դրան աջ և ձախ կողմերում¹:

Չը մոռանամ յիշել նաև, որ եկեղեցւոյ գմբէթի մի կողմը 1854-ին² նորոգուած է, և նորոգողներն են ուստայ Մելքոն և ուստայ Կարապետ, որոց անունը խոշոր և կարմիր տառերով գրուած է գմբէթի վերայ:

Գանձասարի վանուց գաւթում կան Աղուանից կաթողիկոսարանը, երկու փոքրիկ և սիրունիկ սենեակներ, ուր դրուած են Աբգար և Վաղարշակ թագաւորների ձիթանկար պատկերները, 8 հատ խաւար խցեր, մի այլ մեծ սենեակ, որոյ լուսամուտները բաց են, կտուրը՝ փչացած, մի այլ մեծ սենեակ, որ մի ժամանակ ուսումնարան էր, իսկ այժմ՝ ախոռատուն:

Գաւթի հարաւային պատում շինած է գաւթի աւագ դուռը՝ հոյակապ և կամարակապ, մաւրիտանական ճաշակով: Դրան կամարի տակ այժմ խոտ է դարստուած: Այդ դրան աջ կողմում՝ պարսպից դուրս, կայ վանքի հնձա՞նը արդեօք, թէ՞ մառանը: Դա էլ այժմ յարդանոց է: Բացի կաթողիկոսարանի մի սենեակից, ուր սրբ. Սագինեանցը գետեղուէց, Գանձասարում բնակութեան համար ոչ մի այլ սենեակ չը կայ: Ուստի սրբազան առաջնորդի մարդիկն ևս ինձ նման ստիպուած էին բաց երկնքի տակ ննջել, իսկ անձրևային եղանակներումը այլ և այլ չուլ ու փալասներից ու ցախ ու ցուքերից մեզ համար խուղ ու վրան կազմել: Անձրևի էլ յաճախակի էինք հանդիպում: Ողջ վանքում նստելու մի աթոռ չկայ, ո՛չ ճաշելու սեղան, ո՛չ ննջելու մահճակալ: Ամէն բան ինքներս էինք շինում մի կերպով: Դրա վերայ աւելացրէք նախ վերջին աստիճանի անմաքրութիւնը, ևս և բազմաթիւ մոծակները (որոնք թէ՛ ցերեկը և թէ՛ մանաւանդ գիշերները անդադար կծոտում և խայթում են մեզ), և դուք այն ժամանակ մի գաղափար կը կազմէք, թէ մենք ի՞նչ հալի ենք եղել 7-8 օր Գանձասարում: Բարեբախտաբար, ես շուտ-շուտ հեռանում էի վանքից դէպի գիւղերն ու շրջակայ աւերակները: Թէ ինչի՞ց է յառաջանում այդ պատուական տեղի և օղի մէջ այդ անպիտան մոծակը, ես չը գիտեմ: Միայն հաւանական է, որ նա գոյանում է կա՛մ վանքի շրջակայ բոյսերից և կա՛մ վերջին ծայր անմաքրութիւնից և կեղտոտութիւնից, որով լիքն է վանքի

¹ Գանձասարի եկեղեցւոյն թէ՛ ներսի և թէ՛ դրսի պատերի վերայ փորագրուած բոլոր արձանագրութիւնքը մեծ բարեխղճութեամբ դուրս է բերած Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեան (տե՛ս Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ. Հաստր Բ, էր. 371-377, Էջմիածին, 1842)

² Ուստայ Մելքոնի թողած հիշատակագրութեան թվականն է 1851 թ. (ծանթ. խմբ.)

գաւիթը թե՛ դրսից և թե՛ ներսից: Գանձասար գիւղում, որ վանքից հազիւ երկու վերստ հեռու կը լինի և աւելի ցածր է, մոծակ ամեննին չը կայ:

Վանքի այժմեան վանահայրն է Շիրակի մի ժամանակուայ հերոս Ստեփան վարդապետ Շիրակունին: Նա ստանում է տարեկան 120 ռ. ռոճիկ: Ունի երկու ծառայ և մի նորատի տնտեսուհի... Վարդապետն ինձ ասաւ, որ ստացած ռոճկով հազիւ ծառաներին և տնտեսին բաւականութիւն է տալիս: Վանքն ուրիշ եկամուտ չունի: Ուրիշները դրան հակառակն էին պնդում: Այդ ամէնը ես թողնում եմ ստուգել, ում արժանի է: Իմ կողմից այսքանը միայն կասեմ, որ կոնսիստորիայից Շիրակունուն տրուած ժապաւիսեալ մատենում ոչ մի տող գրուած չէր, ո՛չ մուտք և ո՛չ ծախք: Վանքը ջուր էլ չունի: Եւ մօտակայ աղբիւրից ջուր բերելու համար, ինչպէս չափեց և հաշուեց Շուշուց բերուած վարպետը, հարկաւոր է առնուազն վեց հարիւր ռուբլի: Բայց եթէ այս հոչակաւոր վանքն այսպիսի թշուառ դրութեան մէջ պիտի մնայ, էլ ի՞նչ հարկ կայ նորից փող մսխել և ջուր բերել: Ինչպէս հաղորդած էի խմբագրութեանդ, վանքի աղբիւրի ծախսն իւր վերայ է ստանձնել բագուաբնակ պ. Ղազարոս Մալենցեանը:

Սրբազան Սագինեանցի անընդմիջական հսկողութեամբ եկեղեցւոյ և՛ ներսը, և՛ փառաւոր ու շքեղ սեղանի անօթները, և՛ աշտանակները բաւականին մաքրուեցան, պատերի խոտն ու ու մամուռները քաղուեցան: Կարգադրուեցաւ գէթ շաղախով ծածկել առժամանակ կտուրի այն տեղերը, որոնցից անձրևի ժամանակ ծորած ու կաթած ջրի կաթիլները հետզհետէ փչացնում են տաճարի շքեղ սիւները և պատերի մեծ մասը: Այնպէս որ յորդ անձրևի ժամանակ Գանձասարի վանքում սագերն ու բաղերը կարող են համարձակ լող տալ:

Շուշուց երկաթեայ թելեր բերուեցաւ պատուհանների ցանցեր շինելու համար: Այդպիսով առաջն առնուեցաւ այն ապականութեան, որոյ մէջ թաղուած է Գանձասարի տաճարը, որոյ բեմը, գրքակալները, շարական ու ժամագրքերը ծեփուած էին թռչնոց ծրտերով: Եւ այդ ամէնը տեսնելու համար վանահայրը շատ աչքաբաց է իւր անձի և իւր օգտի համար և առաւել լքան անհամեմատ և յանդուգն:

Նա ինձ քանի-քանիցս թախանձեց, որ լրագրի միջոցաւ ռեկլամ անեմ իւր մասին, որպէսզի հոգևոր բարձրագոյն իշխանութիւնը նրան կա՛մ իւր հայրենիքը՝ Շիրակ ուղարկէ, կա՛մ Ատրպատականի առաջնորդ նշանակէ: Երբ ես ասացի, որ նա վարդապետ գոլով կարող չէ հաստատուն առաջնորդի

պաշտօն վարել, Շիրակունին յայտնեց, որ ինքը «բարեհաճ» է և եպիսկոպոս դառնալ: Եւ դրա համար արդէն մտածած է...¹:

Գանձասարայ վանքն ունի 23 հատ արծաթեայ, երբեմն ոսկեզօծ, ականակուռ խաչեր, ս. մասանց աջեր և սկիհներ, 48 հատ թագ, շուրջառ, զգեստ, բուրվառ, կանթեղ և մեռոնի տուփ, 173 կտոր պղնձեղէն ամաններ, 22 կտոր երկաթեղէնք, 28 կտոր շորեղէնք (մեծ մասը հնտտի ու ցնցոտի), 2 էջ, 1 հորթ, 1 փեթակ, 42 կտոր խեցեղէնք և 48 կտոր գրեանք, որոց մի մասը ձեռագրեր են: Ահա այդ ձեռագրերի ցուցակը, որ ես կազմեցի օգնականութեամբ սրբազան Սագինեանցին.

ա) Գիրք եպիսկոպոս ձեռնադրութեան (թղթեայ).

բ) Գիրք եպիսկոպոս ձեռնադրութեան և Միւռօն օրհնութեան, թղթեայ: Դրա մէջ յիշուած են ս. միւռօնի նիւթերի (ծաղկանց) անուններն ու քանակութիւնը.

գ) Նարեկ, թղթեայ. սկզբից և վերջից պակաս.

դ) Դիոնիսիոս գիրք, մագաղաթեայ.

ե) Աւետարան, թղթեայ.

զ) Գործք Առաքելոց, մագաղաթեայ և ընտիր գրուած: Վերջերից պակաս.

է) Յովհաննու Ոսկեբերանի մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի, մագաղաթեայ.

ը) Աղօթագիրք, մագաղաթեայ. ՌՃԼԹ (1690) թուին գրուած: Բովանդակութիւնը մի հաւաքածոյ է Նարեկից, սաղմոսից և ուրիշ այլ և այլ կրօնական գրքերից.

թ) Սրբոյ Հօրն մերոյ տեառն Ներսիսի արքեպիսկոպոսի Տարսօնոյ մեկնութիւն ԺԲ (երկոտասան) մարգարէից, մագաղաթեայ.

ժ) Գանձարան (այսինքն՝ տաղարան կամ երգարան), ՌՃԷ (1658), մագաղաթեայ.

ժա) Յօհան Որոտնեցի՝ մեկնութիւն Աւետարանին ըստ Մատթէոսի, մագաղաթեայ.

ժբ) Նոր Կտակարան, մագաղաթեայ, որ «նորոգեցաւ մասամբ Ազարիա երիցու Ռ-երորդի, Ճ-երորդի. Ժ-երորդի. Գ-երորդի, այսինքն՝ ՌՃԺԳ (1664).

ժգ) Նոր կտակարան, յամի հազար հարիւր երորդի եօթանասուներորդի (1170) ի թագաւորութեան Լևոնի, մագաղաթեայ.

¹ Այստեղ պայտարովում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 25-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 73-ում (19 սեպտեմբերի, էջ 2-3)

ժդ) Քարոզգիրք, թղթեայ: Սրա յիշատակարանից երևում է, որ յամին 1822՝ յուլիս ամսումը, Եփրեմ կաթողիկոսը, հանդերձ «մեծամեծ եպիսկոպոսք և բազմահոյլ միաբանութեամբք», եկել է Գանձասար և 7 օր մնալով՝ մեկնել է Թիֆլիս:

ժե) Բառարան, ՌՃԺԴ (1665) «ի Հայրապետութեան տեառն Յակոբայ Սրբազան կաթողիկոսի և ի թագաւորութեան պարսից Շահաբասայ», մագաղաթեայ:

ժզ) Ներածութիւն Կորփիւրի, մագաղաթեայ:

ժէ) Գիրք քահանայ ձեռնադրութեան, մագաղաթեայ:

ժը) Քարոզգիրք, թղթեայ:

ժթ) Սարգիս Շնորհալի, Ճառընտիրք, թղթեայ, վերջերից պակաս է:

ի) Գիրք առաքինութեանց և մոլութեանց, ՌՄԾ (1801), մագաղաթեայ:

իա) Աւետարան, ՌՃԱ (1652), թղթեայ:

իբ) Աւետարան, ՌԻ (1571), թղթեայ:

իգ) Աւետարան, ՌՃԶ (1667), թղթեայ:

իդ) Աւետարան, թղթեայ:

իե) Յանկ աստուածաշնչոյ, թղթեայ:

իզ) Կանոնագիրք, մագաղաթեայ: Այս գրքի կողքին Բաղդասար մետրոպոլիտի ձեռքով յամին 1831 մարտի 21-ին գրած է. «ի Քուրակ գետոյն մինչև ի Դիզակ եօթանասուն և եօթն եկեղեցիք են, բայց տասնևեօթն ամայի է: Այլ և հարիւր յիսուն Հայոց գիւղք թէ՛ մեծ և թէ՛ փոքր՝ չորս հազար տունք, սակաւ աւելի պակաս. ութսուն քահանայք»:

իէ) Աւետարան, մագաղաթեայ, փոքրադիր:

իը) Աւետարան, մագաղաթեայ և փոքրադիր:

իթ) Աւետարան, մագաղաթեայ և փոքրադիր, գեղեցիկ տառերով և պատկերներով. «եղև յաւարտ սուրբ աւետարանիս ի յերկիրս Գեանջու. ի գեօղն Քարհատ, ի թագաւորութեան Շահաբասու Փոքրու» ՌՃԴ (1655):

լ) Աւետարան մագաղաթեայ և փոքրադիր, միննոյն գեղեցիկ նկարն ու գրութիւնը, ՌՃԷ (1658):

լա) Գիրք պիտոյից, ՌՃԶԳ (1724), մագաղաթեայ:

Գանձասարի վանքի դեմուդէմն են, հարաւարևելեան կողմից՝ Խաչէնագետի աջ ափում, Թարխանայ բերդը՝ քառակողմաբար և ժայռուտ մի լեռ, որոյ գագաթին կան, որպէս ասացին, ջրահորեր, կարասներ, տան և պարսպի աւերակներ: Թարխանայի հանդէպ՝ վանքի հարաւարևմտեան կողմից՝ Խա-

չէնագետի ձախ ափումը կանգնած է մի այլ սուր, կոնաձև և ժայռուտ ու բարձր գագաթ: Դա էլ Խոխանայ բերդն է: Խաչէնի բերդերից ես վճռել եմ միմիայն Կաչադակաբերդի վերայ բարձրանալ, ուստի Թարխանայի և Խոխանայի մասին իմ կողմից ոչինչ չունիմ ասելիք:

Խոխանայ բերդի արևելեան ստորոտը՝ Խաչէնագետի ձախ ափումը, կայ այսպէս անուանեալ Պառուսաձոր, ուր, ըստ ասութեան որսկանաց (ինձ առաջնորդողները միշտ որսկաններն էին լինում, որովհետև դրանք միայն գիտեն Արցախու լեռների մէջ եղած աւերակաց տեղերը և հէնց դրանք միայն կարող են անսխալ առաջնորդել և որևէ ճանապարհորդի), կայ և մի կիսականգուն եկեղեցի՝ հանդերձ արձանագրութեամբ¹: Այդ եկեղեցին տեսնելու առիթը ես չունեցայ:

Դրա փոխարեն ես տեսայ, այսպէս անուանեալ Ջալալ իշխանի «Դարպասները»: Դոքա գտնվում են Խաչէնագետի աջ ափին՝ Թարխանայ ամրոցի ճիշտ հիւսիսարևելեան ստորոտը: «Դարպաս» կոչուած շինութիւնքը միմեանցից հազիւ 200 սաժէն հեռաւորութիւն ունին և են թուով երեք, երեքն էլ քարուքանդ եղած: Տակաւին կանգուն են միմիայն պատերի, պարսպների և կամարների մի քանի մասերը: Ուշիուշով քննելով դրանց ձևը և համեմատելով Արցախի եկեղեցական շինութեանց հետ, չը գտնելով ոչինչ արձանագրութիւն և ոչ էլ պատմական որևէ հաստատ տեղեկութիւն, գիտենալով, որ Խամսայի մելիքներն իրանց բնակութեան տեղ ընտրում էին լեռների ոչ թէ ստորոտները, այլ նրանց կատարները, ես հակամէտ եմ կարծելու, որ «դարպաս» կոչուած շինութիւնքն աչ այլ ինչ են, եթէ ոչ երեք հատ փոքրիկ և պարսպապատ եկեղեցիք կամ մատուռներ: Իսկ թէ ի՞նչ պատճառաւ մեր նախնիք երեք եկեղեցի կամ մատուռ հէնց միմեանց կշտին կը շինէին, դա զարմացք չէ և ոչ էլ նոր բան: Արցախի վանօրէից, եկեղեցաց մեծ մասը բաղկացած է միմեանց կշտին եղած մի քանի հատ վանքերից և եկեղեցիներից: Այդպէս է ս. Եղիշէ առաքեալի վանքը²:

Այդպէս են և Յակոբայ վանքը, Հաւապտուկը, որոյ մասին իսկոյն կը խօսեմ: Իսկ եթէ ընդունենք, որ «դարպաս» կոչուած շինութիւնքը սոսկ մատուռ-

¹ Այդ եկեղեցոյ արձանագրութիւնը Շահխաթունեանն արդէն դուրս է բերած իւր գրքում (եր. 379): Եկեղեցին շինուած է 1181 ազգային թուականին

² Այդ վանքի, որ շինուած է յամին 1244 յանուն ս. Եղիշէ առաքելոյն (առաջին աշակերտի ս. Թադէոսի 70 թուականին Աղուանքում նահատակուած), եկեղեցաց մինի նորոգման և ժամատան շինութեան (յամին 1317) արձանագրութիւնքը Շահխաթունեանը դուրս է բերած իւր «Ստորագրութիւնում» (եր. 379)

ներ են, այն ժամանակ այլևս ոչինչ կասկած չի մնում, որ «դարպասներն» մարդկանց բնակարան չեն եղել, այլ յուրօրինակ քնարան-գերեզման:

Մի պարագայ ևս: «Դարպասների» չորս կողմը և շրջակայքը լիքն են քանդակագործ, գետնատարած խաչերով, որոց մինի վերայ ես կարողացայ միմիայն հետևեալ բառերն կարդալ:

Թուին ՉՕԲ (1303), ես... որդի...:

Այս խաչաքարը բարձրացնելով՝ ես նրան պահել տուի, այսպէս անուանեալ «Դարպասի աղբիւրի» ականցի մօտ: Ինքը՝ այդ աղբիւրը, շատ ջինջ է և սաստիկ սառն: Այնպէս որ խմելիս մարդու ատամները կարծես փշրվում են: Հարկաւոր եմ համարում յայտնել, որ «Դարպասներին», Հաւապտուկին և ս. Յակոբայ վանքին հէնց միննոյն այդ օրն այցելելիս ինձ ուղեկցում էր Արցախու թեմի վանական կալուածոց կառավարիչ պր. Աղէքսանդր Յովհաննիսեանցը, որ սիրայօժար կերպով ինձ հետ բաժանում էր ոչ միայն ճանապարհների ամենատեսակ նեղութիւնքը, այլև մեծապէս օգնում էր ինձ արձանագրութիւնքը կարդալում¹:

Թարխանայի ճիշտ հիւսիսային կողմը՝ Դարպասներից բաւականին բարձր, կայ մի լեռ, որոյ գագաթը սահմանագլուխ է Գանձասարի վանքի և կալուածատէր Ջալալեանների կալուածոց: Լեռը, ինչպէս Արցախի բոլոր լեռները, ստորոտիցը սկսեալ մինչև գագաթ ծածկուած է թաւ և խիտ անտառով, ուր հինաւուրց ահագին ծառեր խիստ շատ կան: Ահաւասիկ հէնց այդ լեռան կատարն է, որ շրջակայ բնակիչներից կոչվում է Հաւապտուկ: Բառ, որ Արցախի լեզուով կը նշանակէ հաւի կատար: Հաւապտուկը բաղկացած է երկու կանգուն եկեղեցիներից, որոց շրջակայքը մի ահագին գերեզմանոց է: Գերեզմանների քարերը կիսից աւելի թաղուած են գետնի մէջ: Հետևաբար նրանց վրայի արձանագրութիւնքն անվերձանելի են միանգամայն: Իսկ վերձանելի մասերիցը ոչինչ իմաստ չէ դուրս գալիս: Մեր բախտից եկեղեցւոյ պատերի քարերից մինի վրայ կար մի անեղծ արձանագրութիւն.

Ես Յօհան ատաջնորդ սուրբ ուխտիս շինեցի զեկեղեցիքս և կարգեցի Բ (2) աւր պատարագ..., տէր Գրիգորի... ի տարւոջն, կատարիչք գրոյս աւրհնին յաստուածոյ, ամէն:

¹ Այստեղ պայտարվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 26-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 74-ում (22 սեպտեմբերի, էջ 2-3)

Եկեղեցւոյ դրան՝ կիսից աւելին գետնի մէջ թաղուած ճակատի վրայ գտանք հետևեալ արձանագրութիւնը.

Թուին ՌՅԲ՝ էր, յիշխանութեան Հասանայ որդւոյն Վախտանկայ և ամուսնս (յ) նորա Գրիգորին և Գէորգ եղբարորդի (եղբորորդի) և այլ միաբանքս շինեցաք զեկեղեցիքս ի փրկութիւն հոգւոց մերոց և յի...տակ (յիշատակ) ... դաց (ծնողա՞ց) մերոց... որք կարդայք... (անվերծանելի)»²:

Փորելով և փորփրելով գետնաթաւալ քարերը՝ գտանք և մի քանի այլ քարեր, որոց վրայ կարդացինք.

ա) *Ես Կամսարական գնեցի զխաչս... Գրիգորի որդի...*

բ) *Յանուն աստուծոյ ես՝ Աթանաս, որ զԳօգին երկիրն գնեցի ի Հայոց պտո... հայր... միաբանքս տվին ի տարումն Դ (4) ար պատարագ Նոր կիրակէին... որ հոգայ եկեղեցւոյս ... հանէ ՅԺԸ (318) հայրապետացն նզոված է... մեռելոք...*

Հաւապտուկի լերան արևելահարաւային կողերովն ուստոսումամբ, սայթաքմամբ, ընկնելով և ելնելով՝ վերջապէս մենք իջանք նրա ստորոտը: Անցանք ուրիշ լեռնակներ և ձորեր, Գառնաքար (8 տուն) գիւղը և ուր ուրեմն սկսեցինք դէպի սուրբ Յակոբայ վանքը բարձրանալ՝ նորանոր լեռների լանջերն ու կատարները քերելով: Հաւապտուկից մինչև ս. Յակոբ երեք ժամուայ ճանապարհ է:

Յակոբայ վանքը, ինչպէս Արցախու վանօրէից մեծագոյն մասը, շինուած է մի բարձր լերան դուրան գագաթին: Նա բաղկացած է կրկին և մթին պարսպապատ եկեղեցիներից, որոնք դեռ կանգուն են, թէև շատ խարխուլ կերպով: Եկեղեցիներից մինը, փոխանակ ժամատան, ունի միջակ տարածութեամբ մի սրահ: Պարիսպն ունի երկու հանդիպակաց դռներ՝ արևելեան և արևմտեան կողմերից: Վերջի դուռը փառաւոր, կամարակապ և մարիտանական ճաշակով շինուած է: Այս վանքի եկեղեցեաց շինութիւնքը շատ հասարակ են և մեծաւ մասամբ անտաշ քարերից կերտած: Քանդակագործ խաչերն էլ այնքան գեղեցիկ չեն: Վանքն ունի մառանաստուն, ախոռ, նկուղ-

¹ Միսայ է, պետք է լինի ՌՁԲ(1233) (ծանոթ. խմբ.)

² Հաւապտուկի եկեղեցւոյ արձանագրութիւններից միմիայն այս մինն ընդօրինակել է սրբ. Շահխաթունեանը (տե՛ս էր. 378), այն ևս կիսատ, մանաւանդ վերջերումը (Շանոթ. խմբ.) Հարկ է նշել, որ Շահխաթունկյանից հետո Հայկունին երկրորդն էր, ով փորձել էր վերծանել սույն արձանագրությունը: Ավելի ուշ վիմագրին անդրադարձել են նաև Լեոն (Հինգ օր. Ճանապարհի մտքեր ու տպաւորութիւններ, «Մուրճ», 1889, էջ 233), Մակարեայիս. Բարխուդարյանցը (Արցախ, Բագու, 1895, էջ 182), Գ. Հովսէփյանը (I, էջ 29), Հ. Օրբէլին (Գանձասարայ և Հաւոցպտկոյ արձանագրութիւնք, ժողովեաց եւ ի լոյս ածելոյ պատրաստեաց Յովսէփ Օրբէլի, Պետրոգրադ, 1919, էջ 37)

ներ և երկու կոկիկ ու մաքուր սենեակներ վերնայարկում: Եկեղեցիքը միանգամայն գուրկ են որևէ զարդից ու անօթից: Մեղանի տակ ունի մի ստորերկրեայ մռայլ մատուռ: Ինչպես երևում է շիրիմների տապանագրերիցը, գալթումը թաղուած են Վարդան և Մելիքսեդեկ անունով արեղայք, իսկ սրահումը մի կաթողիկոս, որոյ տապանագիրն է.

Այս է հանգիստ տէր Յովհաննէս կաթողիկոսի Աղուանից, թվ. 2810 (1470):

Կայ և մի այլ կաթողիկոսի շիրիմ, բայց տապանագիրը բոլորովին և ամբողջապէս մաշուած է:

Եկեղեցւոյ արձանագրութիւնքն այժմ խիստ դժուար վերծանելի են: Մենք շտապում էինք, ուստիև արտագրելու ժամանակ չը կար¹:

Յակոբայ վանքի վանահայրն է մի հինաւուրց ծերունի և այրի քահանայ տէր Գասպար Տէր-Գասպարեանցը: Սա ոչինչ ռոճիկ չունի, այլ միմիայն վանական մի ջրաղացի, որ հեռաւոր Քօլատակ գետի վերայ է շինած, եկամուտը՝ տարին մի քանի տոպրակ ալիւր:

Ի շնորհիւ իւր հեռաւորութեան, առանձնակի դիրքին, մի առանձին համբաւ չունենալուն՝ Յակոբայ վանքը չունի և՛ այցելողներ, և՛ ուխտաւորներ: Ուրեմն այդ կողմից նա եկամուտ չունի: Սակայն, չը նայելով այդ ամենին, թէ՛ ծերունի վանահայրը լաւ է ապրում և թէ՛ այցելուներին լաւ հիւրասիրում: Պատճառը. նա մշակել է լաւ այգի և բանջարանոց, պահում է հաւեր և ձտեր, իւր ձեռքով քամում է խաղողից գինի: Եւ իսէ՛ դձ ծերունի, այդ ամենը յառաջացնելու և ոռոգելու համար ստիպուած է շաբթիւնը մի քանի անգամ վանքի թշուառ աղբիւրի ճանապարհները դրստել, մաքրել, կոկել:

Մենք ծերունու հետ զննեցինք այդ աղբիւրի ճանապարհները և հաշուեցինք, որ երեսուն ռուբլիով կարելի է այնքան կոկել, որ ջուրը մի քանի տարի անարգել կերպով հոսէ վանքի գաւիթը և այնտեղից այգին ու բանջարանոցները: Գանձասար վերադառնալիս այդ բանը ես յայտնեցի սրբ. Սագինեանցին: Նա խոստացաւ պատուիրել Շուշուայ դպրանոցի հոգաբարձութեանը, որոյ իրաւասութեան տակն են գտնվում Արցախի բոլոր վանօրէից կառավարութիւնը, որ սա անպատճառ հոգայ ս. Յակոբայ վանքի աղբիւրի գէթ յիշեալ չնչին ծախքը:

¹ Այդ արձանագրութիւններից միմիայն մինը՝ եկեղեցաց մինի վերստին նորոգմանը յաւին 1212, Շահխաթունեանն ընդօրինակել է (եր. 278)

Դա ամենակարևորն է նախ ծերունի և անտոճիկ վանահոր աշխատանքը թեթևացնելու, այգու և բանջարանոցների ապագան ապահովելու համար: Չէ՞ որ այդ այգին ու բանջարանոցը վանահայրը իւր հետ գերեզման տանելու չէ, այլ վանքին է թողնելու¹:

Աղբիւրն այժմեան նման անխնամ թողնելով՝ մի օր վերջապէս ջուրը կը կորչի, և նորից գտնելու համար աւելի մեծ ծախք կը պահանջէ: Դրա կենդանի օրինակն այսօր մենք տեսնում ենք Գանձասարի աղբիւրի նկատմամբ, որոյ նորոգութեան համար, ինչպէս յիշել եմ արդէն, հարկաւոր է վեց հարիւր ռուբլի գումար, որովհետև նախկին ճանապարհն ի շնորհս Շիրակունու նման մարդիկ, միանգամայն անարժանութեամբ, վանահայր դառնալով Գանձասարի նման մեծահոշակ վանքումը, գիշեր և ցերեկ զբաղված են նրանով, որ այն պատուական և պատմական շինութիւնքը միանգամայն բարձիթողի առնեն, նրան ամենատեսակ ապականութեամբ և զազրութեամբ լեցնեն, բարձրագոյն հոգևոր իշխանութեան կողմից իրանց տրուած ժապաւինեալ մատենումը մի կօպէկ անգամ մուտք չը գրելով՝ որպէսզի... մի օր եպիսկոսպոս և առաջնորդ դառնան...²:

Ս. Յակոբայ վանքի հանդէպ՝ հազիւ նրանից 5 վերստ հեռի, կանգնած է Կաչաղակաբերդը, որին տեղացիք Սաղսաղան դալա են կոչում: Վանքում պատահող մի քօլատակից պարոն ինձ հաւատացնում է, որ Սաղսաղանի վերայ բարձրանալու թէև դժուարին և ուղղաձիգ, սակայն ամենակարճ ճանապարհը Քօլատակի ճանապարհն է Խնձրիստանի համեմատութեամբ: Եւ քօլատակցի Չաքենց Աբրահամ որսկանը միայն կարող է ինձ առաջնորդել դէպի Մելիք-Ջալալեանների ամրոցը:

Ուրախութիւնիցս սիրտս թրթռում է: Ուզում եմ հէնց այժմ ճամփայ ընկնել դէպի Քօլատակ գիւղը, գտնել որսկան Աբրահամին և բարձրանալ Կաչաղակաբերդ, սակայն օրը շատ տարածամ է... Ես սաստիկ յոգնած եմ, ձիս քրտինքի մէջ խաշվում է: Յակոբայ վանքում գիշերել կարող չեմ, որովհետև հետևեալ առաւօտը պէտք է Խօթայ վանք գնանք, դրա համար հարկաւոր կարգադրութիւնք արած-պրծած ենք արդէն: Այս գիշեր պէտք է որ Շուշուց անպատճառ Գանձասար հասնի իմ բարեկամ Համագասպ քահանայ Տէր-

¹ Ս, Յակոբայ վանքի յիշեալ այգին, հիւրասենեակները, աղբիւրները և վանք տանող ճանապարհն առաջին անգամ տնկել և հարթել է այդ վանքի նախկին վանահայրերից մինը՝ Աբրահամ վարդապետ Քամալեանցը

² Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 27-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 75-ում (26 սեպտեմբերի, էջ 1-2)

Աւետիքեանցը, և մենք պ. Աղէքսանդր Յովհաննիսեանցի հետ երեքով միասին Խօթայ վանքն ենք գնալու:

Վճռեցինք յետ դառնալ: Գիշերուայ ժամը 11-ին հասանք կրկին Գանձասար և մտանք մեր ցախձածուկ վրանի տակ՝ միանգամայն անձնատուր լինելով անգութ մոծակներին: Այստեղ ես տեսայ, որ սրբ. Սագինեանցն իրան համար միրչաքտան էր շինել տուած և այդպիսով իւր մարմինը մոծակների և բռռերի ջիրիթից ազատած: Կամեցայ մի այդպիսի անկողին ևս ինձ համար պատրաստել: Հարցրի մեծապատիւ գրպանիցս, նա ինձ իրաւունք չը տուեց: Հնազանդեցի և առանց շորերս հանելու վեր ընկայ հանգստանալու:

Թող աստուած հանգստութիւն համարէ:

Հետևեալ առաւօտը՝ ժամը 10-ին, մենք ճանապարհ ընկանք դէպի Խօթայ վանք: Եղանակը պարզ չէ, բայց մենք մեր ճանապարհորդութիւնը չենք կարող յետաձգել: Այս անգամ մեզ առաջնորդում է մի յայտնի որսկան և կտրիճ տղամարդ՝ Աղաջանը: Մեր ճանապարհը, ինչպէս միշտ, ընթանում է ծառաշատ լեռների երբեմն ստորոտովը, երբեմն կատարներովը և ամենից յաճախ լանջերովը: Մինչև հիմա ման եկած ճանապարհներիցս ամենից վատն է սա: Ընդ նմին քաշաթուխալ կոչուած մշուշը հետզհետէ մեզ պաշարում է: Բացի նեղ արահետից՝ ոչինչ չենք տեսնում: Երևում է, որ նախորդ գիշերն առատ անձրև է եկել այս կողմի ծմակներում: Ցէխը թարմ է, և մեր ձիանքը անդադար քնթահարում և սլկվում են: Իջնում ենք ձիերից և ոտով գնում, յոգնում և էլի ձի հեծնում: Սկսեցին որոտմունք, փայլատակմունք, անձրև, որ շոռալով թափվում է երկնքից: Բարեբախտաբար, անտառը խիտ է, ծառերը՝ սաղարթալից, անձրևը շատ չէ ներգործում մեզ վերայ:

Հենց որ խմահատի (ցանքսի համար ծմակներում բաց արած տեղերը կոչվում են խմահատ կամ խամահատ) մեջ ենք ընկնում, հովանոցներս ենք պարզում, իսկ երբ նորից անտառը մտնում, հովանոցներս ծալում: Ճղների խտութիւնից հազիւհազ գլխներս ենք կարողանում պահպանել, էլ հովանոց ո՞նց պարզենք: Մինչև ժամը 4-ը Վաղահաս (30 տուն) գիւղը ժամանելներս հոգիներս դուրս եկաւ: Վեր եկանք Վերդի ապօր տանը: Սա հարիւրին մօտիկ, երկու աչքով կոյր մի ծերունի է՝ զարմանալի շատախօս, զուարճախօս և առակախօս: Ծերունու լեզուն շատ բաց արին մանաւանդ մեր օղին, գինին ու նախաճաշը: Գրեթէ ողջ գիշերը մեզ քնանալ չը թողին մի կողմից Վերդի ապօր առակները, միւս կողմից ախոռանման խրճթի լուերը և մեր շուրջը

կապոտած կովերի, հորթերի և ձիերի մշմշոց ու փոնչոցները և աղիքների մաքրագարդութիւնքն...:

Անձրևը կտրելուց անմիջապէս յետոյ մենք գնացիք Վաղահասի հնութիւնքը տեսնելու: Կիսաքանդ եկեղեցի, եպիսկոպոսարան, գրատուն, մատուռներ, մի ընդարձակ հանգստարան, բազմաթիւ և գեղեցիկ խաչարձաններ՝ ահա Վաղահասի հնութիւնքը: Արձանագրութեանց քարերի մեծ մասը պոկած, հանած է, մի մասն էլ՝ թակած-փչացրած: Եւ այդ ամէնը, ասում էին մեզ, արել են իբր Ջալալեան ազգատոհմի վաղուցուայ ներկայացուցիչը, որպէսզի իրանք ձեռք բերեն վանական կալուածքներ¹: Վաղահասի մնացեալ արձանագրութեանց մեծ մասը դուրս է բերած Ջալալեանի գրքում (մասն Բ., եր. 232-233) թէև տեղ-տեղ սխալ, աւելացուցմամբ և պակասեցումամբ, ինչպէս այդ միշտ անելիս են եղել սրբազան ճանապարհորդը կամ իւր ուղեկից շինական տգէտ քահանայք: Սրբազան Ջալալեանի աչքից վրիպած է միայն եպիսկոպոսարանի արձանագրութիւնը, որ է հետևեալը.

Յառաջնորդութեան տեսուն Գրիգորի... էտու շինել զփանա... խուցս և կազմել զգրատունն... եղբարք (թերևս միաբան եղբարք) էտուն Բ. աւուր պատարագ ի տարուջն... պատարագիչն էր մինն Սերոբայ. մին Սևադայ... յանցանաց...:

Կան և մի քանի այլ համառօտ արձանագրութիւնքը, որոնք Ջալալեանի գրքում չը կան նոյնպէս, բայց դոքա աննշան բաներ են, այսինքն՝ այսինչ ոքը այս կամ այն խաչն է «կանգնել» և տարին մի երկու «ժամ» ստացել:

Վաղահասի եկեղեցին և եպիսկոպոսարանը շինած են չորեքտասաներորդ դարու սկզբներում: Վաղահասի եկեղեցին և իւր շուրջ գտնուած, արդէն գետնի տակ թաղուած բազմաթիւ տները մինչ օրս կոչվում են «Մայրամ քաղաք»²:

Մարիամայ քաղաք արդեօ՞ք, թե՛ մայրաքաղաք³:

¹ Ջալալեան Սարգիս եպիսկոպոսի ճանապարհորդութիւնումը ասած է, թէ այդ քարերը պոկած և թակած են տաճիկները: Կարող է պատահել: Բայց Վաղահաս գիւղն այսօր սեպհականութիւն է Ջալալեան ազգատոհմին, այլ ոչ թէ թիւրքերին

² Վաղահասի կշտին է Ականայ բերդը, որ «սեպհական կայան էր իշխանին Ջալալայ, պարսպեալ ամուր և որձատաշ վիմօք, գոր, ըստ յարմարութեան սենեկաց, առաւել պատշաճ է կոչել զսա պալատ արքունի, քան պարիսպ. գոյ ի սմա ընդարձակ ախոռ բազմաթիւ սենեկօք, այժմ աւերակ. հայեցուածօք սօրս անկանի ի բերդն Խոխանայ, յարևելս կոյս և ի գետն Թարթառ» (Ջալալեան, եր. 233)

³ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 28-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 77-ում (3 հոկտեմբերի, էջ 3)

Վաղ առաւօտուն մենք ճամփայ ընկանք դէպի Խօթայ վանքը: Բացի Աղա-
ջանից՝ մեզ առաջնորդում է նաև Վաղահասի Դանիէլ անունով յայտնի
որսորդը: Կէս ժամ չանցած՝ մենք արդէն Թարթառի ափի վրայ ենք կանգ-
նած: Գարնանային մեծամեծ հեղեղները ճանապարհը փչացրել, անհետաց-
րել են: Չանագան պտոյտներ արինք, մի քանի անգամ գետը մտանք, ելանք
այլ և այլ տեղերից, մինչև ծնկներս բաւականին թրջուեցինք, գետամոյն
լինելուց էլ բաւականին երկիւղ կրեցինք և վերջապէս ուղիղ ճամփա գտանք:
Լեռնէ՛ր, լեռնակարկառնէ՛ր, միշտ զառիվայր ու զառիվերներ: Բարեբախ-
տաբար, խիտ անտառի սաղարթալից տերևները թէ՛ մեզ և թէ՛ մեր ձիերին
պատսպարում են արևի տաքութիւնից, որ հետզհետէ սաստկանում է: Թար-
թառը երբեմն հեռանում է մեր տեսութիւնից և երբեմն մօտենում: Երբեմն էլ
մենք նրա միջովն ենք ընթանում: Քօլանիների խրճիթներ յաճախ ենք
պատահում, որոնք ցրուած են Թարթառի գրեթէ ամբողջ երկայնութեամբը:
Եւ որքա՛ն հարուստ բուսականութիւն ունին այդ անպիտանների բնակու-
թեան տեղերը: Փոքր-ինչ առաջ գնալով՝ մենք հանդիպում ենք Թարթառի
ձախ ափին Չափար անունով հին գիւղի աւերակներին, որոց մէջ մի ժամա-
նակ 500 տուն հայ ընտանիք էր կենում, և ցարդ մնում է մի կիսակործան
եկեղեցի: Գիւղն այժմ Ուշաջղ է կոչվում և ունի միայն 4 տուն բնակիչ՝
քօլանիներ:

Ուշաջղից 2 ժամ բարձր՝ Թարթառի աջ ափին, հեռադիտակով մենք տես-
նում ենք Խաթրայ վանքը: Սորան տեսնել, նկարագրել և արձանագրու-
թիւնքը դուրս են բերել Յ. Շահիաթունեանը (եր. 362-364) և Ս. Չալալեանը
(եր. 229-231):

Փոքր-ինչ էլ առաջ գնալով՝ գետի ձախ ափին մենք հանդիպում ենք մի այլ
և մեծ աւերակ տեղի, որ կոչվում է «Շէհէր-երի» քաղաքատեղի: Վերջապէս
հինգուկէս ժամ յետոյ մեր հանդէպ կանգնած է Լաչին-ղայեա ամրոցը, որ մի
թամբաձև և վիթխարի ժայռ է Թարթառի աջ ափին:

Լաչին-ղայեա նշանակում է բազէների ժայռ: Մենք, արդարև, շատ բազէ-
ներ ենք տեսնում ժայռի գագաթն ի վեր ճախրելիս¹:

¹ «Լաչին-ղայեան յարևելս յարաւոյ Մռաւայ լերին, պատեալ սոսկալի ձորովք և վախիւք, շրջապատն
միապաղտղ քար ի վեր բարձրացեալ, ունենալով ի կատարին մեծանիստ տեղի և տափարակ: Ի միոյ
կողմանէ դժուարագնայի ուղի, ընդ որ ելաք և մեր մեծաւ դժուարութեամբ: Չառաջեաւ ամրոցիս անցանէ
յոխորտաձայն յորձանօք գետն Թարթառ, ի հնումն Դրտուեալ: Ի սին խորածորի Ներսէհ Փիլիպպեան
անգթօրէն սպան զՎարազ Տրդատ և գորդի նորին և զՍտեփաննոս եղբօրորդի և Վարազ Տրդատայ
ազգական իւրոյ» (Չալալեան, եր. 222)

Լաչին-դայեայից սկսեալ մինչև Խօթայ վանքը ճանապարհը մի ժամ է: Բայց սա ճանապարհ չէ, այլ կատարեալ դժոխք ու տարտարոս: Ես նրան չեմ ուզում նկարագրել, որպէսզի նորից իմ մէջ չը զարթին այն տագնապալից րոպէները, որ մենք անցուցինք յիշեալ ճանապարհը հատանելիս, ու մեր ամէն մի քայլափոխը մեր կեանքին մահ էր սպառնում: Թէ ինչպէս եղաւ, որ մենք պրծանք, դա միայն աստուծուն է գիտելի: Ճանապարհի դժոխային լինելը բաւականին չէր կարծես, միևնոյն ժամանակ հէնց այդ ճանապարհի վերայ յորդ անձրև ևս մեզ պաշարեց: Այդ էլ բաւական չէր, մենք ստիպուած էինք արջերի երկիւղից, ինչպէս ասում են, շնդոդ տալ, որոց կոտորած տանձենիների և ծիրանիների աշխարհովն է անցնում մեր դժոխուղին:

Ուրեմն հասանք Խօթայ վանք¹:

Մեզ ասած էին, որ Խօթայ վանքն ունի պահապան՝ մի լեհացի կին իւր մեծահասակ, կտրիճ որդիքներով: Այնտեղ կան նաև սենեակներ, կայ կերակուր մեզ և մեր ձիաներին համար: Բայց այդ ամէնը երևակայութիւն է եղել: Բանից դուրս եկավ, որ լեհացի կինը շատ ժամանակից ի վեր թրքացել է և մի թիւրքի հետ պսակուելով՝ մի գիւղ հարս է գնացել: Նոյնն արել են և տիկնոջ որդիքը: Այսպիսով, Խօթայ վանքը մնացել է իսպառ ամայի, թափուր և լքեալ: «Թողեալ լիցի տունդ ձեզ աներակ», իսկոյն յիշեցի ես Սուրբ գրքի դատավճիռը, և մենք երեքով միասին արտասուեցինք: Մա այն վանքն է, որ 1500 հազար դեսետտին կալուածքի տէր է համարվում: Բայց յանուն արդարութեան ես պետք է ասեմ, որ Խօթայ վանքն այսպէս բարձիթողի առնելումը մեղաւոր չէ ո՛չ հոգևոր իշխանութիւնը և ո՛չ էլ Շուշուայ հոգևոր դպրանոցի հոգաբարձութիւնը, ո՛չ նախնիքները և ո՛չ այժմեանները:

Պատճառը հետևեալն է. նախ՝ Խօթայ վանքը մի այնպիսի ձորումն է գտնվում, որոյ թէկուզ լոկ տեսքը, դիրքը, ևս և շրջապատ խոժոռ լեռներն ու քերծերը մրդուս սրտմշուկ են անում: Երկրորդ՝ վանքի հանդէպ հոսող Թարթառը իւր ահեղագոչ մոռունչներով կարծես միշտ սարսափ է ազդում: Երրորդ՝ վանքը միանգամայն հեռի է մշտաբնակ գիւղերից և, ընդհակառակը, նրա չորս կողմի լեռանց մէջ սողում և սողոսկում են քօլանիները և այրմները, մի ցեղ, որ առաջիններից պակաս դաժան ու աւազակաբարոյ չէ:

¹ Մինչև Խօթայ վանքը անտառը թէև սաստիկ խիտ է, բայց ծառները այնքան նշանաւոր չեն: Ս. Եղիշէ առաքեալի և Երից Մանկանց անտառի ծառներից ևս կողմի ծառներից ևս անհամեմատ լաւ են և բազմատեսակ, բայց Խօթայ վանքի անտառը մի առաւելութիւն ունի: Նրանում խիստ շատ են ընկուզենիք, որոնք, սակայն, մեծ քանակութեամբ կտրուած և վաճառահանուած են արդէն: Անտառի մէջ մենք յաճախ հոպոպ թռչունին էինք հանդիպում

Քանի՛-քանի՛ անգամ նրանք կողոպտել են այդ պատուական մենաստանը: Չորրորդ՝ յիշեալ երկոտանի գազաններից՝ քօլանիներից և այրմներից, ոչ նուազ վտանգաւոր են վանահարց համար նաև չորքոտանի գազանները՝ արջեր, գայլեր, նաև վագրեր, որոնք քաղցած ժամանակ միշտ կարող են գրոհ տալ վանքի անասնոց և թռչնոց վերայ: Հինգերորդ՝ վանքի շուրջը ցանքսի յարմար մի բուռ հող անգամ չը կայ, մի ջրաղաց անգամ չը կայ ալիւր աղալու: Իսկ այդ յարմարութեանց առաջն առնելու համար առայժմ փող էլ չը կայ: Ուրեմն ինչո՞վ ապրի վանահայրը:

Այսպէս լինելով՝ ես կարծում եմ, որ Խօթայ վանքը և նրա կալուածքը պահպանելու միակ հնարքն այն է, որ այդտեղ մի գիւղ շինուի, մի ներքին գաղթականութիւն լինի: Դրա համար հոգևոր իշխանութիւնը կարող էր մեծամեծ զիջողութիւններ անել գաղթել ցանկացողներին: Կարող էր նրանց իրաւունք տալ անտառը կտրատել և ցանքսի տեղեր բանալ, որքան որ իրանց հարկաւոր է: Կարող էր գէթ տասը տարի ժամանակաւ գաղթականներին ազատ կացուցանել որևէ հարկից և այլն, և այլն: Եւ այն ժամանակ, ես հաւատացած եմ, գաղթողներ կը լինէին շրջակայ հայ գիւղերից: Ի վերադարձին մենք այս միտքը մի քանի գիւղերում արծարծեցինք:

Գաղթելու ցանկութիւն արտայայտողներ շատերը դուրս եկան:

Հողի պակասութիւնն Արցախի, ինչպէս նաև Անդրկովկասի գրեթէ ամեն մի անկիւնի շինացւոյն ևս այն դրութեան է հասցրել առհասարակ, որ որքան և իցէ ձեռնատու զիջողութիւն ճանճի նման նրանց դէպի Խօթայ վանքի շուրջը կը քշէր:

Երբէք չը պէտք է մոռանալ, որ Խօթայ, ինչպէս և բոլոր վանքերի պահպանութեան և պայծառութեան հետ ամենասերտ և անխզելի կապ ունի նրա ահագին կալուածոց պահպանութիւնն ու պայծառութիւնը ևս: Եթէ այսօր յիշեալ կալուածքի մի մասի դէմ արքունիքն է վէճ բացել, միւսի դէմ՝ խանի աղջիկը, երրորդ մասի ծմակներից գեղարքունեցիք տարէնն աւելի քան հազար գերան են կտրում գողութեամբ և մինչև Նոր Բայազետի ու Երևանի հրապարակների վերայ վաճառահանում, այդ ամէնը նրանից է, որ Խօթայ վանքը իւր կալուածքով տէր չունի, մի անտառապահ անգամ չունի: Ճշմարիտ է, Արցախի վանական կալուածքները կառավարիչներ ունեցել են և այժմ էլ ունին, որ է իմ ուղեկից պ. Աղէքսանդր Յովհաննիսեանցը: Բայց այդ կառավարիչները դպրանոցի հոգաբարձութեան հետ միշտ փոխվում են անդադար, և նրանց ռոճիկն ու միւս միջոցներն այնքան չնչին են, որոցմով

կառավարչական գործն ամեն կողմից և ինքնըստինքեան անհարին է լինում: Սակայն ես խոստացած եմ առանձնապէս խօսել Արցախի վանական կալուածոց մասին: Ուրախ եմ, որ այժմ ես այդ կալուածքը բաւականին լաւ եմ ճանաչում:

Խօթայ վանքի իսկական անունը Դաղի վանք է՝ յանուն Թադէոս առաքելոյ Դաղի աշակերտին, ինչպէս այդ երևում է արձանագրութիւններիցը: Իսկ թէ ինչի՞ ժողովուրդն այդ վանքին Խօթայ վանք է անվանում, ես չը գիտեմ: Բայց կարծում եմ, որ դա առաջացել է շփոթութիւնից մի այլ վանքի՝ Մշահանի հետ, որ գտնվում է Խօթ գիւղի մօտ՝ Թարթառի աջ ափին, մինչդեռ Դաղի վանքը գետի ձախ ափին է շինած (տե՛ս Ճանապարհ. Ջալալեանի, եր. 228)¹:

Դաղի վանքը բաղկացած է 4 եկեղեցիներից, բազմաթիւ սենեակներից, խցերից, ախոռ և մարագներից ու շրջապատ պարսպից, բոլորն էլ կիստով չափ և աւելի քայքայեալ: Եկեղեցիներից ամենից լաւ մնացածը և ամենից հոյակապը, որ, անշուշտ, վերանորոգված պէտք է լինի, շինուած է յանուն ս. Դաղի և Գանձասարի եկեղեցւոյն ճարտարապետութիւնն ունի, թէև սա անսիւն է: Եկեղեցիս ժամատուն չունի, այլ մի ընդարձակ և փառաւոր սինագարդ սրահ, որոյ մէջ մտնողը կզմայլի եկեղեցւոյ դրան քանդակների գեղեցկութեամբն ու նրբութեամբը: Այցելուի զմայլմունքը կը տասապատկի, երբ կը տեսնի զանգակատան մէջ պատն ի վեր կանգնեցրած մի զոյգ ահագին խաչաքարերը, որոնք քանդակագործութեան կատարելատիպ կարելի է համարել: Սրբազան Ջալալեանը ահա ինչ է ասում այս խաչաքարերի մասին. «Թէպէտ քանդակագործութիւն շիրմի Տուտէ որդւոյ եղելոյ ի հանգստարան վանացն Սանահնի գերագանց էր քան զամենայն քանդակագործութիւնս ի շրջակայ վանորայս և ի գերեզմանատունս, սակայն առ սօքօք համարի այն խամաշէն և անարուեստ» (եր. 223):

Շուշիում ինձ հաւաստիացրին, որ երկու անգլիացի ճանապարհորդք մի քանի տարի առաջ 10,000 մանէթով կամեցել են գնել յիշեալ խաչաքարերը, բայց հոգևոր իշխանութիւնը չէ համաձայնել, երևի նրա համար, որ մի օր

¹ Շահխաթունեանն այդ վանքին անուանում է, ժողովրդի բերանից առնելով, Խութայ վանք: Եւ ոչինչ բացատրութիւն չէ տալիս: Մենք մեզ ներում ենք այդ առթիւ մի կարծիք ևս յայտնել: Արցախում խութ բառը շատ սովորական է և նշանակում է լեռ, թումբ, բարձրութիւն: Որովհետև Խօթայ այս վանքը շինուած է բարձր լեռների ստորոտում, բոլոր ճանապարհը դժդհակ լեռների միջովն է գնում, ուստի Խութայ վանք ասելով՝ ժողովուրդը լեռնամիջի վանք չէ՝ ուզում հասկանալ արդեօք: Բայց այս ևս կայ, որ Արցախի բոլոր վանօրայքը խութերի գագաթներին կամ լանջերին և ստորոտներին են շինուած

յիշեալ խաչաքարերը ևս միւս պատմական և պատուական յիշատակարանաց նման վեր ընկնին, փշրուին և կործանին: Մենք, իհարկէ, ոչինչ չէինք ասել խաչաքարերի չը վաճառելու համար, եթէ որ վանքի վրայ հոգ տարուէր և պահպանուէր: Իսկ եթէ նա այս աստիճան անխնամ, անտէր պիտի մնար, աւելի լաւ էր, անգլիացիների առաջարկած գումարը ստացվէր, և դրանով վանքը վերանորոգվէր: Միննոյն ժամանակ հայկական քանդակագործութիւնը մի պարծանք ևս ունենար Լօնդրայի թանգարանումը:

Դադի վանուց եկեղեցիքը զանազան տարիներումն են շինուած: Նրանց վայրի այժմեան արձանագրութեանց թիւը հասնում է տասնվեցերորդ դարու վերջերը: Վանուցս հին և նոր արձանագրութիւնքը մենք թողնում ենք ընթերցողին կարդալ Շահխաթունեանի «Ստորագրութիւնում» (եր. 356-362) և Ջալալեանի «Ճանապարհորդութիւնում» (եր. 222-228):

Միննոյն ժամանակ յարակցում ենք, որ Ջալալեանը, ըստ իւր յատուկ սովորութեան, այստեղ ևս արձանագրութեանց միջից ոչ միայն ամբողջ տողեր է բաց թողնում երբեմն, այլ նաև պարզ ու դիւրավերծանելի բառերը փոփոխում, աղաւաղում:

Այսպէս, Ջալալեանը արձանագրութեանց մինի այս բառերը՝ «սպասք եկեղցույս յոսկո (յոսկոյ) և յարծաթոյ» փոխում է այսպէս՝ «սպասաւորք եկեղցույս»¹:

Մենք մտադիր էինք գիշերը վանքում մնալ և այսպիսով առիթ ունենալ գտնել և փորել այն ձորն ու գուրը, որոյ մէջ, ըստ ասութեան Ապրէս Բէկնազարեանց պատմչին, պէտք է որ պահուած լինէին այլ և այլ ձեռագիր մատեանք, որոց մի մասը միայն գտնուած է Բաղդասար մետրօպօլիտի օրով: Բայց վանքի ամայութիւնը և դրան յարակից անյարմարութիւնքը թէ՛ մեզ, թէ՛ մեր ձիաների համար մեզ ստիպեցին շուտ հեռանալ: Բայց ո՞ւր, ո՞ր կողմը: Ետ դառնալ կարող չենք: Մօտակայ տեղերում ոչ մի գիւղ չը կայ: Եղածներն էլ աւագակաբարոյ քօլանիների աքան-ցաքան խրճիթներն են, որոց մէջ, ի վերայ այսր ամենայնի, բնակութիւն չը կայ: Քօլանիները բոլորն էլ լեռներն (եայլախ) են քաշուել: Պ. Յովհաննիսեանցի խորհրդով վճռեցինք, որ մենք ևս բարձրանանք քօլանիների եայլախը՝ Ղալալչի կոչուած լեռան գագաթը: Այդ տեղը վանքի սեպիականութիւնն է, որպէս և նրա վրայ եղող քօլանիք վանքի հողի վերայ բնակուող ժողովուրդ են:

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 29-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 78-ում (6 հոկտեմբերի, էջ 1-3)

Ժամը 6-ին՝ յետ ճաշու, թողինք Դադի վանքը իւր ծիրանիների, թթենիների և շլորենիների առատ անտառներով, վերջին համբոյր մի ևս առինք նրա սրբութեանց, տեսանք վանքի արևելա հիւսիսային կողմում՝ ծմակի մէջ եղած զոյգ մատուռները և սկսեցինք հետիոտս դէպի Ղալայչի բարձրանալ: Մի ժամ ոտքով, մէկուկէս ժամ էլ ձիով ընթանալով՝ վերջապէս մենք հասանք լեռան գագաթը: Ղալայչիի դուրան գագաթը թարմ կանանչով ծածկուած է, որ ամենայն առատութեամբ վայելում են ձիերի, կովերի, հորթերի, ոչխարի և այծերի երամակներն ու հօտերը: Լեռնագագաթին կան նոյնպէս երկու աղբիւրներ՝ մինը կենդանեաց, միւսը՝ մարդկանց յատկացրած:

Բազմաթիւ գամփոների սոսկալի հաչոցներն ու արշաւանքը քօլանիներին իմաց տուին մեր գալուստը: Մինչև օգնութեան հասնիլը մենք մեծամեծ նեղութիւններ կրեցինք մեր անձն այդ գագանների ձեռքից պաշտպանելու համար: Բանից դուրս եկաւ, որ քօլանիներն այդ եկու օրը հարսանիք ունի, ուստիև շրաջակայ գաւառների քօլանիքն ևս հրաւիրուած էին Ղալայչի: Այսպիսով, մի անգամով տեսանք Թարթառի բոլոր քօլանիներին: Տեսանք և ներկայ եղանք նաև նրանց հարսանեկան հանդիսին: Հետևաբար թող աւելորդ չը համարուի մի քանի խօսք ասել և այդ մասին:

Քօլանիք իրանց ջահիլներին պսակում են 8-12 տարեկան հասակում: Գլխագին տալիս են 10-100 ռուբլի: Հարսանեկան հանդէսները տևում են մի ամբողջ շաբաթ: Առագաստի երեկոյին, երբ ըստ բանաստեղծի՝

«Ե՛ւ գօտու և՛ քողի հետ

Վերանում է ցնորքք սիրուն» (Շիլլերի խօսքերը), հարսի և փեսայի վրանից հրացան են արձակում՝ ի լուր ժողովրդեան: Հետևեալ առաւօտը սաւանը կամ մի կարմիր շոր բերում են՝ ի ցոյց հարսի մօրը:

Պսակուելուց մինչև մի ամիս փեսան իրաւունք չունի աներանց աչքին երևալ, ապա թէ ոչ իսկոյն կսպանեն նրան: Այդ պատճառաւ փեսան գիշերները միայն վրանում է լինում, իսկ ցերեկները նա փախչում է դէպի անտառները կամ այնպիսի տեղեր, ուր աներանց տնից ոչ ոք կարող չէ նրան տեսնել:

Որպէս ասիացի ժողովուրդ՝ քօլանիների կանայք հանդէսների ժամանակ առանձին են նստում: Քօլանիները, ինչպէս և պարսիկ կանայք, իրենց դունչը չեն փաթաթում: Իրանք ևս, Արցախի հայկուհիներից աւելի ազատ են պահում իրանց օտարականների առաջ: Մրանց նման քօլանի կանայք ևս դաժան, դանգոտ են: Գեղեցիկներ չը կան իրանց մէջ: Թէ՛ գեղեցկութեան և

թէ՛ կազմուածքի կողմից առհասարակ թրքուհիք քօլանի կանանց համեմատութեամբ մի-մի հերոսուհիներ են:

Ողջ Արցախում եղող ցեղը բաղկացած է 1500 տնից¹, որ բաժանուած են չորս համայնքի վերայ: Իրանք քաջ են, գող և սաստիկ զինասէր: Մեր զէնքերի հետ ծանոթանալու համար թշուռականները բաւականին պատրօններ փչացրին մեզանից, մանաւանդ երիտասարդները: Իրանք էլ երբեմն ընտիր հրացաններ և ատրճանակներ են պահում: Իսկ հասարակ հրացան և դաշոյն իւրաքանչիւր քօլանի ունի:

Ապրուստը լինում է անսանապահութեամբ և աւարառութեամբ, որը նրանք անում են, ինչպէս նախորդ նամակներիցս մինում նկարագրած եմ, հայերից:

Քօլանիքն իմ աչքում անարգ երևացին ոչ միայն նրա համար, որ սաստիկ գող են, այլ որ անազնիւ գող են (եթէ միայն գողութեան ազնիւն էլ կայ): Նրանք գողութիւն անում են խաբէութեամբ, խարդախութեամբ, շողոքորթութեամբ: Երբ մեր վրանատէրը մի կողմից մեզ սիրաշահում էր, միւսն էր գողանում, թոցնում: Այդպէս չեն մինչև անգամ Արաբիայի բեղուիները, որոնք իրանց հիւրին կողոպտում են, երբ սա արդէն տան շէմից ոտքը դուրս է դրել:

Քօլանիներից տարբեր են այրմները, որ նոյնպէս շիա դաւանութեանն են պատկանում: Այրմները ևս քօլանիների նման զինասէր են, քաջ և ճիշտ նրանց վարած կեանքն են վարում: Միայն թուով սակաւ են, հազիւ 150 տուն կը լինին: Բնակվում են Ռմբոստեան (Ռումբասար) սարի ստորոտներում՝ Լև-դալասի (Լևոնաբերդ) կոչված աւերակների շուրջ:

Թէ՛ քօլանիները և թէ՛ այրմները թէն հայերին կողոպտում են, բայց մի առանձին յարգանք են տածում դէպի նրանց վանօրայքը: Վանահայրերին թալանում, երբեմն նաև սպանանում են, բայց վանքերին «դուրբան» (մատաղ) անում: Այս բանը մենք ինքեանքս փորձով տեսանք: Այդ էր ահաւասիկ պատճառը, որ Դադի վանքի պահպանութիւնը մենք ժամանակաւորապէս յանձնեցինք Մէշէդի Մէրդէն օղլու քօլանիին, որ բոլոր քօլանիների մէջ ամենաազդեցիկ անձն էր:

¹ Այս թիւը պատշաճաւոր դիւանատանից ես առիթ չունեցայ ստուգելու և դնում եմ այստեղ՝ ըստ ցուցման իրանց քօլանիների

Հայկական վանքերին քօլանիք անվանում են «օջախ», որ մահմեդականների համար առհասարակ մի շատ խորհրդաւոր և սրբազան բառ է¹:

Մենք գիշերեցինք վերոյիշեալ Մէշէղի Մէրդէն օղլիի աւագ որդւոյն վրանումը: Մեզ եղած հիւրասիրութիւնն օրինակելի էր: Օրինակելի մաքրութիւն և ճոխութիւն ունէին մեր տանուտիրոջ մեզ առաջարկած անկողինքը՝ բոլորն էլ բեհեզեայ: Թէպէտ եղանակը շատ ցուրտ էր, մեր հանդէպ կանգնած Մռաւ լերան վերայ ձիւնում էր, նոյնիսկ Ղալայչի լերան վերայ մինչև կէսգիշեր կարկտախառն անձրև էր տեղում, վրանի եղեգնեայ պատերից քամին անդադար վսվնգում էր, բայց մենք չը մրսեցինք, որովհետև վրանի մէջ առատ կենդանական ջերմութիւն կար, որտեղ պառկած էինք տէր Համագասպ քահանայն, պ. Յովհաննիսեանցը, տողերիս գրողը, մեր երկու ուղեցոյցները, տանուտէրը, նրա կինը, չորս հոգի՝ տղայ և աղջիկ գաւակները, չորս հատ մատակի ձագեր, երկու հորթուկներ և 8 հատ հաւ: Իսկ վրանի շուրջը դրսի կողմից հանգստանում էին մեր ձիերը և տանուտիրոջ գոմէշ ու մատակները, կովերը, այծ ու ոչխարները: Թէ՛ այսքան մարդկանց և թէ՛ այսքան կենդանեաց միակ գիշերապահներն էին 4 հատ հագին գամփոներ: Կէսգիշերը փոքր-ինչ անցած՝ գամփոները մի ահագին աղմուկ սարքեցին, բայց մինչև նրանց օգնութեան հասնիլը, գայլերը մեր վրանի կշտից մի խոյ տարել և պատառոտել էին:

Այդ երևոյթը, պատմեցին մեզ, լեռներում խիստ յաճախ է պատահում: Այդ դէպքում հարևան շները միշտ չեն կարող օգնել իրանց ընկերներին գայլերի դէմ մղուած պատերազմներումը: Դրա պատճառն այն է, որ քօլանիների, ինչպէս ձմերային խրճիթները, նոյնպէս և ամառնային վրանները միմեանցից շատ հեռի են լինում: Դրա պատճառն այն է, որ, միմեանցից մօտ լինելով, շները միմեանց չը զգոգեն, մի հանգամանք, որոյ համար մարդիկ էլ յաճախ կովում են միմեանց հետ, երբեմն նաև վիրաւորում և սպանանում միմեանց:

Իսկ թէ ինչի՞ քօլանիների ձմերային խրճիթները ևս միմեանցից այնքան հեռի են, պատճառը կարծեօք այն է, որ մեկի արած գողութիւնը միւսը ևս չը տեսնի և աւարին մասնակից չը լինի²:

Գալով քօլանիների վրաններին, ես պէտք է ասեմ, դրանք կիսաբոլորակ ձև ունին: Պատերը եղեգնեայ են, մի արշին բարձրութեամբ, սիւն չը կայ.

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 30-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 79-ում (10 հոկտեմբերի, էջ 2-3)

² Ուշադրութեան արժանի է, որ Տաճկահայաստանի աւագակ քրդերի խրճիթները ևս քօլանիների խրճիթների նման հեռի են միմեանցից

առաստաղի պաշտօն վարում են մատաղատունկ ծառերի ճղները, ամբողջ ծածկոյթը՝ թաղիքեայ. դուռը՝ կապերտից: Այսպես են և Արցախի բոլոր ժողովրդեան վրանները՝ թե՛ հայոց և թե՛ այլազգեաց:

Ամառը եայլախ բարձրացող հայերից իրանց քաջութեան կողմից այս կողմերում շատ հռչակուած են հաթերքցիք: Դոցա եայլախը Աղտապան լեբան վերայ է: Հետևեալ օրը մենք այցելութիւն գործեցինք և դրանց վրանները, որ շինուած են միմեանց մօտ: Ինչպէս միւս հայերի, դրանց ամառային բնակարաններն ևս անմաքուր են և կեղտոտ, ինչպէս և իրանց գիւղերի տները:

Ղալայչի լեբան գագաթից մենք տեսանք Խօթայ վանքի կալուածոց բոլոր սահմանները և վիճելի ու անվիճելի տեղերը:

Տեսանք նոյնպէս Քէշիշէենդ կոչուած գիւղի պատմական աւերակները, որոց վերայ, ասացին, որ շատ արձանագրութիւնք կան: Լսեցինք, որ Խօթայ վանքից բարձր՝ ճիշտ Թարթառի ափին, կայ մի այլ պատմական վանք՝ Բալավանք անունով: Նրանից աւելի բարձր՝ Գեղարքունիքի սահմանումը, գտնվում են նաև Զող կոչուած պատմական աւերակները: Նմանապէս Քեալպաճառ գիւղի կշտին ընդարձակ աւերակներ են եղել: Աւերակ, ամէն կողմ և ամէն տեղ աւերակ...

Մենք այդ ամէնը տեսնելու առիթ չունեցանք, ուստի բաւականացանք բանաստեղծի ձայնովը գէթ մեր ողջոյնն ուղարկել նրանց.

«Ողջո՛յն տուէք մեր հայրենեաց
Կիսակործան տաճարներուն,
Ողջո՛յն տուէք աւերակաց
Արարատեան գաւառներուն»:

Ղալայչի սարից ցածր գալով, ինչպէս ասացի, մենք այցելեցինք և ուրիշ մի քանի եայլախներ և ապա 5 ժամ ընթանալով՝ իջանք նորից Թարթառ գետի հովիտը: Գետն անցանք և Յարութիւնագումեր գիւղի (15 տուն) մէջ դադար տուինք մեր խոնջեալ անդամոց: Յարութիւնագումեր գիւղի մօտն է և Հոռեթաղ գիւղը՝ 5 տուն բնակչօք: Սակայն ընդարձակ աւերակներիցը պարզ երևում է, որ գիւղս ժամանակաւ գիղաքաղաք է եղել: Կիսաքանդ եկեղեցին ցարդ մնում է: Մթնաշաղին Յարութիւնագումերից դուրս գալով՝ մենք կրկին անձրևի բռնուեցանք ծմակի միջին և կրկին թրջուեցանք փառաւորապէս: Չընայած այդ անյաջող պայմանին և մութ գիշերին՝ մենք այցելեցինք Գան-

ձասարին պատկանեալ քարահանքին, որ գտնվում է յիշեալ գիւղից փոքրինչ բարձր: Քարահանքը թուով երկու է և մեծ քանակութեամբ արտադրում է երկանաքարեր: Ողջ Արցախում սա միակ քարահանքն է, որից յիշեալ քարերն են դուրս գալիս և բաւականութիւն տալիս ոչ միայն Արցախի ջրաղացներին, այլ նաև Կովկասին և նոյնիսկ հեռաւոր Պարսկաստանին: Քարահանքը տրուած է կապալով, տարին 300 ռուբլով: Կապալառուն 2 տարուայ կապալադրամը վճարած չէ, որովհետև ինքը Բաթումումն է, բայց նրա մարդիկն անդադար վաճառում են երկանաքարերը և փողը իրանց պարունին հասցնում:

Չը մոռանամ յիշել, որ Ղալայչի լեռան ստորոտում մենք տեսանք տախտակեայ պնակներ և զանազան ամանեղէններ շինող մի գործարան, որոյ նահապետական ձևի մեքենաները ջրով են շուռ գալիս: Գործարանի տէրը մի այրմ է: Պատրաստած ամանները բաւակնին կոկիկ բաներ են: Արցախին տախտակեայ ամաններ մատակարարողն այս գործարանն է:

Գիշերը Գանձասար գիւղում անցկացնելով՝ հետևեալ օրը մենք գնացինք վանքը:

Բայց մինչև վանք բարձրանալներս ես տեսայ Վախթանգ բէկ Ջալալեանին, որ ինձ ցոյց տուեց Բաղդասար մտերօպօլիտի ձեռքով գրուած մի պատմութիւն մէկուկէս թերթի վերայ: Պատմութեան մէջ նոր բան չը կար: Ես այդ ձեռագրից արտագրեցի միայն հետևեալ ցուցակը, թէ Աղուանից երկրում ով և երբ կաթողիկոս է եղել և որ թուում: Ահա այդ ցուցակը.

- 1) Յովհաննէս, որդի Ջալալի, ՊՂ (1441).
- 2) Շմաւօն, որդի Ջալալի, ՋԼ (1481).
- 3) Սարգիս, որդի Չատր մելիքի, ՌԳ (1554).
- 4) Գրիգոր, որդի Մէրաբէկի, ՌԻԳ (1574).
- 5) Դաւիթ, որդի Բաղդասար բէկի, ՌԻԳ (1574). նոյն թուին վախճանել է.
- 6) Յովհաննէս, որդի Մէրաբէկի, ՌԻԴ (1575).
- 7) Յովհաննէս, Գեանջայ եկեղեցին շինող, ՌՁԲ (1633).
- 8) Գրիգոր, եղբորորդի Յովհաննէսի, ՌՃԺԲ (1663).
- 9) Երեմիա, որդի պարոն Բաղդասարի, ՌՃԽԴ (1695).
- 10) Եսայի, որդի Վիլիճան իշխանի, ՌՃԾ (1701).
- 11) Յովհաննէս, որդի Մելիքբէկ իշխանի, ՌՃԾԵ (1706).

12) Սարգիս, որդի Մելիքբեկ իշխանի, ՌՄԽԶ (1797)¹:

Գանձասար գիւղում Գրիգոր քահանայ Լալայեանը խոստացաւ հաւաքել և Թիֆլիս ինձ հասցնել Խաչէնի ժողովրդական առածներ, առակներ և հանելուկներ: Ահա մի քանի հանելուկներ, որ նոյն քահանայից լսեցի:

1) Փայտէ գուշ

Քարէ բրդուշ (ճ). (կամն):

2) Հողէ լուս

Մսէ գիւլլա. (մուկ):

3) Արջը գնաց վրնգվրնգալի,

Ճուտերը յետնէն վսվսալի. (ոստայն):

Լսեցի, որ Եղիա վրադապետ Ջալալեանը, որ այժմ Էջմիածնումն է, մի հարուստ հաւաքածոյ ունի Արցախի ժողովրդական բառերի և ոճ ու դարձուածքների:

Օգոստոսի 6-ին ես և Տէր Համագասպը Գանձասարից դուրս եկանք Կաչաղակաբերդը² բարձրանալու համար:

Հասնելով Քօլատակ գիւղը (25 տուն) և մեզ հետ վեր առնելով Ջաքենց Աբրահամ որսկանին՝ սկսեցինք բարձրանալ լեռն ի վեր: Մենք բարձրանում ենք թէն դժուարին, բայց կարճ, ուղիղ գծերով: Ճանապարհին պատահած թփերն ու փշերը յաճախ կտրատում ենք մեզ հետ վեր առած գործիքներով: Ձիանքը մեզ հետ են, բայց մենք հազիւհազ հեծնում ենք նրանց վերայ: Այսպիսով, չորսուկէս ժամ շարունակ բարձրացանք երբեմն ձիով և երբեմն հետիոտն: Բայց այնուհետև այլևս ոչինչ հնար չը կայ ոչ միայն ձի հեծնելու, այլ մինչև անգամ ձիանքը մեր ետքնի քաշ տալու: Լերան գագաթը՝ իսկական Կաչաղակաբերդը, մի բոլորակ է և պորփիրեայ ուղղաձիգ ժայռ է:

Մեր ուղեցոյցն ասում է, որ մենք պարտաւոր ենք անցնել ժայռի հիւսիսային կողմը, որտեղից միայն հնարաւոր է նրա գագաթը բարձրանալ: Այդպէս էլ արին: Ձիաներս կապոտեցինք կոճղերի վերայ, փորերս կշտացրինք,

¹ Շահխաթունեանը իւր գրքի «Շարակարգութիւն կաթողիկոսացն Աղուանից» (եր. 333-349) դուրս է բերել նմանապէս այս կաթողիկոսաց անուանքը, բայց Շահխաթունեանի և Բաղդասար մետրօպօլիտի ցոյց տուած տարբերութիւն զգալի տարբերութիւն ունին միմեանցից: Այդ ես թողնում եմ հետազօտել պատմագէտներին, միայն ինքս աւելորդ չը համարեցի զետեղել իմ «Ակնարկներում» և մետրօպօլիտի սոյն այս թերի ցուցակն

² Աղուանից երկրի պատմութեանը վերաբերեալ ձեռագիր և ցարդ տպած գրքերումն այս բերդը կոչվում է նաև Հաքախաղազ

գովացուցիչ խմիչք և մրգեղէնք կապոտեցիւնք մեր շալակը, եռանկիւնաձև գաւազաններով պատսպարեցիւնք մեր բագուկները և սկսեցիւնք մեր արկածալից բարձրանալը լեռն ի վեր: Բարձրացանք ճիշտ մէկուկէս ժամումը՝ կէս ժամը հանգստութեանը զոհելով: Կրած նեղութեանցս մասին ոչինչ չեմ ուզում գրել, այլ կանցնեմ ուղղակի Մելիք-Ջալալեանների ամրոցի նկարագրութեանը: Կաշաղակաբերդն ունի ամէն կողմից կիսափուլ պարիսպ, մի քանի փոքր և քառակուսի տների քարուքանդ հիմքեր, մի ջրի աւազան, որոյ կէսն անձրևի ջրով լեցուած է, մի քանի շլորենիք և ահա բոլորը: Սակայն Կաշաղակաբերի տեսքը հիանալի է:

Բերդի արևելեան կողմում բաւականին հեռի և նրանից ցածր, շղթայաձև ձգվում են մի շարք քերձեր, որոնք վերջանում են Հաշաղայա՝ զոյգ ժայռեր կոչված երկփեղկանի կօնուսներով: Հիւսիսային կողմում՝ ձեր ոտքի տակ, երևում է ոչ միայն Շուշին, այլ ամբողջ Վարանդը, Դիզակի մի մասը, իսկ հեռու-հեռու՝ հորիզոնի տակ՝ Ղարադաղի լեռներն Արաքսի աջ ափին:

Հարաւային կողմից երևում է Գանձասարի կաթողիկէն: Արևմուտքում՝ մի կոյտ լեռներից ամէնից բարձրի վերայ, կանգնած է Պտկէսի ս. Գեորգայ վանքը, որին, ափսո՛ւ, ես չը պիտի կարողանամ ի մօտոյ տեսնել, որովհետև մեր ուղեգնացական նախկին պլանը փոխուեցաւ: Մենք Վարանդ պէտք է գնանք ուրիշ ճանապարհով: Կաշաղակաբերդի և Հաշաղայայի մէջտեղ եղած անդնդի մէջ՝ խիտ ծառերի ստուերներում, երևում է Անապատ վանքի կանգուն եկեղեցին, որ, ասում է մեր ուղեցոյցը, շատ հոյակապ պէտք է լինի և լի արձանագրութեամբ: Բայց այդ վանքը տեսնելու համար մենակ պէտք է Կաշաղակաբերդի մինչև ստորոտը իջնենք և Քօլատակի գետն անցնելով՝ ուրիշ ճանապարհով նորից դէպի այդ վանքը բարձրանանք՝ նորանոր անդունդների և ծմակների միջովը մեզ ճանապարհ հարթելով: Սակայն հալու հարաքաթ չը կայ ո՛չ մեր և ո՛չ մեր ձիաների վերայ: Թողնենք Անապատը, մեր սովորութեան համեմատ հրացանների ճարճատիրներով ողջունեցիւնք ու հրաժեշտ տուինք Մելիք-Ջալալեանների ամրոցին ու ցածր իջանք: Մի ժամից յետոյ մենք արդէն լերան ստորոտումն ենք, և Գեղէնի զօրաց նման Քօլատակի գետի ջինջ և ցրտագին ջրի վերայ ընկած՝ խմում ենք, հա խմում, բժշկականութեան և բժիշկների վերայ էլ լաւ ծաղրում: Գետի մէջ լողացող փոքրիկ կարմրախայտերի թիւն անչափ է:

Գանձասար մենք հասանք նոյն օրը՝ գիշերուայ ժամը իննուկիսին: Ես մի անգամ ևս պիւնդ սեղմեցի իմ բարեկամ Համագասպ քահանայի ձեռը, որ իւր

խիզախ բնաւորութեամբ և եղբայրական մտերմութեամբ ինձ զօրավիգ, ընկեր և պաշտպան հանդիսացաւ Արցախում, մանաւանդ նրա դժուարին տեղերում արածս գրեթէ բոլոր ճանապարհորդութեանս ժամանակ¹:

Երկու օր Գանձասարում մնալից յետոյ սրբազան Սազինեանցի հետ ճանապարհ ընկայ դէպի Առջաձոր² գիւղը՝ շինուած մի անդնդախորի ձորի փեշերքին: Ձորի ժայռերումը քարայրներն են երևում, որոնք, ըստ վկայութեան բնակչաց՝ 134 տուն, պատերազմների ժամանակ մարդկանց ապաստարաններ են: Ասում են, թէ այդ քարայրներից 4-ն այնքան մեծ են, որ նրանց մէջ կարելի է ձիով ման գալ: Ափսո՛ս, որ նրանց մէջ մտնելու այժմ ոչինչ հնար չը կայ: Ճանապարհը բոլորովին փչացած է:

Առջաձորի բնակչաց մէջ 60 հոգի Շահեշանեան ազգանուն կրողներ կան: Բնակչաց մէջ 12 տնտրը թիրք են, որոնք թիրքերէնից լաւ հայերէն են իմանում և միշտ այդ լեզուով խօսում: Առջաձորում երիցուհի Խորիշան Տէր-Պետրոսեան այրու մօտ եւ գտայ 16 կտոր հայ մելիքաց նամականիք, թղթեր, որոց բովանդակութիւնը՝ բոլորովին մասնական:

Տեսայ նաև 48 հատ թիրքերէն ֆէրմաններ և զանազան թղթեր, 20 հատ կաթողիկոսական կոնդակներ՝ գրուած Աղուանից Յովաննէս, Իսրայէլ, Ներսէս և Եսայի կաթողիկոսների և Գանձասարի աթոռակալ Կիրակոս վարդապետի կողմից: Այդ կոնդակներն իրանց բովանդակութեամբ կարող են պատմութեան փոքր-ինչ պիտանացու լինել: Ափսո՛ս, որ եւ ժամանակ չունէի նրանց պատճէնը վեր առնել: Իսկ բնագիրը տիկիներ չը կամեցաւ ինձ տալ: Բարեբախտաբար, տիրացու Կարապետ Տէր-Սահակեանը յանձն առաւ յիշեալ կոնդակների պատճէնները ինձ ուղարկել:

Առջաձորի եկեղեցումը, որ շինուած է ՌՃԺԷ թուականում (1668 թ.), եւ տեսայ այն աստուածաշունչը, որոյ մասին հանգուցեալ Ջալալեանը իւր ճանապարհորդութիւնում (եր. 141-244) ընդարձակ տեղեկութիւն է տալիս:

Հանգուցեալ սրբազանը չէ յիշում յիշեալ ձեռագրի թուականը, որ է ՌԿԶ (1616), բայց այս թիւը աստուածաշնչի նորոգման և վերջին ստացողի թիւն է: Առաջնոյն թուականը չը կայ: Առջաձորում գիշերելով՝ հետևեալ օրը մենք գնացինք Այաթներ կամ Աղմախու գիւղը՝ 8 տուն բնակչօք, ապա վանքա-

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 31-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 80-ում (13 հոկտեմբերի, էջ 3-4)

² Գիւղիս այժմեան անունն է Առաջաձոր, որպէս թէ (ասում է Ջալալեանը, եր. 240) առաջին ձոր՝ ըստ կարծեաց հասարակաց, բայց որպէս երկի ի հին գրուածոց է Առջաձոր՝ առեալ զանունն ի դրութենէ տեղւոյն, վասնզի յարձանագիրս ի նմին գեղջ Առջաձոր անուանի

պատկան Կեչան գիւղը՝ 9 տուն բնակչօք: Գիւղիս արևմտեան կողմի լերանց վերայ բարձրանում է մի այլ կանգուն եկեղեցի, որ, ըստ սովորութեան, գիւղացիներից կոչվում է Անապատ: Կեչանի մրգերից կարմրաթուշ խնձորը նշանաւոր է: Տեղացիք նրանց կոչում են խշխշան, վասն զի շարժելիս կորիզները խշխշում են:

Կեչանում¹ երկու ժամ հանգստանալով՝ մենք ճանապարհ ընկանք դէպի Ջանեաթաղ, ուր հասանք գիշերուայ ժամը 11-ին:

Ճանապարհին մեզ հանդիպեցան Ղազանչի (25 տուն), Ալի-Աղալու կամ Ղարխին (27 տուն)՝ Ալիփէնջա ուխտատեղիով և Քօլանի (18 տուն) գիւղերը, որոնցից միայն առաջին երկուքը հայաբնակ են: Նախքան Ջանեաթաղ գիւղը մտնելը մենք տեսանք արքունական ձիերի այն գործարանը, որոյ կառավարիչ Վիլմանին քօլանիք անցեալներում սպանեցին: Գործարանի այժմեան կառավարիչը մի գնդապետ է՝ ազգաւ թիւրք: Գործարանումը միայն 20 ձի կայ, այն էլ ուզում են վերջացնել: Սպանեալ Վիլմանի ազնուութեան և մեծահոգութեան մասին շրջակայ հայ գիւղացիք մեծ գովութեամբ և երախտագիտութեամբ էին խօսում: Վիլմանի գերեզմանը հէնց գործարանի կշտին՝ մի թումբի վերայ է գտնվում:

Ջանեաթաղ գիւղի (50 տուն) բնակիչք Ղարադաղիցն են գաղթել թելադրութեամբ Մադաթովին: Գիւղիս եկեղեցումը մի քարացած գրքի կտոր գտնուեցաւ, որ սրբ. Սագինեանցը պետք է ս. Էջմիածնի թանգարանին ուղարկել:

Ջանեաթաղի եկեղեցոյ, որը շինուած է ՌՕԸ ազգային թուականին (1608թ.), աւագանը մի տարօրինակ ձև ունի: Նա մի առանձին կամարակապ շինութիւն է, ուր կատարուած խորհուրդը ժողովրդականք կարող չեն տեսնել: Աւագանը տեսանելի է միմիայն դասը կանգնողներին²:

Հետևեալ օրը ես պ. Յովհաննիսեանցի ուղեկցութեամբ անցայ Գիւլեաթաղ գիւղը (40 տուն)՝ Մելիք-Ալլահվերդեանների պալատը տեսնելու և տեսայ: Դա մի քառակուսի և այժմ կիսաքանդ շինութիւն է՝ 16 արշին լայնութեամբ և 25 արշին երկայնութեամբ, միջին մի մեծկակ գաւիթ, երկու հատ հանդիպակաց և կամարակապ, փոքրիկ սենեակներ: Կամարակապ մեծ դրան ճակատի քանդակները բաւականին գեղեցիկ բաներ են: Պալատի չորս անկիւններում էլ կան բրգեր: Մելիք-Ալլահվերդեանի պալատը ճարտա-

¹ Կեչանը կոչվում է նաև Բալլուդայա, այսինքն՝ մեղրոտ ժայռ

² Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 32-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 81-ում (17 հոկտեմբերի, էջ 3)

րապետութեան կողմից յար և նման է Մելիք-Իսրայէլեանների պալատին Ինն մասանց մօտ: Պալատի մէջ այժմ կենում է Մելիք-Ալլահվերդեանների ժառանգը՝ Միրզաբէկ Բալաբեգեան Մելիք-Ալլահվերդեանց, որ այժմ Վիլմանի գործարանումն է ծառայում ամսական 12 ռ. ռոճկաւ:

Միրզաբէկը տանը չէր: Նրա կինը ինձ ցոյց տուեց շատ թղթեր, բոլորն էլ նոր բաներ են և ուրեմն մելիքների պատմութեան համար ոչինչ նշանակութիւն չունին¹:

Գիլեաթաղից մենք անցանք Կուսապատ գիւղը (285 տուն), որոյ կշտին եղող պղնձեայ հանքը յոյներն են բանեցնում: Կուսապատը ունի ամենաընդարձակ այգիներ: Նա ամբողջ Խաչէնի և Ջրաբերդի գիւղերից ամենից մեծն է և հարուստը: Այգիներից մինի մէջ մենք տեսանք այսպէս անուանեալ մելիք Ադամի մահլան, որ մի կամարակապ սենեակ է և, ինչպէս երևում է, մոտերքի մի այլ պալատի մասն է կազմում:

Կուսապատից մենք անցանք Մոխրաթաղ գիւղը, ուր ուրիշ ճանապարհով ժամանեց և ինքը՝ սրբ. Սագինեանցը տեղական նորակառոյց եկեղեցին օծելու համար: Մեծ հանդիսով օծեց կիրակէ օրը:

Օգոստոսի 12-ին Մոխրաթաղից դուրս գալով՝ մենք անցանք Մարտակերտ գիւղը և ապա Ջիւանշիրի դաշտի միջով մեր ընթացքը դէպի Վարանդ ուղղեցինք: Ճանապարհին՝ մեր աջ կողմից, երևում է Քառագլուխ գիւղը՝ 54 տուն բնակչօք²:

Այս գիւղը «շինեալ է ի կար բերդին Չալաղանայ, կառուցելոյ ի Չալաղան Հայկազնէ զօրացելոյ ի վեշտասան դարուն: Յերկուց կողմանց են խորածորք անհնարին բարձրութեամբ՝ ուրանոր եկաց և՛ ինքն Չալաիշխան և զբազումս ի լեռնականաց արգելին գհամարձակ մուտս իւրեանց այս երկիր: Արդէն կան դեռ ևս հիմունք տան նորա և բերդին» (Ջալալեան, եր. 344):

Քարագլխից յետոյ գալիս են հետևեալ գիւղերը՝ Խրամորթ (32 տուն), Դլիջբաղ (34 տուն) և Խնապատ (45 տուն)՝ կշտին Նահատակ անուամբ մի ուխտատեղի ունենալով: Ղարլու թիւրք գիւղի բարձրում Կարկառ գետը անցնելով՝ երեկոյեան ժամը հինգուկիսին մենք ոտքերս դրինք մելիք Շահնագարի պատմական երկրի՝ Վարանդի վերայ:

¹ Երբ ես յիշատակարանումս պալատի չափերն էի նշանակում, տիկին Բալաբեգեանը խնդրեց ինձ, որ իւր չորս աղջկանց անուններն ևս նշանակեմ և լրագրում հրատարակեմ: Տիկինը յոյս ունէր, որ այդպիսով իւր ազնուագարմ դատերց համար շուտ և լաւ մուշտարիք լուս կընկնին

² Քար բառով անանցուած գիւղերի անուններ շատ կան Արցախում. Քարագլուխ, Քարինտակ, Քարակոփ, Քարահերձ, Քարաշէն

Եթե Շուշի քաղաքի բարձրագույն կետերից մինի վերայ կանգնելով՝ դեպի արևելք նայենք, միջակ բարձրութեամբ լեռների մի երկայն շղթայ կը տեսնենք մեր հանդէպ¹:

Այդ լեռները Կարկառ գետի աջակողմեան ափի ընթացքով բարձրանում են դեպի վեր՝ դեպի հարաւ: Բարձրանալիս լեռները երբեմն օձաձև գալարվում են, երբեմն ուղիղ գծով ընթանում, երբեմն գետից բոլորովին հեռանում և երբեմն մինչև նրա շատաչող կոհակները հասնում ու նրանց հետ համբուրվում: Եթե Շուշիի բարձրութիւններից անցնենք և կանգնենք յիշեալ շղթայի այս կամ այն գագաթի վերայ, մեր հանդէպ մի այլ շղթայ կը տեսնենք, որ առաջնոյն զուգահեռականն է կազմում, և որոյ արևելեան կողմն ընկնում է Ուտեական և Գարդմանական (այժմ՝ Ջիւանշիրի) ծովածաւալ դաշտը: Յիշածս լեռանց երկրորդ շղթան միատեակ ուղղութիւն և բարձրութիւն չունի նոյնպէս: Նա գնում է երբեմն դեպի աջ և երբեմն դեպի ձախ: Ինչպէս առաջին շղթայի, նոյնպէս և վերջինի գագաթները տեղ-տեղ ընդհարվում, բաժանվում են միմեանցից և մին-մէնակ կանգ առնում. կարծես միմեանցից խռոված լինին: Երբեմն էլ մօտենում ձեռք ձեռքի են տալիս և մեծ ու փոքր բոլորակ շղթաներ կազմելով՝ իրանց ստորոտներն ու կողերը միմեանց սեղմում, հէնց իմանաս *կոշով պար* կամ *խալլի* խաղալ են ուզում: Յետոյ երկար պարելուց կարծես ձանձրացած ու հոգնած՝ յիշեալ լեռները այս և այն կողմից դեպի այս ու այն կողմը այս ու այն բազուկներ են արձակում, հէնց իմանաս պարողներից այս և այն ոքը պարից դուրս է եկել և իւր գլուխն ու կուրծքը քամուն, բաց ու ազատ օդին դէմ տուել, ինչ է թէ փոքր-ինչ հովանայ ու զովանայ²:

Երկու իսկ զուգահեռականների գագաթների մէջ կան այնպիսիք, որոց կողերը կանոնաւոր են և թէպէտ ուռուցիկ, բայց սիրունիկ, իսկ իրանց «պտուկը»՝ կատարը, տափարակ է և դուրան: Իրանց շրջագգեստը կանախ խոտն է և ծաղկունք զանազան, որոց մէջ այլ և այլ չորքոտանիք, օրնիբուն կարածեն ու կորոճան, մեղուք և թիթոունք կը բզզան ու կը խայտան: Կան այնպիսի գագաթներ էլ, որոնք իրանց ձևով ոտքից ցգլուխ տզեղ են, անճոռնի և մերկ ու սկլոր: Այդ մերկութեան մէջ աւելի աչքի են ընկնում իրանց

¹ Շղթայի հիւսիսային ծայրի գագաթը իւր ստորոտում եղած մի ակերեալ եկեղեցույ անունով կոչվում է Պրոխորուն

² Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 33-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 82-ում (20 հոկտեմբերի, էջ 2-3)

մարմնոյ խոց ու պալարները, ժայռերն ու քերծերը, բոլորն էլ ժանգոտ, ժահոտ, մահահոտ:

Այդ տեսակ գագաթների բնակիչներն ու այցելուներն ոչ այլ ոք են, եթե ոչ բուեր, այլ և այլ գիշատիչ թևաւորներ:

Ջուգահեռականների և նրանց կիսաբոլոր ու բոլոր գոտիների մէջտեղերում բացուած հովիտներ և ձոր ու ձորակներն ամբողջապէս ծածկուած են ցորնի, գարու և կորեկի հերկերով ու արտերով: Այժմ, որ օգոստոսի կէսն է, արտերի միմիայն չոր ծղօտներն են մնացել, որովհետև այդ ծղօտներին հարկաւորութիւն չունի հայ շինականը, ուստի կրակ է տուել նրանց և այրում է: Այրում է, որպէսզի նախ աշնանային հերկուածքը դիւրացնէ, գութնին փաթաթող ամէն խութ ու բութը հատանէ, դէն ձգէ, ապա հողը չորացնէ, պարարտացնէ և անձրևների կաթիլները շուտ ու լաւ ծծելուն հողին ընդունակ անէ:

Գալով երկրի կազմութեանը՝ ես պէտք է ասեմ, որ լեռներից ամենամեծ մասի արգաւանդը բաղկացած է թեթև և տախտակաձև կրաքարից և շերտաքարից¹: Վերջնոյն գոյնը զանազան է՝ կարմիր, կապոյտ, կանաչ և սպիտակ: Եւ քանակութեամբ նա ամենից առատ է, տեղ-տեղ սև, սպիտակ էլ կայ²:

Աւասիկ հէնց այդ շերտաքարն է, որով շինուած են երկրի բնակչաց ամենատեսակ շինուածք ու կերտուածքներ, որոնք, ի շնորհս քարի յատկութեան, ցրտից շուտ-շուտ ճաքում են: Հողը՝ գորշ, մի քանի տեղերում սպիտակ-կրախառն գոյն ունի և կաւախառն է: Նա պարարտ է և թէկուզ առանց անձրևի, աճեցնում է ամէն տեսակ բոյսեր ու պտուղներ՝ տալով 8, 10 և 15 առ հարիւր: Պարարտութիւնից ոչ նուազ դիմացկունութիւն էլ ունի այս հողը: Այդ է պատճառը, որ շինականը 10 տարուայ մէջ հազիւ 2 անգամ նրան դադար և հանգիստ է տալիս: Կան այնպիսի տեղեր՝ Սպիտակշէնի լեռներից սկսեալ մինչև Վանէսի կամ Հաղբութի լեռները, ուր հողի թէ՛ պարարտութիւնը և թէ՛ դիմացկունութիւնը գերազոյն է:

Ողջ երկիրը միանգամայն զուրկ է անտառից, որ, սակայն, մի ժամանակ խիստ խիտ է եղել և առատ: Բայց տգիտութիւնը իւր վանդալական ձեռքերով անտառի ծառոց միմիայն կոճղերն ու արմատներն է թողել այժմ: Տեղ-տեղ հիմայ էլ ձեր աչքին հանդիպում են թփեր ու մացառներ, բայց միշտ և

¹ Շերտաքարին տեղացիք կարասաքար են անուանում և երբեմն նրանով ծածկում նաև իրանց տների առաստաղն ու յատակը

² Կղարծի գիւղի մօտ

հանապազ կացինը գլխին և կրակի բոցերը չորս դին¹: Հետևաբար չը պետք է զարմանալ, որ այդ երկրի բնակիչք, հիմիկուանից սկսեալ, իրենցն շինութեան փայտերը բերում են հեռաւոր Խաչէնի և Ջրաբերդի անտառներից:

Անտառները յումպետս փչացնող գիւղացիք, բարեբախտաբար, մեծ խնամք են տանում պարտէզներում և այգիներում ծառեր աճեցնելում և բազմացնելում: Եւ երկրի բրեթէ բոլոր գիւղերը, դրանց մերձաւոր և հեռաւոր շրջակայքն ամբողջովին թաղուած են յոգնառատ և պատուական ծառների մէջ՝ թթի, խաղողի, տանձի, խնձորի, ծիրանի, թզի, նոսն և այլն: Բանջարեղինաց հօ ո՛ն չ թիւ կայ և ո՛ն չ տեսակ:

Երկրի արտածութեան գլխաւոր առարկան թուրթն է, թթենու օղին և շերամը: Աքցիզի նոր օրէնսդրութիւնը օղի քաշելը իսպառ դադարեցրած է ոչ միայն թթից, այլ նաև ծիրանից, մոշից, հունից, տանձից ու դամբուլից: Դրա փոխարէն գինեգործութիւնը բաւականին լաւ և առատ է ինչպէս ողջ Արցախում, նմանապէս և նրա՝ մեր այս նկարագրած մասում, ուր գինու ամենից լաւը պատրաստում են Ղզղալա անունով գիւղում²:

Ինչպէս ողջ Արցախի, այնպէս և մեր նկարագրած մասի գիւղերը շինուած են անպատճառ կա՛մ լեռների ստորոտներում, կա՛մ նրանց կողերում և երբեմն գագաթներում, որովհետև այդպիսի տեղերը սովորաբար բաւական չեն շինականի ապրանքներն իրանց մէջ գետեղելու, ուստի բոլոր գիւղերն էլ իրանց հանդէպ կամ իրանց կշտերին եղած դաշտերի և ձոր ու հովիտների մի-մի մասն ընտրել են իրանց գիւմատեղ (գոմատեղ) և կալատեղ: Վերջինքս իրանց հերթում, մի-մի գիւղ են կազմում: Շինացի գերդաստանի մի մասը ողջ տարին այդ գոմերի և կալերի անպաճոյճ խրճիթ ու խուղերում է անցկացնում իւր օրերը: Գոմերը և կալերը գիւղերից հեռու են լինում 4-ից

¹ Արտերի ծղօտներն այրելիս գիւղացիք այրում են և թփերը: Յետոյ նրանց չօրուկները հաւաքում են և վառելիքի տեղ գործածում

² Գարով Արցախի խաղողի տեսակներին, ահա դրանց գլխաւորների տեղական անունները. 1. Կրնընչենի (կանաչենի), 2. Սիպտրկենի, 3. Ըծենի (այծենի), որ լինում է և՛ սև, և՛ սպիտակ, 4. Չրմչենի (չամչենի), 5. Վարանդենի (Վարանդ գաւառի խաղող), որ սև է, գինին ողջ Արցախի գինիների պսակն է, 6. Սրնտողն, 7. Լըկենի (որ սև է և շատ հիւթալից), 8. Ղըչըլենի (սև գոյնով), 9. Չաղալի: Վերջին տեսակը չաղալ կենդանուն շատ է սիրելի, ուստի և նրա անունովն է կոչվում, 10. Շիրենի՝ սև, որից շըրա են պատրաստում, 11. Թուխենի՝ մեծամեծ հատիկներով, 12. Շըլթիսենի (շիւ և թուխ բառերի ածանցումը՝ գոյնից առնելով), 13. Ըղտակն (ուղտակն ձևից առած անուն), 14. Գեաղալ, այսինքն՝ ծառաների, գեաղաների խաղող, 15. Թոչնասիրտ (ձևից առած անուն) և Կըմբրենի, որ կիսակարմիր գոյն ունի

սկսեալ մինչև 15 վերստ և միշտ և հանապազ շինացոց արտերին¹ և խոտոնց ու ձմերոցներին մօտիկ:

Երկրի ընտանեկան չորքոտանիքը նոյնն են, ինչ որ Արցախի միւս մասերում՝ լաւ գոմէշ, էշ կիսէշ (ջորի), կով այծ, ոչխար, ձի, որոյ լաւ տեսակը՝ Արցախի նժոյգը՝ թիւրք խաներն ու բէկերն են պահում մեծաւ մասամբ, խօզ, որ երամովին շրջում են ողջ Արցախի ծմակներում և մանաւանդ հնձած արտերում: Ընտանի թռչուններից ամէնից լաւ են սագը և բաղը, իսկ վայրի թռչուններից ամէնից շատ աչքի են ընկնում ընտելացրած բազէն, որով արցախցի որսորդները և բէկերը Եւրօպայի միջնադարեան բարօնների նման շատ են սիրում որսորդութիւն անել²:

Գալով լորամարգին, ծիծեռնակին, կաչաղակին, անծեղին, կիսագորշ ագռաւին և կաքաւին՝ դրանցմով զեղում և վխտում են ողջ Արցախի արտերը, տները և պարտէզ ու քարափները³:

Նկարագրածս այս երկիրը, սիրելի՛ ընթերցող, Վարանդն է՝ Խամսայի պատմական մելիքութեանց մինը, որ սկսվում է Կարկառի աջակողմեան փին՝ իւր մէջ առնելով և Շուշի քաղաքը և վերջանում Ղուռուչայ գետի ձախակողմեան փի մօտ Տօղ լեռան ճիշտ ստորոտը:

Ես այդ երկիրը, կարելի է ասել, ծայրէ ի ծայր ման եկայ: Երկրի տափարակ դիրքը, ճանապարհների համեմատական լաւութիւնքը մեծապէս նպաստում էին ինձ:

Այժմ յիշենք Վարանդի այն շէները⁴, որոց մէջ ես եղայ, երբեմն գիշերեցի, երբեմն մի քանի ժամ միայն մնացի, երբեմն մէջերով անց կացայ և հարևան-

¹ Արտեր գտնվում են (թէն սակաւաթիւ) երբեմն լեռների այնպիսի գառիվայրներում, ուր չորքոտանիք կարող չեն բարձրանալ: Ուստի այդ տեսակ արտերը շինականը ինքն իւր ձեռքով է հերկում, այսինքն բահով և փետտով փորում

² Բազէներով որսորդութիւն են անում Արցախի նաև պատանիները: Ես միշտ դրանց խորհուրդ էի տալիս հրազէնքը միշտ նախապատիւ համարել բազէից: Թող արցախցի հայ մանուկը հէնց մանկութիւնից ծանօթանայ և սիրէ գէնքը

³ Արցախում մի տեսակ ուրուր կայ, որ տեղական լեզուով կոչվում է չրթանագեղող, այսինքն՝ չորթանի գող, որովհետև այդ թռչունը չորթան շատ է սիրում: Ներկարար կոչում են արցախցիք մի կանաչ և աղանաչափ թռչունի, որոյ անունը և տեսակը ես չը գիտեմ: Кречеръ (ֆրանսերէն՝ Le Gerfaut) բազէի մի տեսակն է, և որոյ հայերէն անունը ես նոյնպէս չը գիտեմ: Սրա կատուանման մլաւոցը դու միշտ լսում էս ծմակներից անց կենալիս

⁴ Գիւղ բառի տեղ Արցախում գործածական է միշտ շէն բառը, թէպէտև, ինչպէս յայտնի է մեր լեզուի մէջ, գիւղ և շէն նոյնիմաստ բառեր չեն: Բայց յայդմանէ՝ շէն ընդհանուր անունը մի մասնաւոր, անշունչ կամ շնչաւոր առարկայի, երբեմն և ածական անուան հետ ածանցելով, Արցախում յորջորջում են գիւղերը՝ Մարգաշէն, Սխտորաշէն, Սպիտակշէն, Քարաշէն և այլն

ցորեն զննեցի և երբեմն էլ միմիայն հեռուից նկատեցի: Բաց անենք կրկին մեր յիշատակարանը¹:

Վարանդում առաջինը մեզ հանդիպող գիւղն է Չխուր-Սէյլելու (20 տուն), ապա Ղուրտեր (22 տուն) և Շէնլու (50 տուն): Երեք գիւղերն էլ թիւրքաբնակ են և ունին ճոխ և ընտիր այգիներ: Մէկուկէս ժամից մենք հասնում ենք արդէն հայաբնակ գիւղերը. Նախիջւանիկ (122 տուն), որ սեպհականութիւնն է 12 հայ բէկերի²:

Գիւղիս հիւսիսային կողմի գագաթումը մի սիրուն և նոր մատուռ կայ՝ Նահատակ անունով ուխտատեղի: Մատուռը շինել է մի երազատես գիւղացի: Այդ կարգի երազատեսների թիւը բաւականին շատ է Արցախում: Ես հիմունքներ ունիմ վկայելու, որ այդ երազատես պարոնները մատուռներ շինում են, որպէսզի նրանց եկամուտները (ուխտաւորներից) իրանց օգտին գործածեն: Եւ գործածում էլ են: Այդ տեսակ մատուռների վանահայրները (որոշուած օրերին) երազատեսներն իրանք են կամ իրանց ժառանգները: Ջալալեանի ասութեամբ՝ Նախիջւանիկի նորակառոյց եկեղեցւոյ հիման տակ թաղուած են այն ժամանակուայ քահանային ձեռքով բազմահատոր ձեռագիր մատեանք:

«Մին ի վերոգրեալ մատենից,- շարունակում է հանգուցեալ սրբազան ճանապարհորդը,- մնացեալ էր պատահամբ անթաղ, զոր ընկալայ առ իս, յորում էին զանազան ճառք նախնեաց և մեկնութիւն Ղուկասու աւետարանչին յօրինեալ ի Մատթէոս վարդապետէ Տաթևացւոյ» (եր. 340):

Գիշերը Նախիջւանիկում անցկացնելով՝ հետևեալ օրը մենք անցանք հետևեալ գիւղերը՝ Փիրջամալ (95 տուն), Վարազաբուն (92 տուն), որոյ մաքուր, զարդարուն եկեղեցին և դպրոցական կրկնայարկ շինութիւնն արդիւնք են Յովսէփ Մկրտչեան, Ջիւանշիր Իսրայէլեան, Թէոս Ղուկասեան, Ջումշուտ Հայրապետեան, Մկրտիչ Տէր-Յովհաննիսեան, Բաբա Չերքեզեան և Ջաւատ Իսախանեան պարոնայց եռանդուն գործունեութեանը և զոհաբերութեանը:

Այդ պարոնները վարազաբունցի են և այժմ, բացի վերջինից, վերաբնակուել են Բագու: Բայց, ինչպէս տեսանք, նրանք հայրենիքից անձամբ հեռա-

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 34-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 83-ում (24 հոկտեմբերի, էջ 2-3)

² Արցախում այսօր բէկերն առհասարակ նոյն վիճակն ունին, ինչ որ Վրաստանում կնեազները: Երկուքն էլ՝ քաղցած, տկոյր և մերկ ու բոբիկ: Նախիջւանիկի բէկերն այդ կարգի բէկերից չեն սակայն: Նրանց կրկնայարկ տները գէթ փառաւոր շինութիւնք են

նալիս սրտով և գլխով նրա մէջ են բնակվում: Ապրի՛ն, կեցցե՛ն: Թող բագուարնակ միւս արցախցիք, որոց թիւը, ինչպէս ես ստուգեցի, խիստ շատ է և Արցախի գրեթէ իւրաքանչիւր գիւղը Բագուում իւր ներկայացուցիչն ունի, այս պարոններից օրինակ առնեն:

Վարազաբունում՝ մի մասնաւոր անձի տան մէջ, մի մագաղաթեայ գրչագիր ւետարան կայ, որ գրուած է ՋԺԹ (1470) թուականին:

Վարազաբունից Ջալալեանը գտել է «գգրչեայ մատեան մի, յորում գրեալ կային բանահիւտութիւնք Յովհաննէս վարդապետ Թուլկարանցոյ՝ ըստ մեծի մասին ոտանաւոր չափմամբ, յորոց վախճանի գրէ ԽԵՌ Յովհաննէս Թուլկարանցի» (եր. 340):

Վարազաբունից ճամփայ ելնելով՝ մենք մեր աջ կողմում տեսնում ենք Միրշուլու (40 տուն), Դահրազ (42 տուն) գիւղերը: Անցնում ենք Աւղալ (150 տուն) և Գիլափլու (255 տուն) թիւրքաբնակ և պարտիզաշատ գիւղերից և ապա մտնում Հացի (45 տուն) գիւղը: Սորա հիւսիսային կողմը մի քանի կիսականգուն եկեղեցիք կան, որոց մասին Ջալալեանը ասում է. «Ոչ հեռի ի շէնէս յայսմանէ գոյ աւերակ մեծի գիւղաքաղաքի, յորում են գեղեցկաքանդակ մահարձանք պատուելի իշխանաց և բազմախորան աւերակ եկեղեցի, կառուցեալ ի կոփածոյ քարանց (Վարանդին յատուկ սպիտակ շերտաքարն է): Թէպէտ շինողն անյայտ, բայց դրութիւն տեղոյն ցուցանէ, թէ էր ի հնումն բնակարան իշխանաց» (եր. 440):

Հետևեալ օրը ես այդ աւերակները մանրամասնաբար տեսայ՝ ինձ ուղեկից ունենալով տէր Համագասպ և Նորշէնի փակեալ հայ դպրոցի ուսուցիչ պ. Միքայէլ Տէր-Յովհաննիսեանցը, որ «Մեղուի» թղթակիցն է այս կողմերում: Ահա մեր տեսածը: Աւերակները բաղկացած են երկու եկեղեցուց և չորս մատուռներից: Դոքա միմեանցից հեռու են ոչ պակաս 20-100 սաժէնից: Մատուռներից մինի ճակատին քանդակուած են երկու հանդիպակաց քնարահաւեր և հետևեալ արձանագրութիւնքը.

զնաչենցի վարդապետ սրբոյ եկեղեցւոյ յաղալթս յիշեցէք ի Քրիստոս Յիսուս:

Երկրորդ մատրան ճակատին արձանագրած է.

ԹՎ. 2ՃԹ (1270) շինեցաւ... ի կայտողիկոսութեան տեսոն Ստեփաննոսի և յեպիսկոպոսութեան տէր Ներսիսի... միաբան եղբարցս... զայդ տեղաց... վարդա... ծնողաց մերոց և ազգականաց...:

Մնացեալ երկու հանդիպակաց մատուռների ճակատներում ևս երկար արձանագրութիւնք կան: Բայց քարերից երկուքը ընկած, անհետացած են, մնացեալ քարերն էլ՝ մաշուած: Այնպէս որ այժմ վերձանելի բառերից ոչինչ իմաստ չէ դուրս գալիս: Այս մատուռների մէջ սքանչելի քանդակագործ խաչեր կան: Մատուռներից մինի պատուանդանի վերայ գրած է.

Ես խաչէնցի վարդապետ... սուրբ նշանս... որդի Վահրամայ, որ կարդայք յաղաթս յիշեցէք ի Քրիստոս:

Եկեղեցիներից մինը կրկին խորաններ ունի: Նրա մէջ մի քանի շիրիմներ կան՝ եղծուած տապանագրերով: Դրանցից մինի վերայ մի հսկայամարմին մարդու պատկերն է փորագրուած, թէև բաւականին տգէղ կերպով: Վեր ընկած խաչաքարի վերայ գրած է.

Թիւ 2ԺԹ (1270), ի տէրութեան տէր Ստեփաննոսի, ևս Մխիթար որդի... կանգնեցի զխաչս:

Երկրորդ եկեղեցու ճակատը զարդարուած է անթիւ խաչարձաններով, գեղեցիկ քիվերով և մի գոյգ քնարահաւերով: Արձանագիրն ընդարձակ է, բայց դարձեալ մեծ մասամբ եղծուած: Ահա ինչ որ մենք կարողացանք կարդալ.

... շինեցաք զեկեղեցիս բազում աշխատութեամբ յեպիսկոպոսութեան տէր Յովհաննիսի և տէր Ներսիսի... հայրապետաց... հոգւոց... ազգաց և ծնողաց մերոց, որք կարդայք յիշեցէք աշխատողք եկեղեցւոյս¹:

Պատերից մինի վերայ փորագրած է.

զՇահէն վարդապետ եկեղեցւոյս յիշեցէք ի Տէր:

Այս սրբազան աւերակներին տեղացիք անվանում են՝ Աւագ սուրբ Նշան և հաւատացնում, որ յիշեալ մասունքը յիշեալ եկեղեցումն պահուելիս է եղել, յետոյ փոխադրված է Կղարծի գիւղը, ուր և մնում է ցարդ:

Հացի գիւղից մենք անցանք գիշերելու Նորշէն (112 տուն): Բնակիչներից 200 անձինք Ղազիմեան ազգանունն են կրում: Այս գիւղում պ.Միք. Տեր-Յովհաննիսեանցը, ինձ մի չորացրած ծաղկանց փունջ ընծայելով, պատմեց, որ դա յափրուկ է²:

¹ Եթէ արձանագրութեանս մէջ յիշուած Յովհաննէս և Ներսէս եպիսկոպոսները Աղուանից նոյնանուն կաթողիկոսունք են (ինչպէս ևս կարծում եմ), այն ժամանակ դժար չէ եկեղեցւոյս շինութեան տարեթիւն ևս մօտաւորապէս իմանալ

² Բայց դա յափրուկ չէ, այլ խնկածաղիկ

Գիւղացիք զարնանը ժողովում են այդ ծաղիկը, գնդաձև փունջ կազմում և ամառն ու աշունքը փեթակների առաջից կախ տալիս: Մեղունները թափվում են դրանց վերայ և նրանց միջի հիւթը ծծելով՝ կշտանում:

Պ. Տէր-Յովհաննիսեանցի մօտ ես տեսայ նրա ձեռագիր աշխատութիւնքը՝ ա) Բառարան Ուտեական Բարբառի, ուր կան նաև ուտեացոց լեզուի բազմաթիւ ոճեր ու դարձուածներ ևս, բ) Վարանդեցոց առակների, առածների և հանելուկների մի հաւաքածոյ, որ պարունը ուղարկած է պ. Տիգրան Նաւասարդեանցին ի հրատարակութիւն:

Նորշէնի հարաւարեւելեան կողմում՝ մի լերան գագաթին, կայ մի ծառապատ ուխտատեղի, որ կոչվում է Ստեփանոց (Ստեփանոս) կամ Ծծախաչ: Ասում են, թէ այդ ուխտատեղին կանանց հիւանդ ստիւնքներն առողջացնում է: Գիւղի արևելեան կողմում կայ մի այլ ուխտատեղի՝ Նահատակ:

Չը մոռանամ յիշել, որ Հացի և Նորշէն գիւղերում ինքս էլ տեսայ (մանաւանդ կանանց երեսներին) սիֆիլիսի նշաններ, որոյ մասին նախկին նամակներիցս մինում արդէն գրած եմ: Հարց ու փորձերիցս երևեցաւ, որ յիշեալ ախտի տարածման առաջն առնելու թէև միջոցներ գործ դնում է մարմնաւոր իշխանութիւնը, բայց այդ միջոցները շատ չնչին են և երբէք լաւ հետևանքի չեն հասցնում¹:

Հացի գիւղում, ուր հետևեալ օրը ես գնացած էի աւերակները զննելու, պ. Թաւատ Ղազինեանցը մեզ համադամ ճաշով պատուեց: Նոյն պարոնի մօտ ես տեսայ 50 հատ արծաթ պարսկաց դրամներ: Դրամները, որոց մէջ կային և դռաններ, գտնվել են Նորշէնի հարաւային լեռների ստորոտներից: Այդ տեղերում՝ Նաշտավին կոչուած ձորում, մի ստորերկրեայ կամարակապ և գեղեցիկ տուն կայ, նրա չորս կողմը՝ զինամբարներ: Գինամբարը Արցախում գետնի մէջ փորուած հոր է, որի չորս կողմը աւազով և կրով ծեփում, «վազում» են: Ամէն մի զինամբար 100 դոյլ զինի է զետեղում իւր մէջ:

Նորշէնից հետևեալ օրը մենք անցանք Ղզղալա գիւղը (76 տուն)՝ ճանապարհին տեսնելով երկու նոր ուխտատեղիք՝ Ականատես նահատակ անուններով: Ուխտատեղիքը, ինչպէս միշտ, լերանց կատարներում են և ծառապատ:

Ղզղալայի հիւսիսային կողմում մէն-մինակ կանգնած է, իբրև սահման կամ կոթող Արցախի լերանց և Ուտեական դաշտի մէջ, մի բարձրկէլ և

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 35-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 84-ում (27 հոկտեմբերի, էջ 1-2)

քերծուտ լեռ, որ է իսկական Ղզղալան՝ Աղջկայ բերդը: Տեղական քեօխվան՝ մի հաստափոր և հաստագլուխ պարոն, որ 14 տարի շարունակ նոյն պաշտոնն է վարում, և՛ երդմամբ և՛ ամեն միջոցներով ուզում էր ինձ հաւատացնել, իբր թէ ոչինչ հնար չը կայ յիշեալ լեռան գագաթը բարձրանալ: Նրա վերայ միմիայն թռչունները կարող են ելնել: Այնտեղ այնքան և այնպիսի օձեր կան, որոնց տեսութիւնը միայն երկիւղ և երբեմն մահ է պատճառում: Վերջապէս պ. Ն. Ն. Շուշեցին մի անգամ փորձեց բարձրանալ այդ գագաթը, բայց հազիւ նրա կէտը բարձրացած՝ ուշաթափուեց: Այնպէս որ հազիւհազ կարողացան նրան յետ դարձնել իրանց ձեռքերի վերայ: Այդ ուղեկիցների գլխաւորն ինքը՝ Գասպար քեօխվան էր:

Այսպէս, ահա, բարբանջում էր շէնի քեօխվան, և խեղճ շէնացիք հաւատում էին նրա ասածներին: Իմ բոլոր ջանքերը համոզել դրանց, թէ քեօխվի խօսքերը ցնորքներ են, թէ համանման երկւիղ մեզ տալիս էին մարդիկ, երբ մենք Ջրաբերդի և Կաշաղակաբերդի վերայ էինք բարձրանում, գիւղացիներին բնաւ չազդեցին: Այսպիսով մի երկչոտ ու նանրահաւատ մարդը շարունակում էր յիմարացնել հարիւրաւոր նանրահաւատներին:

Շէնց այդ նանրահաւատութիւնը խորտակելու և ժողովրդին հասկացնելու համար, որ պետք չէ իրանց քեօխվաների ամեն մի յիմար խօսքը լսել, հաւատալ և կատարել, ինչպէս նրանք միշտ սովոր են անել, վճռեցի, թէն ժամանակս չէր ներում Ղզղալայի վերայ ևս բարձրանալ: Այդպիսի դէպքերում իմ մշտապատրաստ ընկերս՝ տէր Համագասպը, այս անգամ ևս չը բաժանուեցաւ ինձանից: Մեզ հետ ընկերացաւ նաև քահանայի նախկին դասընկերը՝ ղզղալացի Սարգիս Քինքենանց պապուն տղան:

Թռանք ձիերի վերայ, քեօխվայ Գասպարի հետ դաշինք կապեցինք, որ ոնց էլ լինի, մինչև լեռան գագաթը մենք, անշուշտ, ձիերով պիտի բարձրացանք և այնտեղից քեօխվայի հաստ փորն ի վեր մի-մի հրացան պիտի պարպենք:

Գիւղի բազմաթիւ և ընտիր այգիների միջովն անցկացանք, մեզ հետ ուղեկցող Սարգսի այգումը գինու մի նոր կարաս բացինք, նախաճաշեցինք և լաւ կոնծեցինք և հայդա, դէպի Աղջկայ բերդը:

Բերդի երկու կողմանքը, արդարև, անելանելի են, բայց նրա հիւսիսային և արևմտեան լայնանիստ գառիվերներով բարձրանալը շատ և շատ դիւրին է: Թէպէտև կան տեղեր, ուր պէտք է լայրծուն ժայռերի վերայ ընթանան ձիանքը, ուրեմն և վտանգաւոր: Բայց մենք մեր խոստմունքը ճշտութեամբ

կատարեցինք և մինչև լերան ամենաբարձր կետը քրտնախարշ ձիերով ելանք: Այդ կետի վերայ հենց այն էր, որ մեր հրացանները ճարճատել սկսան, և ահա Գասպար քեօխվան փախած էր մեր նշան դրած տեղից:

Բերդի վերայ կան պարսպների և մի քանի տների աւերակներ, մի ջրի մեծ աւազան, ուր ջուր գալիս է եղել հարաւային կողմի բարձր լեռներից ստորերկրեայ խողովակների միջոցաւ (խողովակների հետքերը մենք տեսանք): Օձ՝ և ոչ մի հատ: Բայց դրա փոխարէն լերան սեպածև գագաթը (մասամբ և կողերը) ամբողջապէս ծածկուած են խիտունջներով, որոճներով, ծիտրոնով և վայրի թզենիով: Պատմեցին, թէ այդ բերդի ստորոտներից մի ժամանակ մեծ քանակութեամբ պղնձեայ եռանկիւնի դրամներ են գտնուել թիւրքաց տառերով: Մենք այդ դրամներից չը տեսանք¹:

Օգոստոսի 15-ին Ղզղալայից մենք անցանք Աշան գիւղը (90 տուն), որ հնումը Առժան էր կոչվում: Վաչագան թագաւորին այս գիւղում օթագայեցաւ, երբ ելած էր ի խնդիր նշխարաց ս. Գրիգորիսի: Ժողովուրդն աւանդութեամբ մինչ օրս ցոյց է տալիս Ադուանից թագաւորի իջևանը:

Աշանում մի մարդու տան մէջ մի Կարմիր աւետարան կայ, որ ոչ ոքին չեն ցոյց տալիս: Տէր Համագասպը պատմեց, որ աւետարանը 200 տարուայ գրչագիր է:

Աշանից յետոյ գալիս է Էմիշչան (35 տուն) և Սպիտակշէն (50 տուն): Այս երկու շէները միմեանցից բաժանուած են մի բարձր լեռնով, որոյ գագաթին է Ջարգեամար անունով մի ուխտատեղի: Բարձրացանք և այդ լերան գագաթը: Ուխտատեղիի ասածը մի հինաւորց եկեղեցի է, որոյ բեմն և պատերը ցարդ կենում են: Եկեղեցւոյ շուրջը սփռուած են հին և նոր բազմաթիւ շիրիմներ: Ժողովրդի կարծիքով Ջարգեամար խլացած ականջներ բժշկելու գորութիւն ունի: Յիշեալ լերան գագաթից մի հրապուրիչ տեսարան է բացվում դէպի արևելք՝ Վարանդի գուգահեռականները. իրանց մէջ բացուած, լայն և երկայն հովտով, հազարաւոր արտերով, հովտի մէջ սփռուած ծառաշատ շէներով խիստ գրաւում են ճանապարհորդին: Ահա այդ շէներից մի քանիսի անունները, որոնք հեռադիտակով տեսանելի էին մեզ՝ Կղարծի (127 տուն)՝ իւր Մաթեքսար ուխտատեղիով, Պառաւաթումբ (40 տուն), Ղարադաղլու (70 տուն) և Աշրաքլու (20 տուն): Վերջին 2 գիւղերը թիւրքաբնակ են:

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 36-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 85-ում (31 հոկտեմբերի, էջ 1-2)

Սպիտակշէնում նախաճաշելով՝ մենք իջանք հովիտը և սրբազան Սագինեանցին, որ ուրիշ, հարթ ճանապարհով էր գալիս, դիմաւորելով մտանք Գիշի գիւղը (120 տուն)՝ գիշերելու: Այս գիւղս էլ ունի իւր ուխտատեղիքը, մինը՝ Ոսկի խաչ, որ դարձեալ աւերակ եկեղեցի է և մի պատուական աղբերակն ունի, իսկ երկրորդը՝ Պապա Ջամալ՝ նոյնպէս մի լաւ և յորդ աղբիրով: Գիւղիս արևմտեան կողմում լեռներից մինի գագաթին, մի պարսպապատ կիսաքանդ ամրոց կայ, որոյ տակից բղխած ջուրն ամրոցի անունով կոչվում Քեամալի աղբիր: Գիշիի մէջ տեղացի պ. Խաչատուր Քամալեանը մետաքսի մի մեծ գործարան ունի, որ 8 ամսից ի վեր դադարել է գործելուց:

Ջալալեանի ասութեամբ՝ Գիշի գիւղը «գառաջեան ունի գփոքրիկ լիճ ջրոյ, որ յամենանց եղանակս տարւոյ մնայ և միևնոյն դրութեամբ, ուստի և վասն մեծութեան գաւաթի և առատութեան գինւոյ ասի յառակս յաշխարհին Արցախու թէ՛ «գինին և գաւաթն քոյ է լիճ Գիշոյ» (եր. 339):

Մենք այդ լիճը իսպառ ցամաքած գտանք:

Գիշիից զկնի՝ ճանապարհին մեզ պատահող գիւղերն են՝ Խնուշինակ (60 տուն) և Հարաւային և Հիւսիսային Ճարտարներ (երկուքի մէջ 370 տուն): Դրանցից մինը հնումը կոչվում էր Արագունոյ Ճարտար, միւսը՝ Ծմակի Ճարտար: Երկու գիւղերի, որոց հեռաւորութիւնը հազիվ քառորդ ժամ է տևում, մէջտեղը բարձրանում է մի անհետէթ, զոյգ եղջիւրանի լեռ, որոյ մասին Ջալալեանը գրում է. «Բարձրաբերձ և ամուր ամրոց միապաղաղ քար ի վեր սեպացեալ, ունելով ի չորից կողմանց գոսկալի խորութիւն և ի միոյ կողմանէ գոթուարագնալի ճանապարհ, ընդ որով հազիւ կարացի ելանել ի վեր, ուր ի ձեռն քանի մի զինուորաց կարէ բերդն այն մնալ անկասկած և ապահով յերկիւղէ թշնամեաց: Ի միջնավայր տեղուջ գոյ աւազան կամ ջրշեղջ, նշմարանք հիմանցն դեռ ևս երևին, և փոքր-ինչ խոնարհ, քան զբերդն գոյ աղբիր բարեհամ, որ ի հարկաւորեալ դէպս լնուն ի նոյն աւազան ի պէտս ամրացելոցն ի նմին: Ի պարեխի վիմիս միապաղաղ բարձրացելոյ գոն այրք և փապարք, յորս պահպանին կայք և կարասիք շրջակայ բնակչաց ի ժամանակս երկիւղի: Պատմեն ծերունիք, թէ ի վերայ բերդիս յարձակեցան բազումք յարքայից պարսից՝ այն է Աղա Մահմատ շահն, Ֆաթալի շահն, և արքայորդի Աբաս Միրզայն, բայց ոչինչ կարացին ոտնանել, ուստի դարձան կոր ի գլուխ և ամօթապարտ» (եր. 338):

Ճարտարներից շատ հեռի մենք տեսնում ենք Վէսալու թիրքաբնակ գիւղը՝ 44 տուն բնակչօք: Եւ ապա ժամանում ենք Ամարաս կամ ս. Գրի-

գորիսի վանքը, ուր, ինչպես յայտնի է, Գանձասարի հակաթոռ կաթողիկոսներն նստան ընդ հովանաւորութեամբ մելիք Շահնագարի¹:

Ամարասի կամ ս. Գրիգորիսի վանքն ընկնում է մի երկարաձիգ և նեղ հովտի մէջ: Նա ամէն կողմից պատած-պաշարած է ճոխ պարտեզներով և այգիներով: Շրջակայ գիւղերը և գոմերը բաւականին հեռի են նրանից: Վանքի մասին եղած պատմական տեղեկութեանց հետ ծանօթանալ ցանկացողներին մենք հրաւիրում են ուրիշ տեղ²: Գալով վանքի ներկային՝ ահա նա:

Ս. Գրիգորիսը բաղկացած է մի ընդարձակ, քարաշէն, ամրոցաձև և ցարդ կանգուն պարսպից (մելիք Շահնագարի շինածը 18-րդ դարու վերջերում), որ իւր չորս անկիւններում չորս աշտարակներ ունի: Երկայնութիւնը 130, իսկ լայնութիւնը 120 սաժէն է: Պարսպին կից՝ ներքին կողմից գտնվում են 33 հատ կամարակապ և հոյակապ սենեակներ, որոնցից 9-ը դահլիճ են, իսկ երկուքը՝ մեծ-մեծ ախոռներ: Սենեակներից երեքը կրկնայարկ են:

Դա է, ահա, Ամարասայ կաթողիկոսարանը:

Սենեակների մէջ շարիշար կանգնած են թթենիք, մի հատ էլ սօսի: Իսկ դրանց ամէնի մէջտեղում՝ ինքը եկեղեցին՝ կոփածոյ, ընտիր և սրբատաշ քարերից շինած, միակ, փոքրիկ և սիրունիկ գմբէթով: Եկեղեցին ի հիմանց վերանորոգուած է 1858-ին՝ ջանիւք Գեորգ արքեպիսկոպոսի Վեհապետեանց և նուիրատուութեամբ շուշեցուց և շրջաբնակ հայոց: Եկեղեցին, նոր շինուածք գոլով, ժամատուն չունի, այլ սոսկ տաճար: Արևելեան և արևմտեան պատերի վերայ՝ երկու հատ մեծ և պարզ քանդակագործ խաչեր: Ափսո՛ս, որ շինութիւնը ցարդ ոչ մի արձանագրութիւն չունի: Վերանորոգելիս նրան բաւականին փոքրացրել են: Հին եկեղեցույ պատերը և կաթողիկոսաց շիրիմները բոլորովին գետնի տակ են մնացած, թէն փորփորելիս հետքերը երևում են: Եկեղեցին կանգնած է քառակուսի սիւների վերայ:

¹ «Խամսայի մելիքութեանց» յեղինակը՝ պ. Բաֆֆին, և նրանցի առաջ «Գաղտնիք Ղարաբաղի» հեղինակը՝ Ապրէս Բէկնագարեանց, մելիք Շահնագարին մի երկրորդ Վասակ են դուրս բերել: Միննոյն կարծիքը յաճախ արտայայտում է իւր առակների մէջ և Պըլը-Պուղին: Միննոյն կարծիքը մինչև օրս մելիք Շահնագարի մասին ունի և Արցախի ժողովուրդը: Մենք այդ կարծիքի հետ համաձայն չենք: Այժմ սպասում ենք Դիզակի և Գիւլիստանի հետ ևս ծանօթանալու, որ ապա մեր կարծիքն առաջ բերենք: Այն ժամանակ ահա մենք կը խօսենք պ. Բաֆֆիի «Խամսայի Մելիքութեանց» մասին (Ծանոթ. խմբ.) Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 37-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 86-ում (3 նոյեմբերի, էջ 1-2)

² ա) Փաստոս Բիւզանդացի, բ) Ստեփաննոս Օրբելեան, գ) Ջալալեան, դ) Մուրադեան (եկեղեցական պատմութիւնը) և ե) Պատմութիւն կենաց, նշխարաց և եկեղեցույ սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի, Մօսկվա, 1859, որ է հեղինակութիւն Բ. Բահաթրեանի

Լուսամուտների թիւը՝ ութը, որոնցից երկուքը՝ արևելեան և արևմտեան, իսկ վեցը՝ հիւսիսային և հարաւային պատերի վերայ: Լուսամուտները խոշոր են, փառաւոր: Հոյակապ և բարձր բեմի ու սեղանի կշտին՝ գոյգ խորաններ՝ միմի լուսամուտներով: Եկեղեցւոյ շինութիւնը, պայծառութիւնը՝ ջահեր, սրբապատկերներ, օրինակելի են: Աջակողմեան դասի, ըստ եկեղեցական կանոնի, պատին կից հանգչում է ս. Գրիգորիսի շիրիմը, որ նոր է դրած: Իսկ սրբոյն նշխարքը նոյն այդ պատի տակն են գտնվում: Բեմի ձախ կողմից 17 շրջապտոյտ աստիճաններով դուք իջնում էք եկեղեցւոյ վիրապը, որ կոփածոյ քարով է շինած, և ուր հանգչելիս են եղել ս. Գրիգորիսի նշխարքը:

Ամարասի վանքը բնակութեան ամէն յարմարութիւն ունի: Ամէն բան իւր տեղն է և մաքուր, վայելուչ և կանոնաւոր: Վանահայրը 70 ամեայ դպիր Հայրապետ Տէր-Աւետիքեանցն է, որ 60 ռ. ռոճիկ է ստանում, թէն նշանակուած օրիցը դէռ ոչինչ չէ ստացել: Ծերունին ինքը վանքի ծառաների հետ շինել է սենեակների հարկաւորեալ մահճակալները և աթոռ ու գրասեղանները: Վանքի գաւթումը կայ մի ջրհոր, իսկ դրսում մի յորդառատ և պատուական աղբիւր, որ յամին 1868 շինել և նուիրել է վանքին շուշեցի Ստեփանոս և իւր որդի Խոսրով Ղժրիկեանց:

Վանքն ունի 14 կտոր արծաթեղէն անօթներ և սրբոց մասեր, 144 կտոր զգեստեղէնք, 115 հատ գրեանց, որոնցից միայն երկուքը գրչագիր թղթեայ աւետարաններ են, գրքերի թուումը կայ երկհատոր Հայկազեան բառարանը), 146 կտոր պղնձեղէնք, 21 կտոր երկաթեղէնք, 45 կտոր փայտեայ կահկարասիք, 33 կտոր հանդերձեղէնք և անկողին, 76 կտոր զանազան իրեղէնք, 12 հատ կենդանիք: Այդ ամէնը յականէ-յանուանէ, հանդերձ նուիրատուաց անուններով, դուրս են բերած ժապարհնեալ մատենումը: Դրամական արդեանց ժապարհնեալ մատենանը ևս կանոնաւորապէս է պահում ծերունի վանահայրը, որ դէռ զարմանալի ժիր է և շարունակ աշխատում է՝ ի կանոնաւորութիւն և ի պայծառութիւն վանքին և սեպհականութեան: Ամէն առաւօտ և երեկոյ նա ժամ է ասում, թէպէտև իւր ժամաւորները յաճախ վանքի լոկ ծառաներն ու մի շուշեցի ցաւագար ապաշխարող պառաւ է:

Հոգեկան առանձին հաճութեամբ խոստովանում էմ, որ ս. Գրիգորիսի վանքը ողջ Արցախում միակ մինաստանն է, որ յիշեցնում է Հին Հայաստանի վանքերն իրենց սրբութեամբ, մաքրութեամբ և ամէն բանի մէջ խիստ կանոնապահութեամբ: Ձեզ մի օրինակ յիշեմ: Ամարաս գնալիս ես, ի շնորհս շաբաթական պահոց, ստամոքսի հիւանդութիւն ունէի: Վանք մենք հասանք

ուրբաթ երեկոյեան: Խանգարուած ստամոքսս փոքր-ինչ կազդուրելու համար ես վանահօրից առանձնապէս խնդրեցի, որ ինձ համար հաւով ապուր պատրաստել տայ: Ամենայն լրջութեամբ և դրականութեամբ նա յայտարարեց, որ ինքը երբէք, և ումնիցէ չի թոյլ տալ վանքի մէջ պաս ուտել:

Այս երեկոյեան մեր ընթրիքը կը լինի միմիայն պասուայ, հետևեալ շաբաթ օրը՝ իբրև նաւակատիք, ես նոյնպէս իրաւունք չունեմ վանքումը մտնելն ուտելու կամ մսաջուր խմելու: Եթէ եկեղեցական այս կանոններն իմ հաշուին չեն գալ, ես կարող եմ իմ գլխի ճարը ուրիշ տեղ գտնել:

«Համառօտ և ազդու», - ասացի ես մտքումս և կարծես հիւանդ լինելս մոռանալով՝ շնորհակալ եղայ ծերունի վանահօրը իւր կարգապահ բնաւորութեան համար: Այդ բոպէին իմ աչքում աւելի ատելի թուացին այն քահանաները, որոնք ճանապարհին պատրաստակամութիւն էին յայտնում իրանց ձեռքով, շէնացիներից և եպիսկոպոսներից ծածուկ, ինձ համար ուտեաց կերակուր պատրաստել:

Գիտեմ, որ այս տողերը շատերի մէջ ծիծաղ պետք է զարթեցնէ: Սակայն այս տողերը գրողին, յայպէս ասած, հաւատոյ հանգանակն է, որ մեր ազգի և ազգայնոց ամենամեծ դժբախտութիւնը (այդ ամէն տեղ և ամէն բանի մէջ) ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեր անկարգապահութիւնը, մեր անկերպաբանութիւնը: Ինչ ասել կուզի, որ պաս ուտելը եկեղեցւոյ սահմանած եօթն մահացու մեղքերից չէ: Եւ Քրիստոսը ինքն է ասել. «ինչ մտանէ ի բերանը, այն ոչ պղծեմ զմարդն, այլ որ ինչ ի բերանոյ անտի ելանէ, նա պղծեմ զմարդն»: Բայց Քրիստոսը ասել է և այս. «ի փոքրոն անհաւատարիմ է, և ի բազմին անհաւատարիմ է»: Եւ աստուած իմ, որքան և քանի՛-քանի՛ տեսակ անհաւատարմութիւնք տեսայ ես Արցախի եկեղեցականաց վերայ:

Բայց այդ մասին յետոյ, առանձին, ինչպէս խոստացել եմ: Առայժմ մեր յիշատակարանը ձեռքից չը թողնենք:¹

Օգոստոսի 18-ին ս. Աստուածածնի Վերափոխման տօնի առթիւ Ամարաս ժամանող հայ ուխտաւորների հանդէսները տեսնելից զկնի գնացի մօտակայ (7 վերստ) Սօս (94 տուն) գիւղը, բայց, դժբախտաբար, չը կարողացայ տեսնել ս. Լուսաւորիչ անուանեալ ուխտատէղին, որ լերան գագաթի վերայ է: Զալալեանի վկայութեամբ՝ յիշեալ ուխտատէղին է մի «սագաշէն եկեղեցի կառուցեալ ի թուին Հայոց ՌՃԽԴ ի Յովհաննէս քահանայէ յանուն

¹ Այստեղ պարտւում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 38-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885 թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 88-ում (10 նոյեմբերի, էջ 3)

Եղիշայ կուխն» (եր. 337, ուր դուրս է բերած յիշեալ եկեղեցոյ արձանագրութիւնքը):

Սօսի հանդիպակաց լեռների լանջերում՝ միմեանցից հազիւ 2-3 վերստ հեռաւորութեամբ, կան հետևեալ գիւղերը՝ Հիրիեր (60 տուն), Ծովատեղ (65 տուն), Խրխան (45 տուն) և ապա ցածր՝ Մամնայ (30 տուն), Մէշէղիշէն, որ ունի 70 տուն:

Հիրիերը Ադուանից կաթողիկոսների ամարանոցն է: Նրա մէջ և նրա շուրջ կան մի քանի հին եկեղեցիք և Կապոյտ բերդը: Այդ ամէնի մասին, հանդերձ արձանագրութեանց ընդօրինակութեամբ, սրբազան Ջալալեանը մանրամասնաբար խօսում է (եր. 138-144 և 317-319): Նա խօսում է նմանապէս և Ծովատեղի մասին և սրա տաճարաց արձանագրութիւնքն ևս ընդօրինակում (եր. 332-339):

Խրխան գիւղի հանդէպ՝ դէպի հիւսիս, գիւղացիք ինձ ցոյց տուին Բրէտէս գիւղատեղի ակերակները, ուր ցարդ երևում է մի կիսաքանդ եկեղեցի: Ասացին, թէ Բրէտէսում 800 տուն բնակիչ է եղել մի ժամանակ:

Այդ թուի ճշմարտութիւնը ես չեմ երաշխաւորում, բայց միանգամայն հաւատում եմ, որ պատմական ժամանակներում Արցախի հայոց թիւը առհասարակ ահագին է եղել: Ապացոյց այն հարիւրաւոր գիւղերի և շէնքերի ընդարձակ ակերակները, որոց ողջ Արցախում ձեր գրեթէ ամէն մի քայլափոխում հանդիպում էք: Ո՞վ գիտէ, դեռ որքա՛ն ակերակներն էլ հողի հետ են հաւասարուել, նրա տակովը մնացել: Եթէ ընթերցողը յիշում է, Ապրէս Բէկնազարեանցի պատմութեան մի գլխումը Արցախից գաղթող հայերի մեծամեծ թուանշաններ էր յառաջ բերած: Սկզբում ես դժուարանում էի այդ թուերին հաւատ ընծայել: Մակար վարդապետի դրած ծանօթութիւնքն էլ յիշեալ թուանշանների տակ ինձ այնքան համոզեցուցիչ չերևացին: Թուանշանների գումարը, որքան յիշում եմ, միլիօնի էր հասնում: Բայց, երբ ես ինքս մանկեայ և տեսայ այնքան ակերակներ, կամայ-ակամայ հաշտուեցայ պատմչի առաջ բերած թուերի հետ, մանաւանդ որ չը պետք է վերագրել լոկ Արցախին կամ Փոքր Սիւնիքին, որ մի փոքր երկիր է, այլ նաև Մեծ Սիւնիքին՝ Չանգեզուր, Ղափան, Մեղրի և այլն: Գուցէ յիշեալ թուերի մէջն է առել պատմիչը և՛ Շամախոյ, և՛ նրա շրջականերից գաղթող հայերի թիւը ևս: Բայց հէնց Արցախի բնակչաց թւոյն մեծաքանակութեանը ևս կենդանի վկայ են այդ երկրի այժմեան ակերակները և այն բազմաթիւ գիւղերն ու գիւղաքաղաքները, որոնք ցարդ կան, թէև բնակչաց թուի հինգերորդ մասը հազիւ է մնացել:

Այսպես, ընթերցողը թերևս յիշելիս կը լինի իմ «Ակնարկներ»-ում ամերա-կաց այն ցուցակը, որ ես ստացել էի պ. Ջալալ Տեր-Գրիգորեանցից: Ընթեր-ցողը կը յիշէ նաև Թրդի գետի աջ ափում տեսածս Անապատ գիւղաքաղաքի ամերակը, Վաղահասի կշտի «Մայրաքաղաքը», Խօթայ վանքի ճանապար-հին տեսածս «Շէհեր-երին», Քէշիշքէնդի ամերակները և այլն: Հապա ուրիշ որքա՛ն ամերակներ կան, որոնք ես առիթ չունեցայ տեսնելու: Դարձեալ ընթերցողը թերևս յիշելիս կը լինի Արցախի այժմեան գիւղերից Մեծշէնը, որ երբեմն 900 տուն բնակիչ ուներ, Մոխրաթաղը, որ 700 տուն էր, Ուշաջողը, որ 500 տուն ուներ, Հոռաթաղը, որ 400 տուն ուներ և այլն:

Դարձեալ Արցախի այժմեան ուխտատէրիներից մի քանիսը՝ հինաւորց և քանդուած եկեղեցիք, ինչպէս երևում է նրանց դիրքից և շրջակայ ամերակ-ների բեկորներից, ոչ այլ ինչ են, եթէ ոչ գիւղերի կամ գիւղաքաղաքների եկեղեցիք՝ բոլորովին տարբեր հինաւորց մենաստաններից: Այդ ամենն իմ կասկածը Բէկնազարեանց պատմչի առաջ բերած թուանշանների մասին փարատեցին:

Սօսից Ամարաս դառնալով՝ ես ծանօթացայ մի թիւրք բէկի հետ՝ Ալիբէկ Նէշէրբէկ օղլի՝ Դիվանալիլար գիւղից: Այս պարոնը ոչ միայն ազատ կեր-պով հայավար էր խօսում, այլ նաև հայավար կարդում ու գրում էր: Ես այդ փորձեցի: Երևեցաւ, որ Ալիբէկը Ներսէս վարդապետ Միրզա-Աւագեանի թիւրք աշակերտներից մինն է եղել:

Իսկ Ներսէս վարդապետի ով լինելն ընթերցողին արդէն յայտնի է Երից Մանկանց վանքի նկարագրութիւնիցս:

Ամարասի վանքից ես պատրաստուած էի անցնել Դիզակ և այդ գաւառի մէջ ևս մի պտոյտ անել, ապա Գանձակի գաւառում՝ Գիւլիստանի միջով անցնել-գնալ Թիֆլիս: Բայց Շուշուց ստացած մի նամակ ստիպեց ինձ թող-նել այդ մտադրութիւնը: Որոշուեցաւ գէթ Գոշի վանքին այցելութիւն գործել և միննոյն օրը յետ դառնալով Ամարաս՝ գնալ, հասնել Շուշի:

Օգոստոսի 19-ին ես և տէր Համագասպը ճամփայ ընկանք ուրեմն դէպի Գոշի վանքը, որ Դիզակի և Վարանդի սահմանագլուխ կարելի է համարել: Ամարասից մինչև Գոշայ վանք ընդամենը երեք ժամուայ ճանապարհ է:

Ահա այն գիղերը, որոց միջովը մենք անցկացանք, իսկ միւսները հեռուից տեսանք. 1. Մավաս, 2. Բիլբիլիկ, 3. Սխտորաշէն, 4. Սարգսաշէն, 5. Վերին Թաղավարդ, 6. Ներքին Թաղավարդ, 7. Շէխեր, 8. Դրախտիկ՝ կշտին Նարե-

կայ վանքը, 9. Ղաջար (թիւրքաբնակ), 10. Ղզլղշլախ (բնակիչք՝ մուրկաններ են), 11. Սալաքեաթին (թիւրքաբնակ):

Այս բոլորը Վարանդի գիւղեր են, որոնցից Մավասի մասին խօսում է Ջալալեանը (եր. 334-336): Ղզլղշլաղ գիւղի մօտ՝ մի բլրի վերայ, կանգնած է Յակոբիկ ուխտատեղին, որոյ նկարագրութիւնն արել է նոյն սրբազան ճանապարհորդը (եր. 316):

Այնուհետև Ղուռուչայ կոչուած գետն անցնելով¹՝ մենք մտնում ենք Դիգակ: Ղուռուչայի վերայ մի հատ երեք կամարանի, քարեայ կամուրջ է ձգած, բայց գետի ջուրն այժմ այնքան նուազել է, որ նրա միջովն էլ կարելի է անցկենալ:

Ղուռուչայի աջ ափից սկսվում է Տօղ լեռը՝ իւր լանջին ունենալով համանուն՝ Տօղ գիւղը, որ 210 տուն բնակիչ ունի: Հին և փառաշէն եկեղեցւոյ գաւթում թաղուած են Մելիք-Աւանեան մելիք Եզանը և իւր սերնդի ներկայացուցիչք: Տապանագրերն անեղծ են: Յիւշալ մելիքի պալատն այժմ բոլորովին կերպարանափոխուած է և մաս առ մաս բնակարան է դարձել նրա՝ հայ և թրքացած ժառանգներին:

Տօղ գիւղի շուրջ կան հետևեալ գիւղերը. 1. Ջրակոյս, 2. Ողեր, 3. Մամտաձոր, 4. Ազոխ (100 տուն), 5. Ծակուռի (20 տուն), 6. Հագագու և 7. Թաղլար (500 տուն):

Թաղլար գիւղի մօտ մենք տեսանք մի ընդարձակ մետաքսեայ գործարան, որ ցարդ բանում է: Գործարանը սեպհականութիւն է շուշեցի պ. Աղաջան Մուսլունեանցին: Թաղլարի արտաճութեան գլխաւոր նիւթն ածուխն է:

Հագագու գիւղում տէր Համազասպը տեսել է 900 տարուայ մի ձեռագիր աւետարան՝ ամբողջապէս երկաթագիր:

Տօղ լեռան արևելեան և հիւսիսային լանջերի վերայ պտոյտներ անելով՝ մենք հասանք վերջապէս Գոչայ վանքը: Ճանապարհը շատ լաւ է: Եթէ փոքր-ինչ լայն լինի, կարելի է մինչև անգամ կառքով բարձրանալ վանքը²:

Տօղ լեռան հանդէպ՝ արևմտեան կողմում, կանգնած է Դիգափայտի շղթան՝ իւր մի քանի իւրոխտ գագաթներով: Շղթայի արևելեան ստորոտում կան Մոխրենիս (100 տուն) և Տումի (104 տուն) գիւղերը:

¹ Մինչև Ղուռուչայն անցնելը մենք անցած էինք նաև Քեօնդալան գետը Վարանդում: Գետիս ձախ ափին մենք տեսանք խոշանդամ կոչուած աւերակ շինութիւնը, որոյ նկարագրութիւնը տե՛ս Ջալալեանի գրքի 342 էրեսումը

² Պ. Ա. Բաբախանեանը (տե՛ս «Ուխտաւորի յիշատակարանը» գրքոյկը, Շուշի 1885), չը գիտեմ ինչի, այս ճանապարհի նկարագրութեան մէջ չափազանց ծայրայեղութիւններ է անում

Տումի գիւղի մօտ կան Գակի կոչուած մի պալատի աւերակներ: Պ. Բաբախանեանի վերոյիշեալ գրքոյկից (տե՛ս յաւելուածը, եր. 1-7) երևում է, որ վերջին ժամանակներումս Թաղավարդ գիւղի մօտ պատահամբ մի ստորերկրեայ եկեղեցի է գտնուել, որ իւր արձանագրութեանցը նայելով՝ մօտ 900 տարուայ շինութիւն է: Արձանագրութեանց մէջ ի միջի այլոց յիշվում է և Գագկայ անուն... և «*ի պետութեան Տեսոն Գագիկայ Աղուանից իշխանաց իշխանի*» և այլն:

Շատ հաւանական է ուրեմն, որ Տումի գիւղի Գակի կոչուած աւերակները սոյն այս Գագկայ պալատի բեկորներն են:

Դառնանք Գտչայ վանքին¹:

Գտիչ կոչուած վանքը մի փոքի և անշուք շինութիւն է, բաղկացած ժամատնից և տաճարից: Եկեղեցւոյ հիւսիսային կողմում և նրան կից կայ մի հին եկեղեցւոյ մնացուածը:

Ըստ Ջալալեանի ահա դա է «Գտիչ կամ Թիլանաւան» կոչուած եկեղեցին:

Այժմեան եկեղեցւոյ հիմնադիրքն են Սարգիս և Վարդան² վարդապետները յամին ՌՂԵ (1246 թ.), որոց, ինչպէս նաև մի քանի եպիսկոպոսաց շիրիմները ժամատան մէջն են:

Մենաստանի արձանագրութեանց մասին Ջալալեանը գրում է. «Ես ի դիւանատանէ սրբազան Բաղդասար արքեպիսկոպոսի հանեալ զարձանագրութիւնս սորին (մենաստանին) գրեցի յիմում առաջին ճանապարհորդութեան, իսկ այժմ, որպէս զնկարագրութիւնս սորին, նոյնպէս և զմնացեալ արձանագրութիւն Դաղի վանուց յիւրում տեղուջ» (եր. 257-258):

Իմ ձեռքի տակ եղած Ջալալեանի աշխատութեան միմիայն երկրորդ հատորումը դուրս է բերած մենաստանիս արձանագրութիւններից միմիայն երեքը: Եւ որովհետև մնացեալները, ինչպէս ասում է ինքը՝ սրբազան ճանապարհորդը, արդէն դուրս է բերած իւր աշխատութեան առաջին հատորում, ուստի ես զանց եմ առնում իմ կարդացածներն արտագրել յիշատակարանումս: Այսքանս միայն կասեմ, որ տաճարի հիւսիսային պատի վերայ եղած ընդարձակ արձանագրութիւնում յիշուած տեղերից, գիւղերից և սահմաններից մեծագոյն մասը մինչ օրս նոյն անուններովն է յիշվում այս կողմերում:

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 39-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885 թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 89-ում (14 նոյեմբերի, էջ 1-2)

² Միսալ է, պետք է լինի Վրթանես (ծանոթ. խմբ.)

Մենաստանիս ժամատան մէջ չորս հատ գեղուաքանդակ խաչեր կան, որոնք արուեստի կողմից Խօթայ վանքի խաչաքարերից շատ ստոր չեն:

Գուչի վանքի արևելեան կողմում կանգնած է Տօղ լեռան ամենաբարձր և ժայռուտ գագաթը՝ Տօղ բերդը, որոյ վերայ եղած ակերակների նկարագրութիւնն արդէն արել է պ. Բաբախանեանը իւր «Ուխտաւոր յիշատակարանի» մէջ, որ և ուղարկում ենք մենք մեր ընթերցողին:

Գուչի վանուց 28 տարուայ վանահայրն է Առաքել վարդապետ Կոստանեանցը, որ, ինչպէս երևում է, մի գրասէր մարդ է:

Իւր գրաւոր աշխատութիւններից հայր սուրբը ինձ երկու կտոր ցոյց տուեց: Թերթեցի: Առանձին ուշադրութեան արժանի մի բան չը գտայ: Հայր սուրբն ասաց, որ հայ մելիքների պատմութեանը վերաբերեալ մի ինքնորոյն նոր աշխատութիւն ունի, բայց այժմ ուղարկել է Ջիբրայէլ՝ իւր աշակերտներից մէկին արտագրելու համար: Խոստացաւ այդ աշխատութիւնն ուղարկել ինձ, եթէ որ ես էլ իւր մի խնդիրը ի գուխ հանեմ:

Իսկ նրա խնդիրը հետևեալն է:

1881-ին պ. Բաֆֆին, Տօղ գիւղը¹ գալով, Կոստանեանց վարդապետին լուր ուղարկել, որ իւր մօտ եղած ձեռագիրները հետը վերցրած՝ վանքից գալ իւր մօտ: Վարդապետը եկել է և պ. Բաֆֆին յանձնել իւր երկհատոր ձեռագիր աշխատութիւնը՝ ստանալով առ այդ պ. Բաֆֆիից ստորագրութիւն: Ստորագրութեան մէջ թէն ժամանակ որոշուած չէ, թէ Բաֆֆին է՞րբ պետք է վերդարձնէ Կոստանեանցի աշխատութիւնը, սակայն, ըստ ասութեան վերջնոյս, այս ժամանակը վեց ամսուայ համար է եղել:

Մինչդեռ ահա 4 տարին անցնում է, և դեռ Բաֆֆին իւր գրաւոր խոստումը կատարած չէ: Առ այդ Գուչի վանահայրը շատ վշտացած էր «Խամսայի մելիքութեանց» հեղինակից, որ, ինչպէս երևում է իւր գրքի վերջին երեսներից, Կոստանեանցի աշխատութիւնից քչից-շատից օգտուել է:

Բաֆֆիի ստորագրութիւնը Կոստանեանցը մակագրելով ինձ յանձնեց, որ իւր աշխատութիւնը ստանալով իրան ճամփեմ:

Ուստի, ընդ սմին, ուղարկում եմ խմբագրութեանց պ. Բաֆֆիի ստորագրութիւնը: Յանձնեցէ՛ք իրան և Կոստանեանցի աշխատութիւնը յետս

¹ «Խամսայի մելիքութեանց» մէջ պ. Բաֆֆին ասում է, որ ինքը «Տօղ բերդում է եղել»: Դա սխալ է, որովհետև Տօղ բերդը համանուն լեռան բարձր գագաթին է: Պ. Բաֆֆիին առաջնորդող արժ. Գարեգին քահանան ևս ինձ ասաւ, որ իրանք Տօղ գիւղից դէնը չեն անցկացել: Նոյն բանն ասում է և պ. Առաքել Բաբախանեանը իւր «Ուխտաւորի յիշատակարանը» գրքոյկի մէջ: Հաւանական է ուրեմն, որ պ. Բաֆֆին կարծել է, թէ Տօղ գիւղն է նոյն ինքը՝ Տօղ բերդը

ստանալով՝ ուղարկեց՝ ք կա՛մ ինձ (մինչև ամսոյս վերջը եւ Շուշիում կը մնամ), կա՛մ Համազասպ քահանայ Տէր-Աւետիքեանցին: Նա կը հասցնէ ըստ պատկանելոյն¹:

Նոյն օրը՝ իրիկնապահին, Գոչայ վանքից մենք կրկին վերադարձանք Ամարաս, ուր յետ մի քանի ժամուայ հանգստութեան, գիշերուայ ժամը 2-ին եւ մի գիւղացի մանկան առաջնորդութեամբ ճամփայ ընկայ դէպի Շուշի: Արշալոյսը բացուելիս ուղեկիցս ինձ անուանեց այն գիւղերը, որոնք մեր ճանապարհի երկու կողմերումն են ընկնում, և ոմանք անտեսանելի էին մեզ:

Ահա այդ գիւղերը. 1) Սարուշէն՝ 65 տուն, 2) Փիրումաշէն՝ 5 տուն, 3) Խաչմաշ՝ 80 տուն, 4) Դոնավար՝ 300 տուն, 5) Շուշիքէնդ՝ 350 տուն, 6) Արկաթլու՝ 40 տուն, 7) Հունոտ՝ 15 տուն, 8) Աւետարանոց՝ 250 տուն, 9) Սղնախ՝ 50 տուն, 10) Քարինտակ՝ 100 տուն, 11) Ղարաբուլաղ՝ 60 տուն. 12) Ջաղացներ կամ Լիվազաս՝ 50 տուն²:

Հասնելով Շուշի՝ ես տեսայ, որ «Գաղտնիք Ղարաբաղի» պատմութեան մասին զանազան տարաձայնութիւնք են ծագել ոմանց մէջ: Բնական է, որ այդ տարաձայնութիւնքը պիտի հետաքրքրէին ինձ: Եւ ես աշխատեցայ հետամուտ լինել ճշմարտութեանը: Տարաձայնութիւններից ամենահիմնաւորը իմ աչքում վերաբերում էր պատմութեան բնագրի կորստեանը: Այդ բանը եւ արդէն գիտէի: Մակար վարդապետը յիշեալ աշխատութիւնը հենց ինձ յանձնած օրին ասել էր և իւր յառաջաբանութեան մէջ ևս գրել էր, որ բնագիրը կորած է: Այդ բանը պատահել է վարդապետի հին բնակարանից նոր բնակարան փոխադրուած ժամանակ: Յիշեալ ձեռագրի յետ կորել են նաև վարդապետի մի քանի գրքերն ու տետրակները ևս: Այդ կորստեան մասին իւր ժամանակին վարդապետը Շուշիում մունետիկ է ման ածել տուել, բայց ապարդիւն: Դրուստը ասած՝ սկզբում ես դժուարանում էի ամէնին հաւատ ընծայել՝ ինքս ինձ մի քանի ենթադրություններ անելով: Ես կարծում էի, որ «Գաղտնիքի» բնագիրը կա՛մ կորած չէ, կա՛մ մի օր պիտի գտնուի: Այդ էր ահա պատճառը, որ ձեռագրի կորստեան մասին իմ «Ակնարկներ»-ում ոչինչ յիշատակութիւն չէի արել ցարդ:

Այժմ, երբ իմ ճանապարհորդութիւնը վերջացած է, երբ, դժբախտաբար, ինձ անհնարին եղաւ պատմչի հետքերը գտնել, երբ իմ բոլոր ենթադրութիւն-

¹ Խմբ. Խնդրում ենք պ. Ըաֆֆիից ուղարկել խմբագրութեանս հայր Կոստանեանցի աշխատութիւնը և ստանալ մեզանից իւր ձեռագագիրը

² Այս գիւղերի բնակչաց թուերն ինձ հաղորդեց Արցախի վիճակային կոնսիստօրիայի ծառայողներից մինը

քը և հետախուզութիւնքը պատմութեան բնագիրը ձեռք բերելու մասին միանգամայն խորտակուեցան, անօգուտ անցան, երբ միւս կողմից զանազան տարաձայնութիւնք եմ լսում, որոնցից բնագրի կորստեան վերաբերեալը, ինչպէս ասացի, ինձ արդար և իրաւացի է թուում, այժմ, ասում եմ ես, կրկին դիմում եմ Մակար վարդապետին և պահանջելով պահանջում. «Տո՛ւր զհաշիւ տնտեսութեան քոյ»:

Համաձայնեցէ՛ք, ընթերցո՛ղ, որ Մակար վարդապետը չէ, ո՛վ ուզում է լինի, կատարեալը հանցաւոր է, եթէ այնքան տարի և այնքան խնամքով և զգուշութեամբ պահուած և վերջը իրան ամանաթ պահ տուած մի աւանդի հետ այդ աստիճան անհոգութեամբ է վերաբերվում և կորսնցնում: Բայց Մակար վարդապետը սարսափելի երդումներով ինձ հաւատացնում է, որ կորուստը կորուստ է:

Ի՞նչ է մնում ինձ անել, եթէ ոչ հաւատալ, մի մարդու, այն ևս կրօնաւորի խոսքերին և երդումներին: Եւ ես, մեծ ցաւ ի սիրտ, հաւատում եմ:

Բան կորսնցնելը, արդարև, սովորական և անմեղ երևոյթ է, բայց «Գաղտնիքի» բնագրի կորուստը մի կատարեալ անբախտութիւն է: Եւ թո՛ղ Մակար վարդապետն ինքն այդ մասին հաշիւ տայ իւր խղճի և աստուծոյ առաջ:

Այսպէս, տարաձայնութիւններից մինը և էականն ու հիմնաւորը մնաց և ցարդ մնում է անփարատելի: Միւս տարաձայնութիւնքը ես ստուգեցի և անհիմն գտայ: Ահա այդ տարաձայնութիւնքը:

Դիրք և կշիռ ունեցող մի անձն ինձ հաւատացնում է, որ «Գաղտնիք Ղարաբաղին» Մակար վարդապետի հեղինակութիւնն է: Յիշեալ անձը 1880 թուականին իւր իսկ աչքերով տեսել է վարդապետին «Գաղտնիքը» շարադրելիս: Ես, թէն խորին կերպով համոզուած էի և հիմայ էլ համոզուած եմ, որ Մակար վարդապետի ուժից և ձեռնահասութիւնից միանգամայն բարձր է «Ղարաբաղի գաղտնիքի» նման մի գրուածք շարադրել և յօրինել, այնուամենայնիւ, հետամուտ եղայ ստուգել վերոյիշեալ անձից իմ լսածը:

Դժբախտաբար, այդ անձը թէ՛ իմ բարեկամն է համարվում և թէ՛ Մակար վարդապետի և խնդրում, աղաչում է, որ ինձ հաղորդածը ես կողմնակի միջոցներով ստուգեմ՝ առանց վարդապետին իւր անունը յայտնելու: Ինչպէս ընթերցողը տեսնում է, իմ դրութիւնը բաւականին յիմար դրութիւն է: Մարդիկ, իբր ականատես, ինձ իրողութիւն և ճշմարտութիւն են հաղորդում, բայց միևնոյն ժամանակ չեն ուզում, որ ես իրանց և Մակար վարդապետին ճակատ առ ճակատ խօսեցնել տամ: Ի՞նչ արած: Դիմում եմ կողմնակի մի-

ջոցներին: Վարդապետի մօտ տեսնում եմ և սեպհական աչքերովս կարդում նախ՝ Զմիռնիոյ առաջնորդ գեր. Մելիքսեդեկ եպիսկոպոսի մի յանձնարարական գրութիւնը, երկրորդ՝ Պօլսոյ ազգային մի հիմնարկութեան (անունը միտս չէ) շնորհակալութեան թուղթն առ Մակար վարդապետ, որոնցից երևում է, որ 1880 թուականին վարդապետը տակաւին Տաճկաստանումն էր: Բացի դրանից՝ Մակար վարդապետը մի առ մի ինձ պատմում է, թէ ինքը Կ. Պօլսից երբ է դուրս եկել, երբ Ադսաթափա հասել, այնտեղ ոտը կոտրել, մի քանի ժամանակ հիւանդ մնացել, յետոյ անցել-գնացել Էջմիածին, որքան ժամանակ է այնտեղ մնացել, երբ է փոխադրուել Շուշի:

Այս ամենից յետոյ, ինքնըստինքեան, սուտ է դուրս գալիս ուրեմն ինձ հաղորդող անձի խօսքերը, թէ նա տեսել է 1880-ին Մակար վարդապետին «Գաղտնիքը» շարադրելիս:¹

Մի ուրիշ անձն ինձ ասաւ, որ ինքը Մակար վարդապետի խնդրանօք և նրա համար շատ և շատ գրաւոր տեղեկութիւնք է գտել և թարգմանել մի ժամանակ Շուշուայ գաւառական վարչութեան արխիւից: Ես այժմ կարծում եմ, որ «Գաղտնիքը» Մակար վարդապետն ինքն է շարադրել՝ հէնց վերոյիշեալ փաստաթղթերից օգուտ քաղելով: Այս բանը ես ուղղակի Մակար վարդապետին յայտնեցի: Նա պարոնի ասածի ճշմարիտ լինելը վկայելով՝ ինձ ցոյց տուեց, թէ ինչպէս իւր ստացած փաստաթղթերի թարգմանութիւնքը, նոյնպէս և նոյն ինքնորոյն, առանձին աշխատութիւնը նոյն տեղեկութեանց վերայ են հիմնեալ: Տեղեկութիւնքը վերաբերում են Ղափանի, Զանգեզուրի, Հալիձորի անցքերին, որոց մասին «Ղարաբաղի գաղտնիքի» մէջ ոչ իսկ յիշատակութիւն է լինում: Դրանցից Մակար վարդապետ Բարխուդարեանցը մի ինքնորոյն պատմական վէպ է գրում՝ ըստ օրինակի պ. Բաֆֆիի «Դաւիթ Բէկին»: Վէպը տակաւին կիսատ է: Եւ ես խորհուրդ տուի և կուտամ հայր Բարխուդարեանցին աշխատիլ գրուածքը հանձնել:

Մի քանի այլ անձինք ևս ինձ ասում էին, որ իրանք Մակար վարդապետին շատ անգամ տեսել են այս և այն թիւրք ծեր մօլլայի և խանի մօտ յաճախ երթնեկելիս և նրանցից զանազան տեղեկութիւնք և բանաւոր ականդութիւնք հաւաքելիս:

Այս ևս ճշմարիտ դուրս եկաւ: Յիշեալ տեղեկութիւնքը վարդապետը հաւաքել է իւր պատմական վէպի համար: Զանց եմ առնում յիշատակել և

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 40-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885 թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 90-ում (17 նոյեմբերի, էջ 1)

այն տարաձայնությունք, որոնք Շուշի հասել էին Թիֆլիսից, և որոց մէջ ոչ միայն Մակար վարդապետը խաբեբայ և խարդախ անձն էր հոչակվում, այլ նաև տողերիս գրողն էլ մեղադրվում էր իբրև վարդապետից կաշառուած մի անձն: Ես իմ կողմից ներում եմ այդ պարոններին: Բայց սրտանց ցաւում եմ, որ դրանք ևս իրանց կողմից չեն խղճահարվում ժողովրդի առաջ՝ ի տարապարտուց անուանարկել մի խեղճ վեղարաւորի, որ Արցախի այսօրուայ հոգևոր իշխանաւորներից միանգամայն արհամարհուած, անտես է արած և իւր հոգեկան միակ մխիթարութիւնը գտնում է գրաւոր օգտակար և անձանձիր պարապմանց մէջ¹:

«Գաղտնիք Ղարաբաղի» պատմութեան մասին Մակար վարդապետն իւր ժամանակին այլ և այլ անձանց է դիմել և խորհուրդ ու օգնութիւն հայցել: Այդ մարդկանցից առաջինն է Բաֆֆին, որ վարդապետի երկու իսկ նամակներն անպատասխանի է թողել միանգամայն: Սա եթէ սև նախանձ չէ, անպատճառ մեծ անքաղաքավարութիւն է պ. Բաֆֆիի և ումնիցէ կողմից: Երբ այդ բանը Շուշիում՝ սրբ. Սազիւնեանցի տանը և նրա ներկայութեամբ ես յայտնեցի «Աղբիւր»-ի խմբագիր պ. Տիգրան Նազարեանցին, նա ինձ ասաց, որ Բաֆֆին իբր թէ վարդապետի նամակներին պատասխանել է՝ առաջարկելով «Ղարաբաղի գաղտնիքը» իրան (Բաֆֆիին) ուղարկել, որ եթէ նրա մէջ օգտակար տեղեկութիւնք գտաւ, ժամանակին օգուտ կը քաղէ: Բայց Մակար վարդապետը Բաֆֆիից նոյնիսկ այս տեսակ պատասխան ստանալն ևս ժխտեց:

Ապա թէ ոչ, ո՛վ գիտէ, Մակար վարդապետ թերևս սխալուէր և իւր ձեռագիրն ուղարկէր «Խամսայի մելիքութիւններ»-ի հեղինակին, նա էլ այդ ձեռագիրը ևս պահէր այնպէս իւր մօտ, ըստ իւր տգեղ սովորութեան, ինչպէս չորս տարուց ի վեր պահում է ահա Գտչայ վանքի վանահայր Կոստանեանց վարդապետի ձեռագիրը, թէպէտև վեց ամիս ժամանակաւ է վերցրել նրանից:

«Գաղտնիքի» գոյութիւնը Մակար վարդապետը յայտնել է և սրբազան Արիստակէս եպիսկոպոս Մեղրակեանցին՝ խնդրելով, որ սա յիշեալ պատմութիւնը «Նոր-Դար»-ի մէջ տպել տայ և իւր՝ վարդապետի համար վար-

¹ Մակար վարդապետ Բարխուդարեանցն իւր ապրուստը հայթայթում է Շուշուայ ընկալական դպրոցում կրօն և հայ լեզու ուսուցանելով: Այդ պաշտօնը նրան հանձնել է հանգուցեալ Անդրեաս արքեպիսկոպոսը: Այժմ շատերը կան, որոնք այք են տնկել վարդապետի և այդ պաշտօնին: Ի պատիւ Շուշուայ հոգևոր դպրանոցի հոգաբարձութեանը՝ պէտք է ասած, որ նա այս տարի հայր Բարխուդարեանցին կրօնուսույց նշանակեց և իւր դպրանոցում

ձատրութիւն պահանջէ պ. Սպանդարեանցից: Պ. Սպանդարեանցը, իհարկէ իրաւունքով, կամեցել է նախ ձեռագիրը տեսնել և ապա տպագրութեան և վարձատրութեան մասին իւր որոշումները յայտնել:

Մինչև «Նոր-Դարի» խմբագրի այս պատասխանը ստանալը Մակար վարդապետը պատասխաններ է ստացել նաև Բագուից՝ աղա Առաքել Ծատուրեանցից, Սօսկուայից՝ Յակով աւագ քահանայ Սուրէնեանցից և պրոֆեսոր Քերովրէ Պատկանեանցից: Պ. Ծատուրեանցը բանաւոր կերպով, այլ ոչ գրաւոր, ինչպէս «Նոր-Դար»-ի մէջ գրած էր բժիշկ Արամեանցը, ապսպրել է վարդապետին, որ ինքն ուրախութեամբ յանձն է առնում տպագրել «Գաղտնիք Ղարաբաղին», եթէ որ հասկացող անձինք նրա արժանաւորութիւնը վկայեցին. մի առաջարկութիւն, որ, իհարկէ, նոյնպէս իրաւացի է: Սուրէնեանց քահանայն և նրա միջոցաւ պրոֆեսոր Պատկանեանցը պահանջել են Մակար վարդապետից, որ սա «Գաղտնիքը» շուտով իրանց ուղարկէ: Տպագրութեան ծախսը մայրաքաղաքներում, անշուշտ, կը հոգացուի:

Մակար վարդապետը իսկոյն ևեթ ուղարկում է «Գաղտնիքի» առաջին մասը միայն: Պրոֆ. Պատկանեանցը, իբրև գրաքննիչ, ձեռագրի տպուելու իրաւունքը տալիս է և յանձնարարում Սուրէնեանց քահանային՝ պահանջել և երկրորդ մասը: Այդ ժամանակ Սուրէնեանցը վախճանվում է Սօսկուայում: Մի քանի ժամանակից յետոյ հանգուցեալ քահանայի որդին՝ բժշկապետ Սուրէն Սուրէնեանցը, նամակ է գրում Մակար վարդապետին և յայտնում, որ ամբողջ գրքի տպագրութեան ծախքը հօր տեղակ ինքը պատրաստ է յոգալ, խնդրում է շտապել ուղարկել և նրա մնացեալ՝ երկրորդ մասը: Բայց Մակար վարդապետը չէ կամենում երկրորդ մասն ուղարկել: Ահաւասիկ հէնց այս օրերումն էր, որ ես Շուշի գտնուեցայ, վերոյիշեալ գրագրութիւնքը կարդացի, կարդացի «Գաղտնիքը» և նրա բովանդակութիւնն ամենահամառօտ կերպով սեղմեցի իմ «Ակնարկներ»-ում: Մի քանի ժամանակ յետոյ, համաձայն վարդապետի պահանջման, Սօսկուայից յետս ստացուեց «Գաղտնիքի» և՛ առաջին մասը, որոյ վերայ ես ինքս կարդացի գրաքննիչի թոյլտուութիւնը տպագրութեան համար: Այժմ հաւատացնում եմ թէ՛ Մակար վարդապետին և թէ՛ ումնիցէ, որ յիշեալ ձեռագրի երկրորդ մասն ևս Ռուսաստանում տպուելու ոչ մի էական արգելքի չէ կարող հանդիպել, որովհետև Երմօլով, Յիցիանով, Մադաթով և այլք, որոց այնքան խստութեամբ դատապարտում է «Գաղտնիքի» հեղինակը, պատմութեան սեպհա-

կանութիւն են: Եւ նրանց լաւ ու վատ գործունէութեանց լոյս աշխարհ հանելուց ո՛չ օրէնքը կը խպնի, ո՛չ պետական պատիւը: Առանց «Գաղտնիքի» էլ վերոյիշեալ անձնաց գործունէութիւնը քչից-շատից արդէն լոյս աշխարհ ելած է «Ակտերի» և նոյնիսկ մեր գրականութեան մէջ: «Գաղտնիքը» այդ մարդկանց գործունէութիւնը առաւել պարզում ու լուսաբանում է միայն: Մինչդէռ նրանում մեր ներքին նորագոյն պատմութեանը վերաբերեալ բազմաթիւ կէտերը խիստ հետաքրքրական, հրահանգիչ, նոր և թարմ են: Հետևաբար տողերիս գրողը իւր կողմից դառնում է ամէն մի հայ ձեռնհաս անձանց և մանաւանդ «Թիֆլիսի հայ գրք. հրատ. ընկերութեանը», որ յիշեալ պատմութիւնը Մակար վարդապետից ձեռք բերելու և հրատարակելու հոգ տանի¹:

¹ Թող ինձ ներէ պ. Բաբախանեան, որ իւր վերջին («Արձագանք» N 19) նամակը, իբրև մի անբովանդակ կամ լաւ է ասել մի ցուցամոլ դատարկաբանութիւն, անպատասխան եմ թողնում: Չարժէ, որովհետև մեզ բաց յայտնի են այն մարդիկ, որոնք մեր մէջ մի տող բան չեն ուզում գրել առանց Բելինսկիների, Վօլտերների, Շէքսպիրների և Գրիբոյեդովների անունները քաշքշելու: Թէպէտև այդ մարդիկը իրանք եւ շատ լաւ գիտեն, որ այդ հեղինակներից և ոչ մէկին իրանք չեն ճանաչում: Այդ մարդկանցից մէկն էլ ասասիկ և պ. Բաբախանեանն է, որին ես վաղուց եմ ճանաչում և չեմ զարմանում, երբ այդ պարոնը քննադատութեան մասին երբեմն իմ յայտնած մտքերը (տե՛ս «Գայծերի» մատենախօսութիւնը) այժմ ինձ է ուղղում, ինձանից ստացած ապրանքը ինձ է ուզում ծախել՝ առանց գէթ մտածելու, որ յիշեալ մտքերը «Գաղտնիքի» (չը տպուած գրքի) առթիւ գրուած իւր թող ասենք «քննադատութեան» հետ ոչ երբեք կարող են յարմարուիլ ու հաշտուիլ: Բայց պ. Բաբախանեանի երկրորդ նամակի մէջ մի պարբերութիւն կայ, որ կարելի չէ անուշադիր թողնել

«Մենք կարող էինք, -ասում է պ. Բաբախանեան, -մեր իմացած մասնաւոր տեղեկութիւններն էլ առաջ բերել մեր յօրուածում. մենք ցոյց կը տայինք շատ և շատ հետաքրքիր բաներ, որոց մասին պ. Հայկունին մինչև այժմ չէ մտածել անգամ: Այս հետաքրքիր բաները կը մնան մեզ մօտ հարկաւոր օրուայ համար»: Յայտնելով մեր ցաւը, որ «Արձագանքի» Շուշուայ աշխատակիցը իւր ունեցած «մասնաւոր տեղեկութիւնները» և «շատ ու շատ հետաքրքիր բաները» իզուր տեղը մինչև օրս թաքցրել է ընթերցող հասարակութիւնից և «քննադատութիւններ» է գրել երևի գրած լինելու համար, ես ահա յայտնում եմ, որ «Ղարաբաղի գաղտնիքի» մասին իմ գիտեցածս ու իմացածս ահա այս է, ինչ որ վերևում գրուած է: Եթէ «Արձագանքի» աշխատակիցը կարող է այս ամէնը հերքել, ջրել, եթէ պարոնը կարող է ապացուցանել «Գաղտնիքի» կեղծութիւնը և Մակար վարդապետի խաբէբայութիւնը, այն ժամանակ նրանից առաջին շնորհակալ լինողը ես կը լինեմ: Բայց մի անհրաժեշտ պայման, թող պ. Բաբախանեանը փաստերով և միմիայն փաստերով խօսի, իսկ իւր «քննադատական հայեացքներն» իրան համար պահէ: Դրանց արժէքը մենք արդէն պ. Բաբախանեանի առաջին նամակում տեսանք և կուշտ ծիծաղեցինք

Այլ առակ լուարոր: Անցեալներում Թիֆլիսի մէջ ի ներկայութեան Համազասպ քահանայ Տէր-Աւետիքեանցի, պ. պ. Ս. Հախումեանցի և Յ. Տէր-Մովսիսեանցի՝ Նիկողայոս Տէր-Աւետիքեանցը («Աղբիւր»-ի աշխատակից) ինձ ասում էր, որ իբր թէ ինքը՝ Բաֆֆին, իրան ասել է, թէ իւր մօտ Մակար վարդապետի մի նամակն ունի: Դրա մէջ վարդապետը իբր գրած է եղել Բաֆֆինին, որ «Գաղտնիք Ղարաբաղին» վարդապետի հեղինակութիւնն է, և այդ աշխատութիւնը անելիս վարդապետն օգուտ է քաղել այս ու այս աղբիւրներից

Եթէ, յիշուի, պ. Բաֆֆին ունի այդպիսի նամակ, հապա էլ ո՞ր օրուայ համար է պահել: Թող հարապարակ հանէ: Եւ ահա Բարխուդարեանց վարդապետի խաբէբայութիւնն ինքնըստիներեան կը յայտնուի, և այն ժամանակ, ինչպէս պ. Բաբախանեան, նոյնպէս և ամենայն ոք, բաց այչով կը տեսնեն, որ Մակար վարդապետի առաջին քարկոծողը ես ինքս կը լինեմ: Ապասում ենք, ուրեմն թէ՛ պ. Բաբախանեանի «մասնաւոր տեղեկութեանցը» և «շատ ու շատ հետաքրքիր բաներին» և թէ՛ Բաֆֆիի մօտ եղած նամակին

Պ. Նիկողայոս Տէր-Աւետիքեանցի առաջնորդութեամբ այցելեցի պ. Վահան Տէր-Գրիգորեան Դադեանին¹, որոյ մօտ բաւականին գրչագիր մատեաններ կան: Ահա դրանց համառօտ ցուցակը.

1. Տօնացոյց, թղթեայ, բաղկացած է երեք մասերից՝ Տօնացոյց, Աշխարհագրական գիտելիքներ Ս. Գրքի մէջ յիշուած տեղերի վերաբերութեամբ և Տաղարան: Տաղերի թիւը՝ երեք:

ա) «Տաղ ի Գրիգորիսէ Աղթամարցոյ ասացեալ», բովանդակութիւն սոխակն է և վարդը, ընդամենը 64 տուն:

բ) «Ողբ Կոստանդնուպօլսոյ, թուական հայոց 972 (1523)». ընդամենը 36 տուն, հեղինակը Առաքել Բաղիշեցին է:

գ) «Յաղէքսանդրէ գրոյն Խաչատուր վարդապետի Կեչառացոյ ասացեալ», ընդամենը 22 տուն, ամենի մի տունը՝ 5 և աւելի տողերից բաղկացեալ:

2. Աւետարան, թղթեայ և առանց յիշատակարանի:

3. «Մանդուղք աստուածային ելից», միջագիր և մագաղաթեայ աշխատութիւն, թուականը ՉՀԸ (1329), «յանապատս Փոս վերակոչեալ, յաշխարհիս Կիլիկեցոյ, ի թագաւորութեան Հայոց չորրորդ Լևոնի աստուածակարգ արքայի, որդոյ Աւշնի թագաւորի»:

4. «Միմեօնի վարդապետի Ջուղայեցոյ արարեալ Քերականութիւն ըստ լեզուի մերում Հայկազեանց», մագաղաթեայ: Գրքին կցած է նաև «Ստորագրութիւնք Արիստոտելի», ձեռագիրը թուական չունի:

5. «Մեկնութիւն սաղմոսաց Գրիգորի Տաթևացոյ», թղթեայ, հայկական ՊԿԳ (1414) թուականին՝ գրուած Տարբերունի գաւառում:

6. Մաշտոց, մագաղաթեայ, գրուել է Արցախի Գետաձոր գիւղում՝ ՌԺ (1561) թուին:

Նոյն պ. Նիկողայոս Տէր-Աւետիքեանցը նոյն անձանց մօտ ինձ ասաւ, թէ պ. Գալուստ Շիրմագանեանը ասել է, որ Սպրէս Բէկնագարեանցը իբր թէ վախճանած է Թարիզում դեռ 1836-ին: Հետևաբար նա չէր կարող մինչև 1881 թին Արցախում լինել: Գիտնալով, որ պ. Շիրմագանեանը պարսից պատմութեան և պարսկաստանցի հայ գործիչների անցելոյն հետ լաւ ծանօթ է, ես ցանկացայ տեսնել պարոնին և հետը անձամբ խօսել: Բայց, դժբախտաբար, չը կարողացայ ցարդ տեսնել: Ուստի ահա հրապարակաւ խնդրում եմ պ. Շիրմագանեանից յայտնել հրապարակաւ իւր գիտեցածը Սպրէս Բէկնագարեանցի և, եթէ ուզում է, նաև «Գաղտնիք Ղարաբաղիի» մասին Տողերիս գրողը ոչինչ բանով Մակար վարդապետի հետ կապուած չէ: Եւ նա նոյնպէս և գուցէ աւելի, կարօտ է հարցի պարզուելուն: Թող ուրեմն հրապարակ գայ նա, ով ինչ ասելիք ունի: Քունջուպուճախների խօսք ու գրոյցները և պատաւական բամբասանքները ո՛չ հարց են պարզում և ո՛չ խօսողների պատիւ բերում:

(Ծանոթ. խմբ.) Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 41-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885 թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 93-ում (28 նոյեմբերի, էջ 1-2)

¹ Խոսքը Խաչիկ վարդապետ Դադյանի մասին է (ծանոթ. խմբ.)

7. Մաշտոց, թղթեայ, ՌՃԺԷ (1668) թուին, գրուած «յերկիրս Հագարեան ի գեօղն, որ կոչի Հարար»:

8. Մաշտոց, թղթեայ, ՌՀ (1621) թուականաւ:

9. «Սահմանք իմաստասիրաց Դաւթի Անյաղթի», թղթեայ, գրքի մէջ կայ նաև «Դաւթի Անյաղթ փիլիսոփայի ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ», կայ նոյնպէս «Յովհաննիսի բաբունոյ ի խնդրոյ ուսումնասէր և բարեպաշտ իշխանին... ասացեալ յաղագս երկնի և գարդուք նորին»:

10. Մաշտոց, թղթեայ, անթուական:

11. Վեց մասերից բաղկացած մի գիրք, մագաղաթեայ, անունը և թիւն անյայտ, բովանդակութիւնը՝ կրօնական և քաղաքական, նամականիք և ճառեր:

12. Ժողովածու, թղթեայ և կիսով չափ մաշտուած:

13. «Սամուէլ քահանայի հաւաքմունք ի հնոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայ. ծայրաքաղ (ծաղկաքաղ) արարեալ»: Յիշատակարանից երևում է, որ գրուած է ՉԿԴ (1315) թուականում Արճիշոյ Ուռընձոր մենաստանում:

14. Մօտ 400 մեծադիր թերթերից բաղկացած մի գիրք, թղթեայ և անթուական, որոյ մէջ կան երգեր, գանձեր, տաղեր, մեծաւ մասամբ կրօնական բովանդակութեամբ: Հեղինակներից ոմանք կարծեօք ցարդ անյայտ են:

15. Գանձարան, անթուական և թղթեայ, մօտ 500 թերթերից բաղկացած: Երգերի բովանդակութիւնը՝ կրօնային:

16. «Տեսիլ սրբոյն Գրիգորի վասն Հոգւոյն և Մարմնոյն», թղթեայ և անթուական:

17. Ժողովածու այլ և այլ ճառերի և քարոզների, անթիւ և թղթեայ:

18. «Մեկնութիւն չորից աւետարանչաց Տաթևացոյ», թղթեայ և անթուական:

19. «Հարանց վարք», թղթեայ, «յԱսքանագեանս մեծ տոմարի, հայոց մեծաց թուականի, երբեակ քառիցս հարիւրի եօթանց տասանց և միակի» (1271թ.) գրուած է «ի մեծ քաղաքս արքունի, որ Տրապէզ սա յորջորջի»:

20. Մաղմուս, ընտիր մագաղաթ և ձեռագիր, ավստ՝ ս, որ թուական չունի:

21. Քարոզգիրք, թղթեայ, անթուական:

22. Քերականութիւն, թղթեայ, մեծադիր, մօտ 300 թերթ, հեղինակը և թուականն անյայտ:

23. «Յովհաննու պիտակ աշակերտի Գրիգորի եռամեծի արարեալ զարարութիւն կարգաց չորեքտասան աստիճան վարդապետաց և լուսաւոր բանից», թղթեայ և անթուական:

24. Քարոզգիրք, մաշուած, հեղինակը և թիւն անյայտ:

25-26. Երկու անկազմ և անթիւ գրեանք՝ ճառեր և խրատներ:

27. «Հարցմունք և լուծմունք սրբոյն Գրիգորի Տաթևացոց», մեծաղիր, թղթեայ, թուականը՝ ՊԽԶ (1397 թ.):

28. «Գիրք հարցման, զոր արարեալ է երջանկապատիւ և երիցս երանեալ ս. հայրն մեր Գրիգոր կոչեցեալն Տաթևացի. այլ և ասացուածք մեծ վարժապետին Յովհաննու Որոտնեցոյ ի բանից մարգարէիցն», ի թուականիս հայկական ազգիս, մի հազար և հարիւր տասն և մի թոյս (1111-ին=1662 թ.), թղթեայ խոշոր դիրքով, քառածաւալ: Լուսանցքներից մեկի վերայ եղած ծանօթութիւնից երևում է, որ այս գիրքը հեղինակի մետասաներորդ աշխատութիւնն է: Գրուած է Երնջակի վանքում ուն Եսայի Կարճաւանցոյ հրամանաւ:

29. «Մեկնութիւն գործոց առաքելոց Յովհաննու Ոսկերերանի», թղթեայ, թուականի՝ «Խոսրովային թոյ Հայկազանցս հինգ հարիւր երրորդի քառասներորդ երրորդի (1094 թ.), մեծաղիր, ունի մի ընդարձակ յիշատակարան Պահլաւունի ս. Գրիգորի համանուն որդոյ կողմից գրած: Յիշատակարանի վերջումը ասած է. «Ընդ օրինակեցան գիրքս այս ըստ Կեսարացոց օրինակաց, որ կան յարկեղս գրոց սրբոյն Պամփիւլեայ իւրովք ձեռովք գրեալ»: Միննոյն այս բառերը ես գրուած տեսայ նաև Առջաձորի եկեղեցում եղող աստուածաշնչի յիշատակարանի վերջումը»:

30. «Գիրք առաքիւնութեան և մոլութեանց», մեծաղիր, անթուական: Սոյն այս գրքի մի այլ օրինակը ես տեսայ նաև Գանձասարի վանքում և կարծեմ նախկին ցուցակներումս յիշել եմ:

Բացի այս գրքերից, որոց մեծագոյն մասը Երից Մանկանց վանքի սեպհականութիւնք են եղել մի ժամանակ, պ. Դադեանի մօտ ես տեսայ նաև մի քանի երկաթագիր, նօտրգիր և մեսրոպագիր թերթեր, Վշտալի Եփրեմ կաթողիկոսի 4 կոնդակներ՝ գրուած 1824-1830 թուականների ընթացքում: Տեսայ նոյնպէս Ստեփան արքեպիսկոպոս Ենօքեանի մի նամակը՝ գրած յամին 1828 յունիսի առ ուն ազնուական իշխան Աղաբէկ, որոյ մօտ Ենօքեան արքեպիսկոպոսը պարծենում է, որ ինքը Պարսկաստանից 10.000 տուն հայ է գաղթեցրել:

Վրեջապէս պարոնի մօտ կան նմանապէս Աղունից կաթողիկոսաց երկու կոնդակները¹:

Իբրև մի փոքրիկ նմուշ՝ զետեղում եմ «Ակնարկներ»-ում պ. Սամուէլ Գիւլզադեանի «Ոսկի աղունակ» գուսանական վիպասանութեան (որոյ մասին նախորդ նամակներիցս մինում մի երկու խօսք ասել եմ) նախերգանքը և դրանով վերջ տալիս «Ուղեգնացական ակնարկներ»-իս: Ինքս էլ յետ երկու ատուր կը թողնեմ Արցախը՝ ուղղակի Թիֆլիս գնալու համար, իսկ Գիւլիստանի հետ ծանօթանալս, դժբախտաբար, մնաց մի այլ պատեհ ժամանակի:

Գալով Արցախի վանական կալուածոց և եկեղեցականութեան մասին խոստացածս յօդուածոց՝ կաշխատեմ Թիֆլիսում պատրաստել և առանձին յանձնել խմբագրութեանդ²:

Ահա «Ոսկի Աղունակ»-ի նախերգանքը.

«Ողջոյն ձեզի, Տիարք և Տիկնայք,

Բոլոր Հայոց ճանապարհի,

Աստուած ձեզի տայ երկար կեանք,

Ձեր որդիքը ողջ պահի:

Ես երգիչ եմ և վիպասան,

Ծառայ եմ ձեր ամենքին,

Հրամա՛ն տուէք, պատմեմ մի բան

Կամ ձեզ մի լաւ երգ երգեմ:

Փող չեմ ուզիլ վարձիւմ երգին

Գողթում ունիւմ ես այգի,

Նա բերում է բաւականին

Ինձի ապրուստ և գինի:

Ես չեմ սիրում ոսկու ձայնը,

Ոչ իւր երես շէկ-դեղնած,

Ոչ արծաթի դահեկանը՝

Մեռելի պէս գոյն թռած:

Ես սիրում եմ բամբոխ ձայնը,

Կարմիր գինին մեր Գողթնեաց,

Հայոց աշխրի երգն ու պարը,

Ցուցք ու զրոյց, վէպք Նախնեաց:

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի 42-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885 թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 94-ում (28 նոյեմբերի, էջ 1-2)

² Այդ յօդուածները կը տպուին առաջիկայ 1886 թուականի «Մեղուի» համարներում

Դուք չէք տեսել, տեա՛րք և տիկնա՛յք,
Մեր գինաւէտ այգեստանք,
Եւ չէք խմել անուշահամ
Հրեղէն գինուց մեր Գողթան:

Մեր գինին էլ Արամազդայ
Գինայ ակնի ջուր անմահ,
Ազատն ի վեր՝ Մասեաց Քաջաց
Հրեղէն այգուց Գողթն եկած:

Որից կտրեց, գաղտ Քաջերից,
Տնկեց Նոյը Արկուռի,
Խմեց գինուց, զուարթ ապրեց
Դեռ էլ երկար շատ տարի:
Եւ այդ հրեղէն գինու ոգուով
Երգիչ դառան հինք Գողթնեաց,
Արամազդնեան բամբռի լարով
Երգել պատմել գործք նախնեաց:

Այն գործերը ամենահին,
Որ վիպասան-երգիչներ
Իրենց լանջեր գիրք շինեցին
Ձայնագրեցին վրան անգիր.

Այն երգերը, որ Հայ-նախնեաց
Կեանքից իրենց կեանք առին,
Երգիչների սրտի խորքից
Հայի հոգուով բղխեցին:

Եւ երկնքում ստեղծեցին
Մեծն Արմազդ, Քաջ Վահագ,
Մէկին տուին երկին, երկիր,
Միւսին՝ կորով ոյժ անյաղթ:

Մէկի ուսման ճարտարութեան,
Տիր դպիրը կամ գրող,
Ու գրածը ճակտին մարդկան
Կարդացողը՝ սև կրող:

Միւսին՝ երկնից որոտ, փայլակ,

Քաղեկ թաթառ, վիշապներ,
Եւ ողջ երկրի ծովն ու ցամաք,
Քաղեկ գագան, վիշապներ:
Ու երազընդհանն երազգաւոր,
Եւ առլէզն ու դիք սպիտակ.
Մին՝ ողջացնող քաջ վիրաւոր,
Միւս՝ կորած քաջի գտակ:
Եւ տատ ու մայր զգաստութեան
Հայոց աշխրին տուող կեանք
Նանէական-Անհատական
Հնարքի-խնամքի դիք-տիկնայք:

Եւ երկրումս ծնեցրին
Նոցա համհարզ դիւցաունք,
Եւ հոմանիշ սոցա ձիրքին
Հայոց տիկնայքը՝ փափկասունք:
Եւ վառեցին սիրտ Սահակի
Բագրատունի ասպետի՝
Տալ Մովսէսի Խորենացուն
Գրել Հայոց Պատմութիւն:

Այդ երգք տուին՝ ամենահին
Հայոց լեզուի նշխարներ
Թարգմանչաց, նոյն ոճովն անգին,
Հայացնել յոյն գրքերը:
Բայց հէնց այդ իսկ խլեց կտրեց
Այն երգք Հայի բերանից.
Եւ նոցա տեղ տուեց Հային
Խորթ փառքի երգքն օտարի:
Եւ վերցրեց Հայ աշխրից
Գողթան վերջին էլ երգչին,
Որին տեսաւ աչք Սահակի,
Լսեց և ունկ Խորենի:
Եւ հրեղէն Գողթան գինին
Լուաց նորա էլ մարմին.
Որթի տերևք պատանեցին,
Ճիւղերը նաժ հիւսեցին;

Բարձին նորան և իւր բամբիռ
Ուսոց վրան՝ սիրողներ,
Տարան այգին և յանձնեցին
Հովանաւոր որթենոյն:

Նորա վերայ ողկոյց կթեց
Իւր ստինքը քաղցր արիւն,
Ողորմաթասն հոգին տարեց
Անմահ դրախտի գինետուն:

Եւ որթը նրան արտասուալից
Եւ իւր բամբիռն համբուրեց,
Արտասուաթոր ուռքը շիրիմն
Բազկատարած գրկեցին:

Որ տեսնողքը անգիր կարդան
Այս է տապան հանգստեան,
Գողթան վերջին վիպասանի
Եւ իւր անմահ բամբոյի:

Նորա հետ և երգք հայկական
Գուսանական, վիպական՝
Երկու-երեք հազար տարուան՝
Ամէնքն իջան գերեզման:

Գերեզմանից դուրս մնաց միայն
Փառք Մովսէսի Խորենայ
Չորս-հինգ նշխարք այդ հնութեան,
Որից մէկը ձեզ ահա՛:

Դա մի ուլունք է, երգն ասում,
Կապած կնոջ մի վզում,
Որ ողջ աշխրի է կախարդում
Ու վերջը ծովն է ընկնում:

Եւ մի քար է Նիորէ անուն,
Դարձեալ նոյն երգն է ասում,
Դա առաջին մարդն է աշխարհում,
Որ քարանում է Վանում:

Կինը Շամրամն է, երգն ասում,
Աշխրիս էն մեծ թագուհին.

Որի նմանն ոչ մի դարում
 Չեկաւ, չի էլ գայ ոչ մին:
 Նա ծնուում է բախտի աշխարում,
 Մայրը նորան դէն ձգում,
 Բայց աղանիք մի անտառում
 Կերակրում են ու պահում:
 Նա մեծանում է ոնց թռչուն,
 Գնում իւր բախտն որոնում,
 Գտնում ձգում վիզը մի ուլունք,
 Աշխարիս էն մեծ թիրախում:
 Նա տիրում է աշխարիս կէսին
 Ու ինչ կայ, չը կայ իւր մէջին,
 Ողջ փառք ու գանձ և հեշտութիւն
 Տալիս նորան իւր ուլունք:
 Բայց էլի նա չէ կշտանում
 Կարօտում է մի հային,
 Աշխարհս նորան է խոստանում,
 Թէ նա սիրտ տայ իւր սէրին:
 Իսկը Հայը ունէր իւր Հայ լաւ կին,
 Եւ սիրում էր իւր հողն ու ջուր,
 Միրտը նորա դէմ քարանում,
 Մերժում նորա սէր, տրիտուր:
 Նա չէ թողնում հողն ու կնկան,
 Զոհում նոցա կեանքն իւր,
 Ծովն է ընկնում և Շամիրամ
 Յուռութ ուլունք վզին իւր:
 Եւ աղանի դառնում, թռչում,
 Գնում երկինք իւր հոգին,
 Մեր Հայոց Հայկ-աստեղատունն
 Դարձեալ պտրել այն Հային:
 Իսկ մարմինը քար է դառնում,
 Որպէս արձան՝ յիշեցնում
 Արայի սէրն ու բնութիւն
 Քարից ամուր հաստատուն:

Իսկ Շամիրամն փայտուն ուլունք
Թոյլ բեկանուտ իւր դէմում,
Ընկած լողում և ընկղմում
Իրեն սիրոյ խոր ծովում:

Այդ Հայր Արան է գեղեցիկ,
Ողջ աշխարհի օրինակ,
Որին և դիք ափսոսացին,
Լիզում էին տալ իւր կեանք:

Որի պէս սէր չունին մարդիկ,
Բայց միայն անմեղ աղանիք,
Եւ հէնց այդ իսկ ձեզ, տեա՛րք, տիկնա՛յք,
Երգում, պատմում եմ հիմակ:

Եւ հէնց դորա համար իմ երգ
Կոչում «Ոսկի աղունակ»,
Լսե՛ք, տեսե՛ք այդ աղունիկ
Թանկ արժէ, քան ոսկու հանք:

Փող չեմ ուզում, ասի արդէն,
Իմ պատմելու այդ երգին,
Իմ աշխոյժը միայն Գողթի
Գինին կարող է վառի:

Նա է զարկում և իմ սրտի
Բամբռի լարերը ջղալի,
Երգում, պատմում ահա ձեզի
Այս երգն Հայոց աշխարհի»¹:

Երևան, 2010, 104 էջ

¹ Այստեղ ավարտվում է «Ուղեգնացական ակնարկներ»-ի վերջին՝ 43-րդ նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1885 թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականի N 95-ում (5 դեկտեմբերի, էջ 1-2)

ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԱՂՎԱՆԻՑ ԵՎ ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒՄ

Ա

Հրաժեշտ Թիֆլիսին: - Անվճար ճանապարհաթուղթ: - Նոր շինված խճուղին և ձիաների խելքը: - Ղարաչիների թաբուն: - Գոմեշների, եզների և կովերի վիճակը: - Թարաքամանների ձմեռոցները: - Հայերի խելքը: - Ղազախը, Շամշադինը և Շամքորը: - Գանձակը հեռվից:

1881թ. հուլիսի 25-ին թողի Թիֆլիսը: Ճանապարհի սայլակը, որ բերել էին ինձ համար փոստի կայարանից, այնքան նեղ, այնքան փոքրիկ էր, որ կարծես ձվի պես կիսած կճեպից էր շինված: Ասում են՝ կապալառուները այդ վարպետությունը բանեցնում են, որ ճանապարհորդները շատ ծանրություններ չկարողանան վեր առնել իրանց հետ: Ճշմարիտն ասած՝ թե՛ իմ և թե՛ ընկերիս ծանրությունները մեծ չէին: Նա ուներ մի թեթև մաֆրաշ, իսկ ես՝ մի փոքրիկ չեմոդան: Մաֆրաշը դրեցինք մեր տակին, իսկ չեմոդանը՝ մեր ոտների առաջ: Նստեցինք. սայլակը շարժվեցավ: Հետո ես՝ իմ կողմից, ընկերս՝ յուր կողմից, սկսեցինք միմյանց քաղաքավարությամբ հարցնել. «Ձեր տեղը ինչպե՞ս է, հանգի՞ստ եք»: Բայց մեզանից ոչ մեկը չէր ուզում սկզբում խոստովանել, որ նստած է համարյա մի փշի վրա, մի փոքր անզգույշ շարժում – և հա կզլորվի ցած... Վերջը ընկերս ասաց ինձ.

- Երբ այդ փոստայի կապալառուները իրանց գեղծումների համար կդատապարտվեին տաժանակիր աշխատանքի, ես եթե դատավոր լինեի, կվճռեի նրանց նստացնել իրանց շինել տված սայլակների վրա և մի քանի տարի ման ածել խճուղու (շոսեի) ճանապարհով...

Սալահլուի փոստայի կայարանում պատահեց մեզ ականատես լինել մի սկանդալի: Դռան առջև ինքնաբավական վեհությամբ կանգնած էր կայարանի հսկողը (смотритель). նրա մոտ կանգնած էին մի քանի քած շներ: (Քած շներ կարելի է տեսնել ամեն կայարաններում. նրանք հսկողների (смотритель-ների) անբաժան ընկերուհիներն են, գրելու ժամանակ պտտվում են նրա գրասեղանի շուրջը, քնելու ժամանակ պառկած են նրա մահճակալի մոտ, իսկ դուրս գալու ժամանակ նրանից չեն հեռանում): Հսկողի առջև, վզները ծռած, կանգնել էին երկու պարսկաստանցի ասորիներ: Դրանց

կեսը՝ թուրքերեն, կեսը՝ հայերեն, կեսը ռուսերեն ասում էին. «Աստված է վկա, մենք տվել ենք... մեզանից առել են փողը... մեզ ասեցին, որ ձեզանից փող էլ չի պահանջվի...»:

Մոտորիտելը երբեմն հռհռում էր խեղճ ճանապարհորդների միամտության վրա, երբեմն բարկանում էր, երբեմն հայհոյում էր, վերջապես բարեհաճեց ասել. «Ձեզ խաբել են...»:

Բանից ի՞նչ դուրս եկավ: Երկու ասորիները Թիֆլիսում գնում են ճանապարհաթուղթ (подорожная) առնելու: Գանձապահության (казначейство) արտիստ-գրագիրներից մեկը, նկատելով, որ դրանք անփորձ մարդիկ են, հանձն է առնում նրանց ճանապարհաթուղթ տալ, իհարկե, գանձարանից առնելով: Նա ստանում է ասորիներից, սկսյալ Թիֆլիսից մինչև Կարս, ամբողջ ճանապարհավճարը (прогон), հավատացնելով նրանց, թե այլևս նրանցից փող չի պահանջվի, ամեն տեղ ձիաներ կտան և այդ թղթով կարող են ցանկացած քաղաքը գնալ՝ առանց մի կոպեկ վճարելու:

Ասորիները դժվարանում էին հավատալ, որ գրագիրը կարող էր այսպես խաբել նրանց: Երբ նրանց հասկացրին, թե յուրաքանչյուր կայարանում պետք է նորից փող վճարեն ձիաներ ստանալու համար, նրանք ստիպվեցան ոտքով վերադառնալ Թիֆլիս և որոնել իրանց կողոպտող արտիստին:

Ասորիների վիճակը մեզ այնքան չէր հետաքրքրում, որքան մեր սեփական դրությունը: Սալահլուի կայարանում մտածեցինք մի կերպ անել, որ գոնե այս անգամ կարողանանք փոքր-ինչ հանգիստ նստել սայլակի վրա: Ընկերիս մաֆրաշը էլի առաջվա նման դրեցինք մեր տակին, իսկ իմ չեմոդանը կապել տվինք սայլակի ետևը:

Կարծես բախտը վճռել էր դեռևս երկար հալածել մեզ: Կես ճանապարհին ետ եմ նայում, տեսնում եմ, որ չեմոդանը չկա: Սայլավարը այնքան վատ էր կապել, որ ճանապարհին ցած էր ընկել: Անպիտանը իր մեղքը քավելու համար իսկույն բաց արեց ձիաներից մեկը, նստեց և վազեցրուց, որ գոնե չեմոդանը: Այդ միջոցին իմ գլխում ծագեց մի միտք. եթե այդ ավագակը չեմոդանը կգտնե, մի փոսի մեջ կծածկե, հետո կվերադառնա ինձ լուր կբերե, թե չգտա, անցորդները տարել են,- ես ի՞նչ կարող եմ ասել նրան: Այդ ենթադրությունը շատ հավանական էր, թեև սայլապանը, իմ չեմոդանը գողանալով, շատ խեղ չէր տանի. նրա մեջ կային՝ Ջալալյանցի ճանապարհորդությունը, Թադիադյանցի ճանապարհորդությունը, Կադանկատվացու Աղվանից պատմությունը, Օրբեյանի Սյունյաց պատմությունը, Ինչիջյանի հնա-

խոսությունները, հին Հայաստանի քարտեզը, մի քանի կտոր ուրիշ քարտեզներ նոր Հայաստանի մասին, «Մշակի» վերջին համարները, որ Թիֆլիսում ժամանակ չէի ունեցել կարդալու, թուղթ, մատիտ, մի խոսքով՝ բոլորը մի սայլավարի համար անպետք բաներ:

Բայց հենց որ ձին մի քանի քայլ վազեցրի, ես մոռացա Ինջիջյանի հնախոսությունն էլ, հին Հայաստանն էլ, նոր Հայաստանն էլ... ով որ յուր կյանքում գոնե մի անգամ նստել է տկլոր ձիու վրա, կհասկանա իմ դրությունը: Ավելացնենք դրան, որ ձին սաստիկ նիհար էր, մեջքի ողնաշարը լեռնային շղթայի նման դուրս էր ցցված: (Այդ պետք է վերաբերել փոստայի ստարուտաների առողջապահական հմտությանը, որ նրանք իրանց խնամակալությանը հանձնված ձիաներին շատ գարի չեն ուտացնում, զգուշանալով, միգուցե նրանց ստամոքսը փչացնեն): Ինչ էլ որ լինի, իմ դրությունը անտանելի էր: Ես նստած էի, ինչպես որ ասեցի, ձիու տկլոր մեջքի վրա: Հենց որ նա *սրտնկում* էր, ես այնպես էի կարծում, որ ողնաշարի սուր, դուրս ցցված ոսկորները իմ նստատեղը կտրատում էին:

Ծիծաղելի բան է, որ մարդ ամենասարսափելի տագնապի մեջ երբեմն փիլիսոփա է դառնում: Այդ միջոցին մի բան գրավեց իմ ուշադրությունը, ես մոռացա իմ ցավը, սկսեցի դրա վրա մտածել: Ձին քշում էի խճուղու վրայով, բայց նա սատանայի նման կանգնում էր, ճանապարհից դուրս էր գալիս, և աշխատում էր կողքերովը գնալ: Այստեղ ի՞նչ խորամանկություն կարող էր լինել: Հետո իմացա, որ ձին չէր ցանկանում իր սմբակները ջարդել խճուղու անհարթ մակերևույթի վրա, և ավելի բարվոք էր համարում կողքերովը գնալ, ուր գետինը իր բռի դրության մեջ համեմատաբար ավելի փափուկ էր և հավասար: «Այդ խելացի անասունը, ասացի ինձ ու ինձ, ավելի լավ է հասկանում խճուղու անպիտանությունը, քան այն բազմաթիվ ռևիզորները, որոնք գալիս են, տեսնում են և զեկուցում են տալիս, թե «ամեն ինչ լավ է...»:

Սայլավարը գտավ չեմոդանը: Եվ հեռվից ինձ տեսնելով, որ արդեն մոտենում եմ, իհարկե շատ էլ որ ցանկանար, չէր կարող թաքցնել նրան. միայն ուրախությամբ ձայն տվեց. «ադա, *նավորական* շատ պիտի տաս...»:

Ձիաները կրկին կապեցին սայլակին, նա շարժվեցավ:

Սայլավարը իր խելքով պակաս չէր երևում իր ձիաներից: Նա էլ, թողնելով խճուղին, քշում էր կողքերի ճանապարհներով, որոնք զանազան ուղղությամբ երբեմն հեռանում էին, երբեմն մոտենում էին խճուղուն: Մերկ գետինը, քանդվելով անիվների ծանրության տակ, հողը, փշրվելով, մանրվե-

լով, փոշիացել էր և մի քանի թիզ թանձրությամբ ծածկել էր ճանապարհը: Անիվները, խրվելով, ակոսներ բաց անելով, անցնում էին՝ բարձրացնելով ահագին փոշեղեն ամպ, որի մեջ խիստ հեշտությամբ կարելի էր կուրանալ, իսկ դժվարությամբ շունչ քաշել:

Ես կարծեցի, թե սայլավարներին պատվիրված է խճուղու հետ խնայողությամբ վարվել, նրա վրայով չքշել, որպեսզի չմաշվի:

Այս պատճառով հարցրի սայլավարից.

- Ինչո՞ւ չեք քշում խճուղու վրայով:

- Այնտեղից, աղա, մենք քշում ենք միայն անձրևային օրերում, երբ այստեղից ցեխ է լինում, - նա ցույց տվեց իր գնացած թանձր փոշիով ծածկված ճանապարհը, որի անձրևային օրերի ցեխը կարելի էր երևակայել, թե ինչ կլինի:

Ինձ շատ է պատահել տեսնել ասիական գնչուների թաքուններ, բայց Կովկասում առաջին անգամ ես տեսա նրանց: Մեր մոտով անցավ դարաչիների մի ամբողջ քարավան: Խիստ հետաքրքիր էր նայել բնության այդ ազատ զավակների վրա, որոց համար ոչ հայրենիք կա և ոչ տուն: Քարավանը շարժվում էր արագ, խառնափնթոր բազմությամբ, անասունների համարյա ամեն տեսակները կարելի էր գտնել այնտեղ: Տեսնում ես՝ բարձած ավանակի խուրջինի մի հակից երևում է մի նորածին քուռակի գլուխը, որը, դեռ շատ թույլ լինելով, չէր կարողացել հետևել յուր մորը: Խուրջինի մյուս հակից երևում են երկու փոքրիկ երեխաների գլուխներ: Բարձած ավանակը վազում է քարավանի հետ, տնկտնկում է, և երեխաների գլուխները ավանակի շարժելուց ներդաշնակաբար զարկվում են միմյանց: Նրանք հանգիստ են, կարծես ցավ չեն զգում: Մինը, երևի, քնած է, գլուխը թեքված է դեպի ցած և օրորվում է ավանակի քայլերի հետ:

Կնիկները բաց կուրծքով, մերկ սրունքներով և բոքիկ ոտներով վազում են քարավանի հետ: Դրանք էլ ավանակների նման բարձած են. մեկը շալակին կապել է իր երեխան, իսկ մյուս ծծկերին գրկած ունի: Տղան այնպես պինդ լկել է մոր կուրծքին և ծծում է, կարծես տզրուկ լինի:

Ահա՛ այնտեղ ավանակի բեռան վրա կապած են մի քանի հավեր: Մյուս բեռան վրա պազել է մի կապիկ և, հեզնական ժպիտը երեսին, նայում է իր շուրջը:

Գլխավոր մթերքը, որ բարձած է ավանակների վրա, են պատրաստի կամ անպատրաստ մաղեր, որ այդ ցեղի արհեստագործության գլխավոր արդ-

յունքն է: Նրանք հավաքում են տներից ձիու ազիներ և նրանցից մաղեր են պատրաստում:

Մեր սայլակը կանգնեցրին մի քանի կնիկներ, որոնք մոտեցան զանազան հարցերով: Այդ կնիկների ձեռքի թաթերի, բազուկների, կուրծքի և երեսի վրա երևում էին մուգ-կապույտ գույնով զանազան նկարներ, որ դրոշմված էին մարմնի կաշու վրա... և այդ ավելացնում էր նրանց վայրենի գեղեցկության վրա մի առանձին հրապուրանք:

Մեկը մեկնեց ինձ սև, փայլուն քարածուխից շինած մի բան, ասելով.

- Գնիր, պարոն, դա կբախտավորե քեզ:

- Այդ ի՞նչ է,- հարցրի ես՝ ընդունելով բախտավորեցուցիչ առարկան, որը տափակ քառանկյունի ձև ուներ և մակերևույթի վրա փորված էին զանազան երևակայական նշանագրեր:

- Թիլիսման է,- պատասխանեց նա խորամանկ ժպիտով, ուղիղ աչքերիս մեջ նայելով, ավելացրեց,- քեզ մի վտանգ է սպառնում. կամեն՞ում ես, քեզ համար «Ֆալ բաց անեմ» (գուշակեմ):

Մտածելով, որ մի քանի կոպեկներով կարող եմ ազատվել գնչուհու թախանձելուց, քսան կոպեկով ազատվեցա նորանից:

Մեր սայլակը շարժվեցավ, և տասն բոպե արագ քշելուց հետո հազիվ դուրս եկանք փոշեղեն մառախուղի միջից, որ դարաչիների քարավանը թողել էր ճանապարհի վրա:

Կարծես այդ կողմերում բոլոր ժողովուրդը դեռ չէր դուրս եկել այն նախնական դրությունից, որի մեջ դեռ ապրում են դարաչիները:

Ճանապարհի վրա անդադար տեսնում էի ահագին, ծանր սայլերի խումբեր, որ ճոնչալով ձգում էին մի գույգ գոմեշներ, իսկ նրանց առջև՝ լծած մի գույգ եզներ: Ծիծաղելի բան է տեսնել վիթխարի գոմեշին *խամուտների* մեջ: Խե՛ղճ անասուն, ինչ աշխատության մեջ ասես նրան չեն գործ ածում: Նրանով վար են վարում, սայլ են կրում՝ Գանձակից մինչև Թիֆլիս գինու ահագին տիկեր կրելով, նրա վրա մինչև անգամ հեծնում են: Ծանրաշարժ գոմեշին կատարել են տալիս բոլոր այն գործերը, ինչ-որ բնությունը տնօրինել է ձիու համար: Միևնույն վիճակին դատապարտված է և եզը: Նրան ոչ միայն լծում են, այլ նրա վրա բեռն են կրում, նրա վրա նստում են:

Մենք անցնում էինք դատարկ անապատների միջով: Դեպի աջ մինչև Կուր գետի եզերքը, դեպի ձախ մինչև... լեռները. այդ ընդարձակ հարթ տարածության վրա, բացի ճանապարհորդներից, ուրիշ ոչ մի մարդկային արա-

րած չէր երևում: Կարծես ժանտախտը, խոլերան կամ մի այլ մահաբեր ախտ, միանգամայն մեռցրած լիներ բոլոր շնչավորներին: Բայց մեր շուրջը երևում էին մարդու աշխատության նշաններ: Յորենի, գարու արտերը հնձած էին. խուրձերի տեղերը բլրակների նման երևում էին արտերի մեջ: Խոտը նույնպես հնձված էր. կորյակի ցանքերը դեռ կանաչ էին, չէին հասել: Կնշանակե այդ կողմերում բնակություն կա, մարդիկ են ապրում: Բայց որտե՛ղ են նրանք, ինչո՞ւ չեն երևում:

Ղազախի, Շամշադինի, Շամքորի ամբողջ վիճակները մինչև Գանձակ այդ տպավորությունն են գործում: Այդ երեք վիճակների ընդարձակ, արգավանդ դաշտերը, տարվա երեք եղանակներում՝ գարնանը, ամառը և աշունը, ներկայացնում են կատարյալ դատարկություն: Թարաքամա բնակիչները իրանց անասունների հետ գաղթում են դեպի հեռավոր լեռները, *յայլաղ*: Նրանց ձմեռանոցները մնում են բոլորովին ամայի: Ո՛չ մի շուն, ո՛չ մի կատու անգամ չէք տեսնի այնտեղ: Ես հետաքրքրվեցա մտնել այդ ձմեռոցների (դշլաղ) մեկի մեջ, որ մեր ճամապարհին մոտ էր: Այստեղ ու այնտեղ երևում էին գետնափոր խորշեր, որոնց մեջ բնակվում է այդ թափառաշրջիկ ժողովուրդը, երբ ձյունը պատում է երկիրը: Գազանների որջերը միայն կարող էին դրանց հետ համեմատվել: Մարդը չի կարող այսպիսի մթին և խոնավ խորշերում բնակվել: Այնտեղ կարող է բնակվել միայն թարաքաման, որ իր բնավորությամբ շատ չէ տարբերվում գազաններից: Զարմանալի է, որ ռուսաց տիրապետությունից հետո մոտ մեկ դար ոչինչ չկարողացավ փոխել այդ կիսավայրենիների կյանքից:

Եթե ընդունենք այն հիմնական օրենքը, որ պետքը, կարիքը և առհասարակ կյանքի պահանջները ժողովուրդների քաղաքակրթության առաջին վարժապետներն են դառնում, շատ հեշտ կարելի է բացատրել թարաքամաների իրանց հարևան ազգերից հետամնացության պատճառները: Պտղաբեր և արգավանդ երկիրը նրանցից մեծ աշխատություն և մեծ հմտություն չէ պահանջում: Գարնան սկզբներում մի կերպով փորփրում են հողը, սերմը ցանում են և այնպես թողնում, գնում են դեպի սարերը: Բնությունը ինքնահորդոր կերպով բուսցնում է նրանց ցանքը, անձրևը ռոռգում է, արտերը աճում են: Նրանք կրկին այցելության են գալիս իրանց արտերին այն ժամանակ միայն, երբ հունձքը հասած էր: Հնձում են, դիզում են և, դեզերը թողնելով դաշտերի մեջ, կրկին գնում են դեպի լեռները: Վերադառնում են աշնան վերջերում միայն, շատ անգամ իրանց հունձքի դեզերը գտնում են

ձյունի տակ ծածկված: Այն ժամանակ միայն սկսում են կալսել, ծեծել և ցոր-
յանը բաժանել հասկերից: Երբեմն դեզերը աշնան անձրևներից փտած են
լինում, երբեմն մի թշնամի ձեռք, նրանց բոլորովին անպետք և անպաշտ-
պան գտնելով, կրակ է տալիս և հրդեհում է:

Ամբողջ Ղազախը, Շամշադինը, Շամքորը այդ կյանքով է ապրում: Այդ
երեք վիճակները, մինը մյուսին կից, տարածվում են Կուր գետի աջ կողմը և
ներկայացնում են ընդարձակ տափարակներ, մինչև Գանձակ հասնելը:
Դաշտերը տեղ-տեղ ծածկված են թփերով, տեղ-տեղ ճահիճներով ու ճոխ
խոտերով, տեղ-տեղ այրված, ավազուտ անապատներ են երևում, իսկ շատ
տեղերում պարարտ վարելահողեր, որ խիստ արդյունավոր հունձք են
տալիս:

Ամառնային տոթը անտանելի է այդ կողմերում: Տենդը թագավորում է
ամեն տեղ, գուցե դա առաջ է գալիս այն բազմաթիվ ճահիճներից, որ Կուր
գետը կազմում է իր ընթացքում: Բայց Շամքորի բրինձի մշակության դաշ-
տերը լրացնում են այն, ինչ-որ պակաս են թողնում ճահիճները: Շամքորը
իր դիրքով շատ նման է Երևանյան նահանգի Շարուրին: Նրա մոտով հոսում
է Երասխը, Շամքորի մոտով հոսում է Կուր գետը: Շարուրի դաշտերի վրա
Արփա գետը, բազմաթիվ առվակների բաժանվելով, ոռոգում է բրինձի մշա-
կությունները: Իսկ Շամքորի դաշտերի վրա Շամքոր գետը նույնպես բազ-
մաթիվ ճյուղերի բաժանվելով, նույն սնունդն է տալիս բրինձի դաշտերին:
Թե՛ այնտեղ և թե՛ այստեղ տենդը, մոծակը, զանազան տեսակ թունավոր
մժեղներ թագավորում են ամբողջ ամառը: Գուցե այդ պայմանները ստեղ-
ծեցին բնակիչների համար կենցաղավարության այն եղանակը, որ նրանք
տարվա տաք եղանակներում գաղթում են դեպի հովասուն լեռները, և այդ
նպաստում է նրանց առողջությանը:

Ղազախի, Շամշադին և Շամքորի վիճակներում, Կուր գետի ընթացքին
մերձավոր տափարակների վրա, ոչ մի հայոց գյուղ չպատահեց ինձ տեսնել:
Այդ տեղերում բնակվում են միայն թարաքամաներ: Հայոց գյուղերը ընկած
են դեպի հիշյալ վիճակների լեռնային (?) կողմերը, սարերի ստորոտներում,
բարձրավանդակների վրա կամ ձորերի մեջ: Այդ երևույթը պետք է վերա-
բերել այն պատմական հանգամանքներին, որ հայերը ժամանակի անխա-
ղաղ դրությունից պաշտպանվելու համար ընտրել են ավելի ամուր, ան-
մատչելի տեղեր, իսկ այժմ նրանց դրացիությունը ավազակաբարո թարա-
քամաների հետ նույնպես չէր կարող շատ ապահով լինել: Ավազակությունը

թարաքամանների համար նույնքան սուրբ բան է, որքան իրանց կրոնի սահմանած նամազը ու դաստամազը...

Մեր ճանապարհի ընթացքում, մինչև Գանձակ, անցանք չորս նշանավոր գետերից՝ Ալգես, Խրամ, Աղստաֆա և Շամքոր: Առաջին երեքը կամուրջներ ունին, իսկ վերջինը՝ Շամքորը, կամուրջ չունի¹: Այդ ժամանակից այդ գետը կամուրջ չունի, չնայելով որ գարնան ժամանակ հորդանում է, ծածկում է իր ափերը և անկարելի է անցնել, թեև միակ անցքը, որ տանում է դեպի Գանձակ, Շուշի, Նուխի (?), Շամախի (?) և այլ քաղաքներ: Երևում է, որ հին ժամանակի մարդիկը, դրդված բարեգործության զգացմունքից, ավելի եռանդ ունեին գետերի վրա կամուրջներ շինելու, քան թե այժմյանները, որ նույնը պիտի անեին հաղորդակցությունը դյուրացնելու նպատակով:

Աղստաֆայի կայարանից սկսյալ՝ դեպի Գանձակ տանող ճանապարհի խճուղին վերջանում է: Խճուղին ձգվում է դեպի Երևանի կողմերը: Թեև խճուղուց մենք մի առանձին բարիք չէինք տեսել, այսուամենայնիվ խիստ ծանր տպավորություն էր գործում, երբ ընկանք մերկ ճանապարհի վրա: Բարեբախտաբար մի քանի օր առաջ շատ անձրև էր եկել, և ճանապարհը պնդացել էր, և կարելի է առանց առատ փոշի կուլ տալու առաջ գնալ:

Կարաերի կայարանից մինչև Կոշկար գետը, և այստեղից մինչև Գանձակ անցնում էինք մերկ, ավազուտ տափարակների միջով: Ես անդադար հարցնում էի ընկերիս՝ չե՞րևում Գանձակը: Վերջապես նա ցույց տվեց ինձ մի կանաչազարդ տարածություն, որ հեռվից երևում էր, որպես մի փոքրիկ օազիս, մեր անապատների մեջ: Դա Գանձակն էր՝ իր գեղեցիկ այգիներով:

Բ

Գանձակի առաջին տպավորությունը, փողոցները, տները, չինարիները:
- «Եվրոպա» հյուրանոցը: - Ջավադը և իլ-յարասի: - «Մշակի» աշխատակիցը գավառական քաղաքում: Մեյդանը, Շահ-Աբասի մեջիտը, հին ամրոցը, Ջավադ խանի պալատը: - Վաճառանոցները: - Կլուբը: - Գանձակեցիների գլխավոր արդյունաբերությունը: - Գանձակի վիճակը նոր շինվող երկաթուղու վերաբերությամբ:

¹ Պարսից ժամանակներից այդ գետի վրա շինված կամուրջի միայն մի ականջն է մնացել: Դրանից հետո այդ գետի վրա մի հոյակապ կամուրջ շինել տվեց շուշեցի Հարություն բեկը: Այդ կամուրջը նույնպես ողողվեցավ ջրի սաստկությունից, ողջ մնացել են նրա երեք կամարները միայն

Ի՞նչ տպավորություն կգործե մի պարսիկ իր քոշերով, երկկար արխալուդով, շալե գոտիով, որ գլխին դրած ունի եվրոպական շյապա և մերկ պարանոցի վրա կապել է մետաքսյա սև փողպատ. նույն տպավորությունը գործեց ինձ վրա կիսապարսկական Գանձակը: Նեղ, ծուռուժուռ փողոցներից և ոչ մեկը քարած չէր: Թանձր փոշին, աղբը, ամեն տեսակ ապականություն ծածկել էր հատակը: Տներից մեկը, քարից կամ աղյուսից շինած, դուրս էր նայում դեպի փողոցը բացված լուսամուտներով, իսկ նրա կշտին՝ մի այլ տուն՝ կավե պատերով, ցածրիկ, որ դեպի փողոցը լուսամուտներ չուներ: Բարձր, հոյակապ տան մոտ անդադար հանդիպում է կամ մի խրճիթ, կամ քանդված ավերակներ: Մեկը փողոցի լարից դուրս է ընկած, մյուսը ներս է գնացած: Ինչ որ գեղեցիկ է, դրանք են դարևոր, հսկա չինարիները, որ իրանց զով հովանու տակ պատսպարում են շինվածքները և թույլ չեն տալիս նրանց բոլորովին շնչասպառ լինել փոշուց և տոթից: Չինարիները, որոնցից շատերը մեկ ու կես սաժեն տրամագիծ ունին, Գանձակի զարդն են. նրանք մնացել են պարսից տիրապետության ժամանակներից և մի բարի բախտով ոչնչացրած չեն եղել: Այդ չինարիները պահպանում են Գանձակի առողջությունը, որ շատ նախանձելի վիճակի մեջ չէ: Առհասարակ շատ փոքր թվով կարելի է տեսնել տներ, որ պարտեզներ չունենային: Գեղեցիկ նոնենիները, թզենիները և վարսավոր միմոզաները իրանց մետաքսյա ծաղիկներով դուրս են նայում բակերի ցածրիկ պատերի հետևից:

Մտնելով քաղաքը՝ պատվիրեցինք սայլավարին, որ մեզ մի լավ հյուրանոց տանե:

- Ո՞րն էք կամենում,- հարցրեց սայլավարը,- այստեղ հյուրանոցներ շատ կան՝ «Եվրոպա», «Ամերիկա», «Կավկազ», «Թիֆլիս» և այլն:

- Դրանցից որը որ լավ է, այնտեղ տար,- ասեցինք նրան:

- «Եվրոպան»,- պատասխանեց սայլավարը և քշեց դեպի այն կողմը:

Հասնելով հիշյալ հյուրանոցը՝ պահանջեցինք մեզ համար մի կացարան: Մեզ հայտնեցին, թե վերի հարկի սենյակները արժեն օրական 3-2 ռուբլի, իսկ ներքի հարկիները՝ օրական 1 ռուբլի: Մենք ընտրեցինք վերջիններից մի սենյակ: Ավելորդ է նկարագրել այդ կացարանի սարք ու կարգը. միայն այսքանը կասեմ. ինչ որ մենք առնում ենք Եվրոպայից նրան այլանդակելու և իր փչացած ձևի մեջ ցույց տալու համար – այդ կացարանը կարող էր ամենաճիշտ տիպարը լինել այդ տեսակ աղավաղության:

Երկար սպասում էինք, որ սպասավորներից մեկը հայտնվի և մեզ լվացվելու ջուր տա, որ փոշին և կեղտը մաքրենք մեր մարմնից: Մի պատանի արխալուղը հագին կանգնած էր պատշգամբի վրա: Վերջապես հյուրանոցի պահողը հրամայեց նրան, որ կատարե մեր սպասավորությունը:

-Թող գնամ շորերս հագնեմ...- ասաց սպասավորը և անհետացավ:

Մեկ ժամից հետո հայտնվեցավ նա արդեն շորերը փոխած: Եվրոպական հյուրանոցի սպասավորը պետք է եվրոպական հագուստով հայտնվի հաճախորդների մոտ, և այդ մտքով Ջավադը կատարել էր ինչ որ պահանջում է պարտքը և պատշաճը:

Սկզբում պահանջեցինք ջուր լվացվելու համար, հետո սամովար: Նուխեցու հատուկ ճարպկությանը Ջավադը երկու հանձնարարություններն ևս իսկույն կատարեց: Մամովարը սեղանի վրա դնելուց հետո նա սկսեց իր ձեռքով մաքրել բաժակները, որ թեյ ածե, այդ միջոցին իմ ուշադրությունը գրավեց մի բոլորակ վերք, որ երևում էր նրա աջ ձեռքի թաթի երեսի վրա:

-Ա՛յ տղա, այդ ի՞նչ բան է,- հարցրի նրանից:

-*Իլ-յարասի* է, աղա,- պատասխանեց նա և շարունակեց իր գործը:

Ինձ այնքան չդողեց զզվանքը, որ մի այսպիսի վիրավոր ձեռքով մաքրում էր նա բաժակները, որքան այն սարսափը, որ կարող էինք վարակվել: Սպասավորի ձեռքի վերքը տեղական մի վերք էր, որ ամեն մի գանձակեցի պետք է անպատճառ ունենա: Նա կոչվում է *իլ-յարասի* նրա համար, որ մի ամբողջ տարի տևում է մինչև առողջանալը¹:

Բժշկությունը այդպես է բացատրում, որ այդ վերքը մի սունկ է, որ հայտնվում է մարմնի մեջ. բայց գանձակեցիք այսպես են բացատրում, որ դա առաջ է գալիս չինարիների տերևներից, որոնք թափվելով փողոցներից անցնող վտակների մեջ, փտում են, և այդ ջրերի գործածությունից վարակվում է ժողովուրդը: Օտարաքաղաքացիք ևս, բնակվելով Գանձակում, ստանում են նույն վերքը: Մի կամ երկու ամսվա բնակությունը բավական է վարակվելու

¹Թեև բժշկությունը դեռևս չէ գտել այդ վերքի դարմանելու դեղը, բայց տեղացի պատավները այժմ բժշկում են ընդամենը մի ամսվա մեջ, թեև առաջ մի ամբողջ տարի էր տևում: Նախ հայտնվում է նա որպես մի ամուր ուռուցք կաշու տակ: Մկնդեղից պատրաստած մի դեղով նախ փտեցնում են կաշին և բաց են անում թաքնված ուռուցքի բերանը: Հետո միևնույն դեղը այնքան գործ են ածում, մինչև ուռուցքը ուտեցնելով, հասնում է արմատին, իսկ արմատն էլ նույն դեղով ոչնչացնելուց հետո գործ են ածում մի այլ դեղ, որ պատրաստած է լինում եգան լեզու կոչված բույսից: Դա բոլորովին մաքրում է վերքը: Հետո սպեղանիներով փոքր առ փոքր առողջացնում են վերքը. նրա փոս ընկած տեղը լցվում է առողջ մսով, բայց դարձյալ թողնում է դրոշմի նման մի հետք իր տեղում, որ սովորաբար լինում է երեսի վրա կամ ձեռքերի վրա

համար: Ջավադը ստացել էր այդ վերքը յուր Գանձակ գալուց երկու ամսից հետո:

Իսկ որքան հավանական է, որ դա առաջ է գալիս չինարի ծառերից, այդ պետք է բացատրե գիտությունը, ես այսքանը կասեմ, որ ուրիշ մի քանի երկրներում ևս գոյանում են նույնօրինակ վերքեր, որտեղ չինարի ծառեր չկան. օրինակ, Բադախանում այդ վերքը վերաբերում են արմավենիներին (խուրմայի) կամ հաճախ արմավ ուտելուն:

Թողնելով այդ դատողությունները, ես դարձյալ վերադառնում եմ դեպի Ջավադը: Չնայելով, որ մի վտանգավոր սպասավորի հետ գործ ունեինք, նա ամեն տեղ հայտնվում էր: Նա էր ջուր տալիս լվացվելու և սեղանատանը կերակուրները պետք էր նրա ձեռքից ընդունել: Նա հյուրանոցի միակ *խաս* սպասավորն էր, բոլորը նրան ճանաչում էին, և իր կամակատարությամբ միշտ պատրաստ էր ամենի պատվերները կատարելու:

Այդ հյուրանոցի մեջ իջևանելու գիշերվա առավոտը զարթնելով՝ զգում էի բերանիս մեջ սաստիկ դառնություն: Ես կարծում էի, թե գիշերը ծխելուցն է: Ես սովորություն ունիմ գիշերը մի քանի անգամ զարթնել ու ծխել: Բայց այն գիշերը, ընդհակառակն, ճանապարհի հոգնածությունից այնպես թմրած էի, որ ամեննին չէի զարթնել: Իսկ այդ ի՞նչ դառնություն էր: Ես դարձա իմ ուղեկցին, երբ նկատեցի նա էլ գլուխը վեր բարձրացրեց բարձից:

- Ընկեր, բերանդ ի՞նչ դրության մեջ է:

- Սաստիկ դառն է, պատասխանեց նա և մի այնպիսի խոժոռ շարժեց իր սևուկ դեմքի վրա, կարծես լեղի էր կերել, և բերանը կծկծում էր:

Իսկույն հասկացա, որ այստեղ մի բան կա, որ երկուսիս էլ բերանը միևնույն վիճակին է ենթարկվել:

Կես ժամից հետո մեզ մոտ եկավ մի պարոն, նրան պատմեցինք մեր բերանների դրությունը:

- Այստեղի ջրիցն է, - ասաց նա, - զգուշացեք այստեղ ջուր խմելուց:

Այդ ջուրը, որից խմում է Գանձակի մեծ մասը, *քարհեզի* ջուր է, որ հեռու տեղից բերվելով, գետնի տակով անցնում է թուրքերի թաղից, և տեղ-տեղ բացվում է թուրքերի տների մեջ: Թուրքերը այդ ջրի հետ ինչ օյին ասես խաղում են, ամեն անմաքրություն նրա մեջ լվանում են, նրանով նամազ են անում, հավատացած լինելով, որ ջուրը չի պղծվի: Այդ հերիք չէ, նա բավական երկար տարածության վրա անցնում է թուրքերի գերեզմանատան տակով և բերում է իր հետ փտությունների լուծված մասները: Խմելու միջոցին

մարդ զգում է մի տեսակ թանձրություն, և մի տեսակ մածուցիկ տպավորություն է գործում բերանի մեջ, կարծես մածուն լինի: Այստեղից հասկանալի է այն հիվանդությունները, որոնց անընդհատ ենթարկվում են գանձակեցիք, մանավանդ ամառվա ժամանակ: Այդ քաղաքում փոքրիշատե տանելի է գետի ջուրը, բայց ամառը գետը բոլորովին ցամաքած է լինում, և գտնված ջուրն էլ վերնից գանազան առվակներով վեր են առնում ցանքերը կամ այգիները ջրելու համար:

Գետի ջրի գալով՝ ես չեմ կարող մի քանի խոսք չասել այդ մասին: Գանձակում երեք օր մնալով՝ ես անդադար լսում էի գանգատներ, կռիվներ, դժգոհություններ ջրի պակասության մասին: Գանձակը շինված է նույն անուտով գետի վրա, որ քաղաքը երկու մասն է բաժանում. մի մասում բնակվում են հայերը, մյուսում՝ թուրքերը: Գարնան սկզբում գետը սաստիկ հորդանում է և ծածկում է իր եզերքը, իսկ ամառը այնտեղ մի կաթիլ ջուր չէ կարելի տեսնել, գետը ցամաքում է: Եղած ջուրը, ինչպես վերևում ասացի, գանազան առվակներով վեր են առնվում այգիները և ցանքերը ջրելու համար: Այդ ջուրը այնքան անբավական է, որ համարյա ամեն օր կռիվներ են լինում նրա բաշխման համար: Գանձակեցիք հավատացնում էին, որ ջուրը առաջ խիստ շատ էր լինում, իսկ այժմ «մարդկանց մեղքի համար» սակավացել է:

Գանձակի գետի ջրի սակավանալը ուրիշ պատճառի չէ կարելի վերաբերել, բացի նրանից, որ անտառները սաստիկ անխնա կերպով ոչնչացնում են: Այն լեռները, որոնց մեջ գտնվում են գետի աղբյուրները, առաջ պատած են եղել խիտ անտառներով, իսկ այժմ կամ բոլորովին մերկացել են, կամ մեծ ծառերի փոխարեն թփեր են տեսնվում:

Ջրի հարցը Գանձակի կյանքի հարցն է. եթե այդ մասին պետք եղած հոգածություններ չկատարվեն (որոնց մեջ գլխավոր տեղը պետք է բռնե անտառների պահպանությունը), այդ քաղաքը մի ժամանակ սովամահ կլինի:

Գանձակի գլխավոր արդյունաբերությունն է խաղողը և գինին, որ մեծ քանակությամբ արդյունահանվում է՝ տարվելով գլխավորապես Թիֆլիս: Շատ փոքր է այն գանձակեցիների թիվը, որ մի, երկու կամ երեք այգի չունենար: Տերերից ամեն մեկը յուրաքանչյուր տարի մի քանի հազար ռուբլու գինի է վաճառում: Ի՞նչ կլինի ժողովրդի վիճակը, եթե արդյունքների այդ աղբյուրը ցամաքի: Գինի պատրաստում են հայերը միայն, մահմեդականներին, որովհետև կրոնքով մեղք է համարվում աստուծո պարգևած բարիքներից մեկը՝ խաղողը, պղծել և նրանից գինի պատրաստել, այդ սնահավա-

տությունից¹ դրդված, իրանք գինի չեն պատրաստում և իրանց խաղողը վաճառում են հայերին, կամ իրանց այգիները նրանց վարձով են տալիս:

Գանձակի մյուս արդյունահանությունն է այուրը: Այդ արդյունահանությանը շատ նպաստում է պ.Հախվերդյանի շոգեշարժ աղորիքը: Պարոնի մարդիկը գնում են մեծ քանակությամբ ցորյան, և աղալով ուղարկում են Թիֆլիս կամ ուրիշ տեղեր: Այդ, իհարկե, շատ օգնում է շրջակա գյուղացիներին, որոնց ձեռքումն է ցորենի արդյունաբերությունը: Եթե այդ աղորիքը չլիներ, գյուղացին ստիպված էր ինքն հասարակ ջրաղացի մեջ աղալ տալու ցորյանը և այուրը ուրիշ տեղ տանելու: Բայց պ.Հախվերդյանի աղորիքը հեշտացնում է գյուղացու գործը, որովհետև նրան միջոց է տալիս իր բերքը՝ իր տան մեջ վաճառելու, առանց օտար երկիր տանելու:

Երբ գանձակեցիք լսեցին, թե Բաքու-Թիֆլիսյան երկաթուղին պիտի անցնի իրանց քաղաքի մոտով, նրանց ուրախությանը չափ չկար: Բայց երևում է, որ Գանձակին ևս սահմանված էր նույն վիճակը, որին ենթարկվեցավ Քութայիսը: Երկաթուղու գիծը անցավ Գանձակից 5 վերստ հեռավորության վրայով: Գանձակեցիք բողոք հայտնեցին՝ հայտնելով, որ գիծը մոտեցնեն քաղաքին: Նրանց բողոքը մինչև Ս.Պետերբուրգ հասավ և մնաց անհետևանք:

Բավական հետաքրքիր բան է լրագրի աշխատակցի հայտվելը գավառական փոքրիկ քաղաքում, որպես էր Գանձակը: Բոլորը դիտում են, թե նա որտե՞ղ գնաց, ո՞ւմ հետ տեսնվեցավ, ի՞նչ խոսեց և այլն: Ամենից առաջ նրա մոտ այցելում են տեղային վարժապետները և քահանաները: (Դրանց վրա լրագրության մեջ շատ է խոսվում):

Ճշմարիտն ասած, ես մի առանձին ցանկություն չունեի մարդկանց հետ ծանոթանալու, միայն աշխատում էի մի քանի նշանավոր տեղեր տեսնել և շուտով թողնել քաղաքը, որովհետև ամեն բոպե վախենում էի հիվանդանալուց:

Առավոտյան, մի քանի այցելուներից ազատվելով, շտապեցի դուրս գալ հյուրանոցի խեղդված սենյակից՝ բազարը տեսնելու համար: Այստեղ իմ ուշադրությունը գրավեց *մեյդանը* (հրապարակը): Դա մնացել է պարսից տիրապետության ժամանակներից, մի քառակուսի, փոքր-ինչ երկայնաձև ահագին հրապարակ է՝ շրջապատած դարևոր չինարի ծառերով: Այդ ծա-

¹ Առաջ մահմեդականները խաղողը գինի շինելու համար հայերին վաճառելը մեղք էին համարում և չէին վաճառում, բայց այժմ այդ նախապաշարմունքը համարյա թե վերացել է

ռերը իրանց ընդարձակ ստվերի տակ հովանավորում են խանութները, որ գտնվում են հրապարակի շուրջը: Երևում է, ծառերի վերաբերությամբ պարսիկները թե լավ ճաշակ և թե խնամք են ունեցել:

Այդ հրապարակի մոտն է քաղաքի նշանավոր մեջիդը: Նրա գլխավոր դռան աջ և ձախ կողմերում բարձրանում են երկու բարձր մինարեթներ: Բացի դրանցից՝ դռան երկու կողմում կան երկու *սաքուններ*, որոնց վրա նստած են մուլաները: Այդ տեսնելով՝ ես իսկույն հիշեցի Պարսկաստանը: Այդ մուլաները զանազան գործեր են կատարում. նրանք աղոթքի թղթեր են վաճառում՝ տպված երկար, ժապավենաձև թղթի վրա, նրանք կնիքներ են փորում, նրանք անգրագետ մարդկանց համար նամակներ են գրում իրանց բարեկամներին ուղարկելու համար. նրանք միննույն ժամանակ նոտարիուսներ են, գրում են զանազան տեսակ դաշնագրեր, պարտամուրհակներ և այլն, չնայելով որ քաղաքում պաշտոնական նոտարիուս կա: Նրանց մոտ վաճառվում են «տեր ողորմյաներ», վաճառվում են Քարբալայի¹ սուրբ հողից շինված փոքրիկ մոհրներ, որոնց վրա մահմեդականները նամազի ժամանակ խոնարհվում են, համբուրում են՝ երևակայելով, թե Քարբալայի սուրբ երկիրն են համբուրում, որտեղ թափվել է իրանց իմամների արյունը: Միննույն մուլաները վաճառում են զանազան տեսակ գրքեր, կախարդություններ են անում և իրանց հաճախորդների համար զանազան թիլիսմանական թղթեր են գրում: Դրանց կշտին մի քանի երեխաներ գետնի մեջ փորած փոսիկների մեջ ածուխ էին ածել, մի կարդոնի կտորով հովահարում էին և թարմ սիմինդր էին խորովում վաճառելու համար: Ահա այդ բոլորը, ինչ-որ տեսա, հիշեցրին ինձ Պարսկաստանը...

Ես դիմեցի դռան մուլաներից մեկին՝ խնդրելով՝ կարելի՞ է արդյոք մեջիդը տեսնել: Նա զարմացած աչքերով չափեց ինձ ոտից ցզուխ, նայեց գլխարկիս, նայեց կապույտ ակնոցներիս, և ապա բավական դժգոհությամբ պատասխանեց՝ կարելի է:

Ես մտածեցի գրավաճառ, կախարդ, նոտարիուս, կնիքներ փորող մուլայի բերանին փոքր-ինչ յուղ քսել, նրան մի քանի աբասի շահ տալ և հարցրի՝ արդյոք ունի՞ այս և այն գրքերը: Իմ պահանջածը Ղարաբաղի խաների պատմությունն էր, մեկը հեղինակություն Միրզա Ջամալի, մյուսը հեղինակություն Միրզա Ադիգյոզալի: Այդ աշխատություններից և ոչ մեկը չգտնվեցավ մուլայի

¹ Պարսիկների ուխտատեղի է Բաղդադի մոտ, ուր նահատակվել են իրանց իմամներից մի քանիսը. այս պատճառով այնտեղի հողը սուրբ է համարվում

մոտ, նրա խոսքերից երևաց, որ այդ պատմությունները դեռ տպված չեն, այլ ձեռագիրները գտնվում են հեղինակների ժառանգների մոտ:

Դռնից ներս մտանք մեջիդի բակը, որ քառակուսի ձև ուներ: Չորս կողմում պարսկական ճաշակով շինված էին փոքրիկ և մեծ խուցեր, որոնց մեջ մոլլաները նստած, բարձր ձայնով դուրան էին կարդում: Խուցերից մի քանիսը հատկացրած էին երեխայոց դպրոցի (մադրասե), իսկ մի քանիսը չափահասների ուսման համար (թաքիա): Ես հետաքրքրվեցա տեսնել երեխաների դպրոցը: Թեև հուլիս ամիսն էր, տոթը խեղդում էր, բայց նրանց չէին արձակել: Մի սենյակում լցված էին 40-50-ի չափ ամեն հասակի երեխաներ, 5 տարեկանից մինչև 20 տարեկան: Նրանք խառնափնթոր կերպով ծալապատիկ նստել էին միմյանց մոտ, ամեն մինը իր տնից բերած օթոցի վրա: Նայելով ծնողների կարողությանը, այդ օթոցները ունեին իրանց լավ կամ վատ հատկությունները: Այնտեղ կարելի էր տեսնել մի քրքրված փսիաթ՝ կտորից սկսյալ մինչև թանկագին խալիչա: Բոլոր աշակերտները, գրքերը իրանց առջև հատակի վրա դրած, անդադար օրորվելով, բարձր ձայնով կարդում էին: Երևակայեցեք, թե ինչ աղմուկ և բաբելոն կլինի, երբ 40-50 աշակերտ միանգամից ձայն է բարձրացնում: Շատերը կարդում էին, շատերը ոչինչ չէին կարդում, միայն աղաղակում էին, ոմանք ձայն էին հանում, միայն բերանները բաց էին անում և շրթունքները շարժում էին: Այդ ընդհանուր աղմուկի մեջ դժվար էր որոշել, թե ո՞րն է կարդացողը և ո՞րը՝ չկարդացողը:

Վարժապետ-մոլլան նստած էր մի անկյունում և գիրք էր կազմում: Նա զբաղված էր իր գործով: Աշակերտները դրանից օգուտ քաղելով երբեմն միմյանց բոթում էին, հրմշտում էին, կամ միմյանց մազերից քաշում էին: Բողոքներ էին բարձրանում: Մոլլան կանչում էր իր մոտ անհանգստին, իր կշտին դրած ճիպտոր վեր էր առնում, մի քանի զարկ տալիս էր նրա ավերի մեջ, ականջներիցը քաշում էր, հետո թող էր տալիս, որ գնա իր տեղը նստի: Հետո նա կրկին սկսում էր իր կազմարարությունը: Այդ բոլորը կատարվում էր մեր աչքի առջև: Որովհետև սենյակի փենջարեները բացվում էին դեպի բակը, մենք դրսից նայում էինք:

Պարսկական մանկավարժության եղանակները ինձ վաղուց արդեն ծանոթ լինելով՝ ես չուզեցի երկար նայել այդ տանջանքի և բթամտության հիմնարկության վրա, միայն զարմանում էի, որ մոտ մի ամբողջ դար ռուսաց տիրապետությունը ոչինչ չէր փոխել դրանց վաղեմի քաղաքակրթությունից:

Դարձյալ մնացել էին միևնույն հետադեմ, խավար թուրքերը, ինչ որ էին Ջավադ խանի ժամանակ:

Ես խնդրեցի ինձ առաջնորդող մուլլային, որ ցույց տա մեջիդը: Դա մի հսկա շինվածք էր ընդարձակ բակի կենտրոնում՝ հովանավորված գեղեցիկ չինարիներով: Մեջիդի դուռը բաց էր: Մուլլան ակնարկեց, եթե կամենում էի ներս մտնել, պետք էր հանել կոշիկները: Այդ առաջարկությունը բավական դժվար լինելով, ես բավականացա միայն դռնից նայել: Այստեղից ամբողջ ներսը երևում էր: Արևելյան ճարտարապետության այդ հոյակապ գործը, ճշմարիտ որ, հիանալի էր: Ամբողջ շինվածքը, առանց սյուների, կանգնած էր միայն ահագին կամարների վրա, որ նրա առաստաղին գմբեթի ձև էին տալիս: Հատակը ծածկված էր գորգերով, պատերի ստորին մասները զարդարած էին զանազան նկարներով: Մի կողմում դրած է բարձր ամբիոնն, որի սանդուղքներով մուլլան բարձրանում է և քարոզ կարդում: Ուրիշ ոչինչ չկար այնտեղ, առհասարակ դեպի ամեն կողմ, ուր և նայում էր մարդ, մի տեսակ պարզություն, որ հեռու էր քրիստոնեական կամ հեթանոսական տաճարների զարդարանքներից: Երկու հոգի այնտեղ նստած դեյլան էին ծխում, մի քանիսն էլ ճաշում էին: Երևում էր, որ մահմեդականները աստուծու տան շինվածքին այն սրբազնությունը չեն հատկացնում, որպես այլ կրոնքների հետևողները:

Ես դարձա դեպի ինձ առաջնորդող մուլլան՝ հարցնելով, թե ո՞ր թվականից է շինված այդ մեջիդը: Նա ինձ ոչինչ ասել չկարողացավ, միայն հայտնեց, որ Շահ-Աբաս Մեծի շինածն է: Որովհետև այս կողմերում ամեն մի հոյակապ շինված ընծայում են Շահ-Աբասին, թեև նրանից դարերով առաջ շինված լինեք, այդ պատճառով մուլլայի ասածը շատ հավանական չէ կարելի համարել¹:

Մեջիդը տեսնելուց հետո ես կամենում էի տեսնել Ջավադ խանի պալատը, որ վերջինն էր Գանձակի տիրապետող խաներից: Որովհետև քաղաքի դրսումն էր գտնվում, հարկավոր էր կառքով գնալ: Քառորդ ժամվա մեջ ես հասա այնտեղ: Պալատի դուռը և դռան կողմի մի քանի շինվածքների ավերակներն էին մնացել միայն: Կառքով ներս մտանք: Երևում էր, որ այստեղ գտանվում էր խանի ամառային ամարաթը: Որովհետև այստեղ մի ընդարձակ այգի է եղել, շրջապատի պարիսպների մոտ շարքով տնկած ահագին

¹ Շահ-Աբասը և Քոր-ողլին բավական մեծ անուն են թողել այդ կողմերում, վերջինիս ընծայում են բոլոր բերդերի ավերակները, որ գտնվում են զանազան լեռների վրա

չինարիները դեռ մնում էին: Մեջտեղում կար մի քառանկյունի լճակ, նորա շուրջը զարդարող մարմարյա քարերը բոլորը քանդել և տարել էին, ջուրը դեռ մնում էր և անշարժությունից կանաչել, պատած էր մամուռով: Այդ գեղեցիկ լճակը, որի հստակության մեջ ամառային տոթի ժամանակ լողանում էին, զովանում էին հարեմները, այժմ մի հոտած ճահիճի էր նմանում: Լճակի երկու կողմում երևում էին երկու բարձր *քոշքերի* ավերակների քարերը, աղյուսները տարել էին, մնացել էր երկու հողակույտ միայն: Այդ քոշքերից հարեմները նայում էին լճակի հայելու մեջ¹: Դռան հանդեպ՝ այգու մյուս ճակատում, երևում էին հարեմխանայի ավերակները: Այնտեղ, ուր պահվում էին երկրի կնիկներից ամենագեղեցիկները, այժմ մողեսներ, օձեր ու չղջիկներ էին բնակվում: Հին փառքից, հին վայելչությունից ոչինչ չէր մնացել: Ամեն ինչ տրորվել, ոչնչացել էր հավիտենական անեծքի և դատապարտության տակ: Որքա՞ն հայ աղջիկներ գոհել էին այստեղ իրանց ողջախոհությունը, որքա՞ն հայ կնիկներ վատնել էին այստեղ իրանց պատիվը:

Պատմում են, որ Ջավադ խանին հայտնեցին մի գեղեցիկ աղջկա մասին, որ նոր էին պսակում, և հարսանիքի հանդեսը դեռ չէր վերջացել: Նա ուղարկում է իր նոքարներին աղջկա ծնողների մոտ. պահանջում է, որ նորապսակ աղջիկը իր փեսայի առագաստը մտնելուց առաջ ուղարկեն իր մոտ: Ծնողները երկյուղից կատարում են բռնավորի կամքը: Նորահարսին տանում են խանի ամարաթը, Խանը, տեսնելով գեղեցկուհուն, կամենում է նրա հետ փոքր-ինչ սիրախոսություններ անել: Բայց նորահարսը, զլուխը դեպի ցած խոնարհած, մնում է լուռ կանգնած նրա առջև և բերանը չէ բաց անում. «Դեպի վեր նայիր, ասում է խանը, տես ո՞վ է քեզ մոտ կանգնած»: Նորահարսը զգացմունքով պատասխանում է. «Դու էլ դեպի վեր նայիր, տես ո՞վ է այնտեղ կանգնած»... Նա ցույց է տալիս բռնակալին արդարադատ երկինքը, և նրա աչքերը լցվում են արտասուքով:

Ասում են, որ այդ բոլորը այն աստիճան ազդում է խանի սրտին, որ առանց նրան դիպչելու հետ է ուղարկում ծնողների տունը և այն օրից երդվում է հայ կնիկներ չբռնաբարել: Առհասարակ Ջավադ խանը բավական սեր է ունեցել դեպի հայերը, նա հաճախում էր հայոց եկեղեցին և ծննդյան տունին փող էր ընծայում, որ խաչը իր անունով ջրից հանեն: Մինչև այսօր Գանձակի սուրբ Հովհաննես եկեղեցու սյուներից մեկի վրա դեռ մնում է հին

¹ Այգու տեղում, ուր մշակվում էին ծաղիկների ամենագեղեցիկները, այժմ բոլորովին անապատ էր: Երբեմն ոռոս սալդաթները վարում են հողը, կաղամբ, ծխախոտ կամ կարտոֆիլ են ցանում

արձանագրությունը՝ «խանի պուն»: Այդ պունի մոտ սովորաբար կանգնում էր խանը, երբ հայոց եկեղեցի էր գալիս: Նրա դեպի հայերը ունեցած համակրության գլխավոր պատճառն այն էր, որ հայերից միշտ հավատարմություն էր տեսել, և հայոց մելիքները միշտ օգնում էին նրան վտանգի ժամանակ:

Մյուս օրվա առավոտը ես կամեցա տեսնել Գանձակի հին բերդը: Այդ բերդը, որ ինն ամիս պահեց իր ամուր պարիսպների տակ ռուսաց զորքերին, այժմ բոլորովին ավերակ է: Նա բաժանված է մի քանի մասների: Մի մասնում՝ գանազան բաժինների մեջ, շինված էր խանի ամարաթը, կանանոցը, դիվանատունը, բաղանիքները և կեցության այլ հարմարությունները: Մի մասնում շինված էին բազմաթիվ կացարաններ, որոնց մեջ լցվում էր քաղաքի կամ շրջակա գյուղերի ժողովուրդը պաշարման ժամանակ: Յույց էին տալիս այն մասը, որ հայերին էր հատկացրած, և այն մասը ուր թուրքերն էին բնակվում: Բերդի շրջապարսպի մի քանի մասները և ամուր աշտարակներից մի քանիսը դեռ ողջ են: Երկաթե ահագին դռները ես տեսա թավալված հողակույտերի մեջ: Պատմում էին, որ այդ բերդը մի քանի տարի առաջ բոլորովին քայքայված չէր: Բայց այն օրից, երբ տեղային կառավարությունը սկսեց աճուրդով մաս-մաս վաճառել շինվածքների նյութը, քաղաքացիք, գնելով, սկսեցին քանդել քարերն ու աղյուսները, տարան իրանց համար նոր բնակություններ կառուցանելու:

Այդ բերդը ծառայում էր որպես պատասպարան թե՛ պարսից խաների, և թե՛ Գանձակի մելիքների¹ համար: Երբ 1790 թվին (?) Շուշվա Իբրահիմ խանը, վրաց Գիորգի իշխանը, միացած լեզգիների հետ (??) պաշարեցին այդ բերդը, նրա աշտարակներից չորսը հանձնված էր շատ հայ մելիքների պահպանությանը: Դրանցից մեկն էր մելիք Մեջլումը՝ մի քաջ, խորամանկ, միևնույն ժամանակ անբարիշտ մարդ: Մելիք Մեջլումը պաշարման ժամանակ նույնիսկ բերդում գնդակ ստացավ մի գաղտնի չարագործից² և վիրավոր տարվեցավ իր վրանը, Ջավադ խանը մի ամբողջ շաբաթ նրա սպանված

¹ Գանձակի գավառում Ջավադ խանի ժամանակ եղել են չորս մելիքներ. 1. Խաչակապ գյուղի մելիք Մովսեսը, որը խանի համար զենքեր էր պատրաստել տալիս: (Խաչակապ գյուղի հայտնի են որպես լավ զինագործներ. Երկաթը նրանք ստանում են Բանանց գյուղից): 2. Ոսկանապատ գյուղի մելիք Յուսուբը, որը մելիք Շահնազարի որդին էր: 3. Բարսում գյուղի մելիք Լոստամը, որ տիրում էր ամբողջ Շամքորի վրա և խանի ամենագորավոր դաշնակիցներից մեկն էր: 4. Գետաշեն գյուղի մելիք Մնացականն էր, Մ. Եղգարի որդին

² Ասում են, որ չարագործը Ջավադ խանի եղբայրն էր, որ ռյակալություն ուներ մելիքի հետ, որովհետև մելիքը կասկած էր հայտնել Ջավադ խանին նրա եղբոր հավատարմության մասին

մարմինը պահեց, թե՛ ճաշին և թե՛ ընթրիքին նրա մոտ կերակուրներ էր ուղարկում իր խոհանոցից՝ ցույց տալու համար, թե մեկիք Մեջլումը դեռ մենած չէ, որպեսզի գորքը այդ քաջի մահը լսելով չվհատվի¹: Երբ պաշարումը վերջացավ, թշնամում հեռացրին, Ջավադ խանը նրա մարմինը թաղել տվեց Գանձակի ս.Նովհաննես մայր եկեղեցու աջակողմյան խորանում՝ Աղվանից Ներսես կաթողիկոսի (?) գերեզմանի մոտ, թեև դա հակառակ էր հայ ժողովրդի կամքին:

Գանձակի բերդի շինության նյութերը՝ քար, աղյուս և այլն, որպես վերևում հիշեցի, աճուրդով վաճառում են, իսկ տեղը նույնպես վաճառում են բնակիչներին նոր շինություններ կառուցանելու համար: Այնտեղ շինված է ռուսաց փոքրիկ եկեղեցի, ամբարներ և այլն:

Բերդի ավերակները տեսնելուց հետո ես մտա հասարակաց այգին, որ շատ հեռու չէ այնտեղից: Բոլոր գավառական քաղաքներում, որքան պատահել է ինձ տեսնել հասարակաց այգիներ, Գանձակինը կարելի է ամենագեղեցիկը համարել: Այդ այգին տնկված է Վարանցովի փոխարքայության ժամանակներից և խիստ խնամքով պահպանված է: Այնտեղ կարելի է տեսնել սկսյալ հնդկական մագնոլիայից մինչև տեղական ամենաընտիր տունկերը: Միակ գեղեցիկ բանը, որ գրավեց Գանձակում իմ ուշադրությունը, այդ այգին էր: Պետք է ասած, որ գանձակեցիք առհասարակ այգեգործության մեջ շատ առաջ են գնացել: Նրանց խաղողը իր ընտիր հատկություններով ծանոթ է և թիֆլիսեցիներին:

Գանձակի մեջ մի այլ նշանավոր բան չլինելով տեսնելու համար՝ ես շտապում էի դուրս գալ: Հայոց դպրոցները ես չգնացի, մանավանդ ամառն էր, աշակերտները արձակված էին: Բացի դրանից, այնքան գրվել է հայոց դպրոցների մասին, որ կարդողների գահլեն տարել են: Մնում էր ինձ տեսնել մի *շարքաբի* գործարան, որտեղ մետաքսից գանազան տեսակ գործվածքներ են պատրաստում: Այդ գործարանը թեև եվրոպական կատարելագործված

¹ Մեկիք Մեջլումը, թեև իր քաջության համար շատ սիրված էր Ջավադ խանից, բայց նա հայերի մեջ վատ անուն է թողել, որովհետև Աղա-Մամադ խանի և Ջավադ խանի հետ մասնակցեց Թիֆլիսի ավերման արշավանքին: Մինչև այսօր հայերի մեջ մնացել է ժողովրդական երգի մի կտորը, որ այն ժամանակ թիֆլիսեցիք հորինեցին նրա համար

*Մեկիք Մեջլումը շուն դառնա,
Ջավադ խանը պստիկ կուճի,
Մեկիք Մեջլումի ազգեմեն
Էլ չըմնա մեկը Շուշի:*

Մեկիք Մեջլումը մեկիք Հաթասի (?) որդին էր

մեքենաներ չունեն, թեև մեքենաները բոլորը պարսկական հին ձևն ունենին, այնուամենայնիվ պատրաստված կերպասները թե՛ իրանց տոկունությամբ և թե՛ գույների գեղեցկությամբ հիանալի էին: Այստեղ պատրաստվում էին դարայի, դանավուզ, կանանց գլխի չերդաթներ և այլ զանազան տեսակ մետաքսեղեն գործվածքներ, որ բավական ծախվում են տեղացիների մեջ:

Նույն ավուր գիշերը ես գնացի կլուբ: Նրա բավական մեծ շինվածքը պատկանում է մի գերմանացու Ելեդորֆի կալոնիայից, որը Գանձակից շատ հեռու չէ. կլուբի շինվածքը գտանվում է քաղաքի կամրջի մոտ, որ շինված է Գանձակի կամուրջի վրա: Կլուբում ևս բազմություն չգտա, մի քանի ծառայողներ նստած են, թուղթ էին խաղում: Կլուբի դատարկությունը այն պատճառով չէր, որ շատերը ամառանոց էին գնացել, ինձ ասում էին, որ հաճախորդների թիվը միշտ փոքր է լինում, այնտեղ գնում են միայն ռուս ծառայողները, տեղացի վաճառական կամ արհեստավոր դասը ոտք չէր կոխում այնտեղ, իսկ հայ ծառայողները գնում են նրանք միայն, որ առանձին սեր ունին թուղթ խաղալու: Այդ ողորմելի հիմնարկությունը պահպանվում է գլխավորապես նրանով, որ, գյուղացի թուրք բեկերից յուրաքանչյուրից 20 ռուբլի առնելով, անդամ են գրել տալիս, որոնք քաղաքը տարին մի անգամ ոտք չեն կոխում:

Գանձակի հին քաղաքի տեղը ավերակ է այժմ: Տների փլատակները դեռ երևում են: Այստեղ կա մահմեդականների մի ուխտատեղի, որ կոչվում է *Գոզ-Իմամ*: Դա առաջ պատկանելիս է եղել հայերին, և այնտեղ է Խոսրով նահատակի գերեզմանը:

Գանձակում մնացի երեք օր միայն. այնուհետև ձի վարձեցի, որ զարտուղի ճանապարհներով կարողանամ տեսնել իմ ցանկացած տեղերը:

Գ

Քարտեզով ճանապարհորդություն:- Ելենդորֆ: - Հաջի-քենդ կամ Հաջի-շեն: - Սյուլուկ գյուղ: - Գետաշեն: - Ղարաբուլաղ: - Թողան գյուղ: - Էրքեջ: - Ղարաչինար: - Աղջակալա: - Մելիք Բեգլարովների կալվածքները:

Ես Թիֆլիսից դուրս գալու ժամանակ վեր էի առել ինձ հետ Թիֆլիսի գլխավոր շտաբի պատրաստած Անդրկովկասի հինգ վերստանոց քարտեզները: Երբ կամենում էի Գանձակը թողնել, Ելիզավետոպոլի գավառի քարտեզը դրի առջևս, կամենում էի մի մարշրուտ պատրաստել, որ նրա համեմատ սկսեի ճանապարհորդությունս: Նայում եմ, նայում եմ, իմ ցանկացած

տեղերից և ոչ մեկը նշանակված է քարտեզի մեջ: Տեր աստված, մտածում եմ, այդ ի՞նչ բան է. թուրքերի ամենաաննշան ձմեռոցները, որոնց մեջ տարվա երեք ամիսը միայն բնակություն է լինում, նշանակված են քարտեզի մեջ. բայց հայոց գյուղեր չկան: Բարեբախտաբար ինձ մոտ էր մի գանձակեցի պարոն, որին ես դարձա՝ խնդրելով, որ բացատրե այդ գաղտնիքը: Նա նույնպես նայեց քարտեզի վրա ոչինչ չկարողացավ ջոկել:

- Ո՞ր գյուղն էք ուզում,- հարցրեց նա:

- Օրինակ, ես ուզում եմ տեսնել Գետաշեն գյուղը:

Նա որոնեց քարտեզի վրա և ասաց.

- Ահա այդ Չայ-քենդը հայոց Գետաշենն է:

- Հիմա հասկացա, քարտեզ պատրաստողները հայոց անունները թարգմանել են, չայ – թուրքերեն նշանակում է գետ, իսկ քենդ – նշանակում է գյուղ, և այսպիսով Գետաշենը դարձրել են Չայ-քենդ, այսինքն՝ գետի գյուղ:

Ես նկատեցի, որ ոչ միայն հայոց գյուղերը, այլ մինչև անգամ հայոց վանքերը թուրքերեն անուններով էին նշանակված: Ուրեմն առաջ պետք էր նրանց թուրքերեն անունները սովորել, հետո օգուտ քաղել այդ քարտեզներից, որը մի մեծ դժվարություն էր ինձ համար: Բայց ի՞նչ նպատակ կար այսպես խառնաշփոթ բան շինել անուններից – ես հասկանալ չկարողացա:

Ես մի կողմ դրեցի քարտեզները և ավելի բարվոք համարեցի մի հմուտ առաջնորդ ինձ հետ վեր առնել, քան թե թուրքերեն անուններ սերտել:

Մի ամբողջ ժամ տևեց մինչև ես դուրս եկա Գանձակի այգիներից և բռնեցի այն ճանապարհը, որ տանում էր դեպի գերմանական Ելենդորֆ կոչված կալոնիան: Յանկանում էի տեսնել, թե ինչպես է ապրում եվրոպացի գաղթականը Հայաստանում:

Թիֆլիսի գերմանական կալոնիան իր մաքրությամբ և գեղեցկությամբ ամենին հիացք էր պատճառում: Բայց պետք է ասած, որ Թիֆլիսի կալոնիան այժմ իսկապես քաղաքի մի մասն է կազմում. նա կորցրել է իր կալոնիայի հատուկ բնավորությունը: Բայց Ելենդորֆը կալոնիայի կատարյալ կերպարանք է կրում. այստեղ կարելի է տեսնել մի քաղաքակիրթ ժողովրդի տնտեսությունը: Փողոցները լայն, ընդարձակ և ուղիղ են. աջ և ձախ կողմից զարդարած են բարդի և չինարի ծառերով, որոնք հովանավորում են տների շարքը: Փողոցների երկու կողմից և՛ տների դռան առջևից ջրի վտակներ են վազում: Բոլոր տները միակերպ են, արխիտեկտուրայով չեն գանազանվում միմյանցից, բայց բավական պարզ, մաքուր և համեստ ճաշակով շինված,

պատուհանները նայում են դեպի փողոցը, որոնց միջում կարելի է տեսնել զանազան տեսակ ծաղիկների բազարներ: Տների ետևի կողմումն է ընդարձակ բակը, ամբարները, ախոռատունը և մի կանոնավոր տնտեսության համար հարկավոր եղած այլ շինվածքները¹: Միննույն տների շարքում դուք կտեսնեք կոպեկների ետևից ընկած հայ մանրավաճառի խանութը, որը հայտնի չէ որ ջհանդամից եկած, այստեղ ամբողջ օրը երդումներ է ուտում, ստախոսում է, որ կարողանան մի առարկա իր արժեքից կրկնապատիկ գնով վաճառել: Ի՛նչ համեմատություն կա այդ խաբեբայի և այն հասարակության մեջ, որ գործ ունի բնության հետ, որ իր արդար վաստակը ստանում է աշխատանքով ու քրտինքով:

Այս կողմերում չկա մի ուրիշ աշխատասեր ժողովուրդ որպես Ելենդորֆի գերմանացիները: Կինը այստեղ ամեն գործում օգնում է տղամարդին: Նա հունձք է հնձում, խոտ է հնձում, կալ է կալսում, նայում է անասուններին: Քաղցր է նայել կնոջ վրա, հարոյա գդակը գլխին, մի կարճ դերյա հագած, թեթև բաշմակները ոտին, հնձում է: Աղջիկները, տղաները նունյպես ամենայն եռանդով մասնակցում են ծնողների եռանդոտ աշխատությանը:

Ելենդորֆի գաղթականները շվաբներ են, եկան այդ կողմերը բոլորովին մերկ և աղքատ: Մի ամբողջ տարի Գանձակի հայերը կերակրեցին նրանց, մինչև կառավարությունից տեղ ստացան իրանց համար բնակություն հաստատելու: Նրանք եկան կարծեմ 1828 թվին և երեք տարի առաջ կատարեցին իրանց հիսունամյա հոբելյանը: Կես դարի ընթացքում նրանք կարողացան հարստանալ և իրանց համար կանոնավոր տնտեսություն ստեղծել: Կառավարությունը շնորհել էր նրանց այնպիսի արտոնություններ, որ կես դարը բավական էր այդ աշխատասեր ժողովրդին իր դրությունը ապահովելու համար: Նրանք ստացան ամենապատվական հողեր, այնքան, որքան ցանկանում էին: Գանձակի ջրի յոթը մասից վեցը տվեցին քաղաքի ամբողջ ժողովրդին իրանց այգիները և ցանքերը ոռոգելու համար, իսկ մի մասը ստացան Ելենդորֆի գաղթականները: Հիսուն տարի ազատ էին հարկերից և ամեն տեսակ տուրքերից, ունեին իրանց առանձին ինքնավարությունը, իրանց մեջ եղած բոլոր վեճերը քննվում էին և վճռվում էին իրանցից ընտր-

¹ Այդ շենքերը այնքան ընդարձակ են, որ տանտերերից շատերը նրանց մի մասը վարձով են տալիս զանազան օֆիցերների և ծառայողների, որոնք ամառը անց են կացնում այնտեղ

ված շուկայի ձեռքով: Տեղային իշխանությունը իրավունք չունի շուկայի ընտրության կամ նրան փոխելու մեջ¹:

Այդ բոլոր դյուրությունները կարող էին մի այլ հասարակության ծուլացնել, փչացնել, բայց նրանց միջոց տվեցին ինքնուրույն կերպով զարգանալու և կանոնավոր-բնական ճանապարհով առաջադիմելու: Այժմ նրանցից յուրաքանչյուրը ունի մի քանի այգիներ, ընդարձակ վարելահողեր, խոտ հնձելու մարգագետիններ, այլև աշխատում են գնել այգիներ Գանձակում, երբ աճուրդով վաճառվում են, կամ աղքատությունից ծախվում են:

Յուրաքանչյուր գերմանացի ամեն տարի վաճառում է մի քանի հազար ռուբլու գինի և այլ բերքեր:

Ելենդորֆի գաղթականները ունին մի գեղեցիկ եկեղեցի կարմրագույն քարերից շինված. նրա մոտ է դպրոցը, որի մեջ սովորում են երկու սեռի աշակերտները միասին: Դպրոցի մոտ կա մի փոքրիկ կոկիկ տուն վարժապետի բնակության համար. դպրոցը ունի ընդարձակ պարտեզ երեխաների խաղալու համար: Տարենը երկու անգամ արձակուրդ է լինում մի քանի շաբաթներով, մեկը գարնան սկզբում ցանքի ժամանակ, մյուսը՝ ամառը, հունձքի ժամանակ:

Ունին խնայողության կասսա, ունին բարեգործական կասսա աղքատներին օգնելու համար. ունին հասարակաց շտեմարան, մի խոսքով, այն բոլոր հիմնարկությունները, որ միջոց են տալիս մարդուն ապահով կերպով ապրելու և կարոտությունից ազատ մնալու:

Խնայողությունը, չափավոր և համեստ կյանքը այդ գաղթականների կենցաղավարության հիմնական կանոնն է: Նրանք իրանց հեռու են պահում ամեն տեսակ շռայլությունից: Մինչև վերջին տարիները նրանց կանայքը ծանոթ չէին մետաքսեղեն կամ բրդեղեն հագուստների հետ, չնայելով որ շատ հարուստ էին: Հասարակ չթեղեն հագուստով կառավարվում էին: Տղամարդիկ նույնպես չէին հագնում մահուդ կամ տրիկո: Պատմում են, որ նրանցից մեկը Թիֆլիսում գնել էր մի թանկագին մուշտակ: Իսկույն կալոնիստները ժողով կազմելով, արգելեցին նրան հագնել, որ իր օրինակով չգայթակղեցնի մյուսներին: Նա ստիպվեցավ իր մուշտակը վաճառել:

Ելենդորֆի գաղթականները իրանց օրինակով կարող էին լավ օրինակ տալ Գանձակի հայերին: Բայց մինչև այսօր հայերը դրանցից սովորեցին եր-

¹ Գանձակի հաշտարար դատարանում կամ նահանգական դատարանում մի երկու կամ երեք գործեր կան, որ վերաբերում են Ելենդորֆի գերմանացիներին: Նրանք սուղերում ուրիշ գործեր չունին

կու բան միայն, այն է՝ ֆորգոն և տակառ շինել: Գանձակեցի թուրքերի բանեցրած բոլոր ֆորգոնները հայերն են շինում:

Ելենդորֆում ես մնացի կես ժամ միայն: Այստեղից պիտի գնայի Հաջի-քենդ, որը Գանձակի ծառայողների ամառանոցն է: Ճանապարհը հարթած էր, որովհետև մինչև հիշյալ գյուղը Գանձակից միշտ կառքեր և փոստայի սայլակներ են գնում: Ելենֆորդից սկսյալ՝ Գանձակի տափարակը վերջանում է, և ճանապարհը բարձրանում է դեպի բլուրների գառիվերը և, լեռների վրայով պտույտներ գործելով, հասնում է մինչև Հաջի-քենդ: Ելենդորֆից այն կողմը բնությունը բոլորովին փոխվում է. կարծես մարդ մտնում է մի ուրիշ աշխարհ: Հետզհետե բլուրները ծածկվում են թփերով, և ապա սկսվում են անտառները: Ես հագած ունեի բարակ ամառային հագուստ. մինչև Ելենդորֆ հասնելս սաստիկ շոգում էի տոթից. իսկ այժմ սկսեցի մրսել և միևնույն օրը հարբուխ ստացա:

Հաջի-քենդը, ինչպես ասացի, Գանձակի ամառանոցն է. այնտեղ է անցկացնում ամառը գավառապետը իր բոլոր ծառայողներով. այնտեղ են լինում քաղաքի բոլոր պաշտոնատարները: Գանձակից մինչև այստեղ բերած է հեռագրական թել: Հաջի-քենդը այժմ բացի ամառանոց եկողներից ուրիշ բնակիչներ չունի: Բայց նա առաջ եղել է հայաբնակ գյուղ. մինչև այսօր մնացել է հայոց եկեղեցին, որ կիսով չափ ավերակ է: Գյուղից ոչ այնքան հեռու, անտառի մեջ երևում է հայոց գերեզմանատունը:

Հասնելով Հաջի-շեն, մի փոքր այս կողմ և այն կողմ ման գալով՝ երկու ժամը լրացավ: Մաստիկ սոված էի, մտա հյուրանոցը մի բան ուտելու: Հյուրանոցի պահողը գերմանացի էր, ով գիտե՝ որտեղից եկած. ահագին բարձրահասակ կինը, նստած պատշգամբի վրա, նամակ էր գրում, ամուսին այրը պտտվում է հյուրերի շուրջը, զանազան հանաքներ էր անում: Մտա սեղանատուն: Նրա շուրջը պատել էին տեղային բոլոր ծառայողները ամեն կոչման և ամեն աստիճանի, սպասում էին, որ ճաշ տան: Երևում էր, որ կերակուրների ցուցակ չկար. սպասավորը ներս մտավ և բերանացի հայտնեց, թե ինչ տեսակ կերակուրներ կան, և նրանց թվում հիշեց հայոց *բորանին* ու *չիխիրթման*: Այդ երկու անունները ընդհանուր ծիծաղ բարձրացրին, ռուսները սկսեցին հռհռալ: Նրանց թվում գտնվող մի քանի հայ ծառայողներ ևս սկսեցին ծիծաղել իրանց պապերի բորանու և չիխիրթմայի վրա, երբ նկատեցին, որ իրանց ռուս պաշտոնակիցները ծիծաղում են: Բնավորության ցածությունը, ստոր հաճոյամոլությունը երևում է առավելապես այս-

պիսի մանր բաների մեջ: Իմ դրությունն էլ ոչ սակավ ծիծաղելի էր. ազգային զգացմունքը շարժվեց ինձանում, ես բոլորի հակառակ պահանջեցի չիսիթմա և բորանի: Դուրս եկավ, որ շատ լավ էին պատրաստված:

Ճաշի սեղանի վրա խոսակցության առարկան գուբերնատորի ջեյրանն էր:

- Դուք տեսա՞ք գուբերնատորի համար բերած այն նոր ջեյրանը,- հարցնում է մեկը մյուսից:

- Տեսա, ինչպես չէ, շատ զալումն է,- պատասխանում է մյուսը:

- Երբ մոտենում է մարդուն, սկսում է առջևի ոտիկներով քանդել գետինը,- մեջ է մտնում երրորդը:

- Չէ՛, առջևի ոտիկներով չէ քանդում, ետևի ոտներովն է քանդում և միննույն ժամանակ պոչը շարժում է,- մի չորրորդը սկսում է ուղղել նրանց սխալը:

Ամբողջ կես ժամ տևեց վիճաբանությունը, արդյոք գուբերնատորի ջեյրանը մարդուն մոտենալու ժամանակ առջևի ոտներն է շարժում, թե ետևի: Ես ձանձրացա այդ դատարկախոսությունց, դուրս եկա սեղանատնից պատշգամբի վրա, այստեղ պահանջեցի կոֆե: Դրսից ես լսում էի միննույն վիճաբանությունը, բայց հարցը դարձյալ մնաց անվճիռ:

Պատշգամբի վրա նստած ժամանակս հայ ծառայողներից մեկը մոտենում է ինձ և, առանց իրան ծանոթացնելու, ուղղակի ասում է.

- Գիտե՞ք ինչ կա, հյուրանոցի տերը այդ տունը շինելու ժամանակ, ասում են, գտել է ահագին գանձ, հիմա նա շատ հարուստ է:

- Ես հավատում եմ, այսպես թանկ-թանկ որ ծախում է նա իր կերակուրները, կարող է գանձ ունենալ,- եղավ իմ պատասխանը:

- Չէ՛, փո՛ղ է գտել, փո՛ղ,- կրկնեց անձանոթը և դարձյալ չէր կարողանում ըմբռնել, որ իր տեղեկությունը միայն առասպել էր և ավելի ոչինչ:

Մինչև Հաջի-շենն ես եկա միայնակ, որովհետև ճանապարհը ուղիղ էր և հեռագրական թելի սյուները օգնում էին ինձ չմոլորվելու: Բայց հեռագրական թելը Հաջի-շենում վերջանում էր: Այստեղից ես պիտի գնայի Սյուլուկ կամ Ազատ կոչված գյուղը: Ճանապարհը, որ տանում էր այնտեղ, մի նեղ շավիղ էր, որ պտտվում էր լեռների վրայով: Խիստ հեշտությամբ կարող էի մոլորվել, մանավանդ որ տեղ-տեղ շավիղը կորչում էր թփերի մեջ: Իմ բախտից պատահեց մի գյուղացի, որ Հաջի-շենից գնում էր դեպի Սյուլուկ: Ես խնդրեցի, որ առաջնորդե ինձ՝ խոստանալով, որ նրան արաղի փող կտամ:

Դուրս եկավ, որ գյուղացին, թեև հագուստից աղքատ էր երևում, բայց բավական բարեսիրտ և ունևոր մարդ էր: Ճանապարհի երկարությունը ձանձրալի չլինելու համար ես սկսեցի նրա հետ հետևյալ խոսակցությունը.

- Ի՞նչ գործ ունեիք Հաջի-շենում:
- Գնացել էի դուփերնաթի մոտ,- ասաց նա մի առանձին կերպով:
- Ի՞նչ գործ ունեիք դուփերնաթի հետ:
- Ղազախները մեր արտերը ուտացնում են:
- Հետո դուփերնաթը լսե՞ց քո գանգատը:
- Ինձ չթողեցին նրա մոտ:
- Քեզ ի՞նչ ասեցին:
- Ոչինչ:
- Հիմա ո՞ւր ես գնում:
- Գնում եմ մեր տունը:
- Քեզ ինչո՞ւ չթողեցին դուփերնաթի մոտ:

Նա լռեց:

Բարձրանալով լեռան բարձրավանդակի վրա՝ ես տեսա նույն կազակների վրանները, որոնք իրանց ձիաներով տրորում էին գյուղացու արտերը, և որոնց վրա գանգատվելու էր գնացել նա:

Երեկոյան, դեռ արևը մայր չմտած, ես հասա Ազատ գյուղը: Այստեղ իջևանեցի մի երիտասարդ քահանայի մոտ, որ Գանձակից եկել էր ամառանոց: Արևը մայր մտավ, բայց դեռ բավական լույս էր, որովհետև լուսնկա գիշեր էր:

Գյուղացիները, ցերեկվա աշխատությունից դադարելով, հավաքվել էին խրճիթների կտուրների վրա և բըբուզ նստած խոսում էին միմյանց հետ: Ես իմ հյուրընկալի հետ մոտեցանք մեկ խումբի: Խոսակցությունը դարձյալ կազակների վրա էր, որոնք գյուղացիների խտտի դեզերը և հունձքը ուտեցնում են իրանց ձիաներին և այլն:

Մի քանի բուպե լսելուց հետո ես այն եզրակացության հասա, որ կազակները իսկապես մեղավոր չեն: Նրանց տվել են իջևանելու համար մի տեղ, որ ծածկված է անտառով, իսկ մնացած բոլոր հողերը մշակված են: Հայտնի բան է՝ խիտ անտառում անկարելի է ձիաներ արածացնել, նրանք իրանց ձիաները քաղցած չպահելու համար ստիպված են արածացնելու մշակված դաշտերի վրա:

Գյուղացիների խոսակցությունից երևաց և մի ուրիշ բան: Հիշյալ կազակների իջևանելու համար տեղային իշխանությունից նշանակված է եղել մի այլ ամառանոց, ուր ընդարձակ արոտամարգեր կային նրանց ձիաների համար: Հետո զանազան անձինք այդ տեղերը պահել են իրանց ձիաների համար խոտ հնձել տալու, իսկ կազակներին քշել են այնտեղ, որ արածացնեն գյուղացիների հունձքի արտերը: Այժմ ես հասկացա, թե ինչն է իմ առաջնորդին չէր հաջողվել յուր արտերն ազատել:

Ազատ գյուղում ես մնացի երկու ամբողջ օր, որովհետև այդ գյուղի մերձակայքում մի քանի նշանավոր տեղեր կային, պետք էր տեսնել:

Ազատ գյուղում պատահեց ինձ ծանոթանալ Կովկասյան ուսումնական շրջանի տեսչի օգնականի հետ: Նա մի հայ երիտասարդ էր, որ իր ընտանիքով եկել էր այդ գյուղը ամառը անցկացնելու համար: Որպես Կովկասյան ուսումնական շրջանի տեսչի օգնական՝ նրան հանձնված էր աշխատել թե՛ Ելիզավետոպոլի, թե՛ Նուխվա և թե՛ Ղարաբաղի կողմերի հայաբնակ գյուղերում ռուսաց դպրոցներ բաց անել: Որովհետև այդ դպրոցները վերջին ժամանակներում բավական աղմուկներ բարձրացրին, ես հետաքրքրվեցա տեղեկանալ պատճառները:

Հետո առա ինձ հետ, որպես ուղեցույց, գյուղացիներից մեկին, իսկ որպես առաջնորդ՝ Սարգիս Ջալալյանցի ճանապարհորդության երկու հատորները: Շուտով հայտնվեցավ, որ այդ գրքերը միննույն տեսակ բաներ էին, որպես Թիֆլիսի շտաբի պատրաստած քարտեզները, միայն տարբերությունը նրանումն էր, որ քարտեզների մեջ բոլոր տեղերի անունները թուրքացնում են, բայց ճիշտ իրանց տեղումն են դնում, իսկ Ջալալյանը տեղերի անունները հայացնում է և ցանկացած տեղումն է դնում: Երևում է, լուսահողմի շատ տեղեր աչքով չէր տեսել, գրել է ուրիշներից հարցնելով, թեև անդադար կրկնում է, թե, հայրենյաց սուրբ հողը համբուրելով, արտասուք թափելով, անցա այստեղ, այնտեղ և այլն:

Ձիով գնալ շատ դժվարին էր լեռների ելևեջների վրա, ես վճռեցի այնօր ոտքով ճանապարհորդել:

Ես կամենում էի տեսնել Գեոզգյուլ (կանաչ լիճ) կոչված փոքրիկ լիճը: Այդ լիճը կազմվել է Քյափազ սարի փլատակներից: Մինչև այսօր ժողովրդի հիշողության մեջ մնացել է դարևոր ավանդությունը, թե ինչպես երկրաշարժից հիշյալ սարի մի մասը քանդվեցավ և, թափվելով ձորի մեջ, կտրեց գետի (?) ընթացքը, որ նույն ձորով հոսում էր: Ջուրը հավաքվելով լճացավ, բայց

դարձյալ ահագին ժայռերի տակից նա բուսնում է և շարունակում է իր ընթացքը:

Քյափազ սարի փլատակները, դիզելով ահագին քարաժայռեր միմյանց վրա, կազմել են բազմաթիվ խոռոչներ և այրեր, որոնք մեծ ծառայություն են արել բնակիչներին երկրի խոռվյալ ժամանակներում: Այդ այրերի մեջ պատասպարվում էր հայ ժողովուրդը լեզգիների, պարսիկների և օսմանցիների արշավանքների ժամանակ: Այն տեղը, ուր գտնվում է Քյափազ լեռան քարակարկառը, կոչվում է Չինգիլ, այսինքն՝ *չանկլ*, որ նշանակում է անկարգ կերպով դիզված քարեր: Չնայելով, որ Քյափազ սարի մի մասը քանդվել է, բայց նա դարձյալ բարձրաբերձ հանդիսանում է իր շրջակա լեռների մեջ: Անտառներից մերկ է նա:

Վերադառնալով Քյափազ սարից՝ ես կրկին եկա Ազատ գյուղը, ուր իջևանել էի: Այդ գյուղը գտնվում է լեռան բարձրավանդակի վրա, նրա դեպի արևմտյան (?) կողմը բարձրանում է Սարի-յալ կոչված սարը, որի գագաթի վրա կա մի հայոց մատուռ, որի մեջն է ս.Պանդայրոն բժշկի գերեզմանը: Նույն լեռան արևելյան կողմը՝ մի ձորի մեջ, գտնվում է հայոց վանք, որի մեջն է Հերմոզիսի քահանայի գերեզմանը:

Ազատ գյուղում երկու օր մնալով՝ իմ հյուրնկալ քահանայի հետ ձի վարձեցինք և երրորդ ավուր առավոտյան պահուն սկսեցինք դիմել դեպի Գետաշեն գյուղը: Ճանապարհը ձգվում էր լեռների բարձրավանդակների վրայով, երբեմն իջնում էր խորին ձորերի մեջ: Կեսօր էր, երբ հասանք Գետաշեն հայաբնակ գյուղը:

Գետաշենը գտնվում է մի գեղեցիկ ձորի մեջ, որտեղից անցնում է *Քյուրակ-չայի* ճյուղերից մեկը: Ամբողջ ձորը, գետի աջ և ձախ կողմերում, լցված է գյուղացիների այգիներով, որ նրան անտառի ձև են տալիս: Վայրենի ընկուզենիները դարևոր հասակ ունին:

Այդ գյուղում ես իջևանեցի Մելիք Մնացականովների տանը. մի հոյակապ, քարից շինված տուն, որ որոշվում էր մյուսներից իր մեծությամբ: Դա Գանձակի գավառի չորս մելիքներից մեկի տունն էր: Ես գտա այդ տոհմի ներկայացուցիչներից մեկին՝ Մնացական բեկին անկողնի մեջ: Մոտ հարյուրամյա ծերունին տկար էր, բայց հիշողությունը տակավին արթուն, և դատողությունը՝ առողջ: Խիստ հետաքրքրական էր խոսել այդ կենդանի հնության հետ հին անցքերի մասին: Նա պատմում էր բոլորը, ինչպես մի Խորենացի: Երբ նա նկատեց, որ ասածները նշանակում են հիշատակարանիս

մեջ, շատ ուրախացավ: «Գրեցեք, որդի, ասաց նա, թող հայոց նախնյաց գործքերը չկորչեն. նրանք շատ երևելի մարդիկ են եղել»: Հետո նա հարցրեց. «Հիմա ինչպե՞ս է հայոց ազգի գործը»: Ես պատմեցի նրան մի քանի բաներ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածից, Ներսես պատրիարքի աշխատություններից և այլն: «Բա մեր կաթողիկոսը ի՞նչ է շինում», հարցրեց նա: -Ոչինչ,- պատասխանեցի ես: Ծերունին խորին կերպով հոգվոց հանեց և լռեց:

Գետաշեն գյուղը ունի մի քարաշեն եկեղեցի և մի մատուռ, որ ուխտատեղի է. նա կոչվում է ս.Նշան: Եկեղեցին ես չգնացի. ինձ հետաքրքրում էր ուխտատեղին, որտեղ ես կամենում էի տեսնել մի հին գրչագիր Ավետարան:

Երկար որոնելուց հետո գտան քահանային, որ եկավ մատուռի դուռը բաց արավ: Ճանապարհին իմ ուղեկից տեր Գ.Բ. պատմեց մի նոր պատահած¹ անցք, որից ես հասկացա, թե ինչպես պետք էր վարվել այդ մատուռի մեջ: Ամենայն երկյուղածությամբ մոտեցա, երեսս խաչակնքելով համբուրեցի ս.Ավետարանը և այլ սրբությունները, որ կարգով շարած էին սեղանի վրա: Հետո խնդրեցի քահանային, եթե կարելի էր, ինձ ցույց տալ գրչագիր Ավետարանը: Որովհետև մատուռի մեջ սաստիկ մութն էր, նա այնքան բարի եղավ, որ թույլ տվեց Ավետարանը մատուռից դուրս հանել և բակումը նայել:

Ես տեսել եմ հայոց բազմաթիվ գրչագրեր, բայց առաջին անգամ պատահում էր ինձ տեսնել մի այսպիսի գեղեցիկ աշխատություն: Մագաղաթի նրբությունը, գրչի գեղեցկությունն ու կանոնավորությունը սքանչելի էր: Համարյա ամեն երեսների վրա կային հիանալի պատկերներ, որ ներկայացնում էին Ավետարանի յուրաքանչյուր գլխի բովանդակությունը: Պատկերների նկարները, գույները, ոսկեզօծությունը ցույց էին տալիս ժամանակի գեղարվեստի կատարելությունը: Կազմը ամբողջապես արծաթից էր. կազմի վրա դուրս էին փորված առաքյալների և այլ սրբերի պատկերներ:

Բայց ես բախտավոր գտնվեցա, որ նույն Ավետարանի վերջին թերթերի վրա գտա մի հիշատակարան, որ ինձ համար շատ թանկագին էր: Իմ ճանա-

¹ Մի գանձակեցի պարոն գանազան երկրներում վատնած լինելով իր առողջությունը, բժիշկներից հուսահատվելով, վերադառնում էր իր հայրենիքը, սկսում է ման գալ հայոց ուխտատեղիների դռները, որ բժշկություն գտնե: Գալով այդ մատուռը, քահանային պաշտամունք է կատարել տալիս, ինքն էլ մի Նարեկ ձեռքին բռնած, առանձնանում է մի անկյունում, սկսում է լուռ կարդալ: Ուխտավորի վարմունքը անհաճո է թվում քահանային, որ նա համարձակվում է իր ներկայությամբ կարդալ, նրան պատժելու համար, կամ նույնիսկ մոլեռանդությունից դրդված, թե աշխարհական մարդուն ներելի չէ գիրք կարդալ եկեղեցում, քահանան դուրս է վազում մատուռից, սկսում է աղաղակել. «դա Ֆարմաստն է, դա Ֆարմաստն է»: Գյուղացիք թափվում են և լավ ջարդում են «Ֆարմաստնին»: Խեղճ մարդը փոխանակ բժշկություն գտնելու, ունեցած առողջությունն էլ կորցնում է այստեղ: Նա գանգատվել է հոգ.իշխանությանը, հայտնի չէ պատժվե՞ց արդյոք անպիտան քահանան

պարհորդության գլխավոր նպատակներից մեկը լինելով հայոց հին մելիքների մասին պատմական տեղեկություններ հավաքել, այդ Ավետարանի մեջ գտա Ջրաբերդի մելիքների ամբողջ տոհմագրությունը¹:

Ահա ինչ դիպվածքով, հիշատակարանից երևում է, որ 1753 թ. Չարաբերդի մահալի իշխան Մելիք Հաթամը ետ է գնել այդ Ավետարանը պարսիկներից, որ նրանց ձեռքում գերի էր ընկած: Նրա առաջին արծաթակազմը պարսիկները պոկած են եղել, մելիքը նորից արծաթով կազմել է տալիս և ընծայում է Գետաշենի եկեղեցուն: Որպեսզի ապագա սերունդը այդ բարեգործության համար հիշե նրան իր աղոթքների մեջ, մելիքը, ժամանակի սովորության համեմատ, իհարկե կրոնական մտքով, արձանագրում է հիշատակարանի մեջ իր նախնյաց, իր որդիների և թոռների անունները: Ահա այդքանը մի հաստատ փաստ է պատմագրի համար գիտենալ, թե որ ժամանակումն էին ապրում այդ մարդիկը, ովքե՞ր էին նրանց նախնիքը, ովքե՞ր էին նրանց որդիքը, թոռները և այլն: Բացի դրանից՝ հիշատակարանի մեջ արձանագրվում է, թե ով էր ժամանակի կաթողիկոսը, առաջնորդը, երկրի տիրապետողը և այլն:

Մեր հին ձեռագրերի մեջ գտնված հիշատակարանները, համարյա բոլորը այդ ձևով են գրվում, և կարող են մատակարարել հնասերներին առատ պատմական նյութեր, եթե հավաքվեին: Գոնե Էջմիածնի ծույլ, պորտաբույծ վարդապետները այսքանը անեին. հավաքեին իրանց ձեռքի տակ գտնված ահագին գրադարանի գրչագիր գրքերի հիշատակարանները և տպել տային իրանց տպարանում:

Ես ավելորդ եմ համարում յուրաքանչյուր գյուղի տնտեսության եղանակը, կեցության ձևերը, գյուղացիների վիճակը առանձին-առանձին նկարագրել, դա կձանձրացնեի իմ ընթերցողներին, և ես անդադար կրկնություններ պիտի հանդիպեի: Այդ կողմերի գյուղացիների դրությունը և նրանց կենցաղավարության եղանակը այնքան նման է միմյանց, որ բոլորի մասին կարելի է գրել մի ընդհանուր տեսություն, և այդ կգրեմ ես հետո:

Գետաշենցիների մասին այսքանը ավելորդ չեմ համարում հիշել, որ նրանք հայտնի են շրջակա գյուղացիների մեջ իրանց կովասեր և խռովարար բնավորությամբ: Երբ գյուղական աշխատությունները դադարում են, հանգստի ժամանակ նրանք մի առանձին բավականություն են զգում, հա-

¹ Ջրաբերդի մելիքությունը Ղարաբաղի հինգ մելիքություններից (Խամսայի) մեկն էր

վաքվել խրճիթների կտուրների վրա, ծխել և միմյանց ուշունցներ տալ: Երևանի նահանգի աշտարակցիները հայհոյանքը, ուշունցը իր կատարելության են հասցրել, բայց գետաշենցու ուշունցը, թեև սյունեցու նման կոշտ է, կոպիտ է, բայց ազդու է:

Գետաշենից անցանք Կարաբուլաղ գյուղը, որ ընդամենը 2 ժամվա ճանապարհ է: Ամեն մի գյուղ հասնելիս կամ պետք է որոնել տանուտերի տունը, կամ քահանայի տունը: Ես ընտրեցի վերջինը, մտածելով, թե հունձքի, կալի ժամանակ է, տանուտերը զբաղված կլինի, բայց քահանան անգործ կլինի: Բայց իմ կարծիքը խաբեց ինձ: Քահանային մենք գտանք մի քարաշեն քարվանսարայի մեջ: Այդ քարվանսարան մնացել է ամենահին ժամանակներից. նրա շրջապարիսպը, դարվազան, ախտոատները քանդված են, և գյուղացիները քարերը տանելով գործ են անել իրանց շինությունների համար: Այժմ ողջ մնացել են մի կարգ քարաշեն և կամարակապ սենյակներ, որ առաջ ծառայում էին որպես իջևան ճանապարհորդների համար¹:

Քարվանսարան այժմ բոլորովին անտեր մնալով, գյուղի տեր Դ.քահանան սենյակներից մեկը ընտրել էր իր համար որպես արհեստանոց, այնտեղ տակառներ էր շինում, որոնք մեծ քանակությամբ գնում են շրջակա գյուղացիները: Քահանան վարպետի մոտ չէր սովորել, այլ իր սեփական վարժություններով փայտից այնպիսի իրեղեններ է շինում, որ ամենահմուտ արհեստավորի գործ կարելի է համարել: Ես տեսա նրա շինած մի փայտյա մատուցարան (պողոնս), որը իր նրբությամբ և գեղեցկությամբ շատ հիանալի էր²: Քահանան, բացի հյուսնությունից, գիտեր և այգեգործություն: Անտառներից վայրենի պտղատու ծառեր բերելով՝ տնկել էր մի այգի և, տունկերը պատվաստելով, այն աստիճան ազնվացրել է, որ ամենաընտիր տեսակների հետ կարելի է համեմատել:

Առհասարակ այդ քահանան ինձ վրա շատ լավ տպավորություն գործեց, ես առաջին անգամ տեսնում էի աստուծու սեղանի պաշտոնյաներից մեկին, որ իր ապրուստի հույսը չէր դրել միայն պսակից, մկրտությունից և

¹ Երևում է, որ հին ժամանակներում Գանձակից Նախիջևան և Երևան տանող ճանապարհը այդ ձորի միջովն է եղել: Այստեղից մինչև Սևանա լիճը և այնտեղից Դարալագյազի (Վայոց ձորի) միջով մինչև Նախիջևան և Երևան, երևում են այս տեսակ քարվանսարանների հետքեր, որ ծառայում էին որպես իջևաններ քարավանների անցուղարձի համար

² Պատում է, որ հիշյալ քահանան իր շինած փայտյա մատուցարաններից երկու հատ ընծա տարավ Էջմիածին հայոց կաթողիկոսին և այնտեղ փոխանակ վարձատրվելու, հանդիմանություն ստացավ: Ես կարծում եմ, եթե մի քանի հարյուր ռուբլի տարած լիներ Մ...նուն, մի խաչ կստանար ու պատվով ետ կդառնար

թաղումից ստացած փողերի վրա, այլ ապրում էր արդար արհեստով և գյուղային տնտեսությամբ: Նրա արհեստանոցի մոտ էր կալը, որտեղ նա կալսել էր տալիս իր մշակության բերքը:

Քահանայի արհեստանոցում ես գտա մի ուրիշ զարմանալի մարդ: Դրան կարելի է իր կյանքում պատահած արկածների համար և տեսած երկրների համար հայոց թափառական հրեա կոչել: Նա եղել է Թուրքիայում, Պարսկաստանում, Եգիպտոսում, Հնդկաստանում, Չինաստանում, մի խոսքով, ամեն տեղ: Հնդկաստանում նա սովորել էր *լեղակ* մշակելու արհեստը: Կամենալով այդ արհեստը իր հայրենիքում ևս մտցնել, նա վերադառնալով Գանձակ, սկսեց փորձեր անել, փորձը հաջողվեցավ և իր արդյունաբերած լեղակը նա ցույց տվեց տեղային կառավարությանը, խնդրելով, որ իրան օգնեն, որ կանոնանվոր մշակություն սկսե: Ոչ ոք նրա վրա ուշադրություն չդարձրեց, այժմ ծերությունից և աղքատությունից ստիպված, նա պատուպարան էր գտել Կարաբուլաղի հին քարվանսարայի ավերակների մեջ, և տեր հոր արհեստանոցում նստած՝ կոշիկներ էր կարում, կոշիկների կաղապարներ էր շինում և օգնում էր տերտերին նրա հյուսնության գործում:

Կարաբուլաղի եկեղեցին մտնելուց հետո և մի քանի զրքերի հիշատակարանները քննելուց հետո, ես պատրաստվեցա շարունակել իմ ճանապարհը: Այստեղ ես պիտի բաժանվեի տեր Գ.Բ.-յանցի հետ, որը Ազատ գյուղից բերել էր ինձ մինչև Կարաբուլաղ:

Մի թուրքից ձի վարձելով՝ ճանապարհ ընկա: Ձիու տերը եկավ ինձ հետ ճանապարհը ցույց տալու համար: Հարցուփորձով հասկացա, որ իմ առաջնորդը թուրքերի մի թափառական ցեղին էր պատկանում, և մեծ անզուշություն էր իմ կողմից մի այսպիսի ավագակի հետ միայնակ լեռների վրա ճանապարհորդել: Նա փիաղա էր, ասացի, որ առաջ գնա, իսկ ես ձիով կհետևեմ նրան: Այդ այն նպատակով էր, եթե թուրքը ինձ կողոպտելու փորձ անե, ես կարողանամ շուտով նկատել և պաշտպանվելու միջոց ունենամ: Իմ հետևից գալով՝ նա կարող էր մի ատրճանակի հարվածքով ինձ ցած գլորել, հետո կողոպտել: Բարեբախտաբար ոչինչ չպատահեց, և ես, Թողան¹ թուրքաբնակ գյուղից անցնելով, անվտանգ հասա հայոց *Էրթեջ* գյուղը, որ գտնվում է Բալայ-քյուրակ գետակի մոտ:

¹ Թողանը նույնպես հայաբնակ գյուղ է եղել, այժմ թուրքերի ձմեռոց է: Հայոց եկեղեցին, կիսով չափ ավերակ, դեռ մնում է

Չկամենալով էրքեջում երկար մնալ՝ շուտով կանչել տվի գյուղի քահանային, որ եկեղեցու դուռը բաց անե: Քահանան հայտնվեցավ. դա Կարաբուլաղի արհեստավոր քահանայի հակապատկերն էր: Նա հոժարությամբ բաց արավ եկեղեցու դռները՝ կարծելով, թե ես ուխտավոր եմ, և շուտով Ավետարանը և մի կոտրած խաչ դրեց սեղանի վրա, որ ես համբուրեմ և նրան փող տամ: Բայց երբ նկատեց, որ ես հիշատետրը դուրս հանեցի ծոցիցս և սկսեցի մատիտով մի քանի նկատողություններ անել նրա վրա, քահանան սարսափեց՝ կարծելով, թե ես մի պաշտոնական անձն եմ, և սատանա գիտե, ինչ նպատակով եկել եմ նրա եկեղեցին «գրելու»: Իմ բոլոր ջանքը համոզելու նրան, որ նա այսպիսի կասկածներ չունենա, իզուր անցավ: Նա ոչինչ չկամեցավ ինձ ցույց տալ: Մտածելով, որ կարող է մի անախորժություն պատահել՝ ես թողեցի ու դուրս եկա եկեղեցուց՝ բայց ամեննին չմեղադրելով ողորմելի քահանային:

Էրքեջից դուրս գալով շարունակեցի իմ ճանապարհը դեպի Կարաչինար կամ Աղջաղալա (Սպիտակ բերդ): Դեպի ձախ կողմի լեռները, որ շարունակություն են Մռավ (?) լեռան, պատած էին անտառներով, իսկ դեպի ձախ բարձրավանդակները փոքր առ փոքր իջնում են լեռները, ավելի տափարակ ձև են ստանում, անտառներ չկան, միայն պատած են ճոխ խոտաբույսերով և մշակած արտերով: Երեկոյան ես հասա Կարաչինար, Մելիք Բեգլարովների տունը:

Դ

Գյուլիստանի կամ Իզիրմիդորդի մահալը: - Մելիք Բեգլարովների ու Մելիք Յուսուփովների պատմական անցյալը¹: - Մելիք Բեգլարովների գյուղական տնտեսությունը: - Գյուղական տնտեսությունը առհասարակ Գանձակի գավառում: - Կավածական վեճեր: - Հին մելիքների սերունդի այժմյան ազնվապետական նշանակությունը: - Ազնվապետությունը առհասարակ Գանձակի և Ղարաբաղի գավառներում:

Գյուլիստանի մահալը կոչվում է և *Թալիշի* մահալ, նա կոչվում է և *Իզիրմիդորդ* (24), որովհետև բաղկացած է քսաննչորս գյուղերից: Նրա սահմաններն են՝ հյուսիսից՝ Քյուրակ գետը, հարավից՝ Թարթար գետը, արևելքից այժմյան փոստի ճանապարհ, իսկ արևմուտքից՝ Մռավ սարը: Այս

¹ *Խամսա արաբ. նշանակում է հինգ. այսպես կոչվում էին հինգ դաշնակցական մելիքությունների երկրները, որ հետևյալներն էին՝ 1. Գյուլիստան, 2. Ջրաբերդ, 3. Խաչեն, 4. Կարանդա, 5. Դուզախ*

մահալը, նախքան ռուսաց տիրապետությունը, էր Ղարաբաղի հինգ դաշնակցական մելիքությունների (խամսայի) մասներից մեկը: Այստեղ իշխում էին Թալիշի հայ մելիքները, և ամբողջ մահալը նրանց սեփականությունն էր, թե երկիրը և թե իշխանությունը անցնում էր սերունդից սերունդ:

Դիտավորություն ունենալով առանձին գրքով հրատարակել Ղարաբաղի մելիքների պատմությունը, որոնց թվում և կլինի Գյուլիստանի մելիքների պատմությունը, այժմ այսքանը միայն կասեմ, որ Գյուլիստանի մահալի այժմյան տիրապետողները միակն են Ղարաբաղի բոլոր մելիքներից, որ կարողացել են ամբողջապես պահպանել իրանց հայրական ժառանգությունը: Հին Գյուլիստանը իր սահմաններով այժմ որպես կալվածք և սեփականություն գտնվում է այդ երկրի նախկին տիրապետողների ժառանգների ձեռքում, որ բաժանված են երկու ճյուղերի՝ մեկը՝ Մելիք Բեգլարովները, մյուսը՝ Մելիք Յուսուփովները:

Մելիք Բեգլարովների տոհմի ձեռքում կա մինչև 70 հազար դեսյատին հող՝ իր դաշտերով, լեռներով, անտառներով և արոտամարգերով: Այդ տարածության վրա կա 15 գյուղ՝ չհաշվելով ձմեռոցները: Մելիք Յուսուփովների ձեռքում կա 20 հազար դեսյատին հող՝ երեք գյուղերով:

Գալոց Կարաչինար կամ Աղջակալա¹ գյուղը, ես իջա Մելիք Բեգլարովների տանը: Ինձ առաջին անգամ պատահում էր տեսնել մի հայ մեծ կալվածատիրոջ տնտեսությունը:

Կալվածատիրոջ տունը համարյա մի ամբողջ է. նրա մոտով խոր ձորի միջով անցնում է Գորան գետը: Ահագին դարվազայից ներս մտնելով՝ ձեր առջև բացվում է մի ընդարձակ բակ: Նրա մի կողմում շինված են ցորենի և այլ բերքերի պահելու համար ամբարներ, մյուս կողմում՝ գինի պահելու մառաններ և զանազան ծածկոցներ՝ երկրագործական անոթներ պահելու համար. մի կողմում ձիաների ախոռատունն է. մի կողմում կալվածատիրոջ բնակարանն է՝ զանազան վայելուչ սենյակներով: Սենյակների մի երեսը նայում է դեպի բակը, իսկ մյուս երեսը՝ դեպի գեղեցիկ պարտեզը: Տունը ունի բոլոր հարմարությունները՝ կանոնավոր գյուղատնտեսության համար:

Կանոնավոր գյուղատնտեսություն ասելով՝ չպետք է հասկանալ եվրոպական գյուղատնտեսություն, այլ մեր տեսած, մեր ունեցած գյուղական տնտեսություններից ամենակատարյալը:

¹ Այդ գյուղը կոչվում է և Աղջակալա նրա համար, որ երբ Գյուլիստանի մելիքները գաղթեցին Բոլնիս, այնտեղ բնակվեցան Աղջակալա գյուղում և այլն

Մելիք Բեգլարովները առաջինը եղան Գանձակի գավառի կալվածատերերի մեջ, որ բերել տվեցին եվրոպական գութան և հնձելու մեքենա: Այդ փորձից հայտնվում է, որ եվրոպական երկրագործական մեքենաները չեն կարող մի առանձին օգուտ տալ, եթե հարմարեցրած չլինեն մեր երկրի տեղական պայմաններին: Ահա ինչ պատճառով.

Այս կողմերում հողի պարարտությունը բուսցնում է շատ բարձրահասակ հունձք. գյուղացիք հնձում են հասկերը միայն մի երկու կամ ավելի թգաչափ ձողի հետ. իսկ ձողի մնացած մասը մեկ արշինի չափ մնում է գետնի վրա: Այդ նրա համար է, որ, կարճ հնձելով, ավելի հեշտությամբ է ծեծվում, բացի դրանից, ձողի վերին մասը, ավելի նուրբ լինելով, հարող ավելի փափուկ և ավելի նուրբ է լինում, անասունները ախորժակով են ուտում:

Եվրոպական հնձելու մեքենան չէ համապատասխանում այդ պայմաններին: Նա բոլորովին տակիցն է հնձում, այսպիսի հունձքի խորձերը համ երկար են լինում, համ դժվարությամբ են կալսվում, համ հարող կոշտ է լինում, անասունները չեն ուտում: Շատ հասկանալի է, որ հնձելու մեքենաները պատրաստված են այն երկրների համար, ուր հարող չեն ուտացնում անասուններին:

Գութանի անհարմարությունը նրանումն է, որ նա թեև համեմատաբար սակավ գույգ անասուններ է պահանջում բանեցնելու համար, բայց այնքան խոր ակոսներ չէ ձգում, որպես մեր գութանները: Իսկ խոր ակոսներ հարկավոր է մեր երկրի հողի համար, մանավանդ *արան* տեղերի ջրային ցանքերի համար: Եթե ակոսը խոր չէ, ցանքը շուտով է ծարավում, և եթե շուտով ջուր չեն հասցնում՝ այրվում է: Մինչդեռ խոր ակոսը կարող է խոնավություն պահպանել, և ցանքը շուտ չէ ծարավում: Այդ ավելի նպաստավոր է, որովհետև ջուրը այս կողմերում սակավ է:

Կան և տեխնիկական անհարմարություններ, հանկարծ մեքենայի մեկ վինտը կամ մի ուրիշ տեղը կոտրվում է, ամբողջ մեքենան դադարում է, ո՞վ պիտի շինի. մի կալվածատեր չէ կարող մի երկու մեքենայի համար մի մեխանիկ պահել յուր մոտ: Մինչև գրեն, մինչև Եվրոպայից բերել տան կոտրված մասը, ժամանակներ կանցկենա, բայց մշակության գործը չէ սպասում, նա պետք է յուր ժամանակին կատարվի:

Այդ բոլոր անհարմարությունները կվերջանան այն ժամանակ միայն, երբ երկրագործական անոթները թեև եվրոպական սիստեմով, բայց մեր երկրի պահանջներին հարմարեցրած, մեզ մոտ կպատրաստվին և վնասված

Ժամանակ դյուրին կլինի նրանց նորոգել տալ: Այդ կարող է լինել այն ժամանակ միայն, երբ մի քանի կալվածատեր, կամ մի քանի գյուղերի հասարակությունը, միանալով, ընդհանուր ծախքով բերել կտան մեխանիկներ և բացանել կտան անոթներ պատրաստելու գործարաններ:

Ավելորդ չէմ համարում համառոտ կերպով մի քանի տեղեկություններ տալ այս կողմերի երկրագործության վրա: Ժամանակի վերաբերությամբ ցանքը լինում է երկու տեսակ՝ գարունցան և աշունցան, այսինքն՝ մեկը գարնանն են ցանում, մյուսը՝ աշնանը: Գարնան ցանքի սերմը պետք է գարնան ցանքից ստացած հունձքից լինի, իսկ աշնան ցանքի սերմը պետք է աշնան ցանքից ստացած հունձքից լինի: Գարնան ցանքերը անվում են ըստ մեծի մասին սարոտ և ցուրտ տեղերում, ուր չեն ջրում, ջրվում է անձրևով և ցողով: Իսկ աշնան ցանքը անվում են ըստ մեծի մասին *օրան* տեղերում, ուր պետք է ջրել:

Մի քանի խոսք էլ կալվածական իրավունքների մասին:

Գանձակի գավառում կան երեք տեսակ հողեր. 1. *աղալարների* հողերը, որ, 47 թվի հողային պալաժենիայի գործությամբ, տրվեցավ աղալարներին վայելելու համար՝ նրանց իրավունք տալով ստանալ գյուղացիներից բերքի տասն մասնից մեկ մասը: 2. Կալվածատերերի հողերը. դրանք հողի սեփականատերեր են, կամ ժառանգությամբ ստացած, կամ փողով գնած, իրավունք ունին կապել գյուղացիների հետ ամեն տեսակ պայմաններ, որ իրանց շահավետ է, կամ տասանորդ ստանալու, կամ տասնից երկու մասը կամ տասնից երեք մասը և այլն: Երրորդ տեսակը արքունի հողերն են, որոնց մշակող գյուղացիները վճարում են հարկ միայն, բայց բերքից մաս չեն վճարում:

(Որքան էս տեղեկացա, Մելիք Բեգլարովները իրանց բոլոր գյուղացիներից ստանում են տասանորդ միայն):

Արքունի հողերի վրա բնակվող գյուղացիների վիճակը ավելի թեթև լինելով՝ գյուղացիները ոչ միայն ցանկանում են, այլ աշխատում էլ են, որ հողերը կառավարության ձեռքը անցնեն: Կառավարության և կալվածատերերի մեջ եղած վեճերի ժամանակ գյուղացիները աշխատում են պաշտպանել կառավարության շահերը: Մի քանի գյուղերում, օրինակ, Գյուլիստան գյուղում, իրանք գյուղացիները խնդիրք են տվել, թե գյուղը կառավարությանն է պատկանում և ոչ Մելիք Բեգլարովներին:

Գյուղացիների այդ ջանքը առաջ է գալիս և այն հանգամանքից, որ այս կողմերում ևս սահմանվել են հողային *հաշտարար միջնորդներ*, որոնք գնահատում են հողը և գյուղացիներին իրավունք են տալիս մի որոշ գնով գնելու կալվածատերից: Այժմ գյուղացիները, կամ այնքան հասկացողություն չունենալով, որ կալվածատերից գնեն և իրանք կալվածատեր դառնան, և մի կողմից էլ ցանկանալով ազատվել կալվածատերից, աշխատում են վկայություններ տալ, որ գյուղը թագավորական է:

Առհասարակ կալվածական վեճերը թե՛ կառավարության և կալվածատերերի մեջ, թե՛ կալվածատերերի միմյանց մեջ, և թե՛ կալվածատերերի և գյուղացիների մեջ, - այս կողմերում շատ զարգացած է:

Կալվածատերերի միմյանց հետ ունեցած վեճերի ժամանակ երբ մի կողմը թուրք է, իսկ մյուս կողմը՝ հայ, ասում էին, որ, ըստ մեծի մասին, թուրքերն են տանում գործը: Պատճառները՝ 1. թուրքերի ընդունակությունը հաճոյանալու պաշտոնատարներին. 2. մահմեդական օրենքի ոգին վկայության մեջ՝ մահմեդականի շահերը պաշտպանելու համար:

Մելիք Բեգլարովները, բացի երկրագործությունից, պահում են ձիաների գավոդ: Ղարաբաղի հռչակված ձիաների ցեղը վերջին ժամանակներում բոլորովին այլասերվել էր: Հայտնի է, որ Ղարաբաղի ձիաների ցեղը մի խառնուրդ էր տեղական և պարսկական (արաբական) ձիաների: Նախքան ռուսաց տիրապետությունը Ղարաբաղի խաները, Պարսկաստանի հետ հարաբերություններ ունենալով, այնտեղից կամ բերել էին տալիս կամ ընծա էին ստանում ազնիվ նծույզներ և իրանց ձիաների ցեղը միշտ նորոգում էին: Բայց ռուսների տիրելուց հետո նրանց հարաբերությունները Պարսկաստանի հետ կտրվեցավ, և ձիաների սերմը չնորոգվելով՝ այլասերվեցան: Այժմ Մելիք Բեգլարովները, կազմելով մի թաբուն երկրի ընտիր մատակներից, Թեհրանից ստացել են երկու պարսկական նծույզներ, մեկը ուղարկել է Սադրաղամը, մյուսը՝ Շահի փեսա մի խան: Տարակույս չկա, որ այդ հոգածություններով Մելիք Բեգլարովները կարող են վերանորոգել Ղարաբաղի ձիաների ցեղը, որ հռչակված էր մեր կողմերում:

Ե

Գյուլիստան գյուղը: - Ամենափրկիչ անապատը: - Գյուլիստանի բերդը: - Մոավ լեռը: - Թոռուս կամ Յուղակեր: - Հոռեկ և Թալիշի մելիքների պալատը: - Թալիշ գյուղը:

Օգոստոսի 4-ին դուրս եկա Կարաչինարից: Անցնելով Գորանի գետը, մի վերստ առաջ գալով, հասա Խարխափուտ կոչված հայաբնակ գյուղը, որ զարդարված էր գեղեցիկ այգիներով: Այդ գյուղը գտնվում է նույն անունով ձորի բերանում, որի միջով ճանապարհը խարխափելով տանում է դեպի Գյուլիստան գյուղը: Այդ ձորը ձգվում է անտառոտ երկու լեռնային գոտիների միջով, որ բարձրանում են ճանապարհի աջ և ձախ կողմից: Ձորի միջով վազում է մի վտակ, որ գնալով խառնվում է Գորանի գետակին: Ճանապարհին պատահեց ինձ տեսնել Մելիք Բեգլարի այգու տեղը: Հնձանի տեղը, դարավոր թռեհները, ընկուզենիները, տանձենիները և այլ պտղատու ծառեր, ծերացած, վայրենացած, դեռ մնում են: Այդ այգին ունի մի ռոմանական նշանակություն երևելի մելիքի կյանքից, որովհետև այդ այգու մեջ էր պահում նա յուր Բալա անունով խասային:

Շարունակելով ճանապարհը նույն ձորի միջով և կես ժամի չափ առաջ գնալով՝ անտառը վերջանում է, և ճանապարհը ընկնում է հարթ բարձրավանդակների վրա, որ զուրկ են անտառից: Այստեղ կան արոտատեղիներ և մշակած դաշտեր: *Խաչի գատուկից* անցնելով՝ ճանապարհը հետզհետե ցածրանում է դեպի մի խոր ձոր, որի մեջ գտնվում է Գյուլիստան գյուղը:

Գյուլիստան գյուղը, որի անունով կոչվում է Գյուլիստանի մահալը, գտնվում է, կարծես, մի խոր կաթսայի մեջ, որի չորս կողմից բարձրանում են անտառապատ լեռներ, որպիսիք են՝ Գոգթափա, Կարմիր-խաչ լեռը, Ղազուն տուրմաշ և Մոավի շարունակությունը կազմող սարերը:

Գյուլիստան գյուղը հայաբնակ է, գտնվում է Ինջա կոչված գետակի մոտ: Ունի մի եկեղեցի, որ շատ հին չէ: Հին եկեղեցին ավերակ է, այժմ նույն գյուղացիները, որ նրա մեջ մկրտվել են, նրա սերունդը հազար անգամ համբուրել են, նրա մեջ պահում են իրանց ոչխարները: Զարմանալի մարդիկ են այդ գյուղացիները, նրանց մեջ կան և՛ ծայրահեղ մոլեռանդություն, և՛ ծայրահեղ անկրոնություն, իսկ հաստատ ոչինչ չկա նրանց մեջ:

Գյուլիստանի եկեղեցում գտնվում է մի հռչակավոր գրչագիր Ավետարան, որ պաշտվում է ամբողջ գավառի ժողովրդից: Սկսյալ Գանձակից և ամեն կողմերից՝ քաշում է նա յուր մոտ ուխտավորների բազմություն, և նրան վերաբերում են բազմաթիվ հրաշագործություններ:

Գյուլիստանում իջևանած լինելով գյուղի քահանայի տանը՝ ես խնդրեցի, որ ինձ տանե եկեղեցին և ցույց տա հիշյալ Ավետարանը: Նա մեծ ուրախությամբ կատարեց իմ խնդիրքը՝ կարծելով, թե ես էլ ուխտավոր եմ:

Մտանք եկեղեցին. նա իսկույն ծածկվեցավ շուրջառով և մի շարական երգելով, մի արկղի միջից դուրս հանեց մի ահագին կապոց և դրեց գրքակալի վրա: Այդ կապոցը ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ գունզգույն թաշկինակներ՝ մեկը մյուսի վրա փաթաթած: Քահանան, շարունակելով շարականը, մեկ-մեկ բաց էր անում թաշկինակները, որոնցից շատերը մետաքսից էին: Վերջապես այդ բոլոր փաթեթների միջից հայտնվեցավ Ավետարանը: Ես մոտեցա և համբուրեցի նրա կազմը: Հետո կամեցա բաց անել, որ նայեմ: Քահանան արգելեց, կիսաքաղաքավարի կերպով հասկացնելով, որ ինքը միայն կարող էր նրան բաց անել, իսկ մի աշխարհական մարդու մատները չպիտի շոշափեին այդ սրբությունը: Ես չհակառակվեցա, ասելով, որ նա բաց անե. ես միայն հեռվից կնայեմ: Քահանան յուր ձեռքով, որ շատ էլ մաքուր չէր, բաց արեց Մուրբ գիրքը: Դա մի հասարակ գրչագիր Ավետարան էր՝ հաստ թղթի վրա գրված, ո՛չ Գետաշենի Ավետարանի գեղեցկությունն ուներ և ո՛չ նրա գրչության արհեստը: Պատկերները շատ սզեղ էին, այնուամենայնիվ ժողովրդի մեջ ավելի համարում և համբավ ստացած էր, քան թե Գետաշենի Ավետարանը: Իմ որոնածը էր նրա հիշատակարանների մեջ մի պատմական տեղեկություն գտնել, այն էս չգտա, որովհետև վերջին թերթերը քրքրված և պակաս էին:

Մյուս օրը վաղ առավոտյան ես ցանկացա տեսնել երկու հնություններ, որ Գյուլիստանի գյուղից շատ հեռու չեն: Դրանցից մեկն էր ս.Ամենափրկչի անապատը, իսկ մյուսը՝ Գյուլիստանի բերդը:

Իմ հյուրընկալ քահանան, թեև մոտ յոթանասուն տարեկան մարդ էր, յուր ձեռքով ձին թամբելով, մի ձի էլ ինձ համար պատրաստելով, հրացանը ձգեց ուսին, ծոխ նման թռավ նրա վրա և իմ առջևը ընկնելով՝ սկսեց առաջնորդել ինձ:

Առավոտյան գով ժամանակն էր: Մենք գնում էինք ձորի միջով, որտեղից անցնում է արծաթի նման սպիտակ Աղ-սու կոչված գետակը: Այդ գետակի վրա պետք է գտնեինք *Ամենափրկչի անապատը*: Նա Գյուլիստանից մի և կես ժամու չափ հեռավորություն ուներ, այդ պատճառով ես չէի շտապում. Հետաքրքրվեցա իմ տերտերիցս մի քանի տեղեկություններ հավաքել:

- Տեր հայր, այս անտառում պտղատու ծառեր կա՞ն:

Նա գլուխը բացասական կերպով շարժում է՝ պատասխանելով՝ օրինած, ոչինչ չկա:

Մի փոքր անցնում ենք, տեսնում եմ հոնի, զկեռի, կաղինի, տանձենու և այլ պտղատու ծառեր:

- Տե՛ր հայր, դու ասում էիր, որ պտղատու ծառեր չկան, այդ ի՞նչ է. տես, հոնի, զկեռի:

- Ո՞նց չկան, կան, հաճար կա:

Հաճարն էլ ես նոր լսեցի:

- Հաճարը ի՞նչ են անում:

- Խոզերին են ուտացնում:

Այդ խոսակցության միջոցին տերտերը ինձ հեռվից ցույց տվեց Ամենափրկչի անապատը: Նա մանր առարկաների վրա, որպես էին պտուղները, ուշադրություն չէր դարձնում, խոշոր բաները ավելի շուտ էր տեսնում:

Ամենափրկչի անապատը, ինչպես ասացի, գտնվում է Ադ-սու կոչված գետակի մոտ, ոչ այնքան հեռու Մոավ լեռից, մի անտառապատ ձորակի մեջ: Անապատի տաճարի շինվածքը կանգնած է չորս բոլորակ սյուների վրա, որ շինված են խամկուր քարից: Այդ տաճարը այժմ ամայի է. խաշնարած թուրքերը անասուններ են լցնում նրա մեջ. անասունների աղբը թանձրացած էր հատակի վրա: Տաճարից ոչ այնքան հեռու կա մի այլ շինվածք, ուր ապրում էր մի ժամանակ այնտեղի միաբանությունը: Դա էլ նույնպես անասնանոց է դարձել: Թե՛ տաճարի և թե՛ միաբանության բնակարանի բոլոր շինությունները դեռ մնացել են ամբողջ. կտուրների վրա, բուսել են մացառներ, և աճել են ահագին ծառեր: Անապատից մի քսան քայլ հեռավորության վրա գտնվում է մի փոքրիկ մատուռ, որ ուխտատեղի է. այստեղ դեռ թուրքերի անասունները մուտք չեն գործել, որովհետև դուռ ունի: Ջարմանալի անհոգություն թե՛ ժողովրդի և թե՛ մեր հոգևոր կառավարության կողմից. Ահագին ծախքեր անելով՝ նախնիքը թողել են այդ սրբավայրերը, այժմ նրանց որդիքը գոնե դռները քարով ամուր կպցնեին, բաց չթողնեին, որ թուրքերի անասնանոց դառնար: Անապատի ջրաղացի ավերակները դեռ մնում են:

Այդ անապատի գավթում թաղված են զանազան անձանց գերեզմաններ, որոնց թվում է Աբրահամ յուզբաշու գերեզմանը (որ գնաց Պետրոս Մեծի մոտ):

Ես շտապում էի տեսնել Գյուլիստանի բերդը, որի մեջ ամրացած, հայոց մելիքները մինչև վերջին ժամանակները սարսափեցնում էին մահմեդականներին: Ամենափրկչի անապատից մի նեղ ճանապարհ անտառների միջով ուղիղ տանում էր դեպի բերդը: Նա շատ հեռու չէր, ընդամենը պետք էր

գնալ մի երեք վերստ: Երբ հեռվից տեսա, իմ սիրտը սկսեց բաբախել: Ես տեսնում էի այն բերդերից մեկը, որի մեջ իմ վեպի¹ հերոսները գործել էին:

Այդ բերդի տեղը բնության հրաշալիքներից մեկն է: Մի ահագին սեպացած քարաժայռ բարձրանում է խոր ձորի միջից, և այդ քարաժայռի գլխին շինված է բերդը: Որպես խրամատ ծառայում է նրան խոր անդունդը, որի միջով հոսող գետակը պտույտներ է գործում և այդ քարաժայռի երեք կողմից ոլորվելով, նրան թերակղզու ձև է տալիս: Մի կողմից միայն բարձր քարաժայռի ստորոտը միանում է ցամաքի հետ:

Մռավ լեռը այստեղից ընդամենը մի երկու վերստ ճանապարհ է, բայց ես նրա գագաթը բարձրանալու բախտ չունեցա: Չնայելով իմ բոլոր թախանձանքին՝ ինձ առաջնորդող քահանան չկամեցավ ինձ հետ գալ՝ անդադար կրկնելով, թե մեզ կսպանեն: Եվ ոչ մի գյուլիստանցի չցանկացավ ինձ հետ ուղեկցել՝ միննույնը կրկնելով: Բանից դուրս եկավ, որ այդ բոլոր երկյուղը խաշնարած թուրքերիցն էր, որ այդ լեռան ստորոտներում ցրված են: Զարմանալի բան է. Աֆրիկայում ճանապարհորդը ավելի ապահով է իրան զգում, քան թե այստեղ:

Բայց որքան ես տեղեկացա ականատեսներից, թեև Մռավը հեռվից խիստ սրածայր է երևում, բայց նրա գագաթը բոլորովին տափարակ է և բավական տարածություն ունի: Նրա գագաթի վրա կան երկու գերեզմաններ, որ հայոց ուխտատեղի է: Այդ գերեզմանները պատկանում են ճգնավորների, որոնք բնակվում էին այդ լեռան գագաթի վրա: Մինչև այսօր ցույց են տալիս նրանց ճգնարանները, որոնք ուրիշ բան չեն, եթե ոչ երեք ահագին քարեր միմյանց մոտ դրած և մի քար ևս դրած նրանց վրա որպես ծածկոց: Միջում մի մարդ միայն կարող է բնակվիլ: Այդ ահագին քարերի այսպես միմյանց վրա դրվիլը միայն հսկաների գործ կարող է համարվել:

Գյուլիստանից դուրս գալով՝ բարձրացանք Թոռուտ² կոչված անտառապատ լեռների վրա: Այդ լեռները արժանի են իրանց անվանը, որովհետև օդի մեջ, կարծես, մի տեսակ նուրբ անձրև աննկատելի կերպով թորում է: Երկու ժամից հետո հասանք Թոռուտ գյուղը, որ կոչվում է նաև Յուղակեր: Այստեղ բնակվում են ոչ ավելի քան 15 հայ ընտանիք, որ գաղթական են Շուշվա կողմերից: Այդ գյուղը առաջ հայոց բազմամարդ գյուղերից մեկն է եղել, հետո ավերակ է դարձել, այժմ նորից այնտեղ բնակություն են հաստատել:

¹ «Ղավիթ Բեկի»

² Թոռ այունեցոց բարբառով նշանակում է անձրև, Թոռուտ նշանակում է անձրևոտ: Թորել բառիցն է

Հիշյալ գյուղում փոքր-ինչ հանգստանալով, երբ նկատեցի տեղային անպիտան տանուտերը ձին ուշացնում է, ստիպվեցա այդ գյուղի մոտ իջնանած քոլանիներից մի ձի վարձել և շարունակել իմ ճանապարհը:

Թոռուտից դուրս գալով, դարձյալ անտառների միջով շարունակելով մեր ճանապարհը՝ մեկ ժամ առաջ գնալուց հետո իմ առաջնորդ քոլանին դարձյալ ընդհատեց տիրող լռությունը՝ ասելով. «Հիմա կտեսնենք այն տունը, որ ասում էինք»:

Իմ սիրտը թնդաց ուրախությունից, ես պիտի տեսնեի Գյուլիստանի հին մեղիքների պալատները: Ճանապարհը սկսեց ցած իջնել, դեռ ոչինչ չէր երևում. անտառի ծառերը արգելում էին հեռվից մի բան տեսնել: Երբ բոլորովին մոտեցանք, երևաց սպիտակ պալատը:

Պալատը շինված է ամբողջապես սպիտակ քարերից: Նա բաժանվում է երկու շինվածքների՝ մինը մյուսի հանդեպ, մեջտեղից ճանապարհ է անցնում: Հոռեկի բլուրի ստորոտում գտնվում է բուն պալատը: Ամբողջությունը քառակուսի ձև ունի. շրջապատի չորս անկյունները ամրացրած են չորս աշտարակներով: Գլխավոր դռնից ներս մտնելով բակը՝ դեպի աջ կողմը բոլորովին ողջ կանգնած են մի կարգ ընդարձակ սենյակներ. նրանց թիվը ութն է: Սենյակների առաստաղը կամարակապ է և գմբեթաձև: Գմբեթի գագաթից բոլորաձև երդիկ է բացված, որտեղից լույս է թափվում: Սենյակները ուրիշ լուսամուտներ չունին: Դրանց ձևը սյունեցու տան կատարելագործված ձևն է: Այդ մի կարգ սենյակների առջև կա երկայն պատշգամբ, որ ծածկված է կամարներով, որոնք ամրանում են ութը հաստ սյուների վրա: Սյուները քառակուսի են՝ շինված քարից, որպես ամբողջ շինվածքը:

Պալատի այդ կարգի սենյակները հարմարեցրած են բնակիչների բոլոր պահանջներին, բոլորի մեջ կան բուխարիներ. կա առանձին խոհանոց, նրա մոտ ստորերկրյա մառան, զանազան պահեստի տեղեր և այլն: Սենյակների դռները եկեղեցու դռների ձև ունին քարե կշտանոցներով: Այդ կարգի սենյակները բոլորը միհարկանի են և պահպանել են իրանց ամբողջությունը: Քարն ու կիրը – այդ է նրանց բաղադրությունը. փայտի մի կտոր անգամ չկա նրանց շինվածքի մեջ:

Այդ մի կարգ սենյակների հանդեպ կառուցված է պալատի մյուս մասը, որ բաժանվում է առաջինից երկայնաձև, քառակուսի բակով: Դա բաղկանում է մի ընդարձակ սրահից, որի երեսը բաց է և որը ծառայելիս է եղել ամառվա բնակության համար: Ըստ մեծի մասին՝ այս տեսակ սրահներ

ունենում են իշխանները, որոնք, պարսից սովորության համեմատ, այնտեղ նստելով, դատավորություն են անում: Ժողովուրդը բակում՝ բաց օդի մեջ, կանգնած է լինում. իշխանը սրահում նստած լսում է նրանց խոսքը և վճիռներ է տալիս: Սրահի երկու կողմերում կան գեղեցիկ սենյակներ, որոնք երեք հարկանի են եղել: Վերին հարկը քանդված է:

Այդ պալատի հանդեպ՝ ճանապարհի մյուս կողմում, կա մի այլ առանձին շինվածք, որը յուր ընդարձակությամբ ավելի մեծ է, քան առաջինը: Որպես երևում է, դա ծառայելիս է եղել հիշյալ պալատում բնակվող իշխանի ծառաների, հյուրերի և պահապանների բնակության համար: Այստեղ կա ախոռատուն, ստորերկրյա ներքնատներ, որոնք բանտի համար են եղել և այլ զանազան ծածկոցներ: Այդ շինվածքի ամբողջությունը նույնպես քառակուսի ձև ունի. անկյունները ամրացած են ահագին աշտարակներով: Բայց մի քանի շինվածքներ միայն այստեղ պահպանել են իրանց ամբողջությունը. մնացածը քայքայված է, անտառը մասամբ պատել է, սենյակների միջից ծառեր են բուսել:

Այդ մասնում՝ մի դահլիճի դռան կամարի վրա, կարդացվում է հետևյալ արձանագրությունը. «Հիշատակ է Օհան բարուն¹ տերին՝ Մելիք Թամրազ թ.ՌՃՀԶ» (1176):

Հիշյալ երկու շինվածքներից փոքր-ինչ հեռու՝ մի աղբյուրի մոտ, գտնվում են բաղանիքները, որոնց առաստաղի գմբեթները քանդված են, իսկ մնացածը ողջ է:

Առհասարակ հնության այդ գեղեցիկ հիշատակարանները, որ կառուցված են քարով և կրով միայն, ոչ այնքան տրորվում են ժամանակից, որքան ժողովրդի բարբարոս ձեռքերից: Թալիշեցի հայերը դրանց մոտ ունին կիր այրելու քուրաներ. քանդում են պալատների քարերը և, քուրաների մեջ այրելով, կիր են պատրաստում: Թեև շրջակա լեռները կազմված են կրային քարերից, բայց ծույլ գյուղացու համար ավելի հեշտ է քանդել պալատի արդեն պատրաստի քարերը:

Տեղացիք այդ պալատները ընծայում են մելիք Թամրազին և նրա եղբայր Աբով յուզբաշուն: Բայց այդ շինվածքների գոյությունը պետք է ավելի հին համարել, քան հիշյալ երկու իշխանների ժամանակները²: Դրանք, անտա-

¹ Բարուն կամ պարոն բառը Սյունյաց և Աղվանից հիշատակարանների մեջ գործ է ածվում նույն մտքով, որպես Կիլիկեցվոց ժամանակ, այսինքն՝ իշխան

² Պալատի հին արձանագրությունը, որպես երևում է, դիտմամբ եղծված է, նրա նախկին տիրապետողի հիշատակը կորցնելու համար

րակույս, Աղվանից վաղեմի իշխանների կամ թագավորների ամառանոցներ են:

Պարտավ քաղաքի Աղվանից իշխանները սովորություն ունեին ամառը այդ կողմերի անտառապատ լեռների վրա անցկացնել, որովհետև ամառվա տոթը Պարտավի մեջ անտանելի է լինում:

Հիշյալ պալատներից բարձրանում է դեպի Հոռեկ գյուղը, որ գտնվում է անտառապատ սարի լանջքի վրա: Հոռեկը հին Թառիջն է, որ հիմնեց ուտիացոց աշխարհից գաղթական Թարիջ իշխանը, որ Գյուլիստանի կամ Թարիջի (Թալիշի) մահալին տիրող իշխանների նախապապն է: Այդ գյուղի մեջ այժմ բնակություն չկա, շինվածքները բոլորը կորած են անտառի տակ: Որովհետև, երբ բնակիչները գաղթեցին Վրաստան, այդ գյուղը ավերակ դարձավ, այնտեղից վերադառնալով՝ 4 վերստ հեռավորության վրա հիմնեցին նոր Թարիջ կամ Թալիշ գյուղը:

Հոռեկում կամ հին Թալիշում այժմ շեն է մնացել միայն մի եկեղեցի, որ ուխտատեղի է: Դա շինված է ՉԻԸ (728) թվին, 602 տարվա հնություն ունի: Եկեղեցին բաղկացած է երկու մասնից՝ գավթից և տաճարից: Եկեղեցու շուրջը՝ անտառի մեջ, պատած մացառներով, ցրված են Թալիշի մահալի վաղեմի տիրապետողների մամռապատ շիրիմները: Ինձ հաջողվեց մացառների միջից գտնել մի քանի մելիքների, յուզբաշիների և բեկերի գերեզմաններ, որոնք մեծ դեր են խաղացել այդ երկրի պատմության մեջ: Թալիշի մելիքների այժմյան ներկայացուցիչների՝ Մելիք Բեգլարովների տոհմային գերեզմանատունը նույնպես այստեղ է: Հոռեկի եկեղեցին ուխտատեղի է, գտնվում է մի հիանալի անտառապատ սարի լանջքի վրա, որի բարձրությունից երևում է Կուր գետը, Թարթառ գետը և Ջուանշիրի մահալի հարթ տափարակները:

Արևը մայր էր մտել, երեկոյան մութը բավական թանձրացել էր, ես տատակների մեջ տակավին որոնում էի նոր գերեզմաններ: Այն տապանաքարերը, որոնք բաց էին մնացած, դժվարությամբ էին կարդացվում, ժամանակը մաշել էր արձանագրությունները: Իսկ նրանք, որ պատած էին մամռոտով, կամ ծածկված էին հողով, պահպանվել էին: Շատ տեղ առանձին պատրաստություններ էին հարկավոր տապանաքարերը բաց անելու համար, պետք էր բահ՝ հողը փորելու, պետք էր տապար՝ թուփերը կամ ծառերը կտրատելու, որոնք խիտ կերպով աճել էին նրանց շուրջը: Թեև վերջին

դեպքում ինձ օգնում էր իմ առաջնորդ քուլանին՝ իր խենջարով կտրատելով թփերը, բայց այդ մի մարդու գործ չէր:

Երբ խավարը բոլորովին պատեց, պատանի քուլանին ասաց ինձ.

- Աղա, դուք չե՞ք վախենում:

- Ինչի՞ց:

- Այդ լեռների վրա մի սոխի համար մարդու գլուխը կկտրեն: Երկու օր չկա,- ավելացրեց նա,- ահա այնտեղ մի մարդ սպանեցին. նա ցույց տվեց դեպի Թալիշ տանող ճանապարհը:

Ոչ այնքան պատանի քուլանիի զգուշացնող խոսքերը, որքան գիշերային մութը ստիպեց ինձ թողնել հայոց վաղեմի հերոսների հանգստարանը. ես նստեցի ձին, և իմ ուղեկիցը առաջնորդեց ինձ դեպի Թալիշ գյուղը, որ այստեղից երկու ժամվա հեռավորության վրա էր գտնվում:

Բոլորովին մութն էր, երբ ես հասա Թալիշ գյուղը և իջևանեցի տեղային յուզբաշու տանը: Այդ գյուղը, որպես վերևում հիշեցի, հիմնել են հին թալիշեցիք, երբ նրանք վերադարձան գաղթականությունից: Հնության արժանավոր մի բան չգտա այստեղ: Գյուղը դեռ նոր է, ոչ եկեղեցի ունին և ոչ գերեզմանատուն. իրանց ննջեցյալները թաղում են հին Թալիշում, Հոռեկի եկեղեցու շրջակայքում:

Մյուս օրը ինձ ասացին, որ այստեղ մի մարդու տանը մի սուրբ գիրք կա, որով բժշկություններ են լինում: Իսկույն հասկացա, որ Ավետարան կլինի: Ինձ այնքան չէր հետաքրքրում գրքի հրաշագործությունը, որքան այն միտքը, թե կարելի է նրա հիշատակարանների մեջ մի պատմական տեղեկություն գտնել. այդ պատճառով ինձ հետ առնելով գյուղի երիտասարդ քահանային՝ գնացինք այդ գիրքը տեսնելու: Նա գտնվում էր մի հասարակ գյուղացու մոտ և այդ գրքի պատճառով գյուղացին իր տունը ուխտատեղի էր շինել: Ամեն կողմից թափվում էին այնտեղ հիվանդներ և զանազան ցավազարներ, որոնցից, իհարկե, գյուղացին շահվում էր: Ինձ ևս ուխտավոր համարելով՝ տանտերը մեծ ուրախությամբ ընդունեց: Իսկույն առաջարկեց նա մոմեր գնել, որ յուր մոտ պատրաստի պահում էր:

Գիրքը դրած էր մի մութ, խոնավ խորանում, որի դուռը բացվում էր տան մեջ: Այստեղ այնքան մութն էր, որ չնայելով՝ մենք մեր գնած մոմերը վառեցինք, բայց դարձյալ դժվար էր կարդալ հին գրչագիրը, որի տառերը ժամանակի հնությունից մուգ-դեղին գույն էին ստացել: Ես խնդրեցի, որ գիրքը դուրս տանեն, տանտերը ընդդիմացավ՝ ասելով, որ «աղան» կբար-

կանա, եթե տեղից շարժեն նրան: Ով էր այդ «աղան» ես հասկանալ չկարողացա: Միայն, եթե «աղա» համարում էր նա Հիսուս Քրիստոսին, կարծեն ավելի պիտի բարկանար տանտիրոջ վրա, որ յուր հեղինակությունը՝ սուրբ Ավետարանը, բանտարկել էր մի մթին խորանում և անմատչելի էր դարձրել հասարակությանը,- այն Հիսուս Քրիստոսը, որ ասում էր, թե ճրագը չեն դնում ամանի տակ, այլ աշտանակի վրա, որ լույս տա ամենին:

Այս քարոզները թեև ես կարդացի տանտիրոջը, բայց նրա ականջը չմտավ, նա թույլ չտվեց սուրբ Ավետարանը յուր մթին խորշից դուրս հանել, որ կարողանայի հետազոտել նրան, թեև երիտասարդ քահանան ևս աշխատում էր համոզել նրան, որ դրանում ոչինչ մեղք բան չկա: Ես կարողացա կարդալ նրա թվականը միայն. 821 տարվա հնություն ունի, գրված է հայոց ՇԹ (509) թվականին, բավական հաստ մագաղաթի վրա, խոշոր և գեղեցիկ երկաթագրերով: Այդ պատճառով գիրքը բավական հաստ ծավալ է ստացել, թեև նա բովանդակում է իր մեջ չորս ավետարանիչները միայն¹:

Կրոնը և սնահավատությունը ավելի քան ութն հարյուր տարի պահպանեցին մեր նախնյաց գրչի այդ սուրբ հիշատակարանը: Բայց այն գրքերը, որ նրանց հանճարի ծնունդն էին, ոչնչացան: Գյուղացիների խրճիթներում, եկեղեցիների, վանքերի պահարաններում ես չէի տեսնում և ոչ մեկը նրանցից: Այդ Ավետարանը, ինչպես և Գետաշեն գյուղի Ավետարանը, գերի ընկած է լինում այլազգիների ձեռքում, բարեպաշտ անձինք փող են տալիս և ազատում են նրանց՝ գրել տալով վերջին թերթերի վրա իրանց ամբողջ ազատոհմի անունները, որ ապագա սերունդը «աստված ողորմի» ասե նրանց հոգուն: Բայց ինձ չպատահեց տեսնել և՛ ոչ մի Խորենացի, և՛ ոչ մի Եղիշե, որ թափված լիներ բարբարոսի ձեռքից, որ ունենար այսպիսի հիշատակարան: Դրանք անհետացան, ո՛չ գյուղացու խրճիթը և ո՛չ եկեղեցին չպահպանեցին նրանց:

Զ

Թարթառ գետը, Գյուլիստանի և Չարաբ.սահ. – Գուլանիներ: - Մատաղիս գյուղ: - Եղիշե առաքելո վանքը: - Դաստակիր գյուղի ավերակները: - Տոնաշեն գյուղ: - Կաթղկասար: - Չարդախլու կամ Մղավուզ: - Քաղաքատեղի: -

¹ Ինձ որքան պատահել է տեսնել հայոց գրչագիր Ավետարաններ, բացի չորս Ավետարաններից, Նոր կտակարանի մասները՝ որպես են Գործք Առաքելոցը, Առաքյալների թղթերը, Հովհաննու հայտնությունը, - կցած չեն Ավետարանի հետ

Չարաբերդ: - Երից մանկանց վանքը: - Տոնի ապերը և Տեր-Սարգիսը: - Սուրբ Գորոս մատուռը: - Չալաղան յուզբաշու բերդի ավերակները:

Թալիշ գյուղից սկսած դեպի արևելք բնությունը բոլորովին փոխվում է, բարձր անտառապատ լեռները հետզհետե փոքրանում են, վերջը մերկ, փոքրիկ բլուրների ձև են ստանում: Հսկա ծառերի փոխարեն լեռնադաշտերը ծածկվում են թփերով: Վերջապես ճանապարհորդի առջև բացվում է մի լայնածավալ, հարթ տարածություն, որի միջև հեռվից անցնում է Կուր գետը, սեղմված իր կանաչագարդ ափերի մեջ, և կատաղի Թարթառը, որ անձուկ ձորերի միջից դուրս գալուց հետո, հենց որ անցնում է լայնարձակ դաշտերի վրա, ճյուղավորվում է, բազմաթիվ գետակներ է կազմում:

Ճանապարհը գնում էր Խանագահի տափարակների վրայով. դեպի աջ կողմը վերջանում էին Թալիշի մահալի լեռների ծայրերը, իսկ դեպի ձախ տարածվում էր ընդարձակ, ցամաք անապատը: Մի ժամու չափ առաջ գնալուց հետո մտանք մի գեղեցիկ ձոր, որ զարդարած էր նոնենի և թզենի ծառերով, որոնք աճել էին վայրենի դրության մեջ: Այստեղ բնությունը դարձյալ կենդանացավ: Այդ ձորը տանում է դեպի Թարթառ գետը, որի ափերի վրա խլուրդների բունի նման ցրված են գոլանիների ձմեռոցները: Դրանք ոչ թե մարդկային բնակություններ, այլ զազանների որջեր են: Դրանց մեջ բնակվում է մի վայրենի ժողովուրդ, որ ո՛չ երկրագործություն ունի և ո՛չ արհեստ, այլ տարվա տաք եղանակներում տարածվում է Մոավ լեռան բարձրավանդակների վրա, այնտեղ արածացնում է իր անասունները, և միայն սաստիկ ցուրտը և ձյունը կարողանում են նրան ետ մղել իր գետնափոր որջի մեջ, որտեղից նա սարսափ է տարածում դեպի իր շրջակայքը:

Գոլանին Ջուանշիրի խաշնարած թափառական ցեղերից մեկն է: Նա երկրի ցեցն է, որ, լցնելով անտառները, գողանում է հայ գյուղացիների կովը, եզը, ոչխարը, ձին և այլն: Դա մի ավազակ ժողովուրդ է, որ երկրի պատուհասն է դարձել: Ո՛չ օրենքը, ո՛չ իշխանության հսկողությունը չէ կարողանում զսպել այդ ավազակների վայրագությունը: Նա մի չնչին առիթով մարդ կսպանե, կվիրավորե, միայն թե մի բան լիներ հափշտակելու: Ցերեկները նա դարանամուտ է լինում անտառների խլության մեջ, որպես սարդը յուր ուստյանում, սպասում է իր որսին: Հենց որ մի անասուն, վրիպելով հսկողի տեսությունից, մտավ անտառը, նա իսկույն իր դարանից դուրս կգա, կքշե ու կտանե: Իսկ գիշերները նա շրջապատում է հայոց գյուղերը, ինչպես

մի աղվես, մի չախկալ, որ, ժայռերի միջից իջնելով, մոտենում է քնած գյուղացու ախոռին՝ հավեր գողանալու:

Այդ պատճառով մեծ եղավ իմ երկյուղը, երբ իմ առաջնորդը հայտնեց, թե այստեղ պետք է պատրաստ լինել, մոտենում ենք գոլանիների բնակարաններին:

- Ես մի գույգ գոմեշ էի առած հարյուրնքսան ռուբլով,- ասաց նա,- մինչև այսօր երեք անգամ գողացել են և բերել են գոմեշը ինձ վրա վաճառել:

- Ինչպե՞ս:

- Ո՞նց թե ինչպես,- պատասխանեց նա՝ զարմանալով, որ ես չհասկացա նրա ասածը: - Գոմեշը գողանում է, տանում է, և ինքը գողը գալիս է քեզ մոտ, ասում է՝ ես գիտեմ՝ քո գոմեշը ով է տարել, եթե ինձ կտաս 20-30 ռուբլի, ես կգնամ կբերեմ: Ի՞նչ պիտի անես, ճարահատյալ խոստանում ես տալ նրա պահանջած փողը, որ նա գնա բերե: Եվ իրավ, մյուս օրը բերում է և քեզ է տալիս՝ մյուս անգամ գողանալու և նոր փող ստանալու համար:

- Ինչո՞ւ չեք մի անգամ վախեցնում այդ ավազակներին, որ էլ չհամարձակվեն ձեր ապրանքը գողանալ:

- Ինչո՞վ վախեցնենք:

- Դատաստանով, գանգատվեցեք, որ կառավարությունը պատժե նրանց:

- Վկաների առջև գողը գողություն չի անի: Բայց մի մարդ էլ եթե հենց իր աչքով տեսած լինի, վկայություն չի տա, որովհետև կվախենա, գողը նրան անպատիժ չի թողնի. կամ դեզը կրակ կտա, կամ տանը նստած ժամանակ երդիկից հրացանի գնդակով կգարկե, կամ ծմակի մոտով անցնելիս, թփերի միջից կհարձակվի նրա վրա, իր խենջարը կխրե նրա փորը:

- Այն ժամանակ դուք էլ նույնը արեցեք, ինչ որ նրանք են ձեզ հետ անում:

- Մենք կանենք, մենք ավելի լավ կանենք, մեր մեջ այնպիսի տղերք կան, որ մեկը տասը քոլանիի ջուար կտա, բայց մեր մեջ հանցանքը չի թաքնվում. եթե մեկը մի հանցանք գործեց, նրա դրացիներից հարյուր մարդիկ կգտնվեն, որ կմատնեն, որ կգնան վկայություն կտան: Բայց գոլանին մեզ նման չէ. նրանց մեջ միաբանություն կա. նրանք բոլորն էլ գողեր են, իհարկե գողը գողին կպաշտպանե, որ իր գողությունն էլ չհայտնվի:

Մի ուրիշ բան էլ կա, այդ անիրավները հայերի նման մի տեղում խմբված չեն, մեծ շեներ չունին, որ հեշտ լինի նրանց վրա հսկելը, ցրված են ամեն տեղ, հինգ-վեց ընտանիքով, ո՞ր մեկի վրա կարելի է հսկել:

Իմ առաջնորդի վերջին խոսքերը շատ հավանական էին. երկիրը այդ ավագակների հափշտակություններից ազատելու միակ ճարն այն է, իմ կարծիքով, այդ թափառական ժողովուրդը հավաքել և բոլորին բնակեցնել Մուղանի անապատներում: Իրանք խաշնարածներ են, և Մուղանի անապատները առատ սնունդ կտան նրանց անասուններին:

Այսպես խոսելով՝ մենք մտանք Թարթառ գետի ձորը և նրա հակառակ ընթացքով կես ժամվա չափ առաջ գնալով՝ հասանք Մատաղիս գյուղը, որ գտնվում է Կարա-քորփի կոչված կամրջի մոտ, որ հին ժամանակներից շինված է Թարթառ գետի վրա:

Մատաղիս գյուղում ես իջևանեցի տեղային տանուտերի տանը: Մատաղիս գյուղը, ժողովրդի ավանդության համեմատ, շինված է եղել Վաչագան թագավորի Մադա-գրգ աղջկա անունով: Արդյոք ունեցել է Վաչագանը այդ անունով մի աղջիկ՝ ինձ հայտնի չէ:

Մյուս օրը՝ վաղ առավոտյան, տանուտերի որդիներից մեկը ինձ հետ առնելով, սկսեցի գնալ դեպի Եղիշե առաքելո վանքը: Մեր նախնիքը մի առանձին հանճար են ունեցել վանքերը կառուցանել այնպիսի խուլ, դժվարամատչելի տեղերում, որ հա՛մ ժամանակի ասպատակություններից ազատ պահեն, հա՛մ ուխտավորներին տանջեն, որ նրանց հոգիներին ապաշխարություն լինի:

Մատաղիս գյուղից մինչև Եղիշե առաքելո վանքը ընդամենը 4-5 վերստ հազիվ կլինի, բայց ես այդ հինգ վերստը անցա հինգ ժամվա մեջ, այն ևս ոտքով, որովհետև ձիով անհնարին է գնալ: Թեև մեզ հետ ձիաներ էինք վեր առած, բայց նրանց քարշ էինք տալիս մեր հետևից և ավելի մենք էինք նրանց տանում, քան թե նրանք էին մեզ տանում:

Ճանապարհ չկար. նեղ շավիղը, որ ոլորվում էր խիտ անտառի միջով, սարսափելի ելևէջներ ուներ: Մի մարդկային շունչ անգամ չէր երևում լեռների ամայության մեջ: Բարեբախտաբար իմ առաջնորդը այծյամի նման ճանաչում էր բոլոր անցքերը, եթե ոչ՝ կարելի էր ամենայն հեշտությամբ մոլորվել:

-Այս կողմերում քոլանիներ չե՞ն հանդիպում,- հարցրի նրանից:

-Ո՞ւմը պիտի կողոպտեն այստեղ քոլանիները, ո՛չ մարդ է լինում այդ ծակներում և ո՛չ անասուն:

Այդ միջոցին ծառերի միջից մի բարձրավանդակի վրա երևացին մի խումբ սպիտակ շինվածքներ:

-Դա Եղիշե առաքելը վանքն է,- ասաց իմ առաջնորդը:

Եվ իրավ, այդ վանքը մատուռների և տաճարների մի խումբ է՝ առանձին-առանձին շինված միմյանց մոտ և այնքան մոտ, որ մի մարդ հազիվ կարող է նրանց միջից անցնել: Բուն Եղիշե առաքելը անունով շինված տաճարի գավիթը միայն ողջ է մնացել, իսկ դարպասը կիսով չափ կործանված է: Երևում է, որ այդ ավերմունքը պատահել է մի քանի տարի առաջ և ոչ ավելի: Այդ տաճարի յուրաքանչյուր կողմում կարգով շարված են երեք-երեք առանձին մատուռներ, որոնց մեջ թաղված են զանազան իշխանների և եպիսկոպոսների շիրիմներ¹: Այդ մատուռներից մեկի մեջ գտնվում է Վաչագան թագավորի շիրիմը: Տապանաքարը տակնուվար է դրած, այնպես որ արձանագրությունը չէ երևում: Դա սև գույնով, ահագին քար է: Նույն մատուռի հանդեպ գտնվում է Մելիք Ադամի շիրիմը. ահագին տապանաքարի ճակատից դուրս է հանած մարմարյա տախտակը, որի վրա գրված է եղել տապանագիրը: Այժմ նրա տեղ մնացել է մի քառակուսի փոս տեղ միայն:

Միաբանության կացարանները, խուցերը և վանքի տնտեսության համար կառուցված բոլոր շինվածքները ողջ են մնացել, բայց ամայի: Իսկ այդ բոլոր սրբարանների մեջ ինձ հետաքրքրում էր տեսնել կացարանը այն քաջ արեղայի, որ ամբողջ Սյունյաց աշխարհում Քոր-օղլուի նման անուն է թողել: Թե՛ ծեր և թե՛ մանուկ գիտեն նրա քաջագործությունների պատմությունը, մինչև այսօր ժողովրդի բերանում դեռ երգվում են այն երգերը, որ նվիրված էին այդ հսկա արեղայի սխրագործություններին: Դա այդ վանքի միաբան Մեծշենացի Ավադ վարդապետն էր, որ թե՛ հայ և թե՛ թուրք ժողովրդի մեջ հայտնի է անունովս Դալի-Մահրասա²:

Դալի-Մահրասայի գերեզմանը գտնվում է Գանձակի Սուրբ Հովհաննես մայր եկեղեցու գավթում:

Կացարանը, ուր բնակվում էր Դալի-Մահրասան, վանական արեղայի խուցի նմանություն չունի, որտեղ Սաղմոս և եկեսցե է կարդացվում: Նրա կացարանը մի երեքհարկանի աշտարակ է, որ կառուցված է ապառաժի վրա և նայում է դեպի խորին, անտառապատ անդունդը, որ բացվում է նրա ստորոտում և որի միջով անցնում է Եղիշե առաքելը գետակը: Աշտարակի վերին հարկը կործանված է: Այնտեղ աճել է այժմ մի կանաչագարդ կաղնի ծառ,

¹ Այդ մատուռների թիվը վեց է, և բոլորն էլ շեն են մնացել

² Դալի-Մահրասա նշանակում է խենթ վարդապետ: Այդ տիտղոսը «դալի», այսինք՝ խենթ, ժողովուրդը տալիս է այն տղամարդերին, որ հայտնվում են իրանց արտակարգ քաջագործություններով: Քոր-օղլուի երգերի մեջ նրա նշանավոր զինակիցները «դալի» են կոչվում

այնքան ամուր, այնքան անխորտակելի, որպես եղել է այդ աշտարակի մեջ բնակվող մարդը: Նա լեզգիների հոգեառ հրեշտակն էր, իսկ թուրքերի՝ սարսափը: Նրա որոտալից ձայնը լսելիս ամեն մարդ փախչում էր կռվի դաշտից: Մինչև այսօր երևում են աշտարակի պատերի մեջ բացված ծակերը, որտեղից նա դիտում էր իր շուրջը, որտեղից նա հրացաններ էր արձակում:

Չգիտեմ Էջմիածնի որ մոլեռանդ կաթողիկոսներից մեկը, լսելով, որ Դավիթ-Մահրասան շատ կոտորածներ և արյունահեղություններ է անում, նրան տանել տվավ Էջմիածին, ձգեց սառցատան մեջ, որ ապաշխարե:

Մի անգամ նա իր բանտի մեջ լսում է, որ վանքում ինչ-որ տեղ աղմուկ և խռովություն է տիրում. երբ հարցնում է պատճառը, նրան ասում են, որ Ջալալի քրդերը եկել վանքի անասունները թալանում են:

- Ինձ կարո՞ղ ես տալ մի ձի և մի որևիցե զենք,- ասում է նա յուր բանտապետին:

- Ի՞նչ կանես,- հարցնում է նրանից բանտապետը:

- Ես ավարը ետ կդարձնեմ:

Այդ հայտնում են կաթողիկոսին, ապաշխարողը զինվորվում է, նստում է ձին և մի քանի ժամից հետո խլում է ավարը ասպատակների ձեռքից:

Եղիշե առաքելո վանքը գտնվում է մի անմատչելի ձորի մեջ, որի չորս կողմից բարձրանում են սեպացած անտառապատ գագաթներ:

Այդ վանքը այժմ բոլորովին ամայի է, ոչ մի մարդ չէ բնակվում այնտեղ, թեև տարին մի անգամ ուխտավորների մեծ բազմություն է գալիս այնտեղ:

Պատմում էին, որ մի մղդսի մի քանի տարի առաջ Նուխլա կողմերից եկավ և այդ վանքում բնակություն հաստատեց միայնակ, իր մի հատիկ ավանակի հետ: Նա արհեստով կաշեգործ էր, գործերը վատ գնացին, կամեցավ իր բախտը փորձել վանքի մեջ: Այստեղ հաջողվեցավ նրան, ուխտավորների մատաղների մորթիներից կաշի էր պատրաստում և դրանով փող էր շահում: Բայց այդ բախտը երկար չտևեց, որովհետև մի գիշեր թուրքերը սպանեցին նրան, և ինչ որ ուներ, կողոպտեցին:

Երևում է, որ Էջմիածինը այդ վանքի գոյության մասին ամեննին տեղեկություն չունի. Էջմիածնի անհոգությունից նա կորցրել է ահագին տարածությամբ հողեր, անտառներ, արոտատեղիներ, որ գտնվում են նրա շրջակայքում: Վերջին երկրաչափության ժամանակ, որ կատարվեցավ այս տարի, Շուշիի կոնսիստորիայի ներկայացուցչին հաջողվեցավ միայն 3500

դեսյատին տարածություն գրել տալ վանքի անունով, այն ևս վեճի ենթակա: Արդյոք կհաջողվի՞ առնել գոնե այդքանը – դա ևս մի հարց է:

Դառն զգացմունքներով թողի այդ վանքը՝ իմ սրտում անհիծելով այն անհոգությունը, որ եթե չեն հարգում մեր ազգային արհեստի պատմական հիշատակարանները, գոնե աշխատեն պահպանել այն հարստությունը, որ կապված է այդ հիշատակարանների հետ: Իմ խոսքը վանքային կալվածների մասին է, որ ժամանակով կարող են միլիոններ շահել:

Թողնելով Եղիշե առաքելու վանքը՝ իմ առաջնորդը ինձ տարավ մի այնպիսի ճանապարհով, որտեղից սատանաները միայն կարող էին անց կենալ: «Դա որսորդների ճանապարհն է», - ասաց նա: Անտառը միանգամայն իր ամուլ դրության մեջ էր մնացած. դարևոր ծառերը, խորտակված, արմատախիլ եղած փոթորիկներից. ցած էին գլորվել և ամեն քայլում կտրում էին մեր անցքը: Բարձրացավ թեթև քամի:

-Այդ վատ է,- ասաց իմ առաջնորդը:

-Ինչո՞ւ:

-Քամու ժամանակ շատ վատ է այդ ծմակներում, տեսար մի ահագին ծառ ցած գլորվեցավ, կամ վերևից մի ժայռ պոկ եկավ, և դու տակը մնացիր:

Անտառը այստեղ իր կուսական դրության մեջն էր և այս պատճառով ծառերը շատ խոշորացել էին: Մի ամբողջ ժամ տևեց, մինչև դուրս եկանք Եղիշե առաքելու վանքի ձորից դեպի Դաստակիրի բարձրավանդակները, ուր գտնվում են նույն անունով գյուղի ավերակները: Գյուղից մնացել է կիսավեր եկեղեցին միայն և գերեզմանատունը, որ պատած է անտառով: Ժողովրդի մեջ դեռ պահպանվել է հին ավանդությունը, թե այդ եկեղեցին շինել է Վաչագան թագավորի աղջիկը, որի գերեզմանը նրա մեջ է, և թե այդ գյուղը Վաչագան թագավորի աղջիկներից մեկի ամառանոցն էր, որի անունը Դաստագյուլ էր. և գյուղը նրա անունով կոչվեցավ Դաստագյուլ, և ժողովրդի բերանում աղճատվելով դարձավ Դաստակիր: Այժմ ամբողջ գյուղը և նրա շրջակայքը մի թուրք ավազակապետի ձեռքումն է, որը, տարեկան 12 ուրբի վճարելով, տիրում է այդ ընդարձակ տարածությանը:

Դաստակիրից մինչև Տոնաշեն մեկ ժամու ճանապարհ է: Այստեղից ես իմ ձին պիտի փոխեի: Իջանալով գյուղի նշանավոր անձինքներից մեկի տանը՝ լուր տվի տանուտերին, որ նոր ձի պատրաստի: Այստեղ դարձյալ լսեցի սովորական խոսակցությունները գողությունների և թուրքերի բարբարոսությունների մասին:

Տոնաշենից ճանապարհ ընկնելով՝ ես անցա Կաթողկասարի (կաթողիկոսաց սարի) մոտով, որ ձգվում է Թարթար գետի աջ ափի երկարությամբ: Այդ սարի վրա էր Աղվանից կաթողիկոսների ամառանոցը, մի վանքում, որ այժմ կործանված է: Այդ հոյակապ վանքի կործանումը ժողովրդական ավանդությունը Լենկ-Թեմուրին է վերաբերում, իբր թե նա վառողով հողս է պայթուցել նրան: Մինչև այսօր երևում է Թարթար գետի ափին վանքի պարիսպների ահագին փլատակները, որ իրավ, շատ հեռու են ընկած վանքի բուն տեղից: Այժմ վանքի տեղում կա մի մատուռ միայն:

Երեկոյան՝ դեռ արևը մայր չմտած, հասա Չարդախլու հայաբնակ գյուղը: Օրը կիրակի էր. գյուղացիները դադարել էին գործից: Մի կալատեղում գուննա և նաղարա էին ածում, գյուղական աղջիկները հավաքված պար էին գալիս: Ես հետաքրքրվեցա տեսնել սյունեցի աղջկա պարը, հենց որ վեր եկա ձիուց տանուտերի տանը, գնացի նրանց պարին նայելու: Ոչ մի տղամարդ չկար այնտեղ, բոլորը աղջիկներ էին, հենց որ ինձ տեսան, մի աղմկալի ճիչ բարձրացրին, և բոլորը փախան: Չկամենալով խանգարել նրանց ուրախությունը՝ ես իսկույն հեռացա:

Չարդախլուն կոչվում է և Մղավուզ, նա նրա հին անունն է. այդ գյուղի մոտ գտնվում են քաղաքատեղի նշանավոր ավերակները:

Է

Մեծ-շեն կամ Ուլու-Կարաբեկ: - Քալբալի-բեկ: - Հին և նոր Մոխրաթաղը: - Մելիք Աղամի պալատը: - Ինն մասանց մատուռը: - Կսապատ: - Մելիք Վանի: - Մարդակերտ: - Միրզա Ասրի: - Գյուլ-յաթաղ: - Մելիք Ալահվերդովների ամրոցը: - Ջանյաթաղ: - Ձիաների գավոդը: - Մեհմանայի հանքերը:

Երիցմանկանց վանքից շարունակելով իմ ճանապարհը՝ եկա Մեծ-շեն, որ թուրքերը կոչում են Ուլու-կարաբեկ: Այդ գյուղը այժմ ունի մոտ հիսուն տուն հայ բնակիչներ, իսկ առաջ շատ բազմամարդ է եղել և իր բնակիչների քաջությամբ մեծ դեր է խաղացել Չարաբերդի մելիքների պատմության մեջ: Այդ գյուղացին էր Դալի-Մահրասան և նրա տոհմի ներկայացուցիչները մինչև այսօր հայտնի են իրանց քաջություններով: Այդ գյուղիցն էր Չոլաղան-յուզբաշին, և այստեղացի էր Երիցմանկանց վանքի կառուցանող կաթողիկոսը:

Մեծ-շենը իր բարձր դիրքով մի գեղեցիկ ամառանոց է. ամառը այստեղ են անցկացնում ուեզդնի նաչալնիկը, հաշտարար դատարանը և այլ պաշտոնական անձինք:

Մեծ-շենից ես ճանապարհ ընկա դեպի Հին-Մոխրաթաղ. այդ գյուղի ավերակները և գերեզմանատունը այժմ ծածկված են թփերի ու անտառի տակ, իսկ նրանից ոչ այնքան հեռու շինված է նույն անունով նոր Մոխրաթաղ գյուղը, որ թուրքերը կոչում են Քեչիկ-դարաբեկ: Այստեղ ինձ հետաքրքիր էր տեսնել Մելիք Ադամի ապարանքը, որի մեջ բնակվում էր Չարաբերդի հզոր իշխանը, և որը նրա շինել տվածն է: Այդ ապարանքը գտնվում է Ինն մասանց անապատի մոտ՝ մի փոքրիկ դաշտավայրի վրա, ուր դեռ մնում են հին այգու ծառերից շատերը, որ զալ դարում էին նրա շրջակայքը: Ապարանքի շրջապարիսպը, սենյակներից և դահլիճներից շատերը դեռ ողջ են. այստեղ ու այնտեղ երևում են խորտակված սյուների և հոյակապ կամարների փշրանքներ: Դահլիճներից երկուսի ճակատին կարդացվում է արձանագրություն, որից երևում է այդ պալատի Մելիք Ադամից շինված լինելը: Այստեղ էր բնակվում այն մարդը, որ սարսափեցնում էր լեզգիներին ու թուրքերին, իսկ այժմ դատարկ է նա, երբեմն խաշնարած թարաքամները լցնում են այնտեղ իրանց անասուններին:

Ինձ պատահեց տեսնել Մելիք Ադամի տոհմի միակ ներկայացուցչին, մի երիտասարդի, որ բնակվում է Մոխրաթաղ գյուղում և տեղային հարուստ կալվածատերերից մեկն է: Ես նրանից հարցրի, թե ինչու է այսպես անտեր ու անխնամ թողել իր նախահարց տունը, որը մի պատկառելի հնություն է: Իմ հարցին նա պատասխանեց, որ այնքան զբաղված է, որ այդ մասին մտածելու ժամանակ չունի: Եվ իրավ, երիտասարդից շատ ժամանակ էին խլում որսորդական շները, իր ձիաները, բազեն, որոնց վրա սիրահարված էր, իսկ իր նախնյաց հիշատակարանը պահպանելու ժամանակ չունեք:

-Գոնե որպես կալվածք պահպանեցեք նրան, կարող է ձեզ օգուտ բերել:

-Հա,- ասաց նա ձանձրանալով իմ թախանձելուց,- մի անգամ ուեզդնի նաչալնիկը ասաց, եթե մի քանի նորոգություններ անեք, մենք կվարձենք վիճակի բոլոր ծառայողներով՝ ամառը այնտեղ անցկացնելու համար:

-Իհարկե, դուք նորոգություններ չարեցիք:

Նա ոչինչ չպատասխանեց:

-Ես ձեզ խորհուրդ կտայի, որ նրա դուռը քարով ամուր կերպով փակեիք, որ ոչ ոք ներս չմտնէր՝ մնացածը քանդելու համար. այդ ձեզ ծախք կարժե մի քանի ռուբլի միայն:

-Ի՞նչ ծախք, երբ ուզենամ, ծառաներիս կհրամայեմ, որ գնան դուռը քարով փակեն,- ասաց նա և խոստացավ, որ կանե այդ, բայց ես այնքան վստահ չեմ իր խոստմունքը կատարելու մասին:

Իմ հարցին՝ արդյոք մնացել էն նրա նախնիքից որևիցե թղթեր, որ ծառայելին նրանց պատմությանը, նա պատասխանեց, թե ոչինչ չգիտե: Այդ իդիոտը մինչև անգամ նրանց անունները չգիտեր, միայն լսել էր, որ մեծ մարդիկ են եղել:

Մեկիք Ադամի ապարանքին մոտ է Ինն մասանց անապատը, որ ուխտատեղի է: Այդ անապատը ավերակ էր. այժմ հայտնվել է մի վարդապետ, որ, գյուղերից նվերներ հավաքելով, սկսել է շինել անապատը: Այդ վարդապետի հսկողությանը հանձնված է մի քանի ուրիշ վանքեր ևս, որոնց թողել է անտեր, իսկ այստեղ նոր վանք է շինում: Շատ հասկանալի է, որ նորը շինել ավելի ձեռնտու է նրան, քան հները պահպանելը: Նորի համար առիթ ունի նվիրատվություններ հավաքելու, և թուրքի առածի համեմատ. «Միշտ հավաքողը մատները կլիզե...»:

Ինն մասանց անապատից ճանապարհը տանում է ուղիղ դեպի Կսապատ ավանը: դա հայոց մեծ գյուղերից մեկն է. նրա բնակիչները այնքան բազմացել են, որ մոտումը հիմնել են մի այլ գյուղ Մարտակերտ անունով: Կսապատ գյուղիցն էր նշանավոր Մեկիք Վանին:

Մարտակերտ գյուղում ես տեսնվեցա Միրզա Ասրու հետ. այդ իննսունամյա ծերունին Ղարաբաղում պատահած անցքերի կենդանի արխիվն է: Նա գիտե հայերեն, ռուսերեն և պարսկերեն, ուսել է Շուշի քաղաքում մի ժամանակ եղած գերմանացի միսիոնարների մոտ. հետո Մեհտի խանի մոտ գրագրի պաշտոն է կատարել և այնուհետև երկար ծառայել է Մեկիք Վանիի մոտ որպես քարտուղար:

Ցավում եմ, որ այդ մարդուն ես պատահեցա նրա ծերության այն տարիներում, երբ ուղեղը դադարում է առողջ գործունեությունից և երևակայության մեջ մնում են անցյալի աղոտ և խառնաշփոթ տպավորությունները միայն... Այնուամենայնիվ նա ինձ պատմեց շատ բան, թեև կցկտուր ու անկապ կերպով: Նա ուներ մի քանի գրավոր աշխատություններ ևս, զանազան թերթերի վրա գրած, բայց երեխաները բոլորը պատառոտել էին:

Մարտակերտից ճանապարհ ընկնելով՝ երեկոյան հասա Գյուլ-յաթաղ գյուղը, իջևանեցի բժիշկ Ա.-ի մոտ, որ ժամանակավոր կերպով բնակվում էր այդ գյուղում՝ ամառը անցկացնելու համար: Ոչ ոք այդքան ճիշտ տեղեկություններ չէր կարող հաղորդել ինձ տեղային ժողովրդի դրության մասին, որպես մի մարդ, որ գավառական բժիշկ է և շատ առիթներ ունի անդադար այդ գյուղից այն գյուղ գնալ հիվանդներին, վիրավորներին օգնելու համար:

Գյուլ-յաթաղ գյուղում՝ մի բարձրավանդակի վրա, գտնվում է Մելիք Ալահվերդյանների ամրոցը: Նա, ինչպես բոլոր հայ մելիքների հին ամրոցները, քառակուսի ձև ունի, շրջապատած է ամուր պարիսպներով և աշտարակներով: Մի մասը ավերակ է. ողջ մնացել են մի քանի կամարակերպ սենյակներ միայն, որոնց մեջ բնակվում են այդ տոհմի աղքատ ներկայացուցիչները, որոնք ոչնչով չեն զանազանվում հասարակ գյուղացիներից:

Այդ գյուղի մեջ կա մի հանք, որ մնացել է անգործադրելի:

Գյուլ-յաթաղ գյուղից մի քանի վերստ հեռավորության վրա գտնվում է Ջան-յաթաղ հայաբնակ գյուղը, որը այժմ նշանավոր է նրանով, որ այստեղ է գտնվում արքունի ձիաների գավոդը, որ կոչվում է Елисаветопольский конский завод: Այդ գավոդը հիմնվել է 1871 թվից ու տասն տարվա ընթացքում յուրաքանչյուր ամի միջին թվով 50 հազար ռուբլի ծախք է ունեցել:

Ղարաբաղը հայտնի է Հայաստանի մեջ որպես արդյունաբերող ընտիր նծույզների: Հիշյալ գավոդի նպատակն է պահպանել տեղային նծույզների ցեղը, հետզհետե ազնվացնել և թույլ չտալ, որ այլասերվին: Այդ կետից նայելով՝ գավոդը մասնավոր շահատակության հիմնարկություն չէ, այլ նա պիտի նպաստե ամբողջ գավառի ձիաների ցեղի բարելավությանը: Դրա համար էլ սահմանված է, որ գյուղացիները իրավունք ունենան իրանց մատակները մի մասնավոր վճարով (50 կոպեկից մինչև 1 ռուբլի) գավոդի նծույզներից քաշել տալ, իրավունք ունենան իրանց մատակները հղանալու համար առժամանակ թողնել գավոդի նծույզների մեջ՝ վճարելով 3-ից մինչև 5 ռուբլի և վերջապես իրավունք ունենան մատակները պահել տալ գավոդի մեջ՝ ծնունդների կեսը իրանք վեր առնելով, իսկ կեսը գավոդի օգտին թողնելով: Բացի դրանցից՝ գավոդը պարտավոր է յուրաքանչյուր տարի նծույզների ընտիր տեսակներից երկու-երկու հատ ուղարկել գավառի զանազան կազմերում՝ ուեզդի նաչալնիկների միջոցով նախապես իմացում տալով գյուղացիներին, որ իրանց մատակները բերեն այնտեղ և քաշել տան:

Գյուլ-յաթաղ գյուղում ես մնացի մի քանի օր, հետո բժշկի եղբայր Ն.Ա. ինձ առաջնորդեց շարունակելու իմ ճանապարհորդությունը: մեր առջևում ճանապարհները շատ երկյուղալի էին, նա չթողեց ինձ միայնակ լինել: Այդ երիտասարդը մի քաջ տղա էր և ճանապարհին արկածներ էր որոնում, որ ինձ ցույց տա, թե իսկապես ինքը կարող է ավազակների դեմ կռվել: Բայց ոչինչ չպատահեց: Ճանապարհը տարածվում էր խիտ անտառների միջով. գնում էինք, գնում՝ առանց արեգակի ճառագայթներ տեսնելու: Վերջապես հասանք Մեհմանայի հանքերին: Այդ հարուստ հանքերը գտնվում են հայոց Մեհմանա գյուղի ավերակներից $\frac{3}{4}$ վերստ հեռավորության վրա: Երևում է, մի ժամանակ հանքերի մերձակայքում եղել է հայոց խիտ ազգաբնակչություն, որպես ցույց են տալիս Սովուկ-Բուլաղ և Սամբակ գյուղերի ավերակները, որոնք ծածկված են անտառի տակ: Ավերակ եկեղեցիների մեջ ահագին ծառեր են աճել:

Հանքերը բովազործում են հույներ, որոնք ընտանիքով բնակվում են անտառի խլության մեջ փոքրիկ փայտաշեն խրճիթներում. ինձ շատ բարի մարդիկ երևացին այդ գործավորները. մեկը համարյա ուժով մեզ տարավ իր խրճիթը և հյուրասիրեց թեյով: Նրա կինը ազգով հայ էր, բոլոր երեխաները խոսում էին հայերեն:

Հանքը պղնձի է, բովազործում են բոլորովին նահապետական ձևով, այնուամենայնիվ մեկ պուղից ստացվում է 7 ֆունտ զուտ պղինձ: Պղնձի հանքին շատ մոտ գտնվում է մի արձիճի հանք, որ խառն է արծաթի հետ, բայց վարպետները այնքան անհմուտ են, որ չեն կարողանում արծաթը բաժանել արձիճից: Փորձը ցույց է տվել, որ մեկ պուղից ստացվում է 24 ֆունտ զուտ արձիճ: Հանքերը գտել են հիշյալ հույները, մի մասը վաճառել են մի շուշեցի վաճառականի և նրա փողով բովազործում են:

Ը

Առաջաձոր: - հարուստ յուզբաշու տունը: - **Ոստիկանության պրիստավը** և **նրա ընդունելությունը:** - **Սպանություն:** - **Խաչենի գյուղը:** - **Գանձասարի վանքը** և **վանքի գյուղը:** - **Հասան-Ջալալյաններ:** - **Վանի Ապերը:** - **Դարպասներ** և **Թարխանա բերդը:** - **Ս.Հակոբա վանքը** և **Հակոբ վարդապետ Սյունեցին:** - **Սաղսաղանի բերդը:** - **Ցեխ ձոր:** - **Պոկեսի-բերք** և **Ուլաբաբ գյուղը:** - **Ուլաբաբի քաջագործությունը:** - **Սեխի շեն:** - **Խնձրիստան, Հիլիս, Դաշբուլաղ, Բալլուջա** և **նույն անունով գետը, Խնաձախ,**

ՌՌԻՍԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՈՎ

ԳԼՈՒԽ 3

Ճանապարհորդություն դեպի Ղարաբաղ – Թարթառ գյուղը - Շահբուլաղի կայարանը -Կարկառի դաշտավայրը - Մրրիկ լեռներում

Մեր ճանապարհորդությունը նավով ավարտվեց Ջեվաթում: Կուրը, այնտեղ, որտեղ նա միանում է սրընթաց Արաքսին, քիչ նավարկելի է ծառերի ու արմատների կույտերի, ինչպես նաև հորձանուտի պատճառով: Կուրը և Արաքսը նմանվում են իրարից բաժանված գույգ եղբայրների: Չնայած այն բանին, որ գրեթե նույն երկարությունն ունեն և ջուր են ստանում նույնաչափ ավազաններից, նրանք մնում են իրարից անկախ մինչև Ջեվաթ: Հնում՝ նույնիսկ Ստրաբոնի ժամանակներում, նրանց գետաբերանները նույնպես բաժանված էին իրարից: Արաքսի ընթացքը 13 անգամ ավելի արագ է, քան Կուրինը: Նրա ջրերը ավելի պղտոր ու անհանգիստ են և որոշ տեղերում նույնիսկ ողողում են վերջինիս ջրերը: Այստեղ ձկնորսությունը այնքան էլ արդյունավետ չէ, և միայն մայիսի 15-ից է թափ առնում կարթով ձկնորսությունը: Մի քանի օրից Նորաշենից բոլոր բանվորները կգան Ջեվաթ. ազնակազմը բաղկացած կլինի շուրջ 350 հոգուց:

Այս պահին որսում են հսկա լոքոներ. մայիսին որսում են օրական 15-20 հազար ձուկ: Ասում են, որ ամբողջ աշխարհում երևի չկա որևէ այլ հոսող ջուր, որտեղ ոչնչացնում են ավելի շատ ձուկ, քան Կուր գետում: Անհանգստությունը, որը տիրում է գետի ողջ հոսանքի վրա մայիսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը, երբ ջրերը դեռ ցածր են, մի յուրահատուկ ուժգնություն է ստանում Ջեվաթում: Ձկնորսարանը, որտեղ մենք իջանք, գտնվում է Կուրի ձախ ափին՝ հենց Արաքսի գետաբերանի դիմաց: Մի լաստ միացնում է երկու ափերը, իսկ Ջեվաթ գյուղը բարձրանում է դիմացի ափին:

Մայիսի 4-ին, երբ անձրևը դադարեց, մենք նավակով անցանք գետը, որպեսզի զբոսնենք Ջեվաթում: Բայց հազիվ էինք նավից իջել, երբ ես մինչև ծնկներս ընկղմվեցի ահավոր ցեխի մեջ: Հաշտարար դատավորի տան առջև խմբվել էին մի խումբ բողոքողներ: Համարյա թե բոլորը ձիով էին: Տասից ինը մատակներ էին՝ իրենց քուռակներով: Հասնելով նահանգապետի տուն,

ումից ամուսինս ցանկանում էր տարբեր տեղեկություններ իմանալ, նրան իմաց տվեցին, որ վերջինս տեղում չէ, և մենք ստիպված հետ դարձանք: Որպես նահանգի կետորոն՝ Ջեվաթը ունի վարչական շինություններ, գրասենյակներ, բանտ և այլն: Բնակչությունը կազմված է ավելի քան 500 շնչից, որոնց մի մասը ռուս գաղթականներ են, այսպես կոչված խոխուլներ (ռուս հնածխականներ): Մնացած բնակիչները եկել են Մայանից և Շամախուց: Ջեվաթում կա ռուսական մի եկեղեցի, բայց քահանա չկա: Մեծ տոներին, այսինքն՝ տարին երկու-երեք անգամ՝ «Божий промысел» եկեղեցու քահանան գալիս է հաստատելու և օրհնելու ամուսնությունները: Մնացած ժամանակ եկեղեցին փակ է, և բանալին գտնվում է բնակիչներից մեկի ձեռքին: Վերջինիս այն տրամադրում է նրանց, ովքեր ցանկանում են աղոթք անել Աստծո տանը:

Արաքսի գետաբերանում երևում են բարդու հաստակոճղերի մեջ փորված մեծ ու թեթև նավակներ, որոնք ունեն 50-60ամ լայնություն և 4-5մ երկարություն: Թաթերը (թաթարները-*ծնյթ. խմբ.*) դրանք օգտագործում են երկու հոգով ձկնորսության ժամանակ:

Բայց արդեն ժամն էր հրաժեշտ տալու Կուրի անհյուրնկալ ափերին:

Տենդի նոպաները մեզ հանգիստ ու դադար չեն տալիս, և մենք՝ ես ու ամուսինս, շտապեցինք շնչելու ավելի թարմ օդ, խմելու մի քիչ մաքուր ջուր, քայլելու ավելի կենարար հողի վրա: Մենք պետք է հասնեինք մեր ճամպրուկներին, որոնք մնացել էին Եվլախի կայարանում: Մեզ հյուրնկալողները մեզ տեղավորեցին իրենց կառքերից մեկում՝ լծված իրենց լավագույն ձիերին, որոնք անհամբեր դոփում էին ու ծառս լինում մինչ մենք հրաժեշտ կտայինք: Հազիվ էինք տեղավորվել կառքում, երբ այն անհետացավ փոշու ամպի մեջ: Այդ արագ ընթացքի ժամանակ մեր աչքերի դիմաց անցան թաթերի Ռաեմլի և Ջանգանահ գյուղերը: Երևում էին մի տարի առաջ Կուրից հեղեղված գյուղերի բազմաթիվ ավերակները:

Վերջապես հասանք Սադիիրի կայարան, որտեղ նստեցինք դեպի Եվլախ մեկնող գնացքը: Մինչև գնացքի շարժվելը՝ մենք շրջեցինք կայարանի մոտ, որտեղ ոչ մի բան չկար, նույնիսկ խմելու ջուր: Մեր ուշադրությունը գրավեցին մեզանից մի քանի հարյուր մետրի վրա գտնվող ճահճի մեծ եղեգնուտները, որոնք կարծես բնակեցված էին: Եվ իրականում, երբ առաջ շարժվեցինք, օրորվող եղեգների արանքից տեսանք հարյուրավոր կանանց ու

երեխաների, որոնք եկել էին ջուր տանելու ճահճից. միակ տեղը, որտեղ այդ խեղճ մարդիկ կարող էին ջուր վերցնել:

Տեսարանը շատ գեղեցիկ էր և անսպասելի, որովհետև այս կանայք, որ բնակվում էին այդտեղից մի հարյուր մետրի վրա՝ վրաններում, գնչուներ էին: Նրանք ամբողջովին կարմիր էին հագած՝ պղնձե սափորները ուսերին, պատրաստ փախչելու: Նրանք նույնպես մեզ տեսան՝ աչքի ծայրերով նայելով մեզ: Մի քանի տղամարդիկ, որ, պզգած ջրի մոտ, կարծես թե լվացվում էին, մեր ետևից թշնամանքով նայեցին: Այս քոչվոր գնչուները, որոնք գողերի ու խաբեբաների համբավ ունեին, վստահություն չէին ներշնչում: Նրանք կանանց նշան արեցին հեռանալու, բայց իմ ներկայությունից ոգևորված, վերջիններս չշարժվեցին և մնացին իրենց տեղերում՝ կքված ծանր կժերի տակ: Ես առաջ շարժվեցի, որպեսզի տեսնեմ նրանցից մեկին, ով շտապ լցնում էր իր կուժը՝ մի կլոր երկաթե թասով, որը հետո դրեց գլխին: Կարմիր ցնցոտիները հազիվ էին ծածկում նրանց ամրակազմ, պիրկ մարմինները, ամուր ու անգուգական իրանները՝ կորացած իրենց բեռի տակ: Նրանց մաշկը արևահար էր, մազերը՝ սև, իսկ աչքերը՝ շողացող:

Անցնելով՝ ես շոյեցի մի աղջնակի մազերը, և իմ ժեսուրը իսկույն նկատեցին մյուսները. այդ վայրենաբարո կանայք իսկույն ինձ շրջապատեցին՝ ցուցադրելով իրենց սիրալիր վերաբերմունքը: Նրանցից մեկը բռնեց ձեռքս, մյուսը քաշեց մազերս, փոքրիկները հպվեցին փիսիկների նման: Մենք ողջունեցինք իրար. «Ալլահը պահի» - մենք իրար դիմեցինք սիրալիր ձևով, «Յախշի խանում», և այսպես մենք ծանոթացանք: Նրանք ցույց տվեցին իրենց վրանները և ինձ այնտեղ հրավիրեցին: Պետք էր արդյոք խուսափել առիթից՝ ճանաչելու նոր ավանդույթներ, երբ ճանապարհորդում ես հենց դրա համար: Գնացքի ճանապարհավելուն մնացել էր մի քանի բոպե:

Օհանեսը, ով ուղեկցում էր մեզ, մոայլ շարժվեց մեր հետևից, մենք արագ քայլեցինք դեպի բնակատեղին, իսկ տղամարդիկ թշնամանքով մեզ էին նայում: Ջահել ու ծեր, խեղճ կանայք շարժվեցին մեզ համաքայլ՝ երկաթե թասերը գլխներին, զնգնագնելով մերկ կրծքերն ու կարմիր շապիկները զարդարող մետաղադրամները, և, չնայած իրենց ծանր բեռին, նրանց մոտ շնչասպառության նշույլ ամենևին չկար: Վրանների մոտ մեզ ոռնոցով դիմավորեցին երկու մեծ շներ, որոնց քշեցին փայտով ու քարերով: Վախից մի պահ փշաքաղվեցի. մենք կարող էինք չհասնել մեր բեռներին Եվլախում:

Օհանեսը, որ այս ամենը խելահեղություն էր համարում, կանչեց դրախտի բոլոր սրբերին և մեզ հորդորեց, ինչքան հնարավոր է, արագ հեռանալ:

Շուրջ բոլորը թրիք էր ու աղբ,օղը լցված էր գարշահոտությամբ, էլ չեմ ասում սատկած քուռակների ու ոչխարների դիակները, որոնց վրա սավառնում էին անգղերը՝ պատրաստ հոշոտելու դրանք: Պատանիները մոտեցան, բռնեցին ձեռքս և այն քնքշորեն դրեցին իրենց ճակատներին՝ ի նշան ողջույնի. նրանք ամեննին չէին քաշվում և աշխուժորեն բլբլում էին:

Արագ աչքի անցկացնելով խղճուկ բնակատեղին՝ մենք արագ վերադարձանք կայարան,որտեղ նստեցինք գնացք և շուտով մեկնեցինք Եվլախ:

Մեր ամբողջ ճամփորդական պահուստը այնտեղ էր, բայց ամենաբաղձալին մեր մահճակալներն էին: Դրանց շնորհիվ ես այլևս չեմ զգա հատակին փռված անկողիների անհարմարությունը և ստիպված չեմ լինի շաբաթներ շարունակ շորերով քնելու ռուսական կայարաններում, ինչպես նաև հայկական տներում՝ անկողնային պարագաների բացակայության կամ ծայրահեղ քչության պատճառով: Մահճակալը,ինչպես այն հասկանում են Ֆրանսիայում, անձանոթ է տեղի բնակչությանը, որը բավականին ասիական է այս առումով: Կողակարերով սպիտակ սավանների բերկրանքը և փափուկ ներքնակներ ունենալը նրանք չեն ճաշակել: Որոշ մեծահարուստ հայերի տներում շատ հաճախ դա առավելություն է: Բաքվից հետո ես այլևս ոչ մի անգամ չեմ քնել մահճակալի վրա, և հասկանալի է, թե ինչու ես դրա կարիքը զգում եմ: Մեր դեղամիջոցները, մեր զուգարանի բոլոր պարագաները այնտեղ էին: Հիմա մենք կճանապարհորդենք ինչպես իսկական փափկակյացներ: Այս կայարանում մի հիասքանչ գիշեր անցկացնելուց հետո, մենք հավաքեցինք մեր բեռները և Ֆրանսիա ուղարկեցինք մեր առաջին ձեռքբերված իրերն ու պատմական հավաքածուները, Կուրի և Արաքսի ձկների մի գեղեցիկ տեսականի:

Հիմա իմ հայացքը ուղղված է դեպի Ղարաբաղի բարձրավանդակը, որտեղ մենք պետք է շրջագայենք՝ սկսելով մեր ճանապարհորդությունը Շուշի քաղաքից: Այս առիթով մենք վարձակալել ենք ֆայտոն և փոխադրող ձիեր մեր մանր-մունր իրերի համար՝ վրանների, տարբեր մթերքների, թամբերի, նկարահանող սարքերի մի մեծ ուղեբեռ, որ ուղարկել էինք ֆուրգոնով մեզնից առաջ:

Ֆայտոնը, որ հիանալի տեղաշարժման միջոց է, կհասնի մինչև Շուշի, իսկ ինչ վերաբերում է փոխադրող ձիերին, դրանք կհասնեն մինչև փոստա-

կայան: Մինչև Օհանեսը դանդաղ բեռնում էր իրերը, ես կայարանի կանաչի սրահում ինձ կարգի բերեցի: Այդ ժամանանակ Թիֆլիսից եկող գնացքով ժամանեցին մի բեկ կամ գուցե թաթար խան և ամբողջովին դիմաձածկված երկու կին, որոնք ներխուժեցին սենյակ: Իմ ներկայությունը նրանց հաճելի չէր, քանզի սպայի հագուստով բեկը դեմքը ծամածոեց, որից ի դեպ ես ինձ այնքան էլ վատ չզգացի: Կանայք՝ բեկի կինը և նրա աղախինը, հանեցին իրենց դեմքի ծածկոցները և չնայած տեղեր կային, պագեցին հատակին: Ես մտադիր չէի նրանց նեղություն պատճառել, բայց և պատրաստ չէի ինքս նեղվել նրանց թշնամական կեցվածքից: Սպան գոռոզ տեսքով ռուսերեն հարցրեց, թե ուր ենք ուղևորվում, ինչ ենք անում և այլ հարցեր, որոնց ես պատասխանում էի չհասկանալով, որից նա ծայրաստիճան չարացավ: Վերջացնելով իմ հարդարանքը՝ ես անտարբեր անցա երկու տիկնոջ առջևով և լքեցի սենյակը:

Եղանակը հիանալի էր, կապույտ, և ջինջ երկնքում անգամ ամպի ծվեն չկար. մի կողմից երևում էին Դադստանի լեռները՝ ծածկված ճերմակ ձյունով, որ շողշողում էր ծագող արևի շողերի տակ: Դա մի հիասքանչ տեսարան էր, նույնքան արժանի հիացմունքի, ինչքան մեր գեղեցիկ Ալպերը: Մյուս կողմից իրենց գեղեցկությամբ ու ճերմակությամբ վեհանում էին Ղարաբաղի լեռները: Մենք ուղևորվում ենք հենց այնտեղ (ըստ հայկական ժողովրդական ասացվածքի՝ մարդը գնում է լեռան մոտ, քանզի լեռը չի գալիս նրա մոտ): Այս մտքից ես հրճվում էի և շտապեցի ճանապարհ ընկնել:

Նախաճաշը ավարտելով՝ մենք նստեցինք ֆայտոն՝ լծված չորս բավականին պճնված ձիերով: Կառքը շարժվեց, և ձիերը ընթացան՝ զնգզնգացնելով իրենց զանգակները: Տապը ուժեղացավ: Ճանապարհները շատ վատ էին. շարժվում էինք շատ դանդաղ: Մի հեծյալ սպա մեր կողքից քառաբշավ ընթացավ: Տեղ-տեղ լճակներ կային, որտեղ փնջացնելով լողում էին հսկա եզներ, որոնց միայն պոզերը և սև դնչերն էին երևում: Տիդմի մեջ նրանք փորել էին փոսեր և վայելում էին նրա զովությունը: Մենք հասանք դարաբաղյան տափաստան, որը Մուղանի դաշտավայրից բաժանվում է Արաքս գետով: Ամենուր օձեր ու ցամաքային կրիաներ էին: Գետինը ծածկված էր վայրի սամիթով, և նրա դեղին ծաղիկների սուր հոտը լցվել էր օդը:

Հասանք Կարամանլի գյուղը, որն ուներ փոստակայարան, գեղեցիկ պարտեզներ և բազմատեսակ բուսականություն՝ կաղնիներ, բոխիներ, ուռենիներ, թթենիներ, բարդիներ և այլն: Ծաղկած սզնենու բուրմունքը լցվել էր

օղը, ամենուր ջուր էր հոսում, հողատարածքները խնամքով շրջապատված էին փշե թփերի ցանկապատներով: Բազմաթիվ գետակներից հետո մեր կառքը անցավ Թարթառ գետը՝ ձախ կողմում թողնելով երեք մեծ հողաթմբեր՝ երեք գերեզմաններ: Երեկոյան դեմ մտանք Թարթառ գյուղը, որը գտնվում էր գետից մոտ 500 մետր հեռավորության վրա: Մենք տեղավորվեցինք կայարանում, որտեղ ոչինչ չկար: Ես անմիջապես գնացի շուկա՝ ընթրիքի համար գնումներ կատարելու: Ավաղ, սա դեռ վերջը չէր. պետք էր դեռ ճաշ եփել: Հենց այս պահից էլ մենք հասկացանք մեր թարգմանչի արժեքավորությունը: Մի հսկա պարոն, որը ոչ կարդալ գիտեր, ոչ գրել և, որին չնայած վճարում էինք 5 ռուբլի, չէր կամենում նույնիսկ արտակարգ դեպքերում ճաշ եփել: Մենք ունեինք արտոնաթուղթ, որը ներկայացնում էինք փոստի վարիչին, և մեզ ծառայություններ էին մատուցում, իսկ մնացածի համար մոծում էինք տեղում: Եվ պարոն Օհանեսը այն պահում էր գրպանում և, երբ կայարանում ոչ-ոք չէր լինում, մենք հոգնած ու սառած սպասում էինք մեր ընթրիքին: Երբ միայն կայարանապետի քթի տակ էինք խոթում պաշտոնական արտոնաթուղթը, նա դուրս էր գալիս թմբիից, ներողություն խնդրում և հրամայում մեզ համար կրակ վառել: Դժվարությամբ վաստակված ճաշից հետո, մեր անկողիները բացում են փայտե մահճակալների վրա, և մենք խոր քուն ենք մտնում:

Մայիսի 7-Գարնանային հրաշագեղ առավոտ է բացվում, մենք դուրս ենք գալիս նկարչական ապարատներով, մինչ բեռները կբարձեին: Այսօր Թարթառում շուկայի օր է, և գյուղը մի տեսակ աշխույժ է: Բոլոր կողմերից ժամանում են ձիավորներ, բեռնակիր անասուններ՝ էշեր, ձիեր, ջորիներ, ցուլեր և այլն: Ճոճոացող անիվներով շարժվում են հիանալի եզներով լծված սայլերը՝ բեռնված ապրանքներով, կանանցով և երեխաներով: Այսօր ձիերի օրն է, և նրանք մեծ թիվ են կազմում. նրանց մեջ կային դարաբաղյան տեսակի մի քանի ձիեր: Մի հիանալի զբոսանք կատարելուց հետո, երբ վերադառնում էինք կայարան, տեսանք գյուղի ծայրին տեղակայված մի քանի խղճուկ վրաններ: Դրանք պատկանում էին թաթերին, որոնք բարձրանում էին լեռներ և այստեղ կանգ էին առել: Նրանք եկել են Ջանգեգուրից: Մի քանի ծեր կին գորգ էին գործում՝ պզգած գետնին դրված սովորական դազգահների առջև: Ի դեպ, Թարթառի հիմնական բնակչությունը թաթեր են: Մերկ երեխանները և կիսաբաց կրծքերով կանայք կանգնած են ճյուղերից և ցեխից

շինված հյուղակների առջև: Նրանք հագիվ են գսպում գագագած շներին, մինչև մենք մի քանի նկարահանում կանենք:

Յոթ անց կեսին մեր արագընթաց կառքը շարժվեց դեպի Շուշի: Թարթառից հետո մինչև սարահարթ հասնելը ճանապարհը միշտ վեր է բարձրանում՝ բաժանված խոր ձորակներով և ոռոգման ջրանցքերով: Արոտավայրերը ծածկված են անասունների մեծաթիվ հոտերով:

Աջ կողմում՝ մի 18 կմ հեռավորության վրա, սկսվում են դարաբաղյան լեռները: Մեծ թվով ձիավորներ մերթ հայտնվում են, մերթ՝ անհետանում: Մենք կլանում ենք թարմ ու մաքուր օդը. այս գեղեցիկ բնության գրկում քեզ այնքան երջանիկ ես զգում, որ ապրում ես: Բուսական աշխարհը շատ հետաքրքիր է, բացի վայրի սամիթից և օշինդրից կան նաև բազմատեսակ դաշտային ծաղիկներ, հիասքանչ կակաչների գորգերին հաջորդում են հսկայական տատասկափշերը: Ճամփին վազվզում են մի խումբ մոխրագույն ագռավներ, երևում են նաև դիակների վրա պտտվող հսկա անգղներ:

Շատ հաճախ, այս ընդարձակ սարահարթում տեսնում ենք մշակված հողեր, բանվորների ջոկատներ՝ մի քանի ոստիկանների հսկողությամբ, որ ուղարկել էր նահանգապետը, որպեսզի ոչնչացնեն այս կողմերը լցված մորեխներին: Հարյուրավոր տղամարդիկ եղեգնից պատրաստված ավելներով առաջ են շարժվում՝ որսալով միջատներին, որ ծածկել էին հողը հազարներով: Որոշ հեռավորության վրա փոսեր են փորված, որտեղ լցնում են մորեխներին և իսկույն ծածկում հողով: Ռուսական կառավարությունը մեծ ջանքեր է թափում, որպեսզի հաղթահարի գյուղատնտեսական այդ աղետը: Բայց պետք էր տեսնել, թե ինչ անտարբերությամբ ու անփութությամբ էին բանվորներից շատերը կատարում իրենց գործը: Շուտով հասանք մի լայն գետափ, որտեղ ցուլերի ու եգների մի մեծ հոտ եկավ՝ ծարավը հագեցնելու: Մյուս ափին՝ սարահարթի բլրակին, մի հարյուր ձի էին արածում: Այս ամենը մի հիասքանչ տպավորություն էր թողնում. դա մի հրաշագեղ տեսարան էր այս վայրի ու անմարդաբնակ բնության գրկում, որտեղ լսվում էին միայն անասունների բառաչն ու ձիերի խրխնջոցը:

Գուլուջայի կայարանից մի հարյուր մետրի վրա վեր էր բարձրանում միայնակ մի ծառ, որի ճյուղերին կապկպված էին բազմագույն լաթերի կտորներ, իսկ ծառի տակ մի կույտ քարեր էին թափված: Սա սարահարթի մատուռն է: Անցորդները այստեղ կանգ են առնում՝ կապելու իրենց շորերից մի ծվեն կամ էլ կույտի վրա մի քար նետելու: Սա առաջին պաշտպանմունքի

ծառն է, որ մենք հանդիպել ենք: Ստամոքսի երկար ցավերից հասկացանք, որ, բացի բնության վայելքից, պետք է նաև սնվել: Այս կլանող միտքը մեզ հետապնդում էր այն պահից, երբ ոտք դրեցինք Շահ-Բուլաղ: Այստեղ բոլորս մտանք խղճուկ կայարանը և մեր արտահայտիչ ժեստերով միացանք Օհանեսի գրույցին: Ի վերջո մեզ համար բերեցին լավաշ (տեղի հաց)՝ վրան մի մեծ կտոր պանիր: Աղքատիկ, շատ աղքատիկ ճաշ՝ երեք սոված մարդու համար:

Այս կայարանը իր անունը ստացել է մի հիասքանչ և վարար աղբյուրից, որը սկիզբ է առնում անտառածածկ ձորակից և գտնվում է ավերակների վերածված մի գեղեցիկ շինության մոտ, որն ուներ շատ նրբաճաշակ ճարտարապետություն և որի առջև վեր էր խոյանում մի եռակամար կիսաշրջանաձև սյունասրահ: Այս շենքի մոտ՝ ուխտի լաթերով ծածկված մոշի թփերի տակ, երևում էր մի հին՝ անկասկած ինչ-որ սրբի գերեզման: Դա Ղարաբաղի կառավարիչ Փանահ խանի Շահ-Բուլաղի ամառանոցն է: Բայց ինչի էր ծառայում այս տաղավարը: Արդյոք դա մզկիթ էր, թե տուն: Ներսը կամարածածկ էր ու առանց լույսի. կիսով չափ ծածկված թավ կանաչապատ այս ավերակը կախարդող տպավորություն էր թողնում: Այստեղից մի քիչ հեռու վեր էր խոյանում մի հին ամրոց: Այն կառուցվել է 18-րդ դարում Նադիր Շահի կողմից: Ես լվացվեցի աղբյուրի ջրով, որը հոսում էր կավճե բլուրից՝ ծնունդ տալով մի վճիտ աղբյուրի, որի քարքարոտ մահճում վիստում էին բազմաթիվ ձկներ:

Շահ-Բուլաղի շրջակայքի ավերակները թույլ են տալիս հավաստել, որ այս տեղը հնում շատ կարևորություն է ունեցել Հայաստանի պատմության մեջ՝ չնայած, դժբախտաբար, այդքան խառնաշփոթ ու խճճված տեղադրությունը:

Մասրենիներ, անկեզ մորենիներ, դեղին ծաղիկներով վայրի սամիթ, գեղեցիկ թզենիներ, նռնենիներ և այլ տեսակի թփեր գորգի նման ծածկել են ձորակը, որտեղից հոսում է աղբյուրը, հիասքանչ բուսականության մեջ ճովողում են ճեղագրավները: Անցնելով ողջ կայարանը՝ մենք կառք նստեցինք և կամաց-կամաց մտանք գեղեցիկ և անմշակ Կարկառի դաշտավայր: Ճանապարհը անցնում է լքված պարսկական մի մեծ գերեզմանոցի մոտով: Այստեղ գտնվում է նաև մի ավերված քարվանսարա:

Շուշիին մոտենալուն զուգընթաց Կարկառի դաշտավայրը նեղանում է: Այստեղ-այնտեղ հողի կրծքից պոկված կրաքարե բլուրներ են ցրված: Ճամ-

փին քոչվորակաների ընտանիքներ կան՝ անասուններ, կանայք, երեխաներ, վրաններ. բոլորը գնում են լեռներ: Կանայք ձիով են: Շատ հաճախ նրանք տանում են ձեռներին կամ մեջքին կապած երեխաներ: Գեղեցիկ և երիտասարդ մի ձիավորի թամբին մի հիվանդ մտրուկ կամ էլ գուցե հորթ կար: Մա՛քազմագույն շորեր հագած այս մարդիկ, մի կատարյալ ու հիասքանչ տեսարան էր կյանքին ու գույներին սիրահարված նկարչի կտավի համար: Տղամարդիկ շների հետ միասին ուղորդում են անասունների հոտի ընթացքը: Այստեղ-այնտեղ որոշ խմբեր հոգնած ծվարել են գիշերելու համար. խմբված մեծ խայրուկի շուրջ՝ նրանք պատրաստվում են երեկոյան ճաշին:

Երևում է մի ուրիշ քարվանսարա, և մենք անցնում ենք Խոջալուի ձիաբուծարանի առջևով: Ճանապարհը՝ մերթ լավ, մերթ վատ, անդադար կտրտվում է գետի բազմաթիվ վտակներով: Անցնում ենք մի գետակ, որ պեսզի մտնենք Կարկառի հունը. մեր հիասքանչ ձիերը տանում են մեզ՝ սլանալով համաքայլ: Գետի ջրերը բարձր չեն,բայց անձրևի ժամանակ այն երևի ահավոր է: Շուտով երևում են Ասկերանի երկու ամրոցների ավերակները՝ տեղադրված մեկը գետի աջ, մյուսը՝ ձախ ափին: Աշտարակներով մեծ պատը, որի հետքերը դեռ մնում են, մի ժամանակ երևի փակում էր անցումը. այն վերաբերում է պարսկական ժամանակաշրջանին: Սկսած այդ ավերակներից՝ դաշտավայրը ծածկված է միայն ծիրանաքարերով ու սև շերտաքարերով: Էջերի, անասունների հոտեր, եզներով սայլեր,թաթ ձիավորներ, մի անվերջանալի ու հանդիսավոր թափոր, որն այնքան էլ չի տարբերվում բիրլիական ժամանակների հովիվների թափորներից: Վերջապես կեսօրվա ժամը չորսին մտանք Խան-Բարեի կեղտոտ ու տիղմով ծածկված քարվանսարան, որտեղ թողեցինք ձիերը և կառքը, իսկ մենք գնացինք ինչոր բան ուտելու: Մեր ուղեբեռը մնացել էր ետևում՝ Շահ-Բուլաղում, որտեղ երևի նոր ձիեր չկային: Բայց կայարանի պետը, տեսնելով մեր արտոնաթերթիկը, խոսք սովեց, որ երկու ժամից տրոյկան կժամանի Խան-Բարե,իսկ մենք, մեր սովորության հակառակ, որոշեցինք առաջ շարժվել:

Մի քանի թաթար և հայ առևտրականներ, տեղավորված կիսավեր քարվանսարայի շուրջը, գետնին փռեցին մի հին գորգ և մեզ մատուցեցին թեթև ընթրիք՝ ոչխարի խորոված: Դրա հետ միասին մատուցեցին գոմեշի համեղ պանիր, գյուղացիների կողմից շատ սիրված կանաչեղեն՝ մաղաղանոս, պրաս, թարխուն, սամիթ և այլն: Որպեսզի ավարտենք այս հիասքանչ կերուխումը, բերեցին մի հին ինքնաեռ, որի մեջ եռացող ջուրը թշշում էր:

Մենք վաղուց պատրաստ էինք առաջ շարժվելու, բայց մեր ուղեբեռը դեռ տեղ չէր հասել:

Ժամը յոթն էր. գիշերն ընկավ: Մինչև Շուշի բարձրանալը մեզ մնում էր մի քանի վերստ անցնել լեռներով: Մենք անհանգիստ էինք ուղեբեռի ուշացման պատճառով, քանի որ երկու կայարաններից ոչ մեկում ձիերի սպասող ուղևորներ չկային: Ժամը յոթ անց կեսին լավեցին կառքերի զանգակների ձայներ: Դա մեր կառքն էր: Վերջապես կարող ենք մեկնել: Ավաղ, այն կարող էր մերը լինել, բայց զբաղեցված էր մի կրտսեր պաշտոնյայի կողմից, ով առանց ամոթի ու խղճի խայթի, տիրացել էր մեր ձիերին, չնայած մենք առաջինն էինք ժամանել, ինչպես նաև ունեինք առավելություն, որ մեզ տալիս էր մեր արտոնաթուղթը: Որպեսզի խուսափի մեր դժգոհությունից, մեզ մոտենալու պահին, կառապանը այնքան ուժեղ մտրակեց ձիերին, որ նրանք քամու նման սլացան մեր կողքով:

Մենք կատաղած էինք: Գիշեր էր. եղանակը հանկարծակի վատացավ: Վերջապես ժամանեց ուղեբեռը, փոստակառապանը մեզ բացատրեց, որ ձիերը տրամադրել են մեզնից հետո ժամանած կրտսեր պաշտոնյային:

Հազիվ մի քանի ժամ էր անցել, որ մենք ճանապարհվել էինք, երբ լրիվ մթնեց, ու հորդ անձրև սկսվեց: Ըճանապարհը չէր երևում: Ոչ ֆայտոնը և ոչ էլ ձիակառքը լապտեր չունեին: Կառապանները սարսափած կանգ առան: Ով կպատկերացներ, որ մրրիկը այդքան երկար կտներ: Այնքան մութ էր, որ միմյանց ճանաչում էինք միայն ձայնից: Ըճանապարհն անցնում էր անդունդի երկայնքով, և ցանկացած տեղաշարժ մեզ կարող էր տանել դեպի իրական մահ: Փոստակառապանները հուսահատված են: *«Թող Աստված պահպանի մեզ»* - դողում էին այս խեղճ մարդիկ: Կարկառի դաշտավայրի տեսապատկերը, որ կարելի էր տեսնել կայծակի լույսի տակ, անսովոր էր, առավել ևս, որ բազմաթիվ ընտանիքներ, որոնք բարձրանում էին լեռները, կանգ էին առել հանգիստ առնելու, և նրանց ճամբարների լույսերը վառվում էին դաշտավայրի խորքում: Ես հիշեցի, որ մեր ճամպրուկներից մեկում կա մագաղաթյա գրպանի լապտեր և մի մոմ: Ամուսինս տեղատարափ անձրևի տակ, մթի մեջ խարխափելով, փնտրեց և շատ ուրախացավ, երբ հայտնաբերեց այդ առարկաները, քանզի պետք է ասել, որ մենք իրականում չունեինք ճամբարման պիտույքներ՝ ճամպրուկներ, որտեղ կարելի էր գտնել մեծ լապտերներ, մոմեր և այն, ինչ անհրաժեշտ էր: Եվ ահա այս մի փոքրիկ լապտերի և մի կտոր մոմի օգնությամբ մենք պետք է շարժվեինք ևս մեկ ու

կես վերստ, որպեսզի հասնեինք չափարների փոստակայան, որը գտնվում է ճանապարհից մի որոշ հեռավորության վրա: Սա այն պահն էր, որ ուղեկցող անձնակազմը չէր կարող մեզ օգտակար լինել. պետք էր սեփական ուժերով իրավիճակից դուրս գալ: Կամաց-կամաց լույսը բացվելու հետ հանգստություն եկավ նաև մեր հոգիներին: Փոստակառապաններից մեկը վերցրեց փոքրիկ լուսարձակը և քայլեց առջևից՝ ստուգելով տեղանքը, իսկ երկու կառապանները ձիերի թուկերից բռնած հետևեցին նրան: Քամին հանգրեց լապտերը: Լուսարձակը վառեցին, նորից սկսեցինք շարժվել մինչև այն պահը, երբ քամին հանգրեց նաև մոմը: Եվ այսպես շարունակ յուրաքանչյուր հարյուր կամ երկու հարյուր մետրի վրա լսվում էր փոստակառապանների կանչը. «Յավաշ, յավաշ»՝ խառնված ամպրոպի ձայնին: Առաջացել էր մի աննկարագրելի աղմուկ-աղաղակ: Վերջապես երևացին չափարցիների (պահակներ-*ծնթ. խւթ.*) տների լույսերը:

Ժամանակն էր, որ հասնեինք, քանզի մագաղաթյա լապտերը, որ ստիպված էինք շարունակ սոսնձելու, արդեն պատռվել էր և այլևս պիտանի չէր: Մենք հույսներս դրել էինք չափարցիների վրա՝ բայց առանց նրանց հետ հաշիվ նստելու:

Կանչեր, ճիչեր, շվվոցներ, ատրճանակի կրակոցներ՝ ոչինչ նրանց վրա չէր ազդում: Նրանք մնացին անտարբեր, և, քանի որ մթության մեջ դժվար էր գտնել միջոց՝ հասնելու մինչև նրանց անիծված խարխուլ տները, պետք էր սպասել, որ նախախնամությունը մեզ ուղարկեր մի այլ օգնություն: Շուտով ժամանեց եզներով լծված մի կառախումբ, որի մոտենալը ոչ ոք չէր լսել: Պետք էր կանգառի տեղ գտնել, բայց դա հեշտ չէր: Այդ մարդիկ մեզ ասացին, որ ճիշտ ենք գնում: Եղանակը բացվեց, շարունակեցինք շարժվել առաջ, մեր բոլոր նեղություններից հետո պարզ երկնքում երևացին լուսինը և աստղերը: Բայց մեր առջև ծառացավ ևս մի խոչնդոտ: Հասնելով Շուշի տանող բարձրունքի կատարին՝ տեսանք, որ ճանապարհը խցանված էր մի կառքով, որի անիվը դուրս էր եկել: Որպեսզի շարունակենք ճանապարհը, պետք էր այն կողքի քաշել: Բոլորս իջանք կառքից: Ձիակառապանը ներսում խոր քնով էր անցել: Բղավեցինք նրա ականջի տակ, ուժեղ թափահարեցինք, որ արթնանա: Ապարդյուն: Դեռ անձրևում էր, մեր կառապանը առաջարկեց վեր բարձրացնել կառքի ծածկը, որպեսզի թափվող անձրևի կաթիլներից կառապանը արթնանա: Չլսված խենթություն չէր արդյոք դա: Տղամարդիկ ստիպված էին բարձրացնելու կառքը կառապանի հետ միասին և դնել կողքի, որպեսզի մեր

Ֆայտոնը, որը գտնվում էր անդունդի եզրին, կարողանար առաջ շարժվել: Այս բոլոր տառապանքներից հետո, որտեղ միախառնվել էին վտանգն ու զավեշտանքը, վերջապես հասանք Շուշի, և մեր Խաչի ճամփան ավարտվեց քաղաք տանող զառիվայր, սալապատված ճանապարհի վրա, որտեղ մենք մեծ դժվարությամբ հասանք այն տունը, որտեղ մեզ պետք է հանգրվան տային: Աստված իմ, մենք տեղ ենք հասել: Մեր սենյակը բավականին ընդարձակ էր ու հարմարավետ: Արագ կրակ վառեցինք և թեյ խմեցինք: Երկու ժամ անց, երբ լսվեց աքլորների կանչը, մենք տաքացած ու կազդուրված քնով անցանք:

Օհանեսը դեռ շարունակում էր Աստծուն աղոթել մեր փրկության համար: Խեղճ մարդը չէր հավատում, որ փրկվել ենք, և անհամբեր սպասում էր լույսը ծագելուն, որպեսզի կնոջը գրի, թե ինչպես ենք խուսափել վտանգից, և այդ անմոռաց գիշերվա սարսափելի հիշողությունների մասին:

ԳԼՈՒԽ 4

Ժամանում Շուշի-Ղարաբաղ - Շուշի քաղաքը, բնակիչները, տարազը) - Փայտ և ջուր կրող ավանակները - Հայկական եկեղեցին - Մեհեմետը և գորգավաճառը - Բժիշկ Աթաբեկովը - Մեր քարավանի կազմավորումը - Այց իշխան Ռզա Գուլի Միրզային - Հյուրընկալություն գիմնազիայում - Էքսկուրսիա դեպի Խալիֆալի ձորը - Գանձերի ձորը - Աջարացին - Սորեխների ոչնչացումը - Շուշիի տնտեսությունը և առևտուրը

Շուշին մի բնական անառիկ բերդաքաղաք է: Այն վեր է հասնում լեռների գրկում գտնվող 1100 մետր բարձրությամբ պինդ, ամուր կրաքարե բարձրավանդակի վրա: Բոլոր կողմերից շրջապատված է անմատչելի բարձր պարիսպներով՝ բացի երկու տեղերից, որոնք պաշտպանված են երկու դարպասներով. մեկը՝ դեպի Երևան, մյուսը՝ Ելիզավետպոլ: Ներկայումս այն Ելիզավետպոլ նահանգի ամենամեծ քաղաքն է և նահանգի կենտրոնից գտնվում է 120կմ հեռավորության վրա՝ հարավ-արևելքում: Մի ժամանակ այն Ղարաբաղի խանության մայրաքաղաքն էր: Ղարաբաղը, թուրքերեն՝ «սև պարտեզ», պարսկերեն՝ Արրան կամ Արհան, արաբերեն՝ Ռան, Ռանի, վրացերեն՝ զենդերի գրքերում՝ Աերիանո, հնում հայտնի էր Արցախ անունով՝ հայկական Սյունիք կամ Միսական գավառում: Արշակունիների անկումից հետո Աղվանները այն միացրեցին իրենց թագավորությանը: Բայց

հայկական թագավորների ազդեցությունը այնքան էլ չէր զգացվում Ղարաբաղում, որն իր դիրքով բաց էր պարսկական, Կասպից ծովի և Կովկասի բոլոր ժողովուրդների համար: Միայն պարսիկները գերակայություն ունեին այս երկրի վրա: Սակայն մինչև Նադիր-Շահի գալը թուրքերն այն գրավեցին, սակայն այդ նվաճումը այնքան էլ երկար չտևեց, քանի որ Նադիր-Շահը շուտով գրավեց Ղարաբաղը և ստիպեց նվաճողների մի մասին վերադառնալ Խորասան, որտեղից որ նրանք եկել էին: Բայց վերջիններս, որոնց սխալմամբ անվանում էին թաթարներ, սիրեցին այս երկիրը և լքեցին այն ափոսանքով՝ հույս ունենալով, որ առիթ կունենան հետ վերադառնալու: Այդ առիթը երևան եկավ, երբ մահացավ Նադիր-Շահը: Նրանք հայտնվեցին Խորասանի թուրքմեն հրամանատար Ջիվանշիրների ցեղից Փանահ խանի գլխավորությամբ: Վերջինս շտապեց իր բացարձակ իշխանությունը տարածել ողջ Ղարաբաղի վրա: Նա հիմնադրեց իր արքունիքը սկզբում Բայաթում, Բերդայի մոտ, հետո տեղափոխվեց Շահ-Բուլաղ: Դառնալով Ղարաբաղի տերը՝ Փանահ-խանը իր նստավայրը տեղափոխեց ներկայիս Շուշի քաղաքը, որ այդ ժամանակ միայն ամրոց էր: Այն անվանվեց Փանաբաղ մինչև այն պահը, երբ հարևան հայկական Շուշիքենդ գյուղաքաղաքի բնակիչները եկան՝ հաստատվելու այստեղ՝ կոչելով այն Շուշա կամ Շուշի: Փանահ խանը մահացավ 1790թ.: Նրա որդի Իբրահիմը նրան հաջորդեց 1791թ. և պաշարվեց Շուշիում Պարսկաստանի շահի՝ ներքինի Աղա Մուհամեդ-խանի կողմից: Վերջինիս հարձակումները անարդյունք էին, բայց նա ավերեց երկիրը: Երկու անգամ նա նորից եկավ՝ 1795թ. և 1796թվականներին, բայց այս անգամ նրա գլխավորությամբ Խոյի, Երևանի և Նախիջևանի խաների մեծաթիվ զորքերը մտան այս դրախտ երկիրը՝ թալանելով այն հիմնովին: Նրա հրամանները կատարվեցին, երկիրը տրվեց հրի ու սրի, շատ գերիներ վաճառվեցին թուրքերին:

Ղարաբաղը դարձավ սովի և այլ փորձությունների զոհը: Բնակիչները ստիպված էին սնվել խոտերով, շատերը զոհվեցին:

Ներքինի Աղա Մուհամեդը ևս մի անգամ վերադարձավ բազմահազարանոց զորքով և երրորդ անգամ պաշարեց քաղաքը: Իբրահիմը փախավ, քաղաքը գրավեցին, 25 օր այն թալանվում էր, և շահը կարողացավ հագեցնել իր վրեժի ծարավը:

Բայց այդքան հանցագործությունները չէին կարող մնալ անպատիժ, և նա ևս սպանվեց իր ծառաներից մեկի կողմից:

1804թ. ռուսները գրավեցին Գյանջայի խանությունը, որը գտնվում էր պարսկական տիրապետության տակ: Իբրահիմը շատ թույլ էր, որպեսզի դիմակայեր կայսերական հզորությանը: 1805թ. գեներալ Յիցիանովը ճամբար խփեց Կուրա չայի ափին, և Իբրահիմը աղաչեց ընդունել Ղարաբաղը ռուսական հովանու ներքո՝ մինչև ժամանակ հրաժարվելով պարսկական գերիշխանությունից: 1800թ. (1806թ. – *ճնթ. խմբ.*) մայիսի 14-ին ստորագրված պայմանագրի համաձայն՝ Շուշի քաղաքը անցավ ռուսական տիրապետության տակ: Մի քանի տարի անց Իբրահիմը և իր որդի Մեհտի Կուլիխանը փորձեցին ապստամբել, ռուսները նրանց զինաթափեցին և վերջնականապես գրավեցին երկիրը 1822թ-ին:

1826թ. Աբաս-Միրզան ներխուժեց՝ առանց պատերազմ հայտարարելու, և պաշարեց Շուշի քաղաքը: Կայսրորդ, որը կազմված էր մի քանի հարյուր մարդկանցից, գնդապետ Ռեուտի գլխավորությամբ 45 օր քաջաբար դիմադրեց պաշարմանը և մեծաթիվ զոհերով հետ մղեց հարձակումը:

Մայիսի 8 - Հորդ անձրև էր տեղում, երբ մենք դուրս եկանք՝ տեսնելու մարդկանց, շրջելու քաղաքում: Հենց Շուշիում մենք պետք է կազմավորեինք մեր քարավանը և նաև հույս ունեինք՝ այստեղ մնալ մի քանի օր:

Տների տանիքները՝ ծակծկված տախտակներով ու ներկված թիթեղով, բարձր դիրքի ու ձյան պատճառով թեքված էին, ինչպես մեզ մոտ լեռներում: Նրանք բոլորը հիմնակառույց էին: Ամենից շատ զարմացրեց երկաթե նրբագեղ վանդակաճաղերի շքեղությունը, որոնց նախշերը ծածկում էին փայտե պատուհանները և գեղեցիկ պատշգամբները: Երբեմն դրանք զարդարված էին պարսկական ոճի գույներով:

Շուշիի բնակիչների մի մասը կազմում են թաթարները, որոնք բնակվում են քաղաքի ներքին մասում, մինչդեռ հայերը ռուսական փոքրաթիվ գաղութի հետ միասին գրավել են քաղաքի վերևի մասը: Հնարավոր չէ ճշգրիտ ձևով պատկերացնել քաղաքի ամբողջական պատկերը, քանզի այն կառուցված է չորս բլուրների լանջերին: Շնորհիվ տանիքների թեքվածության և քարաշեն տների՝ այն ավելի շատ եվրոպական տեսք ունի, քան ասիական:

Ողջ Կովկասում Շուշին հայտնի է իր կլիմայի խստությամբ: Ձմեռը տևում է վեց ամիս, ձյունը տեղում է մեկ մետր հաստությամբ, և փողոցներում շրջում են սահնակներով: Երբեմն ձյուն է տեղում նույնիսկ մայիսին: Շուշիում երբեք շատ տաք չի եղել: Այստեղ հասունանում է բալ, դամբուլ, խնձոր և տանձ:

Զառիվայր, վատ սալահատակված, անձրևաջրերով լվացված փողոցները նմանվում են հեղեղի հունների: Քաղաքի շրջակայքում պինդ քարեր կան, բայց դրանց փոխադրումը շատ դժվար է: Ահա թե ինչու փողոցների բարվոք սալապատումը շատ թանկ է: Նույնն է նաև ջեռուցման փայտի հարցում, որի տեղափոխումը ավանակներով ավելի բազմաձևախ է: Մենք ստիպված էինք աննպատակ քայլել քարքարոտ փողոցներով, որպեսզի հասնենք մեծ շուկա:

Ես քայլում էի մեծ դժվարությամբ և ինքս ինձ հարց էի տալիս, թե ինչ հրաշքով են թաթար կանայք քողածածկ կարողանում քայլել այս քարքարոտ փողոցներում իրենց սանդալներով, որոնք ծածկում են միայն ոտքերի թաթերի ծայրերը և հազիվ են հասնում մինչև ներբանը: Ոմանք դա անում են մի տեսակ դյուրին կերպով, այդ մասին կարելի է դատել նրանց երկար, վառ գույնզգույն, վեր քաշած գուլպաների վրայից ոտների կոճերին պինդ կապած կարմիր, վարդագույն, դեղին կաշիմիրե լայն անդրավարտիքներից և արծաթյա ճակատագարդերի ձայնից, որոնք զնգզնգում էին քայլելու ժամանակ: Ես հույս ունեի, որ ամենաչընկճվողները, բարյացկամություն ցուցաբերելով իմ հանդեպ, մի փոքր հետ կքաշեն իրենց ծածկաշորը, և այդ իսկ պատճառով ամուսնուցս և ուղեկցողներից մի քիչ հետ ընկա, սակայն, դժբախտաբար, այդ տմարդի էակները, ամբողջովին քողածածկ, մնացին իրենց վայրենի խորհրդավորության մեջ, և միայն նրանց աչքերի փայլից հասկացա, որ ես նրանց ուշադրության կենտրոնում էի:

Բայց ամենատպալորիչը հայերի հագուստն է՝ ինքնատիպ ու միևնույն ժամանակ զարմանալի: Տարվա այս եղանակին նրանք դեռ կրում են ձմեռային հագուստ ոչ այնքան դուրեկան անդրավարտիքի վրայից, գոտկատեղին ամուր փաթաթված կաշեմիրե կամ մետաքսյա լայն գոտիով, կանաչ, դեղին կամ կապույտ մետաքսյա կիսաշրջագգեստ: Նրանք պճնված են կգաքիսի մորթով եզրակարված, երբեմն էլ մորթե աստառով երկար նռան գույնի կամ դարչնագույն թավշյա մուշտակներով: Դա հարմարավետ է և տաք, բայց ոչ վայելչագեղ: Հատկապես ուշագրավ է գլխաշորը: Բացի մեծաթիվ շալերից՝ նրանք կրում են ապարոշ՝ զարդարված արծաթե դրամներով, որոնք կախված էին ճակատներից: Այդ ամենը ծածկված է զվին փաթաթված շորով: Դեմքի ստորին մասը մինչև քիթը ծածկված է հաստ սպիտակ կտորով. այդ մշտական սեղմումից դեմքի ստորին մկանները սկսում են ապաճել: Փողոց դուրս գալու ժամանակ նրանք գլխներին և ուսերին զցում են մի մեծ սպիտակ ծածկոց, որը ամրացվում է ինքնատիպ ճարմանդներով: Այս

հագուստը շատ հաճախ կրում են մեծահարուստ կանայք:Նոր սերունդը նախընտրում է շպրտել այդ ծանր ու անշուք շորերը, որպեսզի հետևի թիֆլիսյան նրբագեղ նորաձևությանը:Ինչ վերաբերում է Շուշիի մեծահարուստ տղամարդկանց,նրանք կրում են մորթյա բարձր կոնաձև փափախ, որը տարբերվում է երիտասարդների ավելի նրբագեղ ու ցածր գլխարկներից:

Քաղաքի ուշագրավ պատկերներից են փայտ ու ցախ կրող փոքր ավանակների բազմաթիվ քարավանները, որոնք անվերջ շրջում են քաղաքում: Ակերով կառքերը չեն շահագործվում փողոցների զառիթավության ու ահավոր սալաքարերի պատճառով, և բոլոր փոխադրումները կատարվում են ավանակներով, ջորիներով և ձիերով: Երբեմն ավանակները այնքան են բեռնված, որ նրանց նիհար մարմինները ամբողջովին անհետանում են դեռ տերևներով ծածկված հսկա ցախակույտերի տակ: Եվ նրանք իսկապես գավեշտական են. այս ավանակները, որ մանրաքայլ անցնում են փողոցներով՝ մի կողմից շփոթված, մի կողմից էլ ծեծված, նման են իսկական քայլող թփերի: Շուշիում ջեռուցումը կատարվում է միմիայն փայտով: Ջուրը վաճառում և կրում են տուն փոքրիկ զվարճալի ավանակներով՝ բեռնված տափակ դիոլանման տակառներով: Մեկ տակառիկը արժե 10 կոպեկ և պարունակում է 50 լիտր ջուր: Մեծ ընտանիքներում այս տեսակ ծախսը միակ նախընտրելին է:

Ամբողջ քաղաքը մատակարարվում է երեք-չորս աղբյուրից: Միայն թաթարներն են խմում ջրհորների ջրից, այդ պատճառով էլ համաճարակը մոլեգնում է միայն նրանց թաղամասերում:

Անցնելով գլխավոր հրապարակը՝ ես տեսա մի տղայի, որը վաճառում էր թոկին կապված մի սիրունիկ շնիկ: Ես Օհանեսին խնդրեցի գնել այն ինձ համար, և նրան հաջողվեց այն գնել չափազանց բարձր գնով՝ 25 կոպեկ (մոտավորապես 75 սանտիմ): Մի քանի րոպե անց նրան տարանք հյուրանոց: Երևում էր, որ դեղին շնիկը հիանալի պահապան կդառնա, քանզի այն սերում էր հսկա գամփոներից՝ ավելի կատաղի, քան գայլերը:

Գլխավոր հրապարակի մոտ կառուցված է Անիի բյուզանդական ոճի հայկական գեղաշեն մի եկեղեցի: Ներսում հատակը ծածկված է գեղեցիկ գորգերով, կան մի քանի սրբերի նկարներ, մասունքներ, հին ավետարաններ, որոնք հավատացյալները եկեղեցի մտնելիս ու դուրս գալիս համբուրում էին: Հայկական եկեղեցիներում տղամարդիկ և կանայք ունեն առանձին

տեղեր: Ժամատունը եկեղեցուց առանձին է և վեր է բարձրանում եկեղեցու կողքին:

Պատարագից հետո դուրս եկած կանայք մեծ հետաքրքրություն են առաջացնում: Ոմանք կրում են հին,անշուք զգեստներ,մինչդեռ ջահել կանայք և աղջիկները հագնված են նրբագեղ եվրոպական ոճով, բացի գլխաշորից՝ բաղկացած մի փոքրիկ քարերով կամ ասեղնագործ նախշերով զարդարված թավշե թագաձև գլխագարդից: Այն դրված է ճակատին՝ ծածկված թեթև ասեղնագործ քողով: Շատերը գլխագարդերի վրայից կրում են կզակի տակ կապված նրբերանգ, առանց պչրանքի գլխների փաթաթած ասեղնագործ գլխաշոր: Դրանք գոնե չեն ձևափոխում դեմքի ստորին մասը:

Այս հայուհիների մեծ մասը շատ գեղեցիկ է ու շլացուցիչ, և գուրկ լինելով վրացուհիների սառնությունից՝ նրանք շատ ավելի կենսուրախ են, նրանց փայլուն աչքերն ու կիսաժպիտ շրթունքերը հրապուրում են իրենց նուրբ թովչանքով: Նրանց երկար ծամերը և մեծ, դարչնագույն, նշաձև աչքերը ամենագեղեցիկն են աշխարհում: Ի տարբերություն Թիֆլիսի՝ այստեղ կին ծառաներ չկան: Դա շատ տարօրինակ է, առավել ևս ֆրանսուհու համար, ով սովոր է տեսնել երիտասարդ մայրերի, որոնց ուղեկցում են լացող երեխաներին ձեռքերին օրորող դայակների:

Մենք նոր էինք հյուրանոցից դուրս եկել, երբ մի թաթար ոտնակոխ հետևեց մեզ: Նա պարոն Շանտրին հայտնեց, որ նրան պետք է ցույց տա Շուշիի բոլոր գորգերն ու գեղեցիկ մանր-մունր իրերը, որ կարող էինք գնել էժան գներով: Մենք ստիպված էինք զիջելու այս կոպիտ մարդու հարցերի տարափին, որի անունը Մեհեմետ էր: Նա մեզ տարավ փողոցների մի անվերջանալի լաբիրինթոսով՝ մեկը մյուսից նեղ, և վերջապես կանգ առավ պարսկական մի գեղեցիկ տան առջև, որտեղ ապրում էր հին գորգերի մի վաճառական: Տանտերը՝ խորամանկ ու ճարպիկ դեմքով մի թաթար, մեզ շատ սիրալիր կերպով ուղեկցեց վանդակաճաղերով ծածկված պատուհաններով մի փոքրիկ սրահ՝ ցածր ներկված առաստաղներով, որտեղ կային միայն գորգեր, բարձիկներ և պարսկական հայելիներ: Սպասարահը լցված էր կանանցով և բլբլացող երեխաններով, բայց այս հաճոյախոս առևտրականի միակ նպատակը մեզ գորգեր վաճառելն էր, և այդ իսկ պատճառով մենք իջանք մի գեղեցիկ նկուղային կամարածածկ սրահ, որը լուսավորվում էր մի փոքրիկ անցքից՝ հնարավորություն տալով հիանալ գորգերի և կտորների հիասքանչ գույներով ու մետաքսյա նրբերանգներով: Որոշները շատ

գեղեցիկ էին, բայց՝ շատ թանկ: Մենք աշխատում էինք նայել անտարբեր, քանզի վաճառականը, Մեհմետի կողքին կանգնած, սևեռուն, քննող հայացքով նայում էր մեզ: Կողքի դնելով մի քանի գորգ՝ վերադարձանք փոքրիկ սրահ, որպեսզի քննարկենք գները: Մի ջահել ծառա սկուտեղի վրա ապակյա բաժակներով թեյ բերեց: Քննարկումը ընթանում էր դանդաղ, բայց հանգիստ մթնոլորտում: Վաճառականի կողմից առաջարկված գորգի գինը սկսեց կամաց-կամաց նվազել հիսուն ռուբլուց մինչև երեսուն: Մի քանի զգացմունքային շարժումներից հետո՝ ձեռքերը դեպի երկինք, ձեռքը սրտին, աղերսանքներ և ահա քսան: Բայց ինչքան ժամանակ, ինչ համբերություն...

Վերջապես հասանք հյուրանոց, որն այնքան էլ նման չէր հյուրանոցի: Մա մի տուն էր, ոչ հեռու մեծ հրապարակից, որի տերը մի խելացի հայ էր: Նա մի քանի ննջասենյակ էր հատկացրել ճանապարհորդներին, նաև կերակրում էր, և մենք, չնայած մեր բազմաթիվ ճամփորդական իրերին, մեզ այնտեղ վատ չէինք զգում:

Ժամը 9-ին սկսվում է պարետային ժամը: Քաղաքը գրեթե չի լուսավորվում, գիշերային անցորդները ձեռքներին տանում են լուսարձակներ, և եկող-գնացող այս լույսերը մթության մեջ մի արտասովոր ուրվապատկեր են ստեղծում:

Կրտսեր ծառաները, մեծ լուսարձակները ձեռքներին առջևից գնալով, ուղեկցում են իրենց տիրուհիներին, ովքեր գնում են երեկոյան այցի:

Մայիսի 9- Մեր գալու օրից մենք տաքանում ենք մի մեծ վառարանով: Այստեղ չկան Կուրի ափի հեղձուցիչ տապերը: Այս գիշեր հատկապես ցուրտ էր: Մենք դողում էինք վերմակների տակ: Բայց առավոտյան արևի վառ շողերը լցվեցին սենյակի բոլոր յոթ պատուհաններից:

Մեր առաջին հանդիպումը կառավարչի հետ էր: Բայց նա բացակայում էր, և մեզ ընդունեց մի թաթար պրիստավ, որ շատ պերճախոս էր, բայց ոչ գործնական: Հայտնելով նրան մեր բողոքը նախորդ գիշերվա չափարացիների մասին՝ նա պատասխանեց՝ *Նիչեգո* (ոչինչ): Ինչքան եմ ես զգվում այդ բառից: Մեզ բախտ վիճակվեց ծանոթանալ հիանալի բժիշկ Աթաբեկովի հետ, ով շատ մեծ հաճույքով մեզ տվեց արժեքավոր տեղեկություններ քաղաքի սանիտարական վիճակի մասին:

Շուշիում համաճարակները շատ հաճախակի են լինում: Ծաղիկը, որ մոլեգնում է թաթարների մեջ, նրանք համարում են Աստծո պատիժ և ոչ մի գնով չեն ցանկանում պաշտպանվել դրանից: Երբ ինչ-որ մեկը հիվան-

դանում է ծաղիկով, մայրերը տանում են իրենց երեխաներին հիվանդի տուն, որպեսզի նրանք վարակվեն այդ սարսափելի հիվանդությամբ: Այս մահաբեր սնահավատությամբ է բացատրվում մարդկանց այն հսկա քանակը, ովքեր այլանդակվել կամ կուրացել են ծաղկախտի հետևանքով: Բայց վերջերս Աթաբեկովը, ով ազգությամբ հայ է, ունեցավ մի երիտասարդ թաթար գործընկեր: Գուցե նրա օգնությամբ կանխարգելիչ պատվաստումը կմտցվի նրա հայրենակիցների շրջանում՝ ի շահ նրանց բարօրության ու առողջության:

Մայիսի 10 - Մի բարեսիրտ հայ վաճառականի՝ պարոն Թամիրյանցի միջնորդությամբ մեր քարավանի կազմավորման անվերջ բանակցությունները ավարտվեցին: Վերջապես պայմանավորվեցինք բեռնակիր անասունների հարցում: Գորիսի հայերը դրանք կտան մեզ: Մնում է թամբավոր ձիերի և խոհարարի խնդիրը: Երեկվա վազող ջրերը չորացել են տաք եղանակից: Մենք բարձրանում և իջնում ենք քարքարոտ փոսերով ծածկված փողոցներով՝ փնտրելով մի տեղ, որտեղից կարելի է տեսնել քաղաքի ամբողջական պատկերը: Բայց դա անհնար է. այն այնքան է տարածված, որ կարող ես գոհանալ միայն մի առանձին տեսարանով:

Շուշիում յուրաքանչյուր տուն ունի պարտեզ՝ դժբախտաբար շրջապատված պատերով, և հնարավոր չէ ներս նայել: Այս պահին այս անթիվ պարտեզների մրգատու ծառերի ծաղիկների ու նրանց ճերմակ ու վարդագույն ճյուղերի մեջ ճովողում են թռչունները:

Ճամփին մի հայուհի մեզ թույլատրեց նկարելու իրեն, և մենք ներս մտանք նրա բնակարանը, որը շատ հաճելի տեսք ուներ: Նա տանը մենակ էր երեխայի ու պատկառելի, կույր հարյուրամյա ծերուկի հետ: Մինչև ամուսինս նրա դիմանկարն էր անում, ես մի կերպ փորձում էի հանգստացնել ողբացող ծերուկին, որը կարծում էր, թե մենք գողեր ենք:

Մայիսի 11- Բժիշկ Աթաբեկովը շատ էր ցանկանում մեզ ծանոթացնել իր լավ բարեկամ պարսից իշխան Ռզա Կուլիի հետ: Նա մեզ տարավ քաղաքի վերին թաղամասի մի գեղատեսիլ ամառանոց, որտեղ նա ապրում էր իր ընտանիքի հետ միասին: Մենք նրան գտանք պարտեզի կենտրոնում գտնվող տաղավարում, որտեղ նա սիրում էր աշխատել: Մենք շփոթված էինք նրա չափազանց սիրալիր ընդունելությունից: Իշխան Ռզա Կուլի Միրզան վաթսուներեկ մոտ բարձրահասակ մարդ էր և կրում էր ռուսական գեներալի ռազմական հագուստ: Նա սահուն խոսում էր ֆրանսերեն և իսկա-

կան ազնվական էր: Նրա հայրը՝ Բեհմեն Միրզան՝ շահ Նասր-Էդդինի եղբայրը, Թավրիզի կառավարիչն էր: Նրա համակարգված և խոհուն գործունեության շնորհիվ Ատրպատականի մարզը ծաղկում ապրեց: Բայց նրա հաջողությունները առաջացրեցին վարչապետներից մեկը նախանձը, և նա շահին համոզեց եղբորը հեռացնել պաշտոնից՝ ասելով, թե նա ժողովրդի համակրանքն է վայելում և կարող է մի օր իրեն հռչակել Պարսկաստանի շահ: Երկու եղբայրները անկեղծ սիրում էին իրար, և շահը համոզեց Բեհմեն Միրզային մնալ իր պաշտոնում, եթե միայն վարչապետը համաձայնի: Բայց վերջինս սև դավեր էր նյութում, և Բեհմեն Միրզան, իմանալով դրա մասին, շտապ հավաքեց իր ամբողջ հարստությունը և ընտանիքի հետ փախավ ռուսական տարածք: Իշխանը մեզ ներկայացրեց իր որդիներին՝ Ֆեթ Ալի Միրզային և Ագբեր Միրզային. երկուսն էլ ռուսական բանակի սպաներ էին: Հետո նա մեզ ուղեկցեց եվրոպական ոճի իր ամառանոցը, որտեղ մեզ սուրճ հյուրասիրեցին: Նրա անսահման պարզությունը, սիրալիր ու ազատ վարվելաձևը նրան շատ հաճելի անձնավորություն էին դարձնում: Մեծ գումարների շնորհիվ նա ուսման էր սովել իր բոլոր երեխաներին՝ տղաներին ու աղջիկներին: Նրանք ուսանել էին օտար լեզուներ, ֆիզիկական և բնական գիտություններ, գրականություն, երաժշտություն և այլն: Առ այսօր նրա տանը ապրում է ֆրանսագի մի ուսուցիչ, որի ծերությունը անցնում է այս ընտանիքի բարի հոգածության ներքո:

Մենք իշխանի տնից հեռացանք ուրախ,որ ծանոթացել ենք նրա հետ, և գնացինք գիմնազիա, որտեղ մեր պատվին հյուրընկալություն էր կազմակերպված: Տնօրեն պարոն Տարասովը մեզ առաջարկեց շատ հաճելի երաժշտական ծրագիր: Համերգը տեղի ունեցավ ընդունարանի՝ մեծ ցուցափեղկերով կահավորված ընդարձակ սրահում՝ լցված ֆիզիկական և բնագիտական հավաքածուներով: Այդ երաժշտությունը գրվել էր հազիվ մի վեց ամիս առաջ, բայց արդյունքները շատ զարմացուցիչ էին: Դա մեծ պատիվ է բերում և ուսուցիչներին, և հայ ու թաթար երեխաների արտիստական խառնվածքին: Ծրագրերը բազմազան էին: Հերթով լսեցինք ռուսաց ազգային օրհներգը, արագ ու աշխույժ քայլքով, ջութակի, կոնտրաբասի, ֆլեյտայի երաժշտական կատարումներ և այլն:

Համերգն ավարտվեց եռաձայն երգչախմբի կատարումով՝ երաժշտական գործիքների նվագակցությամբ: Այնուհետև մի քանի երիտասարդներ պարեցին դասական լեզգինկա: Ֆրանսերենը դասավանդում էր մեր մի

համաերկրացի, և գրեթե բոլոր աշակերտները վարժ խոսում էին ֆրանսերեն: Ի դեպ նրանք մեծ հակում ունեին լեզուների հանդեպ և ուսումնասիրում էին դրանք՝ ըստ նախընտրության:

Այս հիասքանչ համերգից հետո գիմնազիայի տնօրենը և նրա տիկինը մեզ ճաշի հրավիրեցին: Այս առիթով հավաքվել էին բոլոր ուսուցիչները և քաղաքի անվանի մարդիկ: Բոլորը խոսում էին ֆրանսերեն, ոմանք նույնիսկ մեզ նման սահուն:

Մայիսի 12- Մենք մեկնեցինք էքսկուրսիայի բժիշկ Աթաբեկովի ջրաղացներից մեկը, որը գտնվում է Շուշիի մոտ, որտեղ նա մեզ հրավիրել է անցկացնելու մի ամբողջ օր: Մեզ հետ էին իշխանը և նրա որդիները, ոմանք մեկնեցին ձիերով, մյուսները՝ կառքով: Ջրաղացը գտնվում է Շուշիից յոթ կիլոմետրի վրա՝ Խալիֆալի գեղատեսիլ ձորակում, Խանքենդի գյուղից ոչ հեռու, որտեղ կար մետաքսի ֆաբրիկա և հետևագործից ու հրետագործից բաղկացած մի գորագունդ: Հիանալի ճաշի ավարտից հետո, որի ժամանակ հնչեցին կենացներ առ մեր առողջության և մեր ճանապարհորդության, մենք շրջեցինք աջ ու ձախ: Ջրաղացի կողքին վեր էին խոյանում հիասքանչ չինարիներ: Նրանց խիտ ստվերի տակով գնացինք մինչև Աղա-Քորպասի կամուջը, որը անցնում է Խալիֆալի ձորակը: Գետը այստեղ շատ նեղ է և սեղմված է բարձր քերձերի միջև:

Օրը արագ անցավ շնորհիվ պարոն և տիկին Աթաբեկովների, և պետք է մտածեինք հետդարձի մասին: Մնացած հյուրերն արդեն մեկնել էին, երբ մենք իշխանի և նրա որդիների հետ, բժշկի որդու ուղեկցությամբ ճանապարհ ընկանք: Գնում էինք նույն ճանապարհով, որով ժամանել էինք Շուշի այն երեկո հորդառատ անձրևի, ամպրոպի ու կայծակի տակ, և ես նորից զգացի այս կտրուկ ոլորապտույտների վտանգը: Այս քարափնյա ճանապարհը ամբողջ երկայնքով եզրավորված է անդունդով:

Մայիսի 15- Երեկվա՝ ձիով ճանապարհորդությունից հետո ես հոգնած էի և ստիպված էի մի քիչ հանգիստ առնելու: Օգտվելով առիթից՝ ես իմ գրառումները կարգի բերեցի, մինչդեռ ամուսինս գնաց ձիով զբոսնելու իշխանի հետ. վերջինս ցանկանում էր ցույց տալ Շուշիի մոտակա վայրերը: Քաղաքի հարավ-արևելյան թաղամասը ավարտվում է մի տեղ, որը կոչվում է Ջիդեր-Դուզի և, որը դառել է թաթարների կողմից շատ սիրված ժամանցի՝ նիզակներով մրցավազքի վայր :

Թաթարների Գուրթառ թաղամասում է գտնվում բանաստեղծ և աստվածաբան մոլլա Փանահի գերեզմանը: Այս գերեզմանն ավերված է, այն գտնվում է Ջավաթ Դարասի կամ Գանձերի ձորի վերևում, որտեղով 1826-ին Ռիզա Կուլի Միրզայի պապ Աբբաս Միրզայի զլխավորությամբ պարսիկները եկան և ումբակոծեցին քաղաքը Թոփխանայի բարձունքներից: Այս ձորը կոչվել է գանձերի ձոր, որովհետև, ինչպես ասում են, իբրև այդ ձորի քարանձավներում նախկին խաները թաքցրել են իրենց հարստությունները:

Այսօր էլ այդ քարանձավների առջև կան փոքր շինություններ: Ձորի մյուս կողմում գտնվում է հին հայկական Շուշիքենդ գյուղը, որը դիմակայել է պարսիկների հարձակումներին, որտեղ հայերը քաջաբար կռվել են :

Նույն այդ Գուրթառի թաղամասի ծայրում գտնվում է աջարացու մի հին գերեզման , որը սրբավայր է և հայերի, և թաթարների համար: Հայերը գալիս են այստեղ՝ աղոթելու Ջատիկից առաջ չորեքշաբթի օրը, որպեսզի իրականանան իրենց ցանկությունները: «Աջարացին» մի հասարակ քար է,որի վրա դնում են գետաքարեր և մոմեր:

Շուշիում պաշտպանմունքի շատ վայրեր կան: Դրանցից մեկը հատուկ թաթարների համար է՝ մի փոքրիկ ճաղապատ կառույց, որտեղ որպես մատաղ՝ բերում են օրհնված ջուր: Լաթի կտորներ էին կապված և ճաղածողերին և այդտեղ գտնվող երկու ծառերին՝ մի բարդու և մի շագանակենու:

Այս պահին քաղաքը տագնապի մեջ է: Կառավարությունը օրական մոտավորապես 1500 մարդ է հավաքագրում, որոնք պետք է մասնակցեն մոբեիլներից ցորենի արտերի փրկմանը: Բոլոր բնակիչները՝ հարուստ ու աղքատ, պետք է մասնակցեն և, հասկանալի է, հարուստները իհարկե վճարում են իրենց փոխարինողներին: Ոստիկանատան առջև խմբվել են հավաքագրվածները: Այս գործի պաշտոնակատարը կանգնած է մի փոքրիկ հարթակի վրա՝ ցուցակը ձեռքին, և կանչում է այն մարդկանց, որոնց գնալու հերթը արդեն մոտեցել է: Անհնազանդներին կարգի են բերում կուրբաշի կամ ճիպոտի ուժեղ հարվածներով:

Անդամագրվածների մեկնումը շատ տպավորիչ էր: Նրանցից յուրաքանչյուրը ունի շորերով և ուտելիքով լցված խուրջին: Ոմանք ունեն բահեր, ավելներ և քուլունգներ: Նրանք մեկնում են ծանր բեռնված ֆուրգոններով՝ գոռալով, բղավելով, մոլուցքի մեջ գտնվող խելագարների նման քշում են իրենց սրաշավ ձիերը, որոնք թռչում են մտրակների հարվածների տակ: Եվ

ուրբաններին այս շարժամիջոցների բախումներից է, որ առաջ են գալիս սարսափելի դժբախտ պատահարներ:

Մինչև ամուսինս զբոսնում էր իշխան Ռզա Կուլի Միրզայի հետ, ես Շուշի մի նկարչի աղքատիկ լաբորատորիայում երևակեցի մի քանի լուսանմուշներ: Ես հանգիստ աշխատում էի, երբ հանկարծ լսեցի Օհանեսի ձայնը:

- Տիկին, պարոն Շանտրը դեռ չի վերադարձել:
- Հետո:
- Տասնհինգ թաթարներ սպասում են տանը, որ կշովեն:
- Թող սպասեն:
- Տիկին, մզկիթում արդեն աղոթքի ժամ է:
- Ասացեք, թող գան երեկոյան:
- Այսօր երեկոյան նրանք ճաշում են (Ռամազանի ժամանակն է):
- Այդ դեպքում՝ վաղը:
- Վաղը ուրբաթ է, տիկին:

Ինչպես կարելի է ուժով պահել մուսուլմաններին, ում կրոնական պարտքը կանչում է մզկիթ: Ես Օհանեսին պատվիրեցի նրանց ասել, որ գան վաղը չէ մյուս օրը՝ առավոտյան, չնայած ուրբաթ է: Նրանք համաձայնում են և արագ հեռանում մուլլայի ձայնի ուղղությամբ:

Մայիսի 14- Խիտ մառախուղ է, տասը քայլի վրա ոչինչ չի երևում, և կարծես թե մինչև կեսօր եղանակը չի փոխվի, մառախուղը ավելի է թանձրանում: Ճաշից հետո գնում ենք շուկա՝ գնումներ կատարելու, որպեսզի լրացնենք մեր ճանապարհորդական պահուստը: Օհանեսը ինձ հատուկ պատվիրում է գնել մի մեծ տիկ գինու և մի փոքրն էլ օղու համար: Նաև պետք է գնեինք խորովածի շամփուրներ:

Այս երկրում ամեն ինչ ուտում են խորոված, այլ կերպ ասած՝ մսի կտորները խորովում են այրվող ածուխների վրա՝ գառ, տավար, հավ, ձուկ: Ես չեմ խոսում հորթի մասին. այստեղ այն զրեթե չեն մորթում :

Մեր ճամփորդական պաշարը լրացնելու համար պետք էր նաև գնել պղնձե կուժ՝ ջուր տեղափոխելու համար, տարբեր տեսակի խոհանոցային պարագաներ, որոնք անհրաժեշտ են Լևոնին, ով համատեղությամբ պետք է մեզ համար ճաշ եփեր և կերակրեր կենդանիներին, որոնց նա մեզ տրամադրել էր բարձր գներով: Մեծ շուկան շատ լավ է մատակարարված: Տես-

նելով, թե ինչ եռուզեռ է տիրում շուկայում,զգացվում է, որ Շուշին կարևոր քաղաք է:

Հիմա թաթարների Ռամազանն է, և նրանց խանութների մեծ մասը այս օրերին փակ են:

Շուշիում քրիստոնյաները և մահմեդականները՝ մեծ ու փոքր, լավ վաճառականներ են: Քաղաքը գլխավորապես առևտրական կենտրոն է: Աղքատ թաթարները, ովքեր չեն ցանկանում լինել բեռնակիր, մեկնում են Բաքու կամ այլ արդյունաբերական քաղաքներ, որտեղ նրանք դառնում են վարձու բանվոր:

Բացի շուկայի մի քանի փոքր արհեստանոցներից, մի քանի մանածագործարաններից, գլխաշորերի ֆաբրիկայից, հանրահայտ գորգերից, որ կանայք գործում են իրենց տներում, այլ արտադրություն չկա:

Այսպես կոչված դարաբաղյան գորգը հայտնի է իր հաստությամբ և բրդի բարձրությամբ: Այն ունի վառ գույներ և մեծ նախշեր:

Հին գորգերը շատ գեղեցիկ են, և նրանց հիմնական առավելությունը տաք ու ամուր լինելն է:Այն գործում են նաև պարսկական նմուշներով, որոնց հետ երբեմն կարելի է շփոթել:

Տարածաշրջանում դեռ գործում են հարթ կտորներ, այսպես կոչված՝ «փալասներ», որ հիշեցնում են Գարամանիներին, և «կարնի» կոչվող մի ուրիշը , որի գույներն ու «սվատիսկանման» նախշերը շատ յուրահատուկ են և նման չեն ոչ մի ուրիշ գործվածքի: Դրանք արտադրվում են Ջեբրայիլի շրջանում:

Շուկայի մեր թափառումների ողջ ընթացքում մեզ ուղեկցում էր Մեհմետը, որի օգնությամբ ես մտա մի թաթարի տուն՝ նրա կնոջը տեսնելու: Վերջինս՝ ջահել ու սիրուն, շատ նուրբ կին էր: Նրա հիասքանչ սև ունքերը միացած էին քթի վերևում: Մենք իրար ներկայացանք ժեստերով. ափսոս, որ չէինք կարողանում միմյանց փոխանցել մեր մտքերը: Նա, ինչպես նաև երկու երեխաները, որոնց ինձ ներկայացրեց հպարտությամբ, հազել էին պարսկական զգեստներ: Մակայն կինը այդքան էլ առողջ տեսք չունեիր: Նրա չոված աչքերը ավելի էին ակնառու դարձնում նրա սրված այտերի մարմարյա դալկությունը և կուսական անարատությունը: Նրա ամուսինը հնավաճառ էր: Նա կրում էր կապույտ փափախ, և նրա փոքրիկ դարչնագույն գլուխը նման էր մոլեռանդի գլխի: Նա իր կրպակում գեղեցիկ մանր-մունր իրեր ուներ, բայց գները մեզ փախուստի մատնեցին:

Ռամագանի պատճառով փողոցները սովորականից ավելի մարդաշատ են: Փողոցները լի են վաճառականներով, որոնք մեծերին և փոքրերին վաճառում են սպիտակ, վարդագույն բարակ քողերով տուղտի խմորեղեն: Այն միաժամանակ այնքան քաղցր է և աղի, որ սիրտդ խառնում է:

Թաթարները աղոթքների ընդմիջումների ժամանակ զբոսնում են և պատվիրում են ճոխ ճաշատեսակներ՝ կեսգիշերից հետո ուտելու համար:

Մենք հանդիպեցինք շատ թաթար վաճառականների, որոնց տեսել էինք Թիֆլիսում, և որոնք եկել էին Շուշի՝ տոնը ընտանիքի հետ միասին անցկացնելու: Նրանք մեզ հետ են ճանապարհ անցել: Մեր երկու հավատարիմ ուղեկիցներն են ստարշինան՝ մի բարձրահասակ ու գեղեցիկ տղամարդ՝ երեխայի կենսախիհոդ դեմքով, և փոքրիկ, ճարպիկ, խորամանկ Մեհմետը: Երկուսն էլ հագնված են թաթարների նման՝ լայն տաբատ, լայն անթն բաճկոն սպիտակ վերնաշապիկի վրայից: Նրանք կրում են մեծ փափախներ, իսկ ոտքերին՝ կարճ սանդալներ, որ թողնում են դռան դիմաց տուն մտնելուց առաջ, որտեղ գորգերի պատճառով քայլում են միայն ոտաբորիկ: Նրանց դեմքերի արտահայտիչ խաղը ընդգծվում է շինծու ու վայելույ ժեստերով:

Այն, ինչ յուրահատուկ է այս մարդկանց, այն է, որ զրույցի թեժ պահին նրանք լռում են, որպեսզի քթները մաքրեն մատներով: Եվ դա այն դեպքում, երբ նրանք միայն սրբվում են իրենց գրպաններում պահվող մեծ թաշկինակներով: Մեհմետը, որը փորձում էր մեծապատիվ մարդու տպավորություն թողնել, ինձ թվում է, չափազանց շատ հինա է օգտագործում և կարծես թե ամբողջովին թաթախված է դրա մեջ: Այս առավոտ ես շատ զարմացա, երբ, ժամանելով հյուրանոց ,նա ինձ դիմեց գրեթե վարժ ֆրանսերենով. «*Faupin, տիկին: Ինչպես եք...*»: Օհ, այս թաթարները շատ մեծ ընդունակություն ունեն լեզուների հանդեպ: Հայտնի է, որ Շուշիի մահմեդական բնակչությունը մեծ համբավ ունի ողջ Անդրկովկասում իր մոլեռանդությամբ, միաժամանակ նաև շատ զարմացնում է նրանց՝ քրիստոնյաների հանդեպ ունեցած համակրանքը իրենց կրոնական տոների ժամանակ: Բայց մեր զարմանքը ավելի է մեծանում, երբ, առանց թույլտվություն խնդրելու, մեր ուղեկցորդները մեզ հրավիրում են՝ այցելելու Գոհար Աղա մզկիթը: Վստահ կարելի է ասել, որ մենք շահել ենք այս բարի մարդկանց վստահությունը: Խորապես շոյված այդ վերաբերմունքից՝ մենք բարձրացանք շքամուտք և, քաղաքավարությունից դրդված, ձևացրինք, թե սանդալներ ենք փնտրում (մահմեդականները շատ զգայուն են այդ «ոչինչների» հանդեպ): «*Նիշեգո*», - ժպտալով

ասում են նրանք, և մենք ներս ենք մտնում: Վերևի սրահներում մեծ թվով կանայք կան: Նրանք, մեզ տեսնելով, կարծես թե զարմացած էին, քանի որ առաջ կախվեցին, որպեսզի իրենց քողերի տակից ավելի լավ տեսնեն: Տղամարդիկ, ծնկաչոք նստած իրենց գորգերի վրա, թվում էր, թե ոչ թե աղոթք էին անում, այլ գրուցում էին. Ռամազանը այնքան երկար է տևում: Անցնելով նրանց մոտով՝ ես նկատեցի միայն մի քանի քիչ խրախուսող դեմքեր: Բոլորը կրում էին վերքերի սպիներ, որ նրանք իրենց հասցնում էին այս արյունոտ տոների առիթով՝ ի պատիվ Հյուսեյնի և Ալիի, որոնց խորապես պատվում էին Շուշիում:

Մզկիթը իրենից ոչ մի առանձնակի բան չէր ներկայացնում: Մպիտակ և մերկ պատերին երևում էին աղոտ գրվածքներ, մի քանի տաշած քարեր և ուրիշ ոչինչ: Դուրս գալով մզկիթից՝ մենք շրջում էինք քաղաքի մահմեդական թաղամասում, և երևում էր, որ մեր ուղեկցորդը շատ հպարտ էր սիգաճեմել օտարերկրացիներին հետ:

Շուշիում կա տասնութ թաթարական թաղամաս և յուրաքանչյուրը ունի մզկիթ, բայց դրանցից միայն երկուսն են կարևոր՝ Ջաֆար-Կուլի Խանի և Գոհար Աղայի: Մնացածները նշանակալից չեն:

Ցերեկվա արևի տակ փողոցներում շողում էին մուլլաների և սեյիդների սպիտակ հագուստների ու կապույտ-կանաչ գլխափաթոցների վառ գույները: Երբ նայում ես այս շիիթ քահանաներին՝ հպարտ և կոպիտ դեմքերով, մեծագույն արժանապատվությամբ փաթաթված իրենց սպիտակ թիկնոցների մեջ, հաստ կաշմիրե բարձր չավմաները գլխներին, զգում ես, թե ինչ ուժ կա այս թաթարական ցեղի մեջ, և հասկանում ես ռուսական կառավարության զգուշավորությունը նրանց հանդեպ:

Որոշ մեծանուն ընտանիքների զավակներ, ավարտելով իրենց կրթությունը Պետերբուրգում, դարձել են ռուսական բանակի փայլուն սպաներ: Հասարակ մարդիկ արդեն չեն ծառայում կայսրության բանակում, որը գոհանում է միայն բարձրացնելով հարկերը և ձեռք բերելով մեծահարուստների հովանավորությունը՝ նրանց շնորհելով ստարշինայի տիտղոս: Բայց հիմա, երբ այս հանրաճանաչ, ուսյալ մահմեդականները որոշել են իրենց զավակներին ուղարկել՝ ուսում ստանալու ռուսական գիմնազիայում, պետք է սպասել նոր սերնդի գաղափարների և բարքերի մեծ փոփոխություն:

Թաթարների հետ մեր բարիդրացիական հարաբերությունները զգալիորեն հեշտացրին մարդաբանական չափումները: Ստարշինան իր հետ բերեց

մի քսան մարդու, որոնց ինքն էր ընտրել՝ ամենաամրակազմ և առողջ, որոնք հնարավորություն կընձեռնեին հստակ գաղափար կազմելու այդ ցեղի մասին:

Փոխադարձ հաճոյախոսություններից հետո, պարոն Շանտրը նրանց չափեց և ուզածին չափ լուսանկարեց, հետո եկան ուրիշները, բայց ժամանակի թերության պատճառով ստիպված էինք նրանց հետ ուղարկել, ինչից վերջիններս շատ նեղացան: Սակայն ես ստիպված էի հրաժարվել չափումներ անել Շուշիի թաթար կանանց մոտ: Ես նրանց շատ էի հանդիպել իմ այցերի ժամանակ, բայց նրանք հրաժարվում էին, որ ես չափեմ նրանց գլուխները: Անկասկած դա վայրենության և անհերքելի սնոտիապաշտության վկայություն է, բայց այս քաղաքում հայուհիները, բացառությամբ մի քանիսի, նույնպես տրամադրված չեն մեր չափումների հանդեպ: Նրանք նույնիսկ ավելի ծիծաղելի, համառ ու սահմանափակ են՝ չնայած իրենց ամուսինների համաձայնությանը, ի տարբերություն թաթարների, ովքեր իրենց կանանց խորհուրդ չեն տալիս:

Ինչքան շրջում էի քաղաքում, այնքան ավելի էի համոզվում, որ Շուշիում չկա ճարտարապետական արժեք ներկայացնող որևէ շինություն: Միակ հետաքրքիր վայրը ցայտադրյուն էր և նրա շուրջը իշխող մարդկային աշխուժությունը: Մահմեդական կանայք՝ փաթաթված իրենց փարաջանների մեջ, գալիս էին լցնելու իրենց պղնձե մեծ կժերը: Անհաշվելի թվով փոքրիկ ջրկիր ավանակները, տակառիկներով բարձված, գալիս էին այստեղ՝ նորից վերցնելու իրենց բեռը: Վերջապես հայուհիները՝ իրենց կարմիր շրջագգեստներով և մշտապես փաթաթված բերաններով, հեծյալները, որ բերել էին՝ ջրելու իրենց ձիերին և հագեցնելու իրենց ծարավը, աղբյուրի հետ միասին կազմում էին մի յուրօրինակ և գեղարվեստական կտավ: Այս տեսարանը գուցե և նման չէր արևելյան մեծ քաղաքների խայտաբղետությանը և վառ երանգներին, բայց այն ավելի անձնական էր, ավելի դասական. դա արևելքն էր՝ իր ձյուններով և մառախուղներով, դա ինչ-որ մի անսպասելի բան էր:

Մայիսի 16 - Արագացնելով մեր մեկնման պատրաստությունները՝ ամուսինս շարունակեց իր մարդաչափական աշխատանքները, իսկ առևտրականները մեր սենյակում շարունակում էին ցուցադրել իրենց խանութների և հետնասենյակների ապրանքները:

Հազիվ էինք աչքներս բացել, երբ Մեհմետը, որից պրծում չկար, հանդարտ թակեց դուռը: Բազմաթիվ բեռնակիրներ բերել էին գորգեր և տարբեր իրեր՝ սափորներ, պղնձե թասեր, ձեռագործ ապրանքներ, Շիրազի արկղեր և այլն: Նրանից պրծնելու համար պետք էր նրան ատամներ ցույց տալ:

Մենք շարունակում ենք մեր անվերջանալի բանակցությունները քարավանի մարդկանց հետ, որոնք գտնում են, որ բեռները շատ ծանր են վատ ճանապարհների համար: Նրանք շարունակում են տրտնջալ և գանգատվել, թե ինչ է մեզ սպասվում առջևում:

Մի քանի սիրալիկ մեծահարուստների միջնորդությամբ մեր պատրաստությունները վերջապես ավարտվեցին: Մամուլը մեզ տրամադրեց հեղինակավոր «Մշակ» թերթի ձայնը, որը կոչ արեց տեղի հայերին մեզ մատուցել բոլոր հնարավոր ծառայությունները:

Այս նրբանկատ ուշադրությունը և ռուսական կառավարության բարձր հովանավորությունը պարզապես հարթեցրեցին այս ճանապարհորդությունների որոշակի դժվարություններ, և մենք խորապես երախտապարտ ենք նրանց:

Ափսոս, որ արևը այլևս չէր շողում: Կարելի էր այնքան գեղեցիկ նկարներ անել Շուշիում: Ֆոտոխցիկը ձեռքիդ՝ այս գունագեղ ու մարդաշատ Մայդանում ինչքան յուրօրինակ ու անսպասելի տեսարաններ կան բացահայտելու:

Մի վերջին անգամ մենք գնացինք՝ հրաժեշտ տալու, և մեր վրանների համար հաստ թաղիք գնեցինք:

Խոր գիշեր էր, երբ վերադաձանք մի ծառայի ուղեկցությամբ, որը, լապտերը ձեռքին, լուսավորում էր խարխուլ, ջրափոսերով ծածկված ճանապարհը, և մեծ երջանկություն է, եթե չջարդես ոտքերդ: Ինձ պատմել են, որ մի ծեր գնդապետ տնից դուրս գալու ժամանակ միշտ հրաժեշտ էր տալիս կնոջը՝ վախենալով, որ մի օր իր զբոսանքների ժամանակ կսպանվի այս քարուքանդ ճանապարհներին:

Եվ պետք է ասել, թե ինչպես էին դարաբաղյան ձիերը սլանում վեր ու վար: Ինչ խիզախ կենդանիներ են: Ճշմարիտ է, որ դեռ հին ժամանակներից ձին հայտնի է որպես Հայաստանի ամենահայտնի ապրանքը: Ըստ Եգեկիելի՝ այս երկիրը Տիրի շուկաները ապահովում էր իր ձիերով և հեծյալներով, և հենց նրանք են ասորիներին հաղթանակ բերել: Իրականում, արաբական ձիուց հետո, հենց հայկական ձին է ամենահայտնին: Չնայած նա չունի արաբական ձիու ոչ հասակը, ոչ էլ նրբագեղությունը, բայց հավաստի

է, որ դժվար ու անանցանելի վայրերում ոչ մի մրցակից չի կարող հավասարվել նրան իր համառությամբ ու դիմացկունությամբ :

ԳԼՈՒԽ 5

Մեր քարավանը - Լիսազորսկի ձորը - Ընդունելություն պարսկական իշխանի տանը - Հանքային աղբյուրը - Մենք մտնում ենք Զանգեզուր – Աքառլու չայի անցումը -Զաբուխի թշվառ կայարանը - Տեղ գյուղի եկեղեցին և գերեզմանանոցը - Բնակչության տեսակը և թշվառությունը - Տնական վատ եղանակը

Մայիսի 17 - Առավոտյան յոթի մոտ՝ անվերջ բանավեճերից և դադարներից հետո, քարավանը շարժվեց: Այն բաղկացած էր վեց բեռնակիր և չորս թամբակիր ձիերից: Մեր քարավանի աճնակազմը կազմված էր տասը հայերից, թարգմանիչ Օհանեսից և խոհարար Լևոնից: Մեզ ուղեկցում էին նաև երկու թաթար հեծյալներ: Մեկնման պահին ներկա էին նաև շուկայի երկու միջնորդ վաճառականներ՝ Մեհեմետ Ալիի գլխավորությամբ: Նրանք կաշուն ճանձերի նման պտտվում էին մեր շուրջը, մի խոսք էին ասում կամ առարկում, ստուգում էին ձիերի թամբակալները և բեռների կապը ...: Ամուսինս նրանցից յուրաքանչյուրին տվեց մի կողմնացույց: Նրանք հեռացան միայն այն բանից հետո, երբ բազմիցս հրաժեշտ տվեցին մեզ՝ ձեռքները դնելով ճակատներին և կրծքներին: Այդ ընթացքում Օհանեսը բարձերով աստառապատեց իր թաթարական թամբը, որը բաղկացած էր երկու կոր տախտակներից: Այս զգուշավոր գործողությունները ավարտելով՝ մենք շարժվեցինք և Շուշիից դուրս եկանք Երևան տանող լեռնացքով, որը բացվում էր դեպի Զարապուի գեղեցիկ հովիտը, որն ամռանը բնակեցվում էր քոչվոր թաթարների կողմից: Երևանի ճանապարհը բավականին բարվոք էր. միսրճված լեռների մեջ՝ այն անցնում էր անդունդի եզրով: Ամենուր առվակներ էին վազում:

Պետք է կանգառ առնեինք Լիսազորսկում, որտեղ Ռիզա Կուլի Միրզան ուներ ամառանոց: Նա մեզ խոստացել էր, որ այնտեղ կանցկացնենք մի ամբողջ օր ու գիշեր, և այդ պատճառով վաղ առավոտյան նա մեկնել էր Շուշիից իր ծառայի հետ: Մի վճիտ աղբյուրի մոտ կարճ դադարից հետո մենք ուրախ շարունակեցինք մեր ճանապարհը: Գարնանային բուսականությունը ամե-

նուրեք զարթոնք էր ապրում՝ դեղին հիրիկներ, գիհիների կոճղերի տակ թաքնված հիասքանչ շուշաններ, որտեղից մենք հավաքեցինք նաև վայրի սոխ: Վերջապես կեսօրին երևաց արքայազնի ամառանոցը: Նա մեզ դիմավորեց և ինձ նվիրեց իր իսկ ձեռքով հավաքած դաշտային ծաղիկների մի գեղեցիկ փունջ:

Լիսագորսկը գտնվում է 1760մ բարձրության վրա՝ մի ձորակի մեջ, որտեղով հոսում է Թուր սուն (Թթու ջուրը - *ծնթ. խմբ.*): Նրա վրա վեր է բարձրանում մի մերկ սար՝ Քաչալ սարը (ռուսերեն՝ Լիսագորսկ), որտեղից էլ նա ստացել է իր անունը: Կիրճի երկրաբանական կառուցվածքը պատկանում է օձաքարերին :

Ճաշից հետո արքայազնը մեզ տարավ մի հիասքանչ զբոսանքի Թթու ջրի երկայնքով. մենք այն անցանք՝ գետի հունի մեջ լցված քարերի վրա թռչելով, և հասանք Լիսագորսկի աղբյուրը: Այնտեղից հանքային ջուր էր հոսում, որ նման է Սեն-Կալմիե աղբյուրի ջրերին: Այն հայտնաբերվել է 7 տարի առաջ Սարատովցի բժիշկ Լուսի կողմից, որը վերջերս է մահացել: Այս աղբյուրի ջուրը լրջորեն չի հետազոտվել: Այն հոսում է մի ժայռից, որի վրա աճում են ոստոտ արոսենիներ: Ջուրը շատ համեղ է ու հիանալի: Ափոս, որ այսպիսի բնական հարստությունները չեն շահագործվում:

Այս բանաստեղծական և կուսական բնության մեջ աճում են, ցավոք սրտի, շատ կտրվող հսկա կաղնիներ: Ժամանակին այստեղ որսում էին քարայծեր, սակայն անտառահատման պատճառով նրբագեղ էակները փախել են այս վայրերից: Թավշե կանաչ մարգագետինները ծածկված են անմոռուկներով, ոսկե կոկոններով, մանուշակագույն գինարբուկներով:

Լիսագորսկը Շուշիի հարուստ բնակիչների ամառանոցների վայրն է, որը նրանց գրավում է իր մաքուր օդով ու ջինջ աղբյուրներով: Այստեղի հանգիստ ու առողջարար վայրերում չկան ոչ խաղատներ, ոչ էլ հյուրանոցներ: Կա միայն մի շինություն. դա իշխանի ամառանոցն է: Տաք ամառներին նա ընտանիքի հետ միասին թողնում է իր ամառանոցը և բնակվում է մեծ պարսկական վրաններում:

Հայերն այստեղ տրվում են աղմկոտ զվարճանքների, իսկ մահմեդականները իրենց ասիական պարերով ու երաժշտությամբ առանձնանում են իրենց վրաններում: Լիսագորսկում կա չափարցիների մի պահակակետ, որը բաղկացած է վեց տղամարդուց և մեկ ենթասպայից: 12կմ-ի վրա

գտնվում է Կալա-Դարասի (Բերդաձոր – *ծնթ. խմբ.*) գյուղը: Գյուղի ծայրին կա աջարացու մի գերեզման, որտեղ ամառը մարդիկ գալիս են ուխտի:

Արևը մայր մտնելուց անմիջապես հետո թանձր մառախուղը իջավ դաշտավայրի վրա: Ամառանոցում մենք իշխանի հետ զրուցում ենք տարբեր բաների շուրջ, և նա մեզ տալիս է հետաքրքիր տեղեկություններ տեղի բնակիչների մասին: Նա պատմում է, որ ժամանակին այս վայրերում քիչ մարդիկ կային, և քոչվորները թալանում ու սպանում էին ճանապարհորդներին: Նույնիսկ հիմա էլ պետք է շատ զգուշ լինել, քանզի մարդու կյանքը այստեղ ոչինչ չարժե:

Այդ ընթացքում մառախուղը ցրվեց, երկինքը պարզվեց և աստղերը փայլեցին: Պատշգամբում նստած՝ մենք վայելում ենք բնության անդորրը, որն այնքան է տարբերվում մեր եվրոպական քաղաքների տանջահար ու արհեստական կյանքից:

18 մայիսի- Հիասքանչ երեկոյից հետո ես առավոտյան արթնացա ծաղիկների բույրից և թռչունների երգից: Վճիտ օդի մեջ պարզորոշ գծապատկերվում էր Քաչալ սարը: Կեսօրին մենք դուրս եկանք Լիսագորսկից: Իշխանը մեզ ուղեկցեց մինչև Շուշիի գավառի և Գորիսի, ինչպես նաև Զանգեզուրի և Ղարաբաղի սահմանը: Այստեղ մենք ավստասանքով բաժանվեցինք մեր սիրելի իշխանից, որի մասին մեզ հետ տանում էինք միայն լավ հիշողություններ:

Մեր քարավանը շարժվեց դեպի Աբդուլլահ (Բերձոր – *ծնթ. խմբ.*) տանող նոր ճանապարհով: Այստեղից մենք իջանք դեպի հաճարենիների գեղատեսիլ անտառը: Մենք ձիավարում էինք, ուրախ ու կայտառ արշավում էինք և երջանիկ էինք, որ ականատես ենք այս կուսական լեռների գարնանային զարթոնքին: Աբդուլլահի կայարանում (1250մ) երևացին դրախտանոճիներ: Այստեղ բուսականությունը ավելի փարթամ է: Լիսագորսկում ծառերը դեռ նոր էին բողբոջել, իսկ այստեղ արդեն ծաղիկների մեջ են: Աբդուլլահից մենք շարժվեցինք 15կմ-ի վրա գտնվող Զարուխ գյուղը: Տղամարդիկ և չափարացիները մեզ խորհուրդ չեն տալիս շարունակել ճանապարհը, քանի որ պետք էր անցնել այս պահին վարարած Ակառլու չայը (Հակարի գետը – *ծնթ. խմբ.*), և նրանք վախենում էին բեռնած ձիերի համար: Սակայն առաջ շարժվեցինք և որոշեցինք հանգրվանել գետի ափին, եթե այն անանցանելի լինի: Ամենուրեք հրաբխային ժայռեր էին, և երկրաբանական ցնցումների հետքեր կային: Յոթ կիլոմետրից հետո հասանք փոթորկված գետին: Չափարացիներից

մեկը մտավ գետը, որպեզի խորությունը պարզի, և տղամարդիկ համար-
ձակվեցին, ձիերի թուղեքից բռնած, մտնել ջուրը, իսկ մենք հետևեցինք
նրանց: Սա առաջին անգամն էր, որ ես ձիով անցնում էի փոթորկված գետը:
Ես փակեցի աչքերս, որպեսզի գլխապտույտ չունենամ: Առանց արգելքի
բոլորս դուրս եկանք մյուս ափ: Վերջում չափարացիները, արագ քշելով,
դուրս բերեցին մի բռնակիր ձի, որը մնացել էր գետում: Մեր Շուշիետ շունը,
որին Լևոնը տանում էր թամբի առջևում դրած, առանց վախենալու նետվեց
ջրի մեջ: Հոսանքը քշեց այդ անվեհեր գազանին, բայց նա արագ դուրս թռավ
ցամաք: Վեց կիլոմետրից հետո հասանք թաթարական Ջաբուխ գյուղը:
Արևը արդեն մայր էր մտել: Մարդիկ և անասունները այնքան էին հոգնել, որ
մենք որոշեցինք գիշերել փոստի խարխուլ շենքում, որի դռները նույնիսկ
չէին փակվում: Երեկոյան ժամը 7-ին ջերմաստիճանը հասավ 22 աստիճա-
նի: Այս կայարանը այնքան ողորմելի վիճակում էր, որ այն արժանի է հիշա-
տակման: Պետը Գորխում էր, կայարանը գտնվում էր մի խեղճ ու ամեն
ինչից զրկված ծառայի հսկողության տակ: Կացին չունենալու պատճառով
նա ստիպված էր քարով ջարդել փայտը: Մեծ ջանքերի շնորհիվ մենք կարո-
ղացանք հայթայթել մի կտոր չոր լավաշ, մի քանի ձու և մի հին ինքնատե:
Կարելի էր պատկերացնել, թե ինչ էր սպասվում խեղճ ճանապարհորդ-
ներին, որոնք ստիպված են լինում գիշերել այս խուլ վայրում:

19 մայիսի- Այս խեղճ Ջաբուխ գյուղը բաղկացած էր լեռան մեջ փորված
թշվառ հյուղակներից: Միայն տանիքներից բարձրացող ծխից կարելի էր
կռահել, որ այստեղ մարդիկ են բնակվում, և մենք շատ զարմացանք, երբ
հանկարծ մեր ոտքերի տակից դուրս եկան մի տղամարդ ու մի կին: Ջար-
մանքը երկուստեք էր:

Գյուղը բարձրանում է Ջաբուխ չայի աջ ափին, որը հիմա շատ փոթորկ-
ված էր: Գետի ափին գեղեցիկ ու սովերախիտ ծառերի՝ թթենիների, չինա-
րիների տակ ցնցոտիներ հագած թաթար կանայք ջուր էին վերցնում: Նրանք
զարմացած ինձ նայեցին, կարծես թե տպավորված էին իմ լայն սաղավար-
տից: Ես միայնակ զբոսնեցի, և չնայած մտրակը ձեռքիս էր, ստիպված էի
հետ գնալ, երբ դեմս դուրս եկան սպիտակ ու սուր ժանիքներով հսկա
գամփռներ:

Ժամը ութին շարժվեցինք դեպի Տեղ գյուղը: Անցանք գետը: Անվերջ վեր
բարձրանալով, 1200 մետր անցնելով՝ հասանք մի քանի գերեզմանաթմբե-
րով եզրավորված սարահարթի, որի վրա սավառնում էին բազմաթիվ

անգոներ: Հենց այստեղ էր գտնվում հայկական Տեղ գյուղը, ուր մենք ժամանեցինք վաղ առավոտյան: Օհանեսը վարպետորեն ձիարշավում էր, երբ հանկարծ ձիու հետ միասին գլորվեցին դեպի ցած: Նրան վեր բարձրացրին. բարեբախտաբար նա ոչ վերք էր ստացել, ոչ էլ կոտրվածք:

Անցնելով գյուղը՝ մենք մի հարմար տեղ գտանք և վրան խփեցինք: Հանգիստ առնելուց ու ճաշելուց հետո ես առաջին անգամ զգացի քոչվորական կյանքի հաճույքը:

Ամենից առաջ մենք տպավորված ենք Տեղ գյուղի հայկական համեստ ու անշուք եկեղեցու տեսքով, որի շատ հին քարերը հիմնականում տաշած գերեզմանաքարեր են: Այս ճարտարապետական կերտվածքները, երբեմն կուպիտ, երբեմն նուրբ, երբեմն էլ շատ պարզ, արթնացնում են հեթանոսական գաղափարներ, չնայած դրանք պատկանում են քրիստոնեության ժամանակաշրջանին: Առաջինների վրա կարելի է տեսնել մարդկանց, կենդանիների, ձիերի և ոչխարների պատկերներ, շատ հաճախ՝ վարդաքանդակներ, գինարբության տեսարաններ, իսկ երկրորդների վրա՝ բազմաթիվ խաչեր, գրառումներ:

Եկեղեցու ներսում ամբողջովին մութ է և խոնավ: Նավը փոքր է, բայց բարձր ու կամարածածկ: Սևացած պատերի քարերը ներսից և դրսից ծածկված են հին գրություններով:

Այս եկեղեցին կոչվում է Սուրբ Գևորգ: Այն շրջակա բնակչության խոր երկրպագության վայրն է: Մարդիկ այստեղ են գալիս նույնիսկ շատ հեռուներից, որպեսզի աղոթեն իրենց հիվանդների առողջության համար կամ էլ գառ մատաղ անեն, եթե վերջիններս առողջացել են: Մոտավորապես երկու հարյուր ընտանիքներ ամեն տարի գալիս են ուխտի Սուրբ Գևորգ եկեղեցի: Քահանան օրհնում է գառը կամ խոյը, այնուհետև զոհ են մատուցում եկեղեցու նախասրահում, կտրատում են միսը: Քահանային տալիս են գլուխը, ազդրամիսը, կաշին և մի քիչ փող: Այսպիսով տարեկան կազմում է գրեթե 200 ռուբլի:

Տեղը պատմության մեջ հայտնի է 10-րդ դարի վերջից: Սյունիքի առաջին թագավոր Սմբատը այն նվիրել է իր կնոջը՝ Շահանդուխտին, վերջինս էլ 998 թվականին այն նվիրել է Տաթևի եկեղեցուն ու եպիսկոպոսությանը: Թագուհու հրամանով բարեկարգվել է քաղաքը, կառուցվել են շենքեր, որոնց շարքում նաև այս եկեղեցին, որի պատերի վրա գրառված է նվիրատվության գործարքը: Տեղ գյուղը գտնվում է մի մեծ սարահարթի ոլորանում, որտեղով

հոսում է մի գետակ: Տները՝ հողաշեն, հարթ տանիքներով, փորված են բլրի լանջերին և նմանվում են քարանձավանբակների կացարանների: Դրանք մոտավորապես 450 են: Ստարշինայի ուղեկցությամբ, տեսախցիկներով զինված, հետևելով կտուրներին, մենք շրջում ենք: Բնակչությունը, որ ամբողջությամբ հայկական է, անսովոր անմարդամոտ է, ոչ հյուրասեր: Կանայք, վառ գունավոր հագուստներով, խմբված այստեղ-այնտեղ, մի գունագեղ պատկեր են ստեղծում:

Մեր անակնկալ ժամանումը մեզ հնարավորություն է տալիս՝ ականատես լինելու բակերի ներսում կատարվող հիասքանչ տեսարաններին: Այս կողմում մի կին չոքած արագ-արագ մաղում է ցորենը, որը հենց նոր են ծեծել: Այնտեղ մի ուրիշը իր ավագ դստեր հետ գորգ է գործում, մինչդեռ փոքրերը՝ ոտաբոբիկ ու մերկ, վազվզում են հավերի, խոզերի, հորթերի միջև: Բայց շուտով մեր ներկայությունը բացահայտվում է: Հազիվ ենք մեր նկարչական խցիկները ուղղում դեպի այս տեղական գունագեղությամբ լի անսպասելի տեսարանները, երբ հրապարակը դատարկվում է: Բոլորը արագ հեռանում են, նույնիսկ ծլկում են մանչուկները:

Մենք գնում ենք դեպի աղբյուրը՝ հուսալով, որ ավելի հաջողակ կլինենք: Այստեղ մենք հանդիպում ենք մի քանի գեղեցիկ հայուհիների: Ես ապշած եմ նրանցից մեկի գեղեցկությամբ, որը հազիվ կլիներ 16 տարեկան: Թվում էր, որ նա շտապում է: Նա արագ լցնում է կուժը: Անկասկած նա գյուղի գեղեցկուհին է: Ես դա հասկանում եմ հայ տղամարդկանց հիացած հայացքներից: Ես հանում եմ տեսախցիկս և որոշում եմ նկարել: Երբ նա, կուժը նրբագեղ ուսին, բարձրանում է աղբյուրից, տղամարդիկ աղաչում են նրան կանգ առնել: Բայց նա ճարակորեն դուրս է պրծնում նրանց ձեռքից՝ գնալով իր տուն, որտեղ նրան սպասում է միակ որդին: Այսպիսի կանայք հայերի մեջ շատ են հանդիպում, որոնց նրբագեղությունն ու գեղեցկությունը միախառնված են առնական, անվեհեր բնավորության հետ:

Տեղ ոչ ծառ կա, ոչ էլ բուսականություն: Դաշտերը գտնվում են գյուղից որոշ հեռավորության վրա: Ճանապարհները լցված են աղբով, երևում են քարե ջրաղացներ, որոնք շատ նման են հոռմեական ջրաղացներին: Գազագած շները մոտենում են մեզ, և մենք ստիպված ենք շարունակ թափահարել մեր մտրակները, որպեսզի նրանք հեռանան:

Բնակատեղից մի քանի մետրի վրա գտնվում է մի մեծ գերեզմանոց: Գերեզմանաքարերի վրա փորագրված են այլաբանական պատկերներ և

հանգուցյալի մասնագիտական առարկաներ. գեղեցիկ մկրատը խոսում է դերձակի մասին, մուրճը՝ դարբնի, կովերը, ոչխարները՝ հովվի և այլն:

Այս հին ավանդույթը շարունակվում է նույնիսկ մեր օրերում, խաչերի և գրառումների հետ միասին դեռ կարելի է հանդիպել այլաբանական քանդակների:

Երբ վերադաձանք մեր վրանը, մեզ շրջապատեցին մի խումբ կանայք և երեխաներ: Մենք առիթը բաց չթողեցինք և շատ տեսարաններ նկարեցինք: Կանայք Օհանեսին հարցրեցին մեր նկարահանումների պատճառը, և նա ասաց, որ իբր մեր երկրում կանայք քիչ են, և ստիպված ենք այս նկարները ցույց տալ չամուսնացած տղամարդկանց: Այս բացատրությունը նրանց մոտ առաջացրեց մի անզուսպ քրքիջ:

Պարոն Շանտրը ստարշինային ասաց, որ հույսը լրիվությամբ դնում է նրա հյուրասիրության վրա, և որ երեկոյան պահակի կարիք չունենք: Այս հայտարարությունը մեծ տպավորություն գործեց բոլորի վրա, և նրանք խոնարհվելով մեզ բարի գիշեր մաղթեցին: Բայց ամենաերջանիկը պահակն էր, որը ,փաթաթված իր մոռթյա մուշտակի մեջ, քնել էր մեր վրանի առջև:

Օդի ջերմաստիճանը հասավ 25 աստիճանի: Բարոմետրը խիստ տատանվում էր: Մրրիկ էր սպասվում: Մենք ամրացրեցինք վրանների ձողերը: Շատ տեղին շրջահայացություն: Հազիվ էինք պառկել, երբ հետվում լսեցինք ամպրոպի ձայնը: Նա մոտենում է մեր լեռանը, արձագանքում բազմաթիվ զարկերով, շուտով անձրևի ծանր կաթիլները թմբակահարում են մեր վրանի տանիքը, և որոտն ու կայծակը իրար հաջողում են մինչև առավոտ: Ամբողջ գիշեր էս աչք չփակեցի. այսպես անցավ իմ առաջին գիշերը վրանում...

Վերջապես լույսը բացվում է: Ֆերուսը բարկացած որոտում է թանձր ամպի հետևում: Ուրախանալու բան չկա: Ամենուր անձրև է՝ լեռներում և վրանի տակ: Խոնավությունը ծծվում է մինչև ոսկորներդ: Դրսում հնարավոր չէ ճաշ եփել: Լեռնը իր կաթասները տանում է կողքի հարևան խրճիթը, և նույնպես շտապում են այնտեղ՝ մի քիչ տաքանալու:

Սա գոմ հիշեցնող մի շինություն է, որը լուսավորվում է տանիքի կյոր անցքից, որտեղից էլ նաև անձրև է լցվում: Հատակը, պատերը հողից են, տանիքը՝ ցեխախառն ճյուղերից ծեփված: Մի անկյունում մեծ կափարիչով ծածկված մի կավապատ փոս կա: Դա հացի փուռ է: Մենյակի կենտրոնում կրակ է վառված, որի ծուխը դուրս է գալիս տանիքի անցքից, որը ծառայում է՝ որպես ծխնելույզ և միևնույն ժամանակ՝ պատուհան: Կողքին ախոռն է:

Ընտանիքը գիշերում է այստեղ, որպեսզի վառելիքը խնայի: Ողջ ընտանիքն ապրում է ներսում: Երեխաները ծնվում, մեծանում են այս մութ ու խոնավ, ամեն տեսակ հարմարավետությունից զուրկ քարանձավում: Գիշերը նրանք քնում են մաշված ներքնակների վրա՝ փաթաթված վերմակների մեջ: Ամեն առավոտ այս տեղաշոյրերը հավաքում են, չորացնում արևի տակ և դասավորում սենյակի խորքում: Դրան կարելի է ավելացնել նաև աղքատիկ սնունդը:

Տղամարդիկ պահում են իրենց անասունների հոտերը, ցորեն են ցանում, կանայք զբաղվում են տան գործերով, իսկ երկար ու ցրտաշունչ ձմեռները գործում են իրենց օգտագործման համար անհրաժեշտ հաստ գործվածքներ:

Մինչև 16 եգ լծված գութաններով մարդիկ հերկում են լանջերին սփռված հողերը: Չնայած ցորենը առատ է, բայց լավաշը անտանելի է, մեր ստամոքսները չեն կարողանում այն մարսել: Փոխարենը կաթնամթերքը շատ համեղ է:

Եղանակը սկսում է բացվել: Անձրևը դադարում է, թանձր մառախուղը ցրվում է: Երեխանները դուրս են թափվում, բայց մեզ նկատելով՝ թռչնակների նման թաքնվում են:

Հողը այնքան է խոնավացել անձրևից, որ կարճ զբոսանքից հետո, ես մտա հարևան տունը: Ես նստեցի գետնին, օջախի մոտ: Կանայք, հիացած իմ երկարաճիթ կոշիկներով, շտապեցին հանել դրանք, որպեսզի չորացնեն: Կրակի շուրջ կկգած՝ մենք փորձում ենք ժեստերով խոսել:

Այս բուռն դիմախաղի մեջ ընկղմված էի, երբ հանկարծ ինչ-որ մեկը բռնեց ծամս: Հարվածը այնքան ուժեղ էր ու անսպասելի, որ ես երեսնիվայր ընկա գետնին՝ կես ծիծաղելով, կես լացելով, չհասկանալով, թե ինչ է նշանակում այս սարսափելի կատակը: Ես մի քանի վայրկյան մնացի այս վիճակում, երբ կանայք ձեռքն ընկած իրերով հարձակվեցին ինձ վրա ընկած ագրեսորի վրա: Ես վեր թռա և հայտնվեցի տանտիրոջ շան առջև՝ թշնամի, որից ես չէի վախեցել, բայց որն ինձ վրա դավաճանի նման հարձակվել էր թիկունքից: Օհ՛, այս գայլսեղդ շները օտարերկրացիների համար ամենաահարկու գազաններն են:

Ես իմ հարևանուհիներից խնդրեցի մի որոշ չափումներ կատարել նրանց մոտ: Ես չեմ կարող նկարագրել նրանց զարմանքը, վախն ու համառ դիմադրությունը այսպիսի առաջարկի համար:

Տղամարդիկ որոնց ամուսինս արդեն չափել էր, ավելի խելամիտ են: Նրանք միանում են իմ թախանձանքին՝ իրենց կանանց ու աղջիկներին համոզելու համար: Վերջապես մի քանիսը զիջում են: Բոլոր տղամարդիկ հետանում են, ես չափումներս ստիպված եմ կատարել փակ դռների հետևում:

Կանանցից մեկը, նստած սենյակի կենտրոնում, սկսում է հանել զլուխն ու բերանը փաթաթած գլխաշորը: Առաջինին հետևում են մյուսները և այսպես մինչև տասը կամ տասներկուսը: Ամեն մի շալը ընկնելուց լսվում են նոր տնքոցներ: Գլխաշորերը և մազերը ահավոր կեղտոտ են:

Հասկանալի է, որ նման կերպով չես կարող հաճախ սանրվել: Նրանցից մեկը ներողություն է խնդրում իր մազերի վիճակի համար՝ ասելով, որ մի տարի առաջ կորցրել է իր որդուն, սուգ է պահում և այդ ժամանակից ի վեր չի սանրվել...

Հերթը հասավ փայլուն աչքերով, արծվաքիթ, նուրբ, կանոնավոր դիմագծերով մի ծեր կնոջ, որը ժամանակին երևի շատ գեղեցիկ է եղել: Նա շատ թթված տեսք ուներ և, երևում էր, որ դժգոհ էր իմ գործողություններից: Երբ գործս ավարտեցի, նա հայտարարեց, որ կյանքում շատ բաներ է տեսել, բայց այսպիսին՝ երբեք: Նա զայրացած սկսեց գուլպա գործել, և չգիտեմ, թե ինչ խոսքեր ասաց, բայց մնացած կանայք անմիջապես փախան: Այստեղից ես գնացի գերեզմանոց, որտեղ մենք փորձեցինք դրոշմապատել որոշ ակնառու փորագրված դրվագներ: Բայց բոլոր թղթերը թրջվեցին անձրևի տակ ու շարքից դուրս եկան:

Այս գերեզմանոցը Տեղի զբոսահրապարակն է: Այստեղ երեխաները, թեթև հագնված, զվարճանում են: Էշերը արածում են խոտերի արանքում բուսած տատասկափուշը, վարազանման խոզերը իրենց գոճիներով, մեծ դմակավոր ոչխարները, այծերը, հավերը նույնպես հավաքվում են այստեղ: Սա մի համընդհանուր վայր է, որտեղ բոլորն էլ ունեն իրենց տեղը կենդանության օրոք և մահից հետո:

Մինչ մենք ստիպված էինք հանգիստ առնել, Օհանեսը պառկած էր:

Ձիուց ընկնելուց հետո նա դեռ չէր ապաքինվել, և մենք անհանգիստ էինք, թե ինչպես նա կդիմանա ավելի ու ավելի հոգնեցնող ճանապարհորդությանը:

Քահանան եկավ մեր բնակատեղին, նա մնացած մարդկանց նման ևս բողոքեց, որ ծանրաբեռնված են հարկերի տակ, և որ արդեն երկու տարի է՝ երաշտ է, բերք չկա, դպրոց չունեն, միայն մի քանի մեծահարուստ մարդիկ

են կարողանում իրենց երեխաներին ուղարկել հարևան շրջանների գիմնա-
զիաներ: Այստեղի հայերը շատ լավ են գիտակցում կրթության անհրաժեշ-
տությունը և ջանում են իրենց երեխաներին ուսման տալ, եթե նույնիսկ
բողոքում են իրենց լքված ու անկայուն վիճակից, որի մեջ ընկել են մեկու-
սացման պատճառով:

Եվ վերջապես, փառք Աստծո, մութ երկնքում մի հիասքանչ ծիածան
կապեց, և մենք քնով անցանք՝ հավատալով, որ վաղը լավ եղանակ կբացվի:

ЕЛИСАВЕТАПОЛЬСКАЯ ГУБЕРНИЯ ВПЕЧАТЛЕНИЯ И ВОСПОМИНАНИЯ

Карабах (черный сад (ныне Иран)) древней персидской монархии, а затем армянской провинции Аран впоследствии область Арцах. Пространство древнего Карабаха или настоящего Ирана в точности неизвестно, но есть основание допустить, что этим именем называлась вся местность на правой стороне Куры от границ Грузии до Аракса и принадлежала Великой Армении. Когда во II столетии Аршакид Вагарнаки вступили на персидский престол, они из древнего Карабана образовали особое княжество. Князья сначала подчинялись Армении, потом усилились и защищали свою независимость даже против халифов. Княжеский род именовался Гайгацни, потомки Гайки, родоначальника армян („Закавказский край“, барона фон-Гакстаузена, т. II стр. 147)

До времени образования Карабахского ханства Пана-ханом Карабах граничил: на юге с Араксом, на севере-с Курюю, на востоке-с деревнею Джавать, около которой Кура сливается с Араксом, и на западе-с карабахскими горами, на пространстве е ширину около 200 и в длину около 275 версть. При Панахане, в пределы Карабахского ханства входило только то пространство, которое в настоящее время занимает Джеванширский, Шушинский, Джеб-раильский и часть Зангезурского уезда до границы мигринского полицейского участка, принадлежавшего Нахичеванскому ханству. Таким образом Карабахское ханство более обширное и более богатое дарами природы, чем другие области Закавказья, простиралось от места слияния Куры и Аракса вверх до пресечения их хребтом гор, отделяющих это ханство от Ганжинского, Шекинского и Нахичеванского ханства, занимая весь восточный склон карабахских гор и прилегающую к нему низменность. На этом небольшом пространстве соединены все климаты от полосы вечных снегов до мест, почти постоянно нагреваемых палящими лучами солнца.

Горы, входящие в состав уездов Шушинского и Джеб-раильского, составляя отроги Малого Кавказа, покрывают северо-западную и западную часть его и носят название Кирхкизских гор и хонашенских высот. Ниже истоков реки

Акяри-чая тянется Карабахский хребет, составляющий водораздел верховьев Тертер-чая и Базар-чая; началом этого хребта служит северная окраина Карабахского плоскогорья до истоков Акяра-чая. Высочайшая вершина хребта Мыхтеян достигает 11853 ф. абсолютной высоты. Низменная часть обоих уездов состоит из степного пространства, совершенно оголенного, и узкой полосы садов и полей. Последняя, пролегая на восток к Мильской степи, а на юг к Геенской, тянется вдоль возвышенной части обоих уездов, от р. Куры до местности, называемом Хонашеном, а затем поворачивает на юг и проходит по средине Джебраильского уезда. Ширина этой полосы находится в зависимости от оросительных средств, получаемых жителями как из реки вытекающих на равнину, так и из источников Кара-су и Кягризов. Где воды много, там сады и поля расширяются; где же воды мало, там они суживаются и уступают место голым пространствам, входящим в состав Карабахской степи. Население Карабаха состояло из армян, различных татарских племен и пришельцев из Персии. Армяне, вытесненные из низменности в горы, жили до образования Карабахского ханства Пана-ханом, под управлением пяти армянских великов.

Укажем вкратце, каким образом образовано было Карабахское ханство Пана-ханом и чем был до этого сам Пана-хан, настоящее имя которого было Пана-Али-бек Сариджалу-Джеваншир. Будучи главою джеванширского племени, находившегося в Дизаке (часть древнего Карабаха), он происходил из общества Сариджалу. Племя джеваншир, как говорит предание, отделилось от некогда могущественного племени Бахманлу, населявшего нынешнюю Мильскую и часть Муганской степи в долине Аракса. В качестве главы племени Пана-Али-бек пользовался особым положением Надир-шаха. Последний, покорив Карабахскую провинцию, окружил себя многими выдающимися тузешцами, между которыми он особенно отличил Пана-Али-бека, которого из политических видов переселил со всеми подчиненными ему сариджалинским обществом в Хоросанскую провинцию, назначив гор. Хоросан местом его постоянного жительства. Почетное и независимое положение Пана-Али-бека в Персии создало ему многочисленных врагов, которые успели восстановить против него властителя Ирана. Узнав об угрожающей опасности, Пана-Али-бек бежал обратно на свою родину, в сопровождении своих родственников. Возвратившись в Карабах, Пана-Али-бек, чтобы доставить

своим родственникам и приверженцам средства существования, занялся грабежом; шайка его увеличивалась с каждым днем и скоро превратилась в грозную силу, с которую жителям трудно было совладать. Особенно часто Пана-Али-бек совершал нападения на жителей Ширванского ханства; последние обратились с жалобой к своему хану.

Тем временем Надир-шах был убит и в Персии воцарилась анархия, которую воспользовалась для своего возвращения на родину оставшееся в Хорасанской провинции преданное Пана-Али-беку сариджалинское общество. Осведомленный о том, что сариджалинцы возвращаются на родину, Пана-Али-бек отправился к Араксу на встречу им. Присоединив затем сариджалинцев к своей шайке грабителей, Пана-Али-бек сделался грозой не только для всей Карабахской провинции, состоявшей из нескольких мелких ханств. Слабость ханств, истощавших свои силы в борьбе между собою за первенство, а также постоянные раздоры между членами ханских фамилий из-за обладания власти были причиною того, что пана-Али-беку не было оказано противодействия, и последний, стоя во главе целой армии приверженцев, число которых постоянно увеличивалось, задумали объединить под своею властью все мелкие владения Карабахской провинции и сделаться ханом. Немного надо было усилий, чтобы заставить все мелкие мусульманские племена, обитавшие на низменности Карабаха и управлявшиеся своими независимыми старшинами, султанами или беками, признать над собою его власть; власти карабахского хана должны были скоро подчиниться и армянские мелики провинции Верендейской, Талышинской, Дизакской и Хаченской.

Ширванский хан, боясь возрастающего могущества Пана-Али-бека, ополчился против него под предлогом защиты жителей своего ханства от его разбойничьих нападений. Пана-Али-бек, узнав об этом, укрепился в сел. Баят. Тут они сразились. Ширванский хан, потерпев поражение, возвратился в Шемаху-столицу ханства. Однако, несмотря на одержанную победу, Пана-Али-бек не считал сел. Баят выгодным местом в смысле надежного убежища в случаи вторичного и более серьезного нападения со стороны Ширванского хана, он оттуда перешел к источнику Шахбулаг (недалеко от бывшей почтовой станции Кабарта), и там, у подошвы невысокой горы Прис, основав городок, построил себе маленькую крепость. На новом месте он принял от карабахцев титул карабахского хана, назвавшись Пана-ханом. Скоро, однако,

и это место показалось ему недостаточным и он выстроил аскаранскую крепость, остатки которой сохранились и до сих пор по дороге из Агдама в Шушу. Эта крепость, имевшая целью служить, в случае надобности, оборонительным пунктом против нападения с севера, не могла защищать его от нападения с южной стороны, по которой пролегла дорога из Персии и Нахичеванского ханства. Кроме того, находясь в узкой долине, по которой течет река Гергер-чай, местность не позволяла воздвигать построек для постоянного жилья. Вследствие этого Пана-хан в 1752 году заложил на труднодоступной скале город Шушу, окружив его крепостною стеною с башнями и бойницами и выстроить себе там дворец. Отсюда Пана-хан, никого уже не боясь, прочно и деспотически правил всем Карабахом.

Пана-хан умер в 1790 году. Сын его, Ибрагим-хан, вступив во владение ханством, не пожелал делить власть свою с армянскими меликами и стал их всячески преследовать, вынудив некоторых из них покинуть свои владения и переселиться в Тифлис и Ганжу (нынешний Елисаветполь). С ними вместе переселилась и значительная часть подвластных им армян; те-же из принадлежавших к меликским фамилиям, которые не пожелали оставить родину, приняли ислам, чем и объясняется, что в Карабахе долго сохранилась близкое родство между потомками армянских меликов и мусульманских беков. Преследования армянских меликов вызваны были таким образом властлюбием; сам же по себе Ибрагим-хан был человек умный; славился храбростью, доступностью и честным образом действия. Будучи в союзе с грузинским царем Ираклием, он долго задерживал под Шушой Ага-Магомет-хана с его полчищами, желая дать царю возможность лучше подготовиться к встрече этого шаха изверга в пределах Грузии.

Во время печального в истории Закавказья нашествия персов на Грузию под предводительством Ага-Магомет-хана, Ибрагим хан, зная свирепость последнего, предложил всем тем карабахским жителям, которые не могли укрыться в шушинской крепости, искать убежища в чужих владениях. Карабахские армяне первые воспользовались этим великодушным предложением: одни бежали в Грузию, другие соседнее Ганжинское, Ширванское и Нахичеванское ханства, а многие и совершенно оставили край, переселившись в Астрахань. Таким образом Ибрагим-хан лишился значительной части наиболее трудолюбивых своих подданных. Обстоятельство это, в связи со

смертью его верного союзника, царя Ираклия, и истощением ханской казни, привело Ибрагим-хана к крайнему бессилию и поставило его в необходимость отдаться под покровительство персидского шаха Баба-хана, причем последний потребовал в доказательство верности, чтобы Ибрагим-хан отдал ему в жены дочь свою, славившуюся красотой. Так как руки дочери Ибрагим-хана домогался также и ширванский хан, Мустафа-хан, человек, пользовавшийся всеобщей симпатией за свои нравственные качества, то Ибрагим-хан не сразу ответил на предложение Баба-хана, рассчитывая вступить с Баба-ханом в борьбу с помощью русских войск, прибывших в то время в Грузию, но помощь эта не могла быть ему дана и он вынужден был уступить требованиям Баба-хана. Последний, в награду за уступчивость, отдал во владение Ибрагим-хана Карабахское ханство, сделав его вместе с тем ближайшим советником своего сына Аббас-Мирзы, предводительствовавшего персидскими войсками, назначенными для вторжения в пределы Грузии, для защиты которой и были присланы русские войска.

Около 12 часов следующего дня я выехал из Агдама. От так называемых ханских садов начинается крутой подъем, тянущийся до самой Шуши на протяжении 12 верст. Идя зигзагом с крутыми поворотами и закруглениями, дорога тут не совсем безопасна, в особенности зимою, или когда сильные ветры, с страстным шумом и свистом вырываясь из многочисленных мрачных ущелий карабахских гор; грозят снести вас вместе с легкой перекладной, на которой вы идете, в глубокую пропасть. Летопись несчастных случаев насчитывает тут не мало жертв.

Солнце уже закатилось и сумерки стали ложиться на окрестные горы, когда из-за последнего поворота высокого подъема передо мною выступили стены и башни бывшей шушинской крепости. Немного ближе и в стене крепости открылся большой пролом, через который проложена дорога в город. Тут же оканчивается шоссе и начинается узкая улица, вымощенная огромными булыжниками.

Шуша-столица бывшего карабахского ханства, - в настоящее время единственный город для всей южной части Елисаветпольской губернии. Для основателя Шуши чем неприступнее было место, тем безопаснее и удобнее оно казалось для резиденции; до будущего развития города ему не было дела: ему лишь-бы покрепче засесть за крепостными стенами и не бояться

персидского нашествия, да и от драчливой и постоянно интриговавшей Ганжи подальше. Этот маленький городок в ханские времена быстро вырос после покорения Карабаха Россией. Жители его видели, что можно счастливо и безопасно жить и не под защитой гор, обрывов и крепостных стен. К сожалению по тесноте и холмистости местности город не мог раздвинуться, и дома, поэтому, группами, разбросанными в живописном беспорядке, лепились друг к другу. Постройки все прочные, имеются двух и даже трехэтажные дома. К возведению прочных построек побуждали жителей климатические условия, холодная, дождливая осень и суровая зима. Высота города над уровнем моря (4700 фут.) обуславливает умеренно-прохладное лето, что делает его одним из лучших дачных мест, несмотря даже на его антисанитарные условия. Летом в Шуше находят приют не только многие жители низменности Карабаха, но и не мало ищущих прохладу обывателей городов Баку и Елисаветполя, - 35-тысячное городское население почти удваивается летом.

Было время, когда карабахцы гордились неприступностью своего города, когда они смеялись над хвостливостью персидского шаха Ага-Магамед-хана, сказавшего, что нагайками возьмет его; теперь-же они душевно рады единственной шоссейной дороге, соединяющей город с железною дорогой и были-бы без сомнения, еще более рады, если бы Шушу связали шассейными дорогами с Нахичеванским и Джебраильским уездами.

Шушинских армян всегда обвиняли в косности, в неспособности к крупным комерческим предприятиям; между тем шушинские-то армяне и играли некогда главную роль в развитии торговли Закавказского края; многие из них неоднократно бывали в Константинополе, Венеции, Лионе, Триесте, Лейпциге и других промышленных центрах Западной Европы. Но время это безвозвратно конуло в вечность. Дети эти купцов-армян, оказавшиеся неспособными подняться до уровня новых требований, осуждены или пробавляться мелочною торговлею, или безцельно сидеть на мешках с золотом, нажитым их отцами.

